ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Դասագիրք բարձրագույն ուսումնական
հաստատությունների համար

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ
ՊՐՈՖ. ՀՐ. Ռ. ՍԻՄՈՆՅԱՆԻ

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2012

ՀՏԴ 941(479.25)(075.8)
ԳՄԴ 63.3 (2Հ) ց73
Հ 282

Հաստատված է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից որպես դասագիրք բուհերի համար (ՀՀ ԿԳ նախարարի հրաման № 1307- Ա/Ք, 2011 թ.)

Հրատարակության է ներկայացրել Երևանի պետական համալսարանի Հայոց պատմության ամբիոնը

Դասագրքի հեղինակներ՝ ***Գ. Մ. Բաղալյան*** *(Հայկական լեռնաշխարհ),* ***Ա. Ե. Մովսիսյան*** *(բաժին I, 1-ին գլուխ, 2-րդ գլխի §§ 1-2),* ***Մ. Ա. Կատվալյան*** *(բաժին I, 2-րդ գլխի §§ 3-10),* ***Գ. Հ. Հովհաննիսյան*** *(բաժին I, 3-րդ, բաժին II, 1-ին, 2-րդ 4-րդ և 5-րդ գլուխներ),* ***Հ. Գ. Մարգարյան*** *(բաժին I, 4-րդ, բաժին II, 3-րդ, 6-րդ, 10-րդ գլուխներ),* ***Լ. Հ. Մկրտչյան*** *(բաժին II, 6-րդ գլուխ),* ***Հ. Բ. Գրիգորյան*** *(բաժին II, 7-րդ գլուխ, բաժին III, 1-ին գլխի §§ 1-4, 6-9),* ***Է. Գ. Մինասյան*** *(բաժին II, 8-րդ գլուխ, բաժին III, 3-րդ գլխի, §§ դ, ե, է, ը, 4-րդ գլուխ, բաժին IV),* ***Է. Գ. Դանիելյան*** *(բաժին II, 9-րդ գլուխ),* ***Ցու. Լ. Հովսեփյան*** *(բաժին II, 11-րդ գլուխ, բաժին III, 1-ին գլխի §§ 5գ, դ, 2-րդ գլխի § 2գ),* ***Ա. Ա. Մելքոնյան*** *(բաժին III, 1-ին գլխի § 5ա, ե, 2-րդ գլխի § 2բ),* ***Ա. Հր. Սիմոնյան*** *(բաժին III, 1-ին գլխի § 5բ, 2-րդ գլխի § 2դ),* ***Գ. Մ. Գեղամյան*** *(բաժին III, 2-րդ գլխի §§ 1, 2ա, 3, 4, 3-րդ գլխի §§ ա, բ, գ, զ),* ***Կ. Ա. Հարությունյան*** *(բաժին III, 2-րդ գլխի § 5):*

Հ 282 ***Հայոց պատմություն:*** *Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը: / Դասագիրք բուհերի համար (Մ. Ա. Կատվալյան, Գ. Հ. Հովհաննիսյան, Է. Գ. Մինասյան և ուրիշներ): Գրոֆ. Հր. Ռ. Սիմոնյանի խմբագրությամբ:- Եր.: - 2012,- 874 էջ:

Դասագիրքը ներկայացնում է Հայոց պատմության հիմնական իրողությունները՝ հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը:

Նախատեսված է բուհերի ուսանողության համար: Կարող է օգտակար լինել նաև հայրենի երկրի պատմությամբ հետաքրքրվողներին:

ՀՏԴ 941(479.25)(075.8)
ԳՄԴ 63.3 (2Հ) ց73

ISBN 978-5-8084-1639-0

© ԵՊՀ հրատ., 2012 թ.
© Հայոց պատմություն, 2012 թ.

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

2000 թ. Երևանի պետական համալսարանի Հայոց պատմության ամբիոնը լույս ընծայեց «Հայոց պատմություն. հիմնահարցեր» դասագիրքը ոչ մասնագիտական ֆակուլտետների համար:

Դասագրքի նպատակը, առանց մասնագիտական մանրամասնությունների մեջ մտնելու, ուսանողությանը Հայոց պատմության վերաբերյալ անհրաժեշտ գիտելիքներ հաղորդելն էր: Ձեռնարկը կատարեց իր այդ կարևոր դերը: Այն արժևորվեց ոչ միայն ուսանողության, այլև ընթերցող լայն հասարակության կողմից: Հայաստանում և արտերկրում լույս տեսած բազմաթիվ գրախոսականներում ընդգծվել է դասագրքի ստեղծման վաղուց հասունացած գաղափարի հաջող իրականացումը, չեշտվել կատարված դրական ու չափազանց անհրաժեշտ աշխատանքի նշանակությունը: Եղել են նաև քննադատական դիտողություններ ու առաջարկություններ:

Արված առաջարկությունների և ուսումնական նոր ծրագրերի հիման վրա բարեփոխվել է դասագրքի բովանդակությունը, կատարվել են լրացումներ: Ուսանողությունն այժմ կարող է ավելի մանրամասն ծանոթանալ Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միացման, Հայկական հարցի ծագման և դրա միջազգայնացման խնդիրներին, Ջավախքի, Արցախի, Նախիջևանի ու Զանգեզուրի 1918-1921 թթ. պատմության ճակատագրական դրվագներին, Հայաստանի առաջին Հանրապետության ստեղծման, երկամյա գոյատևման ու անօրինակ մաքառումների, Հայաստանի Երկրորդ և Երրորդ Հանրապետությունների պատմության, Հայկական Սփյուռքի արդի պատմության, ինչպես նաև բազմաթիվ այլ հիմնահարցերի:

Անչուշտ, դասագիրքը չարունակում է մնալ իր նպատակի չրջանակում:

Ամբիոնը չնորհակալությամբ կընդունի սույն դասագրքի վերաբերյալ չահեկան առաջարկություններն ու դիտողությունները:

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԸ

Հայկական լեռնաչխարհը գտնվում է Առաջավոր Ասիայի հյուսիսային սահմանագլխին՝ Փոքրասիական և Իրանական բարձրավանդակների, Սև ծովի ու Միջագետքի հարթավայրերի միջև: Հայկական լեռնաչխարհում է ձևավորվել և իր պետականությունը ստեղծել հայ ժողովուրդը, այստեղ կերտել իր ինքնատիպ մչակույթը:

Հայկական լեռնաչխարհը գրեթե ամբողջությամբ համընկնում է հայոց պատմական հայրենիքին: Վաղնջագույն ժամանակներից այն տարածվում է Կուր և Երասխ (Արաքս) գետերի ջրկիցից մինչև Գամիրք (Կապադովկիա), Պոնտական և Թռեղքի լեռնաչղթաներից մինչև Հայկական Տավրոսի հարավային բազուկները:

Հայկական լեռնաչխարհը բոլոր կողմերից եզերվում է բարձրաբերձ լեռնաչղթաներով, որոնց միջև ընկած բարձրավանդակը հնում կոչվել է Միջնաչխարհ Հայոց: Լեռնաչխարհի սահմաններն արևմուտքում կազմում են Անտիտավրոսի լեռները, որոնցով այն բաժանվում է Անատոլիական բարձրավանդակից (Փոքր Ասիա), իսկ հյուսիս-արևմուտքից՝ Պոնտական լեռները: Լեռնաչխարհի հյուսիսային սահմանները ձգվում են Մոսքական և Թռեղքի լեռնաչղթաների ջրբաժանով: Արևելքում դրանք կազմում են Արցախի և Կուր-Արաքսյան դաչտավայրի եզրասահմանները: Հասնելով Ղարադաղին՝ լեռնաչխարհի սահմանը թեքվում է արևմուտք, ընթանում Կապուտան (Ուրմիո) լճի հյուսիսով ձգվող լեռնաբազուկներով, ապա չրջվելով հարավ՝ ներառում է լճի արևմտյան ափամերձ չրջանները և հասնում Հայկական Տավրոսի չարունակությունը համարվող Կորդվաց լեռնաչղթային: Չրջվելով կրկին արևմուտք և հատելով Տիգրիս գետը՝ հասնում մինչև Եփրատ, կտրում է այն և Մալաթիայի լեռներով ընթանում մինչև Անտիտավրոս: Այս սահմաններում երկրամասն ունի չուրջ 400 հզ. քառ. կմ տարածություն:

Հայկական լեռնաշխարհի մակերևույթը կտրտված է տարբեր ուղղություններով ձգվող լեռնաշղթաներով և լեռնաբազուկներով, որոնց միջև տարածվում են երկրագործության համար բարենպաստ պայմաններ ունեցող գոգավորություններ և սարահարթեր, որոնք հայկական սկզբնաղբյուրներում կոչվում են «դաշտեր»: Լեռնաշխարհն ունի ծովի մակարդակից 1500-1800 մ միջին բարձրություն, որով զգալիորեն գերազանցում է թե՛ հարևան Իրանական սարահարթին և թե՛ Անատոլիական բարձրավանդակին:

Լեռնաշխարհի կենտրոնով արևելքից արևմուտք ձգվում է Հայկական պար լեռնաշղթան: Վերջինիս արևելյան ծայրամասում վեր է խոյանում Արարատ (Մասիս) հանգած հրաբխային լեռնազանգվածն իր երկու գագաթներով, որոնցից մեկը Հայկական լեռնաշխարհի ամենաբարձր լեռն է (5165 մ) և հայկական աղբյուրներում կոչվում է Ազատ Մասիս, որը «Սարդարի աղբյուր» անունը կրող թամքոցով միանում է Սիս կամ Փոքր Արարատ լեռնազագաթին (3925 մ): Մասիսը հայերի սուրբ լեռն է (հնագույն հայկական օրացույցի 18-րդ օրը նվիրված է նրան), հայրենիքի խորհրդանիշ: Ժողովուրդը բազմաթիվ ավանդություններ և ասքեր է հյուսել Մասիսի մասին: Աստվածաշնչի համաձայն Մասիսի (Արարատի) վրա է հանգրվանել աստվածաշնչյան Նոյյան տապանը:

Հայկական պարի արևելյան եզրամասից հարավային ուղղությամբ տարածվում է Վասպուրականի լեռնաշղթան, որի բնական շարունակությունը Զագրոսի լեռնաշղթան է:

Հայկական բարձրավանդակն ունի բազմաթիվ լեռնաշղթաներ: Վասպուրականի լեռնաշղթայից արևմուտք տարածվում է Մաղկանց գեղատեսիլ լեռնաշղթան, որի ծայրամասում բարձրանում է Առաջավոր Ասիայի միակ գործող հրաբխային լեռը՝ Թոնդրակը (3542 մ): Առ այսօր նրա շուրջ 600 մ խորությամբ խառնարանից դեռ ժայթքում են բարձր ջերմությամբ ջրային գոլորշիներ և ծծմբային գազեր: Մաղկանց լեռների հարավային մասում վեր է խոյանում Սիփան հանգած հրաբխային լեռը (4434 մ): Այն լեռնաշխարհի երկրորդ բարձր գագաթն է: Սիփանից հարավ, Վանա լճի արևմտյան ափերը շրջանցելով՝ ձգվում են Բզնունյաց լեռները, որոնք ավարտվում են Նեմրութ լեռնագագաթով (3050 մ): Նեմրութը հանգած հրաբուխ է, թեև գործել է մինչև XV դարի առաջին կեսը (վերջին ժայթքումը տեղի է ունեցել 1441 թ.):

Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևելյան ընդարձակ հատվածը կոչվում է Փոքր Կովկաս: Այս հատվածում տարբեր ուղղություններով ձգվող լեռնաշղթաներից հիշատակության են արժանի Ջավախքի, Վիրահայոց, Բազումի, Փամբակի, Գեղամա, Սևանի, Վարդենիսի, Մռավի, Արցախի լեռները: Վարդենիսի լեռներից սկիզբ է առնում և դեպի հարավ՝ մինչև Երասխ (Արաքս), տարածվում Սյունյաց կամ Զանգեզուրի լեռնաշղթան, որի հարավային մասում վեր է խոյանում Փոքր Կովկասի ամենաբարձր լեռնագագաթը՝ Կապուտջուղը (3904 մ): Արարատյան դաշտի հյուսիսային սահմանագլխին բարձրանում է ՀՀ տարածքի ամենաբարձր լեռը՝ Արագածը (4090 մ): Նրա ստորոտներին փռված խոտավետ մարգագետիններն ու արոտավայրերը հնուց հայտնի կարևոր անասնապահական շրջաններ են: Արագածից արևելք բարձրանում է Արայի լեռը:

Հայկական լեռնաշխարհի հարավային մասով ձգվում է Հայկական Տավրոսի լեռնաշղթան, որի տարբեր մասերում բարձրանում են մի շարք լեռնագագաթներ (Մարութասար կամ Մարթուկ, Ծովասար, Անդոք, Առնոս, Արտոս և այլն):

Հայկական լեռնաշխարհն աչքի է ընկնում ջրային ռեսուրսների հարստությամբ: Այն Առաջավոր Ասիայի գլխավոր ջրաբաշխն է, և պատահական չէ, որ հին Միջագետքի սեմական բնակչության կողմից դեռ Ք.ա. II հազարամյակում ստացել է Նաիրի՝ «գետերի երկիր», անվանումը: Այստեղից են սկիզբ առնում Եփրատը, Տիգրիսը, Երասխը, Հալիսը, Գայլգետը, Կուրը, Ճորոխը:

Հայոց մայր գետը Երասխն է կամ Արաքսը, որի ավազանը ամբողջությամբ մտնում է Հայկական լեռնաշխարհի մեջ: Երասխի ակունքները գտնվում են Բյուրակնյան լեռների շրջանում: Հնում Երասխն անջատ թափվում էր Կասպից ծով, բայց ժամանակի ընթացքում գետը փոխել է հունը և միացել Կուրին: Երասխն ունի բազմաթիվ վտակներ՝ Ախուրյան, Քասախ, Հրազդան, Արփա, Որոտան, Ողջի, Տղմուտ և այլն:

Վաղնջագույն ժամանակներից Երասխն ունեցել է տնտեսա-

կան և քաղաքական հսկայական նշանակություն: Նրա միջին հոսանքի ավազանում է տարածվում Հայկական լեռնաշխարհի ամենամեծ և արգավանդ հարթությունը՝ Արարատյան դաշտը, որը դարեր շարունակ եղել է հայոց պետականության քաղաքական կենտրոնը՝ արքայանիստ ոստանը: Արարատյան դաշտում են կառուցվել հայոց պետության հնագույն մայրաքաղաքներ Արմավիրը, Երվանդաշատը, Արտաշատը, Վաղարշապատը, Դվինը: Այստեղ է գտնվում նաև ՀՀ մայրաքաղաք Երևանը:

Եփրատն Առաջավոր Ասիայի ամենաերկար գետն է (3065 կմ), իսկ Տիգրիսը (1850 կմ)՝ ամենաջրառատ: Եփրատը կազմված է երկու բազուկներից՝ Արևմտյան և Արևելյան: Արևմտյան Եփրատը սկիզբ է առնում Կարին (Էրզրում) քաղաքից հյուսիս գտնվող Ծաղկավետ (Կապույտ) լեռներից: Դարեր ի վեր համարվել է Մեծ Հայքի արևմտյան սահմանը: Արևելյան Եփրատը՝ Արածանին, սկիզբ է առնում Ծաղկանց (Նպատ) լեռներից: Եփրատի երկու բազուկներն իրար միանում են Ծովքի Կապան քաղաքի մոտակայքում և կազմում միասնական Եփրատ, որն այնուհետև դուրս գալով Հայկական լեռնաշխարհի սահմաններից՝ հոսում է Միջագետքով: Միանալով Տիգրիսին՝ Եփրատը կազմում է Շատ-էլ-Արաբ գետը, որն էլ թափվում է Պարսից ծոց:

Տիգրիսը նույնպես կազմված է արևմտյան և արևելյան բազուկներից: Արևմտյան Տիգրիսի ակունքները գտնվում են Ծովքի տարածքում, Ծովք լճակի մոտ: Դուրս գալով լեռնաշխարհի սահմաններից՝ Տիգրիսը հոսում է Միջագետքով, միանում Եփրատին ու դրա հետ միասին թափվում Պարսից ծոց:

Կուրը սկզբնավորվում է Տայք նահանգի Կող գավառի Կրիակունք գյուղի շրջակայքից: Իր հիմնական մասով հոսում է Հայկական լեռնաշխարհի սահմաններից դուրս, սակայն հնագույն ժամանակներում Մեծ Հայքը սահմանազատել է Վիրքից և Աղվանքից: Մուղանի դաշտում Կուրին է միանում Երասխը, որից հետո նրանք միասին թափվում են Կասպից ծով:

Բարձր Հայք նահանգից սկիզբ են առնում և Սև ծով թափվում Հալիս (Ալիս), Գայլ գետերը: Սև ծովի ավազանին է պատկանում նաև Սպերում գտնվող Ջորմայրի լեռներից սկիզբ առնող Ճորոխ գետը:

Լեռնաշխարհի տարածքում հանդիպում են բազմաթիվ լճեր

և լճակներ: Առավել խոշորներն են Կապուտան (Ուրմիո), Վանա և Սևանա լճերը: Ուրմիո լիճը ընկած է Իրանական բարձրավանդակի սահմանագլխին: Մակերեսով Կապուտանը նշված երեք լճերից ամենամեծն է (շուրջ 5900 քառ. կմ), անհոսք, փակ ավազան է և ունի աղի ջուր, որի պատճառով այստեղ ոչ մի ձկնատեսակ չի բազմանում: Գոլորշիացման բարձր աստիճանի պատճառով լճի հայելին անընդհատ կրճատվում է: Կապուտանի ափամերձ գոտին ունի աղի հաստ շերտ: Լիճ են թափվում մի շարք գետեր, որոնցից են Սալմաստը, Ուրմիան, Արասխը և այլն:

Վանա լիճը հայտնի է նաև Բզնունյաց, Տոսպա, Ռշտունյաց անուններով: Տարածքով երկրորդն է Հայկական լեռնաշխարհում (շուրջ 3800 քառ. կմ), անհոսք լիճ է՝ խիստ աղի ջրով: Լճի մակարդակը մշտապես տատանվում է՝ մերթ իջնելով, մերթ բարձրանալով: Այսպես, 1841 թ. ջրի խիստ բարձրացման հետևանքով լիճը ծածկել է հնագույն Արճեշ քաղաքը: Աղթամար ավանը նույնպես ջրասույզ է եղել: Այդ է պատճառը, որ «Աշխարհացույց»-ում հիշատակվող յոթ կղզիներից մեր օրերում մնացել են միայն Աղթամարը, Արտերը, Կտուցը և Լիմը, որոնցից ամենանշանավորը Աղթամարն է՝ Ս. Խաչ հոյակապ վանքով: Լճում բազմանում է միայն մեկ ձկնատեսակ՝ տառեխը: Վանա լիճը կազմում է փակ ավազան՝ իր մեջ ընդունելով այլևայլ գետեր և գետակներ: Վանա լճի ավազանը հայկական պետականության հնագույն բնօրրանն է: Միաժամանակ այն տնտեսական և մշակութային խոշոր նշանակություն ունեցող շրջան է: Լճի ափերին կառուցվել են բազմաթիվ բնակավայրեր՝ Վանը, Արճեշը, Արծկեն, Խլաթը, Դատվանը, Ոստանը և այլն:

Սևանա լիճը, որը հնում կոչվել է Գեղամա կամ Գեղարքունյաց ծով, ունի քաղցրահամ ջուր և հարուստ է բազմապիսի ձկնատեսակներով (իշխան, կողակ, բախտակ, ինչպես նաև վերջին տասնամյակներին այստեղ բերված սիգ): Մինչև մակարդակի արհեստական իջեցումը լիճն ուներ շուրջ 1420 քառ. կմ տարածություն (այժմ՝ 1240 քառ. կմ) և գտնվում էր 1919 մ բարձրության վրա (ներկայումս Սևանը 18 մ-ով ցածր է): Ուներ մեկ կղզի, որն այժմ վերածվել է թերակղզու: Այստեղ է գտնվում նշանավոր Սևանա վանքը (Սևանի անապատ)՝ Ս. Աստվածածին և Ս. Առաքելոց եկեղեցիներով: Սևանա լիճ են թափվում 28 գետ

ու գետակ, որոնցից առավել հայտնի են Ձկնագետը, Գավառագետը, Վարդենիսը, Մասրիկը: Դեռ ուրարտական ժամանակներում կառուցված հատուկ ջրանցքով Սևանից սկիզբ էր առնում Հրազդանը: Վերոհիշյալ լճերից բացի լեռնաշխարհի տարբեր շրջաններում հանդիպում են բազմաթիվ մանր լճակներ (մասամբ՝ աղի), որոնցից հայտնի են Արճակը, Գայլատուն, Ծովքը, Նազիկը, Արփան, Փարվանան և այլն:

Հայկական լեռնաշխարհն ունի հարուստ ընդերք: Անհիշելի ժամանակներից շահագործվել են Կողբի, Կաղզվանի և Նախճավանի աղահանքերը: Աղի նշանակալի հանքեր կային Աղձնիքում, Տուրուբերանում, Վասպուրականում: Աղահանքերով հարուստ է նաև Փոքր Հայքի տարածքը: Աղի մեծ պաշարներ են հայտնաբերվել Երևանի տարածքում (Ավան):

Վաղնջական ժամանակներից Հայկական լեռնաշխարհը հռչակված է իր մետաղային հանքերով և համարվում է մետաղագործության համաշխարհային հնագույն կենտրոններից մեկը: Բավական է նշել Մեծամորի մետաղաձուլական համալիրը Արարատյան դաշտում, որ գոյություն է ունեցել դեռ Ք.ա. 4-րդ հազարամյակում: Լեռնաշխարհի տարբեր շրջաններում հանդիպում են պղնձի, երկաթի, կապարի, զառիկի հանքեր: Հայտնի են Գուգարքի և Սյունիքի պղնձահանքերը: Պղնձով աչքի է ընկել նաև Աղձնիքը: Երկաթ հանդիպում է Հայաստանի նահանգների մեծ մասում, բայց հատկապես նշանավոր էին Աղձնիքի և Տուրուբերանի հանքերը, որոնք շահագործվել են հնագույն ժամանակներից: Երկաթի առատության շնորհիվ Տավրոսի լեռնային որոշ գավառների (Տալվորիկ, Խութ, Շենաձոր և այլն) բնակչության հիմնական զբաղմունքը եղել է դարբնությունն ու զինագործությունը: Ազնիվ մետաղներից հանդիպում են արծաթ և ոսկի: Արծաթահանքերով աչքի են ընկնում մասնավորապես Բարձր Հայքը, Ծոփքը, Արցախը և այլն: Հնուց հռչակված են եղել Սպերի ոսկու հանքերը: Ոսկով հարուստ էր նաև Սյունիքի Սողք (Ծավդեք, Զոդ) գավառը, Տայքի Ոսկեհատ լեռան շրջանը: Հանդիպում են նաև քրոմ, մոլիբդեն և բազմաթիվ այլ հազվագյուտ մետաղներ:

Հայկական լեռնաշխարհը նաև բազմապիսի շինանյութերի հարուստ շտեմարան է: Լայնորեն տարածված են բազմագույն

տուֆերը (վարդագույն, սև, սպիտակ և այլն), որոնցից առանձնապես հայտնի է Արթիկի հռչակավոր հանքավայրը: Հանդիպում են նաև մարմարի, բազալտի, գրանիտի, քարախնկի (պաղլեղի կամ շիբի), պեմզայի (գայլախազի), պերլիտների, կավի, կրաքարերի և այլ օգտակար հանածոների հարուստ հանքեր: Քարածխի զգալի պաշարներ կան Տայքի Օլթի գյուղաքաղաքի շրջանում, Շիրակում (Ջաջուռ), Տավուշում (Իջևան), Արարատում (Ջերմանիս):

Հայկական լեռնաշխարհի գրեթե բոլոր կողմերում բխել են սառը և տաք աղբյուրներ, որոնք հայտնի էին ջերմուկներ անունով: Հնուց ի վեր հռչակված էին Վայոց ձորի Ջերմուկը, Եղեգիք-Եղեգին՝ Կարնո դաշտում, Վարշակի աղբյուրները՝ Ծաղկոտնում, Ջերմաջրի (Արքունական բաղնիքներ) բուժիչ ջրերը՝ Վայկունիք գավառի տարածքում (Արցախ) և այլն: Հայտնի էին նաև Բջնիի, Արզնիի, Դիլիջանի, Արարատի, Գավառի տաք և սառը հանքային աղբյուրները:

Հայկական լեռնաշխարհը համարյա բոլոր կողմերից եզերվում է անտառներով: Անտառներ կան Ծոփքում, Բարձր Հայքի հյուսիսային հատվածում, Աղձնիքում, Տուրուբերանի Տավրոսյան լեռնաշղթայի շրջանում, Տայքում, Արցախում, Գուգարքում, Սյունիքի հարավում, Ուտիքի հյուսիսարևմտյան շրջաններում (Տավուշ, Աղստև), Այրարատի հյուսիս-արևելքում, Մոկքում: Ծառատեսակներից լայնորեն տարածված են կաղնին, հաճարենին, բոխին, թխկին, գիհին, հացենին, ընկուզենին: Արցախի և Ուտիքի անտառները հայտնի են իրենց վայրի մրգատու ծառատեսակներով: Տեղ-տեղ հանդիպում են նաև կեչու և սոճու պուրակներ: Հին Հայաստանում տարբեր ժամանակահատվածներում տնկվել են նաև արհեստական պուրակ-անտառներ: Դրանցից հայտնի են Սոսյաց (Արմավիրի մոտ), Ծննդոց (Բագարանի շրջանում), Խոսրովակերտ և Տաճար մայրի (Գառնու և Դվինի միջև ընկած տարածքում) անտառները:

Հայկական լեռնաշխարհի հողն արգավանդ է: Նախալեռնային՝ 1100-1300 մ բարձրության վրա գտնվող գոտին նշանավոր է խաղողի և զանազան կորիզավոր մրգերի (ծիրան, դեղձ) տեղական ընտիր տեսակներով: Հայաստանը շատ մրգատեսակների աճեցման հնագույն կենտրոններից է: Նախալեռնային գոտին

աչքի է ընկնում ինչպես մրգերի (խնձոր, տանձ, սալոր և այլն), այնպես էլ հացազգիների մշակությամբ: Հայկական լեռնաշխարհը ցորենի հնագույն հայրենիքն է, ուր այսօր էլ կարելի է հանդիպել դրա վայրի տեսակին: Հացահատիկային կուլտուրաների կենտրոններ են Տարոնի կամ Մշո, Բագրևանդի, Հարքի, Խարբերդի, Կարնո, Կարսի, Բասենի, Երզնկայի դաշտերը, Վանա լճի ավազանը և այլն: Ցածրադիր՝ կիսաանապատային և անապատային վայրերում արհեստական ոռոգման դեպքում աճում են բամբակ, բրինձ, թուզ, նուռ, ձիթենի, սեխ, ձմերուկ, բանջարանոցային այլևայլ կուլտուրաներ:

Բազմազան է Հայկական լեռնաշխարհի կենդանական աշխարհը: Անասնապահության զարգացման համար առկա բարենպաստ պայմանները թույլ են տվել անհիշելի ժամանակներից այստեղ բուծել ոչխար, այծ, խոշոր եղջերավոր անասուններ, ավանակ, թռչունների բազմաթիվ տեսակներ: Հայաստանը հնուց համարվել է ձիաբուծության խոշոր կենտրոն: Հույն աշխարհագրագետ Ստրաբոնի վկայությամբ Աքեմենյան տիրապետության շրջանում Հայաստանը Միհր (Միթրա) աստծո տոնակատարությունների համար տարեկան տրամադրել է 20 հազար մտրուկ: Ձիաբուծությամբ հայտնի էր մասնավորապես Արցախը: Հնում լայնորեն տարածված է եղել խոզաբուծությունը:

Վայրի կենդանիներից հանդիպում են գորշ արջը, գայլը, աղվեսը, անտառային կատուն, լուսանը, փորսուղը, եղջերուն, այծյամը, վայրի ոչխարը, քարայծը, բազմաթիվ թռչնատեսակներ: Հարկ է նշել, որ հնում վայրի կենդանական աշխարհն ավելի բազմազան է եղել: Ցավոք, մարդու գործունեության հետևանքով ներկայումս շատ կենդանիներ, որոնք հիշատակվում են հայկական և օտարալեզու սկզբնաղբյուրներում, կա՛մ իսպառ ոչնչացել են, կա՛մ խիստ կրճատվել է դրանց կենսատարածքը: Արարատյան դաշտում բազմացել է միջատի մի տեսակ, որից ստացվող հոչակավոր «որդան կարմիր» ներկը տնտեսական մեծ նշանակություն է ունեցել և հայտնի է եղել Հայաստանից դուրս:

Հնագույն սկզբնաղբյուրներում արժեքավոր տեղեկություններ են պահպանվել Հին Հայաստանի վարչատարածքային միավորների՝ «աշխարհների» («նահանգներ», «գավառներ») մասին: Ք.ա. IV դարի կեսերից հանդես է գալիս Մեծ և Փոքր Հայքեր հասկացությունը: Հին Հայաստանի երկու հատվածները դարերի ընթացքում ունեցել են հարափոփոխ սահմաններ, հետևաբար՝ նաև տարբեր ընդգրկում:

Փոքր Հայքը նախապես ներառնում էր Արևմտյան Եփրատի վերին ավազանը, նաև Հալիս և Գայլ գետերի վերնագավառները: Ք.ա. 331 թ. հետո, երբ վերականգնվեց հայոց անկախությունը, երկու Հայքերի զարգացումն ընթացավ ուրույն, ինքնատիպ ձևով: Որպես ինքնուրույն պետություն, Փոքր Հայքը գոյատևեց մինչև Ք.հ. I դար (եղել է ժամանակ, երբ նրա սահմանների մեջ են մտել մերձսևածովյան Պոնտոս երկրամասի գավառները՝ Տրապիզոն և Կերասունտ քաղաքներով), սակայն հետզհետե կորցնելով իր հիմնական տարածքները՝ վերածվեց նախ՝ Հռոմից կախյալ երկրի, իսկ Ք.հ. 72 թ. դարձավ վերջինիս սովորական նահանգներից մեկը:

Այլ կերպ ընթացավ հայոց պետականության բնօրրանի՝ Մեծ Հայքի պատմական ճակատագիրը: Լինելով ազգային պետություն՝ այն գոյատևեց նաև հետագա հարյուրամյակների ընթացքում (մինչև Ք.հ. V դարի առաջին տասնամյակները) և միավորող կենտրոն դարձավ հայկական երկրամասերի համար: Ըստ հռոմեացի նշանավոր գիտնական Պլինիոս Ավագի (Ք.հ. I դար) տեղեկությունների Արտաշիսյան Հայաստանը բաժանված է եղել 120 «զորավարություն»-գավառների (հունարեն՝ «ստրատեգիաների»): Արշակունիների հայոց գահին տիրանալուց հետո (Ք.հ. 66 թ.) տեղի ունեցան երկրի վարչատարածքային կառուցվածքի նոր ձևափոխություններ, որոնց հետևանքով վարչամիավորները խոշորացվեցին, ու հանդես եկավ վաղմիջնադարյան «աշխարհների» կամ «նահանգների» համակարգը: Մեծ Հայքի նահանգների բաժանումն արձանագրվել է դեռ հին աշխարհի խոշոր մտածող Կլավդիոս Պտղոմեոսի (Ք.հ. II դար) «Աշխարհագրություն» հայտնի երկում: Այստեղ հիշվում են 20 նահանգներ, որոնք ընդհանրություն ունեն Ագաթանգեղոսի (V դ.) «Պատմության» տվյալների հետ: Հետագա տասնամյակները, մասնավորապես IV դարի երկրորդ կեսին տեղ գտած իրադարձությունները, լուրջ փոփոխություններ մտցրին Մեծ Հայքի վարչական կառուցվածքում: Դա է պատճառը, որ «Աշ-

խարհացոյց»-ում Մեծ Հայքի նահանգների թիվն արդեն 15 էր: Դրանք են՝ Բարձր Հայք կամ Կարնո աշխարհ, Ծոփք կամ Զորրորդ Հայք, Աղձնիք, Տուրուբերան կամ Տարոնո աշխարհ, Մոկք, Կորճայք կամ Կորդվաց աշխարհ, Պարսկահայք, Վասպուրական, Սյունիք, Արցախ, Ուտիք, Փայտակարան, Գուգարք, Տայք, Այրարատ: Այս նահանգներն ունեցել են ավելի քան 190 գավառ: Հայոց պատմության մեջ հատկապես մեծ դեր են խաղացել Այրարատը, Վասպուրականը, Տուրուբերանը, Սյունիքը, Արցախը, Գուգարքը, Բարձր Հայքը, Ծոփքը:

Գտնվելով միջազգային խոշոր մայրուղիների խաչմերուկում և ունենալով ռազմավարական մեծ նշանակություն՝ Հայաստանը մշտապես ենթարկվել է օտար նվաճողների ասպատակություններին: Դրա հետևանքով երկրի սահմանները եղել են անկայուն, նրա տարածքն անընդհատ կրճատվել է: Ներկայումս հայ ժողովուրդն իր պետականությունը պահպանել է Մեծ Հայքի հյուսիսարևելյան 1/10 մասում՝ հանձինս ՀՀ և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (ԼՂՀ), որոնք ընդգրկում են Այրարատ, Սյունիք, Գուգարք, Ուտիք և Արցախ նահանգների առանձին հատվածները:

ԲԱԺԻՆ ԱՌԱՋԻՆ

ՀԻՆ ԵՎ ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԾԱԳՈՒՄՆ ՈՒ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

Հայագիտության մեջ առավել արծարծված խնդիրներից մեկը եղել և մնում է հայ ժողովրդի ծագման ու կազմավորման հարցը, որը մի շարք կետերում ցայսօր վիճահարույց է: Որտեղի՞ց է ծագում մեր ժողովուրդը, ո՞րն է նրա բնօրրանը, ե՞րբ է ձևավորվել իբրև ինքնուրույն էթնիկ միավոր և ո՞ր ժամանակներից է հիշատակվում հնագույն գրավոր հուշարձաններում: Այս հարցերի կամ դրանց առանձին կետերի խնդրահարույց լինելը պայմանավորված է ոչ միայն սկզբնաղբյուրների տեղեկությունների բազմազանությամբ, այլև երբեմն դրանցով զբաղվողների քաղաքական ու այլաբնույթ շահագրգռություններով, թեպետ առկա փաստերն ու ուսումնասիրության այսօրվա մակարդակը լիովին թույլ են տալիս պատասխանելու հայ ժողովրդի ծագմանն ու կազմավորմանը վերաբերող հիմնական հարցերին: Անդրադառնանք նախ հայերի ծագման մասին հին ու միջին դարերում գրի առնված ավանդազրույցներին, ընդհանուր գծերով ներկայացնենք պատմագիտության մեջ տարբեր ժամանակներում առավել տարածված տեսությունները, ապա հարցի ուսումնասիրման այսօրվա վիճակը և Հայաստանի ու հայերի մասին պահպանված հնագույն տեղեկությունները:

Հայերի ծագման վերաբերյալ հին ու միջին դարերում գրի են առնվել մի շարք ավանդություններ, որոնցից հայագիտության տեսանկյունից (որպես սկզբնաղբյուրային արժեք ունեցող) առավել մեծ հետաքրքրություն են ներկայացնում հայկականը, հունականը, հին եբրայականը, վրացականը և արաբականը:

ա. Հայկական ավանդությունը: *Ստեղծվել է դեռևս վաղն-*

ջական ժամանակներում և մեզ հասել Մովսես Խորենացու գրառմամբ: Ավանդության առանձին դրվագներ հիշատակվում են նաև միջնադարի այլ հայ մատենագիրների երկերում:

Ավանդության մեջ որոշակիորեն կարելի է առանձնացնել երկու շերտ: Առաջին՝ հնագույն շերտը ստեղծվել և գոյություն է ունեցել նախաքրիստոնեական ժամանակներում: Հնավանդ զրույցի համաձայն հայերը սերվել են աստվածազուն Հայկ նահապետից, որն առաջին արարչագործ աստվածների հսկա որդիներից էր: Ահա թե ինչպես է ներկայացնում հայոց նախնու ծագումը Մովսես Խորենացին. «Աստվածներից առաջիններն ահեղ էին և երևելի, և աշխարհի մեծամեծ բարիքների պատճառ, աշխարհի ու բազմամարդության սկիզբ: Սրանցից առաջ եկավ հսկաների սերունդը... Սրանցից մեկն էր և Հապետոսթյան Հայկը»...:

Քրիստոնեական ժամանակաշրջանում հայկական ավանդությունը ենթարկվում է ձևափոխության՝ հարմարեցվելով Աստվածաշնչի պատկերացումներին, որոնց համաձայն համաշխարհային ջրհեղեղից հետո ողջ մարդկությունը սկզբնավորվեց Նոյի երեք որդիներից (Հաբեթ, Քամ և Սեմ): Ըստ ավանդության նորացված, քրիստոնեացված տարբերակի Հայկ նահապետը համարվում է Հաբեթի ժառանգներից Թորգոմ նահապետի որդին. այդտեղից էլ միջնադարյան գրավոր աղբյուրներում Հայաստանին տրված «Թորգոմա տուն» և հայերին տրված «Թորգոմյան ազգ» անվանումները:

Ավանդությունը պատմում է, որ Հայկն իր տոհմով պատերազմել է Միջագետքի բռնակալ Բելի դեմ, հաղթել նրան, և ի նշանավորումն դրա այդ օրվանից հայերը սկսել են հաշվել Բուն Հայոց թվականը (ըստ ականավոր հայագետ Ղևոնդ Ալիշանի հաշվարկի՝ Բուն Հայոց թվականի սկզբնավորումը տեղի է ունեցել Ք.ա. 2492 թ. օգոստոսի 11-ին):

Հայկական ավանդության համաձայն Հայկ նահապետի անունով մեր ժողովուրդը կոչվեց «հայ» և երկիրը՝ «Հայաստան», իսկ նրա ժառանգներից Արամ նահապետի անունից

առաջացան Հայաստանի «Արմենիա» և հայերի «արմեն» անվանումները: Ըստ նույն ավանդության Հայկի ու Հայկազուն նահապետների անուններով կոչվեցին Հայկական լեռնաշխարհի բազմաթիվ տեղանուններ (Հայկից՝ Հայկաշեն, Արամանյակից՝ Արագած լեռ և Արագածոտն գավառ, Արամայիսից՝ Արմավիր, Երաստից՝ Երասխ (Արաքս), Շարայից՝ Շիրակ, Ամասիայից՝ Մասիս, Գեղամից՝ Գեղարքունիք և Գեղարքունյաց ծով, Սիսակից՝ Սիսական (Սյունիք), Արա Գեղեցիկից՝ Այրարատ և այլն):

բ. Հունական ավանդությունը: Հայերի ծագման հունական զրույցը կապվում է Հին Հունաստանում սիրված ու տարածված մի վիպաշարի՝ արգոնավորդների մասին ավանդության հետ: Վերջինիս համաձայն հայերի նախահայրը և Հայաստանի անվանադիրը Արմենոս Թեսալացին էր, որը Յասոնի և մյուս արգոնավորդների հետ մասնակցել է Ոսկե գեղմի համար կատարված նավարկությանը, հաստատվել Հայաստանում, որն էլ նրա անվամբ կոչվել է «Արմենիա»: Ավանդությունը հաղորդում է, որ նրա նախնական բնակավայրը եղել է Թեսալիայի (մարզ Հունաստանում) Արմենիոն քաղաքը:

Ավանդությունն առավել հանգամանորեն պատմում է Ք.ա. I դարի հույն մատենագիր Ստրաբոնը. նա հաղորդում է, թե իր տեղեկությունների սկզբնաղբյուրները Ալեքսանդր Մակեդոնացու զորավարների պատմություններն են: Դատելով փաստերից՝ հայերի ծագման մասին զրույցը ստեղծվել և արգոնավորդների ավանդությանն է զուգորդվել Մակեդոնացու արշավանքների ժամանակաշրջանում. արգոնավորդների ավանդության մասին պատմող ավելի վաղ աղբյուրներում հայերի ծագման վերաբերյալ տեղեկություն չկա: Ամենայն հավանականությամբ դա ունեցել է նույնպիսի քաղաքական միտում, ինչպիսիք են պարսիկների և մարերի (մեդացիներ) հունական ծագման մասին զրույցները: Պատմության մեջ բազմաթիվ են դեպքերը, երբ որևէ նվաճող իր ծրագրերն իրականացնելուն «իրավական» տեսք տալու համար նախապես ստեղծում էր կեղծ հիմնավորումներ: Ուստի և այս ավանդության առանցքը կազմող տեղեկությունը

հայերի թեսալական (հունական) ծագման վերաբերյալ չի կարող համարվել արժանահավատ:

Հայերի արևմտյան (փոյուգիական) ծագման մասին կցկտուր տեղեկություններ են պահպանվել հույն հեղինակներ Հերոդոտոսի (Ք.ա. V դ.), Եվդոքսոսի (Ք.ա. IV դ.) և այլոց երկերում: Այդ տեղեկություններում բերված փաստարկները վերաբերում են փոյուգիացի և հայ զինվորների իրար նման հագնված լինելուն և հայերենում փոյուգերեն շատ բառերի առկայությանը: Դրանցով, իհարկե, չի կարելի բացատրել մի ժողովրդի՝ մյուսից ծագած լինելը. փոյուգիացիներն ու հայերը ազգակից են (ունեն ընդհանուր՝ հնդեվրոպական ծագում), և նրանց լեզուներում նույն (կամ նույնարմատ) բառերի առկայությունը, առավել ևս զինվորների միանման հագուստ կրելը պետք է օրինաչափ համարել:

գ. Վրացական ավանդությունը: Վրացական ավանդությունը ստեղծվել է հայկականի ազդեցությամբ և գրի է առնվել IX- XI դարերի վրաց հեղինակների կողմից (Անանուն պատմիչ, Լեոնտի Մրովելի և այլք): Ըստ վրացական ավանդության Թարգամոսի (Թորգոմի) ութ որդիներից առաջացան մի շարք ժողովուրդներ. ավագ որդի Հայոսից՝ հայերը, Քարթլոսից՝ վրացիները, մյուս որդիներից՝ կովկասյան մի շարք ժողովուրդներ: Դատելով հատուկ անունների վերջավորություններից՝ այս ավանդությունն ունեցել է հունական ինչ-որ սկզբնաղբյուր ևս, որը մեզ չի հասել: Այն որոշակիորեն կրում է իր ստեղծման ժամանակաշրջանի քաղաքական իրավիճակի կնիքը, երբ հայոց Բագրատունի արքաների ազդեցությունը տարածված էր այսրկովկասյան երկրներում: Դրանով էլ պետք է բացատրել ութ եղբայրներից Հայոսի ավագագույնը լինելու հանգամանքը:

դ. Արաբական ավանդությունը: Արաբական ավանդությունը ևս հայերի ծագումը կապում է ջրհեղեղից հետո ազգերի՝ Նոյի որդիներից առաջացած լինելու պատկերացման հետ: Առավել հանգամանորեն այն շարադրված է XII-XIII դարերի արաբ մատենագիրներ Յակուտիի և Դիմաշկիի երկերում: Ըստ այդ

ավանդության Նոյի որդի Յաֆիսից (Հարեթ) ծնվեց Ավմարը, ապա նրա թոռ Լանթան (Թորգոմ), որի որդին էր Արմինին (հայերի նախնին) և որի եղբոր որդիներից սերում են աղվաններն ու վրացիները: Այս ավանդությունը ազգակից է համարում հայերին, հույներին, սլավոններին, ֆրանկներին և իրանական ցեղերին. հետաքրքիր է, որ այն պահպանել է ազգակից հնդեվրոպական ժողովուրդների միասնության շրջանից եկող հիշողությունը:

ե. Հին եբրայական ավանդությունը: Գրի է առնվել Հովսեպոս Փլավիոսի (Ք.ա. I - Ք.Հ. I դդ.) «Հրեական հնախոսության» էջերում: Հաղորդման համաձայն «Ուրոսը հաստատեց Հայաստանը»: Հայագիտության մեջ այդ տեղեկության սկզբնաղբյուրի և մեկնաբանության վերաբերյալ չկա միասնական տեսակետ: Կա կարծիք, որ այստեղ խոսքը Արամ նահապետի որդի Արա Գեղեցիկի մասին է: Ըստ մեկ այլ տեսակետի Ուրոսը կարող է լինել Վանի թագավորության սեպագիր արձանագրություններում հիշատակվող արքա «Ռուսա Էրիմենայի որդին»: Ասորեստանյան սեպագիր աղբյուրներում «Ռուսա» անունը հիշատակվում է նաև «Ուրսա» տարբերակով, իսկ «Էրիմենա» անունը կարող է մեկնաբանվել և՛ որպես անձնանուն, և՛ որպես ցեղանուն:

Նշվածներից բացի հայերի ծագման մասին պահպանվել են այլ ավանդազրույցներ ևս, որոնք, սակայն, այս կամ այն չափով կրկնում են արդեն հիշատակվածներին, չունեն սկզբնաղբյուրային նշանակություն:

զ. Հայ ժողովրդի ծագման հարցը պատմագիտության մեջ: Հինգերորդ դարից մինչև XIX դարի կեսերը հայերի ծագման հարցում անառարկելիորեն ընդունվում էր հայկական ավանդությունը՝ ձևակերպված Մովսես Խորենացու «Հայոց պատմության» էջերում, որը դարեր շարունակ եղել է մեր ժողովրդի համար ծագումնաբանության վկայագիր և դասագիրք: XIX դարում գիտության մեջ ի հայտ եկած նորությունները, սակայն կասկած առաջացրեցին Պատմահոր տվյալների արժանահավա-

տության նկատմամբ, և հարցականի տակ դրվեց հայոց ծագումնաբանության վերաբերյալ ազգային ավանդության ճշմարտացիությունը:

XIX դարում ծնունդ առավ համեմատական լեզվաբանությունը, որի շնորհիվ պարզ դարձավ, որ նախապատմական ժամանակներում ներկայիս ժողովուրդների նախնիները կազմել են մեծ ընտանիքներ, որոնք գիտության մեջ կոչվեցին «մայր ժողովուրդներ», իսկ վերջիններիս զբաղեցրած տարածքները՝ «նախահայրենիքներ»: Այդ ժողովուրդներից է նաև «Հնդեվրոպական մայր ժողովուրդը», որը զբաղեցրել է միևնույն տարածաշրջանը՝ «Հնդեվրոպական նախահայրենիքը» և խոսել միևնույն լեզվով: Լեզվաընտանիքի անվանումը պայմանավորված է դրան պատկանող ժողովուրդների՝ Հնդկաստանից մինչև Եվրոպայի արևմուտք տարածվածությամբ: Հնդեվրոպական մայր լեզվից են առաջացել ռոմանական, գերմանական, սլավոնական, հնդկական, իրանական և այլ լեզվաճյուղեր, որոնք իրենց հերթին տրոհվել են ավելի փոքր լեզվաճյուղերի ու լեզուների: Հայերը ևս ունեն Հնդեվրոպական ծագում: Հայերենը նույնպես առաջացել է Հնդեվրոպական մայր լեզվի տրոհման հետևանքով և առ այսօր մնացել որպես առանձին ու ինքնուրույն լեզվաճյուղ:

Հնդեվրոպական ժողովուրդների ծագման հարցը այս տեսության շրջանակներում չաղկապված է Հնդեվրոպական նախահայրենիքի տեղադրության հետ: Տարբեր ժամանակներում գիտության մեջ գերիշխող են եղել նախահայրենիքի տեղադրության տարբեր վարկածներ (Հարավարևելյան Եվրոպա, Հարավ-ռուսական տափաստաններ, Առաջավոր Ասիայի հյուսիս և այլն): XIX դարում համեմատական լեզվաբանության մեջ լայն տարածում ստացավ Հնդեվրոպական նախահայրենիքը Հարավարևելյան Եվրոպայում տեղադրելու տեսակետը: Դա մի կողմից, մյուս կողմից՝ հույն հեղինակների հաղորդումները հայերի բալկանյան ծագման վերաբերյալ առաջ բերեցին հայերի եկվոր լինելու տեսությունը: Ձևավորվեց մի տեսակետ, ըստ որի

հայերը գաղթելով Բալկանյան թերակղզուց՝ Ք.ա. VIII-VI դարերում մուտք են գործել Ուրարտու, նվաճել այն և վերջինիս անկումից հետո Ք.ա. VI դարում ստեղծել իրենց պետությունը (Երվանդունյաց թագավորությունը): Այս տեսակետը, որ չի հիմնվում փաստերի ամբողջության վրա, ուստի և չի կարող ճշմարտացի լինել մի շարք պատճառներով, դարձավ և մինչ օրս մնում է քաղաքական շահարկումների առարկա (հատկապես պատմության թուրք կեղծարարների կողմից):

Հաջորդը հայերի ծագման վերաբերյալ հարեթական կամ ասիանիկ տեսությունն էր, համաձայն որի հայերենը ոչ հնդեվրոպական, խառնածին լեզու է, հետևաբար հայերը չեն մասնակցել հնդեվրոպական գաղթին և առաջացել են տեղարնիկ ասիական (այդտեղից էլ «ասիանիկ» անվանումը) ցեղերից: Այս տեսությունը չէր կարող դիմանալ լուրջ գիտական քննության, և այժմ էլ մերժվում է, քանի որ չեն լինում խառնածին լեզուներ. երկու լեզուների ձուլումից չի առաջանում երրորդը:

1980-ական թվականների սկզբներին վերարծարծվեց դեռևս դարասկզբին հայտնված տեսակետն այն մասին, որ Հնդեվրոպական նախահայրենիքը Ք.ա. 5-4-րդ հազարամյակներում գտնվել է Առաջավոր Ասիայի հյուսիսում, ավելի որոշակի՝ Հայկական լեռնաշխարհում, Փոքր Ասիայի արևելյան շրջաններում, Հյուսիսային Միջագետքում և Իրանական սարահարթի հյուսիս-արևմուտքում: Այս տեսակետը գնալով ավելի ամրապնդվում է նոր ի հայտ եկող փաստերով և այսօր ընդունվում է մասնագետների մեծ մասի կողմից: Հայ ժողովրդի ծագման հարցը այս տեսությամբ ստացավ նոր բացատրություն: Ինքնըստինքյան հերքվեց հայերի եկվորության հարցը, քանի որ Հնդեվրոպական նախահայրենիքը գտնվել է հենց այն տարածքում, ուր կազմավորվել և իր պատմական ուղին է անցել հայ ժողովուրդը:

Ներկայումս հստակորեն կարելի է ասել, որ հայերը Ք.ա. 5-4-րդ հազարամյակներում կազմել են Հնդեվրոպական մայր ժո-

ղովրդի մի մասը և 4-րդ հազարամյակի վերջին ու 3-րդի սկզբներին առանձնացել են հնդեվրոպական ընդհանրությունից: Այդ ժամանակաշրջանից էլ սկսվել է հայ ժողովրդի կազմավորումը, որն ընթացել է երկու փուլով: Առաջինը, որ կարելի է բնութագրել որպես ցեղային միությունների և վաղ պետական կազմավորումների ժամանակաշրջան, տեղի է ունեցել Ք.ա. 3-2-րդ հազարամյակներում: Երկրորդ փուլում, շնորհիվ միասնական պետականության ստեղծման, Ք.ա. VI -V դարերում ավարտվել է հայ ժողովրդի կազմավորման ընթացքը:

Ամփոփելով ասվածը՝ կարելի է պնդել, որ հայերեն լեզուն ու նրանով խոսողները հնդեվրոպական ընդհանրությունից անջատվել և ինքնուրույն են դարձել Ք.ա. 4-3-րդ հազարամյակների սահմանում: Հենց այդ ժամանակներից էլ մեր ժողովուրդը հիշատակվում է Հայկական լեռնաշխարհում, ուր գործել, գոյատևել ու կերտել է իր պատմությունը:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՓՈՒԼԵՐԸ

(Ք. ա. 3-րդ հազարամյակ-1375 թվական)

1. ՀԱՅԱՍՏԱՆԸ Ք.Ա. 3-ՐԴ ՀԱԶԱՐԱՄՅԱԿՈՒՄ

Հայկական լեռնաշխարհում նախնադարից անցումը քաղաքակրթությանը և վաղ պետական կազմավորումներին տեղի է ունեցել վաղ բրոնզի դարում (Ք.ա. 4-րդ հազարամյակի կեսերից մինչև Ք.ա. XXIV դար): Այդ ընթացքում ողջ Հայկական լեռնաշխարհը միավորված էր մեկ մշակութային գոտու մեջ: Դա խոսում է լեռնաշխարհի բնակիչների ազգակցության մասին:

Հայկական լեռնաշխարհում վաղ բրոնզի դարաշրջանի հնավայրերից հայտնաբերվել են կիսաթանկարժեք քարերից պատրաստված գուրզեր, որոնք, հավանաբար, եղել են իշխանության խորհրդանշաններ: Ժամանակի գիտության բացառիկ նվաճում է Մեծամորի աստղադիտարանը, որտեղից աստղային երկինքը դիտարկել են Ք.ա. 2800-2600 թվականներին: Այդ փաստը եկավ հիմնավորելու եվրոպական աստղագետ-պատմաբանների դեռևս XIX դարավերջին կատարած եզրահանգումները, որոնց համաձայն կենդանակերպի (զոդիակի) համաստեղությունների անվանակոչումը կատարվել է Հայկական լեռնաշխարհում Ք.ա. մոտ XXVIII դարում:

Հայաստանի վաղբրոնզեդարյան խեցեղենը հարուստ է խորհրդանշաններով և գաղափարագրերով, որոնք հետագայում դարձան Հայկական մեհենագրության հիմքը:

ա. Առաջին պետական կազմավորումը. Արատտա: *Հայկա-*

կան լեռնաշխարհի մասին վաղագույն տեղեկությունները պահպանվել են հնագույն միջագետքյան (չումերական և աքադական) արձանագրություններում: Շումերական բնագրերում՝ Ք.ա. XXVIII-XXVII դարերի իրադարձությունների հետ կապված, հիշատակվում է Արատտա երկիրը, որն ուսումնասիրողները նույնացնում են Աստվածաշնչի Արարատ-Հայաստանի հետ:

Արատտան եղել է աստվածապետական (կրոնապետական կամ թեոկրատական) կարգեր ունեցող երկիր: Դա պետական կառավարման այն ձևն է, որում և՛ աշխարհիկ, և՛ հոգևոր ողջ իշխանությունը գտնվում էր հոգևոր դասի ձեռքում, որն էլ Աստծո անունից կառավարում էր երկիրը: Արատտայի արքան միաժամանակ նաև երկրի գերագույն քրմապետն էր: Երկրի ճակատագրին վերաբերող կարևոր հարցերի լուծման համար քրմապետ-արքան գումարում էր Ավագների ժողով: Հիշատակվում է երկրի գլխավոր տնտեսական պաշտոնյան, որը կոչվում էր «կառավարիչ»: Արատտայում հիշատակվում են նաև տնտեսական ոլորտի պաշտոնյաներ՝ հարկահաններ, վերակացուներ և այլն:

Արատտայի բնակիչները մետաղներ ու թանկարժեք քարեր են արտահանել Միջագետք և փոխարենը ներմուծել հացահատիկ ու երկրագործական այլ ապրանքներ:

Շումերական բնագրերը տեղեկություններ են պահպանել Արատտայի բանակի և պարսպապատ մայրաքաղաքի մասին: Արատտայի մասին կարևորագույն տեղեկություններից մեկը երկրում սեփական գրի գործածության փաստն է:

բ. «Արմենիա» անվան հնագույն հիշատակությունները. Արմի, Արման(ում), Արամ: *Ք.ա. XXVI-XXIII դարերում ներկայիս Սիրիայի տարածքում բարձրանում է Էբլա պետությունը, որն առևտրական լայն ցանցով կապված է եղել շրջակա երկրների հետ: Էբլայի բնագրերը Հայկական լեռնաշխարհում և հարակից տարածքներում հիշատակում են երկու տասնյակից ավելի բնակավայրեր: Դրանցից առանձնապես կարևորվում է Արմին, որը համանուն թագավորության մայրաքաղաքն էր: Ք.ա. XXIV - XXIII դարերի բնագրերում հիշատակվում են Արմի երկրում բնակված «Հայայի որդիները» (Հայորդիները), որոնք գործուն փոխհարաբերություններ են ունեցել Էբլայի հետ:*

Ք.ա. 3-րդ հազարամյակի սկզբին Արաբական թերակղզուց Միջագետք ներթափանցած սեմական ցեղերը Ք.ա. XXIV դարի երկրորդ կեսին ստեղծում են պատմությանը հայտնի առաջին բռնակալությունը: Պետության հիմնադիր Սարգոնը, հաստատվելով Միջագետքի կենտրոնում՝ Աքադ քաղաքում, ստեղծեց պատմության մեջ մինչ օրս հայտնի առաջին մշտական մասնագիտացված բանակը և չուրջ 10 տարի տևած պատերազմների ընթացքում հիմնեց նախադեպը չունեցող մի աշխարհակալություն: Նրա զորքերը հյուսիսում հասան մինչև Հայկական լեռնաշխարհի հարավային փեշերը, բայց անհաջողություն կրեցին այնտեղ: Մեզ է հասել Սարգոն Աքադացու տերության աշխարհագրությունը ներկայացնող մի արձանագրություն, որում առաջին անգամ ներկայացված է «Արմենիա» անվան նախաձևը՝ Արման(ում) երկրանունը:

Աքադի չորրորդ տիրակալ Նարամ-Սուենը (Նարամ-Սին, Ք.ա. XXIII դար) Եփրատի և Տիգրիսի հոսանքներն ի վեր ձեռնարկել է բազմաթիվ ռազմական արշավանքներ: Նա Վանա և Ուրմիո լճերի միջնատարածքում հիշատակում է Արամ երկիրը: Այդ տարածքը Վանի թագավորության ժամանակաշրջանում ևս հիշատակվում է գրեթե նույն տեսքով (Արամալի, Արմարիլի): Հիշենք, որ ըստ Մովսես Խորենացու տեղեկության «արմեն» և «Արմենիա» անունների հիմքում ընկած է «Արամ» անունը:

Նարամ-Սուենը կատարեց մի քանի արշավանք դեպի Եփրատի վերին հոսանքի շրջանը: Այդ մասին է պատմում նրա ամենածավալուն արձանագրություններից մեկը, որում Արման(ում)ը ներկայանում է իբրև մի երկիր, որը «երբևէ՝ մարդկության արարումից ի վեր, ոչ մի թագավոր չէր նվաճել»: Նա Դիարբեքիրի շրջանում թողել է իր պատկերաքանդակով և արձանագրությամբ մի կոթող, որը հուշում է, որ Արման(ում) երկիրը գտնվել է Աղձնիքի տարածքում:

Նարամ-Սուենի դեմ ձևավորվում է Հայկական լեռնաշխարհի և հարակից 17 պետական կազմավորումների դաշինքը՝ Արման(ում) երկրի գլխավորությամբ: Հետագայում տասնյոթ երկրների դաշինքի ղեկավարումը Արման(ում)ից անցավ Կուտիական երկրին (Կորդվաց աշխարհ), որն էլ վերջ դրեց Նարամ-Սուենի բռնակալական իշխանությանը:

2. ՀԱՅԱՍՏԱՆԸ Ք.Ա. 2-ՐԴ ՀԱԶԱՐԱՄՅԱԿՈՒՄ

ա. Հայկական լեռնաշխարհը Ք.ա. XX-XVIII դարերում: Ք.ա. XX-XVIII դարերում Առաջավոր Ասիայի հյուսիսում գործում էր մետաղի առևտրի մայրուղին, որը ձգվում էր Քանեշից (քաղաք Փոքր Ասիայի արևելքում) մինչև Աշուր: Մայրուղու հետ կապի մեջ են եղել Հայկական լեռնաշխարհի ավելի քան երեք տասնյակ բնակավայրեր, որտեղից արտահանվում էին զանազան մետաղներ՝ ոսկի, արծաթ, պղինձ, անագ և այլն: Քանեշից գտնված սեպագիր արձանագրություններում հիշատակվում են հայաստանյան տասնյակ իշխանություններ՝ Ծուփանա (Ծոփք), Թեգարամա (Թոգարմա, Թորգոմա տուն), Խախ(ում), Տուգրիշ և այլն:

բ. Միտաննի թագավորությունը: Ք. ա. XVI դարում Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմուտքում և Միջագետքի հյուսիսում ստեղծվեց հնդեվրոպական Միտաննի թագավորությունը՝ Վաշշուգանե մայրաքաղաքով: Այս թագավորությունը էական դերակատարում է ունենում Առաջավոր Ասիայում՝ սկսած Ք.ա. XVI դարի վերջերից: Եգիպտական, բաբելական, խեթական տիրակալների նման Միտաննիի արքաները կրում էին «Մեծ թագավոր» տիտղոսը:

Միտաննիի արքաների ազդեցությունը տարածվել է արևելքում մինչև Բոհտան և Մեծ Զաբ գետերի հովիտները, արևմուտքում՝ մինչև Միջերկրականի ծովեզերքը և Կիլիկյան Տավրոսի լեռները:

Միտաննիի թագավորները հնդեվրոպական ծագում ունեին: Այդ մասին են վկայում ոչ միայն նրանց անունները, այլև հնդեվրոպական աստվածների պաշտամունքը:

Միտաննիին վիճակված էր լուրջ ռազմական բախման մեջ մտնել Եգիպտոսի հետ, քանի որ վերջինս հիքսոսների դեմ վրիժառու պատերազմ սկսելով՝ հարվածներն ուղղել էր հենց Միտաննիի դեմ: Միտաննին երկարատև ռազմական բախումների մեջ է եղել Փոքր Ասիայում գտնվող Խեթական տերության հետ: Նա անկում է ապրել Ք.ա. XIII դարում՝ հզորացող Ասորեստանի հարվածներից:

գ. Հայասա թագավորությունը: Խեթական սեպագիր արձանագրություններում Ք.ա. XV-XIII դարերի իրադարձությունների կապակցությամբ հիշատակվում է Հայասա երկիրը: Երկրանվան հիմքում հայ ժողովրդի ինքնանվանումն է: Խեթերենում (ա)սա մասնիկով են կազմվում տեղանունները, այսինքն՝ «Հայասա» նշանակում է «Հայք, Հայաստան»: Հայասան հիշատակվում է Հայկական լեռնաշխարհի արևմտյան շրջաններում: Հայասայի կարևոր կենտրոններից էր Կումախան՝ հետագա Բարձր Հայք աշխարհի Անի-Կամախը, որտեղ գտնվում էր Հայոց թագավորների դամբարանը:

Հայասան վերջին անգամ հիշատակվում է Ք.ա. XIII դարի վերջին: Գիտության մեջ Հայասայի պատմության ավարտի մասին կա երկու տեսակետ: Մեկի համաձայն Հայասան պետք է անկում ապրած լինի Ք.ա. XIII դարավերջին: Մյուս տեսակետի կողմնակիցները գտնում են, որ այն շարունակել է իր գոյությունը, պարզապես այլևս չի հիշատակվում «Հայասա» խեթերեն անվամբ, քանի որ Ք.ա. XII դ. անկում էր ապրել Խեթական տերությունը:

Հայասան ուներ իր արքունիքը, բանակը և դիցապաշտական կենտրոնները: Հայասան ռազմադաշտ էր դուրս բերում 700 մարտակառքից և 10 հազարանոց հետևազորից բաղկացած բանակ, որն այդ ժամանակաշրջանի համար նշանակալից ուժ էր:

Այն ուներ նաև իր դիցարանը: Դատելով խեթական սկզբնաղբյուրներում խեթա-հայասական նամակագրության հիշատակությունից՝ Հայասան ուներ արքունի դիվան՝ իր դպիրներով, որոնք վարել են պետական գրագրությունը:

դ. Նաիրյան «երկրները»: Ասորեստանյան աղբյուրներում Վանա լճի շրջանը և դրանից դեպի հարավ ու արևմուտք ընկած ընդարձակ տարածությունները ընդհանրական անունով կոչվում են «Նաիրի»: Այդ ընդարձակ տարածքում ապրում էին դաշնային հիմունքներով միավորված բազմաթիվ ցեղապետություններ, որոնք ասուրական աղբյուրներում անվանվում են «երկրներ»: «Նաիրի» երկրանունն առաջին անգամ հիշատակում է Ասորեստանի Սալմանասար I թագավորը (Ք.ա. XIII դ. առաջին կես):

Ք.ա. XIII դ. Նաիրյան «երկրների» հզորության մասին է վկայում այն փաստը, որ Սալմանասար I-ը ստիպված էր սահ-

մանամերձ մի քանի քաղաքներում նշանակել հատուկ պահակազորեր՝ Ասորեստանի տիրապետության շրջանների վրա նաիրյան հարձակումները կանխելու նպատակով:

Նաիրյան «երկրները» և դրանց 40 առաջնորդները (որոնք աղբյուրներում կոչվում են «թագավորներ») հիշատակվում են Սալմանասար I-ի հաջորդի՝ Թուկուլթի-Նինուրտայի (Ք.ա. XIII դ.), իսկ մեկուկես դար անց՝ Թիգլաթպալասար I-ի (Ք.ա. XII-XI դդ.) արձանագրություններում: Ուշագրավ է, որ չնայած իր նախորդները գրում են, թե իրը գրավել ու հպատակեցրել են Նաիրյան «երկրները», Թիգլաթպալասար I-ը Նաիրին անվանում է «ընդարձակ, հպատակություն չճանաչող և անծանոթ երկիր»:

Ասորեստանյան արքաների արձանագրություններում հիշատակվում են Նաիրիի «մեծամեծ քաղաքները», «նրանց հարստությունը», «նրանց բազմաթիվ ձիերի, ջորիների երամակները, երինջների հոտերը և նրանց երկրագործական անթիվ ունեցվածքը», որոնք խոսում են այդ շրջանում երկրի հզորության և հարստության մասին:

Երկու դար անց Ասորեստանի արքա Աշշուրնասիրապալ II թագավորի (Ք.ա. IX դար) արձանագրություններից տեղեկանում ենք, որ նա չորս խոշոր արշավանք է կատարել Նաիրի երկրի դեմ, ընդ որում այնտեղ ոչ թե խոսվում է մի քանի «երկրների» դաշինքի կամ համադաշնության մասին, այլ մեկ միասնական երկիր-պետության մասին: Հիշատակվում են «Նաիրի երկրում 250 քաղաք՝ իրենց զորավոր պարիսպներով»... և այլն:

Նաիրին որպես մեկ միասնական պետություն է հիշատակվում նաև նրա հաջորդի՝ Սալմանասար III-ի (Ք.ա. IX դար) արձանագրություններում: «Նաիրի» անվամբ են իրենց երկիրը կոչում Վանի թագավորության (Բիայնիլի, Ուրարտու, Արարատ) տիրակալները ասուրերենով գրված իրենց արձանագրություններում:

3. ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՌԱՋԻՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ՝ ԱՐԱՐԱՏՅԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ (Ք.ա. IX-VI դարեր)

ա. Արարատյան թագավորության քաղաքական կացությունը: Ք.ա. IX դարի առաջին քառորդից սկսած՝ Ասորեստանի տիրակալները կարևոր տեղեկություններ են հաղորդում Հայկական լեռնաշխարհում ծաղկած մի այլ քաղաքական կազմավորման մասին, որը նրանց սեպագիր արձանագրություններում մշտապես կոչվում է Ուրարտու «երկիր» (Mat Urartu):

Ուրարտու «աշխարհի» բնօրրանի տեղորոշման հարցում պատմագիտության մեջ արտահայտվել են տարբեր և իրարամերժ կարծիքներ: Դեռևս XIX դարի առաջին կեսին եվրոպացի որոշ արևելագետներ առաջին անգամ մի քանի տասնյակ սեպաձև արձանագրություններ և նյութեղեն այլ մնացորդներ հայտնաբերելով Վան (Տոսպավան) քաղաքում, դրա մերձակա շրջաններում՝ այդ մշակույթը կերտող քաղաքական կազմավորման բնօրրանը տեղորոշեցին Վանում և հարակից տարածքում:

Այդ նորագյուտ արձանագրությունների դեռևս չվերծանված լեզուն անվանակոչվեց «վանյան» կամ «տոսպյան», իսկ քաղաքական կազմավորումը՝ «Վանի թագավորություն»: Այնուհետև այդ տեղորոշումը գրեթե համընդհանուր տարածում գտավ ինչպես օտար, այնպես էլ հայ արևելագետների շրջաններում:

Վերոհիշյալ կարծիքին հակառակ՝ մի շարք արևելագետներ Ուրարտու քաղաքական կազմավորման բնօրրանը համարեցին Այրարատ «աշխարհը», հատկապես Երասխի դաշտը: Իսկ մյուսներն էլ Ուրարտուի բնօրրանն սկսեցին որոնել Բարձր Հայք «աշխարհում» և Արածանի գետի միջնատարածքում:

Ք.ա. XIV դարից սկսած՝ Ասորեստանի տիրակալները թեև բազմիցս արշավել են Հայկական լեռնաշխարհի քաղաքական կազմավորումների դեմ, բայց մինչև Ք.ա. IX դարը նրանց թողած արձանագրություններում չկա որևէ հիշատակություն Ուրարտու «աշխարհի» մասին: Դրանից կարելի է եզրակացնել, որ բուն Ուրարտու «աշխարհը» հարավից և արևմուտքից պատ-

նեչվելով Նաիրյան ցեղապետությունների ստվար ցանցով՝ մինչև IX դարի սկիզբը զերծ էր մնացել Ասորեստանի ներխուժումներից և ապրել էր համեմատաբար պարփակ կյանքով: «Ուրարտու աշխարհ» (Mat Urartu) անվանումն առաջին անգամ հիշատակում է Ասորեստանի Աշշուրնասիրապալ II թագավորը (Ք.ա. 883-859)՝ Սուբնատ գետի ակունքի շրջանից, այսինքն Հայկական Տավրոսի լեռնաշղթայի արևմտյան հատվածից դեպի հյուսիս-արևելք ընկած գավառներն ասպատակելու կապակցությամբ: Աշշուրնասիրապալ II-ին հաջորդած Սալմանասար III-ի (Ք.ա. 858-824) արձանագրություններում Ուրարտու «աշխարհն» մատնանշվում էր Հայկական լեռնաշխարհի միջնատարածքում, ճիշտ այն «աշխարհում», որը հնուց հայտնի է Արարատ կամ Այրարատ անվանումով: Սույն տեղորոշմամբ միանգամայն պարզ է դառնում, որ սեմական լեզուներում, մասնավորապես աքադերեն արձանագրություններում և արամեերեն ձեռագրերում պահպանված Ուրարտու, Ուրաշտու, Ուրարատ, Ուրարտ, Արարտ և Արարատ համանիշ երկրանվանաձևերն ակներևորեն առաջացել են Հայոց միջնաշխարհի հնամենի Արարատ (Այրարատ) բնանվանումից:

Այրարատ միջնաշխարհում առաջադիմած քաղաքական կազմավորումը, ի տարբերություն Նաիրյան ազգակից ու հասակակից եզրաշխարհների, ապրելով համեմատաբար անխաթար բնականոն զարգացում՝ արդեն Ք.ա. IX դարի առաջին կեսին հասել էր ռազմա-քաղաքական և տնտեսական այնպիսի հզորության, որ ի դեմս Արամե արքայի (Ք.ա. մոտ 860-840) ոչ միայն հաջողությամբ դիմագրավեց Ասորեստանի հարձակումները, այլև գլխավորեց Հայկական լեռնաշխարհի ազգակից ցեղերի ու ցեղային «աշխարհների» համախմբման պատմական ընթացքը և դրեց Արարատյան միասնական տերության հիմքերը: Այդ տպավորիչ պատմական շրջադարձն արձագանքվել է նաև ժողովրդական հինավուրց ասքերում (պատմազրույցներում), որոնց պատառիկները բանաքաղել և իր «Պատմություն Հայոց» երկում է զետեղել Մովսես Խորենացին: Դրանց համաձայն Այրարատ «աշխարհի» Արմավիր քաղաքում կառավարող Հայկյան Արամը այլևս չհանդուրժելով իր Հայրենիքի սահմանների նկատմամբ «օտարածին ցեղերի» ոտնձգությունները և իր

«արյան հարազատների» վրա նրանց բռնացումները՝ համախմբել է «ընտանի արանց» ուժերը, հակահարվածներ հասցրել ասորեստանցիներին և շրջակա այլ թշնամիներին, «բոլոր կողմերից ընդարձակել է Հայոց սահմանները» և հիմնել հայկական առաջին միասնական թագավորությունը: Պատմահայրն ավելացնում է, որ շատ այլ պատումներ էլ կան Հայկյան Արամի բազում քաջագործությունների մասին:

Արարատյան թագավորության սահմանների ընդլայնման և ազդեցության ոլորտների ծավալման քաղաքականությունը հաստատակամորեն շարունակեցին Արամե արքայի անմիջական հաջորդները: Այսպես, Սալմանասար III-ի տարեգրություններում պահպանված մի տեղեկության համաձայն Ք.ա. 832/831 թթ. Արածանի գետի միջին և ստորին հոսանքի շրջաններն արդեն անցել էին Ուրարտուի Սարդուրի I թագավորի (Ք.ա. մոտ 840-825) հսկողության ներքո: Այնուհետև Սարդուրի I-ը, օգտվելով Ասորեստանում Ք.ա. 827-825 թթ. բորբոքված գահակալական կռիվներից և այնտեղ տիրող խառնաշփոթ կացությունից, անկասելի առաջխաղացմամբ միավորեց նաև Վանա լճի ավազանի ընդարձակ շրջանները, որով փաստորեն Արարատյան տերության հարավային սահմանները ընդլայնվեցին և հասան Հայկական Տավրոսի լեռնաշղթային: Վանա լճի ավազանի շրջանների միավորումը Սարդուրի I արքան ամրափակեց լճի հարավարևելյան ափին արքունական նոր բերդաքաղաք Տուշպայի (Տոսպավան) հիմնադրմամբ, որն այնուհետև դարձավ Արարատյան տերության հենակայանը հարավում՝ ընդդեմ Ասորեստանից սպառնացող հետագա վտանգների: Տուշպայի կառուցապատման և հարդարման աշխատանքներն ավարտվել են Ք.ա. IX դարի վերջին, մասնավորապես բերդաքաղաքին խմելու և ոռոգելու ջուր մատակարարող Մենուայի ջրանցքի շինարարությամբ:

Իշպուինի թագավորի (Ք.ա. մոտ 825-810), հատկապես նրա որդու և հաջորդի՝ Մենուայի (Ք.ա. մոտ 810-786) գահակալման տարիներին Հայկական լեռնաշխարհի ցեղերն ու ցեղային «աշխարհները» մեծ մասամբ ամփոփվեցին Արարատյան միասնական տերության մեջ: Արարատյան թագավորության հզորացումը, վերելքն ու ազդեցության ոլորտների ծավալումը չարունակ-

վեցին նաև Արգիշտի I-ի (մոտ 786-764), Սարդուրի II-ի (մոտ 764-735) և Ռուսա I-ի (մոտ 735-714) գահակալման տարիներին, որոնց գլխավորությամբ դրացի բազմաթիվ երկրներ ներքաշվեցին հակաասորեստանյան ռազմա - քաղաքական խմբավորման մեջ: Վերոհիշյալ թագավորների արձանագրություններում պահպանված տեղեկությունների համաձայն Արարատյան պետության բուն սահմանները հյուսիս-արևմուտքում հասնում էին մինչև Խալիտու (Խաղտիք) և Կուլխա (Կողքիս) «երկրներ», հյուսիսում և հյուսիս-արևելքում՝ Կուրի, արևմուտքում՝ Եփրատի գետահովիտների «երկրները», հարավ-արևմուտքում՝ Մելիտեա (Մելիտինե), Կումմախա (Կոմմագենե), Քիլակու (Կիլիկիա), Արմե կամ Ուրմե և դրանց մերձակա այլ «երկրներ», հարավում՝ Կորդվաց լեռնաշղթան, իսկ հարավ- արևելքում՝ Կապուտան լճի մերձափնյա շրջանները կազմող Մանա «երկիրը»:

Արարատյան միասնական տերության մեջ Հայկական լեռնաշխարհի տարանջատ ցեղերի ու ցեղային «աշխարհներ» համախմբման բուռն ընթացքը պայմանավորված էր մի կողմից՝ նրանց լեզվաբարբառների և արյան մերձավորությամբ, աշխարհագրական միևնույն միջավայրով և դրացիական կապերով, հասարակական զարգացման համանման մակարդակով և Արարատյան արքայատան խելամիտ քաղաքականությամբ, մյուս կողմից՝ օտարազգի ընդհանուր թշնամուն՝ Ասորեստանին, համատեղ ուժերով դիմակայելու անհրաժեշտությամբ:

Ասորեստանի Թիգլաթպալասար III թագավորի (Ք.ա. 743 և 735 թթ.), ինչպես նաև Սարգոն II-ի (Ք.ա. 714 թ.) ելուզակային արշավանքները չսասանեցին Արարատյան պետության հզորությունը, և Ք.ա. VIII դարի երկրորդ կեսին այն մնում էր ազդեցիկ տերություն Մերձավոր Արևելքում: Իսկ մ.թ.ա. VII դարի սկզբից սկսած՝ սկզբնաղբյուրներում այլևս տեղեկություններ չկան Ասորեստանի և Արարատյան թագավորության միջև թշնամանքի և զինաբախումների մասին: Ընդհակառակը, նրանց միջև հաստատվել էին դրացիական հաշտ հարաբերություններ, և երկու տերություններն էլ ջանում էին չխախտել ձեռքբերված քաղաքական հավասարակշռությունը:

Պատմագիտության մեջ Ք.ա. 640-590-ական թթ. ներկայացվում են որպես Արարատյան թագավորության, այսպես կոչված, «վերջնական քայքայման և կործանման ժամանակաշրջան»: Այդ վարկածն առաջացել է այն կանխակալ պատկերացման հիման վրա, որ «եկվոր» հայերը «օրինաչափորեն», իբր, պիտի հաստատվեին «անխուսափելիորեն կործանման դատապարտված» Արարատյան թագավորության «փլատակների վրա»: Հակառակ այդ միտումնավոր վարկածի՝ Ք.ա. 590-580-ական թթ. Արարատյան թագավորությունը Մերձավոր Արևելքում դեռևս ուներ այնպիսի հզորություն և քաղաքական ազդու հեղինակություն, որ Հին Հրեաստանի հոգևոր առաջնորդ Երեմիան (629-586) Արարատյան թագավորությանը հորդորում էր զորավիգ լինել Հրեաներին՝ ընդդեմ ժողովուրդների պատուհաս Նոր Բաբելոնիայի թագավորության: Անկարելի է չշրջանցել նաև այն իրողությունը, որ հայ հին պատմիչները Հայկյան Արամի հիմնադրած արքայատան ներկայացուցիչների անընդմեջ գահակալումը հասցնում են մինչև Ք.ա. III դարի վերջը: Հետևաբար, արտաքին ուժերի (սկյութների, Մարաստանի, Բաբելոնի) կամ «նորամուտ հայերի» երևակայական առաջխաղացմամբ Արարատյան պետության կործանման և նրա տարածքի՝ բովանդակ Հայկական լեռնաշխարհի նվաճման մասին կանխակալ վարկածները զուրկ են գիտական հիմքերից:

բ. Ներքին կյանքը: Ուրարտու-Արարատյան թագավորությունը խորհրդային պատմագիտության մեջ հասարակական-տնտեսական առումով ներկայացվում է իբրև վաղ ստրկատիրական կազմավորում (ֆորմացիա): Ստրուկ-ռազմագերիների առկայությունը և նրանց աշխատանքի կիրառումը արքունական, իշխանական և տաճարային տնտեսություններում որպես մշակներ, անասնապահներ, արհեստավորներ, հանքագործներ, բեռնակիրներ, ապարանքային և տնային սպասավորներ բնավ բավարար հիմքեր չեն Արարատյան պետությունը և նրա հասարակարգը համարելու ստրկատիրական: Արարատյան տերությունում հիմնական արտադրող և բարիքներ ստեղծող ուժերը միշտ եղել են գյուղերում և քաղաքներում ապրող, անձնապես ազատ մարդիկ: Հասարակության այդ ստվար խավերի համեմատ՝ անազատ և իրավազուրկ ստրուկ-ռազմագերիները կազմել են խիստ սակավ և սահմանափակ խավ, այլ, բայց ոչ երկրի տնտեսական և քաղաքական կյանքում եղանակ ստեղծող դասակարգ:

Արարատյան տերության կառուցվածքը, հասարակական-քաղաքական և իրավական հարաբերությունների ամբողջ համակարգը բացարձակապես հատկանշական են վաղ ավատապետությանն ու ավատատիրական (ֆեոդալական) հասարակարգին: Իսկ ավատապետությունը պետք է դիտել առաջին հերթին և գլխավորապես որպես հասարակական-քաղաքական և իրավական հարաբերությունների որոշակի համակարգ, որի էական հատկանիշները Հայաստանում արմատավորվեցին և զարգացան հենց Արարատյան միասնական պետության կազմավորմամբ:

Հին աշխարհի դասական պետությունների նման՝ Արարատյան պետությունը նույնպես կազմավորվել է ընտանիքի մոդելով, ճիշտ նրա ավանդական հորինվածքի (հայր, մայր, ուստրեր, դուստրեր, թոռներ, ծոռներ) ընդօրինակությամբ: Ի տարբերություն նախորդ ցեղային «աշխարհների» կամ ցեղապետությունների, Արարատյան տերության կազմավորումը բացառապես ուղեկցվում էր ցեղակից «աշխարհների» «որդեգրմամբ»: Այսինքն ցեղային «աշխարհներում» ժառանգաբար կառավարող արքայատոհմերն ու իշխանատոհմերը հրապարակավ ազդարարվում էին Արարատյան տերունի «աշխարհի» արքայի («գերագույն հոր») հպատակներ (վասալները)՝ ավագ և կրտսեր «որդիների» չեչտված նվիրապետական կառուցվածքով: Արարատյան արքան ցեղային իշխանությունների հպատակեցումը («որդեգրումը») ամրապնդում էր հավատարմության երդմամբ և դաշնադրությամբ, ինչպես նաև փոխադարձ իրավունքների ու պարտավորությունների, կառավարման համակարգում նրանց տեղերի սահմանմամբ: Դաշնապետության մեջ կամովին կամ հարկադրաբար մտնող իշխանությունները պարտավորվում էին անվերապահորեն ընդունել Արարատյան արքայատան գերիշխանությունը և նրա գերագույն աստծո՝ Խալդիի պաշտամունքը, արքունիքին վճարել սահմանված հարկերն ու տուրքերը, իրենց զորամասերով մասնակցել արքայի ձեռնարկած ռազմական գործողություններին, պետական կառավարման համակարգում կատարել ծառայություններ: Փոխարենը արքունիքը պարտավոր էր արտաքին հարձակումներից պաշտպանել հպատակ «աշխարհները», երաշխավորել դրանցում ժառանգաբար կառավարող իշխանատոհմերի իրավունքներն ու արտոնությունները, նրանց ներգրավել պետական կառավարման մարմիններում, ըստ հզորության աստիճանի՝ սահմանել նրանց տեղերն ու պաշտոնները քաղաքական նվիրապետության մեջ:

Արարատյան թագավորության արքան հպատակ իշխանատներին նրանց նախկին ժառանգական տիրույթները «չնորհում էր» արդեն իբրև «ավատ»՝ սահմանված պարտավորություններին «հավատարիմ» մնալու պայմանով: Հավատարմությունը խախտելու դեպքում արքան իրավասու էր «ավատառու» իշխաններին զրկել ավատատիրույթներից և գործակալական ծառայություններից: Արարատյան միասնական պետության մեջ մտած նախկին տարածքային-քաղաքական կազմավորումները փաստորեն պահպանվում էին հպատակ իշխանությունների տեսքով և դրվում երկրի վարչատարածքային բաժանումների հիմքում:

Հպատակ իշխանատներին կենտրոնացնող և ավատական ծառայությամբ շղթայող ուժը համարվում էր Արարատյան արքունիքը, որի թուլացման կամ անհաջողության պահերին անհապաղ դրսևորվում էին նրանց կենտրոնախույս հակումները: Հենվելով իրենց զինվորական ուժի և ամրությունների վրա՝ հպատակ իշխանությունները կախվածությունն արքայից ընդունում էին անվանապես, իսկ գործնականում ապրում էին գրեթե ինքնագլուխ և հարմար առիթը չէին կորցնում՝ լիովին անկախանալու և իրենց հնավանդ իրավունքները վերականգնելու համար: Այդ պատճառով էլ հպատակությունից խուսափող կամ դաշնադրությամբ ստանձնած պարտավորությունները դրժող իշխանությունների դեմ Արարատյան արքայատան ներկայացուցիչները հաճախ ձեռնարկում էին պատժիչ արշավանքներ, նրանց տիրույթներում հիմնում արքունի բերդեր ու զորակայաններ, պատանդ վերցնում իշխանազուններին, անհավատարիմ կառավարիչներին փոխարինում հավատարիմներով, առավել ըմբոստ «աշխարհների» բնակչությանը վերաբնակեցնում արքունի բուն տիրույթներում կամ հավատարիմ այլ բնակավայրերում, գործադրում այլևայլ պատժամիջոցներ:

Արարատյան տերության հասարակական-քաղաքական կյանքում կատարված արմատական փոփոխություններն ան-

հապաղ դրսևորվեցին նաև գաղափարախոսության տիրապետող ձևի՝ կրոնական կյանքի (հավատքի) վերափոխության մեջ:

գ. Պետական կարգը և բանակը: Տարածքային և պետական միասնության հասած ցեղերին ու ցեղային իշխանություններին հոգևոր-կրոնական ընդհանրությամբ շաղկապելու, ավատատիրական հարաբերությունները և քաղաքական կարգերը սրբագործելու, ինչպես նաև շրջակա երկրներից գաղափարապես (հավատքով) սահմանազատվելու նպատակով դեռևս Ք.ա. IX դարի վերջին քառորդին Իշպուինին և Մենուան մի մանրամասն արձանագրություն-հրովարտակով վավերացրին Արարատյան տերության միասնական դիցարանը (պանթեոնը), սահմանեցին աստվածությունների տեղերը հոգևոր-նվիրապետական կառուցվածքում, հաստատեցին նրանց համար զոհաբերվող անասունների տեսակն ու քանակը: Այդ ընդհանրական դիցարանում ակնբախորեն արտահայտված էր Արարատյան պետության նվիրապետական կառուցվածքն ու բյուրոկրատական կարգը:

Ինչպես Արարատյան արքան դիտվել է իր վեհապետության ներքո համախմբված ու ենթադասված ցեղային իշխանությունների գերագույն տիրակալ ու նախամեծար հայր, ճիշտ նույնպես արքայատոհմի աստված Խալդին դիտվել է նրա գերագահությամբ ենթադասված ցեղային աստվածությունների գերագույն աստված ու նախահայր: Արարատյան արքայատան գահակալները իրենց ներկայացրել են իբրև Խալդի աստծո անմիջական սերունդ, կրել արիության և հարության ոգին խորհրդանշող «Արի», «Էրի» կամ «Էրե» մակդիրը, ու իրենց սրբազան անդրիները զետեղել Արդինի-Մուսասիրի գլխավոր տաճարում՝ աստվածների անդրիների շարքում:

Արարատյան արքան ուներ միապետի անսահմանափակ իրավունքներ. նրա ձեռքում էին կենտրոնացված երկրի գերագույն իշխանությունը, գերագույն դատավարությունը, զինված ուժերի գերագույն հրամանատարությունը, հողն ու ընդերքի հարստությունները, մատակարարման համակարգը, ոռոգման ցանցը, ռազմա-վարչական կենտրոնները և այլն: Արքայի գահը ժառանգում էր ավագ որդին, իսկ մյուս զարմիկները բնակվում էին արքունի բուն տիրույթներից՝ Այրարատ «աշխարհից» դուրս, մասնավորապես Վանա լճից դեպի հյուսիս-արևելք: Արքայատոհմի կրտսեր զարմիկներին առաջնակարգ տեղ էր հատկացվում պետության քաղաքական, տնտեսական, ռազմական և կրոնա-մշակութային կյանքի կառավարման գործերում: Արձանագրություններում հիշատակվում են մի շարք գործակալությունների անվանումներ՝ աշխարհակալներ, գավառակալներ, սահմանապահ կուսակալներ, զորահրամանատարներ, քրմապետ, արքունիքի սպասավորներ՝ կնքապահ, գանձապահ, համարակալ, ցանքսի մարդ, երեց հովիվ, որսապետ-չնապան, ներքինապետ, դպրապետ և այլն:

Զինված ուժերի կազմակերպումը, հանդերձավորումը և ռազմական արվեստի կատարելագործումը մշտապես գտնվում էին արքունիքի հոգածության ներքո: Խոշոր և ռազմունակ զորաբանակի գոյությունը թելադրված էր Արարատյան թագավորության վարած արտաքին և ներքին քաղաքականության մի շարք գործոնների՝ արտաքին թշնամիներին դիմակայելու, արշավանքներ ձեռնարկելու, միջազգային հեղինակություն ապահովելու, կենտրոնախույս ուժերի ընդդիմությունները ճնշելու, երկրում կարգ ու կանոն հաստատելու անհրաժեշտությամբ: Սարգուրի II արքայի տարեգրություններում հիշատակվում է երկրում զինվորական ծառայության ենթակա այրերի թիվը, որ հասնում էր չուրջ 352 հազարի: Զինված ուժերի կորիզը կազմում էր արքունի մշտական զորաբանակը (մոտ 50 հազար միավոր), որը խաղաղ պայմաններում տեղակայվում էր արքունական բերդերում, ամրոցներում և սահմանային զորանոցներում: Պատերազմների ժամանակ արքունի զորաբանակին միանում էին ենթակա իշխանությունների զորամասերը, քաղաքների ու գյուղերի աշխատավոր խավերից կազմված աշխարհազորը, հաճախ նաև դաշնակից երկրների զինված ուժերը: Մարտիկները զինվում էին պողպատե սրերով, դաշույններով, նիզակներով, տեգերով, կացիններով, գուրզերով, պարսատիկներով, լայնալիճ աղեղներով և 36 նետ տարողությամբ կապարճներով, զրահավորվում էին մետաղյա թիթեղներով ամրապատված լանջապանակներով, բրոնզյա կոնաձև սաղավարտներով և բրոնզյա լայնեզր վահաններով: Սարգոն II-ն արձանագրում է, որ Ք.ա. 714 թ. արշավանքի ժամանակ միայն Մուսասիրի տաճարին առընթեր զինանոցից կողոպտել է չուրջ 305 հազար սուր, 25

հազար վահան, 1500 նիզակ և այլն: Թվարկված զենքերի ու զրահների բազմաթիվ նմուշներ են հայտնաբերվել հնավայրերից:

Հեծելազորային, հետևակային և մարտակառքային ուժերով համալրված զորաբանակը ստորաբաժանվում էր ըստ զինվածության և մարտական հմտությունների՝ սակրավորների, սուսերավորների, նիզակավորների, աղեղնավորների, հետախույզների և այլն: Գերագույն հրամանատարին՝ արքային, մարտերում աջակցում էին նրա առաջին և երկրորդ «թուրտաները» (սպարապետները), «գնդապետները», «հարյուրապետները», «հիսնապետները» և «տասնապետները»: Սարգոն II-ն իր տարեգրություններում նախանձով է հիշատակում Արարատյան թագավորության ձիաբուծարանների և մարտական ձիերի վարժեցման մասին: Կազմակերպվող զինախաղերի ու մրցությունների մասին են խոսում գրավոր այն վկայությունները, որոնց համաձայն Մենուան իր Արծիվ անունը կրող ձիով ցատկել է 22 կանգուն (11,4 մ) երկարություն, իսկ Արգիշտի II-ի արձակած նետը թռել է 950 կանգուն (492 մ) տարածություն:

Արարատյան արքունիքը հետևողականորեն զբաղվել է ամրաշինությամբ, երկրի պաշտպանական համակարգի և ռազմական տեխնիկայի կատարելագործմամբ: Հարյուրավոր բերդեր ու ամրոցներ են հիմնվել ինչպես տերության կենտրոնական, այնպես էլ սահմանային շրջաններում: Երկրի խորքերը տանող հիմնական ուղիները արգելափակվել են պաշտպանական հենակետների ցանցով: Սարգոն II-ն արձանագրում է, որ Ուրարտուի բերդապահները խարույկների օգնությամբ ազդանշաններով հեռավոր տարածություններից միմյանց հաղորդում էին ասորեստանյան զորքերի տեղաշարժերի մասին: Նույն արքայի վկայությամբ Ուրարտուի զորաբանակում օգտագործում էին երաժշտական փողային գործիքներ և թմբուկներ՝ իրենց մարտիկներին ոգևորելու և հակառակորդին ահաբեկելու նպատակով:

Արարատյան թագավորության հզորությունը և ռազմա - քաղաքական հաջողությունները մեծապես պայմանավորվել են նրա տնտեսության զարգացման բարձր մակարդակով: Տնտեսության վերելքն զգալիորեն խթանվեց երկրի հարուստ մետաղահանքերի բուռն շահագործմամբ և մետաղյա, մասնավորապես երկաթյա ու պողպատյա գործիքների լայն օգտագործմամբ: Մետաղագործության հիման վրա ծավալվեցին արհեստները (դարբնություն, գինագործություն, քարագործություն, փայտամշակություն և այլն), ընդլայնվեց առևտուրը, կատարելագործվեց շինարարական տեխնիկան: Երկաթե արորի և այլ աշխատանքային գործիքների կիրառությունը ու պետական հիմքերի վրա դրված ջրանցքաշինությունը խթանեցին երկրագործությունը, յուրացվեցին նոր ցանքադաշտեր, բարելավվեց հողամշակումը: Լեռնային ու նախալեռնային շրջաններում զարգացած էր անասնապահությունը և անասնաբուծությունը: Պեղածո նյութերը վկայում են հատիկավոր բույսերի մշակման և խաղողագործության, գինեգործության, ձիթահանության, կաթնամշակության ու գյուղատնտեսական այլ արտադրությունների մասին:

4. ԵՐՎԱՆԴՈՒՆԻՆԵՐԻ (ՀԱՅԿԱԶՅԱՆ) ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ (Ք.ա. VI-III դարեր)

Ք.ա. VI դարի 70-ական թթ. Հայոց թագավորությունը բախվելով Իրանում մեծ հզորության հասած և Մերձավոր Արևելքում ահեղ ուժ դարձած մարա-պարսկական տերությանը՝ հարկադրված եղավ ճանաչել նրա գերիշխանությունը՝ տարեկան որոշ հարկագումար վճարելու և պատերազմի ժամանակ զորամասեր տրամադրելու պայմանով: Սակայն Հայաստանը լիովին պահպանում էր իր պետական անկախությունը, տարածքային ամբողջականությունը, հոգևոր-մշակութային ինքնուրույնությունն ու կենսունակությունը, որոնք հաստատուն հիմքերի վրա էին դրվել նախընթաց դարերում: Հայաստանի պետական տարածքները համընկնում էին Արարատյան տերության և հայ ժողովրդի էթնիկական սահմաններին:

Ք. ա. V դ. հույն պատմագիր Հերոդոտոսը, վկայակոչելով Հեկատեոս Միլետացու «Աշխարհագրությունը», Ք.ա. VI-V դդ. Հայաստանը ներկայացնում է միաձույլ հայությամբ բնակեցված ընդարձակ երկիր, որի սահմանները հարավ-արևելքում հասնում էին մինչև Փոքր Զավ գետի ակունքները և Մարաստան, հարա-

վում՝ մինչև Ադիաբենե, հյուսիս-արևմուտքում՝ մինչև Պոնտոս, արևմուտքում՝ Կապադովկիա, հարավ-արևմուտքում՝ Կիլիկիա: Հերոդոտոսը Հայաստանի անբաժան երկրամաս է համարում Եփրատից արևմուտք ընկած Պակտիկեն, որը համընկնում է հին պարսկական արձանագրություններում նշված Կատպատուկա և հին հայկական աղբյուրներում հիշատակվող Կապուտկող, ավելի ուշ՝ Փոքր Հայք երկրամասին: Այլ խոսքով, Հերոդոտոսին ծանոթ Հայաստանը լիովին ընդգրկում էր Հայկական լեռնաշխարհը: Ուստի պատահական չպետք է համարել Ք. ա. V-IV դարերի հույն պատմագիր Քսենոփոնի խոսքերը, թե «Արմենիան մեծ է ու բարեկեցիկ»: Հատկանշական է, որ Ք. հ. I դ. հույն պատմագիր Պլինիոս Ավագը անդրադառնալով Մեծ Հայքի սահմաններին՝ նշել է, որ դրանք արևմուտքից դեպի արևելք ձգվել են 1950 կմ, իսկ հարավից մինչև հյուսիս՝ 975 կմ: Ինչպես տեսնում ենք, 500 տարվա ընթացքում Մեծ Հայքի տարածքը մնացել է գրեթե անփոփոխ:

Համաձայն Մար Աբաս Կատինային վերագրվող «Նախնյաց պատմության»-ը, որի պատառիկները բանաքաղությամբ ավանդել է Մովսես Խորենացին, Ք.ա. VI-III դդ. Հայաստանում շարունակել են գահակալել Արամի հիմնադրած Հայկազյան արքայատան ներկայացուցիչները: Սակայն մերօրյա պատմագիտության մեջ այդ արքայատանը պայմանականորեն հաճախ անվանում են Երվանդունի կամ Երվանդական՝ Ք.ա. 570-ական թթ. քիչ տարիներ գահակալած Երվանդ I Հայկազյանի անունով: Նա իր նախորդների՝ Արարատյան արքաների պես պահել է նույն թվով (40 հազար հետևակ և 8 հազար հեծյալ) մշտական զորաբանակ: Ըստ ավանդական պատմության Երվանդ I-ը ճանաչել է Մարաստանի գերիշխանությունը, նրա Աժդահակ թագավորին կնության տվել իր դուստր Տիգրանուհուն և վճարել է տարեկան 50 արծաթ տաղանդ հարկ, իսկ նրա անձնական հարստությունը կազմել է 3000 արծաթ տաղանդ:

Երվանդ I-ին հաջորդել է որդին՝ Տիգրան Հայկազյանը (մոտ 560-530-ական թթ.), որի մասին գովեստով է խոսում հույն պատմագիր Քսենոփոնը, իսկ Մովսես Խորենացին նրան անվանում է մեծ բարենորոգիչ և երկրորդ մեծազոր արքա՝ Արամից հետո: Ըստ նույն պատմագիրների Տիգրան Հայկազյանը Պարսից

Աքեմենյան արքա Կյուրոս II Մեծի հետ Ք.ա. 550 թ. մասնակցել է Մարաստանի, իսկ Ք.ա. 538 կամ 537 թ.՝ Բաբելոնիայի թագավորությունների կործանմանը: Տիգրանի գահակալման վերջին տարիներին կամ նրա մահից հետո Կյուրոս II Մեծը Հայաստանը դարձրել էր Աքեմենյան աշխարհակալության ենթակա փոխարքայություն (սատրապություն)՝ իր որդի Թանաոքսարեսին հռչակելով Հայաստանի և Մարաստանի սատրապ:

Աքեմենյանների գերիշխանությունը Հայաստանում արտահայտվել է տարեկան սահմանված հարկերի գանձմամբ և պատերազմների ժամանակ որոշակի քանակությամբ ռազմական ուժերի զորահանությամբ: Ներքին բոլոր հարցերում Հայոց թագավորությունը պահպանել է իր ինքնավարությունը: Ավանդական պատմության համաձայն Տիգրան Հայկազյանին հաջորդել է նրա որդի Վահագնը (մոտ 530-520): Ք.ա. 522-521 թթ., Աքեմենյան տիրակալությանը հպատակ բազմաթիվ երկրների հետ միաժամանակ Հայաստանը նույնպես ապստամբել է Դարեհ I-ի դեմ, որը դավաղրաբար սպանել էր Կյուրոս II-ի կրտսեր որդուն՝ օրինական գահաժառանգ Բարդիային, և գավթել գահը: Պարսից պատժիչ զորքերի դեմ հայկական զորքերը տվել են հինգ ճակատամարտ, որոնց մասին Դարեհ I-ը պատմում է Բագաստանայի (Բեհիստուն) ժայռին քանդակած իր եռալեզու (հին պարսկերեն, էլամերեն և աքադերեն) տարեգրությունում:

Դարեհ I-ի զինակից Հիդարնեսի հետ խնամիացած ու սերտացած Երվանդունի-Հայկազյանները Հայաստանում շարունակաբար գահակալել են (Աքեմենյանները նրանց հաճախ զուգահեռաբար հանձնարարում էին նաև սատրապի պաշտոնը) մինչև Ք.ա. 200 թվականը: Մ.թ.ա. IV դարի վերջից սկսած՝ Երվանդունի-Հայկազյանների հաջորդ գահակալները վերոհիշյալ ազգակցական կապերի շնորհիվ մայրական գծով ճանաչվել են Աքեմենյանների և Հյուդարյանների սերունդ: Այսպես, Հայոց արքա Երվանդ IV-ին Ստրաբոնը դասում է Հյուդարյանների սերնդին: Իսկ Կոմմագենեի Երվանդունի արքա Անտիոքոս I-ի (69-34) նախնիներին նվիրված Նեմրութ լեռան արձանագրության մեջ Երվանդունիները դասված են Դարեհ I Աքեմենյանի հաջորդների ցանկում:

Ք.ա. VI դարի վերջից մինչև V դարի վերջը Հայաստանի սատրապ-թագավորներ են հիշատակվում Հյուդարնես I-ը, Հյուդարնես II-ը, Հյուդարնես III-ը և Արտաշիրը: Վերջինիս հաջորդել է Երվանդ II-ը (մոտ 404-360), որն ամուսնացած էր Աքեմենյան արքա Արտաքսերքսես II-ի (մ.թ.ա. 404-358) դստեր՝ Հոդոգունեի հետ: Ք.ա. 380-ական թթ. Երվանդ II-ը գլխավորել է Փոքր Ասիայի սատրապությունների ապստամբությունը Արտաքսերքսես II-ի դեմ: Ապստամբության պարտությունից հետո հաշտվել է Արտաքսերքսես II-ի հետ և շարունակել գահակալել մինչև Ք.ա. մոտ 360 թ.: Այնուհետև նշանակվել է Միսիայի սատրապ: Ըստ հունարեն մի արձանագրության Երվանդ II-ը կյանքի վերջին տարիներին հանգրվանել է Հունաստանում, որտեղ մահացել է Ք.ա. 344 թվականին:

Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքներից և Ք.ա. 331 թ. Աքեմենյան տիրակալության խորտակումից հետո, Ք.ա. 336 թվականին, Հայաստանում գահակալող Երվանդ III-ն իրեն հռչակեց անկախ թագավոր (331- մոտ 300) և զենքն ուղղեց հունա-մակեդոնական նվաճողների դեմ: Նրա աջակցությամբ Ք.ա. 331 թ. Փոքր Հայքի թագավոր հռչակվեց իր զորավար և թերևս մերձավոր ազգական Միթրաուստեսը: Երվանդ III արքան հակահարված հասցնելով Ալեքսանդր Մակեդոնացու զորավարներին՝ հաջողությամբ պաշտպանեց Մեծ Հայքի թագավորության անկախությունը: Նրա աջակցությամբ իրենց անկախությունը պահպանեցին նաև Փոքր Հայքի, Պոնտոսի և Կապադովկիայի թագավորությունները:

Մեծ Հայքի անբաժան տիրույթն էր կազմում նաև Ծոփքից Եփրատ գետով բաժանվող Կոմմագենե հայկական «աշխարհը»: Ք.ա. III դարի կեսին Ծոփքի և Կոմմագենեի հայոց կուսակալ Սամոս (Շամ) Երվանդունին հռչակվեց թագավոր: Ծոփք-Կոմմագենեի արքայաճյուղը Մեծ Հայքի սատարմամբ մինչև Ք.ա. III դարի վերջը պահպանեց իր ինքնուրույնությունը: Սամոսի անունով հիմնվեցին Սամոսատ (Կոմմագենեում) և Սամոկրատ (Ծոփքում) հելլենիստական քաղաքները: Ք.ա. 240-ական թթ. Սամոսին հաջորդեց որդին՝ Արսամեսը (Արշամ), որը հիմնեց Արշամաշատ մայրաքաղաքը (Ծոփքում) և Արսամեա անվանումներով երկու քաղաք (Կոմմագենեում):

Ք.ա. III դարի վերջին Սելևկյանների ռազմական միջամտությամբ Կոմմագենեն նվաճվեց, իսկ Ծոփքում գահակալող Քսերքսեսը նախ դարձավ Սելևկյան արքա Անտիոքոս III-ի հպատակը, ապա Ք.ա. 201 թ. դավադրությամբ սպանվեց: Անտիոքոս III-ը Կոմմագենեի կուսակալ կարգեց հույն զորավար Պտղոմեոսին, իսկ Ծոփքի կուսակալ՝ հայ զորավար Զարիադրեսին (Զարեհ):

Ք.ա. III դարի վերջին քսանամյակին Մեծ Հայքում գահակալում էր Երվանդ IV Վերջինը, որն Ախուրյանի և Երասխի գետախառնման մոտ հիմնադրեց Երվանդաշատ նոր մայրաքաղաքը, նրանից քիչ հյուսիս՝ Երվանդակերտը և Երվանդավանը, իսկ Ախուրյանի աջ ափին՝ Բագարան ավանը: Ք.ա. մոտ 200 թ. Սելևկյան զորքերը հայ զորավար Արտաշեսի գլխավորությամբ տապալեցին Երվանդ IV-ին և նվաճեցին Մեծ Հայքը, որտեղ կուսակալ կարգվեց Արտաշեսը:

Հայկազյան-Երվանդյան արքայատան, այդ թվում Ծոփք-Կոմմագենեի արքայաճյուղի ներկայացուցիչները իրենց անուններով ու պատկերներով հատել են դրամներ, խթանել երկրի տնտեսական զարգացումը, խրախուսել հելլենիստական մշակույթը, մասնակցել այդ քաղաքակրթության կերտմանը:

5. ԱՐՏԱՇԵՍՅԱՆՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ (Ք.ա. II -I դարեր)

ա. Հայաստանը Արտաշես I-ի օրոք: *Սելևկյան պետության կարճատև գերիշխանության տարիներին (200-190 թթ.) Անտիոքոս III արքան Հայաստանը տկարացնելու և իր տիրապետությունն այնտեղ ամրապնդելու նպատակով այն տրոհեց չորս կուսակալ-զորավարությունների՝ Մեծ Հայքի, Փոքր Հայքի, Ծոփքի և Կոմմագենեի միջև, ընդ որում Մեծ Հայքից տարանջատեց եզերական մի շարք գավառներ և դրանք կցեց չրջակա այլ երկրների: Սակայն Ք.ա. 190 թ. Կարիա փոքրասիական երկրամասի Մագնեսիա քաղաքի մոտ տեղի ունեցած վճռական ճակատամարտում Հռոմի հանրապետության զորաբանակը Սկիպիոնի հրամանատարությամբ ծանր պարտության մատնեց Ան-*

տիոքոս III-ին և նրան հարկադրեց Ասորիքի Ապամեա քաղաքում Ք.ա. 88 թ. կնքած պայմանագրով հրաժարվել փոքրասիական տիրույթներից: Օգտվելով միջազգային բարեպատեհ իրավիճակից՝ Մեծ Հայքում անկախ թագավոր հռչակվեց նրա կուսակալ Արտաշեսը, Փոքր Հայքում՝ նրա կուսակալ, Նախկինում Երվանդունի արքայաճյուղի ներկայացուցիչ Միհրդատը, Ծոփքում՝ Զարեհը, իսկ Կոմմագենեում՝ նրա կուսակալ Պտղոմեոսը: Ուշագրավ է, որ Սևանա լճափին գտնված արամերեն արձանագրությունում Զարեհի որդի Արտաշես I արքան իրեն անվանում է Երվանդունի: Հետևաբար, չի բացառվում, որ Մեծ Հայքի արքա Արտաշեսը և Ծոփքի արքա Զարեհը նույնպես սերել են Հայկազյան-Երվանդունի հնամենի արքայատոհմի ճյուղերից:

Արտաշես I-ը (մոտ 190-160) իր գահակալման սկզբին վերամիավորեց Մեծ Հայքից անդամահատված հողերը՝ Պարխարի նախալեռները, Կղարջքը, Գուգարքը, Դերջանը, Կարինը, Եկեղիքը, Փավնիտիդեսը, Բասորոպեդան, Կասպքը, Տմորիքը և այլն: Փոքր Հայքի, Ծոփքի, Կոմմագենեի վերամիավորման փորձերում Արտաշես I-ը հաջողության չհասավ Հռոմի և Կապադովկիայի միջամտության պատճառով: Նա ստեղծեց ազգային հզոր զորաբանակ և այն բաժանեց չորս սահմանակալ զորաթևի՝ հանձնարարելով Մեծ Հայքի չորս կողմերի ռազմական հսկողությունն ու պաշտպանությունը: Արտաշես I-ը Մեծ Հայքի տարածքը բաժանեց 120 վարչամիավորի (ստարտեգիաների), կարգավորեց կառավարման համակարգը և գործակալությունները: Հազարապետության, քրմապետության և սպարապետության առաջնակարգ գործակալությունները հանձնարարեց որդիներին, իսկ թագադիր ասպետության գործակալությունը՝ իր դայակ Սմբատ Բագրատունուն:

Արտաշես I-ի օրով զգալի առաջընթաց է ապրել երկրի տնտեսությունը, զարգացել են երկրագործությունը, արհեստագործությունը, առևտուրը: Մասնավոր հողատիրության խորացման հետևանքով խոշոր հողատերերն իրենց տիրույթներն ընդլայնում էին ոչ միայն խոպան հողերի յուրացման հաշվին, այլև փորձում էին խլել գյուղական համայնքներին պատկանող հողերը: Մասնավոր հողատերերի և գյուղական համայնքների միջև

սրված հակասությունները մեղմելու նպատակով Արտաշես I-ի հրամանով նրանց հողերի սահմաններում հաստատվեցին հատուկ սահմանաքարեր: Արտաշես I-ը խրախուսել է քաղաքների և հելլենիստական քաղաքակրթության զարգացումը: Նա իր հոր՝ Զարեհի անունով հիմնեց հինգ քաղաք, որոնցից երեքը կոչվել են Զարեհավան, իսկ երկուսը՝ Զարիշատ: Ք.ա. 180-170-ական թթ. Արտաշես I-ը Երասխ և Մեծամոր գետերի հին հունների միախառնման մոտ հիմնեց Մեծ Հայքի նոր մայրաքաղաք Արտաշատը, այն կառուցապատեց ճոխ ապարանքներով, տաճարներով, թատրոնով և այլ շինություններով: Կարճ ժամանակամիջոցում Արտաշատը դարձավ արհեստագործության, առևտրի և հելլենիստական մշակույթի խոշոր կենտրոն:

Օգտագործելով Հռոմի և փոքրասիական որոշ երկրների հակասելևկյան հակվածությունը՝ Արտաշես I-ը վարում էր Սելևկյան տիրապետության թուլացման և կազմալուծման քաղաքականություն: Բայց նա չդաշնակցեց Հռոմին, նույնիսկ առժամանակ հյուրընկալեց և ապաստան տվեց Հռոմի անհաշտ թշնամուն՝ Կարթագենի զորավար Հաննիբալին: Հռոմեացի պատմագիրների վկայությամբ Արտաշատ մայրաքաղաքի տեղանքն ընտրել և հատակագիծը կազմել է Հաննիբալը: Ք.ա. 165 թ. Արտաշես I-ը հակահարված հասցրեց Սելևկյան արքա Անտիոքոս IV Եպիփանեսին, ետ մղեց նրա հարձակումը Մեծ Հայքի վրա: Դրանից հետո Անտիոքոս IV-ը ներխուժեց Ծոփք, գրավեց Արկաթիակերտ քաղաքը և այն իր մականունով վերանվանեց Եպիփանիա: Ծոփքի թագավորը սպանվեց, նրա եղբայր Մերուժանը ապաստանեց Կապադովկիայում, իսկ մյուս եղբայրը, որի անունը չի հիշատակվում, հանգրվանեց Մեծ Հայքում, Արտաշես I-ի մոտ: Ք.ա. 164 թ. Անտիոքոսի մահից հետո Ծոփքի թագավորությունը վերականգնեց իր անկախությունը: Մեծ Հայքի հզորության և միջազգային կշռի մասին են վկայում պատմագիրների այն տեղեկությունները, որոնց համաձայն հարևան թագավորություններն իրենց սուր վեճերը կարգավորելիս դիմում էին Արտաշես I-ի հեղինակավոր միջնորդությանը:

Արտաշես I-ը հասել է մինչև Կովկասյան Մեծ լեռնաշղթա, հակահարված հասցրել կովկասյան ցեղերին, կանխել նրանց հրոսակային արշավանքները դեպի Մեծ Հայք: Ալանների հետ

կնքվել է հաշտության պայմանագիր, որն ամրապնդվել է Արտաշեսի և ալանաց արքայադուստր Սաթենիկի ամուսնությամբ: Արտաշես I-ի մասին ժողովուրդը հյուսել է պատկերավոր զրույցներ, գովերգել նրա գործունեությունը, մեծարել «Բարի» մականունով:

Ք.ա. մոտ 160-95 թթ. Մեծ Հայքում հաջորդաբար գահակալել են Արտաշես I-ի ավագ որդի Արտավազդ I-ը և նրա կրտսեր եղբայր Տիգրան I-ը (Տիրան), որոնց գահակալման տարիները անցել են համեմատաբար խաղաղ:

բ. Տիգրան II-ի գահակալությունը: Հայաստանը աշխարհակալ տերություն: Հռոմեացի պատմագիր Տրոգոսի վկայությամբ Պարթևստանի դեմ պատերազմում Մեծ Հայքի պարտության հետևանքով Արտավազդ I-ի գահաժառանգ եղբորորդի Տիգրանը պատանդ ուղարկվեց պարթև Արշակունիների արքունիք: Պատանդության երկարամյա տարիներին Տիգրանը մտերիմ հարաբերություններ հաստատեց Արշակունյաց արքունիքի հետ, իր դուստր Արիոզատ Ավտոմային կնության տվեց Պարթևաց արքայից արքա Միհրդատ II Մեծին (մոտ 123-87), ուսումնասիրեց պարթևաց կառավարման համակարգը, դիվանագիտական փորձը, ռազմական արվեստը, մարտավարությունը, բարքերը, կենցաղը, մեծապես հարստացրեց իր գիտելիքներն ու կենսափորձը:

Ք.ա. 95 թ., հոր մահից հետո, Տիգրան II-ը (Ք. ա. 95-55) որպես փրկագին Պարթևստանին զիջելով Մեծ Հայքի որոշ տարածքներ («70 հովիտներ»)՝ ազատվեց պատանդությունից և ժառանգեց հայրենի գահը: Նրա 40-ամյա գահակալման տարիները նշանավորվեցին Մեծ Հայքի աննախադեպ ռազմա-քաղաքական, տնտեսական և մշակութային վերելքով, հայկական հելլենիստական պետության հեղինակության և միջազգային դերի բարձրացմամբ:

Հռոմեական և պարթևական զերհզոր տերությունների դավթողական նկրտումներին դիմակայելու և Մեծ Հայքի դեմ նրանց սպառնալիքները չեզոքացնելու նպատակով Ք.ա. 94 թ. Տիգրան II-ը ռազմա-քաղաքական դաշինք կնքեց Պոնտոսի և Փոքր Հայքի արքա, երևելի զորավար Միհրդատ VI Եվպատորի հետ: Այդ դաշնադրությամբ կողմերը պայմանավորվեցին իրենց

ազդեցության ոլորտների և տիրակալության սահմանների ծավալման շուրջ. Միհրդատ VI-ն իր ռազմական գործողությունները և նվաճումները կատարելու էր դեպի արևմուտք, այսինքն Հռոմի դեմ, իսկ Տիգրան II-ը՝ դեպի հարավ, հարավ-արևմուտք և հարավ-արևելք, այսինքն՝ Սելևկյանների և Պարթևաց տերությունների դեմ: Նրանք պարտավորվեցին նաև, որ Կապադովկիայի դեմ համատեղ պատերազմի հաղթական ելքից հետո այդ երկրի տարածքն անցնելու է Պոնտոսի թագավորությանը, իսկ շարժական հարստությունները և քաղաքային բնակչությունը՝ Մեծ Հայքի թագավորությանը: Երկու արքաները պայմանավորվել էին նաև անհրաժեշտության դեպքում ռազմական օգնություն ցույց տալ միմյանց: Դաշնադրությունն ամրապնդվեց խնամիական կապերով. Միհրդատ VI-ի 16-ամյա դուստր Կլեոպատրան կնության տրվեց 46-ամյա Տիգրան II-ին:

Ք.ա. 94 թ. Տիգրան II-ը ռազմակալեց Ծոփքը, տապալեց Արտանես թագավորին և այդ հայկական «աշխարհը» վերամիավորեց Մեծ Հայքին: Ք.ա. 93 թ. հայ-պոնտական միացյալ ուժերը գրավեցին Կապադովկիան, փախուստի մատնեցին Հռոմի դրածո թագավոր Արիոբարզանեսին և այդ երկրամասի գահին բազմեցրին Միհրդատ VI-ի մանկահասակ որդի Արիարաթես VIII-ին: Ք.ա. 92 թ. Արիոբարզանեսը Հռոմի օգնությամբ թեև վերականգնեց գահը, սակայն Ք.ա. 91 թ. հայ զորավարներ Միթրասը և Բագաոսը վերստին գրավեցին Կապադովկիան և փախուստի մատնեցին նրան: Ք.ա. 89 թ. Արիոբարզանեսը դարձյալ փորձեց Հռոմի ուժերով վերականգնել գահը, բայց Միհրդատ VI-ը պարտության մատնեց նրանց և ամրապնդեց Արիարաթես VIII-ի իշխանությունը:

Այդ նույն ժամանակահատվածում Տիգրան II-ը գրավեց Իբերիան և Աղվանքը՝ հյուսիսում ապահովելով թիկունքը, և նախապատրաստվեց Սելևկյանների ու Պարթևստանի դեմ պատերազմների: Տիգրան II-ի փեսա Միհրդատ II Արշակունու մահից (87 թ.) հետո Տիգրան II-ը 87-85 թթ. Պարթևստանի դեմ հաղթական մարտերում նախ ազատագրեց և Մեծ Հայքին վերամիավորեց Հայոց Միջագետք (Միգդոնիա) և Կորդուք «աշխարհները», ինչպես նաև «70 հովիտներ» կոչվող հողերը, ապա պարթևներին դուրս մղեց Օսրոյենե (Եդեսիա), Ադիաբենե

և Ատրպատական երկրամասերից, որոնք հռչակվեցին Մեծ Հայքի դաշնակից փոխարքայություններ: Երբ հայկական զորքերը գրավեցին Պարթևստանի ամառային գահանիստը՝ Եկբատանը, պարթևաց թագավոր Գոտարզը հարկադրված եղավ կնքել հաշտության պայմանագիր, ճանաչեց Տիգրան II-ի նվաճումները և նրան դիջեց պարթև Արշակունիների «արքայից արքա» տիտղոսը: Այնուհետև Տիգրան II-ի գլխավոր հակառակորդներից մեկը՝ Պարթևստանի թագավորությունը, երկար տարիներ միջազգային ասպարեզում դաղարեց վճռական դեր խաղալուց:

Ք.ա. 88-84 թթ. Հռոմը ներքաշվելով Միհրդատ VI-ի դեմ առաջին պատերազմի մեջ՝ չկարողացավ խոչընդոտել Տիգրան II-ի առաջխաղացումը դեպի Հարավ-արևմուտք: Դեպի Արևելք Հռոմի առաջխաղացման գլխավոր ուղիները պատնեշելու, Միջերկրածովի հելլենիստական երկրները հակահռոմեական ռազմա-քաղաքական խմբավորման մեջ ներգրավելու և իր տերության ազդեցության ոլորտներն ընդլայնելու նպատակով Տիգրան II-ը Ք.ա. 84-83 թթ. գրավեց Կոմմագենեն, Կիլիկիան, Ասորիքը, Փյունիկիան, Հրեաստանը և Նաբատեան:

Հայկական նորակերտ հելլենիստական տերությունը, որ տարածվում էր Միջերկրական ծովից մինչև Կասպից ծով, Կովկասյան Մեծ լեռնաշղթայից մինչև Միջագետք և Կարմիր ծով, դյուրությամբ կառավարելու համար Տիգրան II Մեծը կազմակերպեց մի շարք փոխարքայություններ ու կուսակալություններ: Վրաստանը, Աղվանքը, Կորդուքը, Ադիաբենեն, Ատրպատականը, Պաղեստինը և Նաբատեան կառավարում էին դրանց նախկին թագավորները, որոնք երդվել էին հավատարմորեն ծառայել Տիգրան II Մեծին: Հայոց Միջագետքի, Օսրոյենեի և Հարակից հարավային շրջանների կուսակալ կարգվեց Տիգրան II-ի կրտսեր եղբայր Գուրասը, որը նստում էր Մծբին քաղաքում, իսկ Կոմմագենեի, Կիլիկիայի և Հյուսիսային Ասորիքի կուսակալ կարգվեց զորավար Բագադատեսը (Բագարատ), որի նստավայրն էր Անտիոք քաղաքը:

Ք.ա. 80-70-ական թթ. խաղաղ տարիներին Տիգրան II Մեծն զբաղվել է շինարարական աշխատանքներով, հատկապես քաղաքների հիմնադրմամբ և ճանապարհաշինությամբ, խթանել է

երկրագործության, արհեստների և առևտրի զարգացումը: Աղձնիքում նա հիմնեց և ճոխությամբ կառուցապատեց իր նորակերտ տերության մայրաքաղաք Տիգրանակերտը, որի ապարանքների, փողոցների, հրապարակների, թատրոնի, պարտեզների, շուրջ 25 մ բարձրությամբ ամրակուռ պարիսպների մասին վկայում են հռոմեացի պատմագիրներ Ապպիանոսը, Պլուտարքոսը և ուրիշներ: Տիգրանակերտ անվանումով քաղաքներ հիմնադրվեցին նաև Արցախում, Ուտիքում և այլուր: Բարեկարգվեցին ճանապարհները ու առևտրական մայրուղիները, կառուցվեց Արտաշատ-Տիգրանակերտ «Արքունի պողոտան»: Խթանելով և հովանավորելով քաղաքների, արհեստների, առևտրի և հելլենիստական մշակույթի զարգացումը՝ Տիգրան II-ը Կապադովկիայի, Կիլիկիայի, Ասորիքի, Փյունիկիայի և այլ երկրների հելլենիստական քաղաքներից շուրջ կես միլիոն մարդ վերաբնակեցրեց ինչպես նորակերտ քաղաքներում, այնպես էլ Արմավիր, Արտաշատ, Երվանդաշատ, Զարեհավան, Զարիշատ հին քաղաքներում: Տիգրան II-ն իր պատկերով և հունարեն «Արքայից արքա», «Աստված» մակագրությամբ արծաթյա և պղնձյա դրամներ հատեց Արտաշատում, Տիգրանակերտում, Դամասկոսում և Անտիոքում, որոնք շրջանառության մեջ դրվեցին ինչպես ներքին, այնպես էլ միջազգային շուկաներում: Ընդունելով «Աստված» պատվանունը՝ Տիգրան II Մեծը պարտադրեց իր անձի պաշտամունքը:

գ. Հայ-Հռոմեական պատերազմը: Տիգրան II Մեծի խաղաղ շինարարական գործունեությունը խաթարվեց Հռոմեական Հանրապետության և Պոնտոսի թագավորության միջև բռնկված երրորդ պատերազմի տարիներին (73-71): Հռոմը Տիգրան II-ին հայտարարելով իր ամենավտանգավոր և զորեղ թշնամին Արևելքում՝ հայկական տերության ներսում զանազան խոստումների և կաշառքների միջոցով հրահրեց մի շարք հուժկու խռովություններ և զինված ելույթներ: Տիգրան II-ի դեմ ապստամբեցին նրա գահատենչ որդի Զարեհը, Հռոմի հետ գաղտնի գործակցող Սելևկյան արքա Անտիոքոս XIII-ը և նրա մայրը՝ Սելենե-Կլեոպատրա թագուհին, ինչպես նաև Նաբատեայի թագավորությունը: Ք.ա. 73-69 թթ. Տիգրան II-ը կաչկանդվեց այդ խռովություններից և անհնազանդություններից և չկարո-

դայով ռազմական օգնություն ցույց տալ իր դաշնակից Միհրդատ VI-ին: Հռոմեական զորքերի հրամանատար Լուկիոս Լուկուլլոսը Ք.ա. 71 թ. Պոնտոսում, Կարիրա քաղաքի մոտ տեղի ունեցած վճռական ճակատամարտում ծանր պարտության մատնեց Միհրդատ VI-ին, որն իր ընտանիքի և բազմաթիվ մեծատոհմիկների հետ ապաստանեց Մեծ Հայքում: Միհրդատ VI-ին հաղթողի և Պոնտոսի թագավորությունը նվաճողի փառքով խանդավառված Լուկուլլոսը, առանց հռոմեական սենատի համաձայնության, ծրագրում է արշավել նաև Տիգրան II-ի վրա և խորտակել նրա հելլենիստական լայնածավալ տերությունը: Նախապատրաստվելով պատերազմի՝ Լուկուլլոսը Ք.ա. 71 թ. վերջին Տիգրան II-ի մոտ ուղարկեց մի պատվիրակություն՝ իր աներոջի Ապպիոս Կլավդիոսի գլխավորությամբ, որը պատերազմի սպառնալիքով պահանջեց Հռոմին հանձնել Մեծ Հայքում պաստպարված Միհրդատ VI Եվպատորին: Իր աներոջը և հյուրին հանձնելը համարելով հայոց արքայի պատվին անհարիր՝ Տիգրան II-ը մերժեց Լուկուլլոսի պահանջը և հայտարարեց, որ եթե Հռոմեացիները պատերազմ սանձազերծեն, ապա կարժանանան հակահարվածի: Մինչև Տիգրան II-ին հանդիպելը, որն այդ ժամանակ զբաղված էր Պտղոմայիս քաղաքի պաշարմամբ և Սելևկե-Կտեսիֆոնի գինված դիմադրության ճնշմամբ, Ապպիոս Կլավդիոսի պատվիրակությունը անարգել շրջագայեց հայոց տերությունում, զանազան խոստումներով ու կաշառքներով Հռոմի կողմը ներգրավեց նվաճված մի շարք քաղաքների կառավարիչների և ուրիշ իշխանավորների, այդ թվում՝ Կորդուքի արքա Զարբիենոսին, հավաքեց լրտեսական տեղեկություններ:

Երկամյա նախապատրաստություններից հետո Լուկուլլոսը Ք.ա. 69 թ. գարնանը առանց պատերազմ հայտարարելու Փոքր Հայքի Մելիտինե քաղաքից շարժվելով՝ հատեց Եփրատ գետը և ներխուժեց Ծոփք: Հովսեպոս Փլավիոս պատմիչի վկայությամբ Հռոմեական զորքերի հարձակման գույժը Տիգրան II-ը ստացավ Պտղոմայիսում: Նա Ծոփքի կուսակալ Մերուժանին հանձնարարեց իր ձեռքի տակ եղած հետևակով և 3 հազար հեծելազորով խոչընդոտել Լուկուլլոսի առաջխաղացումը, մինչև իր վերադարձը Պաղեստինից: Տեղի ունեցած ճակատամարտում հայկական

փոքրաթիվ ուժերը պարտվեցին, մարտադաշտում զոհվեց Մերուժանը: Հռոմեական զորաբանակը Ծոփքից ներխուժեց Աղձնիք և պաշարեց Տիգրանակերտ մայրաքաղաքը, որի պաշտպանությունը հայկական սակավաթիվ ուժերով և հույն վարձկաններով գլխավորում էր զորավար Մանկայոսը: Ժամանելով Աղձնիք՝ Տիգրան II-ն իր թիկնապահ հեծելազնդով ճեղքեց Թշնամու պաշարման օղակը, Տիգրանակերտից դուրս բերեց արքունի գանձերը և ընտանիքը: Տիգրանակերտի հերոսական պաշտպանությունը Ք.ա. 69 թ. գարնանից շարունակվեց մինչև ուշ աշուն: Քաղաքի պաշտպանները կպրաձեթով այրեցին հռոմեացիների պաշարողական մեքենաները, ետ մղեցին նրանց բոլոր գրոհները:

Հապճեպ զորահավաքից հետո հոկտեմբերի սկզբին Տիգրան II-ը մոտեցավ պաշարված Տիգրանակերտին: Հայկական զորաբանակի թվաքանակի մասին խիստ կողմնակալ և չափազանցված են հռոմեացի պատմագիրներ Պլուտարքոսի և Ապպիանոսի հաղորդած տվյալները (համապատասխանաբար՝ 270 հազ. և 300 հազ. մարտիկ): Նույն հեղինակները, ընդհակառակը, Լուկուլլոսի բանակի մարտիկների թվաքանակը 40 հազարի փոխարեն ներկայացնում են 14 հազար: Մինչդեռ համեմատաբար չեզոք պատմագիրներ Մեմնոն Հերակլեացին և Փլեգոն Տրալլացին Տիգրան II-ի մարտիկների թվաքանակը ներկայացնում են համեմատաբար հավաստի՝ 70-80 հազար:

Ճակատամարտը հակառակորդների միջև տեղի ունեցավ Ք.ա. 69 թ. հոկտեմբերի 6-ին: Հայկական զորաբանակը դիրքավորվեց մոտակա նեղլիկ բարձունքի վրա, որը խիստ անհարմար էր զորաշարժի և ուժերի լիակատար ծավալման համար: Զորաբանակի կենտրոնի հրամանատարությունը ստանձնեց Տիգրան II-ը, աջ զորաթևի հրամանատարությունը հանձնարարեց իր փեսային՝ Ատրպատականի թագավոր Միհրդատին, իսկ ձախ զորաթևինը՝ Ադիաբենեի թագավորին, որի անունը չի հիշատակվում: Լուկուլլոսը հարձակման անցավ հեծյալ զորքով՝ իր գլխավոր ուժերը քողարկելով հայկական բանակի թիկունքում գտնվող բլրի ստորոտում: Երբ ետ մղվեց հակառակորդի գրոհը, և Տիգրան II-ի զորքն սկսեց հետապնդել թշնամուն, հռոմեական բանակի քողարկված ուժերը հայտնվեցին թիկունքից և հար-

վածեցին հայկական զորաբանակին: Խուճապի մատնված հայկական զորքերը թողեցին մարտադաշտը և նահանջեցին երկրի խորքերը: Ըստ էության տեղի ունեցավ հակառակորդների կարճատև ընդհարում և ոչ թե տևական արյունալի ճակատամարտ: Հետևաբար, իրականությունից շատ հեռու է Պլուտարքոսի այն տեղեկությունը, թե հայերը տվել են 100 հազար զոհ, իսկ հռոմեացիները՝ 5 սպանված և 100 վիրավոր:

Հայկական զորքերի նահանջից հետո Տիգրանակերտի օտարերկրյա բնակիչները և հույն վարձկանները գաղտնի բանակցություններ վարեցին Լուկուլլոսի հետ և քաղաքը դավադրաբար հանձնեցին նրան: Հռոմեացիները կողոպտեցին Տիգրանակերտի հարստությունները, մասնակիորեն ավերեցին, իսկ օտարերկրյա բնակիչներին արձակեցին իրենց երկրները:

Ք.ա. 69-68 թթ. Լուկուլլոսի բանակը ձմեռեց Կորդուքում, որի դավաճան թագավոր Զարբիենոսը մինչ այդ մահապատժի էր ենթարկվել Տիգրան II-ի հրամանով: Այդ ընթացքում Տիգրան II-ը և Միհրդատ VI-ը, համախմբելով հայկական զորաբանակը (չուրջ 70 հազար մարտիկ), մշակեցին իրենց ռազմական գործողությունների ծրագիրը և նախապատրաստվեցին պատերազմի: Տիգրան II-ը փորձեց հակահռոմեական դաշինքի մեջ ներգրավել նաև Պարթևաց արքա Հրահատ III Արշակունուն, բայց վերջինս գերադասեց չեզոքությունը:

Ք.ա. 68 թ. գարնանը Լուկուլլոսի զորաբանակը հատեց Հայկական Տավրոսի լեռնաշղթան և ներխուժեց Արածանու դաշտը՝ ծրագիր ունենալով արագընթաց մտնել Այրարատ «աշխարհը», գրավել Արտաշատ մայրաքաղաքը և հասնել վերջնական հաղթանակի: Հայկական ռազմական ուժերը բաժանվեցին երկու հիմնական մասի. հեծելազորը գլխավորեց Տիգրան II-ը, իսկ հետևակազորը՝ Միհրդատ VI-ը: Արածանու դաշտում թշնամուն գամելով աքցանի մեջ և խուսափելով բաց ճակատամարտից՝ հայկական զորագնդերը հաճախակի գրոհներով խոշոր կորուստներ էին պատճառում նրան: Խափանվեց հռոմեական զորքերի պարենավորումը և դեպի Արտաշատ նրանց առաջխաղացման մտադրությունը: Հռոմեացիները երեք ամիս չարունակ դեգերելուց հետո, երբ փորձեցին գետանցել Արածանին, ենթարկվեցին հայկական հեծելազորի վճռական հարվածին և

ջախջախիչ պարտություն կրելով՝ վերջին մնացորդներով նահանջեցին Հայոց Միջագետք, գրավեցին Մծբին քաղաքը և ձմեռեցին այնտեղ:

Լուկուլլոսի հիմնական ուժերի պարտությունից հետո Միհրդատ VI-ը 10 հազարանոց հայկական հեծելազորի օգնությամբ ջախջախեց հռոմեական զորքերին, ազատագրեց Փոքր Հայքը և Պոնտոսը, վերականգնեց իր թագավորությունը: Իսկ Տիգրան II-ը գրավեց Կապադովկիան, կոտորեց հռոմեացիներին և փախուստի մատնեց դրածո Արիոբարզանես թագավորին: Պարտված և վարկաբեկված Լուկուլլոսին Ք.ա. 67 թ. փոխարինեց Գնեոս Պոմպեոսը:

Տիրգան II-ը Ք.ա. 67 թ. տեղեկանալով, որ իր որդին՝ Մոփքի փոխարքա (69-66) Տիգրան Կրտսերը Արտաշատում փորձել է գրավել Մեծ Հայքի գահը, վերադարձավ Կապադովկիայից և պարտության մատնեց նրան, որն անցավ Պարթևստան և փեսա դարձավ Հրահատ III-ին: Ք.ա. 66 թ. պարթևական ուժերով Տիգրան Կրտսերը կրկին փորձեց բռնագրավել Մեծ Հայքի գահը, բայց Արտաշատի մոտ տեղի ունեցած ճակատամարտում պարտվեց և իր դավադիր մոր՝ Կլեոպատրայի հետ փախավ Պոնտոս:

Տեղեկանալով, որ իր պապը՝ Միհրդատ VI-ը, պարտվել է հռոմեական զորքերից և լքել Պոնտոսը, Տիգրան Կրտսերն իր ծառայությունն առաջարկեց Պոմպեոս զորավարին: Վերջինս ունենալով չուրջ 70-80 հազ. զորաբանակ՝ նախապատրաստվեց ներխուժել Մեծ Հայք և գրավել Արտաշատը: Հաշվի առնելով, որ Մեծ Հայքը զրկվել է նախկին մի չարք դաշնակից երկրների աջակցությունից և հայտնվել է երկու թշնամական տերությունների՝ Հռոմի և Պարթևստանի միջև, իսկ տերության ներսում սկսվել են երկպառակություններ, Տիգրան II-ը գերադասեց խաղաղ բանակցություններ վարել Պոմպեոսի հետ, նրան հրավիրեց Արտաշատ և կնքեց հաշտության պայմանագիր: Պոմպեոսը Տիգրան II-ի առաջարկն ընդունեց հաճությամբ, որովհետև մտադրվել էր խնայել իր ռազմական ուժերը և Մեծ Հայքի օգնությամբ խոնարհեցնել Հռոմի զորեղ հակառակորդ Պարթևստանին:

66 թ. աշնանը Արտաշատում Պոմպեոսի և Տիգրան II-ի միջև

կնքված հաշտության պայմանագրի համաձայն Սելևկյաններից գրավված երկրամասերն անցան Հռոմին, իսկ Պարթևստանից գրավվածները մնացին Մեծ Հայքի կազմում: Տիգրան Կրտսերը, որը ճանաչվեց Ծոփքի և Կորդուքի փոխարքա, հոր մահից հետո ժառանգելու էր Մեծ Հայքի գահը: Պայմանագրի մի հոդվածով Մեծ Հայքը հռչակվեց «հռոմեական ժողովրդի դաշնակիցն ու բարեկամը»: Մի այլ հոդվածով Հռոմին տրվող ռազմատուգանքի գումարը վճարվելու էր Տիգրան Կրտսերի տիրույթների հաշվին: Վերջինս ընդվզեց Արտաշատի պայմանագրի դեմ, գաղտնի բանակցություններ վարեց աներոջ՝ Հրահատ III-ի հետ և մտադրվեց նրա օգնությամբ տիրանալ Մեծ Հայքի գահին: Բայց Պոմպեոսը կալանավորեց նրան և աքսորեց Հռոմ, իսկ 58 թ. մահապատժի ենթարկվեց փախուստի փորձ կատարելու մեղադրանքով:

Ք.ա. 64 թ. Տիգրան II-ը բարեկամության դաշինք կնքեց Հրահատ III-ի հետ, որով փաստորեն վերականգնվեց քաղաքական հավասարակշռությունը Մերձավոր Արևելքում: Դիոն Կասիոսի վկայությամբ թեև պարթևները հողային վեճեր ունեին Մեծ Հայքի հետ, բայց նրանք չսրեցին այդ վեճերը և շահեցին հայերի դաշնակցությունը Հռոմի դեմ ապագա պայքարում:

դ. Հայաստանի պայքարն ընդդեմ Հռոմի: Արտաշեսյան թագավորության անկումը: Տիգրան II Մեծին հաջորդեց Արտավազդ II-ը (55-34), որը Տիգրանակերտի ճակատամարտից հետո թագադրվեց իբրև հոր գահակից, մասնակցեց նրա մղած պատերազմներին: Արտավազդ II-ը պատանի տարիներին ստացել էր հելլենիստական կրթություն և դաստիարակություն, զբաղվել մտավոր գործունեությամբ. գրել պատմական երկեր, ճառեր և թատերգություններ, որոնք չեն պահպանվել: Հայտնվելով երկու գերհզոր տերությունների՝ Հռոմի և Պարթևստանի ռազմական բախումների կիզակետում՝ Արտավազդ II-ը հարկադրված էր դաշնակցել մե՛րթ Հռոմի, մե՛րթ Պարթևստանի հետ՝ պահպանելու Հայաստանի պետական անկախությունը և տարածքային ամբողջականությունը:

Ք.ա. 54 թ. գարնանը 42 հազարանոց զորաբանակով Ասորիք մտավ հռոմեացի զորավար և եռապետ Մարկոս Կրասոսը: Նախապատրաստվելով Պարթևստանի դեմ արշավանքի՝ նա

Արտավազդ II-ին հորդորեց հայկական ռազմական ուժերով միանալ հռոմեական բանակին: Ք.ա. 53 թ. գարնանը Արտավազդ II-ը 6 հազարանոց հեծյալ անձնապահ գնդով մեկնեց Ասորիք և Կրասոսին առաջարկեց Պարթևաց դեմ արշավանքը ձեռնարկել Մեծ Հայքի տարածքով, որտեղ հայկական 30 հազար հետևակային և 10 հազար հեծելակային զորամասերը կմիանային հռոմեական զորքերին, որոնք կպարենավորվեին և կապահովվեին պարթևական հեծելազորի հարձակումներից: Բայց Կրասոսը մերժեց Արտավազդ II-ի առաջարկը և Պարթևստանի դեմ արշավանքը վճռեց ձեռնարկել Միջագետքի բաց տափաստաններով: Արտավազդ II-ն իր արքայական թիկնազորով վերադարձավ Արտաշատ:

Պարթևաց արքա Որոդես II-ը (57-37) իր ուժերի մի մասը՝ Սուրեն զորավարի հրամանատարությամբ, Հյուսիսային Միջագետքում կենտրոնացրեց հռոմեացիների դեմ, իսկ ինքը զորքերի մյուս մասով ներխուժեց Մեծ Հայք, որպեսզի խափանի Արտավազդ II-ի ռազմական օգնությունը Կրասոսին: Բայց Արտավազդ II-ը և Որոդես II-ը խոհեմաբար խուսափեցին զինաբախումից և Արտաշատում կնքեցին ռազմաքաղաքական դաշինք, որն ամրապնդվեց Արտավազդ II-ի քրոջ և Որոդեսի գահաժառանգ որդի Բակուրի ամուսնությամբ:

Ք.ա. 53 թ. գարնանը Հյուսիսային Միջագետքի Խառան քաղաքի մոտ տեղի ունեցած վճռական ճակատամարտում հռոմեական զորքերը ծանր պարտություն կրեցին՝ տալով 20 հազար զոհ: Գերի ընկած Կրասոսը գլխատվեց, նրա գլուխը Սուրեն զորավարն ուղարկեց Արտաշատ ի նշան հաղթանակի, որը հույն դերասան Յասոնի ձեռքով նետվեց Հայոց և Պարթևաց արքաների առջև, երբ նրանք թատրոնում դիտում էին Եվրիպիդեսի «Բաքոսուհիներ» ողբերգությունը:

Ք.ա. 51-50 թթ. և 40-38 թթ. հայ-պարթևական զորքերը՝ թագաժառանգ Բակուրի հրամանատարությամբ, ջախջախեցին հռոմեական զորքերին, գրավեցին Պաղեստինը, Փյունիկիան, Ասորիքը և մտան Կիլիկիա: Ք.ա. 51-50 թթ. պարթևական բանակում կռվող հայ զորավարներից հիշատակվում է Վասակը, իսկ 40-38 թթ.՝ Բարզափրան Ռշտունին:

Ք.ա. 38 թ. Բակուրի զոհվելուց հետո Հռոմի և Պարթևստանի

միջև կնքվեց հաշտություն, որով երկու տերությունների սահմանագիծ ճանաչվեց Եփրատ գետը: Ք.ա. 37 թ. դավադրաբար սպանվեց Որոդես II-ը, և Պարթևաց արքա հռչակվեց նրա որդի Հրահատ IV-ը (37-2), որի գահակալման սկզբնական տարիներին հայ-պարթևական հարաբերությունները դարձան թշնամական:

Օգտվելով պատեհ իրավիճակից՝ Հռոմի նոր եռապետ Մարկոս Անտոնիոսը 100 հազարանոց զորաբանակով 36 թ. գարնանը անցավ Եփրատ գետը և ճամբարեց Կարնո դաշտում՝ ծրագրելով Մեծ Հայքի վրայով արշավել Պարթևստանի դեմ: Արտավազդ II-ը պարտավորվեց Անտոնիոսին տրամադրել 7-10 հազարանոց հետևակ և 6 հազար հեծյալ զորամաս: Հռոմեական զորաբանակը Մեծ Հայքի տարածքով ներխուժեց Ատրպատական՝ նպատակ ունենալով նախ գրավել Հրահատ IV-ի դաշնակից թագավոր մար Արտավազդի մայրաքաղաք Փրաասպան: Ատրպատականի սահմանագլխում Արտավազդ II-ը հրաժարվեց իր զորամասերով մասնակցել Պարթևստանի դեմ Անտոնիոսի արկածախնդիր արշավանքին: Վերջինիս անխոհեմ մարտավարության հետևանքով հռոմեական զորքերը կրեցին ծանր պարտություն՝ տալով 35 հազար սպանված:

Հռոմեական զորքերի մնացորդները 27-օրյա դժվարին նահանջից հետո հասան Մեծ Հայքի սահմանագլուխ, հատեցին Երասխ գետը և Արտավազդ II-ի ուժերի պաշտպանությամբ փրկվեցին պարթևների հետապնդումից: Արտավազդ II-ի համաձայնությամբ հռոմեական զորքերը ձմեռեցին Մեծ Հայքում, իսկ Անտոնիոսը շտապեց իր կնոջ՝ Եգիպտոսի թագուհի Կլեոպատրա VII-ի մոտ:

Հռոմեական սենատի և Կլեոպատրայի առջև արդարանալու նպատակով Անտոնիոսն իր պարտության մեղքը բարդեց Արտավազդի դիրքորոշման վրա և քանիցս փորձեց խարդախությամբ ձերբակալել նրան: Չհասնելով նպատակին՝ Ք.ա. 34 թ. Անտոնիոսը խոշոր ուժերով ներխուժեց Մեծ Հայք: Արյունահեղ պատերազմից և ավերածություններից երկիրը փրկելու համար Արտավազդ II-ը կնոջ և որդիների՝ Տիգրանի ու Արտավազդի հետ անձնատուր եղավ Անտոնիոսին: Կողոպտելով և ավարի մատնելով Մեծ Հայքի բազմաթիվ գավառներ՝ Անտոնիոսը մեկնեց Եգիպտոս: Նա Ալեքսանդրիա քաղաքում կազմակերպեց

հաղթահանդես և Արտավազդ II-ին ազատություն պարգևելու խոստումով հորդորեց խոնարհվել ոսկյա գահին բազմած Կլեոպատրայի առաջ ու բարձրաձայն ներում աղերսել: Սակայն Հայոց թագավորը և նրա ընտանիքը հրաժարվեցին նվաստացումից, որի համար նետվեցին բանտ:

Ք.ա. 31 թ. սեպտեմբերի 2-ին Հուլիոս Կեսարի քրոջ որդի և որդեգիր, երևելի զորավար Օկտավիանոսը Հունաստանի Ակտիում քաղաքի մոտ տեղի ունեցած ծովային ճակատամարտում պարտության մատնեց Անտոնիոսին, որն իր կյանքին վերջ տվեց ինքնասպանությամբ: Հենց այդ ժամանակ էլ Կլեոպատրայի հրամանով գլխատվեց Արտավազդ II-ը: Ք.ա. 30 թ. ամռանը, երբ Օկտավիանոսը մտավ Եգիպտոս, Կլեոպատրան նույնպես դիմեց ինքնասպանության:

Գերեվարությունից փրկված Արտավազդ II-ի գահաժառանգ որդի Արտաշես II-ը (34-20) գլխավորելով Հռոմի դեմ պայքարը և վերականգնելով դաշինքը Պարթևաց թագավոր Հրահատ IV Արշակունու հետ՝ մինչև 31 թ. կարողացավ ուժերը համախմբել և ոչ միայն հռոմեական զավթիչներից ազատագրել Մեծ Հայքը, այլև ջախջախել նրանց համագործակցող Ատրպատականի թագավորին՝ Արտավազդ Մեդացուն և Ատրպատականը միացնել Հայոց թագավորությանը: Այնուհետև Հռոմը, հաշվի առնելով Կրասոսի և Անտոնիոսի պարտությունների դառը փորձը, չուրջ 10 տարի չհամարձակվեց պատերազմել հայ-պարթևական միացյալ ուժերի դեմ:

Այդ տարիներին Օկտավիանոսը վարում էր Մեծ Հայքն իր ավանդական դաշնակիցներից մեկուսացնելու, թշնամի դրացիներով նրան օղակելու և հայ ավագանուն պառակտելու քաղաքականություն: Զանազան խոստումների, կաշառքների ու դավերի միջոցով նա կարողացավ Մեծ Հայքի դեմ թշնամացնել Փոքր Հայքը, Կապադովկիան, Պոնտոսը, իբերական և աղվանական ցեղերը:

Ք.ա. 20 թ. Օկտավիանոս կայսրը խոշոր ուժերով մտավ Ասորիք և գահակալական կռիվներում թուլացած Հրահատ IV-ին հարկադրեց կնքել անջատ պայմանագիր, որով արձակվեցին Հռոմի ձեռքերը Մեծ Հայքի թագավորության դեմ: Նույն թվականին հռոմեական զորքերը Տիբերիոս զորավարի հրամանա-

տարությամբ ներխուժեցին Մեծ Հայք: Հուսալքված և Հռոմի սադրանքներից դրդված հայ ավագանու որոշ ներկայացուցիչներ հզոր թշնամու դեմ պատերազմից խուսափելու և պետական անկախությունն իսպառ չկորցնելու հույսերով դավաղրաբար սպանեցին Արտաշես II-ին և համաձայնվեցին գահը հանձնել նրա եղբորը՝ երկար տարիներ Հռոմում պատանդ գտնված Տիգրան III-ին (20-8): Միաժամանակ Մեծ Հայքից անջատվեց Ատրպատականը:

Տիգրան III-ը գահակալման վերջին տարիներին գրեթե ձերբազատվեց Հռոմի միջամտություններից, մերժեցավ Պարթևաստանին և սկսեց իր դրամները հատել պահլավերեն մակագրությամբ: Տիգրան III-ի մահից հետո թեև Հռոմը Հայոց գահ բարձրացրեց նրա կրտսեր եղբայր Արտավազդին (5-2), սակայն նա շուտով տապալվեց, և գահն անցավ Տիգրան III-ի որդի Տիգրան IV-ին (Ք.ա. 2 - Ք.հ. 1 թթ.): Տիգրան IV-ի մահով և նրա տոհմի արական սերնդի ընդհատմամբ Արտաշեսյան արքայատունը մարեց:

6. ՄԵԾ ՀԱՅՔԻ ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ (I-V դարեր)

ա. Արշակունիների գահակալությունը Մեծ Հայքում: Արտաշեսյան արքայատան արական անդամների ընդհատումից հետո Հռոմեական կայսրությունը փորձում էր Մեծ Հայքում իր ազդեցությունը պահպանել այլազգի դրածո թագավորների միջոցով: Մինչդեռ հայ ժողովուրդը և նրա կառավարիչները ձգտում էին ձերբազատվել Հռոմի տիրապետությունից ու նրա դրածոներից, վերականգնել Մեծ Հայքի թագավորության ինքնուրույնությունը և դրացի Պարթևստանի հետ ռազմաքաղաքական փոխշահավետ դաշինքը: Հայերի համառ պայքարն ի վերջո պսակվեց հաջողությամբ, երբ Պարթևստանում գահակալեց Վաղարշ I Արշակունին (51-76): Նա հայերի օժանդակությամբ 52 թ. Հռոմեական զավթիչներից ազատագրեց Մեծ Հայքը, տապալեց Հռոմի դրածո Հռադամիզդ Իբերացուն և Հայոց ավագանու աջակցությամբ Արտաշատ մայրաքաղաքում իր կրտսեր

եղբայր Տրդատ I-ին օծեց Հայոց արքա (52-մոտ 80), որի գահակալմամբ Մեծ Հայքում հիմնադրվեց Արշակունյաց արքայաճյուղը (52-428):

Տրդատ I-ին տապալելու և Մեծ Հայքը վերանվաճելու ծրագիր ունենալով՝ Հռոմի Ներոն կայսրը 55 թ. արևելյան զորքերի գերագույն հրամանատար կարգեց երևելի զորավար և դիվանագետ Գնեոս Կորբուլոնին: Երեքամյա ռազմական նախապատրաստությունից հետո, երբ Վաղարշ I-ը կաչկանդվել էր ապստամբած Վրկանաց «աշխարհի» դեմ պատերազմով, 58 թ. Կորբուլոնը Կարին-Արտաշատ ուղիով ներխուժեց Մեծ Հայք. Տրդատ I-ը մարտերով նահանջեց Ատրպատական և սպասեց եղբոր ռազմական աջակցությանը:

Արտաշատում ձմեռած Հռոմեական զորքերը 59 թ. գարնանը կողոպտեցին և ավերեցին քաղաքը, ապա Տարոնով մտան Աղձնիք, աշնանը գրավեցին Տիգրանակերտը և այնտեղ Մեծ Հայքի թագավոր հռչակեցին Տիգրան VI-ին (60-61): Վերջինիս համաձայնությամբ Հռոմը Մեծ Հայքից անդամահատեց Հյուսիս-արևմտյան և արևմտյան մի շարք գավառներ և դրանք միացրեց Իբերիային, Պոնտոսին, Փոքր Հայքին և Կոմմագենեին:

Տրդատ I-ի պահանջով 61 թ. Վաղարշ I-ը հաշտություն կնքեց Վրկանաց աշխարհի հետ և իր ռազմական ուժերը կենտրոնացրեց Հայոց Միջագետքում՝ ընդդեմ Կորբուլոնի զորաբանակի, իսկ հայկական զորքերը Տրդատ I-ի գլխավորությամբ արագընթաց հարձակմամբ պաշարեցին Տիգրանակերտը: Հաշվի առնելով Հռոմեական զորքերի համար ստեղծված վտանգը՝ Կորբուլոնը Մծբին քաղաքում Վաղարշ I-ի հետ կնքեց զինադադար, որի համաձայն Հռոմեական և պարթևական զորքերը դուրս բերվեցին Մեծ Հայքից, ետ կանչվեց Տիգրան VI-ը, իսկ Տրդատ I-ը վերահաստատվեց հայկական գահին: Պատճառաբանելով, թե ինքը չունի հաշտություն կնքելու լիազորություն, Կորբուլոնը հորդորեց Վաղարշ I-ին՝ պատգամավորություն ուղարկել Հռոմ և Մծբինի զինադադարի պայմանները վավերացնել Ներոնի համաձայնությամբ: Սակայն Ներոնը Մեծ Հայքը նվաճելու և այն Հռոմեական նահանգ դարձնելու մտադրությամբ Հռոմի արևելյան զորքերի գլխավոր հրամանատար նշանակեց իր մտերիմ Պետոսին: 61 թ. աշնանը Պետոսի զորքերը

անցան Եփրատը և ներխուժեցին Ծոփք: Ասպատակելով և կողոպտելով Ծոփքի և Աղձնիքի մի շարք գավառներ՝ Պետոսը ճոխ ավարով ու բազմաթիվ գերիներով ճամբարեց Արածանի գետի ափին՝ Խարբերդի դաշտում, Հանդեա կոչվող վայրում:

62 թ. գարնանը Հայ-պարթևական զորքերը Հայ զորավար Վասակի հրամանատարությամբ ոչնչացրին Հայկական Տավրոսի լեռնանցքներում տեղակայված հռոմեական զորամասերին, ապա արագ երթով պաշարեցին Պետոսի զորաճամբարը: Հանդեայում տեղի ունեցած ճակատամարտում հռոմեական զորքերը կրեցին ջախջախիչ պարտություն: Իր զորքերի մնացորդներին փրկելու նպատակով Պետոսը կնքեց զինադադար, որի համաձայն հռոմեացիները զինաթափվեցին, հանձնեցին գերիներին ու ավարը, ապա անցնելով նիզակներից պատրաստված ստորացուցիչ «լծի» տակով՝ ահաբեկված փախան Կապադովկիա:

Պատերազմը շարունակելու և հաղթանակի հասնելու նպատակով Ներոնը վերստին հռոմի արևելյան զորքերի գլխավոր հրամանատար կարգեց արտակարգ լիազորություններով օժտված Կորբուլոնին: Նկատի ունենալով հայ-պարթևական ուժերի գերակշռությունը՝ Կորբուլոնը ձեռնպահ մնաց ռազմական գործողություններից և առաջարկեց կնքել հաշտության պայմանագիր: Հայերի պահանջով հաշտությունը կնքվեց Հանդեայում՝ հռոմեական զորքերի պարտության վայրում: Ըստ հաշտության պայմանների հռոմը և Պարթևստանը ճանաչեցին Մեծ Հայքի անկախությունը, Տրդատ I-ի ինքնավար իրավունքները և իրենց զորքերը հեռացրին նրա սահմաններից: Միաժամանակ պայմանավորվեցին, որ այնուհետև Մեծ Հայքի գահի համար Պարթևաց արքունիքի առաջադրած թեկնածուն, սկսած Տրդատ I-ից, պետք է մեկնի հռոմ և արժանանա կայսերական արքունիքի հավանությանն ու հաստատմանը:

65 թ. Տրդատ I-ը իր ընտանիքով և 3 հազար հեծյալ շքախմբով մեկնեց հռոմ: Ինն ամիս տևած այդ ուղևորության ծախսերը պարտավորվեց վճարել կայսերական արքունիքը: հռոմի գլխավոր հրապարակում՝ ֆորումում, Տրդատ I-ը հանդիսավորությամբ օծվեց Մեծ Հայքի թագավոր, 66 թ. վերադարձավ հայրենիք, զբաղվեց երկրի տնտեսության վերականգնմամբ և շինարարական աշխատանքներով: Տրդատ I-ին հատկացված

խոշոր գումարը և նրա հետ Մեծ Հայք եկած բազում արհեստավորները սոսկ կայսերական «պարգև» չէին, այլ ռազմատուվորները սոսկ կայսերական «պարգև» չէին, այլ ռազմատուգանք՝ հռոմեական զորքերի պատճառած վնասները փոխհատուցելու համար: Այդ գումարով ու արհեստավորների օգնությամբ վերականգնվեցին Արտաշատը, Գառնիի ամրոցը, որին առընթեր կառուցվեց Միհր աստծո տաճարը և այլն:

Հայոց Սանատրուկ թագավորը (մոտ 80-110) շարունակեց իր նախորդի շինարարական գործունեությունը, Արածանիի և Մեղրագետի միախառնման մոտ հիմնեց Մծուրն քաղաքը, նպաստեց երկրի տնտեսության և մշակույթի բարգավաճմանը: Մովսես Խորենացու վկայությամբ Սանատրուկի օրով Մեծ Հայքին միացվեց նաև Օսրոյենեի (Եդեսիայի) թագավորության տարածքը: Սանատրուկին հաջորդեցին Աշխադար Արշակունին (110-113), ապա՝ վերջինիս եղբայր Պարթամասիրը (113-114):

Հռոմի Տրայանոս կայսրը Արևելքի երկրները նվաճելու և Ալեքսանդր Մակեդոնացու փառքը կրկնելու արկածախնդիր ծրագրով 114 թ. ներխուժեց Մեծ Հայք, նենգորեն սպանեց Պարթամասիրին և Հայաստանը հայտարարեց հռոմեական նահանգ, ապա հարձակվեց Պարթևստանի վրա: Բայց համառ կռիվներում հռոմեական զորքերը պարտվեցին հայ-պարթևական միացյալ ուժերից, և Տրայանոսը նահանջեց Կիլիկիա: Պարթևաց արքա Խոսրով II-ի համաձայնությամբ Մեծ Հայքի գահին բարձրացավ հակահռոմեական պայքարը գլխավորող Վաղարշ I-ը (116-144): Վերջինս նույնպես ծավալեց շինարարական գործունեություն, հիմնեց Վաղարշապատ նոր արքայանիստը, Վաղարշակերտ (Բագրևանդ գավառում, այժմ՝ Ալաշկերտ) և Վաղարշավան քաղաքները:

Հռոմի կայսր Անտոնիոս Պիոսը 144 թ. տապալեց Վաղարշ I-ին և Մեծ Հայքի գահին կարգեց Կոմմագենեի Երվանդունիների շառավիղ Սոհեմոսին (140-161 և 164-186), որ առժամանակ ընդմիջվեց Բակուր Արշակունու գահակալմամբ (161-163): Սոհեմոսը շարունակեց Վաղարշապատի կառուցապատումը, հովանավորեց հելլենիստական մշակույթը, իր արքունիքում ապաստան տվեց հույն իմաստասեր, պատմագիր և բանաստեղծ Յամբղիքոսին: Մեծ Հայքում հռոմեական կայսրության դեմ

պայքարը 186 թ. ավարտվեց ազգային ուժերի հաղթանակով և Վաղարշ I-ի թոռ Վաղարշ II Արշակունու գահակալմամբ (186-211): Նրա ներքին և արտաքին խոհեմ քաղաքականության շնորհիվ Մեծ Հայքում վերջնականապես հիմնվեց հայ Արշակունիների ժառանգական արքայատունը, պահպանվեց պետական սահմանների անխախտությունը:

Կովկասյան հրոսակ ցեղերի դեմ կռիվներից մեկում Վաղարշ II-ը զոհվեց: Նրան հաջորդեց որդին՝ Խոսրով I Մեծը (211-259): Խոսրով I Մեծը զինակցեց Արտավան V Արշակունուն՝ ընդդեմ Պարսկաստանում գլուխ բարձրացրած Սասանյանների: 226 թ. Որմզդականի վճռական ճակատամարտում Արշակունյաց բանակի պարտությունից և Արտավան V-ի զոհվելուց հետո Խոսրով I Մեծը տարիներ շարունակ գլխավորեց հակասասանյան ուժերի պայքարը, Մեծ Հայքում ապաստան տվեց Իրանից դուրս մղված մի շարք պարթև իշխանատոհմերի: Ի վերջո Խոսրով I Մեծը զոհվեց Արտաշատի իր ապարանքում Սուրենյան տոհմի պարթև իշխան Անակի ձեռքով: Դավադրությունը կազմակերպել էր Սասանյան Շապուհ I արքան:

Մեծ Հայքի և Պարսկաստանի միջև առաջացած անհաշտելի թշնամության հետևանքով հայ Արշակունիները հարկադրաբար կողմնորոշվեցին դեպի Հռոմեական կայսրություն՝ ջանալով նրա դաշնակցությամբ դիմակայել ռազմատենչ Սասանյաններին: Խոսրով I Մեծի սպանությունից և համառ մարտերից հետո 261 թ. Շապուհ I-ը ռազմակալեց Մեծ Հայքը: Խոսրով I Մեծի մանկահասակ որդի Տրդատը, որ հարկադրաբար ապաստանել էր Հռոմում, հետագայում ծառայության մտավ կայսերական բանակում, գոթերի և պարսիկների դեմ մարտերում հռչակվեց անձնական քաջություններով, արժանացավ Դիոկղետիանոս կայսեր համակրանքին ու հովանավորությանը: Վերջինիս աջակցությամբ էլ պարսկական զավթիչներից ազատագրվեց Մեծ Հայքը և հայրենի գահին հաստատվեց Տրդատ III Մեծը (287-330): Տրդատը հակահարված հասցրեց ալաններին, որոնք ասպատակում էին երկրի հյուսիսային տարածքները, ապա հաջողությամբ պայքարեց Սասանյանների նոր ոտնձգությունների դեմ: Հայ-հռոմեական զորքերից վերստին պարտություն կրած Սասանյանները 298 թ. Մծբինում կնքված 40-ամյա հաշտության

պայմանագրով ճանաչեցին Մեծ Հայքի թագավորության անկախությունը և Տրդատ III Մեծի արքայապատիվ իրավունքները:

բ. Արշակունիների պայքարը պետական անկախության պահպանման համար: *Տրդատ III Մեծի գահակալման խաղաղ տարիներին վերականգնվեցին հայ ավատառու նախարարությունների ավանդական տեղերն ու պարտականությունները պետական կառավարման համակարգում, նրանց գործակալական հնամենի իրավունքները, զինված ուժերի կազմակերպման և տեղաբաշխման կարգը, վարչաբաժանումները, հարկային պարտավորությունները և այլն: 290-ական թթ. Տրդատ III Մեծը հետևելով Դիոկղետիանոս կայսերը՝ հալածեց Հայաստանում զգալի տարածում գտած քրիստոնեական համայնքները: Բայց չուտով քրիստոնեության մեջ տեսնելով իրանական թշնամի աշխարհից գաղափարապես գատվելու և իր միապետությունն ամրապնդելու ազդու գործոն՝ Տրդատ III Մեծը 301 թ. այն հռչակեց պետական կրոն: Հայոց եկեղեցու հայրապետ Գրիգոր Լուսավորչի գլխավորությամբ հիմնվեցին եկեղեցիներ ու քրիստոնեական սրբերի վկայարաններ:*

Մծբինի 40-ամյա հաշտության պայմանագրով և հայ-հռոմեական դաշինքով կաչկանդված Պարսկաստանը խրախուսում էր որոշ հայ նախարարների կենտրոնախույս հակումները և Մեծ Հայքի դեմ կովկասյան ցեղերի հրոսակային հարձակումները: Հայոց արքա Խոսրով II Կոտակը (330-338) հարկադրված էր զենքով ճնշել ներքին խռովությունները, սրի քաշել Մանավազյան, Որդունի և Բզնունի նախարարական տոհմերի նշանավոր ներկայացուցիչներին, վերամիավորել Շապուհ II-ի (309-379) սաղրանքով ինքնազլուխ դարձած Աղձնիքն ու Հայոց Միջագետքը, հակահարված հասցնել Մյոգքթաց Արշակունի թագավոր Սանեսան-Սանատրուկի ոտնձգություններին: Խոշոր ավատառուների անջատական ձգտումները կանխելու նպատակով Խոսրով II-ը օրենք սահմանեց, որով հազար և ավելի գինվոր ունեցող նախարարները բնակվեն մայրաքաղաքում, Հայոց արքունիքի անմիջական հսկողության ներքո: Կարճատև խաղաղության տարիներին Խոսրով II-ը ծավալեց շինարարական աշխատանքներ, հիմնեց Դվին քաղաքը, տնկեց Տաճար մայրի և Խոսրովակերտ արգելանոց անտառները:

Խաղաղությունը խաթարվեց 337 թ., երբ պարսկական մի զորամաս պաշարեց Հայոց Միջագետքի կենտրոն Մծբինը, իսկ մի այլ զորամաս Հեր-Զարևանդ գավառով ներխուժեց Վասպուրական: Սակայն Վանա լճի հյուսիսարևելյան ափին, Առեստ ավանի մոտ տեղի ունեցած ճակատամարտում հայկական 30 հազարանոց զորաբանակը սպարապետ Վաչե Մամիկոնյանի հրամանատարությամբ ջախջախեց թշնամուն և ազատագրեց երկիրը: Նույն թվականին մեծ զոհերի գնով կանխվեց նաև պարսիկների երկրորդ հարձակումը:

Խոսրով II Կոտակի մահից հետո պարսկական զորքերը վերստին ներխուժեցին Մեծ Հայք, և Տիրան արքան (339-350) հայրենի գահին հաստատվեց հռոմեական զորքերի օգնությամբ: Տիրանը չարունակեց իշխանության կենտրոնացման քաղաքականությունը. սանձեց անջատամետ նախարարներին, սահմանափակեց ուռճացած եկեղեցու կալվածքները, տապալեց ընդդիմացող Հուսիկ Ա Պարթևին և կաթողիկոսական աթոռին դրեց Աղբիանոսյան տոհմի ներկայացուցիչ Փառեն Ա Աչտիշատցուն:

350 թ. Շապուհ II-ը խոշոր բանակով ներխուժեց Մեծ Հայք, խարդախությամբ գերեվարեց Տիրան արքային ու նրա ընտանիքը: Սակայն նույն թվականին հայ-հռոմեական միացյալ զորքերը Ոսխայի վճռական ճակատամարտում (Բասեն), գլխովին ջախջախեցին պարսկական ուժերին և Շապուհ II-ին հարկադրեցին կնքել հաշտության պայմանագիր՝ գերությունից վերադարձնելով Հայոց արքայի ընտանիքը: Քանի որ Տիրանը կուրացվել էր, իսկ գահաժառանգ Արտաշեսն սպանվել բանտում, Մեծ Հայքի թագավոր հռչակվեց արքայազն Արշակ II-ը (350-368):

Գահակալման սկզբնական տարիներին Արշակ II-ը զիջողական քաղաքականությամբ փորձեց մեղմացնել աշխարհիկ և հոգևորական ավատատուների սրված դժգոհությունները: Նա հաշտվեց Գրիգոր Լուսավորչի տոհմի հետ և կաթողիկոսական աթոռին հաստատեց Ներսես Ա Պարթևին, որի համագործակցությամբ իրագործեց մի շարք բարեփոխումներ. չափավորվեցին հարկերը, կարգավորվեցին ամուսնաընտանեկան հարաբերությունները, հիմնվեցին նոր դպրոցներ, խնամատար հիմնարկներ և այլն:

Կենտրոնական իշխանության տնտեսական և քաղաքական հզորությունը մեծացնելու նպատակով Արշակ II-ը ծրագրել էր արքունական տիրույթներում հիմնել նոր քաղաքներ, որոնցում արտոնյալ պայմաններով կարող էին բնակություն հաստատել նախարարական տիրույթներում ապրող աշխատավորները: Այրարատ նահանգի Կոգովիտ գավառում նա հիմնեց Արշակավանը, որը կարճ ժամանակամիջոցում դարձավ մարդաշատ քաղաք, արհեստագործության և առևտրի առաջատար կենտրոն: Արշակ II-ի այդ քաղաքականությունը հարուցեց նախարարների դժգոհությունը, որոնք էլ պարսից օգնությամբ կործանեցին Արշակավանը և ձախողեցին արքայի ծրագրերը:

363 թ. գարնանը բորբոքված պարսկա-հռոմեական պատերազմի ժամանակ, երբ Շապուհ II-ի զորքերը ներխուժեցին Հայոց Միջագետք, Արշակ II-ը զինակցեց իր դաշնակից Հուլիանոս կայսերը: Սակայն նույն թվականին Հուլիանոսի զոհվելուց հետո նրան հաջորդած կայսր Հովիանոսը Շապուհ II-ի հետ կնքեց Հռոմի համար ստորացուցիչ պայմաններով հաշտության պայմանագիր, թշնամուն հանձնեց հայ-հռոմեական ուժերով գրավված տարածքները և պարտավորվեց այլևս չաջակցել Արշակ II-ին:

Օգտվելով իրավիճակից՝ 364 թ. գարնանը Շապուհ II-ը խոշոր ուժերով ներխուժեց Մեծ Հայք և Արշակ II-ի դեմ հանեց արքայից դժգոհ նախարարներին՝ Մերուժան Արծրունու և Վահան Մամիկոնյանի գլխավորությամբ: Արշակ II-ը և նրա տաղանդավոր սպարապետ Վասակ Մամիկոնյանը չորս տարի հերոսաբար դիմադրավեցին պարսկական զորքերին և պահպանեցին Մեծ Հայքի թագավորության անկախությունը:

Զենքով չհասնելով հաջողության՝ Շապուհ II-ը հաշտություն կնքելու պատրվակով 368 թ. Տիզբոն հրավիրեց Արշակ II-ին և Վասակ Մամիկոնյանին, նենգորեն կալանավորեց և սպանեց նրանց: Նույն թվականին պարսկական 50-հազարանոց զորաբանակը ներխուժեց Մեծ Հայք, ավերեց Արտաշատը, Վաղարշապատը, Վանը, Նախճավանը, Զարեհավանը, Զարիշատը և այլ քաղաքներ, գերեվարեց հարյուր-հազարավոր բնակիչների, ռազմակալեց երկիրը: Հայոց թագուհի Փառանձեմը փոքրաքանակ արքունի կայազորով և գանձերով ամրացավ Արշարու-

նիք գավառի Արտագերս ամրոցում և 14 ամիս հերոսաբար դիմադրեց թշնամուն՝ սպասելով հայ-հռոմեական ուժերի օգնությանը՝ թագաժառանգ Պապի և սպարապետ Մուշեղ Մամիկոնյանի գլխավորությամբ: Ի վերջո, սովի և համաճարակի հարկադրանքով Արտագերսը հանձնվեց Շապուհ II-ին: Կողոպտվեցին Արշակունյաց գանձերը, տանջամահ սպանվեց Փառանձեմ թագուհին:

Երբ 369-370-ական թթ. Պապի և Մուշեղ Մամիկոնյանի շուրջ համախմբված հայրենասեր նախարարները մի քանի հաջող մարտեր մղեցին պարսկական զավթիչների դեմ, Հռոմի Վաղես կայսրը օգնական մի զորամաս ուղարկեց Մեծ Հայք: 371 թ. գարնանը հայ-հռոմեական միացյալ ուժերը Բագրևանդ գավառի Զիրավ գյուղի մերձակա դաշտում գլխովին ջախջախեցին պարսկական զորաբանակը: Լքելով իր բանակը և կանանոցը, Շապուհ II-ը հազիվ ճողոպրեց Պարսկաստան: Նա հարկադրված եղավ կնքել հաշտության պայմանագիր, որով ճանաչեց Մեծ Հայքի անկախությունը և Պապ Արշակունու գահը (369-374):

Այնուհետև երիտասարդ արքան եռանդով զբաղվեց երկրի ներքին կյանքում ծառացած դժվարին խնդիրների լուծմամբ: Նա զենքի ուժով ճնշեց կենտրոնական իշխանության դեմ ապըստամբած իշխանություններին և վերամիավորեց ինքնագլուխ դարձած մի շարք նահանգներ (Արցախ, Փայտակարան, Պարսկահայք, Կորճայք, Աղձնիք, Ծոփք), փակեց կուսակրոն հաստատությունները, որոնք խոչընդոտում էին բնակչության վերարտադրությունը և կլանում երիտասարդ ուժերին, կրճատեց եկեղեցու հողային կալվածները և եկեղեցու օգտին գանձվող հարկերը, քաղաքական կարևոր հարցերի լուծման գործում սահմանափակեց բարձրադաս հոգևորականության իրավունքները, ընդարձակեց զինված ուժերը, եկեղեցուց բռնագրաված հողերը չնորհեց զինվորական ծառայություն կրող մանր ազնվականներին: Պապի ընդգծված ազգային քաղաքականությունը հարուցեց հռոմեական արքունիքի դժգոհությունը, և նա, ի վերջո, դարձավ Վաղես կայսեր կազմակերպած դավադրության զոհ:

Երկյուղելով հայ ժողովրդի ցասումից և Մեծ Հայքում հակա-

հռոմեական տրամադրությունների ալիքից՝ Վաղես կայսրը Հայոց թագավոր ճանաչեց Պապի մերձավոր ազգական Վարազդատին (374-378), որն ապրել և կրթվել էր Հռոմում, հռչակվել օլիմպիական մրցախաղերում: Վարազդատը վարում էր Հռոմի և Պարսկաստանի միջև խուսանավելու և սեփական ուժերով Արշակունյաց թագավորության հզորությունը վերականգնելու քաղաքականություն, մինչդեռ սպարապետ Մուշեղ Մամիկոնյանը Պարսկաստանին դիմակայելու միջոց էր համարում Մեծ Հայքում հռոմեական զորքերի կենտրոնացումը: Արքայի և սպարապետի միջև խորացած տարաձայնությունները հանգեցրին ողբերգական վախճանի. Վարազդատը Մուշեղ Մամիկոնյանին դիտելով Մեծ Հայքը հռոմեական նահանգ դարձնելու կողմնակից և Պապի սպանության հանցակից՝ 376 թ. նրան սպանել տվեց խնջույքի ժամանակ: Մամիկոնյան տոհմի թշնամությունը վաստակած արքան սպարապետության գործակալությունը հանձնարարեց իր դայակ Բատ Սահառունուն: 378 թ. Մուշեղ Մամիկոնյանի եղբայր Մանվելը Կարինի դաշտում պարսից օգնությամբ պարտության մատնեց արքունի զորաբանակը և Վարազդատին հարկադրեց փախչել Հռոմ: Մանվել Մամիկոնյանի խնամակալությամբ Մեծ Հայքի թագավոր օծվեց Պապի անչափահաս որդի Արշակ III-ը (378-389):

գ. Հայաստանի պարսկա-հռոմեական առաջին բաժանումը: Արշակունյաց թագավորության անկումը: 378 թ. վեստգոթերի դեմ Ադրիանապոլսի ճակատամարտում հռոմեական զորքերի ծանր պարտությունից և Վաղես կայսեր զոհվելուց հետո սաստկացան «բարբարոս» ցեղերի հարձակումները, որոնց հետևանքով թուլացած կայսրությունը զրկվեց Մերձավոր Արևելքում գործուն քաղաքականություն վարելու և Սասանյան Պարսկաստանի առաջխաղացումները զենքով կանխելու հնարավորությունից: Հռոմեա-պարսկական բանակցությունները հանգեցրին 387 թ. հաշտության պայմանագրի կնքման, որով Մեծ Հայքը բաժանվեց նրանց ազդեցության ոլորտների միջև. արևմտյան (հռոմեական) մասում գահակալեց Արշակ III-ը, իսկ արևելյան (պարսկական) և մեծագույն մասում՝ Խոսրով III-ը (387-389):

Արշակ III-ի մահից հետո Հռոմը վերացրեց հայկական թագավորությունը: Հետևելով Հռոմի օրինակին՝ Սասանյանները

389 թ. Մեծ Հայքը վերամիավորելու մեղադրանքով տապալեցին և բանտարկեցին Խոսրով III Արշակունուն, աթոռազրկեցին Հայոց կաթողիկոս Սահակ Ա Պարթևին: Սակայն բախվելով հայ ժողովրդի և Հայոց պետականության ավանդական սյուների՝ նախարարական իշխանությունների հուժկու դիմադրությանը, Սասանյան արքա Վռամ IV-ը հարկադրված եղավ նույն թվականին հայկական գահը չնորհել Խոսրով III-ի եղբայր Վաղարշին, որին անվանեցին Վռամշապուհ:

Վռամշապուհը (389-414) օգտվելով Պարսկաստանի և Հռոմեական կայսրության միջև ստեղծված քաղաքական հավասարակշռությունից՝ բարեկամական կապեր հաստատեց նրանց արքունիքների հետ, քառորդ դար գահակալեց խաղաղությամբ և իմաստությամբ, մեծապես նպաստեց երկրի բարգավաճմանը, հատկապես ազգային կրթության զարգացմանն ու մշակույթի բուռն վերելքին, որոնցով իրապես պայմանավորվեց Հայոց «Ոսկե դարը»: Վռամշապուհի հոգատարությամբ Հայոց կաթողիկոսական աթոռին չուտով վերահաստատվեց Սահակ Ա Պարթևը, իսկ նրա տեղապահ ընտրվեց Մեսրոպ Մաշտոցը: Վերակազմվեց Հայոց «Գահնամակը», որով, ելնելով նոր իրողություններից, կարգավորվեցին նախարարությունների տեղերն ու պաշտոնները երկրի կառավարման համակարգում: Նորացված «Գահնամակը» Վռամշապուհն ուղարկեց Տիզբոն և ճանաչել տվեց պարսից արքունիքին: Վռամշապուհը, ինչպես նաև նրա հովանավորությամբ ասպարեզ մտած հայ տաղանդավոր գործիչներն ու մտավորականները համոզվել էին, որ օտարալեզու (հունարեն, ասորերեն, պարսկերեն) դպրոցներով անհնար է զարգացնել ազգային կրթությունը, գիտությունն ու մշակույթը: Ուստի նա և հազարապետ Առավանը հատուկ ջանասիրությամբ աջակցեցին Սահակ Պարթևին և Մեսրոպ Մաշտոցին հայ նոր գրերի ստեղծման և ազգային դպրոցների բացման գործում, մեծապես խրախուսեցին նրանց լուսավորչական ձեռնարկումները:

Վռամշապուհի մահից հետո հայ նախարարների պահանջով 414 թ. կրկին թագավորեց բանտարկությունից ազատված Խոսրով III-ը, բայց նույն տարում էլ վախճանվեց:

Օգտվելով պատեհ առիթից՝ Պարսից արքա Հազկերտ I-ը,

հակառակ հայ նախարարների կամքի, 416 թ. Հայոց թագավոր նշանակեց իր որդի Շապուհին: Բայց 419 թ. Շապուհի՝ Տիզբոն մեկնելուց և սպանվելուց հետո, հայ նախարարները Ներսես իշխանի գլխավորությամբ ապստամբեցին և թոթափեցին պարսից տիրապետությունը: Սասանյան նոր արքա Վռամ V Գոռը հարկադրված եղավ Վռամշապուհի որդի Արտաշեսին ճանաչել Հայոց թագավոր (422-428), իսկ Համազասպ Մամիկոնյանի որդի Վարդանին՝ Հայոց սպարապետ: Որոշ ժամանակ անց Վռամ V Գոռը պարսկասեր նախարարներին հրահրեց Արտաշեսի դեմ, նրանց պահանջով և կեղծ ամբաստանությամբ 428 թ. տապալեց նրան: Այնուհետև Հայաստանը հռչակվեց Պարսից տերության առանձնահատուկ վարչամիավոր՝ մարզպանություն, որի առաջին մարզպան նշանակվեց Վեհմիհրշապուհը (428-443):

դ. Պետական կարգը: Արշակունյաց թագավորության ժամանակաշրջանում ավարտուն տեսք և իրավական ձևակերպում ստացան ավատապետական զարգացած հասարակարգին բնորոշ ինստիտուտները՝ իշխող ազնվականության ավատատիրական սեփականության ձևերը, նրանց ժառանգական իրավունքները, արտոնություններն ու պարտականությունները, տերունի-վասալ հարաբերությունների և կառավարման համակարգի սանդղաձև կառուցվածքը և այլն: Նվիրապետական «սանդուղքը» գլխավորում էր երկրի գերագույն միապետը՝ Հայոց Արշակունի արքան: Իշխող վերնախավի առաջին աստիճանը կազմում էին չորս կուսակալ «աշխարհների»՝ Աղձնիքի, Կորճայքի, Նոր Շիրականի և Գուգարքի իշխանները՝ բդեշխները, «աշխարհատեր» և գավառատեր նախարարները, ինչպես նաև կրոնի և գաղափարախոսության բարձրաստիճան սպասավորները, մասնավորապես՝ քրմապետական, իսկ 301 թվականից հետո՝ կաթողիկոսական տոհմերը: Նրանք իրենց ավատատիրույթներում լիակատար տեր էին, սակայն երկրի գերագույն տիրոջը՝ արքային տված հավատարմության երդումը անխախտ պահպանելու, նրան ռազմական, վարչական և այլ ծառայություններ մատուցելու պայմանագրությամբ: Բարձրաստիճան ազնվականների տիրույթները կոչվում էին «հայրենիք» կամ «հայրենականք», որոնք համարվում էին նրանց անտրոհելի

տոհմական սեփականությունը և ժառանգաբար փոխանցվում էին ավագ զավակներին: Յուրաքանչյուր նախարար օժտված էր վարչական և դատական իշխանությամբ, իր հպատակ բնակչությունից գանձում էր հարկեր ու տուրքեր, պահում էր սեփական զորք: Հայ նախարարների զորքերի թվաքանակի մասին տեղեկությունները վավերացված էին «Զորանամակ» կոչվող հրովարտակում: Նվիրապետական «սանդուղքի» հաջորդ աստիճանը կազմում էին ազնվականության կրտսեր ժառանգները՝ «ոստանիկները» և «սեպուհները», որոնք իրենց անմիջական տերերից ստանում էին «պարգևականք» կոչվող տիրույթներ՝ դրանց փոխարեն զինվորական և վարչական ծառայություններ մատուցելու պայմանով:

Բդեշխներն ու նախարարները արքունիքում ժառանգաբար զբաղեցնում էին իրենց հատկացված «գահերը» կամ «բարձ ու պատիվները», որոնց աստիճանները կամ խիստ հերթականությամբ կանոնակարգված տեղերը (ըստ նրանց տնտեսական և ռազմական հզորության) ամրագրված էին արքունի «Գահնամակում»: Հայոց արքան երկիրը կառավարում էր արքունիքին առընթեր վարչական մարմինների՝ գործակալությունների միջոցով: Գործակալական պաշտոնները վարում էին տոհմիկ ազնվականության ներկայացուցիչները, հիմնականում՝ ժառանգաբար, սերունդներին փոխանցելով իրենց հմտությունները: Արշակունյաց թագավորության ժամանակաշրջանում կարևոր էին հետևյալ գործակալությունները.

1. Հազարապետություն, որի գործակալը ղեկավարում էր երկրի տնտեսական գործերը, հարկագանձումներն ու եկամուտների բաշխումը, անտառատնկումները, շինարարական աշխատանքները, մասնավորապես քաղաքների, բերդերի, ճանապարհների, կամուրջների, ջրանցքների կառուցումները: Այդ գործակալությունը տարբեր ժամանակներում վարել են Գնունի և Ամատունի իշխանատների ներկայացուցիչները:

2. Մարզպետություն, որի գործակալը հսկում էր թագավորի ապարանքը, բերդերն ու ամրոցները, ղեկավարում արքունի տնտեսությունը, կալվածները, եկամուտներն ու գանձերը, գլխավորում էր «մարզպետական» կոչվող հեծյալ զորագունդը, հոգում էր արքայազունների դաստիարակությունը, մեծարվում «Հայր» պատվանունով:

3. Սպարապետություն, որի գործակալը երկրի ռազմական ուժերի գերագույն հրամանատարն էր և այդ գործում թագավորի առաջին տեղակալը: Սույն գործակալությունը գերազանցապես վարել են Մամիկոնյան նախարարական տան ներկայացուցիչները:

4. Մեծ դատավարություն, որի գործակալը ղեկավարում էր դատական ատյանները, ընդունում հասարակական կյանքը կարգավորող օրենքներ ու կանոններ, հետևում դրանց կենսագործմանը, այդ գործերում համարվում թագավորի առաջին խորհրդականը: Մեծ դատավարության գործակալությունը նախաքրիստոնեական դարերում եղել է Հայոց քրմապետի, իսկ 301 թվականից հետո Հայոց հայրապետի (կաթողիկոսի) մենաշնորհը:

5. Մաղխազություն, որի գործակալը գլխավորում էր արքունի պահակազորը և թիկնազորը, հոգում թագավորի անձի և նրա ընտանիքի պաշտպանությունը: Այդ գործակալությունը ժառանգաբար վարել են Խորխորունի նախարարական տան ներկայացուցիչները:

6. Թագադիր ասպետություն, որի գործակալը ղեկավարում էր նորընծա արքայի թագադրման և արքունի ապարանքի արարողությունները, ընդունում և ճանապարհում էր օտարերկրյա դեսպաններին: Այդ գործակալությունը ժառանգաբար վարել են Բագրատունյաց տոհմի ներկայացուցիչները:

7. Սենեկապետություն, որի գործակալը ղեկավարում էր պետական գրագրությունները, համարվում արքունի դիվանի քարտուղարը, դպրապետը և կնքապահը: Արքայի հանձնարարությամբ այդ պաշտոնը վարել են հավատարիմ, գրագետ և օտար լեզուների տիրապետող ազնվականներ:

Մատենագրական աղբյուրներում հիշատակվում են նաև շահախոռապետ, որսապետ, տակառապետ, հանդերձապետ, դահճապետ, մունետիկ, շահապ, գրչունիք, նամակունիք, սպանդունիք, արքունի դրան եպիսկոպոս և այլ անվանումներով միջին ու մանր գործակալություններ: Արշակունիների արքայատան անկումից (428 թ.) հետո հիմնականում հարատևեցին համապետական նշանակություն ունեցող գործակալությունները, որոշ գործակալություններ վերաիմաստավորվեցին, իսկ պալատա-

կան նեղ նշանակություն ունեցողները դադարեցին գործելուց:

Արշակունյաց Հայաստանում զինված ուժերը համալրվում էին արքունի և նախարարական զորամիավորումներով: Տրդատ III Մեծի օրոք (287-330) հայկական զորաբանակի թիվը հասնում էր 70 հազարի: IV դարում Սասանյան Պարսկաստանի սպառնալիքները հարկադրեցին մեծացնել հայկական զինված ուժերի թվաքանակը: Մեզ հասած «Զորանամակի» համաձայն IV դարի երկրորդ կեսին նախարարությունները հայոց զորաբանակը համալրել են 84 հազար մարտիկով, իսկ արքունի հեծելագունդը կազմել է 40 հազար միավոր: Զինված ուժերի կորիզը կազմող այրուձին համալրվում էր գերազանցապես ազնվականներով, որոնք վաղ հասակից մասնագիտանում էին ձիավարժության, որսախաղերի և զինավարժությունների մեջ:

7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ V-IX ԴԱՐԵՐՈՒՄ

Մարզպանական Հայաստանը արտոնյալ կարգավիճակով ինքնավար երկիր էր, որտեղ պահպանվում էին հայ նախարարների և բարձրաստիճան հոգևորականների ավանդական իրավունքներն ու արտոնությունները, պաշտոնակալությունները, հայկական զորաբանակը, հարկային համակարգը և այլն: Սասանյաններին տրվում էր միայն այնքան հարկ, որքան գանձվում էր վերջին հայ Արշակունիների օգտին: Հայ նախարարների քաղաքական միասնությունն արտահայտվում էր ընդհանուր զորաբանակով, որը գլխավորում էր Հայոց սպարապետը, կառավարման միասնական համակարգով, Հայոց կաթողիկոսի նախագահությամբ ըստ անհրաժեշտության գումարվող համազգային ժողովով: Պարսից թագավոր Հազկերտ II-ը 443 թ. Հայոց մարզպան նշանակեց հայ ազդեցիկ իշխան Վասակ Սյունուն (443-451):

ա. Վարդանանց պատերազմը: 440-ական թթ. պարսից արքունիքը որդեգրեց Մարզպանական Հայաստանի պետական ինքնավարությունը վերացնելու և այն պարսկական սովորական նահանգի վերածելու քաղաքականություն: Այդ ծրագիրը դյուրությամբ կենսագործելու համար 442 թ. հայկական զորաբանակը սպարապետ Վարդան Մամիկոնյանի գլխավորությամբ ուղարկվեց Միջին Ասիա՝ քուշանների դեմ պատերազմելու: 447 թ. «աշխարհագիր» (մարդահամար և եկամուտների հաշվառում) կատարելու պատրվակով պարսիկ պաշտոնյա Դենշապուհը ավելացրեց Հայաստանից գանձվող հարկերի չափերը, սահմանափակեց հոգևորականների իրավունքները, խարդախությամբ ու բանսարկությամբ պառակտեց հայ նախարարների միասնությունը, հայրենասեր նախարարներին զրկեց իրենց ժառանգական պաշտոններից և արտոնություններից՝ դրանք հանձնելով հայրենադավների կամ պարսիկների, խրախուսեց չարաշահումներն ու կամայականությունները, ոտնահարեց հայ ժողովրդի ազգային և կրոնական զգացումները: Այս բոլորից հետո Հազկերտ II-ը 449 թ. հատուկ հրովարտակով պահանջեց ուրանալ քրիստոնեությունը և ընդունել զրադաշտականություն, որով հայերը կզատվեին դաշնակից բյուզանդացիներից և աստիճանաբար կձուլվեին պարսիկներին: Նույն թվականին Արտաշատի ժողովում հայ մեծամեծ նախարարներն ու հոգևորականները միահամուռ մերժեցին Պարսից արքունիքի պահանջները: Մերժողական պատասխանը որակվեց հակապետական խռովություն: Հայաստանի իշխանության ներկայացուցիչներին կանչեցին Տիզբոն՝ պատասխանատվության: Հաշվեհարդարից խուսափելու համար նրանք դիմեցին առերես հավատափոխության և պատանդ թողնելով Գուգարաց բդեշխ Աշուշային, ինչպես նաև Վասակ Սյունու որդիներ Բարկենին ու Ներսեսին՝ 449 թ. աշնանը պարսկական հսկիչ զորամասի և 700 մոգերի ուղեկցությամբ վերադարձան հայրենիք, որտեղ արդեն տարերայնորեն սկսվել էր պայքարը պարսկական բռնությունների դեմ:

Գլխավորելով ծավալվող ազգային-ազատագրական պատերազմը՝ հայ նախարարները 449 թ. վերջին պարսկական տիրապետությունից լիովին ազատագրեցին երկիրը և տոնեցին իրենց առաջին հաղթանակը: Արտաշատում հաստատվեց ազգային իշխանության կազմը և խնդիր դրվեց վերականգնել թագավորությունը՝ գահի թեկնածուներ առաջադրելով Վասակ Սյունուն, Վարդան Մամիկոնյանին և Վահան (Ներշապուհ) Արծրունուն:

450 թ. ամռանը պարսկական զորաբանակը՝ հազարապետ Միհրներսեհի գլխավորությամբ, Ատրպատականից ներխուժեց Փայտակարան և նախապատրաստվեց հարձակման: Պարսկական մի այլ զորաբանակ՝ Աղվանքի պարսիկ մարզպան Սերուխտի հրամանատարությամբ, Ճորա պահակից (Դարբանդի կիրճ) շարժվեց դեպի Հայաստանի սահմանագլուխ և ճամբարեց Կուր գետի ափին, Խաղխաղ բնակավայրի մոտ: Պարսից հրամանատարությունը ծրագրել էր վերոհիշյալ երկու ուղղություններով միաժամանակ ներխուժել Հայոց Միջնաշխարհ, գրավել Արտաշատը և զենքով ճնշել հայերի ըմբոստությունը:

Հակառակորդի զորաշարժերից կռահելով նրա մտադրությունը՝ սպարապետ Վարդան Մամիկոնյանը հայկական զորքը բաժանեց երեք մասի. Միջնաշխարհի հսկողությունը հանձնարարվեց Վասակ Սյունու զորամասին, հարավարևելյան կողմի հսկողությունը՝ Վահան Արծրունու զորամասին, իսկ իր գլխավորած այրուձին աճապարեց կանխել Սերուխտի զորաբանակի առաջխաղացումը: Անցնելով Կուր գետը և հասնելով Խաղխաղում ճամբարած Սերուխտի զորաբանակին՝ Վարդան Մամիկոնյանը հայկական ուժերը դասավորեց կենտրոնում և աջ ու ձախ զորաթևերում: Աջ զորաթևի հրամանատարությունը ստանձնեց Արշավիր Կամսարականը՝ օգնականությամբ Մուշ Դիմաքսյանի, ձախ զորաթևինը՝ Խորեն Խորխոռունին՝ օգնականությամբ Հմայակ Դիմաքսյանի, իսկ կենտրոնինը՝ Վարդան Մամիկոնյանը:

Ճակատամարտը սկսվեց հայկական զորամասերի շեշտակի գրոհով: Հակառակորդի զորքերը, տալով խոշոր կորուստներ, խուճապահար լքեցին մարտադաշտը և անկազմակերպ փախան դեպի մերձակա լեռներն ու անտառները, իսկ նրանց զգալի մասին հայ նետաձիգները Կուր և Լոպնաս գետերում ջրասույզ արեցին: Զարգացնելով պարսկական զորքերի դեմ շահած ռազմական նոր հաղթանակը՝ Վարդան Մամիկոնյանը հասավ մինչև Դարբանդի կապանը, ջախջախեց այնտեղ զետեղված պարսկական պահակազորը, դաշինք կնքեց հոների հետ, ապա կապանի հսկողությունը հանձնելով Աղվանից իշխան Վահանին՝ 450 թ. աշնանը վերադարձավ Արտաշատ:

Սերուխտի զորաբանակի և Դարբանդի կապանի պահակազորի ջախջախումը, ինչպես նաև հոների հետ Վարդան Մամիկոնյանի կնքած փոխօգնության դաշինքը հակառակորդին հարկադրեցին մասնակիորեն փոխել իր մարտավարությունը: Հազկերտ II-ը հայտարարեց, որ հրաժարվում է Պարսից տերությանը ենթակա քրիստոնյաներին դավանափոխելու առաջարկից, «բայց միայն ի ծառայութենէ մերմէ մի՛ ելանէք»:

Բյուզանդական կայսրության կողմից հայերին ռազմական օգնություն ցուցաբերելու խնդրանքի մերժումը, սեփական ուժերի նկատմամբ անվստահությունը և իր զավակների պատանդ լինելը Պարսից արքունիքում, ինչպես նաև Հազկերտ II-ի վերոհիշյալ հայտարարությունը մարզպան Վասակ Սյունուն նետեցին երկմտանքի և հոգեկան տառապանքների մեջ: Նրա վարանումն ու փառատենչությունը վարպետորեն օգտագործեց թշնամին: Պարսից փորձառու հազարապետ Միհրներսեհը չողոքորթ խոստումներով (դավանանքի ազատություն, հարկերի թեթևացում, ապստամբ նախարարների համաներում, մարզպանի թագադրություն և այլն) կարողացավ իր կողմը հրապուրել Վասակ Սյունուն և նրա համախոհ մի շարք նախարարների, որի հետևանքով ջլատվեց հայոց ազատագրական պայքարի միասնությունը: Դրանով իսկ երկրի ուժերը պառակտվեցին երկու հակամարտ կուսակցությունների՝ Վասակյանների և Վարդանանց միջև: Վասակյանները լքելով և ամայացնելով Հայոց Միջնաշխարհի ամրոցներն ու զորակայանները՝ հեռացան նախ Սյունիք, ապա մեկնեցին Փայտակարան՝ պարսկական զորքերի ռազմաճամբար, որտեղ Միհրներսեհը նրանց արժանացրեց երեսպաչտ պատիվների ու կաչառքների:

Վասակյանների դավաճանությունը հայոց ազատագրական շարժմանը չհուսաբեկեց Վարդանանց: 450 թ. վերջին Արտաշատում կազմավորվեց նոր կառավարություն. սպարապետ Վարդան Մամիկոնյանն ընտրվեց նաև Հայոց տանուտեր, Վահան Ամատունին՝ հազարապետ, Խորեն Խորխոռունին՝ մաղխազ, կաթողիկոս Հովսեփ Ա Հողոցմեցին (Վայոցձորցի)՝ Մեծ դատավոր և այլն: Նոր կառավարությունը իր շուրջը համախմբելով հայրենասեր և հավատարիմ ուժերին՝ վերահաստատեց ուխտապահ նախարարների և հոգևորականների ավանդական արտոնությունները, ամրացրեց երկրի քաղաքները,

բերդերը, ամրոցները, ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող ուղիները և նախապատրաստվեց դիմագրավել թշնամուն:

Վարդանանք ծրագրել էին կասեցնել պարսկական զորքերի առաջխաղացումը դեպի Հայոց Միջնաշխարհ, վնասազերծել երկիրը թշնամու ասպատակություններից, ապահովել բնակչության խաղաղ կեցությունը: Մարտական այդ ծրագիրը կենսագործելու համար խնդիր դրվեց դեմ առ դեմ ճակատամարտում չոչափելի կորուստներ պատճառել թշնամուն, հնարավորության դեպքում խուճապի մատնել և հասնել հաղթանակի: Միաժամանակ ծրագրվել էր բաց ճակատամարտում վերջնական հաղթանակի չհասնելու պարագայում խուսափել խոշոր կորուստներից, խնայել սեփական ուժերը, պահպանել զինվորների մարտունակությունը, կանոնավոր շարքերով նահանջել երկրի խորքերը, դիրքավորվել բերդերում, ամրոցներում, լեռներում ու անտառներում, այնուհետև մանր կռիվներով ոչնչացնել իրենց հետապնդող հակառակորդի ցիրուցան զորամասերը: Այդ նպատակով 451 թ. ապրիլին հայկական 66 հազար հեծելազորային և հետևակային մարտիկներ, ինչպես նաև աշխարհազորայիններ (գյուղի չինականներ, քաղաքի ռամիկներ, հոգևորականներ) սպարապետի հրամանով հավաքվեցին Վասպուրականի Արտազ գավառում:

451 թ. գարնանը Փայտակարանից և Ատրպատականից պարսկական զորագնդերը (չուրջ 80-90 հազար զինվոր, մարտական փղեր)՝ Մուշկան Նյուսալավուրտի զորավարությամբ, Հեր և Զարևանդ գավառներով ներխուժեցին Արտազ գավառը և ճամբարեցին Տղմուտ գետի աջ ափին, Ավարայր գյուղի մոտ, ճահճուտներով չրջափակված դաշտում: Վարդան Մամիկոնյանի հանձնարարությամբ իշխան Առանձար Ամատունին հետախուզեց հակառակորդի տեղաչարժերը, զորքերի քանակը, կազմը և դիրքավորումը, ապա 2000 մարտիկով դարանակալեց և ոչնչացրեց չրջակա հայկական բնակավայրերն ասպատակող պարսկական զորամասը, իսկ մնացածներին հալածեց մինչև նրանց զորաճամբարը: Մայիսի 25-ին հայոց բանակն ընդհուպ մոտեցավ հակառակորդի զորաճամբարին և դիրքավորվեց Տղմուտի ձախ ափին:

Վճռական ճակատամարտից առաջ հակառակորդներն ընդունեցին մարտական դասավորություն: Մուշկան Նյուսալավուրտը հրամայեց առջևում չարել «փղերի երամակները. գունդ-գունդ բաժանեց այդ գազաններին և ամեն մի փղի մոտ երեք հազար սպառազեն մարդ դրեց»: Պարսից բանակի աջ զորաթևը հզորացվեց բազմաթիվ գնդերով: Եղիշեն և Ղազար Փարպեցին վկայում են, որ պարսից աջ զորաթևում Վարդանանց դեմ Ավարայրի ճակատամարտին մասնակցում էին նաև վասակյանները: Հակառակորդի պահեստազորը Մատյան (Անմահ) կոչվող 10 հազարանոց արքունի զորագունդն էր, որն ամրափակվել էր «իբրև մի աչտարակ կամ իբրև անմատույց մի բերդ»: Հակառակորդի կենտրոնի և Մատյան գնդի միջև գետեղվեցին ամենաընտիր և քաջ զինվորականները, որտեղից ճակատամարտը հսկում և հրամաններ էր արձակում Մուշկան Նյուսալավուրտը:

Վարդան Մամիկոնյանը նույնպես իր զորաբանակը դասավորեց աջ և ձախ զորաթևերի, կենտրոնի և առանձնացրեց պահեստազորը: Կենտրոնական զորախմբի հրամանատարությունը հանձնարարվեց Ներչապուհ Արծրունուն՝ օգնականությամբ Մոկաց մեծ իշխան Արտակի, աջ զորաթևինը՝ Խորեն Խորխորունուն՝ օգնականությամբ Արսեն Ընծայեցու և Ներսեհ Քաջբերունու, ձախ զորաթևինը՝ Թաթուլ Վանանդեցուն օգնականությամբ Տաճատ Գնթունու, պահեստազորը՝ Արշավիր Կամսարականին և Համազասպ Մամիկոնյանին: Վճռական գոտեմարտից առաջ Հայոց կաթողիկոս Հովսեփ Հողոցմեցին, Ղևոնդ երեցը և ուրիշ հոգևորականներ հորդորիչ ճառերով խրախուսեցին հայ մարտիկներին: Վարդան Մամիկոնյանը նույնպես կոչ արեց «ոչնչացնել թշնամու զորությունը, որպեսզի հաղթանակի ճշմարտությունը»՝ պատվիրելով «միայն թե արիության և քաջության մեջ վախկոտություն չխառնեք», որովհետև «վախը թերահավատության նշան է»:

Ճակատամարտը՝ փոխադարձ հարձակմամբ սկսվեց մայիսի 26-ին, չաբաթ օրվա վաղ արշալույսին: Հայկական զորագնդերն անցան Տղմուտ գետը, բուռն գրոհով խրվեցին հակառակորդի մարտակարգի մեջ և ամբողջ ճակատով մարտի բռնվեցին նրա կենտրոնի և զորաթևերի դեմ: Հայկական զորքերի ճնշմամբ թշնամու զորաբանակի կենտրոնը և ձախ թևը տալով զգալի կո-

բուստներ՝ սկսեցին դանդաղորեն նահանջել: Մինչդեռ պարսից առավել հզոր աջ զորաթևը կարողացավ ընկճել Թաթուլ Վանանդեցու գլխավորած ձախ զորաթևը և սպառնում էր խարխլել հայոց զորքերի ընդհանուր մարտակարգը: Ստեղծված իրավիճակը հաշվի առնելով՝ Վարդան Մամիկոնյանը հայոց պահեստազորի մի մասը՝ Արշավիր Կամսարականի հրամանատարությամբ, նետեց կենտրոն՝ թշնամու վրա ճնշումը սաստկացնելու համար, իսկ պահեստազորի մնացած մասով օգնության չտապեց Թաթուլ Վանանդեցու ընկրկող ձախ զորաթևին: Վճռական հակահարվածով ետ շպրտելով թշնամու աջ զորաթևը և զարգացնելով գրոհը՝ Վարդան Մամիկոնյանը անցավ հակառակորդի թիկունքը և անսպասելի հարվածով խուճապի մատնեց Մատյան զորագունդը: Բայց շուտով Մուշկան Նյուսալավուրտը նահանջող աջ զորաթևին և Մատյան գնդին հրամայեց վերադասավորվել և չրջապատեց Հայոց հիմնական զորաբանակից մեկուսացած Վարդան Մամիկոնյանի փոքրաթիվ հեծելազորը: Այստեղ անհավասար մարտում թեև հերոսաբար զոհվեց Վարդան Մամիկոնյանը, սակայն նախանչված մարտական առաջադրանքի համաձայն ընդհանուր ճակատամարտը շարունակվեց մինչև օրվա վերջալույսը:

Հայկական զորքերը հիմնովին կատարելով վաղօրոք մշակված իրենց ռազմական առաջադրանքը՝ ուշ երեկոյան աղջամուղջին մարտական շարքերով անցան Տղմուտի ձախ ափը և նահանջեցին երկրի խորքերը՝ զինված պայքարը շարունակելու վճռականությամբ: Հայկական զորագնդերն ամրացան Տայքում, Պարխարի լեռներում, Խաղտիք «աշխարհի» բերդերում, Արցախում, Մոկսում, Տմորիքում և այլուր:

Ավարայրի ճակատամարտում պարսկական զորաբանակը տվեց 3544 սպանված, իսկ Վարդանանց զորաբանակը՝ 1036 զոհ: Պարսից զորավար Մուշկանը սաստիկ մտահոգված էր իր զորքերի կորուստների համար, «մանավանդ, երբ տեսավ, որ իր զորքի ստացած սաստիկ հարվածները երեք անգամ ավելի մեծ էին, քան հայերինը, նրա ուժն ու զորությունը կոտրվեց, ընկավ... որովհետև պատերազմն այնպես չվերջացավ, ինչպես ինքը կարծում էր»:

Մարտական գործողությունները շարունակելու և հայկական զորքերի դիմադրությունն ընկճելու նպատակով պարսից հրամանատարությունը լրացուցիչ ուժեր խնդրեց Հազկերտ II-ից: Զգալի համալրում ստացած պարսկական զորքերը ներխուժեցին Հայոց Միջնաշխարհ՝ փորձելով ընկճել Կապույտ լեռան ամրոցներում պաշտպանվող հայկական զորամասերին: Սակայն համառ մարտերում պարսկական զորքերը ջախջախվեցին, իսկ մնացորդները դիմեցին խուճապահար փախուստի: Վարդան Մամիկոնյանի կրտսեր եղբայր Հմայակի, իշխաններ Արտեն Գաբեղյանի և Վարազշապուհ Պալունու հրամանատարությամբ գործող զորամասերը, որ ամրացել էին Պարխարի լեռներում, Տայքի ու Խաղտիքի բերդերում, նույնպես ջախջախեցին իրենց հետապնդող պարսկական զորքերին: Այդ մարտերում քաջությամբ զոհվեց Հմայակ Մամիկոնյանը: Պարսկական պատժիչ զորքերը ծանր կորուստներ ունեցան նաև Արցախում, Տմորիքում և այլուր:

Ավարայրի ճակատամարտում, այնուհետև 451 թ. ամռանն ու աշնանը երկրի զանազան չրջաններում պարսկական զորքերի դեմ չահած հաղթանակներով Վարդանանք կանխորոշեցին ազատագրական պատերազմի ընդհանուր ելքը: Եղիշեն քանիցս հավաստում է, որ Վարդանանց հաղթանակները Սասանյան արքունիքին հարկադրեցին պարսկական զորքերը դուրս բերել Մարզպանական Հայաստանից և ճանաչել նրա նախկին ինքնավարությունը, հրաժարվել հայերին բռնությամբ դավանափոխելու քաղաքականությունից, մեկ տարով հայերից չգանձել, այնուհետև թեթևացնել հարկերը, Հայոց այրուձին չօգտագործել պարսից նպատակների համար, ներում չնորհել նախարարներին և վերահաստատել իրենց կալվածքներում: Վարկաբեկված և դավաճանի անունով խարազանված Վասակ Սյունին հայերի վճռական պահանջով պաշտոնազրկվեց, ապա ենթարկվեց մահապատժի: 451 թ. վերջին Հայոց մարզպանի պաշտոնն ստանձնած Ատրորմիզդ Արշակունին Հազկերտ II-ի լիազորությամբ ազդարարեց, որ «ապստամբությունը ներված է, և կրկին իրավունք է չնորհված եկեղեցիները չինելու, և բոլոր կարգերը դարձյալ նորոգելու առաջվա սովորության համաձայն»:

Հետևաբար, անընդունելի են պատմագիտության մեջ տարածում ստացած այն տեսակետները, որոնց համաձայն Վար-

դանանց ազատագրական պատերազմի, մասնավորապես Ավարայրի բախտորոշ ճակատամարտի ելքը բնորոշում են ա) հայերի պարտությունը և պարսիկների լիակատար հաղթանակը, բ) հայերի բարոյական և պարսիկների ֆիզիկական հաղթանակը, գ) կողմերից ոչ մեկի հաղթանակը, ոչ էլ պարտությունը: Սույն եզրակացությունների հեղինակները սովորաբար վկայակոչում են «ոչ մի կողմը հաղթեց, և ոչ մի կողմը պարտվեց, այլ քաջերը քաջերի դեմ դուրս գալով՝ երկու կողմերն էլ պարտություն կրեցին» Եղիշեի այս պատկերավոր և այլաբանական նախադասությունը՝ փաստորեն անտեսելով նույն պատմիչի այլ արժանահավատ վկայությունները:

Մարզպանական Հայաստանում խաղաղություն հաստատվելուց հետո Հազկերտ II-ի հրամանով ձերբակալվեցին և Վրկանաց, ապա Ապար «աշխարհներ» աքսորվեցին Վարդանանց ազատագրական շարժման մասնակից մի շարք նախարարներ ու հոգևորականներ: Նյուշապուհ քաղաքի բերդում բանտարկված հոգևորականները, որ հայտնի են «Ղևոնդյան քահանայք» հավաքական անվանումով, 454 թ. սրատվեցին Հազկերտ II-ի հրամանով, իսկ նախարարները բանտարկվեցին Հրև (այժմ՝ Հերաթ) քաղաքի բերդում: 459 թ. Սասանյան նորահաստատ արքա Պերոզը ներում չնորհեց բանտարկված հայ նախարարներին, որոնք 463-466 թթ. հայրենիք վերադարձան: Այնուհանդերձ, Վարդանանց պատերազմից դասեր քաղած Պարսից արքունիքը երկար տարիներ Մարզպանական Հայաստանի հանդեպ վարում էր սիրաշահող և խիստ զգուշավոր քաղաքականություն:

Վարդանանց պատերազմը պարսկական բռնապետության դեմ հայ ժողովրդի ազատագրական պայքարի, ազգային ինքնուրույնության և աննկուն կամքի դրսևորման ամենավառ և դյուցազնական էջերից է: Այդ պատերազմում իրենց կյանքը զոհաբերած մարտիկներին V դարից ի վեր Հայոց եկեղեցին ճանաչեց «Հայրենիքի սուրբ նահատակներ» և նրանց հիշատակի օրը մտցրեց իր ամենամյա տոների մեջ: Վարդանանց տպավորիչ և չխամրող հաղթանակները դարեր շարունակ ոգեշնչել և ուղեկցել են հայ ժողովրդին՝ օտար նվաճողների դեմ նրա մղած ազատագրական պատերազմներում:

բ. 481-484 թթ. և 571-572 թթ. հակապարսկական ապըստամբությունները: Պարսից արքա Պերոզը 470-480-ական թթ. մեծացրեց Հայաստանից գանձվող հարկերի չափերը, բորբոքեց կրոնական նոր հալածանքներ, սաստկացրեց բռնությունները հայրենասեր նախարարների դեմ և վերստին սպառնաց Հայոց պետականության ինքնուրույնությանը:

Հայաստանում սրված դժգոհությունները հանգեցրին ազատագրական նոր պատերազմի: 481 թ. հայկական զորքերը սպարապետ Վահան Մամիկոնյանի գլխավորությամբ ջախջախեցին պարսկական ուժերը, տապալեցին պարսիկ մարզպան Ատրվշնասպին և Հայոց տանուտեր ընտրեցին երևելի հայ իշխան Սահակ Բագրատունուն: Դվինում կազմվեց ազգային կառավարություն, որը խնդիր դրեց վերականգնել Հայոց թագավորությունը՝ Սահակ Բագրատունու կամ Վահան Մամիկոնյանի գահակալությամբ: Պարսկական պատժիչ զորքերը ջախջախիչ պարտություն կրեցին նաև 481 թ. Ակորի գյուղի (Մասիսի լանջին) և 482 թ.՝ Ներսեհապատ գյուղի (Արտազ գավառում) մոտերքում տեղի ունեցած կռիվներում: 482 թ. Կուր գետի ափին, Ճարմանայի դաշտում տեղի ունեցած ճակատամարտում թեև հայ-վրացական միացյալ զորքերը պարտություն կրեցին և տվեցին զգալի կորուստներ (զոհվեցին Սահակ Բագրատունին, Վահան Մամիկոնյանի եղբայր Վասակը և ուրիշներ), բայց Վահան Մամիկոնյանը մերժեց պարսկական հրամանատարության հաշտության առաջարկը և շարունակեց լեռնային համառ կռիվները Սասանյանների պատժիչ զորքերի դեմ:

484 թ., Հեփթաղների դեմ պատերազմում Պարսկաստանի պարտությունից և Պերոզի զոհվելուց հետո, Սասանյան նոր արքա Վաղարշը Հայաստանից դուրս բերեց պարսկական զորքերը և հաշտության առաջարկով Նիխոր Վշնասպդատի գլխավորությամբ մի պատվիրակություն ուղարկեց Վահան Մամիկոնյանի մոտ: Արտազ գավառի Նվարսակ գյուղում ստորագրված հայ-պարսկական հաշտության պայմանագրի համաձայն Սասանյան արքունիքը վերստին հաստատեց Մարզպանական Հայաստանի քաղաքական ինքնուրույնությունը և նախարարների ավանդական իրավունքները, պարտավորվեց չմիջամտել նրանց ներքին գործերին, չխրախուսել հայրենադավ ու հավա-

տուրաց մարդկանց, չցուցաբերել կամայականություններ, հարգել հայերի դավանանքի ազատությունը: 485 թ. սպարապետ Վահան Մամիկոնյանը ճանաչվեց նաև Տանուտեր Հայոց և մարզպան, որին 505 թ. հաջորդեց կրտսեր եղբայրը՝ Վարդ Մամիկոնյանը: Այդ իրավիճակը Մարզպանական Հայաստանում պահպանվեց մինչև 560-ական թվականները:

Մարզպանական Հայաստանի քաղաքական ինքնուրույնությունը վերստին վտանգվեց 560-570-ական թթ.՝ կապված պարսկա-բյուզանդական հարաբերությունների լարման և քրիստոնյա ժողովուրդների նկատմամբ Սասանյան արքա Խոսրով I Անուշիրվանի ծավալած բռնությունների ու զավթողական ծրագրերի հետ:

Հայաստանի պարսիկ մարզպան Սուրենը, հենվելով Դվինում զետեղված պարսկական 15 հազարանոց զորաբանակի վրա, ծանրացրեց հարկերը, սկսեց ոտնահարել հայ նախարարների ու հոգևորականների իրավունքները, սաստկացրեց կամայականություններն ու բռնությունները հայրենասեր ուժերի հանդեպ, հիմնեց ատրուշաններ և ուժեղացրեց կրոնական հալածանքները: Պարսից քաղաքականության դեմ ուղղված համաժողովրդական սուր դժգոհությունները, ի վերջո, հանգեցրին հուժկու ազգային-ազատագրական պատերազմի, որը գլխավորեց Հայոց սպարապետ Վարդան Մամիկոնյան Փոքրը (Վարդ Մամիկոնյանի թոռը): Ձինված ելույթի առիթ դարձավ Սուրեն մարզպանի ձեռքով Հայոց սպարապետի եղբոր՝ Մանվել Մամիկոնյանի սպանությունը:

571 թ. վաղ գարնանը հայկական բանակը Վարդան Մամիկոնյանի առաջնորդությամբ գրավեց Դվինը, ջախջախեց պարսկական զորքերին և սպանեց մարզպանին: Շուտով պարսկական 20 հազարանոց մի զորաբանակ՝ Վահրամ Միհրևանդակի հրամանատարությամբ, ներխուժեց Հայաստան, բայց Խաղամախյան դաշտի ճակատամարտում Վարդան Մամիկոնյանի փայլուն ռազմավարությամբ հայկական զորքերից խորտակիչ պարտություն կրեց և դուրս չպրտվեց երկրի սահմաններից:

Այնուհետև Վարդան Մամիկոնյանը իր շուրջ համախմբելով Անդրկովկասի քրիստոնյա ժողովուրդների (աղվաններ, վրացիներ, եգերացիներ, աբխազներ, ալաններ) կառավարող ուժերը և նրանց ռազմական աջակցությամբ թոթափեց պարսից իշխանությունը ու դիմեց Բյուզանդիայի հովանավորությանը: Այդ պատճառով 572 թ. Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև բորբոքվեց նոր պատերազմ, որը փոփոխակի հաջողություններով և որոշ ընդմիջումներով տևեց շուրջ 20 տարի: Պատերազմն ավարտվեց 591 թ. կնքված հաշտության պայմանագրով, որի համաձայն Հայաստանի և Անդրկովկասի մեծագույն մասն անցավ Բյուզանդիայի գերիշխանության ներքո: Պարսկա-բյուզանդական մրցապայքարը Հայաստանի և Անդրկովկասի համար շարունակվեց մինչև արաբական արշավանքները:

գ. Կացությունը Արևմտյան Հայաստանում VI դարում: Բյուզանդական տիրապետության ներքո հայտնված Արևմտյան Հայաստանը բովանդակում էր Փոքր Հայք, Ներքին Հայք և Նախարարական (Սատրապական) Հայք վարչամիավորները: Հռոմեական կայսրությունը IV դարի վերջին Փոքր Հայքը տրոհեց Առաջին Հայք (Սեբաստիա կենտրոնով) և Երկրորդ Հայք (Մելիտինե կենտրոնով) նահանգների: Նույն ժամանակամիջոցում Ներքին Հայքը, որն ընդգրկում էր հիմնականում Բարձր Հայքը, նույնպես վերածվեց նահանգի՝ Կոմեսի գլխավորությամբ: Նախարարական Հայքը կազմված էր Մեծ Ծոփք, Փոքր Ծոփք, Անձիտ, Անգեղտուն, Հաշտյանք և Բալահովիտ գավառներից:

Մինչև Հուստինիանոս I կայսեր գահակալումը (527-565) Արևմտյան Հայաստանի վերոհիշյալ նահանգներում հայ նախարարները պահպանում էին իրենց ժառանգական հողատիրույթները, սեփական ռազմական ուժերը, ավանդական իրավունքներն ու արտոնությունները: Այսինքն Հայոց ավատապետության հիմքերն Արևմտյան Հայաստանում նույնպես մնացել էին անսասան:

Հայոց իշխանատների ռազմական ու տնտեսական ինքնուրույնությունը մշտապես խոչընդոտում էր կայսրության վարած ուծացման քաղաքականությանը: Ձհանդուրժելով նման իրավիճակը՝ Հուստինիանոս I-ը 529 թ. հրովարտակով վերացրեց հայ նախարարների սեփական զորամասեր ունենալու իրավունքը և նրանց զրկեց իրենց ռազմական հզորությունից: Նույն հրովարտակով կայսրությանը ենթակա բոլոր տարածքները

միացվեցին առանձին ռազմական շրջանի մեջ՝ բյուզանդացի ստրատեգոսի գլխավորությամբ: Այդ ռազմական շրջանի կենտրոնն էր Կարին քաղաքը: Այնուհետև հայ երիտասարդները, որպես Բյուզանդիայի քաղաքացիներ, հավասարապես զորակոչվում էին կայսերական բանակ: Արևմտյան Հայաստանի տարածքը 536 թ. նոր հրովարտակով բաժանվեց Առաջին, Երկրորդ, Երրորդ և Չորրորդ Հայք նահանգների, որոնց գլուխ կանգնած էին հայ նախարարները: Վերջիններիս տնտեսական հզորությունն ու ինքնուրույնությունը պայմանավորված էր նրանց հայրենատիրույթներով, որոնք հորից անտրոհելիորեն փոխանցվում էին ավագ որդուն: 536 թ. հրովարտակով նախարարների կրտսեր որդիներին ու դուստրերին՝ մանր ու միջին ազնվականներին նույնպես իրավունք վերապահվեց հավասար հիմունքներով կալվածքներ ստանալ իրենց հորից, որով փաստորեն փոշիացվում էր հայ նախարարների տնտեսական հզորությունը: Հուստինիանոս I-ի վերափոխություններն առաջ բերեցին հայ նախարարների խոր դժգոհությունն ու ապստամբական շարժումները, որոնք երբեմն ուղեկցվում էին արյունալի բախումներով: Այդ պատճառով կայսրությունը չկարողացավ հիմնովին կենսագործել իր մտադրություններն Արևմտյան Հայաստանում:

Բյուզանդիայի դեմ 539 թ. բռնկվեց զինված ապստամբություն, որը գլխավորում էր զորավար Հովհաննես Արշակունին: Ապստամբների առաջին զոհը դարձավ Ներքին Հայքի հայազգի կառավարիչ, ազգակիցների հանդեպ դաժանություններով հռչակված Ակակիոսը: Ապստամբների դեմ ուղարկված պատժիչ զորքերը ծանր պարտություն կրեցին, իսկ նրանց հայազգի զորահրամանատար Սիտտասը նիզակահար սպանվեց Հովհաննես Արշակունու որդի Արտավանի ձեռքով: Ապստամբների դեմ ուղարկվեց նոր զորաբանակ, որը գլխավորում էր Բուզես զորավարը: Վերջինս բանակցությունների հրավիրեց Հովհաննես Արշակունուն և դավադրաբար սպանեց նրան:

Հայոց զինված պայքարն այնուհետև գլխավորեցին Արտավան Արշակունին և նրա փեսա Վասակը, որոնք դիմեցին Պարսից Սասանյան արքա Խոսրով I Անուշիրվանի ռազմական օգնությանը: Այդ առիթով 540 թ. Բյուզանդիայի և Պարսկաստանի

միջև բորբոքվեց նոր պատերազմ, որը փոփոխակի հաջողություններով շարունակվեց մինչև 562 թ. և ավարտվեց կողմերի միջև կնքված 50-ամյա հաշտության պայմանագրով:

Հիասթափվելով Սասանյանների հակահայկական քաղաքականությունից՝ Արտավան Արշակունին 540-ական թթ. Հայաստանում և Լազիկիայում մասնակցեց պարսից դեմ Բյուզանդիայի մղած կռիվներին: 545-564 թթ. Աֆրիկայում նա պատերազմեց վանդալների դեմ, ետ գրավեց Լիբիան և դարձավ նրա կառավարիչը: 548 թ. Արտավան Արշակունին և նրա զարմիկ Արշակ Արշակունին Բյուզանդիայի մի շարք մեծամեծների աջակցությամբ Հուստինիանոս կայսեր դեմ Կոստանդնուպոլսում կազմակերպեցին դավադրություն: Սակայն դավադրությանը մասնակից մի բյուզանդացու մատնությամբ այն բացահայտվեց, մասնակիցները բանտարկվեցին: Հաշվի առնելով Արտավան Արշակունու նախկին ծառայությունները և զորավարական տաղանդը՝ բյուզանդական արքունիքը 549 թ. նրան ազատեց բանտարկությունից և Թրակիայում նշանակեց բյուզանդական զորքերի հրամանատար, ապա կարգեց Սիցիլիայի զորքերի հրամանատար՝ ընդդեմ գոթերի:

Մավրիկիոս (Մորիկ) կայսրը վարում էր հայ զինվորական ուժերը Հայաստանից դուրս տանելու և հեռավոր երկրներում նրանց ոչնչացնելու քաղաքականություն: VII դարի հայ պատմագիր Սեբեոսի վկայությամբ Մավրիկիոսը Պարսից Խոսրով II Փարվեզին հորդորում էր հայերի նկատմամբ նույն քաղաքականությունը վարել Մարզպանական Հայաստանում: Պարսկական և բյուզանդական տիրողների այդ նենգամիտ քաղաքականության դեմ 595 թ. բռնկվեց զինված ապստամբություն, որին իրենց զորամասերով մասնակցում էին հայ իշխաններ Ատատ Խորխոռունին, Սահակ, Մամակ և Գագիկ Մամիկոնյանները, Ստեփանոս Սյունին, Կոտիտ Ամատունին, Թեոդորոս Տրպատունին, Պապ Բագրատունին, Վարդան Արծրունին և ուրիշներ: Նրանք ծրագրել էին Հյուսիսային Կովկասում հաստատված հոների դաշնակցությամբ թոթափել պարսկական և բյուզանդական բռնակալների լուծը և վերականգնել Հայաստանի պետական անկախությունը: Սակայն ապստամբությունը ճնշվեց, մի շարք հայ իշխաններ ենթարկվեցին մահապատժի: Բյուզան-

դական և պարսկական տիրողների դեմ հայերի պայքարը շարունակվեց նաև հաջորդ դարում՝ մինչև արաբական առաջին արշավանքները:

դ. Արաբական արշավանքները Հայաստան: Արաբական թերակղզում բնակվող սեմական վաչկատուն ցեղերը VI դարի վերջին և VII դարի սկզբին իսլամի դրոշի ներքո համախմբվեցին իրենց հոգևոր ու աշխարհիկ առաջնորդի՝ խալիֆի շուրջը, ստեղծեցին հզոր ռազմական ուժեր, 630-640-ական թթ. խորտակեցին Սասանյան պետությունը, պարտության մատնեցին Բյուզանդական կայսրությունը և իրենց տիրապետությունը հաստատեցին Մերձավոր Արևելքի երկրներում:

628 թվականից Հայոց իշխան Թեոդորոս Ռշտունին արաբական նվաճումների հետևանքով Պարսից Սասանյան պետության անկումից (637 թ.) հետո Հայաստանը հռչակեց անկախ, իսկ 639 թ. վերամիավորեց նաև Բյուզանդական կայսրությանը ենթակա հայկական հողերի զգալի մասը:

Բյուզանդիան իր ազդեցությունը Հայաստանում չկորցնելու և հայկական ռազմական ուժերն արաբների դեմ օգտագործելու նպատակով 640 թ. Թեոդորոս Ռշտունուն շնորհեց «պատրիկի» և «կյուրոպաղատի» բարձրագույն տիտղոսներ, նրան ճանաչեց Հայաստանի գերագույն կառավարիչ: Թեոդորոս Ռշտունին ամրացրեց Հայաստանի բերդերը, հզորացրեց Հայոց այրուձին և հաջողությամբ դիմակայեց արաբական նվաճողներին: Սիրաշահելով Թեոդորոս Ռշտունուն և Հայոց կաթողիկոս Ներսես Գ Տայեցուն՝ կայսրը փորձեց նրանց աջակցությամբ հայերին պարտադրել քաղկեդոնական դավանանք: Սակայն Դվինում 648 թ. գումարված ժողովը մերժեց կայսեր առաջարկը: Կայսրության խարդավանքներին դիմակայելու համար Թեոդորոս Ռշտունին իր շուրջը համախմբեց Հայոց, աղվանից և վրաց իշխող վերնախավին, ապա հմուտ դիվանագիտությամբ 652 թ. ձեռնտու պայմանագիր կնքեց Ասորիքի արաբական կուսակալ Մուավիայի հետ: Այդ պայմանագրով Թեոդորոս Ռշտունին ճանաչեց խալիֆայության գերիշխանությունը: Հայաստանը և նրա դրացի դաշնակից երկրները երեք տարով ազատվեցին հարկատվությունից: Խալիֆայությունը Թեոդորոս Ռշտունուն ճանաչեց Հայաստանի, Աղվանքի և Վիրքի գերագույն կառավարիչ, պարտա-

վորվեց զորքեր չմտցնել Հայաստան, հարգել նրա ինքնուրույնությունը ներքին կառավարման բոլոր բնագավառներում, վճարել 15 հազարանոց Հայոց այրուձիու ամենամյա ռոճիկը, իսկ Բյուզանդիայի միջամտության դեպքում ռազմական օգնություն ուղարկել հայերին:

Թեոդորոս Ռշտունին և նրա որդի Վարդը արաբական յոթ հազարանոց զորախմբով 652 կամ 653 թվականին հաղթեցին Հայաստան ներխուժած բյուզանդական զորքերին, ազատագրեցին երկրի հյուսիսարևմտյան մի շարք շրջաններ և հասան մինչև Տրապիզոն:

Թեոդորոս Ռշտունուն հաջորդեցին նախ Համազասպ Մամիկոնյանը (654-661), ապա Գրիգոր Մամիկոնյանը (661-685), որոնց կառավարման տարիներին Հայաստանն ապրեց ինքնավար ու խաղաղ ստեղծագործական կյանքով: Հայոց իշխան Աշոտ Բագրատունին (685-689) զոհվեց արաբա-բյուզանդական նվաճողների դեմ մարտերից մեկում: Նրան հաջորդեցին Ներսեհ Կամսարականը (689-693) և Սմբատ Բյուրատյան Բագրատունին (693-726): Արաբական զորքերը 695 թ. ներխուժեցին Հայաստան: 701 թ. նվաճելով Հայաստանը, Վիրքը և Աղվանքը՝ արաբները ստեղծեցին Արմինիա վարչամիավորումը՝ արաբ ոստիկան Աբդ Ալլահի գլխավորությամբ:

Արաբական խալիֆայությունն այնուհետև հրաժարվեց հայ նախարարների ավատատիրական իրավունքներն ու գործակալական պաշտոնները ճանաչելուց, սկսեց վարել պետական-քաղաքական կյանքից նրանց դուրս մղելու բռնի քաղաքականություն: Նվաճված քրիստոնյա ժողովուրդները հայտարարվեցին «քյաֆուրներ» (անհավատներ) և մահմեդական տիրողներին խոնարհ հարկատուներ: Հայ ազնվականները, չհամակերպվելով նվաճողների տիրապետության և նրանց վարած քաղաքականության հետ, համառ պայքար մղեցին Հայաստանի ինքնիշխանության և իրենց ավանդական իրավունքների վերականգնման համար:

ե. VIII դարի հակաարաբական ապստամբությունները: Բագրատունիների վերելքը: Հայոց իշխան Սմբատ Բագրատունին իշխանանիստ Դարույնքում 703 թ. գումարեց ժողով, որին մասնակցում էին նրա եղբայր Աշոտ Բագրատունին, Թեոդորոս

Ռշտունու որդի Վարդը և ուրիշ իշխաններ: Նրանք ծրագրեցին իրենց զինված ուժերը կենտրոնացնել Բյուզանդական կայսրությանը ենթակա հայկական տարածքներում և զինված պայքար մղել Արաբական խալիֆայության դեմ: Սակայն դեպքերն սպասածից ավելի արագ զարգացան, և Սմբատ Բագրատունին նույն թվականի ձմռանը հարկադրված եղավ Երասխ գետի ափին, Վարդանակերտ ավանի մոտ երկու հազար մարտիկով ճակատամարտել արաբական ութ հազարանոց պատժիչ զորամասի դեմ: Ջախջախելով և սառցակալած Երասխում ջրասույզ անելով արաբ զորամասը՝ Սմբատ Բագրատունին հաստատվեց Տայքի Թուխարք ամրոցում, որտեղ կայսերական արքունիքը նրան շնորհեց «կյուրոպաղատի» տիտղոս:

Նույն թվականին ապստամբություն բռնկվեց նաև Վասպուրականում: Հայկական զորաջոկատը Ռշտունիք գավառի Գուկանք գյուղում շրջապատեց և սրի քաշեց արաբական ասպատակիչ զորքը:

703-705 թթ. Հայոց զինված ապստամբություններից հետո Վալիդ I խալիֆը (705-715) ծրագրեց խարդախությամբ բնաջնջել արաբական տիրապետության հաստատմանը խոչընդոտող հայ նախարարական տոհմերը: Այդ ծրագրի իրագործումը հանձնարարվեց արաբ զորավար Կասրմին, որը 705 թ. խաբեությամբ իր մոտ հրավիրեց 1200 հայ ազնվատոհմիկների, նրանց փակեց Նախճավանի և Խրամի եկեղեցիներում, ապա բոլորին ողջակիզեց: Այդ ոճրագործությամբ արաբները ծանր հարված հասցրին Հայոց ռազմա-քաղաքական ուժերին, Ղևոնդ պատմագրի խոսքերով՝ «երկիրը թափուր մնաց նախարարների տոհմերից»: Այնուհանդերձ, Հայոց անկոտրում պայքարը խալիֆայությանը հարկադրեց վերականգնել հայ նախարարների քաղաքական իրավունքները և ժառանգական հայրենատիրույթները, Բագրատունիներին վստահել Հայոց իշխանի պաշտոնը, վճարել Հայոց սպարապետի գլխավորած այրուձիու ռոճիկը:

Հայաստանում իրավիճակը բարդացավ, երբ խալիֆայության գլուխ եկած Աբբասյանները վերստին ծանրացրին հարկերը, սաստկացրին բռնությունները և հալածանքները: Այդ պատճառով 748-750 թթ. Հայաստանում բռնկվեց նոր զինված

ապստամբություն, որը գլխավորեց Գրիգոր Մամիկոնյանը: Սկզբում ապստամբությանը միացավ Հայոց իշխան և սպարապետ Աշոտ Բագրատունին: Ապստամբները հաստատվելով Տայքում՝ Բյուզանդիայի հովանավորությամբ պայքարեցին արաբների դեմ: Բայց որոշ տարաձայնությունների հետևանքով Աշոտ Բագրատունին լքեց ապստամբներին ու հեռացավ Բագրևանդ: Գրիգոր Մամիկոնյանը հետապնդեց, գերեվարեց և կուրացրեց Աշոտ Բագրատունուն: Ի վերջո, ապստամությունը ճնշվեց:

Արաբական տիրապետության դեմ հաջորդ հուժկու ազատագրական պատերազմը ծավալվեց 774-775 թթ., որը գլխավորեց Մուշեղ Մամիկոնյանը: Բագրևանդ գավառի Բագավան ավանի և Կոգովիտ գավառի Արուճ գյուղի մոտ տեղի ունեցած ճակատամարտերում, երբ Մամիկոնյանների և նրանց հարող իշխանների ուժերը ջախջախեցին արաբական զորքերին, ապստամբությանը միացան նաև Սահակ և Սմբատ Բագրատունիները, ինչպես նաև մի շարք ուրիշ նախարարներ: Պատմիչ Ղևոնդը գրում է, որ ապստամբները նպատակ ունեին վերականգնել Հայոց թագավորությունը: Սակայն 775 թ. ապրիլի 24-ին արաբական 30 հազարանոց բանակը Բագրևանդ գավառի Արձնի գյուղի մոտ տեղի ունեցած ճակատամարտում պարտության մատնեց հայկական զորքերին: Մարտում զոհվեցին Մուշեղ Մամիկոնյանը, Սահակ և Սմբատ Բագրատունիները, ուրիշ երևելի իշխաններ:

Ապստամբության պարտությունից հետո հուսալքված և ծանր կորուստներ կրած մի շարք նախարարական տոհմեր՝ Մամիկոնյանները, Կամսարականները, Ամատունիները, Գնունիները, Ռշտունիները և ուրիշներ, գաղթեցին Բյուզանդիա:

Քաղաքական ասպարեզից հիշյալ նախարարական տոհմերի հեռանալուց հետո Հայաստանում նոր հզորացում ապրեցին Բագրատունիները, Արծրունիները, Սյունիները, Պահլավունիները և ուրիշներ: VIII-IX դարերում առանձնապես նշանավորվեցին Բագրատունիները, որոնց տոհմաճյուղերը Հայաստանում և Անդրկովկասի երկրներում հասան անվերապահ գերակայության: Հայաստանից արտագաղթած նախարարական տոհմերի տիրույթները (Մոկս, Տարոն, Սասուն, Արչարունիք, Շիրակ, Աշոցք, Տաշիր, Տայք, Կղարջք և այլն) գերազանցապես անցան

Բագրատունիներին: Ճկուն դիվանագիտությամբ և չրջահայաց քաղաքականությամբ չահելով խալիֆայության վստահությունը՝ Բագրատունիները Հայոց իշխանի և սպարապետի գերագույն պաչտոնները դարձրին իրենց տոհմական մենաչնորհը, անվիճելիորեն տնօրինեցին երկրի քաղաքական և ռազմական կյանքը:

Հայոց իշխան Աչոտ Բագրատունին (մոտ 790-826), որը հայտնի է Քաջ և Մսակեր մականուններով, իշխանանիստը Կոգովիտ գավառի Դարույնք ամրոցից տեղափոխեց Արչարունիք գավառի Բագարան բերդաքաղաք (Ախուրյանի աջ ափին): Նրա եղբայր Շապուհն ստանձնեց Հայոց սպարապետի պաչտոնը: Քայքայվող և ճգնաժամային օրեր ապրող խալիֆայությունը հարկադրված եղավ ճանաչել Աչոտ Բագրատունու ինքնիշխանությունը, 804 թ. նրան չնորհեց «իշխանաց իշխանի» բարձրագույն պաչտոն, համակերպվեց Հայաստանում և Այսրկովկասում Բագրատունյաց գերակայության հետ: Աչոտ Բագրատունի Քաջի մահից հետո Հայոց իշխանաց իշխանի գերագույն պաչտոնը ժառանգեց նրա ավագ որդի Բագարատ Բագրատունին (826-851), իսկ սպարապետությունը՝ կրտսեր որդի Սմբատ Բագրատունի Արլբասը (826-855): Բագարատ Բագրատունին, որ մինչ այդ Տարոնի տերն էր, իշխանանիստը դարձրեց Խլաթ քաղաքը: IX դարի առաջին կեսին հարկերի գանձումը Հայաստանում նույնպես վերապահվեց Հայոց իշխանաց իշխանին: Խալիֆայության գերիշխանությունն արտահայտվում էր միայն նրանից տարեկան որոչ հարկեր ստանալով:

զ. 850-855 թթ. հակաարաբական ապստամբությունը: Մութավաքիլ խալիֆը (847-861) որոչ չափով ամրապնդելով խալիֆայության դիրքերը՝ Բագրատունիների իշխանությունը վերացնելու նպատակով 849 թ. Հայաստանի կառավարիչ և հարկերի հավաքման վերակացու նչանակեց Աբու Սայիդ (Աբուսեթ) ոստիկանին, միաժամանակ արաբական զորքերն սկսեցին ասպատակել երկիրը: Հայաստանում նվաճողների դեմ ծավալվեց նոր ազատագրական պատերազմ: Հայոց իշխանաց իշխան Բագարատ Բագրատունին և Վասպուրականի իշխան Աչոտ Արծրունին ջախջախիչ հարված հասցրին արաբական ասպատակիչներին և արտաքսեցին երկրի սահմաններից: 851 թ. գարնանը

Հայաստան ներխուժեց արաբական նոր զորաբանակ՝ Աբու-Սայիդի գլխավորությամբ, որը ճանապարհին մահացավ և նրան փոխարինեց որդին՝ Յուսուֆը: Վերջինս խարդախությամբ գրավեց Խլաթը, ձերբակալեց Բագարատ Բագրատունուն և աքսորեց Սամառա (Իրաքում): Հայոց իշխանաց իշխանի պաչտոնը խալիֆայությունը հանձնարարեց Բագարատի եղբորը՝ սպարապետ Սմբատ Բագրատունի Արլբասին: 851-852 թթ. ձմռանը Յուսուֆը բանակեց Մուչ քաղաքում: Բայց չուտով Բագարատի որդիներ Աչոտն ու Դավիթը, ինչպես նաև Սասունի իշխան Հովնան Բագրատունի Խութեցին, լեռնական հայերի գլուխ անցած, իջան Մուչ, կոտորեցին արաբական զորքը և սպանեցին Մչո եկեղեցում պատսպարված Յուսուֆին:

852 թ. գարնանը Հայաստան ներխուժեց արաբական մի նոր զորաբանակ՝ ծագումով Թուրք և դաժանություններով հռչակված Բուղայի հրամանատարությամբ: Նա չուրջ երեք տարի ասպատակեց Սասունը, Տարոնը և Վասպուրականը, կոտորեց և գերեվարեց բազմահազար հայերի, ձերբակալեց և Սամառա աքսորեց մի չարք իշխանների, այդ թվում՝ Աչոտ և Դավիթ Բագրատունիներին: Բայց Բուղայի զորքերը երբ Սյունիքի վրայով հասան Արցախ, տեղի քաջարի իշխան Եսայի Առանչահիկը Գտիչ բերդի մոտ ծանր պարտության մատնեց նրանց: Այդ հաղթանակից ոգևորված՝ Վասպուրականի իշխան Գուրգեն Ապուպելճ Արծրունին ջախջախեց նվաճողներին և վերականգնեց Վասպուրականի ինքնուրույնությունը: Ի վերջո, խալիֆայությունն ստիպված էր զորքերը դուրս բերել Հայաստանից և ճանաչել նրա ինքնավարությունը:

V-IX դարերը, այսինքն Արչակունյաց գահի անկումից մինչև Բագրատունյաց գահի հիմնադրումը պատմագիտության մեջ սովորաբար դիտվում է նաև որպես Հայոց պետականության անկման ժամանակաչրջան: Այդ անհիմն դիտարկումը առաջացել է Հայոց պետականությունը արքայական գահին նույնացնելու թյուր պատկերացումից, այսինքն բոլորովին անտեսելով պետականության էական հատկանիշները և բացարձակացնելով նրա բարձրագույն խորհրդանիշը՝ արքայական գահը, նրա անկումը (կորուստը, ընդհատումը) ինքնաբերաբար դիտել են նաև պետականության ամբողջ համակարգի անկում: Սակայն հիչյալ

ժամանակաշրջանի պատմության ուսումնասիրությունը միանգամայն հավաստում է, որ Արշակունյաց գահի անկումից հետո հայ ժողովրդի համառ և հերոսական պայքարի շնորհիվ ավելի քան 450 տարի հարատևեցին Հայոց պետականության հիմնական կառույցները, հատկապես՝ ավատապետական համակարգը, նախարարության և հոգևորականության ինքնիշխանությունը, նրանց գործակալական պաշտոնները, իրավունքներն ու արտոնությունները: V-IX դարերում հայ նախարարների և հոգևորականների գլխավորությամբ ընթացած ազգային-ազատագրական հուժկու պատերազմները գերազանցապես նպատակամղված էին օտար նվաճողների տիրապետության թոթափմանը և Հայոց պետականության կորսված փառքի՝ արքայապատիվ գահի վերականգնմանը: Այդ խնդիրներն իրենց լուծումը գտան Բագրատունյաց թագավորության հաստատմամբ:

8. ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ
(IX-XI դարեր)

851 թ. Հայոց իշխան Բագարատ Բագրատունու և 852 թ. նրա որդիների՝ Աշոտ և Դավիթ Բագրատունիների, ինչպես նաև Սասունի իշխան Հովնան Խութեցու գերեվարումից հետո Հայոց իշխանի պաշտոնն ստանձնեց սպարապետ Սմբատ Բագրատունի Աբլբասը (852-855): Բայց 855 թ. նա ևս ձերբակալվեց և աքսորվեց Սամառա:

Հայաստանից արաբական զորքերը դուրս բերելուց հետո խալիֆայությունը 855 թ. Հայոց իշխան ճանաչեց Սմբատ Բագրատունու 35-ամյա որդուն՝ Աշոտ Բագրատունուն: Խալիֆայությունը 859 թ. Աշոտ Բագրատունուն հանձնարարեց նաև Արմինիայում հարկագանձման գործը: 861 թ. Մութավաքիլ խալիֆայի սպանությունից և գահակալական նոր կռիվների բորբոքումից հետո մի շարք երկրներ անկախացան խալիֆայությունից: Հայաստանում և Անդրկովկասում իր ազդեցությունը պահպանելու մտահոգությամբ խալիֆայությունը 862 թ. Աշոտ Բագրատունուն ճանաչեց Հայոց, Վրաց և Աղվանից իշխան՝

նրան վերապահելով նաև հարկերի գանձման իրավունքը: Նույն թվականին Աշոտ Բագրատունին Հայոց սպարապետության գործակալությունը հանձնեց իր կրտսեր եղբորը՝ Աբաս Բագրատունուն: Բագրատունիների տիրույթները դավթելու ծրագրով արաբական մի զորաբանակ՝ Ջահապ ամիրայի գլխավորությամբ, 863 թ. ներխուժեց Արշարունիք: Սակայն Աբաս սպարապետը 40 հազարանոց հայկական բանակով գլխովին ջախջախեց թշնամուն:

Աշոտ Բագրատունին 860-ական թթ. կարգավորեց կառավարման մարմինները, իր գերագահության ներքո համախմբեց Հայաստանի և Անդրկովկասի ազդեցիկ իշխանական տոհմերը, վարեց խոհեմ ներքին և արտաքին քաղաքականություն:

Հայ իշխանների և բարձրաղաս հոգևորականների համատեղ խորհրդում 869 թ. Աշոտ Բագրատունին հռչակվեց Հայոց թագավոր: Բացահայտելով իր և հայ մեծամեծ իշխանների դեմ արաբ ոստիկան Ահմադի գլխավորությամբ նախապատրաստած դավադրությունը՝ 875 թ. Աշոտ Բագրատունին ձերբակալեց ոստիկանին, զինաթափեց արաբական զորքը և ծանակելով արտաքսեց երկրից:

Անկախացած և ռազմա-քաղաքական վերելքի ուղին բռնած Հայաստանը շուտով գրավեց նաև Բյուզանդիայի ուշադրությունը: Մակեդոնական (Հայկական) կայսերատան հիմնադիր Վասիլ I-ը (867-886) առաջիններից մեկն էր, որ փորձեց չահել Աշոտ Բագրատունու զինակցությունը՝ ընդդեմ խալիֆայության: Սակայն Աշոտ Բագրատունին, բարեկամական հարաբերություններ հաստատելով Վասիլ I-ի հետ, խոհեմաբար չեզոքություն պահպանեց հակամարտող կողմերի միջև: Մութավաքիլ խալիֆը հայ-բյուզանդական մերձեցումը կասեցնելու և Աշոտ Բագրատունուն սիրաշահելու նպատակով 885 թ. նրան ճանաչեց «Թագավոր Հայոց և Վրաց»: Հայոց արքայի գահը ճանաչեց նաև Վասիլ I կայսրը:

Բագրատունյաց նորահիմն և միջազգային ճանաչման արժանացած թագավորության իրավասությունը տարածվում էր Հայաստանի մեծագույն մասի վրա, բացառությամբ Բյուզանդիային միացված արևմտյան «աշխարհների» (Փոքր Հայք, Բարձր Հայք, Ծոփք) և խալիֆայության Ջազիրա կուսակալու-

թյանը կցված հարավային որոշ գավառների:

Հայ և արաբ պատմագիրների հաստատմամբ Աշոտ I Բագրատունու գահակալման տարիներին (885-890) հայկական պետության սահմանները հարավում ընդգրկում էին Կորճայք և Աղձնիք նահանգների մեծ մասը՝ մինչև Ջազիրա, հարավ-արևելքում հասնում էին Ատրպատական, արևելքում՝ մինչև Պարտավ, արևմուտքում՝ Ծոփք և Բարձր Հայք, հյուսիս-արևմուտքում՝ մինչև Եգերաց աշխարհ, հյուսիսում՝ մինչև Կովկասյան Մեծ լեռնաշղթան և Ալանաց դուռը: Աշոտ I-ի գերիշխանությանը ենթարկվեցին վրաց գահերեց իշխան Ատրներսեհ Բագրատունին և Հայոց Արևելից կողմերի (Արցախ, Ուտիք) թագավոր Համամ Բագրատունին:

Հայոց և Վրաց միացյալ թագավորության հյուսիսային սահմաններն ամրապնդելու մտահոգությամբ Աշոտ I-ը 887 թ. արշավեց մինչև Կովկասյան Մեծ լեռնաշղթան, ընկճեց տեղի անհաշտ ցեղերին, իսկ Եգերաց աշխարհի թագավորին հարկադրեց ընդունել իր գերիշխանությունը: Աշոտ I-ի գահաժառանգ որդին՝ իշխանաց իշխան Սմբատը, զենքի ուժով ճնշեց Գուգարքի և Ուտիքի իշխանների անհնազանդությունը և նրանց ենթարկեց Բագրատունյաց գահին: Այնուհետև Աշոտ I-ը զբաղվեց Բագարան մայրաքաղաքի կառուցապատմամբ, երկրի պաշտպանական համակարգի բարելավմամբ և բանակի (40 հազար հեծյալ մարտիկ) հզորացմամբ՝ մահից հետո իր որդի Սմբատին թողնելով կայուն և վերընթաց զարգացում ապրող թագավորություն:

Սմբատ I Բագրատունին (890-913/914) հայրենի գահին հաստատվեց իր հորեղբոր՝ Աբաս սպարապետի դեմ գահակալական կռիվներից հետո: Բյուզանդիայի հետ սերտացնելով բարեկամական և առևտրական կապերը՝ Սմբատ I-ը ձգտում էր Հայաստանը դարձնել տնտեսապես և ռազմապես ամուր պետություն, վերջնականորեն թոթափել խալիֆայության ձևական գերիշխանությունը, ապահովել իր չեզոքությունը արաբա-բյուզանդական մրցակից տերությունների միջև: Նա 893 թ. առևտրական պայմանագիր կնքեց Բյուզանդիայի Լևոն VI կայսեր հետ, որով բարձրացավ Հայաստանի դերը միջազգային առևտրում:

Սմբատ I-ի քաղաքականությունը հարուցեց Աբբասյանների դժգոհությունը, որոնք 890-900-ական թթ. մի քանի անգամ փորձեցին վերականգնել խալիֆայության տիրապետությունը Հայաստանում: Բայց Սմբատ I-ը մե՛րթ դիվանագիտական քայլերով, մե՛րթ ռազմական հաղթանակներով խափանեց խալիֆայության միջամտություններն ու հարձակումները: Ատրպատականի Սաջյան ամիրա Ափշինը 894 թ. ներխուժեց Հայաստան, գրավեց Նախճավանը և Դվինը, ապա ճամբարեց Արագածոտն գավառի Վժան գյուղում: Սակայն նույն գավառի Դողս գյուղի մոտ Սմբատ I-ը ջախջախեց թշնամուն և արտաքսեց երկրից: Սմբատ I-ը վրաց գահերեց իշխան Ատրներսեհ Բագրատունուն օծեց Վրաստանի թագավոր, զսպեց Եգերաց Կոստանդին թագավորի ոտնձգությունները Վրաստանի դեմ և ապահովեց Բագրատունյաց տերության հյուսիսային սահմանները:

Ատրպատականի արաբական ամիրա Սաջյան Յուսուֆը, օգտվելով Սմբատ I-ի դեմ ծագած Վասպուրականի Արծրունյաց իշխանության խռովությունից, խալիֆի համաձայնությամբ 908 թ. Գագիկ I Արծրունուն հռչակեց թագավոր (908-943) և նրա համագործակցությամբ ներխուժեց Հայաստան: Սմբատ I-ի խնդրանքով բյուզանդական զորքերը փորձեցին օգնել նրան, բայց կայսեր մահը նրանց հարկադրեց վերադառնալ Բյուզանդիա: 910 թ. գարնանը Յուսուֆը գրավեց Դվինը: Հուսալքված որոշ հայ իշխաններ, մասնավորապես Սյունիքի գահերեց իշխան Գրիգոր Սուփանը, նրա զարմիկ Վասակը, Հայոց սպարապետ Աշոտ Բագրատունին և ուրիշներ միացան Յուսուֆին: Հայկական զորքերը Սմբատ I-ի, ինչպես նաև նրա որդիներ Աշոտի, Մուշեղի և Աբասի գլխավորությամբ 910 թ. Նիգ գավառի Ձկնավաճառ վայրում ճակատամարտեցին թշնամու դեմ: Բայց մարտի վճռական պահին Ուտիքի Սևորդյաց գունդը դավաճանաբար լքեց մարտադաշտը, ձերբակալեց և թշնամուն հանձնեց արքայազն Մուշեղին: Խուճապի մատնված հայկական զորքը պարտվեց, իսկ Սմբատ I-ը դարձյալ փակվեց Կապույտ բերդում՝ երկիրը թողնելով անպաշտպան: Յուսուֆն անարգել կողոպտեց երկիրը, գերեվարեց բազմահազար հայերի, ավերեց մի շարք բնակավայրեր: 913 թ. Սմբատ I-ը հանձնվեց Յուսուֆին՝ հուսալով,

որ թշնամին կդադարեցնի երկրի ավերումն ու կողոպուտը: Բայց Յուսուֆը Սմբատ I-ին նետեց Դվինի բանտը, իսկ 914 թ. գլխատեց և մարմինը խաչեց Դվինի դարպասներին: Այնուհետև Յուսուֆն սպանեց արքայազն Մուշեղին, Սյունյաց գահերեց իշխան Գրիգոր Սուփանին և ուրիշ իշխանների, հետապնդեց անգամ իրեն դաշնակցող Արծրունիներին:

Արաբական զավթիչների դեմ հայ ժողովրդի հերոսական պայքարն այնուհետև գլխավորեցին Սմբատ I-ի որդիները՝ Աշոտ II Երկաթ արքան (914-929) և Աբաս սպարապետը: Երկարատև և համառ կռիվներով նրանք ազատագրեցին Հայաստանի մեծ մասը, նույնիսկ հասան Թիֆլիս և ջախջախեցին այնտեղ հաստատված արաբական զորքերին: Աշոտ II-ը հաջողությամբ սանձեց նաև Արցախի և Ուտիքի իշխանական տների ըմբոստությունները, սաստեց իր հորեղբորորդի Աշոտ սպարապետին, որին խալիֆայությունը հռչակել էր Հայոց թագավոր: Արաբների դեմ մարտերում նշանավորվեց նաև իշխան Գևորգ Մարզպետունին: Արաբական Բեշիր զորապետի դեմ 921 թ. Սևանի ճակատամարտում չահած վճռական հաղթանակով Աշոտ II-ը թշնամուն վերջնականապես արտաքսեց Հայաստանից և ամրապնդեց Բագրատունյաց թագավորությունը: Գագիկ Արծրունին չուտով զղջաց իր անխոհեմ արարքը և ընդունեց Բագրատունյաց գերիշխանությունը: Աշոտ II Երկաթն այնուհետև զբաղվեց երկրի վերաշինությամբ, ավերված քաղաքների ու բերդերի վերականգնման աշխատանքներով:

Աշոտ II Երկաթին հաջորդեց եղբայրը՝ Աբաս Բագրատունին (929-953), որն սպարապետության տարիներին նստում էր Վանանդ գավառի Կարս բերդաքաղաքում: Թերևս այդ պատճառով արքայանիստը Երազգավորսից տեղափոխեց Կարս, որը նորովի ամրացվեց և կառուցապատվեց, հիմնվեցին արքունի ապարանքները և Ս. Առաքելոց հոյաշեն եկեղեցին: Աբասի նախաձեռնությամբ կաթողիկոսական աթոռն Աղթամարից տեղափոխվեց Շիրակ գավառի Արգինա ավան, որտեղ հանճարեղ ճարտարապետ Տրդատի նախագծով կառուցեց Կաթողիկե եկեղեցին:

Աբասին հաջորդեց որդին՝ Աշոտ III Ողորմածը (953-977), որը գահակալման սկզբին 45 հազարանոց հայկական զորաբանակով հակահարված հասցրեց Արխազաց թագավորության նվաճողական փորձերին և ամրապնդեց տերության հյուսիսային շրջանները: Համանման պատժիչ արշավանքով 959 թ. հնազանդեցրեց նաև Աղձնիքի արաբական ամիրայությանը: 961 թ. Աշոտ III-ը մեծ հանդիսավորությամբ գահանիստ մայրաքաղաք օծեց արագ զարգացող և վաճառաշահ Անին: Այնուհետև Խոսրովանուշ թագուհու աջակցությամբ հոգաց Անիի կառուցապատման աշխատանքները, իսկ Զորագետի հովտում հիմնեց Սանահինի և Հաղպատի վանական համալիրները, որոնք դարձան ուսման և գիտության նշանավոր կենտրոններ:

Պետական կառավարման համակարգը բարելավելու և առավել ճկուն դարձնելու նպատակով Աշոտ III-ը տերության մի քանի խոշոր և ռազմավարական նշանակություն ունեցող մարզերի կառավարումը հանձնեց տեղի երևելի իշխաններին, մասնավորապես Բագրատունյաց տոհմի ներկայացուցիչներին՝ նրանց օժտելով փոխարքայի լիազորություններով: Այսպես, 963 թ. Վանանդում նա թագավոր (փոխարքա) կարգեց կրտսեր եղբորը՝ Մուշեղ Բագրատունուն, որն իր գահանիստը դարձրեց Կարսը, 966 թ. Տաշիր-Զորագետում թագավոր հռչակեց կրտսեր որդուն՝ Գուրգենին (Կյորիկե), որն իր գահանիստը դարձրեց նախ Շամշուլդե բերդավանը, իսկ 1065 թ.՝ Լոռե բերդը:

Բյուզանդական կայսրությունը 967 թ. խարդախ միջոցներով զավթելով Տարոնի Բագրատունյաց իշխանությունը և այն դարձնելով առանձին բանակաթեմ՝ արդեն 970-ական թթ. սկսեց սպառնալ Հայոց թագավորությանը: Աշոտ III-ը հայկական 80 հազարանոց զորաբանակով հարք գավառում ընդառաջ ելավ իր տիրույթներին սպառնացող բյուզանդական զորքերին, և կայսր Հովհաննես I Զմշկիկը 974 թ. խոհեմաբար խաղաղության և բարեկամության պայմանագիր ստորագրելով՝ հեռացավ Բագրատունյաց սահմաններից:

Աշոտ III-ին հաջորդեց որդին՝ Սմբատ II Տիեզերակալը (977-989), որը շարունակեց Անի մայրաքաղաքի կառուցապատման աշխատանքները, հատկապես կերտեց զգալիորեն ընդարձակված քաղաքի երկրորդ՝ «Սմբատյան» կամ «Սմբատաշեն» կոչվող պարիսպը, հիմնեց նոր Կաթողիկե եկեղեցի և կաթողիկոսական աթոռն Արգինայից տեղափոխեց Անի: Նա հակահար-

ված տալով Ատրպատականի Սալարյան և Ռավադյան ամիրությունների ոտնձգություններին՝ ամրապնդեց տերության սահմանները և կենտրոնական իշխանության հեղինակությունը: Սմբատ II -ը ճանաչեց Արխազիայում թագավոր հռչակված Բագարատ III Բագրատունու, ինչպես նաև 987 թ. Սյունիքում թագավոր հռչակված Սմբատ Սահակյանի գահը:

Սմբատ II Տիեզերակալի կրտսեր եղբայրը և հաջորդը՝ Գագիկ I Բագրատունին (989-1020) ժառանգեց տնտեսապես բարգավաճ և քաղաքականապես հզոր թագավորություն: Տեղական բոլոր թագավորություններն ու իշխանությունները անվերապահորեն ենթարկվեցին կենտրոնական թագավորության գերիշխանությանը, հավատարմորեն կատարեցին իրենց պարտականություններն ու գործակալական ծառայությունները: X դարի վերջին նրանց միասնական բանակը Հայոց սպարապետ Վահրամ Պահլավունու գլխավորությամբ հակահարված տվեց Ատրպատականի ամիրա Մամլանի և Գանձակի ամիրա Փադլունի զորքերին, խափանեց նրանց զավթողական նկրտումները և կողոպտչական արշավանքները: Գագիկ I-ը հզորացրեց և կատարելագործեց արքունի մշտական զորքը, բանակի մարտիկների թիվը հասցրեց 100 հազարի:

Տայք-Կղարջքի իշխան և կյուրապաղատ Դավիթ Բագրատունու դավադրական մահից (1000 թ.) հետո Բյուզանդիան խարդախությամբ զավթեց նրա տիրույթները, բայց երկյուղելով Գագիկ I-ի հզորությունից՝ նրա օրով չհամարձակվեց իրագործել իր զավթողական ծրագրերը Հայաստանում: Պատմագիր Արիստակես Լաստիվերցին Գագիկի I-ին բնութագրում է որպես «պատերազմներում հաղթող և հզոր այր, որը խաղաղությամբ գահակալեց Հայոց աշխարհում»:

Գագիկ I-ի մահից հետո գահաժառանգման համար սուր պայքար ծավալվեց նրա որդիներ Հովհաննես-Սմբատի և Աշոտի միջև: Բագրատունյաց տերության մեծամեծ իշխանների ու թագավորների միջամտությամբ շուտով կնքվեց համաձայնություն, ըստ որի Հովհաննես-Սմբատն ավագության իրավունքով գահակալելու էր երկրի կենտրոնական տիրույթներում, իսկ Աշոտ IV-ը՝ եզերական տրիույթներում («դրսի աշխարհում»): Ընդ որում անզավակ Հովհաննես-Սմբատի մահից հետո «թագավոր ամենայն տանն Հայոց» իրավունքը վերապահվելու էր Աշոտ

IV-ին: Պատմագիր Մատթեոս Ուռհայեցին Հովհաննես-Սմբատին բնութագրում է մտքով իմաստուն, «մարմնով ծույլ և վարանող, պատերազմական գործերում՝ թուլամորթ և անվարժ», իսկ Աշոտ IV-ին՝ «խիզախ ու քաջ, հզոր և անպարտելի, պատերազմներում հաղթող»: Եղբայրների միջև հակամարտությունը շարունակվեց. պառակտվեց իշխանների միասնությունը, թուլացավ երկրի հզորությունը:

Օգտվելով Բագրատունյաց կենտրոնական թագավորության ներքին ճգնաժամից՝ նրանց վրա միաժամանակ հարձակվեցին թե՛ Ատրպատականում հաստատված սելջուկյան թուրքերը և թե՛ Բյուզանդական կայսրության զորքերը: Սելջուկյան թուրքերը Նախճավան-Դվին ուղիով 1021 թ. հասան մինչև Նիգ գավառը (Ապարան), սակայն այնտեղ Բջնիի իշխան Վասակ Պահլավունին ջախջախեց նրանց և դուրս չպրտեց երկրի սահմաններից:

Բյուզանդիայի կայսր Վասիլ II-ը 1021 թ. ծանր պարտության մատնեց վրաց-աբխազական զորքերին, դաժան դատաստան տեսավ նրանց աջակցող Տայքի և Կղարջքի հայ բնակչության հետ, ապա նահանջեց Տրապիզոն և նախապատրաստվեց ներխուժել Բագրատունյաց կենտրոնական տիրույթները: Նույն թվականին նա Արծրունյաց Սենեքերիմ թագավորին հարկադրեց Վասպուրականը «կտակել» Բյուզանդիային և փոխարենը տիրույթներ ստանալ Սեբաստիայի նահանգում: Վասիլ II-ի հետ բանակցություններ վարելու և նրա հարձակումը կանխելու նպատակով Հայոց թագավոր Հովհաննես-Սմբատը 1022 թ. հունվարի սկզբին բյուզանդամոլ կաթողիկոս Պետրոս Ա Գետադարձի գլխավորությամբ մի պատվիրակություն ուղարկեց Տրապիզոն: Կայսեր պարտադրմամբ կաթողիկոսը կնքեց համաձայնագիր-կտակ, որով Հովհաննես-Սմբատի մահից հետո նրա տիրույթները՝ Անի մայրաքաղաքով, անցնելու էին Բյուզանդական կայսրությանը: Արիստակես Լաստիվերցին Պետրոս Գետադարձի արարքը բնութագրում է ավելի զազրելի, քան Հուդայի դավաճանությունը:

1041 թ. գրեթե միաժամանակ մահացան (թերևս բյուզանդական արքունիքի կազմակերպած դավով) թե՛ Աշոտ IV-ը, թե՛ Հովհաննես-Սմբատը: Պահն օգտագործելով՝ նույն թվականին

բյուզանդական մեծաքանակ զորքերը ներխուժեցին Շիրակ և պաշարեցին Անի մայրաքաղաքը: Անիի բնակչությունը և հայկական զորքերը Վահրամ Պահլավունու գլխավորությամբ ջախջախեցին զավթիչներին: Հայրենասեր ուժերը Վահրամ Պահլավունու նախաձեռնությամբ 1042 թ. Հայոց թագավոր հռչակեցին Աշոտ IV-ի 18-ամյա որդուն՝ Գագիկ II-ին: Հայերին 1044 թ. հաջողվեց ևս երկու անգամ հաղթել Անին պաշարած բյուզանդական բանակներին և պահպանել թագավորության անկախությունը:

Կոստանդին Մոնոմախ կայսրը, խուսափելով նոր կորուստներից, հաշտության պայմանագիր կնքելու կեղծ խոստումներով ու երդումներով 1045 թ. Գագիկ II-ին (1042-1045) հրավիրեց Կոստանդնուպոլիս և բանտարկեց: Նույն թվականին բյուզանդական զորքերը համառ կռիվներով գավթեցին Անին և Բագրատունյաց թագավորության կենտրոնական տիրույթները: Իսկ Գագիկ II-ին հատկացրին Կապադովկիայի և Լեռնային Կիլիկիայի սահմանագլխին գտնվող Պիզա և Կալոնպալատ բերդերը, որտեղ նա իշխեց մինչև 1079 թվականը:

1045 թ. հետո Հայաստանի մեծագույն մասն անցավ Բյուզանդական կայսրությանը: Կարճատև տիրապետության տարիներին կայսերական արքունիքը վարում էր հայերի զանգվածային արտագաղթեցման, նրանց քաղաքական և ռազմական զորության թուլացման, տնտեսական ճնշման և քաղկեդոնական եկեղեցու դավանանքին ենթարկելու քաղաքականություն: Այդ ամենը ծանր հետևանքներ ունեցան ոչ միայն Հայաստանի, այլև կայսրության համար. հայկական զորեղ պատնեշի խարխլմամբ դյուրացվեց թուրանական վաչկատուն հրոսակ ցեղերի՝ սելջուկյան թուրքերի առաջխաղացումը ինչպես Հայաստանում, այնպես էլ Բյուզանդիայի փոքրասիական տիրույթներում:

9. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ XI-XIV ԴԱՐԵՐՈՒՄ

ա. Հայկական թագավորություններն ու իշխանապետությունները սելջուկյան թուրքերի տիրապետության ժամանակաշրջանում: Սելջուկյան թուրքերը 1047-1054 թթ. և 1063-1072 թթ. ձեռնարկած արշավանքների ընթացքում նվաճեցին Հայաստանը, կողոպտեցին և ավերեցին բազմաթիվ բնակավայրեր, կոտորեցին հարյուր հազարավոր հայ բնակիչների, գերեվարեցին կամ մղեցին արտագաղթերի: Կարճ ժամանակամիջոցում թուրքական անասնապահ և վաչկատուն ցեղերը սփռվեցին Հայաստանի լավագույն հողերում ու բնակավայրերում, իրենց ռազմական առաջնորդների գլխավորությամբ հիմնեցին մի շարք ամիրայություններ: 1085 թ. սելջուկյան սուլթան Մելիքշահը Հայաստանից, Առանից և Ատրպատականից կազմեց մի առանձին էլայեթ, որի կառավարիչ նշանակեց իր մերձավոր ազգականներից մեկին: Հայաստանի ընդհանուր կառավարումը թեև հանձնվեց սելջուկյան թուրքերի ռազմական ավագանուն, բայց տեղերում վարչական, տնտեսական և կրոնական գործերը մեծ մասամբ վարում էին հայ իշխաններն ու հոգևորականները: Հայ հոգևորականներն ազատվեցին հարկերից, իսկ իշխանական տների կախվածությունը սուլթանից արտահայտվում էր հողահարկ («խարաջ») վճարելով:

XI-XII դդ. Հայոց արքայական և իշխանական մի շարք տոհմեր շարունակեցին իշխել Գուգարքում, Ուտիքում, Արցախում, Սյունիքում, Վասպուրականում, Տարոն-Սասունում և այլուր: Այսպես, Բագրատունյաց Կյուրիկյան արքայաճյուղն իշխում էր Տաշիրք-Զորագետում կամ վրացական աղբյուրներում հայտնի Սոմխեթում (Հայաստանում), որն ընդգրկում էր Գուգարքի արևելյան գավառները և Ուտիքի արևմտյան որոշ տարածքներ: Դավիթ I Անհողինի որդին և հաջորդը՝ Կյուրիկե I թագավորը (1048-մոտ 1090), որ Բագրատունյաց կենտրոնական թագավորության անկումից հետո հավակնում էր գահերեցի իրավասությանը, հաջողությամբ պայքարեց Գանձակի Շադդադյան ամիրայության և վրաց-աբխազական թագավորության ոտնձգությունների դեմ, պաշտպանեց իր տիրույթների սահմանները:

Սակայն 1064 թ., ենթարկվելով սելջուկյան սուլթան Ալփ Արսլանի հարձակմանը, Կյուրիկե I-ը հպատակվեց նրան և թագավորությունը դերծ պահեց խորտակումից: Ավերված Շամշուլդեից 1065 թ. գահանիստը նա տեղափոխեց Լոռե բերդ, որի համար պատմագիտության մեջ այն հաճախ անվանում են նաև Լոռու թագավորություն:

Կյուրիկե I-ին հաջորդեցին որդիները՝ Դավիթ II-ը և Աբաս I-ը, որոնք գահակալեցին համատեղ (մոտ 1090-1145): Շրջակա մահմեդական ամիրայությունների դեմ երկարատև կռիվներից և տարածքային զգալի կորուստներից հետո 1110-ական թթ. սկզբին նրանք ամփոփվեցին Ուտիքի իրենց տիրույթներում. Աբաս I-ը հաստատվեց Տավուշում, իսկ Դավիթ II-ը՝ Մաճնաբերդում: Այնուհետև Դավիթ II-ի սերունդները Մաճնաբերդում և Տավուշում հաջորդաբար իշխեցին մինչև XIII դարի վերջերը:

1064 թ. Սյունիքի թագավոր Գրիգոր I Աչոտյանը (1047-1084) նույնպես ճանաչեց սելջուկյան սուլթանության գերիշխանությունը, բայց որոշ գավառների կորստի գնով և սուլթանին տարեկան հողահարկ վճարելու պայմանով պահպանեց իր թագավորությունը: Գրիգոր I-ը, որ ամուսնացած էր Դարբանդի Հայոց թագավոր Սևադայի դուստր Շահանդուխտի հետ, ժառանգ չունեցավ, ուստի նրա մահից հետո Սյունյաց իշխանների համաձայնությամբ գահն անցավ Սևադայի որդի Սենեքերիմին (1084-1094): Վերջինս Մելիքշահ սուլթանի հովանավորությամբ Գանձակի Շադդադյան ամիրայությունից ազատագրեց Կովսական գավառը և այլ հողեր, գրեթե վերականգնեց Սյունյաց թագավորության տարածքային ամբողջականությունը, ծավալեց շինարարական գործունեություն: Սենեքերիմի որդի Գրիգոր II-ը (1094-1166) Գանձակի կուսակալության դեմ տևական կռիվներում կորցրեց տարածքների զգալի մասը և ամփոփվեց մի քանի գավառներում: Նա արու զավակ չուներ, ուստի իր դուստր Կատային կնության տվեց Խաչենի իշխան Հասան Գեռաքարեցուն և նրան հռչակեց Սյունիքի թագավորության գահաժառանգ (1166-1170): Նրա օրով Գանձակի կուսակալությանը տիրած Ատրպատականի Ելտկուզյան աթաբեկությունը նվաճեց Սյունյաց թագավորության վերջին հենակետերը՝ Գրհամը, Գեղին, Կաքավաբերդը և Բաղաբերդը: Հասան Գեռաքարեցին

հարկադրաբար ապաստանեց Արցախում: Եվ դրանով էլ վերջ դրվեց Սյունիքի թագավորությանը:

1021 թ. Վասպուրականի թագավոր Հովհաննես-Սենեքերիմի Սեբաստիա գաղթելուց հետո Արծրունյաց չառավիղներն ամրացան Տոսպական և Ամյուկ բերդերում, ինքնավար իշխեցին Վանա լճի արևմտյան և հարավարևմտյան առափնյա գավառներում, ինչպես նաև Առտեր, Աղթամար, Լիմ և Կտուց կղզիներում: 1030-1060-ական թթ. Վասպուրականի Մեծ իշխան տիտղոսով հաջորդաբար իշխեցին Խեղենեկը, Թոռնիկ I-ը, Թադեոսը և Թոռնիկ II-ը: 1060-ական թթ. կեսին մահմեդական նվաճողների դեմ կռիվներում Թոռնիկ II-ը զոհվեց, իշխեց նրա որդի Աբդլմսեհը, որն ընդլայնեց տիրույթները, կենտրոնացրեց իշխանությունը, ծավալեց շինարարական գործունեություն, հիմնեց Աղթամարի կաթողիկոսությունը: Առաջին կաթողիկոս օծվեց նրա անդրանիկ որդի Դավիթը (1113-1165): Աբդլմսեհի մահից (1121 թ.) հետո մինչև XIII դարի սկիզբը կառավարեցին նրա ժառանգները՝ Ստեփանոս-Ալուզը և Խեղենեկ II-ը: Վերջինս արու զավակ չուներ, ուստի նրա ժառանգությունն անցավ փեսային՝ Արծրունյաց չառավիղ Սեֆեդինին, որի սերունդները հոգևոր կոչում ընդունեցին և մինչև XVI դարը հերթագայեցին Աղթամարի կաթողիկոսության աթոռին:

Սելջուկյան սուլթանության տիրապետության ժամանակաշրջանում լիակատար ինքնավար կյանքով ապրեց Սասունի իշխանությունը: Սասունում հաստատված Մամիկոնյան ճյուղերից մեկը չենթարկվեց Տարոնի Բագրատունյաց տիրույթները գավթած բյուզանդացիներին, իսկ XI դարի կեսին Մուշեղ Մամիկոնյանն իր իշխանությունը տարածեց Տարոնից մինչև Հանձիտ և Նփրկերտ ընկած հայկական տարածքների վրա: 1056 թ. Մուշեղ Մամիկոնյանը հաջողությամբ ետ մղեց սելջուկյան թուրքերի հարձակումը և պահպանեց իր իշխանության սահմանները: Մուշեղին հաջորդեց որդին՝ Թոռնիկը (1056-1072), որն իր անբրոջ՝ Միջագետքի և Հարավային Հայաստանի կառավարիչ Գրիգոր Մագիստրոս Պահլավունու աջակցությամբ զգալիորեն ամրապնդեց իր իշխանությունը: Հայ պատմագիր Մատթեոս Ուռհայեցու վկայությամբ 1058 թ. գարնանը Թոռնիկի զորաբանակը (50 հազար հետևակ և 6 հազար հեծյալ) գլխովին ջախջախեց

Տարոն ներխուժած սելջուկյան թուրքերին, ազատեց հայ գերիներին և ետ խլեց ավարը, որ թշնամին ձեռք էր բերել կողոպտելով Մելիտինե քաղաքը:

1071 թ. Մանազկերտի ճակատամարտում բյուզանդական զորքերի պարտությունից հետո հայ զորավար Փիլարտոս Վահրամյանը Կոմմագենեում և հարակից երկրամասերում հիմնելով հայկական անկախ իշխանություն՝ փորձեց տիրել նաև Տարոն-Սասունը և ստեղծել ընդարձակ հայկական իշխանապետություն: Բայց Խարբերդի դաշտում պարտվեց Թոռնիկից, և նրա ծրագիրը խափանվեց: Թեև շուտով Թոռնիկը զոհ դարձավ Փիլարտոս Վահրամյանի կազմակերպած դավին, բայց Տարոն-Սասունի իշխանությունը մնաց աննվաճ, որտեղ Թոռնիկի սերունդները (Զորտվանել I, Վիգեն, Զորտվանել II, Շահանշահ) հաջորդաբար իշխեցին մինչև 1180-ական թվականները:

բ. Զաքարյանների իշխանապետությունը: XII դարում քայքայվող սելջուկյան տիրակալության դեմ Վրաստանում և Հայաստանում ծավալվեց ազատագրական պայքար, որը գլխավորում էին վրաց Բագրատունիների շուրջ համախմբված Օրբելյանները և Արծրունի-Զաքարյանները: Վերջիններիս նախնի Խոսրով Արծրունին XI դարի երկրորդ կեսին, խուսափելով սելջուկյան նվաճողների բռնություններից, իր ընտանիքով տեղափոխվել էր Գուգարք և ծառայության մտել Տաշիր-Զորագետի Բագրատունյաց արքունիքում: Վասալական ծառայության դիմաց Կյուրիկե I Բագրատունին (1048-մոտ 1090) Խոսրով Արծրունուն և նրա որդի Զաքարիային շնորհել էր Խոժոռնի բերդը և շրջակա հողերը: Մեծ հեղինակություն ձեռք բերած Զաքարիայի անունով էլ Խոժոռնու Արծրունյաց իշխանատունն այնուհետև կոչվեց Զաքարյան, թեև նրա թոռները՝ Սարգիս Մեծի որդիներ Զաքարեն և Իվանեն Ամբերդի արաբատառ արձանագրության մեջ հիշատակված են նաև «Արծրունիներ»:

XI դարի երկրորդ կեսին Արծրունյաց տոհմի մի ուրիշ իշխան՝ Վահրամը, նույնպես իր ընտանիքով հաստատվել էր Գուգարքի Զորափոր գավառում և վասալական ծառայության դիմաց Կյուրիկե I Բագրատունուց ստացել Մահկանաբերդ և Կայան բերդերը՝ շրջակա հողերով հանդերձ: 1118 թ., երբ Վրաստանին միացվեց Կյուրիկյանների թագավորության տարածքի զգալի մասը և վրաց Բագրատունիները այն շնորհեցին Օրբելյաններին, Զաքարյան-Արծրունի իշխանատները դարձան Օրբելյանների վասալներ:

Վրաց թագավոր Դեմետրե I-ի օրով (1125-1156) Վահրամի որդի Վասակ Արծրունին կարգվեց Թփղիս քաղաքի շահապ (քաղաքագլուխ), որին 1170-ական թթ. հաջորդեց եղբայրը՝ Ամիր Քուրդ Արծրունին: Վերջինիս քույր Սահակադուխտն ամուսնացել էր Զաքարիայի որդի Սարգիս Մեծի հետ: Նրանց որդիներն էին Զաքարյան տոհմի նշանավոր ներկայացուցիչներ Զաքարեն ու Իվանեն: Գեորգի III թագավորը 1161-1165 թթ. Շադդադյան ամիրայությունից ազատագրված Անի քաղաքի կառավարիչ կարգեց Իվանե Օրբելյանին, իսկ օգնական՝ Սարգիս Մեծ Զաքարյանին: Նույն պաշտոնները նրանք վարեցին նաև 1174-1178 թթ., երբ Անին վերստին ազատագրվեց Շադդադյաններից:

1177-1178 թթ. Գեորգի III թագավորի դեմ ծավալված գահակալական կռիվների ժամանակ հայ-վրացական զորքերի ամիրսպասալար Իվանե Օրբելյանը պաշտպանեց իր փեսային՝ գահի հավակնորդ Դեմետրեին: Սակայն հայկական զորքերի հրամանատար Սարգիս Մեծ Զաքարյանի աջակցությամբ հաղթանակը շահեց Գեորգի III-ը: Պարտված Օրբելյանների տոհմը սրատվեց, փրկվածներն ապաստանեցին Սյունիքում: Վրաց Բագրատունիների արքունիքում խիստ բարձրացավ Զաքարյանների հեղինակությունը, և նրանք դասվեցին վրաց խոշոր ավատատուների կարգը:

1185 թ. Թամար թագուհին Սարգիս Մեծին շնորհեց հայ-վրացական զորքերի գերագույն հրամանատարի՝ ամիրսպասալարի պաշտոնը, ինչպես նաև Օրբելյանների նախկին այն տիրույթները, որոնք վրացական աղբյուրներում հիշատակվում են Սոմխեթ (Հայաստան) անվանումով: Սարգիս Մեծի մահից (1187 թ.) հետո Զաքարեն կարգվեց հայ-վրացական զինված ուժերի ամիրսպասալար, իսկ Իվանեն՝ վրաց արքունի մեծ վեզիր: Ամիր Քուրդ Արծրունին նշանակվեց Քարթլիի և Թփղիսի էրիսթավների էրիսթավ, ինչպես նաև վրաց արքունի գանձապետ: Վահրամ Զաքարյանի (Սարգիս Մեծի եղբայրը) ավագ որդի Զաքարեին շնորհվեց Գագ ամրոցը և մերձակա հողերը, իսկ կրտսեր

որդի Սարգսին՝ Թմբուկ (Թմոգվի) բերդը և շրջակա գավառը: Հայ-վրացական սերտ համագործակցության արդյունքում ոչ միայն ամրապնդվեց և հզորացավ վրաց Բագրատունյաց թագավորությունը, այլև սելջուկյան նվաճողներից շուտով ազատագրվեցին Հայաստանի հյուսիսային, հյուսիսարևելյան և կենտրոնական նահանգները:

1195 թ. Ատրպատականի աթաբեկության զորքերը ներխուժեցին Հայաստան՝ նպատակ ունենալով կանխել հայ-վրացական ուժերի առաջխաղացումը և ամրապնդել իրենց տիրապետությունը: Սակայն Շամքորի մոտ տեղի ունեցած վճռական ճակատամարտում Զաքարյանները գլխովին ջախջախեցին և ետ շպրտեցին թշնամուն: Զարգացնելով հաջողությունը՝ Զաքարյանները 1196-1211 թթ. հաղթարշավով ազատագրեցին Ամբերդը, Անին, Բջնին, Դվինը, Կարսը, Մանազկերտը, Արճեշը, Բագրևանդ գավառը, Տուրուբերան նահանգի մեծ մասը, Սյունիքը և Վասպուրականի հյուսիսարևելյան որոշ գավառներ:

Ազատագրված հայկական հողերի կառավարումն անցավ Զաքարյաններին և նրանց վասալ հայ իշխաններին: 1212 թ. Զաքարյանների տիրույթները Հայաստանում ընդգրկում էին Գուգարք, Այրարատ, Արցախ և Սյունիք նահանգները, Տուրուբերանի մեծ մասը, Ուտիքի արևմտյան և Վասպուրականի հյուսիսարևելյան գավառները:

Իրենց գերիշխանությունը հաստատելով Հայաստանի մեծագույն մասում՝ Զաքարյանները հռչակվեցին հայ Բագրատունիների օրինական իրավահաջորդներ և սեփականացրին նրանց «շահնշահ» տիտղոսը: Ազատագրված Հայաստանը Զաքարյանները տնօրինում էին որպես «սեփական ժառանգութիւն նախնեաց»: Սկզբնաղբյուրներում Զաքարյանների իշխանատիրությունը հիշատակվում է «աշխարհակալ տերություն», «պետություն», «պետական իշխանություն», «թագավորություն» և այլն:

Հայկական նորակերտ պետությունը վարչատարածքային առումով կազմված էր երեք խոշոր միավորումից, որոնք կառավարում էին Զաքարյանների իշխանաճյուղերը: Ամիրսպասալար Զաքարեն և նրա ժառանգները իշխում էին Գուգարքի մի մասում, Շիրակում և մինչև Բասեն ընկած գավառներում: Նրանց

իշխանանիստ կենտրոնն էր Անի քաղաքը: Իվանե աթաբեկը և նրա ժառանգները իշխում էին Գուգարքի մնացած հատվածում, Այրարատ նահանգի արևելյան մասում, Սևանի ամբողջ ավազանում և Սյունիքի հյուսիսարևելյան գավառներում: Նրանց իշխանանիստ կենտրոնն էր նախ Բջնին, ապա Դվինը: Վահրամյան ճյուղն իշխում էր Տավուշ, Փառիսոս և Գարդման գավառներում: Իշխանանիստ կենտրոնն էր Գագ ամրոցը:

Ազատագրված Հայաստանում գոյատևող մյուս բոլոր իշխանական տոհմերը դարձել էին Զաքարյանների ավատառու վասալները, որոնք ունեին իրենց տոհմատիրույթները և ներգրավված էին պետական կառավարման համակարգում: Այսպես, այդ իշխանատներից Վաչուտյաններն իշխում էին Արագածոտնի արևելյան մասում և Նիգ գավառում, Պահլավունիները՝ Մարմաշենում, Բագնայրում և Լմբատում, Օրբելյանները՝ Սյունիքում, Խաղբակյանները՝ Վայոց ձորի արևելյան մասում, Դոփյանները՝ Վերին Խաչենում, Սոդքում և Գեղարքունիքի հարավարևելյան մասում, Հասան- Ջալալյանները՝ Տրտուի և Խաչենագետի միջին հոսանքների շրջանում, Համազասպյան-Մամիկոնյանները՝ Դսեղում, Արծրունիները՝ Մահկանաբերդում, Կյուրիկյանները՝ Մաճնաբերդում, Սևադյանները՝ Զորագետում և այլն:

Զաքարյանների երեք խոշոր իշխանաճյուղերը թեև իրենց տիրույթների ներքին գործերը վարում էին ինքնուրույն, կառավարման մարմինների տեղական համակարգով և վասալ իշխանների ցանցով, սակայն երկրի ընդհանուր կառավարումն իրականացվում էր միասնաբար՝ գերամեծար իշխանապետի և «շահընշահի» գլխավորությամբ, որը կոչվում էր «գլուխ իշխեցող և հրամանատար ամենայն իշխեցողաց և գլխաւորաց տան թագաւորութեան տեառն իւրոյ»: Նա էր որոշում պատերազմի և խաղաղության հարցերը, կայացնում դատական գերագույն վճիռները, հաստատում բարձր պաշտոնները: Իշխանապետից հետո բարձրագույն կառավարման մարմին էր վեզիրը: Սպարապետության գործակալությունը և կողմնակալ կուսակալի պաշտոնը վարում էին Անիի Խաղբակյանները: Կուսակալներ էին նաև Օրբելյանները և «իշխանաց իշխանի» տիտղոսով մեծարվող Վաչուտյանները: Պահլավունիները վարում էին Անիի քա-

ղաքապետի և Շիրակի եպիսկոպոսության առաջնորդի պաշտոնները: Ամիրայության գործակալությունը վերահսկում էր երկրի ներքին կյանքը, կազմակերպում հարկերի գանձումը, զորահավաքը և այլն: Կառավարման մարմիններ էին նաև կենտրոնական և տեղական դատարանները, որոնք բաղկացած էին պետական և հոգևոր-եկեղեցական ատյաններից:

Հայաստանի ամբողջական ազատագրումը և պետական կյանքի հետագա վերելքը խաթարվեց XIII դարի առաջին կեսին մոնղոլ-թաթարական հորդաների արշավանքներով և նրանց տիրապետության հաստատմամբ: Շահնշահ, Ավագ և Վահրամ Զաքարյանները, Էլիկում Օրբելյանը, Հասան-Ջալալ Դոլան և ուրիշ հայ իշխաններ որոշ դիմադրությունից հետո ստիպված եղան հպատակվել հզոր նվաճողներին: Հայաստանը նվաճողները երկիրը տրոհեցին երկու նորաստեղծ վարչատարածքային բաժանումների՝ վիլայեթների: Հարավարևմտյան նահանգները ներառվեցին Մեծ Հայքի վիլայեթի, իսկ Այրարատը, Սյունիքը, Արցախը և Գուգարքը՝ Գյուրջիստանի վիլայեթի կազմում: Զաքարյան իշխանաճյուղերը կառավարիչներ ճանաչվեցին իրենց նախկին տիրույթներում, Օրբելյանները՝ Սյունիքում, Հասան-Ջալալյանները՝ Արցախում:

Գյուրջիստանի վիլայեթի հայկական իշխանություններն իրենց ներքին ինքնավարությունը պահպանեցին մինչև XIV դարի առաջին կեսը: Զաքարյանները նախկինի նման վրաց Բագրատունիների արքունիքում շարունակում էին վարել բարձր պաշտոններ՝ հայկական մյուս իշխանությունների նկատմամբ ձևականորեն պահպանելով իրենց գերիշխանական իրավունքը:

Մեծ Հայքի վիլայեթում հայկական իշխանությունները գրեթե ոչնչացվեցին, իսկ նրանց կալվածներն անցան նվաճողներին:

Հայկական մի քանի մանր իշխանություններ գոյատևեցին Վասպուրականում (Վան, Ռշտունիք), Մոկսում և Աղձնիքում (Սասուն, Սավուր, Իսյան):

10. ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ (1080–1375 ԹԹ.)

ա. Կիլիկիայի բնաշխարհը: *Կիլիկիան տարածվում է Միջերկրական ծովափի հյուսիսարևելյան ընդարձակ երկրամասում: Այն արևմուտքից սահմանակից էր Փամփիլիային և Իսավրիային, հյուսիսից՝ Լիկաոնիային և Կապադովկիային, արևելքից՝ Կատաոնիային և Կոմմագենեին, հարավ-արևելքից՝ Ասորիքին: Կիլիկիայի հյուսիսարևելյան շրջանը կոչվել է Լեռնային Կիլիկիա կամ Գահ Կիլիկիո, հարավարևելյան ծովամերձ շրջանը՝ Դաշտային Կիլիկիա, արևմտյան շրջանը՝ Քարուտ Կիլիկիա:*

Տավրոսի լեռնաշղթան հյուսիս-արևմուտքից ձգվելով հարավ-արևելք՝ մինչև Անտիտավրոսի բազուկները և Կիլիկիան պատնեշելով փոքրասիական դրացի երկրամասերից՝ անցանելի է մի քանի կիրճերով, որոնք հնում պաշտպանված էին ամուր բերդերով: Կապադովիկայից Կիլիկիայի կենտրոն տանող գլխավոր լեռնանցքը կոչվում էր Դրունք Կիլիկիո, իսկ բերդը՝ Կուկլակ կամ Գուկլակ: Աքեմենյան Պարսկաստանի տիրակալության ժամանակ (Ք.ա. VI–IV դդ.) այդ կիրճով անցնում էր Շոշ-Սարդես «արքայական ճանապարհը» (այժմ այդ կիրճով անցնում է Բեուլին-Բաղդադ երկաթուղին): Տավրոսի մյուս կարևոր լեռնանցքը, որով Կիլիկիան կապվում էր Իսավրիային, գտնվում է Կալիկադնոս (Սելևկիա) գետի վերին հոսանքի շրջանում: Տավրոսի արևելյան հատվածում գտնվում է Կապանի լեռնանցքը, որով Կիլիկիան կապվում էր Կապադովկիային: Կիլիկիան Ասորիքից պատնեշվում էր Սև կամ Ամանոսի լեռնաշղթայով, որի գլխավոր լեռնանցքը կոչվում էր Դուռն Ասորվոց:

Կիլիկիան հարավից շուրջ 500 կմ երկարությամբ ողողվում է Միջերկրական ծովի ջրերով: Կիլիկիայով հոսող բազմաթիվ գետերից նշանավոր են Պիռամոսը (Ջահան, Ջիհուն), Սարոսը (Սիհուն), Կյուդնոսը (Տարսուս-չայ), Կալիկադնոսը (Սելևկիա), Լամոսը և այլն: Սկզբնավորվելով հյուսիսային լեռներից և ոռոգելով Կիլիկիայի դաշտերն ու անդաստանները՝ այդ գետերը թափվում են Միջերկրական ծովը: Լեռնային շրջանները ծածկված են մայրու, ձիթենու, եղևնու, սոճու, կաղնու անտառներով և ծաղկավետ մարգագետիններով: Անտառներում և լեռներում բնակվում են վայրի զանազան կենդանիներ (վիթ, եղնիկ, այծ-

յամ, ոչխար, քարայծ, հովազ, արջ, բորենի, շնագայլ, լուսան, վարազ և այլն) և հավքեր (արագիլ, արոս, արծիվ, անգղ, բու, բազե, սալամ, կաքավ, լոր, սիրամարգ, փասիան, սարեկ և այլն):

Կիլիկիայում միջին ջերմաստիճանը ձմռանը հասնում է +13°C, գարնանը՝ +21°C, ամռանը՝ +23°C, աշնանը՝ +20°C: Լեռնանտառային շրջանները նպաստավոր են անասնապահության, հացահատիկային բույսերի մշակման և փայտագործության համար: Արգասաբեր Դաշտային Կիլիկիայում աճում են բամբակ, բրինձ, նարինջ, կիտրոն, խաղող, շաքարեղեգ և այլն: Կիլիկիան հարուստ է արծաթի, արջասպի, երկաթի, պղնձի, կապարի, ծծմբի, աղի, բորակի և այլ հանքերով, ինչպես նաև բուժիչ ջերմուկներով:

բ. Հայերը Կիլիկիայում մինչև հայկական իշխանապետության կազմավորումը: Հնագույն ժամանակներից Կիլիկիայի հիմնական բնակիչներն էին փյունիկեցիները, ասորիները, հրեաները, հույները, հայերը: Հռոմեացի պատմիչ Ամմիանոս Մարկելինոսը վկայում է, որ Ալեքսանդրետի ծովածոցը հնում կոչվում էր Հայոց ծոց: Ք.ա. 83-66 թթ. Կիլիկիան մտել է Տիգրան II Մեծի տերության մեջ: Հովհաննես Ոսկեբերանը գրում է, որ 405 թ. Լեռնային Կիլիկիայում հանդիպել է հոծ խմբերով ապրող հայ բնակիչների, որոնք ունեին իրենց եկեղեցին, հոգևոր առաջնորդը և ազգային իշխանները: VII դարի կեսին արաբական նվաճողները հանդիպել են հատկապես Կիլիկիայի քաղաքներում ապրող հայերի համառ դիմադրության: VIII-IX դարերում արաբա-բյուզանդական պատերազմների ժամանակաշրջանում բազմահազար հայեր, ենթարկվելով կռվող կողմերի հալածանքներին ու բռնագաղթեցումներին, հաստատվեցին նաև Կիլիկիայում: X դարում Կիլիկիայի հայ բնակչությունն այնքան էր ստվարացել, որ Հայոց կաթողիկոս Խաչիկ Ա Արշարունին (973-992) այնտեղ հիմնեց հայկական նոր եպիսկոպոսություններ:

Հայերին վերաբնակեցնելով Կիլիկիայում և Բյուզանդիայի փոքրասիական սահմանային մյուս նահանգներում՝ կայսրությունը հետամտում էր քրիստոնյա հուսալի պատվար ստեղծել մահմեդական Արևելքի դեմ: Այդ նահանգներում հայերն ստեղծում էին զարգացած տնտեսություն, իսկ կայսերական բանակին մատակարարում մարտունակ ռազմիկներ և երևելի զորավարներ: Հայերի վերաբնակեցման քաղաքականությունը շարունակվեց մինչև սելջուկյան Թուրքերի զավթումների ժամանակաշրջանը: Վասիլ II կայսրը Վասպուրականից գաղթեցրեց 14-15 հազար հայ ընտանիք, որոնց մի մասը հաստատվեց Կիլիկիայում: Բյուզանդիայի միջամտությամբ, հայ Բագրատունիների, մյուս տեղական թագավորությունների ու իշխանությունների կործանումից հետո, սելջուկյան Թուրքերի կոտորածներից ու բռնություններից խուսափող բազմաթիվ ազնվատոհմիկներ՝ իրենց զինվորական ուժերի, վասալների ու հարկատու բնակչության հետ, տեղափոխվեցին Կիլիկիա և մերձակա փոքրասիական երկրամասեր:

Այդ շրջաններում տիրելով ընդարձակ հողակալվածների, քաղաքների և բերդերի՝ հայերն աստիճանաբար իրենց ձեռքում կենտրոնացրին նաև ռազմական, քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքը: Այսպես, 1042-1080 թթ. Դաշտային Կիլիկիայի կառավարիչն էր հայ իշխան Աբլղարիբ Արծրունին: 1073 թվականից Լամբրոն բերդաքաղաքը և շրջակա գավառները տիրեց Աբլղարիբ Արծրունու փեսան՝ գանձակեցի իշխան Օշինը: Պապեռոն բերդաքաղաքի և շրջակա գավառների տերերն էին Նաթանայելյան իշխանները: Քարուտ Կիլիկիայում իշխում էր Խաչատուրը: Կիլիկիայի արևելյան շրջանները մտնում էին Փիլարտոս Վահրամյանի իշխանապետության մեջ: Հայկական այդ իշխանություններից շատերը խարդախությամբ կործանվեցին IX դարի վերջին և XII դարի սկզբին խաչակրաց առաջին արշավանքների հետևանքով:

գ. Կիլիկյան Հայաստանը իշխանապետության ժամանակաշրջանում (1080-1198 թթ.): Ռուբինյան իշխանատան գլխավորությամբ Հայոց Մեծ իշխանության հիմնադրումը Կիլիկիայում արդյունք էր այն տևական պայքարի, որ հայերը մղեցին սելջուկյան Թուրքերի, Բյուզանդիայի և խաչակիր ասպետների դեմ XI դարի վերջին քառորդին և XII դարի առաջին կեսին: Ռուբինյանների ռազմական հաջողությունները գերազանցապես պայմանավորված էին Կիլիկիայում և հարակից երկրամասերում հայ բնակչության գերակշռությամբ, ինչպես նաև քաղաքական, տնտեսական և հոգևոր-մշակութային կյանքում նրա խաղացած առաջնակարգ դերով:

1079 թ. բյուզանդացիների ձեռքով աքսորյալ Հայոց թագավոր Գագիկ II Բագրատունու դավադրական սպանությունից հետո նրա թիկնազորի հրամանատարը՝ իշխան Ռուբենը, ամրացավ Բարձրբերդ, Կոպիտառ և Կոռոմզոյ բերդերում, համառ մարտերով 1080 թ. թոթափեց Բյուզանդիայի տիրապետությունը և Լեռնային Կիլիկիայում հիմնեց անկախ հայկական իշխանապետություն ու հռչակվեց Ռուբեն I (1080-1095) անունով:

Հայոց Մեծ իշխան Կոստանդին I-ը (1095-1100) հոր՝ Ռուբեն I-ի աճյունն ամփոփեց իր հիմնադրած Կաստալոնի վանքում և ժառանգեց նրա գահը: Հայրը նրան թողել էր կայուն և հզորացող իշխանություն: Իր կարճատև գահակալման տարիներին Կոստանդին I-ը սելջուկյան Թուրքերից և բյուզանդացիներից ազատագրեց Լեռնային Կիլիկիայի մի շարք գավառներ, 1098 թ. հիմնովին վերակառուցեց Վահկա բերդը և այն դարձրեց իր իշխանանիստ կենտրոնը: 1098-1099 թթ. նա օգնեց խաչակիր ասպետներին՝ Եդեսիայի, Անտիոքի և Երուսաղեմի գրավման ժամանակ, որի համար մեծարվեց «դքսի» և «մարկիզի» բարձրաստիճան տիտղոսներով: Կոստանդին I-ը դստերը կնության տվեց Եդեսիայի դուքս Ժոսլինին, փոխօգնության դաշինք կնքեց նրա հետ: Կոստանդին I-ի աճյունը նույնպես ամփոփվել է Կաստալոնի վանքում:

Կոստանդին I-ին հաջորդեց որդին՝ Թորոս I-ը (1100-1129): 1104 թ. նա պարտության մատնեց բյուզանդական զորքերին, ազատագրեց Սիս և Անազարբա քաղաքները, իր իշխանապետությանը միացրեց հայաբնակ Դաշտային Կիլիկիայի զգալի մասը: 1107 թ. Թորոս I-ը հայ իշխան Վասիլի աջակցությամբ Բերդուս բերդաքաղաքի մոտ ջախջախեց Կիլիկիա ներխուժած Իկոնիայի սելջուկյան սուլթանության զորքերը և ամրապնդեց երկրի հյուսիսային սահմանները: Իր դուստր Արտային կնության տվեց Եդեսիայի դուքս Բալդուին II-ին և դաշնակցեց նրան՝ ընդդեմ մահմեդական ամիրայությունների: 1111 թ. Թորոս I-ը մահապատժի ենթարկեց հույն իշխան Մանդալեի որդիներին, որոնք նենգաբար սպանել էին Գագիկ II արքային, բռնագրավեց նրանց կալվածները և Կիզիստրա բերդը: Նա Անազարբա քաղաքում կառուցեց ապարանքներ, Ս. Ջորավարաց եկեղեցին: Սսի մոտ հիմնեց Դրազարկի և Մաշկևորի հռչակավոր վանքերը,

որոնք դարձան մշակույթի և ուսման խոշոր կենտրոններ: Թորոս I-ի աճյունն ամփոփվեց Դրազարկի վանքում, որն այնուհետև դարձավ Ռուբինյանների տոհմական դամբարանը:

Թորոս I-ին հաջորդեց նրա կրտսեր եղբայր Լևոն I-ը (1129-1137), որի գահակալման առաջին տարում հյուսիս-արևելքից Կիլիկիա ներխուժեցին Իկոնիայի սելջուկյան սուլթանության զորքերը, իսկ հարավ-արևելքից՝ խաչակիր ասպետները: Սակայն Լևոն I-ը, խելամտորեն օգտագործելով սելջուկյան Թուրքերի և խաչակիրների միջև եղած հակասությունները, առանձին-առանձին ջախջախեց նրանց և արտաքսեց երկրից: 1132 թ. Լևոն I-ը բյուզանդական տիրապետությունից ազատագրեց Կիլիկիայի ծովեզրյա հայաբնակ շրջանները՝ Մամեստիա, Ադանա, Տարսոն և այլ քաղաքներով: 1135-1136 թթ. նա իր քրոջորդու՝ Եդեսիայի կառավարիչ Ջոսլինի և Հալեպի Զանգի ամիրայի դաշնակցությամբ հաղթական կռիվներ մղեց Անտիոքի դքսության և Երուսաղեմի թագավորության դեմ, ընդլայնեց հայկական իշխանապետության սահմանները դեպի հարավ-արևելք: Զարգացնելով իր ռազմական հաջողությունները՝ Լևոն I-ը Դաշտային Կիլիկիան լիովին ազատագրեց բյուզանդացիներից, հասավ Քարուտ Կիլիկիա և պաշարեց Սելևկիա բերդաքաղաքը: Բյուզանդական կայսրությունը զրկվեց ոչ միայն Կիլիկիայում ունեցած իր տիրույթներից, այլև ցամաքային ուղիով Ասորիքին կապվելու հնարավորությունից:

1137 թ. գարնանը Հովհաննես II Կոմնենոս կայսրը հայոց իշխանապետությունը կործանելու և Արևելքում կորցրած տիրույթները վերանվաճելու ծրագրով ներխուժեց Կիլիկիա: Հայկական զորքերը Լևոն I-ի գլխավորությամբ հարկադրված եղան դադարեցնել Սելևկիայի պաշարումը, ամրանալ Վահկա բերդում և Անազարբա քաղաքում, համառ մարտեր մղել թշնամու գերակշիռ ուժերի դեմ: 35-օրյա հերոսական պաշտպանությունից հետո Լևոն I-ը ճեղքեց թշնամու պաշարման օղակը և դուրս եկավ Անազարբայից, բայց շուտով ընկավ նոր շրջապատման մեջ և անձնատուր եղավ: Կայսրը նրան, կնոջը, նաև Ռուբեն և Թորոս որդիներին չղթայակապ ուղարկեց Կոստանդնուպոլիս: Լևոն I-ի մյուս երկու որդիները՝ Ստեփանեն և Մլեհը զերծ մնացին գերեվարումից, քանի որ ապաստանել էին իրենց ազգակա-

նի՝ Եդեսիայի կոմս Ջոսլին II-ի մոտ:

Բյուզանդական զորքերն այնուհետև համառ կռիվներից հետո գրավեցին նաև Վահկա բերդը, որի պաշտպանությունը գլխավորում էր Կոստանդին սպարապետը: 1137 թ. ընթացքում Բյուզանդիան լիովին ռազմակալեց Կիլիկյան Հայաստանը, որի քաղաքներում և բերդերում զետեղեց 20 հազար զինվոր: 1138 թ. Լեռնային Կիլիկիայի մի զգալի հատվածը զավթեցին Դանիշմանյան թուրքերը, իսկ 1140 թ.՝ Իկոնիայի սուլթանությունը:

1139 թ. Կոստանդնուպոլսում խոշտանգումներից մահացավ Ռուբենը, իսկ 1141 թ. վախճանվեց նաև Լևոն I-ը: Նրա մյուս որդուն՝ Թորոսին, հաջողվեց փախչել գերությունից և 1145 թ. ժամանել Կիլիկիա ու հռչակվել Հայոց Մեծ իշխան (1145-1169): Նա աստիճանաբար իր շուրջը համախմբեց հայրենասեր ուժերին և եղբայրներ Ստեփանեի ու Մլեհի եռանդուն համագործակցությամբ ձեռնամուխ եղավ Կիլիկյան Հայաստանի ազատագրմանը: Ազատագրական մարտերը ծավալվեցին հատկապես 1147-1148 թթ., երբ արդեն սկսվել էր Խաչակրաց երկրորդ արշավանքը, իսկ Բյուզանդիան, զբաղված լինելով Սիկիլիայի նորմանների և սերբերի դեմ պատերազմներով, չէր կարող նոր ուժեր կենտրոնացնել Թորոս II-ի դեմ: 1147-1151 թթ. սելջուկյան թուրքերի և բյուզանդացիների դեմ ձեռնարկած մարտերում հայկական զորքերն ազատագրեցին Կիլիկիայի Լեռնային և Դաշտային մասերը, լայնածավալ մի շարք ուրիշ տարածքներ՝ Ամուտա, Վահկա, Սիմանկլա, Առյուծբերդ, Անազարբա, Մամեստիա, Թիլ Համտուն բերդերով ու քաղաքներով հանդերձ, ձերբակալեցին Կիլիկիայում բյուզանդացի կառավարիչ նշանակված Թովմաս դքսին:

1151 թ. աշնանը խոշոր ուժերով Կիլիկիա ներխուժեց Անդրոնիկոս Կոմնենոսը: Նա 12 հազարանոց զորաբանակով պաշարեց Մամեստիա բերդաքաղաքը, որտեղ պաշտպանական դիրքեր էին գրավել հայկական զորքերը՝ Թորոս II-ի գլխավորությամբ: Անդրոնիկոս Կոմնենոսի զորքերին միացել էին նաև բյուզանդամետ մի շարք հայ իշխաններ՝ Լամբրոնի տեր Օշին Հեթումյանը, Պապեռոնի տեր Սմբատ Հեթումյանը, Բարձրբերդի տեր Վասիլը և նրա եղբայրը՝ Պառականի տեր Տիգրանը, ինչպես

նաև Ասկուռասի տեր Նաթանիլյանը: Չնայած բյուզանդական ուժերի գերազանցությանը՝ Թորոս II-ը վաղ լուսաբացին, հորդառատ անձրևի ժամանակ, անսպասելիորեն դուրս եկավ բերդաքաղաքից և ուժգին գրոհով հարվածելով՝ խուճապի մատնեց թշնամուն ու ջախջախեց նրան: Անդրոնիկոս Կոմնենոսը լքեց մարտադաշտը և ճողոպրեց Անտիոք: Մամեստիայի ճակատամարտում բյուզանդացիները կորցրին երեք հազար մարտիկ, գերի ընկան մեծաթիվ զինվորներ ու զորահրամանատարներ, որոնք զինաթափվեցին և ազատ արձակվեցին դրամական խոշոր փրկագնով: Մարտադաշտում սպանվեց Պապեռոնի տեր Սմբատը, գերեվարված մյուս հայ իշխանները նույնպես ազատվեցին դրամական փրկագին վճարելով և Լամբրոնի տեր Օշինի Հեթում որդուն պատանդ թողնելով:

1153-1154 թթ. Թորոս II-ը հակահարված հասցրեց Բյուզանդիայի դրդմամբ Կիլիկիա ներխուժած Իկոնիայի սելջուկյան սուլթան Մասուդի զորքերին: Իսկ Թորոս II-ի եղբայր Ստեփանեն, Տաճարական խաչակիր ասպետների զինակցությամբ, Ասորվոց դրունք լեռնանցքում շրջապատեց և գլխովին ոչնչացրեց սելջուկյան զորապետ Յաղուբի զորախումբը: 1155 թ. Իկոնիայի նոր սուլթան Կլիջ Արսլան II-ը հարկադրված եղավ դադարեցնել հակամարտությունները և Թորոս II-ի հետ կնքել հաշտության պայմանագիր:

1158 թ. աշնանը բյուզանդական 50 հազարանոց զորաբանակը՝ Մանվել Կոմնենոս կայսեր գլխավորությամբ, ռազմակալեց Դաշտային Կիլիկիան: Խուսափելով թշնամու գերակշիռ ուժերի դեմ բաց ճակատամարտից՝ Թորոս II-ի զորքերը ղիրքավորվեցին Կիլիկյան Տավրոսի դժվարամատույց լեռնաբազուկներում: Բայց չուտով Երուսաղեմի թագավոր Բոլդուին III-ի միջնորդությամբ կայսրը հաշտվեց Թորոս II-ի հետ, ճանաչեց նրա ինքնիշխանությունը:

1162 թ. Բյուզանդական կայսրությունը վերստին զավթեց Դաշտային Կիլիկիան և այնտեղ կառավարիչ նշանակեց Անդրոնիկոս Ֆերբենոսին, որը խաբեությամբ Ստեփանեին հրավիրեց Համուս բերդը և նենգորեն սպանեց: Թորոս II-ը և Մլեհը Դաշտային Կիլիկիան ազատագրելու և իրենց եղբոր վրեժը լուծելու վճռականությամբ դիմեցին հակահարձակման, ջախջախեցին

բյուզանդացիներին և ետ գրավեցին Տարսոն քաղաքից մինչև Թիլ Համդուն ընկած տարածքները:

1165 թ. Թորոս II-ը բյուզանդացիներին դուրս մղեց ամբողջ Քարուտ Կիլիկիայից և սահմանակից Իսավրիա երկրամասից: Այնուհետև նա պաշարեց Լամբրոն բերդը և փորձեց ընկճել վերստին ըմբոստացած Օշին իշխանին: Ներսես Շնորհալու միջնորդությամբ չուտով կողմերը հաշտվեցին՝ Օշինի հնազանդության պայմանով: Նույն թվականին Թորոս II-ի դեմ ըմբոստացավ Մլեհը, որը դժգոհ էր եղբոր վարած արտաքին քաղաքականությունից: Այդ պատճառով Թորոս II-ը Մլեհին նախ բանտարկեց, ապա արտաքսեց երկրից: Մլեհը ռազմական ծառայության մտավ Մոսուլի և Հալեպի աթաբեկ Նուր ադ-Դինի զորաբանակում՝ փոխարենն ավատ ստանալով Կիլիկիային հարավ-արևելքից սահմանակից Կուրիս բերդաքաղաքը՝ համանուն գավառով:

1166-1167 թթ. Թորոս II-ը հաջողությամբ ետ մղեց Բյուզանդիայի նոր հարձակումները, խափանեց նրա զավթողական փորձերը և ամրապնդեց Հայոց իշխանապետության սահմանները: 1168 թ. նա մտավ վանք և դարձավ կրոնավոր, իսկ գահը Թովմաս պայլի խնամակալությամբ թողեց իր անչափահաս որդի Ռուբեն II-ին (1168-1169): Նույն թվականին վախճանվեց Թորոս II-ը, որի աճյունն ամփոփվեց Դրազարկի վանքի տոհմական գերեզմանոցում:

1169 թ. Հայրենիքից արտաքսված Մլեհը Նուր ադ-Դինի ռազմական օգնությամբ ներխուժեց Կիլիկիա և բռնատիրեց Հայոց Մեծ իշխանի գահը: Թովմաս պայլը Ռուբեն II-ին ուղարկեց Հռոմկլա՝ Հայոց կաթողիկոս Ներսես Շնորհալու մոտ: 1170 թ. Ռուբեն II-ը մահացավ կասկածելի հանգամանքներում:

Մլեհ Ռուբինյանը (1169-1175) որդեգրեց կենտրոնախույս ուժերին և իր քաղաքական հակառակորդներին սանձելու, բարձրաստիճան հոգևորականության իրավունքներն ու արտոնությունները սահմանափակելու, վանքերում կուտակված մեծաքանակ հարստությունները հօգուտ պետական գանձարանի բռնագրավելու և կենտրոնական իշխանությունը հզորացնելու քաղաքականություն: Նա կտրուկ փոխեց նաև իր նախորդների վարած արտաքին քաղաքականության ավանդական շավիղը. Նուր ադ-Դինի դաշնակցությամբ իր զենքն ուղղեց բյուզանդացիների և խաչակրաց իշխանությունների դեմ: 1170 թ. և 1173 թ. Մլեհը պարտության մատնեց բյուզանդական զորքերին, կանխեց Դաշտային Կիլիկիայի նկատմամբ Կոնստանդին Կայամանոս զորավարի ոտնձգությունները, ընդլայնեց և ամրապնդեց Հայոց Մեծ իշխանապետության սահմանները: Սակայն դաշնակից Նուր ադ-Դինի մահից մեկ տարի անց՝ 1175 թ., Մլեհի ներքին և արտաքին քաղաքականությունից դժգոհ իշխանները պալատական դավադրությամբ սպանեցին նրան:

Հայոց բերդատեր իշխանների խորհրդի որոշմամբ Մլեհին հաջորդեց նրա Ստեփանե եղբոր ավագ որդին՝ 30-ամյա Ռուբեն III-ը (1175-1187): Ստեփանեի կինը՝ Հեթումյան իշխան Սմբատ Պապեռոնցու դուստր Ռիթան, ամուսնու եղեռնական մահից (1162 թ.) հետո իր որդիներ Ռուբենի և Լևոնի հետ 13 տարի ապրեց եղբոր՝ Բակուրանի ապարանքում: Վերջինիս ուղեկցությամբ Ռուբեն III-ը Տարսոն քաղաքի Ս. Սոֆիա մայր տաճարում ճոխ հանդիսավորությամբ օծվեց Հայոց Մեծ իշխան: Ռուբեն III-ը նախ պատժեց իր հորեղբոր դահիճներին և Մլեհի աճյունն ամփոփեց նրա հիմնած Մեծքար վանքում, իսկ Մլեհի այրիացած կնոջը, որն ապաստանել էր իր եղբոր՝ կաթողիկոս Գրիգոր Դ Տղայի մոտ, շնորհեց երեք բերդ ու արժանացրեց պատիվների:

Ռուբեն III-ի գահակալման սկզբնական տարիներին վերստին սրվեցին չրջակա մահմեդական պետությունների և Կիլիկյան Հայաստանի թշնամական հարաբերությունները: Օգտվելով իրավիճակից՝ բյուզանդական զորքերը գրավեցին Մամեստիա, Ադանա և Տարսոն քաղաքները, ռազմակալեցին Դաշտային Կիլիկիան, որտեղ Մանուիլ I կայսրը կառավարիչ-դուքս նշանակեց իր ազգական Իսահակ Կոմնենոսին: Սակայն չուտով Ռուբեն III-ը ջախջախեց բյուզանդական նվաճողներին, ազատագրեց Դաշտային Կիլիկիան, գերեվարեց և բանտարկեց Կոմնենոսին:

Մինչև 1180 թ. Ռուբեն III-ը վերացրեց բյուզանդական կայսրության վերջին հենակետները Կիլիկիայում, Ալեքսանդրետի ծովածոցից մինչև Սելևկիա գետը ձգվող ծովեզերքը մաքրեց օտար նվաճողներից, որով իր հաղթական ավարտին հասավ Կիլիկիայի հայերի չուրջ 100-ամյա ազատագրական պայքարը Բյուզանդիայի դեմ:

1181 թ. Երուսաղեմի թագավոր Բոլդուին IV-ի հետ Ռուբեն

III-ը կնքեց ռազմա-քաղաքական դաշինք, որն ամրապնդվեց Ռուբեն III-ի և խաչակրաց բարձրաստիճան իշխան Հեմֆրի III-ի դուստր Իզաբելի ամուսնությամբ: Փորձելով ընկճել վերստին ըմբոստացած Հեթում իշխանին՝ Ռուբեն III-ը Լամբրոն բերդը ենթարկեց երկարատև պաշարման (1182-1185): Հեթումի դրդմամբ 1185 թ. Անտիոքի դուքս Բոհեմունդ III-ը բարեկամություն հաստատելու պատրվակով Ռուբեն III-ին հրավիրեց Անտիոք, նենգորեն ձերբակալեց նրան, ապա խոշոր ուժերով փորձեց նվաճել Կիլիկյան Հայաստանի հարավարևելյան հողերն ու բերդերը: Սակայն Ռուբեն III-ի կրտսեր եղբայրը՝ Հայոց զորքերի սպարապետ Լևոնը, Թիլ Համդուն բերդի մոտ տեղի ունեցած ճակատամարտում ջախջախեց ներխուժողներին և Բոհեմունդ III-ին հարկադրեց բանակցություններ սկսել Ռուբեն III-ին փրկագնելու պայմանների շուրջ: Ռուբեն III-ը բանտարկությունից ազատվեց Անտիոքի դքսությանը Սարվանդիքար, Թիլ Համդուն և ՃԿեր սահմանային բերդերի զիջման գնով: Բայց Ռուբեն III-ի՝ հայրենիք վերադառնալուց անմիջապես հետո Լևոնը ետ գրավեց ոչ միայն վերոհիշյալ բերդերը, այլև Ամանոսյան լեռնաշղթայի հարավային ստորոտին տարածվող Հոռոսոս (Արասուս) գավառը ու ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող Պաղրաս (Գաստոն) բերդը: Ռուբեն III-ը, չունենալով արու զավակ, 1187 թ. մայիսի 6-ին Հայոց Մեծ իշխանի գահը փոխանցեց եղբորը՝ 40-ամյա Լևոնին, ինքը դարձավ կրոնավոր, բայց նույն թվականին էլ մահացավ և թաղվեց Դրազարկի վանքի տոհմական գերեզմանոցում:

դ. Կիլիկյան Հայաստանը թագավորության ժամանակաշրջանում (1198-1375 թթ.): Լևոն II-ը (1187-1219) գահակալման առաջին երեք տարիներին հարկադրված եղավ պայքարել շրջակա մահմեդական ցեղերի ոտնձգությունների դեմ: 1187 թ. գարնանը Սսի մոտ, Ռավինի դաշտում, նա գլխովին ջախջախեց Կիլիկիա ներխուժած թուրքմենական վաչկատուն ցեղերին, իսկ 1188 թ. աշնանը հարավարևելյան սահմաններից ետ մղեց Եգիպտոսի սուլթանության զորքերը: Այնուհետև զենքն ուղղելով դեպի արևմուտք և հյուսիս-արևմուտք՝ 1189-1190 թթ. ընթացքում Բյուզանդական կայսրությունից և Իկոնիայի սուլթանությունից ազատագրեց Պռականա, Սելևկիա և Ատալիա բեր-

դաքաղաքները, Կիլիկյան Հայաստանին միավորեց Իսավրիա երկրամասը, ինչպես նաև Լիկաոնիա և Պամփիլիա երկրամասերի զգալի մասը: Խաչակրաց երրորդ արշավանքին (1189-1193) ենթարկված կայսրությունը և սուլթանությունը հարկադրված եղան հաշտվել այդ կորուստների հետ:

1190 թ. մայիսին խաչակրաց զորքերը Հռոմեական սրբազան կայսրության (Գերմանիա) կայսր Ֆրիդրիխ I Շիկամորուսի առաջնորդությամբ Իկոնիայի սուլթանության վրայով մտան Կիլիկիա և ճամբարեցին Սելևկիա քաղաքի դիմաց, Կալիկադնոս գետի աջ ափին: Կայսրը դիմեց Լևոն II-ի նյութական և ռազմական աջակցությանը՝ փոխարենը խոստանալով նրան օծել Հայոց թագավոր: Հայկական պատվիրակությունը բարեկամաբար դիմավորեց Ֆրիդրիխ I կայսրին և բավարար քանակությամբ պարեն հասցրեց խաչակրաց սովյալ զորքերին: Հունիսի սկզբին հայկական մի նոր պատվիրակություն՝ Ներսես Լամբրոնացու գլխավորությամբ, ժամանեց Սելևկիա, որպեսզի կայսրին ուղեկցի Տարսոն՝ Լևոն II-ի թագադրման արարողությունն իրագործելու համար: Սակայն Կալիկադնոսի գետանցման ժամանակ Ֆրիդրիխ I-ը մահացու վիրավորվեց և հունիսի 10-ին վախճանվեց: Այնուհետև տարիներ շարունակ ձգձգվեց Լևոն II-ի թագադրման արարողությունը:

1193 թ. գարնանը Եգիպտոսի սուլթան Սալահ ադ-Դինը խոշոր ուժերով ներխուժեց Կիլիկիա՝ այն նվաճելու և Հայոց Մեծ իշխանությունը վերացնելու մտադրությամբ: Բայց սահմանային Սև գետի մոտ մարտի 4-ին սուլթանը հանկարծամահ եղավ, խափանվեց և նրա արշավանքը: Նույն թվականին Լևոն II-ը կալանավորեց Եգիպտոսի սուլթանությանը համագործակցող Անտիոքի դքսին՝ Բոհեմունդ III-ին, նրան հարկադրեց ճանաչել իր գերագահությունը և հրաժարվել Կիլիկիայի հարավարևելյան հողերի նկատմամբ ունեցած հավակնությունից: Այդ պայմանագիրն ամրապնդվեց Բոհեմունդ III-ի գահաժառանգ որդի Ռայմոնդի և Ռուբեն III-ի այրիացած դուստր Ալիսի ամուսնությամբ, որոնցից ծնված զավակը ժառանգելու էր Անտիոքի դքսության գահը:

1196 թ. կազմակերպված Խաչակրաց չորրորդ արշավանքի ժամանակ Գերմանիայի Հայնրիխ VI կայսրը Լևոն II-ի թագա-

չնորհումը հանձնարարեց իր կանցլեր Կոնրադ Կվերֆուրտեցուն և Մայնցի արքեպիսկոպոս ու Ս. Սաբինայի ծիրանավոր կարդինալ Կոնրադ Վիտտելսբախին: Նույն թվականին Լևոն II-ի թագը չտապեց ճանաչել նաև Բյուզանդիայի կայսր Ալեքսոս III Անգելոսը: 1198 թ. հունվարի 6-ին Տարսոն քաղաքի Ս. Սոֆիա մայր տաճարում Լևոն II-ը հայկական և լատինական ծեսերով օծվեց «Թագաւոր ամենայն Հայոց, և նահանգին Կիլիկէացոց, և Իսավրիոյ»: Ժամանակակիցները Լևոն II-ի թագադրությունը գնահատում են որպես համազգային մեծագույն քաղաքական իրադարձություն, հնամենի Հայոց թագավորության վերականգնում:

Ձգտելով ստեղծել կենտրոնացված ու կայուն միապետություն՝ Լևոն II-ը պատժեց և հնազանդեցրեց ներհակ իշխանապետներին, մասնավորապես՝ Լամբրոնի տեր Հեթումյաններին, իսկ կաթողիկոսական աթոռին դրեց իր համախոհ հոգևորականներին: Այնուհետև նա հետևողական պայքար ծավալեց իր վասալ Անտիոքի դքսության գահը ժառանգելու համար: 1209 թ. Լևոն II-ը հրապարակավ որդեգրեց Անտիոքի գահակալ Ռայմոնդի և Ռուբեն III-ի դուստր Ալիսի որդի Ռուբեն-Ռայմոնդին և նրան հռչակեց Հայոց գահաժառանգ: Հայոց արքայի դիվանագիտական ջանքերով 1210 թ. Ռուբեն-Ռայմոնդի իրավությունը Հայոց և Անտիոքի միացյալ գահի նկատմամբ ճանաչեցին նաև Գերմանիայի Կայսր Օթոն IV-ը և Հռոմի Իննոկենտիոս Գ պապը: 1211 թ. Օթոն IV-ի ուղարկած թագով Ռուբեն-Ռայմոնդը հանդիսավորությամբ օծվեց Լևոն II-ի գահաժառանգ: Այդ ճկուն քայլով Լևոն II-ը փորձում էր հիմնել քրիստոնյա միացյալ և հզոր պետություն, չահել Արևմուտքի պետությունների համագործակցությունը և համատեղ ուժերով դիմակայել մահմեդական ընդհանուր թշնամիներին: Սակայն մի քանի տարի անց նա խիստ հիասթափվեց ապաշնորհ ու ամբարտավան վարքի տեր Ռուբեն-Ռայմոնդից և նրան զրկեց Հայոց գահը ժառանգելու իրավունքից:

1218 թ. Լևոն II-ը Տարսոնում հյուրընկալեց Խաչակրաց հինգերորդ արշավանքի առաջնորդ, Հունգարիայի թագավոր Անդրաշ II-ին, նրա հետ կնքեց բարեկամության և փոխօգնության դաշնագիր: Պայմանագրի կետերից մեկի համաձայն Լևոն II-ի դուստր Ջապելը կնության էր տրվելու Անդրաշ II-ի համանուն

որդուն, որը պիտի ժամաներ Կիլիկյան Հայաստան՝ կրթությունն ու դաստիարակությունն այնտեղ չարունակելու համար: Բայց հանգամանքների բերումով Հունգարիայի արքայազնը հրաժարվեց Հայոց գահից:

1219 թ. մայիսի 1-ին իր մահկանացուն կնքեց 72-ամյա Լևոն II Մեծագործը, որի մարմինն ամփոփվեց Սսի Ս. Էջմիածին եկեղեցում, իսկ սիրտը՝ Ակների վանքում: Մինչ այդ նա Հայոց թագավորության և մանկահասակ գահաժառանգ Ջապելի խնամակալներ (պայլեր) էր նշանակել սպարապետ Կոստանդին Հեթումյանին, ազդեցիկ իշխան Ատանին ու Հովհաննես Ջ Սսեցի կաթողիկոսին: Լևոն II-ի մահից հետո Ռուբեն-Ռայմոնդը որոշ հայ իշխանների համագործակցությամբ փորձեց հաստատվել Հայոց գահին, սակայն ձերբակալվեց և նետվեց բանտ: Նույն բախտին արժանացավ նաև հայ իշխանների համաձայնությամբ Հայոց գահին բազմած Ֆիլիպը (1222-1225)՝ Բոհեմունդ IV-ի որդին:

Կոստանդին պայլը 1226 թ. իշխանական խորհրդի համաձայնությամբ Ջապելի հետ պսակեց իր որդի Հեթումին և նրան հռչակեց Կիլիկիայի Հայոց թագավոր: Հեթում I-ի գահակալման տարիներին (1226-1269) պետության կառավարման մի չարք կարևոր գործակալություններ վարում էին Հեթումյան տոհմի ներկայացուցիչները: Այսպես, Կոստանդինը կարգվեց թագավորահայր, նրա որդիներից Սմբատը՝ սպարապետ (գունդստաբլ), Լևոնը՝ բանակի սպառազինման ու մատակարարման հրամանատար (մարաջախտ), Օշինը՝ պայլ, Բարսեղը՝ Սսի արքեպիսկոպոս և Դրազարկի վանահայր, Հեթում I-ի քեռի Կոստանդինին հանձնարարվեց թագադրության պաշտոնը և այլն:

1240-ական թթ. մոնղոլ-թաթարական հորդաները ներխուժեցին Փոքր Ասիա և սպառնալից դարձան նաև Կիլիկյան Հայաստանի համար: Նրանց կողմից Կիլիկիայի նվաճման վտանգը կանխելու նպատակով 1248 թ. Սմբատ Սպարապետը, իսկ 1254 թ.՝ Հեթում I-ը մեկնեցին Կարակորում և Մոնղոլիայի Մեծ խանի հետ կնքեցին բարեկամության և փոխօգնության պայմանագիր: Մոնղոլները երաշխավորում էին Հայոց թագավորության սահմանների անխախտելիությունը, պարտավորվում ռազմական օգնություն ցույց տալ չրջակա մահմեդական պետությունների հարձակումների ժամանակ: Մոնղոլական տիրակա-

լության մեջ հայ առևտրականներին չնորհվեց արտոնյալ կարգավիճակ, որոշ չափով թեթևացվեց մայր Հայաստանից գանձվող հարկերը: Իր հերթին, Հայոց թագավորությունը պարտավորվում էր օգնել մոնղոլներին՝ Միջագետքը, Ասորիքը և Պաղեստինը գրավելու ժամանակ:

Հայ-մոնղոլական պայմանագիրը մինչև XIII դարի վերջը նշանակալից դեր խաղաց դրացի մահմեդական պետությունների դեմ հայերի մղած պայքարում:

1256 թ. Հեթում I-ը իր 20-ամյա որդի Լևոնին ձեռնադրեց «ձիավոր ասպետ» և հռչակեց թագաժառանգ: Հաղթահարվեցին ներքին երկպառակությունները, մտերմիկ հարաբերություններ հաստատվեցին Լամբրոնի բերդատեր իշխան Հեթումի հետ, որի դուստր Կեռանը 1162 թ. կնության տրվեց արքայազն Լևոնին: Բայց երկրի խաղաղ կյանքը խաթարվեց 1266 թ. ամռանը, երբ 30 հազարանոց զորաբանակով Կիլիկիա ներխուժեց Եգիպտոսի սուլթան Բիբարսը, որին միացավ նաև Հալեպի ամիրայության 15 հազարանոց զորքը: Հեթում I-ը դիմեց դաշնակից մոնղոլների ռազմական օգնությանը և զբաղվեց հիմնական ուժերի զորահավաքով: Հեթում I-ի որդիներ Լևոնը և Թորոսը 15 հազարանոց զորամասով շտապեցին կանխել թշնամու առաջխաղացումը: Օգոստոսի 23-ին Սև լեռների շրջանում, Մառի կոչվող լեռնանցքում, տեղի ունեցած ճակատամարտում հայկական զորամասը պարտվեց, Թորոսը զոհվեց, իսկ Լևոնը գերեվարվեց: Գերեվարվեց նաև շուրջ 40 հազար հայ: Այնուհետև սուլթանն ավարի մատնեց և ավերեց բազմաթիվ բնակավայրեր, այդ թվում՝ Սիս մայրաքաղաքը:

1268 թ. հուլիսին Հեթում I-ը մի քանի սահմանային բերդերի զիջման գնով հաշտություն կնքեց Եգիպտոսի սուլթանության հետ, գերությունից ազատված Լևոնին Տարսոն քաղաքի Ս. Սոֆիա մայր տաճարում 1269 թ. օծեց թագավոր, իսկ ինքը կրոնավորության մտավ Դրազարկի վանքում և նույն տարում մահացավ:

Լևոն III-ը (1269-1289) գահակալման սկզբնական խաղաղ ժամանակաշրջանում նպաստեց երկրի տնտեսության զարգացմանը, հովանավորեց հայ մշակույթի գործիչներին ու գիտնականներին, Կեռան թագուհու հետ կազմակերպեց ընտիր և հազվագյուտ ձեռագրերի հավաքման և ընդօրինակման գործերը: Այդ ամենի համար նա մեծարվեց «Գրասեր» պատվանունով:

Լևոն III-ի կառուցողական ձեռնարկերն ընդմիջվեցին 1275 թ. Եգիպտոսի սուլթանության նոր ներխուժմամբ: Սիս քաղաքի մոտ տեղի ունեցած ճակատամարտում թեև Սմբատ Սպարապետի գլխավորությամբ հաղթանակը չահեցին հայկական զորքերը, բայց կռիվները փոփոխակի հաջողություններով շարունակվեցին շուրջ մեկ տասնամյակ: 1285 թ. Լևոն III-ը Եգիպտոսի սուլթանի հետ ստորագրեց 10-ամյա խաղաղության պայմանագիր, որով կողմերը փոխանակեցին գերիներին, վաճառականներին չնորհվեց ազատ առևտրի իրավունք:

Լևոն III-ի հաջորդները, մասնավորապես՝ Հեթում II-ը (1289-1301), Լևոն IV-ը (1301-1308), Օշինը (1308-1320) և Լևոն V-ը (1320-1342), ենթարկվելով վերստին հզորացած Եգիտոսի սուլթանության և նրա մահմեդական դաշնակիցների հարձակումներին, սկսեցին ապարդյուն օգնություն աղերսել Հռոմի պապից և Արևմուտքի քրիստոնյա պետություններից: XIV դարում արտաքին թշնամիների հաճախակի հարձակումների և ներքին գժտությունների սրման հետևանքով խիստ թուլացավ Կիլիկիայի Հայոց թագավորության դիմադրողականությունը: Ծանր հետևանքներ ունեցավ հատկապես 1308 թ. Անազարբա քաղաքում մոնղոլների ձեռքով Լևոն IV թագավորի և նրան ուղեկցող 40 հայ ականավոր իշխանների սրատումը, որով վերջ դրվեց հայ-մոնղոլական համագործակցությանը: Եգիպտոսի սուլթանությունը քայլ առ քայլ զավթեց Կիլիկյան Հայաստանի զգալի մասը, ավերեց բազմաթիվ բնակավայրեր և հայ բնակչությանը մղեց արտագաղթերի: Կոստանդին IV (1345-1365) և Կոստանդին V (1363-1373) թագավորների գործադրած համառ ջանքերը նույնպես չհաղթահարեցին սրված քաղաքական ճգնաժամը: Եգիպտոսի սուլթանության և նրան միացած մահմեդական այլ պետությունների զորքերը 1375 թ. նվաճեցին Կիլիկյան Հայաստանը, գրավեցին Սիս մայրաքաղաքը և գերեվարեցին Լևոն VI Լուսինյան արքային (1373-1375): Դրանով վերջ դրվեց Հայոց վերջին թագավորությանը Կիլիկիայում:

1375-1424 թթ. երկրի կառավարումն իր ձեռքում կենտրոնացրած Կոստանդին զորավարը (Կոստանդին IV թագավորի

թոռը) փորձեց վերականգնել թագավորությունը, բայց չհասավ նպատակին: Այնուհետև որոշ հայ իշխանական տներ, ամրանալով լեռնային շրջաններում, ինչպես նաև Ուլնիա (Զեյթուն), Հաճն, Մարաշ և այլ բերդաքաղաքներում, իրենց կիսանկախ գոյություններ պահպանեցին մինչև XIX դարը: 1441 թ. Հայոց կաթողիկոսական աթոռը Սսից տեղափոխվեց Վաղարշապատ, որից հետո Սսի աթոռը կորցրեց իր ընդհանրական իրավասությունը: 1487 թ. Կիլիկյան Հայաստանը նվաճեցին օսմանյան թուրքերը:

Ե. Պետական կարգը: XI-XIV դարերում Կիլիկյան Հայաստանն իր հասարակական-քաղաքական և տնտեսական համակարգով զարգացած ավատապետություն էր: Հիմնականում զարգանալով մայր Հայաստանի ավատատիրական կարգերի ավանդույթներով՝ Կիլիկյան Հայաստանի հասարակական և պետական կարգը կրել է նաև բյուզանդական ու արևմտաեվրոպական պետությունների (մասնավորապես խաչակիր ասպետների միջոցով) ազդեցությունը, որն արտահայտվում էր նաև կառավարման մարմինների անվանումներում (գունդստաբլ, դուկ, կապիտան, կիր, կոմս, մարաջախտ, պարոն, պռոքսիմոս, ջամբոլայ, կանցլեր, սենեսկալ և այլն): Իշխանապետության սկզբնական ժամանակաշրջանում (1080-1198) հիմնականում ազատագրվել էին Կիլիկիայի հայաբնակ տարածքները, հաղթահարվել էր երկրի մասնատվածությունը, ձևավորվել էին պետական կառավարման մարմինները: Սակայն արքունիքը, նրան առընթեր Գերագույն ատյանը, բարձրագույն վարչական մարմիններն ու գործակալությունները վերջնականապես ձևավորվեցին և օրենսդրորեն հաստատվեցին թագավորության հռչակումից հետո, հատկապես Լևոն II Մեծագործի և նրա անմիջական հաջորդների ժամանակ:

Հայոց թագավորը, որպես պետության գլուխ և երկրի գերագույն տեր, օժտված էր բացառիկ իրավունքներով ու առանձնաշնորհումներով: Թագավորը վարում էր արտաքին հարաբերությունները, գլխավորում բանակը, պատերազմ հայտարարում, հաշտություն և պայմանագրեր կնքում, օրենքներ հրապարակում: Նրա հրահանգ-կարգադրություններով հատում էին դրամներ, հիմնում քաղաքներ ու բերդեր, մաքսեր գանձում ներմուծվող ապրանքներից, լուծում համապետական այլ կարևոր

բագույն հարցեր: Նա ընդունում և ուղարկում էր դեսպանություններ, իր մշտական դեսպաններն ուներ Բյուզանդիայում, Անգլիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Եգիպտոսում, Մոնղոլիայում և այլ պետություններում: Երկրի կառավարման կենտրոնի՝ արքունիքի մեջ մտնում էին Վերին (կամ Գերագույն) ատյանը և կենտրոնական կառավարման մարմինները՝ գործակալությունները: Վերին ատյանն օրենսդրական և խորհրդատրական մարմին էր, որի մեջ մտնում էին թագավորի վասալ իշխանները՝ բերդատեր պարոնները: Այն գումարվում էր ըստ անհրաժեշտության. մասնավորապես պատերազմի ու հաշտության հարցերը, պետական հանցագործությունները, իշխանների միջև տարաձայնությունները քննելու համար: Պարոնների Խորհրդի նիստերը նախագահում էր թագավորը կամ նրա հանձնարարությամբ «պարոնաց պարոն» տիտղոսը կրող արքունի մեծ պաշտոնյան: Խորհրդի վճիռները հրապարակվում էին թագավորի անունից և նրա վավերացմամբ:

Պետության կառավարումը թագավորն իրականացնում էր մի շարք գործակալությունների միջոցով, որոնցից կարևորները հանձնարարվում էին խոշոր ավատատերերին՝ բերդատեր իշխաններին, իսկ մանր ու միջին պաշտոնները՝ «ձիավոր» կամ «հեծելավոր» կոչվող ասպետական դասի ներկայացուցիչներին: Խնամակալության գործակալությունը վարում էր պայլը, որը համարվում էր թագավորի առաջին խորհրդականը և գահաժառանգի դաստիարակը, իսկ գահակալի անչափահասության դեպքում՝ պետության կառավարիչը: Սպարապետության գործակալը՝ գունդստաբլը, վարում էր ռազմական ուժերը և այդ գործում համարվում էր թագավորի առաջին տեղակալը: Այդ գործակալությունը հիմնականում վարում էր ռազմական տաղանդով օժտված արքայատան անդամներից մեկը: Մարաջախտության գործակալությունը վարում էր զինված ուժերի սպառազինման և պարենավորման գործերը: Թագադրության գործակալը գահակալի օծման հանդեսի ժամանակ նրա գլխին դնում էր թագը, կապում սուրն ու արքայամեծար նշանները, հսկում արքունի արարողությունները, վասալ իշխանների տեղերը՝ նվիրապետական կարգում: Ատենադպրության գործակալը՝ ջանցլերը, թագավորի անունից վարում էր արտաքին գոր-

ծերն ու դիվանագիտական հարաբերությունները, նրա հետ կազմում և իր մոտ պահվող պետական կնիքով վավերացնում հրովարտակները, շնորհագրերը, գրագրությունները: Ջանցլերին ենթակա դպիր-թարգմանները դեսպանական և դիվանագիտական այլ ծառայությունների էին ուղարկվում օտար երկրներ: Ջանցլերի գործակալությունը սովորաբար հանձնարարվում էր Սիս մայրաքաղաքի ընտրովի արքեպիսկոպոսին: Սեղանապետության գործակալությունը վարում էր սենեսկալը (սենեսջալ), որը հոգում էր արքունիքի եկամուտներն ու ծախսերը, համարվում թագավորի խորհրդական: Նրա օգնականը կոչվում էր ջամբոլայ կամ սենեկապետ, որը հսկում էր պետական դրոշը, թագավորի հանդերձարանը, գանձերը, կազմակերպում պալատական հանդեսները: Ջամբոլայի օգնականը կոչվում էր բոդլեր (մատռվակ), որը կազմակերպում էր պալատական ճաշկերույթներն ու խնջույքները: Մաքսապետության գործակալը՝ պոռքսիմոսը, ղեկավարում էր պետական եկամուտները, մասնավորապես՝ մաքսային և տուրքային գործերը, ներքին և արտաքին առևտրական հարաբերությունները: Նրան էին ենթարկվում քաղաքների, նավահանգիստների, մաքսատների վերակացուները՝ կապիտանները կամ մինապանները, ինչպես նաև ներքին հարկագանձումների, չուկաների, չափ ու կշիռների հսկման հետ կապված մանր պաշտոնյաները՝ դուկերը, ձեռներեցները, մուխթասիբները, «հարկևոր տանուտերները»: Պետական փոստի գործակալությունը ղեկավարում էր սուրհանդակապետը՝ ավագ չավուշը: Տիկնանց տիկինը՝ թագուհին, մասնակցում էր իշխանական և արքունի խորհրդի նիստերին, քաղաքական մեծ դեր խաղում հատկապես թագավորի բացակայության կամ մահվան դեպքերում: Նրա նախաձեռնությամբ և միջոցներով հիմնվում էին վարժարաններ, հիվանդանոցներ, եկեղեցիներ, ստեղծվում գրչության և արվեստի կոթողներ: Սմբատ Սպարապետի «Դատաստանագրքում» թվարկված են արքունի պալատում զանազան ծառայություն կատարող մանր պաշտոնյաներ:

Պետության կենտրոնական և տեղական կառավարման կարևոր մարմիններ էին դատարանները: Արքունի գերագույն ատյանը՝ Վերին կամ Մեծ դարպասը, թագավորի նախագահությամբ և նրա վասալ իշխանների մասնակցությամբ քննում էր

իշխանների վեճերը, նրանց օրինախախտումներն ու հանցագործությունները, գահաժառանգի հաստատման խնդիրները, համապետական նշանակություն ունեցող այլ հարցեր: Այն գերագույն իրավունքներ ուներ մյուս բոլոր դատարանների նկատմամբ, մասնավորապես՝ գանգատի ենթակա վճիռները հաստատելու կամ բեկանելու հարցերում: Մեծ դարպասի նիստերը թագավորի հանձնարարությամբ հաճախ նախագահում էր «Մեծ պարոն» կամ «Պարոնաց պարոն» տիտղոսով իշխանը: Պետական առաջին աստիճանի դատարանը Սսի արքեպիսկոպոսական ատյանն էր, որը ջանցլերի նախագահությամբ քննում էր բարձրադաս հոգևորականների, ինչպես նաև օտարերկրացիների վեճերն ու կատարած հանցագործությունները: Օտարերկրացիների առևտրական ընկերությունները և խաչակրաց հոգևոր ասպետական միաբանությունները ունեին սեփական դատարաններ, որոնցում քննվում էին իրենց համայնքի քաղաքացիական գործերը, իսկ քրեական գործերը քննվում էին հայկական դատարաններում: Պետական առաջին աստիճանի դատարան էր նաև պայլի ատյանը, որը Սսում գլխավորում էր արքունի պայլը, թագավորական քաղաքներում՝ գունդստաբլ դուկը, Այաս նավահանգստում՝ կապիտանը: Նրանք տեղերում քննում էին հայ և օտարերկրացի առևտրականների վեճերն ու թույլ տված խախտումները: Բուրջևս կոչվող դատարանները քննում էին բուրգերության՝ քաղաքային բնակիչների վեճերն ու քրեական գործերը: Իշխանական տիրույթներում գործող ատյանները քննում էին իշխանության ներսում կատարված քրեական և քաղաքացիական գործերը: Եկեղեցական բարձրագույն ատյանը՝ կաթողիկոսի գլխավորած սինոդը, դատում էր բարձրադաս զանցառու հոգևորականներին, իսկ թեմական (եպիսկոպոսական) և վանական ատյանները՝ տեղերի ստորադաս հոգևորականներին, հարկազանցներին, աղանդավորներին, կրոնի դեմ մեղանչողներին: Դատարանական ատյանների ատենադպիրները կոչվում էին «դիվանբաշիք», երդվյալ ատենակալները՝ «դիվնցիք», դատախազը՝ «հոգցող»: Կիլիկյան Հայաստանում դատավարություններն ընթացել են անվճար, իսկ ծառայողները ոռճիկ են ստացել դատական տուգանքներից գանձված գումարից (դրա 0.2 մասը):

Արտաքին թշնամիներից երկիրը պաշտպանելու համար ստեղծված էր մշտական, կանոնավոր և մարտունակ զորաբանակ, ռազմական նավատորմիղ, զենքի էր կոչված 40-50 հազար մարտիկ: Շարունակ կատարելագործվում էր ռազմական տեխնիկան, նորոգվում և կառուցվում էին բազմաթիվ բերդեր: Իշխանական զորամասերը՝ իշխանների հրամանատարությամբ, արքունի բանակին էին միանում թագավորի կամ սպարապետի հրամանով՝ պատերազմների, զորախաղերի կամ զորահանդեսների ժամանակ: Խաղաղ տարիներին արքունի մշտական բանակը տեղակայվում էր քաղաքներում, բերդերում, կապաններում, կատարում սահմանապահային ծառայություն: Հեծելազորը համալրում էին ազնվականները, հետևակը՝ քաղաքի ռամիկները և գյուղի շինականները: Ծառայության համար զինվորները ստանում էին ռոճիկ (հեծյալը 12, հետևակայինը՝ 3 ոսկեդրամ), իսկ ձիավոր ազնվականները՝ նաև կալվածներ և ռազմական ավարի որոշ մասը: Զորաբանակը ստորաբաժանվում էր ըստ զինվածության և ռազմական մասնագիտացման: Սպասարկող անձնակազմի մեջ մտնում էին զինվորական բժիշկները, գումակավորները, մատակարարները: Ազատագունդ հեծյալները զինված և զրահավորված էին խաչակիր ասպետների նման, հագնում էին կապույտ համազգեստ՝ ոսկեգույն խաչի ու առյուծի նշանով: Ծանրազեն հեծելազորի մարտիկները և ձիերը ծածկվում էին մետաղյա զրահով: Բանակում մտցված էր ռազմական ուսուցում ու դաստիարակություն, զինվորական կանոնադրությամբ սահմանված էին ծառայության ժամկետները, հրամանատարության կազմը, զորամիավորումների տեսակները, մարտիկների պարտականություններն ու իրավունքները, օրինախախտումների համար պատիժները, զինվորական աստիճաններն ու կոչումները:

Կիլիկիայի հայկական թագավորության անկումով և մահմեդական վայրագ նվաճողների տիրապետության հաստատման պատճառով արագորեն քայքայվեցին Հայոց պետականության գրեթե բոլոր կառույցները: Այնուհետև Հայ ժողովրդի դարավոր ոգորումները նպատակամղվեցին Հայաստան հայրենիքի ազատագրմանը և բուն հայրենիքում պետականության վերականգնմանը:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ
(XV դարի կես-XVI դար)

1. ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՆԱԽԱՔԱՅԼԵՐԸ

ա. Հայ ազատագրական լեգենդը: XI-XIV դարերի բուռն ու փոթորկալից իրադարձությունները Հայաստանում իրենց խոր, անջնջելի կնիքը թողեցին հայ կյանքի վրա: Մեկը մյուսին հետևող քաղաքական ցնցումները, Բագրատունյաց և Կիլիկիայի հայկական թագավորությունների կորուստները (1045, 1375), քոչվորական ցեղերի ավերիչ արշավանքներն ու երկարատև տիրապետությունը, հայ ժողովրդի հսկայական զանգվածների հարկադրական արտագաղթերն ու օտար ցեղերի վերաբնակեցումը Հայաստանում չափազանց թուլացրին հայերի դիմադրական կարողությունները: Սելջուկ-թուրքերը, իսկ այնուհետև թաթար-մոնղոլները համարյա առանց լուրջ դիմադրության գրավեցին Հայաստանը: Առանձին քաղաքների և ամրոցների դիմադրությունը, հերոսության և անձնազոհության առանձին դեպքերը չէին կարող փրկել իրավիճակը. Հայաստանը համեմատաբար հեշտությամբ նվաճվեց բարբարոս ցեղերի կողմից:

Տեղի ունեցածը, անշուշտ, բացատրելի է, եթե նկատի ունենանք, որ քոչվորների արշավանքներին նախորդած բյուզանդական տիրապետության կարճատև շրջանում (1045-1065) հույներն անխոհեմությամբ ու հանցավոր անհեռատեսությամբ ցրեցին հայկական զինական ուժերը: Նրանք Հայաստանում վարում էին հարկային ու տնտեսական ծանր քաղաքականություն:

Հայոց եկեղեցուն պարտադրվեցին անտեղի և անվերջանալի աստվածաբանական խճողված վեճեր, որոնց լուծումը հունական կողմը տեսնում էր հայերի դավանափոխության մեջ: Այս ամենը խիստ դժգոհություն էր առաջ բերում բյուզանդական իշխանությունների նկատմամբ, ու երբ սկսվեցին սելջուկյան արշավանքները, հայերը եկվորներին չդիմադրեցին ոչ միայն այն պատճառով, որ չունեին համապատասխան զինական ուժեր, այլև այն պատճառով, որ դա նշանակելու էր պաշտպանել Հայաստանում հաստատված բյուզանդական ատելի վարչակարգը: Հայոց բազմաքանակ բանակը (շուրջ 100 հազար զինվոր), որ Մերձավոր Արևելքի ամենամարտունակ ու կարգապահ զինական ուժերից էր, ցրված էր ու ոչնչացված: Այդ բանակը, որին դարեր շարունակ վիճակված էր պաշտպանել Արևմուտքը՝ Հայաստանը դարձնելով բնական պատնեշ արևելյան հորդաների անընդհատ կրկնվող արշավանքների դեմ, այլևս չկար. դեպի Բյուզանդիա և Արևմուտք տանող ճանապարհները մնացել էին անպաշտպան: Ուստի քոչվորները բաց սահմաններից հեշտությամբ մտան ու նվաճեցին Հայաստանը, ապա 1071 թ. ջախջախեցին բյուզանդական զորքերին ու հաստատվեցին նաև Փոքր Ասիայում, ուր նրանց ժառանգորդներն ապրում են առ այսօր:

Սելջուկյան դաժան տիրապետության պայմաններում է՛լ ավելի զանգվածային է դառնում հայերի արտագաղթը դեպի առավել ապահով վայրեր, դեպի Միջերկրական ծովի ափերը, Բյուզանդիայի խորքերը, Վրաստան և այլուր: Նույնը, ավելի ծավալուն ու ընդգրկուն, տեղի ունեցավ մոնղոլական արշավանքների ու տիրապետության շրջանում (XIII-XIV դդ.): Հայ ժողովրդի համար ամենաահավորը թուրքմենական ակ-կոյունլու և կարա-կոյունլու ցեղերի տիրապետության ժամանակաշրջանն էր (XIV-XV դդ.): Անընդհատ կրկնվող արշավանքներն ու պատերազմները, երկրի ամայացումն ու բնակչության գերեվարումները ստիպում էին հայ քաղաքական ու հոգևոր գործիչներին ելք փնտրել դուրս գալու ստեղծված սարսափելի իրավիճակից: Ահա այս պայմաններում էլ դրսևորվում են հայ ազատագրական շարժման անդրանիկ ձգտումները:

Ազատագրական շարժման առաջին գործիչները լավ էին

հասկանում, որ երկրից հայերի հեռանալն ու ցրվելը տարբեր գաղթավայրերում, տարբեր քաղաքական միջավայրերում հարցը չէր լուծում: Հայաստանը մնում էր գերված, իսկ գաղթահայերն էլ ժամանակի ընթացքում ձուլվում էին ու անէանում այլ ժողովուրդների մեջ: Տրամաբանական ու միակ ելքը մնում էր Հայաստանի անկախության վերականգնումը: Թե ինչպե՞ս և ի՞նչ ուժերով հարցերը մնում էին առկախ: Հայաստանի անկախության վերականգնման գաղափարն աստիճանաբար դառնում էր հասարակական բոլոր խավերին հուզող և հետաքրքրող խնդիր: Ճիշտ է՝ ազատագրական ուժերը սակավաթիվ էին ու ցրված, չկար որևէ կենտրոն, բայց կար ամենահիմնականը՝ գաղափարը, որը և հայ ազատագրական միտքը, վաղ թե ուշ, դնելու էր գործնական հողի վրա:

Հայ հոգևոր միջավայրն իրավիճակը փորձում էր բացատրել հայերի զանազան ու բազում «մեղքերով», աստվածային բարկությամբ: Քոչվոր ցեղերի արշավանքներն ու տիրապետությունը Հայաստանում, հայերի ցրվելն աշխարհով մեկ հետևանք էին համարվում երկնային պատժի, քանզի յուրաքանչյուր ոք, յուրաքանչյուր ժողովուրդ պետք է պատասխան տա իր արարքների համար: Եվ այժմ եկել էր ժամանակը, որպեսզի հայերը ապաշխարեին իրենց գործած մեղքերի համար: Ահա եկեղեցական այս միջավայրում էլ ծնվում է ազատագրական մտքի յուրօրինակ արտահայտություններից մեկը՝ հայ ազատագրական լեգենդը:

Այդ լեգենդի առաջին դրսևորումները վերագրվում են Հայոց կաթողիկոս Ներսես Ա Մեծին (353-373), որն իբր մահվան մահճում գուշակել էր ոչ միայն հայկական պետականության կործանումը, այլև Հայաստանում օտար ամենադաժան տիրապետությունների հաստատումը և հայերի աշխարհով մեկ ցրվելը: Տեսիլի համաձայն Հայաստանը կարող էր ազատագրվել միայն երկար տարիներ անց, բայց առանց արտաքին քրիստոնյա հզոր պետության օգնության, սեփական ուժերով դա հնարավոր չէր: Միջին դարերում ազատագրական լեգենդը մերթընդմերթ մտնում էր շրջանառության մեջ, բայց առավել տարածում գտավ սելջուկյան արշավանքների ժամանակ (XI դարի կեսեր): Հենց այս շրջանում է, որ նորից արծարծվեց հայերի «մեղավոր» ժո-

ղովուրդ լինելու պարագան: Ժողովուրդը պատժվում էր (Բագրատունյաց թագավորության կործանում, բյուզանդական և սելջուկյան տիրապետություններ, գերեվարում, երկրի տնտեսական քայքայում, արտագաղթ և այլն) իր գործած մեղքերի համար (Արիստակես Լաստիվերցի և ուրիշներ): «Մեղավոր» լինելու գիտակցությունը, բնականաբար, ծնում էր սեփական ուժերի նկատմամբ անվստահության բարդույթ: Այստեղից էլ ծագում էր, ինչպես հուշում էր հնամենի լեգենդը, աստվածային կամեցողությամբ որևէ արտաքին քրիստոնյա հզոր ազգի օգնությամբ ազատագրվելու համոզումը:

Խաչակիրների առաջին երևալն Արևելքում (1096, 1147) նոր ուժով բորբոքեց ու խմբագրեց տեսիլները, գուշակություններն ու մարգարեություններն այն մասին, թե շուտով գալու է Արևմուտքի քրիստոնյա մի հզոր թագավոր և փրկելու է հայ ժողովրդին, վերականգնելու է հայկական թագավորությունը: Թվում էր, թե այդ ժամանակներն արդեն եկել էին: Հայերը խաչակիրներին դիտում էին ու աջակցում որպես իրենց ազատարարների: Սակայն հետագա իրադարձությունները ցույց տվեցին, որ խաչակիրներին չէր վերապահված Հայաստանի փրկչի դերը: Դեռ ավելին, որոշ հայ իշխաններ (Մլեհ, Լևոն II) ստիպված էին անգամ մարտնչել նրանց դեմ, քանզի խաչակիրները՝ անգիտակից իրենց վերապահված «մեսիայի» դերին, հաճախ հայերի նկատմամբ ավելի դաժան էին վերաբերվում, քան մահմեդականները:

Ազատագրական լեգենդը տարբեր պատմաշրջաններում՝ կախված քաղաքական իրադրությունից, տարբեր «փրկիչներ» է մատնանշել, ազատագրական առաքելությունը վերագրել տարբեր հասցեատերերի: Հայերի համար ազատարար Արևմուտքը սկզբում Բյուզանդիան էր (նշվում էին որպես հոմեացիներ): Կ. Պոլսի անկումից հետո (1453) ազատարար Արևմուտքը տեղափոխվեց էլ ավելի արևմուտք՝ դեպի Հռոմ, դեպի Ֆրանկների աշխարհը: Ազատագրական առաքելությունը հերթականությամբ վերապահվում էր մե՛րթ Հռոմի պապին ու Վենետիկի դոժին, մե՛րթ Բուրբոններին, Հաբսբուրգներին ու գերմանական տարբեր մեծ իշխաններին և ի վերջո՝ ռուսաց ցարին:

Հայ ազատագրական շարժման կարևորագույն առանձնահատկությունը հենց սկզբից նրա երկփեղկվածությունն էր: Հայաստանը գտնվում էր երկու և երբեմն ավելի տիրապետությունների ներքո, ուստի հայ ազատագրական միտքը ի վիճակի չէր մշակելու միասնական ազգային-ազատագրական գաղափարախոսություն:

Արևմտահայ և արևելահայ ազատագրական շարժումները փոխկապակցված չէին: Տարբեր էին Պարսկաստանի և Թուրքիայի քաղաքական պայմանները, տարբեր՝ դաշնակիցները, հետևաբար տարբեր էին արևելահայ ու արևմտահայ ազատագրական շարժումների մեթոդներն ու հեռանկարները, քաղաքական-ռազմական հավանական գործընկերները: Արևելահայ գործիչները հայ ժողովրդի ազատարարի դերը երբեմն հատկացնում էին մի այնպիսի ուժի, որը կա՛մ Թուրքիայի դաշնակիցն էր, կա՛մ անտարբեր էր վերջինիս նկատմամբ: Լինում էր և հակառակը: Նման պայմանները պարտադրում էին հայերին լինել ավելի ճկուն, իրատես, գործել խիստ զգույշ:

Հայ ազատագրական շարժման գլխավոր առանձնահատկություններից էին կողմնորոշման հիմնահարցի անընդհատ փոփոխությունները, խմբագրումները, նոր հասցեատիրոջ երկար ու ձիգ որոնումները:

Մյուս առանձնահատկությունը դավանափոխության խնդիրն էր: Կաթոլիկ Արևմուտքը, օգտագործելով հայերի աղերսագիր-դիմումագրերը, անմիջապես առաջ էր քաշում դավանափոխ լինելու նախապայմանը: Ձգանկանալով խոչընդոտել ազատագրական շարժման գործընթացը և բարդացնել հայ-արևմտաեվրոպական փոխհարաբերությունները՝ հանուն գերխնդրի, հայկական կողմը հանդես էր գալիս դավանական ինչ-ինչ զիջումներ կատարելու պատրաստակամությամբ: Մանավանդ երբեմն-երբեմն չրջանառության մեջ էր դրվում մեկ ուրիշ մտացածին փաստաթուղթ՝ այսպես կոչված «Դաշանց թուղթը», ըստ որի իբր քրիստոնյա Արևմուտքը հանձինս Հռոմի Կոստանդինոս Մեծ կայսեր (IV դար) իր վրա պատասխանատվություն էր վերցրել օգնել քրիստոնյա Հայաստանին: Կոստանդինոսը իբր Հայոց Տրդատ III թագավորի հետ կնքել է հատուկ պայմանագիր՝ «Դաշանց թուղթ», և հավաստել իր և իր բոլոր հաջորդների հավատարմությունը դաշինքին, Հայաստանին օգնելու պատ-

բաստակամությունը: «Դաչանց Թղթի» գաղափարները լայն տարածում ունեին Կիլիկյան Հայաստանում, մասնավորապես XIII-XIV դարերի հայ-լատինական բանակցությունների ժամանակ: Այն շրջանառության մեջ մտավ նաև հետագայում՝ XVI-XVII դարերում, երբ հայ ազատագրական շարժման գործիչներն սկսեցին իրենց դեգերումներն Արևմուտքում:

բ. Հայկական թագավորության վերականգնման փորձ XV դարի կեսերին: Հայկական պետականության անկումից հետո, ինչպես տեսանք, հայ ազատագրական միտքը երբեք չլքեց այն վերականգնելու գաղափարը: XIV-XV դարերում այդ մտայնությունը հանդես էր գալիս ինչպես գեղարվեստական գրականության մեջ, այնպես էլ փոքրածավալ պատմական հիշատակարաններում: Դրանց հեղինակները տարբեր առիթներով շեշտելով երկնային թագավոր Հիսուս Քրիստոսի միջոցով հայոց երկրային թագավորության վերականգնման հնարավորությունը՝ միշտ վառ էին պահում ազատագրության ոգին ու ազգային ինքնագիտակցությունը:

Հայաստանի ազատագրության, հայկական պետականության վերականգնման գաղափարի հիմնական կրողը, բնականաբար, պետք է դառնար ազնվականությունը: Սակայն հայկական իրականությունն այդ ժամանակ չուներ ազնվականական կազմակերպված համապատասխան միջավայր: Ուստի ազատագրական գաղափարների հիմնական կրողը հենց սկզբից դարձավ հայոց եկեղեցին, որի բարձրաստիճան սպասավորներից շատերն ազնվականական ընտանիքների շառավիղների՝ սքեմ հագած ներկայացուցիչներ էին:

XIV-XV դարերում հայ իշխանական բոլոր տները իրենց քաղաքական ու տնտեսական դիրքերը զիջել էին Հայաստանում հաստատված քոչվոր, ասպատակ ցեղերին: Դա հայ ազնվականության մասնատման, հողազրկման և անէացման ժամանակաշրջան էր: Այնուհանդերձ Հայաստանի տարբեր վայրերում դեռևս իրենց անմխիթար գոյությունն էին պահպանում հայ իշխանական տների որոշ շառավիղներ: Սյունիքի առանձին տարածքներ պատկանում էին Օրբելյան ընտանիքի անդամներին: XV դարի կեսերին այստեղ հիշատակվում են Բիշքեն Օրբելյանն

ու նրա որդի Ռուստամը: Խաչենում շարունակում էին իշխել Հասան-Ջալալյանների, Ծարում՝ Դոփյանների, Արագածոտնում՝ Վաչուտյանների, իսկ Վայոց ձորում՝ Պռոշյանների սերունդները: Քիչ թե շատ քաղաքական հզորություն ունեին Մակվի (մինչև 1426 թ.) և Համշենի (մինչև 1489 թ.) հայկական իշխանությունները: Հայկական փոքրիկ իշխանություններ գոյություն ունեին նաև Զեյթունում, Շատախում, Խութում, Սասունում և էլի մի քանի վայրերում: XV դարի կեսերին առանձնակի դեր և նշանակություն ունեին հատկապես Աղթամարում և շրջակայքում ծվարած Արծրունյաց թագավորական տան արյունակիցները՝ Սեֆեդինյանները: Հենց Վասպուրականում է, որ, առավել քան այլուր, զուրգուրվում էին հայկական պետականության հիշատակները: Վասպուրականի ժամանակագիրները իրենց հիշատակարաններում բազմիցս դիմում էին Ամենարարձրյալին ու խնդրում «վերանորոգել հայոց ազգի խափանված թագավորությունը»: Հայաստանի պետականության վերականգնման գաղափարը այստեղ երբեք լքված չէր: Եկեղեցական միջավայրում փայփայվում էր այն հույսը, թե աստվածային բարեխոսությամբ կամ որևէ հզոր տիրակալի միջամտությամբ ի վերջո այն կկատարվի: Եվ պատահական չէ, որ XV դարի կեսերին դարձյալ շրջանառության մեջ էր դրվում ազատագրական վաղեմի լեզենդը՝ ենթարկվելով սակայն մի կտրուկ ու զարմանալի խմբագրման: Հայկական թագավորության վերականգնումը վերապահվում էր ոչ թե Արևմուտքին՝ Հռոմի պապին, այլ արևելյան մի հզոր միապետի՝ կարա-կոյունլու Թուրքմեն տիրակալ Ջահանշահին: Այս «խմբագրումը» բացատրվում էր Թուրքմեն տիրակալի այն յուրահատուկ, մեղմ ու հեռատես քաղաքականությամբ, որ նա վարում էր ընդհանրապես իր հպատակ քրիստոնյաների և մասնավորապես հայերի նկատմամբ: Մյուս կողմից՝ իրադարձություններին չափազանց գործուն միջամտություն էր ցուցաբերում Աղթամարի Զաքարիա Գ կաթողիկոսը: Նա ժամանակի հայ ազատագրական շարժման գործիչներից ու գաղափարախոսներից էր, Արծրունի-Սեֆեդինյան ընտանիքի շառավիղներից՝ օժտված մտավոր բարձր կարողություններով: Զաքարիան հմուտ դիվանագետ էր, նաև զինվորական գործիչ, հայ

հոգևորականության այն եզակի դեմքերից մեկը, որ սուրն ու խաչը զուգակցում էր նույն հաջողությամբ: Նա ստեղծել էր լավ զինված ու կարգապահ մի զորաջոկատ, որը պահպանում էր կաթողիկոսական աթոռն ու Արծրունյաց կալվածքները մահմեդականների անընդհատ հարձակումներից: Այդ զորաջոկատը բազմիցս տպավորիչ հաղթանակներ էր տարել ասպատակիչ քրդերի դեմ: Կաթողիկոսին անձամբ ճանաչում և հովանավորում էր Ջհանշահը, որը բազմիցս առիթներ էր ունեցել գնահատելու նրա հավատարմությունն ու հուսալիությունը:

Ինքը՝ Զաքարիա Գ-ն, ավելի մեծ ակնկալիքներ ուներ Թուրքմեն տիրակալից. տենչում էր նրա օգնությամբ նստել Հայոց ընդհանրական կաթողիկոսի գահին: Եվ իրոք, օգտվելով շահի բարեհաճությունից՝ նրա աջակցությամբ Զաքարիան ուղղակի գրավեց Ամենայն Հայոց կաթողիկոսի գահը (1460 թ. աշուն): Կաթողիկոսական զույգ աթոռների՝ Ս. Էջմիածնի և Աղթամարի միավորան միջոցով նա ձգտում էր հայ ժողովրդի քաղաքական միասնությանը և այն միտքն էր զարգացնում, թե Վասպուրականը Հայոց ոչ միայն հոգևոր, այլև քաղաքական իղձերի իրագործման կենտրոնն է, քանզի միայն այստեղ էին պահպանվել Հայոց հինավուրց թագավորների շառավիղները՝ հանձինս իր տոհմակիցների: Պատահական չէ, որ Զաքարիան իրեն անվանում էր «Գագիկ մեծ թագավորի (իմա՝ Գագիկ Արծրունու) արմատից և ցեղից»:

Որոշ ժամանակ անց Զաքարիան փորձում է իրականություն դարձնել իր իղձերից մեկ ուրիշը: 1463-1464 թթ. նա բանակցություններ է վարում Ջհանշահի հետ՝ Վասպուրականի հայկական թագավորությունը վերականգնելու շուրջ և անգամ նրան ներկայացնում գահի հավակնորդին, որն իր եղբորորդի Սմբատ Արծրունի-Սեֆեդինյանն էր: Բանակցությունների ժամանակ Զաքարիա Գ-ի անակնկալ մահը չկասեցրեց այդ ուղղությամբ տարվող կարևոր աշխատանքները: Նոր կաթողիկոս Ստեփանոս Դ Տղան հաջողությամբ շարունակեց բանակցությունները և շահից համաձայնություն ձեռք բերեց՝ Սմբատին Հայոց թագավոր օծելու վերաբերյալ: 1465 թ. սկզբներին կաթողիկոսը Աղթամարի Ս. Խաչ մայր եկեղեցում Հայոց մեծամեծների և բարձրաստիճան հոգևորականների ներկայությամբ հանդիսավորությամբ Սմբատ Արծրունուն օծեց Հայոց թագավոր: Ժամանակակիցները ցնծությամբ են արձանագրել այս իրողությունը. «Այնժամ պարոն Սմբատին օծեցին Հայոց թագավոր իր նախնի Գագիկի օրինակով: Եվ թո՛ղ Փրկիչը զորացնի նրա թագավորությունը, բարձրացնի նրա աթոռը, քանզի վաղուց Հայոց ազգը թագավոր չէր տեսել»:

Անշուշտ, խիստ կարևորելով հայկական պետականության վերականգնման ուղղությամբ կատարված այս փորձը և բարձր գնահատելով նրա հիմնական դերակատարներին, պետք է նաև նշել, որ XV դարում «թագավորական տուն», «թագավոր Հայոց» հասկացություններն այլևս չունեին այն նշանակությունը, ինչ առաջներում: 1465 թ. իրադարձությունը ավելի շատ հոգեբանական ու ազգային ինքնագիտակցության արժեք ուներ, քան պետական որևէ իմաստ: Նախ, Սմբատի թագավորությունը չուներ և չէր էլ կարող ունենալ համահայկական բովանդակություն: Ճիշտ է, 1465-1471 թթ. ընթացքում հայկական մի շարք ձեռագրերում նա հիշատակվում է իբրև «Հայոց թագավոր», սակայն նրա թագավորության տարածքը սահմանափակված էր միայն Աղթամար կղզու և առափնյա որոշ տարածքով: Երկրորդ, որքան էլ Թուրքմեն տիրակալները, ելնելով ինչ-ինչ նկատառումներից, բարյացակամ վերաբերմունք ունեին հայերի քաղաքական որոշ ձգտումների նկատմամբ, բայց բնավ չահագրգռված չէին ընդհանրական հայկական թագավորության վերականգնմամբ: Իսկ տեղական առանձին «թագավորությունների» երևան գալը չէր կարող խանգարել նրանց: Որպես «Հայոց թագավոր», Սմբատ Արծրունին մի վերջին անգամ հիշատակվում է 1471 թ., այնուհետև հիշատակագիրները նրա մասին լռում են:

1465 թ. իրադարձությունը որոշակի հետաքրքրություն է ներկայացնում հայ ազատագրական մտքի պատմության տեսակետից և ցուցանիշ է այն բանի, որ հայկական պետականության գաղափարը երբեք չի մոռացվել Հայաստանում:

2. Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԵՎ ՍԵԲԱՍՏԻԱՅԻ ԳԱՂՏՆԻ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎՆԵՐԸ

Համոզվելով, որ սեփական ուժերով հնարավոր չէ ազատագրվել օտարի տիրապետությունից՝ հայ ազատագրական գաղափարի կրողները հրավիրում էին գաղտնի ժողովներ, որոնցում քննարկման առարկա էր դառնում Հայաստանի ազատագրության խնդիրը:

Նման առաջին խորհրդաժողովը հրավիրվել է 1547 թ. Ս. Էջմիածնում: Նրա կազմակերպիչն ու ոգին Ամենայն Հայոց կաթողիկոս Ստեփանոս Ե Սալմաստեցին էր: Սա մտավորական անձնավորություն էր, բանաստեղծ ու երաժիշտ, ուներ խոր և բազմակողմանի գիտելիքներ, գիտեր մի քանի օտար լեզուներ, նախապես պաշտոնավարել էր Կ. Պոլսում, Լեհաստանում և Մոսկովյան Ռուսիայում, քաջածանոթ էր ժամանակի քաղաքական իրադարձություններին: Խորհրդաժողովը, որին մասնակցում էին արևելահայ բարձրաստիճան հոգևորականներ, մեծատուն առևտրականներ և մելիքներ, ընդունում է մի «Աղերսագիր» և որոշում կաթողիկոսի գլխավորությամբ պատվիրակություն առաքել Վենետիկ ու Հռոմ:

1548 թ. պատվիրակությունը Կ. Պոլսի վրայով ուղևորվում է Եվրոպա: Քաղաքական երկխոսության առաջին կենտրոնը Վենետիկն էր: Այստեղ պատվիրակությանը ընդունում է հանրապետության դոժը և մանրամասն ծանոթանում հայերի քաղաքական ակնկալիքներին: Պահպանված փաստաթղթերից հայտնի է դառնում, որ հայկական կողմն իր հույսը հիմնականում կապել էր Վենետիկի հետ:

Այնուհետև բանակցությունները շարունակվում են Հռոմում, ուր հայկական պատվիրակությունը ժամանել էր 1549 թ. սկզբներին: Հուլիոս III պապի կողմից հանդիսավորությամբ ընդունված պատվիրակությունը այստեղ հանդիպում է լուրջ դժվարությունների: Վատիկանում հայ-հռոմեական բանակցությունները հիմնականում կրում էին դավանաբանական բնույթ, իսկ ազատագրական խնդիրները մղվել էին հետին դիրքեր: Քաղաքական երկխոսության փոխարեն Հռոմի կղերապետը առաջադրեց զույգ եկեղեցիների միության հին, չարչրկված հիմնահարցը: Հանուն քաղաքական ակնկալությունների Հայոց կաթողիկոսը 1549 թ. օգոստոսի 2-ին ստիպված էր գրավոր հնազանդություն հայտնել Հռոմի պապին: Անչուշտ դա դիվանագիտական զիջում էր և չատ հեռու էր հայերի իրական քաղաքական նկրտումներից:

Բանակցությունների հաջորդ խարսխակայանները դարձան Վիեննան, ապա՝ Վարշավան, ուր Ստեփանոս Ե-ն հանդիպումներ ունեցավ Կարլոս V կայսեր և Սիգիզմունդ II թագավորի հետ: Ավարտելով դիվանագիտական բանակցություններն Արևմուտքում՝ հայկական պատվիրակությունը 1551 թ. Ռուսաստանի վրայով վերադարձավ հայրենիք:

Եվրոպայում Հայոց կաթողիկոսի վարած բանակցությունները որևէ չոչափելի, դրական արդյունք չտվեցին: Թուրքական ռազմակալման եզրին հայտնված Եվրոպան, որ մեծ դժվարությամբ պաշտպանական պատերազմներ էր մղում, չէր ցանկանում և չէր էլ կարող որևէ գործուն միջամտություն ունենալ հայերի քաղաքական ճակատագրում: Դավանաբանական ու կրոնական պայքարով ապեցուն եվրոպական միջավայրում Հռոմի պապերն այլևս չէին կատարում արևմտաեվրոպական ընդհանուր միապետի դեր և հետևաբար չէին կարող հակաթուրքական դրոշի ներքո համախմբել տարաբաժան ուժերը: Ուստի հայկական դիվանագիտության առաջին երկխոսությունները քաղաքական իմաստով անհեռանկար էին: Այնուամենայնիվ, Ստեփանոս Սալմաստեցու առաքելությունը ավելորդ չէր. այն օրակարգի հարց դարձրեց Հայաստանի ազատագրության խնդիրը և ուղի հարթեց հետագա քաղաքական երկխոսությունների համար:

Մի քանի տարի անց՝ 1562 թ. մայիսի 20-ին, Հայոց կաթողիկոս Միքայել Ա Սեբաստացին Սեբաստիայի Ս. Աստվածածին մայր եկեղեցում հրավիրում է գաղտնի խորհրդաժողով: Ի տարբերություն կաթողիկոս Ստեփանոս Ե Սալմաստեցու կողմից 1547 թ. Էջմիածնում հրավիրված ժողովի, այս ժողովին մասնակցում էին ինչպես արևելահայ, այնպես էլ արևմտահայ գործիչներ և, որ չատ կարևոր էր, բարձրացվեց բովանդակ Հայաստանի ազատագրության հարցը: Խորհրդաժողովը որոշում ընդունեց

Եվրոպա ուղարկել մի նոր պատվիրակություն, որի ղեկավար նշանակվեց Աբգար Եվդոկացին (Թոխաթեցի)՝ բանիմաց մի անձնավորություն, որ սերում էր Արծրունյաց արքայական ընտանիքից:

1563-1564 թթ. Աբգար Եվդոկացին բանակցություններ է վարում Վենետիկի Հանրապետության դոժի՝ Հերոնիմոսի հետ: Պատահական չէ Աբգարի եվրոպական բանագնացության այս նպատակակետը, քանզի XVI դարի կեսերին Վենետիկի Հանրապետության և Օսմանյան կայսրության առճակատումը հասել էր իր գագաթնակետին և բնական է, որ Վենետիկում հայերը կարող էին դիտվել որպես հակաթուրքական դաշնության հնարավոր բարեկամներ: Այս շրջանում Վենետիկը հզորագույն ծովային տերություն էր. ուներ 3300 ռազմանավ, 36 հազար ծովային հետևազոր և այլ ուժեր:

Հայաստանի նկատմամբ Վենետիկի հովանավորության խոստումը ստանալուց հետո Աբգարը ուղևորվում է Հռոմ: 1564 թ. նոյեմբերին նա ընդունվում է Պիոս IV պապի կողմից և նրան ներկայացնում Սեբաստիայի խորհրդաժողովի ընդունած ծածկագիր փաստաթղթերը: Դիմումագրում դարձյալ շեշտվում էր այն գաղափարը, թե հայերը կընդունեն պապի գերիշխանությունը, եթե կաթոլիկ Եվրոպան իրենց օգնի ազատագրվելու իսլամի տիրապետությունից: Հատկանշական է, որ Հռոմի կղերապետը ապագա ազատագրված Հայաստանի թագը խոստանում է Աբգար Եվդոկացուն, որին ուղարկում է Հայաստան՝ հայ-հռոմեական հետագա բանակցությունների համար Հայոց կաթողիկոսին Հռոմ առաջնորդելու: 1569 թ. Աբգար Եվդոկացին մանրամասն զեկուցագիր է ներկայացնում Միքայել Սեբաստացուն՝ իր քաղաքական առաքելության վերաբերյալ: Չնայած Աբգարի բանակցությունները Եվրոպայում որևէ դրական արդյունքի չհանգեցրին, բայց Հայոց ազատագրության գաղափարակիրները չէին վհատվում և շարունակում էին ապավինել կաթոլիկ Արևմուտքի օգնությանը:

1575 թ. Հայոց կաթողիկոս Թադևոսը դարձյալ ուղևորվում է Եվրոպա և բանակցություններ վարում Հռոմի պապի, Վենետիկի դոժի և Լեհաստանի թագավորի հետ: Նույն թվականին Սսի Խաչատուր Բ Ջեյթունցի կաթողիկոսը հատուկ ուղերձով դիմում

է Գրիգոր XIII պապին և օգնություն հայցում նրանից: Այդպես է վարվում նաև նրա հաջորդ Ազարիա Ա Ջուղայեցի կաթողիկոսը, որը 1584 թվականին Վատիկան ուղղած դիմումնագրում շեշտում էր, թե հայերը պատրաստ են ընդունելու կաթոլիկություն, եթե նրանց ցույց տրվի ռազմա-քաղաքական օգնություն ընդդեմ թուրքերի: Հայաստանը համեմատելով անպարիսպ այգու հետ՝ կաթողիկոսը հույս էր հայտնում, թե միայն Հռոմի օգնությամբ հնարավոր կլինի պարսպապատել Հայաստանը և ազատագրել անօրենների տիրապետությունից:

Հնազանդության վերը նշված հինգ աղերսագրերը ցույց են տալիս, որ հայոց ազատագրությանը նախանձախնդիր հայ եկեղեցական գործիչները շրջանառության մեջ դնելով «Դաշանց թղթի» գաղափարները՝ ջանում էին ապահովել Արևմուտքի չստանձնած, չեղած, գոյություն չունեցող պարտականությունները Հայաստանի նկատմամբ: Արևմուտքն ի վիճակի չէր վեր կանգնելու դավանաբանական խճողված վեճերից և վարելու քաղաքական իրատես բանակցություններ: Իր հերթին, հայ ազատագրական միտքը չուներ Հայաստանի ազատագրության մշակված իրատես ծրագիր: Հույսը դնելով միայն արտաքին օգնության վրա՝ Հայաստանի ազատագրությունը երազող շարժման գործիչները հստակ պատկերացում չունեին անգամ իրենց անելիքների և ընդհանրապես այդ գործում հայերի դերի մասին:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

(Հնագույն ժամանակներից մինչև XVII դարի կեսերը)

1. ՀԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

ա. Հայկական մշակույթի զարգացման առանձնահատկությունները: *Հազարամյակների պատմություն ունեցող հայկական մշակույթը առանձնահատուկ դեր է կատարել մեր ժողովրդի կյանքում: Ազգային կրոնի հետ դարեր շարունակ ծառայել է հայ էթնոսի պահպանման և հաճախ ավելի հզոր շրջակա էթնիկական հանրություններից նրա պաշտպանության գերխնդրին: Աստիճանաբար ձևավորվել է նաև հայկական ազգային մշակութային ավանդույթը, որը թույլ է տվել բյուրեղացնել այդ մշակույթի առավել բնորոշ գծերը և հաղորդել հաջորդ սերունդներին:*

Հայկական մշակույթը հանդես է եկել որպես բարդ ու ճկուն մի համակարգ, որը ճշգրտորեն արտացոլելով դարաշրջանի էական խնդիրները՝ արձագանքել է ժամանակի ու միջավայրի պահանջներին: Հայաստանը իր աշխարհագրական դիրքի թելադրանքով կապող օղակ է եղել Ասիայի և Եվրոպայի (Արևելքի ու Արևմուտքի) միջև: Հետևաբար, հայ ազգային մշակույթը մշտապես գտնվել է տարբեր ժողովուրդների փոխազդեցությունների ոլորտում՝ միաժամանակ պահպանելով իր ինքնատիպությունը և եզակիությունը:

Հայկական մշակույթը ուշագրավ երևույթ է նաև համաշխարհային մշակույթի հայեցակետից, քանի որ խնամքով պահպանելով ու հարստացնելով սեփականը՝ հայ ժողովուրդը դրանով իսկ արժանի ավանդ է ներդրել երկրագնդի ժողովուրդների ընդհանուր մշակութային գանձարանում: Մեր ազգային նկարագրին, որպես կանոն, խորթ է եղել այլ, թեկուզև ճոխ ու բազմակողմանիորեն զարգացած մշակույթների նմանակող լինելը: Առավելապես տիրապետող է եղել բուն ազգային մշակութային արժեքների անձնվեր պահպանման և հաջորդ սերունդներին ժառանգություն թողնելու ձգտումը:

Ունենալով սեփական մշակութային ավանդների հստակ գիտակցում, նկատի առնելով նախորդ սերունդների վաստակը՝ հայկական մշակույթի գործիչները գրեթե բոլոր ժամանակաշրջաններում բախվել են այնպիսի սպառնալի իրադրության հետ, երբ կտրուկ ու համակողմանի փոփոխություններ են տեղի ունեցել ողջ տարածաշրջանի ռազմա-քաղաքական, տնտեսական և հոգևոր-մշակութային կյանքում: Նմանատիպ հանգամանքներում հայ ազգային մշակույթը ի հայտ է բերել նորացման, արտաքին միջավայրից բխող երևույթներին համարժեք արձագանքելու զարմանալի կարողություն: Ժամանակին հարմարվելով հարափոփոխ արտաքին պայմաններին՝ հայկական մշակույթը, չափազանց կարևոր դեր է կատարել առհասարակ էթնոպահպանման մեխանիզմները կատարելագործելու առումով: Մշակութային նորամուծությունները հայկական միջավայրին հարմարեցնելուց և խորապես յուրացնելուց հետո դրանք իրենց արժանի տեղն են գրավել ավանդական մշակութային արժեքների կողքին: Հետևաբար, Հայաստանը անհնար է համեմատել, ասենք, Արևելքի ներամփոփ երկրների (Չինաստան, Ճապոնիա) հետ, որոնք իրենց մշակութային յուրահատկությունները (հատկապես ուշ միջնադարում) պահպանում էին մնացած աշխարհից առանձնանալու միջոցով: Հայկական ազգային մշակույթը ընդհանրապես երբևիցե չի խուսափել շրջակա և նույնիսկ հեռավոր երկրների հետ նյութական և հոգևոր արժեքների փոխառումից: Փոխներթափանցումները և փոխշփումները՝ թելադրված լինելով մշակույթի զարգացման ներքին պահանջներով՝ ոչ միայն ապահովել են հայկական մշակույթի հարատև առաջընթացը, այլև նպաստել մշակութային համակարգի ճկունացմանը և նորացմանը: Ինչպես ապացուցում է համաշխարհային փորձը, մեկուսացած և կարծրացած մշակութային համակարգերը ոչ միայն դուրս են մնում մարդկության առաջընթացի ընդհանուր հոսանքից, այլև անկարող են դառնում ընկալել ու ստեղծագործաբար

յուրացնել արտաքին աշխարհից ստացվող նորամուծությունները:

Պատմականորեն ստեղծված աշխարհաքաղաքական և ժողովրդագրական իրադրության պայմաններում հայ մշակույթի կենտրոնները դեռևս միջնադարում ցրված են եղել վիթխարի տարածքում, գործունեություն են ծավալել տարատեսակ և նույնիսկ խայտաբղետ աշխարհագրական, էթնիկական և մշակութային միջավայրում: Նման կացության դեպքում հայկական մշակույթը թեև անխուսափելիորեն ենթարկվել է օտարածին ազդեցությունների, և նրա շրջանակներում դրսևորվել են զարգացման այլազան միտումներ, այնուամենայնիվ, մշակութային ավանդույթի կարգավորիչ գործառույթը ի վիճակի է եղել ապահովել մշակութային համակարգի ամբողջականությունը ու նրա խորապես ազգային դրոշմը: Նոր ժամանակներում, երբ մեր ժողովրդի երկու խոշոր հատվածները հարկադրաբար միմյանցից անջրպետված էին և ձևավորվել էին արևելահայ և արևմտահայ գրական լեզուները, համազգային մշակույթի առաջընթացը տեղի էր ունենում համաշխարհային մշակույթի ձեռքբերումները ուղենիշ ունենալով, որը ևս նպաստում էր արևմտահայության ու արևելահայության մշակութային զարգացման ընդհանուր ուղիով ընթանալուն:

բ. Նախնադարյան Հայաստանի մշակույթը: Նախնադարյան Հայաստանի նյութական մշակույթը հիմնականում ներկայացված է պեղումների նյութերով, որոնք հստակ պատկերացում են տալիս Հայկական լեռնաշխարհի բնակիչների կյանքի պայմանների և տնտեսության զանազան ճյուղերում նրանց ձեռք բերած հաջողությունների մասին: 50–35 հազար տարի առաջ ձևավորվում են նաև հոգևոր մշակույթի սաղմերը՝ կրոնական հավատալիքները և պարզունակ արվեստը: Նախնադարյան կրոնի ու աշխարհընկալման ամենավաղ ձևերից էին տոտեմիզմը և անիմիզմը: Տոտեմիստական պատկերացումների համաձայն արյունակիցների խմբերը սերված էին համարվում որևէ կենդանուց, բույսից կամ առարկայից: Տոհմակիցների կոլեկտիվները երկրպագում էին և զոհեր մատուցում նրան, իրենց անվանում տոտեմի անունով: Տարածված էր նաև գերբնական ոգիների պաշտամունքը՝ ոգեպաշտությունը կամ անիմիզմը: Հայերի հեռավոր

նախնիները կյանքը, նրա բազմազան դրսևորումները, մահը և անդրշիրիմյան կյանքը բացատրում էին ոգու ներկայությամբ կամ նրա բացակայությամբ: Հետզհետե սկզբնավորվում է նախնիների պաշտամունքը, հավատը տոհմի նախորդ սերունդների ոգիների հրաշագործ զորության նկատմամբ:

Նախնադարյան մարդկանց կյանքի յուրօրինակ հանրագիտարաններ են Հայկական լեռնաշխարհի տարածքում (Գեղամա, Վարդենիսի, Հայկական Տավրոսի լեռնաշղթաներ, Սյունիք, Արագածի փեշեր) հայտնաբերված ժայռապատկերները: Որսորդական, ծիսական տեսարանները, երկնային մարմինների երկրաչափական խորհրդանիշներն ու մարդակերպ աստվածների, ֆանտաստիկ կենդանիների պատկերները վկայում են այդ ժայռապատկերների կրոնական, հմայական բնույթի մասին: Ժայռապատկերներում ներկայացված տեսարանները լույս են սփռում դարաշրջանի մարդկանց աշխարհըմբռնման և աշխարհատեսության (մենտալիտետի) վրա:

Հայկական լեռնաշխարհում տարածված հավատալիքներն իրենց զարգացման առավել բարձր աստիճանին են հասնում ուշ բրոնզի և վաղ երկաթի դարերում: Այդ շրջանի պաշտամունքային համակարգում կենտրոնական տեղ էր զբաղեցնում արևի պաշտամունքը: Արևը պատկերող ու խորհրդանշող բրոնզյա իրերը մեծ թիվ են կազմում պեղածո նյութերի շարքում: Բրոնզեդարյան կիրառական արվեստում իր պատշաճ տեղն ունի նաև երկնային լուսատուների պաշտամունքը: Նախնադարի հոգևոր կյանքը անհնարին է պատկերացնել առանց ջրի պաշտամունքի: Այն խորհրդանշող էակները հաճախ պատկերվում էին օձի և այծի (վիշապաքաղ), օձի և թռչունի (թռչող վիշապ), վիշապաձկների տեսքով: Հնագիտական նյութերը պատկերացում են տալիս թաղման սովորույթների և հուղարկավորման ծիսակատարությունների, անդրշիրիմյան կյանքի մասին հավատալիքների վերաբերյալ: Ուշ բրոնզի դարի որսորդական հավատալիքների ու ծիսական արարողությունների մնացորդները և զուգահեռները պահպանվել են հայ ժողովրդական առասպելներում, հանելուկներում, «Սասնա ծռեր» ժողովրդական վեպում:

գ. Արարատյան թագավորության մշակույթը: Հայաստանում բրոնզեդարյան նյութական և հոգևոր մշակույթի ավան-

դույթները պահպանվում և իրենց հետագա զարգացումն են ապրում Արարատյան թագավորության շրջանում:

Թագավորության քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքում կարևոր դեր էին կատարում ամրոցներն ու տաճարները: Խոշոր բնակավայրերը հիմնավորապես ամրացվում էին պարիսպներով: Բնակատեղի կենտրոնում տեղադրված էր միջնաբերդը, որն ապաստան էր ծառայում երկարատև պաշարումների ժամանակ: Ամրոցատիպ ճարտարապետական հուշարձաններից հատկապես լավ են ուսումնասիրված Էրեբունին և Թեյշեբաինին: Հարուստ հնագիտական նյութ է հայտնաբերվել նաև պատմական Հայաստանի՝ ներկայումս Թուրքիայի և Իրանի սահմաններում գտնվող տարածքներում: Բերդաքաղաքների պեղումների ժամանակ բացվել են նաև պաշտամունքային զանազան կառույցներ: Արարատյան թագավորության պաշտամունքային կառույցների շարքում բացառիկ տեղ էր զբաղեցնում տերության գլխավոր սրբավայրում՝ Մուսասիրում գտնվող Խալդի աստծո տաճարը: Եզակի նշանակություն ունեցող այդ կառույցի ճարտարապետական տիպի մասին կարելի է պատկերացում կազմել Սարգոն II-ի (722-705) պալատի բարձրաքանդակի պատկերից՝ ասորեստանցիների կողմից Խալդիի տաճարի գրավման և կողոպտման տեսարանից: Մուսասիրի տաճարը լիովին տարբերվել է Հին Արևելքում հայտնի պաշտամունքային կառույցներից և հիշեցնում է հին հունական դասական տաճարների նախատիպը: Տաճարը կառուցվել է բարձր դիրք ունեցող հարթակի վրա և ունեցել է ճակտոնով ավարտվող երկթեք տանիք: Տաճարի մուտքի երկու կողմերում կանգնեցված են եղել երկու արձաններ, իսկ ճակատը զարդարվել է խոյակներով պսակված վեց սյուներով: Ասորեստանցի արվեստագետը պատկերել է նաև ուռուցիկ միջնամաս ունեցող կլոր վահաններ, որոնք տեղադրված են սյուների և ճակատային պատի վրա: Այդ վահանները լավ հայտնի են Արարատյան թագավորության ժամանակաշրջանի հուշարձանների՝ Թոփրաք կալեի (Ռուսախինիլի), Ալթին Թեփեի (Բարձր Հայք), Ադիլջևազի (Արծկեի մոտ) և այլն պեղումներից: Վահաններով զարդարում էին ճարտարապետական հուշարձանների ներքին հորինվածքը:

Արարատյան թագավորության ճարտարապետական արվեստի համար բնութագրական է եղել չինությունները ներսից ներկերով ու բազմագույն քարերով զարդարելու արվեստը: Զարդարվեստի փայլուն նմուշներ են Արին-բերդի (Էրեբունի), Կարմիր բլուրի (Թեյշեբաինի) չինություններում հայտնաբերված որմնանկարները: Դրանք բազմագույն են և վկայում են Արարատյան թագավորության ճարտարապետության մեջ գույնի առանձնահատուկ դերի մասին: Էրեբունիի որմնանկարներից մեկում պատկերված է թագավորական որսի տեսարան, որի մասնակիցներից են ինքը՝ արքան, նրա մերձավոր մեծատոհմիկները, այրուձին ու հետևազորը: Սակայն, ընդհանուր առմամբ, քարի վրա կատարված նախշազարդերն աննշան դեր էին կատարում թագավորության ժամանակաշրջանի չինությունների ներքին ու արտաքին հարդարանքում: Քանդակագործությունը, քարի վրա փորագրությունը ճարտարապետությունը լրացնող ու հարստացնող գործառույթ էին Արարատյան թագավորության հուշարձաններում: Փորագրության արվեստը զարգացում ու տարածում չէր ստացել նույնիսկ ժայռերի մեջ փորված անձավային չինություններում:

Արարատյան թագավորության ժամանակներից պահպանվել են նաև ժայռափոր չինություններ ու խորշեր, որոնք տարբեր գործառույթ են ունեցել: Դրանց մի մասը պաշտամունքային բնույթ է կրել և կոչվել է «Խալդիի դռներ»: Այդ տիպի հուշարձաններից նշանավոր է Վանի «Մհերի դուռ» անվանումը ստացած ժայռախորշը, որը գտնվում է ավելի քան 5 մետր բարձրության վրա: Աստիճանները տանում էին դեպի խորշի մուտքը, իսկ ժայռի ստորոտում գտնվում էր պաշտամունքային ստորգետնյա մեկ այլ չինություն: «Մհերի դուռ» խորշը հայտնի է կրոնական բնույթի սեպագիր արձանագրությամբ, որը փորագրվել է Իշպուինիի (825-810) և Մենուայի (810-786) օրոք: Լայն ճանաչում են ստացել նաև Վանի ժայռի մեջ փորված արհեստական անձավները և ընդարձակ չինությունները: Անձավների մի մասը, հավանաբար, դամբարանի դեր է կատարել:

Արարատյան թագավորությունում զարգացման բարձր մակարդակի էին հասել գեղարվեստական արհեստագործության այլևայլ ճյուղերը, հատկապես մետաղագործությունը: Մետաղյա իրերը հաճախ պատրաստվում էին թագավորի և մերձավոր

չրջապատի պատվերով, աչքի էին ընկնում առանձնահատուկ գեղեցիկությամբ և զարդարանքի հարստությամբ: Դրանցից են առյուծների ու ցուլերի դրվագված պատկերներ կրող դեկորատիվ վահանները, որոնք զարդարված են երեք գոտիներով: Այդպիսի վահաններ պատրաստվում էին ոսկուց, արծաթից ու բրոնզից: Իրենց զարդապատկերներով ու գեղեցիկությամբ ուշադրություն են գրավում նաև բրոնզյա սաղավարտներն ու կապարճները:

Տաճարները զարդարված են եղել թագավորների բրոնզյա մեծ արձաններով, բրոնզե քանդակներով ու արձանիկներով: Առարկաները հաճախ ոսկուց էին և ագուցվում էին թանկագին քարերով: Բարձր վարպետության էին հասել նաև խեցեգործ արհեստավորները:

Արարատյան թագավորության պետական կրոնում կենտրոնական տեղ էր գրավում Խալդի աստվածը: Նա գերիշխող դիրք ուներ դիցարանում և համարվում էր թագավորի հովանավոր աստվածը: Սեպագիր արձանագրություններում, որոնք պատմում են տաճարների շինարարության և նախատեսվող զոհաբերությունների մասին, Խալդիից հետո հիշատակվում են Թեյշեբա և Շիվինի աստվածները: Նրանք միասին առանձնանում են մյուս աստվածների շարքից և կազմում աստվածների գերագույն երրորդություն: Խալդին Արարատյան թագավորությունում տիրապետող դիրք նվաճած ցեղի տեղական աստվածն էր և պատկերվում էր ռազմիկի կերպարանքով: Նա օրհնում էր թագավորին արշավանքի մեկնելիս և օգնում նրան հաղթելու թշնամուն: Խալդի աստծու կինը դիցարանի գլխավոր աստվածուհի Արուբանին էր: «Մհերի դռան» արձանագրությունում թվարկվում են Արարատյան թագավորության աստվածների անունները և նրանց մատուցվող զոհաբերությունները (ցուլեր, կովեր, ոչխարներ, այծեր և այլն): Պաշտոնական դիցարանի մեջ էին մտնում նաև նվաճված երկրների ու քաղաքների, հարևան ժողովուրդների աստվածները: Աստվածները պատկերվում էին մարդու կերպարանքով, սակայն կարելի է հանդիպել նաև կենդանիներին ու թռչուններին բնորոշ առանձին բաղադրիչներ, որոնք, իրենց հերթին, հին տոտեմական պատկերացումների արտացոլում էին:

Արարատյան թագավորության դարաշրջանից պահպանվել

են ավելի քան 600 սեպագիր արձանագրություններ, որոնք գրված են քարի, մետաղյա իրերի և կավե սալիկների վրա: Մեզ են հասել նաև մեհենագրային (հիերոգլիֆային) արձանագրություններ: Վանի թագավորության մեհենագրային համակարգը բաղկացած է շուրջ 300 նշաններից, որոնք գրվել են աջից ձախ, հորիզոնական գրության դեպքում՝ վերից վար (առանց բառանջատման): Մեզ են հասել շուրջ 1500 մեհենագրային արձանագրություններ և մեհենանշաններ: Վերծանության առաջին արդյունքների հիման վրա ենթադրվում է, որ մեհենագրային համակարգի լեզուն եղել է հնագույն հայերենը:

Սեպագիր արձանագրությունները միատիպ են և մեծ մասամբ հաղորդում են թագավորների ձեռնարկած արշավանքների և շինարարական աշխատանքների մասին: Այդ արձանագրությունների թարգմանությունը կապված է զգալի դժվարությունների հետ և լիակատար ու վերջնական համարվել չի կարող:

Թագավորությունում տարածում ստացած սեպագիր դպրությունը Ք.ա. IX դ. ընդօրինակվել է Ասորեստանից: Ընդ որում փոխ են առնվել ոչ բոլոր նշանները, վերցվածն էլ պարզեցվել է: Մեզ հասած հնագույն արձանագրությունները թվագրվում են Ք.ա. IX դ. 30-ական թվականներով և պատկանում են Սարդուրի I-ի կառավարման ժամանակահատվածին: Դրանք կազմված են ասուրերեն լեզվով: Սակայն արդեն հաջորդ թագավորը՝ Իշպուինին, և նրա ժառանգորդներն իրենց վիմագիր հաղորդումները կատարում էին տեղական լեզվով: Առանձին սեպագիր նշաններով արտահայտվել են ձայնավորները, երկձայն և եռաձայն վանկերը: Գաղափարագրերն արտահայտել են ամբողջական բառեր և հասկացություններ: Գաղափարագրերի մի տարատեսակն են որոշարկիչները (դետերմինատիվներ), որոնց չնորհիվ տարբերակվում են որոշ հատուկ անուններ: Օրինակ, ճշգրտորեն նշվում է՝ «ժողովուրդ», թե՞ «երկիր» է կոնկրետ անվան ներքո: Գրում էին ձախից աջ, առանց բառանջատման:

Օտար լեզվից փոխառված լինելու հետևանքով Արարատյան թագավորությունում տարածում ստացած սեպագիր դպրությունը ճշգրտորեն չի հաղորդել տեղական լեզվի հնչյունական

համակարգը: Ուստի դժվար է որոշել, թե ինչպե՞ս են արտասանվել սեպագիր արձանագրություններում վկայված բառերը, ինչը և զգալիորեն դժվարացնում է լեզվի ուսումնասիրությունը: Այդ լեզուն, սովորաբար, ազգակից են համարում Հյուսիսային Միջագետքում բնակվող խուռիների (խուռիերեն) լեզվին: Վերջին ժամանակներս փորձեր են արվել նմանություններ տեսնել այդ լեզուների և դաղստանյան լեզուների միջև: Այն կարծիքն է հայտնվել նաև, որ Արարատյան թագավորության սեպագրերի լեզուն ազգակցություն ունի հնդեվրոպական նախալեզվի հետ: Առայժմ անմիջական ազգակցական կապ դժվար է մատնանշել հայերենի և սեպագրով ավանդված լեզվի միջև: Փոխարենը հայտնի են բառապաշարային բնույթի բազմաթիվ ընդհանրություններ, որոնք տարբեր կերպ են բացատրվում մասնագետների շրջանում: Ավելի ծանրակշիռ են տեղանունների (Աբիլիանի-Աբեղեանք, Զաբախա-Ջավախք, Ծուլուկի-Ծղուկ, Ծուփա-Ծոփք և այլն) ընդհանրությունները:

Արարատյան թագավորության հարուստ ու բազմազան մշակույթի ազդեցությունը տարածվել է նրա սահմաններից շատ հեռու՝ հասնելով մինչև Փոքր Ասիա, Միջերկրածովյան շրջան, Կովկաս և Իրան:

դ. Հայկական մշակույթը Ք.ա. VI-IV դարերում: Հնագիտական նյութերի և գրավոր սկզբնաղբյուրների սակավության պատճառով Արարատյան թագավորության անկմանը հաջորդող երեք դարերի մշակույթը համեմատաբար վատ է ուսումնասիրված:

Ճարտարապետության մասին կարելի է դատողություններ անել Աքեմենյանների ժամանակաշրջանում Էրեբունիի միջնաբերդում ծավալված շինարարական գործունեության հիման վրա: Ք.ա. VIII դարի տաճարը հետագայում վերակառուցվել է և վերածվել սյունազարդ դահլիճի: Այն, հավանաբար, ծառայել է որպես ընդունելությունների սրահ, խորհրդակցությունների և ժողովների վայր: Այսպիսի սյունազարդ դահլիճները բնութագրական են Աքեմենյան Իրանի ճարտարապետությանը և հանդիպում են Աքեմենյանների մայրաքաղաքներ Պասարգադայում և Պերսեպոլիսում: Արմատական վերակառուցման ենթարկվելուց հետո սրբազան կրակի մշտական պահպանման վայրի է վերածվել Էրեբունիի միջնաբերդի պալատի միջին մասը: Պալատից արևելք ընկած աղյուսե մի շինություն, որտեղ հայտնաբերվել են մոխրի մնացորդներ, հավանաբար ծառայել է որպես կրակի տաճար: Էրեբունիի ընդունասրահը և կրակի տաճարը հիմք են տալիս կարծելու, որ Աքեմենյանների օրոք քաղաքը դարձել էր 18-րդ սատրապության վարչական կենտրոնը:

Դարաշրջանի գյուղական բնակարանների պատկերավոր նկարագրությունը թողել է հույն զորավար և պատմիչ Քսենոփոն Աթենացին, որը Ք.ա. 401 թ. անցել է Հայաստանով: Հարավային Հայաստանի տները, ի տարբերություն կենտրոնական շրջանների բնակարանների, աշտարակավոր էին, որը, հավանաբար, պայմանավորված էր պաշտպանական նպատակներով: Այլ էր Հայաստանի կենտրոնի և Հյուսիսի գյուղական բնակավայրերի համայնապատկերը: Այս շրջանների բնակարանները ստորգետնյա էին և ունեին երկու մուտք: Մեկով իջնում էին մարդիկ, իսկ երկրորդը նախատեսված էր անասունների համար: Այդ տիպի տները հայկական ժողովրդական բնակարանի գլխատան նախատիպն են ներկայացնում:

Պատմաշրջանի նյութական մշակույթը բնութագրում են պեղումներից հայտնաբերված նյութերը: Խեցեգործությունը ներկայացված է սափորներով, անոթներով և ըմպանակներով, որոնք իրենց զուգահեռներն ունեն Հայաստանին հարակից ընդարձակ տարածաշրջանում (Փոքր Ասիա, Այսրկովկաս, Իրան) ու կապող օղակ են Արարատյան թագավորության և Հելլենիստական դարաշրջանի կավագործական արտադրանքի միջև: Մետաղագործությունը ներկայացված է զինագործական արտադրանքով և հասարակ զարդերով: Հայաստանում գտնվել են նաև արծաթյա ամանեղենի բազմաթիվ նմուշներ, մասնավորապես Աքեմենյան ժամանակաշրջանում լայն տարածում ստացած պտյակներ (ռիտոններ): Դրանք եղջյուր հիշեցնող անոթներ են, որոնք ներքևի մասում կենդանակերպ են:

Նյութական մշակույթի հետազոտությունը հիմք է տվել ուսումնասիրողներին պեղածո նյութերը բաժանել երկու մասի: Առաջինը կազմում են այն նյութերը, որոնք վերաբերում են հասարակ բնակչության ամենօրյա կյանքին և անմիջականորեն կիրառվել են ժողովրդի կենցաղում: Պեղված հուշարձանների և

իրերի երկրորդ խումբը կապված է հայ հասարակության վերնախավի կյանքի ու կենցաղի հետ: Ուշագրավ է, որ հիշատակված երկու խմբերից յուրաքանչյուրը հատկանշում է մշակութային զարգացման և կողմնորոշումների յուրօրինակ ուղի: Հասարակ ժողովրդի կյանքում տարածված առարկաները բազմաթիվ առնչություններ ունեն Հայկական լեռնաշխարհի բրոնզեդարյան և վաղերկաթեդարյան մշակույթի հետ և շարունակում են նախորդ պատմաշրջանի նյութական մշակույթի ավանդույթները: Եվ հակառակը. վերնախավի կենցաղի հետ կապված նյութերը վկայում են Աքեմենյան Իրանի մշակույթի հետ առնչությունների մասին: Որոշ մշակութային աղերսներ են եղել նաև Փոքր Ասիայի, Արևելյան Միջերկրածովքի և հունական աշխարհի հետ:

Պատմաշրջանի հոգևոր մշակույթի կարևոր բաղադրիչներից են առասպելները, հին հայկական ժողովրդական վեպը և հնագույն հավատալիքները:

Առասպելները արտացոլում են ժողովրդի նախնական աշխարհայացքը, պատկերացումները բնության, հասարակության մասին և հնագույն գրականության ուշագրավ տեսակներից մեկն են: Հայկական ամենանշանավոր առասպելներից է Հայկի և Բելի մասին զրույցը: Որոշ տարբերություններով այն ավանդված է Մովսես Խորենացու «Հայոց պատմությունում» և Անանուն պատմիչի երկում, որը, որպես ներածություն, կցված է Սեբեոսի «Պատմությանը»: Նրա արձագանքները առկա են նաև Անանիա Շիրակացու աշխատություններում: Այստեղ Հայկը հանդես է գալիս որպես ազատասեր ու ըմբոստ հսկա, որը մերժում է հնազանդվել Ասորեստանի տիրակալ բռնակալ Բելին: Ճակատամարտում սպանելով իր դեմ արշաված Բելին՝ Հայկը հաստատում է իր երկրի՝ Հայքի, անկախությունը: Վերոհիշյալ պատմական երկերում ամբողջական ձևով պատմվում է Արա Գեղեցիկի և Շամիրամի առասպելը: Այն այնպիսի լայն տարածում է ունեցել, որ նրա որոշ հատվածներ արտացոլվել են նաև անտիկ հեղինակների երկերում, մասնավորապես նշանավոր փիլիսոփա Պլատոնի «Հանրապետություն» աշխատությունում: Մովսես Խորենացին ավանդել է նաև Արամի, Տորք Անգեղի ավանդազրույցները:

Հայոց պատմության հնագույն դրվագները ներկայացված են հին հայկական ժողովրդական վեպում: Այն պատմում է պատմական անցուդարձերի մասին, սակայն ժամանակագրական մեծ չեղումներով և հաճախ միահյուսված առասպելների հետ: Վիպասաններն ու գուսանները դարերի ընթացքում այն մշակել են և ենթարկել զգալի փոփոխությունների: Հնագույններից է Տիգրան Երվանդյանի և Աժդահակի վեպը, որը առասպելախառն հիշողություն է հայերի ու մարերի փոխհարաբերությունների մասին:

Ավանդություններն ու վիպական զրույցները արժեքավոր աղբյուր են հայերի վաղնջական հավատալիքները և հնագույն աստվածների դիցարանը հետազոտելու համար:

Հայոց հնագույն աստվածը Հայկն էր, որի պաշտամունքի արմատները հասնում են մինչև տոհմատիրական հասարակության ժամանակները: Նախապես Հայկը հանդես է եկել որպես հսկա որսորդ: Նրա անունով է կոչվել Օրիոն համաստեղությունը: Վաղ հայկական հասարակության շրջանում Հայկը խորհրդանշել է հայ ժողովրդի պայքարը օտար բռնակալության դեմ հանուն ազատության և անկախության:

Հայերի Տորք աստծո պաշտամունքը տարածված է եղել նաև փոքրասիական մի շարք ժողովուրդների շրջանում: Խեթական թագավորությունում նա հայտնի էր Տարկու անունով և կարևոր տեղ էր զբաղեցնում դիցարանում: Մովսես Խորենացու ավանդած առասպելում Տորքը կոչվում է Անգեղ, այսինքն՝ «Տգեղ», բայց հնագույն ժամանակներում, հավանաբար, «Անգեղյա» նշանակել է «Անգեղի սերնդից»: Անգեղը ևս հայկական հնագույն աստվածների թվին է պատկանում, իսկ նրա անունը տոտեմական ծագում ունի և կապվում է «անգղ» թռչունի հետ:

Արան տեղական ծագում ունեցող հնագույն աստված է: Նախապես նրա պաշտամունքը աղերսվել է երկրագործության, ցանքի և գարնանը աճող բուսականության հետ: Մեռնող ու հարություն առնող աստվածների պաշտամունքը լայնորեն տարածված էր Հին Արևելքում, և Արայի կերպարը իր զուգահեռները ունի հնագույն շատ ժողովուրդների դիցարանում: Հինարևելյան ազդեցության ներքո Արան սկսում է հանդես գալ Շամիրամի հետ միասին: Շամիրամն ասորեստանյան դիցարանի

պտղաբերության և սիրո աստվածուհին էր ու աչքի էր ընկնում իր վավաշոտությամբ: Նրա պաշտամունքը բազմաթիվ հետևորդներ էր ձեռք բերել Հայաստանում, իսկ կերպարը կապակցվել էր Արայի կերպարի հետ: Արայի և Շամիրամի հետ Հայաստանում պաշտվում էին նաև արալեզներ կոչվող ոգիները: Նրանք համարվում էին չներից սերված և հնագույն հավատալիքների համաձայն լիզում էին հայրենիքի համար ընկած հերոսների վերքերն ու հարություն տալիս նրանց:

Պատմահայրը գրի է առել և սերունդներին ավանդել Վահագն աստծո մասին բացառիկ արժեք ունեցող ժողովրդական ստեղծագործություններից մեկը, որը պատկերում է պատանի աստվածության ծնունդը:

Ե. Հելլենիստական մշակույթը: Ք.ա. IV դ. վերջերին Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքները նշանավորեցին նոր դարաշրջան Առաջավոր Ասիայի մի շարք երկրների պատմության մեջ: Հին Արևելքի ընդարձակ շրջաններում սկսվեց «Հունականության» («Հելլենիզմ») ազդեցության փուլը: Հելլենիզմի բովանդակությունը չի սպառվում արևմտյան քաղաքակրթության ազդեցությամբ և շատ ավելի հարուստ ու բարդ երևույթի պայմանական անվանում է: Խոսքը վերաբերում է մշակութային փոխներթափանցումների և փոխազդեցությունների ամբողջական համակարգին, որը բնութագրվում է նաև բուն հունական երևույթների վրա արևելյան իրողությունների թողած դրոշմով: Մշակութային թռիչքը, որը դիտվում էր Արևելքի երկրներում, նախապատրաստված էր հսկայական տարածաշրջանի պատմական զարգացման նախորդ ողջ ընթացքով, բայց անշուշտ հետևանք էր նաև արևելյան և արևմտյան քաղաքակրթությունների աննախընթաց սինթեզի:

Հինարևելյան հարուստ մշակույթը, որն առանձին-առանձին ծաղկում էր տարբեր երկրներում, հաղթահարեց իր մեկուսացվածությունը և խաչաձևվեց դասական հունական մշակույթի հետ: Ծնունդ առավ նոր, ինքնատիպ մի մշակույթ, որը հելլենիստական կերպարանք էր կրում:

Ք.ա. III-I դդ. հայկական մշակույթի զարգացման ընթացքի մեջ բեկում տեղի ունեցավ: Եթե նախորդ պատմաշրջանում (VI-IV դդ.) Հայաստանը գտնվում էր Աքեմենյան տերության քաղաքական գերիշխանության ոլորտում և չփումների մեջ էր իրանական մշակույթի հետ, ապա արևելյան բնույթի հայկական մշակույթը հելլենիզմի դարաշրջանում ակնհայտ շրջադարձ կատարեց դեպի արևմտյան մշակույթ: Հայաստանը ևս ընդգրկվեց մշակութային հուժկու շարժման մեջ, որը պայմանավորված էր նաև երկրի ապրած քաղաքական ու տնտեսական վերելքով: Հայկական տարածքների միավորումը և Արտաշեսյանների հարստության հաստատումը երկրում, հայոց պետականության առաջընթացը Ք.ա. I դ., երկրի անկախության պահպանումը Ք.հ. I-III դդ., բուռն քաղաքաշինությունը, արհեստների ու առևտրի վերելքը, բազմակողմանի փոխչփումները հարևան երկրների հետ մեծ չափով նպաստեցին հելլենիստական մշակույթի ծաղկմանը:

Հելլենիզմը Հայաստանում ներկայանում է որպես վեցդարյա մի պատմաշրջան, որը, ամբողջություն կազմելով հանդերձ, բաժանվում է երկու փուլի: Նկատի առնելով հասարակական կյանքի և մշակութային զարգացման իրողությունները՝ կարելի է առանձնացնել Ք.ա. III-I դարերը (1-ին փուլ), այսինքն՝ բուն հելլենիստական ժամանակաշրջանը, և նրա շարունակություն դիտել Ք.հ. I-III դարերը՝ ուշ հելլենիստական ժամանակաշրջան (2-րդ փուլ): Առաջին փուլը բնութագրվում է հելլենիստական հասարակական հարաբերությունների և մշակույթի Հայաստան ներթափանցմամբ, ինքնատիպ նոր երևույթների ձևավորմամբ ու զարգացմամբ, ընդ որում՝ առանձնահատուկ քաղաքական և տնտեսական պայմաններում: Հելլենիստական մշակույթի պատմության առաջին փուլում մշակութային առաջընթացը տեղի էր ունենում երկրի քաղաքական վերելքի, հելլենիզմի համակողմանի ազդեցությանը ավելի վաղ ենթարկված հարևան երկրների հետ սերտ կապերի, քաղաքների աճի ու վերընթացի խիստ բարենպաստ ազդեցության մթնոլորտում: Այս փուլը կարելի է հելլենիստական մշակույթի վերընթաց զարգացման ժամանակաշրջան համարել: Հաջորդ՝ երկրորդ ժամանակաշրջանը հելլենիզմի վարընթաց շարժման ազդեցությունն է կրում: Երկրում սկսվում է ավատատիրական հարաբերությունների առաջացումը, քաղաքները կորցնում են հասարակության կյանքում իրենց նախկին վճռորոշ դերը, նախարարությունների ձևավորման հե-

տևանքով ուժեղանում են դեպի բնատնտեսություն տանող երևույթները, թուլանում են տարբեր շրջանների միջև տնտեսական ու մշակութային կապերը: Տկարանում է նաև Հայոց պետականությունը, որն այլևս ի վիճակի չի լինում դիմագրավել Հռոմի քաղաքական ու մշակութային ճնշմանը: Հելլենիստական ավանդույթները կորցնում են իրենց ազդեցությունը, և Հայաստանը հաղորդակից է դառնում ուշ անտիկ, հռոմեական հատկանիշներ ունեցող մշակույթին:

Հելլենիզմի դարաշրջանի հայ մշակույթում հանդես էին գալիս երկու հիմնական ուղղություններ: Առաջինն ավանդական (ժողովրդական) ուղղությունն էր, որը զարգանում էր գյուղական բնակչության միջավայրում և հավատարիմ էր մնում իր տեղական, հինարևելյան ակունքներին, ավանդական աշխարհընկալմանն ու պատկերացումներին: Երկրորդը հելլենիստական ուղղությունն էր, որը զարգանում էր հասարակության կյանքում կատարված տեղաշարժերի հիման վրա և կրում էր վերնախավային շերտի ու քաղաքային ազատ բնակչության նոր ըմբռնումների և ճաշակի դրոշմը: Այս երկու ուղղությունները միմյանցից անջրպետված չէին: Հելլենիստական հայկական մշակույթի առաջընթացը որոշակիորեն պայմանավորված էր նաև այդ երկուսի փոխներթափանցումով, հին և նոր արժեքների փոխազդեցությամբ ու միահյուսումով: Վերելքի ուղին բռնած հայկական նյութական ու հոգևոր մշակույթը իր արժանի տեղն է զբաղեցնում հին աշխարհի առաջավոր մշակույթների շարքում:

Հելլենիզմն իր առավել լիարժեք ու ցայտուն արտահայտությունը գտավ հայկական նյութական մշակույթի բնագավառում և հատկապես քաղաքաշինության ասպարեզում: Հնագույն քաղաքների նոր վերելքին զուգընթաց՝ թափ է առնում նոր քաղաքների շինարարությունը: Առաջիններից տիպական կարելի է համարել Արգիշտիխինիլի-Արմավիրի օրինակը: Նախորդ դարաշրջանի վարչական կենտրոնը վերածվել էր Հայաստանի մայրաքաղաքի, ընդ որում պահպանելով նաև սրբավայրի իր նշանակությունը: Արմավիրում գոյություն ուներ արեգակին, լուսնին և Հայոց թագավորների նախնիների պաշտամունքին նվիրված

տաճար, որի շրջակայքում գտնվում էր սոսիների սրբազան պուրակը:

Նորակառույց քաղաքներից էր Ք.ա. III դ. հիմնադրված Երվանդաշատը, որի նկարագրությունը տալիս է Մովսես Խորենացին: Այդ քաղաքի ավերակները վկայում են նրա պաշտպանական հզոր համակարգի և կառուցապատման բարձր տեխնիկայի մասին: Մատենագրական աղբյուրները և վերջերս կատարված պեղումները բազմակողմանի պատկերացում են տալիս Արտաշատ մայրաքաղաքի մասին: Հնարավոր է, որ այն հիմնադրվել է Ք.ա. 189-188 թթ., երբ Հայաստան է այցելել կարթագենացի հռչակավոր զորավար Հաննիբալը և մասնակցել քաղաքի կառուցման վայրի ընտրությանը: Անտիկ հեղինակներ Ստրաբոնն ու Պլուտարքոսը Արտաշատը անվանել են «մեծ և խիստ գեղեցիկ քաղաք», «Հայաստանի Կարթագեն», ընդգծել են նրա բացառիկ հաջող տեղադրությունը և պաշտպանական համակարգի հուսալիությունը: Այն կառուցված էր Արաքսի և Մեծամորի գետախառնուրդի վայրում, թերակղզու նմանվող գետածոցում, որը երեք կողմից անմատչելի էր թշնամիների համար: Չորրորդ կողմից Արտաշատը պաշտպանված էր բլուրներով, պարիսպներով ու խրամով: Հզոր ամրոց լինելուց բացի Արտաշատը նաև տնտեսական ու մշակութային խոշոր կենտրոն էր: Քաղաքը կառուցապատված էր բնակելի, հասարակական նշանակություն ունեցող և պաշտամունքային շքեղ շինություններով:

Պաշտպանական նկատառումները կարևոր դեր են խաղացել նաև նոր մայրաքաղաքի՝ Տիգրանակերտի տեղանքի ընտրության հարցում: Այն կառուցվեց Հայկական Տավրոսի ստորոտում, դժվարամատչելի լեռնային տարածքում և շրջապատված էր բարձրաբերձ (25 մետր) և չափազանց լայն պարիսպներով: Քաղաքի ներսում գտնվում էր պարիսպներով ամրացված անմատչելի միջնաբերդը ու նրա շուրջը սփռված էին աղնվականական դղյակները, տաճարները և թատրոնը: Արքունական պալատը գտնվում էր քաղաքի պարիսպներից դուրս և շրջապատված էր պարտեզներով, զբոսարաններով ու որսատեղիներով:

Ուշ հելլենիստական ժամանակաշրջանի քաղաքաշինությունը սակավ չափով է ուսումնասիրված: Առայժմ, այն էլ ոչ ան-

հրաժեշտ ծավալով, պեղումներ են կատարվել միայն Վաղարշապատում: Քաղաքը հիմնադրվել է Վաղարշ I-ի օրոք (116-144) նախկին գյուղաքաղաքի՝ Վարդգեսավանի տեղում: 164 թ. այն հռչակվել է թագավորանիստ քաղաք: Մասնակի պեղումները՝ կատարված Էջմիածնի Մայր տաճարում և Հռիփսիմեի վանքում, բացահայտել են հելլենիստական ժամանակաշրջանի ճարտարապետությանը բնորոշ կառույցների հետքեր և քանդակագործության մնացորդներ:

Պատմաշրջանի ամրոցաշինական արվեստը ներկայացված է անառիկ Գառնիով, որը համակողմանիորեն ուսումնասիրված է երկարատև պեղումների շնորհիվ: Գառնին գոյություն է ունեցել Արարատյան թագավորության ժամանակներից և իբրև նշանավոր ամրոց ու արքունի ամառանոց Հայտնի է եղել նաև I-III դարերում: Վաղ միջնադարում ևս Գառնին հռչակված էր որպես անառիկ բերդ և զորակայան: Ամրոցը կառուցվել է եռանկյունաձև հրվանդանի վրա և հիանալի պաշտպանված է բնական ուղղաձիգ ժայռերով: Ավելի քան 2 մետր լայնություն և 10 մետր բարձրություն ունեցող պարսպապատերը, ուղղանկյունաձև 14 աշտարակները պաշտպանում էին ամրոցի մնացած մասերը:

Ամրոցի ներսում գտնվել է ճարտարապետական կառույցների մի խոշոր խումբ, այդ թվում՝ պալատական շինություններ և արքունի բաղնիք: Գառնիի ամրոցի բաղնիքը կառուցվածքով չափազանց նման է անտիկ բաղնիքներին:

Նախաքրիստոնեական Հայաստանի մեհենական կառույցները, ինչպես Հայտնի է, գրեթե լիովին կործանվել են երկրի քրիստոնեացման ժամանակ և միայն բացառիկ դեպքերում են օգտագործվել որպես քրիստոնեական եկեղեցիներ, այն էլ որոշակի ձևափոխություններից հետո: Ինչպես երևում է Գառնիի հեթանոսական տաճարի օրինակից, հին հայկական աստվածներին նվիրված սրբավայրերը եղել են ճարտարապետական առումով բարձրարվեստ հուշարձաններ:

Գառնիի տաճարը կառուցվել է Ք.հ. I դարի երկրորդ կեսին և քրիստոնեության ընդունման ժամանակ խուսափել է ընդհանուր ճակատագրից: Տաճարն այնուհետև օգտագործվել է աշխարհիկ նպատակներով և կանգուն է մնացել մինչև 1679 թ.

ավերիչ երկրաշարժը: Կառույցը ներդաշնակորեն միահյուսված է շրջապատի բնապատկերին և անջնջելի տպավորություն է թողնում: Նրա ներսում, հավանաբար, դրված է եղել Միհր աստծո արձանը, որը քրիստոնեություն ընդունելուց հետո ոչնչացվել է: Տաճարը փոքր չափերի է և կառուցված է բարձր պատվանդանի վրա: Շենքը ձգվում է հարավից դեպի հյուսիս և զարդարված է սյունաշարով: Տաճարի հորինվածքը (երկթեք տանիք, եռանկյուն ճակատոն, սյունաշար ուղղանկյուն հատակագիծ) Հայաստանում հայտնի էր Արարատյան թագավորության ժամանակներից, սակայն տաճարը, անշուշտ, կառուցվել է հունահռոմեական նույնատիպ հուշարձանների ազդեցությամբ: Տեղական արվեստը դրսևորվել է շենքը հարդարելիս և տեղական շինանյութը՝ որձաքարը մշակելիս: Տաճարի մանրամասները չեն կրկնում մեկը մյուսին և կատարված են արևելյան արվեստին բնորոշ բազմազանությամբ: Տեղական ավանդույթների հետ են կապված նաև տաճարի աղոթասրահի կառուցվածքը և համաչափությունները: Տպավորիչ փաստ է, որ աղոթասրահի չափերը ճշգրիտ կրկնում են Էրեբունի տաճարի չափերը:

Հելլենիստական ժամանակաշրջանում Հայաստանում գոյություն է ունեցել նաև բարձր զարգացման հասած քանդակագործություն: Գրավոր սկզբնաղբյուրները պատմում են հին հայկական տաճարների մասին, որտեղ կանգնեցված են եղել աստվածների և թագավորների նախնիների արձանները: Դրանց մի մասը բերովի էր և պատկերում էր հունահռոմեական աստվածներին: Այդպիսի արձաններն ազդելու էին տեղական արձանագործության հետագա զարգացման վրա և մարմնավորելու էին տեղական ու հունական հատկանիշների միահյուսումը: Արտաշատի և Գառնիի պեղումների ժամանակ գտնվել են մարմարյա արձաններ ու դրանց բեկորներ, ճարտարապետական հուշարձանների քանդակազարդ մասեր: Հայաստանի տարբեր շրջաններում հայտնաբերվել են տուֆից պատրաստված քարե արձանների գլուխներ, որոնք պատկերում են արձանագործության ավանդական ուղղությունը: Հին հայկական արձանագործության հելլենիստական ուղղության ամենանշանավոր հուշարձանը Անահիտ աստվածուհու բրոնզյա արձանի գլուխն է, որը գտնվել է Արևմտյան Հայաստանում (Սատաղ քաղաքի մոտ) և

այժմ պահվում է Բրիտանական թանգարանում՝ Լոնդոնում: Տեղական և հելլենիստական տարրերի փոխներթափանցման վկայություններ են Մեծ Հայքի և Ծոփքի թագավորների հատած դրամների վրա դրվագված արքայական պատկերները:

Հելլենիստական պատմաշրջանի խճանկարչության առայժմ Հայտնի միակ նմուշը հայտնաբերվել է Գառնիի բաղնիքի հանդերձարանի հատակին: Գառնիի խճանկարը բազմերանգ է և պատրաստվել է Ազատ գետի հունից հավաքված գույնզգույն քարերից: Նյութը ամբողջովին վերցված է հունական առասպելաբանությունից. կենտրոնական շրջանակում քարե մանրիկ հատիկներով պատկերված են օվկիանոսը՝ պատկառելի ծերունու, և ծովը՝ գեղանի կնոջ տեսքով: Խճանկարի արտաքին շրջանակում երևում են դարձյալ հունական առասպելաբանությունից վերցված տեսարաններ: Պատկերներն ունեն հունարեն համապատասխան մակագրություններ:

Ք.ա. III-I դդ. հայ հոգևոր մշակույթը հարստանում է բովանդակությամբ և բնույթով նոր տիպի ստեղծագործություններով, համալրվում է հայկական աստվածների համակարգը՝ դիցարանը:

Հայ ժողովրդական բանահյուսության հիմնական բովանդակությունը կազմում են պատմական եղելությունները: Հին հայ վիպական շարքը արտացոլում է հայոց պետականության զարգացման ընթացքն ու երկրի բարգավաճումը Արտաշես I-ի և Տիգրան Մեծի օրոք: Այսպիսով, հեռավոր անցյալի առասպելների միջոցով անդրադարձը տեղի է տալիս ժողովրդական վեպին, թեև պատմավիպական շարքերը դեռևս շարունակում են հանդես գալ առասպելների հետ միահյուսված: Ավանդական վիպական շարքը իր մեջ ներառել է անցյալի տարբեր շերտեր՝ ընդ որում գործող անձանց և ժամանակների հաճախ չփոթով ու շեղումներով: Այսպես, Տիգրան Մեծի վեպում Տիգրան Երվանդյանի և Աժդահակի մասին պատմությունը միահյուսված է Տիգրան Մեծին վերաբերող զրույցների հետ: Արտաշեսի վեպի հիմքում ընկած են հայկական պետականության առաջացման ու ամրապնդման, նրա հետագա առաջընթացի հետ կապված անցքերը: Արտաշեսը հանդես է գալիս որպես երկիրը միավորող զորեղ արքա, որը պաշտպանում է Հայաստանը թշնամիների

հարձակումներից, խաղաղարար է և չինարար: Արտաշեսի որդի Արտավազդի մասին վեպում պատմվում է վիշապազունների դեմ քաջ և հպարտ արքայազնի մղած պատերազմի և դրանց տոհմը գրեթե լիովին ոչնչացնելու, Արտաշեսի հուղարկավորության ժամանակ բողոքելու և հոր անեծքին ենթարկվելու մասին: Անեծքը կատարվում է. չար ու նախանձ Արտավազդը բանտարկվում է Մասիսի ստորերկրյա քարայրում:

Հին հայկական վիպական զրույցները զգալի առաջընթաց են առասպելների համեմատությամբ: Առասպելական աշխարհընկալումը և պատկերացումները փոխարինված են իրական կյանքի ու կենցաղի վրա խարսխված իրողություններով և հայացքներով: Վիպական զրույցներում հրաչալի են արտացոլված հին հայոց հինավուրց սովորություններն ու բարքերը, հասարակության մեջ տարածված երևույթները: Հին հայկական վեպի համար նյութ են ծառայել արքունիքի և վերնախավի կյանքից վերցված դեպքերը, տիրապետող դասի կենցաղն ու գաղափարախոսությունը: Վիպական երգերը չափազանց սիրված են եղել հասարակության բոլոր խավերի շրջանում: Վեպի առանձին հատվածներ պատմվել և երգվել են փանդիռների նվագի ուղեկցությամբ, վերակենդանացվել և վերապրվել են ունկնդիրների կողմից:

Զարգացման նոր աստիճանի է հասնում նաև հին հայկական հեթանոսական կրոնը: Հայկական կրոնական վաղնջական ըմբռնումների հիման վրա վերջնականապես կազմավորվում է հին հայկական դիցարանը: Աստվածները միմյանց հետ կապված են ազգակցական կապերով, իսկ աստվածների ընտանիքն ունի իր յուրօրինակ ներքին աստիճանակարգը: Յուրաքանչյուր աստված կամ աստվածուհի կատարում է որոշակի դեր և գործառույթ, նրա իշխանությունը տարածվում է բնության երևույթների ու հասարակական կյանքի առանձին երևույթների վրա: Հին հայկական դիցարանի բազում աստվածություններ առնչություններ ունեին մերձավորարևելյան, հատկապես փոքրասիական և իրանական միջավայրի հետ: Սակայն բուն հայկական ավանդույթները, այնուամենայնիվ, չեն կորցրել իրենց նշանակությունը, և օտար ազդեցությունը հաճախ սահմանափակվել է նույնանուն աստվածությունների առկայությամբ:

Հին Հայոց գերագույն աստվածը Արամազդն էր, որը համարվում էր բոլոր աստվածների Հայր: Նա երկնքի և երկրի արարիչն էր, բարօրություն էր պարգևում աշխարհին ու արիություն հաղորդում մարդկանց: Ի տարբերություն իրանական Ահուրա Մազդայի, Հայոց Արամազդը, բարի լինելով հանդերձ, կարող էր և պատուհասել: Հայոց դիցարանին բնորոշ չէր երկվությունը (դուալիզմ), չար և բարի աստվածների առանձին-առանձին գոյությունը և պաշտամունքը:

Արամազդի որդին էր Միհրը՝ արեգակի և կրակի աստվածը: Հայաստանում մեծ ժողովրդականություն էր վայելում Անահիտը: Նա մայրության, պտղաբերության, արգասավորության դիցուհին էր, երկրի և Արտաշատ մայրաքաղաքի հովանավորը: Վահագնը ամպի, անձրևի, ամպրոպի և ռազմի աստված էր, Աստղիկը՝ լույսի, սիրո, գեղեցկության, Տիրը՝ դպրության, ուսման և ճարտարապետության: Կային նաև այլ աստվածներ:

Հելլենիստական պատմաշրջանում հայկական աստվածները համադրվեցին հունականի հետ, և Արամազդը նույնացվեց Զևսի, Անահիտը՝ Արտեմիսի, Միհրը՝ Հեփեստոսի, Վահագնը՝ Հերակլեսի, Աստղիկը՝ Ափրոդիտեի, Տիրը՝ Ապոլոնի հետ: Սակայն այդ համադրումը կատարյալ չէր, լրիվ համապատասխանություն չէր կարող լինել երկու տարբեր պայմաններում ձևավորված դիցարանների միջև:

Ք.ա. III-II դդ. Հայաստանում սկսել էին տարածում ստանալ հունարեն լեզուն և գրականությունը: Տիգրան Մեծի (95-55) օրոք մայրաքաղաք Տիգրանակերտում ապաստան էին գտել հույն հռետոր Ամփիկրատես Աթենացին, փիլիսոփա և հռետոր Մետրոդորոս Սկեպսիացին: Նրանք հեղինակել են Տիգրանի կյանքին և գործունեությանը նվիրված աշխատություններ: Ուշագրավ փաստ է, որ Տիգրանի որդի Արտավազդ II-ը ոչ միայն հունական գրականության երկրպագու էր, այլև ինքն էլ հունարեն լեզվով գրում էր ողբերգություններ, ճառեր և պատմական աշխատություններ:

Հայաստանի քաղաքներից Տիգրանակերտում և Արտաշատում տրվում էին թատերական ներկայացումներ, հնարավոր է, նաև բեմադրվել են հայ հեղինակների գործեր: Թատրոնը հելլենիստական քաղաքի կյանքում կարևոր նշանակություն ուներ,

քանի որ թատերական ներկայացումների միջոցով էր քաղաքպետության՝ պոլիսի բնակչության շրջանում քարոզվում իշխող դասի գաղափարախոսությունը, այս կամ այն քաղաքական խմբակցության հայացքները: Տիգրան Մեծը Տիգրանակերտում թատրոնի շենք է կառուցել հելլենիստական քաղաքներից տեղահանված բնակչության պահանջմունքները բավարարելու նպատակով, բայց թատերական ներկայացումներին հաճախել են նաև հելլենիստական ճաշակ ու հունարեն լեզվի իմացություն ունեցող տեղացիներ՝ գլխավորապես քաղաքային վերնախավից և թագավորի շրջապատից: Հայտնի է, որ Ք.ա. 53 թ. Արտաշատում բեմադրվել է Եվրիպիդեսի «Բաքոսուհիներ» ողբերգությունը, որի հանդիսատեսների թվում էր Արտավազդ II-ը:

Հելլենիստական պատմաշրջանի հայկական մշակույթի զարգացումը նշանավորվեց շրջադարձային բնույթի տեղաշարժով. հետզհետե հեռանալով արևելյան քաղաքակրթության ոլորտից՝ այն ընդգրկվեց միջերկրածովյան ավազանի երկրների մշակութային աշխարհի սահմաններում: Հայկական մշակույթը շարունակում էր ազգային բնույթ կրել՝ աղերսվելով հունա-հռոմեական մշակույթի հետ: Շրջադարձը դեպի արևմտյան քաղաքակրթություն ձեռք բերեց անշրջելի բնույթ, երբ Հայաստանում պաշտոնական կրոն ընդունվեց քրիստոնեությունը, և երկիրն ավելի մեծ չափով հաղորդակից դարձավ միջերկրածովյան քրիստոնեական մշակույթին: Հայաստանի հելլենիստական մշակույթի ավանդույթները, այնուամենայնիվ, չմոռացվեցին և նախապատրաստեցին հայ ազգային մշակույթի աննախընթաց ծաղկումը վաղ միջնադարում:

2. ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐՈՒՄ (IV-XIV դարեր)

ա. Վաղ միջնադարյան մշակույթը: IV-V դդ. Հայոց հոգևոր-մշակութային կյանքում տեղի ունեցած դարակազմիկ շրջադարձը և սկիզբ առած նոր երևույթները վճռորոշ դեր էին կատարելու ժողովրդի հետագա ամբողջ պատմության ընթացքում:

Երկրի քրիստոնեացումը 301 թ. հեղաշրջեց ողջ հոգևոր կյանքը, անջնջելի կնիք դրեց ազգային մշակույթի բնույթի և արտահայտչամիջոցների վրա: Եկեղեցուն անցավ հասարակության գաղափարական և հոգևոր-մշակութային կյանքի ղեկը, քրիստոնեական աշխարհայացքը տիրապետող դարձավ հոգևորականության միջավայրում ու սկսեց ներթափանցել հասարակական մյուս խավերի՝ ազատանու և ռամիկների մեջ:

Ազգային պետության և եկեղեցու ղեկավարների՝ Վռամշապուհ թագավորի, Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի նախաձեռնությամբ և անմիջական մասնակցությամբ իրականացվեց հայոց գրերի ստեղծումը 405 թվականին: Մեսրոպ Մաշտոցի (361-440) հանճարեղ գյուտը հեռանկար էր ստեղծում մշակութային հուժկու պոռթկման, ազգային ոգու ու հոգևոր կարողությունների բացահայտման համար: Մեսրոպ Մաշտոցի և նրա աշակերտների, հաջորդ սերունդների ջանքերով ծաղկում ապրած ոսկեդարյան հարուստ գրականությունը և առհասարակ մշակույթը զորեղ պատնեշ դարձան հարևան տերությունների հոգևոր-գաղափարախոսական ճնշմանը դիմակայելու, հայ էթնոսի ինքնատիպությունը պահպանելու համար: V դարը հայոց պատմության մեջ մտավ որպես եզակի ու բացառիկ երևույթ և պայմանավորեց հետագա դարերի աշխարհընկալման բազմաթիվ կողմերը: Այն ընկած է ազգային նկարագրի հիմքում, այժմ էլ ազդում է մեր գաղափարների, իղձերի և արժեքների համակարգի վրա:

Գրերի գյուտին հաջորդած ժամանակաշրջանում հեղինակների և թարգմանիչների մի ամբողջ սերունդ անդադրում ջանքերով կերտեց արտասովոր հարուստ ու բազմաբովանդակ մատենագրություն, որն իր նշանակությամբ դուրս եկավ ազգային շրջանակներից և ձեռք բերեց համամարդկային արժեք: Հայ առաջին մատենագիրները ստեղծագործում էին կենդանի խոսակցական լեզվով, որի հիմքում ընկած էին երկրի կենտրոնական նահանգի՝ Այրարատի խոսվածքները: Մինչև V դարի 60-ական թվականները ստեղծված հայ գրավոր հուշարձաններն աչքի էին ընկնում լեզվի բացառիկ ճոխությամբ, կանոնավորությամբ և մաքրությամբ: Հայագիտության մեջ ընդունված է այդ լեզուն անվանել «մեսրոպյան» կամ «ոսկեդարյան» հայերեն: Լեզվական այդ կատարելությունը պայմանավորված էր նախ-

ընթաց ողջ պատմական զարգացմամբ: Բացի այդ նրա ծաղկմանը նպաստել էին նաև Աստվածաշնչի այն բանավոր թարգմանությունները, որ կատարել էին քրիստոնյա քարոզիչները մինչև քրիստոնեության պաշտոնականացումն ընկած երկարատև ժամանակաշրջանում:

Հայ մատենագրության զարգացման հաջորդ փուլում, երբ առաջ եկան գրական նոր տեսակներ (ժանրեր), առանձնացան գիտության այլևայլ բնագավառներ, լեզվի մեջ կատարվեցին զգալի փոփոխություններ: Այդ տեղաշարժերը պայմանավորված էին ինչպես լեզվի ներքին զարգացման ընթացքով, այնպես էլ լեզվական նոր փոփոխություններով: Հունարենից փիլիսոփայական, քերականական և դավանաբանական երկեր թարգմանելիս հայ հեղինակները հունարենի օրենքներով և բառերի ու արտահայտությունների պատճենումով այլ տեսք էին տալիս գրավոր լեզվին: Այդ նոր ուղղության գործիչների կատարած աշխատանքի արդյունքներն այնքան ակներև էին, որ ճանաչում են ստացել «հունաբան հայերեն» անվանումով: Հունաբան դպրոցի ներկայացուցիչների կատարած այն նորամուծությունները, որոնք անհարիր էին հայերենի ոգուն ու օտար նրա քերականական կառուցվածքին, հետագա դարերում մոռացվեցին և հետք չթողեցին հայոց լեզվամտածողության մեջ: Փոխարենը հունաբան դպրոցի հեղինակներն արժեքավոր գործ կատարեցին բազմաթիվ նոր բառերի կերտման և գիտական հասկացությունների մշակման ուղղությամբ, որոշակի դրական դեր խաղացին հայոց լեզվի զարգացման գործում:

Հայ բազմաբովանդակ մատենագրության մեջ իրավամբ առանձնահատուկ տեղ է հատկացվում պատմագրությանը: V դ. հայ պատմագրությունը արտասովոր վերելք ապրեց համաշխարհային պատմագրության այն բեկումնային փուլում, երբ անկման վիճակում էր գտնվում հունահռոմեական պատմագրությունը, իսկ բյուզանդականը դեռևս պետք է հաղթահարեր սկզբնավորման դժվարությունները: Արգասավորված անտիկ, մասամբ նաև ասորական պատմագրության նվաճումներով՝ V դ. հայ դասական պատմագրությունը վստահորեն դարձավ համաշխարհային պատմագրական մտքի առաջատարներից մեկը: Վաղ միջնադարյան հայկական մշակույթի համակարգում

պատմագրության բացառիկ դերը պայմանավորված էր ժամանակաշրջանի առաջ քաշած հրամայական պահանջով: Ռազմական ու քաղաքական առումով իրանական ու հռոմեական զորեղ աշխարհակալությունների ճնշմանը տեղի տալով և զրկվելով քաղաքական միասնականությունից՝ հայ էթնոսը պետք է լարեր բոլոր ուժերը՝ իր հոգևոր ամբողջականությունն ու ինքնությունը պահպանելու համար: Այդ գերխնդիրը չլուծելու պարագայում հայ էթնիկ հանրությանն անխուսափելի կործանում էր սպառնում: Ելքը մեկն էր՝ կերտել ինքնատիպ ու հարուստ մշակույթ, նպատակասլաց գաղափարախոսական համակարգ, ազգայնացնել քրիստոնեական եկեղեցին, ձեռք բերել հոգևոր անկախություն: V դ. հայ պատմիչները պետք է գիտակցեին և ապա հայ հասարակությանը ճանաչելի դարձնեին իրենց ազգի առանձնահատուկ (ոչ բացառիկության իմաստով) լինելը, հետևաբար փաստարկեին սեփական ուղիով ընթանալու իրավունքը: Բնական պետք է համարել, որ ինքնահաստատման ճանապարհի առաջին քայլը լինելու էր ինքնաճանաչումը, այսինքն՝ ազգային արմատների վերհանումը: Ստացվում էր, որ ազգային ինքնության գաղափարի ըմբռնման ասպարեզում առավել մեծ անելիքներ ունեին մեր պատմիչները՝ թե՛ որպես սերունդների հիշողությունը գրառողներ և թե՛ որպես ժողովրդի դարավոր ուղին իմաստավորող գիտնականներ:

Հայ պատմագրության առաջնեկը Հայոց գրերի գյուտի հեղինակ Մեսրոպ Մաշտոցի սան Կորյունի «Վարք Մաշտոցի» երկն էր, որը ստուգապատում աղբյուր է հայ մատենագրության և դպրոցի սկզբնավորման մասին: Դարաշրջանի կրոնամշակութային կյանքի կարևորագույն իրադարձությունն է ամփոփված Ագաթանգեղոսի «Հայոց պատմություն» աշխատությունում: Երկում կենտրոնական տեղ է գրավում երկու կրոնաքաղաքական մեծ դեմքերի՝ Գրիգոր Լուսավորչի և Տրդատ III Մեծի կյանքի ու գործունեության նկարագրությունը: Այսպիսով, հայ պատմագրությունն իր առաջին իսկ արգասիքներով ստանձնում էր ազգային մշակույթի պատմության ավանդման խնդիր: Ժամանակագրական առումով հաջորդ փուլի՝ Տրդատ III-ի որդի Խոսրով Կոտակից մինչև Իրանի և Հռոմի միջև Հայաստանի առաջին բաժանման ժամանակահատվածն ընկած շրջանի (330-387) հայոց պատմությունը ներկայացված է Փավստոս Բուզանդի երկում: Եթե նախորդ հեղինակների աշխատությունների առանցքը կազմում են թեկուզև դարակազմիկ, բայց և առանձին իրադարձություններ, ապա Փավստոս Բուզանդն առաջին փորձն է կատարել գրի առնելու մի ամբողջական ժամանակաշրջանի լիարժեք պատմությունը: Աշխատությունը հաճախ հիմնված է բանավոր ավանդությունների (ժողովրդական վեպի) վրա, նրանում բացակայում է ստույգ ժամանակագրությունը, բայց իր պարունակած հարուստ նյութի շնորհիվ պատմաճանաչողական և գեղարվեստական մեծ արժեք ունի: Բուզանդի երկը անփոխարինելի աղբյուր է վաղ ավատատիրական դարաշրջանի Հայաստանի ներքին կյանքի ու կենցաղի մասին, տիրապետող դասի՝ ազատանու գաղափարաբարոյական ըմբռնումները հասկանալու տեսանկյունից:

Մովսես Խորենացին հայ դասական պատմագրության ամենահռչակավոր ներկայացուցիչն է, Հայոց Պատմահայրը: Նրա «Հայոց պատմությունը» հայ պատմագրության գլուխգործոցն է, մեր ազգային մտածողության ակունքներից մեկը, հայերի պատմության առաջին համակարգված չարադրանքը, որ սկսվում է հայերի ծագման ժամանակներից և ավարտվում V դ. կեսերով՝ Խորենացու ապրած ժամանակով: Աշխատությունը աննախադեպ երևույթ է մեր պատմագրության մեջ՝ տարաբնույթ աղբյուրների քննական օգտագործումով, հստակ կառուցվածքով, ստույգ ժամանակագրությամբ, տարածքային ու ժամանակային վիթխարի ընդգրկումով: Պատմահայրը խորապես ըմբռնել է մեր ազգային «ես»-ը, հանդես է եկել հայերի՝ որպես ինքնատիպ էթնիկ հանրության ուրույնության հիմնավորմամբ: Աշխատության մեծագույն արժանիքը նրա գաղափարախոսական նպատակաուղղվածությունն է, ազգային արժեքների համակարգի ստեղծումը: Պատմահոր երկը ավարտվում է հռչակավոր «Ողբով», որը պատմաշրջանի հայ հասարակության բոլոր խավերի անխնա քննադատության միջոցով նպատակ է ունեցել կրթել ու դաստիարակել հետագա սերունդներին ազգային ավանդական բարոյականության ոգով:

V դ. Հայաստանի ռազմա-քաղաքական կյանքի կիզակետներն էին ազատագրական պայքարի երկու ցնցող փուլերը՝

Վարդանանց և Վահանանց պատերազմները: Եղիշե պատմիչը Վարդանանց պատերազմի (450-451) ականատեսն ու ժամանակաշրջանի անցուդարձերի պատկերավոր պատումի հեղինակն է: Նա եղել է մեր ամենակրթված մատենագիրներից մեկը՝ քաջատեղյակ անտիկ և վաղ քրիստոնեական իմաստասիրական ժառանգությանը: Հայտնի է նաև իր մեկնողական երկերով: Եղիշեի «Վարդանի և Հայոց պատերազմի մասին» աշխատության գեղարվեստական բարձր արժանիքները չեն ստվերում նրա պատմագիտական կարևորությունը: Հայ պատմիչը հանգամանորեն վերլուծում է Վարդանանց պատերազմի հետ կապված անցքերի քաղաքական, կրոնագաղափարախոսական և հասարակական-տնտեսական դրդապատճառները և վեր հանում հայերի ընդվզման համաժողովրդական բնույթը: Նրա պատկերացմամբ Վարդանանց անձնվեր պայքարն առաջին հերթին պատերազմ էր Հանուն հայրենիքի և հավատի, ուստի մարտադաշտում ընկածները սրբության լուսապսակով են օժտված՝ արժանի ընդօրինակման ու փառաբանման: Պատմիչի դավանած սկզբունքը՝ «Զգիտակցված մահը մահ է, գիտակցված մահը՝ անմահություն», բնական է դարձել սերունդների համար:

Ղազար Փարպեցին V դ. հայ դասական պատմագրության վերջին նշանավոր ներկայացուցիչն է, 481-484 թթ. հակապարսկական ապստամբության ղեկավար Վահան Մամիկոնյանի մտերիմ անձանցից մեկը: Վերջինիս պատվերով էլ Ղազար Փարպեցին գրել է իր «Հայոց պատմությունը»՝ ընդգրկելով 387 թ. Հայաստանի բաժանումից մինչև Վահանանց պատերազմի հաղթական ավարտը եղած իրադարձությունները:

V դ. հայ պատմագրությունը մեծ արժեք է ներկայացնում ամբողջ Կովկասի, նաև հարևան երկրների՝ Իրանի, Բյուզանդիայի ու Ասորիքի քաղաքական, հասարակական-տնտեսական և մշակութային կյանքի հետազոտության համար: Պատմական և գեղարվեստական նշանակալի կարևորություն ունեն նաև հաջորդ ժամանակաշրջանի՝ VII-VIII դդ. պատմիչների՝ Սեբեոսի, Հովհան Մամիկոնյանի, Ղևոնդի երկերը:

Հայոց գրերի գյուտի անմիջական շարժառիթը քրիստոնեության առանցքային գաղափարների՝ բնակչության համար հասկանալի լեզվով տարածումն էր և եկեղեցական արարողություն-

ների կատարումը հայերեն լեզվով: Ուստի գրերի գյուտից անմիջապես հետո Մեսրոպ Մաշտոցը, Սահակ Պարթևը և նրանց ավագ աշակերտները ձեռնամուխ են լինում Սուրբ Գրքի հայերեն թարգմանությանը: Զուգահեռաբար հայերենի են վերածվում աղոթքները, հոգևոր երգերը, առանց որոնց թերի կլիներ ժամերգության կատարումը: Կարճ ժամանակամիջոցում պատրաստվում է թարգմանիչների մի ամբողջ սերունդ: Մեծ ուսուցիչների ընտրյալ աշակերտների մի խումբը ուղարկվում է Ասորիք՝ ասորերեն դպրության մեջ հմտանալու, ասորի հեղինակների երկերը թարգմանելու նպատակով, իսկ մյուս խումբը ուղևորվում է Ալեքսանդրիա և Կոստանդնուպոլիս՝ հունական գրականությանը ծանոթանալու, նոր թարգմանություններ կատարելու և նախորդ թարգմանությունները հունարեն ստույգ բնագրերի հետ համեմատելու առաջադրանքով: Թարգմանիչների հաջորդ սերունդները շարունակում են սկսած գործը և թարգմանում են աստվածաբանական, դավանաբանական, մեկնողական բնույթի պատկառելի ծավալի գրականություն: Հայոց եկեղեցու գործնական կարիքները բավարարելու նպատակով թարգմանվում են եկեղեցական գրականության գրեթե բոլոր կարևոր երկերը, որոնք հեղինակություն էին ձեռք բերել ընդհանուր քրիստոնեական եկեղեցու շրջանակներում: Եկեղեցական գրականության այդ տեսակներից էին եկեղեցու հայրերի և եկեղեցական ժողովների մշակած կանոնները, նշանավոր եկեղեցականների գրած թղթերը (նամակները), քարոզներն ու ճառերը: Բանավիճային բնույթի գրական տեսակներից հայերենի են վերածվում ջատագովությունները և հակաճառությունները: Թարգմանվում են նաև կրոնական բովանդակությամբ երկեր, վարքեր ու վկայաբանություններ, որոնք ունեին նաև պատմագեղարվեստական արժեք և ավանդում էին քրիստոնեական սրբերի կենսագրությունները, հավատի համար նահատակվածների (վկաների) կյանքի ու տանջալից մահվան հանգամանքները: Աշխարհիկ բովանդակությամբ թարգմանական երկերից նշանավոր է Կեղծ-Կալիսթենեսի «Ալեքսանդր Մակեդոնացու պատմությունը» աշխատությունը:

Հայ թարգմանական գրականությունը հարստանում է նաև փիլիսոփայական, քերականական և պատմագրական երկերի

թարգմանությամբ: Հայ ընթերցողը հնարավորություն է ստանում ծանոթանալու Արիստոտելի, Պորփյուրի փիլիսոփայական աշխատություններին, Թեոն Ալեքսանդրացու «Ճարտասանական կրթության մասին» երկին, Դիոնիսիոս Թրակացու «Քերականությանը», Եվսեբիոս Կեսարացու «Ժամանակագրությանը» և «Եկեղեցական պատմությանը»: Մեր ազգային մատենագրության մեջ հիմք է դրվում թարգմանական ավանդույթին, որը հետագայում խիստ արգասաբեր դեր է կատարում ինքնուրույն գրականության զարգացման գործում: Քրիստոնեական գրականության որոշ կարևոր հուշարձաններ, որոնց հունարեն բնագրերը չեն պահպանվել, կորուստից փրկվել և մեր օրերում միջազգային հանրությանը մատչելի են դարձել հայ թարգմանիչների շնորհակալ գործունեության շնորհիվ: Այդպիսի արժեքավոր երկերի թվին են պատկանում Հերմես Եռամեծի «Սահմանքը», Արիստիդեսի «Ջատագովությունը», Իրենեոսի «Ցույցքը» և այլն:

Գրերի գյուտից հետո Մեսրոպ Մաշտոցը ծավալել է բեղմնավոր գրական գործունեություն, նախ՝ որպես թարգմանիչ, ապա՝ ինքնուրույն երկերի՝ ճառերի և չարականների հեղինակ: Եկեղեցական կանոններ ու հոգևոր երկեր է հեղինակել Սահակ Պարթևը: Նրանց աշակերտ Եզնիկ Կողբացին իր նշանավոր «Եղծ աղանդոց» («Աղանդների հերքումը») աշխատության մեջ հանդես է գալիս քրիստոնեական աստվածաբանության դրույթների պաշտպանությամբ՝ ընդդեմ հեթանոսության, զրադաշտականության, հույն հեթանոս փիլիսոփաների և հակառակ քրիստոնեական եկեղեցուն ուղղված Մարկիոնի աղանդավորական ուսմունքի: Եզնիկ Կողբացու տեսական-փիլիսոփայական երկը կարևոր դեր է խաղացել Վարդանանց պատերազմի գաղափարախոսական նախապատրաստման գործում:

Վերելք են ապրում նաև ինքնուրույն հայ մատենագրության այլ տեսակներ՝ վկայաբանությունները (Սանդուխտ կույսի, Հռիփսիմեի, Շուշանիկի, Վահան Գողթնացու), վիպական բանահյուսությունը («Պարսից պատերազմ», «Տարոնի պատերազմ»), բանաստեղծությունը (Դավթակ Քերթող, Կոմիտաս կաթողիկոս), դավանաբանական գրականությունը («Կնիք հավատոյ», «Գիրք թղթոց» ժողովածուներ) և այլն:

Սկզբնավորվում է հայ փիլիսոփայական գիտությունը, որը հանդես է գալիս երկու գլխավոր ուղղություններով: Առաջինը՝ քրիստոնեական ուղղությունն էր, որը ծառայում էր եկեղեցու դիրքերի ամրապնդմանը, իսկ երկրորդը՝ անտիկ ժառանգության հետ կապված աշխարհիկ փիլիսոփայական ուղղությունը՝ նորպլատոնականությունը: Փիլիսոփայական այդ դպրոցի ականավոր ներկայացուցիչը Դավիթ Անհաղթն էր (V-VI դդ.): Նա հայ իրականության մեջ ներմուծեց հին հունական աշխարհում տարածում ստացած բազմաթիվ գաղափարներ, որոնք նոր պայմաններում միահյուսվեցին հաղթանակած քրիստոնեական գաղափարախոսությանը: Շրջադարձ կատարվեց անտիկ, հեթանոսական աշխարհայացքից դեպի միջնադարյանը, քրիստոնեականը: Հայ փիլիսոփայական մտքի աշխարհիկ ուղղությանն է պատկանում նաև մաթեմատիկոս, տիեզերագետ, բնագետ Անանիա Շիրակացին (VII դ.): Նա բնական գիտությունների հիմնադիրն է Հայաստանում, մինչև մեր օրերը հասած թվաբանության առաջին դասագրքի հեղինակը: Նրան է վերագրվում նաև նշանավոր «Աշխարհացույցը»: VIII դ. սկզբին իր թարգմանություններով հայ փիլիսոփայական գրականությունը հարստացրեց Ստեփանոս Սյունեցին:

Վաղ միջնադարում գիտության զարգացած ճյուղերն էին բժշկագիտությունը, տիեզերագիտությունը և տոմարը, աշխարհագրությունը և քարտեզագրությունը:

Գիտության և գրականության զարգացմանը զուգընթաց՝ վերելքի ուղին է բռնում ճարտարապետությունը: IV դ. կառուցողական ընդարձակ աշխատանքներ կատարվեցին Դվին մայրաքաղաքում և անավարտ մնացած Արշակավանում, V դ. սկզբին վերակառուցվում է Կարինը (Թեոդոսուպոլիս): Վաղ միջնադարյան Հայաստանում մշակվում է աշխարհիկ, պալատական կառույցի մի տիպ, որը բաղկացած էր ուղղանկյուն սյունազարդ դահլիճից և նրա երկայնական կողերին կից փոքր սենյակներից: Այս կառույցները մտել են պալատական շենքերի համալիրի մեջ, որոնք ծառայել են գերազանցապես որպես կաթողիկոսների կամ երկրի կառավարիչների նստավայրեր: Դվինում, Զվարթնոցում և Արուճում կատարված պեղումները համոզիչ կերպով ապացուցել են, որ աշխարհիկ կառույցների

ընդհանուր հորինվածքի վրա զգալի ազդեցություն է թողել հայ ժողովրդական ճարտարապետությունը, որ ներկայացված է մասնավորապես ոլորազարդ, նոր չինանյութի՝ քարի պահանջներին հարմարեցված փայտյա խոյակներով:

Երկրի քրիստոնեացումից հետո կառուցված պաշտամունքային շենքերը սկզբնական շրջանում դեռ շարունակում էին անտիկ ճարտարապետության ավանդները: IV-V դդ. դրանք հիմնականում բազիլիկաներ էին՝ միանավ կամ եռանավ: Աղոթասրահը մույթերով (սյուներով) սովորաբար բաժանվում էր 3 հատվածի՝ նավերի, որոնցից կենտրոնականը լայն էր, իսկ կողմնայինները՝ նեղ: Եկեղեցու արևելյան մասում գտնվում էր բեմը, որի կենտրոնի քարե սեղանի վրա պատարագ էր մատուցվում: Եռանավ բազիլիկ եկեղեցիների մի մասն ուներ արտաքին սյունասրահներ: Միանավ բազիլիկ եկեղեցիների աղոթասրահները ծածկված էին կիսաշրջանաձև քարե ծածկով՝ թաղով, և ամփոփված երկլանջ կտուրի տակ: V դ. վերջից բազիլիկ եկեղեցիներին փոխարինում են գմբեթավոր եկեղեցիները: Հատկապես նշանավոր են VI-VII դարերում կառուցված խաչաձև կենտրոնագմբեթ տաճարները, որոնց դասական օրինակն է Հռիփսիմե եկեղեցին (կառուցված է 618 թ.): Խաչաձև կենտրոնագմբեթ եկեղեցիների նոր հորինվածք է դարաշրջանի ճարտարապետության գլուխգործոց Զվարթնոցը, որ կառուցել է Ներսես Գ Շինող (Տայեցի) կաթողիկոսը (641-661): Եռահարկ տաճարի չորս աբսիդները՝ կիսագլանաձև ծավալները, շրջապատված են օղակաձև սրահով:

Վաղ միջնադարի ճարտարապետության բացառիկ բարձր մակարդակը մեծապես պայմանավորված էր կառուցողական գործի և շինարարական արվեստի զարգացման մակարդակով: Ժամանակի ճարտարապետության խնդիրները հաճախ առաջին անգամ իրենց լուծումը ստանում էին Հայաստանում: Դարաշրջանի ճարտարապետական մշակույթը հիմք ծառայեց կառուցողական արվեստի հետագա առաջընթացի համար:

Վաղ միջնադարի ճարտարապետության տպավորիչ հաջողություններին համընթաց՝ վերելք ապրեց նաև քանդակագործությունը: Տիրապետող գաղափարախոսության ազդեցությամբ դարաշրջանի քանդակագործության մեջ գերիշխում էին

կրոնական բնույթի քանդակները: Քրիստոնեական ընդհանուր տեսարաններին և պատկերներին զուգահեռ՝ Հայաստանում մեծ տարածում են ստանում տեղական, ազգային թեմաները, տեսարանները, Տրդատ III-ի և Գրիգոր Լուսավորչի գործունեության հետ կապված դրվագները:

Աշխարհիկ քանդակների մի մասն արտահայտում էր նախարարական դասի կենցաղը, այդ թվում՝ հայ իշխանների կյանքում առանձնակի տեղ գրավող որսորդությունը: Հանդիպում են նաև բնակչության զբաղմունքները՝ խաղողի մշակումը, բերքահավաքը պատկերող քանդակներ: Բարձր զարգացման արգասիք են բուսական և երկրաչափական զարդաքանդակները:

Ճարտարապետական հուշարձանների ներքին հարդարման ձևերից էին որմնանկարները և խճանկարները: IV-V դարերից պահպանվել են որմնանկարների բեկորներ, իսկ VII դարից մեզ են հասել ամբողջական կոմպոզիցիաներ (Թալին, Լմբատավանք, Արուճ): Հայոց եկեղեցուն բնորոշ չէ պատկերազարդությունը, բայց և նա չի խուսափել պատկերների միջոցով հավատացյալների վրա ներգործելու այդ ազդու միջոցից:

Դարաշրջանի ամենանշանավոր խճանկարները գտնվել են Երուսաղեմում, ուր եղել են բազմաթիվ հայկական եկեղեցիներ: Այդ, ինչպես նաև Հայաստանում գտնված խճանկարները կապված են հելլենիստական պատմաշրջանի խճանկարչական արվեստի հետ և կրում են անտիկ ավանդույթների ազդեցությունը: Միաժամանակ դրանց մեջ հին պատկերների և զարդաձևերի կողքին հանդես են գալիս քրիստոնեական խորհրդանիշ-պատկերներ, իսկ խճանկարները ավելի գունեղ են ու արտահայտիչ:

Վաղ միջնադարում սկիզբ է առնում գրքերի զարդարման արվեստը՝ մանրանկարչությունը, որից միայն առանձին նմուշներ են պահպանվել:

Շարունակում է ծաղկում ապրել աշխարհիկ երաժշտությունը: Հայ չինականները հորինում էին բազմատեսակ երգեր, որոնք արտացոլում էին ռամկական կենսազգացողությունը: Տարբեր երանգ ու ճաշակ ունեին քաղաքային երգն ու պարը: Մեծ հռչակ են ձեռք բերում հայ գուսանները: Հայ երաժիշտները համբավ էին վայելում անգամ Սասանյան Իրանում և հրավիրվում էին պարսկական արքունիք: Գրերի գյուտից հետո զար-

գացման նոր աստիճանի է բարձրանում հայ հոգևոր երաժշտությունը՝ հասնելով դասական խորության և ներգործության:

Հայաստանում վաղ միջնադարում տարածում ունեին թատերական ներկայացումներն ու զվարճալիքները: Միջնադարյան թատերական կյանքի արտահայտություններից էին ժողովրդական հանդեսները, թագավորական և նախարարական պալատներում տրվող թատերական ներկայացումները: Թատրոնը կարևոր տեղ էր գրավում բնակչության կենցաղում: Ժողովրդի թատերասիրությունը հարուցում էր հոգևորականների անհանգստությունը:

Վաղ միջնադարի հայ նյութական և հոգևոր զորեղ մշակույթը քաղաքական անբարենպաստ պայմաններում ծառայում էր համազգային կյանքի կայունացմանը և արտաքին ճնշմանը դիմագրավելու նպատակին: Պատմաշրջանում ստեղծված հայոց ազգային արժեքները պատկառելի ներդրում են համաշխարհային մշակույթի գանձարանում:

բ. Մշակույթը զարգացած ավատատիրության շրջանում: Արաբների քաղաքական գերիշխանության ժամանակաշրջանում հայ ժողովրդի նյութական և հոգևոր մշակույթի զարգացումը դանդաղել էր, խիստ նվազել էին առաջընթացի հնարավորությունները: Հայոց պետականության վերականգնումը, Բագրատունիների գլխավորությամբ անկախ թագավորության կերտումը, ավատատիրական քաղաքների առաջացումը, երկրի ընդհանուր տնտեսական վերելքն ու առաջադիմությունը, առնչությունների սերտացումը հարևան երկրների հետ նախադրյալներ ստեղծեցին կրթական գործի, գիտության, գրականության և արվեստի վերելքի համար: Ճիշտ է, սելջուկ-թուրքերի ու մոնղոլների արշավանքները և Հայաստանի տնտեսական կյանքում սկիզբ առած անկման երևույթները մեծապես խոչընդոտեցին հայ մշակույթի հետագա առաջընթացը, բայց ի վիճակի չէին կանգնեցնելու այն: Զաքարյան իշխանների գլխավորությամբ հայկական տարածքների ազատագրումը և տնտեսական կյանքի վերընձյուղումը նոր վերելք առաջ բերեցին մշակույթի զարգացման ասպարեզում: Ինքնատիպ մշակութային կյանքով էր ապրում Կիլիկյան Հայաստանը, որի առնչությունները չափազանց սերտ էին թե՛ բուն Հայաստանի, թե՛ Բյուզանդիայի, արևմտաեվրոպական երկրների ու մերձավորարևելյան տարածաշրջանի մահմեդական քաղաքական կազմավորումների հետ:

Պատմաշրջանի հայ մատենագրության և մշակույթի մյուս բնագավառների կայուն վերելքի հիմքը կրթական գործի զարգացումն էր:

Տարրական կրթություն երեխաները ստանում էին հասարակական կամ մասնավոր բնույթի դպրոցներում, որտեղ ուսուցումը տևում էր չուրջ երեք տարի: Նախնական կրթություն ստացածները հետագա ուսումնառությունը շարունակում էին բարձր տիպի ուսումնական հաստատություններում՝ վարդապետարաններում: Կրթագիտական հռչակավոր կենտրոններ էին Անիի, Արգինայի, Կարսի, Հաղպատի, Սանահինի, Կեչառիսի, Այրիվանքի, Նարեկա վանքի, Մշո Ս. Կարապետի վարդապետարանները: 1280-ական թվականներից գործում էր Գլաձորի համալսարանը, որի նշանավոր ուսուցչապետներից էին Ներսես Մշեցին և Եսայի Նչեցին: Գլաձորի ավանդույթները շարունակեց Տաթևի համալսարանը, որը մեծ հռչակ ձեռք բերեց Հովհան Որոտնեցու և Գրիգոր Տաթևացու արդյունավետ գործունեության շնորհիվ:

Ակներև հաջողությունների հասավ գիտությունը, մասնավորապես՝ պատմագրությունը: Հայ պատմիչները հենվում էին հայ դասական պատմագրության, հատկապես Մովսես Խորենացու մշակած սկզբունքների և ստեղծագործական եղանակների վրա: Քաղաքական իրողությունները՝ Բագրատունյաց կենտրոնական թագավորության և տեղական իշխանությունների ու թագավորությունների համատեղ գոյությունը, պատճառ դարձան պատմագիտության զարգացման մեջ երկու գլխավոր ուղղությունների հանդես գալու համար: Առաջինը պաշտպանում էր երկրի միասնության գաղափարը և ձգտում էր միաբանություն հաստատել իշխանների ու թագավորների միջև: Երկրորդ ուղղությունը ներկայացնող պատմիչները փորձում էին հիմնավորել ու արդարացնել ավատատիրական անջատողականությունը և տեղական թագավորությունների հանդես գալը: Հայ պատմագրության մեջ առանձնացավ նաև երրորդ ուղղությունը, որն իր առջև նպատակ էր դրել ստեղծել «տիեզերա-

կան», այսինքն՝ համընդհանուր պատմություն, որ ամփոփ պատկերացում կտար մարդկության ծագման ու զարգացման ընթացքի մասին:

Առաջին ուղղության ներկայացուցիչները ամրապնդում են «Հայոց պատմությունների» ավանդույթը, ընդ որում պահպանվում է նախորդ դարաշրջանում ձևավորված սկզբունքը. պատմիչն իր երկը սկսում է այն ժամանակահատվածից, որտեղ ավարտվել է ավելի վաղ գրված պատմությունը: Հովհաննես Դրասխանակերտցին այս ուղղության պատմիչների շարքում առաջինն է: Նա հիանալի կրթություն է ստացել, եղել է Հայոց կաթողիկոս և այդ պաշտոնը վարել ավելի քան քառորդ դար, ձեռքի տակ ունեցել է հարուստ ու հավաստի նյութեր: Առանձնապես արժեքավոր է նրա «Հայոց պատմության» եզրափակիչ մասը, որտեղ նա հանդես է եկել որպես իրադարձությունների ականատես ու մասնակից (IX դ. կեսեր–X դարի առաջին քառորդ):

Հայաստանի XI դարի պատմությանն է նվիրել իր աշխատությունը Արիստակես Լաստիվերցին, իսկ Կիրակոս Գանձակեցին շարադրել է երկրի պատմությունը՝ Հայոց դարձից մինչև իր օրերը՝ XIII դարի 60-ական թվականները:

Թովմա Արծրունու «Արծրունյաց տան պատմությունը» աշխատությունը տոհմական պատմություն է՝ Վասպուրականին վերաբերող փաստերով ու մանրամասնություններով հարուստ: X դարի սկզբի անցքերի նկարագրությամբ ավարտվող երկը հետագայում շարունակել է Անանուն Արծրունի պատմիչը:

Ստեփանոս Օրբելյանի «Սիսական նահանգի պատմություն» երկը ևս տեղական թագավորության պատմություն է, բայց նրա նշանակությունը դուրս է գալիս Սյունիքի շրջանակներից: Հայրենի նահանգի պատմությունը հեղինակը շարադրել է ոչ միայն Հայաստանի, այլև ողջ մերձավորարևելյան տարածաշրջանի եղելությունների անդրադարձումով, ուստի արժեքավոր աղբյուր է նաև հարևան երկրների պատմության տեսանկյունից:

Հայ պատմագրության մեջ պատմական իրականության ընդգրկման շրջանակների ընդարձակման վկայություն էր «Տիեզերական պատմությունների» ավանդույթի ձևավորումը:

Այս երկերի առանցքը, անշուշտ, Հայրենի երկրի պատմությունն էր, բայց տարածաշրջանի և այն ժամանակ հայտնի ու բնակեցված աշխարհի իրադարձությունների ընդհանուր համայնապատկերի արտացոլումով: Տիեզերական պատմությունների շարքը սկսվում է XI դարի սկզբին գրի առնված աշխատությամբ, որի հեղինակն է Ստեփանոս Տարոնեցի Ասողիկը: Ընդհանուր պատմության շարադրման երկրորդ փորձը XIII դարում ձեռնարկել է Վարդան Արևելցին:

Հանդես են գալիս նաև նոր բնույթի երկեր՝ ժամանակագրություններ: Այս տիպի պատմական երկերը մեծ ժամանակաշրջան են ընդգրկում, բայց ստուգապատում և հանգամանալից են դառնում հիմնականում այն հատվածները, որոնք վերաբերում էին հեղինակի ապրած ժամանակաշրջանի դեպքերին և իրադարձություններին: Ուշագրավ է ժամանակագիրների աշխարհագրական լայն ընդգրկումը՝ շրջակա երկրների իրականությանը անդրադառնալը: Հայ ժամանակագիրների շարքում առաջնակարգ տեղ են գրավում Մատթեոս Ուռհայեցին, Սամվել Անեցին, Մխիթար Անեցին, Կիլիկյան Հայաստանի քաղաքական ու գիտական կարևոր դեմքերից Սմբատ Գունդստաբլը:

XIII և հետագա դարերում սովորական են դառնում պատմական իրադարձությունների համառոտ նկարագրությունները՝ մանր ժամանակագրությունները, որոնք ըստ էության տարեգրություններ են: Կարևոր սկզբնաղբյուրներ լինելով հանդերձ՝ դրանք վկայում են Հայաստանում պատմագիտական մտքի վերահաս անկման մասին:

Զարգացած ավատատիրության պատմաշրջանում արհեստների ու առևտրի վերելքը, քաղաքային բնակչության դերի բարձրացումը, քաղաքային աշխարհընկալման և մշակույթի հանդես գալը էականորեն ազդեցին հայ փիլիսոփայության զարգացման ընթացքի վրա: Քաղաքային տնտեսությունը, արտադրողական ուժերի աճը մեծացնում էին բնական գիտությունների, ճշգրիտ գիտելիքի դերը, ուստի առաջին գծի վրա քաշվեց բնափիլիսոփայական ուղղությունը: Հանքաբանության, աշխարհագրության, կենսաբանության, բժշկագիտության հիման վրա հետագա զարգացում ապրեց փիլիսոփայական մտքի բնագիտական հոսանքը:

IX-XI դդ. չարունակում էր իր որոշակի ազդեցությունը պահպանել նորպլատոնականությունը, որի խոշորագույն ներկայացուցչի՝ Դավիթ Անհաղթի ժառանգությունը մշտական հետաքրքրության առարկա էր մնում: Հայ հեղինակների շրջանում հեղինակություն էին վայելում նաև Դիոնիսիոս Արեոպագեցու նորպլատոնական գաղափարները, որոնք Հայտնի էին Ստեփանոս Սյունեցու թարգմանությունների շնորհիվ: Նորպլատոնական կարևոր գաղափարներից մեկի համաձայն մարդը իր մտավոր ու հոգեկան կարողություններով պետք է ձգտեր նմանվել և մերձենալ Աստծուն, որպեսզի կարողանար ձուլվել նրան: Այս գաղափարի հանճարեղ արտահայտիչը հայ իրականության մեջ Գրիգոր Նարեկացին էր (950-1003), որը քրիստոնեական բովանդակությամբ հարստացրեց նորպլատոնական դրույթները: «Մատյան ողբերգության» բարձրարվեստ երկում գերիշխող է գերագույն լարումով Աստծո հետ համաձուլվելու գաղափարը, ուստի նրա հեղինակի համոզմամբ հավատացյալը պետք է անդադար խոստովանի ու քավի իր մեղքերը. հաղթի իր մարմնական ձգտումները և ձուլվելով երկնային Տիրոջը՝ դառնա նրա մի մասնիկը:

Նորպլատոնական գաղափարները սրտամոտ էին նաև հայ իրականության մեջ միակ աշխարհիկ փիլիսոփա Գրիգոր Մագիստրոս Պահլավունու (990-ական թթ.-1058) համար: Սակայն հետազոտական ձգտումները, շրջապատող սոցիալական միջավայրը պայմանավորեցին նրա հակումը դեպի փիլիսոփայական ռացիոնալիզմ և բնափիլիսոփայություն: Նա Պլատոնի մի շարք գործերի և Էվկլիդեսի «Տարերք երկրաչափության» հայտնի երկի թարգմանիչն է, հին հունական դիցաբանության ու գեղարվեստական գրականության գիտակ և երկրպագու: Նորպլատոնականությունից չկտրվելով հանդերձ՝ Գրիգոր Մագիստրոսը արձագանքում էր իր ժամանակի պահանջներին և զգալի առաջընթաց քայլ կատարեց հայ փիլիսոփայական մտքի զարգացման բնագավառում:

Ժամանակի ականավոր հայ բնագետ, բանաստեղծ և փիլիսոփա Հովհաննես Սարկավագ Իմաստասերը (1045-1129) իր տեսակետները հիմնում էր բնական գիտությունների տվյալների վրա. նա դարձավ բնափիլիսոփայական ուղղության հիմնադիրը հայ իրականության մեջ: Մեծ արժեք է ներկայացնում նրա առաջ քաշած այն միտքը, որ ճանաչողության գործընթացում վճռական նշանակություն ունի փորձը: Արևմտյան Եվրոպայում նույն տեսակետին հանգեց հռչակավոր անգլիացի փիլիսոփա Ռոջեր Բեկոնը միայն երկու դար անց՝ XIII դ. վերջին:

Հայ փիլիսոփայական մտքի պատմության մեջ բնագիտական ուղղությունը ներկայացնում են նշանավոր բժշկագետներ Մխիթար Հերացին (XII դ.), Գրիգորիսը (XIII-XIV դդ.), ականավոր մատենագիր և փիլիսոփա Հովհաննես Երզնկացին (XIII դ.):

XIII-XIV դդ. Հայաստանում տարածում ստացան նոմինալիստական ուսմունքները: Նոմինալիստների և ռեալիստների բուռն բանավեճերը ուղեկցում էին միջնադարյան փիլիսոփայության զարգացումը արևմտաեվրոպական երկրներում և հանգում էին հետևյալ առանցքային հարցին. ո՞րն է առաջնայինը և ռեալ գոյություն ունեցողը, այլ խոսքով՝ առաջնայինը ընդհանուր (ընդհանրականը) հասկացությունն է, թե իրարից անջատ, առանձին հասկացությունները: Ռեալիստների կարծիքով ռեալ գոյություն ունեին միայն ընդհանուր հասկացությունները, որոնք առանձին իրերի նախագաղափարներ են, և դրանցից է կախված իրերի լինելիությունը: Նոմինալիստների համոզմամբ ընդհանրականը առանձին իրերի սոսկ անուններն են, և ռեալ գոյություն ունեն միայն առանձին իրերը: Նոմինալիզմի առաջին խոշոր ներկայացուցիչը XIII դ. Կիլիկյան Հայաստանի քաղաքական գործիչ և փիլիսոփա Վահրամ Ռաբունին էր: Հաջորդ դարում նոմինալիստական փիլիսոփայությունը զարգացման նոր աստիճանի բարձրացրին Տաթևի համալսարանի ականավոր ուսուցչապետներ Հովհան Որոտնեցին (1313-1386) և Գրիգոր Տաթևացին (1346-1409):

Զարգացած ավատատիրության պատմաշրջանի բարդ իրավահարաբերություններն այլևս անհնար էր կարգավորել միայն քրիստոնեական եկեղեցու կանոնական իրավունքի հիման վրա: Հյուսիսարևելյան Հայաստանում և Կիլիկիայում ծաղկում էին ապրում քաղաքները, տնտեսական զարգացման ընթացքը բարդ փոխհարաբերություններ էր առաջ բերել: Եթե Դավիթ Ալավկաորդին (XI դ. երկրորդ կես-XII դ. սկիզբ) դեռևս հե-

տևում էր կանոնական իրավունքի ավանդույթներին և իր «Կանոններում» մասամբ էր անդրադառնում աշխարհիկ կյանքի առաջադրած խնդիրներին, ապա XII դ. երկրորդ կեսին պատկերը փոխվում է: Մխիթար Գոշը ստեղծում է հայ միջնադարյան իրավունքի գլուխգործոց «Դատաստանագիրքը»: Այն կոչված էր կարգավորելու կյանքի բոլոր բնագավառները՝ հասարակական-տնտեսական հարաբերությունները, ունեցվածքային վեճերը, առօրյա կենցաղը, բարքերն ու սովորությունները: Դեռևս միջնադարում Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը» թարգմանվել է լատիներեն, լեհերեն ու վրացերեն, գործադրության մեջ մտել հայկական գաղթավայրերում:

Քաղաքացիական օրենքների բացակայությունը ոչ պակաս սրությամբ զգացվում էր նաև Կիլիկյան Հայաստանում: Այդ բացը լրացնելու նպատակով խոշոր հասարակական-հոգևոր գործիչ և մատենագիր Ներսես Լամբրոնացին XII դ. երկրորդ կեսին թարգմանում է բյուզանդական ու ասորական քաղաքացիական և զիվորական օրենքներ, որոնք նպաստել են ազգային օրենսդրության զարգացմանը: Թարգմանական օրենսդրության հաջորդ հուշարձանը «Անտիոքի ասիզներն» են, որոնք գործող օրենքներ էին Հարևան Անտիոքի դքսությունում: Ուշագրավ է, որ օրենքների այդ ժողովածուի հին ֆրանսերեն բնագիրը կորած է և այն այսօր մատչելի է հետազոտողներին միայն հայերեն թարգմանությամբ:

Գրական ու գիտական մեծ վաստակ է թողել կիլիկիահայոց խոշոր մտածող, օրենսգիր Սմբատ Սպարապետը: Նա նախ թարգմանում է «Անտիոքի ասիզները», ապա ձեռնամուխ է լինում իր «Դատաստանագրքի» շարադրմանը, որը հիմնված է Մխիթար Գոշի «Դատաստանագիրք»-ի (1265) վրա, բայց հարմարեցված է Կիլիկյան Հայաստանի տեղական պայմաններին ու պահանջներին: Դյուրամատչելիության նկատառումով նյութերը շարադրված են Կիլիկիայում տարածված հայերեն խոսվածքով:

X-XIV դդ. զարգացման աննախադեպ մակարդակի հասավ հայ գեղարվեստական գրականությունը: Ի հայտ եկան այնպիսի երևույթներ, որոնք յուրովի արձագանք էին երկրի հասարակական ու տնտեսական առաջընթացի, քաղաքային կյանքի պայմաններում անհատի ձգտումների ու առանձնահատուկ հոգեբանության, աստիճանաբար խորացող արտաեկեղեցական աշխարհիկ ոգու, որոնցով պայմանավորված էր գեղարվեստական գրականության մեջ նոր գրական ժանրերի, ժողովածուների, թարգմանական երկերի հանդես գալը:

Սկիզբ առնելով նախորդ պատմաշրջանում՝ շարունակում են հարստանալ հոգևոր երգերի «Շարական» կոչված ժողովածուները: Գրիգոր Նարեկացու անվան հետ է կապված «Գանձարան» անունով հայտնի մեծածավալ ժողովածուների ծնունդը: Դրանց մեջ բացի բանաստեղծություններից (գանձերից) ընդգրկվում էին նաև հոգևոր տաղեր ու մեղեդիներ: Դրանք նոր երևույթ էին եկեղեցական պաշտոնական գրականության բնագավառում և թեմատիկ ընդգրկումով ու գեղարվեստական արժանիքներով գերազանցում էին «Շարական» ժողովածուներին: Ավելի մեծ ապագա էր սպասվում «Տաղարան» ժողովածուներին, որոնք կապված լինելով Գանձարաններին՝ այսուհանդերձ հակված էին արձագանքելու աշխարհիկ կյանքի երևույթներին, արծարծում էին բազմատեսակ թեմաներ:

Զարգանում էր նաև ժողովրդական բանահյուսությունը, թեև նրա արժեքները գրառման չէին արժանանում: Այս պատմաշրջանի, ինչպես նաև մասամբ նախորդ ու հաջորդ դարերի ծնունդ էր «Սասնա ծռեր» ժողովրդական վեպը՝ կենտրոնական տեղ գրավող Սասունցի Դավթի դյուցազնական կերպարով: Ժողովրդական ստեղծագործություններից օգտվում էին նաև անվանի բանաստեղծները: Ժողովրդական երգերի չունչը հատկապես նկատելի է Գրիգոր Նարեկացու շատ ստեղծագործություններում: Նա առաջինն էր, որ ստեղծեց բարձրորակ երգարվեստ՝ օգտագործելով ժողովրդական բանահյուսության հարուստ հնարավորությունները: Մեծ բանաստեղծի հանճարով բացված ճանապարհը դարձավ հայ քնարերգության զարգացման մայրուղի:

Անիի գրական դպրոցի ականավոր ներկայացուցիչներից էին Գրիգոր Մագիստրոս Պահլավունին և Հովհաննես Սարկավագ Իմաստասերը: Առաջինը հայտնի է իր «Թղթերով»՝ նամակներով, որոնք գեղարվեստական արձակի արժեքավոր նմուշներ են՝ շարադրված գեղեցիկ, բայց հաճախ նաև բարդ ու խրթին լեզվով: Նոր հայացքների ու հոգեբանության կնիքն է կրում Հով-

Հաննես Իմաստասերի դրամատիկական պոեմը, որտեղ մերժվում է վանական հին մտայնությունը և հիմնավորվում է բնության առաջնայնության գաղափարը:

Կիլիկյան Հայաստանում գրական առաջընթացի ականավոր դեմքը Ներսես Շնորհալին էր, ժամանակի Հայոց կաթողիկոսը (1166-1173): Նրա արձակ և չափածո գրական ժառանգության մեջ առանձնանում է հասարակության տարբեր խավերին ուղղված «Թուղթ ընդհանրական» կաթողիկոսական շրջաբերականը: Նրա գրչին են պատկանում նաև «Ողբ Եդեսիո» և այլ պոեմներ, հարյուրավոր հանելուկներ:

Պատմաշրջանի գրականության խոշոր նվաճումներից էր առակագրության ձևավորումն ու զարգացումը: Մխիթար Գոշը եղավ այս գրական տեսակի հիմնադիրը Հյուսիսարևելյան Հայաստանում, իսկ Վարդան Այգեկցին՝ Կիլիկյան Հայաստանում: Նրանք զարգացման մի նոր աստիճանի բարձրացրին առակագրությունը: Առակները հաճախ վերցվում էին ժողովրդից և մշակվելով՝ նոր որակ էին ձեռք բերում: Այս ժանրի նպատակն էր սուր քննադատության ենթարկել կյանքի արատավոր կողմերն ու երևույթները, միաժամանակ խրախուսել առողջի ու կատարյալի ծնունդն ու զարգացումը: Մխիթար Գոշի և Վարդան Այգեկցու առակագրքերը մեծ տարածում ստացան և անգերազանցելի մնացին:

Գրիգոր Տղան, Ֆրիկը, Հովհաննես Երզնկացին, Կոստանդին Երզնկացին, Հովհաննես Թլկուրանցին և նրանց ժամանակակից ուրիշ բանաստեղծներ նոր շունչ հաղորդեցին հայ քնարերգությանը, նպաստեցին ազգային մշակույթի առաջընթացին:

Արաբական տիրապետության ժամանակաշրջանում, չուրջ երկդարյա ընդհատումից հետո, տնտեսական առաջընթացի և բարգավաճման պայմաններում կրկին վերելքի ուղին բռնեց ճարտարապետությունը: IX դ. կառուցված եկեղեցիները սովորաբար կրկնում էին նախորդ դարաշրջանի եկեղեցական շենքերի հատակագծային տիպերը, սակայն ավանդական ձևերի շրջանակներում որոշակի առաջընթաց էր դիտվում: Բագրատունյաց ժամանակաշրջանում սկիզբ է առնում վանական համալիրների կառուցումը: Տաթևի, Սևանի, Խծկոնքի, Հոռոմոսի, Գնդեվանքի վանական համալիրներում աշխարհիկն ու հոգևորը

հիանալի ներդաշնակություն են կազմում միմյանց և բնության հետ: Եկեղեցական շենքերի ճարտարապետության մեջ առաջ եկած նոր ըմբռնումները դասական մարմնավորում են ստացել Աղթամարի տաճարում (ճարտարապետ Մանուել)՝ կառուցված 915-921 թթ., Գագիկ Թագավորի օրոք: Տաճարը նվիրված է Սուրբ Խաչին և իր հատակագծով ու ծավալատարածական լուծումներով սերտ աղերսներ ունի վաղ միջնադարյան կենտրոնագմբեթ խաչաձև տաճարների՝ Ավանի, Հռիփսիմեի հետ: Բազմազան ու բազմաբովանդակ զարդաքանդակները, որոնք զարդարում են շենքի արտաքին ճակատները և բոլոր պատերը, նոր երևույթ էին հայ շինարարական արվեստում և բացառիկ չքեղություն են հաղորդում ողջ կառույցին:

Դարաշրջանի հուշարձանները աչքի են ընկնում մի բնորոշ հատկանիշով՝ ճարտարապետական համաչափությունների վերսլացությամբ, շնորհիվ որի այդ հորինվածքները արտաքուստ և ներքուստ ձեռք են բերում միասնականություն ու հանդիսավորություն: Այս առումով բնութագրական է Անիի մայր տաճարի ներքին հորինվածքը, որը Գագիկ I Թագավորի արքունական ճարտարապետ Տրդատի ձեռակերտն է: Այստեղ արտահայտված ոճական նորամուծությունները հետագայում բնորոշ են դառնում Արևմտյան Եվրոպայում լայն տարածում գտած ռոմանական ու գոթական ոճերի ճարտարապետական հուշարձանների համար:

Հայաստանում ծավալված քաղաքաշինության շնորհիվ աննախադեպ ծաղկում ապրեց աշխարհիկ ճարտարապետությունը: Քաղաքներում կառուցված աշխարհիկ նորատիպ շենքերի ճարտարապետական ձևերում, կառուցողական արվեստում լայնորեն օգտագործվում են ժողովրդական բնակարանի շինարարության հարուստ ավանդույթները: Աշխարհիկ ճարտարապետության զարգացման գործընթացում առաջատարի դերում էր Բագրատունյաց մայրաքաղաք Անին, որը օրինակ էր ծառայում այլ քաղաքային կենտրոնների համար: Հայ ճարտարապետության առաջընթացին ոճական բազմազանություն են հաղորդում նաև առանձին նահանգների (Վասպուրական, Սյունիք, Գուգարք) ճարտարապետական դպրոցները:

Սելջուկ-Թուրքերի ներխուժումներին հաջորդած ժամանա-

կաշրջանում հայ ճարտարապետության վերելքը շարունակվեց և նշանավորվեց նոր նվաճումներով: Հայաստանի կենտրոնական շրջաններում այդ փուլն ընդհատվեց մոնղոլների գլխավոր արշավանքից (1236) հետո, սակայն երկրի առանձին շրջաններում, մասնավորապես Վայոց ձորում, առավել մեծ չափով Կիլիկյան Հայաստանում, ճարտարապետության առաջընթացը շարունակվեց նաև XIII-XIV դարերում: Բագրատունիների ավանդույթներին հետևեցին Զաքարե և Իվանե Զաքարյաններն ու նրանց ազգակից իշխանական տոհմերը՝ Օրբելյանները, Վաչուտյանները, Խաղբակյանները (Պռոշյանները): Եկեղեցաշինական և առհասարակ կառուցողական գործունեությամբ աչքի են ընկնում Կիլիկիայի Ռուբինյան և Հեթումյան թագավորական ընտանիքները:

Իր երկրորդ ծաղկումն է ապրում Անին, որը հարստանում է եկեղեցական ու աշխարհիկ չքեղազարդ շենքերով: Նոր տիպի կառուցվածքներով՝ զանգակատներով, ժամատուն-գավիթներով, կրկնահարկ եկեղեցի-դամբարաններով լրացվեցին ու հարստացան վանական համալիրները: Ճարտարապետական արվեստի հետ ներդաշնակ զարգանում են նաև քանդակագործությունն ու որմնանկարչությունը:

Քանդակագործության վերելքին նպաստեցին ճարտարապետական հուշարձանների դեկորատիվ հարդարման ավանդույթի ձևավորումը և խաչքարային արվեստի ծաղկումը: Լայն տարածում են ստանում կրոնական ու աշխարհիկ թեմաներով պատկերաքանդակները (Աղթամար), եկեղեցիների պատվիրատուների՝ կտիտորների քանդակները (Հաղպատ, Սանահին): Քանդակագործական արվեստի իսկական գլուխգործոցներ են XIII-XIV դդ. խաչքարերը: Գեղարվեստական փորագրության կատարելությամբ առանձնանում են քանդակագործներ Պողոսի և Մոմիկի կերտած խաչքարերը (Գոշավանք, Նորավանք):

Ճարտարապետությանը ավելի սերտ էր կապված որմնանկարչությունը: Հայկական եկեղեցիներում, ի տարբերություն բյուզանդականի, ներքին մակերեսները այնքան լավ էին մշակվում, որ գրեթե վերանում էր պատերը ծեփով ու ապա որմնանկարներով ծածկելու կարիքը: Հայկական տաճարները ներքին տարածության պարզության ու ճարտարապետական

կատարյալ լուծումների շնորհիվ լրացուցիչ հարդարանքի անհրաժեշտություն չունեին: Ուստի հայկական որմնանկարչությունը մեզ չի հասել մեծաթիվ նմուշներով, բայց փոխարենը՝ պահպանված օրինակները աչքի են ընկնում բարձր արվեստով: Քրիստոնեական Արևելքի միջնադարյան արվեստի պատմության մեջ որոշակի տեղն են գրավում Աղթամարի, Տաթևի հազվագյուտ որմնանկարները, որոնք թվագրվում են X դարով: XII-XIV դդ. հայկական որմնանկարչությունը զարգացում է ապրում Անիում (Տիգրան Հոնենցի եկեղեցի), Զաքարյան և Մահկանաբերդցի իշխանների հովանավորությունը վայելող հոգևոր կենտրոններում:

Միջնադարյան հայ գեղանկարչության պատմության մեջ բացառիկ տեղ է գրավում մանրանկարչությունը, որի մեզ հասած առաջին նմուշները IX-X դարերից են: Պատկերազարդված հնագույն հայերեն ձեռագիրը «Մլքե թագուհու Ավետարանն» է, որն ընդօրինակվել ու զարդանկարվել է 851 թ. և հետագայում եղել է Վասպուրականի թագավոր Գագիկ Արծրունու կնոջ՝ Մլքե թագուհու սեփականությունը: XI դ. Անիում և նրա շրջակա վանքերի ձեռագրական կենտրոններում ստեղծված պատկերազարդ գրչագրերը վկայում են ինքնատիպ մանրանկարչական դպրոցի գործունեության մասին: Հայ մանրանկարչությունը նոր վերելք է ապրում XII դ. վերջին և XIII դարում, որը բացատրվում է բուն Հայաստանում և Կիլիկիայում դիտվող հարաբերական կայունությամբ: Առանձնապես բարձր նվաճումների են հասնում Կիլիկյան Հայաստանի վարպետները: Հիմնվելով ազգային ավանդույթների վրա և ստեղծագործաբար օգտվելով բյուզանդական մանրանկարչության հարուստ փորձից՝ նրանք ստեղծում են գրքի գեղարվեստական ձևավորման ինքնատիպ ոճ: Կիլիկյան մանրանկարչության փառքն են կազմում XIII-XIV դդ. վարպետներ Թորոս Ռոսլինի և Սարգիս Պիծակի ստեղծագործությունները:

Զարգացած ավատատիրության պատմաշրջանի հայկական մշակույթն իր պատշաճ տեղն ունի միջնադարյան քաղաքակրթության գանձարանում, որ միջազգային հռչակ վայելող արժեքներ է ստեղծել բազմազան բնագավառներում:

3. ՄՇԱԿՈՒՅԹԸ ՈՒՇ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ
(XV-XVII դարեր)

ա. Դպրոցը: XV-XVII դարերի քաղաքական բուռն անցուդարձերը, հարատև պատերազմները՝ սրանց ուղեկից բռնագաղթով ու ավերածություններով, խիստ բացասական ազդեցություն ունեցան հայ մշակույթի զարգացման ընթացքի վրա: Արդեն XV դ. առաջին կեսին սկսվեց անկումը գիտության և արվեստի որոշ ճյուղերում: Այն ավելի խորացավ XV դ. երկրորդ կեսին և ամբողջ XVI դարում:

Միայն թուրք-իրանական պատերազմների ավարտից հետո սկիզբ առան մշակութային հետագա անկումը կանխելու ճիգերը, որոնք հուսատու արդյունքներ տվեցին: Ինչպես Հայաստանում, այնպես էլ գաղթօջախներում ընդհատված ավանդույթների վերականգնմանը հաջորդեց հոգևոր զարթոնքը: Սերտ շփումները եվրոպական գիտության, գրականության և արվեստի հետ հանգեցրին հայկական մշակույթի ավանդական համակարգում այնպիսի տեղաշարժերի, որոնց արդյունքը եղավ նոր վերելքը: Այսպիսով, հայ ժողովրդի հոգևոր-մշակութային կյանքում խզումն այնքան խոր և երկարատև չեղավ, որ խաթարվեր նրա ազգային նկարագիրը ու մոռացվեին ավանդույթները:

Ժամանակաշրջանի հարափոփոխ և դժնդակ պայմաններն առաջին հերթին իրենց կնիքը դրեցին դպրոցական գործի կազմակերպման ու ընդհանուր վիճակի վրա: Տաթևի համալսարանը, որ գիտամշակութային և գաղափարահասարակական բուռն գործունեություն էր ծավալել նախորդ ժամանակահատվածում, XV դ. սկզբին կորցնում է իր դերն ու նշանակությունը: Գրիգոր Տաթևացու մահից (1409) հետո այն արագորեն (1410-1412) դադարեցնում է իր գործունեությունը: Երկարատև չէր նաև Մեծոփի դպրոցի գործունեությունը: Թովմա Մեծոփեցու ուսուցչապետության շրջանում այստեղ ուսումնասիրվում էին գիտության և արվեստի բազում բնագավառներ, ստեղծվում էին դասագրքեր: Դրանցից էին լեզվաուսուցողական առաջին հայերեն դասագիրքը՝ հորինված Թովմա Մեծոփեցու կողմից, ճանաչված տոմարագետ Հակոբ Ղրիմեցու բնագիտական աշխատությունները:

XV դարի առաջին կեսին Հայաստանում և գաղթավայրերում գործող դպրոցները, որոնք դժվարությամբ աշխատում էին պահպանել Գլաձոր-Տաթևյան անավղույթները, աստիճանաբար անչքանում են և խամրում XV դ. կեսերից մինչև XVII դ. սկիզբն ընկած՝ պատերազմների ու տնտեսական անկման ժամանակաշրջանում: Կրթական գործի աշխուժացման ու աստիճանական վերելքի սկիզբը դրվեց XVII դ. առաջին կեսին: Առաջինը Սյունյաց Մեծ կամ Հարանց անապատի դպրոցն էր, որ գործում էր Տաթևի վանքին մերձակա մի վայրում: Այստեղի նշանավոր ուսուցիչներից Մովսես Տաթևացին (1578-1632), որը հետագայում դարձավ Ամենայն Հայոց կաթողիկոս, դպրոցներ հիմնադրեց նաև Երևանում ու Հովհանավանքում: 1620-ական թվականներին դպրոց է բացվում Էջմիածնում: XVII դարում բեղմնավոր գործունեություն են ծավալում նաև Բաղեշի Ամիրդոլու վանքի, Վանա լճի Լիմ կղզու, Նոր Ջուղայի դպրոցները:

բ. Գիտությունը: Գիտության բնագավառում ևս XV-XVI դդ. անկմանն ու վայրէջքին հաջորդեց զարթոնքի շրջանը, որը նկատելի դարձավ XVII դ. սկզբին: Գիտության, մասնավորապես փիլիսոփայության նկատմամբ հետաքրքրության արթնացման գործում անգնահատելի դեր կատարեցին Բաղեշի, Սյունյաց Մեծ անապատի, Էջմիածնի դպրոցների նշանավոր ուսուցիչները՝ Բարսեղ Գավառեցին, Ներսես Մոկացին, Մելիքսեթ Վժանեցին:

XV-XVI դարերում նախորդ ժամանակաշրջանի մեծարժեք ու ընդգրկուն պատմական երկերի փոխարեն շարադրվում էին մանր ժամանակագրություններ ու կրթական համեստ կարողություն ունեցող գրիչների հիշատակարաններ: Քիչ թե շատ աչքի ընկնող երկը Թովմա Մեծոփեցու «Լանկ-Թամուրի և նրա հաջորդների պատմությունը» աշխատությունն է, ուր հեղինակն արժեքավոր տեղեկություններ է հաղորդում XIV դարի վերջի-XV դարի առաջին կեսի Հայաստանի և հարևան երկրների պատմության վերաբերյալ: Ձեռագրում, «Պատմությանը» կից, տեղ է գտել նաև Թովմա Մեծոփեցու Հիշատակարանը, որտեղ ներկայացվում են կաթողիկոսական աթոռը Սսից Էջմիածին տե-

դափոխելու կարևոր անցուդարձերը:

XVII դ. առաջին կեսի մշակութային կյանքի աշխուժացման պայմաններում սկսվում է հայ պատմագրական մտքի վերելքը: Ասպարեզում հայտնվում են նոր պատմագրական ձևեր՝ հուշագրություններ, օրագրություններ, ուղեգրություններ, տեղագրական բնույթի երկեր: Հայ հեղինակներն առաջին անգամ սկսում են ծավալուն տեղեկություններ հաղորդել արտերկրի հայկական համայնքների կյանքի բազմաղան կողմերի վերաբերյալ:

Գրիգոր Դարանաղցին (1576-1643) իր կյանքի մեծ մասն անց է կացրել հայկական ազգային ու մշակութային նշանավոր կենտրոններում, երկար տարիներ եղել է Ռոդոսթոյի հայերի հոգևոր առաջնորդը: Նրա «Ժամանակագրություն» ծավալուն երկի առաջին մասը համառոտ տարեգրության բնույթ ունի, իսկ երկրորդ մասը բովանդակում է XVI դարի երկրորդ կեսից-XVII դարի առաջին տասնամյակների իրադարձությունների մանրամասն նկարագրությունը: Աշխատությունում տրված են նաև ժամանակի հոգևորականության ու վաճառականության վարքն ու բարքերը, հայկական գաղթօջախների կյանքի պատկերը:

XV-XVIII դարերում զգալիորեն ընդարձակվում է հայ հասարակության մտահորիզոնը, աննախադեպ ընդլայնվում են աշխարհի մասին պատկերացումները, ստեղծվում է ուղեգրական հարուստ գրականություն: XV դ. երկրորդ կեսին Մարտիրոս Երզնկացին այցելում է եվրոպական մի շարք երկրներ և գրի առնում իր ճանապարհորդական տպավորությունները: Մեկ դար հետո այդ երկրներում լինում է մեկ այլ հայ ուղեգրող՝ Սարգիս Աբեղան: Ուղեգրություններն ավելի ընդգրկուն ու մանրապատում են դառնում XVII դարում, որոնց հեղինակներն ուշագրավ տեղեկություններ են հաղորդում այցելած երկրների բնության, նշանավոր սրբավայրերի ու անցյալի մասին: XVII դ. հայ ուղեգիրների շարքում առանձնանում է Սիմեոն Լեհացին (1584-1637), որը ճանապարհորդել է եվրոպական ու արևելյան մի շարք երկրներում և թողել բացառիկ արժեք ներկայացնող ճանապարհորդական նոթեր:

Քաղաքական ու տնտեսական անապահով պայմաններում

անգամ Հայաստանում չմարեց բնագիտական միտքը: Գրիգոր Տաթևացու մահից հետո նրա գիտական ավանդույթները շարունակեց Մատթեոս Ջուղայեցին: Տոմարագիտական-բնագիտական աշխատություններով հայ գիտական միտքը հարստացրեց Հակոբ Ղրիմեցին, որը Մեծոփի դպրոցի ականավոր ուսուցչապետներից էր:

XV դ. հայ բժշկագիտության ամենանշանավոր դեմքը Ամիրդովլաթ Ամասիացին էր՝ թուրքական սուլթանի անձնական բժիշկը, բազմաթիվ աշխատությունների հեղինակ: Հատկապես արժեքավոր են նրա դեղագիտական ուսումնասիրությունները («Անգիտաց անպետ» և այլն), որտեղ նկարագրվում են բուժիչ բույսերը, հանքանյութերը, դրանց հայթայթման վայրերը, դեղանյութերի ազդեցության աստիճանը և այլն: Ամիրդովլաթ Ամասիացին իր երկերը ստեղծել է օգտվելով հիմնականում արևելյան լեզուներով շարադրված բժշկական ձեռագրերից՝ այդ նյութերի և իր գործնական փորձի համադրման հիման վրա: Իր գրքերն «ամենայն մարդու» դյուրամատչելի դարձնելու նպատակով դրանք շարադրել է խոսակցական լեզվով:

գ. Գրականությունը: *Ի տարբերություն մշակույթի այլ բնագավառների, XV-XVI դդ. խզում չդիտվեց հայ գրականության զարգացման ընթացքի մեջ: Շարունակում էին մեծ ժողովրդականություն վայելել «Շարակնոց», «Գանձարան» և «Տաղարան» ժողովածուները: Դարաշրջանի համար հատկապես բնութագրական էին «Տաղարան» կոչվող ժողովածուները, որոնք ծառայում էին թե՛ որպես երգարան և թե՛ որպես ընթերցարան: Այդ հավաքածուներում հոգևոր երգերի կողքին տեղ էին գտնում սիրո, բնության, հայրենասիրության, նշանավոր իրադարձությունների թեմաներով գրված զանազան ստեղծագործություններ: Պատահական չէ, որ Հակոբ Մեղապարտի կազմած և տպագրած «Տաղարանը» հայ տպագրության առաջին հաջողություններից մեկն էր:*

Դարաշրջանի գեղարվեստական գրականության մեջ առաջին անգամ հանդես են գալիս բանաստեղծության և երգի նոր տեսակներ՝ աշուղական գրականություն, պանդխտության, հայրենիքի թեմայով գրված ստեղծագործություններ: Հարուստ

և բազմազան են XV դ. առաջին կեսի գրողներ և բանաստեղծներ Առաքել Սյունեցու, Առաքել Բաղիշեցու և Մկրտիչ Նաղաշի ստեղծագործությունները: XVI դ. արդյունավետ գործունեություն են ծավալում Վասպուրականի և Փոքր Հայքի մշակութային կենտրոնները, որոնց նշանավոր դեմքերից էին Գրիգորիս Աղթամարցին, Նահապետ Քուչակը, Հովասափ և Թադեոս Սեբաստացիները, Մինաս, Հակոբ և Ստեփանոս Թոխաթեցիները:

դ. Արվեստը: Աննպաստ քաղաքական ու տնտեսական հանգամանքներն իրենց բացասական ազդեցությունը թողեցին հայ կերպարվեստի զարգացման ընթացքի վրա:

Նախորդ դարերում ձևավորված հարուստ ավանդույթները մանրանկարչության ասպարեզում շարունակեցին Վասպուրականի և Տաթևի վանքի մանրանկարչական դպրոցների ներկայացուցիչները: XVII դ. ձեռագրերի հիմնական պատվիրատուներ են դառնում հարուստ վաճառականները, իսկ դրանց մանրանկարները արտահայտում են քաղաքային բնակչության առևտրա-արհեստավորական շերտերի աշխարհընկալումը: Տպագիր գրքերի տարածումը ծանր հարված էր ձեռագրերի ընդօրինակման գործի և մանրանկարչական արվեստի համար: Ձեռագրերի նկարազարդումը գոյատևում է նաև XVIII դ. սկզբին, սակայն բարձրարվեստ նմուշներ այլևս չեն ստեղծվում:

XV դ. ընդհատվեց խաչքարային արվեստի առաջընթացը: Խաչքարեր կանգնեցնելու ավանդույթը վերակենդանանում է XVI-XVII դդ., բայց այս ժամանակաշրջանի խաչքարերը գերազանցապես տապանաքարեր էին: Խաչքարերի պատկերաքանդակները կորցնում են թեմատիկ բազմազանությունը և ձեռք են բերում կենցաղային բովանդակություն: Այդպիսի խաչքարերի թիվը մեծ է Հայաստանի պատմական բոլոր գերեզմանոցներում, իսկ Նորաղուզում և Հին Ջուղայում հասնում է հազարների: Ջուղայական խաչքարերով էլ իր ավարտին է հասնում հայ միջնադարյան արվեստի այդ նշանավոր բնագավառի պատմական զարգացման ընթացքը:

Համընդհանուր տնտեսական ու քաղաքական ճգնաժամը սակավ չափով է անդրադառնում կիրառական արվեստի զանազան ճյուղերի զարգացման վրա: Հայտնի է, որ շատ երկրներ են վաճառահանվել հայկական գորգերը, որոնք անգամ պատկերվել են եվրոպական նկարիչների կտավներում: Հատկապես մեծ համարում են ունեցել վիշապի ոճավորված պատկերով գորգերը՝ «վիշապագորգերը»: Հաջողությունների են հասել նաև ասեղնագործության, դաջման արվեստները:

XV դ. անկում է ապրում բազմադարյան ավանդույթներով հարուստ հայկական ճարտարապետությունը, որը երկրի ընդհանուր ծանր վիճակի արտահայտությունն էր: XVI-XVII դդ. հայ ճարտարապետները և չինարար վարպետները գործունեություն են ծավալում գաղթավայրերում և Օսմանյան կայսրությունում: Կոստանդնուպոլսի կառուցապատմանը իրենց ծանրակշիռ ներդրումն ունեն նշանավոր ճարտարապետ Սինանը (1489-1578) և Պալյանների գերդաստանի ներկայացուցիչները, որոնք որպես արքունի ճարտարապետներ, արգասավոր գործունեությամբ աչքի ընկան երեք հարյուրամյակ՝ սկսած XVII դարից:

ե. Տպագրությունը: Դարաշրջանի մշակութային կյանքի ամենանշանակալից երևույթներից մեկը հայկական տպագրության սկզբնավորումն ու անչեղ վերելքն էր: Հայ վաճառականներն ու հոգևորականները մեծ հետաքրքրություն ցուցաբերեցին Եվրոպայում տպագրության գյուտի նկատմամբ: Հայաստանյան դժնդակ իրականության թելադրանքով, որը բացառում էր տպագրության սկզբնավորումը հայրենիքում, տպագրական աշխատանքներ հնարավոր էր կատարել միայն Եվրոպայում: 1440-ական թթ. Յոհան Գուտենբերգի կատարած տպագրության գյուտն արագորեն տարածվեց մայրցամաքում: Կարճ ժամանակ անց տպարաններ ստեղծվեցին իտալական քաղաքներում: Հայ տպագրության առաջին կենտրոն դարձավ Վենետիկը, որտեղ վաղուց ի վեր գոյություն ուներ ազդեցիկ հայ համայնք: Առաջին հայ տպագրիչը՝ Հակոբ Մեղապարտը, այստեղ 1512-1513 թթ. ընթացքում լույս ընծայեց հինգ անուն գիրք՝ «Ուրբաթագիրք», «Պատարագատետր», «Աղթարք», «Պարզատումար», «Տաղարան»: Հակոբ Մեղապարտի հրատա-

բակած գրքերը նախատեսված էին ընթերցողների լայն շրջանի համար և իրենց տեսքով նմանվում էին ձեռագիր մատյանների: Հակոբ Մեղապարտի տպարանը գործել է երկու-երեք տարի:

Կեսդարյա ընդհատումից հետո Վենետիկում երկրորդ հայկական տպարանն է հիմնադրել ժամանակի ազատագրական շարժման նշանավոր գործիչ Արգար Թոխաթեցին (Եվդոկացի): Վենետիկում 1565-1566 թթ. նա տպագրում է ընդամենը երկու անուն գիրք, որից հետո տպարանը փոխադրում է Կոստանդնուպոլիս: Այստեղ 1567-1569 թթ. Ս. Նիկողայոս եկեղեցում տեղավորված տպարանում Աբգարը լույս է ընծայում յոթ անուն գիրք: Այսպիսով, տպագրական գործը դրվում է հուսալի հիմքերի վրա, հաստատվում է հայաշատ միջավայրում: Աբգարի որդի Սուլթանշահը Հակոբ Տերնզցու աշխատակցությամբ թարգմանում և 1585 թ. Հռոմում հրատարակում է Գրիգորյան նոր տոմարը:

Հայկական գրատպության նոր օջախներ են ստեղծվում XVII դ. առաջին կեսին: Գրքեր են լույս ընծայվում Լվովում (1616-1618) և Լիվոռնոյում (1642-1643): Նշանավոր տպագրիչներից էին Հովհաննես Ջուղայեցին, Հովհաննես Քարմատանենցը և ուրիշներ: Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի միաբանները, առանց ծանոթ լինելու եվրոպական տպագրության նվաճումներին, սեփական ուժերով ստեղծում են տպարան և 1638-1650 թթ. ընթացքում հրատարակում մի քանի գիրք: Այդ աշխատանքները նախաձեռնել և ղեկավարում էր Խաչատուր վարդապետ Կեսարացին:

ԲԱԺԻՆ ԵՐԿՐՈՐԴ

ՆՈՐ ԴԱՐԵՐ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ XVII ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

1. ԿՐԵՏԵԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

Անարդյունք բանակցությունները կաթոլիկ Արևմուտքի հետ առժամանակ կասեցրին հայ ազատագրական որոնումները: Պարսկա-օսմանյան ավերիչ պատերազմները, որ ընդգրկեցին ամբողջ XVI հարյուրամյակը և XVII դարի առաջին կեսը, նույնպես որևէ հույս չէին թողնում, թե այդ պայմաններում հնարավոր է կազմակերպել ազատագրական որևէ շարժում: Սոսկալի բացասական հետևանքներ ունեցավ մանավանդ 1604 թ. պարսից շահ Աբաս Մեծի կազմակերպած հայ բնակչության բռնագաղթը: Շահի հրամանով Պարսկաստան բռնագաղթեցվեց Կարսից մինչև Ջուղա ընկած տարածքի ամբողջ հայ բնակչությունը՝ շուրջ 350 հազար մարդ: Արևելյան Հայաստանի բնակավայրերն ավերվեցին, երկիրն ամայացավ, նրա տնտեսական ու մշակութային կյանքը ծանր հարված ստացավ, ազատագրական շարժումներն առժամանակ դադարեցին: Եվ միայն XVII դ. 40-ական թվականների կեսերին դարձյալ օրակարգ մտցվեց Հայաստանի ազատագրության հարցը՝ կապված Կանդիայի (Կրետեի) պատերազմի (1645-1669) հետևանքով առաջացած քաղաքական իրադրության հետ: Միջազգային կյանքի այս նշանակալի իրադարձությունն էր, որ առաջ քաշեց Օսմանյան Թուրքիայի դեմ ձեռնարկվելիք համաքրիստոնեական խաչակրաց արշավանքի գաղափարը: Ուստի պատահական չէ, որ Հռոմի կղերապետությունը, Վենետիկի հանրապետությունն ու Ֆրանսիան բազմիցս դիմումներ էին հղում Արևելքի քրիստոնյա եկեղեցիների ղեկավարներին՝ օսմանյան տիրապետության դեմ համատեղ պայքարի ելնելու առաջարկներով՝ որպես հատուցում խոստանալով պարտված Թուրքիայի ավերակների վրա կերտել ազգային անկախ քրիստոնեական պետություններ:

Պատերազմի հենց առաջին տարիներին Վենետիկի և Վատիկանի գործակալները քաղաքական գաղտնի բանակցություններ սկսեցին Անտիոքի հունաց պատրիարքի, ասորաց կաթողիկոսի և Սսի հայոց կաթողիկոս Խաչատուր Գ Գաղատացու հետ: Այս առումով չափազանց գործուն դեր է խաղում Հալեպի ֆրանսիական հյուպատոս Ֆրանսուա Բարոնը, որը հայերին խորհուրդ էր տալիս ակտիվ համագործակցել Արևելքի քրիստոնեական մյուս ժողովուրդների հետ: Իր հերթին Խաչատուր Գաղատացին օգնության դիմումնագրեր է հղում Հռոմի Ալեքսանդր VII պապին, Վենետիկի դոժին, Ֆրանսիայի թագավորին: Հետաքրքիր է, որ 1657 թ. վերջերին Խաչատուր Գաղատացին այցելում է Կանդիա և բանակցություններ վարում Վենետիկի բանակի գլխավոր հրամանատար Ֆրանչեսկո Մարոզինիի հետ: Բանակցությունները շարունակվում են նաև հետագայում՝ 1668 թվականին: Ենթադրելի է, որ քաղաքական այս երկխոսությունների հիմնական նյութը պետք է լիներ Հայաստանի ազատագրության հարցը:

Ի տարբերություն XVI դարի, հայ ազատագրական միտքը այժմ որդեգրում է նոր կողմնորոշում: Ազատագրական շարժման գործիչներն իրենց հույսը կապում են Ֆրանսիայի և հատկապես նրա «Արև-արքայի»՝ Լյուդովիկոս XIV-ի հետ: Հատկանշական է, որ Սսի կաթողիկոս Խաչատուր Գաղատացու՝ Ֆրանսիայի թագավորին ուղղած 1663 թ. փետրվարի 12-ի դիմումնագիրը հենց այդպես էլ հավաստում էր, թե «Հայերը հույս և հավատ ունեն, որ Ձեր օրհնյալ ձեռքերով պիտի կատարվի իրենց փրկությունը»: Ազատագրական շարժման այս նոր շրջադարձը պայմանավորված էր նախ՝ միջազգային կյանքում Ֆրանսիայի անբեկանելի կշռով և ապա՝ Արևելքում նրա վարած չափազանց գործուն հակաթուրքական քաղաքականությամբ:

Փոփոխություն է տեղի ունենում նաև ազատագրական շարժման սոցիալական միջավայրում: Թեև եկեղեցին շարունակում էր վճռորոշ դեր խաղալ ազատագրական շարժման գաղափարախոսության մշակման բնագավառում, սակայն պայքարի գործնական կազմակերպմանը ձեռնամուխ է լինում նաև հայ առևտրական դասը, որն այդ շրջանում արդեն կարևոր դեր էր խաղում հասարակական կյանքում:

Հայ առևտրական բուրժուազիան (առավել հայտնի է խոջայություն անունով), որը առևտրատնտեսական չահախնդրություններով կապված էր Արևելքում լայն տարածում ունեցող ֆրանսիական կապիտալի հետ, իր երևելի ներկայացուցիչներից մեկին՝ Մուրադ (Շահմուրատ) Բաղիշեցուն 1666 թ. ուղարկում է Ֆրանսիա: Փարիզում Մուրադ Բաղիշեցին մի քանի անգամ այցելում է Լյուդովիկոս XIV-ին, բանակցում նրա և ազդեցիկ նախարար Ժ. Բ. Կոլբերի հետ: Մուրադ Բաղիշեցին առաջինն էր, որ փորձեց մշակել Հայաստանի ազատագրության ծրագիր, որի համաձայն Օսմանյան կայսրության բոլոր քրիստոնյա ժողովուրդները պետք է համատեղ ապստամբություն բարձրացնեին տիրապետող վարչակարգի դեմ և տապալելով այն՝ վերականգնեին ինչպես Բյուզանդական կայսրությունը, այնպես էլ Հայկական թագավորությունը: Այս ծրագրի հիմնական նախապայմանը պետք է լիներ Ֆրանսիայի մասնակցությունը պատերազմին: Հայերը ֆրանսիական կողմնորոշումից չհրաժարվեցին անգամ Կրետեի պատերազմում Վենետիկի կրած ծանր պարտությունից հետո: Մուրադ Բաղիշեցին շարունակում է բանակցությունները Վերսալի արքունիքի հետ: 1672 թ. նա հատուկ ուղերձով դիմում է Լյուդովիկոս XIV-ին և նրան ներկայացնում հայերի ազատագրական ակնկալիքները: Մուրադ Բաղիշեցին Ֆրանսիայի թագավորին հավաստիացնում է, թե Արևելքի «Քրիստոնյա ժողովուրդներն այլևս չկարողանալով տանել Թուրքիայի տիրապետությունը՝ պատրաստ են ապստամբելու: Այդ բոլոր ժողովուրդներն էլ համոզված են, որ Ձերդ վեհափառությունը չի հապաղի ձեռնարկելու ազատագրական արշավանք, որին երկար ժամանակ մենք սպասում ենք, որպեսզի զենքը ձեռքներիս ապստամբենք՝ հենց որ քրիստոնեական զորքերը երևան Ձերդ վեհափառության առաջնորդությամբ»: Հատկանշական է, որ նույն ժամանակ (1670 թ.) ֆրանսիական գործակալ դը Լա Գուզը Երևանից Լյուդովիկոս XIV-ին գրում է. «Հայերն իրենց ազատագրությունն ակնկալում են Ձերդ վեհափառության հաղթական զենքից և գիտակ լինելով Ձերդ մեծությանն ու հզորությանը՝ ...Ձերդ վեհափառության մասին խոսում են միմիայն որպես իրենց ազատությունը վերականգնողի»:

Մի վերջին անգամ Լյուդովիկոս XIV-ի հետ բանակցություն-

ներ է վարում 1680 թ. Փարիզ ժամանած Կ. Պոլսի նախկին պատրիարք Հովհաննես Թութունջին, որը նախապես եղել էր Եթովպիայում և փորձել այդ երկիրը ևս ներգրավել հակաթուրքական պայքարի մեջ: 1683 թ. փետրվարին նա, Մուրադ Բաղիշեցու, Սողոմոն Լևոնյանի, Զաքարիա վարդապետ Սիսիանցու և Ջուզեպ Հալեպցու հետ, Վերսալի արքայական պալատում բանակցում է Ֆրանսիայի թագավորի հետ: Հայ-ֆրանսիական բանակցությունները չուտով ընդհատվում են, քանզի Ֆրանսիան 1686 թ. պատերազմներով եվրոպական մի քանի երկրների զինակցության հետ, որ հայտնի է Աուգսբուրգյան լիգա անունով, ոչ միայն հրաժարվեց Օսմանյան կայսրության դեմ խաչակրաց արշավանք ձեռնարկելու գաղափարից, այլև իր վրա վերցրեց Ավստրիայից և գերմանական այլ տերություններից Թուրքիային պաշտպանելու պարտականությունը:

Անշուշտ, այս պարագան է թելադրել Հովհաննես Թութունջի վարդապետին գործուն մասնկցություն ունենալ «Սրբազան լիգայի» երկրների (Ավստրիա, Լեհաստան, Ռուսաստան, Վենետիկ, Մալթա) հակաթուրքական խաչակրաց արշավանքներին, որ տեղի ունեցան 1680-ական թվականների երկրորդ կեսին և ամբողջ 1690-ական թվականներին: Այդ արշավանքների հետևանքով պարտություն կրած Թուրքիան ստիպված էր կնքել Կարլովիցի հաշտության պայմանագիրը (1699 թ. հունվարի 26), որի համաձայն Ավստրիան ստացավ Հունգարիան և Տրանսիլվանիան, Վենետիկը Դալմատիան և Պելեպոնեսը, իսկ Ռուսաստանը՝ Ազովը:

Այս հանգամանքը հայ ազատագրական շարժման գործիչներին ստիպեց հերթական անգամ փոխելու քաղաքական կողմնորոշումը:

2. Ս. ԷՋՄԻԱԾՆԻ 1677 ԹՎԱԿԱՆԻ ԳԱՂՏՆԻ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԸ

Հայ ազատագրական շարժման արևմտաեվրոպական դեգերումների հերթական դրվագն աղերսվում է Ամենայն Հայոց կաթողիկոս Հակոբ Դ Ջուղայեցու անվան հետ: Ջուղայեցին ժամանակի ամենակրթված ու եռանդուն հայ եկեղեցականներից էր: Նա հատկապես նշանավոր էր որպես Հայաստանում և հայկական գաղթավայրերում կաթոլիկ քարոզիչների դեմ հակագործունեություն ծավալած գործիչ: Նախանձախնդիր էր Ամենայն Հայոց կաթողիկոսության դիրքն ու հեղինակությունը բարձրացնելուն: Հայկական գրատպության գործը խթանելու նպատակով նա Եվրոպա է ուղարկում Ոսկան Երևանցուն, Մատթեոս Վանանդեցուն և ուրիշների, որոնք նաև հանձնարարականներ ունեին այնտեղ նպաստավոր կարծիք ստեղծելու Հայաստանի ազատագրության հարցի շուրջը և միաժամանակ հող նախապատրաստելու հայ-արևմտաեվրոպական քաղաքական ու դավանաբանական բանակցությունների համար: Այդ դիտավորությամբ Ջուղայեցին նամակագրական կապ է հաստատում Ալեքսանդր VII պապի, Ավստրիայի կայսր Լեոպոլդ I-ի և այլոց հետ: Դեռևս 1662 թ. կաթողիկոսը Վենետիկ և Հռոմ է ուղարկում Առաքել Բոկոտն (Բոպիկ) վարդապետին, որը բանակցություններ է վարում պապական շրջանակների հետ:

Ս. Էջմիածնում Հայաստանի ազատագրության ամբողջ հույսը արդեն դնում էին Հաբսբուրգների տան վրա: Կրետեի անհաջող պատերազմից հետո հակաթուրքական պայքարի ղեկն իր ձեռքն էր վերցրել Ավստրիան, որը դաշնակցած Ռեչ-Պոսպոլիտայի, Վենետիկի, Ռուսաստանի և գերմանական մի քանի իշխանությունների հետ, դիմագրավում էր Եվրոպայի կենտրոնում հայտնված թուրքական զորաբանակներին: Լեոպոլդ I-ին ուղարկված խնդրագրում կաթողիկոսը հավաստիացնում էր, թե հայերն իրենց ազատագրական հույսերը միշտ էլ կապել են Հաբսբուրգների տան հետ: Միաժամանակ կաթողիկոսը վստահեցնում էր, թե հայկական կողմը պատրաստ է դավանաբանա-

կան ինչ-ինչ զիջումներ կատարել կաթոլիկ եկեղեցուն: Հասկանալի է, որ այդ հավաստիացումները դիվանագիտական քայլեր էին և չէին արտահայտում իրերի բնական ընթացքը:

Ահա այսպիսի պայմաններում 1677 թ. Ս. Էջմիածնում Հակոբ Դ-ն հրավիրում է գաղտնի ժողով, որին մասնակցում էին ինչպես Արցախի և Սյունիքի մելիքների ներկայացուցիչները, այնպես էլ բարձրաստիճան հոգևորականներ, մեծատուններ՝ թվով 12 մարդ: Քննարկման ներկայացված հիմնական հարցերը Հայաստանի ազատագրության, հայ և կաթոլիկ եկեղեցիների փոխհարաբերություններն էին: Ժողովը որոշում է օգնության խնդրանքով դիմել Հռոմի պապին և հնազանդություն հայտնելով՝ նրա միջնորդությամբ բանակցություններ վարել Արևմուտքի հզոր տերությունների հետ:

Նորությունն այն էր, որ հատուկ քննարկվում է նաև Վրաստանի հետ համագործակցության հարցը: Այդ նպատակով ժողովի կողմից ընտրված պատվիրակությունը, որ գլխավորում էր հայոց կաթողիկոսը, 1677 թ. հունիսին անցնում է Վրաստան և բանակցություններ վարում Քարթլիի թագավոր Գեորգի XI-ի հետ: Այստեղ մշակվում է հայ-վրացական համատեղ պայքարի ծրագիր, որի համաձայն հայերը պետք է դիմեին Արևմուտքի, իսկ վրացիները՝ Ռուսաստանի օգնությանը: Նշելի է, որ Հակոբ Դ-ն, չնայած այդ պայմանավորվածությանը, հատուկ ուղերձ է հղել Ռուսաստանի ցար Ալեքսեյ Միխայլովիչին և հայ ազատագրական շարժման պատմության մեջ առաջին անգամ օգնություն ակնկալել Ռուսաստանից: 1678 թ. դեկտեմբերին հայկական պատվիրակությունը ժամանում է Կ. Պոլիս, ուր կաթողիկոսը հանդիպումներ է ունենում արևմտահայ նշանավոր հասարակական գործիչների, Երուսաղեմի հայոց պատրիարք Եղիազար Այնթափցու և այլոց հետ: Վատիկանի հետ ապագա բանակցությունները նախապատրաստելու համար կաթողիկոսը պատվիրակության անդամներից մեկին՝ Առաքել Բոկոտն վարդապետին, 1679 թ. ուղարկում է Հռոմ, իսկ ինքը, հայ նշանավոր մտավորական Երեմիա Քյոմուրճյանի խորհրդով թղթակցում է Ռեչ-Պոսպոլիտայի թագավոր Յան Սոբեսկու հետ: Վերջինս, որ

Եվրոպայի հեղինակավոր միապետներից էր, հայկական որոշ շրջանակներում դիտվում էր որպես Հայաստանի ազատագրումը սատարող ամենահավանական եվրոպական քաղաքական գործիչներից մեկը: Հետաքրքիր է, որ ինքը՝ Սոբեսկին, կաթողիկոսին ուղղած պատասխան նամակում որոշակի օգնություն էր խոստանում՝ վերականգնելու Հայաստանի քաղաքական անկախությունը: Բայց պատվիրակության գործունեությունն անսպասելիորեն ընդհատվեց, որովհետև 1680 թ. օգոստոսի 1-ին Հակոբ Դ-ն հանկարծամահ եղավ: Պատվիրակության մյուս անդամները ստիպված էին վերադառնալ Հայաստան: Հայ-արևմտաեվրոպական բանակցություններն առժամանակ հետաձգվեցին:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ XVIII ԴԱՐՈՒՄ

1. ԻՍՐԱՅԵԼ ՕՐԻՆ ԵՎ ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

ա. Իսրայել Օրին Եվրոպայում: *XVII դարի վերջերին և XVIII դարի սկզբներին հայ ազատագրական շարժումը թևակոխում է իր զարգացման նոր, ավելի կազմակերպված փուլը: Ազատագրական շարժման նախադեպը չունեցող այս պատմաշրջանը անխզելիորեն կապված է Իսրայել Օրու անվան հետ:*

Իսրայել Օրին որդին էր Սիսիանի մելիք Իսրայելի, որը Ս. Էջմիածնի 1677 թ. գաղտնի ժողովի կողմից ընտրված պատվիրակության անդամներից մեկն էր: Մելիք Իսրայելը չափազանց մեծ համարում ուներ հայ քաղաքական շրջանակներում, իսկ նրա ընտանիքը հավակնում էր Պռոշյան նշանավոր իշխանական տոհմից սերված լինելուն: Եվրոպա ուղևորվող մելիք Իսրայելը իր հետ էր վերցրել 17-ամյա որդուն՝ Օրուն, երևի այնտեղ նրան կրթության տալու նպատակով: Իհարկե, պատանի Օրին չէր կարող լինել գաղտնի ժողովի մասնակից, հետևաբար և պատվիրակության անդամ, թեև, ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, նա ժողովի և պատվիրակության մասին քաջատեղյակ էր: Հակոբ Դ-ի մահից հետո մելիք Իսրայելը ծանոթ վաճառականներից մեկին խնդրում է որդուն ուղեկցել Եվրոպա, իսկ ինքը վերադառնում է Հայաստան: 1680 թ. վերջերին Օրին հաստատվում է Վենետիկում:

Օրու եվրոպական գործունեությունը լի է անորոշությամբ ու գաղտնիքներով: Միայն հայտնի է, որ երիտասարդ ազնվականն իր ուժերը նախ փորձել է առևտրի բնագավառում՝ սկզբում Վենետիկում (1680-1683), ապա՝ Փարիզում: Այստեղ էլ յուրացրել է ֆրանսիական նիստուկացը, լեզուն, կենցաղը, ձեռք բերել քաղաքական ու ռազմական որոշակի գիտելիքներ: Բացի

ֆրանսերենից ազատորեն տիրապետում էր իտալերեն, լատիներեն և գերմաներեն լեզուներին: Այնուհետև եղել է ֆրանսիական բանակի զինվորական մատակարար և տարիներ շարունակ առիթներ ունեցել սերտ աղերսներ ունենալ ռազմական ու պետական մարմինների հետ: Հայտնի է, որ Հայաստանի ազատագրության հարցի շուրջ անգամ դիմումնագրեր է հղել Լյուդովիկոս XIV-ին, սակայն դրանք ուշադրության չեն արժանացել: Որոշ ժամանակ անց, հրաժարվելով առևտրական գործունեությունից, Օրին ծառայել է ֆրանսիական բանակում, նախ՝ հետևակի լեյտենանտի, ապա՝ հեծելազորի կապիտանի զինվորական աստիճաններով, մասնակցել անգլիացիների դեմ ֆրանսիական բանակի ռազմական վեց արշավանքներին, աչքի ընկել անձնական խիզախությամբ և քաջագործություններով:

Անգլո-ֆրանսիական հերթական պատերազմի ժամանակ՝ 1695 թ., Օրին Նամյուր քաղաքի մոտ գերի է ընկել անգլիացիների ձեռքը: Հենց նույն թվականին էլ, խաղաղության պայմանագրի ստորագրումից հետո, ազատվել է գերությունից, բայց Ֆրանսիա վերադառնալու փոխարեն տեղափոխվել է Գերմանիայի Հռենոսյան Պֆալց, հաստատվել Դյուսելդորֆ քաղաքում և ծառայության անցել տեղի կայսրընտիր (կուրֆյուրստ) մեծ իշխան Հովհան Վիլհելմի մոտ՝ նշանակվելով Հայդելբերգ և Մանհայմ քաղաքների մատակարարման կոմիսար: 1698 թ. Օրին անձամբ հանդիպում է մեծ իշխանին և նրան ներկայացնում Հայաստանի ազատագրության խնդիրը:

Հովհան Վիլհելմը տարածաշրջանի ամենանշանավոր քաղաքական գործիչներից էր, արյունակցական ու քաղաքական մերձավոր սերտ հարաբերություններ ուներ եվրոպական բազմաթիվ տիրակալների, առավելապես՝ Ավստրիայի Լեոպոլդ I կայսեր և Տոսկանայի մեծ դուքս Կոզմաս III Մեդիչիի հետ: Նշելի է, որ 1683 թ. Ավստրիան «Սրբազան լիգայի» մյուս երկրների հետ պատերազմի մեջ էր ընդդեմ Թուրքիայի, իսկ Հովհան Վիլհելմը ոչ երկրորդական դեր էր խաղում այդ իրադարձություններում. նա հակաթուրքական այդ լիգայի կազմակերպիչներից ու ոգեշնչողներից մեկն էր: Ուստի պատահական չէր Օրու ոչ միայն Հովհան Վիլհելմի հետ բանակցություններ վարելը, այլ ընդհանրապես Պֆալցում հայտնվելը:

Այդ ժամանակաշրջանի եվրոպական քաղաքական թատերաբեմում Ավստրիայի վճռորոշ դերն էր ստիպել հայ գործչին ուղիներ փնտրել՝ մերձենալու Հաբսբուրգների ազդեցիկ տան հետ, իսկ ուղիներից մեկն անցնում էր Պֆալցով: Դրանով Օրին Հայերի վաղեմի ակնկալություններն ու կողմնորոշումը Բուրբոնների դեմ նպատակաուղղում է դեպի Հաբսբուրգները և նրանց հետ կապված քաղաքական շրջանակները: Օրին Հովհան Վիլհելմին ծանոթացնում է Հայաստանի վիճակի, 1677 թ. Էջմիածնի ժողովի մանրամասների և Հակոբ Դ-ի առաքելության հետ: Նա ջանք ու եռանդ չի խնայում շահագրգռելու մեծ իշխանին՝ հանձն առնելու Հայաստանի ազատագրության գործը, որը, նրա համոզմամբ, ներկա քաղաքական իրավիճակում բարդ չէր, մանավանդ որ հայերը պատրաստ էին ապստամբելու, և անհրաժեշտ էր միայն բարեկամ որևէ հզոր պետության աջակցությունը: Հայաստանը ազատագրվելուց հետո, ի նշան երախտագիտության, հայերը հանձն էին առնելու ոչ միայն Հովհան Վիլհելմին ճանաչել իրենց թագավոր, այլև ընդունելու կաթոլիկական դավանանք: Թուրքական ճակատներում ավստրիական բանակների հաղթանակներն էլ ավելի էին ամրապնդում այդ համոզումը, և Հովհան Վիլհելմի՝ Հայաստանն ազատագրողի դերը դառնում էր ոչ երևութական, իսկ Հայաստանի գահը՝ իրականին մոտ:

Պետք է նշել, որ Հովհան Վիլհելմին, ինչպես և եվրոպական շահագրգիռ տերություններին, խիստ հետաքրքրեց Թուրքիայի թիկունքում անկախ հայկական պետություն ստեղծելու գաղափարը: Ահա թե ինչու սկսված բանակցությունները գործնական հողի վրա դնելու, հայ քաղաքական և հոգևոր պետերի հետ անմիջական կապեր հաստատելու, Հայաստանի վերաբերյալ տնտեսական, քաղաքական ու ռազմական մանրամասն տեղեկություններ ստանալու համար անհրաժեշտ էր, որ Օրին մեկներ Հայաստան և այնտեղից բերեր համապատասխան պաշտոնական դիմումնագրեր ու երաշխավորագրեր: 1699 թվականի սկզբներին Օրին մեկնեց Հայաստան՝ իր հետ ունենալով մեծ իշխանի համապատասխան գրությունները՝ ուղղված Էջմիածնի և Գանձասարի կաթողիկոսներին, հայոց մելիքներին ու վրաց Գեորգի XI թագավորին:

բ. Անգեղակոթի գաղտնի ժողովը: XVII դարի վերջերին Արևելյան Հայաստանի կացությունը մնում էր ահավոր, է՛լ ավելի էր ծանրացել ժողովրդի տնտեսական վիճակը: Պարսիկների հարկային, ազգային ու կրոնական քաղաքականությունը դարձել էր սանձարձակ և մեծ չարիքներ էր պատճառում ժողովրդին: Համապատասխանաբար թուլացել էին նաև հայ ազատագրական շարժման ոգորումները: Ամենայն Հայոց կաթողիկոս Նահապետ Ա Եղեսացին չէր խրախուսում ազատագրական որևէ աննչան ճիգ և օրնիբուն զբաղված էր անզուսպ շահատակություններով: Նույնպիսի դիրք էր գրավել նաև Գանձասարի Սիմեոն կաթողիկոսը: Իսկ վրաց Գեորգի XI թագավորը, որ կուրֆյուրստի ուղերձում հորջորջվում էր որպես «Մեծ Հայաստանի առաջին տեր, իշխան ու առաջնորդ», վաղուց լքել էր ազատագրական շարժման դիրքերը և մահմեդականություն ընդունելով՝ դեգերում էր Պարսկաստանում:

Ահա 20-ամյա տարագրությունից հետո նման միջավայրում էր հայտնվել Իսրայել Օրին, երբ 1699 թ. գարնանը Կ. Պոլսի և Կարինի վրայով հասել էր Էջմիածին: Այստեղ Մայր աթոռի կողմից նա հանդիպեց անբարյացակամ, անգամ թշնամական վերաբերմունքի և ստիպված շուտափույթ լքեց Էջմիածինն ու մեկնեց Սյունիք:

Այդ ժամանակ Սյունիքում և Արցախում խմորվող ազատագրական ձգտումները գլխավորում էին հին ազնվատոհմ իշխանական ընտանիքների շառավիղները՝ մելիքները: Եկեղեցական և առևտրական հասարակախավերից հետո մելիքությունը դառնում էր հայ ազատագրական շարժումը կազմակերպող երրորդ ուժը, որը հատկապես զգացնել տվեց Անգեղակոթի գաղտնի ժողովում:

Հայ մելիքների այդ ժողովը հրավիրվել է 1699 թ. ապրիլի 9-ին՝ Անգեղակոթի մելիք Սաֆրազի ապարանքում: Ժողովին մասնակցել են Սյունիքի և Արցախի մելիքներ և հոգևորականության որոշ ներկայացուցիչներ: Այստեղ չուրջ քսան օր բուռն քննարկման առարկա դարձավ Արևելյան Հայաստանը պարսկական տիրապետությունից ազատագրելու հարցը: Դարձյալ տիրապետող էր այն միտումը, թե հայերը միայն սեփական ուժերով անկարող են իրականացնել պատմական այդ գերխնդի-

ը, ուստի պետք է ապավինեն Հռոմի պապի միջամտությանն ու Արևմուտքի որևէ հզոր թագավորի օգնությանը: Տվյալ պահին մելիքների խորհրդաժողովն օգնություն էր հայցում Ավստրիայի կայսր Լեոպոլդ I-ից, Տոսկանայի մեծ դուքս Կոզմաս III-ից և Պֆալցի մեծ իշխան Հովհան Վիլհելմից: Ինչպես և սպասվում էր, առանձին դիմումներ են հղվել Հռոմի Ինոկենտիոս XII պապին՝ անշուշտ դավանական հնազանդության հավաստիացմամբ: Կարևոր էր հատկապես Հովհան Վիլհելմին հասցեագրված դիմումը, որով մելիքները միակամ հավաստում էին Հայաստանի թագը նրան չնորհելու իրենց որոշումը և թախանձագին խնդրում արագացնել գերմանական զորքերի առաքումը Հայաստան:

Կուրֆյուրստին հղված դիմումնագրում հայոց մելիքները հստակորեն մատնանշում էին հակապարսկական ապագա ռազմական գործողություններում իրենց անելիքներն ու դերը: Նրանք հավաստում էին, որ մինչև եվրոպական զորքերի ժամանումը Հայաստան հայերը ստեղծելու են ռազմական ջոկատներ և նախապատրաստվելու են զինված ապստամբության: Սա չափազանց կարևոր հանգամանք էր: Առաջին անգամ փորձ է արվում հաղթահարելու սեփական ուժերի նկատմամբ ավանդական անվստահության բարդությունը և կրավորական ու անզոր կեցվածքից անցնելու առավել գործուն դիրքորոշման: Սույն հանգամանքը որակապես փոխելու էր հայ ազատագրական շարժման հետագա ընթացքը: Անգեղակոթի ժողովի մյուս կարևոր նորությունը Ռուսաստանի Պետրոս I ցարին հղված դիմումն էր, որը վկայում է, թե նրանից ևս ակնկալվել է ռազմական օգնություն: Ճիշտ է, այդ չրջանում ռուսական գործոնը խիստ անորոշ էր և ոչ հստակ, բայց կարևոր էր, որ այն աստիճանաբար թափանցում էր հայ ազատագրական շարժման գաղափարաբանության մեջ:

Բացի նչված դիմումներից, Անգեղակոթի ժողովը Օրուն հանձնեց մելիքների կողմից ստորագրված ու կնքված, սակայն չգրված մի թուղթ՝ լիազորելով նրան իրենց անունից ըստ անհրաժեշտության օգտագործել:

Անգեղակոթի ժողովը խորհրդակցությանը մասնակցած հոգևորականներից Մինաս վարդապետ Տիգրանյանցին նչանակում է Օրու օգնական և քարտուղար: Մելիքների դիմումնագրերով և Տիգրանյանցի ուղեկցությամբ 1699 թ. ապրիլի 29-ին Իսրայել Օրին մեկնում է Եվրոպա՝ հայ-արևմտաեվրոպական բանակցությունները չարունակելու:

գ. Հայաստանի ազատագրության Պֆալցյան ծրագիրը: *1699 թ. սեպտեմբերին Իսրայել Օրին և Մինաս վարդապետը ժամանեցին Դյուսելդորֆ, սակայն Հովհան Վիլհելմի հիվանդության պատճառով առժամանակ ստիպված էին երկար սպասել ընդունելության: Այդ ընթացքում Օրին մշակեց Հայաստանի ազատագրման իր առաջին ծրագիրը, որը հայտնի է «Պֆալցյան ծրագիր» անունով:*

Ծրագիրը կազմված էր դիվանագիտական բարձր հմտությամբ ու խորաթափանցությամբ: Այն վկայում է հեղինակի բազմակողմանի պատրաստվածության, աշխարհի քաղաքական անցուդարձերի, ռազմական գործի և արվեստի վերաբերյալ խոր ու բազմակողմանի գիտելիքների մասին: Հայ ազատագրական շարժման պատմության մեջ դա չուներ իր նախադեպը: Դա առաջին մշակված ծրագիրն էր, որ գործնական հողի վրա էր դնում ազատագրական շարժման գաղափարախոսությունը, դրան տալիս առարկայական բովանդակություն: Դրանով այն թևակոխեց ավելի գիտակցական ու կազմակերպված փուլ:

Պֆալցյան ծրագիրը բաղկացած էր 36 կետից: Ծրագրի համաձայն եվրոպական երեք երկրներ՝ Ավստրիան, Տոսկանան և Պֆալցը, Հռոմի պապի հավանությամբ ու աջակցությամբ կազմելու էին հակաթուրքական եռյակ դաշինք: Միավորելով իրենց ռազմական ուժերը, դաշինքի երկրներն արշավանք էին սկսելու դեպի Հայաստան՝ անշուշտ նախապես ապահովելով ինչպես Լեհաստանի, այնպես էլ Ռուսաստանի համաձայնությունը: Այս համոզմունքն ուներ քաղաքական հիմք՝ նկատի ունենալով վերջին երկու երկրների չեչտված հակաթուրքական դիրքորոշումը: Ծրագրում մանրամասն հաշվարկված էին թնդանոթներն ու հրացանները, վառոդն ու ձիերը, զորքն ու զինվորները, պարենն ու անհրաժեշտ մյուս պարագաները: Ռազմական արշավանքի ամբողջ ծախսերը հոգալու էին հայերը: Դաշնակիցների 25 հազարանոց միացյալ զորաբանակը 1700 թ. մայիսին սկսելու էր իր արշավանքը: Անցնելով Բոհեմիայով, Լեհաստանով ու Ռուսաստանով՝ այն Վոլգայի վրայով հանգրվա-

նելու էր Աստրախանում: Նախատեսված էր, որ այստեղ դաշնակից զորքերին միանալու էր նաև երկու հազարանոց հայկական մի զորամաս, որը դաշնակիցներին ուղեկցելու էր դեպի Հայաստան: Ռուսաստանի տրամադրած ռազմանավերով բանակը փոխադրվելու էր Անդրկովկաս և ափ էր հանվելու պարսկական սահմանագլխում, որտեղից էլ պետք է սկսվեր ազատագրական արշավանքը դեպի Հայաստան: Ծրագրում կարևոր տեղ էր հատկացված հայկական ապստամբական ուժերի գործունեությանը: Այն պահին, երբ դաշնակից ուժերը մուտք կգործեին Հայաստան, անմիջապես սկսվելու էր համընդհանուր զինված ապստամբություն և 100 հազարանոց զինված հայկական բանակի վրա էր ընկնելու Հայաստանն ազատագրելու հիմնական հոգսը: Փաստորեն, օտար բանակի ներկայությունը ծառայելու էր սոսկ որպես ազդակ, իսկ Հայաստանի ազատագրումն իրականացնելու էին հայ ապստամբական ուժերը: Ենթադրվում էր, որ հակապարսկական ապստամբությունն սկսելուց անմիջապես հետո արևմտահայերի 80 հազարանոց մի զորամաս օգնության էր շտապելու իր արևելահայ եղբայրներին: Սա գործողություններին տալու էր համահայկական բովանդակություն և ընթացք: Ամբողջ Արևելյան Հայաստանի ազատագրման համար Օրին նախատեսում էր ընդամենը 20-25 օր, որը հնարավոր էր համարվում՝ հաշվի առնելով այստեղ պարսկական ռազմական ուժերի սակավությունն ու թերզինվածությունը և ուխտակից բանակների ռազմունակությունն ու տեխնիկան: Կարևոր գործոն էր նաև հայերի խանդավառությունն ու կամքը: Թերևս չափազանցություն էր միայն հայ ապստամբական ուժերի թվաքանակը, որը չէր արտահայտում իրական վիճակը: Ծրագրի համաձայն այս արշավանքին մասնակցելու էր նաև Ռուսաստանը, սակայն մեկ այլ ուղղությամբ: 30 հազարանոց ռուսական բանակը Հյուսիսային Կովկասից շարժվելու էր դեպի Վրաստան և օգնելու էր վրաց ժողովրդին՝ ազատագրվելու օտար տիրապետությունից: Օրին հմտորեն շեշտում էր երկու ժողովուրդների ազատագրական համատեղ պայքարի անհրաժեշտությունն ու նրբորեն բաժանում գլխավոր դերերը՝ Հայաստանն ազատագրվելու էր Եոյակ դաշինքի, իսկ Վրաստանը՝ Ռուսաստանի կողմից: Ազատագրված Հայաստանի բնակավայրերում պարզվելու

էին Քրիստոսի խաչելությունն ու Գրիգոր Լուսավորչի դիմանկարները պատկերող հայկական դրոշները: Անմիջապես վերականգնվելու էր Արևելյան Հայաստանի անկախությունը, որի թագավոր էր հռչակվելու Հովհան Վիլհելմը: Հայաստանի սահմաններում ընդգրկվելու էին՝ Լոռին, Գանձակը, Գեղարքունիքը, Արցախը, Սյունիքը, Նախիջևանը, Արարատյան դաշտը, Շիրակը, մայրաքաղաք էր հռչակվելու Երևանը: Անհրաժեշտ բոլոր միջոցներով ապահովվելու էր Թուրքիայի չեզոքությունը, որը հնարավոր էր դառնում թուրք-պարսկական թշնամական հարաբերությունների պայմաններում:

Այսպիսով, Արևմտյան Հայաստանի ազատագրության հարցը մնում էր առկախ, ազատագրվելու էր միայն Արևելյան Հայաստանը: Իսկ Թուրքիայի հնարավոր միջամտության դեպքում ռազմական գործողություններ էին սկսվելու նաև նրա դեմ, թեև իրադարձությունների նման շրջադարձն այս պահին ցանկալի չէր համարվում: Օրին, անշուշտ, հաշվի էր առնում արդեն 1699 թ. Կարլովիցում Ավստրիայի և Թուրքիայի միջև սկսված հաշտության բանակցությունները, ու պայմանագիր կնքվելու դեպքում՝ Ավստրիայի հնարավոր չեզոքության իրողությունը: Ծրագրի այն մասը, որ վերաբերում էր զուտ Անդրկովկասի քաղաքական կացությանն ու ռազմական վիճակին, հայ ազատագրական շարժման ծավալման հնարավորություններին, թվում է, ավելի իրատես էր: Առանձին չափազանցություններով հանդերձ, այն իրականանալի էր. ծրագիրը կազմված էր բանիմացությամբ: Այստեղ զարմանալի խորաթափանցությամբ կանխատեսվել ու հաշվի էին առնվել ոչ միայն Պարսկաստանում տեղի ունենալիք շատ իրադարձություններ, նրա թուլացումն ու անկումը, այլև Ռուսաստանի հնարավոր տարածաշրջանային հետաքրքրությունները և այդ հետաքրքրություններում Հայաստանի տեղն ու դերը: Իրատես չէր, սակայն, ծրագրի այն մասը, որ վերաբերում էր համաեվրոպական շահախնդրություններին, որը և ի դերև ելավ անմիջապես:

Ծրագիրը Հովհան Վիլհելմին ներկայացվեց 1699 թ. հոկտեմբերին: Առանձին, ոչ էական սրբագրումներից հետո մեծ իշխանն իր հավանությունը տվեց փաստաթղթին ու Օրուն առաջարկեց մեկնել Տոսկանա, Ավստրիա, Հռոմ և Ռուսաստան՝ ա-

ռաջիկա արշավանքի կազմակերպման վերաբերյալ իր անունից պաշտոնական բանակցություններ վարելու: 1700 թ. հունվարին Օրին արդեն Ֆլորենցիայում էր, ուր Կոզմաս III Մեդիչին հավաստում է իր հավատարմությունը դաշինքին ու խոստանում տրամադրել համապատասխան ռազմական ուժ, ֆինանսներ և տեխնիկա: Նույն թվականի հունիսին նրան ընդունում է պապը և խոստանում հնարավոր բոլոր միջոցներով և իր հեղինակությամբ աջակցել ապագա արշավանքի իրագործմանը: Անշուշտ, իր հերթին, Օրին ևս մեկ անգամ պապին հավաստիացնում է, որ հայերը պատրաստ են դավանափոխության:

1700 թ. վերջերին Օրին և իր ուղեկիցներն արդեն Վիեննայում էին, ուր ընդունելության արժանացան Լեոպոլդ I կայսեր կողմից: Եվրոպայի ամենաազդեցիկ և հզոր տիրակալներից մեկը չեչտված հարգանքով ընդունեց հայ բանագնացին և բավականին հանգամանորեն ծանոթացավ ներկայացված ծրագրի կետերին: Ծրագիրը կազմվել էր ուղիղ մեկ տարի առաջ և այդ ընթացքում քաղաքական իրադրությունը Եվրոպայում խիստ փոխվել էր: Նախ՝ հաշտության պայմանագիր էր կնքվել Թուրքիայի հետ՝ ի չահ Ավստրիայի, և վերջինս իր ծրագրերից հանել էր Արևելյան հարցը, որի հետ իր նշանակությունն ու այժմեականությունը կորցրել էր նաև Հայաստանի ազատագրման հարցը: Մասնակցել նման մի վիթխարի, կասկածելի ընթացք և ելք ունեցող արշավանքի, անշուշտ, Ավստրիան իրեն թույլ տալ չէր կարող՝ հենց թեկուզ Թուրքիայի հետ նոր ձեռք բերված այնքան անհրաժեշտ դաշնակցությունը չկորցնելու պատճառով: Իր հերթին, Թուրքիան չէր կարող անտարբեր դիտորդի դերում հանդես գալ նման մի արշավանքի ժամանակ: Մյուս կողմից՝ քաղաքական բարդ իրավիճակ էր ստեղծվել Արևմտյան Եվրոպայում, ուր Ավստրիայի ու Ֆրանսիայի չահերը սկսել էին բախվել իսպանական գահի համար ծավալվող պայքարում: Ավստրիան, որ լիովին երես էր դարձրել Արևելքից, Հոլանդիայի և Անգլիայի հետ նախապատրաստվում էր հակահարված տալ Բուրբոնների ծավալապաչտական քաղաքականությանը: Նշելի է, որ վիեննական այս հանդիպումներն ունեցան իրատեսական արդյունք: Ինքը՝ Լեոպոլդ կայսրը, Օրուն հուչեց դիմել Ռուսաստանի ցարին և պարզել, թե չէ՞ր կամենա արդյոք ցարը ստանձնել Պարսկահայաստանի ազատագրման գործը և թե արդյո՞ք ցարը ի վիճակի չէ՞ր լինի անձամբ միջամտելու, քանի որ Պարսկաստանը մոտ էր ու սահմանակից ոչ թե Ավստրիային, այլ Մոսկովյան պետությանը: Կայսրը խոստացավ անձամբ բարեխոսել ցարի առջև և Օրուն լավագույն երաչխավորագրերով ներկայացնել նրան:

Ավստրիայի հրաժարվելը ապագա արշավանքից խափանեց Եոյակ դաշինքի ստեղծումը. և Օրու Պֆալցյան ծրագիրը մնաց որպես չիրականացած երազանք, հայ ազատագրական չարժման բարդ ճանապարհի հերթական մի ձախորդ չրջափուլ: Ինքը՝ Օրին, իր խոհուն և սթափ կեցվածքով, հասկացավ, որ Հայաստանի ազատագրման Պֆալցյան ծրագիրն արդեն դուրս է եկել օրակարգից և անհրաժեչտ է հարցի լուծման համար փնտրել նոր ուղիներ, գտնել նոր հանգրվան, մչակել նոր ծրագիր: Ահա թե ինչու Հայաստանի ազատագրման հեռանկարը, հայերի քաղաքական կողմնորոչումը պետք էր ուղղել, տեղափոխել Արևմուտքից Հյուսիս, դեպի երիտասարդ Ռուսաստան: Օրին հիանալի գիտակցում էր, որ այդ պահին ողջ Եվրոպայում միակ երկիրը, որ ծավալվելու էր դեպի Կովկաս, դեպի Պարսկաստան, դա Ռուսաստանն էր և միակը, որ ի վիճակի էր ու տրամադիր օգնելու Հայաստանի ազատագրությանը: Դա էին հուչում ոչ միայն վիեննական դասերը, այլև քաղաքական նոր կացությունն ու ուժերի նոր դասավորությունը Ռուսաստանի ապագա արտաքին-քաղաքական չահախնդրություններում: Պետք էր չտապել և օգտագործել այդ չահախնդրությունները: Անշուշտ, այս կտրուկ չրջադարձը տրամաբանական վախճանն էր հայ-արևմտաեվրոպական այն երկարատև ու ձիգ անարդյունք բանակցությունների, որ վարել էին նախորդները դարեր ի վեր և հենց ինքը՝ Օրին, տարիներ չարունակ:

դ. Հայաստանի ազատագրության Մոսկովյան ծրագիրը: XVII դարի վերջերին Ռուսաստանը մեծ ջանքեր էր գործադրում ծովային նոր, հարմար ուղիների տիրելու համար: Հետաքրքրություններից մեկն աղերսվում էր Սև և Ազովի ծովերի հետ, որոնք գտնվում էին Թուրքիայի տիրապետության ներքո: Կասպից ծովը նրա առջև բացում էր անկում ապրող Պարսկաստանի մետաքսով ու հումքով հարուստ տարածքները: Սակայն այդ պա-

հին Ռուսաստանի համար առաջնահերթը հյուսիսային ծովային ամենադժվարագույն ու ամենաշահավետ ուղի՝ Բալթիկ ծով դուրս գալն էր: Այս նպատակով նա պատերազմ էր սկսել (1700 թվականից) Եվրոպայի հզորագույն տերություններից մեկի՝ Շվեդիայի դեմ, որին էլ պատկանում էին Բալթիկ ծովի՝ Ռուսաստանին չահագրգռող բոլոր ափերը: Պատերազմի սկիզբը ուղեկցվում էր Ռուսաստանի համար ծանր, ջախջախիչ պարտություններով: Բայց երիտասարդ թագավոր Պետրոս I-ը լի էր կամքով ու վճռականությամբ ոչ միայն դրությունը չտկելու, այլև պատերազմը հաղթական ավարտին հասցնելու:

Ռուսաստանի համար հենց այս ծանր պահին էր, որ 1701 թ. հուլիսի 7-ին Իսրայել Օրին և նրան ուղեկցողները հասան Մոսկվա: Օրին Մոսկվա էր ժամանել Ավստրիայի կայսեր և Պֆալցի կուրֆյուրստի կողմից տրված հանձնարարականներով, Լեհաստանի թագավոր Ավգուստ II-ի անցագրով և դիտվում էր որպես նրանց դեսպանորդ: Դրանով պետք է բացատրել այն մեծարանքներն ու պատչաճ ընդունելությունը, որ նրան արժանացրին ռուսական արքունիքում: Օրուն անմիջապես հատկացվեց առանձին բնակարան և թիկնապահ պահակախումբ:

1701 թ. հուլիսի 11-ին տեղի ունեցավ Իսրայել Օրու և Ռուսաստանի վարչապետ Ֆ. Ա. Գոլովինի հանդիպումը, որի ժամանակ դեսպանը բանավոր բացատրություններ տվեց իր առաքելության վերաբերյալ: Երեք օր անց՝ հուլիսի 14-ին, նա Պետրոս I-ին գրավոր զեկուցագիր ներկայացրեց, որտեղ հայ ազատագրական շարժման պատմության մեջ առաջին անգամ Հայաստանի ազատագրության գործը վերապահվում էր Ռուսաստանին: Այստեղ նա չեչտում է, որ հայերը վաղուց ի վեր իրենց հույսը կապել են Ռուսաստանից սպասվելիք օգնության հետ: Զեկուցագրում ասված էր, որ «այս խեղճ ժողովուրդը միչտ ապրել է ու ապրում է Ձեր թագավորական մեծությունից օգնություն ակնկալելու հույսով: Ժողովրդի մեջ կա մի նախախնամություն, թե գալու է Մոսկվայի օգոստոսափառ տնից ինչ-որ մի իշխան, Ալեքսանդր Մեծից ավելի քաջ մեկը, որն ազատելու է քրիստոնյաներին և վերականգնելու Հայոց թագավորությունը»: Հայ ազատագրական մտքի այս հերթական կտրուկ շրջադարձը պայմանավորված էր ոչ միայն Օրու ճկունությամբ, այլև ստեղծված նոր իրադրությամբ:

Պետրոս I-ին չափազանց հետաքրքրեց Օրու անձն ու առաքելությունը, և նա Գոլովինի միջոցով պահանջեց մանրամասն ծրագիր ներկայացնել իրեն Հայաստանի ազատագրության հնարավոր տարբերակների և այդ գործում Ռուսաստանին վերապահված դերի մասին: Ընդամենը տասն օրվա ընթացքում Օրին մշակեց և ցարական արքունիք ներկայացրեց Հայաստանի ազատագրության միանգամայն նոր ծրագիր, որը հայտնի է «Մոսկովյան ծրագիր» անունով: Այն Պետրոս I-ին ներկայացվեց հուլիսի 25-ին: Ծրագիրը բաղկացած էր 18 կետից: Ծրագրի համաձայն ռուսական 25 հազարանոց բանակը (15 հազար հետևակ և 10 հազար հեծյալ)՝ անհրաժեչտ քանակությամբ թնդանոթներով, ռազմերթ էր սկսելու նույն թվականի հոկտեմբերի սկզբներին: Բանակի մի մասը՝ 15 հազար զինվոր, չարժվելու էր ցամաքային ճանապարհով՝ Թերեք-Դերբենդ ուղղությամբ: Մյուս զորագունդը՝ 10 հազար զինվորներով, ճանապարհվելու էր Կասպից ծովով: Նիզովայի նավահանգստում ափ իջնելուց հետո ռուսական բանակը սրընթաց երթով չարժվելու էր հետևյալ չորս ուղղություններով՝ 1. Գանձակ, 2. Լոռի, 3. Կապան, 4. Նախիջևան: Նախիջևանում ռուսական զորքերին միանալու էին հայկական ապստամբական ուժերը (չուրջ 100 հազար զինվոր) և համատեղ սկսելու էին Հայաստանի ազատագրության ծրագրի իրականացումը: Հարվածի հիմնական ուղղությունը պետք է լիներ Երևանը, որը գրավելուց հետո ավարտվելու էր Հայաստանի արևելյան հատվածի ազատագրումը, և վերականգնվելու էր հայկական պետականությունը: Ռազմարչավի ամբողջ ծախսերը հոգալու էր հայկական կողմը: Ռուսական բանակը լիովին ապահովվելու էր պարենով, հաղորդակցության միջոցներով: Ներկայացված փաստաթղթում Օրին քանիցս չեչտում է Հայաստանի տնտեսական հարուստ կյանքի, մեծաչահ առևտրի, հանքավայրերի մասին, որով կարծես ցանկանում էր չահագրգռել ռուսական կողմին: Ռազմական այս ամբողջ արչավանքը, այսինքն Արևելյան Հայաստանի ազատագրումը պետք է տեղի ունենար չուրջ 20 օրվա ընթացքում: Կարևոր է, որ Օրին Հայաստանի հնարավոր դաչնակցի դերը

հատկացնում էր Վրաստանին, որի գահազուրկ թագավոր Արչիլ II-ը այդ ժամանակ ապաստան էր գտել Մոսկվայում: Անձնական հանդիպումների ժամանակ Արչիլը Օրուն հավաստիացրել էր, թե վրաց ժողովուրդը ևս կապստամբի, եթե ռուսական մի փոքրաթիվ զորամաս մտնի Վրաստան: Փաստորեն երկու երկրներում էլ պետականության վերականգնման հիմնական ուժը լինելու էին ազգային-ազատագրական բանակները, իսկ Ռուսաստանը առավելապես հանդես էր գալու որպես երաշխավոր: Եթե միջազգային դրության վատթարացման դեպքում Թուրքիան փորձեր խառնվել իրադարձություններին հօգուտ Պարսկաստանի, նախատեսվում էր Եվրոպական երկրների միջամտությունը: Օրին ծրագրին կցել էր Հայաստանի և հարևան երկրների ձեռանկար քարտեզը, որպեսզի ռուսական ռազմական գործիչներն առավել առարկայական պատկերացում ունենային Հայաստանի ճանապարհների, քաղաքների, բերդերի տեղադրության ու տարածքի մասին: Այս ծրագրում որևէ խոսք չկար հայերի դավանափոխության մասին, որ նախորդ ծրագրի հիմնակետերից մեկն էր: Դա բնական էր ու հասկանալի, քանզի ռուսական կողմին հարցի այդ մասը բնավ չէր հետաքրքրում:

Ծրագիրը կազմված էր Հայաստանի, Կովկասի ու Մերձավոր Արևելքի կացության քաջատեղյակությամբ: Փաստաթղթի հեղինակի բացատրություններն ու առաջարկությունները հիմնավորված էին ու համոզիչ: Նախորդ ծրագրի հետ համեմատած, սա առավել իրատեսական էր և ուներ ավելի գործնական բնույթ:

Ծրագիրն ու քարտեզը խիստ հետաքրքրեցին Պետրոս I-ին, և նա ցանկություն հայտնեց անձամբ բացատրություններ ստանալ նրա հեղինակից: Պետրոս I-ի և Օրու առաջին տեսակցությունը տեղի ունեցավ 1701 թ. հոկտեմբերի 7-ին իշխան Գոլովինի պալատում: Թագավորն ուշի-ուշով լսեց հայ բանագնացին և համոզվեց, որ գործ ունի լավիմաց մեկի հետ, որը կարող էր օգտակար լինել իր քաղաքական հետագա նպատակների համար: Ռուսաստանն արդեն խիստ հետաքրքրություն էր ցուցաբերում իր երկրի հարավային սահմաններից այն կողմ գտնվող տարածքների նկատմամբ, ցանկանում էր ընդարձակել իր քաղաքական ազդեցության ոլորտը Արևելքում, ամրանալ Կասպից

ծովի ափերին և վերահսկողություն հաստատել մետաքսի շահաբեր շրջանների վրա: Այս խնդիրների իրագործման ճանապարհին, անշուշտ, հայերն ու Հայաստանը կարող էին անգնահատելի ծառայություններ մատուցել: Փաստորեն ռուսական կողմը ևս շահագրգռված էր Հայաստանի անկախության վերականգնմամբ և նման մի բարեկամ երկրի առկայությունը բխում էր Ռուսաստանի քաղաքական շահերից: Հանդիպման վերջում ցարը որոշակիորեն հայտնեց, որ ինքը ընդառաջելու է հայերի այս դիմումին, որը հնարավոր կլիներ Հյուսիսային պատերազմի ավարտից հետո: Ժամանակ չկորցնելու համար նա հայ դիվանագետին խորհուրդ տվեց շարունակել հայ-ռուսական երկխոսությունը և նախապատրաստվել ապագա իրադարձություններին: Դեռ ավելին, 1702 թ. մարտին Պետրոս I-ը հատուկ գրությամբ իրավունք վերապահեց Օրուն իր ծրագրի մասին հայտնել մելիքներին և հոգևոր առաջնորդներին:

Ռուսական կողմի գիտությամբ Օրին 1702 թ. Հայաստան ուղարկեց մոսկվաբնակ մի հայ զորականի՝ կապիտան Միրոն Վասիլևին, որը գրություններ տարավ Էջմիածնի և Գանձասարի կաթողիկոսներին, մելիքներին: Էջմիածնի և Գանձասարի միաբաններն անորոշ, խուսափողական և զգուշավոր պատասխաններ ուղարկեցին, իսկ մելիքները ընդհանրապես որևէ արձագանք չտվին: Այս իրողությունը կարող էր սասանել Օրու հեղինակությունը ցարի առջև և, ամենակարևորը, կասկածի տեղիք տալ հայերի ռուսական կողմնորոշման մասին: Բայց հասկանալի էր, թե ինչու էին հայկական շրջանակները ցուցաբերել այդպիսի ծայրահեղ զգուշավորություն. պարսկական իշխանություններն ինչ-որ չափով տեղյակ էին տարվող բանակցություններին և պատրաստ էին խանգարել, պատժել անհնազանդ հպատակներին:

Ստեղծված անհարմար դրությունից ելք փնտրելու նպատակով Օրին և Մինաս Տիգրանյանցը հմտորեն օգտագործեցին Անգեղակոթի ժողովի կողմից իրենց տրված մաքուր, սակայն ստորագրված թղթերը: Նրանք կազմեցին մելիքների անունից Պետրոս I-ին ուղղված մի դիմում՝ թվագրված 1703 թ. մայիսի 7-ով: Այստեղ վերստին հավաստում էին հայերի անխախտ քաղաքական դիրքորոշումը Ռուսաստանի հանդեպ և կրկին չեշ-

տում Ռուսաստանի աջակցությամբ ազատություն ձեռք բերելու ակնկալությունները. «Հավատում ենք, որ Ձեզնով է լինելու հայերի ազատագրումը»,- գրում էին նրանք Պետրոս I-ին:

Ելքը գտնված էր, և Օրին ավելի դյուրությամբ կարող էր շարունակել հետագա բանակցությունները: Ցարի հետ նա հանդիպեց ևս մի քանի անգամ և հասկացավ, որ ձգձգվող ռուս-չվեդական պատերազմը առժամանակ Ռուսաստանին ստիպելու է հետին պլան մղել Հայաստանի ազատագրության հարցը: Սակայն Օրու համար այդ հարցը երբեք դուրս չեկավ օրակարգից: Նա չափազանց եռանդուն շարունակում էր բանակցությունները վրաց քաղաքական շրջանակների հետ, ծանոթանում ռուսական ռազմական արվեստին: Ռուսական բանակի առաջին հաղթանակները չվեդների դեմ է՛լ ավելի աշխուժացրին Օրու գործունեությունը: Նա հստակեցրեց ապագա ազատագրական արշավանքի մանրամասները, պատրաստել տվեց Հայաստանի նոր, առավել հանգամանալից քարտեզ:

Պարսկաստանի ներքին դրության վերաբերյալ ավելի ճշգրիտ տեղեկություններ ունենալու, հայ և վրաց ապստամբական ուժերը համախմբելու և այլ անհրաժեշտ գործողություններ կատարելու համար Օրին առաջ քաշեց իր գլխավորությամբ Պարսկաստան ռուսական մեծ դեսպանություն ուղարկելու գաղափարը, որին ռուսական կողմը անմիջապես հավանություն տվեց: Դեսպանությունը պետք է ժամաներ Սպահան՝ շահ Հուսեյն I-ին ռուսաց թագավորի բարեկամությունը հավաստիացնելու նպատակով, բայց իրականում պետք է զբաղվեր հետախուզական անհրաժեշտ տվյալներ հայթայթելով և նախապատրաստական աշխատանք տաներ տեղի հայերի ու վրացիների շրջանում: Իր դիրքը չեչտելու և կասկածներ չհարուցելու համար Օրին նաև խնդրում է իրեն չնորհել ռուսական բանակի գնդապետի աստիճան: Պետրոս I-ը հավանություն է տալիս պարսկական դեսպանության գաղափարին և ընդառաջելով Օրու խնդրանքին՝ նրա դիմումի վրա մակագրում է. «Շնորհել գնդապետի կոչում՝ ըստ իր ցանկության»:

Մինչև Պարսկաստան մեկնելը Օրին անհրաժեշտ համարեց մեկ անգամ ևս լինել Եվրոպայում և այստեղ մի վերջին անգամ բանակցություններ վարել պապի, ավստրիական կայսեր և Հովհան Վիլհելմի հետ՝ ռուսական բանակի պարսկական ապագա արշավանքի վերաբերյալ նրանց դիրքորոշումը ճշգրտելու համար: 1704-1706 թթ. Օրին եղավ եվրոպական մի շարք երկրներում, հանդիպեց Ավստրիայի կայսրին, Պֆալցի մեծ իշխանին, Կղեմես ԺԱ պապից ստացավ հավատարմագիր և նամակ՝ հասցեագրված շահին: Շատ կարևոր էր այն, որ Օրին իր ունեցած նյութական սուղ միջոցներով և հայ առևտրականների կողմից իրեն փոխտրված գումարներով Ամստերդամում գնեց զենք, հանդերձանք և Արխանգելսկի վրայով ուղարկեց Աստրախան՝ այնտեղից Հայաստան տեղափոխելու մտադրությամբ: 1706 թ. հոկտեմբերին նա արդեն Մոսկվայում էր, իսկ 1707 թ. հուլիսի կեսերին դեսպանությունը ճանապարհվում է Պարսկաստան:

Որոշ դժվարություններ հաղթահարելուց հետո 1709 թ. հուլիսին դեսպանը ժամանեց Սպահան: Իսրայել Օրու դեսպանությունը մեծ հետաքրքրություն առաջացրեց ինչպես բուն Պարսկաստանում, այնպես էլ Անդրկովկասում, դեռ ավելին՝ այն ունեցավ միջազգային հնչեղություն: Պարսկաստանում կաթոլիկական քարոզչությամբ զբաղվող ֆրանսիացի միսիոներները, որ միաժամանակ զբաղված էին հետախուզական տվյալներ հավաքելով, փորձեցին անբարենպաստ կարծիք ստեղծել դեսպանության և անձամբ Օրու մասին: Քաջ գիտակցելով Օրու դեսպանության նպատակները՝ ֆրանսիացիներն ամեն կերպ աշխատում էին խոչընդոտել նրա հանդիպումը շահի հետ: Հենց ֆրանսիացիների ջանքերով էր, որ իմացվեց ու տարածվեց դեսպանի հայ լինելու հանգամանքը, որն անսպասելի և ցնցող տպավորություն թողեց պարսկական քաղաքական-դիվանագիտական շրջանակներում: Զպետք է մոռանալ, որ Օրին պաշտոնապես համարվում էր նաև Հռոմի պապի դեսպանորդ և հնարավոր չէր վերջնականապես խոչընդոտել նրա բանագնացությունը: Ավելին, Օրին հանդիսավորությամբ ընդունվեց շահի կողմից: Հուսեյն I-ը դրականորեն վերաբերվեց պապի խնդրանքին՝ Պարսկաստանում քրիստոնյաների վիճակը բարելավելու վերաբերյալ: Շահը, սակայն, առանձին գրություն ուղարկեց ցարին, որը լի էր հայերի նկատմամբ անբարյացակամ արտահայտություններով. այստեղ նա հասկացնում էր, որ չի խրախուսում հայ-ռուսական մերձեցումը:

Կատարելով դեսպանական իր առաքելությունը՝ 1709 թ.

օգոստոսի կեսերին Օրին Սպահանից վերադարձավ: Ամբողջ երկու տարի նա մնաց Անդրկովկասում: Դժվար չէ կռահել, թե այդքան երկար ժամանակ ինչով էր նա զբաղված. Օրին եռանդուն գործունեություն էր ծավալել հայ քաղաքական ուժերին համախմբելու, նրանց դեպի Ռուսաստան կողմնորոշելու ուղղությամբ: Անձամբ հանդիպել էր Ամենայն Հայոց կաթողիկոս Աղեքսանդր Ա Ջուղայեցու և Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանի հետ: Առավել երկար նա մնաց Սյունիքում և Արցախում, համախմբեց տեղական ուժերը, Աստրախանից ստացված գենքերը բաժանեց ըստ անհրաժեշտության: Հանդիպումներ ունեցավ նաև վրաց ռազմա-քաղաքական գործիչների հետ՝ պայմանավորվելով հետագա միասնական գործողությունների մասին: Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանը, Օրու գաղափարներով խանդավառված, միացավ նրա պատվիրակությանը՝ ռուսաց ցարին անձամբ բացատրություններ տալու նպատակով: Այս հանգամանքը հայ-ռուսական հետագա հարաբերություններին տալու էր ավելի գործնական ու պաշտոնական բնույթ: Ի վերջո, 1711 թ. ամռանը պատվիրակությունը Կասպից ծովով նավարկեց մինչև Աստրախան, ուր հասավ օգոստոսի սկզբներին: Այստեղից ցամաքային ճանապարհով Օրին շտապում էր վերադառնալ Մոսկվա: Նրա համար Ռուսաստանի պարսկական արշավանքի ուրվագիծը դարձել էր ավելի ու ավելի որոշակի: Սակայն տեղի ունեցավ անսպասելին. օգոստոսի վերջերին ուժերի ծաղկուն շրջանում, 50 տարեկանում, կասկածելի ու մութ հանգամանքներում Աստրախանում հանկարծամահ եղավ հայ ազատագրական շարժման անխոնջ և եռանդուն գործիչը: Եսայի կաթողիկոսը Աստրախանի հայկական եկեղեցու բակում կատարելով Օրու թաղման կարգը՝ ձեռնունայն վերադարձավ Արցախ:

Պատվիրակության փաստաթղթերն ու իրերը ցիրուցան եղան և անհետացան: Օրու մահվան մասին Պետրոս I-ը իմացավ Կազանի նահանգապետ Պ. Մ. Ապրակսինի՝ ցարին ուղղված 1711 թ. նոյեմբերի 7-ի գրությունից: Օրու մահվանից ուղիղ 11 տարի անց՝ 1722 թ., Պետրոս I-ը վերջապես սկսեց պարսկական արշավանքը: Բայց այդ արշավանքը չունեցավ այն արդյունքը, որի համար ապրել և պայքարել էր ազատագրական շարժման նշանավոր գործիչն ու հայ մեծ մտածողը:

2. ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐՆ ԱՐՑԱԽՈՒՄ ԵՎ ՍՅՈՒՆԻՔՈՒՄ XVIII ԴԱՐԻ 20-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ: ՀԱՅԿԱԿԱՆ ԱՆԿԱԽ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ

ա. Պետրոս I-ի պարսկական արշավանքը: Ռուսաստանի պատերազմը Բալթիկ ծովի շրջանում ավելի հաջողությամբ էր ընթանում XVIII դ. 10-ական թվականներին: Երբ ակնհայտ դարձավ, որ հաղթանակը չվեդների դեմ ժամանակի խնդիր է, Պետրոս I-ը սկսեց նախապատրաստվել Կասպից ծովի ափերին ամրապնդվելու խնդրի իրականացմանը: Դրա համար նախապես անհրաժեշտ էր ապահովել տեղական ժողովուրդների՝ հատկապես հայերի ու վրացիների աջակցությունը, ինչպես ժամանակին հավաստիացրել էր Իսրայել Օրին: Անհրաժեշտ էր նաև թարմացնել տեղեկությունները Պարսկաստանում տիրող իրավիճակի մասին: Ահա այս նպատակներն էին հետապնդում այն զույգ դեսպանությունները, որ Պետրոս I-ը ուղարկեց Պարսկաստան և Անդրկովկաս: Նրա քաղաքական-ռազմական շահախնդրությունները ներդաշնակում էին տեղական ժողովուրդների ազատագրական ձգտումների հետ, որ տվյալ պահին համընկնում էին Ռուսաստանի արտաքին քաղաքականության միտումներին:

1715 թ. Պարսկաստան ուղևորվեց Արտեմի Վոլինսկու գլխավորած դեսպանությունը: Մասնավորապես հիմնական նպատակներից մեկը տեղի ժողովուրդների տրամադրություններին հաղորդակից լինելն էր: Վոլինսկին հրահանգ ուներ. «Հետախուզել հայ ժողովրդի վիճակը, շա՞տ են արդյոք հայերը, ի՞նչ տեղերում են բնակվում, ինչպե՞ս են տրամադրված Ցարական մեծության նկատմամբ»: Վոլինսկին դեռ նոր էր հասել Սպահան, երբ ցարի հրահանգով 1716 թ. Հայաստան ուղևորվեց Օրու գործընկեր Մինաս Տիգրանյանցը, որը 1716-1717 թթ. մի շարք հանդիպումներ ունեցավ հայ գործիչների, մասնավորապես Էջմիածնի և Գանձասարի կաթողիկոսների, մելիքների հետ: Ցարին ուղղված զեկուցագրում, կրկնելով Օրուն, նա դարձյալ հավաստիացնում էր. «Եթե Նորին մեծությունը բարեհաճի ռազմական գործողություններ սկսել ընդդեմ պարսիկների, ապա բացարձակապես բոլոր հայերը կանցնեն Ցարական մե-

ծության կողմը»: Նույնը հավաստում էր նաև Վոլինսկին, որը մինչև 1718 թ. մանրամասն ու խորապես ուսումնասիրել էր Պարսկաստանի կացությունը:

Այդ ժամանակ Պարսկաստանը խիստ թուլացել էր ներքին երկպառակություններից. երկրի բոլոր ծայրամասերում և անգամ կենտրոնում տեղի էին ունենում հակապետական ապըստամբություններ: Ապստամբել էին քրդերն ու արաբները, աֆղաններն ու ուզբեկները: Թուրքիայի սադրանքով լեզգիական (դաղստանցիների) հրոսակախմբերը Դաղստանից պարբերաբար ասպատակում էին Անդրկովկասը և մեծաքանակ ավարով ու գերիներով վերադառնում: Այդ արշավանքներից մեծապես տուժում էին նաև հայերը: Պարսկական պետությունը, տեղական պարսկական վարչակազմը անկարող էին կասեցնել ավարառու արշավանքները: Լեզգիների հերթական արշավանքներից մեկի ժամանակ, 1721 թ. օգոստոսին, Շամախիում թալանվեցին նաև ռուս վաճառականները, նրանցից մի քանիսն էլ սպանվեցին: Պետրոս I-ը, որն ուշի-ուշով հետևում էր Պարսկաստանում տեղի ունեցող իրադարձություններին, անմիջապես որոշեց օգտագործել այդ առիթը: Նա ռազմական գերատեսչություններին կարգադրեց նախապատրաստվել պարսկական ապագա արշավանքին: Պատերազմը Շվեդիայի դեմ արդեն ավարտվել էր հաղթանակով և եռանդուն ցարն անմիջապես մտնում էր մեկ այլ պատերազմի մեջ: Ինչպես երբեք, պահը շատ հարմար էր, և եթե ռուսական կողմը հապաղեր, ապա Անդրկովկասի նկատմամբ հավակնություններ ունեցող Թուրքիան նախահարձակ կլիներ: Հետաքրքիր է, որ պարսկական արշավանքի նախօրյակին ռուսական կողմը պաշտոնապես հայտարարել էր, թե Պետրոս I-ը արշավանքը ձեռնարկում է միմիայն Պարսկաստանը կործանումից փրկելու նպատակով, նրան պաշտպանելու ապստամբներից և Թուրքիայի հնարավոր հարձակումից: Այսպես, փորձ էր արվում ձեռք բերել նաև պարսիկների համակրանքը:

1722 թ. մայիսին սկսվեց ռուսական բանակի պարսկական արշավանքը: Արշավանքը սկսելուց հետո ցարն Աստրախանից հատուկ դեսպան ուղարկեց վրաց Վախթանգ VI թագավորի մոտ, որը նրան հորդորում էր պատրաստ լինել պարսիկների դեմ ուղղված առաջիկա համատեղ ռազմական գործողություններին

և այդ ձեռնարկի մեջ ընդգրկել նաև հայերին: Ցարը առաջարկում էր հայ-վրացական զորքերը փոխադրել Կասպից ծովի մոտերքը՝ Դերբենդի և Բաքվի միջև գտնվող որևէ վայրում, ռուսական զորքերին միանալու համար:

Վրաստանը Պարսկաստանին ենթակա, բայց առանձին տեղական կառավարում ունեցող, ավատական երկպառակություններով առլեցուն մի փոքրիկ երկիր էր: Նրա թագավոր Վախթանգ VI-ը ուներ ռուսական կողմնորոշում, և պատահական չէր Պետրոս I-ի ուղերձը նրան: Իր հերթին Վախթանգը հանդիպումներ էր ունենում հայ գործիչների և մասնավորապես Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանի հետ, որոնք քաջատեղյակ էին Պետրոս I-ի ծրագրերին և պատրաստվում էին աջակցել դրանց իրականացմանը: Որոշվում է միավորել հայ-վրացական ռազմական ուժերը, կենտրոնացնել Գանձակի շրջակայքում և սպասել ռուսական հետագա հրահանգներին:

Այսպիսով, հիմք դրվեց հայ-վրացական ռազմական համագործակցությանը: Եթե Վրաստանն ուներ քիչ թե շատ պետական մարմիններ, շուրջ 30 հազարանոց բանակ, ապա Հայաստանում այդ պահին գոյություն ունեին սոսկ փոքրաթիվ, առանձին, անկանոն մելիքական ջոկատներ, որոնք լեզգիների արշավանքների ժամանակ, երբ պարսկական անդրկովկասյան ուժերն ի վիճակի չէին հակահարված տալու, Արցախի, Լոռու, Սյունիքի ինքնապաշտպանության գործը վերցնում էին իրենց վրա: Ինքնապաշտպանական այս մարտերի ժամանակ է, որ Արցախի բոլոր մելիքություններում, մասամբ նաև Սյունիքում և Լոռիում, ստեղծվում են ռազմական ամրացված շրջաններ, որոնք հայտնի են սղնախներ անվամբ: Արցախում սղնախները կազմակերպվել են հիմնականում հին (Ջրաբերդ, Քարագլուխ-Շոշ և այլն) կամ նոր (Գյուլիստան, Ավետարանոց և այլն) ամրոցների շրջակայքում: 20-ական թվականների սկզբներին Արցախի սղնախներն ունեին մի քանի տասնյակ հազարի հասնող, հիմնականում հեծյալ մարտիկներ:

Հայկական զինված ուժերի ստեղծման գործում կարևոր դեր են խաղացել Ավան հարյուրապետը, մելիք Հովսեփը, իսկ ընդհանուր կազմակերպիչն ու գաղափարախոսը Եսայի Հասան-Ջալալյանն էր: Դեռևս 1717 թ. Ավան հարյուրապետը Շոշում

ստեղծեց ռազմական մի հզոր հենակետ՝ կամավորական հիմունքներով հավաքված մարտունակ կայազորով, որն իրեն փառքով պսակեց 1722 թ. գարնանը լեզգիների ասպատակությունները հետ մղելու ժամանակ: Այսպիսով, տեղի ունեցավ պատմական չափազանց կարևորագույն իրադարձություն՝ հայկական պետականության կորստից հետո առաջին անգամ վերականգնվում էր հայկական կանոնավոր բանակը, որը կարող էր մղել ոչ միայն պաշտպանական, այլև հարձակողական մարտեր:

Հայկական ռազմական ուժերի առկայությունը մասամբ կարող էր փոխել ազատագրական լեգենդի բուն էությունը: Հայաստանի ազատագրման և հայկական պետականության վերականգնման գործում, արտաքին ուժերի հետ միասին, կարևոր գործոն էր դառնում նաև հայկական զինված ուժը: Պետրոս I-ի պարսկական արշավանքը լավագույն առիթ էր դրսևորելու, ցույց տալու, թե ինչի էր ընդունակ հայոց զորքը: Այսպիսով, հայերը չմնացին կողմնակի դիտողի դերում և պատրաստ էին իրենց ջանքերը ներդնելու սեփական հայրենիքի ազատագրման գործում: Սա էր XVIII դարի սկզբների հայ ազատագրական շարժման գլխավոր առանձնահատկությունը:

Դեպի Կասպիականի արևմտյան ափերն արշավող ռուսական բանակի կազմում գործում էին նաև հայերից կազմված առանձին ջոկատներ: Նշանավոր էր հատկապես Հայկական էսկադրոնը՝ Պետրոս դի Սարգիս Գիլանենցի հրամանատարությամբ: Գործում էին նաև հայկական այլ զորաջոկատներ, որոնց հրամանատարներն էին Աղազար դի Խաչիկը, Այվազ Աբրամովը, Յակով Շամիրովը և ուրիշներ: Այս զորամասերի կազմակերպման, զինման ու հանդերձավորման գործը գլխավորել է Մինաս վարդապետ Տիգրանյանցը: Պետք է ենթադրել, որ Իսրայել Օրու գնած զենքի մի մասը այդ ժամանակ տրամադրվեց նորաստեղծ հայկական զորամասերին: Մերձկասպյան տարածքներում տեղակայված ռուսական բանակի կազմում ընդգրկված հայ զինվորների թիվը կազմում էր շուրջ 2500 մարդ:

1722 թ. ամռանը հայկական կանոնավոր 12 հազարանոց զորաբանակը՝ Ավան հարյուրապետի և Եսայի Հասան-Ջալալյանի հրամանատարությամբ, դուրս եկավ Արցախից և շարժվեց

վրացական 30 հազարանոց բանակին ընդառաջ: Հանդիպման վայր էր նշանակված Գանձակից ոչ հեռու գտնվող Զոլակ գյուղը: 1722 թ. սեպտեմբերի 22-ին նշանակված վայրում «մեծավ շուքով» տեղի ունեցավ Հայ-վրացական բանակների հանդիպումը, որն անասելի ոգևորություն առաջացրեց երկու կողմերում: Միացյալ բանակի առջև ելույթներ ունեցան Վախթանգ թագավորն ու Եսայի Հասան-Ջալալյանը: Նշվեց, որ այստեղից պետք է շարժվեն Շամախի և սպասեն ռուսական բանակի ժամանելուն, որը պետք է տեղ հասներ հոկտեմբերի սկզբներին: Այնուհետև վրաց, հայկական և ռուսական միացյալ ուժերով սկսելու էին ազատագրական արշավանքը դեպի Երևան, որի արդյունքում ազատագրվելու էր նաև ամբողջ Արևելյան Հայաստանը: Հայ ազատագրական շարժումը երբեք այնքան մոտ չէր եղել իր երազանքի իրականացմանը: Ազատագրական մեծ արշավանքին մնացել էին հաշվված օրեր, սպասվում էր ազատարար մեծ թագավորի գալուստը: Մինչդեռ իրադարձությունները զարգանում էին հայերի համար ոչ ցանկալի հունով:

Դեռևս 1722 թ. հուլիսին ռուսական 44 հազարանոց բանակը Պետրոս I-ի հրամանատարությամբ դուրս գալով Աստրախանից՝ շարժվեց հարավ: Օգոստոսի 23-ին ռուսները գրավեցին Դերբենդը: Նախատեսված էր, որ ռուսական բանակն այստեղից թեքվելու էր դեպի հարավ-արևմուտք և հասնելու էր Շամախի, որտեղ միանալու էր Հայ-վրացական բանակին: Սակայն Դերբենդը գրավելուց հետո Պետրոս I-ը այստեղ թողնելով գեներալ Մ. Մատյուշկինի զորամասը, հոկտեմբերի 4-ին վերադարձավ Աստրախան: Մատյուշկինին հրամայված էր ռազմական հետագա գործողությունների ժամանակ գրավել միայն մերձծովյան շրջանները: Շամախի շարժվելու մասին որևէ հրահանգ չկար: Այսպիսով, չիրագործվեց Հայ-վրացական և ռուսական զորքերի Շամախիում միավորվելու նախագիծը: Իսկ բանից անտեղյակ Հայ-վրացական հրամանատարությունը Զոլակում դեռ սպասում էր բաղձալի պահին:

Հասած լուրերը մխիթարական չէին. լեզգիները փակել էին Շամախի տանող ճանապարհը, իսկ նոյեմբերին անսպասելիորեն իմացվեց, որ ռուսական բանակի նախատեսված արշավանքը ընդհատվել է, ցարը վերադարձել է Ռուսաստան: Որոշ ժամա-

նակ անց մելիքներին ուղղած իր հատուկ գրության մեջ Պետրոսն այդ քայլը բացատրել է հետևյալ կերպ. 1722 թ. օգոստոսի 27-ին ուժեղ ալեկոծության հետևանքով ռուսական նավատորմը կորցրել է 12 նավ, մի քանի օր անց խորտակվել են նաև զենք, զինամթերք, պարեն ու ձիեր տեղափոխող 17 նավ: Այսպիսի կորուստներից հետո է ինքը որոշել առժամանակ հետաձգել դեպի Շամախի նախատեսված արշավանքը:

Անկասկած, միայն այս կորուստները չէին, որ ստիպում էին Պետրոսին հրաժարվել Անդրկովկաս արշավելու մտքից, որը գրավելու իրական հնարավորություններ իրոք նա ուներ: Բանն այն է, որ Անդրկովկաս արշավելու ուղղությամբ Ռուսաստանի գործուն և վճռական քայլերը Թուրքիային ստիպեցին դիմելու կտրուկ գործողությունների: Թուրքիան հասկացնել տվեց Ռուսաստանին, որ ինքը չի հանդուրժի դեպի Անդրկովկաս ռուսական բանակների արշավանքը և բացահայտորեն Ռուսաստանին սպառնում է պատերազմով: Թուրքիային ոգևորում էր նաև Ֆրանսիայի և Անգլիայի ակնհայտ թշնամական վերաբերմունքը Ռուսաստանի նկատմամբ: Այս պայմաններում Հյուսիսային պատերազմից հետո ներքաշվել մի նոր պատերազմի մեջ Ռուսաստանը իրեն թույլ տալ չէր կարող: Նա առայժմ ստիպված էր բավարարվել մերձկասպյան շրջանների միացմամբ, որոնք կարող էին հենակետ դառնալ ապագա մեծ արշավանքի ժամանակ:

Այսպիսով, հայ-վրացական ապստամբական ուժերը 1722 թ. աշնան վերջերին ստիպված էին վերադառնալ իրենց տեղերը: Պետրոս I-ի պարսկական արշավանքը անկասկած կարևոր դեր խաղաց հայ ազատագրական շարժման հետագա ծավալման գործում, այն նպաստեց նաև հայ-վրացական ռազմական համագործակցության ստեղծմանն ու ամրապնդմանը:

Կասպից ծովի արևմտյան ափերին ռուսական տիրապետության հաստատումով, որը միջազգային իրավունքի հիման վրա ամրագրվեց Ս. Պետերբուրգի 1723 թ. սեպտեմբերի 12-ի ռուս-պարսկական պայմանագրով, Ռուսաստանը ավելի մոտեցավ Հայաստանին, ռուսական ներկայությունը դարձավ ավելի շոշափելի:

Հայ ազատագրական շարժման գործիչները, ապավինելով

ռուսական ներկայությանը, զենքը վայր չդրեցին, այլ շարունակեցին հետագա պայքարը նախ՝ պարսկական տիրապետության, իսկ հետագայում նաև՝ թուրքական զավթողական արշավանքների դեմ:

Կարելի է ասել, որ հենց այդ ժամանակ էլ վերջնականապես ձևավորվեց հայ ազատագրական շարժման ռուսական կողմնորոշումը: Ուղղակի դժվար է հստակ պատասխանել, թե պարսկական տիրապետությունից Հայաստանի հնարավոր ազատագրման դեպքում արդյո՞ք Պետրոս I-ը կբավարարվեր սոսկ ազատարարի և բարեկամի բարոյական պարտականություններով, և ի վերջո Հայաստանը ձեռք կբերե՞ր իր երազած ազատագրությունը, թե նոր գրավված տարածքները, թեկուզ և ինքնավարության ինչ-ինչ նշույլներով, կմիավորվեին Ռուսաստանին: Պետրոս I-ը տարբեր առիթներով չեշտում էր, թե իր նպատակն է Անդրկովկասում ստեղծել հայ-վրացական միացյալ թագավորություն՝ Վախթանգ VI-ի գահակալությամբ: Ցավոք, այս ծրագրի այլ հանգամանքներ հայտնի չեն: Իրադարձությունների հետագա ընթացքը թույլ չտվեց համոզվելու, թե որքան անկեղծ էին Պետրոս I-ի այս մտադրությունները և որքան իրական:

բ. Ազատագրական կռիվներն Արցախում: Հայկական անկախ իշխանության ստեղծումը: Պետրոս I-ի պարսկական ձախողված արշավանքից հետո ապստամբած հայերն ու վրացիները հայտնվեցին խիստ աննպաստ իրավիճակում: Անհրաժեշտ էր պարսից շահին պատասխան տալ իրենց հակապետական քայլերի համար: Շահ Թահմազ II-ը Վախթանգին մեղադրելով պետական դավաճանության մեջ՝ նրան գահընկեց արեց: Ռուսաստանի փորձերը՝ փրկել իր հովանավորյալին, անարդյունք եղան: Գահազուրկ Վախթանգը ստիպված էր փախչել Ռուսաստան: Ապստամբ հայերը զրկվեցին իրենց դաշնակցից և ստիպված էին միայնակ շարունակել պայքարը:

Արցախ վերադարձած հայկական զինական ուժերը ազատագրական կռիվների միջոցով երկրամասից դուրս քշեցին պարսկական վարչակազմին և զորամասերին: Փաստորեն, 1722 թ. վերջերին և 1723 թ. սկզբներին ամբողջ Արցախն ազատագրված էր պարսկական իշխանության մնացուկներից: Վերացան

պարսկական վարչական ու հարկային համակարգերը, տեղական կառավարումն անցավ հայերի ձեռքը: Աստիճանաբար մտցվեցին կառավարման, հարկահավաքման միանգամայն նոր ձևեր: Ոչնչացվեցին հարկային բոլոր հին ցուցակները, ժողովուրդն ազատվեց դարեր ի վեր «սրբագործված» բռնությունների ու կամայականությունների համակարգից: Շարժման առաջնորդ Եսայի Հասան-Ջալալյանը տեղի ունեցած երևույթները գնահատել է որպես հայոց ազգային հանգած իշխանության «նոր նորոգում»: Արցախի հայկական իշխանության գործառույթներն իրականացնում էին տեղական մելիքական հին տոհմերի ներկայացուցիչները, որոնց գործունեությունը համակարգում էր Եսայի Հասան-Ջալալյանը:

Հատկապես մեծ հաջողություններ ձեռք բերվեցին զինված ուժերի ամրապնդման ուղղությամբ: Կազմակերպվեցին ռազմական ամրացված հինգ շրջաններ՝ սղնախներ. Դիզակի, Խաչենի, Ջրաբերդի, Շոշի և Գյուլիստանի: Յուրաքանչյուր սղնախ ուներ չուրջ 6 հազար զինվոր: Սղնախների զինված ուժերի ընդհանուր թիվը տատանվում էր 30-40 հազարի միջև: Հրամանատարներն էին Ավան, Սարգիս, Եսայի, Թարխան և այլ զորավարներ: Ընդհանուր զորահրամանատարն էր Ավան հարյուրապետը: Զինված էին բավարար, վառոդն ու հրազենը հիմնականում պատրաստում էին տեղում:

Արցախի զինական ուժերը հաջողությամբ հետ են մղում պարսկական պատժիչ զորաբանակների արշավանքները: Օրինակ՝ 1723 թ. հոկտեմբերին Հադրութում տեղի ունեցած ճակատամարտի ժամանակ պարսկական 40 հազարանոց բանակը պարտություն կրեց և կորցնելով 2000 մարդ՝ հետ նահանջեց: Արցախի ինքնավար իշխանություններն ստիպված էին ռազմական ընդհարման մեջ մտնել դրսից եկած ու արդեն Արցախի որոշ շրջաններում հիմնավորված թուրք (ադրբեջանցի) ավատատերերի և ելուզակային ջոկատների հետ, որոնք օգտվելով պարսկական կենտրոնական իշխանության թուլացումից՝ փորձում էին իրենց ձեռքը վերցնել Արցախի հարկահավաքությունը կամ զբաղվում էին հայկական գյուղերի թալանով: 1724 թ. սրանք ևս ջախջախիչ պարտություն կրեցին Ջրաբերդի և Գյուլիստանի զինված ուժերից և մինչև օսմանյան թուրքերի հայտնվելը այլևս

չէին համարձակվում պահանջներ ներկայացնել Արցախի մելիքներին: Այսպիսով, Արցախի հայկական իշխանությունը գնալով ավելի ու ավելի էր ամրապնդվում ու կայունանում:

Անշուշտ, հայ ազատագրական շարժումը չարունակում էր ապավինել Ռուսաստանի օգնության հույսին և այդ ակնկալությամբ էլ նոր խնդրագրեր էին ուղարկվում ցարական արքունիք: Սակայն Պետրոս I-ի անակնկալ մահից հետո (հունվար, 1725 թ.) ռուսական քաղաքական ու ռազմական շրջանակներում թուլանում էր հետաքրքրությունը Անդրկովկասի նկատմամբ, որի արդյունքը եղան հայերին տրված անորոշ, խուսափողական պատասխանները և, ի վերջո, Անդրկովկասից հեռանալու միտումները:

գ. Թուրքական արշավանքը Արևելյան Հայաստան: Երևանի և Արցախի հերոսամարտերը: Պարսկաստանի թուլացումն ու մասնատումը, Ռուսաստանի անսքող հետաքրքրությունը Անդրկովկասի նկատմամբ իրենց վրա բևեռեցին Օսմանյան Թուրքիայի ուշադրությունը: Թուրքիան ուշի-ուշով հետևում էր տարածաշրջանում տեղի ունեցող իրադարձություններին և պատրաստվում էր Անդրկովկասն ու Ատրպատականը գրավելու իր հին ծրագրերի իրականացմանը:

1722 թ. վերջերին Էրզրումում կենտրոնացված թուրքական 100 հազարանոց բանակը պատրաստ էր ներխուժելու Անդրկովկաս: Այստեղ էին բախվում ռուսական և թուրքական շահերը, և կողմերն աշխատում էին համակրանք փնտրել տեղական ժողովուրդների շրջանում: Հենց թուրքերի դրդումով էր, որ կովկասյան լեռնականները, մասնավորապես լեզգիները, սկսեցին ասպատակել Անդրկովկասը և հենակետեր ստեղծել թուրքական ռազմակալման համար: Իր հերթին, Ռուսաստանը չէր թուլացնում երկխոսությունն ու կապերը հայ և վրաց քաղաքական գործիչների հետ և ամրապնդվելով Կասպից ծովի ափերին՝ պատրաստվում էր ավելի վճռական քայլի դիմել՝ գրավել Անդրկովկասը:

Ռուսներին կանխելու նպատակով 1723 թ. գարնանը թուրքական բանակը ներխուժեց Անդրկովկասի սահմանները և սրընթաց չարժվեց դեպի Թիֆլիս, որը հունիսին առանց մարտերի հանձնվեց: Այնուհետև թուրքական բանակը ձեռնամուխ

եղավ երկրամասի նվաճմանը: Աչնանը Թուրքերը փորձեցին գրավել Գանձակը, որտեղից ուղիղ ճանապարհ էր սկսվում դեպի հայկական սղնախներ: Իրավիճակի այս կտրուկ փոփոխումը և վատթարացումը որոշակիացնում են հայ ազատագրական շարժման հետագա պայքարի ուղղվածությունը: Այժմ օրակարգի հարց է դառնում Թուրքական ռազմակալման վտանգի դեմ պայքարը, որն, անշուշտ, շատ ավելի բարդ էր ու դժվար և անպայման պահանջում էր Ռուսաստանի միջամտությունը:

Նոր իրադրությունը Ռուսաստանին ստիպում էր դիմել համարձակ քայլերի: Անհրաժեշտ էր ապահովել տեղական բնակչության, հատկապես հայերի հետ հաստատված լավ հարաբերությունները: Ահա այս նպատակն էր հետապնդում Պետրոս Մեծի անձնական ներկայացուցիչ Իվան Կարապետի (Հովհաննես Շիրվանյան) բանագնացությունը Հայաստան: Իվան Կարապետը Ս. Պետերբուրգում բնակվող մեծահարուստ վաճառական էր, որին անձամբ ճանաչում էր կայսրը, և պատահական չէ, որ նրան էր վստահվել այս հույժ կարևոր առաքելությունը: 1723 թ. հունիսի 3-ին ռազմական ու դիվանագիտական նշանավոր գործիչների ներկայությամբ ցարն ընդունում է նրան և հանձնում իր «Կայսերական ողորմածությունն ու ողջույնները Պարսկաստանում ապրող ազնիվ հայ ժողովրդին» խորագիրը կրող հրովարտակ-նամակը ու մի առանձին հուշագիր՝ ի պատասխան այն խնդրագրերի, որ իրեն էին ուղարկել Ավան, Սարգիս հարյուրապետներն ու Եսայի Հասան-Ջալալյանը: Կայսրը հայերին հուսադրում էր, որ ինքն անպայման օգնելու է նրանց, միայն թե չթուլացնեն իրենց դիմադրությունը, չկորցնեն հույսը և համբերեն այնքան, «մինչև որ մենք ի վիճակի կլինենք նրանց օգնության գնալու՝ հարկ եղած և հզոր միջոցներով»:

1724 թ. սկզբներին Իվան Կարապետն արդեն Արցախում էր: Պետրոս Մեծի հրովարտակը պարզորոշ վկայում է, որ Ռուսաստանը տվյալ պահին ի վիճակի չէր հայերին ցույց տալ ակնկալվող օգնությունը: Ինքը՝ ռուսաց կայսրն էր խորհուրդ տալիս, թե հայերը պետք է հանգիստ մնան իրենց տեղում, մինչև որ Ռուսաստանը հնարավորություն կունենա հոգալ նրանց ազատության մասին: Հրովարտակները թեև զուրկ էին որոշակիությունից, բայց գոհունակությամբ ընդունվեցին հայ ազատագրական

շարժման գործիչների կողմից: Ցարական խոստումներով խանդավառ՝ նրանց մնում էր առայժմ ապավինել սեփական ուժերին և միայնակ շարունակել պայքարը Թուրքերի դեմ:

Իվան Կարապետը մեծ ջանքեր թափեց Արցախում նկատվող վհատությունը փարատելու, կարգ ու կանոն հաստատելու ուղղությամբ: Լայնախոհ և հեռատես այս գործիչը հետևողական աշխատանք կատարեց հայ ազատագրական շարժման ղեկավարներին հաշտեցնելու Գանձակի շահական վարչակազմի հետ: Նա մշակեց համագործակցության մի ծրագիր ընդդեմ Թուրքերի, որով երեկվա հակառակորդները՝ հայերն ու պարսիկները, համախմբվեցին ընդհանուր թշնամու՝ Թուրքերի դեմ: Նրա գործուն մասնակցությամբ 1724 թ. մարտի 24-ին Գանձակի մահմեդականների և սղնախների միջև կնքվեց փոխադարձ օգնության պայմանագիր: Նույն թվականի մայիսին Իվան Կարապետը Ավան հարյուրապետի երկու հազարանոց զորաջոկատով գնաց Սյունիք՝ տեղի ապստամբական ուժերին օգնելու համար: Նա փորձում էր միավորել հայկական ապստամբական բոլոր ուժերը, վերջ տալ երկպառակություններին, անջատողականությանը: Նրա խորհրդով ազատագրական շարժման գործիչները նոր համախոսական դիմումներ հղեցին Պետրոս ցարին՝ նորից հուսալով ու խնդրելով նրա հովանավորությունը: Պետրոս I-ը չուշացրեց իր պատասխանը, որտեղ պաշտոնապես հայտարարում էր. «Մենք հայ ժողովրդին վերցնում ենք մեր առանձնահատուկ կայսերական ողորմածության և պաշտպանության ներքո»:

Թեև Ռուսաստանը այսպիսի խոստումներ էր տալիս հայերին և հուսադրում էր նրանց, մյուս կողմից՝ առաջնորդվելով իր քաղաքական առաջնահերթ շահերով, չտապեց Թուրքիայի հետ բարելավել իր հարաբերությունները: 1724 թ. հունիսի 12-ին Կ. Պոլսում կնքվեց ռուս-թուրքական պայմանագիր, որով Թուրքիան ճանաչում էր Ռուսաստանի տիրապետությունը Կասպից ծովի առափնյա շրջաններում (Դերբենդից Մազանդարան), իսկ Ռուսաստանը՝ Թուրքիայի իրավունքները Հայաստանի, Վրաստանի, Ատրպատականի, Գանձակի և Անդրկովկասում Պարսկաստանին ենթակա մյուս տարածքների նկատմամբ: Հայ ազատագրական շարժման գործիչները երկար ժամանակ անտեղյակ

մնալով այս պայմանագրին՝ չարունակում էին հուսալ և սպասել Ռուսաստանի օգնությանը:

Ռուս-Թուրքական պայմանագրի կնքումից անմիջապես հետո Թուրքերն անցան լայնածավալ հարձակման: 1724 թ. հունիսի վերջին նրանց 30 հազարանոց բանակը մտավ Արարատյան դաշտ և շարժվեց դեպի Երևան: Երևանի խանի զորքերը Եղվարդ գյուղի մոտ փորձեցին կասեցնել նրանց առաջխաղացումը, բայց պարտություն կրեցին և ամրացան քաղաքի միջնաբերդում: Թուրքերի համար անսպասելիորեն համառ դիմադրություն ցույց տվեց Կարբի գյուղի բնակչությունը: Թուրքական հրամանատարությունը ստիպված էր այստեղ թողնել զորքի մի մասը և հիմնական ուժերով շարժվել Երևանի վրա: Շուրջ 40 օր տևեց Կարբիի հերոսական պաշտպանությունը: Մի խումբ վատ զինված հայ գյուղացիներ կարողացան հետ մղել թուրքական կանոնավոր բանակի բազմաթիվ գրոհները: Ի վերջո, կարբեցիները դիմադրությունը դադարեցրին միայն այն բանից հետո, երբ թուրքերը խոստացան չմտնել գյուղ:

Թուրքական բանակն արդեն շրջապատել էր Երևանը: Քաղաքի պարսկական կայազորն ամրացել էր միջնաբերդում, իսկ բուն քաղաքի պաշտպանությունն իր վրա էր վերցրել հայ բնակչությունը: Ինքնապաշտպանական ուժերը, որ հաշվվում էին շուրջ 10 հազար մարդ, Հովհաննես Հունդիբեկյանի, Պողոս Քեչիբեկյանի և այլոց գլխավորությամբ երեք ամիս չարունակ հետ էին մղում թուրքական բանակի գրոհները: Արյունալի մարտեր տեղի ունեցան Կոնդի, Զորագյուղի և Ս. Սարգիս եկեղեցու շրջակայքում: Երևանի մատույցներում թուրքերը կորցրին ավելի քան 20 հազար զինվոր:

Թուրքական հրամանատարությունը ստիպված էր նոր, լրացուցիչ ուժեր մոտեցնել քաղաքին: 60 հազարանոց թուրքական բանակի դեմ կռվող հայկական փոքրաթիվ ջոկատներն ուժասպառ էին եղել, չէր բավականացնում զենքն ու զինամթերքը, մեծ էին մարդկային կորուստները: Թեև հայերը լի էին վճռականությամբ՝ չարունակելու ինքնապաշտպանական մարտերը, բայց բերդի պարսկական կայազորի հրամանատարությունը, հայերից գաղտնի, բանակցություններ սկսեց թուրքերի հետ: Սեպտեմբերի 22-ին պարսիկները Երևանի բերդը հանձնեցին

թուրքերին, որոնք անարգել ներխուժեցին քաղաք: Հայերը չէին հանձնվում. մի քանի օր տևած փողոցային կատաղի մարտերից հետո միայն, երբ ընկան քաղաքի վերջին պաշտպանները, թուրքերը գրավեցին Երևանը:

Երևանի երկարատև պաշարումը, մարդկային մեծ կորուստները թուլացրին օսմանյան բանակների հարձակողական թափը: Թուրքերը հասկացան, որ հեշտությամբ չեն կարողանալու գրավել տարածաշրջանը: Այդ էր պատճառը, որ թուրքական բանակի հրամանատար Արիֆ Ահմեդ փաշան Ամենայն Հայոց կաթողիկոս Աստվածատուր Ա Համադանցուն ստիպեց նամակ գրել Եսայի Հասան-Ջալալյանին և պատվիրել, որ Արցախի հայերը զենքը վայր դնեն ու հանձնվեն:

Ջնայած Ամենայն Հայոց կաթողիկոսի հորդորներին՝ արցախահայությունը որոշեց դիմել ինքնապաշտպանության: Գրավելով Լոռին, Ղազախը, Շամշադինը՝ թուրքերը ընկճեցին Գանձակի մեծաքանակ կայազորի դիմադրությունը ու մտան քաղաք: Այստեղից նրանք շարժվեցին դեպի Արցախ: 1725 թ. փետրվարին թուրքական առաջապահ 6 հազարանոց զորաջոկատը ներխուժեց Վարանդա և տեղավորվեց հայկական 33 գյուղերում: Տեղի սղնախի հրամանատարությունը որոշում կայացրեց գիշերային հանկարծակի հարձակումով ոչնչացնել թուրքական զորաջոկատը, որը և իրագործվեց լիովին. փրկվեցին քչերը: 1725-1726 թթ. ընթացքում թուրքերը չորս անգամ ևս հարձակվեցին Արցախի վրա և զգալի կորուստներով հետ նահանջեցին: 1726 թ. աշնանը կատաղի մարտեր տեղի ունեցան Քարագլուխ (Շոշ) ամրոցի համար, որտեղ թուրքերը կորցրին 800 զինվոր:

Անհավասար այս կռիվներում հայերը դեռևս հույս էին փայփայում, թե միգուցե ռուսները կգան օգնության: Ապավինելով այդ հույսին՝ տարակուսած Եսայի Հասան-Ջալալյանը խնդրագիր խնդրագրի հետևից էր ուղարկում ռուսական հրամանատարությանը: Սակայն իզուր. թուրքերի հետ 1724 թ. պայմանագրով կաչկանդված էր Ռուսաստանը: Զինական օգնության փոխարեն ռուսները Արցախի հայերին խորհուրդ էին տալիս գաղթել նորանվաճ մերձկասպյան շրջաններ: Հետևել այս խորհրդին՝ նշանակում էր լքել հայրենիքը, հրաժարվել փայփայված հույսերից: Ռուսական կողմնորոշում ունենալը չէր նշանակում լքել

Հայաստանը և տեղափոխվել Ռուսաստան կամ այլուր:

Այսպիսով, ազատագրական շարժումը հայտնվեց փակուղու առջև: Դարձյալ անհրաժեշտ էր ելք փնտրել: Ռուսաստանի նման վերաբերմունքը ազատագրական շարժման ղեկավարությանը կանգնեցրեց երկընտրանքի առջև: Շարժման որոշ ղեկավարներ այլևս անիմաստ էին համարում հետագա դիմադրությունը: Առավել իրատես գործիչները (այդ թվում և ինքը՝ Եսայի Հասան-Ջալալյանը) առաջարկում էին բանակցություններ վարել Թուրքերի հետ և երաշխիքներ ստանալուց հետո զենքը վայր դնել: Անշուշտ, Հասան-Ջալալյանի համար ծանր էր նման մի որոշում ընդունելը: Սակայն հարկավոր էր ճիշտ ու հաշվենկատ քայլերով, քիչ կորուստներով ելքը գտնել: Շատերը Հասան-Ջալալյանին մեղադրեցին դավաճանության մեջ, և սղնախներում ծայր առան երկպառակությունները, որոնց դեմ այնքան պայքարել էին Իվան Կարապետը և ինքը՝ կաթողիկոսը:

Այսպիսի ճակատագրական պահին կաթողիկոսի անակնկալ մահը (1728 թ.) ավելի խորացրեց անմիաբանությունը ապրստամբական ուժերի շրջանում: Ապստամբական շարքերը լքեց նաև նրա ականավոր ղեկավարներից մեկը՝ Ավան հարյուրապետը: 1728 թ., ռուսական հրամանատարությունից օգնություն ստանալու հույսով նա գնաց Բաքու, սակայն մերժում ստանալով՝ այլևս չվերադարձավ Արցախ: Իրեն ուղեկցող զորաջոկատով նա մտավ ռուսական ծառայության մեջ՝ համալրելով Հայկական էսկադրոնի շարքերը: Պարտվողական այս ճանապարհը բռնեցին նաև այլ զորաջոկատներ, որոնք աստիճանաբար դուրս եկան Արցախից և տեղափոխվեցին ռուսական տիրապետության սահմանները: Ռուսական հրամանատարությունը խրախուսում էր նրանց տեղափոխությունը և տեղաբաշխում սահմանամերձ ամրոցներում:

Ի հակառակ հաշտվողականների Գյուլիստանի և Ջրաբերդի սղնախները, լարելով վերջին ուժերը, շարունակում էին դիմադրել Թուրքերին և անգամ նրանց ստիպեցին նահանջել Գանձակ: Ազատագրական պայքարի դիրքերում մինչև վերջ մնացին հատկապես Գյուլիստանի սղնախի զորականները, որոնք Աբրահամ սպարապետի հրամանատարությամբ 1729-1731 թթ. Թուրքական զորքերի դեմ մղում էին վերջին ինքնապաշտպանական,

անձնազոհ կռիվները: Բայց ի վերջո Թուրքերին հաջողվեց ճնշել նաև նրանց դիմադրությունը: Արցախի ազատագրական ապրստամբությունը պարտություն կրեց: Այն զգալի հաջողությունը, որ ունեցան հայերը, դա հայկական ինքնավար իշխանության և հայկական զորքի ստեղծումն էր: Սակայն երբ պարզ դարձավ, որ ռուսական ուժերը չեն կարող նպաստել այդ հաջողությունների զարգացմանը, շարժումն աստիճանաբար մարեց:

դ. Ազատագրական կռիվները Սյունիքում: Հայկական անկախ իշխանության ստեղծումը: XVIII դարի 20-ական թվականների սկզբներին ազատագրական շարժումներ են սկսվում նաև Սյունիքում: Նախապես հարկ է նշել, որ Սյունիքի և Արցախի միջև կային մի շարք էական տարբերություններ, որոնք իրենց կնիքը թողեցին ազատագրական պատերազմների ամբողջ ընթացքի վրա:

Ի տարբերություն Արցախի, որի բնակչությունը զուտ հայկական էր, Սյունիքում արդեն որոշ թիվ էին կազմում մահմեդականները, մասնավորապես Թուրք և քուրդ քոչվորները, որոնք վաղ գարնանից մինչև խոր աշուն իրենց անասունների հոտերով Կուրի հարթավայրային շրջաններից բարձրանալով՝ հաստատվում էին տեղի ալպյան արոտավայրերում: Ի տարբերություն Արցախի, որտեղ կազմավորվեց 40 հազարանոց հայկական կանոնավոր զորաբանակ, Սյունիքում այդպիսի ռազմական ուժ չկար: Այստեղ մելիքների առանձին փոքրաթիվ ջոկատները ցաքուցրիվ էին, զինվորականությունը համախմբված չէր ընդհանուր հրամանատարության ներքո: Եվ, վերջապես, ի տարբերություն Արցախի, որն ուներ պայքարը գլխավորող երկու առաջնորդ՝ Եսայի Հասան-Ջալալյանը ու Ավան հարյուրապետը, Սյունիքում այդպիսի հեղինակավոր գործիչներ չկային, որ կարողանային շարժումը համախմբել և ժողովրդին տանել իրենց հետևից: Այս ամենը նշանակում էր, որ ազատագրական շարժման համար Սյունիքում պայմաններն անբարենպաստ էին և այն սկսելու համար պետք է հաղթահարվեին ավելի շատ խոչընդոտներ: Սյունիքի ազատագրական պայքարի գործիչները լավ էին ըմբռնում այդ դժվարությունները և հենց սկզբից համապատասխան միջոցներ էին փնտրում եղած խոչընդոտները հաղթահարելու համար:

Առաջին և կարևորագույն խնդիրը ազատագրական շարժման մյուս կենտրոնների հետ կապ հաստատելն էր, ինչպես օրինակ՝ Արցախի և Վրաստանի հետ: Կապերի հաստատումն ինքնանպատակ չէր. անհրաժեշտ էր ազատագրական ճիգերը փոխհամաձայնեցնել և, եթե հնարավոր էր, դրսից ռազմական օգնություն ստանալ: Ահա այս նպատակով է, որ 1722 թ. սկզբներին մեղրեցի Ստեփանոս Շահումյանը Սյունիքի մելիքների և տանուտերների հանձնարարությամբ մեկնում է Թիֆլիս՝ Վրաստանի թագավոր Վախթանգ VI-ի հետ հանդիպելու: Վախթանգի հանձնարարությամբ Ստեփանոս Շահումյանի հետ բանակցություններ է վարում թագաժառանգ Շահնավազը: Այդ ժամանակ վրացական բանակում մեծ թվով հայ զինվորականներ կային: Հայերն աչքի էին ընկնում իրենց խիզախությամբ ու հայտնի էին որպես կարգապահ զինվորականներ: Նրանց մի մասը բնիկ վրաստանցիներ էին, քիչ չէին նաև Հայաստանի տարբեր շրջաններից Վրաստան տեղափոխվածները: Եվ ահա, Շահնավազը Ստեփանոս Շահումյանին ներկայացնում է նրանցից մեկին՝ Դավիթ Բեկին, որը լավագույնս կարող էր համախմբել Սյունիքի ազատագրական ուժերն ու գլխավորել պայքարը պարսիկների դեմ:

Դավիթ Բեկը Վախթանգ թագավորի մերձավոր զորականներից էր և նշանավոր էր վրացական բանակում իր հեղինակությամբ ու քաջագործություններով: Ենթադրելի է, որ նա ծագումով սյունեցի էր և պատահական չէր հենց նրան Սյունիք ուղարկելը: Վախթանգն այդքան պատասխանատու գործ կարող էր հանձնարարել միայն վստահելի ու գիտակ մարդու, ինչպիսին հանդիսանում էր Դավիթ Բեկը:

Իր մերձավորագույն զինակիցներից ստեղծելով 30 հոգիանոց ջոկատ, որի մեջ էին Բայանդուրը, Գորգին, Ավթանդիլը, Հովհաննեսը և ուրիշներ, Դավիթ Բեկը 1722 թ. վերջերին ժամանեց Սյունիք: Նա հաստատվեց Հաբանդ գավառի ամենամեծ ավանում՝ Շինուհայրում, և սկսեց վերակառուցել տեղի ավերված ամրոցը, որը դարձավ նրա առաջին զորակայանը: Իմանալով Դավիթ Բեկի գալստյան մասին՝ Սյունիքի մելիքների ու տանուտերերի մեծ մասը եկավ Շինուհայր, ներկայացավ նրան և պատրաստակամություն հայտնեց աջակցելու ապագա ապըստամբության կազմակերպմանը: Առաջինն իրենց ջոկատներով եկան և ներկայացան Զավնդուրի Թորոս իշխանը, Գողթնի և Հին Ջուղայի տանուտերները, Պապ և Պալի հարյուրապետները, Մխիթար սպարապետը և ուրիշներ: Որոշ տատանումներից հետո նրան են միանում նաև Հալիձորի մելիք Փարսադանն ու Տեր- Ավետիսը: Կարճ ժամանակամիջոցում նրա շուրջն են հավաքվում մոտ 2000 մարտիկներ, ստեղծվում է կանոնավոր ու կարգապահ բանակ: Դավիթ Բեկն իր մոտ է հրավիրում նաև Սյունիքի հոգևոր առաջնորդ, Տաթևի վանքի վանահայր Հովակիմ եպիսկոպոսին, որը հավաստում է, թե հոգևոր դասն ամբողջությամբ պաշտպանում է ապստամբության գաղափարը և աջակից է լինելու՝ շարժմանը:

Ինչպես նշեցինք, Սյունիքի պայմանները բավականին բարդ էին, երկրամասի բնակչության մեջ զգալի տոկոս էին կազմում քոչվոր թուրք և քուրդ ցեղերը, որոնք կատարյալ պատուհաս էին հայ բնակչության համար և խանգարում էին ապստամբության կազմակերպմանը: Ահա թե ինչու Դավիթ Բեկն իր առաջին գործողություններն սկսեց հենց այս ցեղերի դեմ: Համառ և արյունալի կռիվներից հետո նա ջախջախեց կարաչորլու և ջիվանշիր քոչվորական ցեղախմբերին: Հատկապես տպավորիչ էր Ուչթափա սարահարթում ջիվանշիր 32 ցեղերի միացյալ ուժերի դեմ տարած հաղթանակը, երբ Դավիթ Բեկն ընդամենը 400 ընտիր ռազմիկներով պարտության մատնեց հակառակորդի մի քանի հազարանոց հրոսակախմբին. վերացվեց ապստամբական ուժերի միավորմանն ու համագործակցությանը մեծապես խանգարող ներքին խոչընդոտը:

Այս առաջին հաղթանակը նպաստեց Դավիթ Բեկի հեղինակության բարձրացմանը, նրա փառքի տարածմանը: Շատ հայ մելիքներ եկան Շինուհայր և մտան նրա դրոշի ներքո: Կային նաև տատանվողներ, կրավորական դիրքորոշում որդեգրածներ և ուղղակի դավաճաններ: Զորավարն անողոքաբար պատժում էր անջատողականներին, դավաճաններին և ուրացողներին: Այսպես՝ մելիք Բաղիրը, որ որդիների հետ մահմեդականություն էր ընդունել, ամրանալով Տաթևում՝ փորձում էր թիկունքից հարվածել ապստամբներին: Երկօրյա մարտերից հետո Դավիթ Բեկը գրավում է Տաթևը և մահվան դատապարտում ուրացող

մելիքին, իսկ նրա գույքը բռնագրավելով՝ բաժանում բնակչությանն ու զինվորներին: Նա մահվան է դատապարտում Երից-վանիկի (Արծվանիկ) մահմեդականացած մելիք Ֆրանգյուլին և էլի մի քանի ուրիշ դավաճանների: Անպատիժ չէին մնում այն զինակիցները, որոնք զանցանքներ էին թույլ տալիս կամ չէին ենթարկվում կարգապահությանը: Վախկոտություն և խուճապ տարածելու համար զորավարը հրամայում է մահապատժի ենթարկել իր մտերիմ Պապին, կարճատև կալանքի ենթարկում ազդեցիկ Տեր-Ավետիսին, անգամ՝ Մխիթար սպարապետին: Նման քայլերից հետո Սյունիքում հաստատվում է ամուր կարգ ու կանոն: Ստեղծվում է մարտունակ և օրինապահ բանակ: Այնուհետև Դավիթ Բեկը լայնածավալ պայքար է սկսում ավելի կազմակերպված ու վտանգավոր ուժերի՝ պարսկական տեղական և հարևան խանների, տարբեր կարգի ավատատերերի ու բեկերի դեմ:

Ազատագրական պատերազմի առաջին մեծ հաղթանակը հայերը ձեռք բերեցին 1723 թ. Զավնդուրի ճակատամարտում, երբ գիշերային հանդուգն հարձակումով ջախջախիչ պարտության մատնեցին Բարկուշատի և Ղարադաղի խանների 18 հազարանոց միացյալ բանակը: Դավիթ Բեկը պատերազմեց նաև Կապանի, Օրդուբադի և Նախիջևանի խանների դեմ: Տպավորիչ էր հատկապես Մխիթար սպարապետի և Տեր-Ավետիսի զորամասերի կողմից Զեյվա անառիկ ամրոցի գրավումը, որի ժամանակ հակառակորդը կորցրեց 4 հազար զինվոր: Մեկ տարի անց, 1724 թ. մարտի 29-ին, Դավիթ Բեկը պաշարում է ռազմական կարևոր նշանակություն ունեցող Որոտնա բերդը և չորսօրյա արյունալի մարտերից հետո գրավում այն:

Ապստամբական ուժերի հաջողությունները պարսից խաներին ստիպում են վերջ տալ ներքին երկպառակություններին և իրենց ուժերը միավորել Դավիթ Բեկի դեմ: Նրանց է միանում նաև Արաքսի մյուս ափին գտնվող Ղարադաղի խանը: Իր հերթին պարսից Թահմազ II շահը ապստամբների դեմ է ուղարկում կանոնավոր բանակի մի քանի զորամաս՝ հրահանգելով «միացյալ ուժերով հայերին վանել ու ոչնչացնել»:

Սյունիքի համար այս օրհասական պահին՝ 1724 թ. մայիսին, Արցախից օգնական ուժեր են գալիս Իվան Կարապետի և Ավան

հարյուրապետի հրամանատարությամբ: Դա հայ ազատագրական ուժերի համագործակցության հիանալի օրինակ էր, որը բերելու էր փայլուն հաղթանակներ: Անհրաժեշտ էր շարունակել ու խորացնել հայոց անկախության այս երկու պատվարների՝ Արցախի և Սյունիքի հետագա համագործակցությունը, որը կարող էր ավելի նշանակալից արդյունքների հանգել:

Սյունիքի ազատագրական վերջին մարտերն ընդդեմ պարսիկների տեղի ունեցան 1725 թ. Գողթնում և Մեղրիում: Ականատես պատմիչի վկայությամբ՝ պարսիկներն այստեղ տալով հազարավոր սպանվածներ՝ հեռանում են Արաքսի մյուս ափը: Անշուշտ եղան նաև ցավալի պարտություններ և անհաջողություններ, ինչպես, օրինակ, Սիսիանի և Եղվարդի ճակատամարտերի ժամանակ, բայց դրանք չկարողացան կասեցնել հայկական իշխանության հետագա ամրապնդման գործընթացը: Ազատագրական քառամյա պայքարի արդյունքում ամբողջ Սյունիքն ու մերձակա մի քանի շրջաններ ազատագրվեցին:

Այս հաղթանակներից հետո ազատագրված Սյունիքում Դավիթ Բեկը ստեղծում է անկախ Հայկական իշխանություն: Բոլոր մելիքներն ու տանուտերները անվերապահորեն ենթարկվում են նրա իշխանությանը և կատարում իրենց պարտավորությունները: Ժառանգական իշխանություն ունեցող մելիքական շատ տների ներկայացուցիչներ ներկայանում էին Դավիթ Բեկին, և նա հաստատում էր նրանց նախկին իրավունքները: Ակնբախ է, որ Սյունիքի մելիքները նրան ճանաչում էին գերագահ և ընդունում նրա տիրապետությունը լեռնաշխարհում հաստատված անկախ իշխանության ողջ տարածքում:

Զորապետի հրամանով ամրացվում են բերդերն ու ամրոցները, կառուցվում են նորերը, որոնցում հաստատվում են բերդապահ կայազորներ: Այսպես, Շինուհայրն ուներ 550, Զավնդուրը՝ 2000, Կալերը՝ 700, Մեղրին՝ 400, Սիսիանը՝ 500, Տաթևը՝ 400 զինվոր ունեցող կայազորներ: Իշխանությունում զինվորների ընդհանուր թիվը հասնում էր մոտ 7 հազարի: Զորաբանակների հրամանատարներ էին նշանակվել ինչպես Դավիթ Բեկի հետ Վրաստանից ժամանած Ավթանդիլը, Գորգին, այնպես էլ բնիկ մելիքներն ու տանուտերները՝ Տեր-Ավետիսը, Թորոսը, Նուբարը, Ադամը, Վարդանը և ուրիշներ: Զորքերի հրամանատար (սպա-

բապետ) է նշանակվում Մխիթարը: Ստեղծվում է ռազմական խորհուրդ և չտաբ: Զորամասերն ունեին իրենց մարտական դրոշները: Փաստորեն, Արցախի օրինակով Դավիթ Բեկը Սյունիքում կազմակերպում է սղնախ՝ այն դարձնելով հզոր ու անառիկ ամրացված երկրամաս: 1724 թ. հայկական նորաստեղծ իշխանության կենտրոնատեղին է դառնում Կապանի Հալիձոր բերդը, որտեղ կառուցվում են լրացուցիչ պաշտպանական բնագծեր ու նոր աշտարակներ, ամբարվում են մեծ թվով զենք, զինամթերք, պարեն:

Այսպիսով, 1722-1725 թթ. ընթացքում, համառ ու արյունալի կռիվներից հետո, Դավիթ Բեկին հաջողվեց երկրամասը ազատագրել քոչվորներից, պարսկական վարչակազմից, հակահարված տալ խանական միացյալ ուժերին և Սյունիքում ստեղծել Հայկական անկախ իշխանություն: Պայմաններ ստեղծվեցին համագործակցելու հայկական մյուս անկախ իշխանության՝ Արցախի հետ և միասնական ուժերով կերտել դարեր առաջ կործանված հայկական պետականությունը: Անշուշտ, Դավիթ Բեկն ու իր զինակիցները վերջնական հաղթանակի հույսը կապում էին Ռուսաստանից սպասվելիք օգնության հետ, որով նրանց հուսադրում էր Իվան Կարապետը: Բայց հետագա իրադարձությունները այլ ընթացք ստացան:

ե. Թուրքական արշավանքը Սյունիք: Հայկական իշխանության գոյամարտը: Սյունիքում պարսկական տիրապետության թոթափման և հայկական անկախ իշխանության ստեղծման ժամանակ, ինչպես արդեն ասվել է, Օսմանյան Թուրքիան սկսել էր Անդրկովկասի ռազմակալման իր ծրագրի իրականացումը: Թուրքերը գրավել էին Թիֆլիսը, Երևանը, Գանձակը և ձգտում էին ներխուժել Արցախ ու Սյունիք: Առաջին անգամ նրանք փորձեցին Սյունիք ներխուժել դեռևս 1725 թ. գարնանը, բայց մեծ թվով զոհեր տալով՝ հետ չպրտվեցին: 1726 թ. ընթացքում թուրքերը, այնուամենայնիվ, կարողացան աստիճանաբար հաստատվել երկրամասի հարավից անցնող առևտրական մայրուղու երկայնքով և ռազմակալման ենթարկելով Նախիջևանը, Օրդուբաղը, Ագուլիսը, Մեղրին՝ թափանցել Սյունիքի ներքին գավառները: Տեղացի թուրքերը և պարսից խաները աջակցում էին նրանց:

Հայկական իշխանությունը՝ չորս կողմից շրջապատված, օրհասական կռիվ սկսեց մի քանի անգամ թվական գերակշռություն ունեցող նվաճողների դեմ: Հայերն ունեցան տարածքային և ռազմական նկատելի կորուստներ: Միաժամանակ սկսեց ջլատվել Սյունաց զինվորականության միասնությունը: Ապրստամբական ուժերի շարքերում նկատվեցին վհատության և հուսալքության դեպքեր: Նման պայմաններում Մխիթար սպարապետի նախաձեռնությամբ 1726 թ. մարտի 24-ին 8 մելիքների և հարյուրապետների ստորագրությամբ մի խնդրագիր է ուղարկվում ռուսական կառավարությանը, որտեղ նշված էր. «Մնացել ենք չորս կողմից շրջապատված բերդի մեջ, ինչպես թռչունը՝ վանդակի, աղաչում ենք Ձեզ, հանուն Քրիստոսի սիրո, չուտափույթ օգնության հասնել և փրկել մեզ»: Սակայն, ինչպես նախորդ աղերսագրերը, սա ևս մնաց անպատասխան, քանի որ Ռուսաստանը 1724 թ. Թուրքիայի հետ կնքված պայմանագրի հետևանքով ի վիճակի չէր միջամտելու: Ուստի մնում էր ապավինել միայն սեփական ուժերին:

1727 թ. փետրվարին Թուրքական հսկայական բանակը լայնածավալ գործողություններ սկսեց Հայկական իշխանության դեմ: Հայկական զինված ուժերը ծանր կորուստներ կրելով՝ արյունալի մարտերով հետ էին նահանջում: Նրանք ամրացան իրենց վերջին հենակետ Հալիձորում: Թուրքական զորաբանակները, որոնց միացան Դավիթ Բեկի կողմից ոչ վաղ անցյալում պարտություն կրած Բարկուչատի և Ղարադաղի խաների, կարաչորլու քուրդ քոչվորների, տեղական թուրք և քուրդ մյուս ավատատերերի բազմահազար զորքերը, 1727 թ. փետրվարի 26-ին շրջապատեցին Հալիձորը: Վեց օր չարունակ թուրքերը կատաղի գրոհներով փորձում էին գրավել ամրոցը: Շնորհիվ բերդի անառիկության նրա պաշտպանները քիչ կորուստներ ունեցան, ինչպես գրում է ականատեսը. «օրական մեկ կամ երկու հոգի, իսկ հակառակորդի կողմից երկու հարյուր, երբեմն երեք կամ չորս հարյուր զոհ էր լինում»: Պաշարման յոթերորդ օրը՝ մարտի 4-ի լուսադեմին, թուրքերը պարսպակործան 26 մեքենաների ու սանդուղքների օգնությամբ երեք կողմից բուռն գրոհների դիմելով՝ տեղ-տեղ բարձրացան պարիսպների վրա: Թեև պաշտպանները կարողացան հետ շպրտել այս գրոհը, սա-

կայն վիճակը գնալով օրհասական էր դառնում: Նման մեկ-երկու գրոհից հետո անհնարին կդառնար հետագա դիմադրությունը:

Օրվա երկրորդ կեսին Դավիթ Բեկը հանդուգն ու անսպասելի որոշում ընդունեց. դուրս գալ չրջապատված ամրոցից և հանկարծակի հարձակումով հակառակորդին ստիպել հետ նահանջել: Հակահարձակումը գլխավորում էին Մխիթար սպարապետն ու Տեր-Ավետիսը: Դիմելով զինվորներին՝ նրանք հորդորում էին. «Արիացե՛ք, մի՛ երկնչեք, հետևեցե՛ք մեզ, եթե հասել է մեր վախճանը. քաջարար մեռնենք, որովհետև մեզ համար ավելի լավ է արիությամբ պարիսպներից դուրս մեռնել, քան այստեղ, մեր աչքերի առջև տեսնել մեր ընտանիքների ու բարեկամների մահը և այլ դժնդակություններ»:

Շփոթահար ու հանկարծակիի եկած հակառակորդը, չդիմանալով հայ զինվորների հարձակման թափին, ընկրկեց, ապա սկսեց խուճապահար նահանջել և ջախջախիչ պարտություն կրեց: Հալիձորի ճակատամարտում թուրքերը կորցրեցին 13 հազար զինվոր, հայերի ձեռքն ընկան 143 մարտական դրոշ, հսկայական ռազմավար: Կրնկակոխ հետապնդելով սարսափահար փախչող թշնամուն՝ հայկական ուժերն սկսեցին Սյունիքն ազատագրել օսմանյան զորքերից ու շարժվել դեպի Գողթն:

Այս փայլուն հաղթանակը նոր ուժ և եռանդ հաղորդեց ազատագրական շարժմանը: Վհատված, կրավորական կեցվածք ընդունած շատ մելիքներ դարձյալ վերադարձան իրենց զորավարի մոտ: Երկրորդ տպավորիչ հաղթանակը թուրքերի դեմ հայերը շահեցին Մեղրիի ճակատամարտում: Մխիթար սպարապետի և Տեր-Ավետիսի զորաջոկատներն ապստամբ մեղրեցիների օգնությամբ անսպասելիորեն ներխուժելով Մեղրու բերդ՝ հանկարծակիի եկած թուրքերին ստիպեցին նահանջել: Հայերը թուրքերին քշեցին դեպի Արաքսի կիրճը, որի մյուս կողմում դարանակալել էին հայկական այլ զորաջոկատներ: Թուրքերն ընկան թակարդը: Երկու կողմից առնելով կրակի տակ՝ հայերը նրանց ստիպեցին անցնել Արաքսը: Գետանցի ժամանակ շատ թուրքեր խեղդվեցին գետի վարար ջրերում: Ռազմավարից բացի հաղթողների ձեռքն էին ընկել Սյունիքի 32 հազար հարկաթղթերը, որոնք անմիջապես այրվեցին: Հակառակորդը պարտություն կրեց նաև Բեխ գյուղում, Օրդուբադի մոտ և այլուր:

Փաստորեն ամբողջ Սյունիքն ազատագրված էր, իսկ Հայկական անկախ իշխանությունը՝ վերականգնված:

Թուրքերի դեմ տարած հայերի այս փայլուն հաղթանակները մեծ տպավորություն թողեցին պարսկական քաղաքական շրջանակներում: Թուրքերի կողմից ջախջախված Թահմազ II շահն ու նրան հավատարիմ մնացած խաները փոխում են իրենց թշնամական, անհանդուրժող վերաբերմունքը հայերի նկատմամբ: Ինքը՝ Դավիթ Բեկը, ցուցաբերելով դիվանագիտական ճկունություն, շրջահայեցություն և նոր քաղաքական պայմանների համեմատ նոր կողմնորոշման իրատեսություն, որոշում է համագործակցել պարսկական իշխանությունների հետ՝ լավ հասկանալով, որ ռուսական օգնությունը տվյալ պահին անհնարին է, իսկ ռուսների խոստումները՝ ուղղակի քաղաքական խաղ: Դավիթ Բեկն այժմ փորձում է ստեղծել հայ-պարսկական միացյալ ճակատ ընդդեմ ընդհանուր թշնամու՝ թուրքերի: Շուտով Մազանդարանում ապաստանած պարսից Թահմազ շահը Դավիթ Բեկին հղում է «Քաջ Դավիթ Բեկիդ և Հայոց քաջարի զորականներին» ուղերձը, նաև ուղարկում է ազնվացեղ նժույգներ ու թանկարժեք նվերներ: Շահը դրվատում է նրանց՝ թուրքերի դեմ տարած զարմանալի հաղթանակների համար և ի նշան գնահատման հրամայում է. «Եվ ահա այսօր քեզ կարգեցի իշխան և գլուխ մեր բոլոր խաների, որ այդ կողմերում են, և Կապանի երկիրը, որ վերցրիր քաջությամբ, քեզ լինի»: Փաստորեն շահը Դավիթ Բեկին նշանակում է տարածաշրջանի (Կապան, Ղարադաղ, Բարկուշատ, Նախիջևան և այլն) կուսակալ և այստեղ գտնվող պարսկական զորքերի գլխավոր հրամանատար: Հատկապես տպավորիչ էր այն, որ Դավիթ Բեկին իրավունք էր տրվում հատելու սեփական դրամ, որն, անկասած, ինքնավար իշխանության կարևորագույն խորհրդանիշներից մեկն էր:

Այսպիսով, Սյունիքի ազատագրական պատերազմներն անանխընթաց արդյունքի հանգեցին: Հայկական իշխանության անկախությունը ճանաչվեց Պարսկաստանի կենտրոնական ղեկավարության կողմից, որը երաշխիք էր նրա հետագա ամրապնդման ու զարգացման:

Բայց այս բախտորոշ պահին Դավիթ Բեկը ծանր հիվանդա-

նում է և 1728 թ. կեսերին մահանում Հալիձորում: Անփոխարինելի կորստից ընկճված՝ զորականներն իրենց առաջնորդ են ընտրում Մխիթար սպարապետին: Մխիթարը ուժեղ անհատականություն էր, մասնակցել էր Դավիթ Բեկի բոլոր նշանավոր ճակատամարտերին, աչքի ընկել ռազմավարական հմտությամբ և հերոսական խիզախումներով: Հավատարիմ ազատագրական շարժման մեծ ղեկավարի թողած վեհ ավանդներին՝ Մխիթար սպարապետը հաջողությամբ շարունակեց պայքարը թուրքական նվաճողների դեմ: Սակայն գնալով ուժեղանում էին ներհակություններն ապստամբական շարժման ղեկավարների միջև: Տեր-Ավետիսն ու նրան հետևող մյուս զորականները այլևս չհավատալով վերջնական հաղթանակին և համոզվելով, որ ռուսական օգնությունը հնարավոր չէ, հուսալքվեցին և այլ ելք չգտնելով՝ որոշեցին բանակցել թուրքերի հետ: Այդ ժամանակ արդեն սկսվել էր թուրքական նոր արշավանքը, և նրանք երկրորդ անգամ պաշարել էին Հալիձորը: Մխիթարը չկարողացավ համոզել զինակիցներին շարունակելու պայքարը: Մնալով գրեթե մենակ՝ նա իր փոքրաթիվ կողմնակիցներով մի գիշեր հեռացավ պաշարված ամրոցից: Թեև Տեր-Ավետիսը նախապես երաշխիքներ էր ստացել թուրք փաշայից, որ Հալիձորը հանձնելու դեպքում նրա բնակիչները չեն տուժելու, սակայն երդմնազանց թուրքը հրամայում է կոտորել բերդում եղած բոլոր տղամարդկանց, իսկ կանանց ու երեխաներին՝ գերի տանել: Հալիձորը հիմնահատակ ավերվում է: Այս դեպքերը տեղի են ունենում 1729 թվականի սկզբներին: Տեղի ունեցածից ցնցված՝ Տեր-Ավետիսը հեռանում է Հայաստանից և գնում Երուսաղեմ՝ ապաշխարելու:

Իսկ աննկուն ու եռանդով լի սպարապետը մոտ երկու տարի շարունակում է պայքարը թուրք նվաճողների դեմ: Նրան հաջողվում է հավաքել հայկական ցրված ուժերը և անգամ հասնել հաջողությունների: Մխիթարի դրոշի ներքո համախմբված հայկական զորքը ազատագրում է բազմաթիվ բնակավայրեր, տանում փայլուն հաղթանակներ: 1730 թ. սպարապետը թուրքերին ծանր պարտության է մատնում Օրդուբադի մոտ և մեծ ռազմավարով վերադառնում Սյունիք՝ Խնձորեսկի բերդում միաժամանակ հանգիստ առնելու մտադրությամբ: Սակայն Մխիթարի ուղեգիծը չպաշտպանող Խնձորեսկցի մի խումբ դավադիրներ

վախենալով, որ իրենց ավանը ևս կարող է արժանանալ Հալիձորի ճակատագրին, դավաճանաբար սպանում են սպարապետին: Թավրիզի թուրք փաշան, որի մոտ էին ուղարկել Մխիթարի կտրած գլուխը, հրամայում է գլխատել հայոց սպարապետին սպանողներին:

Մխիթարի սպանությունից հետո հայ ապստամբական ուժերը զենքը վայր են դնում և աստիճանաբար ցրվում: Նրանց մի մասը ռուսների հրավերով տեղափոխվում է ռուսական տիրապետության սահմանները: Ջկար մեկը, որ շարունակեր Դավիթ Բեկի գործը:

Թեև ապստամբությունը պարտություն կրեց, բայց Սյունիքի հայության առանձին զինված ջոկատներ, ապավինած լեռնային անմատչելի վայրերին, մինչև 30-ական թվականների կեսերը դեռ շարունակում էին պարտիզանական պայքարը, մինչև որ պարսից Նադիր խանը, ի վերջո, ջախջախեց թուրքերին և նրանց դուրս քշեց Ատրպատականից ու Անդրկովկասից:

XVIII դարի 20-ական թվականների Արցախի և Սյունիքի ազատագրական պատերազմները հայ ազատագրական շարժման ամենանշանակալից իրադարձություններից են: Դարեր շարունակ ազգային անկախությունից զրկված հայերն առաջին անգամ փորձեցին զենքի միջոցով հասնել իրենց ազատությանը: Այդ փորձը պսակվեց աննախադեպ հաջողությամբ. ձևավորվեցին, ստեղծվեցին Արցախի և Սյունիքի հայկական անկախ իշխանությունները: Սակայն, չնայած տարած հաղթանակներին և ունեցած հաջողություններին, միայնակ, զրկված դաշնակիցներից՝ այդ իշխանությունները չկարողացան շարունակել հետագա պայքարը և տեղի տվեցին Օսմանյան կայսրության ռազմական ահռելի ուժի առջև: Հայերի վերջնական ազատագրումը կարող էր տեղի ունենալ միմիայն ռուսական կողմի ռազմական գործուն միջամտության շնորհիվ, որն այդ ժամանակ չեղավ: Հայաստանի ազատագրության խնդիրը դարձյալ անորոշ ժամանակով հետաձգվեց:

3. ԱՐՑԱԽԻ ԿԻՍԱՆԿԱԽ ՀԱՅԿԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ XVIII ԴԱՐԻ 30-40-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

ա. Նադիր շահը և հայերը: Խամսայի մելիքությունների ստեղծումը: XVIII դարի 20-ական թվականների Արցախի հայության ազատագրական կռիվներն ավարտվեցին պարտությամբ: Թուրք նվաճողները մեծ դաժանությամբ ճնշելով հայ զինվորականության դիմադրությունը՝ իրենց տիրապետությունը հաստատեցին երկրամասում: Բայց լեռնաշխարհի որոշ վայրերում, հատկապես Գյուլիստանում, ապստամբները զենքը վայր չդրեցին և շարունակում էին անհավասար պայքարը: 1730-1731 թթ. թուրքական սուլթանի հրամանով Գանձակի Իբրահիմ փաշան Բայազետի, Երևանի, Գանձակի, Շիրվանի, Շաքիի և Դաղստանի թուրքական միացյալ բանակներով «սրբազան պատերազմ» էր մղում Աբրահամ սպարապետի (ինչպես իրենք էին ասում՝ «գյավուր Աբրահամի») գլխավորած Գյուլիստանի հայկական զորամասերի դեմ: Սակայն թուրքերը չկարողացան ընկճել հայերի դիմադրությունը: Ինչպես Սյունիքի, այնպես էլ Արցախի լեռնային անմատչելի վայրերում շարունակվում էին հայերի ազատագրական կռիվները:

Նման պայմաններում հասկանալի է դառնում, թե ինչու XVIII դարի 20-ական թվականների վերջերին և 30-ական թվականների սկզբներին Պարսկաստանում սկսված ու լայն ծավալ ընդունած հակաթուրքական ազատագրական պայքարի մեջ պետք է միավորվեին բոլոր այն ուժերը, որոնք մարտնչում էին թուրքերի դեմ: Մանավանդ Պարսկաստանում այդ շարժման գլուխ էր կանգնած այնպիսի լայնախոհ, հեռատես ռազմական գործիչ, ինչպիսին էր Նադիր խանը՝ ապագա Նադիր շահը:

Նադիր շահը (1736-1747) Պարսկաստանի պատմության ամենաինքնատիպ ու ականավոր պետական գործիչներից էր: Նա եղել էր հասարակ զինվոր և իր աշխատասիրության ու տաղանդի, համառ կամքի ու խիզախության շնորհիվ բարձրանալով ծառայողական աստիճաններով՝ դարձել էր զորավար: Նա երիտասարդ տարիներից մասնակցել էր Պարսկաստանում իրենց տիրապետությունը հաստատած աֆղանների դեմ մղված ազատագրական պատերազմներին, ապա ծառայության էր անցել

Թահմազ II շահի մոտ, նշանակվել բանակի գլխավոր հրամանատար: Նադիրը հաղթել էր աֆղաններին, ուզբեկներին, թուրքմեններին, քրդերին, լեզգիներին, պարսկական ու աղրբեջանական կենտրոնախույս խաներին, հաջողությամբ կռիվներ էր մղել նաև թուրք նվաճողների դեմ: Հատկապես նա բազմաթիվ փայլուն հաղթանակներ էր տարել 1730-1736 թթ. թուրք-պարսկական պատերազմի ժամանակ: 1735 թ. հունիսին Եղվարդի վճռական ճակատամարտում Նադիրը գլխովին ջախջախել էր թուրքերին, որոնք ստիպված հրաժարվել էին Ատրպատականից, Անդրկովկասից ու Դաղստանից: Մինչ այդ՝ 1732 թ., նա ռուսներին ստիպել էր հեռանալ մերձկասպյան նահանգներից, որ այնքան զոհողությունների ու ջանքերի գնով ձեռք էր բերել Պետրոս I-ը, և որն այնքան մեծ հույսեր էր ներշնչել հայ ազատագրական շարժման գործիչներին:

1736 թ. Նադիրը գահընկեց է անում Աբբաս III-ին և իրեն հռչակում Պարսկաստանի շահ: Նվաճողական պատերազմներ վարելով՝ նա գրավում է Բուխարան, Աֆղանստանը, Հնդկաստանը և ստեղծում մի հզոր աշխարհակալ պետություն: Իր ռազմական գործունեության ընթացքում Նադիրը, բնականաբար, չէր կարող անուշադրության մատնել հայ զինական ուժերը, որոնք տարիներ շարունակ միայնակ հերոսական պայքար էին մղում բազմաքանակ թուրքական բանակների դեմ: Շահը, որ խորունկ ու ճկուն քաղաքագետ էր, վեր էր կանգնած կրոնական սահմանափակվածությունից: Թուրքիայի դեմ պայքարի հենց սկզբում նա հասկացավ, որ ողջ Անդրկովկասում հայերը միակ իրական ու կարող ուժն են, որ դիմադրավում են իր հակառակորդին: Հակաթուրքական ուժ լինելով՝ հայերը փաստորեն հանդես եկան որպես Նադիրի դաշնակիցներ: Ահա թե ինչու սա աշխատում էր սիրաշահել հայերին: Նրա խորհրդով էր, որ շահ Թահմազը ճանաչել էր Դավիթ Բեկի գլխավորած Սյունիքի անկախ հայկական իշխանությունը, Արցախի ազատագրական շարժման գործիչներից մի քանիսին՝ Ավան հարյուրապետին և այլոց, շնորհել էր խանի պատվատիտղոս: Նադիրն աշխատում էր հայերին ընդգրկել հակաթուրքական միասնական ճակատի մեջ: Այդպիսի մտադրություն ունեին նաև հայ որոշ գործիչներ: Ժամանակին այդպիսի տրամադրություն էր ունեցել նաև Դա-

վիթ Բեկը: Թուրքական ընդհանուր սպառնալիքը երկու կողմին էլ ստիպում էր անտեսել տարաձայնությունները, ատելությունն ու անհանդուրժողականությունը և հանդես գալ միասնական ուժերով: Այս պատճառով է, որ Նադիրը հայերին սիրով վերցնում էր զինվորական ու պետական ծառայության: Հայտնի է, որ նրա բանակի կազմում կային զգալի թվով հայ զինվորականներ: Օրինակ՝ 1732 թ. Համադանի համար մղված մարտերի ժամանակ նրա բանակում մարտնչում էին վեց հայկական զորաջոկատներ: Հայ զինվորականներն աչքի ընկան 1735 թ. Գանձակի և Կարսի շրջաններում տեղի ունեցած ռազմական գործողություններում, հատկապես Եղվարդի ճակատամարտի ժամանակ:

Նադիրի շրջապատում կային մի քանի բարձրաստիճան հայեր, ինչպես, օրինակ՝ մելիքներ Մկրտումը, Հակոբջանը, Եգանը, Թամրազը, Մանուչար Շահնազարյանը, Հարությունը և ուրիշներ: Սրանցից Նադիրին առավել մոտ էր հմուտ և հեռատես քաղաքական գործիչ, նշանավոր զինվորական Դիզակի մելիք Եգանը, որն արժանացել էր Նադիրի անվերապահ վստահությանն ու հարգանքին:

Հենց մելիք Եգանի իմաստուն խորհրդով է, որ Նադիրը հատուկ քաղաքականություն է մշակում Հայոց եկեղեցու նկատմամբ, անձամբ այցելում Ս. Էջմիածին, լինում Մայր Աթոռում, հանդիպում Ամենայն Հայոց կաթողիկոս Աբրահամ Գ Կրետացու հետ: Նա հատուկ արտոնություններ էր շնորհել Հայոց եկեղեցուն և ազատել հարկերից: 1735 թ. հրովարտակով հաստատել էր Ամենայն Հայոց կաթողիկոսության իրավունքները, որի համաձայն ընդարձակվել էին Մայր Աթոռի կալվածքները: Շահը Ս. Էջմիածնի տաճարին նվիրել էր 15 կիլոգրամանոց ոսկե ջահ և պարսկական ընտիր գորգեր: Զափազանց կարևոր էր, որ հայ հոգևորականության խնդրանքով Նադիրը սահմանափակում է կաթոլիկ միսիաների գործունեությունը Պարսկաստանում, արգելում նրանց քարոզչական առաքելությունը պարսկահայերի շրջանում, մի բան, որ առաջացրել էր Ֆրանսիայի դժգոհությունը: Նադիրը Երևանի նոր խանին խստագույնս հանձնարարում է հոգատար լինել Հայոց կաթողիկոսի և ընդհանրապես հայերի նկատմամբ, խորհուրդ է տալիս չվստահել Երևանի պարսիկ և թուրք աղաներին, այլ ամեն հարցում «խորհրդակցել

կաթողիկոսի և հայ մելիքների հետ», քանի որ «Երկիրն ու ժողովուրդը նրանցն են, և նրանք պետք է այն չենացնեն»:

Հայ ժողովրդի շրջանում հատկապես գոհունակությամբ ընդունվեց Նադիրի հրովարտակը ժառանգական կարգի վերաբերյալ: Եթե որևէ հայ ընդուներ մահմեդականություն, ապա նա այլևս չէր կարող, ինչպես հաստատված կարգն էր, հավակնել իր քրիստոնյա հարազատների ժառանգությանը: Նադիրը հովանավորել է նաև հայ առևտրականներին, նրանց տվել բազմաթիվ արտոնություններ: Մելիք Հակոբջանին, օրինակ, թույլատրել է Երևանում հիմնել դրամատուն և հատել արծաթե ու պղնձե դրամներ: Կաթողիկոսի խնդրանքով 7 հազար հայերի ու վրացիների նա ազատել է պարսկական գերությունից և վերադարձրել հայրենիք: Նշելի է, որ Պարսկաստանի բարձրաստիճան պետական գործիչների և հոգևորականության ներկայացուցիչների՝ 1735 թ. Մուղանում հրավիրված ժողովին մասնակցելու համար Նադիրը հրավեր էր ուղարկել նաև հայ մելիքներին ու Ամենայն Հայոց կաթողիկոսին: Ավագանու այս ժողովում էր, որ 1736 թ. մարտի 10-ին Նադիրը հռչակվել էր շահ: Նրա թագադրության հանդեսի արարողությանն անձամբ մասնակցել է Աբրահամ Կրետացին և շահի մեջքին կապել սուր: Ընդունելով սուրը՝ դրանով Նադիրը կարծես ցանկանում էր շեշտել, որ տերության բոլոր հպատակներն իր առջև հավասար են, և որ ինքը անխտիր ոչ միայն մահմեդականների, այլև քրիստոնյաների թագավորն է:

Հայերին և հատկապես Հայոց եկեղեցուն տրված այս արտոնությունները զարմացնում էին մահմեդական հոգևորականությանն ու պետական շրջանակներին և դժգոհության տեղիք տալիս: Բայց Նադիրը հաշվի չէր առնում այդ դժգոհությունները: Հայերի նկատմամբ նրա որդեգրած քաղաքականությունն ուներ ավելի հեռու գնացող նպատակներ: Անդրկովկասի (հատկապես Գանձակի, Շաքիի, Շիրվանի) և Ատրպատականի թուրք (աղըրբեջանցի) խաներն ու ցեղապետները, մասամբ նաև վրացիները, ունեին չեշտված թուրքական կողմնորոշում և ամեն անգամ օսմանյան արշավանքների ժամանակ դաշնակցելով թուրքերի հետ՝ մեծ վտանգ էին ստեղծում պարսից պետության համար: Հանձինս հայերի Նադիրը ցանկանում էր թուրքամետների

նկատմամբ Անդրկովկասում ստեղծել հակակշիռ ուժ, որն ինչ-որ չափով պետք է ուներ նաև պետական-քաղաքական կազմավորում՝ ինքնավարության անկապտելի հատկանիշներով:

Նադիրի այս ձեռնարկումները հայ հասարակական-քաղաքական կյանքը ղեկավարող անձանց ստիպեցին արագ և ճիշտ կողմնորոշվել՝ որդեգրելով քաղաքական նոր ուղեգիծ: Այժմ նրանք անելիք ունեին ոչ թե ինչ-որ անորոշ խոստումների ու դրանց ապավինած հույսերի, այլ հաստատուն խոսքի և գործի հետ: Այսպես՝ Նադիրը Արարատյան երկրի քալանթար նշանակեց Գեղարքունիքի և Սոդքի տեր Մելիքջան Մելիք-Շահնազարյանցին: Դա Երևանի խանից հետո ամենակարևոր և ազդեցիկ պաշտոնն էր, որով երկրամասի ներքին գործերի տնօրինությունը վերապահվում էր հայ մելիքներին: Շահի հրովարտակներով մեծ իրավունքների տիրացան հատկապես Սյունիքի և Արցախի մելիքները:

Գահ բարձրանալուց անմիջապես հետո Նադիր շահը ձեռնամուխ եղավ Արցախի մելիքությունները ռազմա-քաղաքական մի ամբողջության մեջ միավորելու գործին: Նրա հատուկ հրովարտակով Արցախի հինգ մելիքությունները միավորվեցին «Մահալ-է խամսե» (արաբերեն խամսա՝ հինգ) նահանգի մեջ: Նորաստեղծ նահանգը դուրս բերվեց Գանձակի խանի վերահսկողությունից և դարձավ ինքնուրույն վարչական միավոր: Խամսան հարևան Գանձակի, Շիրվանի, Երևանի և այլ խանությունների նման պետք է ուղղակի ենթարկվեր Ատրպատականի փոխարքա Իբրահիմ Աֆշար խանին, որը Նադիրի ավագ եղբայրն էր: Եթե ինչ-որ հարցերում փոխարքան ընթացք չտար Խամսայի խնդիրներին, ապա հայ մելիքներն իրավունք ունեին անմիջապես դիմելու շահին:

Փաստորեն Արցախի մելիքություններից Անդրկովկասում ստեղծվեց վարչական ինքնավար նոր միավորում: Ըստ էության Նադիր շահը վավերացրեց այն, ինչ 15-ամյա պայքարի և հերոսական մաքառումների շնորհիվ ձեռք էր բերել Արցախի հայությունը:

բ. Խամսայի մելիքությունների իրավունքներն ու պարտականությունները: Եթե մինչև Նադիր շահը Արցախի հինգ մելիքությունները տարանջատ ավատական իշխանություններ

էին, վարչաքաղաքական զատ միավորներ, ապա այժմ նրանք համախմբվեցին մեկ առանձին զինական դաշնակցության մեջ: Խամսայում միավորվեցին Գյուլիստանի, Ջրաբերդի, Խաչենի, Վարանդայի և Դիզակի մելիքությունները: Խամսայի սահմանները տարածվում էին Գանձակից (այժմ՝ Գյանջա) մինչև Արաքս գետի ափերը: Հյուսիսում այն հասնում էր մինչև Գետաշեն, հարավում՝ Արաքսի վրա ձգվող Խուդափիրինի կամուրջը, Արևմուտքում՝ Սոդք, իսկ Արևելքում՝ հին Տիգրանակերտի ավերակները: Մելիքություններում իշխող տները սերում էին Արցախի հինավուրց Առանշահիկ նախարարական տոհմից: Գյուլիստանում իշխում էին Մելիք-Բեգլարյանները (իշխանանիստը՝ Գյուլիստանի ամրոցը), Ջրաբերդում՝ Մելիք-Իսրայելյանները (նստավայրն էր Ջրաբերդ-Ջարաբերդ ավանը), Խաչենում՝ Հասան-Ջալալյանները (նստավայրն էր Խոխանաբերդը), Վարանդայում՝ Մելիք-Շահնազարյանները (նստավայրը՝ Ավետարանոց ավանը), Դիզակում՝ Մելիք-Եգանյանները (Մելիք-Ավանյաններ), իշխանանիստն էր Տող ավանը: Նորաստեղծ զինական այս դաշնակցության (Խամսայի) գերագահ (բեկլարբեկ) նշանակվեց Դիզակի մելիք Եգանը: Խամսայի մեջ մտնող բոլոր մելիքները պետք է անվերապահորեն ենթարկվեին նրան, իսկ ինքը՝ Ատրպատականի փոխարքային: Մելիք Եգանին իրավունք էր վերապահվել նաև ուղղակիորեն դիմելու շահին: Նա նաև շահի պալատական խորհրդականն էր և, ինչպես վկայում են պարսկական սկզբնաղբյուրները, Նադիրը մեծագույն հարգանքով նրան անվանում էր «հայրացու»: Այս նշանավոր պետական-քաղաքական գործիչը մեծ ջանքեր թափեց հայկական ինքնավար իշխանության ամրապնդման ու հետագա զարգացման ուղղությամբ:

Խամսայի հոգևոր կենտրոնը Գանձասարի վանքն էր, որը հանդիսանում էր Աղվանից (Արցախի, Գանձասարի) կաթողիկոսության նստավայրը: XIV դարից սկսած Գանձասարի կաթողիկոսական գահը ժառանգաբար գտնվում էր Հասան-Ջալալյանների տոհմի կրտսեր ճյուղի ներկայացուցիչների ձեռքում: Գանձասարի կաթողիկոսները կարևոր դեր են խաղացել հայ ազատագրական շարժման պատմության մեջ, որոնց ականավոր ներկայացուցիչներից էր Եսայի Հասան-Ջալալյանը:

Խամսայի մելիքներն ունեին անսահմանափակ իրավունքներ և հանդիսանում էին իրենց գավառների տիրակալները: Նրանց կամքը հպատակների համար օրենք էր և, ինչպես նշված է մելիքներից մեկին տրված շահական հրովարտակում, «մելիքի հպատակներն ու ստորադրյալները պարտավոր են նրան համարել լիազոր տեր, չչեղվել նրա հրամաններից և տնօրինությունից»: Մելիքը պարսկական պաշտոնյա էր և նրա տնօրինության ներքո գտնվող գավառը մասնավոր սեփականություն չէր: Նա գավառի տերն էր սոսկ կառավարման իմաստով, բայց, անշուշտ, ուներ նաև իր սեփական հողային ընդարձակ տիրույթներն ու անասնահոտերը: Մելիքը տիրապետում էր տնտեսական հզոր կարողությունների: Գյուղական յուրաքանչյուր ընտանիք պարտավոր էր նրան տալ բերքի մեկ հինգերորդը ու գլխահարկ և իր աշխատանքային գործիքներով տարեկան մի քանի օր ձրի աշխատել նրա համար, ցանել և հավաքել բերքը:

Մելիքական պաշտոնը ժառանգական էր: Մահացած մելիքին փոխարինում էր ավագ որդին, իսկ ժառանգ չունենալու դեպքում՝ եղբայրը: Յուրաքանչյուր նոր մելիք իր պաշտոնը կարող էր ստանձնել միայն շահական հրովարտակից հետո: Մելիքները պարտավոր էին ժամանակին վճարել սահմանված պետական հարկերը, ճնշել գավառում ծայր առած խռովությունները, մելիքության սահմանները պաշտպանել արտաքին հարձակումներից, պատերազմների ժամանակ իրենց զորքով ներկայանալ շահին: Մնացած բոլոր հարցերում նրանք ինքնուրույն էին և ոչ մի բանով հաշվետու չէին:

Մելիքներն իրավունք ունեին պատժելու և պարգևատրելու իրենց հպատակներին: Դատավարության իրավունքը ևս գտնվում էր նրանց ձեռքին: Դատավարության համար օրենսգիրք չկար, և մելիքները դատում էին սովորույթի իրավունքով: Պատիժները բազմազան էին. սովորական ծեծից ու տուգանքից մինչև մահապատիժ:

Մելիքության կազմում գտնվող գյուղերը կառավարվում էին գյուղացիների կողմից ընտրված տանուտերների միջոցով, որոնց ընտրությունը պարտադիր վավերացվում էր մելիքի կողմից: Առանձին դեպքերում մելիքն ինքն էր նշանակում տանուտերներին: Տանուտերները հետևում էին գյուղի կարգ ու կանոնին,

հավաքում հարկերը, դատում մանր հանցագործներին, անհրաժեշտության դեպքում՝ հարյուրապետի հետ, զինապարտներին առաջնորդում մելիքների մոտ: Զինվորական պարտադիր ծառայություն չկար, և մելիքները մշտական ու կազմակերպված բանակ չունեին: Սակայն մելիքներից յուրաքանչյուրը իր մոտ որպես թիկնապահներ մշտապես պահում էր 300 զինվոր: Պատերազմի ժամանակ զենք կրելու ընդունակ բոլոր չափահաս տղամարդիկ պարտավոր էին պատրաստ վիճակում (ձիով, զենքով և այլն) հավաքվել որոշված վայրում: Տարբեր ժամանակներում մելիքներն ունեցել են տարբեր քանակի զինվորական ուժեր: Եթե XVIII դարի 20-ական թվականների ազատագրական կռիվների շրջանում բոլոր սղնախները միասին կարող էին դուրս բերել մինչև 40 հազար զինվոր, ապա Նադիրի ժամանակ Խամսայի մելիքություններից յուրաքանչյուրն առավելագույնս կարող էր հանել 3-4 հազար զինվոր: Այսպիսով, Խամսայի մելիքների ռազմական ուժը կարող էր հասնել 20 հազարի: XVIII դարի երկրորդ կեսին, երբ Խամսայի մելիքները թուլանում են, նրանցից յուրաքանչյուրը կարող էր հանել 1000-ական զինվոր: Զորքը ղեկավարում էին մելիքի կողմից նշանակված հարյուրապետներն ու հազարապետները, որոնք մելիքական ընտանիքների կրտսեր ներկայացուցիչներից էին:

Մելիքները գործուն մասնակցություն են ունեցել նաև Արցախի հոգևոր կյանքին, երբեմն միջամտել են Գանձասարի կաթողիկոսների ընտրությանը, որը հաճախ տեղիք էր տալիս մելիքական տարբեր խմբավորումների միջև շահերի բախման ու օտար (հարևան մահմեդական) տիրակալների անցանկալի միջամտության:

Նադիր շահի սպանությունից հետո (1747) Խամսայի մելիքների վիճակը փոխվում է. Պարսկաստանի նոր տիրակալները վերացնում են Խամսայի շատ արտոնություններ և, որ խիստ անցանկալի էր, երկրամասը դարձյալ ենթարկվում է Գանձակի խանին: Պարսկական կենտրոնական իշխանության հետագա թուլացման, անիշխանության, անընդհատ կրկնվող միջխանական ընդհարումների պայմաններում Խամսայի մելիքներն իրենց իրավունքների ու միասնականության պահպանման համար հուսահատ պայքար էին մղում, որոնք սակայն ավարտվեցին

անհաջողությամբ: Հիմնական պատճառը մելիքական տների միջև ծայր առած ներքին երկպառակություններն էին ու եղբայրասպան կռիվները: Վարանդայի մելիք Հովսեփի դեմ ապըստամբեց նրա կրտսեր եղբայր Շահնազարը, որը սպանելով եղբորը՝ տիրացավ մելիքական աթոռին: Խամսայի մյուս չորս մելիքները միացյալ ուժերով հարձակվեցին ինքնակոչի վրա: Շահնազարը 1752 թ. զինական օգնություն խնդրեց երկրամասի արևելյան սահմանների մոտ ծվարած քոչվոր թուրք սարըջալու ցեղապետ Փանահից և նրան տրամադրեց հինավուրց Բերդաքար-Շոշ (Շուշի) ամրոցը: Այսպես, պատմության մեջ առաջին անգամ, Արցախի սրտում բնակություն հաստատեց մի օտար թուրքական ցեղ: Փանահը 1752-1754 թթ. արագորեն վերակառուցելով Շոշի բերդը՝ ամրացավ այնտեղ: Շուտով շահը նրան չնորհեց խանական տիտղոս և հայ մելիքներին պարտադրեց ենթարկվել նրա գերիշխանությանը:

Այսպիսով ստեղծվեց Ղարաբաղի խանությունը, որը կատարյալ չարիք դարձավ երկրամասի բնիկ բնակչության՝ հայերի համար և հանդիսացավ Խամսայի թուլացման հիմնական պատճառներից մեկը: Եղբայրասպան կռիվներից հյուծված ու ջլատված Խամսայի մելիքություններն անկարող եղան դիմագրավել Ղարաբաղի խանի և Պարսկաստանի կառավարության բացահայտ թշնամական գործողություններին, որոնց միասնական ջանքերով հայ մելիքների զինական դաշնակցությունը քայքայվեց:

4. ՀՈՎՍԵՓ ԷՄԻՆԸ ԵՎ ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

ա. Հովսեփ Էմինը Անգլիայում: XVIII դարի երկրորդ կեսին հայ ազատագրական շարժումների կենտրոնը Հայաստանից տեղափոխվում է գաղթավայրեր: Դա ուներ իր պատճառները: Երեք հարյուրամյա ազատագրական ելույթները, բանագնացությունները և անարդյունք բանակցություններն ունեցան նաև բացասական հետևանքներ: Հայաստանում այլևս ո՛չ ներուժ էր մնացել և ո՛չ էլ համապատասխան գաղափարական միջավայր: Այդ ժամանակաշրջանի Հայաստանյան իրականության մեջ

փաստորեն հնարավոր չէր ազատագրական շարժման կենտրոն ունենալ: Ահա թե ինչու հայ ազատագրական միտքը ստիպված էր վերադասավորել իր ուժերը, փոխել աշխարհագրական ու սոցիալական միջավայրը, մարտավարությունը:

Ազատագրական գաղափարները թափանցել էին նաև գաղթավայրեր, որոնք վաղուց էին դարձել հայ մտավոր ու տնտեսական կյանքի կենտրոններ: Գաղթավայրերում գործում էին դպրոցներ, ստեղծվել էին մշակութային կարևոր արժեքներ, կային գրչության վայրեր: Հիմնադրվել ու բարձր զարգացման էր հասել հայկական տպագրությունը (Վենետիկ, Հռոմ, Կ. Պոլիս, Ամստերդամ, Լիվոռնո, Լվով և այլուր): Աստիճանաբար կազմավորվել և զգալի դեր էր խաղում հայ մտավորականությունը: Հոգևորականության հետ նա իր ձեռքն էր վերցրել մշակութային և հասարակական-քաղաքական կյանքի կազմակերպումը: Հայկական գաղթավայրերը անտարբեր չէին հայրենիքի ճակատագրի նկատմամբ: Դրանք միշտ ուղղակի շփումներ են ունեցել Հայաստանի հետ՝ հիմնականում եկեղեցու կամ առևտրական ու տնտեսական կապերի միջոցով: Գաղթավայրերում տեղյակ էին հայրենիքի թշվառ ու անճար վիճակին, տեղի ունեցող իրադարձություններին: Գաղթահայերը հնարավորության սահմաններում աշխատել են զորավիգ լինել հայաշխարհի կարիքներին:

XVIII դարի կեսերին ազատագրական գաղափարախոսությունը համակում է նաև գաղութահայությանը: Այս նոր պայմաններում հայ ազատագրական շարժման հիմնական կրողն ու գաղափարախոսը դառնում է վաճառականությունը, որը շատ էական գծերով տարբերվում էր նախորդ փուլերի վաճառականությունից: Սա ավելի կազմակերպված էր, կրթված ու նախանձախնդիր: Հիշյալ երևույթները ցայտուն դրսևորվեցին հատկապես Հնդկաստանի և Ռուսաստանի հայկական գաղթավայրերում, որոնք էլ դարձան XVIII դարի երկրորդ կեսի հայ ազատագրական շարժման ակնառու կենտրոններ:

Հայ ազատագրական շարժման նոր փուլի ամենանշանավոր գործիչներից մեկը Հովսեփ Էմինն էր: Նա պարսկահայ էր, կրթությունն ու դաստիարակությունը ստացել էր Հնդկաստանում, իսկ քաղաքական-հասարակական հայացքներով ու

գաղափարներով եվրոպական միջավայրի արգասիք էր:

Էմինը ծնվել է 1726 թ. Պարսկաստանի Համադան քաղաքում: 40-ական թթ. սկզբներին հայրը առևտրական գործերով տեղափոխվել էր Կալկաթա, ուր մի քանի տարի անց հաստատվել էր նաև ընտանիքը: 1745 թ. Էմինը ընդունվում է Կալկաթայի անգլիական քոլեջը՝ ուսումնառության ընթացքում ցուցաբերելով արտակարգ ընդունակություններ ու գերազանց առաջադիմություն: Այստեղ նա հաղորդակցվեց եվրոպացիներին, ծանոթացավ նրանց մշակույթին: Քոլեջից ոչ հեռու գտնվում էր բրիտանական մի զորանոց և պատանին ժամերով հափշտակությամբ դիտում էր զինվորների վարժանքն ու ռազմական խաղերը: Այդ ժամանակ էլ Էմինը որոշում է դառնալ զինվորական, որպեսզի «կարողանար որպես եվրոպական սպա գնալ Հայաստան և օգտակար լինել իր հայրենիքին»: Երբ նա այդ մասին հայտնում է հորը, վերջինս կտրականապես մերժում է որդու առաջարկը: Իր նպատակն իրականացնելու համար Էմինը որոշում է գաղտնի մեկնել Անգլիա: Նա վարձվում է Անգլիա ուղևորվող «Վալպոլ» առագաստանավի վրա որպես սպասավոր: Յոթամսյա երկարատև ու ծանր նավարկությունից հետո՝ 1751 թ. սեպտեմբերի 14-ին Էմինը հասնում է Անգլիա: Զինվորական դպրոց ընդունվելու նրա փորձերն ավարտվում են անհաջողությամբ: Պարզվեց, որ նման ուսումնական հաստատություն ընդունվելու համար անհրաժեշտ են հեղինակավոր մարդկանց երաշխավորագրեր ու հանձնարարագրեր: Էմինը հաճախում է հանրակրթական մասնավոր դպրոց: Ապրում է ծանր ու չարքաշ կյանքով: Ուսման վարձը վճարելու և գոյությունը պաշտպանելու համար միաժամանակ ստիպված է լինում աշխատել բեռնակիր, դոնապան, բանվոր, փոստատար, գրագիր: Եվ այսպես չորս տարի:

1755 թվականը ճակատագրական եղավ Էմինի համար: Նա ծանոթանում է նշանավոր բանաստեղծ ու հրապարակախոս Էդմոնդ Բըրքի և Անգլիայի քաղաքական հայտնի գործիչներից մեկի՝ դուքս Գյու Ստիմսոնի հետ: Վերջինիս ջանքերով Էմինը ծանոթանում է դուքս Ռիչմոնդի, կոմս Պեմբրոկի, վիկոնտ Բոլինբրոկի, կոմս Օքսֆորդի, լեդի Անսոնի, Քենտերբերիի արքեպիսկոպոսի, լեդի Ելիզավետա Մոնտեքյուի և շատ ուրիշների

հետ: Լոնդոնի գրական ու մշակութային մթնոլորտում աստիճանաբար ընդլայնվում է Էմինի մտահորիզոնը. նա ուսումնասիրում է մեծ մտածողների ստեղծագործությունները, հաղորդակից լինում ժամանակաշրջանի ամենաառաջավոր գաղափարներին: Էմինի անձը հետաքրքրեց նաև արքայազնին՝ Կումբերլենդի դուքսին, որը որոշեց նրան վերցնել իր հովանավորության ներքո: Արքայազնի միջնորդությամբ Էմինը 1755 թ. ընդունվում է Լոնդոնից ոչ հեռու գտնվող Վուլվիչի ռազմական ակադեմիան, ուր մասնագիտանում է հրետանային գործի և ամրաշինության բնագավառներում:

Ուսումնառության շրջանում Էմինը շարունակում է մտորել իր հայրենիքի փրկության մասին: Հայաստանի ազատագրման գործում նա կարևոր դեր էր վերապահում Վրաստանին: Ահա թե ինչու նամակ է գրում վրաց թագավոր Հերակլ II-ին՝ առաջարկելով իր ծառայությունները. «Եթե Ձերդ վեհափառությունը ցանկանա,- ասված է նամակում,- կգամ Ձեզ ծառայելու և իմ համեստ կարողությունների չափով կվարժեցնեմ Ձեր զորքերը»: Անշուշտ, Էմինը դեռևս հստակ պատկերացում չուներ, թե ապագայում ինչպես պետք է ազատագրել Հայաստանը, բայց նրա համար մի բան պարզորոշ էր, որ հայկական և վրացական ազատագրական շարժումները պետք է շաղկապել և այդ գործում հայ մելիքների հետ միասին կարևոր դեր ուներ Հերակլ II-ը:

Էմինի ուսումնառությունն ակադեմիայում երկար չտևեց, ընդամենը 13 ամիս: 1757 թ. մայիսին նա ընդհատեց պարապմունքները և գրություն ներկայացրեց ակադեմիայի պետին՝ իրեն ռազմաճակատ ուղարկելու խնդրանքով: Սկսվել էր Յոթնամյա պատերազմը, և Անգլիան Պրուսիայի հետ դաշնակցած, պատերազմում էր Ֆրանսիայի դեմ: Որպես կամավոր, նա մեկնում է Գերմանիա և Կումբերլենդի դքսի հրամանատարության ներքո մասնակցում Ֆրանսիայի դեմ մղվող ռազմական գործողություններին, որոնց ժամանակ աչքի է ընկնում անձնական խիզախությամբ ու քաջությամբ: Մարտական գործողություններից մեկի ժամանակ վիրավորվում է, բայց չի թողնում ռազմադաշտը: 1758 թ. վերջին Էմինը վերադառնում է Անգլիա, տեսակցություն խնդրում վարչապետ Ու. Պիտտ Ավագից՝ ցանկանալով ճշգրտել անգլիական կառավարության դիրքորոշումը

Հայաստանի ազատագրության խնդրի հանդեպ: Ընդունելությունը նրա համար պարզում է, որ Անգլիան այդ հարցում չահագրգռված չէ, և նրանից օգնություն ակնկալելն անիմաստ է: Տեսակցության վերջում Պիտտը նրան առաջարկում է, կա՛մ սպայական աստիճանով ծառայել անգլիական բանակում, կա՛մ պետական ծառայության անցնել Հնդկաստանում: Էմինը երկու առաջարկություններն էլ մերժում է: Նույն օրերին բարեկամներից մեկին հղած նամակում նա գրում է. «Քանի ես ապրում եմ, պետք է ծառայեմ իմ հայրենիքին, և եթե ես ծնված եմ, որպեսզի ազատեմ իմ անպաշտպան ժողովրդին, ապա ոչ ոք չի կարող արգելք լինել ինձ: Աստծու կամքն է, որ պիտի կատարվի»:

Կացությանն անձամբ ծանոթանալու և հայրենիքը օտար տիրապետություններից ազատագրելու իր ծրագիրը իրագործելու նպատակով Էմինը որոշում է մեկնել Հայաստան:

բ. Հովսեփ Էմինի ազատագրական գործունեությունը: Հովսեփ Էմինի՝ Հայաստան գալը անսպասելի չէր: Նա վաղուց էր առիթ փնտրում իր երազանքը կատարելու: Էմինը շատ վատ գիտեր այն միջավայրը, ուր պատրաստվում էր գործելու: 1759 թ. մայիսին նա դուրս եկավ Անգլիայից և ՃԵՆովայի վրայով նավարկեց մինչև Ալեքսանդրեկ: Այստեղից գնաց Հալեպ և նույն թվականի վերջերին երկու հայերի ուղեկցությամբ ճանապարհ ընկավ դեպի Հայաստան, որը բացասական ցնցող տպավորություն թողեց նրա վրա: Նա տեսավ թշվառ ու աղքատ մի երկիր, ստրուկ ու վախեցած մի ժողովուրդ, որի մեջ չէր մնացել անգամ պատմական հիշողություն: Կարինի գյուղերից մեկում Էմինը սկսում է հատվածներ կարդալ Մովսես Խորենացու «Հայոց պատմությունից», գյուղացիներին բացատրել, որ հայերն էլ երբևիցե ունեցել են սեփական պետություն և թագավոր, բանակ և իշխաններ: Նա գյուղացիներին քարոզում էր, թե Աստծու կողմից բոլոր մարդիկ ու ժողովուրդները ստեղծվել են հավասար: Հետևաբար, բանական էակը չպետք է հանդուրժի ուրիշի գերին լինելը: Իսկ եթե որևէ ժողովուրդ գերի է, ապա բնական է, որ նա պետք է պայքար մղի իր ազատության համար: Բովանդակ Հայաստանում նա չհանդիպեց որևէ մեկին, որը համակրեր իր ծրագրերը, չտեսավ այն ուժը, որը կարող էր բարձրանալ պայքարի: Էմինի հիասթափությունը ակներև էր: Անգամ Ս. Էջմիածնում, ուր նա ժամանեց 1760 թ. ապրիլին, անբարյացակամորեն ընդունեցին նրան: Ամենայն Հայոց կաթողիկոս Հակոբ Ե Շամախեցին սկզբում ինչ-որ հույսեր ներշնչեց, սակայն լինելով խիստ զգուշավոր և զուսպ՝ բավարարվեց միայն սաստելով այն հոգևորականներին, որոնք փորձում էին վարկաբեկել Էմինին: Ս. Էջմիածնում և Երևանում Էմինը մանրամասն տեղեկություններ է քաղում տարածաշրջանի կացության, Պարսկաստանի ու Վրաստանի հարաբերությունների, Արցախի դրության, մելիքների քաղաքական ակնկալությունների մասին: Նա հասկացավ, որ հայերի հայացքն ուղղված է դեպի Ռուսաստան, և նրանք այստեղից են սպասում իրենց երազած ազատագրությունը: Այդ էր վկայում նաև 1760 թ. հուլիսի 17-ին Հակոբ Շամախեցու գրած ուղերձը կայսրուհի Ելիզավետա Պետրովնային: Այստեղ կաթողիկոսը կայսրուհուն խնդրում էր իր վրա վերցնել «դժբախտ հայ ժողովրդի հոգատարությունը»: Այդ մտայնությունը տիրապետող էր բոլոր այն շրջաններում, որոնց հետ Էմինը շփումներ ունեցավ: Դա Էմինի համար նշանակում էր վերանայել իր նախորդ ծրագրերը և Հայաստանի ազատագրության համար նախ և առաջ դիմել Ռուսաստանի օգնությանը: Նա գիտակցում էր, որ անհրաժեշտ է անձամբ գնալ Ռուսաստան և ուղղակի կապեր հաստատել ռուս քաղաքական գործիչների հետ:

1761 թ. Էմինը Հայաստանից վերադարձավ Անգլիա և Լոնդոնում կապեր հաստատեց Ռուսաստանի դեսպան կոմս Ա. Մ. Գոլիցինի հետ: Դեսպանը ընդառաջեց Ռուսաստան մեկնելու Էմինի ցանկությանը և նրան հանձնեց ոչ միայն անձնագիր, այլև ցարական արքունիքի բարձրաստիճան անձանց ուղղված հանձնարարականներ ու երաշխավորագրեր: Մասնավորապես կարևոր էին Ռուսաստանի վարչապետ Մ. Ի. Վորոնցովին և արտաքին գործերի վարչությանը հասցեագրված հանձնարարականները:

1761 թ. նոյեմբերին Էմինը հասնում է Ս. Պետերբուրգ, ուր Ռուսաստանում Անգլիայի դեսպանը նրան ներկայացնում է վարչապետ Վորոնցովին: Հանդիպումը տեղի է ունենում վերջինիս բնակարանում: Վարչապետը մանրամասն հետաքրքրվում է Էմինի ծրագրերով և եզրակացնում, որ նա այն անձն է, որը

կարող է օգտակար լինել Կովկասում՝ Ռուսաստանի արտաքին շահախնդրությունների տեսակետից: Հանդիպման արդյունքների մասին Վորոնցովը տեղյակ է պահում կայսրուհի Ելիզավետա Պետրովնային, որն իր համակրանքն է հայտնում Էմինի ծրագրերին, միաժամանակ չափազանց դրական արտահայտվում հայերի՝ որպես ազնիվ և նվիրված ժողովրդի մասին: Ահա թե ինչու վարչապետն առանց այլևայլության անցագիր է տալիս Էմինին և հանձնարարական նամակ՝ ուղղված Հերակլ II-ին: Բացի այդ, նա Էմինին ներկայացնում է Ս. Պետերբուրգում գտնվող վրաց գահազուրկ թագավոր Թեյմուրազ II-ին, որը խոստանում է հանձնարարական նամակ տալ ուղղված որդուն՝ Հերակլ II-ին: 1762 թ. սեպտեմբերին, Մոսկվայում Եկատերինա II-ի թագադրությունից անմիջապես հետո, Էմինը դարձյալ հանդիպում է ունենում Վորոնցովի հետ: Նոր կայսրուհու անունից վարչապետը հայտնում է Էմինին, որ նա նույնպես դրական վերաբերմունք ունի հայ գործչի ծրագրերի նկատմամբ, և երբ վրա հասնի հարմար պահը, ինքը օգնելու է հայերին: Միաժամանակ Էմինին առաջարկություն է արվում մտնել ռուսական զինվորական ծառայության մեջ, բայց նա հրաժարվում է և պատրաստվում մեկնել Վրաստան:

Էմինի՝ Վրաստան մեկնելու նպատակը ոչ թե Հերակլին ծառայելն էր, այլ Հայաստանի ազատագրումը: Վրացական բանակի և հայ մելիքների ապստամբական ուժերի միջոցով Արևելյան Հայաստանն ազատագրելուց հետո, նրա պատկերացմամբ, երկու երկրների միջև պետք է կնքվեր պատվավոր դաշինք, որի հետևանքով ստեղծվելու էր հայ-վրացական դաշնակցային պետություն և թագավոր էր դառնալու Հերակլ II-ը: Նորաստեղծ պետության նկատմամբ պիտի հաստատվեր ռուսական հզոր տերության խնամակալությունը՝ որպես այդ երկու քրիստոնյա փոքր ժողովուրդների անվտանգության գրավական: Էմինի այդ ծրագիրը խոսուն վկայություն էր նրա քաղաքական հասունության: Նա արդեն վճռականորեն հանդես էր գալիս որպես ռուսական կողմնորոշման համոզված կողմնակից, իսկ նրա ռոմանտիկ հրապուրանքներն ու երազանքները փոխարինվում էին երևույթների իրատես գնահատությամբ:

Էմինի գործունեությունը Ռուսաստանում, նրա ծրագրերն ու

գաղափարները խիստ հետաքրքրեցին ռուսահայ նորելուկ մտավորականությանը, բազում առևտրականների: Շատերը պատրաստակամություն հայտնեցին աջակցել նրան: Մոսկվայում նրան մտերմացավ մեծահարուստ Հովհաննես Լազարյանը, որը հետագայում պետք է դառնար հայ ազատագրական շարժման նշանավոր գործիչներից մեկը: Լազարյանը, ինչպես նաև մոսկվաբնակ ուրիշ հայեր նյութապես օժանդակեցին Էմինին: Մոսկվայում Էմինին միացավ նրա հեռավոր ազգական արցախեցի Մովսես Բաղրամյանը, իսկ Աստրախանում՝ 30 հայ խանդավառ երիտասարդներ, որոնք պատրաստ էին նրա հետ մեկնել հայրենիք ու կռվել նրա ազատագրության համար:

1763 թ. փետրվարին Էմինը դուրս եկավ Մոսկվայից և Աստրախանի ու Ղզլարի վրայով մեկնեց Վրաստան: Ամենուր հայերը նրան դիմավորում էին մեծ շուքով ու հանդիսություններով՝ որպես Հայաստանի ազատարարի, շատերը պատրաստակամություն էին հայտնում նյութապես օգնելու նրան:

XVIII դարի երկրորդ կեսին, Նադիր շահի սպանությունից հետո, Վրաստանը աստիճանաբար սկսում է հզորանալ: Թեյմուրազ II-ի և հատկապես նրա որդու՝ Հերակլ II-ի օրոք Պարսկաստանի ծայրագավառներից մեկը՝ Գյուրջիստանը, ձեռք է բերում լիակատար անկախություն և դառնում տարածաշրջանի քաղաքական կարևոր միավորներից մեկը: Հերակլ II-ը, անկասկած, ժամանակի երևելի պետական գործիչներից էր: Նրա անունը լայնորեն հայտնի էր ոչ միայն Մերձավոր Արևելքի ու Ռուսաստանի, այլև Արևմտյան Եվրոպայի քաղաքական շրջաններում, և պատահական չէր Էմինի հետաքրքրությունը նրա անձով: Ճիշտ է, նրա պատկերացումները Հերակլի մասին գունազարդված էին և չէին համապատասխանում իրականությանը: Անշուշտ, Հերակլը հեռու էր ազատարար թագավորի այն կերպարից, որ իր մտքում կերտել էր Էմինը: Խելացի, խորամանկ, երկդիմի այս միապետը ցանկանում էր տնտեսական ու ռազմական բարեփոխումների միջոցով զարգացնել երկիրն ու եվրոպականացնել: Ահա թե ինչու նրան անհրաժեշտ էին եվրոպական կրթություն ունեցող մասնագետներ: Հենց այս տեսակետից էլ նա ընդունեց Էմինին և որոշեց օգտվել նրա ծառայություններից:

1763 թ. ապրիլի վերջերին Էմինը ժամանեց Թիֆլիս: Դեռ

քաղաք չմտած՝ նրան հանդիսավորությամբ դիմավորում են հայ-վրացական հեծելազորային մի ջոկատ և բազմաթիվ խանդավառ հայեր: Հերակլ II-ը նրան ընդունեց մեծ պատիվներով ու հարգանքով: Նա ուշադրությամբ լսեց Էմինի առաջարկությունները՝ Վրաստանում ռազմական դպրոցներ հիմնադրելու, վրացական բանակը եվրոպական եղանակով վարժեցնելու, երկրի տնտեսությունը զարգացնելու, լուսավորություն տարածելու, պետական կյանքում բարեփոխումներ անցկացնելու վերաբերյալ: Բայց երբ Էմինը փորձեց խոսք բացել իր ծրագրերի մասին, պարզ դարձավ, որ վրաց թագավորը չի բաժանում դրանք: Հերակլը շատ օգուտներ էր ակնկալում Էմինի ներկայությունից ի շահ Վրաստանի: Էմինն իր թիկնապահ ջոկատով մարտնչում է Վրաստան ներխուժած լեզգիների դեմ, ձեռնամուխ է լինում վրացական բանակի վարժեցմանը և այլն: Հասկանալով, որ ոչինչ Էմինին չի կարող հետ պահել իր ազատագրական ծրագրերից, Հերակլը ուղիներ է փնտրում նրան Վրաստանից հեռացնելու:

Վրաստանից Էմինը աչխույժ նամակագրական կապ է հաստատում Երևանի մեծամեծների, Արցախի մելիքների, Հայոց կաթողիկոսի, հոգևորականության առանձին ներկայացուցիչների հետ և փորձում չոչափել նրանց տրամադրությունները, ազատագրական չարժմանը աջակից լինելու պատրաստակամությունը: Էմինի գործունեությունն անհետևանք չմնաց: Նրա գաղափարները խանդավառեցին ոչ միայն Արցախի մելիքներից չատերին, այլև Արևմտյան Հայաստանի հոգևորականության որոչ ներկայացուցիչների:

XVIII դարի կեսերին արևմտահայ ազատագրական չարժման գործիչների չրջանում ևս արմատացել էր Ռուսաստանի օգնությամբ ազատագրվելու գաղափարը: Այդ ակնկալությունները հատկապես ավելի ուժեղացան, երբ Ռուսաստանը սկսեց վճռական դեր խաղալ մերձավորարևելյան քաղաքականության մեջ:

Հովսեփ Էմինի գործունեության մասին տեղեկություններ էին թափանցել նաև Արևմտյան Հայաստան, ուր ազատագրական չարժման յուրօրինակ կենտրոն էր դարձել Մչո Ս. Կարապետի վանքը: Վանքի վանահայրը՝ Հովնան եպիսկոպոսը, ժամանակի ուսյալ և բազմակողմանի գիտելիքների տեր հոգևորականներից էր և մեծ հեղինակություն էր վայելում արևմտահայոց չրջանում: Նա սերտ կապեր ուներ Վանի, Կարինի առևտրա-արհեստավորական չրջաններում և Կ. Պոլսի ամիրայական միջավայրում: Հովնան եպիսկոպոսը լսելով Հովսեփ Էմինի մասին, որոչում է կապ հաստատել նրա հետ և Մուչից հատուկ բանագնաց է ուղարկում Թիֆլիս: Էմինին ուղղած նամակում Հովնանը հավաստիացնում էր, թե որոչ բացատրական-նախապատրաստական աչխատանքներից հետո արևմտահայերը կարող են բարձրացնել ապստամբություն, մանավանդ Տարոնում և Սասունում: Էմինի և Հովնանի միջև սկսվում է աչխույժ նամակագրություն: Էմինը հափչատակվում է Հովնանի առաջարկությամբ և Մուչ է ուղարկում 30 հոգիանոց կամավորական իր թիկնապահ ջոկատը, որը աստրախանցի Սիմոնի հրամանատարությամբ դրվում է Հովնանի տրամադրության տակ: Այս 30 կամավորներն առաջին ռուսահայերն էին, որոնք գնում էին Արևմտյան Հայաստան՝ իրենց արևմտահայ եղբայրներին օգնության:

1764 թ. սկզբներին Հովնան եպիսկոպոսը Մուչի երևելի հայերից մեկի՝ Ստեփանի միջոցով Էմինին է ուղարկում մանրամասն նամակ-զեկուցագիր, որտեղ տեղեկացնում է, թե ինքը անցնող ամիսների ընթացքում կապեր է հաստատել Վանի, Կարինի, Դիարբեքիրի, Կեսարիայի, Թոխաթի, նաև Զմյուռնիայի և Կ. Պոլսի անվանի հայերի հետ, որոնք ողջունել և իրենց համաձայնությունն են տվել Էմինի ազատագրական ծրագրերին, ինչպես նաև՝ եզդիների և ասորիների հետ, որոնք պատրաստակամություն են հայտնել միանալու հայ ապստամբներին: Հովնանը հավաստիացնում էր Էմինին, թե Արևմտյան Հայաստանում արդեն հավաքագրված են ապստամբությանը պատրաստ 40 հազար մարտիկ, առանձին վայրերում ստեղծվել են գաղտնարաններ, որտեղ պահեստավորվել են զենք, զինամթերք և անհրաժեչտ հանդերձանք: Ազատագրական պայքարի նպատակների համար Արևմտյան Հայաստանի տարբեր չրջաններում սկսել են կազմակերպել դրամական հանգանակություն, հանուն այդ նպատակի նվիրաբերվել է նաև եկեղեցական թանկարժեք ոսկե և արծաթե սպասք:

Էմինը Հերակլին տեղյակ է պահում Հովնանի հայտնած տե-

ղեկությունների մասին, միաժամանակ փորձում է նրան համոզել, որ զբաղվի Արևմտյան Հայաստանի ազատագրության հարցով: Պահն ավելի քան հարմար էր, քանզի Թուրքիայի և Վրաստանի հարաբերությունները չափազանց լարվել էին, և Թուրքերը պատրաստվում էին արշավել Արևելյան Վրաստան: Հերակլին հետաքրքրում է Թուրքերի Թիկունքում հայերի հնարավոր ապստամբության մանրամասները: Էմինը Թագավորին խորհուրդ է տալիս վրացական 18 հազարանոց բանակը (6 հազար հեծյալ և 12 հազար հետևակ) Երևանի վրայով ուղարկել Բայազետ, այնուհետև՝ Վան, Կարին, Բասեն, Բիթլիս, Սասուն: Այս շրջանների ապստամբական ջոկատները միանալու էին ազատարար բանակին և միասնական ուժերով ազատագրելու էին ողջ Արևմտյան Հայաստանը: Էմինը չեշտում է, Թե արևմտահայերը Հերակլ II-ին ընդունելու են որպես իրենց Թագավոր: Արևմտահայ ազատագրական շարժման գործիչներին խրախուսելու նպատակով Հերակլը 1764 Թ. մարտին Էմինի մտերիմներից մեկի՝ մահտեսի Գրիգորի միջոցով նամակ է ուղարկում Հովնանին և հորդորում շարունակել ապստամբության նախապատրաստական աշխատանքները: Սակայն մահտեսի Գրիգորը Երևանում ձերբակալվում է: Երևանի Հուսեյն խանի ձեռքն են ընկնում Հերակլի և Էմինի Հովնանին հասցեագրած նամակները, որը դրանք հանձնում է Ամենայն Հայոց կաթողիկոս Սիմեոն Ա Երևանցուն: Կաթողիկոսը, որ վաղուց հետևում էր Էմինի գործունեությանը, դատապարտում է նրա տեսակետներն ու գործելակերպը և միջոցներ փնտրում նրան հեռացնելու Անդրկովկասից: Անչուշտ, Սիմեոն Երևանցին ևս երազում էր Հայաստանի ազատագրության մասին, սակայն գտնում էր, որ դա հնարավոր է միայն արտաքին ուժի, տվյալ դեպքում Ռուսաստանի օգնությամբ: Ուստի հայ ժողովուրդը պետք է համբերությամբ սպասեր իր ազատագրմանը, Պարսկաստանի և Թուրքիայի դեմ չդիմեր ինքնուրույն ելույթների, քանի որ անպատասխանատու, արկածախնդրական քայլերը կարող էին կործանել ժողովրդին: Հայոց կաթողիկոսը հանդիմանական նամակ է հղում Հերակլին և նրան առաջարկում է խզել ամեն մի կապ Հովնանի հետ, իսկ Էմինին վտարել Վրաստանից:

Հերակլ II-ը չէր կարող հաշվի չառնել Ամենայն Հայոց կաթողիկոսի բացասական կարծիքը Էմինի մասին: Նա չէր ցանկանում ստվերել հայոց հեղինակավոր հովվապետի բարեհաճ վերաբերմունքն իր նկատմամբ ու խախտել բարեկամական հարաբերությունները նրա հետ: Հերակլը հասկանում էր, որ վրացական պետությունն այնքան հզոր չէր, որ կարողանար ինքնուրույն դուրս գալ Օսմանյան կայսրության դեմ: Էմինի հավաստիացումները 40 հազարանոց հայկական ապստամբական բանակի մասին Թվում էին խիստ կասկածելի: Մյուս կողմից՝ Պարսկաստանը նույնպես չէր կարող Թույլ տալ ի հաշիվ Երևանի խանության վրացական պետության սահմանների ընդլայնում: Ուստի գտնելով, որ Էմինի հետագա ներկայությունը Վրաստանում կարող է խիստ վատթարացնել հարաբերությունները Պարսկաստանի և Թուրքիայի հետ՝ Հերակլը 1764 Թ. հուլիսին նրան արտաքսում է Վրաստանից Ռուսաստան, ուր գտնվում էին «նրա բարեկամները»: Այս դեպքերից հետո արևմտահայության ազատագրական շարժումներն աստիճանաբար դադարեցին:

Գործադրված հալածանքներն ու բռնությունները չվհատեցրին Էմինին: Նա չէր ցանկանում վերադառնալ Ռուսաստան, մանավանդ՝ Անգլիա, չէր ցանկանում կիսատ Թողնել այն հսկայական աշխատանքը, որ ձեռնարկել էր Հայաստանի ազատագրության համար:

Երկու տարի՝ 1764-1766 ԹԹ., Էմինը բնակվում էր Հյուսիսային Կովկասում, նախ՝ չեչենների, ապա՝ լեզգիների մոտ: Չեչենների ցեղապետների խնդրանքով որոշ ժամանակ վարժեցնում է նրանց բանակը: 1766 Թ. կեսերին լեզգիական մի զորաջոկատի հետ գալիս է Գանձակ: Էմինի բուն նպատակն էր տեղափոխվել Արցախ: Նա երկար ժամանակ նամակագրական կապ ուներ մելիքների և Գանձասարի կաթողիկոսի հետ և քաջատեղյակ էր Խամսայի ողբալի դրությանը: Ղարաբաղի Փանահ և Իբրահիմ խաների ջանքերով Խամսայի մելիքությունների միասնությունը քայքայվել էր: Վարանդայի մելիք Շահնազար II-ը, որ եղբայրասպան ընդհարումների սկզբնապատճառ էր, դարձել էր խանի կամակատարը: Գյուլիստանի մելիք Հովսեփն ու Ջրաբերդի մելիք Հաթամը Իբրահիմի կողմից վտարվել էին իրենց տիրույթներից և ապաստան գտել Գանձակի խանության սահմանե-

րում: Խամսայի այս անպատիվ կացությունը ստիպել է Ամենայն Հայոց կաթողիկոս Սիմեոն Երևանցուն ծանր խոսքերով հանդիմանել մելիքներին՝ ասելով. «Այսպիսի անձնապաստանությամբ միմյանց վրա հարձակվելով Հայոց թագավորությունը վերացրեցիք, Հայոց աշխարհն ավերեցիք և այլազգիների գերությանը հանձնեցիք, ու մի քանի մելիք, որ մնացել եք, ծարավ եք միմյանց արյան»: Բայց մելիքները շարունակում էին իրենց խոտոր ընթացքը՝ ձգտելով մի կերպ համակերպվել մահմեդական տիրակալների պարտադրած ստորացուցիչ պայմաններին:

Էմինը հույս ուներ վերականգնել Խամսայի միասնությունը, հաշտեցնել մելիքներին և նրանց բարձրացնել զինված ապստամբության: Ամբողջ 1767 թ. ընթացքում Էմինը բնակվում էր Գյուլիստանում՝ մելիք Հովսեփի մոտ: Այստեղ նա մի շարք հանդիպումներ է ունենում Արցախի նշանավոր գործիչների, մասնավորապես Գանձասարի կաթողիկոս Հովհաննես Հասան-Ջալալյանի հետ և նրանց համոզում է ներգրավվել իր ազատագրական ձեռնարկումների մեջ: Հանդիպումներ է ունենում նաև Իբրահիմ խանի հետ՝ փորձելով չոչափել նրա մտադրությունները: Հանդիպումներից հետո նա համոզվում է, որ այդ պահին ինքն ի վիճակի չէ մելիքներին հաշտեցնելու և միաբանելու: Դրա համար անհրաժեշտ էին ժամանակ, նաև՝ միջոցներ: Իսկ ժամանակ չկար:

Սիմեոն Երևանցի կաթողիկոսը, որ ուշի-ուշով հետևում էր Էմինի գործունեությանը, Գանձասարի կաթողիկոսին և մելիքներին հորդորում է հրաժարվել նրա ծառայություններից և հեռացնել Արցախից: 1767 թ. հոկտեմբերին մելիք Հովսեփը ճարահատյալ խնդրում է նրան թողնել Գյուլիստանը: Էմինը ստիպված էր հեռանալ Արցախից և 1768 թ. գարնանը Պարսկաստանի վրայով մեկնել Հնդկաստան:

Թեև Էմինի տասնամյա համառ, հետևողական, անխոնջ գործունեությունը չպսակվեց գործնական որևէ արդյունքով, սակայն նոր աստիճանի բարձրացրեց հայ ազատագրական շարժման գաղափարը: Ինքը՝ Էմինը, չընկճվեց կրկնվող անհաջողություններից, չհրաժարվեց իր հավատամքից և շարունակեց պայքարը: Արդեն Հնդկաստանի Մադրաս քաղաքում նա 1773 թ. մտնում է Շ. Շահամիրյանի ազատագրական խմբակի մեջ և

անմնացորդ նվիրումով մասնակցում նրա գործունեությանը, իր լավատեսությամբ ոգևորում շատերին: Մադրասի հայ մեծահարուստները որոշում են նրա տրամադրության տակ դնել տարեկան 12 հազար ռուփի՝ հայկական զորախումբ ստեղծելու համար: Հայտնի վաճառական Գրիգոր Խոջաջանյանը պատրաստակամություն է հայտնում հայկական բանակի կազմակերպմանը նվիրաբերել իր հսկա կարողության մեծ մասը: Շ. Շահամիրյանը և ուրիշները նույնպես որոշում են նյութական օժանդակություն ցույց տալ: Հնդկահայ վաճառականների ու գործարարների այս առատ նվիրատվությունները Էմինին ստիպում են մշակել Հայաստան վերադառնալու, այնտեղ զորախմբեր ստեղծելու և ազատագրական պայքարը շարունակելու նոր ծրագրեր: Բայց երբ գումարի մի մասն արդեն հավաքված էր, Մադրասում գտնվող Երուսաղեմի նվիրակ Հովհաննես եպիսկոպոսը խափանում է այս գործը և վաճառականներին պարտադրում հետ վերցնել ներդրված դրամական միջոցները: Անկասկած, նվիրակը գործում էր Ամենայն Հայոց կաթողիկոսի հանձնարարությամբ ու գիտությամբ:

1783 թվականից Էմինը մշտապես բնակվում է Կալկաթայում, որտեղ և մահանում է 1809 թվականին: Կյանքի վերջին տարիներին նա անգլերենով շարադրել է «Հովսեփ Էմինի կյանքն ու արկածները» ինքնակենսագրական գիրքը (Լոնդոն, 1792), որը XVIII դարի երկրորդ կեսի հայ ազատագրական շարժումների պատմության արժեքավոր սկզբնաղբյուրներից է: Սույն գիրքը մեծ հայրենասերի վերջին փորձն էր՝ հայության մեջ սեր ներարկել «մարդկության բարիքների միակ աղբյուրի»՝ ազատության նկատմամբ:

Հովսեփ Էմինի հայացքները խոր ազդեցություն են գործել հայ ազատագրական շարժման հետագա շրջանի գործիչների վրա և կարևոր նշանակություն են ունեցել շարժման գաղափարախոսության հստակեցման տեսակետից:

5. ՄԱԴՐԱՍԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ԽՄԲԱԿԸ

ա. Խմբակի ստեղծումը: *Հայ ազատագրական շարժումների պատմության մեջ կարևոր դեր են խաղացել Հնդկաստանի Հայկական գաղթավայրերը, մասնավորապես՝ Մադրասը: XVIII դարի երկրորդ կեսին այդ գաղթավայրերում լայն աշխատանքներ ծավալվեցին հայ ազատագրական շարժման գաղափարախոսության հետագա մշակման ուղղությամբ:*

Հնդկահայ միջավայրում տարածված այս շարժումն ուներ ժամանակի ամենաառաջադիմական բովանդակությունը և պայմանավորված էր մի շարք հանգամանքներով: Հնդկահայ առևտրական շրջանակները սերտ կապեր ունեին արևմտաեվրոպական երկրների, իսկ Հնդկաստանում՝ ամենօրյա շփումներ անգլիացիների հետ: Այս հանգամանքը նպաստել է, որ Հնդկահայ գործիչները լավատեղյակ լինեին եվրոպական լուսավորիչների գաղափարներին: Դա նաև մի ժամանակաշրջան էր, երբ տեղի անգլիական գաղութային իշխանությունները բոլոր միջոցներով փորձում էին հայերին դուրս մղել Հնդկաստանից: Անգլիացիներն ուղղակի հաշվեհարդար սկսեցին անպաշտպան հայ առևտրականների նկատմամբ՝ բռնագրավելով նրանց նավերն ու յուրացնելով ապրանքները: Դրա հետևանքով Հնդկահայ վաճառականները դուրս մղվեցին արտաքին վաճառահանման շուկաներից և կամա թե ակամա իրենց հայացքն ուղղեցին դեպի հեռավոր հայրենիքը՝ մշակելով ծրագրեր նրա ազատագրության, հայրենի պետականության վերականգնման համար և գիտակցելով, որ միայն սեփական պետությունն է ի վիճակի պաշտպան կանգնելու հայ վաճառականությանը և հետապնդելու նրա շահերը:

Հնդկահայ վաճառականության ականավոր ներկայացուցիչներից էր Շահամիր Շահամիրյանը (1723–1797): Նա ծնվել է Նոր Ջուղայում, զբաղվել դերձակությամբ: Ուրիշ շատ ջուղայեցիների նման գաղթել էր Հնդկաստան և բնակություն հաստատել Մադրասում: Այստեղ նա դարձել էր աղամանդավաճառ և կարճ ժամանակում մեծ հարստություն կուտակել, եղել էր Հնդկաստանի ամենաունևոր մարդկանցից մեկը: Նրան էին պատկանում բազմաթիվ խանութներ, կալվածքներ, գործարաններ, ծխախոտի պլանտացիաներ:

Շ. Շահամիրյանը մեծ սեր ու ձգտում ուներ դեպի գիրն ու գրականությունը և ազատ ժամերին զբաղվում էր ինքնակրթությամբ: Նա կարևոր դեր է կատարել Մադրասի Հայկական համայնքի կյանքում: Եղել է Մադրասի Հայոց ինքնավարության կազմակերպիչներից մեկը և ինքնավարության կանոնադրության («Նոր տետրակ, որ կոչի նշավակ», 1783) հեղինակը: Շ. Շահամիրյանի հասարակական-քաղաքական հայացքների և ազատագրական գործունեության վրա նշանակալի ազդեցություն են ունեցել Մովսես Բաղրամյանն ու Հովսեփ Էմինը:

Մովսես Բաղրամյանը XVIII դարի երկրորդ կեսի Հայ ամենաականավոր մտածողներից ու ազատագրական շարժման գաղափարախոսներից էր: Նա ծնունդով արցախցի էր, կրթությունը ստացել էր Նոր Ջուղայում, զբաղվել վաճառականությամբ: Որոշ ժամանակ բնակվել է Մոսկվայում, որտեղ էլ 1762 թ. հանդիպել է իր հեռավոր ազգական Հովսեփ Էմինին: 1762–1767 թթ. Բաղրամյանը եղել է Էմինի հավատարիմ զինակիցը և նրա հետ ջանքեր է գործադրել Հայաստանի ազատագրության խնդիրը գլուխ բերելու համար: 1767 թ. բաժանվել է Էմինից և տեղափոխվել Հնդկաստան, բնակվել Մադրաս քաղաքում: Այստեղ էլ ծանոթացել է Շ. Շահամիրյանի հետ ու համաձայնվել դառնալ վերջինիս որդիների՝ Հակոբի և Եղիազարի ուսուցիչը: Բաղրամյանն իր սաներին, ինչպես նաև Շ. Շահամիրյանին ու նրա մի քանի մտերիմներին ծանոթացրել է Էմինի քաղաքական ծրագրերին և Հայաստանի ազատագրության վերաբերյալ իր տեսակետների հետ: Շ. Շահամիրյանի մոտ միտք է հղանում գաղափարակիցների այս փոքրիկ շրջանակը համախմբել մի կազմակերպության մեջ: 1771 թ. նրա անմիջական ջանքերով ու ղեկավարությամբ Մադրասում ստեղծվեց Հայ իրականության մեջ առաջին քաղաքական խմբակը, որի կազմում, բացի իրենից, մտնում էին նաև որդիները՝ Հակոբն ու Եղիազարը, Մովսես Բաղրամյանը, Հարուստ առևտրական Գրիգոր Խոջաջանյանը և ուրիշներ:

Մադրասի խմբակի նպատակների ու ծրագրերի, ինչպես նաև Հայաստանի ազատագրության հարցի շուրջ Շ. Շահամիրյանը աշխույժ նամակագրություն է սկսում Արցախի մելիքների,

Ս. Էջմիածնի ու Գանձասարի կաթողիկոսների, վրաց Հերակլ II թագավորի և այլոց հետ: Շ. Շահամիրյանն այն միտքն է զարգացրել, որ Հայաստանը ազատագրվելու է հայերի զանգվածային ապստամբությամբ, որը գլխավորելու են Ս. Էջմիածինն ու Արցախի մելիքները: Հայաստանի ազատագրության գործում Շ. Շահամիրյանն ակնկալում էր նաև վրաց թագավոր Հերակլ II-ի զինական օգնությունը: Նա առաջարկում էր կնքել հայ-վրացական ռազմական դաշինք, որի շնորհիվ հնարավոր կլիներ ոչ միայն ազատագրել Հայաստանը, այլև ապահովել համատեղ ձեռք բերված անկախության անվտանգությունը: Անշուշտ, Շահամիրյանն ըմբռնում էր, որ միայն հայ-վրացական ռազմական ուժերով հնարավոր չէ երկրամասում երաշխավորել երկարատև խաղաղություն, ուստի մեծ նշանակություն էր տալիս Ռուսաստանի ռազմա-քաղաքական օգնությանը:

Խմբակի գործունեությանն ավելի կազմակերպված բնույթ հաղորդելու և ազատագրական գաղափարները բովանդակ հայության մեջ տարածելու նպատակով Շ. Շահամիրյանը Եվրոպայում գնում է տպագրական սարքավորումներ, պատրաստել տալիս հայկական տպատառեր, Ֆրանսիայից հրավիրում տպագրական գործի հմուտ վարպետներ և 1771 թ. Մադրասում հիմնում է հայկական տպարան: Որոշ ժամանակ անց այստեղ տպագրվում են հայերի ազգային ինքնաճանաչողությանն ու ազատագրական շարժման վերելքին նպաստող հրապարակախոսական-քաղաքական բնույթի մի քանի գրքեր: Ազատագրական խմբակի գործունեությունն ավելի է աշխուժանում, երբ 1773 թ. Էմինը երկարատև թափառումներից հետո բնակություն է հաստատում Մադրասում: Խմբակի անդամները, որ քաջատեղյակ էին Էմինի հայացքներին ու ազատագրական ծրագրերի մանրամասներին, ոգևորվում են նրա ներկայությունից և որոշում են օգնել նրան ստեղծելու հայ ազատագրական ջոկատներ:

Խմբակը սկսում է գործնական քայլեր կատարել Հայաստանի ազատագրության իր ծրագիրն իրականացնելու ուղղությամբ:

բ. Խմբակի քաղաքական հրապարակախոսությունը: Հայաստանի ազատագրության ծրագիրը շարադրված է Մադրասի խմբակի անդրանիկ քաղաքական-հրապարակախոսական

տրակտատի՝ «Նոր տետրակ, որ կոչի Հորդորակ» երկասիրության մեջ: Այն առաջին փորձն էր Հայաստանի ազատագրության գաղափարը գրավոր խոսքով ժողովրդին մատուցելու ասպարեզում:

«Նոր տետրակը» տպագրվել է Մադրասում 1772-1773 թթ.: XVIII դարի հայ մտավոր միջավայրում «տետրակ» արտահայտությունը օգտագործվել է «գիրք» հասկացության փոխարեն, ինչպես օրինակ՝ «Տետրակ այբբենական»: Գրքի մտահղացման գաղափարը պատկանում է Շահամիր Շահամիրյանի որդուն՝ Հակոբ Շահամիրյանին (1745-1774), որը, ինչպես ինքն էր խոստովանում, երկար ժամանակ «խորհում էր որևէ պիտանի բան կատարել անձկալի հայոց ազգի համար» և «ավելի բարի գործ, քան այս գիրքն էր», չկարողացավ կատարել: Հ. Շահամիրյանը երիտասարդ էր (ընդամենը 27 տարեկան) ու անփորձ, ուստի «Նոր տետրակը» շարադրելուն օգնել է «իր հրահանգիչը»՝ Մովսես Բաղրամյանը: Բայց ակնհայտ է, որ գրքում արտահայտված տեսակետները միայն այս երկուսինը չէին, այլ ամբողջ խմբակինը:

«Նոր տետրակը» հասցեագրված էր «Հայկազուն երիտասարդներին ու պատանիներին՝ ծուլության քնի վեհերոտ ու անհոգ թմրությունից սթափվելու համար»: Գրքի նպատակն էր ազգային ինքնագիտակցություն ներարկել և քաղաքական գիտելիքներ տալ հայ երիտասարդությանը: Հեղինակը վճռականորեն քննադատում է հոգևորականությանը, որը հայկական պետականության կորուստն ու հայ ժողովրդի ծանր կացությունը ներկայացնում էր որպես նրա գործած բազում մեղքերի համար վերուստ առաքված պատիժ: Ստեղծված ծանր կացության մեջ, սակայն, Աստված որևէ գործ չունի, նշված է «Նոր տետրակում»: Հայաստանի քաղաքական ճակատագրի պատասխանատուն հայ ժողովուրդն է և ուրիշ ոչ ոք: Հետևաբար, Հայաստանի ազատագրության գործն էլ հայ ժողովրդի գործն է: Քանիցս հայերը դիմել են եվրոպական հզոր պետություններին՝ օգնություն հայցելով, բայց ոչ մի օգնություն չեն ստացել: Հետևապես հայերն առաջին հերթին պետք է հույսը դնեն իրենց վրա և ոչ թե օտարների: Եվրոպայի միջոցով ազատագրվելու ակնկալությունը մոլորություն է և հետևանք հայ ազատագրական պայ-

քարի սխալ մտայնության: Ազատությունը չի կարող ձեռք բերվել մուրալով կամ բանակցություններով: Ազատագրվելու միակ միջոցը զինված ապստամբությունն է, ուստի ժողովուրդը պետք է զինվի: Չպետք է վախենալ դժվարություններից, զոհեր տալուց: Ժողովրդի մի մասը պետք է իր արյունը թափի, որպեսզի մյուս մասն ազատագրվի օտար տիրապետություններից: Առանց զոհերի ու պայքարի, միայն Աստծո ողորմածությամբ ոչ մի ժողովուրդ չի ազատագրվել: Մահ հանուն հայրենիքի ազատության՝ ահա փրկության միակ ճանապարհը: «Լավ է մեկ անգամ մեռնել քաջաբար, քան ապրել այսպիսի թշվառությամբ»,- եզրակացնում է հեղինակը:

Ազատության համար ժողովուրդը պետք է ունենա այդ հասկացությունն ըմբռնելու և գնահատելու մակարդակ: Դրա համար նրան պետք է սթափեցնել, դուրս բերել քաղաքական տգիտության ու անտարբերության ճահճից: Հայաստանի ազատագրության ծրագիրն իրականացնելու համար հեղինակը անհրաժեշտ է համարում լուսավորել ու կրթել հայերին: Լուսավորությունն ու գիտությունն են ժողովուրդների երջանկության հիմնապատճառները: «Եվրոպական բազում ժողովուրդներ,- գրում է Հ. Շահամիրյանը,- նախկինում համանման էին մեր ժողովրդին, սակայն այժմ նրանք մեծահարուստ են, կիրթ ու ուսյալ, քանզի բազմապիսի գիտություններ են ուսումնասիրել ու լուսավորյալ են»: Իսկ հայերը դեռևս շարունակում են խարխափել տգիտության մեջ: Հեղինակը հայ ծնողներին կոչ էր անում իրենց զավակներին տալ կրթության, որպեսզի սովորեն գիտություն ու արհեստներ, բայց հատկապես սովորեն զենք գործածել, որ նրանք դաստիարակվեն հայրենասիրական գաղափարներով, ոգեշնչվեն հայրենիքի ազատագրության տեսիլքով: Ժամանակին հայերն էլ են եղել միասնական ժողովուրդ և ապրել են միասնական ազատ հայրենիքում: Բայց հետագայում կորցրել են իրենց պետական անկախությունը, ընկել օտարների տիրապետության տակ, ցրվել աշխարհով մեկ: Ուրիշ ժողովուրդների նման հայերը նույնպես կարող են ոտքի ելնել և թոթափել օտարի տիրապետությունը: Այդ նպատակին հասնելու համար աշխարհով մեկ ցրված հայությունը պետք է վերադառնա Հայաստան, կենտրոնանա հայրենիքում, համախմբված ուժերով վերականգնի կործանված ազգային պետությունը, ստեղծի անկախ և ազատ «Մայր Հայաստան»: Հեղինակն առաջին անգամ շրջանառության մեջ էր դնում «Մայր Հայաստան» հասկացությունը, որն իր որդիների անձնազոհ պայքարի շնորհիվ վերստին դառնալու էր Հայոց հայրենիք և «հասնելու էր փառքի ու պատվի»: Հայն ուրիշից չէր հափշտակում այդ երկիրը, այլ ստանում էր իր վաղեմի սեփականությունը, որ կորցրել էր անմիաբանության, ծուլության, տգիտության պատճառով:

Պատմության դասերն ըմբռնելու, թույլ տրված սխալներն ուղղելու, երիտասարդությանը ազգային ինքնագիտակցության ոգով դաստիարակելու համար հեղինակը դիմում է ամենազոր ու ազդու միջոցի՝ հայ ժողովրդի պատմության օգնությանը: «Նոր տետրակի» առանձին գլուխներում զգալի տեղ է հատկացված Հայաստանի պատմությանն ու աշխարհագրությանը: Այստեղ համառոտակի շարադրված են Հայկ Նահապետից մինչև Լևոն VI-ի ժամանակաշրջանի քաղաքական անցքերն ու XVIII դարի երկրորդ կեսի Խամսայի պատմությունը: Փաստորեն, սա հայ ժողովրդի ամբողջական պատմության շարադրման անդրանիկ փորձերից մեկն էր, որտեղ հեղինակը Հայաստանի հերոսական անցյալին հակադրում էր սարսափելի, դժնդակ ներկան: Հեղինակն առաջարկում է նաև այս վիճակից դուրս գալու ելքը. «Պետականությունը, որ կորցրել ենք մեր անկարգության, անմիաբանության, անգիտության ու ծուլության պատճառով, վերստին վերականգնելու ենք խոհեմությամբ ու արիությամբ: Դա հնարավոր է, եթե բոլոր հայերը մի սիրտ, մի հոգի և մի կամք դառնան ու միաբանվեն»:

Հայոց պետականության անկման պատճառներից մեկը հեղինակը համարում է հայոց թագավորների ու իշխանների միանձնյա իշխանությունն ու կամայականությունները: Ահա թե ինչու նա քննադատում է բացարձակ միապետական կարգերը, մերժում դրանք: Միայն մի մարդը, անհատը ի վիճակի չէ ճշտորեն կառավարելու, նա կարող է սխալվել, իսկ միապետի սխալը դժբախտություն է ժողովրդի համար. «Եթե հասարակ ժողովրդից որևէ մեկը սխալվում է, ապա միայն իրեն է վնաս բերում, իսկ իշխանի սխալվելը ոչ միայն վնասներ, այլև երբեմն մեծամեծ պատուհասներ ու աշխարհավերություններ է բերում

ամբողջ ազգին»: Հետևաբար, եզրակացնում է հեղինակը. «իշխանությունը ինչ-որ միմիայն մեկի դատողության ու կառավարմանը չպետք է ենթակա լինի, այլ ամենալավագույնը կլիներ, եթե իշխանությունը անխախտելի սահմանադրությամբ և անեղծանելի օրենքներով կախում ունենար ընտիր-ընտիր ու մեծամեծ խորհրդականներից և տեսակ-տեսակ խորհրդարաններից»:

«Նոր տետրակի» հրատարակությունից հինգ տարի անց՝ 1778 թ., Շ. Շահամիրյանը Վենետիկի Մխիթարյանների տպարանում լույս է ընծայում Հայաստանի և մասամբ հայկական գաղթավայրերի քարտեզը, որը կարծես նախորդի հավելվածն էր: Քարտեզը ճշգրիտ պատկերացում էր տալիս Հայաստանի բնակավայրերի, լեռների, լճերի, դաշտավայրերի, սահմանների վերաբերյալ: Այն շրջափակված է ազգային հերոսների՝ Հայկի, Արամի, Տիգրան Մեծի և Տրդատ III-ի դիմանկարներով, դրա զարդերը՝ դրոշներ, զենքեր և երաժշտական գործիքներ են, որոնք խորհրդանշում են ապստամբություն, զինված պայքար և խաղաղ կյանք: Քարտեզը նպաստելու էր հայ երիտասարդության հայրենասիրական դաստիարակությանը և նրան ոգեշնչելու էր ազատագրական պայքարում: 1786 թ. «Նոր տետրակի»՝ Հայաստանի պատմությանն ու աշխարհագրությանը վերաբերող հատվածը Վառամ Վահանովը թարգմանել է ռուսերեն և 2 հազար տպաքանակով հրատարակել Ս. Պետերբուրգում: Գրքի հրատարակությանը նպաստել են իշխան Գ. Պոտյոմկինը, զորավարներ Ա. Սուվորովը, Մ. Կուտուզովը և ուրիշներ: Ակնհայտ է, որ այս հրատարակությամբ մադրասցիները ցանկացել են ռուս հասարակության ուշադրությունը հրավիրել Հայաստանի վրա: Առաջին անգամ է, որ ռուս ընթերցողը մանրամասն ծանոթանում էր հայ ժողովրդի պատմական անցյալին և նրա ներկա քաղաքական կացությանը:

«Նոր տետրակի» հրատարակումից հետո մադրասցիները մեծ ջանքեր թափեցին նրա օրինակները հայ իրականության մեջ տարածելու համար: Նրանք Արցախի մելիքներին ուղարկեցին «Նոր տետրակի» մի քանի օրինակ, զենք ու զինամթերք, ռազմական գրականություն՝ միաժամանակ նրանց կոչ անելով ապստամբել պարսկական տիրապետության դեմ: «Նոր տետրակի» օրինակներ ուղարկվեցին նաև Գանձասարի կաթողիկոսին, Հերակլ II-ին և Ամենայն Հայոց կաթողիկոս Սիմեոն Երևանցուն: Հայոց հովվապետի վերաբերմունքը մադրասցիների գործունեության և այս հրատարակության նկատմամբ միանշանակ բացասական էր: Պատասխան նամակներում կաթողիկոսը խիստ հանդիմանում էր Շ. Շահամիրյանին և հորդորում վերջ տալ այդ ամենին, դադարեցնել մելիքներին վտանգավոր նամակներ գրել: Նա նաև կարգադրում է փակել տպարանը, այրել «Նոր տետրակի» ամբողջ տպաքանակը, իսկ Մ. Բաղրամյանին հեռացնել իրենց միջավայրից: Կաթողիկոսական հատուկ կոնդակով Սիմեոն Երևանցին բանադրում է Մ. Բաղրամյանին և սպառնում նույնն անել նաև Մադրասի խմբակի մյուս անդամներին, եթե նրանք վերջ չտան իրենց «վնասավոր» գործունեությանը:

Կաթողիկոսի սպառնալիքները, սակայն, անզոր եղան կասեցնելու Մադրասի քաղաքական խմբակի լուսավորական ու հասարակական-քաղաքական գործունեությունը:

Մադրասի քաղաքական խմբակի մյուս կարևոր հրատարակությունը «Որոգայթ փառաց» երկասիրությունն է: Գիրքը բաղկացած է երկու մասից՝ ներածությունից, այսինքն պատմական-տեսական մասից, և Հայաստանի ապագա հանրապետության սահմանադրության նախագծից: Գրքի տիտղոսաթերթին, որպես հրատարակության թվական, նշված է 1773 թվականը և հեղինակի՝ Հ. Շահամիրյանի անուն ազգանունը: Պարզված է, որ գրքի պատմական-տեսական մասը գրվել է 1773 թվականին, իսկ բուն սահմանադրությունը՝ 1780-ական թթ. կեսերին: Ամբողջ գիրքը տպագրվել է 1788-1789 թթ. ընթացքում: Գրքի իսկական հեղինակը, ինչպես ասվեց, Շ. Շահամիրյանն է, թեև դրա ստեղծմանն իրենց մասնակցությունն են բերել նաև Հ. Էմինն ու Մ. Բաղրամյանը, իսկ մինչև 1774 թ., մինչև մահը՝ նաև Հակոբ Շահամիրյանը: Շ. Շահամիրյանը գիրքն ամբողջովին վերագրել է վաղամեռիկ որդուն՝ նրա հիշատակն անմահացնելու համար:

«Որոգայթ փառացի» առաջին մասում արվում են ընդհանուր բնույթի մի շարք հետաքրքիր դատողություններ: Այստեղ Շ. Շահամիրյանը վճռականորեն մերժում է կառավարման միապետական եղանակը և հիմնավորում օրենքի թագավորության

գաղափարը: Նա այն միտքն է զարգացնում, որ մարդիկ բնությունից հավասար են ծնվում և հետևաբար պետք է ունենան հավասար իրավունքներ: Մարդիկ պետք է թագավորեն միայն բնության և ոչ թե բանական արարածների վրա: Մարդկանց վրա թագավորելու են օրենքները՝ չեչտելով իրենց բնածին և բնական իրավունքները՝ ազատությունը և հավասարությունը: Օրենքները պետք է հավասարապես անհրաժեշտ ու պարտադիր լինեն բոլորի համար՝ մարդկանց օժտելով միանման իրավունքներով: Որևէ օրենք ընդունելուց առաջ պետք է լայն քննարկման դրվի և ապա միայն ընդունվի ձայների պարզ մեծամասնությամբ: Հեղինակը մերժում է ազնվականության և եկեղեցու դասային արտոնությունները, ճորտատիրությունն ու կախման մյուս ձևերը: Անհրաժեշտ է ստեղծել այնպիսի իշխանություն, որն արտահայտի ընդհանուրի կամքը, գրում է Շահամիրյանը, և որի գործողությունների մեջ դրսևորվի հասարակական շահը: Հետևաբար, ժողովուրդը պետք է հսկողություն սահմանի պետության գործունեության վրա: Նրան պետք է իրավունք վերապահվի փոխելու այն կառավարությունը, որը չի արտահայտում հասարակության պահանջները: Պետական կազմակերպության լավագույն ձևը հեղինակը համարում է հանրապետությունը և գտնում, որ միայն այդպիսի իշխանության դեպքում կլինի արդարություն և առաջադիմություն:

«Որոգայթ փառացի» առաջին մասում հեղինակը կոչ է անում իր հայրենակիցներին ելնել ազատագրական պայքարի և վերականգնել հայկական պետականությունը: Դա հայերի «բնական իրավունքն է», և նրանք պարտավոր են դա անել, հակառակ դեպքում կվերածվեն ճորտերի մի խաժամուժի:

«Որոգայթի» երկրորդ մասը ազատագրված Հայաստանի Հանրապետության հասարակական-քաղաքական կառուցվածքի ծրագիրն է: Սահմանադրության նախագիծը ունի 521 հոդված: Այն ներկայացնում է ապագա Հայաստանի պետական կառուցվածքը, կառավարման մարմինների ստեղծման կարգը, նրանց իրավասությունները, քաղաքացիների իրավունքներն ու պարտականությունները: Առանձին հոդվածներ են նվիրված տնտեսության, ֆինանսների, լուսավորության, առողջապահության, դատարանի, ընտանիքի, զինված ուժերի կազմակերպման

հարցերին և այլն: Ըստ «Որոգայթի» Հայաստանի Հանրապետության և՛ օրենսդրական, և՛ գործադիր մարմինները պետք է լինեն ընտրովի: Հեղինակը տեսականորեն հիմնավորում է այն միտքը, թե ամբողջ իշխանությունը ելնում է ժողովրդից, պատկանում է ժողովրդին ու հաշվետու է նրան:

Հայաստանի Հանրապետության օրենսդիր գերագույն մարմինը «Հայոց տունն» է (խորհրդարան, պառլամենտ), որի տանուտերների (պատգամավորներ) ընտրությունը լինելու է երկաստիճան, առանց որևէ ցենզի, երեք տարին մեկ անգամ: «Հայոց տունն» ունենալու է իր նախագահությունը՝ կազմված տասնչորս տանուտերներից, որոնցից մեկն ընտրվում էր նախարար (նախագահ), իսկ մյուսը՝ Հայր Հայաստանյայց: Վերջինս ժամանակավոր պաշտոն էր, որի պարտականությունն էր ընդունել նախարարի և տանուտերների երդումը: Նախարարը միաժամանակ գլխավորելու է Հանրապետության բարձրագույն գործադիր մարմինը՝ նախարարությունը (մինիստրների խորհուրդ), որը բաղկացած է լինելու նախարարից և տասներկու խորհրդակիցներից (տեղակալներ, մինիստրներ): Նախարարությունը պետք է ենթարկվի և հաշվետու լինի «Հայոց տան» առջև: Նախարարը օրենքների առաջին կատարողն է, զորքերի գլխավոր հրամանատարը: Նրան է վերապահվում պատերազմ հայտարարելու և հաշտություն կնքելու իրավունքները: «Հայոց տան» որոշումները չկատարող անբարեխիղճ նախարարը հեռացվում է պաշտոնից, իսկ նրա փոխարեն նշանակվում է խորհրդակիցներից մեկը:

Հայաստանի Հանրապետության բոլոր քաղաքացիները օրենքի առաջ հոչակվում են հավասար, վերացվում են դասային աստիճանները, նրանք ունենալու են խոսքի, անձի, դավանանքի և գործունեության լիակատար ազատություն՝ «յուրաքանչյուր ոք կարող է ազատապես խորհել, խոսել և գործել»: Թեև Հանրապետության բոլոր ժողովուրդները հոչակվում են հավասար և ապահովվում է նրանց դավանանքի ազատությունը, բայց Առաքելական դավանանքին պատկանող հայերը հանդես են գալիս որպես տիրապետող ազգ և օգտվելու են մի շարք արտոնություններից: Այսպես, զեկավար բոլոր պաշտոններում կարող են ընտրվել, ինչպես նաև հողի սեփականատեր լինել

միայն Առաքելական դավանանքին պատկանող հայերը և այլն: Աղքատներին, ծերերին ու հաշմանդամներին պետության կողմից տրվելու է պարտադիր բժշկական ու նյութական օգնություն:

Սահմանադրության նախագիծը խրախուսում է մասնավոր ձեռներեցությունը, արհեստագործությունը, առևտրի զարգացումը: Մասնավոր սեփականությունը հայտարարվում է սրբազան և անձեռնմխելի: Կրթությունը պարտադիր է հանրապետության դպրոցական տարիքի երկսեռ բոլոր երեխաների համար: Գյուղերում և քաղաքներում պետք է հիմնվեն դպրոցներ: Գիր ու գրականությունից բացի դպրոցներում պարտադիր պետք է ուսուցանեն ռազմագիտություն: Եկեղեցին բաժանվում էր դպրոցից, դպրոցը՝ եկեղեցուց: Շ. Շահամիրյանը մեծ ուշադրություն է դարձնում գիտությանը և մշակույթին. ««Հայոց տունը»,- ասված է սահմանադրությունում,- պետք է ըստ ամենայնի հովանավորի արվեստը, հատկապես փիլիսոփայությունը, աստղաբաշխությունը, բժշկությունը, երաժշտությունը, ճարտարապետությունը»:

«Որոգայթի» հեղինակը մեծ ուշադրություն է դարձրել երկրի ռազմական ուժերին: Հանրապետության քսան տարին լրացած բոլոր քաղաքացիները պետք է տիրապետեն ռազմական արվեստը, բայց բանակ զինակոչվելու են վիճակահանությամբ՝ յուրաքանչյուր հարյուր երիտասարդից հինգը, յոթ տարի ժամկետով: Հայաստանը պետք է ունենա 90 հազարանոց մշտական զորք (69 հազարը՝ հետևակ, 21 հազարը՝ հեծելազոր): Խստագույնս արգելվում է Հայաստանից զենք արտահանել, երկիր ներմուծվող զենքի համար մաքս չի գանձվելու: Դատարանը լինելու է եռաստիճան՝ 1. Մայր կամ բարձրագույն, 2. Մնայուն, 3. Երդվյալների դատարան: Դատավարությունը լինելու է բաց, այն ընթանալու է գրավոր, մեղադրյալն ունենալու է դատապաշտպան:

«Նոր տետրակ, որ կոչի հորդորակ» և «Որոգայթ փառաց» երկասիրությունները հայ հասարակական-քաղաքական գաղափարաբանության ամենափայլուն դրսևորումներից են, որոնք բացառիկ ազդեցություն ունեցան հետագա չրջանի հայ ազատագրական ու հասարակական մտքի զարգացման վրա:

6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ XVIII ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

ա. Մովսես Սարաֆյանի ծրագիրը: XVIII դարի երկրորդ կեսին հայ ազատագրական գաղափարախոսության մշակման գործում առանձնահատուկ դեր են կատարել ռուսահայ գաղթավայրերը: Ինչպես հայտնի է, նույն դարի 20-ական թվականներին Ռուսաստանը, միջազգային անբարենպաստ պայմաններից ելնելով, չկարողացավ անմիջական ռազմական օգնություն ցույց տալ հայկական ազատագրական չարժմանը: Փոխարենը ռուսական կառավարությունը ամբողջ XVIII դարի ընթացքում արտոնություններ էր չնորհում Ռուսաստան գաղթել ցանկացող հայերին՝ նրանց ցույց տալով ամեն տեսակ աջակցություն: Հայտնի են հատկապես Եկատերինա II-ի հրովարտակները, որոնցով Ռուսաստանում բնակվող հայերին տրվում էին տնտեսական և իրավական կարևոր առանձնաչնորհումներ: Ռուսաստանի նման քաղաքականությունը բխում էր սեփական տնտեսական և ռազմա-քաղաքական չահերից: Հայերի միջոցով զարկ էր տրվում երկրի տնտեսությանը, մասնավորապես՝ արտաքին առևտրին և արդյունաբերությանը, յուրացվում էին հարավային սակավաբնակ տարածքները, պայմաններ ստեղծվում Ռուսաստանի սահմանները դեպի Անդրկովկաս ընդարձակելու ուղղությամբ:

XVIII դարի կեսերին տնտեսական ու մշակութային մեծ վերելք էին ապրում Ղզլարի, Մոզդոկի, Աստրախանի, իսկ դարի վերջերին՝ Մոսկվայի, Ս. Պետերբուրգի, Նոր Նախիջևանի, Գրիգորիուպոլսի և մյուս հայկական գաղթավայրերը: Ռուսահայ վաճառականության ու նորելուկ արդյունաբերողների ձեռքում կենտրոնանում էր հսկայական ֆինանսական կապիտալ, որի միջոցով նրանք փորձում էին ինչ-որ չափով ներազդել Ռուսաստանի արտաքին քաղաքականության վրա:

1768 թ. նոյեմբերին սկսված ռուս-թուրքական պատերազմը լրացուցիչ թափ հաղորդեց հայ ազատագրական ոգորումներին: Ռուսական դիվանագիտությունը, ոչ առանց միտումի, լուրեր էր տարածում, թե պատերազմի հիմնական նպատակներից մեկը քրիստոնյա ժողովուրդների ազատագրումն է: Ռուսական

գործակալները մեծ ծավալի աշխատանք էին տանում հույների և սլավոնների շրջանում՝ նրանց Թուրքերի դեմ ապստամբեցնելու համար: 1769 թ. կեսերին լուրեր տարածվեցին նաև այն մասին, թե ռուսական էքսպեդիցիոն զորքերը շուտով մտնելու են Անդրկովկաս և այստեղից արշավելու են Թուրքիա:

Կովկասյան տարածաշրջանում Ռուսաստանի արտաքին գործուն քաղաքականությունը, սկսված ռուս-թուրքական պատերազմը և Անդրկովկասում Թուրքիայի դեմ ռազմական գործողություններ ծավալելու հեռանկարը նոր հույսեր էին ներշնչում ռուսահայերին, թե շուտով հնարավոր կլինի ազատագրել Մայր Հայրենիքը և վերականգնել հայկական անկախ պետականությունը: Այդ նոր հույսերի արտահայտությունն էր նաև աստրախանաբնակ մեծահարուստ ձեռնարկատեր, խոշոր վաճառական Մովսես Սարաֆյանի կազմած Հայաստանի ազատագրության ծրագիրը:

Մ. Սարաֆյանը ծագումով պարսկահայ էր: Պարսկաստանում և Թուրքիայում նա զբաղվել էր առևտրով: 1760-ական թվականների սկզբներին, իր շատ հայրենակիցների նման, բնակություն էր հաստատել Աստրախանում: Այստեղ զբաղվել էր մետաքսագործությամբ, 1763 թ. հիմնել մետաքսի ֆաբրիկա, իսկ Կասպից ծովի Աստրախանի առափնյա տարածքներից մեկում՝ նավաշինարան: Նա սերտ կապեր ուներ ռուսական կառավարական շրջանակներում և անգամ արքունիքում: Մ. Սարաֆյանն իր ծրագիրը կազմել էր ռուսահայ բուրժուազիայի այնպիսի ազդեցիկ ներկայացուցիչների գիտությամբ, ինչպիսիք էին ֆաբրիկատերեր Գրիգոր Կամպանյանը, Հովհաննես Լազարյանը և ուրիշներ: Փաստորեն այս ծրագիրն արտահայտում էր վաճառականության շահախնդրությունները և որոշակի աղերս ուներ Հովսեփ Էմինի ծրագրերի հետ:

Հայաստանի ազատագրության իր ծրագիրը Մ. Սարաֆյանը 1769 թ. մայիսի 8-ին ներկայացնում է Ռուսաստանի արտաքին գործերի կոլեգիային: Բացի ներածությունից և հետգրությունից, ծրագիրը բաղկացած էր 14 հոդվածից: Ծրագրի համաձայն Թուրքիայի դեմ պետք է պատերազմ սկսեին Քարթլիի և Կախեթի թագավորներ Հերակլ II-ն ու Սողոմոնը: Ռուսական կառավարությունը աջակցելու էր վրաց թագավորներին, նրանց ցույց էր տրվելու ռազմական նշանակալի օգնություն: Ռուսաստանում բնակվող հայերից կազմվելու էր կամավորական բանակ՝ հայ զորավարի հրամանատարությամբ: Այդ բանակը, որին միանալու էին նաև Արցախի մելիքների զինված ուժերը, ուղարկվելու էր Վրաստան: Այստեղից ռուս-հայ-վրացական միացյալ բանակը ներխուժելու էր Արևելյան Հայաստան և ազատագրելու էր Երևանը: Ապա երկու ուղղություններով՝ Երևան-Բայազետ-Վան և Ախալցխա-Կարս-Կարին, միացյալ բանակը ռազմական գործողություններ էր սկսելու Թուրքիայի դեմ և ազատագրելու էր ամբողջ Արևմտյան Հայաստանը: Սարաֆյանի կարծիքով Թուրքիայի ռազմական ուժերն ու հնարավորությունները չպետք է գերագնահատվեն, քանզի նրա բանակն անկարգապահ էր, ոչ կանոնավոր: Մ. Սարաֆյանը Հայաստանի ազատագրության գործը հիմնականում վերապահում էր հայերին, որոնք չպետք է բավարարվեին միայն ռուսներին համակրողների դերով, այլ ցուցաբերելու էին անհրաժեշտ կամք՝ ինչպես Արևելյան, այնպես էլ Արևմտյան Հայաստանում ստեղծելու կամավորական ջոկատներ, որոնք միանալու էին ազատարար բանակին: Հայերը նյութական ու ռազմական բոլոր միջոցները հավաքագրելու էին հանուն հայրենիքի ազատագրության: Ռուսական և վրացական բանակների ռազմական ամբողջ ծախսերը նույնպես հոգալու էր հայկական կողմը: Ազատագրված բոլոր բնակավայրերը պետք է տային ռազմատուրք. վճարելու էին ոչ միայն մահմեդականները, այլև՝ հայերը: Անհրաժեշտության դեպքում վերցվելու էր նաև հայկական եկեղեցիների ու վանքերի թանկարժեք սպասքը: Առանձնապես մեծ գումարներ պետք է տրամադրեր հայ վաճառականությունը:

Ծրագրի համաձայն պատերազմի հաջող ավարտից հետո Ռուսաստանի հովանավորության ներքո վերականգնվելու էր Հայկական պետականությունը և Արցախի մելիքներից մեկը նշանակվելու էր Հայաստանի թագավոր: Հայկական թագավորության և Ռուսաստանի միջև կնքվելու էր հատուկ պայմանագիր, ըստ որի հայերը համարվելու էին Ռուսական կայսրության դաշնակիցներ: Անհրաժեշտության դեպքում կողմերն օգնելու էին միմյանց: Ռուսաստանը հայերին պաշտպանելու էր Թուրքերի ոտնձգություններից, իսկ հայերը զորք էին տրամադրելու

Ռուսաստանին՝ պահանջի դեպքում:

Մ. Սարաֆյանի ծրագիրը ներկայացվեց Ռուսաստանի արտաքին գործերի կոլեգիայի պետ կոմս Ն. Պանինին, որը, սակայն, պատշաճ ուշադրություն չդարձրեց այս ուշագրավ փաստաթղթին: Նրան հետաքրքրեց միայն այն հանգամանքը, որ Կովկասում թուրքերի դեմ ապագա ռազմական գործողությունների ժամանակ կարելի էր օգտագործել նաև հայերի զինական ուժերը:

Այդուհանդերձ, Մ. Սարաֆյանի ծրագիրը հայ ազատագրական շարժման պատմության ուշագրավ էջերից է և օգտակար եղավ հետագա ծրագրերի մշակման ժամանակ:

բ. «Հյուսիսային» ու «Հարավային» նախագծերը: XVIII դարի 70-ական թվականների վերջերին և 80-ական թվականների սկզբներին Ռուսաստանի արտաքին քաղաքականության գերխնդիրն է դառնում Անդրկովկասն ու Կասպից ծովի ափերը գրավելը: Ապագա արշավանքը գլխավորելու էր զորավար Ա. Սուվորովը: Հայաստանին վերաբերող հարցերը քննելու, ճշգրտելու, հայերին խրախուսելու, նրանց ռուսների ռազմական արշավանքին մասնակից դարձնելու և պարսիկների դեմ համատեղ ռազմական գործողությունների մանրամասները ճշգրտելու համար 1780 թ. հունվարին Ս. Պետերբուրգում հրավիրվում է մի խորհրդակցություն, որին մասնակցում են Գ. Պոտյոմկինը, Ա. Սուվորովը, Ի. Գորիչը, Հ. Լազարյանը, Հ. Արղության-Երկայնաբազուկը: Հայերի այն հարցին, թե հնարավո՞ր է արդյոք արշավանքի միջոցով «նորոգել Մեծն Հայաստանը», այսինքն՝ վերականգնել Հայկական թագավորությունը, Պոտյոմկինը հուսադրում է, թե «կարելի է», միայն անհրաժեշտ է, որ Հայոց կաթողիկոսը հայերին օգնելու խնդրանքով դիմի ռուսաց կառավարությանը:

1781 թ. սեպտեմբերի 2-ին Արցախի մելիքները օգնության աղերսով նամակ են հղում Եկատերինա II կայսրուհուն, որով խնդրում են Սուվորովի հրամանատարությամբ 10 հազարանոց ռուսական զորամաս ուղարկել Արցախ և հայտնում, թե իրենք պատրաստ են ապստամբելու: Մեկ այլ նամակով (մարտ, 1783 թ.) մելիքները կայսրուհուն խնդրում են փութացնել ազատարար արշավանքը և հայտնում են, որ Արցախն ի վիճակի է

պարենով ապահովել ռուսական բանակը: Նույն այդ ժամանակ ռուսական գործակալ Յա. Ռայնեգսը բանակցություններ է վարում Ամենայն Հայոց կաթողիկոս Ղուկաս Ա Կարնեցու հետ, որի արդյունքում Ս. Էջմիածնում հրավիրվում է մի հերթական գաղտնի խորհրդաժողով: Նորությունն այն էր, որ խորհրդաժողովին մասնակցում էր ռուսական կողմի ներկայացուցիչը: Խորհրդաժողովը դիմումնագիր է հղում կայսրուհուն և խնդրում նրա հովանավորությունն ու բարեհաճությունը: Առաջարկվում էր Հայաստան ուղարկել որոշ քանակությամբ զորք, որը եթե անգամ չմասնակցեր որևէ ռազմական գործողության, միայն իր ներկայությամբ կարող էր բազմապատկել հայերի քաջությունը:

Ռուսական արշավանքը նախատեսվում էր սկսել 1783 թ. գարնանը: Սուվորովի փոխարեն այն պետք է գլխավորեր իշխան Գ. Պոտյոմկինի ազգական գեներալ Պ. Պոտյոմկինը: Վերջինս հրահանգ էր ունենալու գրավել մերձկասպյան շրջանները, Անդրկովկասի պարսկական խանությունները և ռուսական հովանավորության ներքո ստեղծել հայկական պետություն: Բայց ռուսական զորքերի նախատեսվող արշավանքն այս անգամ ևս հետաձգվեց անորոշ ժամանակով:

Հայոց ազատագրության ջատագովների համար կարևոր նշանակություն ունեցավ 1783 թ. հուլիսի 24-ին Հյուսիսային Կովկասի Գեորգիևսկ ամրոցում Ռուսաստանի և Վրաստանի միջև կնքված պայմանագիրը, որի համաձայն Վրաստանը մտնում էր Ռուսաստանի հովանավորության ներքո: Վրաց թագավորը հրաժարվում էր ինքնուրույն արտաքին քաղաքականություն վարելուց և հավատարմության երդում էր տալիս կայսրուհուն: Անմիջապես ռուսական մի զորամաս ժամանեց Վրաստան, որը մշտապես պետք է բանակեր Թիֆլիսում:

Գեորգիևսկի պայմանագիրը փրկություն եղավ Վրաստանի համար: Հյուսիսային Կովկասի բազմազան ցեղերի մշտական ասպատակություններին և հարևան բռնապետական երկրների արշավանքների վտանգին ենթակա երկիրը, վերջապես, ձեռք բերեց խաղաղ ու անվտանգ ապրելու բարենպաստ պայմաններ: Մյուս կողմից պայմանագիրը ուժեղացրեց Ռուսաստանի ազդեցությունը Անդրկովկասում և խթանեց հայ ազատագրական ոգորումների հետագա ծավալումը: Այս իրադարձության անմիջական արձագանք պետք է համարել Ստեփան Տեր-Սա-

հակյանի բանագնացությունը Ռուսաստան: 1784 թ. ամռանը Երևանի հայերի ներկայացուցիչ Ս. Տեր-Սահակյանը, որ ռուսական զինվորական շրջանակներում հորջորջվում էր իբրև «Արարատյան դեսպան», Հ. Լազարյանի և Հ. Արղության-Երկայնաբազուկի անձնական միջնորդությամբ ընդունելության է արժանանում ռուսական արքունիքում և կայսրուհուն ներկայացնում Ռուսաստանի հովանավորության ներքո անցնելու վերաբերյալ հայերի խնդրագիրը:

Հայ ազատագրական ձգտումների այս հերթական աշխուժացման շրջանում է, որ Հայաստանն ազատագրելու և Հայկական պետականությունը վերականգնելու խնդիրը դառնում է առավել քան իրական ու մոտալուտ: Շարժման գործիչները մշակում և ռուսական կառավարությանն են ներկայացնում Հայաստանի ազատագրության և հայ-ռուսական դաշնագրի երկու նախագիծ: Նախագծերից մեկը՝ «Կերպ դաշնադրության ի մեջ երկու ազգաց՝ Ռուսաց և Հայոց» խորագրով, որը հայտնի է նաև «Հյուսիսային ծրագիր» անունով, 1783 թ. հեղինակել էր Հովսեփ արքեպիսկոպոս Արղության-Երկայնաբազուկը (1743-1801): Նա ժամանակի աչքի ընկնող ամենահեղինակավոր հայ հոգևորականներից էր, սերում էր հինավուրց ազնվականական ընտանիքից, որի տիրույթները գտնվում էին Լոռիում: 1773 թ. Հովսեփ եպիսկոպոսը նշանակվել էր ռուսահայոց հոգևոր թեմի առաջնորդ և կարևոր դեր էր խաղում Ռուսաստանի արևելյան և մասնավորապես կովկասյան քաղաքականության մշակման գործում: Նա եղել է 1783 թ. Գեորգիևսկի պայմանագրի նախաձեռնողներից մեկը:

«Հյուսիսային ծրագրի» կազմմանը անմիջական մասնակցություն է ունեցել նաև հայ ազատագրական շարժման նշանավոր գործիչ, Ռուսաստանի իսկական պետական խորհրդական Հովհաննես Լազարյանը (1735-1801): Նա սերում էր մեծահարուստ վաճառականական ընտանիքից, որը 1747 թ. Նոր Ջուղայից տեղափոխվել էր նախ՝ Աստրախան, ապա՝ Մոսկվա, և կարճ ժամանակամիջոցում դարձել Ռուսաստանի ամենահարուստ կալվածատեր-արդյունաբերողներից մեկը: 1774 թ. Լազարյան ընտանիքին շնորհվում է ռուսական ժառանգական ազնվականի տիտղոս: Լազարյանները չափազանց մոտ էին արքունիքին և որոշակի ազդեցություն ունեին Ռուսաստանի

արևելյան քաղաքականության մշակման գործում:

«Հյուսիսային ծրագրի» նախագիծը, որ բաղկացած էր 18 հոդվածից, արքունիքին ներկայացվեց 1783 թ.: Նախագծի համաձայն ռուսական զինված ուժերի միջոցով Հայաստանն ազատագրվելու էր պարսկա-օսմանյան տիրապետությունից և վերականգնվելու էր Հայկական թագավորությունը: Հայաստանն ազատագրվելուց հետո Հայոց թագավորի ընտրության իրավունքը վերապահվում էր ռուսաց կայսրուհուն, որը կարող էր թագավոր ընտրել կա՛մ հայերից, կա՛մ մերձավոր պալատական ռուսներից: Երկրորդ դեպքում ծրագրի հեղինակն ակնարկում էր նշանավոր իշխան Գ. Պոտյոմկինին, որն անմիջականորեն զբաղվորում էր Ռուսաստանի կովկասյան քաղաքականության կենսագործումը և ի մոտո ծանոթ էր հայկական գործերին: Անկախ ազգությունից՝ Հայոց թագավորը պետք է դավաներ հայոց կրոնը, օծվեր Ս. Էջմիածնում և երկիրը կառավարեր հայկական օրենքներով: Հայկական թագավորությունն ունենալու էր իր զինանշանը, դրոշը, պատվո նշանները, հատելու էր սեփական դրամ: Մայրաքաղաքը պետք է լիներ Վաղարշապատը կամ Անին և կամ Արարատյան նահանգի որևէ այլ նշանավոր բնակավայր: Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրությունը կատարվելու էր Հայոց թագավորի առաջարկությամբ: Հայ նախարարական և իշխանական տների ներկայացուցիչները կարող էին հետ ստանալ իրենց ժառանգական տիրույթները: Թեև առանձին կետով նշված էր, որ Հայկական թագավորությունում չպետք է լինեն ճորտեր, ճորտական կարգեր, բայց պահպանվելու էին մուլքադարական հարաբերությունները, երբ կարելի էր նվիրել կամ վաճառել ամբողջ գյուղեր՝ բնակիչներով, հողով ու ջրով:

Հայկական թագավորությունն ու Ռուսական կայսրությունը միմյանց հետ կապված էին լինելու հավիտենական բարեկամությամբ: Բայց Հայաստանը վասալական կախման մեջ էր գտնվելու Ռուսաստանից՝ ոսկով և արծաթով վճարելու էր հարկ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ տրամադրելու էր զինված ուժեր: Ռուսական ռազմական մի ջոկատ՝ ռուս գեներալներից մեկի հրամանատարությամբ, մշտապես գտնվելու էր Հայաստանում՝ երկիրը Թուրքիայի և Պարսկաստանի հարձակումներից պաշտպանելու համար: Հայոց թագավորի ժառանգներից մեկը պետք է մնար ցարական արքունիքում և լինելու էր Հա-

յաստանի ներկայացուցիչն այնտեղ: Ռուսաստանի և Հայաստանի միջև կնքվելու էր առևտրական պայմանագիր: Առևտրի համար Ռուսաստանը Կասպից ծովի ափին Հայաստանին էր տրամադրելու մի նավահանգիստ, որը լինելու էր Հայաստանի սեփականությունը:

Ըստ Հ. Արղության-Երկայնաբազուկի մշակած Հայաստանի ազատագրության «Հյուսիսային ծրագրի»՝ ազատագրված Հայաստանը գտնվելու էր Ռուսաստանի գերիշխանության ներքո և այստեղ տիրապետող էին լինելու ավատատիրական, միապետական կարգերը:

Հայաստանի ազատագրության «Հարավային ծրագիրը», ինչպես տեսանք, մշակվել էր XVIII դ. 80-ական թվականների կեսերին Շ. Շահամիրյանի կողմից: Այն լիովին բխում էր «Որոգայթ փառացի» սկզբունքներից: Նախագիծը բաղկացած էր 20 հոդվածից: Այս նախագծի համաձայն Հայաստանը ազատագրվելու էր նույնպես ռուսական զորքերի կողմից և դառնալու էր ինքնուրույն պետություն: Հայաստանը հռչակվելու էր հանրապետություն, որի գլուխ կանգնելու էր ազգությամբ հայ և հայ Առաքելական դավանանքին պատկանող նախագահ: Հանրապետությունը կառավարվելու էր հայկական օրենքներով, ունենալու էր խորհրդարան, մշտական դեսպան Ս. Պետերբուրգում: Հայաստանի հանրապետության և Ռուսական կայսրության միջև կնքվելու էր բարեկամական անխախտ պայմանագիր: Հայաստանը պարտավորվում էր Ռուսաստանի բարեկամների հետ լինել բարեկամ, իսկ թշնամիների հետ՝ թշնամի: Որպես բարեկամության, հավատարմության ու հնազանդության նշան, Հայաստանը պարտավորվում էր յուրաքանչյուր տարի Ռուսաստանին վճարել խորհրդանշական հարկ (մոտավորապես 85 գրամ ոսկի և այլն): Կայսեր պահանջով անհրաժեշտության դեպքում Հայաստանը նրա տրամադրության տակ էր դնելու 6 հազար զինվոր և ընդհակառակը՝ ռուսական 6 հազարանոց զորքը՝ «հանուն երկրի պահպանության և հայոց ազգի», տեղակայվելու էր Հայաստանի ամրոցներում և քաղաքներում: Այդ զորամասի ծախսերը հոգալու էր հայկական կողմը: 20 տարվա ընթացքում ռուսական բանակը մաս առ մաս հանվելու էր Հայաստանից: Հայ և ռուս առևտրականները իրավունք էին ստանալու համապատասխան մաքս վճարելով ազատորեն առևտուր

անել երկու երկրներում: Նախագծում հոդվածներ կային նաև իրավաբանական ու կրոնադավանաբանական խնդիրների վերաբերյալ, պարտքերի վճարման մասին և այլն:

Այսպիսով, հայ-ռուսական դաշնադրության Շ. Շահամիրյանի նախագծով Հայաստանը դառնալու էր պառլամենտական կարգերով առաջնորդվող բուրժուական հանրապետություն: Ի տարբերություն «Հյուսիսային ծրագրի», որի համաձայն Հայաստանը որոշակի վասալական կախման մեջ էր գտնվելու Ռուսաստանից, ըստ «Հարավային ծրագրի» Հայաստանի կախվածությունը Ռուսաստանից լինելու էր աննշան ու կրելու էր ձևական բնույթ: Անշուշտ, XVIII դարի վերջերի պատմական պայմաններում Հ. Արղության-Երկայնաբազուկի ծրագիրն ավելի իրատեսական էր և կարող էր ընդունելի լինել ճորտատիրական-միապետական Ռուսաստանի համար: Իսկ Շ. Շահամիրյանի ծրագիրը, թեև առաջադիմական էր, սակայն կտրված էր իրականությունից և փաստորեն մնում էր որպես գեղեցիկ երազանք:

Հայ-ռուսական դաշնագրի այս երկու նախագծերն էլ ներկայացվեցին ցարական արքունիք: Ռուսական կառավարությունը, որ նախապատրաստվում էր արշավելու դեպի Հարավ, ծավալվելու դեպի Անդրկովկաս, անշուշտ որոշակիորեն հետաքրքրվեց այս ծրագրերով, ուստի չարունակեց անորոշ խոստումներ տալ հայերին և ոչ ավելի: Կայսրությունը չէր կարող պայմանագիր կնքել դեռևս գոյություն չունեցող պետության հետ: Ռուս մի բարձրաստիճան պաշտոնյա Հ. Արղության-Երկայնաբազուկին անկեղծորեն ասել է. «Թագավորները միայն կարող են թագավորների հետ դաշինք կնքել, ո՞վ է Ձեր ազգի թագավորը, որ համարձակվում եք դաշինք խնդրել»: Սա ցույց է տալիս, թե հայ գործիչների կեցվածքը որքան ռոմանտիկ էր, հուզական ու անիրական: Եթե հայկական կողմն իր եռանդն ու միջոցները կենտրոնացնում էր խնդրի հոգեբանական, բարոյական հարցադրումների վրա, ապա ռուսական կողմը հաշվենկատ էր, սառնարյուն և առաջնորդվում էր ստեղծված ռեալ իրավիճակով:

Այսպիսով, հայ ազատագրական շարժման գաղափարը, չհասած իր մեծ նպատակին, մնաց որպես ցանկալի երազ մինչև XVIII դարի ավարտը: XIX դարի սկզբներին միայն այդ երազանքը փոխարինվեց Արևելյան Հայաստանը Ռուսաստանի կողմից նվաճվելու ռեալ իրողության:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ
(XVII դարի կես – XVIII դար)

ա. Դպրոցը: *XVII-XVIII դարերի հայկական մշակույթի վերանորոգվող կյանքի ամենաուշագրավ երևույթներից էր դպրոցական կյանքի զարթոնքը: Հայաստանի տարբեր շրջաններում և գաղթավայրերում հիմնվում են մի քանի դպրոցներ, որոնք կարևոր դերակատարումներ ունեցան հայ մշակույթի զարգացման բնագավառում: Նշանավորներից էր Էջմիածնի դպրոցը, ուր դասավանդում էին հմուտ ուսուցչապետներ Ոսկան Երևանցին, Սիմեոն Ջուղայեցին, Ստեփանոս Լեհացին և ուրիշներ: Էջմիածնի դպրոցի նոր վերելքը սկսվում է 1763 թվականից՝ Ամենայն Հայոց կաթողիկոս Սիմեոն Երևանցու ջանքերի շնորհիվ: Համբավավոր էին նաև Բաղեշի Ամիրդոլու վանքի, Կ. Պոլսի Սկյուտար թաղամասի և այլ դպրոցներ:*

Հայ դպրոցի և ընդհանրապես մշակույթի զարգացման բնագավառում վիթխարի է Մխիթար Սեբաստացու (1676-1749) և նրա հիմնադրած Մխիթարյան միաբանության բոլորանվեր դերը: 1701 թ. Մխիթարն իր ութ զաղափարակից աշակերտներով Կ. Պոլսում հիմնադրել է կաթոլիկական միաբանություն՝ նպատակ ունենալով զարկ տալ դպրոցական կյանքին: Երկար դեգերումներից հետո 1717 թ. նա միաբանությունը տեղափոխում է Վենետիկի Ս. Ղազար կղզի, որտեղ շուտով սկսում է գործել նաև վանական դպրոց: Դպրոցի սաները տիրապետում էին բազմաթիվ լեզուների և հիմնավոր գիտելիքներ էին ձեռք բերում: Մխիթարյան միաբանների գիտական ու մանկավարժական աննախադեպ գործունեության արդյունքներից էին քերականական և բառարանագրական երկերը, հայ միջնադարյան հեղինակների գործերի հրատարակությունները, բնագիտական աշխատությունները: Միաժամանակ կազմակերպվում է մատենադարան,

որն արագորեն հարստանում է արժեքավոր ձեռագիր մատյաններով:

Ավելորդ չէ այստեղ մեջբերել անգլիացի ականավոր բանաստեղծ Ջորջ Բայրոնի խոսքերը, որ նա նոթագրել է 1816 թ. Ս. Ղազար այցելելուց հետո. «Այս մարդիկ մի հարստահարված և բարձրատոհմ ազգի կրոնավորներ են, ազգ, որը հրեաների և հույների պես տարագիր է եղել՝ առանց առաջինների ինքնամեկուսացման և վերջինների ստրկամտության: Թերևս դժվար է գտնել մի ազգի տարեգրություն, որն ավելի զերծ լինի արատավոր ոճիրներից, քան հայերինը, որոնց առաքինությունները խաղաղության արգասիք են, իսկ արատները՝ բռնադատման հետևանք»:

բ. Գիտությունը: *XVII-XVIII դարերում նկատելի վերելք է հնարավոր նաև հումանիտար և ճշգրիտ գիտությունների բնագավառներում: Այդ վերելքը մասնավորապես չոչափելի արդյունք է գրանցում պատմագիտական ասպարեզում:*

XVII դարում ինքնատիպ երկերով հանդես են գալիս համաշխարհային տնտեսության մեջ ակնառու դեր խաղացող հայ վաճառականության ներկայացուցիչները: Նրանցից Զաքարիա Ագուլեցին (1630-1691) «Օրագրություն» աշխատությունում գրի է առել իր կյանքի տարեգրությունը, նկարագրել այցելած երկրները, ավանդել արժեքավոր ազգագրական նյութեր: Նորջուղայեցի վաճառական Հովհաննես Ջուղայեցին չուրջ հինգ տարի (1686-1692) ապրել է Տիբեթում, որը երկար ժամանակ փակ էր եվրոպացիների համար, և իր «Հաշվետումարում» նկարագրել է այդ երկրամասի ներքին կյանքի բազում կողմերը:

Առաքել Դավրիժեցին (XVI դ. վերջին տասնամյակ-1670 թ.) հայ պատմագրության նոր վերելքի ժամանակաշրջանի առավել խոշոր հեղինակն է, որի «Պատմությունը» աչքի է ընկնում ժամանակագրության հարցերի նկատմամբ մեծ ուշադրությամբ, նաև թեմատիկ և աշխարհագրական ընդգրկումով: Թեև Առաքել Դավրիժեցու «Պատմությունն» ունի ընդամենը վեց տասնամյակի (1602-1662) ժամանակագրական ընդգրկում, հեղինակը տալիս է ողջ ուշ միջնադարյան ժամանակաշրջանի իրադրության գնահատականը, Օսմանյան Թուրքիայի ու Սեֆյան Պարս-

կաստանի հակահայկական ձեռնարկումների վերլուծությունը: Աշխատության առանցքը կազմում են քաղաքական անցուդարձերը, մասնավորապես Թուրք-իրանական պատերազմների պատմությունը և շահ Աբասի կազմակերպած բռնագաղթը: Հեղինակն անդրադառնում է նաև տնտեսության հարցերին: Հանգամանալից են հայկական գաղթավայրերի մասին վկայությունները: Առաքել Դավրիժեցին առաջին հայ հեղինակն է, որի երկը հրատարակվել է դեռևս նրա կենդանության օրոք (1669 թ., Ամստերդամ):

Առաքել Դավրիժեցու գործի շարունակողը նրա կրտսեր ժամանակակից և աշակերտ Զաքարիա Քանաքեռցին (1627-1699) է: Նա հիմնավոր տեսական պատրաստություն չի ստացել. նրա աշխարհայացքի ձևավորման գործում կարևոր դեր են ունեցել ճանապարհորդությունները Պարսկաստանում և Թուրքիայում: Իր կրթության բացերը Զաքարիա Քանաքեռցին լրացրել է նախորդ պատմագիրների երկերի ընթերցանությամբ: Պատմությունը սկսելով Արշակունիների և Սասանյանների ժամանակներից՝ նա նախընթաց ժամանակներին անդրադառնում է մի քանի էջով: Բուն պատմությունը վերաբերում է գերազանցապես իր ապրած ժամանակաշրջանին: Քանաքեռցու աշխատության համար բնութագրական է ժողովրդական զրույցների արձանագրումը՝ կատարված կենդանի խոսակցական լեզվով: Բանահյուսական նյութերից օգտվելու և դրանց կարևորությունը գիտակցելու տեսանկյունից Զաքարիա Քանաքեռցին բացառիկ երևույթ է ուշ միջնադարյան հայ պատմագրության մեջ:

Հարուստ և բազմազան է Երեմիա Քյոմուրճյանի (1637-1695) գրական-գիտական ժառանգությունը: Քյոմուրճյանը եղել է իր դարաշրջանի ամենակրթված մտավորականներից մեկը, տիրապետել է արևելյան և արևմտյան բազմաթիվ լեզուների: Հեղինակ է կրոնական, պատմական, աշխարհագրական, քարտեզագրական բնույթի մի շարք աշխատությունների: Հայտնի է նաև իր գեղարվեստական երկերով: Նա եռանդուն մասնակցել է ժամանակակիցներին հուզող հասարակական և քաղաքական կարևոր անցքերին, մասնավորապես պայքար է մղել հայոց եկեղեցու միասնականությունը քայքայող գործիչների դեմ,

զգալի օժանդակություն է ցույց տվել ազատագրական առաքելությամբ Կ.Պոլիս ժամանած հայոց կաթողիկոս Հակոբ Դ Ջուղայեցուն: Քյոմուրճյանը բազմաթիվ թարգմանություններ է կատարել հունարենից ու լատիներենից հայերեն և հայերենից Թուրքերեն: Կարևոր է այն փաստը, որ նա Թուրքերեն է թարգմանել իր «Հայոց պատմությունը», որը հարուստ տեղեկություններ է պարունակում Արշակունիների, Բագրատունիների և Կիլիկյան Հայաստանի պատմության վերաբերյալ: Իր հերթին, Օսմանյան Թուրքիայի պատմության վերջին 400-ամյա պատմությանը նվիրված աշխատությունը, ինչպես նաև «Ստամպոլոյ պատմութիւն», «Տարեգրական պատմութիւն» երկասիրությունները շարադրելիս Քյոմուրճյանը օգտագործել է նաև Թուրքական աղբյուրներ: Բացի գիտական նպատակադրում հետապնդող աշխատություններ շարադրելուց նա գիտակցաբար դիմել է հայոց պատմության ժողովրդականացմանը և տարածմանը՝ ձգտելով այդ ճանապարհով բարձրացնել ազգային ինքնագիտակցությունը: Մեծ նշանակություն է տվել հայոց պատմության նշանավոր դրվագների վերապատմմանը և փառաբանմանը, անցյալի նկատմամբ սիրո և հարգանքի դաստիարակմանը: Այդ նպատակով հեղինակել է «Համառօտ հարցմունք և պատասխանիւք» աշխատությունը, որի պարունակած նյութերը առնչվում են հայոց մշակութային և քաղաքական պատմությանը:

XVIII դարում ևս ստեղծվում է պատմագրական մեծարժեք գրականություն: Իրադարձություններն ավանդելու պատկերավոր ոճը, դրանք հանգամանորեն, երբեմն նույնիսկ կենցաղային մանրամասներով հաղորդելու ձգտումը, ընթերցողների հետ հաղորդակցվելու անմիջականությունը բնորոշ են այդ շրջանին, որ գալիս են ավանդական պատմագրությունից: Ժամանակի հայոց կաթողիկոս Աբրահամ Կրետացու Պատմությունը ժանրային առումով ավելի շուտ տպավորությունների անմիջական արձանագրում է՝ օրագրություն, որ ընդգրկում է ընդամենը երեք տարվա ժամանակահատված (1734-1736) և ավարտվում է 1736 թ. Մուղանի դաշտում տեղի ունեցած խուռուլթայի (ժողովի) և Նադիր շահի թագադրության նկարագրությամբ:

Հայոց տնտեսական և մշակութային կյանքում կատարված տեղաշարժերը հող նախապատրաստեցին ազատագրական շարժումների ծավալման համար, որոնք քաղաքական հանգամանքների թելադրանքով լայն թափ ընդունեցին XVIII դ. 20-ական թվականներին: Ուշագրավ է, որ հայ ազատագրական շարժումների պատմությունը ավանդում են այդ շարժումների մասնակից և նույնիսկ ղեկավար գործիչները: Ընդ որում զգալի են տարբերությունները մի կողմից՝ հոգևորականության, մյուս կողմից՝ վաճառականության միջավայրից դուրս եկած գործիչների միջև: Ազատագրական շարժման առաջնորդներից Եսայի Հասան-Ջալալյանը շարադրում է Արցախում կատարված անցուդարձերը XVIII դ. վերջերից մինչև 1723 թվականը: Դժբախտաբար, բացակայում է այն հատվածը, որն անմիջականորեն վերաբերում է ազատագրական կռիվներին:

Հայ ազատագրական շարժման նշանավոր գործիչներից Ստեփանոս Շահումյանը Սյունիքի ազատագրական շարժման պարտությունից հետո տեղափոխվել է Վենետիկ և այստեղ մեծ կարողություն ու բարձր դիրք ձեռք բերել: Նա իր հուշերը թելադրել է Մխիթարյան միաբան Ղուկաս Սեբաստացուն, որը և շարադրել է «Դաւիթ Բէկ կամ Պատմութիւն Ղափանցւոց» աշխատությունը: Երկասիրության մեջ նկարագրված անցուդարձերն ունեն ճշգրիտ ժամանակագրություն, շատ են ճակատամարտերի նկարագրությունները, տեղանունների և անձնանունների հանգամանալից թվարկումները: Եթե փաստերի նկարագրությունները պատկանում են Շահումյանին, ապա դրանց վերլուծությունը և որոշակի գաղափարախոսական ուղղվածությամբ մեկնաբանությունը Ղուկաս Սեբաստացունն է: Այսպիսով, ասպարեզ է եկել մի աշխատություն, որը երկու անձանց համատեղ ջանքերի արդյունք է:

Ստեղծագործական նման համագործակցության արգասիք է նաև Աբրահամ Երևանցու «Պատմութիւն պատերազմացն» աշխատությունը: Հեղինակը երևանցի վաճառական էր, որը շուրջ մեկ տասնամյակ շրջել էր Իրանում ու Թուրքիայում և լավատեղյակ էր այդ ժամանակահատվածի ռազմա-քաղաքական անցուդարձերին: Նա իր աշխատությունը շարադրել է

Երևանի բարբառով և հաղորդում է նաև զանազան կենցաղային ու ազգագրական բնույթի տեղեկություններ: Աշխատությունը պատերազմների պատմություն է, որն սկսվում է 1721 թ. աֆղանների՝ Սպահանի վրա կատարված հարձակումների նկարագրությամբ և ավարտվում է 1736 թ. դեպքերով: Մեծ արժեք է ներկայացնում 1724 թ. Երևանի բնակչության հերոսական պաշտպանությանը նվիրված հատվածը: Աշխատության գրեթե անհասկանալի լեզուն դյուրընկալելի գրաբարի փոխադրողը Վենետիկի Մխիթարյան հայրերից Մատթեոս Եվդոկացին է: Այսպես, Ստեփանոս Շահումյանի և Աբրահամ Երևանցու աշխատությունները կարող էին հրապարակ գալ միայն մշակման ու հղկման փուլով անցնելուց հետո:

XVIII դ. կեսերից հայ ազգային ինքնագիտակցության աճը, հայ ժողովրդի առջև ծառացած խնդիրները հայոց ամբողջական պատմության շարադրման պահանջ էին դնում: Այդ խնդիրը 80-ական թթ. հաջողությամբ իրականացրեց Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ Միքայել Չամչյանը (1738-1823) իր եռահատոր «Պատմութիւն Հայոց» աշխատությամբ: Հայ պատմագիտության մեջ ներմուծվում էին մի քանի կարևոր նորույթներ, որոնք հետագայում ազդելու էին պատմագիտական մտքի զարգացման ողջ ընթացքի վրա: Մեծ ուշադրություն հատկացնելով սկզբնաղբյուրների ճշտության և արժանահավատության բացահայտմանը՝ հեղինակը մանրակրկիտ աշխատանք է կատարել՝ համեմատելով բազմաթիվ ձեռագրեր և ճշգրտելով իրեն անհրաժեշտ երկերի բնագրերը: Նա հանգամանորեն համեմատել է նաև հայկական և օտար սկզբնաղբյուրների վկայությունները ու քննական համադրման ճանապարհով պարզաբանել բազմաթիվ բարդ հարցեր: Սկզբունքային նորություն էր հայոց պատմության ժամանակագրության ստեղծումը: Մշակված այդ ժամանակագրությունն ընկած է հետագա բազմաթիվ աշխատությունների հիմքում և այսօր էլ չի կորցրել իր արժեքը: Չամչյանը, զարգացնելով դեռևս XVIII դ. կեսերին հայտնված գաղափարները, առաջ էր քաշում հայ ժողովրդի պատմական դերի մասին մի նոր տեսություն: Նա փորձում էր հիմնավորել այն տեսակետը, որ Հայաստանը եղել է աստվածաշնչյան

դրախտի գտնվելու վայրը, իսկ հայերենը այն լեզուն է, որից ծագել են մնացած բոլոր լեզուները: Չամչյանի առաջ քաշած գաղափարները ծառայում էին հայերի՝ որպես ուրույն ժողովուրդ հանդես գալու տեսակետի հիմնավորմանը, որից էլ բխում էր իրենց ճակատագիրը անկախ տնօրինելու, ազատագրական պայքարի դուրս գալու նրանց իրավունքը: Միքայել Չամչյանը դարձավ հայոց պատմության նորովի հետազոտության, գիտական մի նոր դպրոցի հիմնադիր, իսկ նրա երկը համազգային տարածում և բարձր հեղինակություն ձեռք բերեց:

XV դ. հայ փիլիսոփայական միտքը հարստացրին նոմինալիստներ Հովհան Որոտնեցին, Գրիգոր Տաթևացին, սակայն երկրի ծանր քաղաքական ու տնտեսական պայմաններում հայ միջնադարյան փիլիսոփայությունն անկում ապրեց, որը տևեց շուրջ երկու դար: Զարգացման նոր շրջանը սկսվեց XVII դ. կեսերին, երբ հրապարակ իջան ականավոր մտածողներ Սիմեոն Ջուղայեցին, Ստեփանոս Լեհացին, Խաչատուր Էրզրումցին: XVIII դ. երկրորդ կեսին իրենց քաղաքական ծրագրերով ու փիլիսոփայական հայացքներով հանդես եկան հայ բուրժուազիայի ներկայացուցիչները, որոնք գործունեություն ծավալեցին հայկական գաղթավայրերում: Հայ հասարակական-քաղաքական ու փիլիսոփայական մտքի պատմության մեջ աչքի ընկնող հետք թողեցին Մադրասի խմբակի անդամներ Շահամիր Շահամիրյանը (1723-1797), Մովսես Բաղրամյանը և Հովսեփ Էմինը (1726-1809): Ազատագրական շարժման այդ նշանավոր գործիչները իրենց առաջադիմական գաղափարների ու քաղաքական բաղձանքների իրականացումը կապում էին գիտության ու լուսավորության տարածման հետ: Շփվելով բուրժուական հայացքների և ուսմունքների հետ ու դառնալով դրանց համակիրներ՝ նրանք ձգտում էին Եվրոպայում տարածում ստացած գաղափարները սերմանել հայ իրականության մեջ, առաջ բերել ազգային-ազատագրական պայքարի մղումներ: Մովսես Բաղրամյանի և Հակոբ Շահամիրյանի «Նոր տետրակ, որ կոչի հորդորակ», Շահամիր Շահամիրյանի «Որոգայթ փառաց» աշխատությունները երևույթ էին հայ հասարակական-քաղաքական մտքի պատմության մեջ:

Հայ ուսումնականները հաղորդակից դարձան նաև եվրոպական գիտական մտքին, թարգմանեցին մի շարք բնագիտական երկեր, շարադրեցին ինքնուրույն աշխատություններ: Այդպիսին էր, օրինակ, մաթեմատիկայի և աստղաբաշխության ասպարեզներում: Դարավերջին, հենվելով եվրոպական գիտության նվաճումների վրա, Իսահակ Ջուղայեցին շարադրում է ցերեկվա և գիշերվա ժամերի տևողության մասին մի աշխատություն: Ղուկաս Վանանդեցու հսկողությամբ 1695 թ. Ամստերդամում հրատարակվում է «Համատարած աշխարհագրություն» հայտնի քարտեզը: Նա նաև արժեքավոր աշխատանքներ է կատարում աշխարհագրական և աստղաբաշխական տերմինաբանության հայացման ուղղությամբ: Հայ ալքիմիկոսների գործնական աշխատանքների ընթացքում բացահայտվեցին զանազան նյութերի մինչ այդ անծանոթ հատկություններ, հայտնագործվեցին ներկեր, թանաքներ, օծանելիքներ ստանալու կատարելագործված եղանակներ: XVIII դ. վերջին Մխիթարյան միաբաններից Սուքիաս Աղամալյանցը և Սահակ Պրոնյանը հրատարակում են թվաբանության և երկրաչափության ձեռնարկներ, լույս է տեսնում Պետրոս Քալանթարյանի բժշկագիտական աշխատությունը, իսկ բժիշկ և բնագետ Ստեփանոս Շահրիմանյանը ձեռնարկում է իր «Տնկաբանութիւն կամ փղորայ (ֆլորա - Հ. Մ.) Հայաստանի» գիտական ծանրակշիռ հետազոտությունը՝ այդ աշխատանքը շարունակելով հաջորդ դարի առաջին տասնամյակների ընթացքում: Այսպիսով, հայ գիտնականները ստեղծում էին ժամանակի գիտության պահանջներին համապատասխանող արժեքներ:

գ. Գրականությունը: XVII-XVIII դդ. հանդես եկան հայ գրականության մի շարք նշանավոր գործիչներ, որոնք ստեղծագործում էին ժամանակի խոշոր մշակութային կենտրոններում՝ Թիֆլիսում և Կ. Պոլսում: Նրանցից Նաղաշ Հովնաթանը տաղանդավոր նկարիչ էր և միաժամանակ երգիչ, երաժիշտ ու բանաստեղծ: Հրավիրվելով վրաց արքունիք որպես պալատական երգիչ ու նկարիչ՝ նա դառնում է բազմաթիվ աշակերտների ուսուցիչ: Նկարչության Հովնաթանյան դպրոցի ավանդույթները հետագայում շարունակում են նրա սերունդները, որոնք բարձր-

արվեստ գործեր են ստեղծում չուրջ մեկուկես դարյա ժամանակաշրջանում: Նաղաշ Հովնաթանի գրական ժառանգության մեջ աչքի են ընկնում սիրո, խնջույքի, քաղաքային կյանքի թեմաներով գրված բանաստեղծությունները: Հայ և առհասարակ կովկասյան աշուղական գրականության ամենակարկառուն ներկայացուցիչը Սայաթ-Նովան (1717-1795) է, որը սերում էր քաղաքային արհեստավորության միջավայրից: Եղել է վրաց արքունիքի պալատական երգիչ. կյանքի վերջին տարիներն անց է կացրել վանական խցում: Լինելով աշուղական երգարվեստի հանճարեղ վարպետ՝ նա միաժամանակ մեծ բանաստեղծ էր, որի ստեղծագործությունների հիմնական նյութը կազմում են սիրո երգերը: Կոստանդնուպոլսում էին ստեղծագործում տաղանդավոր բանաստեղծներ Պաղտասար Դպիրը և Պետրոս Ղափանցին:

դ. Արվեստը: XVII դ. կեսերից, թուրք-իրանական պատերազմների ավարտից հետո, համեմատաբար տանելի պայմաններում չինարարական ծավալուն աշխատանքներ կատարվեցին բուն Հայաստանում: Հատկապես տարածում ստացան եռանավ բազիլիկ եկեղեցիները, որոնք նյութական խոշոր միջոցներ և կառուցողական մեծ վարպետություն չէին պահանջում: Վանքերը հիմնովին բարեկարգվեցին և շրջապատվեցին ամուր պարիսպներով: Առևտրի հարաբերական աշխուժացման թելադրանքով կառուցվեցին բազմաթիվ խոշոր կամուրջներ, որոնցից նշանավոր է մինչև օրս գործող Աշտարակի բազմաթռիչ կամուրջը: XVIII դ. սկզբին, ազատագրական պայքարի ծավալման պայմաններում, կարճատև վերելք ապրեց ամրոցաշինությունը: Պաշտպանական նոր համալիրներ կառուցվեցին, ինչպես նաև նորոգման աշխատանքներ կատարվեցին Արցախում և Սյունիքում:

ե. Տպագրությունը: 1660-ական թվականներին հայ տպագրության ամենանշանավոր կենտրոն է դառնում Ամստերդամը: Այստեղ տպարան է հիմնադրում Մատթեոս Ծարեցին, որին Եվրոպա էր ուղարկել կաթողիկոս Հակոբ Ջուղայեցին: Հայերեն գրքերի տպագրությունը նպատակահարմար էր կազմակերպել բողոքական երկրում՝ Հոլանդիայում, որտեղ, ի տարբերություն Իտալիայի, եկեղեցական գրականություն հրատարակող հայ

տպագրիչները ազատ էին կաթոլիկական գրաքննության վերահսկողությունից: 1664 թ. Մատթեոս Ծարեցու տպարանի ղեկավարությունը ստանձնում է Ոսկան Երևանցին: Նրան էր վիճակված առաջին անգամ իրականացնել հայերեն Աստվածաշնչի բարձրարվեստ հրատարակությունը՝ 1666-1668 թթ.: Ոսկանյան տպարանը այնուհետև տեղափոխվել է Լիվոռնո, ապա՝ Մարսել և գործել մինչև 1680-ական թթ. վերջերը: Այդ տպարանը չուրջ երեք տասնամյակի ընթացքում հրատարակել է ավելի քան 40 անուն գիրք: Ոսկան Երևանցին XVII դ. հայ տպագրության մեծ երախտավորն է:

1685 թ. սկսած՝ Ամստերդամում արդյունավետ գործունեություն է ծավալում Վանանդեցիների տպարանը, որը 1695 թ. առաջին անգամ լույս է ընծայում Մովսես Խորենացու «Հայոց պատմութիւնը»: Տպարանի հրատարակություններից էր Ղուկաս Վանանդեցու «Գանձ չափոյ, կշռոյ, թուոյ եւ դրամից բոլոր աշխարհի» գիրքը, որպես խիստ անհրաժեշտ ուղեցույց-ձեռնարկ հայ վաճառականների համար:

Այնուամենայնիվ, հայկական տպագրությունը չէր կարող ընդլայնվել առանց ազգային միջավայրի օժանդակության, մեծաթիվ ընթերցողների և գնորդների: Ուստի՝ XVIII դ. հայ տպագրությունը գլխավորապես իրականացվում է Կոստանդնուպոլսում: Ականավոր հայ տպագրիչ Գրիգոր Մարգվանեցին այստեղ XVIII դ. առաջին երեք տասնամյակների ընթացքում լույս է ընծայում միջնադարյան հայ մատենագրության բազմաթիվ նշանավոր հուշարձանների բնագրերը: XVIII դ. ընթացքում Կոստանդնուպոլսում գոյություն ունեցող հայկական տպարանների թիվը հասնում է մոտ քսանի:

Միևնույն դարի 70-ական թվականներին տպագրական գործը հաջողություններ է ունենում Հնդկաստանում: Շահամիրյանները տպարան են բացում Մադրասում և հրատարակում «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ», «Որոգայթ փառաց», «Նոր տետրակ որ կոչի նշաւակ» ծրագրային աշխատությունները: Մադրասյան մեկ այլ տպարանում, որի հիմնադիրը Հարություն Շմավոնյանն էր, 1794-1796 թթ. հրատարակվում է առաջին հայերեն պարբերականը՝ «Ազդարարը»: 1781 թ. Գրիգոր Խալդարյանցը

տպարան է բացում Ս. Պետերբուրգում: Ռուսաստանի հայաշատ քաղաքներից տպարաններ էին գործում Նոր Նախիջևանում և Աստրախանում: Վերջապես մայր հայրենիքում հայերեն գրքերի տպագրության դժվարին գործը 1771-1772 թթ. իրականություն է դարձնում ժամանակի Հայոց կաթողիկոս Սիմեոն Ա Երևանցին: Մոտ 300 տարվա ընթացքում հայ տպագրիչները հրատարակեցին շուրջ 1000 անուն գիրք, որը պատկառելի թիվ է, եթե հաշվի առնենք ազգային սուղ հնարավորությունները և տպարանների գործունեության ծանր պայմանները:

Այսպիսով, XV-XVIII դդ. հայկական մշակույթն ունեցավ ինչպես զգալի կորուստներ և ժամանակավոր անկման փուլեր, այնպես էլ հասավ կարևոր նվաճումների ու գիտական-գրական մտքի փայլատակումների: Հայ ժողովուրդը նոր ժամանակների շեմին սերտ կապեր հաստատեց եվրոպական քաղաքակրթության հետ, վերականգնեց իր դարավոր մշակութային ավանդույթները և նախադրյալներ ստեղծեց հետագա վերելքի համար:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ XIX ԴԱՐԻ ՍԿԶԲՆԵՐԻՆ

ա. Վարչական բաժանումները և բնակչությունը: Հայ ժողովուրդը XIX դար ոտք դրեց բաժանված լինելով Պարսկաստանի և Օսմանյան Թուրքիայի միջև: Ժողովրդի մի զգալի մասը ցրված էր աշխարհի տարբեր երկրներում: Հայության երեք հատվածները՝ Արևմտյան Հայաստան, Արևելյան Հայաստան, արտերկիր, գտնվում էին չափազանց ծանր վիճակում և չունեին քաղաքական միասնություն, անգամ՝ դավանական ընդհանրություն: Անընդհատ կրկնվող պատերազմները, ավերիչ ասպատակությունները, դաժան շահագործումն ու կեղեքումները, ազգային ու կրոնական հալածանքները հայ ժողովրդի համար ստեղծել էին դժոխային վիճակ:

Արևելյան Հայաստանը, որ գտնվում էր Պարսկաստանի տիրապետության տակ, բաժանված էր խանությունների, իսկ նրա մի զգալի հատվածը ներառված էր Քարթլի-Կախեթի թագավորության մեջ: Խանություններն էին՝ Երևանի, Գանձակի, Ղարաբաղի, Նախիջևանի և Մակուի: Վրացական թագավորության կազմի մեջ էին Բորչալուն, Լոռի-Փամբակի և Ղազախ-Շամշադինի շրջանները: Խանությունները կառավարում էին պարսկական շահի կողմից նշանակված խանները: Խանությունները բաժանվում էին մահալների (շրջանների): Երևանի խանությունը բաժանված էր 15, Նախիջևանի խանությունը՝ 5, Ղարաբաղի խանությունը՝ 21, Օրդուբադի գավառը՝ 4 մահալների: Մահալները կառավարում էին խանի կողմից նշանակված միրբոլուքները կամ նաիբները: Միրբոլուքներից շատերը նշանակվում էին հայ մելիքներից՝ գլխավորապես Ղարաբաղում և Երևանի խա-

նության որոշ շրջաններում: Երևանի խանության կենտրոնը Երևանն էր՝ որպես վարչական առանձին միավոր, քաղաքի կառավարումը հանձնարարված էր Մելիք-Աղամալյաններին: Խանության մյուս քաղաքները կառավարում էին դարուղաները (ոստիկանապետներ): Գյուղերը կառավարում էին տանուտերները և գյուղական մելիքները, որոնք, որպես կանոն, լինում էին հայեր: Խանություններում պաշտոնները նշանակովի էին, երբեմն՝ ժառանգական կամ ընտրովի:

Արևելյան Հայաստանի որոշ շրջաններում մինչև XIX դ. սկզբները իրենց գոյությունը պահպանել էին նաև հայկական առանձին փոքր իշխանությունները: Դրանցից առանձնապես հայտնի էին Ղարաբաղի, Սյունիքի, Գեղարքունիքի մելիքությունները, Խոյի, Մակուի, Սալմաստի և Մարանդի կիսանկախ իշխանությունները: Այս իշխանությունները չունեին քաղաքական որևէ կշիռ և իրենց հարևան կամ գերակա խանությունների կողմից ենթակա էին անընդհատ հարձակումների ու հարստահարումների:

Պարսիկ կառավարողների կողմից դարեր շարունակ հայերի կրկնվող բռնագաղթեցումների և ուծացման հետևանքով Արևելյան Հայաստանի բնակչությունը խիստ նվազել էր և հասել բացարձակ փոքրամասնության: Թեև ճշգրիտ տվյալներ չկան բնակչության թվաքանակի վերաբերյալ, բայց ակնհայտ է, որ հայահոծ էին միայն Ղարաբաղը, մասամբ՝ Սյունիքն ու Լոռին: Երևանի և Նախիջևանի խանությունների տարածքներում XIX դարի սկզբներին բնակվում էին նաև որոշ թվով քրդեր, թուրքեր, պարսիկներ:

Արևելյան Հայաստանի խանություններից ու շրջաններից բացի մեծաթիվ հայեր էին բնակվում նաև բուն վրացական տարածքներում (Թիֆլիս, Գորի, Սղնախ, Թելավ, Դուշեթ և այլուր): Դարի սկզբներին միայն Թիֆլիսում ապրում էր շուրջ 3 հազար հայ ընտանիք (14.600 մարդ)՝ կազմելով քաղաքի բնակչության բացարձակ մեծամասնությունը: Զգալի թվով հայեր կային հարավարևելյան Կովկասում. Շամախիում՝ 38, Նուխիում՝ 47 հայկական գյուղ: Զգալի թվով հայեր ապրում էին Շաքիում, Բաքվում, Ղուբայում, Դաղստանում և այլուր:

Օսմանյան կայսրության կազմում գտնվող Արևմտյան Հայաստանը վարչականորեն բաժանված էր փաշայությունների՝ Էրզրումի (Կարին), Վանի, Բայազետի, Ախալցխայի, Կարսի, Դիարբեքիրի, Սվազի (Սեբաստիա), Խարբերդի: Կիլիկիան բաժանված էր Ադանայի և Մարաշի փաշայությունների: XIX դարի առաջին կեսին պատմական Հայաստանի տարածքում ստեղծված փաշայությունների մեծ մասը միավորված էր մեկ կուսակալության մեջ, որը կոչվում էր Էրմենիստան՝ Էրզրում կենտրոնով: Փաշայությունները բաժանվում էին սանջակների (գավառների), սրանք՝ կազաների (գավառակների), կազաները՝ նահիեների, իսկ վերջիններս՝ գյուղերի: Փաշայությունները կառավարում էին սուլթանի կողմից նշանակված փաշաները, սանջակները՝ փաշայի կողմից նշանակված բեկերը, կազաները՝ կայմակամները, նահիեները՝ մյուդիրները, իսկ գյուղերը՝ տանուտերները:

Օսմանյան կայսրության տարբեր մասերում իրենց գոյությունը պահպանել էին մի քանի կիսանկախ հայկական իշխանություններ՝ Սասունը, Շատախը, Ճապաղջուրը, Խնուսը, Զեյթունը: Դարեր շարունակ թուրքական իշխանությունները մեծ ջանքեր էին գործադրում կիսանկախ այդ իշխանությունները վերացնելու, բայց դրանց զգալի մասը XIX դարի սկզբներին դեռ շարունակում էր գոյատևել, իսկ Զեյթունը կարծես Կիլիկիայի հայկական պետականության մի պատառիկը լիներ՝ հրաշքով հասած XIX դար:

Արևմտահայ իրականության առանձնահատկություններից մեկն այն էր, որ այստեղ թուրք բնակչության թիվը նվազագույնի էր հասնում, փոխարենը մեծ թիվ էին կազմում քրդերը: Առաջին անգամ քրդերը Արևմտյան Հայաստան թափանցեցին XVI դարի սկզբներին, երբ սուլթան Սելիմ Ահեղի հրավերով մոլլա Իդրիսի բազմահազարանոց աշիրեթը իր պատմական հայրենիքից՝ հյուսիսարևմտյան Պարսկաստանից տեղափոխվեց Օսմանյան կայսրության նորանվաճ հայկական տարածքները: Մինչև XIX դարի սկզբները քրդերն արդեն զգալի ներկայություն ունեին Արևմտյան Հայաստանի հարավային և կենտրոնական նահանգներում (Դիարբեքիր, Բաղեշ, Ոստան, Դերսիմ, Բալու, Բերկրի, Խոշաբ, Մուշ, Սասուն, Խիզան, Զարսանջակ և այլուր): Աստիճանաբար հաստատվելով հայկական նահանգներում՝

քրդերը ժամանակի ընթացքում այստեղից դուրս մղեցին կամ ուծացման ենթարկեցին բնիկ հայ բնակչությանը՝ տեր դառնալով նրա պատմական տարածքներին: Հայկական հողերի վրա նստած աշիրեթապետներն ու բեկերը իրենց միանգամայն անկախ էին զգում Կ.Պոլսից: Քրդացված նախկին հայ զավառները կարծես պետություն էին պետության մեջ: Փաստորեն Արևմտյան Հայաստանի բնիկ հայ բնակչությունը անմիջականորեն չահագործվում և հարստահարվում էր ոչ թե Թուրքերի, այլ, գլխավորապես, քրդերի կողմից:

Բացի քրդերից, Թուրքական իշխանություններն անընդհատ Արևմտյան Հայաստան էին տեղափոխում մահմեդական այլ ցեղերի՝ Թուրքմենների, չերքեզների և այլոց: Չնայած այս հանգամանքին՝ մինչև XIX դարի կեսերը հայերը դեռ կազմում էին Արևմտյան Հայաստանի բնակչության մեծ մասը:

Արևմտյան Հայաստանից և Կիլիկիայից բացի զգալի Թվով հայեր էին բնակվում Օսմանյան կայսրության այլ տարածքներում, գլխավորապես ծովափնյա քաղաքներում և հատկապես մայրաքաղաք Կ.Պոլսում: Թեև ստույգ վիճակագրական տվյալներ չկան, բայց սկզբնաղբյուրների քննական վերլուծության միջոցով կարելի է ենթադրել, որ XIX դարի առաջին երեսնամյակին կայսրությունում ապրում էր ավելի քան երեք միլիոն հայ: Հայ բնակչությունը տեղաբաշխված էր հետևյալ կերպ. 2.5 միլիոնն ապրում էր Հայաստանում և Հայկական Կիլիկիայում, 250 հազարը՝ Կ.Պոլսում (մայրաքաղաքի բնակչության մեկ քառորդը), մնացածը՝ Թուրքիայի հայկական գաղթավայրերում: Մեծ Թվով հայ բնակչություն կար նավահանգստային Իզմիր (Զմյուռնիա) քաղաքում:

բ. Հայ ժողովրդի դրությունը: XIX դարի սկզբին Հայաստանի երկու հատվածներում տիրապետում էին ավատատիրական հարաբերությունները: Հողը գլխավորապես համարվում էր պետական սեփականություն: Գոյություն ունեին նաև մասնավոր, մզկիթապատկան, եկեղեցապատկան և հողատիրության այլ ձևեր: Գյուղացիների որոշ մասը հող չուներ և բերքի 70 տոկոսը հողատիրոջը վճարելու պայմանով էր մշակում: Հայերը ենթարկվում էին ծանր հարկատվության. հարկ էին վերցնում հողից, ջրից, արոտավայրերից, արհեստներից և առևտրից: 15

տարեկանից սկսած՝ բոլոր տղամարդիկ պետք է վճարեին գլխահարկ, իսկ ընտանիքները՝ ծխահարկ: Հայերը հարկ էին վճարում նաև իրենց էթնիկ ծագման ու կրոնի համար: Հարկերը, որոնց թիվը հասնում էր 40-ի, վճարում էին բնամթերքով կամ դրամով: Բացի դրանցից հայ բնակչությունը մահմեդական տիրակալների համար կատարում էր ձրի, պարտադիր աշխատանքներ՝ բեգար և կոռ:

Հայը իրավահավասար քաղաքացի չէր, նա չէր կարող դատարանում վկայություն տալ, զենք կրել, ձի հեծնել, չքեղ հագնվել: Նա իրավազուրկ էր՝ ռայա, այսինքն՝ ստրուկ: Պարբերական բնույթ էր կրում մահմեդականների կողմից հայ աղջիկների առևանգումը կամ բռնությամբ հարեմներ տանելը: Հայ ժողովուրդը ենթարկվում էր ազգային-կրոնական ու սոցիալական դաժան չահագործման և հետապնդումների: Հայերի անտանելի, դժոխային դրության մասին Խ. Աբովյանը գրել է. «Աղջիկն ասես՝ քաչում էին, տղեն ասես՝ տանում, չատ անգամ Թուրքացնում, հավատից հանում»: Երիցս իրավացի էր հայ մեծ բանաստեղծ Հովհ. Թումանյանը, երբ պարսկական (անչուչտ՝ նաև Թուրքական) բռնակալությունը համեմատում էր դժոխքի հետ. «Մի բռնակալություն, որի վայրագությունը ոչ մի սահման ու չափ չէր ճանաչում, ո՛չ օրենք, ո՛չ իրավունք, ո՛չ խնդիր, ո՛չ աղաչանք, ո՛չ կրոն, ո՛չ սրբություն, ո՛չ կայք, ո՛չ կին, ո՛չ պատիվ, ո՛չ ամոթ, ո՛չ խղճմտանք....»:

Ահա այսպիսի դժոխային պայմաններում էր, որ հայ ժողովուրդը ստեղծագործ աշխատանքով մի կերպ չարունակում էր պահպանել այնքան վտանգված իր գոյությունը:

Հայերի հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն էր իր երեք հիմնական ճյուղերով. երկրագործություն, այգեգործություն, անասնապահություն: Հողը մշակվում էր եռադաշտային եղանակով: Աշխատանքային գործիքները՝ արոր, գերանդի, մանգաղ, փոցխ և այլն, նախնական էին ու դանդաղ էին կատարելագործվում: Գլխավորապես մշակվում էին հացահատիկային մշակաբույսեր (ցորեն, գարի, կորեկ, բրինձ): Հացահատիկ էին ցանում գրեթե բոլոր շրջաններում, հացառատ էին հատկապես Կարսի, Ալաշկերտի, Շիրակի, Կաղզվանի, Խնուսի, Մշո դաշտի, Սեբաստիայի շրջանները: Հատկանշական է, որ

Արևմտյան Հայաստանում արտադրված հացահատիկը (Հայտնի էր հատկապես սպիտակ ընտիր ցորենը) բավարարում էր ամբողջ Փոքր Ասիայի հացի սպառման պահանջը: Տեխնիկական կուլտուրաներից մշակում էին բամբակ ու ծխախոտ: Վերջինս Հայտնի էր Մերձավոր Արևելքում և հանդիսանում էր արտահանվող հիմնական ապրանքներից մեկը:

Այգեգործությամբ գլխավորապես զբաղվում էին Արարատյան, Բագրևանդի, Մուշի դաշտերում, Սյունիքում, Ղարաբաղում, Վասպուրականում, Երզնկայում և այլուր: Գյուղատնտեսության կարևոր ճյուղերից էր նաև անասնապահությունը, որը տարածված էր Հայաստանի գրեթե բոլոր շրջաններում: Հայաստանի լեռնային, բարձրադիր շրջանները նպաստավոր էին մանր, իսկ ալպյան մարգագետինները՝ խոշոր եղջերավոր անասնապահության զարգացման համար: Անասնապահությունը սերտորեն կապված էր արհեստագործական այն ճյուղերի հետ, որոնց մատակարարում էր բուրդ, կաշի և այլն:

Հայերի մյուս հիմնական զբաղմունքը արհեստագործությունն էր: Նրանք իրավամբ համարվում էին Պարսկաստանի և Թուրքիայի լավագույն արհեստավորները: Հայերի շրջանում ամենից տարածված արհեստներից էին՝ մետաղագործությունն իր բոլոր ճյուղերով, հատկապես ոսկերչությունն ու արծաթագործությունը, զինագործությունը, դարբնությունը, ինչպես նաև կոշկակարությունը, ժանյակագործությունը, ներկարարությունը և այլն: Ամբողջ Մերձավոր Արևելքում հռչակված էին Վանի ոսկերիչներն ու Կարինի պղնձագործները, Կ.Պոլսի զինագործները ու չինարարները: Արհեստավորները համախմբվում էին հատուկ կազմակերպությունների մեջ. Արևելյան Հայաստանում դրանք կոչվում էին համքարություն, իսկ Արևմտյան Հայաստանում՝ էսնաֆություն: Համքարությունը գլխավորում էր վարպետներից ամենահարգվածն ու փորձառուն, որ կոչվում էր ուստաբաշի:

Հայերի հաջորդ գլխավոր զբաղմունքն առևտուրն էր: Մանր և միջին առևտրականները (չարչի, փերեզակ) զբաղվում էին վերավաճառությամբ և տեղական արտադրանքի վաճառքով: Խոշոր առևտրականները (ամիրաներ, սեղանավորներ, խոջաներ) կարևոր դեր էին խաղում ոչ միայն կայսրության, այլև միջազգային առևտրի ծավալման գործում: Անդրկովկասում, Օսմանյան կայսրությունում և Մերձավոր Արևելքում կատարվող ապրանքափոխանակությունը հիմնականում իրականացվում էր հայ առևտրականների միջոցով: Դիպուկ է նկատել գերմանացի ականավոր փիլիսոփա Իմմանուիլ Կանտը՝ «Հայերի մոտ գերիշխում է յուրահատուկ առևտրական ոգի. իսկ ստույգ՝ նրանք զբաղվում են ապրանքափոխանակությամբ՝ ոտքով կտրելով Ջինաստանի սահմանից մինչև Գվինեայի Կորսո հրվանդանը: Դա վկայում է այդ աշխատասեր և խելոք ժողովրդի հատուկ ծագման մասին, որը հյուսիսից արևելք, հարավից արևմուտք գրեթե ամբողջ Հին Աշխարհը անցնում է և գտնում ջերմ ընդունելություն բոլոր ժողովուրդների մոտ: Դա ապացուցում է նրանց գերազանց բնավորությունը»:

Հայերը տարածաշրջան էին տեղափոխում չինական ու հնդկական համեմունքներ ու թանկարժեք քարեր, Արևելքից Ռուսաստան և եվրոպական երկրներ էին տանում մետաքս, գործվածքներ և պերճանքի առարկաներ: Ամբողջ Արևելքում և Ռուսաստանում հայտնի էր Սպահանի (Պարսկաստան) մերձակայքի Նոր Ջուղա առևտրաշահ քաղաքը, որը զգալի դեր էր խաղում համաշխարհային առևտրում: Իսկ Թուրքիայի հայ ամիրայական ընտանիքները (շուրջ 100 ընտանիք) տնօրինում էին երկրի տնտեսական-ֆինանսական կյանքի բազմաթիվ ոլորտներ: Նրանցից մի քանիսը հսկայական կարողություններ էին ձեռք բերել վաշխառուական կապիտալի շնորհիվ: Առանց չափազանցության, հայ առևտրականների ձեռքում էր կենտրոնացված ժամանակի համաշխարհային ֆինանսական միջոցների զգալի մասը: Սակայն ցրված լինելով տարբեր երկրներում՝ Հնդկաստան, Պարսկաստան, Թուրքիա, Ռուսաստան և այլուր, վաճառականական այդ կապիտալը չվերածվեց քաղաքական կապիտալի և հայոց կյանքում չունեցավ լուրջ ազդեցություն: Այն աստիճանաբար փոշիացվեց և դարձավ տարբեր երկրների, բայց ոչ Հայաստանի տնտեսական զարգացման ազդակներից մեկը:

Ինչպես արհեստագործությունը, այնպես էլ առևտուրը Պարսկաստանում և Թուրքիայում գտնվում էին անապահով վիճակում, չկար անձի և գույքի ապահովություն: Բոնություն-

ները, կամայականությունները, հափշտակումները, ավազակային հարձակումները, անընդհատ ավելացվող հարկերն ու տուրքերը, ունեցվածքի հաճախակի կրկնվող պետականացումները հայ առևտրականներին ստիպում էին օտարել իրենց կապիտալը և հեռանալ այլ երկրներ:

Պատմական իրերի բերումով հայ ժողովրդի զգալի հատվածներ, դեռևս VII-VIII դարերից սկսած, բնակվում էին Հայաստանից դուրս՝ գաղթավայրերում (Բյուզանդիա, Պարսկաստան, Մերձավոր Արևելքի երկրներ և այլուր): Հայկական գաղթականության հոսքն ուժեղացավ հատկապես Բագրատունյաց պետության անկումից հետո (1045 թ.)՝ սելջուկյան, մոնղոլական, թուրքմենական վաչկատուն ցեղերի արշավանքների և տիրապետության շրջանում (XI-XVI դդ.): Արդեն XIX դարի սկզբներին հայկական հոծ գաղթավայրեր կային Վրաստանում, Հյուսիսային Կովկասում, Ռուսաստանում, Ղրիմում, Պարսկաստանում, Հնդկաստանում, Միջագետքում, Սիրիայում, Եգիպտոսում, Թուրքիայում, Արևելյան Եվրոպայի տարբեր երկրներում՝ Բուլղարիա, Ռումինիա, Մոլդովա, Լեհաստան, Հունգարիա, Հունաստան, զգալի թվով հայեր ապրում էին նաև Արևմտյան Եվրոպայի երկրներում՝ Իտալիա, Ֆրանսիա, Հոլանդիա և այլուր:

Դժվար է, գրեթե անհնարին, գաղթահայության թվաքանակի մասին որևէ մոտավոր հաշվարկ կատարել: Միայն կարելի է հավանական համարել ռուսահայ գաղթավայրերի վերաբերյալ գոյություն ունեցող տվյալները, ըստ որոնց XIX դարի սկզբներին Նոր Նախիջևանն ու նրա շրջակայքի հայկական գյուղերն ունեին 12 հազար, Աստրախանը՝ 7 հազար, Ղզլարը, Գրիգորիոպոլիսը և Ղրիմը՝ 5 հազարական հայ բնակչություն, Հյուսիսային Կովկասում բնակվում էին շուրջ 13 հազար հայեր և այլն:

Գաղթավայրերը հսկայական դեր են խաղացել հայ ժողովրդի կյանքում: Դարերի ընթացքում, երբ Հայաստանը զրկված էր մշակույթն ու տնտեսությունը զարգացնելու տարական պայմաններից, գաղթավայրերը դարձան հայ մշակույթի կենտրոններ: Այստեղ հիմնադրվում են դպրոցներ և կրթական այլ հաստատություններ: Հայերեն առաջին տպագիր գիրքը լույս է տեսել Վենետիկում, առաջին պարբերականը՝ «Ազդարարը», հրատարակվել է Մադրասում, հայագիտական առաջին դպրոցը

հիմնադրվել է Վենետիկի Մխիթարյանների կողմից՝ Ս. Ղազար կղզում և այլն: Ի վերջո, գաղթավայրերի հայությունն էր, որ XVIII դարի կեսերից իր ձեռքը վերցրեց հայ ազատագրական պայքարի կազմակերպումը և հսկայական դեր խաղաց ազատագրական պայքարի գաղափարախոսության մշակման գործում:

Սակայն ժամանակի ընթացքում նշված գաղթավայրերից շատերը վերացան, իսկ հայերը հեռացան նոր երկրներ: Գաղութահայությունը միշտ ենթակա է եղել ազգային դիմագիծը կորցնելու և ուծացման վտանգին, ինչպես դա տեղի է ունեցել Լեհաստանում, Հունգարիայում և այլուր:

Հայաստանի արևելյան և արևմտյան մասերի, ինչպես նաև գաղթավայրերի հայությունը ոչ միայն զրկված էր մեկ ընդհանուր քաղաքական, հասարակական-տնտեսական ու մշակութային միջավայրում ապրելու հնարավորությունից, այլև տարաբաժանված էր տարբեր դավանական հարանվանությունների: Հայության մեծագույն մասը հետևում էր Հայ առաքելական ազգային եկեղեցու, ավելի փոքր մասը՝ Հռոմեական կաթոլիկ եկեղեցու դավանանքին: XIX դարի սկզբներից ձևավորվեց նաև հայ ավետարանական հարանվանությունը:

Հայ առաքելական եկեղեցին առաջվա նման ղեկավարվում էր Մայր աթոռ Ս. Էջմիածնի կողմից: Գոյություն ունեին նաև նվիրապետական այլ աթոռներ՝ Գանձասարի (Աղվանից), Ախթամարի և Սսի կաթողիկոսությունները և Կ.Պոլսի ու Երուսաղեմի պատրիարքական աթոռները: Հայ առաքելական եկեղեցին միակ համահայկական մարմինն էր, որը քիչ թե շատ հնարավորություններ ուներ ղեկավարելու հայության կյանքը, կազմակերպելու համահայկական նշանակություն ունեցող ազգային-եկեղեցական միջոցառումներ, խրախուսելու հայ մշակութային ինքնուրույնությանն ուղղված ճիգերը:

Ակնհայտ է, որ Հայաստանի և՛ արևելյան, և՛ արևմտյան հատվածներում դարեր շարունակ հայ ժողովրդի վիճակը ծանր ու օրհասական է եղել, և դա է պատճառը, որ նրա լավագույն զավակները հաճախ են իրենց հայացքն ուղղել դեպի հյուսիս՝ դեպի Ռուսաստան՝ նրա հետ կապելով ժողովրդի փրկության հույսը:

2. ԱՆԴՐԿՈՎԿԱՍԸ ՌՈՒՍԱԿԱՆ ՑԱՐԻԶՄԻ ՌԱԶՄԱ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ: ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՅՈՒՍԻՍԱՐԵՎԵԼՅԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ՄԻԱՑՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ

Ամբողջ XVIII դարում Ռուսաստանը հսկայական ջանք է գործադրել հաստատվելու Սև ծովի ափերին, Ազովի և Կասպից ծովերի միջև ընկած տարածքներում: Հիշյալ խնդիրը լուծելու համար Ռուսաստանը պետք է ընդհարվեր Օսմանյան Թուրքիայի և Պարսկաստանի հետ: XVIII դարի երկրորդ կեսին Ռուսաստանը երկու արյունահեղ պատերազմներ մղեց Թուրքիայի դեմ և հաղթելով՝ դուրս եկավ Սև ծով: Ռուսաստանի տիրապետության տակ անցան Հարավային Բուգից մինչև Կուբան ընկած տարածքները, ինչպես նաև Ղրիմի թերակղզին: Բնականաբար, Անդրկովկասի ժողովուրդները և հատկապես հայերը մեծ ուշադրությամբ հետևում էին Ռուսաստանի արևելյան քաղաքականությանը՝ հույս ունենալով հզորացող այդ երկրի միջոցով հասնել հայրենիքի ազատագրությանը:

Ինչպես տեսանք, ռուսական արքունիքը որոշակի քայլեր ձեռնարկեց՝ իր հովանու տակ վերցնելու հայերին, նույնիսկ խորհում էր իր հովանավորությամբ հայկական պետականությունը վերականգնել:

Արդեն նշվել է, որ հայ ազատագրական շարժման գործիչներին հատկապես իրական հույսեր էր ներշնչել 1783 թ. հուլիսի 24-ին Հյուսիսային Կովկասի Գեորգիևսկ ամրոցում Ռուսաստանի և Վրաստանի միջև կնքված պայմանագիրը, որի համաձայն Վրաստանը մտնում էր Ռուսաստանի հովանավորության ներքո: 1796 թ. ռուսական զինվորական մի ստորաբաժանում՝ գեներալ Վ. Զուբովի հրամանատարությամբ մտավ Թիֆլիս: Զորս տարի անց՝ 1799 թ. նոյեմբերին, դրան փոխարինեց գեներալ Ի. Լազարևի կորպուսը: Մինչև Հայաստան մնում էր ընդամենը մի քայլ: Իրադարձությունները զարգանում էին գլխապտույտ արագությամբ:

Արևելյան Վրաստանի (Քարթլի-Կախեթի) թագավոր Գեորգի XII-ը դիմում է Ռուսաստանի կայսր Պավել I-ին՝ կամավոր Ռուսաստանի կազմի մեջ մտնելու խնդրանքով: Այդ պահից

Վրաստանի ամբողջ իշխանությունը փաստորեն կենտրոնանում է ռուսական զինվորական հրամանատարության ձեռքում: 1801 թ. սեպտեմբերի 12-ին հրապարակվեց Ալեքսանդր I-ի մանիֆեստը, որը հռչակում էր Վրաստանի միացումը Ռուսաստանին: Իսկ դա նշանակում էր վրաց թագավորության լուծարում: Վրաստանի հետ Ռուսաստանի կազմի մեջ մտան Քարթլիի թագավորությանը վաղուց ենթակա հայկական գավառները՝ Փամբակը, Լոռին, Ղազախ-Շամշադինը: Սրանով փաստորեն սկսվեց Ռուսաստանի կազմի մեջ Արևելյան Հայաստանի մտնելու գործընթացը, որն ընթացավ երեք փուլով և ավարտվեց 1829 թվականին:

Վրաստանի միացումը միայն առաջին քայլն էր ամբողջ Անդրկովկասը գրավելու ուղղությամբ: Ռուսաստանի ռազմա-քաղաքական շրջանները չէին թաքցնում Դերբենդի, Բաքվի, Շիրվանի, Գանձակի, Ղարաբաղի, ինչպես նաև Երևանի խանությունները նվաճելու իրենց ծրագիրը: Խոսակցություններ էին գնում Արաքսի ռազմական գիծ դուրս գալու, այնտեղ ամրապնդվելու և այն ռուս-պարսկական սահմանագիծ դարձնելու մասին: Ակնհայտ էր դառնում, որ Ռուսաստանի անդրկովկասյան քաղաքականությունը կրել է զգալի փոփոխություններ, որ նա հրաժարվել է իր հովանավորության ներքո հայկական կամ հայ-վրացական միացյալ պետություն ստեղծելու վաղեմի ծրագրից և ձեռնամուխ է եղել խաղաղ միջոցներով կամ զենքով Անդրկովկասն իրեն միացնելու քաղաքականությանը: Ընդ որում Անդրկովկաս թափանցելու ծրագրում ռուսական պաշտոնական շրջանակները կարևոր դեր էին հատկացնում հայերին՝ որպես հնարավոր ու հավատարիմ դաշնակիցների: Ինքը՝ Ալեքսանդր I-ը, Վրաստանում գործող իր էմիսարներին հրահանգում էր. «Ձեր հատուկ ուշադրությանն ենք ներկայացնում ամենայն փաղաքշանքով դեպի մեզ գրավել հայ ազգը.... Բարեհաճում ենք, որպեսզի Դուք, ըստ հնարավորության, հովանավորություն ցույց տաք Արարատյան պատրիարքական էջմիածնի վանքին և նրա եկեղեցու պետի հետ բարեկամական հարաբերություններ պահպանեք»: Հայերը չափազանց հետաքրքրում էին կայսրին, քանի որ, ինչպես ինքն էր անթաքույց հավաստում՝ «նրանց ձեռքին է Ասիայի այս մասի ամբողջ առևտուրը,

ուստի նրանք արժանի են հատուկ ուշադրության և պաշտպանության»:

Իրենց հերթին հայերը մեծ ուշադրությամբ հետևում էին դեպքերի զարգացմանը: Ռուսների հաստատվելը Վրաստանում խանդավառություն էր առաջ բերել Երևանի և մյուս խանությունների հայ բնակչության շրջանում: Անդրկովկասում ռուսական գործակալները կառավարությանը և զինվորական հրամանատարությանը հաղորդում էին, թե հայերի համակրանքն ամբողջովին ռուսների կողմն է, և եթե ռուսական զորքերը մտնեն խանությունների սահմանները, ապա տեղի հայերն ամեն ինչով կօժանդակեն ռուսական զենքի հաղթանակին:

Վրաստանի միացումը Ռուսաստանին և վերջինիս բուռն հետաքրքրությունը Անդրկովկասի նկատմամբ խիստ սրեցին միջազգային հարաբերությունները: Անդրկովկասում Ռուսաստանի գործուն քայլերն ուղղակի հակասում էին ինչպես Պարսկաստանի, այնպես էլ նրա թիկունքում կանգնած Ֆրանսիայի և Անգլիայի շահերին: Պարսկական կողմը չէր հաշտվում Վրաստանի կորստի հետ, մանավանդ գիտակցում էր, որ դա վերջինը չէ: Վրաստանի միացումը սրեց նաև ռուս-թուրքական հարաբերությունները, քանի որ Թուրքիան նույնպես ծրագրել էր գավթել Անդրկովկասը: Նման պայմաններում նոր պատերազմը դառնում էր օրակարգի հարց: Պարսից Ֆաթհ Ալի շահի կարգադրությամբ թագաժառանգ Աբաս Միրզան 50 հազարանոց բանակով դիրքավորվեց ամբողջ սահմանի երկայնքով և պատեհ առիթի էր սպասում արշավելու Վրաստան: Այս պայմաններում Ռուսաստանը որոշում է նախաձեռնությունը վերցնել իր ձեռքը:

1804 թ. մայիսի 29-ին ռուսական առաջապահ զորամասերը, անցնելով սահմանը, շարժվում են դեպի Շիրակ: Հունիսի 10-ին Ախուրյանի ափին տեղի է ունենում առաջին ընդհարումը, որն ավարտվում է ռուսական ուժերի հաղթանակով: Հունիսի 15-ին ռուսական բանակը (4400 զինվոր, 20 թնդանոթ) գեներալ Պ. Ցիցիանովի հրամանատարությամբ արշավում է դեպի Երևան: Հինգ օր անց՝ հունիսի 20-ին, Էջմիածնի մոտ ռուսական ուժերը հանկարծակի ենթարկվում են Աբաս Միրզայի 20 հազարանոց կորպուսի բուռն գրոհներին: Բայց կատաղի կռվում պարտություն կրելով՝ պարսիկները նահանջում են: Գեներալ

Ցիցիանովը մոտենում է Երևանին և առանց դժվարության հուլիսի 2-ին գրավում քաղաքն ու պաշարում բերդը, որի կայազորն ուներ 7 հազար զինվոր, 60 թնդանոթ: Բայց Երևանյան առաջին ռազմարշավը լավ նախապատրաստված չէր: Ռուսական բանակը չուներ բերդը գրավելու անհրաժեշտ զորք, ռազմամթերք, թնդանոթներ, պարեն: Գլխավոր հրամանատարը գործում էր անվճռական: Փոխանակ գրոհելու, նա ընտրել էր սպասողական դիրք և հույս ուներ, թե Երևանի Մահմադ խանը առանց դիմադրության բերդը կհանձնի իրեն: Երևանի բերդը գրավելու առաջին փորձը, այսպիսով, ձախողվեց: Սեպտեմբերի 3-ին դադարեցնելով բերդի պաշարումը՝ Ցիցիանովը նահանջեց Էջմիածին, ապա՝ Մեծ Ղարաքիլիսա (Վանաձոր):

Ռուսական զորքերի երևանյան առաջին արշավանքը մեծ խանդավառություն էր առաջ բերել հայ բնակչության շրջանում: Հայերը եռանդուն օգնություն էին ցույց տալիս ռուսական բանակին՝ տրամադրելով պարենամթերք ու ձիեր, ռուսներին հաղորդելով կարևոր տեղեկություններ պարսկական զորքերի տեղաբաշխման ու երթերի մասին: Նրանցից շատերը զենքը ձեռքներին մարտնչում էին պարսկական ուժերի դեմ:

Ռուսական զորքերի նահանջը չէր նշանակում, թե Ռուսաստանը հրաժարվել է իր ծրագրերից: Ռուսական բանակը առաջ շարժվելով՝ 1805 թ. մարտին գրավեց Շիրակը, իսկ մայիսին՝ Ղարաբաղը: Դարձյալ օրակարգի հարց էր դառնում նոր ռազմարշավը դեպի Երևան: Այս պայմաններում Ֆրանսիայի սադրանքով 1806 թ. դեկտեմբերի 18-ին բռնկվեց ռուս-թուրքական պատերազմը (1806-1812): Ռազմական գործողություններ ծավալվեցին ինչպես Բալկաններում, այնպես էլ Կովկասյան ճակատում, և առժամանակ հետին պլան մղվեց ծրագրված արշավանքը դեպի Երևան:

Կովկասում ռուսական զորքերի գլխավոր հրամանատար ֆելդմարշալ Ի. Վ. Գուդովիչի 7 հազարանոց բանակը 1807 թ. հունիսի 18-ին Ախուրյանի ափին՝ Փոքր Ղարաքիլիսա (Ազատան) գյուղի մոտ, պարտության է մատնում թուրքական սերասքյար Յուսուֆ փաշայի 20 հազարանոց բանակը, որը նահանջում է դեպի Կարս: Թուրքերի այս պարտությունը չափազանց կարևոր էր, քանզի այն խանգարեց թուրք-պարսկական

ռազմական հնարավոր համագործակցության կայացմանն ընդդեմ ռուսների, որին ակնհայտորեն ձգտում էր Ֆրանսիայի կայսր Նապոլեոն Բոնապարտը:

1808 թ. սեպտեմբերի 26-ին սկսվեց ռուսական զորքերի նոր արշավանքը դեպի Երևան և Նախիջևան: Ի. Գուդովիչը 6 հազարանոց բանակով հոկտեմբերի 9-ին սկսում է Երևանի բերդի պաշարումը, իսկ գեներալ Ներոլսինը նոյեմբերի 1-ին առանց որևէ դիմադրության գրավում է Նախիջևանը: Նոյեմբերի 17-ին սկսվում է Երևանի բերդի գրոհը: Սակայն Գուդովիչն արդեն բաց էր թողել նպաստավոր պահը: Բերդն առանց կռվի հանձնելու վերաբերյալ մեկ ամսից ավելի չարունակվող բանակցությունները որևէ արդյունք չունեցան: Տասնօրյա գրոհները նույնպես ապարդյուն անցան: Սկսված ցրտերը, անհրաժեշտ պարենի և ռազմամթերքի պակասությունը, մարդկային կորուստները գլխավոր հրամանատարին ստիպեցին նահանջի հրաման արձակել: Նոյեմբերի 30-ին վերացվեց Երևանի պաշարումը, և ռուսական բանակը վերադարձավ Վրաստան:

Ռազմական հետագա գործողությունները ձգձգվեցին և ոչ մեծ աշխուժությամբ չարունակվեցին մինչև 1812 թ. վերջերը: Այդ ժամանակ (հոկտեմբերի 13-ին) Արաքսի ափին՝ Ասլանդուզի ճակատամարտում Աբաս Միրզան ջախջախիչ պարտություն կրեց, որը նրան ստիպեց բանակցություններ սկսել հաշտության պայմանագիր կնքելու համար:

Բանակցությունները սկսվեցին Ղարաբաղի Գյուլիստան ավանում 1813 թ. սեպտեմբերի 27-ին և չարունակվեցին մինչև հոկտեմբերի 12-ը: Բանակցությունների արդյունքում հոկտեմբերի 12-ին կնքվեց 11 կետից բաղկացած պայմանագիր: Ռուսաստանի կողմից փաստաթուղթը ստորագրեց Կովկասի կառավարչապետ Ն. Վ. Ռտիշչևը, Պարսկաստանի կողմից՝ արտաքին գործոց նախարար Միրզա Աբդուլ Հասան խանը: Պայմանագրի համաձայն Պարսկաստանը ճանաչում էր Դաղստանի և Վրաստանի, ինչպես նաև Գանձակի, Ղարաբաղի, Շաքիի, Շիրվանի, Դերբենդի, Ղուբայի, Բաքվի, Թալիշի խանությունների միացումը Ռուսաստանին: Ռուսաստանի կազմի մեջ էին մտնում նաև հյուսիսարևելյան Հայաստանի հետևյալ շրջանները՝ Գանձակը, Ղարաբաղը, Զանգեզուրը, Շիրակը: Դա հայկական

տարածքների՝ Ռուսաստանի կազմի մեջ մտնելու երկրորդ փուլն էր:

Ռուսաստանը չլուծեց իր առջև դրված կարևորագույն խնդիրը. նա դուրս չեկավ Արաքսի ռազմավարական գոտի: Բայց արդեն 1817 թ. Կովկասի կառավարչապետ գեներալ Ա. Պ. Երմոլովը հստակորեն չեչտում էր, որ առաջիկա պատերազմում կայսրության սահմանը Անդրկովկասում պետք է հասցվի մինչև Արաքս գետ: Գյուլիստանի պայմանագրից խիստ դժգոհ՝ Ֆաթհ Ալի շահը քանիցս ռուսներին առաջարկեց վերանայել պայմանագիրը: Ավելին, նա չէր կորցրել անդրկովկասյան իր տիրույթները վերադարձնելու հույսը: Անչուշտ, պայմանագիրը չէր բավարարում նաև հայ ժողովրդին, որի ակնկալիքն ամբողջ Արևելյան Հայաստանի միացումն էր Ռուսաստանին:

3. 1826-1828 ԹԹ. ՌՈՒՍ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ԵՎ 1828-1829 ԹԹ. ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ: ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻԱՑՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ

ա. 1826-1828 ԹԹ. ռուս-պարսկական պատերազմի սկիզբը: Գյուլիստանի պայմանագիրը երկար կյանք չունեցավ: Պարսկաստանը չէր ցանկանում հաշտվել կովկասյան իր վաղեմի տարածքների կորստի հետ և լի էր դրանք վերադարձնելու վճռականությամբ: Մյուս կողմից՝ Անգլիան, որի ռազմա-քաղաքական հետաքրքրություններից չէր բխում Ռուսաստանի ամրապնդվելը Կովկասում, Ֆաթհ Ալի շահին դրդում էր նոր պատերազմ սկսել Ռուսաստանի դեմ: Անգլիացի ռազմական մասնագետներն ըստ ամենայնի աջակցում էին պարսկական բանակի վերակառուցմանն ու վերազինմանը, իսկ անգլիական դիվանագետները շահին հավաստիացնում էին, թե Ռուսաստանը չափազանց թուլացել է դեկաբրիստների հայտնի ապստամբության հետևանքով և ի զորու չէ նոր պատերազմներ վարելու: 1826 թ. սկզբներից Պարսկաստանը տենդագին նախապատրաստություններ սկսեց նոր պատերազմ բորբոքելու համար՝ մեծաքանակ զինված ուժեր կենտրոնացնելով ռուսական սահմանների երկայնքով: Անգլիական ռազմական խորհրդականների

օգնությամբ մշակվեց Անդրկովկաս ներխուժելու հստակ, սակայն ոչ իրատեսական ծրագիր: Անհաջողության մատնվեցին Ռուսաստանի բոլոր փորձերը՝ առժամանակ խուսափելու պատերազմից:

1826 թ. հուլիսի 16-ին և 17-ին պարսկական գերակշիռ ռազմական ուժերը երկու ուղղություններով ներխուժեցին ռուսական տիրապետության սահմանները: Աբաս Միրզայի 60 հազարանոց բանակը շարժվեց Ղարաբաղ և հուլիսի 25-ին պաշարեց Շուշիի բերդը: Սակայն բերդը սրընթաց գրոհով գրավելու պարսիկների փորձը ձախողվեց: Այստեղ թողնելով 12 հազարանոց մի զորամաս՝ Աբաս Միրզան շարունակեց իր ռազմերթը և առանց դժվարության գրավեց Ելիզավետպոլ (Գանձակ), Շամախի, Նուխի քաղաքները, Շաքիի, Շիրվանի, Թալիշի շրջանների մեծ մասը և պատրաստվում էր ներխուժել Դաղստան ու Վրաստան: Նույն այդ ժամանակ Երևանի Հուսեին խանի զորամասերը ներխուժեցին Շիրակի և Փամբակի շրջանները: Պարսկական զինված ուժերն առանձնակի դաժանությամբ ավերեցին և թալանեցին Շիրակի, Ապարանի, Փամբակի և Ղարաբաղի հայկական գյուղերը, տասնյակ հազարավոր հայերի գերեվարեցին Պարսկաստան:

Ուժերի սակավության պատճառով Կովկասյան կորպուսի հրամանատար գեներալ Ա. Պ. Երմոլովը հարկադրված էր դիմել ակտիվ պաշտպանության՝ ընդ որում գործի մեջ լայնորեն ընդգրկելով նաև հայերին: Ստեղծվեցին նրանցից կազմված աշխարհազորային ջոկատներ, որոնք ամենագործուն մասնակցությունն ունեցան պաշտպանական մարտերին: Դեպքերի ժամանակակից հայ ականավոր գրող Խաչատուր Աբովյանը (1809-1848) գրում էր, թե «քաջ Հայկազունք սիրտ սրտի տվին, իրար կանչեցին» և հաստատակամությամբ ոտքի կանգնեցին հակառակորդի դեմ: Միայն Շուշիի պաշտպանությանը մասնակցում էր 1500 հայ աշխարհազորային: Բերդի ռուսական փոքրաթիվ կայազորը՝ 1700 զինվոր, ստիպված էր մեկուկես ամիս պաշտպանվել պարսկական գերակշիռ ուժերի անընդհատ հարձակումներից: Կայազորի պետ գնդապետ Ի. Ա. Ռեուտը խոստովանում էր, որ եթե չլիներ հայերի բազմակողմանի օգնությունը, անհնարին կլիներ պահել Շուշին: «Բերդը պաշտ-

պանող հայերի ծառայությունը,- գրում է նա, - արժանի է ուշադրության, որովհետև նրանք բոլորը գործում էին գերազանց քաջությամբ, արհամարհում էին պարենի պակասը և բնավ չէին մտածում բերդը հանձնելու մասին»: Նույն կերպ իրենց դրսևորեցին նաև Շիրակի Փոքր Ղարաքիլիսա գյուղի բնակիչները, որոնք ռուս զինվորների հետ ընկան ահավոր, անհավասար մարտում, բայց չնահանջեցին:

Ստանալով անհրաժեշտ օգնական ուժեր՝ Կովկասյան հատուկ կորպուսը գեներալ Ա. Երմոլովի հրամանատարությամբ 1826 թ. սեպտեմբերին ոչ միայն կասեցրեց հակառակորդի գրոհները, այլև անցավ հակահարձակման: Գեներալ-լեյտենանտ Վալերիան (Ռոստոմ) Մադաթովի զորամասերը սեպտեմբերի 3-ին Շամքոր գետի ափին գլխովին ջախջախեցին պարսկական բանակը: Տասն օր անց՝ սեպտեմբերի 13-ին, գեներալ Ի. Ֆ. Պասկևիչը Ելիզավետպոլի մոտ պարտության մատնեց Աբաս Միրզայի 25 հազարանոց բանակը և ստիպեց նրան զորքը դուրս բերել Ղարաբաղից: Սեպտեմբերի 21-ին Արագածի ստորոտին գտնվող Միրաք գյուղի մոտ գեներալ Դ.Դավիդովը հաղթելով հակառակորդին՝ մուտք գործեց Երևանի խանություն: Այս հաղթանակներից հետո սկսվում են նախապատրաստական աշխատանքներ Երևանի և Նախիջևանի խանությունները գրավելու համար: Սակայն հանգամանքները ստիպում են Երևանի վրա հարձակումը հետաձգել մինչև հաջորդ տարվա՝ 1827 թ. գարունը:

բ. Երևանի գրավումը: *1827 թ. մարտի 28-ի Նիկոլայ I-ի հրամանագրով Ա. Երմոլովի փոխարեն Կովկասյան հատուկ կորպուսի գլխավոր հրամանատար նշանակվեց գեներալ Ի. Ֆ. Պասկևիչը, որը և իրականացրեց Երևանի խանության գրավումը: 1827 թ. ապրիլի 2-ին գեներալ Կ. Բենկենդորֆի զորամասը արշավում է դեպի Երևան: Ապրիլի 13-ին ռուսական զորամասը գրավում է Էջմիածինը: Գյուղաքաղաքի բնակչությունն ու Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանությունը ցնծությամբ են դիմավորում ռուսական զորամասին: Հունիսի 8-ին Էջմիածին են հասնում Կովկասյան հատուկ կորպուսի գլխավոր ուժերը (8600 զինվոր, 26 թնդանոթ): Մոտենալով Երևանին և ծանոթանալով Հրազդան գետի ձախ բարձրադիր ափին վեր խոյացող նշանա-*

վոր համանուն բերդին (ներկայիս «Արարատ» գինեգործարանի ընդարձակ համալիրի տարածքում)՝ Պասկևիչը համոզվում է, որ առկա ուժերով այն գրոհով գրավելն անհնարին է: Երևանի բերդը շրջապատված էր 4,5 կմ երկարությամբ երկտակ պարիսպներով, որոնց բարձրությունը հասնում էր 12 մետրի: Հուսեին խանը անգլիական ռազմական մասնագետների օգնությամբ ամրացնել էր տվել բերդի պարիսպները, աշտարակները, պաշտպանական մյուս բնագծերը և դրանք դարձրել գրեթե անխոցելի: Գրոհողներին անհրաժեշտ էր պաշարողական ծանր հրետանի, որ ռուսները չունեին: Որոշվեց հրետանի տեղափոխել Թիֆլիսից, բայց դա, բնականաբար, ժամանակ էր պահանջում: Ուստի բերդի գրավումը հետաձգվեց ավելի հարմար ժամանակի:

Այդ ընթացքում ռուսական բանակները գրավեցին ամբողջ Արարատյան դաշտը: Հունիսի 26-ին զենքը վայր դրեց Նախիջևանի խանը, հուլիսի 7-ին անձնատուր եղավ Արաքսի ափին գտնվող Աբասաբադի բերդը: Բայց ռուսներին չհաջողվեց զարգացնել այս մարտերում ձեռք բերված հաջողությունները: Ամառային անտանելի, ռուսների համար անսովոր շոգերի և հիվանդությունների հետևանքով զորամասերը կորցրել էին մարտունակությունը, մեծ թիվ էին կազմում մարդկային կորուստները (երբեմն՝ զումարտակների թվակազմի 15-20 տոկոսը): Պասկևիչի թույլտվությամբ գեներալ Կրասովսկին դադարեցնում է Երևանի բերդի պաշարումը և կորպուսին հանգիստ տալիս Ապարանի սարահարթում: Կորցնելով Նախիջևանը և Աբասաբադը՝ Աբաս Միրզան ուժերը վերադասավորելու նպատակով դիմում է խորամանկության՝ խնդրելով զինադադար: Կարազիաղինում սկսված բանակցություններից շուտով պարզ է դառնում, որ Աբաս Միրզան այդ քայլը ձեռնարկել է ժամանակ շահելու նպատակով: Օգտվելով ռուսական կորպուսի բացակայությունից և խախտելով զինադադարի պայմանները՝ օգոստոսի 4-ին 30 հազարանոց բանակով թագաժառանգն անցավ Արաքսը՝ ծրագրելով գրավել էջմիածինը և ոչնչացնել Կրասովսկու կորպուսի այնտեղ տեղակայված զորաջոկատը: Օգոստոսի 15-ին նրա զորքերը պաշարում են էջմիածինը և ռմբակոծում ռուսական դիրքերը: Փոքրաթիվ կայազորն ու հայ աշխարհազորայինները հերոսաբար պաշտպանվում են: Հայ սուրհանդակ-

ների միջոցով տեղեկանալով էջմիածնի պաշարման մասին՝ գեներալ Ա. Ի. Կրասովսկու զորամասը (3 հազար զինվոր, 100 հայ աշխարհազորային և 12 թնդանոթ) Ապարանի սարահարթից շտապում է պաշարվածներին օգնության: 1827 թ. օգոստոսի 17-ին Օշականի մոտ Աբաս Միրզայի 30 հազարանոց բանակը գրոհում է թվով տասն անգամ փոքրաթիվ ռուսական ուժերի վրա: Ռուսական զորքը տալիս է մարդկային ուժի հսկայական կորուստ, բայց ցուցաբերելով բացառիկ խիզախություն՝ կարողանում է կասեցնել հակառակորդի հարձակումը: Այն պահին, երբ թվում էր, թե Աբաս Միրզայի հաղթանակը մոտ է, հանկարծ պարսկական զորքը ենթարկվում է հրանոթային հզոր համազարկերի: Անակնկալի եկած պարսիկներին թվում է, թե ռուսներին օգնության են եկել լրացուցիչ ուժեր: Նրանք սկսում են խուճապահար նահանջել, իսկ թնդանոթային համազարկերը շարունակում էին հակառակորդի զորաշարքերին զգալի կորուստներ պատճառել: Շուտով պարզվեց, որ Կրասովսկուն օգնության չէր եկել որևէ զորամաս: Դա պարսկական բանակի հրետանավոր նորքեցի Հակոբ Հարությունյանն էր, որն իրեն վստահված թնդանոթի փողն ուղղել էր պարսկական ուժերի վրա: Օգտվելով նման խառնաշփոթից՝ Կրասովսկին կարողացավ ճեղքել հակառակորդի շարքերը և հասնել օգնության էջմիածնում պաշարվածներին: Մայր Աթոռն ու քաղաքը փրկվեցին անխուսափելի կործանումից: Օշականի ճակատամարտում պարսիկների կորուստը կազմեց 3500 հոգի, իսկ ռուսներինը՝ 1000: Տարիներ անց՝ 1834 թ., ի հավերժացումն Օշականի ճակատամարտում զոհված ռուս զինվորների հիշատակի, էջմիածնից ոչ հեռու համաժողովրդական հանգանակությունից գոյացած միջոցներով կառուցվեց հուշարձան, որը կանգուն է առ այսօր: Հակոբ Հարությունյանը ռուսական կառավարության կողմից արժանացավ զինվորական բարձր պարգևների և ցմահ կենսաթոշակի:

Սեպտեմբերի 9-ին էջմիածին հասավ Պասկևիչը: Ռուսական զորքը և հայ կամավորական ջոկատները Աբաս Միրզային ստիպեցին իր զորքերի մի մասի հետ նահանջել Արաքսի մյուս ափը: Շարունակելով առաջխաղացումը՝ ռուսական զորքերը սեպտեմբերի 20-ին գրավեցին Սարդարապատի բերդը, իսկ

սեպտեմբերի 24-ին մոտեցան Երևանին: Ավելորդ արյունահեղությունից խուսափելու նպատակով Պասկևիչն առաջարկեց բերդը հանձնել առանց մարտերի, բայց կայազորի պարետ Հասան խանը կտրուկ մերժեց:

Սկսվեց Երևանի բերդի գրոհը: Սեպտեմբերի 25-ից 30-ը ռուսական ծանր հրետանին անընդհատ ռմբակոծումներով խորտակում է բերդի պաշտպանական ընագծերն ու աշտարակները: «Երևանու բերդը ծխումը կորավ: Հինգ օր, հինգ գիշեր սար ու ձոր դմբում, դմբդմբում էր»,- պատկերավոր նկարագրել է Խ. Աբովյանը: Բերդի պարսկական կայազորը մեծ կորուստներ ունեցավ, և հետագա դիմադրությունը դարձավ անիմաստ, մանավանդ այն բանից հետո, երբ բերդում գտնվող հայերը սեպտեմբերի 30-ին ապստամբեցին և պահանջեցին քաղաքը հանձնել ռուսներին:

Հոկտեմբերի 1-ի վաղ առավոտյան արտաքին պարիսպների փլվածքի միջով ռուսական զորքերն ու հայկական կամավորական ջոկատները ներխուժեցին քաղաք: Կայազորը զենքը վայր դրեց: Գերի ընկան Հասան խանը, 200 բարձրաստիճան պաշտոնյա, 3000 զինվոր: Ռուսների ձեռքն անցավ ռազմական զգալի ավար՝ թնդանոթներ, զենք ու զինամթերք, հացահատիկ և այլն: Երևանի բերդի վրա ծածանվեց ռուսական հաղթական դրոշը:

Երևանի ազատագրման առթիվ քաղաքի հայ բնակչությունը ճոխ տոնախմբություն կատարեց, եկեղեցիներում տեղի ունեցան հանդիսավոր արարողություններ: Հոկտեմբերի 6-ին քաղաքում կայացավ զորահանդես, որն ազդարարվեց 101 հրետանային համազարկով: Երևանի բերդի գրավմանը մասնակցած բոլոր զինվորներն ու հայ աշխարհազորայինները պարգևատրվեցին «Երևանի գրավման համար» մեդալով: Գեներալ Ի. Պասկևիչն արժանացավ «Երևանյան կոմս» (*"Граф Эриванский"*) պատվատիտղոսին:

Երևանի բերդի գրավումը մեծ ոգևորություն և անսահման ուրախություն պատճառեց բովանդակ հայությանը՝ հեռավոր Հնդկաստանից մինչև Ռուսաստան և Կովկաս: Ոչ ոք Խ. Աբովյանից ավելի պատկերավոր չի արժեքավորել այդ իրադարձությունը. «Դժոխքի քանդվիլը մեղավորների համար էս գինը չէր ունենալ, ինչպես Երևանու բերդի առնիլը հայերի համար»: Նույնն է հավաստում նաև բերդի գրավման մասնակից ռուսական բանակի սպա դեկաբրիստ Ե. Լաչինովը. «Հուզիչ էր ազատագրված հայերի հրճվանքը, սրտից էր բխում նրանց արտահայտած ուրախությունը»: Հայերի համար համընդհանուր հրճվանքի այդ օրերին Պասկևիչի հրամանագրով ստեղծվեց Երևանի ժամանակավոր վարչություն՝ գեներալ Կրասովսկու գլխավորությամբ: Վարչությունը գլխավոր հրամանատարին ենթակա իշխանության մարմին էր, որի խնդիրն էր գրավյալ վայրերում կազմակերպել իշխանական նոր մարմիններ: Քիչ ավելի ուշ՝ 1828 թ. մարտի 21-ին, Նիկոլայ I-ի հրամանագրով կազմակերպվեց «Հայկական մարզ» վարչական միավորը, որի մեջ ընդգրկվեցին Երևանի և Նախիջևանի խանությունները, ինչպես նաև Օրդուբադի գավառը:

Երևանի գրավումով սկսվեց ռուս-պարսկական պատերազմի եզրափակիչ փուլը: Զարգացնելով հարձակումը՝ ռուսական զորքերը հոկտեմբերի 13-ին գրավեցին Թավրիզը:

գ. Կամավորական զորաջոկատների կազմակերպումը. Հայերի մասնակցությունը ռազմական գործողություններին: XIX դարի սկզբների ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմներին անմիջական մասնակցություն ունեցան Հայ ժողովրդի ամենալայն խավերը: Հայկական շրջանակները երազում էին Ռուսաստանի հովանավորության ներքո հայկական ինքնավարություն ստեղծելու մասին: Սակայն իրականությունն այլ էր: Ցարական Ռուսաստանի ռազմա-քաղաքական ծրագրերի մեջ չէին մտնում և չէին էլ կարող մտնել հայերի ազատագրական ակնկալությունները: Ռուսաստանը իրականացնում էր իր համար այնքան անհրաժեշտ Արաքսյան ռազմավարական գոտին գրավելու և այնտեղ ամրապնդվելու ծրագիրը: Ահա հենց այս շրջանագծում է, որ նրան հետաքրքրում էին հայերը՝ որպես հնարավոր դաշնակիցներ պարսիկների, իսկ այնուհետև նաև թուրքերի դեմ մղվող պատերազմներում: Այսպիսով, պարսկա-օսմանյան տիրապետություններից ազատագրվելու հայկական շրջանակների երազանքը համընկնում էր ռուսական կողմի

ռազմա-քաղաքական ծրագրերին: Ահա թե ինչու հայերն ամեն հնարավորն անում էին՝ նպաստելու ռուսական զենքի հաղթանակին:

Դեռևս 1804-1813 թթ. ռուս-պարսկական պատերազմի տարիներին հայերը ստեղծել էին հեծյալ ջոկատներ, որոնք մասնակցում էին ռազմական գործողություններին: Այդ ժամանակ անօրինակ սխրագործություններով աչքի ընկան Ռոստոմ բեկի, մելիք Աբովի, Գրիգոր վարդապետ Մանուչարյանի հեծյալ ջոկատները: Շատ հայեր, որպես հետախույզներ ու կապավորներ, մեծ օժանդակություն էին ցույց տալիս ռուսական զորքերին: Հատկապես զգալի էր Մայր աթոռ Ս. Էջմիածնի դերը: Իրենց համարձակության, խիզախության և բացառիկ սխրագործությունների համար ռուսական բանակի հրամանատարությունը ռազմական պարգևներ չնորհեց Վանի և Հակոբ Աթաբեկյան եղբայրներին, Հարություն Բաբիջանյանին և շատ ուրիշների:

Ռուս-պարսկական երկրորդ պատերազմին հայերի մասնակցությունն ավելի ծանրակշիռ էր և համակողմանի: Երբ դեռ նոր էին սկսվել ռազմական գործողությունները, Գրիգոր վարդապետ Մանուչարյանը դարձյալ ստեղծեց 500 հոգիանոց հեծյալ պարտիզանական ջոկատ, որը գործուն մասնակցություն ունեցավ Լոռի-Փամբակի և Շամշադին-Ղազախի պաշտպանական մարտերին: Շիրակում և Ապարանում ծավալված մարտերի ժամանակ աչքի ընկավ կարինցի Մարտիրոս Վեքիլյանի գլխավորած հեծյալ ջոկատը: 1826 թ. աշնանը գեներալ Վ. Մադաթովի նախաձեռնությամբ կազմավորվեց Ղարաբաղի հայերից բաղկացած 100 հոգիանոց հեծյալ ջոկատ, որը մինչև պատերազմի ավարտը մարտնչում էր ռուսական բանակի առաջապահ զորամասերի հետ: Անհրաժեշտ էր կազմակերպված ընթացք տալ հայերի բուռն ցանկությանը և պաշտոնական կարգով կանոնավորել նրանց մասնակցությունը պատերազմին: Այդ գործին ձեռնամուխ եղան Ներսիսյան դպրոցի տեսուչ, բանաստեղծ Հարություն Ալամդարյանն ու Վրաստանի հայոց հոգևոր թեմի առաջնորդ Ներսես արք. Աշտարակեցին (1770-1857): Ռուսական հրամանատարությունը, բնականաբար, ընդառաջ գնաց հայերի ցանկությանը:

1827 թ. մարտին Թիֆլիսում Ներսես արք. Աշտարակեցու և

Հ. Ալամդարյանի նախաձեռնությամբ ստեղծվեց հայկական առաջին կամավորական զորաջոկատը, որը օրինակ հանդիսացավ ստեղծելու այլ կամավորական ջոկատներ: Կամավորական ջոկատների համար մշակվեց 34 հոդվածից բաղկացած «Առաջադրություն», ըստ որի ջոկատ կարող էին ընդունվել 18-30 տարեկան տղամարդիկ՝ միայն կամավոր հիմունքներով: Ջոկատի հրամանատարը պարտադիր պետք է լիներ ազգությամբ հայ: Ջոկատներն ունենալու էին ազգային զինադրոշ, զինվորական հրամանները տրվելու էին հայերեն: Ծառայության ընթացքում կամավորներն ու նրանց ընտանիքները ազատվելու էին պետական հարկերից և պարհակներից: Կամավորներին զենք ու հագուստ տրամադրվում էր պետության հաշվին: «Առաջադրությունը» հաստատվեց ռուսական բանակի գլխավոր շտաբի կողմից և դրվեց շրջանառության մեջ ի գործադրություն:

Կամավորական ջոկատներ ստեղծելու լուրն արագորեն տարածվեց և անկեղծ ու բուռն ոգևորություն առաջացրեց հայերի շրջանում: Շատ վայրերից բազմաթիվ երիտասարդներ Թիֆլիս էին գալիս ջոկատներում ընդգրկվելու համար: Մայիսի 15-ին Թիֆլիսի Ս. Գևորգ հայկական վանքի գավթում կամավորական առաջին ջոկատին հանձնվեց զինադրոշ, տեղի ունեցավ կամավորների հանդիսավոր երդման արարողություն: Բոցաշունչ հայրենասիրական ճառով կամավորներին դիմեց բանաստեղծ Հ. Ալամդարյանը, որը կոչ արեց արյան վերջին կաթիլը չխնայել հայրենիքի ազատագրության սուրբ գործի համար: Մայիսի 17-ին այս ջոկատը շտաբս-կապիտան Սմբատյանի հրամանատարությամբ մեկնեց Էջմիածին: Հունիսի 2-ին պոդպորուչիկ Ակիմովի հրամանատարությամբ ռազմաճակատ մեկնեցին 2-րդ, իսկ օգոստոսի 21-ին՝ 3-րդ կամավորական ջոկատները: Մինչև նշանակված վայր հասնելը ճանապարհին կամավորական ջոկատները համալրվում էին նորանոր հայ երիտասարդներով: Օրինակ՝ 1-ին ջոկատի մարտիկների թիվը հասել էր 1000 հոգու: Ներսես Աշտարակեցին ամենուր դիմումներ և ուղերձներ էր ուղարկում, որոնցով հայ երիտասարդներին կոչ էր անում մտնել կամավորական ջոկատների մեջ, ռուսական զորքերին օգնություն ցույց տալով արագացնել հայրենիքի ազատագրության երանելի պահը. «Ոտքի կանգնեցե՛ք, հայոց քաջե՛ր,- իր

կոչերից մեկում գրում էր նա,- Թոթափեցե՛ք պարսից լուծը, ուրախացրե՛ք ալեզարդ Մասիսին, մի անգամ արյունով ներկեցե՛ք հայրենի հողը ու ապա ապրեցեք ազատ, հիմա կամ երբեք»:

Հայ կամավորական ջոկատները մասնակցեցին բոլոր նշանակալից ճակատամարտերին: Նրանք առաջիններից մեկն էին, որ ներխուժեցին Երևանի բերդ և ազատագրեցին հայկական հինավուրց քաղաքը: Նրանք մասնակցում էին նաև Պարսկաստանի տարածքների գրավման մարտերին: Իրենց սխրագործություններով հատկապես աչքի ընկան հրամանատարներ Ռուստամ Լաչինյանը, Գևորգ Նազարյանը, Գրիգոր Քալանթարյանը և շատ ուրիշներ: Տասնյակ կամավորներ պարգևատրվեցին մարտական չքանշաններով: Ռուսական բանակի նշանավոր զորավարներից մեկը՝ գեներալ Ն. Մուրավյովը, հետևյալ գնահատականն է տվել հայ կամավորական զորաջոկատներին. «Հայ կամավորները մարտերում հանդես էին գալիս ինչպես վայել է զինվորին, նրանք կռվում էին այնպես, ինչպես միայն կարելի էր ցանկանալ: Հայերի այս նոր զորքը ներշնչում էր լավագույն հույսեր, թե կգա ժամանակ, երբ հայկական կամավորական զորքերից կարելի կլինի կազմել մի պատկառելի կորպուս»: Իսկ գեներալ Պ.Պոպովը հավաստում էր, թե «հայերը կռվում և մեռնում էին որպես հերոսներ»: Եվ երիցս իրավացի էր հայ մեծ գրող Խ. Աբովյանը, որ կամավորների նման անձնազոհ վարքագիծը նկատի ունենալով գրում էր. «Օրհնվի էն կաթը, որ դուք կերել եք, էն հողը, որ ձեզ ծնել ա»:

Բացի կամավորական ջոկատներից բազմաթիվ ուրիշ հայեր ընդգրկվում էին ռուսական բանակի այլ ստորաբաժանումներում: Հայերը մասնակցություն ունեցան պաշտպանական բոլոր մարտերում, մասնավորապես, ինչպես արդեն նշել ենք, Շուշիի պաշտպանության համար մղվող մարտերին: Այստեղ զգալի էր նյութական այն օգնությունը, որ ցուցաբերում էին հայերը պաշարված ռուսական կայազորին: Պաշարվածներին պարենով ապահովելու գործում աչքի ընկան Սաֆար և Ռոստոմ Թարխանյան եղբայրները, Զոհրապ Թառումյանը, Բ. Մելիք-Շահնազարյանը և ուրիշներ: Անօրինակ սխրագործություններով իրենց

փառքով պսակեցին վառոդագործ վարպետ Պողոսը, սուրհանդակ Հարություն Ալթունյանը, որը, ի դեպ, հայ աշխարհազորայիններից առաջինը պարգևատրվեց Գեորգիևյան խաչով և ոսկե մեդալով: Հայ տղամարդկանց հետ անձնազոհ կռվում էին նաև բազմաթիվ հայ աղջիկներ: Լոռի-Փամբակում բոլորին հայտնի էին համամլվեցի գեղջկուհի Մանուչակի, Ղարաբաղում Խաթուհու և այլոց սխրագործությունները: Հայտնի ռուս ռազմական պատմաբան Վ.Պոտտոն այդ կապակցությամբ գրում է. «Մինչև իսկ հերոսներ էին հայերի կանայք, իսկ նրանցից մեկին՝ Խաթուհուն, այն ժամանակ գիտեր ողջ Ղարաբաղը»: Ահա այս և նման հարյուրավոր օրինակներ նկատի ունենալով է, որ Խ. Աբովյանը գրում է. «Ինչ որ պարսից կռվի ժամանակին հայք արին...., թե մարդ չիմանա, քարերը վկայություն կտան»:

Անչուշտ, անուրանալի է հայերի բոլորանվեր օգնությունը ռուսական զորամասերին: Հայ ժողովրդի զավակներն այլ կերպ վարվել, այլ դիրք ընդունել չէին կարող: Նրանք կռվում էին ռուսների օգնությամբ իրենց երկիրը պարսկա-թուրքական դաժան տիրապետություններից ազատագրելու համար: Նրանք մասնակցում էին ազատագրական պայքարին՝ հանուն ազգային գոյատևման:

դ. Հայաստանի ինքնավարության նախագիծը: 1827 թ. վերջերին Արևելյան Հայաստանի մեծ մասն ազատագրվել էր պարսկական տիրապետությունից և միացել Ռուսաստանին: Հայ ազատագրական շարժման նոր սերնդի ներկայացուցիչներին (Ներսես արք. Աշտարակեցի, Հ. Ալամդարյան և ուրիշներ) չափազանց հետաքրքրում էր հայրենիքի ապագա կացության հարցը: Այն հուզում էր նաև Մոսկվայի և Պետերբուրգի շատ նշանավոր հայերի:

Երևանի և Նախիջևանի խանությունների գրավումից անմիջապես հետո, այսինքն 1827 թ. վերջերին մի խումբ բարձրաստիճան հայ երիտասարդ գործիչներ՝ իսկական պետական խորհրդական, արքունի սենեկապետ (կամերգեր) Խաչատուր Լազարյանը (1789-1871), իսկական պետական խորհրդական, Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության բարձրաստիճան պաշտոնյա Ալեքսանդր Խուդաբաշյանը (1780-1868) և

իշխան Կոստանդին Արղության-Երկայնաբազուկը Ս. Պետերբուրգում կազմում են Հայաստանի ինքնավարության մի նախագիծ: Այդ նախագծի ստեղծման հանգամանքների և մեզ հետաքրքրող հարցերի մասին զաղափար են տալիս Խ. Լազարյանին ուղղված Կ. Արղության-Երկայնաբազուկի նամակի հետևյալ տողերը. «Ներկա ռազմական կոմպանիան մոտենում է իր ավարտին և վաղուց ցանկացածը (այսինքն՝ Հայաստանի գրավումը ռուսական զորքերի կողմից) այժմ կատարվում է: ...Շատ կարևոր է, թե կառավարությունը ինչպիսի ուղղություն կտա Հյուսիսային Հայաստանին: Լավ կլիներ, եթե Երևանը մնար ռուսահայերի ձեռքում»: Նրանք ռուսական կառավարության առաջարկով արքունիք են ներկայացնում պատմական զանազան տեղեկանքներ հին հայկական թագավորությունների, զինանշանների, եկեղեցու և պետության փոխհարաբերությունների մասին, կատարում հայոց կանոնագրքերի առանձին հատվածների ռուսերեն թարգմանություններ և այլն: 1827 թ. դեկտեմբերին Հայաստանի ինքնավարության նախագիծը կոմս Ա. Խ. Բենկենդորֆի միջոցով ներկայացվում է Նիկոլայ I-ին:

Նախագծի համաձայն Ռուսաստանին ենթակա Հայաստանի տարածքում պետք է ստեղծվեր ինքնավար Հայոց թագավորություն: Հայկական այդ թագավորության կազմում ընդգրկվելու էին Նախիջևանի, Արարատյան դաշտի, Երևանի, Ղարաբաղի, Շաքիի, Շամախու, Շիրակի և Լոռու շրջանները: Նախագծի հեղինակներն առաջարկում էին նորաստեղծ հայկական թագավորության անվանումը մտցնել թագավոր-կայսրի տիտղոսների շարքը: «Թագավոր-կայսրը Պարսկաստանի հետ կնքվող հաշտության պայմանագրի հետևանքով պետք է իր բարձրագույն տիտղոսին միացնի նաև Հայաստանի թագավոր անունը՝ ի նշան դեպի հայ ժողովրդի քաջագործություններն ունեցած իր բարյացակամության»,- ասված է նախագծում: Հայկական թագավորի տիտղոսի ընդունումը, որ, ըստ նախագծի հեղինակների, հավասարազոր էր հին Հայաստանի թագավորության վերածննդին, մեծ ազդեցություն կգործեր Թուրքիայում, Պարսկաստանում, ինչպես և ամբողջ Ասիայում և Հյուսիսային Աֆրիկայում բնակ-

վող հայերի վրա: Այս բարի լուրը կոգևորեր ամբողջ հայ ժողովրդին, առանձնապես Թուրքիայի և Պարսկաստանի տիրապետության տակ ապրողներին՝ զանգվածորեն ներգաղթելու Ռուսաստան, հատկապես՝ նորանվաճ մարզեր: Նախագծի հեղինակները փաստորեն դնում էին իրենց պատմական հայրենիքում հայերի համախմբման և ազգահավաքության հարցը, որը կարող էր հիմք հանդիսանալ հայկական պետականության կերտման համար: Առանց հայ ազգաբնակչության առկայության իրականություն չէր կարող դառնալ պետականության կերտումը. չէ՞ որ հայերը կազմում էին նորանվաճ հայկական երկրամասի բնակչության ընդամենը մեկ երրորդը: Հայ բնակչության ներգաղթ կազմակերպելով՝ հայկական ինքնավար թագավորությունը ներկա և ապագա ժամանակներում կարող էր «հարուստ պտուղներ տալ», քանզի հեռու և մոտիկ երկրներից հայ ժողովուրդը կհավաքվեր «Հայաստանի թագավորի բարեգործ գայիսոնի հզորագույն հովանու ներքո»՝ հազարավոր ընտանիքներով և իր ողջ ունեցվածքով:

Նախագծում լայնորեն խոսվում էր նաև Հայաստանի ներքին կառավարման ու բարեկարգման, զինված ուժերի և սահմանների պաշտպանության մասին: Այսպես, ըստ նախագծի Հայաստանը պետք է օժտված լիներ ինքնավարության իրավունքներով: Հայկական բոլոր բնակավայրերը ստանալու էին ներքին ինքնավարություն: Դատական, հարկերի գանձման ու բաշխման հարցերը հայերը տնօրինելու էին ինքնուրույնաբար, նրանք կարող էին ազատորեն զբաղվել առևտրով, արդյունաբերությամբ և այլն:

Ներքին հարցերում հայերը զերծ էին մնալու ռուսական իշխանությունների միջամտությունից: Դրվում էր նաև Հայոց եկեղեցու իրավունքների անձեռնմխելիության հարցը, որպեսզի Ամենայն Հայոց ծայրագույն պատրիարքի հնամենի սրբազան իրավունքները մնան անխախտ. «Եվ մեկընդմիշտ արգելվի տեղական քաղաքացիական և զինվորական իշխանություններին միջամտելու եկեղեցական ու հոգևոր գործերին, քանի որ դրանք միշտ էլ անմիջականորեն պատկանել են հոգևոր բարձրագույն իշխանության իրավասություններին»:

Հայաստանի ներքին պաշտպանության նպատակների համար կամավորական սկզբունքներով կազմակերպվելու էր հայկական հատուկ գվարդիա. «Նկատի ունենալով, որ Ռուսաստանի հարավային սահմանները Պարսկաստանից ձեռք բերված մարզերի հաշվին ընդարձակվում են, և պահանջվում է նշանակալից պաշտպանություն, իսկ ռուս զինվորները կլիմային անսովոր լինելով հիվանդանում են և մեծ թվով մահանում, ուստի օգտակար է... հայ բնակիչներից, ըստ ցանկության, կազմակերպել ներքին սահմանային պահակություն կամ աշխարհազոր»: Նախագծի հեղինակների համոզմամբ Ռուսաստանին անցած շրջանների սահմանների պաշտպանությունն առանց վարանելու կարելի էր վստահել հայերին, որոնք վաղուց ի վեր հավատարիմ են ռուսական գահին. «Պետրոս I-ի և Եկատերինա II-ի դարը բավական է հայերի հավատարմությունը ցույց տալու համար»,- ասվում էր նախագծում: Առաջարկվում էր նաև կամավորներից կազմել գվարդիական ընտիր գորամասեր, այդ թվում՝ էսկադրոն: Հրամանատարներ նշանակվելու էին անվանի հայերից, իսկ հայկական գվարդիայի մեջ մտնող սպաները և զինվորները պետք է ազատ լինեին ճնշումներից և օգտվեին առանձին արտոնություններից. «Որքան քիչ լինի ճնշումը, որքան ազատ լինի ծառայությունը, որքան շատ լինեն արտոնությունները, այնքան ավելի կաճի ծառայել ցանկացողների թիվը»: Նախագծի 14-րդ հոդվածով նախատեսվում էր Մոսկվայի Լազարյան ճեմարանում և Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում ազնվական և մյուս դասերին պատկանող լավագույն երիտասարդներից կրթված կադրեր պատրաստել զինվորական և քաղաքացիական ծառայությունների համար: Հայաստանի կառավարման գործում լայն իրավունքներ պիտի ստանային հայ հոգևորականները:

Նախագծում առանձնակի ուշադրություն է հատկացվել նաև հայ բնակչության իրավունքներին ու պարտականություններին, «Որպեսզի բնակիչներից յուրաքանչյուրի իրավունքներն ու պարտականությունները միշտ պաշտպանված լինեն արդարությամբ ու օրենքներով, որպեսզի դատավարությունը և գործի քննությունը կատարվեն առանց երկարաձգումների»: Նախագծի հեղինակները ցուցաբերում են առաջադիմական, անգամ

խիստ համարձակ դիրքորոշում, երբ խոսքը գնում էր ճորտատիրական կարգերի մասին: Նրանք առաջարկում էին ապագա հայկական ինքնավար թագավորությունում սահմանափակել և կամ ընդհանրապես վերացնել այդ կարգերը, քանզի «ճորտատիրական իրավունքի գոյությունից և դրությունից բազմաթիվ չարագործություններ են ծագում..., ուստի անհրաժեշտ է սահմանափակել կամ ոչնչացնել ճորտական իրավունքը»: Ակնբախ է, որ այս առաջարկությամբ նախագծի հեղինակները քննադատում էին կայսրությունում տիրող ճորտատիրական կարգերը և դրանով դասվում էին Ռուսաստանի լավագույն զավակների շարքին, որոնք խոսքով ու գործով պայքարում էին հանուն «երկրի խայտառակությունը հանդիսացող» այդ կարգերի վերացման:

Նախագծի այլ մանրամասներ մեզ հայտնի չեն: Մի բան սակայն հստակ է, որ Նիկոլայ I-ը ծանոթացել է սույն փաստաթղթին և մերժել այն: Եվ դա բնական էր: Ռուսական ցարիզմը, որ գրավել էր Արևելյան Հայաստանը և դուրս եկել Արաքսի ափերն ու Արարատի ստորոտը, կարող էր այլևս լուրջ ուշադրություն չդարձնել հայկական գործերի և հայերի առաջարկությունների ու խնդրագրերի վրա: Հայերը կատարել էին իրենց դերը, և ինչպես իրենք, այնպես էլ նրանց նախագծերն այլևս հետաքրքրություն չէին ներկայացնում: Հայ ազատագրական միտքը, որ դարեր շարունակ երազել էր հայկական պետականության վերականգնման մասին, այժմ հուսալքված էր: Թեև Արևելյան Հայաստանում խորտակվել էր պարսկական տիրապետությունը, սակայն այն փոխարինվել էր ոչ թե հայկական թագավորությամբ և անգամ հայկական ինքնավարությամբ, այլ նոր՝ ռուսական տիրապետությամբ: Հայ ազատագրական շարժման գործիչների պատրանքների հատուցումը եղավ Նիկոլայ I-ի 1828 թ. մարտի 21-ի հրամանագիրը, ըստ որի նորանվաճ երկրամասը հորջորջվում էր «Հայկական մարզ» բազմանշանակ անունով. «Համաձայն Պարսկաստանի հետ կնքված պայմանագրի, հրամայում եմ՝ Պարսկաստանից Ռուսաստանին միացված Երևանի և Նախիջևանի խանություններն այսուհետև բոլոր

գործերում անվանել Հայկական մարզ և այն ներմուծել մեր տիտղոսի մեջ»:

Հայկական մարզը ո՛չ Հայկական թագավորություն էր և ո՛չ էլ ինքնավար Հայաստան, այլ ուղղակի ռուսական կայսրության սովորական վարչական միավոր, որի անվանումը խաբուսիկ պատրանքներ էր ծնում հայ ազատագրական շրջաններում: Հիմնելով Հայկական մարզը՝ ցարական կառավարությունն այն տպավորությունն էր ստեղծում, թե իբր ընդառաջել է հայերի ձգտումներին: Այդ պատրանքները շատ չուտով հօդս ցնդեցին: Իրականում դա մի ցուցանակ էր, որի հետևում ցարիզմը ձեռնամուխ եղավ իր սովորական գաղութային քաղաքականությանը: Կառավարությունն անմիջապես և անթաքույց մի կողմ դնելով հայերին սիրաչահելու քաղաքականությունը և բացահայտորեն արհամարհելով նրանց ազգային երազանքներն ու ոգորումները՝ նորանվաճ վայրերում սկսեց վարել գաղութային այնպիսի դաժան քաղաքականություն, որ անգամ նախագծի հեղինակներից մեկը՝ Խ. Լազարյանը, չկարողանալով զսպել իր զայրույթը, 1829 թ. սեպտեմբերի 27-ին Բենկենդորֆին ուղղված գաղտնի զեկուցագրում դառնորեն չեչտում էր. «բարեկեցության փոխարեն, օրենքների պաշտպանության փոխարեն, որին բոլոր հայերը սպասում էին իբրև փոխհատուցում ծառայությունների և զոհաբերությունների, ըստ լուրերի, հայ ժողովուրդն ամենուր հանդիպում է ճնշումների ու հալածանքների, որից նույնիսկ բարձրաստիճան հոգևորականությունը և հատկապես Ս. Էջմիածինը չեն խուսափում: Բոլոր նման անկարգությունները սպառնում են Հայաստանի քայքայմանը և անգամ դժբախտությանը»: Ի լրումն այս ամենի չուտով կառավարությունը փոխեց նաև «Հայկական մարզի» ցուցանակը և հետագայում կազմակերպեց Երևանի նահանգը, որով վերջնականապես գերեզմանվեց ինքնավար Հայաստանի վերջին պատրանքը:

Ահա այսպիսի արդյունք ունեցավ 400-ամյա հայ ազատագրական պայքարը: Ամեն ինչ դարձյալ թողնվում էր ապագային: XIX դարի երկրորդ կեսին հայ ազատագրական շարժումը որդեգրում է նոր ուղեգիծ և նոր մարտավարություն:

Ե. Թուրքմենչայի հաշտության պայմանագիրը. պարսկահայերի գաղթը: Թավրիզի անկումից հետո թվում էր, թե պարսից շահը պետք է հաշտություն խնդրեր: Ճիշտ է, հաշտության բանակցություններն սկսվեցին, բայց չուտով պարսկական կողմի սադրանքով դրանք կրկին ձախողվեցին: Ռուսական հրամանատարությունը ստիպված էր ամբողջ ճակատով անցնել հարձակման: 1828 թ. հունվարի կեսին ռուսական բանակները գրավեցին ամբողջ Պարսկահայքը՝ Ուրմիան, Խոյը, Սալմաստը, հունվարի 25-ին՝ Արդաբիլը: Ճանապարհը բաց էր դեպի Թեհրան: Մանր պարտությունները և ռուսական բանակի կողմից Թեհրանը գրավելու իրական վտանգը Ֆաթհ Ալի շահին ստիպեցին հաշտություն խնդրել:

Կողմերի միջև որպես միջնորդ հանդես եկավ Պարսկաստանում Անգլիայի դեսպան լորդ Մակդոնալդը: Վերջինիս առաջարկով փետրվարի 6-ին հաշտության բանակցությունները սկսվեցին Թավրիզից 50 կմ հեռավորության վրա գտնվող Թուրքմենչայ փոքրիկ գյուղում: Ռուսական պատվիրակությունը գլխավորում էր Կովկասյան զորքերի գլխավոր հրամանատար Ի. Ֆ. Պասկևիչ-Էրիվանսկին, իսկ պարսկականը՝ պարսից թագաժառանգ, Ատրպատականի նահանգապետ, փոխարքա Աբաս Միրզան: Բանակցությունները եզրափակվեցին փետրվարի 10-ին կնքված ռուս-պարսկական հաշտության պայմանագրով: 1828 թ. մարտի 20-ին Նիկոլայ I-ը վավերացրեց պայմանագիրը, և այն օրենքի ուժ ստացավ:

Պայմանագիրը բաղկացած էր 16 հոդվածից: Առաջին հոդվածը հավաստում էր, թե պայմանավորվող Բարձր կողմերի միջև «հետայսու առհավետ թագավորելու է խաղաղություն, բարեկամություն և կատարյալ համաձայնություն»: Պայմանագրով ռուս-պարսկական սահման էր ճանաչվում Արաքս գետը: 2-րդ հոդվածն արձանագրում էր. «Նորին մեծության պարսից շահն իր և իր ժառանգորդների անունից ռուսական կայսրությանն է զիջում, որպես նրա կատարյալ սեփականություն, Երևանի խանությունը՝ Արաքսի այս և այն կողմերում, և Նախիջևանի խանությունը», ինչպես նաև Օրդուբադի գավառը: Պարսկաստանը պարտավորվում էր Ռուսաստանին վճարել 20 միլիոն ռուբլի ռազմատուգանք՝ արծաթով: Ռուսաստանի և Պարսկաստանի միջև վերականգնվում էին դիվանագիտական և

առևտրական հարաբերությունները, երկու երկրների հպատակներին տրվում էր ազատ առևտրի իրավունք, կատարվելու էր ռազմագերիների փոխանակություն:

Հայ ժողովրդի համար առանձնակի կարևորություն էր ներկայացնում պայմանագրի 15-րդ հոդվածը, որի համաձայն պարսկահայերին իրավունք էր տրվում գաղթելու Ռուսական կայսրության սահմանները: Գաղթելու համար սահմանվեց մեկ տարի, իսկ անշարժ գույքը վաճառելու և այն իրենց հայեցողությամբ տնօրինելու համար՝ հինգ տարի: Գաղթն իրականացվելու էր կամավորական սկզբունքով, չէր լինելու որևէ հարկադրանք կամ խոչընդոտ: Գաղթողներն իրավունք էին ստանում առանց որևէ մաքսի Ռուսաստանի տիրապետության սահմանները տեղափոխել իրենց շարժական կայքն ու գույքը:

Պայմանագրի 15-րդ հոդվածը, անշուշտ, ամենից առաջ բխում էր ռուսական կառավարության ռազմա-քաղաքական շահախնդրություններից: Ջպետք է անտեսել, որ շահ Աբաս I-ի 1604 թ. կազմակերպած հայերի բռնագաղթի հետևանքով ամբողջ Արարատյան դաշտն ու հարակից շրջանները դատարկվել, ամայացել էին բնիկ հայ բնակչությունից, որը տեղափոխվել էր Պարսկաստանի խորքերը: Հետագա երկու դարերի ընթացքում թեև նշված տարածքներում հայ բնակչության խոշոր կուտակումներ կային, բայց նկարագրվող դեպքերի ժամանակ Երևանի և Նախիջևանի խանությունների բնակչության թվում զգալի տոկոս էին կազմում Թուրքերը, որոնք Հայաստան էին տեղափոխվել շահ Աբասի կազմակերպած հայերի բռնագաղթից հետո: Ահա թե ինչու ռուսական ռազմա-քաղաքական շրջանները երկրամասի հետագա ճակատագրի մտահոգությամբ ձեռնամուխ եղան իրենց հավատարիմ, համակրող և աշխատասեր հայերի ներգաղթի կազմակերպմանը: Այդ օրերին Ի. Ֆ. Պասկևիչ-Էրիվանսկին իր զեկուցագրերից մեկում հետևյալ կերպ էր հիմնավորում պարսկահայերին ռուսական տիրապետության սահմանները տեղափոխելու անհրաժեշտությունը. «Ռուսական տիրապետության ներքո անցած սահմանի ամայի հողերի բնակեցումը աշխատասեր, ընդունակ և հավատով մեզ նվիրված ժողովրդով, կարող է կայսրությանը մեծ օգուտ բերել»: Բնականաբար, շահագրգռվածություն էին ցուցաբերում նաև հայ հասարակական

շրջանները: Ներգաղթի միջոցով նրանք ցանկանում էին ոչ միայն զարկ տալ Ռուսաստանին նոր միացված հայկական երկրամասերի ավերված տնտեսությանը, այլև այն դարձնել հայերի ազգահավաքման կենտրոն: Այս ուղղությամբ առանձնակի գործուն ջանքեր էր թափում անխոնջ Ներսես արք. Աշտարակեցին: Կար նաև մեկ այլ հանգամանք. Պարսկահայքի հայ բնակչությունը, որ խանդավառությամբ, աղուհացով էր դիմավորել ռուսներին և ըստ ամենայնի օժանդակություն ցույց տվել նրանց, ռուսական բանակի վերադառնալուց հետո կարող էր ենթարկվել պատասխանատվության, հետապնդումների և վրեժխնդրության: Ուստի պարսկահայերի համար մի հիանալի առիթ էր ներկայացվել հեռանալ պարսկական դժնդակ իրականությունից և տեղափոխվել քրիստոնյա երկրի տիրապետության սահմանները:

Թուրքմենչայի պայմանագրի կնքումից քիչ անց՝ փետրվարի վերջերին, ստեղծվում է հատուկ մարմին՝ ներգաղթ կոմիտե, որը զբաղվելու էր ներգաղթի կազմակերպման հարցերով: Ներգաղթ կոմիտեի նախագահ գնդապետ Եղիազար Լազարյանը, նրա օգնականներ Մովսես Արղության-Երկայնաբազուկը, Ալեքսանդր Ղորղանյանը, Երևանի ժամանակավոր վարչության անդամ Ներսես արք. Աշտարակեցին և ուրիշներ եռանդուն ջանքեր գործադրեցին հայերի ներգաղթն իրականացնելու համար: Մասնավորապես Ներսես Աշտարակեցին իր պատվիրակների միջոցով բացատրական լայն աշխատանք էր տանում պարսկահայերի շրջանում, նրանց խրախուսում ներգաղթել ռուսական տիրապետության սահմանները: Կառավարության հավաստիացմամբ ներգաղթողները վեց տարով ազատվելու էին հարկերից, երեք տարով՝ պարհակներից, նրանց տրամադրվելու էր բավականաչափ հող, վարկ, կարիքավորներին՝ նպաստ: Ներգաղթողները կարող էին զբաղվել երկրագործությամբ, արհեստներով և առևտրով: Ներգաղթ կոմիտեն սերտորեն համագործակցում էր Պարսկաստանում Ռուսաստանի դեսպան Ա. Ս. Գրիբոյեդովի հետ, որը նշանակալի դրական դեր խաղաց գաղթի կազմակերպման գործում:

1828 թ. մարտի վերջերին թավրիզաբնակ հայերի առաջին քարավանը հասավ Արևելյան Հայաստան: Շուտով սկսեց ներ-

գաղթել նաև Ատրպատականի մյուս գավառների հայ բնակչությունը՝ չնայած պարսկական իշխանությունների հարուցած խոչընդոտներին: Ըստ ռուսական պաշտոնական տվյալների Ատրպատականում բնակվող 65 հազար հայերից ռուսական տիրապետության սահմանները ներգաղթեցին շուրջ 40 հազար մարդ: Ներգաղթ կոմիտեն նրանց բնակեցրեց Երևան և Նախիջևան քաղաքներում, Մեղրիում, Կապանում, Վայոց ձորում, Վեդիում, Սուրմալուում, Ապարանում, Ծաղկաձորում, Սարդարապատում, Մասիսում, Աշտարակում, Կոտայքում, իսկ շուրջ 400 ընտանիք՝ Ղարաբաղում: Միայն Հայկական մարզի տարածքում բնակություն հաստատեց 36 հազար գաղթական:

Չնայած ներգաղթի կազմակերպման գործում եղած զանազան աղաղակող թերություններին, այդ թվում՝ չարաշահումներին, ինչպես նաև նոր բնակավայրերում գաղթողների կրած անասելի դժվարություններին, այնուհանդերձ իրենց աներևակայելի աշխատասիրությամբ ու կամքով նրանք շուտով հարմարվեցին նոր պայմաններին՝ կյանք տալով հնամենի, ամայացած գյուղերին ու կիսավեր քաղաքներին:

զ. 1828-1829 թթ. ռուս-թուրքական պատերազմը: Դեռ նոր էր ավարտվել ռուս-պարսկական պատերազմը, երբ 1828 թ. ապրիլի 14-ին սկսվեց ռուս-թուրքական հերթական պատերազմը: Ռազմական գործողություններն ընթանում էին Բալկանյան և Կովկասյան ռազմաճակատներում: Կովկասյան ճակատում ռուսական հրամանատարությունն իր առջև խնդիր էր դրել՝ ամրանալ Սև ծովի Կովկասյան ափերին, գրավել Անապան, Փոթին, ինչպես նաև Ախալցխան, Ախալքալաքը, Կարսը:

Կովկասյան ճակատում ռազմական գործողությունները սկսվեցին հունիսի կեսերին: Անցնելով Ախուրյան գետը՝ ռուսական զորամասերը հունիսի 14-ին սրընթաց շարժվեցին դեպի Կարս և հունիսի 20-ին պաշարեցին այն: Թեև Կարսը հիանալիորեն ամրացված էր և ուներ 12 հազարանոց կայազոր՝ 150 թնդանոթներով, այնուամենայնիվ, երեք օր անց՝ հունիսի 23-ին, անձնատուր եղավ:

Կարսի համար մղված կռիվների ժամանակ աչքի ընկան հայկական աշխարհազորային ջոկատները: Ռուսական հրամանատարությունն ընդառաջ էր գնում հայերի բուռն ցան-

կությանը՝ մասնակցելու ռազմական գործողություններին նաև այն պատճառով, որ Կովկասյան ճակատում թուրքական ուժերը գերակշռում էին ռուսականին: Թուրքական 40 հազարանոց բանակի դիմաց ռուսներն ունեին ընդամենը 14 հազար զինվոր: Հայերին ընդգրկելով ճակատի առաջին գծում գործող զորամասերի մեջ՝ ուժերի փոխհարաբերությունը փոքր-ինչ կրճատվում էր: Ռազմական գործողությունների նախօրյակին կազմակերպվեցին 400 հոգիանոց «Հայկական հետևակագունդը» և 800 հոգիանոց «Հայկական հետևակային գումարտակը»: Բացի այդ, պատերազմը սկսվելուց անմիջապես հետո միայն Հայկական մարզից կամավոր ռազմաճակատ մեկնեց 3 հազար հայ աշխարահազորային: Կարսի պաշարման օրերին քաղաքի հայ տղամարդիկ անմիջապես անցան ռուսների կողմը և նրանց օգնում էին հնարավոր բոլոր միջոցներով:

Կարսի գրավումից հետո ռուսական զորքերը շարժվեցին դեպի Ախալքալաք և Ախալցխա: Հուլիսի 23-ին համառ մարտերից հետո ռուսները գրավեցին Ախալքալաքը, իսկ տասնօրյա (օգոստոսի 5-15) պաշարումից հետո՝ Ախալցխան: Ալաշկերտի ուղղությամբ գործող ռուսական զորքերը գրավեցին Բայազետը, Դիադինը, Ալաշկերտը, իսկ Սև ծովի ափերին՝ Անապան, Սուխումը և Փոթին: 1829 թ. գարնանը, հետ մղելով թուրքերի ձեռնարկած բուռն գրոհները, ռուսական բանակն անցավ հակահարձակման և մեկը մյուսի ետևից գրավեց Արևմտյան Հայաստանի բնակավայրերը՝ Օլթին, Քղին, Մուշը, Խնուսը, իսկ հունիսի 27-ին՝ Էրզրումը (Կարինը): Այս մարտերում հատկապես աչքի ընկավ Բայազետի հայերի 500 հոգիանոց կամավորական ջոկատը, որը գլխավորում էր մելիք Մարտիրոսը: Միայն Բայազետի պաշտպանության մարտերին մասնակցում էր 200 հայ: Արևմտյան Հայաստանի բոլոր բնակավայրերում հայ բնակչությունը ռուսներին դիմավորում էր որպես ազատարարների: Թվում էր, թե իրականություն էր դառնում հայ ազատագրական հնամենի տեսիլը: Եկել էր քրիստոնյա հզոր պետության օգնությամբ օտար բռնակալությունից ազատագրվելու այնքան երկար սպասված երանելի պահը: Այդ օրերին ռուսական բանակում պաշտոնավարող Ա. Ս. Գրիբոյեդովը չեչտում էր. «Անհնարին է նկարագրել հայերի հրճվանքը, որոնք դուրս էին եկել

դիմավորելու հաղթողներին՝ մուսուլմանների երկարատև տանջալից տիրապետությունից իրենց ազատագրողներին»:

Ռուսական բանակի հզոր հարվածների ներքո Օսմանյան Թուրքիան պարտություն կրեց: Ռուսական առաջապահ զորամասերը նախապատրաստվում էին գրոհել Կ.Պոլսի վրա: Բայց եվրոպական պետությունների միջամտությամբ Ռուսաստանին պարտադրվեց հաշտության պայմանագիր:

Է. Ադրիանապոլսի հաշտության պայմանագիրը. արևմտահայերի գաղթը: Ադրիանապոլսի անկումից հետո (օգոստոսի 8-ին) սուլթան Մահմեդ II-ը հաշտություն խնդրեց Ռուսաստանից: Հաշտության բանակցությունները սկսվեցին 1829 թ. օգոստոսի 21-ին ռուսների կողմից գրավված Ադրիանապոլիս քաղաքում: Պայմանագիրը կնքվեց սեպտեմբերի 2-ին: Այն ընդգրկում էր 16 հոդված: Պայմանագրի մի շարք հոդվածներ որոշակիորեն աղերս ունեին հայ ժողովրդի, ռուսական զորքերի կողմից գրավված Արևմտյան Հայաստանի տարածքների հետ: Ռուսական դիվանագիտությունն ի զորու չեղավ զենքով գրաված Արևմտյան Հայաստանի տարածքները պահել կայսրության սահմաններում: Պայմանագրի չորրորդ հոդվածով Ռուսաստանը պարտավորվում էր Թուրքիային վերադարձնել Կարսը, Կարինը, Բայազետը և պատմական Հայաստանի այլ բնակավայրեր: Ռուսաստանին էին անցնում Սև ծովի կովկասյան ափերը՝ Կուբանի գետաբերանից մինչև Փոթի նավահանգիստը և, որ հայոց համար խիստ կարևոր էր, հայկական հինավուրց Ջավախք գավառը՝ Ախալքալաք կենտրոնով, ու Ախալցխան: Թուրքիան պարտավորվում էր Ռուսաստանին վճարել ռազմատուգանք 4,5 մլն. ռուբլի՝ ոսկով: Նույն չորրորդ հոդվածով Թուրքիան ճանաչում էր Երևանի և Նախիջևանի խանությունների միացումը Ռուսաստանին:

Ադրիանապոլսի պայմանագիրը, անշուշտ, չէր արտահայտում պատերազմող կողմերի իրական հնարավորությունները: Ռուսաստանը ստիպված էր տեղի տալ Անգլիայի և Ֆրանսիայի քաղաքական ճնշումներին, ինչպես նաև նոր պատերազմի հեռանկարի մտահոգիչ լուրերին: Այլ խոսքով՝ ձեռք բերված հաղթանակը փոխարինվեց դիվանագիտական դաշտում կրած պարտությամբ: Դա ճակատագրական եղավ հայ ժողովրդի համար, քանզի Արևմտյան Հայաստանը շարունակեց մնալ Օսմանյան կայսրության սահմաններում, հանգամանք, որ ունեցավ ողբերգական հետևանքներ: Կարծես կանխատեսելով հետագա իրադարձությունների ընթացքը՝ պատերազմի մասնակից Ե. Լաչինովը մտահոգ գրում էր. «Դու, երբեմնի մեծահռչակ Հայաստան, դու, որ մեզ մինչև հիմա հիացնող այդքան հուշարձաններ ես թողել, ի՞նչ է քեզ սպասում: Կհայտնվե՞ս արդյոք նորից փառքի ասպարեզում, թե՞ քո տխուր զավակներին վիճակված է հավիտյանս լքյալ գոյություն»: Դժվար չէ կռահել, թե ինչ ապագա կունենար Արևմտյան Հայաստանը, եթե մնար Ռուսաստանի կազմում, բայց տեղի ունեցավ ամենաանցանկալին:

Ադրիանապոլսի պայմանագրով վերահաստատվեց Ռուսաստանի կազմի մեջ Արևելյան Հայաստանի ընդգրկման իրողությունը, գործընթաց, որը տևել էր չուրջ երեսուն տարի: Արևելահայաստանի տարածքները Ռուսաստանին էին միացվել հետևյալ հերթականությամբ.

1801 թվականին՝ Լոռին, Փամբակը, Ղազախը, Բորչալուն,

1813 թվականին՝ Արցախը, Գանձակը, Շամշադինը, Զանգեզուրը, Շիրակը,

1828-1829 թվականներին՝ Երևանը, Նախիջևանը, Օրդուբադը, Վերին Ջավախքը:

Այս բոլորը Արևելյան Հայաստանի պատմական տարածքներ էին: Փաստորեն, բացառյալ Պարսկահայքի, որ Թուրքմենչայի պայմանագրով Ռուսաստանը վերադարձրեց Պարսկաստանին, ամբողջ Արևելյան Հայաստանը մտավ Ռուսաստանի կազմի մեջ: Ցավոք, ռուսական վարչատարածքային քաղաքականության հետևանքով Արևելահայաստանի տարածքները չհայտնվեցին մեկ վարչական միավորի մեջ, այլ մտցվեցին տարբեր օկրուգների, մարզերի ու նահանգների մեջ: Այնուհանդերձ, դրանք ներառվելով նույն երկրի կազմում, գտնվում էին միմյանց հետ սերտ կապերի մեջ:

Արևմտյան Հայաստանը շարունակում էր մնալ Օսմանյան Թուրքիայի տիրապետության ներքո: Ադրիանապոլսի պայմանագիրը ծանր կացություն ստեղծեց արևմտահայերի համար: Գրավված տարածքներից ռուսական զորքերի հեռանալուց հետո ռուսներին ցույց տված ռազմական, նյութական ու բարոյական աջակցության համար անխուսափելի դարձան Թուրքերի

և քրդերի կողմից հայերի նկատմամբ վրեժխնդրական գործողությունները: Ահա թե ինչու շատ արևմտահայեր որոշեցին օգտվել պայմանագրի 13-րդ հոդվածից, որի համաձայն երկու կողմերի հպատակներին իրավունք էր տրվում տասնութ ամսվա ընթացքում (եթե ցանկանային) իրենց ընտանիքով, դրամագլուխներով ու շարժական գույքով տեղափոխվել մյուս տերության տարածք:

Արևմտահայերի գաղթը կազմակերպելու համար ստեղծվեց հատուկ հանձնաժողով, որին պետության կողմից տրամադրվեցին ֆինանսական միջոցներ և լայն իրավունքներ: Գաղթողները բաժանվեցին երեք խմբի՝ երկրագործներ, արհեստավորներ և առևտրականներ: Երկրագործները բնակեցվելու էին պետական հողերում, իսկ արհեստավորներն ու առևտրականները՝ քաղաքներում: Նրանք ևս վեց տարի ժամանակով ազատվելու էին հարկերից ու պարհակներից, փոխարինաբար տրվելու էր 380 հազար ռուբլի վարկ՝ արծաթով:

Գաղթի մասին պաշտոնական թույլտվությունից անմիջապես հետո՝ 1829 թ. վերջերին և 1830 թ. սկզբներին, Արևմտահայաստանից սկսվեց զանգվածային գաղթ: Ըստ ռուսական պաշտոնական տվյալների, մինչև սահմանված ժամկետի ավարտը Ռուսական կայսրության սահմանները գաղթեց 14.050 ընտանիք՝ մոտավորապես 95-100 հազար մարդ: Արևմտահայերի գաղթի կազմակերպման գործում առանձնակի ավանդ ունեցավ Էրզրումի հայոց հոգևոր առաջնորդ Կարապետ արք. Բագրատունին: Հատուկ ծառայությունների համար նա ռուսական կառավարության կողմից պարգևատրվեց Ս. Աննայի առաջին աստիճանի շքանշանով: Կարինից գաղթածները հիմնականում հաստատվեցին հայոց հինավուրց Ջավախքում, առավելապես՝ Ախալքալաքում և շրջակայքում, ինչպես նաև՝ Ախալցխայում, Ծալկայում, մասամբ՝ Լոռիում: Կարսեցիները տեղավորվեցին Շիրակի, Ապարանի և Թալինի շրջաններում, իսկ ալաշկերտցիները՝ Սևանի ավազանում, մասամբ՝ Սուրմալուում և Ծաղկաձորում: Միայն Հայկական մարզում բնակություն հաստատեց շուրջ 22 հազար արևմտահայ գաղթական: Եթե դրան գումարենք այն 36 հազար պարսկահայերին, որոնք քիչ ավելի վաղ էին հաստատվել Հայկական մարզի տարածքում, ապա Արևելյան Հայաստան գաղթողների ընդհանուր թիվը կկազմի 58 հազար մարդ: Հիշենք, որ մինչև Ռուսաստանին միանալը Երևանի և Նախիջևանի խանություններում ապրում էր ընդամենը 25 հազար հայ, որը կազմում էր բնակչության ընդհանուր թվի մեկ քառորդը: Այժմ այդ թիվը եռապատկվելով՝ հասավ 83 հազարի՝ կազմելով բնակչության կեսից ավելին: 50-ական թվականների կեսերին այդ թիվը կրկնապատկվեց և կազմեց ամբողջ բնակչության 59 տոկոսը: Հայության անընդմեջ աճը այստեղ շարունակվում էր նաև հետագա տարիներին: Փաստորեն սկիզբ դրվեց հայ ժողովրդի համախմբմանը, և վերականգնվեց նրա հավաքական գոյությունը Արևելյան Հայաստանում, որը դարձավ հայության պահպանման հուսալի տարածք: Նախ և առաջ հենց սրանում է Ռուսաստանին Արևելյան Հայաստանի միացման պատմական ու առաջադիմական անուրանալի նշանակությունը:

Թուրքահայաստանի և Պարսկահայաստանի կողքին առաջացավ Ռուսահայաստանը, որտեղ հայ ժողովրդի արևելահայ հատվածին հնարավորություն ընձեռվեց ապրել ու առաջադիմել անհամեմատ նպաստավոր պայմաններում: Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին բարենպաստ պայմաններ ստեղծեց նրա բազմակողմանի զարգացման համար: Երկրամասի տնտեսությունը միաձուլվեց ռուսական կայսրության տնտեսական կյանքին, հայությունը հաղորդակից եղավ զարգացման ավելի բարձր մակարդակ ունեցող երկրի արտադրողական ուժերին, դրական տեղաշարժեր կատարվեցին արևելահայերի հասարակական-քաղաքական ու մշակութային կյանքում: Բացվեցին նոր դպրոցներ, հիմնվեցին տպարաններ, սկսեցին լույս տեսնել բազմաթիվ թերթեր ու ամսագրեր: Այդ ամենով հանդերձ Ռուսաստանի կազմի մեջ ընդգրկվելով՝ հայությունը չազատվեց ազգային ու սոցիալական հարստահարումից: Հայ ժողովուրդը ենթարկվում էր գաղութային ճնշումների, թեև պարսկական կեղեքումների հետ դրանք համեմատության եզրեր չունեին:

XIX դարի սկզբների իրադրության պայմաններում Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին հայ ժողովրդի համար միակ ճիշտ ելքն էր:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

1877-1878 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

1. 1877-1878 ԹԹ. ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԿՈՎԿԱՍՅԱՆ ՃԱԿԱՏԸ

ա. Ռազմական գործողությունների ընթացքը: *Ղրիմի պատերազմում (1853-1856) կրած ծանր պարտության հետևանքով Ռուսաստանը կորցրեց իր ազդեցությունը Բալկաններում և Մերձավոր Արևելքում: Նրա միջազգային հեղինակությանը հասցվեց ծանր հարված: Հետպատերազմական երկու տասնամյակների ընթացքում Ռուսաստանը տենդագին նախապատրաստվում էր նոր պատերազմի, որը ռուսական կառավարամետ շրջաններում դիտվում էր որպես կենսական անհրաժեշտություն՝ Ղրիմի պատերազմով տերության սասանված միջազգային հեղինակությունը վերականգնելու և հատկապես Բոսֆոր և Դարդանել նեղուցներին տիրանալու համար:*

Պահն ավելի քան նպաստավոր էր. Թուրքական բռնապետության դեմ ապստամբություններ էին բռնկվել Բոսնիայում, Հերցեգովինայում և Բուլղարիայում: 1876 թ. Սերբիան և Չեռնոգորիան պատերազմ հայտարարեցին Թուրքիային:

Նշված իրադարձությունները և հատկապես Թուրքերի կազմակերպած բուլղարական ջարդերն ունեցան միջազգային լայն արձագանք: Դարձյալ շրջանառության մեջ դրվեց Արևելյան հարցը: Եթե Ռուսաստանը, խրախուսելով բալկանյան ժողովուրդների հակաթուրքական պայքարը, փորձում էր անդամահատել Թուրքիան և տիրապետել նեղուցներին, ապա Անգլիան Թուրքիայի տարածքային ամբողջականությունը պահպանելու պատրվակով ձգտում էր ընդդեմ Ռուսաստանի ուժեղացնել իր դիրքերը Մերձավոր Արևելքում: Հակառուսական չեչտված դիրքորոշում էին որդեգրել նաև Ավստրո-Հունգարիան և Գերմանիան: Ռուսաստանը փորձում էր հարցը լուծել նախ դիվանագիտական ճանապարհով: Ռուսական կողմը նախատեսում էր Կ. Պոլսում հրավիրել միջազգային կոնֆերանս՝ Օսմանյան կայսրության տիրապետության ներքո գտնվող սլավոնական ժողովուրդների հարցը դիվանագիտական ուղիներով լուծելու նպատակով: Նրա հետևողական գործունեության շնորհիվ էր, որ 1876 թ. դեկտեմբերի 16-ին Կ. Պոլսում իր աշխատանքները սկսեց միջազգային կոնֆերանսը: Դեսպանաժողովի նախօրյակին Կ. Պոլսի Հայոց պատրիարք Ներսես Վարժապետյանը հատուկ ուղերձով դիմում է Անգլիայի դեսպան Էլիոտին՝ խնդրելով, որ կոնֆերանսում քննարկման առարկա դառնա նաև Արևմտյան Հայաստանի ազգաբնակչության դրության բարելավման հարցը: Ուղերձում հույս էր հայտնվում, թե արևմտահայերին պետք է տրվի սլավոնների համար նախատեսվող ինքնավարության նման ինքնավարություն: Հիմնավորելով իր այս առաջարկը՝ Ներսես պատրիարքը պարզաբանում էր. «Հայկական խնդիրն իր այս ձևին մեջ, ինքնիրմե չծնավ, այլ ընդհանուր Արևելյան խնդիրեն ծագեցավ» և որ այն գոյություն ուներ «ոչ թե դարեր ի վեր», երբ դեռևս չկար ո՛չ Բոսնիա-Հերցեգովինայի և ո՛չ էլ Բուլղարիայի խնդիրները: Հայկական խնդիրը, շարունակում է պատրիարքը, Հայաստանի հայերի կրած հարստահարությունների խնդիրն է և հայությունը տասը տարուց ի վեր փորձում է Բարձրագույն Դռնից հայցել հարստահարումների վերացումը: «Ահա՛ այս էր համայն Հայոց խնդիրը», - եզրափակում է Ն. Վարժապետյանը:

1876 թ. Կ. Պոլսի դեսպանաժողովում Հայկական հարցը չքննարկվեց, իսկ կոնֆերանսը, չհանգելով որևէ դրական արդյունքի, փակվեց 1877 թ. հունվարին:

Ապստամբությունները ճնշվեցին առանձնակի դաժանությամբ, իսկ Սերբիան և Չեռնոգորիան պարտություն կրեցին: Սլավոնական երկրներում Թուրքերի գազանությունների, նրանց կազմակերպած արյունալի սպանդի մասին մանրամասնությունները սարսափեցրին Եվրոպային: Ռուսական հասարակական շրջանները իրենց կառավարությունից պահանջում էին օգնել եղբայրակից ժողովուրդներին և նրանց ազատել սուլթանական բռնակալությունից: Առաջնորդվելով իր արտաքին քաղա-

քականության չահախնդրություններով՝ ցարական կառավարությունը հանդես եկավ ապստամբներին պաշտպանելու վճռականությամբ և սուլթանից պահանջեց լայն բարենորոգումներ անցկացնել սլավոնական երկրամասերում: Անգլիայի և Ավստրո-Հունգարիայի խորհրդով սուլթանը մերժեց Ռուսաստանի պահանջները:

Պատերազմը դառնում էր օրերի հարց: 1877 թ. ապրիլի 12-ին Ռուսաստանը պատերազմ հայտարարեց Թուրքիային: Ինչպես XIX դարի նախորդ ռուս-թուրքական պատերազմների, այնպես էլ այս պատերազմի ժամանակ ռազմական գործողություններն ընթանում էին միաժամանակ և՛ Բալկանյան, և՛ Կովկասյան ռազմաճակատներում:

Գլխավորը, անչուշտ, Բալկանյան ռազմաճակատն էր: Ռուսական բանակը, Մեծ իշխան Նիկոլայ Ռոմանովի հրամանատարությամբ հաջողությամբ իրականացնելով իր հարձակողական ծրագիրը, մեկը մյուսի հետևից գրավելով Շիպկան, Պլևնան, Սոֆիան, Պլովդիվն ու Ադրիանապոլիսը՝ ընդհուպ մոտեցավ Կ. Պոլսին:

Կովկասյան ռազմաճակատը (գլխավոր հրամանատար Մեծ իշխան Միխայիլ Ռոմանով) բաժանված էր երկու թևի: Առաջինը՝ Կովկասյան 60 հազարանոց կորպուսը (հրամանատար Մ. Տ. Լորիս-Մելիքով), գործում էր կենտրոնում: Այդ հարձակումն իրականացվում էր երեք ուղղություններով: Գլխավոր հարվածը տրվում էր Ալեքսանդրապոլ-Կարս ուղղությամբ (30 հազար զինվոր): Ձախ ուղղությունը՝ գեներալ Արշակ Տեր-Ղուկասովի հրամանատարությամբ գործող Երևանյան զորամասը (13 հազար զինվոր), առաջադրանք ուներ չարժվելու դեպի Ալաշկերտի հովիտ: Աջ ուղղությամբ գործող Ախալցխայի զորամասը (14 հազար զինվոր) գեներալ Դևելի հրամանատարությամբ հարձակվելու էր Ախալքալաք-Արդահան ուղղությամբ: Թուրքական 75 հազարանոց բանակը (գլխավոր հրամանատար Ահմեդ Մուխտար փաշա) հանձնարարություն ուներ կասեցնել ռուսական հարձակումը, հետ մղել այն և կայծակնային արագությամբ ռազմական գործողությունները տեղափոխելով Ռուսաստանի տարածք՝ ջախջախել հակառակորդին:

Ռուսական բանակն իր մարտունակությամբ ու կազմա-

կերպվածությամբ գերազանցում էր թուրքականին: Արդեն պատերազմի վեցերորդ օրը՝ ապրիլի 18-ին, Երևանյան զորամասը հարձակվելով Իգդիրից՝ գրավեց Բայազետը, ապա՝ Դիադինը: Բայազետում թողնելով փոքրաթիվ կայազոր՝ Տեր-Ղուկասովը չարժվեց դեպի Ալաշկերտ, որը գրավեց հունիսի սկզբներին: Ֆայիք փաշայի հրամանատարությամբ Վանում տեղակայված 10 հազարանոց թուրքական զորամասը, օգտվելով բարեպատեհ առիթից, հունիսի 6-ին պաշարեց Բայազետի բերդը: Ամրոցի ռուսական փոքրաթիվ կայազորը և չորս հարյուր հայ կամավորներ կապիտան Ֆեոդոր Շտոկվիչի հրամանատարությամբ 23 օր չարունակ հերոսաբար հետ էին մղում թուրքերի գրոհները: Սպառվելու վրա էին զինամթերքն ու սննդամթերքը, մեծ թիվ էին կազմում վիրավորները: Դրությունն օրհասական էր: Տեղեկանալով Բայազետի կայազորի ծանր իրավիճակի մասին՝ Ա. Տեր-Ղուկասովը կարողացավ կատաղի մարտերից հետո հունիսի 28-ին ջախջախել թուրքերին և ազատագրել քաղաքը:

Դեռևս մայիսին ռուսական զորքերը գրավել էին Արդահանը, իսկ հոկտեմբերին Ալաջայի բարձունքներում պարտության մատնելով Մուխտար փաշայի հիմնական ուժերը՝ մոտեցել էին Կարսին: Նոյեմբերի 6-ին գեներալ Հովհաննես Լազարևի ղեկավարած ռուսական բանակը գիշերային հանդուգն գրոհից հետո գրավեց Կարսի ամրոցը, որի 30 հազարանոց կայազորը գերի հանձնվեց: Կարսի անկումը կանխորոշեց Կովկասյան ճակատում ռազմական գործողությունների հետագա ընթացքը. փետրվարի 8-ին առանց մարտերի հանձնվեց Էրզրումը:

Պատերազմում Թուրքիան ծանր պարտություն կրեց: Ռուսական բանակները կանգնած էին Կ. Պոլսից ընդամենը մի քանի կմ հեռավորության վրա, հանգամանք, որը չէր կարող չանհանգստացնել Անգլիային և Ավստրո-Հունգարիային: Եվ պատահական չէ, որ բրիտանական նավատորմը փետրվարի 15-ին մտավ Մարմարա ծով և խարիսխ ձգեց Իշխանաց կղզիների առաջ՝ Կ. Պոլսի մատույցներում: Ռուսական կառավարությունը ստիպված էր ընդունել հաշտության բանակցություններ սկսելու թուրքական կողմի առաջարկը: Բանակցություններն ընթացան Սան-Ստեֆանոյում՝ Առաքել ամիրա Տատյանի ամառանոցում: Ռուսական պատվիրակության ղեկավարն էր իշխան Ն. Պ. Իգ-

նատեր: Թուրքական պատվիրակությունը գլխավորում էր արտաքին գործոց նախարար Սավֆեթ փաշան, պատվիրակության խորհրդականն ու քարտուղարն էր Սարգիս բեյ Համամջյանը: 1878 թ. փետրվարի 19-ին կնքվեց նախնական պայմանագիր: Այդ պայմանագրի համաձայն՝ Սերբիան, Չեռնոգորիան, Ռումինիան հռչակվեցին անկախ, իսկ Բուլղարիան, Բոսնիան, Հերցեգովինան ստացան ինքնավարություն: Ռուսաստանը վերցրեց Բեսարաբիան: Նրան անցան Բայազետը, Արդահանը, Կարսն ու Բաթումը: Բասենն ու Էրզրումը վերադարձվեցին Թուրքիային:

Սան-Ստեֆանոյի պայմանագիրը չափազանց ուժեղացրեց Ռուսաստանի դիրքերը Բալկաններում և Մերձավոր Արևելքում: Ռուսաստանի հետագա հզորացումը թույլ չտալու համար Անգլիայի և Ավստրո-Հունգարիայի պահանջով որոշվեց վերանայել Սան-Ստեֆանոյի պայմանագիրը: 1878 թ. հունիսի 1-ին Բեռլինում հրավիրվեց մեծ տերությունների կոնգրես (վեհաժողով): Կոնգրեսի աշխատանքները շարունակվեցին մինչև հուլիսի 1-ը, որի ընթացքում վերանայվեցին Սան-Ստեֆանոյի նախնական պայմանագրի բոլոր 29 հոդվածները:

բ. Հայերի մասնակցությունը ռազմական գործողություններին: Ինչպես XIX դարի ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմների, այնպես էլ այս պատերազմի ժամանակ հայերի անվերապահ համակրանքը Ռուսաստանի կողմն էր, և նրանք լայն մասնակցություն ունեցան ռազմական գործողություններին: Ճիշտ է նկատել ռուս պատմաբան Վ. Պոտտոն, որ «հանձինս հայերի ռուսները ձեռք բերեցին հուսալի բարեկամներ, որոնց վրա կարելի էր հենվել»:

Պատերազմը սկսվելուց անմիջապես հետո Թիֆլիսի, Երևանի, Ալեքսանդրապոլի, Բաքվի և Ելիզավետպոլի հայ հասարակական շրջանները հրավիրեցին ժողովներ, որոնցում կոչ էր արվում թուրքական տիրապետությունից արևմտահայ եղբայրներին ազատագրելու համար ստեղծել կամավորական ջոկատներ: Ապրիլին ձևավորվեց կամավորական ութ ջոկատ, այդ թվում երեքը՝ Երևանում: Կամավորական ջոկատների ստեղծումը շարունակվում էր նաև ամբողջ պատերազմի ընթացքում: Որոշ շրջաններում (Ալեքսանդրապոլ, Սուրմալու, Վաղարշապատ և այլուր) կամավորական շարժումն այնպիսի լայն ծավալ էր ստացել, որ տեղական իշխանությունները ստիպված էին դադարեցնել կամավորների ցուցակագրումը: Ըստ ռուսական պաշտոնական հաղորդագրությունների՝ միայն միլիցիայում ծառայելու համար կամավոր էին գրվել 42 հազար հայ երիտասարդներ, որոնք ընդգրկվել էին 108 մարտական միավորումներում: Նրանցից շատերը զենք ստացան և ակտիվորեն մասնակցեցին ռազմական գործողություններին:

Հայ կամավորներից կազմված ջոկատները կատարում էին ամենատարբեր առաջադրանքներ՝ հիմնականում ստանձնելով առաջապահների, պահակայինների, ուղեկցորդների ջոկատների պարտականություններ: Այդ ջոկատները ամենագործուն մասնակցությունն են ունեցել Կաղզվանի, Արդահանի և Կարսի գրավման մարտերին: Ղարաբաղի հայերից կազմված հեծյալ հազարյակը՝ Գրիգոր Մելիք-Շահնազարյանի և Համբարձում Հախումյանցի հրամանատարությամբ, աչքի ընկավ թուրքերի կողմից պաշարված Բայազետի ազատագրության մարտերում: Կովկասյան ռազմաճակատում ռազմական գործողությունները ղեկավարել են 10 հայ գեներալներ և 500 սպաներ, այդ թվում՝ Կովկասյան առանձին կորպուսի հրամանատար, գեներալ-համհարզ Միքայել Լոռիս-Մելիքովը, գեներալ-լեյտենանտներ Հակոբ Ալխազովը, Հովհաննես Լազարևը, Արշակ Տեր-Ղուկասովը, Էրզրումի ռազմական օկրուգի պետ, գեներալ-մայոր Բեհբուտ Շելկովնիկովը և ուրիշներ: Պատերազմի տարեգրության մեջ անձնազոհ պայքարի փառավոր էջեր գրեցին Ասո Հակոբյանը, Հարություն Մկրտչյանը, Գաբրիել Գեղամյանը, Դանիել Հարությունյանը և շատ ուրիշներ, որոնք պատվով և արիությամբ էին կատարում տրված հանձնարարությունները: Ռազմական գործողություններին մասնակցած հազարավոր հայ կամավորներ զոհվեցին Բայազետի, Կարսի, Էրզրումի ու այլ քաղաքների գրոհների ժամանակ: Մարտերում ցուցաբերած հերոսության և արիության համար բազմաթիվ կամավորներ արժանացան մարտական պարգևների: Առանձնապես ուշադրության արժանի սխրագործություն էր կատարել կամավոր Սամսոն Տեր-Պողոսյանը: Բայազետի բերդում պաշարված ռուսական կայազորի հրամանատարությունը որոշում է ստեղծված օրհասական վիճակի մասին հաղորդել գեներալ Արշակ Տեր-Ղուկասովին: Դա

փրկության միակ ելքն էր: Այդ վտանգավոր հանձնարարությունը ինքնակամ կատարում է Տեր-Պողոսյանը, որը մեծ հնարամտությամբ դուրս գալով թուրքական շրջապատման օղակից՝ լուր է հասցնում գեներալին: Բայազետի ռուսական կայազորը փրկվեց վերահաս աղետից: Ցուցաբերած արիության համար Ս. Տեր-Պողոսյանը պարգևատրվեց ոսկե մեդալով և արժանացավ ենթասպայի աստիճանի: Այս դեպքերն իրենց գեղարվեստական արտացոլումն են գտել Րաֆֆու «Խենթը» վեպում:

Հայերն աչքի են ընկել նաև Բուլղարիայի ազատագրության համար մղված մարտերում: Լայնորեն հայտնի դարձավ Հովհաննես Սվաճյանի սխրանքը, որի հնարամտության շնորհիվ ոչնչացումից փրկվեց Բուլղարիայի Պազարջիկ քաղաքը: Ի նշան երախտագիտության՝ Պազարջիկի համայնքային խորհրդի հատուկ որոշմամբ Սվաճյանի հիշտակը հավերժացնելու համար քաղաքի փողոցներից մեկը անվանվեց նրա անունով: Անձնազոհությամբ են աչքի ընկել Կարապետ Երանոսյանը, Ստեփան Աբգարյանը և ուրիշներ:

Պատերազմի ամիսներին հայերը ռուսական բանակին ցույց տվեցին նաև զգալի նյութական օգնություն: Նրանք զորքին ձրի մատակարարում էին հաց, այլուր, միս, անասուն, գինի, անասնակեր, փոխադրամիջոցներ և այլն: Միայն Երևանի նահանգի բնակիչները տրամադրել էին 36 հազար սայլ, 1100 ձի, 6000 ուղտ, 1000 փութ ցորեն, 2000 փութ գարի և այլն, իսկ Ալեքսանդրապոլի գավառը տրամադրել էր՝ 320 հազար փութ խոտ, 24 հազար փութ գարի և այլն: Երևանում կազմակերպվել էր հատուկ հանձնախումբ, որի խնդիրն էր խնամել վիրավոր և հիվանդ ռուս զինվորներին և նյութական միջոցներ հանգանակել նրանց կարիքները հոգալու համար: Ղարաքիլիսա (Վանաձոր) գյուղի բնակիչներն իրենց բնակարանները տրամադրել էին տեղի զինվորական հոսպիտալին՝ վիրավորների լիակատար բուժումն ապահովելու համար: Հայ քաղաքացիական բնակչությունը իր սայլերով, գործիքներով ու սեփական աշխատանքով օգնում էր ռուս սակրավորներին, անմիջական մասնակցություն ցուցաբերում ճանապարհների, կամուրջների և ամրությունների շինարարության ու այլ աշխատանքներում:

Երբ 1877 թ. ապրիլի կեսերին ռուսական բանակը մտավ

Արևմտյան Հայաստան, հայ բնակչությունը նրան դիմավորեց մեծ ոգևորությամբ: Արևմտահայությունն իր ազատագրությունը թուրքական տիրապետությունից կապում էր ռուսական զենքի հաղթանակի հետ: Ազատագրված շրջանների հայ բնակչությունը ռուսական զորքերին օգնում էր պարենով, հանդերձանքով, փոխադրամիջոցներով: Նրանցից շատերը ծառայության էին անցնում պահակային ջոկատներում, դառնում հետախույզներ, նամակատարներ, ուղեկցողներ, սանիտարներ: Ռուս հուշագրողներից մեկը ճիշտ է նկատել, որ արևմտահայերը «ռուս զինվորներին համարում էին փրկարարներ, որոնք եկել էին իրենց բազմադարյան գերության շղթաները խորտակելու»: Ուստի պատահական չէ, երբ պարզ դարձավ, որ ռուսական բանակը հեռանալու է գրավյալ տարածքներից, բազմաթիվ արևմտահայեր սկսեցին գաղթել Ռուսաստանի տիրապետության ներքո հայտնված շրջանները, նրանք անկեղծորեն խոստովանում էին, թե «առանց ռուսական զորքերի ներկայության՝ իրենց կյանքը դառնալու է դժոխք»:

գ. Կարսի մարզի կազմավորումը: Սան-Ստեֆանոյի պայմանագրի 19-րդ հոդվածի b) ենթահոդվածի համաձայն՝ Թուրքիան Ռուսաստանին էր զիջելու «Արդահանը, Կարսը, Բայազետը և տարածքը՝ մինչև Սողանլուղ (Մեծրաց լեռներ)», ինչպես նաև չափազանց կարևոր նշանակություն ունեցող Բաթում քաղաքն ու շրջակայքը: Այսպիսով, Արևմտյան Հայաստանի 35.650 քառ. կմ տարածքն անցնում էր Ռուսաստանի տիրապետության տակ: Ցավոք, անգլիական դիվանագիտության ճնշման ներքո Բեռլինի կոնգրեսը որոշեց (60-րդ հոդված) Բայազետի հովիտը՝ Ալաշկերտ քաղաքով հանդերձ, վերադարձնել Թուրքիային, քանզի, անգլիական կողմի հիմնավորմամբ՝ «այդ հովիտը հանդիսանում է դեպի Պարսկաստան տանող տրանզիտային ճանապարհ և Թուրքիայի համար ունի հսկայական նշանակություն»:

Ռուսաստանին անցած Արդահանի և Կարսի շրջանների հիման վրա 1878 թ. նոյեմբերի 1-ի Ալեքսանդր II-ի հրովարտակով կազմվում է Կարսի մարզը (19.000 քառ. կմ), որը ստորաբաժանվում է չորս օկրուգների՝ Արդահանի, Սարիղամիշի, Օլթիի և Կարսի:

Պատմական համեմատաբար կարճ ժամանակահատվածում (1878-1917) Կարսի մարզը արձանագրեց ժողովրդագրական, տնտեսական ու մշակութային զգալի աճ: 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո Կարսի մարզում բնակություն հաստատեցին մեծ թվով հայ գաղթականներ Ալաշկերտից, Բայազետից, Կարինից և Արևմտյան Հայաստանի այլ շրջաններից: Փաստորեն մարզը դարձավ հայերի ազգային համախմբման կենտրոններից մեկը: Իր հերթին ցարական կառավարությունը Ռուսաստանի կենտրոնական շրջաններից մարզի տարածք տեղափոխեց նաև զգալի թվով ռուս վերաբնակիչների (ավելի քան 20 գյուղ): Առաջին համաշխարհային պատերազմի սկզբներին մարզն ուներ շուրջ 400 հազար բնակչություն, որից 123 հազարը հայեր էին (մոտ 31 %):

1918-1920 թվականներին Կարսի մարզը գտնվել է Հայաստանի Հանրապետության կազմում, և միայն 1921 թ. մարտի 16-ի Մոսկվայի խորհրդա-թուրքական «եղբայրության» պայմանագրով է անցել Թուրքիային:

2. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

ա. Մագումը, բովանդակությունը, փուլերը: Հայկական պետականության անկումից հետո Հայ ժողովուրդը, ինչպես տեսանք, ազատագրական պայքարի բարձրացավ անկախության վերականգնման համար: Հայ ազատագրական միտքը հենց սկզբից որդեգրեց այն քաղաքական ուղեգիծը, որ Հայաստանի ազատագրումը պետք է տեղի ունենա դրսի ուժերի օգնությամբ:

Նման ճանապարհով է ծագել և պատմության թատերաբեմ իջել Հայկական հարցը: Ընդունված սահմանում է, որ Հայկական հարցը օտարերկրյա տիրապետություններից Հայաստանի ազատագրման և հայկական պետականության վերականգնման համար մղված պայքարի հարց է: Ըստ այդ սահմանումի Հայկական պետականության վերականգնման խնդիրը դրված է եղել հայ ազատագրական պայքարի բազում սերունդների առջև, ուրեմն Հայկական հարցը ծագել է հայ ազատագրական պայքարի հետ միաժամանակ և հարատևել այդ պայքարի հետ միասին: Հայ ժողովրդի լավագույն զավակները սերնդեսերունդ հետևողական պայքար են մղել այդ գաղափարը իրականություն դարձնելու համար: Անցնում էր ժամանակը, փոխվում էին սերունդները, բայց հայ ժողովրդի առջև դրված այդ գերխնդիրը լուծում չստանալով՝ շարունակում էր մնալ օրակարգի հարց:

Հայկական հարցի պատմությունը պայմանականորեն բաժանվում է երկու փուլի: Առաջինը ընդգրկում է XV դարի երկրորդ կեսից մինչև 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը, երբ հայ ազատագրական շարժման գործիչները դիվանագիտական բանակցությունների միջոցով փորձում էին եվրոպական որևէ պետության կամ պետությունների խմբի զինված միջամտությամբ ազատագրել Հայաստանը և վերականգնել նրա պետականությունը: Այս փուլում Հայկական հարցը չի մտել միջազգային դիվանագիտության ոլորտ, չի դարձել ընդհանուր քննարկման առարկա և, բնականաբար, դրա մասին չի ընդունվել որևէ որոշում: Անշուշտ, տերությունները տեղյակ էին հայերի դրությանն ու պայքարին, որոշ դեպքերում էլ առանձին երկրներ փորձել են միջամտել իրադարձություններին, ինչպես, օրինակ, Ֆրանսիան 1862 թ. Զեյթունի հայտնի դեպքերի ժամանակ: Այս փուլում փաստորեն Հայկական հարցը այդպես էլ մնաց որպես հայերին հետաքրքրող ու վերաբերող ներքին հարց:

Հայկական հարցի երկրորդ փուլն ընդգրկում է 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից մինչև Առաջին համաշխարհային պատերազմի սկիզբը. այս փուլը նշանավորվեց Հայկական հարցի միջազգայնացմամբ, երբ այն դարձավ դիվանագիտական քննարկման առարկա:

1878 թ. հետո Հայկական հարցը բազմիցս արծարծվել է ամենատարբեր միջազգային վեհաժողովներում և պայմանագրերում: Այն վերաբերվել է միայն արևմտահայությանը, այսինքն՝ Օսմանյան կայսրության հայկական նահանգների հայությանը և ոչ երբեք արևելահայությանը:

բ. Հայկական հարցը Սան-Ստեֆանոյի պայմանագրում: Նախորդող գլխում մենք ծանոթացանք ազատագրական շարժման բոլոր հայտնի դրվագների հետ և տեսանք, որ 400-ամյա այդ պայքարն ավարտվեց անարդյունք: XIX դարի 70-ական թվականներին Հայկական հարցի բովանդակության մեջ տեղի

ունեցավ չրջադարձ: Նախ՝ այն առաջին անգամ դարձավ միջազգային դիվանագիտության հարց, և երկրորդ՝ այս չրջափուլում խոսքը գնում էր ոչ թե հայերի անկախության, այլ արևմտահայերի չրջանում բարենորոգումներ անցկացնելու և նրանց համար անվտանգության երաչխիքներ ապահովելու մասին:

Հայկական հարցի սկզբնավորումը առնչվում է XIX դարի 70-ական թվականներին Բալկանյան թերակղզում ծավալված հակաթուրքական բուռն իրադարձություններին: Բալկանյան դեպքերը խանդավառեցին նաև հայ ազատագրական չարժման գործիչներին: Այդ չրջանում է, որ հուզումներ բռնկվեցին Զեյթունում, Վանում և Թուրքահայաստանի այլ վայրերում: Թուրքական կառավարությունը, որին լայնորեն աջակցում էր Անգլիան, դաժանորեն հաչվեհարդար տեսավ ինչպես Բալկանյան ապստամբած ժողովուրդների, այնպես էլ հայերի հետ: Վան քաղաքը դարձավ հրո ճարակ:

Դեռևս պատերազմի ընթացքում հայ հասարակական չրջանները փորձում էին Հայկական դատը ներկայացնել Ռուսաստանի «բարեհայեցողությանը»: Բանակցություններ են վարում մեծ իչխան Նիկոլայ Նիկոլաևիչի հետ, իսկ 1878 թ. փետրվարի 1-ին պատրիարք Վարժապետյանը Ալեքսանդր II-ին է ներկայացնում մի աղերսագիր, որտեղ հայցում է Ռուսաստանի միջամտությունը Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ կատարելու համար: Ալեքսանդր II-ը տվեց պաչտոնական համաձայնություն և հանձնարարվեց ռուսական պատվիրակության ղեկավար կոմս Ն. Իգնատևին «Թուրքերի հետ կնքվելիք դաչնակցության պայմանագրում ընդգրկել հայերի համար այս անչափ կարևոր հարցը»: Սկզբում հայկական կողմն ակնկալում էր ինքնավարության խոստում կորզել տերություններից, բայց ինչպես Ռուսաստանը, այնպես էլ Անգլիան այդպիսի խոստումներ չտվեցին և ինքնավարության հարցը մեջտեղից դուրս եկավ: Մնում էր միայն բարենորոգումների խոստումը: Ռուսական պատվիրակ Իգնատևը հայերի դժգոհությանն ի պատասխան պարզաբանում էր, որ պատմական այս փուլում միայն դա էր հնարավոր ու խորհուրդ էր տալիս լինել իրատես և բավարարվել ձեռք բերվածով: Սան Ստեֆանոյի դաչնագրի 16-րդ հոդվածն ամբողջությամբ վերաբերում էր Թուրքահայության հարցին,

որտեղ ասվում էր. **«Նկատի առնելով այն, որ ռուսական զորքերի դուրս բերումը նրանց կողմից գրավված Հայաստանի՝ Թուրքիային վերադարձվելիք վայրերից կարող է այնտեղ առիթ տալ բախումների և բարդությունների, որոնք երկու պետությունների բարի հարաբերությունների վրա կունենան վնասակար ազդեցություն, Բարձր Դուռը պարտավորվում է անհապաղ կենսագործել հայաբնակ մարզերի տեղական կարիքներից հարուցվող բարելավումներ և բարենորոգություններ, և զերծ պահել հայերի անվտանգությունը քրդերից և չերքեզներից»:**

Թուրքահայերի հարցին էին առնչվում նաև դաչնագրի 25-րդ և 27-րդ հոդվածները: 25-րդ հոդվածը նախատեսում էր ռուսական զորքերը Արևմտյան Հայաստանից դուրս բերել վեց ամսվա ընթացքում: Տրված ժամանակը բավարար էր, որ Բ. Դուռն այստեղ կատարեր «տեղական կարիքներից հարուցվող բարելավումներ և բարենորոգություններ»: Փաստորեն Ռուսաստանը ճանաչվում էր Հայկական հարցի լուծման երաչխավոր: 21-րդ և 27-րդ հոդվածներով Թուրքական կողմից պահանջվում էր պատժիչ միջոցներ չձեռնարկել այն անձանց նկատմամբ, որոնք պատերազմի ժամանակ աջակցել էին ռուսական բանակին, և չխոչընդոտել այն հայերին, որոնք ցանկություն կհայտնեին հեռանալ Թուրքիայից:

Այսպիսով, Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածով Թուրքիան պաչտոնապես ճանաչեց Օսմանյան կայսրության սահմաններում Հայաստան երկրի գոյությունը: Առաջին անգամ Հայկական հարցը վերածվեց քաղաքական գործոնի, տեղ գտավ միջազգային պայմանագրում և դարձավ Արևելյան հարցի բաղկացուցիչ մասը:

Այս բոլորով հանդերձ 16-րդ հոդվածը լի էր անորոչություններով: Նախ չէր նչվում, թե որո՞նք էին Հայկական նահանգների սահմանները, չէր որոչվում, թե ո՞վ պետք է ճչտեր տեղական կարիքները, բարենորոգումների բնույթն ու ընդգրկումը, և թե ինչպե՞ս պետք է Ռուսաստանը վերահսկեր Թուրքական կողմի համապատասխան ձեռնարկումները: Մի բան էր հստակ ու որոչակի. պայմանագրի համաձայն ռուսական բանակը տեղակայվելու էր Արևմտյան Հայաստանի գրավյալ տարածքում, որը դառնալու էր ռուսական ազդեցության ոլորտ,

իսկ հայ բնակչությունը մնալու էր նրա հովանավորության ներքո:

Սակայն 16-րդ հոդվածը չիրագործվեց: Սան-Ստեֆանոյի պայմանագիրը նախնական էր, և շահագրգիռ կողմերը ջանք չխնայեցին այն վերանայելու:

գ. Հայկական հարցը Բեռլինի վեհաժողովում: Սան-Ստեֆանոյի պայմանագիրը մեծապես ուժեղացնում էր Ռուսաստանի դիրքերը Բալկաններում, նեղուցներում և Մերձավոր Արևելքում: Այս հանգամանքը չէր բխում եվրոպական մեծ տերությունների շահախնդրություններից, որոնք անհապաղ միջոցներ ձեռնարկեցին՝ Ռուսաստանին զրկելու ձեռք բերած նվաճումներից: Անգլիայի և Ավստրո-Հունգարիայի անզիջում դիրքորոշումը հնարավոր էր դարձնում նույնիսկ պատերազմի բռնկում նրանց և Ռուսաստանի միջև: Եվ քանի որ վերջինս պատրաստ չէր պատերազմի, ուստի համաձայնվեց միջազգային կոնգրես հրավիրելու և կնքված հաշտության պայմանագիրը վերանայելու առաջարկներին: Նախատեսվեց նոր կոնգրեսը հրավիրել 1878 թ. ամռան սկզբներին Բեռլինում:

Կ. Պոլսի հայ հասարակական շրջանները որոշեցին մի պատվիրակություն ուղարկել Եվրոպա, որն այնտեղ պաշտոնապես ներկայացնելու էր «Հայ ազգի ցանկություններն ու ձգտումները»: Պատվիրակության գլուխ կարգվեց ճանաչված հոգևորական Մկրտիչ արքեպ. Խրիմյանը, քարտուղար՝ Մինաս Չերազը, անդամներ՝ Ստեփան Փափազյանը և Խորեն Նար-Պեյը: Պատվիրակությունը կոնգրեսին էր ներկայացնելու մի խնդրագիր, որի բովանդակությունը հետևյալն էր.

1. Հայկական գավառները պետք է համախմբվեին մեկ ընդհանուր նահանգի մեջ, որը կառավարվելու էր քրիստոնյա կառավարչի (նախընտրելի էր հայ) կողմից՝ հինգ տարի ժամանակով:
2. Նահանգապետը օժտված էր լինելու գործադիր իշխանությամբ և կարող էր պաշտոնանկ արվել միայն տերությունների համաձայնությամբ: Նրա նստավայր էր նախատեսվում Էրզրումը:
3. Նահանգի հարկերից ստացվող եկամտի 20%-ը տրվելու էր ֆինանսների նախարարությանը, իսկ մնացած 80%-ը պետք է հատկացվեր տեղի լուսավորության, առողջապահության, ճանապարհաշինության և տնտեսության զարգացման կարիքներին:
4. Սահմանվելու էր դավանանքի ազատություն, կազմվելու էին քրեական և քաղաքացիական նոր օրենսգրքեր:
5. Վարչական և դատական հիմնարկներում պետք է ապահովվեր քրիստոնյաների և մահմեդականների հավասարաչափ մասնակցության իրավունքը: Ոստիկանների թիվը պետք է հարաբերականորեն համապատասխաներ մահմեդական և հայ բնակչության թվին:
6. Հայերենը, թուրքերենի հետ հավասարաչափ, գործածության մեջ էր դրվելու վարչական ու դատական հիմնարկներում և դառնալու էր պաշտոնական լեզու:
7. Քրդական և չերքեզական հրոսակախմբերը զինաթափվելու էին, իսկ նրանց ասպատակությունների դեմ պայքարելու համար ստեղծվելու էին տեղական ոստիկանական ուժեր՝ եվրոպացի սպայի հրամանատարության ներքո:
8. Նշված բարենորոգումները կյանքում կիրառելու և վերահսկելու պատասխանատվությունը դրվելու էր միջազգային հանձնախմբի վրա:

Ինչպես ակներև է, հայկական այս ծրագրով չէր դրվում Թուրքիայից Արևմտյան Հայաստանի անջատման խնդիրը, չէր առաջարկվում հայկական նահանգները միացնել Ռուսաստանին, այլ դրվում էր միայն բարենորոգումների խնդիր, ճիշտ այնպես, ինչպես ժամանակին բալկանյան սլավոնների շրջանում կատարված բարենորոգումները: Ծրագրին կցված տեղեկագիրը պարունակում էր Օսմանյան կայսրությունում բնակվող հայ ազգաբնակչության թվաքանակի վերաբերյալ հավաստի վիճակագրություն: Դրա համաձայն կայսրության 3 միլիոն հայերից Արևմտյան Հայաստանում բնակվում էր 1.330 հազարը: Նույն տարածքում թուրքերի թիվը կազմում էր 530 հազար, քրդերինը՝ 120 հազար, մյուս ազգություններինը՝ 82 հազար: Փաստորեն հայերն Արևմտյան Հայաստանում բացարձակ մեծամասնություն էին կազմում բնակչության ընդհանուր թվում:

Հետաքրքիր է, որ սուլթանը քաջատեղյակ էր վերոնշյալ

խնդրագրին ու տեղեկագրին և անգամ խրախուսեց պատրիարքին՝ հայկական պատվիրակություն ուղարկելու Բեռլին: Նման դիրք բռնեց նաև Անգլիան: Այս ճանապարհով նրանք փորձում էին սեպ խրել հայերի և ռուսների միջև և, ի վերջո, ձախողել հայերի պահանջները, իսկ Հայկական հարցն ամփոփել իրենց մտադրությունների շրջանակներում: Եվ դա նրանց հաջողվեց:

Նախքան Բեռլին հասնելը հայկական պատվիրակության անդամները եղան Հռոմում, Փարիզում, Լոնդոնում, Ս. Պետերբուրգում, հանդիպումներ ունեցան քաղաքական, դիվանագիտական շրջանակների հետ, որոնք խոստացան կոնգրեսում պաշտպանել հայերի դատը: Պատվիրակությունն ամբողջ կազմով Բեռլին ժամանեց մայիսի կեսերին և կոնգրեսի մասնակիցներին բաժանեց Արևմտյան Հայաստանի ինքնավարության նախագիծն ու կից փաստաթղթերը, որոնք հենց սկզբից բավարար ուշադրության չարժանացան:

Կոնգրեսի աշխատանքներն սկսվեցին հունիսի 1-ին և ավարտվեցին ճիշտ մեկ ամիս անց՝ հուլիսի 1-ին: Հայ պատվիրակների բոլոր փորձերը՝ մասնակցելու Կոնգրեսին՝ մերժում ստացան, ուստի նրանք ստիպված էին բավարարվել միայն մասնակից երկրների պատվիրակների հետ առանձին հանդիպումներով: Բեռլինի կոնգրեսում վերանայվեցին Սան Ստեֆանոյի պայմանագրի համարյա բոլոր դրույթները, այդ թվում և Հայկական հարցին վերաբերող 16-րդ հոդվածը: Կոնգրեսում տնօրինում էին անգլիական դիվանագետները և հենց նրանց թելադրանքով ընդունվեց բանաձևի 61-րդ հոդվածը՝ հետևյալ ձևակերպումով. **«Բարձր Դուռը պարտավորվում է առանց հետագա հապաղման իրագործել հայաբնակ մարզերում տեղական կարիքներից հարուցված բարելավումներն ու բարենորոգումները և ապահովել հայերի անվտանգությունը չերքեզներից ու քրդերից: Բարձր Դուռը տերություններին պարբերաբար կհաղորդի այն միջոցների մասին, որոնք ինքը ձեռք է առել այդ նպատակի համար, իսկ տերությունները կհետևեն դրանց կիրառմանը»:** Կոնգրեսը որոշեց «Հայաբնակ մարզերում» բարենորոգումների հարցը չպայմանավորել ռուսական զորքերի առկայությամբ, այլ, ընդհակառակը, դրանք անցկացվելու էին այնտեղից ռուսական բանակի դուրս գալուց հետո: Փաստորեն

հայկական բարենորոգումների իրագործման իրավական երաշխիքը՝ ռուսական բանակի ներկայությունը, փոխարինվում էր տերությունների՝ բարենորոգումներին վերահսկելու անորոշ երաշխավորությամբ: Հատկանշական է, որ 61-րդ հոդվածում Հայաստան անվանումը այլևս չէր հիշատակվում, այլ օգտագործվում էր «Հայաբնակ մարզեր» անորոշ արտահայտությունը: Իսկ թե որո՞նք էին այդ մարզերը և ի՞նչ բնույթի էին լինելու բարենորոգումները, այդ մասին ոչինչ չէր ասվում:

Այսպիսով, Բեռլինի կոնգրեսում Հայկական հարցը դուրս բերվեց Թուրքիայի և Ռուսաստանի միջպետական հարաբերությունների ոլորտից և դրվեց միջազգային դիվանագիտության սեղանին, որն անիրական դարձրեց այդ հարցը լուծելու հեռանկարները, մյուս կողմից՝ այն դարձավ միջազգային դիվանագիտության շահարկումների առարկա՝ բաղում դժբախտություններ բերելով հայ ժողովրդին: Հայկական հարցի շահարկման դիմաց Անգլիան Թուրքիայից կորզեց Կիպրոսը, ինչպես նաև տնտեսական ու առևտրական բաղում առանձնաշնորհումներ:

Բեռլինի կոնգրեսը ճակատագրական նշանակություն ունեցավ Հայկական հարցի համար: Հուսախաբ լինելով դիվանագիտական ուղիներով այն լուծելու հեռանկարից՝ հայ գործիչները Թուրքական բռնակալությունից իրենց ժողովրդի ազատագրվելը կապեցին հեղափոխական պայքարի հետ:

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ԽՄԲԱԿՆԵՐԻ ՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆԴԵՍ ԳԱԼԸ: ԱԶԳԱՅԻՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԿԻԶԲԸ

1. ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ԽՄԲԱԿՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՈՒՄՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

ա. Ազատագրական խմբակները Արևմտյան Հայաստանում: *Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնակալության դեմ ծնունդ առավ XIX դարի երկրորդ կեսին: Անտանելի պայմանների մեջ գտնվող արևմտահայությունը այլևս ուրիշ միջոց չէր տեսնում:*

Դարի 60-80-ական թվականներին վճռական փոփոխություններ տեղի ունեցան հայ ազատագրական պայքարի գաղափարախոսության մեջ: Այն բարենորոգչությունից քայլ կատարեց դեպի զինված պայքարի անհրաժեշտության քարոզչություն: Նման փոփոխությունը հետևանք էր արևմտահայության օր օրի վատթարացող դժնդակ կացության: Օսմանյան պետության թանզիմաթյան շրջանը 1870-1880-ական թվականներին լիովին սպառել էր իրեն: Այդ հարաբերություններն ի վիճակի չէին եղել լուծելու կայսրության ազգային խնդիրը: Ավելի ու ավելի էր ամրապնդվում օսմանյան բարենորոգիչներին հակադիր այն տեսակետը, ըստ որի երկրի ապագան բոլոր մուսուլմանների միավորման և միատարր պետություն ստեղծելու մեջ է: Օսմանյան կայսրությունում պետական քաղաքականություն էր դառնում իրենց բնօրաններում դեռևս գոյատևող քրիստոնեական անկլավների վերացման հաջողված փորձերը: Նման պայմաններում

ծառանում էր անհեռանկար դրության մեջ գտնվող արևմտահայության գոյատևման, նրա կյանքի համար նվազագույն պայմաններ ստեղծելու խնդիրը: Ղրիմի պատերազմի ընթացքում Արևելյան հարցի վերաբացումը նշանավորվել էր Օսմանյան կայսրության քրիստոնյա ժողովուրդների ազատագրական պայքարի վերելքով: Արևմտյան Հայաստանում, Կիլիկիայում, կայսրության հայաշատ կենտրոններում սկսվում են ազատագրական պայքարի հնարավոր ուղիների տենդագին որոնումներ: Առաջանում են նախապայմաններ հայ գաղտնի քաղաքական խմբակների ու ազգային կուսակցությունների առաջացման, հայկական հեղափոխության ծավալման համար: Եվ այստեղ հստակորեն դրսևորվում էր հարցի ընկալման տարբերությունը հայության երկու հատվածների կողմից:

Արևմտահայ ազատագրական պայքարն ընթանում էր առավել սթափ, իրատեսական հունով՝ ելակետ ընդունելով նվազագույն կորուստներով թուրքահայերի վիճակը բարելավելու քաղաքականությունը: Ելնելով այն հանգամանքից, որ 1830-1860-ական թվականների ընթացքում Օսմանյան կայսրությունն ապրում էր Թանզիմաթի շրջանը, արևմտահայ ազատագրական միտքը ևս որդեգրեց «լուսավորչական» պայքարի մարտավարություն: Հիմնական նպատակն էր խաղաղ ճանապարհով հասնել արևմտահայության ազգային-մշակութային ինքնավարության և ապահովել ժողովրդի գոյությունը: Շարժման գլուխ էին անցել առաջադեմ հոգևորականությունն ու եվրոպական կրթություն ստացած նոր մտավորական սերունդը: Սկսվում է խաղաղ պայքար ազգային սահմանադրություն ունենալու համար:

Նշված տասնամյակները ապագա քաղաքական պայքարի դպրոց հանդիսացան:

Օտար երկրներում կրթություն ստացած հայ երիտասարդները Կ. Պոլիս էին բերում ոչ միայն գիտելիքներ ու եվրոպական մշակույթ, այլև եվրոպական հեղափոխությունների շունչը: Բազմաթիվ հայ ուսանողներ անձամբ մասնակցել էին 1830 և 1848 թվականների ֆրանսիական հեղափոխություններին: Հայրենիք վերադառնալով՝ նրանք հայ իրականության մեջ դարձան ազատության, հավասարության, եղբայրության գաղափարնե-

րի առաջին մունետիկները: Հիմնականում նրանց ջանքերով էր, որ արևմտահայության կյանքում սկսվեց մշակութային հեղափոխություն: Ստեղծվեց ազգային, մշակութային, կրթական համակարգ, բացվեցին Սկյուտարի, Նուբար-Շահնազարյան, Կեդրոնական, Պերպերյան վարժարանները Կ. Պոլսում, Սանասարյան վարժարանը՝ Կարինում, դպրոցներ, հոգևոր ճեմարաններ՝ Վանում, Վարագում, Տարոնում, Արմաշում և այլուր: Նշված կրթօջախները դարձան արևմտահայության քաղաքական ու ազգային զարթոնքի դարբնոցներ, այստեղ ձևավորվեց գավառահայ հեղափոխական սերունդը: Այս շրջանում էր, որ արևմտահայ ազատագրական շարժման ղեկավարները սկսեցին զգուշորեն, աստիճանաբար քայլեր կատարել դեպի արմատական պայքարի ուղի:

Թանզիմաթի ժամանակաշրջանում արևմտահայության հանդեպ թուրքական իշխանությունների որդեգրած հանդուրժողական քաղաքականությունը նրան հնարավորություն էր տալիս 1860-ական թվականներին փոքր նվաճումներով առաջ ընթանալ: Այս ուղու առաջին անարյուն հաղթանակը սուլթանի կողմից Հայոց Ազգային սահմանադրության ճանաչումն էր: Սուլթանական կառավարությունը, իր ողջ ուժերը կենտրոնացրած լինելով Բալկաններում, պարզապես խուսափում էր արևելյան շրջաններում նոր խնդիրներ ստեղծելուց:

Այնուհանդերձ, հայության ազգային ինքնագիտակցության զարթոնքը, Կ. Պոլսի հայ համայնքի համառ և հետևողական պայքարն անհանգստություն էր առաջացնում կառավարական շրջաններում: Ուստի պետությունը փորձում էր կասեցնել արևմտահայության համախմբման գործընթացը: Դա արվում էր արևմտահայությանը թուլացնելու մասնակի հարվածների, մուսուլմանական ներգաղթերի և, որ ամենակարևորն է՝ հայքրդական հարաբերությունները վատթարացնող գործողություններով: Արդեն Օսմանյան կայսրության արտաքին գործոց նախարար Ֆուադ փաշան իր քաղաքական կտակում նշում էր, որ հարկավոր է Արևելյան Անատոլիայում ուժեղացնել քրդական տարրը՝ նրանց հայերին հակադրելու և այնտեղ հավասարակշռություն պահպանելու նպատակով:

Նման քաղաքականության արդյունք էին նաև Զեյթունի

1862 թ. իրադարձությունները, որոնք նոր փուլ նշանավորեցին հայության ազատագրական պայքարի պատմության մեջ: Քաջ գիտակցելով զեյթունցի ազատասեր լեռնականների պայքարի վարակիչ ազդեցությունը համայն հայության վրա՝ սուլթանական կառավարությունը տասնյակ տարիներ համառորեն փորձում էր ոչնչացնել վերջիններիս կիսանկախությունը և փոխել շրջանի ժողովրդագրական կազմը: Գավառակի որոշ հողեր մուսուլմաններով բնակեցնելու փորձը ի վերջո քաջարի զեյթունցիներին ոտքի հանեց պատերազմի: Արծվաբույնի հաջող դիմադրությունը հսկայական նշանակություն ունեցավ համայն հայության համար: Զեյթունը նախանշում էր հայոց ազատամարտի նոր փուլը: Երկարատև ընդմիջումից հետո հայը կրկին հավատում էր սեփական ուժով ազատագրվելու հնարավորությանը: Արևմտահայ ազատագրական շարժման համար Զեյթունը խորհրդանշում էր ինչպես հայ ժողովրդի դիմադրական ոգու վերածնության, այնպես էլ որևէ եվրոպական տերության միջամտությամբ իր դարավոր երազանքի իրականացման հնարավորությունը: Զեյթունի ապստամբության ժամանակ Ֆրանսիայի գործուն միջամտությունը Կիլիկիայում հայկական պետականության վերականգնման հույսեր էր ներշնչում: Սակայն խզումը պայքարի լիբերալ մեթոդներից անմիջապես չիրականացավ:

Զեյթունից հետո երկու տասնամյակ էր հարկավոր արևմտահայության ազատագրության նոր ուղիներ փնտրելու համար: Զարգացման այս ճանապարհին հետաքրքրություն է ներկայացնում մասոնական շարժման տարածումը Կիլիկիայում, Կ. Պոլսում, Զմյուռնիայում, կայսրության հայաշատ ուրիշ կենտրոններում: Հայկական առաջին այդպիսի կազմակերպությունը՝ «Սեր» միությունը, ստեղծվել էր Կիլիկիայում դեռևս 1851 թվականին: Անվանապես կոչվելով հոգևոր միություն՝ իրականում այն իր առաջ դրել էր բավականին հստակ քաղաքական խնդիրներ: «Սեր» միությունը, որպես կազմակերպված մասոնական օթյակ, հանդես եկավ Կ. Պոլսում 1866 թվականի մայիսին: Հիմնադիրները քաղաքի հայության նշանավոր ներկայացուցիչներն էին՝ Սերովբե Ազնավուր, Սրապիոն Հեքիմյան, Սերովբե Թագվորյան, Միքայել Ալիչան, Մատթեոս Մամուրյան, Հարու-

թյուն Սվաճյան: Օթյակն իր առջև խնդիր էր դրել հասնել բոլոր հայերի եղբայրությանն ու միությանը՝ անկախ հավատի, հայացքների, տնտեսական և քաղաքական դրության տարբերություններից: Նա կոչ էր անում միավորել Կ. Պոլսի և կայսրության մյուս մեծ քաղաքների հայության և գավառահայության ուժերը՝ ազգային նպատակներն իրագործելու համար: Միավորման, համախմբման և աստիճանաբար հզորանալու գաղափարները մասոնական շարժման միջոցով աստիճանաբար ներմուծվեցին հայոց ազատագրական գաղափարների մեջ և իրենց ազդեցությունը թողեցին ինչպես կազմակերպվելիք «Պաշտպան Հայրենյաց», այնպես էլ Արմենական քաղաքական կազմակերպության վրա: Հետաքրքիր է, որ «Սեր» օթյակը շուտով պաշտոնապես ճանաչվեց Ֆրանսիայի «Արևելյան մեծ օթյակի» կողմից և վայելում էր վերջինիս հեղինակավոր պաշտպանությունը: Կարճ ժամանակահատվածում արևմտահայ իրականության մեջ երևան եկան նաև ուրիշ մասոնական կազմակերպություններ, որոնք կարևոր նշանակություն ունեցան հայությանը համախմբելու, սեփական ուժերի նկատմամբ վստահություն ներշնչելու տեսակետից:

Այդ տարիներին արևմտահայ ազատագրական գաղափարների վրա խոր ազդեցություն էին ունենում բալկանյան ժողովուրդների հակաթուրքական շարժումները և իտալական հեղափոխությունը, ինչպես նաև Ռուսաստանի հայության ակտիվ քաղաքական գործունեությունը: Ռուսաստանում ընդգրկվելով նարոդնիկական շարժման մեջ՝ հայ նարոդնիկ գործիչները փորձում էին ռուսահայության հասարակական կյանքի ղեկավարությունն իրենց ձեռքը վերցնել, ավելին, նարոդնիկական գաղափարները տարածել Օսմանյան կայսրության հայ բնակչության մեջ՝ դրանց տալով ազգային-ազատագրական պայքարի բնույթ: Այս ամենը, ինչպես նաև 1856 թ. թանզիմաթյան բարեփոխությունների հետ կապված հույսերի տապալումը արևմտահայ երիտասարդության առավել արմատական տրամադրված մասին մղեցին ծավալելու ակտիվ գործունեություն:

Արդեն 1870-ական թվականների սկզբներից Արևմտյան Հայաստանում սկսում են ձևավորվել գաղտնի խմբակներ ու

կազմակերպություններ, որոնք ձեռնամուխ են լինում հեղափոխական քարոզչական գործունեության: Արևմտահայ ազատագրական մտքի կենտրոն դարձավ Պարսկաստանին և Ռուսաստանին սահմանակից Վասպուրականը: Այստեղ էին իրենց բեղմնավոր գործունեությունը ծավալել Խրիմյան Հայրիկն ու Գարեգին Սրվանձտյանցը, այստեղ էր հրատարակվում «Արծիվ Վասպուրականի» թերթը: Վասպուրականի կենտրոն Վան քաղաքն առանձնանում էր նպաստավոր աշխարհագրական պայմաններով, հայության էթնիկական տարրի բացարձակ գերակշռությամբ:

1872 թվականի մարտի 3-ին Վան քաղաքում հիմնադրվեց մի ընդհատակյա կազմակերպություն՝ շուրջ 50 անդամով՝ նպատակ ունենալով նախաձեռնել ժողովրդի ինքնապաշտպանությունը: Կազմակերպությունը ստացավ «Միություն ի փրկություն» անվանումը: Նրա նշանաբանն էր «Մահ կամ ազատություն» կոչը: Կազմակերպությանն անդամակցում էին հասարակության ամենատարբեր խավերի ներկայացուցիչներ: Իր առաջին փաստաթղթերից մեկում «Միությունը» նշում էր, որ հայությունը ենթակա է դաժան շահագործման, ոճիրներ կատարողները որևէ պատիժ չեն կրում, պղծվում են հայոց եկեղեցիները և որ նման պայմաններում անհրաժեշտ է փրկության ելք գտնել: Այդ ամենից փրկվելու առաջին քայլը, ըստ կոչի, ուժերի միավորումն էր: Հավատարիմ դարավոր ավանդներին՝ «Միության» հիմնադիրները մեծ հույսեր էին կապում օտարների, հատկապես ռուսական իշխանությունների հետ: Առաջին քայլը ռուսական հյուպատոս ունենալն էր Վան քաղաքում: Այդ խնդրով «Միությունը» նույնիսկ երկու պատվիրակ է գործուղում Ռուսաստան՝ Հակոբ Գալոյանին և Նշան Շիրվանյանին: «Միությունը» կապեր է հաստատում նաև Ալեքսանդրապոլում արդեն կազմակերպված երկու ընկերությունների՝ «Բարենպատակ ընկերության» և «Հայրենյաց սիրո գրասենյակի» հետ: Ստեղծվելով Վանում՝ «Միություն ի փրկությունը» շուտով իր մասնաճյուղերն է հաստատում Վասպուրականի Անգղ, Բերդ, Խորենց, Հնձան, Նոր գյուղ բնակավայրերում:

1878 թվականը որոշակի փոփոխություններ առաջ բերեց արևմտահայ ազատագրական շարժման գաղափարախոսու-

թյան մեջ: Ռուս-թուրքական պատերազմի արդյունքները և Բեռլինի կոնգրեսի 61-րդ հոդվածը մեծապես բարդացրին հայ-թուրքական հարաբերությունները: Ռուսական լիակատար աջակցություն չստացած և հերթական անգամ հուսախաբված արևմտահայ ժողովուրդը ստիպված էր պատասխան տալու պատերազմի ժամանակ ռուսական զորքերին ցուցաբերած գործուն աջակցության համար: Թուրքական պետությունը ազատվելով բալկանյան «բեռից»՝ սուլթան Աբդուլ Համիդ II-ի գլխավորությամբ հնարավորություն ունեցավ առավել վճռականորեն զբաղվելու Հայկական խնդրով: Պարզ էր դառնում, որ առաջիկայում օսմանյան կառավարությունն ինքը կփորձի արհեստական կերպով գրգռել Հայկական խնդիրը և Արևելք տեղափոխել բալկանյան ջարդերի դարերով մշակված մեխանիզմը: Քաղաքներում և գյուղերում սկսեցին ձևավորվել առավել արմատական հայկական կազմակերպություններ, որոնք փորձում էին ժողովրդին պատրաստել ապագա դիմադրության համար:

1878 թ. Վանում հիմնադրվեց «Սև խաչ» գաղտնի կազմակերպությունը՝ կազմված մի խումբ հայ երիտասարդներից, որոնք իրենց առջև նպատակ էին դրել պաշտպան կանգնել անզեն հայրենակիցներին: Նրանք որոշել էին զենքով հակադրվել թուրք-քրդական վայրագություններին, պաշտպանել Վան-Վասպուրականի հայության իրավունքները: Արդի թուրք պատմաբանները «Սև խաչի» մեջ տեսնում են «հայկական ապստամբության» դարաշրջանի սկիզբը, բայց իրողությունն այն էր, որ պարզապես առաջին անգամ հայը փորձում էր կազմակերպված ձևով ուժին հակադրել ուժ, որը 1880-ական թվականներին սկսվեց լայնորեն շահարկվել եվրոպական դիվանագիտության կողմից: Մասնավորապես Մեծ Բրիտանիայում Ու. Գլադստոնի գլխավորությամբ իշխանության եկած լիբերալները հանդես եկան Արևելքի «քրիստոնյաների պաշտպանի» դերում: «Փրկել Հայաստանը» գլադստոնյան խոսքերը դարձան արևմտահայության հույսի և ներշնչանքի նշանաբան:

Վանում սկզբնավորված արևմտահայ շարժումը աստիճանաբար տարածվեց դեպի Հայաստանի հյուսիս: Կարինում 1881 թ. ձևավորվեց կազմակերպություններից մեկը՝ «Պաշտպան հայրենյացը»: Կազմակերպության ղեկավար մարմինը Գլխավոր խորհուրդն էր, որի կազմում ընդգրկված էին Խ. Կերեքցյանը, Կ. Նշկյանը և ուրիշներ: Կազմակերպության գլխավոր նպատակը միայն Կարինի հայության ինքնապաշտպանության կազմակերպումը չէր: 1881 թ. աշնանը Խ. Կերեքցյանը գործուղվեց Վան, ապա անցավ Ռուսաստան: Վանում նա հանդիպումներ ունեցավ Խրիմյան Հայրիկի, Թիֆլիսում՝ Գրիգոր Արծրունու հետ: Կովկասից զենք տեղափոխելու աշխատանքները կազմակերպելու համար 1881 թ. նոյեմբերին Ռուսահայաստան ուղևորվեց Կարապետ Նշկյանը, որն այնտեղ մնաց մինչև 1882 թ. օգոստոս ամիսը: Շուտով «Պաշտպան հայրենյացը» հարյուրավոր համախոհներ և անդամներ ձեռք բերեց: Կազմակերպության ապակենտրոն կառուցվածքը հնարավորություն էր տալիս նրա խմբերից մեկի հայտնաբերման դեպքում հարվածից դուրս բերել Գլխավոր խորհուրդը և ապահովել խմբերի հետագա գործունեությունը: Կազմակերպության կառուցվածքի հիմքում դրված էր տասնապետության սկզբունքը: Տասնապետը իր տասնյակի ղեկավարն էր, նա պատասխանատու էր հարյուրապետի առաջ և ուներ տասնյակը զինելու առաջադրանք: Կազմակերպության անդամները երդում էին տալիս, երդմնագրերը պահվում էին տասնապետների մոտ:

Գերագույն խորհուրդը մտադիր էր հասնել հայ-քրդական հարաբերությունների բարելավման և այնուհետև ձեռնարկել զինված ապստամբություն: Ըստ ծրագրի՝ կազմակերպվելիք կամավորական խմբերը, Հերցեգովինայի հայդուկների օրինակով, պետք է բարձրանային լեռները և սկսեին պարտիզանական կռիվներ:

1882 թ. նոյեմբերին «Պաշտպան հայրենյացը» պատահականորեն հայտնաբերվում է թուրքական ոստիկանության կողմից: Սկսվում են զանգվածային ձերբակալությունները: Միայն Կարինում ձերբակալվեց 400 մարդ: Ձերբակալվածների մեծամասնությունը երիտասարդներ էին, ամենատարեցը Խ. Կերեքցյանն էր՝ 36 տարեկան: Բանտում նրան ենթարկում են դաժան խոշտանգումների: 1883 թ. տեղի ունեցավ դատավարություն: Պետական մեղադրանքով անցնում էին 56 հոգի, որոնցից 40-ը դատապարտվեց ազատազրկման: Խ. Կերեքցյանը

ստացավ 15, մյուսները՝ 5-13 տարվա բանտարգելության պատիժ:

Դատավարությունը լայն արձագանք ստացավ հայկական շրջաններում: Ներման հարցով համառորեն սուլթանին էին դիմում Կ. Պոլսի հայոց պատրիարք Ներսես Վարժապետյանն ու Կարինի հայոց հոգևոր առաջնորդ Մաղաքիա եպիսկոպոս Օրմանյանը: Ամենուրեք հայությունն իր բացահայտ համակրանքն ու աջակցությունն էր ցուցաբերում Կարինի հալածյալներին: 1884 թ. հունիսի 22-ին սուլթանը ստիպված էր ներում շնորհել բանտարկվածների մեծ մասին, իսկ կազմակերպության Գլխավոր խորհրդի անդամներ Խ. Կերեքցյանը, Հ. Իշղալացյանը և Հ. Աստուրյանը ազատ արձակվեցին ավելի ուշ՝ 1886 թ. սեպտեմբերին: «Պաշտպան հայրենյացի» դատավարությունը մեծ ազդեցություն գործեց հայության վրա: Շուրջ մեկ տարի տևած գոյության ընթացքում այն հասցրել էր վերածվել առաջին հայ զանգվածային կազմակերպության: Կարինից էր, որ հայերը լսեցին սեփական ուժերին ապավինելու և զինված պայքարի ելնելու հզոր կոչը: «Պաշտպան հայրենյացի» և արևմտահայ մյուս խմբակների ու կազմակերպությունների հիմքի վրա էր, որ ձևավորվեց հայ առաջին քաղաքական կազմակերպությունը՝ Արմենական կուսակցությունը:

բ. Ազատագրական խմբակներն արևելահայ միջավայրում: Բայց միայն Արևմտյան Հայաստանում չէր, որ 1860-1880-ական թվականներին հայերն իրենց ազգային ազատագրության հույսը կապել էին զինված պայքարի հետ: Նույն միջոցին, երբ ձևավորվում էին արևմտահայ առաջին խմբակները, որոշակի աշխուժություն էր նկատվում նաև ռուսահայ (արևելահայ) մտավորականության շրջանում: Քանի որ հայ ժողովուրդը ապրում էր օսմանյան և ռուսական կայսրությունների մեջ, ուստի հնարավորություն չկար մշակելու զինված պայքարի միասնական տեսակետ: Նույն ազգի երկու հատվածները ստիպված էին ապրել սոցիալ-քաղաքական և տնտեսական տարբեր համակարգերում, ինչն, իր հերթին, որոշակի կնիք էր դնում արևմտահայության ու արևելահայության ճակատագրերի վրա:

Հայտնվելով համեմատաբար բարենպաստ պայմաններում՝ արևելահայ մտավորականները XIX դարի կեսերից սկսեցին ա-

ռավել մեծ ուշադրություն հատկացնել արևմտահայության խնդիրներին: Միքայել Նալբանդյանը, Ռաֆայել Պատկանյանը, Րաֆֆին, Գրիգոր Արծրունին առաջին մտավորականներն էին, որ ռուսահայերին ներկայացնում էին Արևմտյան Հայաստանի ծանր կացությունը, առաջ քաշում համազգային պայքարի գաղափարը: Ի տարբերություն արևմտահայ ազատագրական խմբակների ու կազմակերպությունների, արևելահայ ազատագրական շարժումը հենց սկզբից գտնվում էր ռուսական ժողովրդավարական շարժման ազդեցության ներքո: Արևելահայ ազատագրական պայքարը բացառապես ընկերային բնույթ ուներ և նրա հիմքում գերազանցապես ընկած էր ուսանող երիտասարդության հախուռն ոգևորությունը, որն իր հերթին առաջ էր բերում գործողությունների չտապողականություն: Նարոդնիկության հայտնի «Դեպի ժողովուրդ» կոչը արևելահայ երիտասարդությունը վերափոխում էր «Դեպի Երկիր» մարտակոչով, այսինքն՝ Երկիր (Արևմտահայաստան) անցնել, գնալ փրկելու եղբայրներին ու քույրերին, նրանց հետ կռվելով՝ կյանքը տալ հայրենիքի ազատագրության համար: Ըստ որում, հաշվի չէին առնվում Արևմտյան Հայաստանի դժոխային պայմանները, տեղի հայության պատրաստվածության աստիճանը, քրդական հարցի բարդությունը և շատ ուրիշ խնդիրներ, որոնց անտեսումը աղետաբեր էին լինելու հայության համար: Հրապարակի վրա էին Թուրքական բռնակալության դեմ պայքարի կոչող Ռաֆայել Պատկանյանի բանաստեղծությունները, Րաֆֆու պատմավեպերն ու պատմվածքները:

1860-ական թվականների վերջերից Ռուսահայաստանում հանդես են գալիս առաջին գաղտնի հեղափոխական խմբակները, որոնց նպատակն էր աջակցել Թուրքահայության ազատագրական պայքարին: 1868 թ. Ալեքսանդրապոլում հիմնվում է «Բարենպատակ ընկերությունը», որը չնայած ասպարեզ էր գալիս որպես մշակութակրթական կազմակերպություն, բայց իրականում ուներ քաղաքական ուղղվածություն: Նրա հիմնադիրն ու ղեկավարը ալեքսանդրապոլցի երիտասարդ ուսուցիչ Արսեն Կրիտյանն էր, որը հասարակությանը հայտնի էր իր հայրենասիրական բանաստեղծություններով, ռուսերենից կատարված թարգմանություններով: Կազմակերպության մյուս եռանդուն գործիչը նույնպես ուսուցիչ էր՝ Պետրոս Հայկազունին: Ընկերու-

թյունը Վանի շրջանում որոշակի քայլեր կատարեց զինված պայքարի նախապատրաստման ուղղությամբ: «Բարենպատակ ընկերության» առաջին անդամներ դարձան 40-ից ավելի ուսուցիչներ, ուսանողներ, մշակույթի գործիչներ, արհեստավորներ, առևտրականներ: Կազմակերպությունն ուներ իր կանոնադրությունը, ուր սահմանված էին հանդիպումների հաճախականությունը, ընդունելության և հեռացման, անդամավճարների հավաքման կարգը և այլն: Կազմակերպվում էին գրական երեկույթներ, հասարակական հավաքներ, բարեսիրական հանգանակություններ: Գրանցումների հատուկ մատյանում նշվում էին կազմակերպության անդամներին տրվող հանձնարարականները և դրանց կատարման արդյունքները:

Այդ ուղղությամբ կատարվող աշխատանքների պատասխանատվությունը դրված էր Պետրոս Հայկազունու վրա: Նա մասնավորապես զբաղվում էր զենքի տեղափոխման և քարոզչական աշխատանքներով: Հայկազունու ջանքերով կապեր հաստատվեցին Վասպուրականի ազատագրական շարժման գործիչների հետ, ինչը հետագայում հանգեցրեց կայուն համագործակցության 1872 թ. Վանում հիմնված «Միություն ի փրկության» կազմակերպության հետ:

Չնայած սերտ հարաբերություններին՝ որոշակի հակասություններ առաջ եկան երկու կազմակերպությունների մարտավարությունների միջև: Եթե «Միություն ի փրկության» անդամները հեռու էին հեղափոխական ոգևորությունից ու համահայկական ապստամբության դիմելու կոչերից և իրենց եռանդը փորձում էին ներդնել արևմտահայերի տեղական ինքնապաշտպանության կազմակերպման վրա, ապա «Բարենպատակ ընկերությունը», ընդհակառակը, ժողովրդի ազատագրության հույսը կապում էր զինված ապստամբության հետ: Վերջինս իր գործունեությունը շարունակեց մինչև 1875 թ. ապրիլ ամիսը, երբ սկսվեցին կազմակերպության անդամների ձերբակալությունները: 1876 թվականի մայիսին ընկերության գործունեությունն արգելվում է, իսկ Արսեն Կրիտյանը դատապարտվում է բանտարկության:

«Բարենպատակ ընկերության» օրինակով Արևելյան Հայաստանում սկսեցին երևան գալ ազատագրական այլ խմբակներ: Առավել նշանակալից էր 1874 թ. հունիսին Մեծ Ղարաքիլիսայում հիմնադրված «Հայրենյաց սիրո գրասենյակի» գործունեությունը: Խմբակի անդամ մի խումբ երիտասարդներ Գևորգ Խոսրովյանցի գլխավորությամբ չաբաթական երեք անգամ հավաքներ էին անցկացնում, որոնց ընթացքում հիմնականում քննարկվում էին հայ ժողովրդի քաղաքական դրության հետ առնչվող հարցեր: Ցավոք, մեզ քիչ տեղեկություններ են հասել «Գրասենյակի» մշակած ծրագրերի, ծավալած գործունեության մասին: 1875 թ. ապրիլին ձերբակալվեցին խմբակի անդամները, և այն դադարեց գործելուց:

1877-1878 թվականների ռուս-թուրքական պատերազմը որոշակի ազդեցություն ունեցավ արևելահայության քաղաքական զարգացման վրա: Բեռլինի կոնգրեսի 61-րդ հոդվածը և Հայկական հարցի միջազգայնացումը, բալկանյան ազատագրված ժողովուրդների օրինակը ոգևորություն էին առաջացրել ռուսահայ երիտասարդական շրջաններում: Համառուսական հեղափոխական շարժման մեջ ընդգրկված գործիչների մի մասը գերադասեց նվիրվել Արևմտյան Հայաստանի ազատագրության ուղղությամբ տարվող աշխատանքներին: Այս երևույթը հստակորեն դրսևորվեց հատկապես Կովկասի կենտրոն հայաշատ Թիֆլիսում, ուր սկսեցին ձևավորվել խմբեր և կազմակերպություններ:

Մեծ հեղինակություն էր վայելում ռուս-թուրքական պատերազմի օրերին «Մշակ» թերթի խմբագիր Գրիգոր Արծրունու կողմից ստեղծված խմբակը, որը սերտ կապեր էր հաստատել Մոսկվայի հայկական «Հայրենասերների միության», Երևանի «Հայասեր-ազգասերի», Կ.Պոլսի և Արևմտյան Հայաստանի կազմակերպությունների հետ և, ըստ էության, իր վրա էր վերցրել ղեկավար կենտրոնի իրավասությունները: Խմբակի կազմում էին Րաֆֆին, Բագրատ Նավասարդյանը, որը 1881 թ. Թիֆլիսում հիմնադրել էր «Կովկասի հայոց բարեգործական ընկերությունը», գեներալ Դմիտրի Տեր-Ասատուրյանը, Գաբրիել Սունդուկյանը, Արսեն Թոխմախյանը և ուրիշներ: Թիֆլիսի խմբակը նպատակ էր հետապնդում ռուսական կառավարության աջակցությամբ ծավալել մտավոր-լուսավորչական աշխատանքներ՝ Թուրքիայի տիրապետությունից արևմտա-

հայությանը ազատագրելու նպատակով:

Այդ տարիներին Թիֆլիսում կազմակերպական-քարոզչական զգալի աշխատանք էր իրականացնում «Նարոդնայա վոլյայի» տեղի կոմիտեի երեք հայ անդամների՝ Գրիգոր Տեր-Գրիգորյանի, Թամարա Ադամյանի և Աբրահամ Դաստակյանի կազմակերպած խումբը: Սրանց նախաձեռնությամբ որոշվեց գումարել Թիֆլիսի ազատագրական խմբակների ընդհանուր ժողով: Վերջիններիս, ինչպես նաև Գրիգոր Ադաբաբյանի ջանքերով, հրատարակվում է «Մունետիկ» գաղտնի թերթը: Նույն ժամանակ հանդես է գալիս և մեկ այլ՝«Հայրենասեր ձայն» թերթը: Երկու պարբերականներում էլ քննարկվում էր Հայկական խնդիրը և բոլոր հայերին կոչ էր արվում փրկել Թուրքահայաստանը: Ընդ որում, դրանց միջև զգացվում էին մարտավարական որոշակի տարաձայնություններ: Եթե «Մունետիկի» կողմնակիցներն առավել արմատական պայքարի ջատագովներ էին, ապա «Հայրենասեր ձայնի» շուրջ համախմբված գործիչները կոչ էին անում վարել առավել զգուշավոր և հավասարակշռված քաղաքականություն:

1870-1880-ական թվականներին Թիֆլիսյան հայ հեղափոխականները քարոզչական մեծ աշխատանք ծավալեցին ինչպես Արևմտյան Հայաստանում, այնպես էլ Կովկասում, Ռուսաստանի հայկական խոշոր գաղթավայրերում: Այդ տարիներին Թիֆլիսում արդեն ստեղծվել էին հիմնականում Թուրքահայերից կազմված մարտական խմբեր: Աշխուժություն էր նկատվում նաև Երևանում: 1880-ականների սկզբից մինչև 1881 թ. վերջերը այստեղ հիմնադրվում է գաղտնի ընկերություն, որը միաձուլվում է 1882 թ. նոյեմբերին կազմավորված «Կովկասի հայոց բարեգործական ընկերության» տեղի բաժանմունքին, և ստեղծվում է «Հայասեր-ազգասեր» կազմակերպությունը, որի ղեկավարությունը գտնվում էր մի խումբ հայրենասեր մտավորականների ձեռքին (Ռուբեն Ջալալյան, Լևոն Տիգրանյան, Վասիլ Եղիազարյան, Հովհաննես Տեր-Զաքարյան, Գայանե Հովհաննիսյան, Տրդատ Վարդանյան և ուրիշներ): Կազմակերպությունը փորձում էր կապեր հաստատել Թուրքահայ եղբայրների հետ, կանոնավորել զենքի առաքման գործը, միջոցներ ձեռնարկել Վանի հայության հետ կապեր հաստատելու: Երևանի կոմիտեն

նույնպես երկար կյանք չունեցավ. հայտնաբերվեց և ջախջախվեց կառավարության կողմից:

Արևմտահայ ժողովրդի ազատագրության գաղափարն իր խոր ազդեցությունն ունեցավ Արցախի հայության վրա: Հեղափոխական պայքարի առաջին քարոզիչները հանդես եկան Շուշիում, ուր ստեղծվեց «Ուժ» գաղտնի կազմակերպությունը: Այն իր առաջ նպատակ էր դրել հանգանակություններ կազմակերպել և զենք գնել Արևմտահայաստանի համար: Միաժամանակ կազմակերպության անդամներն ուսումնասիրում էին հայոց պատմությունը, լեզուն և մշակույթը՝ նպատակ ունենալով հայրենասիրական զգացումներ դաստիարակել Արցախի հայ երիտասարդության մեջ:

Միայն Անդրկովկասում չէ, որ ստեղծվում էին արևմտահայությանը աջակցող և այնտեղ զինված պայքար սկսելու նպատակ հետապնդող խմբեր և կազմակերպություններ: Ռուսահայության երկու՝ Մոսկվայի և Ս. Պետերբուրգի գաղթավայրերի հայությունը նույնպես, որ դաստիարակված էր «Հյուսիսափայլի» ազատական և Միքայել Նալբանդյանի հեղափոխական-դեմոկրատական գաղափարներով և ուներ կրթական բարձր մակարդակ, անտարբեր չէր արևմտահայությանը ազատագրելու կոչերի նկատմամբ: Այդ քաղաքների հայ ուսանողության վրա հատկապես մեծ ազդեցություն էր գործում բալկանյան ժողովուրդների ազատագրական պայքարի օրինակը: Հայերեն թարգմանվեցին և հրատարակվեցին Մարկո Բոցարիսին, Վասիլ Լևսկուն, հույն և բուլղար ժողովուրդների ապստամբական շարժումներին նվիրված պատմվածքներ ու փոքրիկ գրքույկներ, որոնցից հազարավոր օրինակներ առաքվում էին Թուրքիա՝ տեղի հայերին ոգևորելու և պայքարի հանելու նպատակով: Պետերբուրգի հայ ուսանողներից ոմանք թողնում էին ուսումը և զինագործություն սովորելով՝ պատրաստվում էին անցնել Արևմտահայաստան:

1882 թ. գարնանը Մոսկվայի հայ ուսանողների ջանքերով ստեղծվում է «Հայրենասերների միություն» կազմակերպությունը, որը նպատակ ուներ աջակցել օսմանյան տիրապետության ներքո տառապող հայրենակիցների ազատագրման գործին:

Միությունը գտնվում էր նարոդնիկության չեչտված ազդեցության ներքո: Միության ղեկավարներն այն տեսակետին էին, որ արևմտահայությունը կարող է ազատագրվել հեղափոխական ճանապարհով և բալկանյան զինված ըմբոստությունների օրինակով: Հիմնադիր խումբը կազմված էր նարոդնիկական շարժման մեջ ընդգրկված, նաև ազգասիրական գաղափարներով տարված հինգ երիտասարդներից՝ Ներսես Աբելյան, Մարգար Արտենյան, Միքայել Զալյան, Դավիթ Ներսիսյան, Կարապետ Տեր-Խաչատուրյան: Կազմակերպության խորհրդանիշն էին դաշույնն ու ատրճանակը, իսկ տպագիր օրգանը՝ «Ազատության ավետաբերը», որը սկսեց հրատարակվել 1884 թվականից: Միությունը սերտ կապեր էր հաստատել Անդրկովկասում գործող ազատագրական խմբակների, հատկապես Երևանի «Հայասեր-ազգասերի» հետ: Նրա անդամներից Մոսկվայի համալսարանի ուսանող Սրապիոն Տեր-Գրիգորյանը անդամակցում էր նաև երևանյան կազմակերպությանը՝ փորձելով համաձայնեցնել երկու կազմակերպությունների գործողությունները: Նարոդնիկական հայացքների ազդեցությամբ «Հայրենասերների միության» ղեկավարները կարևոր նշանակություն էին տալիս նաև սոցիալական պայքարին: Հավատալով, որ ժողովրդի իրական անկախության նախահիմքը տնտեսական ազատությունն է, նրանք քարոզում էին նարոդնիկական սոցիալիզմի գաղափարներ և թուրքահայ ժողովրդի ազատագրական պայքարի հաջողության երաշխիք էին համարում Արևմտյան Հայաստանի բոլոր ժողովուրդների համատեղ ելույթը թուրքական բռնակալության դեմ: Իր մարտավարությունը մշակելիս «Միությունը» առաջնորդվում էր Պ. Լավրովի հեղափոխական ծրագրով՝ մեծ տեղ հատկացնելով մարդու անձնական ազատությանը:

«Հայրենասերների միությունը» ցրվեց 1886 թ., երբ ռուսական կառավարությունը հայտնաբերեց նրա գործունեությունը հաստատող մի քանի ապացույցներ: Կազմակերպության վերացումից հետո նրա անդամներից շատերը ընդգրկվեցին ռուսահայ մյուս հեղափոխական խմբակների մեջ:

Այսպիսով, XIX դարի 60-80-ական թվականներին անհրաժեշտ նախապայմաններ ստեղծվեցին հայ ազգային կուսակցություններ առաջացման և հայկական հեղափոխության ծավալման համար:

2. ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՓՈՒԼԸ

Օսմանյան կայսրությունում կիրառվող պետական ջարդարարական քաղաքականության հետևանքով հայոց դարավոր ազատագրական շարժումը XIX դարի 80-ական թվականների կեսերին բարձրացավ որակական նոր աստիճանի՝ ազգային հեղափոխության: Պայքարի ղեկավարությունը ստանձնեցին նոր ձևավորվող ազգային կուսակցությունները, որոնք, չնայած ծրագրային, գաղափարական տարբերություններին, հետապնդում էին նույն գործնական նպատակը՝ թուրքական բռնակալությունից Արևմտյան Հայաստանի ազատագրումը:

Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի՝ դարերով խավարի մեջ կորած գյուղերում և քաղաքներում հիմնվում էին ազատագրական գաղտնի խմբեր, ստեղծվում էին կուսակցական տեղական կազմակերպություններ: Տարբեր երկրների հայ համայնքներում կազմակերպվում էին կամավորական ջոկատներ, որոնք անցնում էին Արևմտյան Հայաստան՝ աջակից լինելու տեղի հայության պայքարին:

Հայկական հեղափոխությունն ընթանում էր ներքին ու արտաքին խիստ աննպաստ պայմաններում: Եվրոպական տերությունները և Ռուսաստանը Հայկական հարցը դիտում էին սոսկ իբրև օսմանյան պետության ներքին գործերին միջամտելու, այնտեղ սեփական ազդեցության ոլորտներն ընդլայնելու միջոցներից մեկը:

Հայ ժողովրդի տարանջատվածությունը, նրա նկատմամբ թուրքերի, քրդերի ու չերքեզների կողմից կատարվող հալածանքները, հարստահարումներն ու ջարդերը, մուսուլման հոծ բնակչությամբ չբնակեցված լինելը, կողքին հավատակից կամ բախտակից հարևան չունենալը հայության համար համարյա անկարելի էին դարձնում համազգային ազատագրական պատե-

բազմի հնարավորությունը: Բնաջնջման ենթարկվող ազգին կյանքը ստիպում էր ընտրել թուրքական անարգ բռնակալության դեմ դաժան պայքարի ուղին:

ԱՐՄԵՆԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ա. Ձևավորումը: *Հայ իրականության մեջ առաջին գաղտնի հեղափոխական կուսակցությունը ծնունդ առավ Վանում 1885 թվականին: Կուսակցության ստեղծման գործում վճռական դեր խաղաց տարագրության մեջ գտնվող նշանավոր ազգային գործիչ Մկրտիչ Փորթուգալյանը: Նա Մարսելում (Ֆրանսիա) հրատարակում էր «Արմենիա» անունով թերթը, որի առաջադիմական գաղափարները թափանցում էին Վան և մեծ ոգևորություն առաջացնում հեղափոխական տրամադրություններով տոգորված տեղի երիտասարդ մտավորականության շրջանում: Գաղտնի հանդիպումների նախաձեռնող դարձան Մկրտիչ և Գրիգորիս Թերլեմեզյան եղբայրները, որոնց այգում (հնձանում) ողջ տարվա ընթացքում տեղի էին ունենում գաղտնի հանդիպումներ: Այս հավաքների արդյունքում 1885 թ. աշնանը հիմնադրվեց Արմենական կուսակցությունը: Կազմակերպությունն իր անունը վերցրեց «Արմենիա» թերթից՝ դրանով իսկ ցուցադրելով համերաշխություն նրա քարոզած գաղափարներին: Հիմնադիր ժողովին մասնակցում էին Ղևոնդ Խանջյանը, Գրիգոր Աճեմյանը, Գրիգորիս և Մկրտիչ Թերլեմեզյանները, Ռուբեն Շատվորյանը, Գրիգոր Պյոզիկյանը (Շիկահեր), Գևորգ Օտյանը, Մաքնոս Բարութչյանը և Գարեգին Բաղեչցյանը: Հետագայում կուսակցությանն անդամագրվեցին Արմենակ Եկարյանը, Փանոս Թերլեմեզյանը, Հայրապետ Ջանիկյանը, Արմեն Շիտանյանը, Արտակ Դարբինյանը, Միքայել Նաթանյանը և ուրիշներ: Հիմնադրումից որոշ ժամանակ անց կուսակցությունը դարձավ Վասպուրականի առաջատար հեղափոխական ուժը:*

բ. Ծրագիրը և կառուցվածքը: *Արմենական կուսակցության ծրագիրը ձևավորվեց գործունեության առաջին տասնամյակի ընթացքում: Պատմագրության մեջ հաճախ փորձեր են արվել կազմակերպության ծրագիր համարել զանազան հրապարակումներ (օրինակ՝ Ռ. Պատկանյանի «Վարդապետարան Հայաստանի ազատության» գրուցարանը): Բայց իրականում Արմենական կուսակցությունն ունեցել է սեփական ծրագիր՝ կազմված յոթ մասից: Կազմակերպության նպատակն էր՝ «հեղափոխությամբ հայ ժողովրդի համար ձեռք բերել իրեն ազատ կառավարելու իրավունք, որով միայն նա կկարողանա մարդավայել ապրելու միջոցներ ունենալ և դրանք գործադրել ժամանակի պահանջների համեմատ»:*

Քանի որ տվյալ ժամանակաշրջանում արմենականները հնարավոր չէին համարում օսմանահպատակ ժողովուրդների միջև համերաշխության հաստատումը, ուստի չեչտում էին ներազգային համերաշխության գաղափարը: Ծրագրում նշվում էր. «Կազմակերպությունն իր ջանքերն ամփոփում է հայ ազգի տարբեր հատվածների մեջ, առանց դավանանքի խտրության, իր ուժերը չի ցրում հարևան ազգերի մեջ հեղափոխական շարժումներ առաջացնելու համար՝ զգալով որ հայ ազգի և մյուս ցեղերի միջև զարգացման, աշխարհայացքների և պահանջների մեծ տարբերություններ կան, որով հայ ազգի հեղափոխական շարժումը կարող է դանդաղել և թուլանալ»:

Նպատակին հասնելու խնդիրներ էին դիտվում՝ ազատագրական պայքարին նվիրված հայրենասերների միավորումը, ժողովրդի կազմակերպումը, նրա մեջ հեղափոխական գաղափարների տարածումը: Դրանք իրականացվելու էին գրավոր և բանավոր քարոզչության, կրթական համակարգի վրա ներազդելու միջոցով, ինչպես նաև՝ անձնական օրինակով:

Հատկապես կարևորվում էին ժողովրդական լայն զանգվածների մեջ ինքնապաշտպանության գաղափարի արմատավորումը, ինքնապաշտպանական խմբերի կազմակերպումը և ժողովրդի զինմանն ուղղված աշխատանքները: Ծրագրում չեչտվում էր, որ հեղափոխության դիմելու համար անհրաժեշտ են արտաքին նպաստավոր պայմաններ: «Մասնակի և տկար ուժերի շարժումները, ցույցերը բացառիկ հանգամանքներից դուրս ընդունելի չեն, ընդհակառակը՝ վնասակար [են]», - ասված էր կուսակցության ծրագրում:

Կուսակցության կառույցը հնարավորինս հարմարեցված էր օսմանյան իրականությանը: Արմենականները բաժանվում էին գործուն և օժանդակ անդամների: Գործուն էին համարվում այն

անդամները, որոնք ընդունում էին կուսակցության կանոնները, ենթարկվում կուսակցական կարգապահությանը, բարեխղճորեն վճարում անդամատուրքը: Օժանդակ անդամները կազմակերպությանը ցուցաբերում էին բարոյական և ֆինանսական աջակցություն: Սկզբնական բջիջը խումբն էր:

Կուսակցության ղեկավարությունն իրականացնում էին կենտրոնական մարմինը, շրջաններում՝ տեղական կոմիտեները: Կուսակցության՝ Վասպուրականից դուրս գործող կոմիտեները չուրջ երեք անգամ քիչ անդամատուրք էին վճարում կենտրոնական մարմնին՝ հնարավորություն ստանալով ավելի շատ միջոցներ հատկացնել Երկրի ինքնապաշտպանության կազմակերպման գործին: Կարևորագույն դերակատարում ունեին շրջանային հատուկ կոմիտեները, որոնք զբաղվում էին ժողովրդին զինելու, ինքնապաշտպանական խմբեր կազմելու, լրացուցիչ մարտական անդամատուրքեր հավաքելու աշխատանքներով: Կուսակցության ծրագիրը կարող էր փոփոխվել շրջանային հատուկ կոմիտեների ներկայացուցիչների ձայների մեծամասնության դեպքում: Արմենականները ընդունելով «Արմենիա» թերթի խմբագրության գաղափարները՝ այնուհանդերձ այն չէին ճանաչում որպես պաշտոնաթերթ:

գ. Գործունեությունը: Արմենական կուսակցության հիմնադրումից որոշ ժամանակ անց մասնաճյուղեր կազմակերպվեցին Վասպուրականում, Մուշում, Բիթլիսում, Տրապիզոնում և Կ. Պոլսում: Աստիճանաբար կուսակցության տեղական կազմակերպություններ հիմնվեցին նաև Արևմտյան Հայաստանի մյուս շրջաններում, Կովկասում, ինչպես նաև Բուլղարիայում, Եգիպտոսում, ԱՄՆ-ում: Բավականին կենսունակ էին հատկապես Թավրիզի և Սալմաստի մարմինները: Կուսակցության անմիջական նպատակը Վասպուրականի հայ բնակչությանը զինելն էր: Շեշտը դրվում էր հատկապես քրդական ավազակախմբերի հարստահարումներից պաշտպանվելու, գյուղական համայնքների կարողության ուժեղացման վրա: Ձենքը Արևմտյան Հայաստան էին փորձում անցկացնել հիմնականում Պարսկաստանից՝ աննկատ, առանձին անհատների կամ զինատար խմբերի միջոցով:

Ժամանակին Թուրքական մամուլում լայն արձագանք գտավ

Վանի մոտակայքում՝ Բաչկալեյում, տեղի ունեցած ընդհարումը Թուրք զինվորների և արմենական զինված խմբի միջև: Երեք հոգուց կազմված խումբը (Կարապետ Գուլակսզյան, Հովհաննես Ագրիպասյան, Վարդան Գոլոչյան) Պարսկաստանից անցնում էր Վան: Բախման ժամանակ զոհվում են նրանցից վերջին երկուսը, որոնց մոտ գտնում են Մկրտիչ Փորթուգալյանի և Լոնդոնի ընկերներից առաքված նամակներ, հեղափոխական կուսակցության գոյությունը փաստող այլ տվյալներ:

Չնայած նման միջադեպերին՝ 1885-1890-ական թթ. ընթացքում կուսակցության փաստացի ղեկավար Մկրտիչ Ավետիսյանին ընդհանուր առմամբ հաջողվում է առանց ցուցադրական ելույթների, նպատակաուղղված աշխատանքով Վան քաղաքում և Վասպուրականի գյուղերում ստեղծել փոքրաքանակ, բայց կարգապահ ու մարտունակ կազմակերպություն: Այդ շրջանում միայն ծայրահեղ դեպքերում էին արմենականները դիմում ահաբեկչական քայլերի կամ ֆիդայական կռիվների:

Արդեն 1890-ականների սկզբներին, ըստ որոշ տվյալների, լայն աշխատանքներ էին կատարում Նիկոմեդիայի, Պարտիզակի, Ատաբազարի մասնաճյուղերը: Վանում և Շատախում գործում էին իննսունից ավելի մարտական խմբեր: Թավրիզից և Սալմաստից բացի Պարսկաստանում ակտիվ գործունեության մեջ էին նաև Հաթթվանի, Փայաջուկի, Ուրմիայի, Խոյի խմբերը: Երկրում օգտակար աշխատանք էին ծավալել նաև արմենական կանայք: Ժողովրդական քարոզիչներ էին ուսուցչուհի Եղիսաբեթ Կոնդակչյանը և Մարինա Զարուխյանը:

Բայց կազմակերպության աստիճանական հզորացման, ժողովրդի մեջ թափանցելու, նրան նախապատրաստելու բնականոն աշխատանքները մի քանի տարի անց հանդիպեցին լուրջ փորձությունների: Արդուլհամիդյան վարչակարգը արևմտահայության մասնակի ջարդերի քաղաքականությունից 1890 թվականից սկսեց անցնել նրա ֆիզիկական ոչնչացմանը: Կազմվեցին քրդական «համիդիե» կոչվող սպառազեն գնդեր, Արևմտյան Հայաստանի, Կիլիկիայի հայաբնակ բոլոր գյուղերն ու քաղաքները ընկղմվեցին զանգվածային կոտորածների, հալածանքների ու բռնությունների անընդհատ և տարիներ տևող մղձավանջի

մեջ: Առաջին և առավել ծանր հարվածը հասցվում էր ազատագրական շարժման կենտրոններին՝ Սասունին, Զեյթունին, Վանին: Այս ամենը արմենականներին ստիպում էր հետևել 1890-ական թվականներից երկրում զինված պայքար սկսած հնչակյան ու դաշնակցական կազմակերպությունների օրինակին և մարտական գործուն ինքնապաշտպանական կռիվների դուրս գալ հատկապես Վասպուրականում: Վանի նշանավոր կռիվների նախօրյակին Մկրտիչ Ավետիսյանի, Վանի հնչակյան և դաշնակցական կազմակերպությունների ղեկավարներ Մարտիկի (Մարտիրոս Սարուխանյան) և Պետոյի (Ալեքսանդր Պետրոսյան) ջանքերով հայ հեղափոխական կուսակցություններն իրենց ուժերը միավորեցին արհավիրքին միասնաբար դիմադրելու համար:

1896 թ. հունիսին, չուրջ երկու տարվա նախապատրաստական աշխատանքից հետո, օսմանյան կառավարությունը ձեռնարկեց Վանի հայ բնակչության ոչնչացման փորձ: Մի կողմ դնելով տարաձայնությունները՝ հայ քաղաքական կուսակցությունների ղեկավարները ընդհանուր ճակատ ստեղծեցին և հաջողությամբ կազմակերպեցին քաղաքի հայերի ինքնապաշտպանությունը: Ի դեպ, այս դիմադրության շնորհիվ էր, որ կասեցվեց համատարած ջարդերի ալիքը Վասպուրականում: Ցավոք, Վանի ինքնապաշտպանական ուժերը Պարսկաստան անցնելու ճանապարհին, Ս. Բարթուղիմեոս առաքյալի վանքի մոտերքում ենթարկվեցին թուրքական կանոնավոր բանակի և քրդական անկանոն հեծելազորի դավադիր հարձակմանը ու խժդժություններին և լիովին ոչնչացան: Առավելապես ծանր էին արմենականների կորուստները: Կուսակցության՝ տարիների ջանքերով ստեղծած մարտական ջոկատների, նրա նվիրված անդամների մեծագույն մասը զոհվեց:

1896 թվականը չրջադարձային եղավ արմենականության համար: Ղեկավարների մեծ մասից զրկված կուսակցությունը այդ ժամանակվանից սկսած՝ աստիճանաբար կորցրեց իր ուժն ու դիրքերը: Գնալով նոսրացող չարքեր և հեռանկարի անորոշություն – այսպիսին էր կազմակերպության վիճակը XX դարի նախաշեմին:

Այդ բախտորոշ ժամանակում Մկրտիչ Ավետիսյանին փո-

խարինեց Եղիշե Կոնդակչյանը, որը, դառնալով արմենականների ղեկավար, մեծ ջանքեր գործադրեց վերակազմակերպելու կուսակցությունը: Նրա հետ եռանդուն աշխատանքի էին լծվել 1897 թ. բանտերից ազատված Արմենակ Եկարյանը, Գրիգոր Պեոզիկյանը (Շիկահեր), Ղևոնդ Խանջյանը, Միքայել Նաթանյանը և ուրիշներ:

Վանի 1896-ի դեպքերից հետո արմենականները նույնպես խորապես համոզվեցին, որ հայությունն իր հույսը պիտի կապի միայն իր հավաքական ուժի հետ: Ղեկավարներից ոմանք թերևս ինչ-որ չափով բացառություն էին համարում Ռուսաստանը: Ժողովներից մեկում հանդես գալով զեկուցումով՝ Ղևոնդ Խանջյանն ասում էր. «Հայկական ջարդերը հաստատեցին, թե եվրոպական պետություններու հակամարտությունները չեն թույլատրել, որ մենք անոնց աջակցության վրա հույս ունենալով՝ արկածախնդրություններ անենք: Եթե մենք հույս պետք է ունենանք օտար որևէ պետության վրա, ապա այդ հույսը միայն կարող ենք կապել մեր դրացի Ռուսաստանի հետ»:

Բայց գործադրած ջանքերը բավարար չէին արմատապես վերակառուցելու կուսակցությունը: Թեև դեպքից դեպք տեղի էին ունենում խմբերի ու խմբապետների ժողովներ, բայց դրանք այլևս չունեին նախկին նշանակությունը: Կանգ էին առել ժողովրդին զինելու աշխատանքները, չկային անհրաժեշտ նյութական միջոցներ:

Այսպիսով, Արմենական կուսակցությունը հանդիսացավ Հայրենիքում հիմնված առաջին հեղափոխական կուսակցությունը, որը խոր հետք թողեց հայ ազատագրական պայքարի պատմության մեջ: Լինելով Արևմտահայաստանի ժողովրդական լայն զանգվածների չահերի արտահայտիչ՝ արմենականները չեշտադրումը կատարում էին արևմտահայությանը ապագա զինված հեղափոխության նախապատրաստելու, նրա մեջ ազգային-հայրենասիրական զգացումներ ներարկելու վրա: Արդուլհամիդյան ջարդարարական քաղաքականությունը, արևմտահայության ֆիզիկական ոչնչացման հեռանկարը, բնականաբար, օրակարգի խնդիր դարձրին անմիջական զինված պայքարի կազմակերպման հարցը: Բայց կրած ծանր հարվածների

պատճառով արմենականները աստիճանաբար ազատագրական գոյամարտի դրոշը գիջեցին մյուս ազգային կուսակցություններին՝ միշտ հավատարիմ մնալով համազգային ընդհանուր ճակատ կազմակերպելու և հախուռն գործողությունները մերժելու մարտավարությանը:

ՀՆՉԱԿՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ա. Ձևավորումը: Հայ ազգային հեղափոխական երկրորդ կազմակերպությունը՝ Հնչակյան կուսակցությունը, հիմնվեց 1887 թվականին Ժնևում: Հիմնադիրները Եվրոպայում ուսանող ռուսահայ երիտասարդներ էին՝ դաստիարակված ռուսական հեղափոխական գաղափարների ազդեցությամբ և իրենց նվիրաբերած Արևմտահայաստանի ազատագրության գործին:

Սկզբնական շրջանում Փարիզի, Ժնևի, Մոնպելիեի, եվրոպական մյուս կրթական կենտրոններում ուսանող հայ երիտասարդների համար հեղափոխական ուղեցույցի դեր էր կատարում Մ. Փորթուգալյանի «Արմենիան»: Գաղափարական համախմբման ընթացքում, սակայն, չուտով սկսեցին երևալ լուրջ տարաձայնություններ Փորթուգալյանի և հեղափոխական ավելի արմատական կազմակերպություն հիմնել փորձող ուսանողների միջև: Փարիզում հումանիտար կրթություն ստացող և «Արմենիային» թղթակցող արմատական երիտասարդներից մեկը՝ Ավետիս Նազարբեկյանը (Նազար-Բեկ), 1886 թ. ամռանն իր հարսնացուի՝ Մարիամ (Մարո) Վարդանյանի հետ ուղևորվեց Ժնև՝ նպատակ ունենալով տեղում աշխատանքներ ծավալել մարքսիստական ուղղվածությամբ կուսակցություն ստեղծելու համար: Մարոն արդեն այդ շրջանում ուներ հեղափոխական գործունեության որոշակի փորձ: Ս. Պետերբուրգում ուսանելու տարիներին նա մասնակցել էր ռուսական հեղափոխական գաղտնի խմբակներից մեկին և գտնվում էր մարքսիստական գաղափարների ազդեցության ներքո: Ժնևյան հանդիպումների ընթացքում բարձրացվում էր Արևմտահայաստանի ազատագրմանը նվիրված հեղափոխական կուսակցության ստեղծման

անհրաժեշտության հարցը: Նախատեսվում էր ստանալ Փորթուգալյանի հավանությունն ու աջակցությունը և բոլոր կարող ուժերը համախմբել «Արմենիայի» շուրջը: 1886 թ. ամռանը Ավ. Նազարբեկյանը նույն հարցի մասին նամակ է առաքում Փորթուգալյանին և ստանում բացասական պատասխան: «Արմենիայի» խմբագիրը մասնավորապես նշում էր, որ արդեն գործում է համահայկական կազմակերպություն՝ նկատի առնելով 1889 թ. իր հիմնադրած «Հայոց հայրենասիրական միությունը», որն ունենալով ընդամենը կրթական չափավոր ծրագիր, չէր կարող կազմակերպորեն աղերսվել հեղափոխական բնույթի գործունեության հետ: Դա էր պատճառը, որ արդեն 1886 թ. ամռան վերջերին Ժնևում ձևավորվեց հեղափոխական մի խմբակ հետևյալ կազմով՝ Ավետիս Նազարբեկյան, Մարո Վարդանյան, Գաբրիել Կաֆյան, Ռուբեն Խանազատ, Գևորգ Ղարաջյան և Քրիստափոր Օհանյան: Կուսակցության ստեղծման գաղափարով սկզբում ոգևորված մյուս երիտասարդները՝ Մատթեոս Շահազիզյանը, Պողոս Աֆրիկյանը, Մկրտիչ Մանուչարյանը, Նիկոլայ Մատինյանը տարբեր պատճառներով հրաժարվեցին խմբակին մասնակցելուց:

Ձևավորված խմբակը հրապարակավ խզեց հարաբերությունները Փորթուգալյանի հետ և սկսեց լուրջ նախապատրաստական աշխատանքներ իրականացնել սեփական թերթ ունենալու համար: 1887 թ. օգոստոսին, բազմաթիվ դժվարություններ հաղթահարելով, Ժնևում հիմնվեց հեղափոխական կուսակցություն, որը միայն 1890 թ. ստացավ Հնչակյան անվանումը: Կուսակցության 7 հիմնադիր անդամներն էին՝ Ավետիս Նազարբեկյանը, Մարո Վարդանյանը, Գևորգ Ղարաջյանը, Ռուբեն Խանազատը, Քրիստափոր Օհանյանը, Գաբրիել Կաֆյանը և Լևոն Սարգսյանը: Կուսակցության պաշտոնաթերթը «Հնչակն» էր, որի անունը հերցենյան նշանավոր «Կոլոկոլի» թարգմանությունն էր և հուշում էր խնդիրների այն բեռը, որ իր վրա էր վերցնում խմբագրությունը:

բ. Ծրագիրը և կառուցվածքը: Հնչակյան կուսակցության ձևավորման վրա մեծ ազդեցություն գործեցին ռուսական հեղափոխական, միջազգային սոցիալիստական և անարխիստա-

կան ուսմունքները, ազգային-ազատագրական շարժումներին բնորոշ գաղափարները: Հնչակյան կուսակցությունը կյանքի կոչվեց նախ և առաջ բնաջնջվող արևմտահայությանը սատարելու, նրան զինված պայքարի առաջնորդելու նպատակադրումով: Նորաստեղծ կազմակերպության կորիզը, ինչպես նշվեց, դաստիարակված էր եվրոպական հեղափոխական գաղափարների ոգով: Հատկապես վճռական նշանակություն էր ունեցել ռուսական նարոդնիկական միտքը: Պայքարի մարտավարական մեթոդների, կազմակերպության կառուցվածքի ընտրության խնդիրներում վճռական էր «Նարոդնայա վոլյայի» և բալկանյան հեղափոխական կազմակերպությունների ունեցած ազդեցությունը: Ժնևյան խմբակը սերտ հարաբերություններ է հաստատում ռուսական սոցիալ-դեմոկրատիայի հեղինակություններից՝ Գ. Պլեխանովի, Վերա Զասուլիչի և նշանավոր այլ գործիչների հետ: Հնչակյան կուսակցության գաղափարախոսությունն, այդպիսով, իր մեջ ներառում էր և՛ ազատագրական հեղափոխական պայքարին հատուկ նպատակադրումներ, և՛ մարքսիստական-սոցիալիստական գաղափարներից բխող սկզբունքներ: Ծրագրի նախնական տարբերակը, ըստ Ռ. Խանազատի, կազմվեց Մարո Վարդանյանի, Ավետիս Նազարբեկյանի, Գևորգ Ղարաջյանի համատեղ ջանքերով և հետագայում ամբողջանալով՝ ընդունվեց իբրև պաշտոնական փաստաթուղթ:

Ծրագիրն ընդգրկում էր կուսակցության հեռավոր և մոտակա նպատակները: Հեռավոր նպատակը հիմնավորում էր հայկական հասարակության մեջ սոցիալիստական հարաբերությունների հաստատման անհրաժեշտությունը: Շեշտված էր փոքրամասնության կողմից մեծամասնության շահագործման վրա հենված հասարակարգի փլուզման անխուսափելիությունը: Հին համակարգը փոփոխելու անհրաժեշտ պայման էր դիտվում սոցիալիստական հեղափոխությունը: Նոր հասարակությունը հենվելու էր սոցիալիստական իրավակարգի և տնտեսական արդարության սկզբունքների վրա: Որպես հեռավոր նպատակ, ծրագիրը հստակորեն սահմանում էր «սոցիալիստական հասարակական կազմակերպության իրագործումը հայության մեջ»:

Մոտակա նպատակը ձևակերպված էր սոցիալ-դասակարգային և ազգային-ազատագրական միահյուսված չեշտադրումներով: Հիմնական խնդիրը համարվում էր պայքարը Թուրքահայաստանի, Ռուսահայաստանի և Պարսկահայաստանի հայկական տարածքներում անկախ հայկական պետության հիմնումը: Այլ խոսքով՝ հայ քաղաքական մտքի պատմության մեջ առաջին անգամ սահմանվում էր Հայկական հարցը որպես հայրենիքի ամբողջական տարածքում անկախ պետություն ստեղծելու խնդիր: Միաժամանակ ընդգծվում էր, որ անհրաժեշտ է «կռիվ մղել միապետական կարգերը տապալելու համար և դրանք փոխարինել հանրային, ռամկավարական, սահմանադրական կարգերով»: Դա, ծրագրի տրամաբանությամբ, կուսակցությանը հնարավորություն կտար ներառվել օսմանյան և ռուսական բռնակալությունների դեմ մղվող ընդհանուր ճակատի մեջ՝ հայ ժողովրդի ազատագրման խնդիրը կապելով այդ երկրներում ընթացող հեղափոխական գործընթացների հետ:

Հայկական միասնական պետության կերտման առաջին քայլը համարվում էր Թուրքահայաստանի ազատագրումը: Ծրագրում նշված էր, որ «պետք է բռնի կերպով կերպարանափոխել, հեղաշրջել ներկա հասարակական կազմակերպությունը Թուրքաց Հայաստանում, կռիվ մղելով Թուրք տերության դեմ՝ ժողովրդային ընդհանուր ապստամբության միջոցով»: Ծրագիրը Թուրքահայ ժողովրդի դատի լուծումը կապում էր ազգային անկախ գոյության հետ՝ չեշտելով, որ «Հայ ժողովրդի ու Հայաստանի ճակատագիրը միանգամից ընդմիշտ պետք է զատվի Թուրքական կայսրության ճակատագրից, ըստ որում, պատմական պահանջ ու անհրաժեշտություն է ներկայանում հայ ազգային անկախությունը, որն էլ այդպիսով կազմում է մոտակա նպատակի մի հիմնական մասն ու առաջին պայմանը»: Ծրագիրն ապագա հայկական պետության համար նախատեսում էր ամենալայն ժողովրդավարական կարգեր՝ ուղիղ և գաղտնի ընտրություն, խղճի, խոսքի, կազմակերպվելու ազատություններ, տեղական, համայնքային ինքնավարություններ և այլն:

Հեղափոխական պայքարում կուսակցությունն ընդունում էր հետևյալ առաջնահերթությունները՝

ա. Պրոպագանդա, որը տարվելու էր ժողովրդի մեջ զանգվածներին կուսակցության հետապնդած նպատակները, օսմանյան բռնատիրությունը հեղափոխական ճանապարհով տապալելու անհրաժեշտությունը բացատրելու համար:

բ. Ագիտացիա, որը ներառելու էր ժողովրդին ոտքի հանելու ու ոգևորելու, հայրենիքի ազատագրության խնդիրը հասարակության լայն շրջաններին պարզաբանելու աշխատանքներ: Պայքարի ձևերից էին զանազան ցույցերը, բարենորոգումների պահանջը, ծանր հարկերի դեմ ուղղված ելույթները և այլն:

գ. Տեռոր, որը համարվում էր ժողովրդի ոգին բարձրացնելու, բռնակալությանը հարվածելու և հայությանը պաշտպանելու ազդու լծակ: Տեռորը և ասպատակային գնդերի կազմումը համարվում էին հեղափոխական կազմակերպության պայքարի կարևոր զենքերը և դիտվում իբրև կուսակցության՝ ընդհանուր ապստամբության կազմակերպման անհրաժեշտ միջոցներ: Տեռորը ուղղվում էր ինչպես արտաքին թշնամու, այնպես էլ ազգային շահը դավաճանողների, հայ լրտեսների դեմ:

Ծրագրում որոշակի տեղ էր հատկացվում մեծ տերությունների՝ Հայկական հարցի նկատմամբ գրաված հայամետ դիրքին, թեև չեշտվում էր, որ ժողովուրդն ինքը պետք է կռվի իր ազատությունը: Մասնավորապես, ընդհանուր ապստամբության համար խիստ կարևորվում էր միջազգային նպաստավոր իրավիճակի առկայությունը: Նման բարենպաստ պահ էր համարվում Թուրքիայի ներքաշումը պատերազմի մեջ:

Հնչակյան կուսակցությունը և՛ ծրագրային փաստաթղթերում, և՛ գործունեության ընթացքում ընդունում ու անհրաժեշտ էր համարում նաև Օսմանյան կայսրության ճնշված ժողովուրդների (քրդեր, ասորիներ) հետ համագործակցության և հակասուլթանական ճակատ կազմելու հարցը:

Ծրագրում խնդիր էր դրվում ստեղծել խմբեր գյուղացիներից, բանվորներից, ինչպես նաև ասպատակային կամ մարտական խմբեր՝ ամենատարբեր խավերից: Ենթադրվում էր, որ

հաղթանակից հետո գյուղացիներից ու բանվորներից կազմված խմբերը վճռական դեր են խաղալու պետության կառուցման գործում:

Կուսակցությունն իր կառույցով կենտրոնացված կազմակերպություն էր, որը ղեկավարվում էր կենտրոնական գործադիր կոմիտեների կողմից:

Կուսակցության ամրապնդման, Արևմտյան Հայաստանում և Կիլիկիայում նրա ճյուղավորվելու ընթացքում կառույցի ձևը բավականաչափ փոփոխությունների ենթարկվեց: Անփոփոխ (մինչև 1896 թ. պառակտումը) մնաց դեմոկրատական-կենտրոնացվածության սկզբունքը և պաշտոնաթերթի շուրջ համախմբված Կենտրոնի ղեկավար դերի դրույթը:

Այսպիսով, ի սկզբանե հնչակյան ծրագիրն ու գաղափարախոսությունն ունեին որոշակիորեն տարբերակվող ազգային և սոցիալական շերտեր: Հեղափոխության զարգացման և ջարդերի ահագնացող վտանգի պայմաններում ավելի ու ավելի էր հասունանում ազգի բոլոր ուժերը համախմբելու և միևնույն թիրախին միասնաբար հարվածելու ձգտումը: Հաշվի էր առնված, որ գաղափարական տարակարծությունները, ներազգային հակադրությունների ցանկացած սրում խիստ բացասաբար են ազդելու ազատագրական պայքարի վրա:

գ. Գործունեությունը: Հնչակյան կուսակցության գործունեության առաջին շրջանը (1887-1896) կարելի է բաժանել երեք հիմնական փուլերի. ա) կուսակցության հիմնադրման շրջան (1887-1890), բ) հեղափոխական զինված պայքարի ժամանակաշրջան (1890-1895), գ) պառակտման տարիներ (1895-1896):

Գործունեության առաջին տարիներին կուսակցության հիմնական խնդիրն էր կազմակերպական կառույցի ստեղծումն ու ազատագրական զինված պայքարի ծավալումը Արևմտյան Հայաստանում և Կիլիկիայում: Այս առումով հատկապես կարևորվում էր «Հնչակ» թերթի կանոնավոր հրապարակումն ու գաղափարական այն խոսքը, որ թերթը տանելու էր դեպի ժողովուրդ: Մեծագույն դժվարությամբ Նազարբեկյանին, Ղարաջյանին և Խանազատին հաջողվում է աստիճանաբար ոտքի կանգնեցնել «Հնչակը», ստեղծել համակիր և թղթակցական

լայն չրջանակ: Հատկապես կտրուկ էին «Հնչակի» առաջին խմբագրականները, որոնցում հստակեցվում էին աշխարհայացքային սկզբունքները, գնահատական էր տրվում Հայկական հարցում մեծ տերությունների վերաբերմունքին և այլն:

«Հնչակի» հրատարակման և տարածման ընթացքում ձևավորվում էին կազմակերպության գաղտնի ցանցի գործունեության սկզբունքները: 1888 թ. հոկտեմբեր-նոյեմբերին հրատարակվեց կուսակցության ծրագիրը, լայն աշխատանքներ ծավալվեցին թերթի էջերում մարքսիստական-սոցիալիստական գաղափարների արծարծման առումով: Թարգմանվեցին Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի «Կոմունիստական կուսակցության մանիֆեստը» և զգալի թվով մարքսիստական գրականություն: Միաժամանակ որոշակի գործ կատարվեց Հնչակյան գաղափարները Թուրքերեն լեզվով տարածելու ուղղությամբ: Կարևորվում էր համիդյան վարչակարգի տապալման և օսմանյան աշխատավորների ընդհանուր ճակատի կազմակերպման անհրաժեշտությունը: Սակայն թերթի առանցքային հարցը մնում էր Թուրքահայաստանի խնդիրը:

Կուսակցությունն իր առարկայական գործունեության ծավալման հենակետ ընտրեց Կ. Պոլիսը: Մեկ տարվա ընթացքում այստեղ ստեղծվեց չուրջ 1000 մարդ միավորող ամուր կազմակերպություն: Կարճ ժամանակ անց Հնչակյան մասնաճյուղեր հիմնվեցին Մարզվանում, Թոխաթում, Յոզղաթում, Արաբկիրում, Տրապիզոնում և այլ քաղաքներում: Արևմտահայ ազատագրական պայքարի տասնյակ ճանաչված գործիչներ անդամագրվեցին նորաստեղծ կուսակցությանը՝ հիանալի հասկանալով, որ բնաջնջման ենթարկվող ժողովուրդը զինված պայքարից բացի այլընտրանք չունի: Այս գործիչները նոր որակ հաղորդեցին կուսակցության գործունեությանը՝ Հնչակյան մտածելակերպի և աշխարհայացքի մեջ մտցնելով հարազատ հողի վրա պայքար սկսած կազմակերպությանը բնորոշ նոր երանգներ:

Թերևս այս սկզբնական տարիներին էր, որ առաջացավ առաջին անջրպետը՝ դեռևս չգիտակցված տարբերակումը Եվրոպայում գործող Հնչակյան կենտրոնի և տեղական կազմակերպությունների միջև:

1890 թ. հուլիսի 15-ին Կ. Պոլսի Գում Գափու թաղամասում կազմակերպված հայտնի ցույցը բացում էր Հնչակյան կուսակցության գործունեության նոր փուլը:

Այս ցույցով, փաստորեն, Հնչակյաններն ավետում էին հայրենիքում կազմակերպորեն ընձյուղվելու և բռնատիրության դեմ բացահայտ հեղափոխական պայքար ծավալելու սկիզբը: Ցույցը բացահայտեց Հնչակյան գործելակերպի կարևոր մարտավարությունների մեկը. զանգվածային և հախուռն ելույթներով Հայկական հարցի վրա հրավիրել եվրոպական տերությունների ուշադրությունը՝ պահանջելով բարենորոգումների գործադրում: Բռնությունների և ջարդերի ալիքի տարածմանը զուգընթաց՝ Հնչակյան կենտրոնն աստիճանաբար պայքարի այս ձևը մարտավարությունից վերածեց ռազմավարության՝ Արևմտահայաստանում ժողովրդական ապստամբություն կազմակերպելու ծրագրային դրույթը հանգեցնելով հիմնականում ցուցական, եվրոպական միջամտություն ակնկալող, չնախատեսված ելույթների անընդհատ շարքի:

Սրան հակառակ՝ Կիլիկիայում, Արևմտյան Հայաստանում գործող հեղափոխականների մի ամբողջ խումբ տարիների համառ աշխատանքով քայլ առ քայլ ձևավորում էր Հնչակյան տեղական կոմիտեները, ժողովրդին նախապատրաստում պայքարի բարձրագույն ձևին: Կիլիկիայում, օրինակ, հսկայական էր Ժիրայր Պոյաճյանի ազդեցությունը: Նրա չուրջն էր համախմբվում կռվող երիտասարդության և մտավորականության կարող կորիզը: Սասունում գործում էր Միհրան Տամատյանը, որի ջանքերով հաջողվեց հարթել լեռնականների միջև առկա տարաձայնությունները և նրանց կազմակերպել պայքարելու քուրդ հարստահարիչների դեմ:

Հնչակյան կուսակցությանը ծանր հարված հասցվեց 1893 թ., երբ ձերբակալվեց և կախաղան բարձրացվեց Ժիրայր Պոյաճյանը, բանտարկվեց Միհրան Տամատյանը: Դեպքերի գահավեժ զարգացումը հրամայաբար պահանջում էին ուժերի համախմբում և առավել լուրջ գործողությունների ծավալում:

Հնչակյան կուսակցությունը նշանակալից դեր խաղաց 1890-ական թվականների ինքնապաշտպանական մարտերի ժամա-

նակ: Բայց ընդհանուր ժողովրդական ապստամբություն կազմակերպելու և եվրոպական երկրների միջամտությամբ բարենորոգումներ անցկացնելու հնչակյան ծրագրերը ձախողվեցին:

Կուսակցության մեջ հասունանում էր ներքին դժգոհություն ղեկավար մարմնի գործունեությունից: Ա. Նազարբեկյանի գլխավորած կենտրոնը մեղադրվում էր ազատագրական լուրջ պայքար կազմակերպելու անկարողության, անիմաստ և հրահրիչ խմբագրականներով ու գործունեությամբ սուլթանին նախահարձակ լինելու հնարավորություն ընձեռելու, ազգային-ազատագրական խնդիրները սոցիալիստական գաղափարախոսությանը ստորադասելու մեջ: Հիմնական քննադատությունը գալիս էր արևմտահայ գործիչներից և երկրում գործող կազմակերպություններից, որոնք պահանջում էին վերանայել կուսակցության ծրագիրը և այնտեղից բացառել սոցիալիզմի հատվածը՝ պահպանելով միայն մոտակա նպատակի՝ ազգային-ազատագրական խնդիրների բաժինը: 1896 թ. օգոստոսին Լոնդոնում գումարված համագումարում հականազարբեկյան թևը վճռականորեն դեմ արտահայտվեց ծրագրում սոցիալիզմին վերաբերող մասի պահպանմանը, իսկ երկու տարի անց՝ 1898 թ., Ալեքսանդրիայի համաժողովում ազգային այդ թևը հռչակեց նոր՝ Վերակազմյալ հնչակյան կուսակցության ծնունդը: Հետագա փորձերը՝ ձևավորելու նոր կենտրոն և վերականգնելու կուսակցության միասնությունը, դատապարտված էին ձախողման:

ՀԱՅ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ա. Ձևավորումը: Դեռ Հնչակյան կուսակցության պառակտումից մի քանի տարի առաջ՝ 1890 թվականին, հայ հեղափոխական շարժումը նշանավորվեց ազգային նոր կուսակցության՝ Հայ հեղափոխականների դաշնակցության հիմնադրումով: Կուսակցության ձևավորումը կովկասահայ հեղափոխական մտքի բազմազանության, տեսակետների ու գաղափարների հակադրության և ընդհանուր թշնամու դեմ համատեղ գործելու բարդ

ու երկարատև գործընթացի արդյունք էր:

1880-ական թթ. վերջերից Օսմանյան կայսրությունում սկսված հայության բնաջնջման քաղաքականությունն ու դրան ի պատասխան բռնկված հայոց զինված ազատագրական պայքարը մեծ արձագանք էր գտնում կովկասահայ երիտասարդության ու մտավորականության լայն շրջաններում: Հայ ազգային հեղափոխական կազմակերպությունների, ապա կուսակցությունների ծավալած գործունեությունը, 1890 թ. Կուկունյանի արշավանքը, Կարնո և Գում Գափուի ցույցերի վերաբերյալ Կովկաս հասնող լուրերն է՛լ ավելի հրամայական էին դարձնում արևելահայության կազմակերպման, հեղափոխական բոլոր ուղղությունները մեկ նպատակի ուղղորդելու ձգտումը: Միքայել Վարանդյանը մեզ է փոխանցել ընդհանուր մթնոլորտի տրամադրությունը. «Թիֆլիզը և գավառը արտակարգ իրարանցումի մեջ էին: Ձեռքե ձեռք կանցնեին գաղտնի հրատարակությունները – արտասահմանեն ստացվող «Արմենիա»-ի հազվագյուտ թիվերը, արգիլված Ռուսաստանի մեջ, «Հնչակը», նույնպես արգիլված: Ձեռքե ձեռք կանցնեին և Պետերբուրգի հայ ուսանողներու կարմիր բրոշյուրները, որոնց մեջ կը պատմվեին բուլղար, հույն ապստամբներու – սարկավագ Լևսկիներու և Բոցարիսներու – դավադրական և ռազմական սխրագործությունները: Բայց ամենեն ուժով կը զարնեին կովկասահայոց սրտին ու մտքին Թուրքահայաստանեն տեղացող սարսռեցուցիչ լուրերը»:

Թիֆլիսի հայ ազատագրական խմբակների վրա մեծ էր ինչպես ազգայնական, այնպես էլ նարոդնիկական և ընկերվարական գաղափարների ազդեցությունը: Հիմնականում ռուսական հեղափոխական շրջանակների բովով էին անցել նաև «Երիտասարդ Հայաստան» կազմակերպության ղեկավարները՝ Քրիստափոր Միքայելյանն ու Սիմոն Զավարյանը: Թիֆլիսի «Յուժնիե նոմերա» հյուրանոցում հավաքվող խմբակը փաստորեն դառնում էր երկրամասի հեղափոխական մտքի կարևորագույն մի բևեռ, որին հակադրված էին ազգայնականները, սրանք հավաքվում էին «Սևեռնիե նոմերա» հյուրանոցում՝ Կոստանդին Խատիսյանի գլխավորությամբ: Խաչատուր Մալումյանի շուրջն էին համախմբված «Մշակի» ուղղության հետևորդները, ազդեցու-

թյան առանձին ոլորտ էին զբաղեցնում հնչակյանները:

Այս գաղափարական և քաղաքական այլակարծության մթնոլորտում կար միավորող մի նպատակ՝ Արևմտահայաստանի հարցի լուծումը: Օդում սավառնում էր բոլոր հայ հեղափոխականներին մեկ դրոշի ներքո համախմբելու գաղափարը:

Արդեն 1889 թ. աշնանից Քրիստափոր Միքայելյանի, ապա Սիմոն Զավարյանի ջանքերով սկսվեցին միավորիչ ժողովները: Մանր բանավեճերով և գաղափարական տարակարծություններով ապեցուն հավաքների ընթացքում ի հայտ եկան Քրիստափոր Միքայելյանի ակնհայտ կազմակերպչական կարողությունները: Իր հուշերում Ս. Վրացյանը գրել է. «Քրիստափորն իր անկեղծ ու անսահման հավատով դեպի նոր գործը, հզոր իմացականությամբ, կուռ տրամաբանությամբ ու հուժկու կամքով, ծով լայնախոհությամբ ու մարդոց հոգիները գերելու ուժով, կարողացավ հաշտեցնել ու միացնել այլազան հոսանքներն ու ձգտումները և հիմք դնել մի մեծ կազմակերպության՝ մեծ գործի համար»:

Հիմնական տարակարծությունները երեք կարևորագույն խնդիրների՝ Արևմտյան Հայաստանի անկախության, սոցիալիզմի և կազմակերպական կառույցի ձևի շուրջն էին:

Ի տարբերություն հնչակյանների, որոնք դրել էին Հայաստանի անկախության հարցը և անգամ հաստատագրում էին ապագա պետության սոցիալիստական վարչաձևը, խմբերի մի զգալի մասը հակված էր որպես նպատակ հռչակել Ներսես Վարժապետյանի ծրագիրը՝ Արևմտյան Հայաստանի վեց նահանգների երաշխավորված ինքնավարությունը: Մեծամասնությունը միակարծիք էր նաև ապագա պետականության սոսկ ընդհանուր ուրվագիծ տալու հարցում:

Սոցիալիզմի խնդրում հիմնական հակասությունը «հյուսիսայինների» և «հարավայինների» միջև էին: Կոստանդին Խատիսյանի կողմնակիցները կողմ էին հարցն ընդհանրապես չարծարծել՝ գտնելով, որ հակառակ պարագայում հնարավոր չի լինի համախմբել ողջ ազգը ընդհանուր նպատակի շուրջ: Հնչակյանների նույնքան անզիջում հակառակ կեցվածքը փորձում էին մեղմել միջանկյալ ելք որոնող Քրիստափորն ու Զավարյանը:

Կազմակերպության ձևի ընտրության մեջ, ի տարբերություն կենտրոնացման սկզբունքի, Սիմոն Զավարյանն առաջ էր քաշում ապակենտրոնացման ձևը՝ տեղական լայն նախաձեռնության իրավունքներով:

Հիմնական տարաձայնություններից զատ կային նաև նոր կազմակերպության անվան, նրա ղեկավար մարմինների նստավայրի, պաշտոնաթերթի հրատարակման և այլ գործնական խնդիրներ:

Ի վերջո, 1890 թ. հուլիս-օգոստոս ամիսներին աշխատանքներն ավարտվեցին և առանց բացառության բոլոր կողմերը միաձայնությամբ հատուկ մանիֆեստով հռչակեցին նոր կուսակցության ծնունդը, որը ստացավ Հայ հեղափոխականների դաշնակցություն անունը: Ընդունվեց կուսակցության մանիֆեստը, իսկ ծրագրի և կազմակերպական կանոնների մշակումը թողնվեց ապագայում գումարվելիք ընդհանուր ժողովին: Որոշվեց կուսակցությունը կառուցել կենտրոնացման սկզբունքով և ընտրվեց կենտրոնական վարչություն հետևյալ կազմով՝ Քրիստափոր Միքայելյան, Սիմոն Զավարյան, Հովհաննես Լոռիս-Մելիքյան, Աբրահամ Դաստակյան, Լևոն Սարգսյան: Կազմակերպության կենտրոնավայր ընտրվեց Տրապիզոնը: Որոշվեց ունենալ երկու պաշտոնաթերթ՝ «Հնչակն» ու «Դրոշակը»: Առաջինին, որը հրատարակվում էր ժնևում, վերապահվում էր տեսաբանական խնդիրների արծարծումը, իսկ Թիֆլիսում հրատարակվող «Դրոշակ» շաբաթաթերթը կոչված էր քարոզելու հեղափոխական պայքար ժողովրդի մեջ: Երկու այդ թերթերի խմբագրակազմերի խնդիրը ևս թողնվեց լուծելու հետագայում՝ բանակցությունների միջոցով:

Մանիֆեստում փաստորեն արծարծվում էր մեկ կոնկրետ նպատակ. արևմտահայությունը կենաց և մահու պայքարի մեջ է և նորաստեղծ կազմակերպությունը միավորելու է իր բոլոր ուժերը կռիվը ղեկավարելու համար: «Հայոց հարցի վճռի հետաձգելը այլևս անկարելի է,- նշվում էր փաստաթղթում: Այսպիսի մի պատմական ճգնաժամի միջոցին առաջին հարցը, որ պետք է զբաղեցնի ամեն մի լուրջ հայրենասերի՝ դա բոլոր հեղափոխական ուժերի միության և դաշնակցության հարցն է: Այդ հեղափոխական գաղափարի դրոշակակիրն է «Հայ հեղա-

փոխականների դաշնակցությունը», որ սրանով դիմում է բոլոր հայերին և հրավիրում է կանգնել մի դրոշակի տակ»:

ՀՀԴ-ն թեև նոր է հանդես գալիս իբրև կազմակերպություն, բայց նա վաղուց գործող խմբերի միություն էր: ««Դաշնակցությունը»,- ասված էր մանիֆեստում,- ձգտելու է միացնել բոլոր ուժերը՝ կապելով իր հետ բոլոր կենտրոնները: Նպատակ դնելով Թուրքաց Հայաստանի քաղաքական և տնտեսական ազատությունը՝ «Դաշնակցությունը» մտել է այն կռվի մեջ, որ սկսել է ինքը՝ ժողովուրդը տաճկաց կառավարության դեմ՝ ուխտելով մինչև արյան վերջին կաթիլը կռվել հայրենիքի ազատության համար»:

Այնուհանդերձ, փոխզիջումներով համախմբված կազմակերպությունը հաջորդ տարվա ընթացքում արդեն լուրջ ճեղքեր տվեց: Նախ ձերբակալվեցին (1891 թ. գարուն) նրա հիմնադիր կարևորագույն դեմքերից երկուսը Սիմոն Զավարյանն ու Քրիստափոր Միքայելյանը: Այնուհետև չհաջողվեց գաղափարի շուրջ համախմբել Թիֆլիսի խմբակների մի մասին ու հնչակյաններին: 1891 թ. մայիսին հնչակյան կուսակցությունը պաշտոնական հայտարարությամբ դուրս եկավ Հայ հեղափոխականների դաշնակցությունից, ինքնամեկուսացան մշակականները՝ Խաչատուր Մալումյանի, և «Ֆրակցիա» անվանյալ խմբակը՝ Կոստանդին Խատիսյանի գլխավորությամբ: Հստակ գաղափարական հիմքի և կազմակերպական կանոնների բացակայության պայմաններում հեղափոխական կառույցի աշխատանքները ենթարկվեցին ձախողման:

Միայն 1891 թ. սկզբներին աքսորից վերադարձած Ռոստոմի (Ստեփան Զորյան) ջանքերի շնորհիվ էր, որ հնարավոր դարձավ ստեղծել որոշակի հենարան՝ ի դեմս մարտական-հեղափոխական ակտիվ գործունեություն ծավալող խմբերի: Կենսունակ և ազատագրական պայքարի բովում ներառված այս խմբերը 1892 թ. սկզբներին պահանջեցին գումարել կազմակերպության ընդհանուր ժողով և նոր սկզբունքներով վերակառուցել այն: Ռոստոմից բացի, ընդհանուր ժողովի գումարման նախաձեռնողներից էին Հոնան Դավթյանն ու Տիգրան Օքոյանը: Վերջիններիս խմբագրությամբ կազմվեց ընդհանուր ժողովի հրավերծրագիր հայ հեղափոխականներին՝ հետևյալ օրակարգային

հարցերով. ա) հեղափոխության նպատակը, բ) կազմակերպությունը, գ) միջոց-տակտիկան:

1892 թ. աշնանը Թիֆլիսում գաղտնի պայմաններում գումարվեց Դաշնակցության առաջին ընդհանուր ժողովը: Ռոստոմի վկայությամբ ժողովն ուներ խորհրդակցական բնույթ: Մտքերի փոխանակության ընթացքում բոլոր այն հարցերը, որ դրվում էին քննության, ենթարկվում էին վիճաբանության այնքան ժամանակ, մինչև բոլորը համաձայնվում էին հարցի այս կամ այն վերջնական ձևակերպմանը, ոչ մի հարց չէր ենթարկվում քվեարկության. դրանք բոլորն ընդունվում էին միաձայն հավանությամբ: Ժողովը փոփոխեց կուսակցության անվանումը՝ Հայ հեղափոխականների դաշնակցության փոխարեն՝ Հայ հեղափոխական դաշնակցություն (ՀՀԴ): Վերածվելով միաձույլ կազմակերպության՝ նա ընդունեց իր ծրագիր-կանոնագիրը, որը Ռոստոմի հավելված-ներածականով հրատարակվեց կուսակցության պաշտոնաթերթում:

բ. Մրագիրը և կառուցվածքը: Առաջին ընդհանուր ժողովի հաստատած ծրագիր-կանոնադրությունը կազմված էր երեք մասից՝ նպատակ, միջոցներ, կազմակերպություն:

Մրագրի ներածականը սկսվում էր ժամանակի սոցիալիստական գաղափարախոսությանը բնորոշ մուտքով, բայց միաժամանակ չեշտվում էր, որ «Մեր ձգտումն է, որ մեր ծրագիրը կենսական լինի. մեր ուշադրությունը գլխավորապես կենտրոնացած է մեր երկրի ներկա դրության վրա ...»: Այնուհետև ներկայացվում էր հայ ժողովրդի ծանր վիճակը Թուրքիայում, անդրադարձ էր կատարվում օսմանահպատակ մյուս ճնշված ժողովուրդների ճակատագրին: Բուն ծրագիրը սկսվում էր «Նպատակ» բաժնով, ուր հստակորեն նշվում էր. «ՀՀԴ նպատակն է ապստամբության միջոցով Տաճկահայաստանում ձեռք բերել քաղաքական և տնտեսական ազատություն»: Առավել հստակեցնելով ազատություն հասկացությունը՝ ծրագիրը նրբորեն չրջանցում էր անկախության հիմնախնդիրը՝ չեշտադրում կատարելով արևմտահայության պայմաններից բխող իրական արդյունքներ ձեռք բերելու ռազմավարության վրա: Հայաստանի ապագա կառավարման համակարգի համար խնդիր էր

դրվում հասնել ժողովրդավարական ընտրական և կառավարման ձևերի, խոսքի, հավաքների, խղճի ազատությունների հաստատմանը: Մեծ ուշադրություն էր հատկացվում սոցիալական ու տնտեսական պահանջներին (կյանքի ու գույքի ապահովություն, ուսման իրավունք, հողի արդար բաշխում և վերաբաշխում, պրոգրեսիվ հարկային քաղաքականություն և այլն): «Դրոշակում» հրապարակված «Այբ ու Բեն» խորագրով ծրագրային հոդվածաշարով և հետագայում մի շարք այլ հրապարակումներով կուսակցության գաղափարախոսները առավել հստակեցրին բացահայտ անկախության պահանջ չառաջադրելու իրատեսական մարտավարությունը: Մշակվեց աստիճանական ձեռքբերումների ուղին, այսինքն՝ հանգրվանային հաջողությունների ամրագրման միջոցով ազգը հարատև պայքարի ճանապարհով շարժել դեպի հիմնական նպատակ:

Է՛լ ավելի հստակ էր սահմանված «Միջոցներ» բաժինը, ուր ներկայացված էր հեղափոխական-ազատագրական պայքար մղող կուսակցության մարտավարական զինանոցը:

Ծրագրում նշվում էր. «Հ. Հ. Դաշնակցությունը ապստամբության միջոցով իր նպատակին հասնելու համար կկազմակերպի հեղափոխական խմբեր, որոնք կառավարության դեմ անընդհատ և զորեղ կռիվ կմղեն այն ընդհանուր պայմաններուն դեմ, որոնցմե նեղված են միևնույն ժամանակ թե՛ հայ և թե՛ օտար տարրերը (ասորիները, եզդիները, քրդերուն մեկ մասը, խաղաղ թուրքերը և այլն)»: Խմբերն իրենց պայքարում կիրառելու էին հետևյալ միջոցները:

1. Մղել Դաշնակցության գլխավոր սկզբունքների և խնդիրների քարոզչություն, 2. Կազմակերպել և աշխատել մարտական խմբերի հետ, 3. Գործով, խոսքով, բոլոր միջոցներով բարձրացնել ժողովրդի ոգին և ակտիվությունը, 4. Անել ամեն ինչ ժողովրդին զինելու համար, 5. Կազմակերպել հեղափոխական կոմիտեներ, 6. Հետազոտել ժողովրդի և երկրի վիճակը՝ տեղյակ պահելով Դաշնակցության կենտրոնական մարմիններին, 7. Կազմակերպել տարածքային ֆինանսական շրջաններ, 8. Ահաբեկել կառավարության առավել գազանաբարո պաշտոնյաներին, մատնիչներին ու դավաճաններին, 9. Խաղաղ ժողովրդին պաշտպանել ավազակային հարձակումներից, 10. Ճանապարհներ հաստատել՝ մարդիկ և զենք տեղափոխելու համար, 11. Հարկ եղած դեպքում կառավարության հիմնարկները ենթարկել ավերումների:

Սա փաստորեն թուրքական բռնատիրության դեմ պարտիզանական կռիվ սկսելու ծրագիր էր, որը բխում էր Արևմտյան Հայաստանում ու Կիլիկիայում նախորդ տարիների զինված պայքարի, ֆիդայական կռիվների ծավալման և կրած անհաջողությունների փորձից:

Ընդհանուր ժողովի գումարումից մեկ տարի առաջ «Դրոշակի» խմբագրականներից մեկում հիմնավորված էր պարտիզանական պատերազմի անհրաժեշտությունը արևմտահայության շրջանում: Այնտեղ մասնավորապես նշված էր, որ ամեն մի քաղաքական կուսակցություն, գաղափարի համար կռիվ սկսելով, կարող է հաջողության հույս ունենալ միայն այն ժամանակ, երբ կան հետևյալ երկու անհրաժեշտ պայմանները.

1. Եթե ժողովուրդը, որի շահերի համար մղվում է կռիվը, հասկանում է այդ կռվի անհրաժեշտ լինելը և մասնակցում է այդ կռվին թե՛ ուղղակի և թե՛ անուղղակի կերպով, գոնե, ի դեմս յուր ամենալավ ներկայացուցիչների:
2. Եթե կռվի համար ընտրված են այնպիսի նպատակահարմար ձևեր և միջոցներ, որոնք բոլորովին համապատասխան են ներկա իրականության և պատմական րոպեի պահանջած պայմաններին:

Նման խնդիրներ դնող կուսակցության համար, բնականաբար, պիտի առանձնապես կարևորվեին կարգապահության և կառույցի հետ առնչվող հիմնահարցերը:

Ծրագրի «Կազմակերպություն» բաժինը առավել արմատական փոփոխությունների համակարգ էր նախատեսում: Կուսակցության հիմնադրումից ի վեր գործիչների մի հեղինակավոր խումբ (Սիմոն Զավարյան, Հոնան Դավթյան և ուրիշներ) պահանջում էր կառույցում կիրառել գաղափարական կենտրոնացման և կազմակերպական ապակենտրոնացման սկզբունքը: Դա հիմնավորվում էր ինչպես հայության բաժանվածության և աչխարհասփյուռ լինելու հանգամանքով, այնպես էլ ազատագրական պայքարի՝ մեկ կենտրոնից ղեկավարվելու պարագայում

առաջացող բազմաթիվ դժվարությունները դիմագրավելու անհրաժեշտությամբ: Երկու տարվա կազմակերպչական աշխատանքների փորձը ևս գալիս էր հաստատելու նման հիմքով կառույց ստեղծելու անհրաժեշտությունը: Ընդհանուր ժողովի թերևս կարևորագույն ձեռքբերումը կարելի է համարել ապակենտրոնացման ձևի որդեգրումը: Խումբ – Կոմիտե – Կենտրոնական Կոմիտե – Բյուրո շղթայի յուրաքանչյուր օղակի ինքնուրույնությունը մեծացնում էր կուսակցության սկզբնական օղակների դերակատարումը, ապահովում առավելագույն ճկունություն և դիմացկունություն: Սուլթանական բռնատիրության պայմաններում այն տեղական կազմակերպություններին հնարավորություն էր տալիս արագորեն կողմնորոշվել բարդ իրավիճակներում և ձեռք առնել անհրաժեշտ քայլեր:

գ. Գործունեությունը: Նորաստեղծ կուսակցությունն իր գործունեության մեջ չեչտը դնում էր թուրքական բռնակալության դեմ զինված պայքար կազմակերպելու և հայության մյուս հատվածներին դրա շուրջ համախմբելու աշխատանքների վրա:

Ընդհանուր ժողովից անմիջապես հետո ընկած ժամանակաշրջանը (1892-1895) Դաշնակցության տեղական կազմակերպությունների համար ամրապնդման և աճի տարիներ դարձան: Գործուն աշխատանքներ էին տանում Կ. Պոլսի, Տրապիզոնի, Թիֆլիսի, Ղարաբաղի, Գանձակի, Եվրոպայի հիմնական հայաշատ կենտրոնների կոմիտեներն ու կենտրոնական կոմիտեները:

1890-ականների երկրորդ կեսին հիմնական խնդիր էր համարվում Երկրի զինման աշխատանքի կազմակերպումը: Մեծ թափ ստացավ դեպի Արևմտյան Հայաստան զենքի և զինամթերքի առաքման գործը: Այդ նպատակով մշակվեց Արևմտյան Հայաստան զենք ու զինամթերք և մարտական խմբեր առաքելու ծրագիր: Երկրում ստեղծվեցին մի քանի կոմիտեներ: Տեղական կազմակերպությունները հատկապես ուժեղացան Ատրպատականի, Սուրմալուի, Կարսի սահմանամերձ շրջաններում: Որպես հենակետներ ընտրվեցին Պարսկաստանի սահմանակից շրջանները և Կարսը: Թավրիզում սկսեց գործել զինագործական արհեստանոց: Զենքը և խմբերը կենտրոնանում էին Վասպուրականում՝ Թավրիզ-Սալմաստ-Թադեի վանք-Վան ճանապարհով,

Սասունում՝ Կարս-Բասեն-Սասուն գծով: 1895-1896 թթ. զենք և մարտական խմբեր երկիր ուղարկելու տարիներ էին:

Սասունի, Զեյթունի ապստամբությունները, Բաբ Ալիի ցույցին հետևած ջարդը, Վանի ինքնապաշտպանների եղերական վախճանն ու ջարդարարական ոհմակների անսանձ բռնությունները Դաշնակցությանն ստիպում էին անցնել պայքարի ավելի կտրուկ գործողությունների:

Գործունեության կարճ ժամանակի ընթացքում Դաշնակցությանը հաջողվեց Արևմտահայաստանի զինված պայքարը բարձրացնել որակական նոր աստիճանի և ձեռնամուխ լինել համազգային զինված ապստամբության կազմակերպման աշխատանքներին:

1898 թ. ապրիլ-հունիս ամիսներին Թիֆլիսում գումարված ՀՀԴ II ընդհանուր ժողովը, քննելով զինված պայքարի փորձը և մատնանշելով թերություններն ու բացթողումները, որոշեց նոր ուժ ու որակ հաղորդել մարտական խմբերի և ռազմամթերքի կենտրոնացման աշխատանքներին՝ համընդհանուր զինված ապստամբություն բարձրացնելու նպատակով:

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ XIX ԴԱՐԻ ՎԵՐՋԵՐԻՆ-XX ԴԱՐԻ ՍԿԶԲՆԵՐԻՆ

1. ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ XIX ԴԱՐԻ 90-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

ա. Ազգային-ազատագրական պայքարի նախադրյալները: *1878 թ. Սան-Ստեֆանոյի նախնական հաշտության և Բեռլինի վեհաժողովի դաշնագրով ըստ էության միջազգայնացվել էր Հայկական հարցը: Բայց շատ չանցած պարզ դարձավ, որ դիվանագիտական ճանապարհով այդ հարցը չի լուծվելու: Իր հերթին սուլթանական կառավարությունը ձեռնարկեց Հայկական հարցի յուրովի լուծում: Եթե Բեռլինի վեհաժողովին հաջորդած առաջին տասնամյակում դա առավելապես արտահայտվում էր ժողովրդագրական, վարչատարածքային և հարկային քաղաքականության իրականացումով, որի նպատակն էր հայաթափել Արևմտյան Հայաստանը, ապա 1890-ական թթ. սկզբներից արդուլհամիդյան վարչակարգը՝ ձգտելով կանխել ուժգնացող հայ ազատագրական շարժումը, դիմում է Հայկական հարցի լուծման ավելի արմատական միջոցի՝ Հայաստանի բնիկ բնակչության ֆիզիկական բնաջնջման:*

Իր հերթին՝ Բեռլինի վեհաժողովից հետո միջազգային դիվանագիտությունից հիասթափված հայկական ազատագրական շարժման գործիչները կանգնեցին պայքարի մարտավարությունը փոխելու անհրաժեշտության առաջ՝ Հայկական հարցի լուծման հույսը գլխավորապես կապելով զինված պայքարի հետ:

Ազատագրական պայքարի դեկը ստանձնած կուսակցությունները, չնայած իրենց միջև եղած մարտավարական որոշակի տարբերություններին, անվերապահորեն հեղափոխության հետ կապեցին արևմտահայության ազատագրումը:

Ազգային-ազատագրական պայքարի գլխավոր նպատակի և դեպի այն տանող ուղու սահմանումը օրինաչափորեն դնում էր նաև տվյալ իրավիճակին ու պատմական պահին համապատասխան գործունեության ձևերի ու միջոցների ընտրության հարցը, որոնք պետք է համապատասխանեին իրական պայմաններին՝ հաշվի առնելով պայքարի ճանապարհին առկա դժվարություններն ու խոչընդոտները:

Պայքարի առաջին շրջանում շարժումը ղեկավարող ուժերին բնորոշ էր քաղաքական ռոմանտիզմը, երբ Երկրից հասնող օգնության կոչերը նրանք սխալ էին ընկալում՝ գտնելով, որ ժողովուրդը պատրաստ է համընդհանուր ապստամբության: Հայկական հարցը միամտորեն համարվում էր մոտ ժամանակներում լուծելի հարց՝ ակնհայտորեն թերագնահատելով Օսմանյան կայսրության իրական հնարավորությունները: Պայքարը ղեկավարող կենտրոններում, որոնք գտնվում էին Երկրի սահմաններից դուրս, բացակայում էր Արևմտահայաստանի իրական վիճակի վերաբերյալ հստակ պատկերացումը:

Մտավոր առումով ավելի զարգացած և տնտեսապես բարվոք վիճակում գտնվող հայության մի ստվար զանգվածի կենտրոնացումը բուն Երկրից դուրս՝ կայսրության խոշոր կենտրոններում, հատկապես Կ. Պոլսում և Զմյուռնիայում, այսինքն՝ Եվրոպայի տեսադաշտում, ստիպում էր թուրքական բռնապետության դեմ մղվող պայքարը հաճախ բուն Երկրից տեղափոխել այդ կենտրոնները՝ կարծելով, թե այդտեղ զինված գործողություններ ծավալելով հնարավոր է լուծել ժողովրդի ազատագրության հարցը:

Հաշվի առնելով Հայկական հարցի միջազգայնացած լինելը՝ հեղափոխական կուսակցությունները միամտաբար կարծում էին, թե Հայկական հարցի վերջնական լուծման իրավարարի փրկիչ դերը, ի վերջո, վերապահվելու է միջազգային դիվանագիտությանը:

Հայ ազատագրական շարժմանը խանգարող մյուս հանգամանքը այն ֆինանսավորող, նյութապես ապահովող արտաքին ու ներքին կայուն, քիչ թե շատ նշանակալի ուժերի բացակայությունն էր: Շարժումը նյութապես քիչ թե շատ ապահովում էին աշխատավորական զանգվածները, որոնց օժանդակությունը

չէր կարող բավարար լինել: Ուստի պայքարի ղեկավար ուժերը հարկադրված էին երբեմն նյութական ռեսուրսներ ձեռք բերել ոչ ցանկալի եղանակով՝ բռնի մեթոդներով:

Շարժման առջև մեծ խոչընդոտ էր Արևմտյան Հայաստանում այլազգի, քուրդ ստվար բնակչության առկայությունը, որի հետ դաշինքը կամ գոնե նրա չեզոքացումը կենսական խնդիր էր, թեև կյանքը ցույց տվեց, որ քրդերի հետ դաշինքը անիրականանալի է: Ավելին, քրդությունը չեզոք չէր: Հավակնելով տիրանալ Հայոց երկրին՝ ինքն էլ ակնհայտ թշնամանքով էր տրամադրված Հայության հանդեպ: Հիմնականում հենց քուրդ բեկերն ու աղաներն էին հանդես գալիս արևմտահայության հարստահարողի դերում: Իշխանությունները քրդերի ուժերն օգտագործում էին Հայության պայքարը զսպելու համար՝ բնականաբար առաջ բերելով հայ զինյալների պատասխան հակահարվածը:

Պայքարի կոնկրետ ձևերի ու միջոցների ընտրության խնդրում հայ ազատագրական շարժումը երկար որոնումների անհրաժեշտություն չզգաց: Մի կողմից՝ նա իր աչքի առաջ ուներ XIX դարի ընթացքում ուրիշ ազգերի մղած և հաճախ հաղթանակով ավարտված պայքարի օրինակները, մյուս կողմից՝ արևմտահայ իրականության կոնկրետ պայմաններն իրենք էին հուշում, երբեմն նաև պարտադրում պայքարի նոր ձևեր կամ ճշգրտում արդեն հայտնի ձևերը:

Ստեղծված պայմաններում անհնարին համարելով կանոնավոր կռիվը թուրքական բռնապետության դեմ՝ հայ զինյալ պայքարը ղեկավարող կուսակցությունները (Հնչակ, Դաշնակցություն) փարվեցին հայդուկային (պարտիզանական) պայքարի գաղափարին, քանի որ կանոնավոր պատերազմ, իսկական ճակատամարտեր անհնար էին:

Այսպիսով, հայ ժողովրդի ազատագրական զինված պայքարը հիմնականում ստանում է ֆիդայական կռիվների կերպարանք: Ֆիդային (հայդուկը) թուրքական բռնակալության դեմ պայքարող ժողովրդական վրիժառուն էր, որը տուն ու ընտանիք թողած՝ իրեն նվիրաբերել էր հայրենիքի ազատագրության գործին: Նա մարմնավորում էր ազգի կռվող ոգին, նրա արիությունը, վեհանձնությունը և անկոտրում կամքը:

Սուլթանական կառավարության հայաջինջ քաղաքականության հետևանքով ծայրահեղ աննպաստ պայմաններում ընթացող հայ ազատագրական շարժումը հայդուկային պայքարի հետ մեկտեղ հարկադրված էր որդեգրել նաև պայքարի այլ՝ անգամ ծայրահեղ ձևեր, քանզի աբդուլհամիդյան անմարդկային ռեժիմի դեմ կռվում դեպի ազատություն տանող պայքարի բոլոր միջոցներն արդար էին:

Հայոց ազատամարտը, չսահմանափակվելով հայդուկային կռիվներով, լրացվում էր զինյալ պայքարի այնպիսի ձևերով, ինչպիսիք էին ինքնապաշտպանական կռիվները, արշավանքները, անհատական ահաբեկումները և այլն:

Այսպիսին էր հայ ազատագրական զինված պայքարի առաջին փուլի մարտավարությունը՝ ռոմանտիկ ու ոչ իրատեսական, բայց միանգամայն բնորոշ ազատագրական պայքարի ղեկավարների այդ շրջանի աշխարհայացքին:

բ. Ազատագրական պայքարի առաջին քայլերը: Հայոց ազատամարտի հասունացումը, քաղաքական կուսակցությունների կազմավորումը, հայդուկային կռվի առաջին դրսևորումները աննկատ չէին մնացել թուրքական կառավարող շրջաններին: Զգալով կանխել իրադարձությունների զարգացումը՝ Աբդուլ Համիդ II-ը փորձեց դեռ սաղմում ոչնչացնել հայ ազատագրական պայքարը: Նրա հարվածը, բնականաբար, առաջին հերթին պետք է ուղղվեր արևմտահայության այն կենտրոնների դեմ, որոնք հայտնի էին ազատագրական պայքարի ավանդույթներով և մոտ ապագայում սպառնում էին վերածվել ապստամբական օջախների:

Նման կենտրոններից մեկը Կարինն էր: Դեռ թարմ էին հիշողությունները «Պաշտպան հայրենյաց» կազմակերպության մասին: Թուրքերը չէին մոռացել նաև 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ կարինցիների կողմից ռուսական բանակին ցույց տված փառահեղ ընդունելությունը: 1890 թ. հունիսին, հայկական ապստամբություն պատրաստելու կեղծ ահազանգի հիման վրա, Բ. Դոնից ստացված հրամանով Կարինի իշխանությունները խուզարկեցին Սանասարյան վարժարանը, առաջնորդարանը և Ս. Աստվածածին եկեղեցին: Խուզարկությունն արդյունք չունեցավ: Հունիսի 18-ին եկեղեցի եկած

բազմությունը՝ «Պաշտպան Հայրենյացի» դեկավարներ Խ. Կերեքցյանի, Գ. Չիլինկիրյանի և Հ. Իշղալացյանի գլխավորությամբ դիմադրեց ոստիկաններին: Շուրջ 20 հայեր սպանվեցին ու վիրավորվեցին: Երկու օր անց՝ հունիսի 20-ին, իշխանությունների հրահանգով ջարդեր կազմակերպվեցին քաղաքի հայկական թաղամասերում: Կարինի դեպքերը, որպես ազատության համար բողոքի պոռթկում, մեծ արձագանք գտան ինչպես արևմտահայության, այնպես էլ արևելահայության շրջաններում:

Ցանկանալով բարձրացնել գավառահայության կորովը և կրկին Հայկական հարցի վրա բևեռել մեծ տերությունների ուշադրությունը՝ հնչակյանները 1890 թ. հուլիսի 15-ին խաղաղ ցույց կազմակերպեցին Կ. Պոլսում, որը ստացավ Գում Գափուի ցույց անունը այն թաղամասի անունով, որտեղ գտնվում էին Հայոց մայր եկեղեցին և առաջնորդարանը: Ընդհատելով եկեղեցում ընթացող ժամասացությունը՝ հնչակյան գործիչները ժողովրդին ազատության համար պայքարի կոչ արեցին: Ցուցարարները ներխուժեցին պատրիարքարան, պատից պոկեցին ու պատառոտեցին Աբդուլ Համիդ II-ի նկարն ու թուրքական պետական զինանշանը: Նրանք Խորեն Աշրգյան պատրիարքին հարկադրեցին իրենց հետ գնալ պալատ՝ սուլթանին հանձնելու բողոքագիրը: Թուրքական իրականության պայմաններում դա բացահայտ ըմբոստություն էր և մարտահրավեր իշխանություններին: Ոստիկանությունը կրակ բացեց ցուցարարների վրա: Եղան զոհեր, կատարվեցին զանգվածային ձերբակալություններ:

Գում Գափուի ցույցը հնչակյանների կազմակերպած առաջին զանգվածային ելույթն էր: Այն թեև զինված բնույթ չուներ, բայց թուրքական կառավարության կողմից ներկայացվեց որպես ապստամբություն:

Հայ ազատամարտի այս փուլին բնորոշ քաղաքական ռոմանտիզմի դրսևորումներից էր նաև Կուկունյանի արշավանքը: Ս. Պետերբուրգի բարձրագույն ուսումնական հաստատությունների մի խումբ ուսանողներ՝ Սարգիս Կուկունյանի գլխավորությամբ, որոշեցին անցնել Արևմտյան Հայաստան և զինյալ պայքարի դրոշ պարզել թուրքական բռնապետության դեմ: Թիֆլիսում, Ալեքսանդրապոլում և Կարսում Կուկունյանն ու իր ընկերները ցնծությամբ ու ոգևորությամբ ընդունվեցին հայ բնակչության կողմից: Համընդհանուր ոգևորության պայմաններում խումբը համալրվեց և հասավ ավելի քան 100 մարդու: Նրանք Արևմտյան Հայաստան էին անցնում՝ քաջ գիտակցելով, որ այլևս վերադարձ չկա, որ գնում են կռվելու և հաղթանակի չհասնելու դեպքում՝ գեթ կռվով մեռնելու:

1890 թ. սեպտեմբերի 24-ին խումբն անցավ թուրքական սահմանը, բայց հենց սահմանագլխին ընդհարվելով քրդերի ու թուրքական կանոնավոր ուժերի հետ, նահանջեց և ստիպված անձնատուր եղավ ռուսական սահմանապահ զորամասերին: Ցարական իշխանությունները, որոնք թշնամաբար էին տրամադրված հայ ազատագրական շարժման նկատմամբ, արշավախմբի 27 մասնակիցների դատապարտեցին տարբեր ժամկետներով տաժանակրության: Կուկունյանի արշավանքը, այնուհանդերձ, արևելահայության շրջանում թուրքական բռնապետության դեմ պայքարի գաղափարի լայն ժողովրդականության արտացոլումն էր: Այն արևմտահայության ազատագրության զինյալ պայքարին արևելահայ լավագույն երիտասարդության նվիրաբերվելու և հայ ժողովրդի երկու հատվածներն արհեստականորեն իրարից բաժանելու մտայնության հաղթահարման փայլուն ապացույց էր:

Գում Գափուի ցույցը և Կուկունյանի արշավանքը թեև գործնական արդյունքներ չունեցան, բայց ոգեշնչման օրինակ հանդիսացան հայ երիտասարդության համար: Ցուցադրելով ազատագրական պայքարի ծանր ու դժվարին լինելը՝ դրանք մի կողմից՝ յուրահատուկ զտիչի դեր խաղացին՝ ասպարեզից դուրս բերելով ազատագրական շարժման մեջ ներգրավված հոգեպես թույլ և պատեհապաշտ տարրերին, մյուս կողմից՝ նպաստեցին դեպի ազատագրական պայքարի ոլորտ նոր, թարմ ուժերի ներհոսին:

Կարինի ու Կ. Պոլսի ժողովրդական ցույցերին և Կուկունյանի արշավանքին հաջորդած տարիները նշանավորվեցին Արևմտյան Հայաստանում և Թուրքիայի հայաբնակ գրեթե բոլոր վայրերում սկսված ժողովրդական հուզումներով ու զինված ելույթներով: Ծավալվեց և մեծ թափ ստացավ պարտիզանական՝ հայդուկային կռիվը: Այդ տարիներին Տարոնում իր գործունեությունը ծա-

վալեց Մարգար վարժապետը (Մարգար Ամիրյան): Մուշ-Սասունում հայդուկային պայքարի գլուխ կանգնեց Արաբոն: Երզընկայում և Սեբաստիայում գործում էին Գալուստ Արխանյանի (Մնձուրի Առյուծ), Ռուբեն Շիշմանյանի և Հովհաննես Մինասյանի (Մինասօղլու), իսկ ավելի ուշ՝ Դանիել Զավուշի հայդուկային խմբերը: Հայդուկային ակտիվ գործունեություն ծավալեցին Արամ Աչբպաչյանն ու Ժիրայրը (Մարտիրոս Պոյաճյան): Կեսարիա-Սեբաստիա հատվածում գործում էին մեծ և փոքր «Զեյլո»-ներ կոչվող հայդուկային խմբերը: Վասպուրականում գործում էին հայդուկներ Զաթոն ու Շերոն և այլն: Այդ պարտիզանական պատերազմին իր մասնակցությունը բերեց նաև արևելահայությունը: Արևելյան Հայաստանում և Պարսկաստանի տարածքում ստեղծվում էին հայդուկային ջոկատներ, որոնք անցնելով Երկիր՝ մասնակից էին դառնում ազատագրական կռվին: Երկիր անցան պայքարի ընթացքում մեծ համբավ վաստակած արևելահայ այնպիսի գործիչներ, ինչպիսիք էին՝ Պետոն (Ալեքսանդր Պետրոսյան), Վարդանը (Սարգիս Մեհրաբյան), Նիկոլ Դումանը (Նիկողայոս Տեր-Հովհաննիսյան) և ուրիշներ:

Զինված պայքարի ծավալումն օրինաչափորեն դնում էր արևմտահայությանը զինելու հարցը: Կազմակերպվում են զինատար խմբեր, որոնք, հաղթահարելով հսկայական դժվարություններ, Ռուսաստանից, Անդրկովկասից ու Պարսկաստանից զանազան ուղիներով ու միջոցներով զենք էին փոխադրում Երկիր: Կարսը, Երևանը, Սալմաստը, Ուրմիան և Երկրի սահմանին մոտ գտնվող այլ բնակավայրեր ժամանակի ընթացքում վերածվեցին կարևոր հենակետերի: Զինյալ պայքարի առաջին տարիներին զենքի և հայդուկային խմբերի փոխադրության կարևոր հավաքատեղի դարձավ հատկապես Թուրք-պարսկական սահմանագլխին գտնվող Դերիկի կիսավեր վանքը: 1891 թ. Թավրիզում Դաշնակցությունը հիմնադրեց «Խարիսխ» զինագործական արհեստանոցը:

Սակայն այդ ամենը կաթիլ էր ծովում: Ազատագրական պայքարը գլխավորող կուսակցությունների նյութական անձուկ վիճակի, զինատար ուղիների դժվարանցելիության և օբյեկտիվ ու սուբյեկտիվ այլ պատճառներով արևմտահայությանը զինելու խնդիրը չլուծվեց և մնաց որպես հրատապ լուծում պահանջող

հարց նաև ազատագրական պայքարի հետագա փուլերում՝ բացասական առումով իր կնիքը դնելով հայոց ազատամարտի ընթացքի վրա: Առաջին հերթին դա ամբողջ սրությամբ դրսևորվեց Սասունի 1894 թ. ապստամբության ընթացքում:

գ. Սասունի 1894 թվականի ապստամբությունը: Շուրջ 35 հազար հայ բնակչություն ունեցող և մեկ տասնյակ գյուղախմբեր ընդգրկող Սասունի գավառը, որն ուներ ազատագրական պայքարի հարուստ ավանդույթներ, դեռևս 1880-ական թվականներից պայքարի մեջ էր քրդական հրոսակների, կառավարական զորքերի և ոստիկանության կամայականությունների դեմ: Ազատ կյանքին և զենք կրելուն սովոր լեռնական սասունցին, բնականաբար, իր վրա պետք է բևեռեր ազատագրական շարժումը գլխավորող կուսակցությունների ուշադրությունը: Ազատատենչ Սասունը պարարտ հող էր ազատագրական գաղափարների քարոզման համար: Հնչակյան գործիչներն առաջինն էին, որ գործնական աշխատանք տարան Սասունը կազմակերպելու ուղղությամբ: 1891 թ. Միհրան Տամատյանը հաստատվեց Սասունում և լեռնականների մեջ քարոզեց Հայաստանի ազատագրության գաղափարը: Թեև 1893 թ. մայիսին Թուրքերին հաջողվեց իրենց ձեռքը գցել Տամատյանին, բայց նրան փոխարինելու եկած գործիչները, որոնց մեջ հատկապես աչքի էին ընկնում Մեծն Մուրադը (Համբարձում Պոյաճյան), Հրայրը (Արմենակ Ղազարյան), Գևորգ Զավուշը (Գևորգ Աղամյան), Շենիկի տանուտեր Գրգոն (Գրիգոր Մոսեյան) և ուրիշներ, իրենց վրա վերցրին Սասնո ազատամարտի հետագա կազմակերպումն ու ղեկավարումը:

Թուրքական իշխանությունները Սասունում սկսված խմբումներից անհանգստացած՝ 1891-1892 թթ. նրա դեմ հանեցին քրդական ցեղերին, համիդիե հեծելազորային ջոկատներ ու ոստիկանական կանոնավոր ուժեր: Հետ մղելով բոլոր հարձակումները՝ սասունցիները գործնականում հայտնվեցին օսմանյան պետության դեմ կիսապատերազմական վիճակում: 1893 թ. ամռանը Բիթլիսի կուսակալ Թահսին փաշան սասունցիներին ներկայացրեց իր պայմանները. 1. հանձնել հեղափոխականներին, դրսից եկած գործիչներին ու նրանց համակիրներին, 2. հանձնել զենքերը, 3. վճարել այդ տարվա և նախկինում չվճարած բո-

լոր տուրքերը, 4. ստորագրել հանրագրություն, համաձայն որի իրենք չատ գոհ են օսմանյան կառավարությունից և ըմբոստացել են Միհրան Տամատյանի թելադրանքով:

Առաջարկված պայմանները երկընտրանքի առջև կանգնեցրին սասունցիներին: Դրանց ընդունումը հավասարազոր էր անձնատվության, մերժումը կընկալվեր որպես ապստամբություն: Սասունն ընտրեց երկրորդ ուղին: Ժխտելով Սասունում հեղափոխականների ու դրսից եկած գործիչների առկայությունը, հրաժարվելով հանձնել զենքերը և վճարել տուրքերը՝ սասունցիները դրանով գործնականում ապստամբության դրոշ պարզեցին թուրքական բռնապետության դեմ: Սասունը դարձավ Հայկական հարցի լուծման համար մղվող պայքարի կարևոր ճակատ: Սասունցին հույս ուներ ստանալ եթե ոչ քրիստոնյա ազգերի, ապա գոնե դրսի հայության, մասնավորապես կովկասահայության օժանդակությունը՝ դրամով, զենքով ու կռվող ուժերով: 1893 թ. վերջերին Սասունի համար զենք ձեռք բերելու նպատակով Թիֆլիս ժամանեց Մեծն Մուրադը (Համբարձում Պոյաջյան), իսկ հաջորդ տարվա սկզբներին նույն նպատակով Կարս անցավ Հրայրը: Բայց Սասունը չստացավ ակնկալված օգնությունը:

Շուտով Սասունը օղակի մեջ առնվեց. հայտարարվեց պատերազմական վիճակ: 1894 թ. հունիսին կառավարությունը դիմեց վճռական միջոցների: Սուլթանի հանձնարարությամբ Սասուն արշավող զորքերի ղեկավարությունը ստանձնեց Անատոլիական 4-րդ բանակի հրամանատար, ջարդարար Զեքի փաշան: Բացի նրա գլխավորած 12 հազարանոց զորամիավորումից, Սասունի վրա շարժվեցին նաև այլ զորամասեր՝ Դիարբեքիրից, Կարինից, Երզնկայից, Մուշից, Վանից, անգամ Բաղդադից ու Հալեպից: Դեպի Սասուն շարժվեցին նաև ոստիկանական ուժեր, Համիդիեական զորախմբեր և տասնյակ հազարավոր անկանոն քուրդ բաշիբոզուկներ: Այսպիսով, Սասունի դեմ դուրս բերվեց ժամանակի ռազմական տեխնիկայով զինված մի հսկա բանակ, որն իր թվաքանակով գերազանցում էր Սասունի հայությանը: Դա վկայում է այն մասին, թե սուլթանի համար որքան վտանգավոր էր ըմբոստ Սասունը:

Օգոստոսի սկզբներին թուրքական կանոնավոր զորքերը

հարձակման անցան: Մուրադի և մյուս հրամանատարների գլխավորությամբ կայծքարե հրացաններով, դաշույններով, կացիններով զինված սասունցիները չուրջ մեկ շաբաթ չարունակ աներևակայելի խիզախությամբ ու անձնազոհությամբ կռվում էին թշնամու դեմ՝ մնալով իրենց դիրքերում: Ի վերջո, սակայն, նրանք ստիպված էին մարտերով նահանջել անմատչելի լեռները: Անհավասար գոտեմարտը չարունակվեց ևս 15 օր: Ռազմամթերքը և պարենը համարյա սպառած սասունցիների ուժերը ջլատելու նպատակով թուրքական հրամանատարությունը դիմեց նենգության՝ ներման խոստումով նրանց անձնատուր լինելու առաջարկ արեց: Սասունցիները մերժեցին առաջարկը: Բայց նրանցից մոտ 200 դյուրահավատներ օգոստոսի 15-ին լքեցին դիրքերը և չարժվեցին դեպի թուրքական բանակատեղի: Այստեղ նրանց չրջապատեցին ու սրի քաշեցին: Հակառակորդն անցավ նոր հարձակման: Անդոկի, Կեպինի և Տալվորիկի բարձունքներում Սասնո ապստամբները վերջին մարտերը տվեցին թշնամուն: Շատերը զոհվեցին հերոսի մահով: Նրանց կողքին ընկան նաև բացառիկ տոկունություն և անձնազոհություն ցուցաբերած սասունցի կանայք: Խուսափելով թշնամու ձեռքն ընկնելուց՝ նրանցից չատերը գերադասեցին անդունդը նետվել: Օգնություն չստանալով որևէ տեղից և մնալով միայնակ՝ օգոստոսի 24-ին Սասունն ընկավ: Մուրադը, Գևորգ Չավուշը և քարանձավներում ապաստանած մի խումբ մարտիկներ գերվեցին ու չղթայակապ տարվեցին Մուշ: Սկսվեց խաղաղ բնակչության ջարդը: Ավերվեց ու հրի մատնվեց չուրջ 40 գյուղ, զոհվեց ավելի քան յոթ հազար հայ: Սասունում սկսված ապստամբությունը Հայաստանում համընդհանուր ապստամբության վերաճելու հույսերը ի դերև ելան:

դ. Բարենորոգումների Մայիսյան ծրագիրը: Բաբ Ալիի ցույցը: Սասունի ապստամբությունն ունեցավ գործնական որոշակի հետևանքներ: Այստեղ տեղի ունեցած դեպքերն ամենուր ցնցեցին հայությանը, փոթորկեցին նրա բոլոր խավերին՝ առանց դասակարգի ու դավանանքի խտրության: Հայության միահամուռ բողոքը, բարձրաձայն դժգոհությունն ու դիմումները ունեցան միջազգային արձագանքներ: Առաջավոր մարդկության չատ ներկայացուցիչներ ցասման ձայն բարձրացրին սուլթանի ջար-

դարար քաղաքականության դեմ՝ մեծ տերություններից պահանջելով միջամտություն: Արգելելով օտարերկրացիների մուտքը Սասուն՝ սուլթանը փորձեց մոլորության մեջ գցել համաշխարհային հասարակական կարծիքը, բայց ի վերջո ստիպված էր տեղի տալ: Սասունի ապստամբությունն առաջ մղեց Հայկական հարցը՝ ակտիվացնելով այդ ուղղությամբ տերությունների ձեռնարկած դիվանագիտական քայլերը: Ծավալվեց իսկապես դիվանագիտական պատերազմ, որը տևեց երկար ամիսներ: Ցանկանալով խանգարել Հայկական հարցում հայանպաստ դիրքորոշում որդեգրած Անգլիային, որը ջանում էր հայության շրջանում խիստ մեծացնել իր ազդեցությունը, Ռուսաստանը և նրա դաշնակից Ֆրանսիան ստիպված էին համերաշխվել նրան: Մեծ տերությունների պահանջով 1895 թ. հունվարին Սասուն ժամանեց ջարդերի պատճառները քննող թուրքական կառավարական հանձնաժողով, որին որպես դիտորդներ մասնակցում էին Անգլիայի, Ռուսաստանի և Ֆրանսիայի ներկայացուցիչները: Հարյուրավոր վկաների ցուցմունքները լիովին բացահայտեցին օսմանյան վարչակարգի կատարած բարբարոսությունները:

1895 թ. մայիսի 11-ին Կ. Պոլսի անգլիական, ռուսական և ֆրանսիական դեսպանները հայկական վեց նահանգներում (Կարին, Բիթլիս, Վան, Դիարբեքիր, Խարբերդ, Սեբաստիա) բարենորոգումներ անցկացնելու ծրագիր ներկայացրին Բ. Դռանը: 13 գլուխներից և 40 հոդվածներից բաղկացած բարենորոգումների այդ ծրագիրը նախատեսում էր որոշ չափով բարեփոխել վերը նշված նահանգների կառավարումը, բարելավել դատական գործը, կարգավորել հարկային համակարգը և այլն: Ծրագիրը, սակայն, խիստ սահմանափակ էր և չէր կարող բավարարել ավելի արմատական դիրքերի վրա կանգնած հայությանը: Դրանով հանդերձ՝ այն Բեռլինի վեհաժողովից հետո մեծ տերությունների կողմից 61-րդ խիստ անորոշ հոդվածի բովանդակությունը առարկայացնելու առաջին փորձն էր և իրագործվելու դեպքում, անշուշտ, որոշ օրինականություն կմտցներ Արևմտյան Հայաստանում ու կչափավորեր կամայականությունները: Բայց սուլթանը մտադիր չէր իրականացնել անգամ նման չափավոր մի ծրագիր: Առերևույթ չնորհակալությամբ ընդունելով ներկայացված նախագիծը՝ սուլթան Աբդուլ Համիդը զանազան

պատրվակներով ամիսներ շարունակ ձգձգում էր բարենորոգումներն իրականացնելուն ուղղված գործնական քայլերի կատարումը: Ձևականորեն չհրաժարվելով իրականացնել բարենորոգումները և անգամ այդ ուղղությամբ կատարվող քայլերի պատրանք ստեղծելով՝ սուլթանը համառորեն պահանջում էր հայ ազատագրական շարժումների անհապաղ դադարեցում, հայտարարելով, որ միայն խաղաղ պայմաններում է հնարավոր իրականացնել բարենորոգումներ: Դա նշանակում էր գործնականում հրաժարվել բարենորոգումներ իրականացնելուց: Վերջին փաստարկը հետագայում էլ բազմիցս օգտագործվում է սուլթանի կողմից՝ իր արյունալի քաղաքականությունն արդարացնելու համար: Այդ հարցում նրան օգնության էր գալիս Հայկական հարցի չուրջ այդ ամիսներին ծավալված դիվանագիտական կատաղի պայքարը մի կողմից՝ Անգլիայի, որի ազդեցությունը գնալով ուժեղանում էր հայկական շրջանների վրա, մյուս կողմից՝ ռուս-ֆրանսիական այլանսի միջև, որը փորձում էր զսպել Անգլիայի ակտիվությունը և իր հովանավորության տակ վերցնել Թուրքիան:

Այսպիսով, Հայկական հարցը հայտնվում է յուրատեսակ կախարդական շրջանակում: Ստեղծված ճգնաժամային, սպասողական, ծանր ու տագնապալից իրավիճակում հասունանում է նոր ելույթի գաղափար: Նման պայմաններում ռումբի պայթյունի տպավորություն թողեց 1895 թ. սեպտեմբերի 18-ին Կ. Պոլսում հնչակյանների կազմակերպած ցույցը:

Հնչակյանները նախօրոք եվրոպական տերությունների դեսպաններին և թուրքական դատական մարմիններին տեղեկացրել էին ցույցի խաղաղ բնույթի մասին: Շուրջ չորս հազար ցուցարարներ՝ մշեցի, վանեցի, բաղեշցի պանդուխտներ, արհեստավորներ, կանայք ու աղջիկներ, Կ. Պոլսի Հայոց մայր եկեղեցու բակից «Ձա՜յն մը հնչեց Էրզրումի Հայոց լեռներեն» երգելով շարժվեցին դեպի Բաբ Ալի՝ թուրքական կառավարության նստավայրը: Նրանք իրենց հետ տանում էին սուլթանին և եվրոպական տերություններին ուղղված հնչակյանների կազմած պահանջագիրը, որում նկարագրելով հայ ժողովրդի ծանր կացությունը, առաջարկվում էր վերջ տալ անօրինություններին և ապահովել հայ ժողովրդի խաղաղ կյանքը: Ոստիկանությունը

թույլ չտվեց հանձնել խնդրագիրը: Վաղօրոք տեղյակ լինելով ցույցի մասին՝ կառավարությունը ռազմական պատրաստություն էր տեսել: Սրա հրամանով զորքն ու խուժանը, փակելով ցուցարարների ճանապարհը, սկսեցին ջարդը: Ցուցարարները դիմադրություն ցույց տվեցին: Ցույցն ավարտվեց ամբողջ քաղաքում հայերի ընդհանուր ջարդով, որին զոհ գնաց մոտ երկու հազար մարդ:

Բաբ Ալիի դեպքերից հետո սուլթանը չտապեց իր ձեռքը վերցնել նախաձեռնությունը. ամենուրեք ծավալվող ընդհանուր զայրույթը կասեցնելու և դիվանագիտական խաղաքարտերը կրկին խառնելու նկատառումով 1895 թ. հոկտեմբերի 18-ին, նախապես փոփոխություններ կատարելով, նա ստորագրեց մայիսյան բարենորոգումների ծրագիրը: Ձևի համար անգամ բարենորոգումներն անցկացնող հանձնաժողով կազմվեց, որի ղեկավար նշանակվեց Շաքիր փաշան: Բայց սուլթանի հրապարակած բարենորոգումների հրովարտակը կայսրության հայաբնակ շրջաններում ընդհանուր կոտորածի ազդանշան հանդիսացավ: Սուլթանական կառավարությունը բացահայտորեն պատժիչ միջոցներ սկսեց կիրառել հայ ազատագրական պայքարի հետագա վերելքը կանխելու, հայոց զինյալ պայքարն արմատախիլ անելու համար: Սակայն նրա ծրագիրը չիրականացավ, քանզի պայթեց Զեյթունի ապստամբությունը:

ե. Զեյթունի 1895-1896 թվականների ապստամբությունը: Հայոց ազատագրական պայքարի արծվաբույն Զեյթունն իր հերոսական մաքառման շնորհիվ կարողացել էր պահել ներքին ինքնուրույնությունը, որի հետ համակերպվել չէր կարողանում սուլթանական կառավարությունը: Դեռևս 1880-ական թվականներից գործի էր դրվել Զեյթունը հայաթափելու և հիմնահատակ ավերելու սոցիալ-տնտեսական ու քաղաքական ճնշումների մի ամբողջական համակարգ: Հարկային ծանր լուծը, հարկատահարությունները, զեյթունցիների տնտեսական քայքայումը հետապնդող միջոցառումները, պարբերաբար հայատյաց կառավարիչներ նշանակելը, հայ ազդեցիկ գործիչների նկատմամբ հալածանքները ստեղծել էին պայթյունավտանգ վիճակ: Հալեպի անգլիական հյուպատոսը վկայում էր. «Երբ հնչակյան գործիչները հարաբերությունների մեջ մտան զեյթունցիների հետ,

պարզվեց, որ իշխանությունները նրանց գործը խիստ հեշտացրել են և ժողովուրդը... պատրաստ է դիմելու ապստամբության»: Զեյթունը ոտքի հանելու գործում կարևոր դեր խաղացին նաև Սասունի 1894 թ. ապստամբության և հայկական ջարդերի վերաբերյալ լուրերը:

Դժգոհության պատճառներից էր նաև այն, որ Հալեպի վիլայեթը, որտեղ գտնվում էր Զեյթունը, ներառված չէր Մայիսյան բարենորոգումների ծրագրում նշված շրջանների մեջ:

Սկզբնապես հնչակյան կենտրոնը ծրագրել էր մեծ ապրստամբություն բարձրացնել և միաժամանակ ոտքի հանել Զեյթունի, Հաճընի և Դյորթ-Յոլի հայությանը: Բայց Հաճընը և Դյորթ-Յոլը ոտքի հանելու փորձերը ձախողվեցին: Ազատության դրոշը պարզեց միայն հպարտ Զեյթունը:

Լեռնականների պոռթկմանը միասնական, կազմակերպված բնույթ տալու գործում վճռական դեր խաղացին Զեյթուն ժամանած հնչակյան գործիչները՝ Աղասին (Կարապետ Թուր-Սարգիսյան), Մլեհը (Ասատուր Տամղաճյան), Հրաչյա Մարալը (Գրիգոր Ղարիբյան), Ապահը (Պետրոս Գմգմյան), Ջելլաթը (Կարապետ Ղրփանոսյան): Զգտելով ապստամբությանը տալ համահայկական հնչեղություն՝ նրանք լեռնականների մեջ արմատավորում էին այն գիտակցությունը, որ իրենք պայքարում են ոչ միայն Զեյթունի, այլև ողջ հայության համար: Այստեղ նրանք ստացան Ենիտունյան իշխանական գերդաստանի, հատկապես Նազարեթ Զավուշի անվերապահ աջակցությունը, որն անվիճելի հեղինակություն էր բոլոր զեյթունցիների համար: Վերջինիս նախաձեռնությամբ Մուլթ ձոր կոչվող վայրում 1895 թ. հոկտեմբերի 12-ին գումարված ժողովում որոշվեց կենաց ու մահու պայքարի դուրս գալ թուրքական բռնակալության դեմ: Նույն այդ ժամանակ Բ. Դուռը հարկադրում է հայոց պատրիարքին՝ հեռագրով պայքարը դադարեցնելու կոչ անել: Բայց չուտով պարզվեց, որ թուրքերը սոսկ փորձում են ժամանակ շահել: Արդեն հոկտեմբերի 15-ին բախում տեղի ունեցավ կառավարական զորքերի հետ: Նույն օրը ապստամբները գրավեցին Զեյթունի կառավարչատունը և շրջապատեցին զորանոցը: Վերջինիս գրավումը խիստ կարևոր էր զինամթերք ձեռք բերելու, թիկունքն ամրապնդելու և ապստամբների մարտական ոգին բարձ-

բացնելու առումով: Կտրելով արտաքին աշխարհի հետ զորանոցի հաղորդակցության բոլոր կապերը և խափանելով ջրամատակարարումը՝ ապստամբները գրոհի անցան: Հոկտեմբերի 18-ի առավոտյան զորանոցը հանձնվեց: Ամբողջ կայազորը գերվեց: Զեյթունցիների ձեռքն անցավ մեծ քանակությամբ զենք, զինամթերք, պարեն, դեղամիջոցներ և այլն: Զորանոցի վրա բարձրացվեց ապստամբների կարմիր դրոշը՝ «Զեյթունի անկախ իշխանություն» մակագրությամբ: Ստեղծվեց ժամանակավոր հեղափոխական կառավարություն՝ Աղասու նախագահությամբ:

Զորանոցի անկման լուրը մեծագույն անհանգստությամբ ընդունվեց Կ. Պոլսում: Զեյթունի դեմ կռվող ուժերի հրամանատարությունը դրվեց չերքեզ Մուստաֆա Ռեմզի փաշայի վրա: Նրա գլխավորած արևելյան բանակը Մարաշից, իսկ Ալի բեյի գլխավորած արևմտյան բանակը Ադանայի կողմից շարժվեցին դեպի Զեյթուն՝ իրենց կազմում ունենալով երեսուն հազար զինվոր և նույնքան անկանոն զորամասեր, ինչպես նաև լեռնային հրետանի: Նրանց դեմ կանգնած էին հինգ հազար զինված զեյթունցիներ: Զեյթունի դեմ դուրս բերվեց նաև գավառի մահմեդական բնակչությունը: Քանի դեռ կանոնավոր բանակները չէին հասել, ապստամբների ղեկավարներին հաջողվեց թիկունքն ամրապնդել և անհրաժեշտ պաշարներ հավաքել: Այդ ընթացքում հատկապես մեծ արձագանք ստացավ հարավից Զեյթունին սահմանակից Անդրուն գավառակի և համանուն գյուղաքաղաքի գրավումը:

Նոյեմբերի վերջին թուրքական բանակները Զեյթունի մատույցներում էին: Նախքան հարձակումը սկսելը Ռեմզի փաշան Զեյթուն է ուղարկում Մարաշի հայերից կազմված մի պատվիրակություն՝ անձնատուր լինելու առաջարկով: Պահանջվում էր հանձնել ապստամբության ղեկավարներին, վերադարձնել գրավված զենքն ու զինամթերքը և գերիներին: Պահանջները մերժվեցին և թուրքական բանակները դեկտեմբերի 2-ին հարձակման անցան:

Թուրքական զորամասերից մեկի հրամանատար Ալի բեյը նախ գրավեց ու ավերեց գավառի հայաբնակ խոշոր գյուղերից մեկը՝ Ֆոնուզը: Դա մեկ անգամ ևս ցույց տվեց, որ թուրքական բանակի խնդիրը գավառի դատարկումն է հայերից, և որ Զեյ-

թունին ևս վիճակված է նույն ճակատագիրը:

Դեկտեմբերի 3-ին հակառակորդը երեք հիմնական ուղղություններով շարժվեց Զեյթուն և սկզբում զգալի հաջողություններ ունեցավ: Սակայն վճռորոշ պահին 75-ամյա իշխան Կարապետ Բասիլոսյանը, որը սկզբում ընդդիմացել էր ապստամբությանը, նժույգով դուրս եկավ զորանոցից և նետվեց դեպի թշնամին: Դա ցնցեց լեռնականներին, որոնք հետևելով ծերունազարդ իշխանին՝ խելահեղ հարձակման նետվեցին: Կատաղի մարտերում թուրքերը մեծ կորուստներ կրեցին՝ տալով մեծ թվով սպանվածներ և վիրավորներ: Այդ կռիվները հսկայական նշանակություն ունեցան ապստամբության համար: Զախողվեց հուժկու հարձակմամբ Զեյթունը գրավելու Ռեմզի փաշայի ծրագիրը:

Թուրքական գրոհները շարունակվեցին նաև հաջորդ օրերին՝ հատկապես կատաղի բնույթ ընդունելով Զեյթունին Ալի բեյի բանակի մոտենալուց հետո: Թեև դեկտեմբերի 23-24-ի կռիվների ընթացքում թուրքերին հաջողվեց գրավել զորանոցը, բայց նրանց հաջողություններն, ըստ էության, դրանով էլ ավարտվեցին: Թուրքերը մեծ դժվարություններ ունեին նաև՝ կապված դեկտեմբերյան սառնամանիքի և բանակում սկսված հիվանդությունների հետ: Ընդհանուր առմամբ նրանց կորուստները հասնում էին չուրջ քսան հազար մարդու: Կատաղի մարտերից մեկի ժամանակ վիրավորվեց ինքը՝ Ռեմզի փաշան: Անհաջողությունից կատաղած ու հուսահատ՝ նա հեռագիր հղեց Կ. Պոլիս՝ նոր ուժեր խնդրելով Զեյթունը գրավելու համար: Ռեմզի փաշայի դանդաղկոտությունից զայրացած սուլթանը պաշտոնանկ արեց նրան՝ բանակի հրամանատարությունը հանձնելով Հալեպի էդհեմ փաշային: Վերջինիս հարձակողական ձեռնարկները նույնպես անարդյունք անցան: Չնայած կատաղի ռմբակոծություններին՝ Զեյթունը մնում էր անառիկ:

Զեյթունի իրադարձությունները գնալով ավելի մեծ հնչեղություն էին ստանում՝ Բ. Դռան համար անհետաձգելի դարձնելով հարցի կարգավորումը: Վախենալով հայոց համազգային ապստամբության առաջացման վտանգից և աշխատելով կանխել միջազգային ազդու միջամտությունը՝ սուլթանական կառավարությունը ստիպված համաձայնվեց, որ մեծ տերությունները

միջնորդի դեր ստանձնեն Զեյթունի ապստամբների և կառավարության միջև վարվող բանակցություններում:

Դեկտեմբերի 25-ին զեյթունցիներին հանձնվեց մեծ տերությունների՝ Հալեպում հավատարմագրված հյուպատոսների հեռագիրը: Ուշագրավ է, որ այդ հեռագիրը ուրախությամբ ընդունվեց թուրքական բանակի կողմից: Այն ոգևորությամբ ընդունեցին նաև զեյթունցիները՝ հյուպատոսների միջամտության փաստը մեկնաբանելով որպես կառավարության դեմ տարած հաղթանակ: Այսպիսով, զենքի ուժով լեռնականների ապստամբությունը խեղդելու և Զեյթունը գրավելու փորձերը ձախողվեցին, թուրքական կողմն, ի վերջո, ստիպված ինքն էր հաշտություն խնդրում:

1896 թ. հունվարի 22-30-ը եվրոպական տերությունների հյուպատոսների միջնորդությամբ թուրքական բանակատեղում տեղի ունեցան հաշտության բանակցություններ: Թուրքական կողմը պահանջեց վերադարձնել խլված զենքերը, վերականգնել զորանոցն ու ամրությունները և ռազմական ատյանին հանձնել ապստամբության կազմակերպիչներին: Այս ամենի դիմաց զեյթունցիներին ներում էին խոստանում: Թուրքական պայմանները զեյթունցիները վճռականորեն մերժեցին՝ հայտարարելով, որ ներում ստանալու համար չեն ապստամբել և որ իրենց համար գերադասելի է մեռնել կռվելով, զենքը ձեռքներին: Որպես հաղթողներ, նրանք առաջադրեցին իրենց պայմանները: Սուլթանն, ի վերջո, ստիպված էր տեղի տալ՝ հիմնականում ընդունելով զեյթունցիների պայմանները: 1896 թ. հունվարի 30-ին Բ. Դռան և Զեյթունի ապստամբների միջև, մեծ տերությունների միջնորդությամբ, ստորագրվում է հինգ կետից բաղկացած հետևյալ համաձայնագիրը.

1. Զեյթունցիները և գավառի մահմեդականները հանձնում են պատերազմական զենքերը, սակայն պահելով որսորդական զենքերը և հին տիպի հրացաններն ու ատրճանակները:
2. Հայտարարվում էր համընդհանուր ներում, իսկ դրսեկ հնչակյան գործիչները պետության ծախսերով պետք է հեռանային կայսրության տարածքից:
3. Բավարարվում էր «միրի» հարկի կրճատման և նախկին տուրքերը չեղյալ հայտարարելու մասին զեյթունցիների առաջարկը: Զորանոցը վերականգնվում էր պետության միջոցներով:
4. Զեյթունում նշանակվելու էր քրիստոնյա կառավարիչ (գայմագամ):
5. Չէր ընդունվում Զեյթունում թուրքական կայազորի վերացման առաջարկը: Դրանով հանդերձ, թուրքական բանակը զենքերը ստանալուց հետո պետք է հեռանար Զեյթունից՝ այնտեղ թողնելով միայն մեկ զորամաս:

1896 թ. փետրվարի 3-ին ստորագրված հատուկ փաստաթղթով էդհեմ փաշան և հյուպատոսները հանդես էին գալիս որպես Զեյթունում հավաքված գաղթականության անվտանգության երաշխավորներ՝ իրենց վրա վերցնելով նրանց տեղավորման խնդիրը: Վերը նշված պայմանների գործադրման հսկողությունը դրվում էր մեծ տերությունների հյուպատոսների վրա: Հետագա ամիսների ընթացքում տերությունների ճնշման ներքո թուրքական իշխանությունները դժկամությամբ, բայց, այնուհանդերձ, կատարեցին համաձայնագրի հիմնական պայմանները: Զեյթունում կառավարիչ նշանակվեց ազգությամբ հույն Յուվանակին:

Համաձայնագրի ստորագրումը զեյթունցիների փայլուն հաղթանակն էր: Օսմանյան կայսրությունը ստիպված էր սեփական հպատակների հետ ստորագրել մի համաձայնագիր, որով փաստացի ճանաչում էր նրանց որոշակի իրավունքները: Զեյթունցիների հաղթանակը հայ զինյալ ազատամարտի կենսունակության վկայությունն էր, թեև Զեյթունի իրադարձությունները նաև պարզորոշ ցույց տվեցին նույն ազատամարտի թույլ կողմերը: Ապստամբության ողջ ընթացքում Զեյթունը գործնականում մնաց միայնակ՝ չստանալով հայաբնակ այլ վայրերի աջակցությունը և անգամ ռազմական, նյութական ու դրամական այն օժանդակությունը, որն ակնկալվում էր և որը նրան խոստացել էին:

Զեյթունի հերոսական ապստամբությունն ամբողջ մերկությամբ ցուցադրում էր այն վնասը, որ ազատագրական շարժմանը հասցնում էին թուրքական բռնապետության դեմ պայքա-

ում ներգրավված կուսակցությունների անմիաբան գործողությունները՝ միասնական ղեկավար կենտրոնի բացակայության պատճառով:

Հատկապես ակնհայտ դարձավ ազատագրական պայքարը ղեկավարելու Հնչակյան կենտրոնի անկարողությունը, որի մասին կասկածի առաջին լուրջ նշաններն առաջացել էին դեռևս Սասունի ապստամբության օրերին: Երկրում աշխատող Հնչակյան գործիչների և Հնչակյան կենտրոնի միջև առաջացած հակամարտության հետևանքով 1896 թ. Լոնդոնում կայացած համագումարում Հնչակյան կուսակցությունը պառակտվեց, գնալով թուլացավ և կորցրեց իր ղեկավար դերը հայոց ազատամարտում: Սակայն ազատագրական պայքարը շարունակվում էր: Հերոսական մաքառումի հերթական արարի ասպարեզ դարձան Վանն ու Վասպուրականը:

զ. Վանի 1896 թվականի ինքնապաշտպանությունը: *Արևմտահայ ազատագրական շարժումը չչրջանցեց Վանի վիլայեթը և հատկապես վերջինիս կենտրոն Վան քաղաքը: Ռուսական և պարսկական սահմաններին մոտ գտնվելը, Արևմտյան Հայաստանի այլ վիլայեթների համեմատ՝ մեծամասնություն կազմող հայ բնակչության առկայությունը բարենպաստ պայմաններ էին այստեղ ազատագրական պայքարի կազմակերպման համար: Հատկապես պարարտ միջավայր էր ստեղծվել Վան քաղաքում: Մ. Խրիմյանի և Մ. Փորթուգալյանի գործունեության հետևանքով ձևավորված, կրթված ու գաղափարապես հասուն երիտասարդների սերունդը կորիզ դարձավ արմենական կուսակցության կազմավորման ու կազմակերպորեն ծավալման համար: 1890-ականների սկզբներից Վանում իրենց կառույցները ստեղծեցին նաև դաշնակցական և Հնչակյան կուսակցությունները: Արմենականների ակնհայտ տիրապետող դիրքի պայմաններում նրանք տարեցտարի խտացրին իրենց համակիրների շարքերը:*

Օսմանյան իշխանություններն, իրենց հերթին, տեսադաշտից դուրս չէին թողել Վանը: Այն, ինչպես Էրզրումը, Սասունն ու Զեյթունը, ընկալվում էր որպես հայկական հեղափոխության օջախ և վաղ թե ուշ իր վրա նույնպես պետք է ընդուներ թշնամու ծանր հարվածը: Բաբ Ալիի ցույցին հաջորդած զանգվածային ջարդերի ալիքը հասավ նաև Վանի վիլայեթի սահման-

ներին: 1895 թ. աշնանից այստեղ հաճախակի դարձան թալանի և սպանությունների դեպքերը: Դրանց հետևանքով հայ բնակչությունը խմբերով լքում էր գավառներն ու գյուղերը՝ փորձելով ապաստան գտնել Վանում:

Ջարդերի բոթը և գավառներից տեղահանված բնակչության մուտքը Վան անհանգստացրին վանեցիներին՝ հարկադրելով մտահոգվել ինքնապաշտպանության մասին: Տեղի արմենական, դաշնակցական և Հնչակյան կառույցները եռանդուն քայլեր ձեռնարկեցին զենք ու զինամթերք ձեռք բերելու և բնակչությանը զինելու ուղղությամբ: 1895 թ. աշնանը հայդուկային ու զինատար մի շարք խմբեր՝ Ներսեսի (Գ. Պեոզիկյան), Վազգենի (Տ. Տերոյան), Նիկոլ Դումանի (Ն. Տեր-Հովհաննիսյան) և այլոց գլխավորությամբ, հատեցին թուրք-պարսկական սահմանը և շտապեցին Վան: Քաղաքում և մերձակա գավառներում մինչ այդ գործում էին նաև հիմնականում տեղացիներից կազմված մի քանի զինյալ խմբեր: Նույն տարվա վերջին, երկարատև բացակայությունից հետո, Վան վերադարձավ և արմենական կուսակցության ղեկավարությունը ստանձնեց Մկրտիչ Ավետիսյանը:

Իրավիճակն ավելի սրվեց, երբ 1895 թ. վերջին արտակարգ լիազորություններով Վան ժամանեց սուլթանի թիկնապահ Սաադէդդին փաշան: Առերևույթ նրա խնդիրը խաղաղության ապահովումը և բարենորոգումների իրագործումն էր: Իրականում նա ուներ Վանի վիլայեթում զանգվածային ջարդեր կազմակերպելու հանձնարարություն: Հասկանալով դա՝ երեք կազմակերպությունների ղեկավարները՝ Մ. Ավետիսյանը, դաշնակցական Պետոն (Ալ. Պետրոսյան) ու Հնչակյան Մարտիկը (Մ. Սարուխանյան), վճռեցին գործել համերաշխ, խուսափել բացահայտ ու հրահրիչ քայլերից և ջարդի առիթ տալուց: Արտաքուստ հանգստության պայմաններում համախմբվում էին հայկական ուժերը: Մ. Ավետիսյանի նախաձեռնությամբ բնակչությունից գումարներ էին հանգանակվում՝ Պարսկաստանում զենք ու զինամթերք ձեռք բերելու և Վան փոխադրելու համար:

Ձմեռն անցավ համեմատաբար խաղաղ: Սաադէդդինն արդեն պատրաստվում էր հեռանալ, բայց արմենական խմբի ու թուրքական պահակախմբի միջև 1896 թ. մարտին տեղի ունեցած պատահական բախումից հետո փոխեց մտադրությունը: Բարե-

կարգությունները հսկելու պատրվակով նա մեկնեց գավառներ: Ջարդերի հրահանգներ տալով և կազմակերպելով քուրդ ցեղապետներին՝ Սաադէդդինը երկու ամիս անց վերադարձավ Վան: Շուտով նա ջարդ սկսելու հարմար առիթ ստացավ:

1896 թ. հունիսի 2-ին իշխանությունները խուզարկեցին դաշնակցական գործիչ Տիգրան Տերոյանի տունը և ձերբակալեցին վերջինիս քրոջը՝ Զարուհի Տերոյանին: Այդ դեպքը սրեց իրավիճակը Վանում: Հունիսի լույս 3-ի գիշերը զինյալ բախում տեղի ունեցավ Թուրքական պահակախմբի և Պարսկաստանից Վան աղ փոխադրող մաքսանենգ քրդերի միջև: Եղան սպանվածներ ու վիրավորներ: Այգեստանի զորահրամանատար Հալիմը չտապեց մեղքը բարդել հայերի վրա: Խաչ փողոցի հրապարակում, Թուրք խուժանին ի տես, ցուցադրվեցին սպանված և մահամերձ Թուրք զինվորների մարմինները: Վաղօրոք զենք ստացած խուժանը՝ ծպտյալ զինվորների ու ժանդարմների առաջնորդությամբ, հունիսի 3-ին համատարած գրոհ ձեռնարկեց հայաբնակ թաղամասերի վրա: Շուտով, հրի մատնելով Նորդուզն ու Հայոց ձորը, իր հրոսակախմբով Վան ներխուժեց նաև բալաքցի քուրդ ավազակապետ Շաքիրը:

Այգեստանի Հայկավանք, Նորշեն և Կլոր դար թաղերի հայ բնակչությունը, որն ապրում էր Թուրքերի հետ կողք-կողքի, սկզբում խուճապի մատնվեց և մեծ կորուստներ ունեցավ: Բայց հունիսի 4-ի առավոտվանից հայկական ինքնապաշտպանությունը կանոնավոր մարտերի բնույթ ստացավ: Այգեստանում հրավիրված արտակարգ ժողովում ստեղծվեց միացյալ պայքարի ճակատ՝ Մկրտիչ Ավետիսյանի, Պետոյի և Մարտիկի գլխավորությամբ: Նրանց համատեղ ջանքերով կյանքի կոչվեց նախապես պատրաստված դիմադրության ծրագիրը: Երեք կուսակցություններն իրենց տրամադրության տակ ունեին չուրջ հինգ հարյուր տարբեր տիպի հրացաններ ու ատրճանակներ: Նախապես ցուցակագրված հինգ հարյուր երիտասարդներ, որոնց միջուկը կազմում էին արմենական զինյալները, դիրքավորվեցին Թուրքական թաղամասերին սահմանակից երկհարկանի տների վերին հարկերում՝ ստեղծելով դիրքեր: Եվս նույնքան հայ երիտասարդներ, ինչով հնարավոր է զինված, ամեն կերպ օժանդակում էին կռվողներին՝ պատրաստ ցանկացած

պահին փոխարինելու զոհվածներին ու վիրավորներին: Թշնամու հեծելազորի առաջխաղացումը կասեցնելու նպատակով կտրել և ցած էին գցել Այգեստանի փողոցները եզերող հսկա ուռենիները, առուների հունները փակելով՝ ջրով ողողել էին թաղամիջյան ճանապարհները:

Խաղաղ բնակչությունը քաղաքի վտանգված վայրերից հեռացավ դեպի ներքին հայաբնակ թաղերը կամ տեղավորվեց պարսկական, անգլիական ու ռուսական հյուպատոսարաններում և դրանց կից տներում: Հայ բնակչությունը պաշտպանություն գտավ նաև ֆրանսիացի և ամերիկացի միսիոներների մոտ:

Մինչև հունիսի 6-ը հայկական դիրքերը մնացին աներեր զորքի, Թուրք և քուրդ խուժանի կատաղի գրոհների հանդեպ: Հայ մարտիկները, զուրկ զինամթերքի անհրաժեշտ պաշարներից և որևէ տեղից օժանդակության ակնկալիք չունենալով, շարունակում էին հերոսաբար մարտնչել: Հայկական դիմադրությունն այնքան ազդեցիկ էր, որ Սաադէդդինը հյուպատոսների միջոցով առաջարկեց դադարեցնել պայքարը և անարգել անցնել Պարսկաստան: Փոխարենը նա խոստանում էր հայ խաղաղ բնակչությանը տալ կյանքի ապահովություն: Չվստահելով նրա անկեղծությանը՝ ինքնապաշտպանության առաջնորդները սկզբնապես մերժեցին առաջարկը: Կռիվներն ավելի սաստկացան: Հայ մարտիկներն առանձին դեպքերում անցնում էին հակահարձակման և նույնիսկ հունիսի 7-ին թշնամուց խլեցին երկու թնդանոթ: Բայց թշնամին դիմում է ավելի կտրուկ քայլի: Այգեստանին իշխող բարձունքի վրա տեղադրվում են թնդանոթներ: Դիպուկ նշանառությամբ ավերվում են հայկական մի քանի դիրքեր: Այդ հանգամանքը, նաև զինամթերքի սպառվելու վտանգը ինքնապաշտպանության ղեկավարներին հարկադրում են ընդունել թշնամու առաջարկը: Վերջինս, իր հերթին, երաշխավորում էր հայ մարտիկների ապահով նահանջը մինչև պարսից սահման:

Ինքնապաշտպանության ղեկավարները Թերլեմեզյանների ընդարձակ պարտեզում կազմակերպում են միջկուսակցական բազմահազարանոց հավաք և ներկաներին հայտնում, որ հանուն խաղաղության ու բնակչության անվտանգության իրենք

կամովին հեռանում են երկրից:

Հունիսի 8-ին Վանի կռվող ուժերը դուրս եկան քաղաքից և շարժվեցին դեպի Վարագա լեռը: Հակառակ ղեկավարների կամքին՝ նրանց միացան նաև հարյուրավոր անզեն երիտասարդներ: Օգտվելով նրանց հեռանալուց և Սաադէդդինի թողտվությունից՝ մահմեդական խուժանը հարձակվեց հայկական անպաշտպան դիրքերի վրա, ավերեց և կողոպտեց տներն ու եկեղեցիները, սրի քաշեց այնտեղ մնացած անպաշտպան մարդկանց: Միայն Հունիսի 10-ին Սաադէդդինը ջարդերը դադարեցնելու հրաման տվեց: Ընդհանուր առմամբ Վանի խաղաղ բնակչությունը տվեց չուրջ չորս հարյուր զոհ՝ գլխավորապես ինքնապաշտպանության առաջին ու վերջին օրերին:

Դրան հակառակ, անողոք ճակատագիր էր վիճակված Վանից հեռացած մոտ 1500 զինված ու անզեն երիտասարդների մեծ մասին: Մ. Ավետիսյանը, Պետոն ու Մարտիկն անիմաստ էին համարում անզեն երիտասարդների հեռանալը Վանից և նրանց համոզում էին հետ վերադառնալ: Բայց, ի վերջո, Մ. Ավետիսյանը տեղի տվեց: Նրա գլխավորած արմենականների զինյալ խումբը բաժանվում է մյուսներից և Բաշկալե-Աղբակ ուղղությամբ շարժվում դեպի պարսկական սահման: Զուսենալով հմուտ ուղեկցողներ, խումբը մոլորվում է, անձրևի ու կարկուտի տակ մնալով՝ կորցնում մարտունակությունը: Արդյունքում՝ արմենական կուսակցության ծաղիկն ու մտավորականությունը կազմող 800 հոգիանոց այդ խումբը Ս. Բարդուղիմեոսի վանքի լեռնաշտում շրջապատվում է Սաադէդդինի ուղարկած զորքի ու քրդերի կողմից և գլխովին ջախջախվում: Զոհվում է նաև Վանի ինքնապաշտպանության ղեկավար Մ. Ավետիսյանը: Փրկվում և Սալմաստ է հասնում ընդամենը 30 հոգի:

Պետոյի և Մարտիկի չուրջը համախմբված խումբը արմենականների հեռանալուց հետո ևս մի քանի օր մնում է Վարագա լեռներում: Խմբի ղեկավարներին հաջողվում է համոզելով, երբեմն էլ բռնությամբ իրենց 500-600 անզեն հետևորդներին փոքր խմբերով վերադարձնել Այգեստան: Զինյալ խմբով Վան է վերադառնում նաև Տիգրան Տերոյանը: Մնացածները, չուրջ 80 զինյալներ, Պետոյի և Մարտիկի գլխավորությամբ Աբաղայի գծով շարժվում են դեպի Պարսկաստան: Բայց ուխտադրուժ

թշնամին ակնդետ հետևում էր նաև այս խմբի քայլերին: Գարահիսար լեռան լանջին խումբն ընկնում է շրջապատման մեջ և անհավասար ու կատաղի կռվում լիովին ոչնչանում:

Վանի հերոսական ինքնապաշտպանությունը ձախողեց Վասպուրականի հայության զանգվածային ջարդ կազմակերպելու իշխանությունների ծրագիրը: Դա հնարավոր եղավ կանխել քաղաքական երեք կուսակցությունների դրսևորած աննախադեպ միասնականության շնորհիվ և մեծ զոհողությունների գնով: Ամենածանր կորուստը կրել էր արմենական կուսակցությունը, որի պատճառով նա խիստ թուլացավ և հայոց ազատամարտում մղվեց երկրորդական դիրքեր: Բայց ինչպես հնչակյանների թուլացումն ու պառակտումը, այնպես էլ արմենականների երկրորդ պլան մղվելը չկասեցրին պայքարի հետագա ընթացքը: Օսմանյան բռնապետությունը ցնցող նոր հարվածներով զինյալ պայքարի ղեկը եկավ ստանձնելու դաշնակցությունը:

Է. Օսմանյան դրամատան գրավումը: Կռիվները Սամաթիայում: Խանասորի արշավանքը: Փորձն արդեն ցույց էր տվել, որ բուն Երկրում կատարվող դեպքերը, ծավալներից ու հետևանքներից անկախ, բավականին ուշ և խեղաթյուրված տեսքով էին արձագանքվում Եվրոպայում և չէին կարող միջազգային միջամտության դրդելու դեր խաղալ: Դաշնակցությունը անհրաժեշտ էր համարում Հայաստանում ընթացող զինյալ պայքարը զուգակցել կայսրության կենտրոնում հասցվող և միջազգային արձագանքներ ապահովող շեշտակի հարվածների հետ: Նա գտնում է, որ Կ. Պոլսում և կայսրության ծովեզրյա կենտրոններում առավել սերտ են միահյուսված մեծ տերությունների տնտեսական ու քաղաքական շահերը, հետևապես յուրաքանչյուր անգամ փոքր միջադեպը անմիջապես արձագանք կգտնի Եվրոպայում՝ հավանական դարձնելով ուժերի ու միջոցների նվազագույն վատնումով միջազգային ցանկալի միջամտության առաջ բերումը՝ Հայկական հարցի լուծման համար: Կուսակցության ղեկավարության կարծիքով նախորդ տարիներին հնչակյանների կողմից Կ. Պոլսում կազմակերպված զանգվածային ելույթները (Գում Գափուի և Բաբ Ալիի ցույցերը) խաղաղ բնույթ կրելով՝ հարկ եղած տպավորությունը չէին թողել Եվրոպայի վրա: Նա գտնում էր, որ պետք է իրականացնել այնպիսի

գործողություն, որը սպառնալիքի տակ դներ Եվրոպայի շահերը, որը և, իբր, կդառնար Հայկական հարցի լուծման ազդու միջոց:

Նման ձեռնարկ էր Կ. Պոլսի Օսմանյան դրամատան գրավումը, որն ուղեկցվեց արյունալի իրադարձություններով: Օսմանյան դրամատան գրավման ծրագիրը մտահղացողները միամտաբար կարծում էին, թե դրամատան գրավումը և այն պայթեցնելու սպառնալիքը բավական են, որ եվրոպական ռազմանավերից ափ հանված զորքերը գրավեն Կ. Պոլիսը և ցանկալի լուծում տան Հայկական հարցին: Ավելին, նրանցից շատերը համոզված էին, որ հաջողության դեպքում քսանչորս ժամվա ընթացքում եվրոպացիների միջամտությունն ապահովված կլինի: Այս չափազանց անիրատեսական մտայնությունը Դաշնակցության ղեկավարության այդ շրջանում ունեցած հայացքների արտացոլումն էր: Դրամատան գրավման հետ միասին նախատեսված էր հարձակում կատարել մայրաքաղաքի մատույցներում գտնվող Սամաթիայի զորանոցի վրա և դիմադրություն ցույց տալ դեպի դրամատուն շարժվող զորքերին: Օսմանյան կայսրության մայրաքաղաք Կ. Պոլսում, որտեղ վխտում էին լրտեսները, ծրագրվածը չէր կարող մինչև իրականացման պահը չբացահայտված մնալ: Սամաթիայում ոստիկանությունն ու զորքերը նախահարձակ են լինում՝ կատարելով խուզարկություններ ու ձերբակալություններ, բայց գլխավոր հարվածը կանխել նրանց չի հաջողվում:

1896 թ. օգոստոսի 14-ին դաշնակցական 26 մարտիկներ Բաբկեն Սյունու (Պետրոս Փարյան) գլխավորությամբ գրոհում են Օսմանյան դրամատան վրա, գրավում այն և տասներեք ժամ պահում իրենց ձեռքում: Դրամատունը գրավելու պահին զոհվում է Բաբկեն Սյունին և ղեկավարությունն անցնում է Նանսիի (Ֆրանսիա) գյուղատնտեսական դպրոցում ուսումը կիսատ թողած և Կ. Պոլիս անցած Արմեն Գարոյին ու Հրաչին (Հայկ Թիրաքյան): Վեց մեծ տերությունների դեսպաններին է ներկայացվում ՀՅԴ Կ. Պոլսի Կենտրոնական կոմիտեի շրջաբերականը, որով պահանջվում էր անմիջապես Հայաստանում գործադրել խոստացված բարենորոգումները: «...Դիվանագիտական խաղերու ժամանակն ա՛լ անցած է,- ասվում էր շրջաբերականում,- մեր հարյուր-հազար նահատակներուն թափած արյունը մեզի

իրավունք կուտա ազատություն պահանջելու»: Դրամատունը գրավողները, իրենց հերթին, ներկայացնում են պահանջներ, որոնց չընդունվելու դեպքում սպառնում են պայթեցնել հաստատությունը:

Սպառնալիքն ավելի քան ազդեցիկ էր, և ի վերջո գործին միջամտում է դիվանագիտությունը ի դեմս Կ. Պոլսի ռուսական դեսպանատան առաջին թարգման Մաքսիմովի: Միջամտում է ոչ թե Հայկական հարցին նպաստելու, այլ Աբդուլ Համիդին մեկ անգամ ևս ծանր վիճակից հանելու համար: Այդ օրերին հենց ռուսական կառավարությունն իր սպառնալիքներով թույլ չտվեց անգլիական նավատորմի մուտքը Դարդանելի ու Բոսֆորի նեղուցներ՝ Օսմանյան կայսրության վրա հօգուտ հայերի ճնշում գործադրելու համար: Մաքսիմովը ներկայացրեց իր երկրի կառավարության ժխտական վերաբերմունքը ձեռնարկի նկատմամբ: Հայ վրիժառուներին հասկացնում էին, որ անիմաստ է միջազգային ռազմական միջամտություն սպասելը, իսկ դրամատունը չթողնելու դեպքում դիվանագետը նախազգուշացնում էր ծանր հետևանքների մասին: Միաժամանակ նա իր կառավարության անունից խոստանում էր ազդել սուլթանի վրա, որպեսզի դադարեցնի հայկական նոր ջարդերը, առաջիկա վեց ամիսների ընթացքում Հայաստանում իրականացնի բարենորոգումների ծրագիր և այլն: Բավարարվելով ոչնչով չերաշխավորված այդ խոստումներով՝ հայ մարտիկները թողնում են դրամատան շենքը և փոխադրվում օտարերկրյա նավերից մեկը: Հաջորդ օրը նրանց այցելած ռուս, ֆրանսիացի և անգլիացի դիվանագետները միանգամայն այլ լեզվով էին խոսում՝ մոռանալով նախորդ օրը տրված խոստումները: Հայ հեղափոխականները դառը հուսախաբություն են ապրում: Ամեն ինչ անդառնալիորեն կորած էր, և նույն օրն իսկ ֆրանսիական «ժիրոնդ» շոգենավը նրանց հեռացնում է Կ. Պոլսից: 18-ժամյա պայքարից հետո դադարում են նաև Սամաթիայի կռիվները՝ հայ հեղափոխականների շարքերից խլելով նոր անուններ և ոչինչ չավելացնելով Հայկական հարցի լուծման գործնականին: Իսկ որպես պատասխան Կ. Պոլիսը նորից ականատեսը դարձավ հազարավոր հայերի ջարդերին՝ հրահրված սուլթանի կողմից:

Այդ անխոհեմ ձեռնարկը շատ թանկ նստեց հայության վրա:

Սուլթան Աբդուլ Համիդի հրամանով զորքը և թուրք բաշիբոզուկների անհամար խմբերը գործի անցան և արյան մեջ թաթախեցին պոլսահայությանը՝ մեկ-երկու օրում գերեզմանելով 10 հազար անմեղ մարդկանց:

Հայ ազատագրական շարժումը ստացել էր ծանր հարված, բայց նաև անհրաժեշտ դասեր: Միաժամանակ Օսմանյան դրամատան գրավումը գալիս էր ազդարարելու, որ հայ ազատագրական շարժումը, թեև խոտորումներով ու սխալներով, շարունակվում է:

Օսմանյան դրամատան գրավման դեպքը որոշ փոփոխություններ մտցրեց նաև մեծ տերությունների վերաբերմունքի մեջ. ավելի կոշտ դարձավ հայկական ջարդերի հարցում Աբդուլ Համիդի նկատմամբ նրանց դիրքորոշումը: Սուլթանը հարկադրված հրաժարվեց զանգվածային նոր ջարդեր իրականացնելուց:

1894-1896 թթ. իրադարձությունները հայ ազատագրական պայքարի բարձրակետն էին: Թեև դրանք միջազգային սպասված արձագանքը չունեցան, բայց ակնհայտ դարձավ, որ Օսմանյան կայսրությունում հայերի ազատագրական շարժումը դարձել է ռազմա-քաղաքական լուրջ գործոն, որը հնարավոր չէ անտեսել: Աբդուլ Համիդը հարկադրված էր բանակցություններ սկսել հայ ազգային կուսակցությունների հետ:

Օսմանյան դրամատան դեպքից շատ չանցած, 1896 թ. աշնանը, սուլթանի կողմից Եվրոպա ուղարկված պատվիրակը հայ հեղափոխական գործիչներին հայկական նահանգներում բարեկարգումներ իրականացնելու խոստումներ է տալիս՝ զինված պայքարը դադարեցնելու պայմանով: 1896-1899 թթ. ժնևում դաշնակցության հետ, իսկ 1897-1898 թթ. Փարիզում վերակազմյալ հնչակյանների հետ նրա ներկայացուցիչների վարած բանակցություններն արդյունք չեն տալիս: Համոզվելով, որ սուլթանը դրանք վարում է ժամանակ շահելու, խոստացված բարեկարգումները չիրականացնելու և հայ ազգային-ազատագրական պայքարը վերացնելու համար՝ վերակազմյալ հնչակյանները 1898 թ. հոկտեմբերին, իսկ դաշնակցությունը՝ 1899 թ. մարտին դադարեցնում են բանակցությունները: Բայց դրանց տեղի ունենալու փաստն անգամ վկայում էր, թե հայ ազատագրական

զինյալ պայքարը որքան մեծ անհանգստություն էր պատճառել Աբդուլ Համիդին:

1897 թ. հուլիսի 25-ին 253 դաշնակցական մարտիկներից բաղկացած արշավախումբը Վարդանի, Իշխանի (Հովսեփ Արղության), Նիկոլ Դումանի և այլոց գլխավորությամբ Ատրպատականից անցավ թուրք-պարսկական սահմանը և Խանասորի դաշտում հարվածեց Շարաֆ բեկի քրդական մազրիկ ցեղին: Այդ ցեղը մեկ տարի առաջ ակտիվ մասնակցություն էր ունեցել դեպի Պարսկաստան նահանջող Վանի ինքնապաշտպանության մասնակիցներին կոտորելուն: Լուրջ կորուստներ պատճառելով մազրիկ ցեղին և կռվի բռնվելով հարևան քրդական աշիրեթների հետ՝ արշավախումբը նահանջելով վերադարձավ Պարսկաստան:

Խանասորի արշավանքը, որը վրեժխնդիր ոգու պոռթկումն էր, նոր լիցք հաղորդեց վայրէջքի չրջան ապրող ազատագրական շարժմանը՝ կրկին ցուցադրելով պայքարը չարունակելու հայ մարտիկների վճռականությունը: Դրանով հանդերձ, արշավախմբի առջև դրված հիմնական ռազմական խնդիրը՝ մազրիկ ցեղի ցեղապետի և նրա ենթակա արյունարբու բեկերի ոչնչացումը չիրականացավ:

2. ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ XX ԴԱՐԻ ՍԿԶԲՆԵՐԻՆ

ա. Զինյալ պայքարի դասերը և մարտավարության փոփոխությունը: Հայոց ազատամարտի առաջին չրջանը մի կողմից անձնվիրության ու հերոսական մաքառումների փայլուն օրինակներ տվեց, մյուս կողմից՝ ամբողջ սրությամբ դրեց պայքարի մարտավարությունը փոխելու հարցը:

Այդ դասերից առաջինն այն էր, որ անգամ ամենահամարձակ, հերոսական ու մեծածավալ ձեռնարկները, անկախ դրանց արդյունքներից ու արձագանքներից, չեն կարող միջազգային ռազմական միջամտության պատճառ դառնալ և լուծում տալ Հայկական հարցին, եթե տվյալ պահին դրանով չահագրգռված չեն մեծ տերությունները: Երկրորդ՝ չարդարացան համազգային ընդհանուր ապստամբություն բարձրացնելու հետ կապված

հույսերը: Ահա թե ինչու անհրաժեշտաբար դրվեց հայդուկային պայքարի մարտավարությունը փոխելու խնդիրը: Ակնհայտ դարձավ, որ անհնար է կարճ ժամանակում Հայկական հարցի լուծումը և որ այդ խնդրի իրականացման համար հայ ազատագրական պայքարը պետք է լինի հարատև:

Այս դասերի հետ պետք է հաշվի նստեին հայկական ազատագրական շարժման մեջ ընդգրկված բոլոր հեղափոխական ուժերը և հատկապես Օսմանյան դրամատան գրավումով և Սամաթիայի կռիվներով շարժման առաջատար դարձած Դաշնակցությունը: Հայդուկային նոր խմբեր կազմակերպելուն զուգընթաց՝ 1895-1896 թթ. սկսած կուսակցությունը առաջնությունը տալիս էր ժողովրդի կազմակերպմանն ու զինմանը, որին երկրում ձեռնամուխ են լինում Հրայրը, Թաթուլը (Արամ Արամյան), Վազգենը և ուրիշներ: Բայց հեշտ չէր հաղթահարել տևական ժամանակ ազատագրական շարժման ուժերի զինանոցի հիմնական մարտավարությունը, դեռ շարունակվում էին հայդուկային խմբերի կազմակերպումը և դրանց մեկը մյուսից անջատ գործողությունները: Դրա տիպիկ օրինակներից մեկը Խանասորի արշավանքը եղավ:

Այդ փոփոխությունը Դաշնակցությունը կատարեց 1898 թ.՝ իր երկրորդ ընդհանուր ժողովում: Հրաժարվելով սեփական ուժերով Հայաստանի ազատագրության համար կռիվը շարունակելու գաղափարից և հույսը կապելով բացառապես Արևմուտքի օգնության հետ՝ ժողովը «...սկզբունքով միաձայն ընդունեց, թե առանց եվրոպական միջամտության անկարող ենք մեր ժողովրդի ազատության գործը գլուխ բերել, հետևաբար, գործունեության եղանակը որոշելու ատեն ի նկատի պիտի ունենալ այդ միջամտությունը առաջ բերելու բոլոր հնարավորությունները»: Ինչպես հետագան ցույց տվեց, միանգամայն սին էր Եվրոպայի օգնությամբ հայկական ազատագրությունը գլուխ բերելը: Քննարկելով ընդհանուր ապստամբության և հայդուկային պայքարի հարցերը՝ ընդհանուր ժողովը «...սկզբունքով ընդունեց ուժերու կենտրոնացումը Երկրին մեջ, ցույցը՝ Պոլիս և ծովեզրյա քաղաքները, և մերժելով ֆիդայական ասպատակային գործունեությունը՝ ընդունեց մարտական-զինավարժական խմբեր կազմակերպելու ծրագիրը»:

Այսպիսով, հրաժարվելով պարտիզանական կռվի մարտավարությունից, Դաշնակցությունն անցավ ընդհանուր ապստամբության համար Երկրի ուժերի կազմակերպմանը: Ընդ որում, բուն Երկրում մարտական ուժերի և ռազմամթերքի կենտրոնացման վայրեր են ընտրվում Վասպուրականն ու Սասունը, որտեղ դրա համար կային առավել նպաստավոր պայմաններ: Նման մարտավարություն են որդեգրում նաև Հնչակյան և Վերակազմյալ Հնչակյան կուսակցությունները:

Ժողովրդի կազմակերպումը, զինումը և նրան ընդհանուր ապստամբության նախապատրաստելը պահանջում էր օտար աչքերի համար անտեսանելի, լուռ, համբերատար ու տքնաջան աշխատանք: Ազատագրական շարժման առջև ծառացած հրատապ խնդիրներից մեկը ապագա ապստամբության կենտրոններում ուժերի ու միջոցների համակարգված կենտրոնացումն էր: Հին ֆիդայական մեթոդներով այդ խնդրի կատարումը գնալով ավելի ու ավելի անարդյունավետ էր դառնում: 1898-1899 թթ. սկսած՝ ավելի հաճախակի են դառնում կանոնավոր զորքերի և համիդիե գնդերի հետ զինատար խմբերի բախումները: Դրանք թեև հայոց ազատամարտի պատմությանը նոր հերոսական էջեր էին ավելացնում, բայց պատճառ էին դառնում ազատամարտիկների, զենքի ու զինամթերքի մեծ կորուստների, հետևաբար լրջորեն վնասում էին Երկրի զինման գործին: Անհրաժեշտ էին զենքի ու զինամթերքի փոխադրության նոր ուղիներ ու մեթոդներ: Արդեն 1900 թվականից Ատրպատականից Վասպուրական ազատամարտիկների զենքի փոխադրումը սկսեց իրականացվել փոքր քանակներով, հաճախ ջորեպանների կամ քուրդ չալակավորների միջոցով: Գրեթե նմանատիպ մեթոդներով սկսում են գործել նաև Անդրկովկասից ձգվող Կարս-Բասեն-Խնուս-Սասուն և Երևան-Ալադաղ-Ախլաթ-Սասուն զինատար ուղիները: Հատկապես այս երկու ուղիներով Սասունը մինչև 1904 թ. զգալի քանակությամբ զենք ու զինամթերք ստացավ՝ թեև ոչ բավարար խոշոր ապստամբության համար:

Դարավերջին Արևմտյան Հայաստանը քիչ թե շատ տևական խաղաղության կարիք էր զգում՝ ժողովրդի վերքերն ու տառապանքներն ամոքելու, նրա որոշակի խավերի շրջանում առաջացած հուսալքության ու հիասթափության տրամադրություններ-

ը հաղթահարելու և զանգվածներին կրկին ազատագրական գաղափարներով բոցավառելու համար: Միայն այդ պայմաններում ժողովրդի կազմակերպման աշխատանքը կարող էր պսակվել հաջողությամբ: Մինչդեռ այդ տարիներին Երկրում ստեղծված բարդ ու հակասական իրավիճակը նպաստավոր չէր իրականացնելու նշված խնդիրները:

Ոգևորված հայ ազատագրական պայքարի ժամանակավոր տեղատվությունից և հայոց ազատամարտի նոր մարտավարությունն ընկալելով որպես նրա թուլության ու պարտության նշան՝ թշնամին ամենուրեք հարձակման էր անցել: Մատնությունների հետևանքով նահատակվեցին Վասպուրականի և Տարոն-Սասունի ազատագրական պայքարի վերջին տարիների ճանաչված առաջնորդներ Վազգենը (1898 թ. հունվար), Գուրգենը (Բաղդասար Մայլան, 1899 թ. ապրիլ) և Աղբյուր Սերոբը (Սերոբ Վարդանյան, 1899 թ. հոկտեմբեր): Մինչդեռ նրանց փոխարինելը նոր գործիչներով միշտ չէ, որ սահուն եղավ: Մյուս կողմից՝ իշխանությունների ակնհայտ հովանավորությամբ ուժեղացան հայերի նկատմամբ քրդական աշիրեթների ճնշումները, է՛լ ավելի ծանրացան տուրքերը, հաճախակի դարձան թալանը, սպանությունները, հողերի բռնագրավումները, հայերի արտաքսումն իրենց բնակավայրերից և դրանք մուհաջիրներով (Բալկաններից գաղթեցված մահմեդականներ) բնակեցնելը: Զբավարարվելով դրանով, կառավարությունը, իբր ապահովության համար, հայկական գյուղերը լցնում էր զորքերով, որոնք ապրելով հայերի հաշվին՝ պատուհաս էին դառնում նրանց համար: Ամեն ինչ արվում էր՝ արմատախիլ անելու հայ ազատագրական շարժումը: Ստեղծվել էր հուսահատական մի վիճակ, որը երբեմն ժողովրդին դրդում էր ամենածայրահեղ քայլերի: Գործը նույնիսկ հասավ նրան, որ 1901 թ. Տարոնի հայության մեջ զանգվածաբար ուղղափառություն և այլ դավանանքներ ընդունելու շարժում սկսվեց և համապատասխան դիմումներ արվեցին Վանի ռուսական հյուպատոսին:

Նման պայմաններում ազատագրական շարժման մեջ խիստ դժվարանում էր հայդուկային պայքարի մարտավարության հաղթահարումը և դրանից լիովին հրաժարումը: Եթե ժողովրդական ապստամբության կազմակերպման կողմնակիցներն ի դեմս Հրայրի (Սասուն-Տարոն), Վարդգեսի (Վասպուրական) և նրանց համախոհների խուսափելով աղմուկից, անիմաստ համարելով մանր կռիվներն ու բախումները՝ ջանքեր էին գործադրում ժողովրդական զանգվածներին կազմակերպելու, զինելու և ընդհանուր ապստամբության պատրաստելու համար, ապա հայդուկային պայքարի մարտավարության կողմնակիցները ի դեմս Անդրանիկի (Անդրանիկ Օզանյան), Գևորգ Չավուշի ու նրանց համախոհների փորձում էին վրեժխնդրական խիզախ ձեռնարկումներով կանխել բռնությունները, ոգևորել ժողովրդին և նրան դուրս բերել հուսահատական վիճակից:

Մարտավարական երկու գծերի հակադրությունը Տարոն-Սասունում չարունակվում է մինչև 1902 թ. գարունը, երբ որպես Դաշնակցության լիազոր Սասուն է հասնում Վահանը (Վահան Մանվելյան), որը նպաստում է Հրայրի և հայդուկների միջև տեղի ունեցող վեճերի դադարեցմանը:

Հատկապես լայն արձագանք ունեցավ Աղբյուր Սերոբի սպանությունն իրականացրած և ընդհանրապես Սասունի հայության դահիճ, քուրդ ցեղապետ Բշարե Խալիլի ահաբեկումը՝ մեծ ճանաչում բերելով Անդրանիկին և բարձրացնելով նրա հեղինակությունը ազատագրական կռվի մարտիկների շարքերում:

Դարասկզբին հայդուկների մղած կռիվներից ամենանշանավորը և ամենահերոսականը Ս. Առաքելոց վանքի կռիվն էր Անդրանիկի գլխավորությամբ: Ունենալով ցուցադրական-քարոզչական բնույթ՝ նրա նպատակն էր ժողովրդին դուրս բերել հուսահատական վիճակից և կրկին տերությունների ուշադրությունը հրավիրել արևմտահայության խնդրի վրա:

բ. Ս. Առաքելոց վանքի կռիվը: *1901 թ. նոյեմբերի սկզբին Անդրանիկն ու Գևորգ Չավուշը ավելի քան 30 հայդուկների և շուրջ 20 զինված գյուղացիների հետ մտնում են Մուշից ոչ հեռու գտնվող Ս. Առաքելոց վանքը և այն վերածելով ինքնապաշտպանական ամրոցի՝ կռիվներ են սկսում վանքն անմիջապես պաշարած թուրք-քրդական մեծաքանակ ուժերի դեմ: Վանքը գրավելու վերջիններիս փորձերն ապարդյուն են անցնում: Կռիվների 11-րդ օրը թուրքական զորքերի հրամանատարությունը ստանձնած Բիթլիսի նահանգապետը բանակցություն-*

ներ է սկսում՝ հայդուկների պահանջներն իմանալու համար: Ցանկանալով վերջ տալ իրենց համար անցանկալի կռվին՝ իշխանությունները պատրաստ էին անգամ որոշ զիջումներ անելու: Նրանց հետ բանակցություններ վարող Անդրանիկը, Գևորգ Չավուշն ու Հակոբ Կոտոյանը ներկայացնում են հետևյալ պայմանները. ներում չնորհել քաղաքական բանտարկյալներին, տասանորդի տուրքը հավաքել իրենց՝ գյուղացիների միջոցով, զինաթափ անել ու պատժել հայկական գյուղերն ավերող քրդական զինված բանդաներին, հայերին վերադարձնել նրանցից զավթված հողերը, վերացնել հայերից տուրք գանձելու քուրդ ցեղապետների իրավունքը և այլն: Այս պահանջներից մասամբ բավարարվում է միայն առաջինը, ուստի կատաղի կռիվը վերսկսվում է: Թուրքական բանակում չուտով համաճարակ է բռնկվում, մյուս կողմից՝ պաշարվածների զինամթերքը սպառվում է: Վերջին հանգամանքը ստիպում է, որ նոյեմբերի 27-ի գիշերը հայդուկները, սպիտակ սավաններով փաթաթված, անկատ հեռանան վանքից: Ս. Առաքելոց վանքի կռիվը մեծ տպավորություն է թողնում Տարոնի ու Սասունի հայության վրա: Միաժամանակ արձագանք գտնելով արտասահմանում՝ նոր թափ է հաղորդում արտաքին քարոզչությանը:

գ. Սասունի 1904 թվականի ապստամբությունը: Ս. Առաքելոց վանքի կռիվը, ժողովրդի դժգոհության հետևանքով Սասունում թուրքական զորանոցի կառուցման փորձի ձախողումը և նմանատիպ այլ իրադարձություններ վկայում էին հայ ազատագրական պայքարի աշխուժացման մասին: Թեև Վահան Մանվելյանի Սասուն ժամանելուց հետո 1902-1903 թթ. հայդուկային գործունեությունն առերևույթ դադարում է և չուրջ երկու տարի արտաքին հանգստության քողի տակ կազմակերպչական եռանդուն գործունեություն է ծավալում Հրայրը, սակայն նրա ծրագրերը կիսատ են մնում: Իշխանությունների համար գնալով ակնհայտ է դառնում այն վտանգը, որ ներկայացնում է Սասունը:

1902 թ. սկսած՝ կառավարությունն ուժեր է կենտրոնացնում Սասունի մատույցներում՝ նպատակադրվելով կանխել վերահաս ապստամբությունը: Հետևելով Սասունում ծավալվող դեպքերին՝ հայությունը նույնպես բնազդով զգում է այն վճռորոշ նշանակությունը, որ ստացել էր Սասունը հայոց ազատամարտի համար: Ակնհայտ էր, որ այստեղ էր որոշվելու հայ ազատագրական պայքարի ապագան: Հատկապես կովկասահայության շրջանում ծավալվում է Սասունին օգնելու շարժում: Այդ նպատակով վերադարձ է կատարվում զինված արշավախմբերի կազմակերպման գործելակերպին, որից հայ ազատագրական շարժումը նախորդ տարիներին միաժամանակ հրաժարվել էր: Դրանցից առաջինը Թորգոմի «Մրրիկ» ձիավոր խումբն էր, որ դուրս գալով Կարսից և հաղթահարելով մեծ դժվարություններ՝ 1903 թ. ամռան սկզբներին անվնաս հասավ Սասուն՝ խիստ բարձրացնելով ժողովրդի տրամադրությունը: Փորձառու և ընտիր մարտիկներից բաղկացած այդ խմբի հայտնվելը Սասունում բացահայտ մարտահրավեր էր իշխանություններին, որոնք չտապում են օղակի մեջ առնել Սասունը՝ այն համարելով ապստամբ շրջան: Զգուշությունն արդեն ավելորդ էր: Հրայրն ու Վահանը մի կողմից նամակներով նոր օգնություն են ակնկալում Կովկասի դաշնակցական մարմիններից, մյուս կողմից՝ աշխատում հնարավորին չափ շատ մարտական ուժեր հավաքել Սասունում: Հայոց գյուղացուների միջնաբերդի վրա կրկին փողփողում է ազատաբեր ապստամբության դրոշը: 1903 թ. աշնանից Սասունն ապրում էր միանգամայն ազատ կյանքով՝ պատրաստություններ տեսնելով դիմազրավելու գալիք փորձությունները: Այդ վճռորոշ պահին հարթվում են պայքարի առաջնորդների միջև նախկինում եղած տարակարծությունները: Ստեղծվում է ապստամբությունը ղեկավարող զինվորական մարմին՝ Անդրանիկի գլխավորությամբ:

Սասունին էապես կարող էին օգնել Կովկասում ստեղծված նոր խմբերը, որոնք 1903 թ. սեպտեմբերին անցան սահմանը: Սակայն Բարսեղ Թիրաքյանի (Խան) ձիավոր և Օննիկ Նովրուզի 150 հոգուց բաղկացած հետևակ խմբերն արդեն սահմանագլխին կատաղի ու հերոսական կռիվների մեջ մտնելով թուրքական գերակշիռ զորքերի հետ՝ մեծմասամբ նահատակվեցին: Հետագայում՝ 1904 թ. գարնանն ու ամռանը, նման ճակատագիր ունեցան նաև ՀՀԴ երրորդ ընդհանուր ժողովի որոշմամբ Կով-

կասում Սասունին օգնական ուժեր ու ռազմամթերք հասցնելու նպատակով ստեղծված Վաղարշակի, Ռուս Գևորգի, Թորգոմի, Որսորդ Գևորգի, Երկաթի, Թոխմախի և այլ խմբեր: Ուշացան նաև ՀՅԴ երրորդ ընդհանուր ժողովի որոշմամբ ի նպաստ Սասունի Կ. Պոլսում և Իզմիրում նախատեսված ցուցական-ահաբեկչական ձեռնարկները: Ապստամբության համար անպատրաստ էր և անգործունյա դիտողի դերում հայտնվեց Երկրում ուժերի ու ռազմամթերքի կենտրոնացման երկրորդ շրջանը՝ Վասպուրականը: Սասունը չկարողացավ ստանալ իր համար նախատեսված օգնությունը և գործնականում մնաց միայնակ:

Կառավարությունը Սասունի դեմ արշավանք սկսեց 1904 թ. գարնանամուտին: Թուրքական 10 հազարանոց բանակը գլխավորում էր ռուս-թուրքական նախորդ պատերազմում հռչակված Քեոսե բինբաշին: Բացի կանոնավոր զորքերից Սասունի դեմ դուրս բերվեցին նաև մի քանի հազար զինված քրդեր: Նրանց դիմագրավում էին միայն 200 փորձված հայդուկներ և շուրջ 800 զինված սասունցիներ: 1904 թ. ապրիլի սկզբներին հակառակորդը վճռական գրոհի անցավ: Իրենց համար հենակետեր ընտրելով Տափրք, Գելիեգուզան, Շենիկ, Իշխնձոր և Տալվորիկ գյուղերը՝ սասունցիները համառ դիմադրություն ցույց տվեցին: Ապրիլի 11-ին հատկապես կատաղի կռիվներ տեղի ունեցան Շենիկի ճակատում, որտեղ Թուրքական հեծելազորը, հանդիպելով հայերի համառ դիմադրությանը, ստիպված էր նահանջել: Առաջին անհաջողություններից հետո Թուրքական հրամանատարությունը ապստամբության ղեկավարներին առաջարկեց զենքը վար դնել: Որպես պատասխան Անդրանիկն ու Հրայրը հայտարարեցին, որ զենքը վար կդրվի 1895 թ. Մայիսյան բարենորոգումների ծրագրի իրականացման դեպքում: Թուրքական կողմը վերսկսեց հարձակումը: Ապրիլի 13-ի կատաղի կռիվներում զոհվեց Հրայրը: Անդրանիկի, Գևորգ Չավուշի և Սեբաստացի Մուրադի մարտիկների անձնուրաց գրոհները, սակայն, ստիպեցին Թշնամուն մեծ կորուստներ տալով դարձյալ լքել մարտադաշտը: Կենտրոնական ճակատում՝ Գելիեգուզան գյուղի դեմ Թշնամին 12-14 հրանոթ դուրս բերեց: Սկսվեց Գելիեգուզանի մեծ կռիվը: Թեև ապրիլի 19-ի անհավասար մարտն էլ հաջողություն չբերեց Թշնամուն, բայց ապրիլի 20-22-ը նա շարունակում էր համառ գրոհները՝ մեծ զոհերի գնով քայլ առ քայլ գրավելով հայկական դիրքերը: Ապստամբության ղեկավարների համար պարզ էր, որ հնարավոր չէ երկար դիմադրել՝ բավարար զենք ու զինամթերք չունենալու պատճառով: Անհրաժեշտ էր մտածել անզեն ժողովրդին կոտորածից փրկելու մասին:

Վահանի հրահանգով Սեբաստացի Մուրադը 115 զինյալների հետ կռիվներով ճանապարհ բացելով Սասունի անզեն բնակչությանը և վիրավորներին իջեցնում է Մշո դաշտ՝ խնդիր ունենալով այդ ընթացքում նաև զինամթերք ձեռք բերել՝ պայքարը շարունակելու համար:

Թեև Գելիեգուզանից հետո ապրիլի 23-ին ընկավ նաև Տալվորիկը, բայց դրանից հետո էլ Անդոքի և Քեփինի բարձունքներում ապստամբները 8-10 օր շարունակում էին անհավասար կատաղի մարտերը Թուրքական զորքերի դեմ: Կռիվները տևեցին մինչև մայիսի կեսերը: Թշնամին, տիրանալով Սասունին, հաշվեհարդար տեսավ այնտեղ մնացած խաղաղ բնակչության հետ՝ ավերի ու թալանի ենթարկելով, ամայացնելով գյուղերը: Պահը հարմար գտնելով՝ սուլթանը ցանկանում էր Սասունի հայությանը մշտապես բնակեցնել Մշո դաշտում, բայց, ի վերջո, տեղի տալով սասունցիների սպառնալիքներին ու մեծ տերությունների հյուպատոսների միջամտություններին՝ նա հարկադրված էր հրաժարվել այդ ծրագրից:

Սասունի անկումով պայքարը չդադարեց: Կռիվների ասպարեզ դարձավ նաև Մշո դաշտը: 1904 թ. մայիս-հուլիս ամիսներին, պարտիզանական մարտավարությանն ապավինելով՝ հայդուկները տասնյակ մեծ ու փոքր կռիվներ մղեցին Թուրք-քրդական կանոնավոր ու անկանոն զորամասերի դեմ: Նրանց գործողությունները հատկապես աշխուժացան Վասպուրականից զինամթերքի զգալի պաշարով Սեբաստացի Մուրադի վերադառնալուց հետո: Բերդակի, Մկրագոմի, Դերիկի, Գոմերի, Դերգեվանքի, Գոմսի և հատկապես Կուրավուի կռիվները թեև հերոսական էին և հարյուրավոր զոհեր խլեցին Թշնամուց, բայց այլևս չէին կարող փոխել իրադարձությունների ընթացքը:

Կռիվները չարունակելը կարող էր վտանգի տակ դնել նաև Մշո դաշտի հայությանը: Դա ազատագրական պայքարի ղեկավարներին հարկադրեց հրաժարվել պարտիզանական գործողություններից և հայդուկներին հեռացնել Տարոնից: Անդրանիկի գլխավորությամբ դեպի Վան անցնող հայդուկները Շամիրամում վերջին հաղթական կռիվները մղեցին բազմաքանակ թուրքական ուժերի դեմ, ապա մոտենալով Վանա լճին՝ նավերով անցան Աղթամար կղզի: Վասպուրականի ազատագրական պայքարի ղեկավարներ Վահան Փափազյանի (Կոմս) և Իշխանի (Նիկոլ Պողոսյան) հետ խորհրդակցելուց հետո այստեղ որոշվում է կազմակերպական աշխատանքները չարունակելու նպատակով Գևորգ Չավուշին մի փոքրիկ խմբով հետ ուղարկել Մուշ և Սասուն: Հայդուկների մնացած մասն անցնում է Պարսկաստան, ոմանք էլ հեռանում են Կովկաս՝ հետագայում իրենց գործուն մասնակցությունը բերելով 1905-1906 թթ. հայ-թաթարական կռիվներին:

Սասունի 1904 թ. ապստամբությունը հայոց զինյալ պայքարի վերջին զանգվածային պոռթկումն էր Արևմտյան Հայաստանի տարածքում: Չնայած գործադրված ճիգերին՝ այն մնաց մեկուսացված և չվերաճեց համազգային ապստամբության: Այդ պայմաններում կրկին առաջնային նշանակություն ձեռք բերեց ժողովրդին կազմակերպելը, նրա ուժերը համախմբելը և ապագա ելույթներին նախապատրաստելը, որը չարունակվեց ընդհուպ մինչև 1908 թ. երիտթուրքական հեղաշրջումը:

Հայոց եկեղեցու ունեցվածքի բռնագրավման վերաբերյալ 1903 թ. հունիսի 12-ի ցարական հրամանագիրը նոր իրավիճակի առաջ էր կանգնեցրել հայությանը, որն ակամայից ներգրավվել էր ցարիզմի դեմ պայքարի ոլորտ: Զանգվածային բողոքի ցույցերով, զորքի ու ոստիկանության հետ բախումներով, տպավորիչ ահաբեկչական ձեռնարկներով, քաղաքացիական անհնազանդության ակտերով այս անգամ ռուսահայությունն էր յուրօրինակ և անհավասար պայքարի մեջ մտել ցարական իշխանությունների դեմ: Այդ պայքարը որոշ չափով հայության ուշադրությունը չեղեց թուրքահայ դատից: 1905 թ. փետրվարին սկսված հայ-թաթարական կռիվներն արդեն օրակարգում հրամայաբար դնում են արևելահայության ֆիզիկական անվտանգությունն ապահովելու խնդիրը: Այժմ արդեն արևմտահայությունն է չտապում օգնության ձեռք մեկնել արևելահայ եղբայրներին՝ իր լավագույն մարտական ուժերը նետելով հայ-թաթարական պայքարի ամենավճռական տեղամասերը: Արևմտահայ մեծահամբավ խմբապետներ Սեբաստացի Մուրադը, Սեպուհը, Համազասպը, Քեռին, Սմբատը, Հակոբ Կոտոյանը, Կորյունը, Առյուծ Ավագը և ուրիշներ կարևոր ներդրում են ունենում կովկասահայության տարած տպավորիչ հաղթանակներում՝ մեկ անգամ ևս ապացուցելով, որ հայ ազատամարտի նվիրյալների համար չկան արհեստականորեն գծված սահմաններ և որ նրանց համար նույնական են ազգային շահերը, ընդհանուր ու միասնական է հայրենիքը:

Դ. Ելդրզի մահափորձը և Իզմիրի ձեռնարկները: Թուրքական բռնապետության դեմ պայքարը չարունակվում էր: Մինչ Երկրում տարվում էր ուժերի կազմակերպման ու միջոցների կենտրոնացման աշխատանք, իսկ կովկասահայությունը ցարիզմի, ապա կովկասյան թրքության դեմ հերոսական պայքարում իր շահերն ու իրավունքներն էր պաշտպանում, Կ. Պոլսում և Իզմիրում տենդագին աշխատանքներ էին տարվում աբդուլհամիդյան վարչակարգի դեմ պայքարի հերթական գործողությունը նախապատրաստելու համար:

Դաշնակցության երրորդ ընդհանուր ժողովում (1904 թ., Սոֆիա) Քրիստափոր Միքայելյանի գլխավորությամբ ընտրված Յուցական մարմինը լծվեց հերթական մի ձեռնարկի իրականացման՝ նպատակ ունենալով մահապատժի ենթարկել արյունռուշտ սուլթանին: Նախատեսվում էր, որ վրեժխնդրական այդ գործողությունը խառնաշփոթ վիճակ պետք է առաջացներ Թուրքիայում, հանգեցներ միջազգային միջամտության և լուծում տար Հայկական հարցին: Այս անհեռատես ծրագիրը ևս դատապարտված էր անհաջողության:

Հայ և այլազգի հեղափոխականների մի խմբով ծրագրերի իրականացմանը ձեռնամուխ եղավ ուրիշի անունով ծպտված և Կ. Պոլիս անցած Քրիստափոր Միքայելյանը: Աբդուլ Համիդ II-ի վախկոտության ու ծայրահեղ կասկածամտության պայմաննե-

բում դա անչափ դժվար խնդիր էր: Մանրակրկիտ ուսումնասիրություններից հետո հասցվելիք հարվածի ամենահարմար պահը համարվեց ամեն ուրբաթ օր տեղի ունեցող կրոնական արարողություններին սուլթանի մասնակցության ժամանակը: Վտանգի ենթարկելով իրենց կյանքը՝ Քրիստափորը և նրա զինակիցները բազմիցս ներկա են լինում կրոնական արարողություններին՝ ճչտելով ամենաչնչին մանրուքն անգամ: Ի վերջո մշակվում է վերջնական պլանը: Բայց Քրիստափորին վիճակված չէր անձամբ իրականացնել իր մտահղացումը, քանզի 1905 թ. մարտի 17-ին իր զինակից Վռամչապուհ Քենդիրյանի հետ նահատակվեց Սոֆիայից ոչ հեռու՝ Վիտոշ լեռան լանջերին սուլթանի վրա նետվելիք ձեռնառումբեր փորձարկելիս:

Ելդըզի պարիսպներից ներս ռումբային պայթյունն այնուամենայնիվ տեղի ունեցավ: 1905 թ. հուլիսի 21-ին չքեղ կառքով այստեղ բերված դժոխային մեքենան նախատեսված պահին ահավոր դղրդյունով պայթեց: Եղան զոհեր ու վիրավորներ: Բայց սուլթանը հրաշքով կենդանի մնաց: Մզկիթից դուրս գալուց նա նախորդ անգամների համեմատ մի պահ հապաղել էր և, հնարավոր է, որ դա էր փրկել նրա կյանքը:

Փրկվելով հանդերձ՝ սուլթանին հոգեկան ծանր ապրումներ էին սպասում: Անցնում էին օրեր, բայց դեռևս հայտնի չէր պայթյունի հետևում կանգնած քաղաքական ուժը: Կատարվում են բազմաթիվ ձերբակալություններ: Ձերբակալվում է անգամ գահաժառանգ Ռեշադը: Ի վերջո, գտնվում է բելգիացի է. Ժոռիսի հետքը, որը մահափորձի գլխավոր կազմակերպիչներից էր: Խոստովանելով իր մասնակցությունը՝ նա, սակայն, հրաժարվում է մատնել իր հայ ընկերներին՝ տալով միայն մահացածների ու փախածների անունները: Միջազգային մեծ արձագանքներով հանդերձ՝ ձեռնարկը, իր ամբողջության մեջ, փաստորեն ձախողվեց:

Այնուհանդերձ, հասկանալով, որ միջազգային հասարակական կարծիքն իր օգտին չէ, Աբդուլ Համիդ II-ը այս անգամ չհամարձակվեց հայերի ջարդեր կազմակերպել: Ուշագրավ է, որ երբ բելգիական խորհրդարանում այդ երկրի արտաքին գործերի նախարարի կողմից հայ վիժառուներին դատապարտելու փորձ

արվեց, պատասխան ճառով հանդես եկած սոցիալիստ է. Վանդերվելդեն հայտարարեց, թե արյունարբու բռնակալ Աբդուլ Համիդը իր ոճրագործություններով իրեն դուրս է դրել մարդկության շրջանակներից:

Ե. Մարտավարության նոր փոփոխություն: *Ելդըզի մահափորձը օսմանյան բռնապետությունը ցնցելու վերջին խոշոր, թեև ձախողված փորձն էր: Դա, ինչպես նաև Սասունի 1904 թ. ապստամբությունը իրենց նպատակին չհասնելով հանդերձ՝ ուժեղ տպավորություն թողեցին սուլթանին ընդդիմադիր երիտթուրքերի վրա: Վերջիններս թշնամի էին հայ ազատագրական պայքարին ու նրա նպատակներին և չէին ընդունում հայ քաղաքական ուժերի գործելակերպը, բայց տվյալ ժամանակամիջոցում այդ ուժերի գործողությունները դիտելով որպես աբդուլհամիդյան բռնակալության տապալմանն ուղղված կարևոր գործոն՝ փորձում էին այն օգտագործել իրենց նպատակներին:*

Հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը չհասավ իր նպատակին: Չիրականացավ համազգային ընդհանուր ապստամբության նախապատրաստումը, քանի որ արևմտահայությունը դրան դեռևս պատրաստ չէր: Չնայած ձեռնարկված մի շարք փորձերին՝ չհաջողվեց աբդուլհամիդյան վարչակարգի դեմ հանել նաև Երկրում բնակվող ոչ թուրք ազգությունների ներկայացուցիչներին, հատկապես հայության նկատմամբ թշնամաբար տրամադրված քրդերին: Դրական արդյունք չունեցան նաև Հայկական հարցի լուծման օգտին միջազգային միջամտություն առաջ բերելու զանազան նոր փորձերը: Ստեղծված իրավիճակում հայ ազատամարտի գլուխ կանգնած ուժերը եվրոպացի, հատկապես ֆրանսիացի հայասեր գործիչների ճնշմամբ գնալով հակվում էին աբդուլհամիդյան վարչակարգի դեմ պայքարում երիտթուրքերի հետ համագործակցության գաղափարին: Դրան որոշ չափով նպաստեցին նաև 1905-1907 թթ. Բիթլիսում, Դիարբեքիրում, Կարինում և Վանում մուսուլման ազգաբնակչության շրջանում նկատվող խմորումները, որոնք ընկալվում էին որպես հետամնաց թուրք ազգաբնակչության քաղաքական հասունացման սկիզբ:

Դաշնակցության առաջարկով 1907 թ. դեկտեմբերին Փարիզում տեղի ունեցավ Օսմանյան կայսրության ընդդիմադիր ուժերի 2-րդ համաժողովը: Դրանում ընդունված հայտարարագրում դրված էին Աբդուլ Համիդի գահընկեցության, Թուրքիայում գործող վարչակարգի արմատական փոփոխության և ներկայացուցչական մարմնի (խորհրդարանի) հաստատման պահանջներ: Համաժողովին մասնակից ուժերն իրենց պատրաստակամությունն էին հայտնում զենքը վայր չդնել մինչև հիշյալ խնդիրների իրականացումը:

Այսպիսով, Օսմանյան կայսրության ընդդիմադիր ուժերի դաշինքը անվանապես ստեղծված էր: Հայ ազատագրական ուժերը փաստորեն Աբդուլ Համիդին ընդդիմադիր ուժերի հետ համատեղ պայքարի մեջ էին մտնում իշխող վարչակարգը տապալելու և կայսրությունում սահմանադրական կարգեր հաստատելու համար:

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

ՀԱՅԱՍՏԱՆԸ XX ԴԱՐԱՍԿԶԲԻՆ

1. ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ XX ԴԱՐԱՍԿԶԲԻՆ

ա. Արևմտահայերի սոցիալ-տնտեսական դրությունը: *XX դ. սկզբին տնտեսական, քաղաքական ու մշակութային առումով Օսմանյան կայսրությունը շարունակում էր մնալ հետամնաց պետություն: Այդ երկիրն այլևս չուներ երբեմնի ռազմական հզորությունը և անկասելի անկում էր ապրում: Թուրքական տիրապետության ծանր պայմաններում գտնվող ազգերը հերոսական պայքար ծավալեցին իրենց բռնաղատված իրավունքներն ու անկախությունը վերականգնելու համար: Նրանցից շատերը հաղթանակով ավարտեցին ազգային-ազատագրական պայքարը և հասան բաղձալի արդյունքի: Այլ էր իրավիճակը Արևմտյան Հայաստանում:*

XIX դ. երկրորդ կեսին և XX դ. սկզբին Թուրքական կառավարությունը մի քանի անգամ փոխեց Արևմտյան Հայաստանի վարչական բաժանումը: Դա արվում էր այն դիտավորությամբ, որ հայկական ոչ մի նահանգում հայերը մեծամասնություն չկազմեին: Արևմտյան Հայաստանը բաժանված էր վեց նահանգների՝ Էրզրումի, Վանի, Բիթլիսի, Դիարբեքիրի, Խարբերդի ու Սեբաստիայի (Սվազ): Յուրաքանչյուր նահանգ տրոհվում էր գավառների (սանջակ), գավառը՝ գավառակների (կազա), իսկ գավառակը՝ գյուղախմբերի:

Սուլթանական կառավարությունը մշտապես ոտնահարում էր հայերի իրավունքները: Պաշտոնները ձեռք էին բերվում կաշառքով, և նշանակումից հետո աստիճանավորներն անխնա կողոպտում էին բնակչությանը, առաջին հերթին՝ հայերին: Արգելված էր գործածել «Հայաստան» անունը:

Դարասկզբին Օսմանյան կայսրությունում ապրում էր 3

միլիոն հայ, որից մոտ 2 միլիոնը՝ Արևմտյան Հայաստանում: Այդ ժամանակ աշխարհում հաշվվում էր չուրջ 5 միլիոն հայ:

Արևմտյան Հայաստանում ապրում էին նաև քրդեր, թուրքեր, ասորիներ, հույներ, չերքեզներ, հրեաներ և տարբեր վայրերից ներգաղթած այլ ժողովուրդներ: Թվով երկրորդը քրդերն էին, երրորդը՝ թուրքերը: Բայց օսմանյան պետության ազգային խտրականության ու հայահալած քաղաքականության հետևանքով գնալով արագորեն պակասում էր հայերի թիվը, էլ ավելի արագորեն մեծանում էր մահմեդականների թիվը: Հայ գյուղացիների համար մեծ չարիք դարձան Կովկասից և Բալկաններից գաղթած և հայկական հողերում բնակություն հաստատած մահմեդականները: Նրանց տրվում էին զանազան արտոնություններ, իշխանությունները խրախուսում էին հայերի նկատմամբ գործադրած բռնությունները, ինչը կտրուկ սրում էր ազգամիջյան հարաբերությունները հայկական նահանգներում:

Արևմտյան Հայաստանի բնակչության միայն 10 տոկոսն էր ապրում քաղաքներում, բայց իրենց հայրենիքից հայերին դուրս մղելու թուրքական քաղաքականության հետևանքով հայության թիվը, հատկապես խոշոր քաղաքներում, օրեցօր նվազում էր:

Օսմանյան կայսրությունում պահպանվում էին միջնադարից եկող հողատիրության ձևերը՝ պետական, մասնատիրական և հոգևոր հաստատություններին պատկանող (վակֆային): Աբդուլ Համիդ II-ն իր սոցիալական հենարանը ուժեղացնելու համար թույլատրեց քուրդ ավատատերերին ավելի հիմնավորապես ամրանալ հայկական հողերի վրա:

Հայ գյուղացիության վիճակը գնալով ավելի անտանելի էր դառնում: Նրա համար իսկական պատուհաս էին հարկահանության կիրառվող համակարգը, ավազակային հարձակումները, կողոպուտն ու անձնական անապահովությունը: Արևմտյան Հայաստանում գերիշխող էր ավատատերերին վճարվող բնամթերային հարկը՝ տասանորդը, կային նաև պետական զանազան հարկեր: Քրիստոնյաներից վերցնում էին նաև զինվորական հարկ ծառայության փոխարեն: Հարկերը հավաքվում էին ամենայն խստությամբ, հաճախ հարկահանությունն ավարտվում էր ունեցվածքի բռնագրավմամբ:

Այսպիսով, ի տարբերություն արևելահայերի, որոնք ունեին

կյանքի և ունեցվածքի ապահովություն, արևմտահայերն ապրում էին իրավազուրկ ու անապահով պայմաններում:

Օսմանյան կայսրությունում գերիշխող ավատատիրական հետամնաց վարչակարգը արգելակում էր երկրի զարգացումը, ամեն կերպ խոչընդոտում կամ ձախողում էր հասարակության արդիականացման ձեռնարկումները: Եվրոպական զարգացած տերություններն իրականացնում էին Օսմանյան կայսրության գաղութացման և նրանից գերշահույթ ստանալու քաղաքականություն: Աստիճանաբար արտասահմանյան կապիտալն ամրապնդվում էր երկրի տնտեսության մեջ, ստեղծվում էին արդյունաբերական ձեռնարկություններ, կառուցվում երկաթուղիներ:

XX դ. սկզբներին, երբ արդյունաբերական զարգացած երկրներում հիմնվում էին գերհզոր ձեռնարկություններ, հայկական նահանգներում նոր միայն սկիզբ էր առնում ու զարգանում մանուֆակտուրային արտադրությունը: Վանում, Կարինում, Արաբկիրում, Խարբերդում, Բիթլիսում, Երզնկայում հիմնվում են տեքստիլ և սննդի արդյունաբերության մանուֆակտուրաներ: Զարգանում էր սպիրտային խմիչքների արտադրությունը. Կարինում արտադրում էին օղի, իսկ Խարբերդում՝ գինի: Գինեգործությունը զարգանում էր նաև հայկական գյուղերում: Տեղաշարժեր նկատվեցին արդյունաբերական մյուս ճյուղերում: Կարինում հիմնվեցին ծխախոտի, Երզնկայում՝ լուցկու արտադրության ձեռնարկություններ: Ստեղծվում են նաև առաջին գործարանները: Խարբերդում հիմնվում են մետաքսամշակման և կիսամեքենայացված մեքենաշինական գործարաններ: Այդպիսի գործարան ստեղծվում է նաև Վանում: Արևմտյան Հայաստանում մասնավորի կողքին կային նաև քիչ թվով պետական ձեռնարկություններ:

Արևմտյան Հայաստանի քաղաքները նույնպես դանդաղ էին վերափոխվում: Նոր ժամանակների չունչն այստեղ այնքան խորը չէր, որքան կայսրության մայրաքաղաքում և արևմտյան ծովափնյա քաղաքներում: Աստիճանաբար տեղաշարժեր են նկատվում Արևմտյան Հայաստանի համեմատաբար խոշոր քաղաքներում: Կարինում ապրում էր 40.000 մարդ, Վանում՝ 30.000, Բիթլիսում՝ 30.000: Հայ բնակչությունը զբաղվում էր առևտրով, արհեստներով ու արդյունաբերական արտադրությամբ, իսկ

Թուրքերը՝ պետական պաշտոնավարությամբ, զինվորական ծառայությամբ և շատ քիչ՝ առևտրով ու արհեստներով: Վան քաղաքն ավանդաբար մեծ հռչակ ուներ իր ոսկերիչների գեղեցիկ արտադրանքով, Մուշի արհեստավորները պատրաստում էին ոսկեզօծ զարդանախշերով կճուճներ: Խարբերդի հայերը հռչակված էին գորգագործությամբ: Արևմտյան Հայաստանում թեև սկսել էր ուժեղանալ նաև թուրքական ձեռներեցների դասը, բայց տնտեսության բնագավառում առաջնությունը մնում էր հայերի ձեռքում: Հատկապես մեծ էր հայերի մշակութային դերը թե՛ քաղաքներում, թե՛ գյուղերում: Հայ արհեստավորները անձամբ կամ միջնորդ առևտրականների միջոցով իրենց ապրանքը իրացնում էին տեղական և հեռավոր շուկաներում:

Արդյունաբերության, արհեստների, առևտրի ու գյուղատնտեսության որոշակի աշխուժացումը փոփոխություններ առաջացրեց արևմտահայության հասարակական կյանքում: Արևմտահայ ձեռներեցները և հատկապես մայրաքաղաքում ապրողները ձևավորեցին հայ վաշխառուական և առևտրական կապիտալը: Աստիճանաբար նեղվելով օտարերկրյա կապիտալի մրցակցությունից՝ հայ ձեռներեցները սկսեցին իրենց հիմնական միջոցները ներդնել հայկական միջավայրում և կայսրության ազգային մյուս երկրամասերում: Հայկական կապիտալը ներդրվում է նաև արտադրական ոլորտում: Հայ դրամատերերը երկրի կենտրոններում ու հայկական նահանգներում սկսում են կառուցել գործարաններ, հիմնել դրամատներ և այլն: 1914 թ. դրությամբ կայսրության արդյունաբերական ձեռնարկությունների 50 %-ը պատկանում էր հույներին, 20 %-ը՝ հայերին և միայն 15 %-ը՝ թուրքերին: Արդյունաբերության որոշ ճյուղերում գերիշխում էր հայկական կապիտալը:

Հայ բանվորության մեծագույն մասը նախկին գյուղացիներ, արհեստավորներ ու մանր ապրանք արտադրողներ էին, ովքեր աղքատանալով և ունեզրկվելով՝ համալրում էին արդյունաբերական ձեռնարկություններում աշխատողների շարքերը: Օսմանյան իշխանությունների վարած տնտեսական և սոցիալական խտրական քաղաքականության հետևանքով հայերի ստվար զանգվածներ թողնում էին հայրենիքը և ժամանակավոր կամ մշտական բնակության մեկնում կայսրության արևմտյան

քաղաքներ, հատկապես Կ. Պոլիս: Պանդխտությունը կամ գաղթականությունը մեծ չարիք դարձավ հայության համար՝ բուն հայրենիքում տկարացնելով ազգային ներուժը:

բ. Երիտթուրքական հեղաշրջումը: XX դարի սկզբին Օսմանյան կայսրությունը տնտեսական և քաղաքական խոր ճգնաժամ էր ապրում: Ուժեղացել էին հպատակ ժողովուրդների ազատագրական շարժումները: Թուրքական հասարակությունում առաջացել էին ուժեր, որոնք ցանկանում էին երկիրը դուրս բերել ծանր կացությունից և ամեն գնով պահպանել կայսրությունը: Այդ ուժերից էր 1889 թ. կազմակերպված «Իթթիհաթ վե թերաքքի» («Միություն և առաջադիմություն») կուսակցությունը, որը գլխավորում է հակասուլթանական շարժումը երկրում:

1907 թ. դեկտեմբերին Փարիզում տեղի ունեցավ Օսմանյան կայսրության ընդդիմադիր ուժերի երկրորդ համաժողովը: Երիտթուրքական և դաշնակցական կուսակցությունները, արաբական, հրեական, ապա մակեդոնական կոմիտեները համաձայնության եկան համատեղ ջանքերով մինչև 1909 թվականը զինված ապստամբությամբ տապալել Համիդյան վարչակարգը և Թուրքիայում հաստատել սահմանադրական կարգեր: Բայց հեղաշրջումը կատարվեց ծրագրված ժամկետից շուտ՝ 1908 թ. հուլիսին: Շարժման կենտրոնը դարձավ Սալոնիկը, իսկ շարժիչ ուժը՝ թուրքական բանակը: 1908 թ. հուլիսի 10 (23)-ին Մակեդոնիայում Նիազի և Էնվեր բեյերի գլխավորությամբ թուրքական զորքերն ապստամբվում են և շարժվում Կ. Պոլիս՝ սուլթանից պահանջելով վերականգնել 1876 թ. ընդունված, բայց չգործադրված Միդհատյան սահմանադրությունը: Կարճ ժամանակում տեղի է ունենում պետական հեղաշրջում, երկրում հաստատվում են սահմանադրական միապետական կարգեր, որտեղ վճռական դեր էին խաղում երիտթուրքերը: Ահաբեկված սուլթանը հաջորդ օրը հրապարակում է հրամանագիր Միդհատյան սահմանադրության վերականգնման մասին:

Համիդյան բռնակալության տապալումը մեծ խանդավառություն առաջացրեց կայսրության բոլոր ժողովուրդների, այդ թվում նաև հայերի մեջ: Հայերի մեծ մասը հավատաց երիտթուրքերի խոստումներին՝ կարծելով, թե վերջ կտրվի իրենց

տառապանքներին: Երիտթուրքերը, սակայն, որդեգրում են օսմանիզմի քաղաքականությունը, Օսմանյան կայսրությունը հռչակվում է այնտեղ բնակվող բոլոր ժողովուրդների հայրենիք: Ավելի ուշ երիտթուրքերն առաջ են քաշում պանիսլամիզմի և պանթուրքիզմի ծրագրեր: Առաջինը նպատակ ուներ Թուրքիայի չուրջը համախմբել մահմեդականներով բնակեցված երկրները և տարածքները, իսկ երկրորդը՝ համախմբել թուրքալեզու ժողովուրդներին: Շատ կարճ տևեց սահմանադրական կարգերի հռչակման հետ կապված ոգևորությունը: Սկզբում երիտթուրք առաջնորդները հմտորեն թաքցնում էին իրենց ազգայնամոլ էությունը՝ ներկայանալով որպես Օսմանյան կայսրությունում ապրող բոլոր ժողովուրդների իրավունքների պաշտպան: Ֆրանսիական հեղափոխությունից ընդօրինակված «ազատություն, հավասարություն, եղբայրություն» կարգախոսներն այդպես էլ մնացին թղթի վրա: Շուտով հայերին ու կայսրության մյուս ազգերին համակեց լիակատար հիասթափություն: Իրականությունն այն էր, որ երիտթուրքերը ոչ միայն սահմանադրական քիչ թե շատ էական բարեփոխումներ չիրագործեցին, այլև ավելի դաժանորեն չարունակեցին Աբդուլ Համիդի որդեգրած հակահայ քաղաքականությունը:

Երիտթուրքական հեղաշրջումից հետո սկզբնական շրջանում հայ ազատագրական ուժերը փոխեցին իրենց մարտավարությունը: Գնալով զիջումների՝ հայ քաղաքական կուսակցությունները ճանաչեցին Օսմանյան Թուրքիայի տարածքային ամբողջականությունը և համապատասխան փոփոխություններ մտցրին իրենց ծրագրերում: Դաշնակցությունը սկսեց համագործակցել երիտթուրքերի կուսակցության ու թուրքական կառավարության հետ: Հրաժարվելով դրսի միջամտությունից՝ Հայկական հարցի լուծումը նա փորձեց կապել թուրքական սահմանադրական միապետության ժողովրդավարացման հետ որպես երկրի ներքին խնդիր: Քանի որ ՀՅԴ-ն իր քաղաքական նպաստն էր բերել երիտթուրքերի հաղթանակին, ուստի սահմանադրության չրջանակներում օրինականորեն գործելու հնարավորություն ստացավ: Նա դադարեցրեց ընդհատակյա գործունեությունը, ցրեց հայդուկային խմբերը, օրակարգից հանեց

արևմտահայությանը ընդհանուր զինված ապստամբության նախապատրաստելու հարցը:

Դաշնակցությանը թվացել էր, թե ստեղծվել է պատմական հնարավորություն հաշտեցնելու երկու ժողովուրդներին և առանց արտաքին ուժերի միջամտության համատեղ որոնելու Արևմտյան Հայաստանի կարգավիճակի վերաբերյալ երկուստեք ընդունելի տարբերակ:

1908 թ. հեղաշրջումից հետո ինչպես Դաշնակցության, այնպես էլ Հնչակյան կուսակցության ղեկավարներից չատերը հավաքվել էին Կ. Պոլսում: Բայց «Հնչակը», ի տարբերություն Դաշնակցության, խանդավառված չէր ո՛չ օսմանյան հեղաշրջումով և ո՛չ էլ սահմանադրության վերականգնումով: Ավելին, Հնչակյանները հենց սկզբից համոզված էին, որ երիտթուրքերի հեղաշրջումը խաբուսիկ է, և որ իրենց կուսակցությունը լիակատար վստահություն չունի երիտթուրքական իշխանությունների հանդեպ:

Այնուամենայնիվ, չատերին թվում էր, թե ստեղծվել է պատմական հնարավորություն՝ հաշտեցնելու երկու ժողովուրդներին և առանց արտաքին ուժերի միջամտության համատեղ որոնելու Արևմտյան Հայաստանի կարգավիճակի վերաբերյալ փոխադարձ ընդունելի տարբերակ: Այդ մտայնությանը նպաստեցին բանտերից քաղբանտարկյալների ազատումը, 1908 թ. հոկտեմբերին բացված երկրի խորհրդարանը (մեջլիս), որի 230 պատգամավորական տեղերից 10 տեղ հատկացվել էր հայերին և այլն:

Կյանքը ցույց տվեց, որ իշխանության տիրացած երիտթուրքերը պատրաստ չէին երկխոսության կայսրության այլազգիների, հատկապես հայերի հետ: Կառավարող չրջանների գլխավոր մտահոգությունը պետության փլուզման կասեցումն էր, կայսրության ամբողջականության պահպանումը: Ավելին, Աբդուլ Համիդն ու երկրի միապետական ուժերը զաղտնի նախապատրաստություններ էին տեսնում վերականգնելու սուլթանական բացարձակ միապետությունը: 1909 թ. մարտի 31-ին նա հեղաշրջում կազմակերպեց, բայց կառավարությանը հավատարիմ զորքերը վերականգնեցին երիտթուրքերի իշխանությունը:

Սուլթանը գահընկեց արվեց: Երիտթուրքերը գահ բարձրացրին նրա եղբորը՝ Մեհմեդ V-ին:

գ. Կիլիկիահայության կոտորածը: Երիտթուրքերը աստիճանաբար սաստկացրին ազգային հալածանքները, ազգայնամոլությունը բարձրացրին պետական քաղաքականության աստիճանի: Ազգային քաղաքականություն կիրառելիս նրանք հանդիսացան Աբդուլ Համիդ II-ի հավատարիմ ժառանգորդները: Ամրապնդելով իրենց իշխանությունը՝ երիտթուրքերը ծրագրեցին ուժգին հարված հասցնել հատկապես հայությանը: Այս անգամ թուրքական յաթաղանը ոթեց Կիլիկիայի հայության արյունը:

XX դարի սկզբին Ադանայի նահանգի բնակչության մեծ մասը՝ մոտ 400 հազարը, և Ադանա քաղաքի 60 հազար բնակչությունից 22 հազարը հայեր էին: Նրանք հանդիսանում էին նահանգի տնտեսության առաջատար ուժը: Առաջին հարվածը հասցվեց իր բարեկեցությամբ ու մշակույթով աչքի ընկնող Ադանա քաղաքի հայությանը: Իշխանությունները ցանկանում էին ոչ միայն ֆիզիկապես ոչնչացնել հայությանը, այլև, որ ջարդարարների համար շատ կարևոր էր, տեր դառնալ նրա ունեցվածքին: 1909 թ. ապրիլի 1-ին Ադանայի իշխանությունների կարգադրությամբ թուրքերը ներխուժում են քաղաքի հայկական թաղամասերը և սկսում կոտորածն ու թալանը: Զոհվում են հազարավոր հայեր, այդ թվում՝ հիմնականում կանայք, երեխաներ և ծերեր: Երեք օր անընդմեջ քաղաքում շարունակվում էին ահավոր ոճրագործությունները՝ խլելով 18 հազար մարդու կյանք: Կոտորածներին մասնակցում են նաև օսմանյան զորքերը:

Ադանայից սկսելով՝ հայերի ջարդերը տարածվեցին Կիլիկիայի համարյա բոլոր քաղաքներում ու գյուղերում: Բայց թուրք և քուրդ ելուզակներին միշտ չէ, որ հաջողվում էր անարգել հաշվեհարդար տեսնել հայ բնակչության հետ: Կիլիկիայի մի շարք վայրերում հայերը կարողացան դիմադրություն կազմակերպել:

Դյորթ-Յոլ գյուղում 400 հոգի դիմազրավում են թուրքերի և քրդերի միացյալ գերակշիռ ուժերին: Ինքնապաշտպանությունը գլխավորում է Միհրան Մելքոնյանը: Տղամարդկանց էին միացել

նույնիսկ գերանդիներով և եղաններով զինված 100 կանայք ու մանկահասակներ: Թուրքերը 13 օր շարունակ անընդհատ հարձակումներ են գործում գյուղի վրա, բայց ապարդյուն: Օտարերկրյա հյուպատոսների միջնորդության և հայերի հերոսական դիմադրության շնորհիվ հակառակորդը ստիպված դադարեցնում է Դյորթ-Յոլի պաշարումը: Ջարդարարներին դիմազրավում է նաև Սիս քաղաքի հայությունը՝ շուրջ 1500 հոգի: Ղևոնդ վարդապետ Թուրսարգսյանի և Գյուտ վարդապետի ղեկավարությամբ հայերն ապաստանում են վանքում և ուժգին դիմադրում ջարդարարներին: Մեկշաբաթյա պաշարումից հետո հակառակորդը ստիպված հեռանում է:

Շեյխ Մուրադի երիտասարդության հնգօրյա դիմադրության շնորհիվ գյուղի բնակչությունը կարողանում է հեռանալ և ապաստանել Ադանայում:

Կիլիկիայի հայության հերոսական ինքնապաշտպանության նշանավոր էջերից էր Հաճընի 12-օրյա դիմադրությունը: Քաղաքի հայությունը Ներսես վարդապետի գլխավորությամբ դիմազրավում է թուրքական բազմահազար ուժերին: Ի վերջո, Մերսին քաղաքի անգլիական հյուպատոսի միջամտությամբ պաշարումը դադարեցվում է:

Մարաշ քաղաքում թուրքական իշխանությունները չեն համարձակվում տեղի հայության նկատմամբ բռնություն գործադրել, քանի որ երկյուղում էին զեյթունցիների պատասխան հարձակումից: Վերջիններս իշխանություններին սպառնացել էին, որ Մարաշի հայերի կոտորածի դեպքում Զեյթունն անտարբեր չի մնա իր հայրենակիցների ճակատագրի հանդեպ:

Ինքնապաշտպանական մարտեր տեղի ունեցան նաև հայկական այլ բնակավայրերում:

Ընդհանուր առմամբ Կիլիկիայի հայության կոտորածներին զոհ է գնում շուրջ 40 հազար մարդ: Հայերի նյութական կորուստը հաշվվում էր տասնյակ միլիոնավոր ֆրանկ: Կիլիկիահայությունը հայտնվել էր սովի ճիրաններում ու հոգեկան տառապանքների մեջ:

դ. Պանթուրքիզմ: Երիտթուրքական կուսակցության ու վարչակարգի ներքին և արտաքին քաղաքականության առանցքը դարձավ պանթուրքիզմը: Երիտթուրքերի ազգայնամոլական

գաղափարախոսության գերնպատակն էր համախմբել թուրքալեզու բոլոր ժողովուրդներին մեկ միասնական թուրքական պետության՝ Մեծ Թուրանի մեջ: Ըստ էության ստեղծվելու էր թյուրքալեզու Արևելյան կայսրություն, որն ընդգրկելու էր Բոսֆորից մինչև Չինաստան և Սառուցյալ օվկիանոս ընկած տարածքները:

Ընդունելով պանթուրքիզմի գաղափարախոսությունը՝ երիտթուրքերը գնացին ազգային հիմնախնդիրները, առաջին հերթին Հայկական հարցը ամենավայրագ ու բարբարոսական եղանակներով լուծելու ճանապարհով:

Երիտթուրքական հեղաշրջումը և դրան հաջորդած ժամանակաշրջանը իսկական փորձություն էր հայ ազգային-քաղաքական ուժերի համար: Իրադարձությունների զարգացմանը համընթաց փոխվում էին նրանց ծրագրերն ու մարտավարությունը: Քաղաքական ասպարեզ մտան նաև ազգային նոր կազմակերպություններ: Դրանցից էր 1908 թ. հոկտեմբերի վերջին Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքում ստեղծված Հայ սահմանադրական ռամկավար կուսակցությունը: Ռամկավար կուսակցությունն իր ծրագրում նշում էր, որ հեղափոխական կուսակցությունների գոյության անհրաժեշտություն այլևս չկա: Ռամկավարները գործում էին գլխավորապես Վան-Վասպուրականում, որտեղ կուսակցությանն անդամագրվեց նախկին արմենականների զգալի մասը:

1908-1914 թթ. հայ քաղաքական կուսակցությունների պատմության բարդ ու հակասական ժամանակաշրջանն էր, երբ լիովին բացահայտվեց երիտթուրքական իշխանությունների իրական դեմքը, Դաշնակցությունը դադարեցրեց համագործակցությունը երիտթուրքերի հետ: Փաստելով արևմտահայության կացության աստիճանական վատթարացումը՝ կուսակցությունը Հայկական հարցի լուծումը նորից կապեց մեծ տերությունների, առաջին հերթին Ռուսաստանի աջակցության հետ: Երիտթուրքերի կուսակցության՝ Իթթիհատի պանթուրքական քաղաքականության դեմ պայքարի բացահայտ ճակատ բացեց նաև Հնչակյան կուսակցությունը, որը միշտ անվստահություն էր տածում նրա նկատմամբ՝ թե՛ նախկինում և թե՛ իշխանության գալուց հետո: Այդ էր պատճառը, որ նա երիտթուրքերի կողմից

ենթարկվում էր հետապնդումների: 1912-1913 թթ. Բալկանյան պատերազմների ժամանակ, երբ կրկին արծարծվեց Հայկական հարցը, երիտթուրքերը Հնչակյաններին առաջարկեցին բանակցություններ սկսել հայկական վիլայեթներում բարենորոգումներ անցկացնելու շուրջ: Բայց Հնչակյանները մերժեցին առաջարկը և բանակցություններ սկսելու նախապայման համարեցին Արևմտյան Հայաստանի ինքնավարության սկզբունքի ընդունումը:

Այսպիսով, հայ ազգային-քաղաքական կուսակցությունները համոզվեցին, որ պանթուրքիզմը դարձնելով պետական քաղաքականության առանցք՝ երիտթուրքերը չարունակում են հայերին ոչնչացնելու աբդուլհամիդյան ծրագիրը: Հայ ազատամարտի ղեկավար ուժերը նորից փոխեցին իրենց մարտավարությունը և վերսկսեցին պայքարը Հայկական հարցի լուծման համար:

Ե. Հայկական հարցի վերաբացումը: Ռուս-թուրքական համաձայնագիրը: Երիտթուրքերի տիրապետությունը ոչ միայն որևէ էական փոփոխություն չմտցրեց ազգային փոքրամասնությունների, այդ թվում արևմտահայության դրության մեջ, այլև, ընդհակառակը, վատթարացրեց այն: 1912 թ. ամռանը բալկանյան երկրները (Սերբիա, Բուլղարիա, Հունաստան, Չեռնոգորիա) ստեղծեցին ռազմական դաշինք՝ նպատակ ունենալով թուրքերին վերջնականապես դուրս մղել իրենց տարածաշրջանից: Հոկտեմբերին նրանք պատերազմ սկսեցին Օսմանյան Թուրքիայի դեմ (Բալկանյան առաջին պատերազմ): Պատերազմի առաջին շրջանում (1912-1913 թթ.) հայկական կամավորական մի գումարտակ Անդրանիկի և Գարեգին Նժդեհի գլխավորությամբ բուլղարական բանակի շարքերում կռվում էր թուրքերի դեմ:

Բալկանյան ժողովուրդների հաջողությունները ոգևորեցին արևմտահայությանը: Հայկական հարցի արծարծման համար առաջացավ նպաստավոր իրավիճակ: Տվյալ ժամանակահատվածում հատկապես մեծ դեր խաղաց Ռուսաստանի բարյացակամ վերաբերմունքը: Էլ ավելի ամրապնդվեց արևմտահայության ռուսական կողմնորոշումը:

1912 թ. սեպտեմբերին Թիֆլիսում հրավիրվեց հայ հասարակական տարբեր խավերի ներկայացուցիչների ժողով: Հաջոր-

դեցին ևս մի քանի նման ժողովներ, որոնց արդյունքում ստեղծվեց Հայոց ազգային կենտրոնական բյուրոն (Հայտնի է որպես Հայոց ազգային բյուրո անվամբ): Այս նորաստեղծ մարմնի գործունեության գլխավոր նպատակը Հայկական հարցի լուծմանը նպաստելն էր:

1912-1913 թթ. Բալկաններում Օսմանյան Թուրքիայի կրած պարտությունները քաղաքական աշխուժություն առաջացրին հայերի շրջանում: Ելնելով ստեղծված բարենպաստ իրավիճակից՝ հայկական ղեկավար մարմինները մեծ տերությունների ուշադրությունը հրավիրում են հայկական վիլայեթներում բարենորոգումներ իրականացնելու անհրաժեշտության վրա:

1912 թ. հոկտեմբերի 2-ին Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ն պաշտոնապես դիմում է Կովկասի փոխարքա Ի. Վորոնցով-Դաշկովին՝ խնդրելով հարց բարձրացնել ցարի առջև՝ Բեռլինի կոնգրեսի 61-րդ հոդվածը վերակենդանացնելու համար: Նոյեմբերի 10-ին կաթողիկոսը եգիպտահայ նշանավոր քաղաքական և հասարակական գործիչ Պողոս Նուբար փաշային լիազորում է մեծ տերություններին ներկայացնել հայկական բարենորոգումների խնդիրը:

Ռուսաստանի արտգործնախարարությունը վեց տերությունների ուշադրությունը հրավիրում է Արևմտյան Հայաստանում անհապաղ բարենորոգումներ անցկացնելու անհրաժեշտության վրա:

Անտանտի երկրների Կ. Պոլսի դեսպանությունների մեկական ներկայացուցիչներից կազմվում է հանձնաժողով, որը քննության է առնում ռուսական դեսպանության առաջին թարգմանիչ Անդրեյ Մանդելշտամի կազմած նախագիծը և հունիսի 4-ին ներկայացնում երեք երկրների դեսպաններին:

Ռուսական, անգլիական և ֆրանսիական կառավարությունները համաձայնության են գալիս՝ կազմել Թուրքիայի հայկական վիլայեթներում բարենորոգումներ կատարելու համատեղ նախագիծ: 1913 թ. հունիսի 4-ին Ա. Մանդելշտամը ներկայացնում է բարենորոգումների ռուսական տարբերակը: Այն նախատեսում էր հայկական վեց վիլայեթներից (Էրզրում, Վան, Բիթլիս, Դիարբեքիր, Խարբերդ, Սեբաստիա) կազմել մեկ նահանգ: Վարչական այս միավորը ղեկավարվելու էր Թուրքահպատակ

քրիստոնյայի կամ եվրոպացի գեներալ-նահանգապետի կողմից, որը պետությունների առաջարկությամբ նշանակելու էր սուլթանը: Գործադիր իշխանության ղեկավար գեներալ-նահանգապետին էին ենթարկվելու ոստիկանական և զինվորական ուժերը: Նահանգի օրենսդիր մարմինը կազմվելու էր տեղի մահմեդական և քրիստոնյա բնակչությունից: Առաջարկվում էր վերացնել «համիդիե» գնդերը, նահանգի տարածքում արգելվելու էր մուհաջիրների բնակեցումը: Հայերը ետ էին ստանալու իրենցից հափշտակված հողերը կամ ստանալու էին փոխհատուցում և այլն: Բարենորոգումների անցկացման հսկողությունն իրականացնելու էին մեծ տերությունները:1913 թ. հունիսի 30-ին վեց տերությունների դեսպանների մասնակցությամբ սկսվեց խորհրդաժողովը: Հայկական հարցի քննարկումը ժամանակագրական առումով զուգադիպեց Բալկանյան երկրորդ պատերազմին: Հայկական հարցի լուծման համար միջազգային պայմաններն անբարենպաստ էին:

Ռուսական կողմի ներկայացրած բարենորոգումների ծրագիրը հանդիպեց հատկապես Գերմանիայի առարկությանը: Վերջինս ձգտում էր թույլ չտալ, որ Թուրքիայում ուժեղանան Ռուսաստանի, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի դիրքերը: Ստանալով գերմանացիների և ավստրիացիների աջակցությունը օսմանյան կառավարությունը հայկական վիլայեթներում բարենորոգումների ծրագիրը ձախողելու զանազան խոչընդոտներ էր հարուցում: Բանակցություններ են սկսվում Ռուսաստանի և Գերմանիայի միջև: Ի վերջո, 1913 թ. սեպտեմբերին թուրքական կառավարությանն է ներկայացվում վեց կետից բաղկացած մի նախագիծ, որը նախատեսում էր հայկական նահանգներից կազմել երկու վարչական միավոր:

Ծրագիրը թեև ստացավ Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի կառավարությունների հավանությունը, բայց հանդիպեց թուրքերի դիմադրությանը: Վերջապես 1913 թ. հոկտեմբերի 10-ին օսմանյան կառավարությունը պաշտոնապես տեղեկացնում է ռուսական կողմին, որ ինքը պատրաստ է իրագործել հայկական վիլայեթներում բարենորոգումների ռուս-գերմանական միացյալ ծրագիրը:

1914 թ. հունվարի 26-ին կնքվում է Արևմտյան Հայաստա-

նում բարենորոգումներ իրականացնելու վերաբերյալ ռուս-թուրքական համաձայնագիր: Այն նախատեսում էր Արևմտյան Հայաստանը բաժանել երկու նահանգի: Առաջին նահանգի մեջ մտնելու էին Էրզրումի, Տրապիզոնի և Սեբաստիայի, իսկ երկրորդի մեջ Վանի, Բիթլիսի, Դիարբեքիրի և Խարբերդի վիլայեթները: Նահանգապետների (վերատեսուչների) թեկնածությունները առաջադրելու էին եվրոպացիները և հաստատելու էր սուլթանը: Նահանգապետների ենթակայության ներքո էին գտնվելու վարչական, դատական և ոստիկանական իշխանությունները: Հողային հարցերը պետք է վճռվեին նահանգապետի անմիջական միջամտությամբ: Նահանգներում պաշտոնական գրագրությունը կատարվելու էր տեղի ժողովուրդների լեզուներով (հայերեն, քրդերեն և թուրքերեն):

Նահանգապետներն ունենալու էին գինված ուժեր, որոնք պետք է հետևեին ներքին կարգ ու կանոնին: Հայերին արտոնվում էր զենք կրել: Նահանգների վարչական խորհուրդները կազմվելու էին հավասար թվով մահմեդականներից ու քրիստոնյաներից: Նույն սկզբունքը պետք է կիրառվեր ոստիկանական և այլ պաշտոններ բաշխելիս: Ազգային դպրոցների պահպանման ծախսերն իր վրա էր վերցնում օսմանյան պետությունը:

Նորություն էին նաև պաշտոնական հարաբերություններում ազգային լեզուներին տեղ տալը, համայնքների կրթության ծախսերին մասնակցելը, խաղաղ ժամանակ զինվորական պարտականությունները բնակության վայրում կատարելու վերաբերյալ կետը: Հունվարի 26-ի համաձայնագիրը միաժամանակ մեկ քայլ հետ էր բարենորոգումների ռուսական սկզբնական ծրագրից: Կրճատվել էին հայերի իրավունքները: Այստեղ չէր խոսվում Հայկական երկրամասի մասին, այլ միայն գործածվում էր Արևելյան Անատոլիա բառակապակցությունը: Համիդիե զորագնդերը փաստորեն պահպանվում էին:

Անչուշտ, 1914 թ. ռուս-թուրքական համաձայնագիրը Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածից մեկ քայլ առաջ էր: Այն առավելություն ուներ նաև 1895 թ. բարենորոգումների Մայիսյան ծրագրի նկատմամբ, որում խոսք չկար ինչպես հայկական մեկ կամ երկու նահանգներ ստեղծելու, այնպես էլ հայկական վիլայեթների համար քրիստոնյա կառավարիչ նշանակելու և այդ կապակցությամբ տերությունների համաձայնության մասին:

1914 թ. գարնանը Արևմտյան Հայաստանի նահանգապետներ են նշանակվում հոլանդացի զիվանագետ Լ. Վեստենենկը և նորվեգացի գնդապետ Մ. Հոֆը: Նրանք նոր էին անցել իրենց պարտականությունների կատարմանը, երբ բռնկվեց Առաջին համաշխարհային պատերազմը: Հայկական բարենորոգումներն այդպես էլ չիրականացան:

2. ՍՈՑԻԱԼ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՐՄԱՏԱԿԱՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ա. Արևելյան Հայաստանի սոցիալ-տնտեսական կացությունը: XX դարի սկզբին հայ ժողովուրդը շարունակում էր երկատված մնալ Օսմանյան և Ռուսական կայսրությունների միջև: Դեռևս հետռեֆորմյան շրջանից սկսած՝ Ռուսաստանում կապիտալիստական հարաբերությունները ներառում էին նաև կայսրության ծայրամասերը, այդ թվում՝ Անդրկովկասը: Աստիճանաբար ավելի էին ընդլայնվում Կենտրոնական Ռուսաստանի և Անդրկովկասի հայկական նահանգների տնտեսական կապերը: Հաղորդակցության արդիական ուղիների ստեղծման շնորհիվ Արևելյան Հայաստանի գլխավոր քաղաքներն ու տնտեսական շրջանները կապվում էին միմյանց, ինչպես նաև՝ Անդրկովկասի ու Ռուսաստանի տարբեր քաղաքների ու շուկաների հետ: Անդրկովկասում տնտեսության, մասնավորապես արդյունաբերության զարգացմանը նպաստեց երկաթուղու շինարարությունը, որը սկսվեց XIX դարի 60-ական թվականներից և շարունակվեց մինչև Առաջին համաշխարհային պատերազմը: 1883 թ. սկսեց գործել Բաքու-Թիֆլիս-Բաթում, իսկ 1899 թվականից՝ Թիֆլիս-Ալեքսանդրապոլ-Կարս երկաթուղին: XX դարի սկզբին շարք մտան երկաթուղու Ալեքսանդրապոլ-Երևան, Ուլուխանլու-Ջուլֆա և Կարս-Սարիղամիշ հատվածները: Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին Հայաստանի երկաթուղիների երկարությունը կազմում էր 380 կմ: Կառուցվեցին նաև Թիֆլիս-Ալեքսանդրապոլ-Երևան-Ջուլֆա և այլ խճուղային ճա-

նապարհներ՝ մեծապես նպաստելով Արևելյան Հայաստանի տնտեսական զարգացմանը: Երկաթուղին և բարեկարգ ճանապարհները միաժամանակ արագացնում էին գյուղի նահապետական կյանքի քայքայումն ու բնակչության սոցիալ-դասակարգային շերտավորումը:

Հաղորդակցության ուղիների ընդլայնումը, ինչպես նաև կապի միջոցների ու տեխնիկայի ներդրումը մեծապես նպաստեցին Ռուսաստանի կենտրոնական արդյունաբերական նահանգների ու Արևելյան Հայաստանի միջև ապրանքաշրջանառության աճին:

Հայաստանում արդյունաբերության առաջատար ճյուղը մնում էր լեռնահանքային արդյունաբերությունը: Շարունակվում էր Ալավերդու և Զանգեզուրի (Կապանի) պղնձահանքերի շահագործումը: Եթե XX դարասկզբին Հայաստանի ձեռնարկություններում ձուլվել էր 71,5 հազար փութ պղինձ, ապա 1913 թ. այդ ցուցանիշը հասավ 343 հազար փթի:

Պղնձարդյունաբերությունից հետո իր տեսակարար կշռով երկրորդ տեղում էր սպիրտ-կոնյակի արտադրությունը, որը կենտրոնացած էր գլխավորապես Երևանում: 1907 թ. միայն Երևանի նահանգում կոնյակի գործարանների թիվը հասել էր 10-ի: Կոնյակի և օղու արտադրությամբ Անդրկովկասում Արևելյան Հայաստանը երկրորդ տեղում էր՝ զիջելով Վրաստանին: Սպիրտը և կոնյակը Հայաստանից արտահանվում էր Ս. Պետերբուրգ, Մոսկվա, Վարշավա, Թիֆլիս, Բաքու, նաև Պարսկաստան և այլուր: Երևանի նահանգում արտադրված կոնյակի տեսակներից աչքի էր ընկնում հատկապես ռուս կապիտալիստ Ն. Շուստովի գործարանի «Արարատ» մակնիշով վաճառահանվող կոնյակը, որը մեծ պահանջարկ ուներ կայսրությունում:

XX դ. սկզբից զարգացում ապրեց աղի արտադրությունը: Նշանավոր էին Կողբի և Կաղզվանի հարուստ պաշարներ ունեցող աղահանքերը: Կողբի հանքահորերում տեղադրված ներարտադրական երկաթգծերը և զանազան այլ սարքավորումներ նպաստեցին աղի արտադրության կտրուկ աճին: Շուկայում մեծ պահանջարկ ունեին ոչ միայն հայկական կոնյակը և աղը, այլև բամբակը, մետաքսագործության և գորգագործության արտադրանքները: Դարասկզբին վերելք ապրեց հատկապես բամբակի

մշակումը: Երևանի և Ելիզավետպոլի նահանգները դարձան բամբակի հումքի չտեմարաններ: Եթե բամբակի արտադրությունը Արևելյան Հայաստանում 1910 թ. կազմել էր 382 հազար փութ, ապա 1914 թ. միայն Երևանի նահանգում մշակվել էր 700 հազար փութ բամբակ: Ստացված հումքի զգալի մասը արտահանվում էր Ռուսաստանի տեքստիլ արդյունաբերության շրջաններ:

Երևանի և Ելիզավետպոլի նահանգներում, հատկապես Օրդուբադի և Շուշիի գավառներում, նոր թափ ստացավ մետաքսաթելի արտադրությունը: Դրանցով զբաղվող գործարանները սերտ կապերի մեջ էին մետաքսի առևտրով զբաղվող ռուսական խոշոր ընկերությունների հետ: Մետաքսաթելն ուղարկվում էր Մոսկվա, Վարշավա և այլ քաղաքներ: XIX դարավերջին և XX դարասկզբին Արևելյան Հայաստանի մանր և միջին ձեռնարկություններում, որոնց մեջ գերակշռում էր գյուղատնտեսական արտադրությունը, տեղի էին ունենում արմատական փոփոխություններ: Շոգեշարժ սարքերը աստիճանաբար դուրս էին մղում ձեռքի աշխատանքը և բարձրացնում աշխատանքի արտադրողականությունը:

Արևելյան Հայաստանում և երկրամասի մյուս վայրերում բանվորների շարքերը, բացի գյուղացիներից, համալրում էին նաև արհեստավորները: XX դարի սկզբին Արևելյան Հայաստանում բանվորների թիվը, առանց գյուղական բանվորության, կազմում էր 20-22 հազար: Այսպիսով, ռուսական կայսրության կենտրոնական նահանգներում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական լայն տեղաշարժերը մեծապես նպաստեցին նաև նրա ազգային ծայրամասերի, այդ թվում և Արևելյան Հայաստանի սոցիալ-տնտեսական վերելքին: Փոխվեց բնակչության սոցիալական կառուցվածքը, աշխարհայացքն ու կենցաղը:

Եթե արդյունաբերության մեջ չչափելի փոփոխություններ էին կատարվում, ապա գյուղատնտեսության առաջընթացը դանդաղում էր: Դրա հիմնական պատճառը բարեփոխումների ձգձգումն էր և գյուղացիության սակավահողությունը: Միայն 1912 թ. դեկտեմբերի 20-ի օրենքով գյուղացիներին թույլատրվեց ետ գնել իրենց հողերը՝ որպես մասնավոր սեփականություն: Հայկական գյուղը չուկայական հարաբերությունների

ոլորտ մուտք գործեց ստոլիպինյան վերափոխումների շնորհիվ: Ռուսական կառավարությունը, ելնելով իր ռազմավարական քաղաքականությունից, շարունակում էր կենտրոնական նահանգներից Անդրկովկաս, այդ թվում և Հայաստան փոխադրել ռուս վերաբնակիչներ: Կառավարությունը անտեսում էր այն փաստը, որ երկրամասը առանց այդ էլ սակավահող է:

Դարասկզբին աճեց ցորենի և գարու արտադրությունը, որը հիմնականում կենտրոնացավ երկրի նախալեռնային վայրերում՝ Կարսի մարզում, Ալեքսանդրապոլի և Նոր Բայազետի գավառներում: Էջմիածնի և Երևանի գավառները դառնում են խաղողագործության և այգեգործության, Լոռին, Կարսի մարզը, Ալեքսանդրապոլը, Նոր Բայազետը՝ անասնապահության, Սուրմալուի գավառը՝ բամբակի, Արցախը և Նախիջևանի գավառը՝ մետաքսի արտադրության գլխավոր կենտրոններ:

Հողագործությունից կտրվելու հետևանքով գյուղացիության որոշ շերտեր հեռանում էին հայրենի գյուղերից և աստիճանաբար դառնում քաղաքաբնակ: XIX դարի երկրորդ կեսից մինչև 1913 թ. Արևելյան Հայաստանում մոտ 2,5 անգամ աճեց քաղաքային բնակչությունը: Դարավերջին և XX դարի սկզբին քաղաքային բնակչության զարգացումը հետևյալ պատկերը ուներ: Եթե 1897 թ. Երևանում բնակվում էր 29 հազար մարդ, ապա 1910 թ. այն հասնում է 32 հազարի: Ալեքսանդրապոլում համապատասխանաբար՝ 32 հազարից հասնում է 35 հազարի, Շուշիում՝ 31 հազարից 42 հազարի, Կարսում՝ 21 հազարից 30 հազարի:

Զևավորվեցին հայ բանվորությունը և կապիտալիստական հասարակախավը, որոնց մեծ մասը կենտրոնացած էր արդյունաբերական Բաքվում, Բաթումում և Կովկասի փոխարքայության կենտրոն Թիֆլիսում:

Մի շարք խոշոր արդյունաբերողներ, ինչպիսիք են Ա. Մանթաշյանը, Միրզոյան եղբայրները, Տեր-Ղուկասյան եղբայրները, Ն. Արամյանցը, իրենց կապիտալը հիմնականում ներդրել էին Բաքվի արդյունաբերության մեջ: Թիֆլիսի թեթև և սննդի արդյունաբերության ոլորտում մեծ էր հայ ձեռնարկատերերի (Ադելխանով, Ալիխանով, Էնֆիաջյանց և ուրիշներ) տեսակարար կշիռը: Հայ գործարարներից շատերը նաև մեծահամբավ բարեգործներ էին: Նրանց անձնական միջոցներով բացվում էին դպրոցներ ու հիվանդանոցներ, հիմնվում էին եկեղեցիներ: Նյութական մեծ օգնություն էր ցույց տրվում մշակույթի գործիչներին: Հայ բարեգործները միջոցներ չէին խնայում շնորհալի երիտասարդներին Եվրոպայի և Ռուսաստանի առաջատար բուհեր ուղարկելու համար, որոնց մեծ մասը, որակյալ մասնագետներ դառնալով, վերադառնում էին Անդրկովկաս՝ իրենց մեծ նպաստը բերելով երկրամասի զարգացմանը:

բ. 1903 թ. հունիսի 12-ի ցարական հրամանագիրը և դրա հետևանքները: Ցարական կառավարության ազգահալած քաղաքականությունը, որ սկսվել էր XIX դարի 80-ական թվականների վերջերին, ավելի սաստկացավ 1896 թ. Կովկասի կառավարչապետ նշանակված իշխան Գ.Գոլիցինի օրոք: Կառավարչապետը հենց սկզբից որոշակի քայլեր ձեռնարկեց Հայ Առաքելական եկեղեցու իրավունքները սահմանափակելու և հայկական լուսավորչական կրթական հաստատությունների գործունեությունը ամբողջովին վերահսկելու նպատակով:

1896 թ. 230 հայկական տարրական դպրոցներ եկեղեցու տնօրինությունից հանվելով՝ հանձնվեցին լուսավորության նախարարությանը: Մայրենիով թույլատրվեց միայն հայոց լեզվի և կրոնագիտության ուսուցումը: Իրականում դա նշանակում էր տարրական դպրոցների վերացում: Հայ եկեղեցուն մնացել էին միայն թեմական դպրոցները: XX դարի սկզբին հայկական մշակութային միությունների, դպրոցների, մամուլի, մտավորականության դեմ իրականացվող բռնություններն արտահայտվեցին նոր ուժով: Գ.Գոլիցինի սադրանքով ռուսաստանյան թերթերը ողողվեցին հակահայկական հոդվածներով: Թշնամական մթնոլորտ ստեղծվեց Հայ Առաքելական եկեղեցու շուրջ: Կովկասի կառավարչապետը կազմեց նրա ունեցվածքի բռնագրավման ծրագիր:

Հայոց եկեղեցու սեփականության իրավունքները ցարական իշխանությունների կողմից հաստատվել էին 1836 թ., որի համաձայն եկեղեցու ունեցվածքից ստացվող եկամուտների հաշվին պահվում էին հայկական դպրոցները: Մի քանի անհաջող փորձերից հետո իշխան Գոլիցինը, ներքին գործերի նախարար Վ. Պլևեի հովանավորությամբ, կարողացավ Նիկոլայ II-ին

համոզել ընթացք տալ իր կազմած ծրագրին: 1903 թ. հունիսի 12-ին ցարը ստորագրեց Հայ եկեղեցու գույքի բռնագրավման մասին օրենքը, որով եկեղեցու կալվածքները և գույքը պետք է հանձնվեին պետությանը:

Հայ եկեղեցու կալվածքները, գույքը, ավանդները փոխանցվում էին համապատասխան նախարարությունների հաշիվներին: Եկեղեցուն էին թողնվում միայն այն հողերը, որոնց վրա կառուցված էին վանքեր ու եկեղեցիներ: Փաստորեն օրենքն անմիջականորեն ուղղված էր հայ մշակույթի, առաջին հերթին հայ դպրոցի դեմ, քանզի եկեղեցու եկամուտների հաշվին պահվող բազմաթիվ ծխական ու թեմական դպրոցներ ուղղակի փակվեցին:

Ռուսական իշխանությունների այս անհեռատես ու վնասակար քայլը մեծ վրդովմունք առաջացրեց Կովկասի հայության գրեթե բոլոր խավերում: Ամենուր ի նշան բողոքի մարդիկ հրաժարվում էին կատարել ցարական հրամանը: Այդ օրենքի դեմ հանդես եկան բոլոր քաղաքական կուսակցությունները՝ Դաշնակցությունը, հնչակյանները, սոցիալ-դեմոկրատները: Անդրկովկասի բոլոր հայաշատ կենտրոններում տեղի ունեցան ցույցեր, հղվեցին դիմումներ Ամենայն Հայոց կաթողիկոս Մկրտիչ Ա Խրիմյանին՝ պահանջելով ոչ մի զիջում չանել ցարական կառավարությանը: Կաթողիկոսը փորձեց համոզել իշխանություններին՝ ետ կանգնել չմտածված քայլերից, բայց ամեն անգամ ստանում էր մերժում: Դրանից հետո միայն նա ընդդիմադիր դիրք բռնեց՝ իր շուրջը համախմբելով հայ հոգևորականությանը: Եկեղեցու ունեցվածքի հափշտակման ավազակային գործողությունների գլխավոր դերակատարներ Գոլիցինին և ներքին գործերի նախարար Պլևեին հաջողվեց ժամանակավորապես բռնությամբ ավարտին հասցնել հայոց եկեղեցու ունեցվածքի բռնագրավման ծրագիրը:

Բայց ժողովուրդը չէր հանդարտվում: Սկսվեցին զինված ընդհարումներ ոստիկանության հետ: Առաջին խոշոր ցույցը տեղի ունեցավ 1903 թ. հուլիսի 29-ին Ալեքսանդրոպոլում, որին օգոստոսին հաջորդեցին Նախիջևանի և Ախալքալաքի ժողովրդական հավաքները: Օգոստոսի 29-ին Ելիզավետպոլում (Գանձակ) փոխգնդապետ Անդրեևի հրամանով կազակական

երկու վաշտ կրակ բացեցին ցուցարարների վրա, որի հետևանքով սպանվեց ու վիրավորվեց մոտ ութ տասնյակ մարդ: Օգոստոսի 31-ին զինված ընդհարումներ եղան Թիֆլիսում, ուր հայտարարվեց ռազմական դրություն: Սեպտեմբերի 2-ին Բաքվում հայ ցուցարարները ընդհարվեցին ոստիկանության հետ՝ տալով բազմաթիվ զոհեր: Արցախում սկսված հուզումները ճնշելու համար իշխանություններն անգամ գործի դրեցին հրետանի: Այնուհետև զինված հուզումներ ծայր առան Ախալցխայում, Ալեքսանդրոպոլում, Երևանում, Վաղարշապատում, Նախիջևանում և այլ քաղաքներում, Լոռու Դսեղ և Մարց գյուղերում:

Պայքարի ձևերից մեկը դարձավ ռուսական հայատյաց պաշտոնյաների ահաբեկումը, որն իրականացնում էին ազգային - հեղափոխական կուսակցությունները: 1903 թ. հոկտեմբերի 14-ին հնչակյանները մահափորձ իրականացրին Գ.Գոլիցինի նկատմամբ՝ դաշունահարելով նրան: Վերջինս ծանր վիրավորվեց, բայց կենդանի մնաց: Դաշնակցության կողմից ահաբեկման ենթարկվեցին Ելիզավետպոլի փոխնահանգապետ Անդրեևը, Սուրմալուի գավառապետ Բոգուսլավսկին և ուրիշներ: Ցարիզմի քաղաքականությունը ոտքի հանեց նաև հայության մյուս հատվածներին: Պոլսահայ մտավորականությունը պատրիարք Մաղաքիա արք. Օրմանյանի գլխավորությամբ բուռն գործունեություն ծավալեց արևմտահայության շրջանում՝ ի պաշտպանություն Մայր Աթոռի ավանդական իրավունքների: Իր բողոքն ու համերաշխությունը հայտնեց Եվրոպայի ու Ամերիկայի գաղթավայրերի հայությունը: Հայության պայքարը շարունակվեց երկու տարի և, ի վերջո, պսակվեց հաջողությամբ: Հայերին ատելի կառավարչապետ իշխան Գոլիցինը հեռացվեց պաշտոնից, նրան փոխարինեց Կովկասի վերականգնված փոխարքայության նորանշանակ փոխարքա, խոհուն ու լրջմիտ քաղաքագետ Ի. Վորոնցով-Դաշկովը:

Վերջինս ճիշտ կողմնորոշվեց ստեղծված իրադրությունում և Նիկոլայ II-ի առջև միջնորդեց չեղյալ համարելու հակահայ օրենքը: Ցարին հասցեագրած զեկուցագրում ներկայացնելով եկեղեցու ու հոգևորականության հետ հայ ժողովրդի ունեցած սերտ կապը՝ Վորոնցով-Դաշկովն ընդգծում էր, որ հայ եկեղեցու գույքի գրավումը վիրավորել է ժողովրդի զգացմունքները և նրան համարյա գլխովին նետել հեղափոխական շարժման մեջ:

Ռուս-ճապոնական պատերազմում կրած պարտությունները, սկսված Ռուսաստանյան առաջին հեղափոխությունը, ինչպես նաև հայ ժողովրդի համառ դիմադրությունը հարկադրեցին ցարական կառավարությանը հրաժարվելու հակահայ օրենքից: 1905 թ. օգոստոսի 1-ին կայսրը չեղյալ հայտարարեց իր իսկ հաստատած օրենքը, և հայ եկեղեցուն վերադարձվեցին բռնագրավված հողերը, գույքը, դրամը, իսկ տարրական դպրոցները նորից հանձնվեցին եկեղեցու տնօրինությանը:

Գ. Արևելյան Հայաստանը Ռուսաստանյան առաջին հեղափոխության տարիներին (1905-1907 թթ.): 1905 թ. հունվարի 9-ին կիրակի օրվա վաղ առավոտյան Ս. Պետերբուրգի բոլոր շրջաններից տասնյակ հազարավոր բանվորներ սրբապատկերներով և ցարի նկարներով, իրենց ընտանիքի անդամների հետ ցարական պահնորդական բաժնի պրովոկատոր քահանա Գ. Գապոնի նախաձեռնությամբ շարժվեցին Ձմեռային պալատ՝ հանդիպելու իրենց ինքնակալին և նրան հանձնելու աղերսագրերն ու պահանջները՝ հավատալով, որ ցարը տեղյակ չէ իրենց ծանր վիճակից: Բայց ցարական զորքն ու ոստիկանությունը կրակ բացեցին ամբոխի վրա: Սպանվեց ավելի քան 1000 և վիրավորվեց 2000-ից ավելի ցուցարար: Այդ օրը բանվորներն արյունալի դաս առան. գնդակահարվեց ցարի հանդեպ ունեցած նրանց հավատը: Մայրաքաղաքի պրոլետարիատն ընդամենը մի քանի ժամվա ընթացքում խոնարհ ու հեզ զանգվածից վերածվեց իր շահերը գիտակցող ու մարտնչող հզոր ուժի:

Բանվորների խաղաղ ցույցի գնդակոծմամբ Ռուսաստանում սկսվեց Առաջին բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունը: Նպատակն էր տապալել ցարիզմը և երկրում հաստատել ժողովրդավարական կարգեր: Ռուսաստանի մայրաքաղաքում տեղի ունեցած արյունալի սպանդն ալեկոծել էր ամբողջ երկիրը: Մայր առան զանգվածային շարժումներ: Հեղափոխության արձագանքները հասան Անդրկովկաս՝ Թիֆլիս, Բաքու և այլուր: Գործադուլների ալիքը հասավ նաև երկրամասի հայկական նահանգներ: 1905 թ. մարտին գործադուլ հայտարարեցին Ալավերդու հանքարդյունաբերության շրջանի չուրջ 1000 բանվորներ: Միայն տնտեսական զիջումներ կորզելուց հետո բանվորները վերադարձան աշխատանքի: Ապրիլին Անդրկովկասյան երկաթուղում սկսված գործադուլին մասնակցեցին բազմաթիվ հայ բանվորներ:

Հեղափոխական ելույթները, որոնք բացի տնտեսական պահանջներից ունեին քաղաքական ուղղվածություն (ցարիզմի տապալում, սահմանադրական կարգերի հաստատում, դեմոկրատական ազատությունների ձեռքբերում և այլն), իրենց ազդեցությունն ունեցան նաև հայ գյուղացիության վրա: Արդեն 1905 թ. գարնան և ամռան ամիսներին Հայաստանի մի շարք վայրերում, հատկապես Լոռիում, տեղի ունեցան գյուղացիական ելույթներ: 1905 թ. մարտ-ապրիլ ամիսներին հայ ազատամիտ մտավորականների մի խումբ Ռուսաստանի կառավարությանը և Կովկասի փոխարքային ներկայացրեց երկու խնդրագիր, որոնցով պահանջ էր դրվում գումարել Սահմանադիր ժողով, սահմանել խոսքի, մամուլի ազատություն, 8-ժամյա աշխատանքային օր և այլն: Հեղափոխության հզոր ալիքի ճնշման տակ Նիկոլայ II ցարը նորանշանակ փոխարքա Ի. Վորոնցով-Դաշկովի միջոցով սկսեց ավելի մեղմ քաղաքականություն վարել Անդրկովկասում: 1905 թ. աշնանը և ձմռանը հեղափոխական շարժումը Ռուսաստանում հասավ իր գագաթնակետին: Նիկոլայ II-ը հոկտեմբերի 17-ին ստիպված էր մանիֆեստ հրապարակել, որով խոստանում էր դումայի [խորհրդարան] հրավիրում, խոսքի, մամուլի ազատություն և այլն: Այսինքն Ռուսաստանը դառնում էր սահմանադրական միապետություն: Բայց մանիֆեստից հետո էլ հեղափոխական շարժումները երկրում շարունակվեցին: 1905 թ. վերջին նոր գործադուլ բռնկվեց Ալավերդիում: Հեղափոխությունը շարունակում էր աստիճանաբար նոր թափ հավաքել, որը սարսափեցնում էր երկրի հետագա վերելքն ամեն կերպ խոչընդոտող միապետությանը:

Դ. Հայ-թաթարական ընդհարումները: Հեղափոխական ուժերը մասնատելու նպատակով ցարական իշխանությունները սկսեցին գործադրել բազմազգ կայսրության ժողովուրդների միջև կրոնական և ազգային թշնամանք հրահրելու փորձված քաղաքականությունը:

Անդրկովկասում ամենագործուն հեղափոխական տարրի՝ հայության դեմ հանեցին հետամնաց ու մոլեռանդ կովկասյան թաթարներին (ադրբեջանցիներին): Ազգամիջյան կռիվը սկիզբ

առավ Բաքվում: 1905 թ. փետրվարի 6-ին տեղական իշխանությունների և հատկապես Բաքվի նահանգապետ, հայատյաց Մ. Նակաշիձեի հրահրումով թաթարները հարձակվեցին Բաքու քաղաքի հայերի վրա: Մի քանի օր անընդհատ տեղի ունեցած բախումների ընթացքում զոհվեցին հարյուրավոր մարդիկ:

Կոտորածները, սակայն, միայն Բաքվով չսահմանափակվեցին: Այն ազդանշան ծառայեց նաև Անդրկովկասի այլ վայրերի համար: Խաղաղ աշխատանքով զբաղված հայ բնակչությունը ընդհարումների առաջին օրերին անակնկալի եկավ և բավական զոհեր տվեց: Հետագայում միայն հայերը կազմակերպվեցին և հակառակորդին արժանի հակահարված տվեցին: Հայությանը սպառնացող վտանգին դեմ հանդիման հայ քաղաքական ուժերը ձեռնամուխ եղան ինքնապաշտպանության գործին: Հատկապես մեծ էր Հայ հեղափոխական դաշնակցության դերը, որն իր ձեռքը վերցրեց երկրամասի հայության ինքնապաշտպանության կազմակերպման գործը: Հայտնի հայդուկ Նիկոլ Դումանը Բաքվի հայության ինքնապաշտպանության ղեկավարն էր: Նրա գլխավորությամբ Բաքվում համախմբված ջոկատները 1905 թ. վերջերին կարողացան ուժգին հակահարված տալ Թուրք-թաթար հրոսակախմբերին՝ պատճառելով մեծ կորուստներ: Բաքվից հետո Նիկոլ Դումանը ղեկավարեց Երևանի նահանգի ինքնապաշտպանական մարտերը: Արցախում ինքնապաշտպանությունը գլխավորեցին Վարդանն ու Համազասպը, Զանգեզուրում՝ Քեռին (Արշակ Գաֆաֆյան), Թիֆլիսում՝ Արմեն Գարոն (Գարեգին Փաստրմաճյան): Կռիվներում աչքի ընկան նաև բազմաթիվ դաշնակցական ջոկատներ՝ Սևքարեցի Սաքոյի, Դրոյի, Հակոբ Կոտոյանի, Սմբատի, Մուրադի, Սեպուհի, Առաքելի և շատ ուրիշների ղեկավարությամբ:

1905 թ. փետրվարի 18-ին ընդհարումները տեղափոխվեցին Երևան ու Նախիջևան: Կատաղի բախումներ եղան Գանձակի նահանգում, Արցախի կենտրոն Շուշիում: Ընդհարումներ եղան ընդհանրապես այն վայրերում, ուր հայ և թաթար բնակչությունը բնակվում էր չերտրնդմեջ: 1905 թ. օգոստոսի կեսերին Շուշիում սկսված կռիվներին արձագանքեց Բաքուն, որտեղ վերսկսված ընդհարումներն ուղեկցվում էին հայերին պատկանող նավթահանքերի և նավթագործարանների հրդեհումով:

Նոյեմբերի 20-ին Բաքվում սկսվեց և այնտեղից Գանձակ, Թիֆլիս ու Արևելյան Հայաստանի գավառներ տեղափոխվեց ջարդերի նոր՝ երրորդ ալիքը: Սաստիկ կռիվներ տեղի ունեցան Սյունիքում, որտեղ թուրք-թաթարական մեծաթիվ ուժերին դիմագրավում և պարտության էին մատնում հայկական փոքրաթիվ, բայց կազմակերպված խմբերը: Իշխանությունները դրանից անակնկալի եկան և սկսեցին օգնել կովկասյան թաթարներին: Փոխարքայի հովանավորությամբ Ելիզավետպոլի և Բաքվի նահանգներում ստեղծվեց թաթարների Դեֆայի (պաշտպանության) կազմակերպություն, որը թռուցիկներ էր տարածում՝ խաչվող երկու դաշույնների կնիքով, իրականացնում էր ահաբեկչություններ: Այդ օրինակով Երևանի նահանգում ստեղծվեց թաթարների «Ջանբեզարների» (գլխից ձեռք քաշածներ) կազմակերպություն:

Դաշնակցությունը կրկին դիմեց պատասխան գործողությունների: Դրոն ահաբեկեց Բաքվի ջարդերի գլխավոր կազմակերպիչ նահանգապետ Նակաշիձեին: Նման պատժի արժանացան նաև Նախիջևանի հայերի կոտորածի կազմակերպիչ գեներալ Դ. Ալիխանով-Ավարսկին և ուրիշ հայատյաց պաշտոնյաներ: Ինքնապաշտպանության կազմակերպման գործում մեծ ներդրում ունեցավ նաև հնչակյան կուսակցությունը, որի կազմած մարտախմբերը անձնուրաց մասնակցում էին Նախիջևանի, Էջմիածնի, Զանգեզուրի և այլ գավառների հայության ինքնապաշտպանական կռիվներին: Այսպես, Զանգեզուրում էր մարտնչում Փարամազի (Մատթեոս Սարգիսյան) խումբը: Այս դժոխային օրերին իրենց հայրենակիցներին օգնության ձեռք մեկնեցին արևմտահայ ֆիդայիները: Արևելահայ և արևմտահայ ազատամարտիկներին միավորել էր ազգապահպանության և ազգային միասնության վեհ գաղափարը: Ժողովրդի կողքին էր նաև Հայոց եկեղեցին: Հայոց կաթողիկոս Խրիմյան Հայրիկը Թիֆլիսում բանակցում էր մուսուլմանների հոգևոր առաջնորդների հետ, բայց հնարավոր չեղավ դադարեցնել բախումները: Դրանից հետո էր, որ եկեղեցին սկսեց նյութապես օգնել ինքնապաշտպանության կազմակերպիչներին, դրամ տրամադրեց զենք ու զինամթերք ձեռք բերելու համար: Փոխարքայի հետ հանդիպման ժամանակ Հայոց կաթողիկոսը չեշտում էր, որ

իշխանությունների փաստացի անգործության պայմաններում հայերին այլ ելք չէր մնացել, քան զենքը ձեռքին պաշտպանել իրենց կյանքն ու պատիվը: Ազգամիջյան կռիվների վերջին փուլում հայ հասարակական – քաղաքական շրջանակներում սկսեցին քննարկել Հայոց եկեղեցու նախաձեռնությամբ երկրամասի հայկական բնակավայրերը միավորելու և Ռուսաստանի կազմում տարածքային ինքնավարություն ստեղծելու գաղափարը, որը այդպես էլ իրականություն չդարձավ:

Արյունալի ընդհարումները իշխանությունների դրդումով մերթընդմերթ կրկնվեցին մինչև 1906 թ. աշնան սկիզբը: Այդ ժամանակ ռուսական հեղափոխությունն անկում էր ապրում և ցարական իշխանությունները որոշեցին, որ երկրամասում դրությունն ապակայունացնելու անհրաժեշտություն այլևս չկա: Հայ-թաթարական կռիվները ավարտվեցին 1906 թ. սեպտեմբերին: Զնայած 1905-1906 թթ. ազգամիջյան բախման ժամանակ արևելահայությունը մարդկային ու նյութական զգալի կորուստներ կրեց, բայց ձեռք բերեց մարտական լուրջ փորձ: Ավելին, գերիշխող դարձավ հայ ժողովրդի երկու հատվածների միասնականության գաղափարը: Բարձրացավ հայության վստահության աստիճանը սեփական ուժերի նկատմամբ. հայերն արդեն պատրաստ էին հակահարված տալու իրենց ոչ բարյացակամ հարևաններին ու պայքարելու սեփական իրավունքների ու գերակա նպատակների համար:

Ե. Դաշնակցության դատավարությունը: *1907 թ. հունիսի 3-ին Նիկոլայ II-ը ցրեց անհնազանդ 2-րդ Պետական դուման, այսինքն՝ իրականացրեց պետական հեղաշրջում: Այս իրադարձությամբ ավարտվեց Ռուսաստանյան առաջին հեղափոխությունը:*

Հեղափոխության պարտությունից հետո սկսվեց հետադիմության ժամանակաշրջանը: Այս շրջանում մեծ թափ հավաքեց ռուսական մեծապետական շովինիզմը, ուժեղացավ ոչ ռուս ժողովուրդների ազգային-գաղութային ճնշումը: Երկրում «կարգ ու կանոն» հաստատելու համար նախարարների խորհրդի նախագահ Պ. Ստոլիպինը խստացրեց ոստիկանական հսկողությունն ամբողջ երկրում: Քաղաքական հետապնդումները զուգակցվում էին ազգային հալածանքներին: Ռուսական ծայրահեղ հետադիմական մամուլը հակահայկական հուժկու ալիք բարձրացրեց: Ցարական վարչակարգն իրականացրեց ազգային-քաղաքական գործիչների և հայ մտավորականության հալածանքներ ու բանտարկություններ: Հետադիմության շրջանը իսկական փորձություն էր հայ հեղափոխական կուսակցությունների ու առաջադիմական ուժերի համար: Ցարական կառավարության հետապնդումներն ու հալածանքները հատկապես ուղղված էին Դաշնակցության դեմ: Ռուսաստանում գործող դաշնակցական մարմիններն անցան ընդհատակ, շատ դաշնակցականներ ձերբակալվեցին ու բանտարկվեցին: Կուսակցության գործիչների մի մասը հարկադրված հեռացավ արտասահման: Մեկը մյուսի հետևից փակվեցին կուսակցության թերթերը, հրատարակչությունները, արհմիությունները, արգելվեցին հանրահավաքները:

Դաշնակցական խմբապետ Միհրանը (Գաբրիել Քեչիչյան) կուսակցության ղեկավարությունից պահանջում էր զբաղվել միայն արևմտահայության հարցով: Աջակցություն չգտնելով կուսակցության մեծամասնության կողմից՝ Միհրանը որոշեց կազմալուծել Դաշնակցության կենտրոնը և ստեղծել ժամանակավոր զինվորական խորհուրդ: Դա նրան չհաջողվեց: Միհրանը վտարվեց կուսակցության շարքերից: Ցարական իշխանությունները հիմնականում կեղծ մեղադրանքների հիման վրա Դաշնակցության նկատմամբ 1908 թ. հարուցեցին դատական գործ և փորձեցին այն օգտագործել հայ մտավորականությանը հակացարական քաղաքականության մեջ մեղադրելու համար:

Հետաքննությունը տևեց տարիներ: Դաշնակցությանը ներկայացվեցին չինծու մեղադրանքներ՝ բռնի ուժի գործադրմամբ գոյություն ունեցող կարգերը տապալելու, Անդրկովկասը Ռուսաստանից անջատելու և այլ ծանր մեղադրանքներ: Զորս տարում հարցաքննվեց և ձերբակալվեց 2 հազարից ավելի մարդ: 1912 թ. հունվար-մարտ ամիսներին Ս. Պետերբուրգում տեղի ունեցավ դատավարություն: Մեղադրվում էր 159 մարդ, այդ թվում՝ ճանաչված գործիչներ և մտավորականներ Ա. Ահարոնյանը, Հ. Օհանջանյանը, Ա. Սահակյանը, Ա. Գյուլխանդանյանը, Հ. Քաջազնունին, Ս. Տիգրանյանը, Հ. Թումանյանը, Ա. Իսահակյանը և ուրիշներ: Մեղադրվում էին նաև մի քանի հայ գործա-

բարներ: Դատավարության ընթացքում բացահայտվեցին հետաքննության կեղծիքները:

Ի վերջո, դատարանը նախատեսված խստագույն պատիժներից ստիպված էր հրաժարվել. 1912 թ. մարտի 19-ին հայտարարված դատավճռով անմեղ ճանաչվեց 94 մարդ: Տաժանակիր աշխատանքի դատապարտվեց 4 հոգի 4-6 տարի ժամկետով, մնացածները՝ ավելի կարճ ժամկետներով:

Ցարական կառավարության պատրաստած «Դաշնակցության գործ» անունով մեծ դատավարությունը դասվում է Ռուսաստանում տեղի ունեցած քաղաքական մեծ ու աղմկալի դատավարությունների թվին: Գործի համեմատաբար «խաղաղ» վերջաբանն ուներ իր պատճառները: Վերակենդանանում էր Ռուսաստանի քաղաքականությունը Բալկաններում՝ օսմանյան արյունալի տիրապետությունից սլավոնական ժողովուրդներին վերջնականապես ազատագրելու համար: Այդ պայմաններում Ս. Պետերբուրգը խիստ կարևոր համարեց երկրի ներսում հակացարական ուժերի, այդ թվում հայ ազգային հեղափոխական երկու կուսակցությունների՝ դաշնակցության և հնչակյանների գործունեության չեզոքացումը: Բայց հիմնական պատճառը, այնուամենայնիվ, ռուսական մամուլի առաջադեմ օրգանների, հայասեր ռուս գործիչների և առհասարակ ռուսական դեմոկրատական հասարակայնության ճնշումն էր կառավարության վրա:

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ

ա. Ռազմական գործողությունները Կովկասյան ճակատում: 1914 թ. օգոստոսի 1-ին սկսվում է Առաջին համաշխարհային պատերազմը: Այն մղվում էր երկու ռազմա-քաղաքական խմբավորումների՝ Անտանտի (Ռուսաստան, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա) և Քառյակ զինակցության (Գերմանիա, Ավստրո-Հունգարիա, Թուրքիա, Բուլղարիա) միջև: Ե՛վ Անտանտը, և՛ Քառյակ զինակցությունը պատերազմում հետապնդում էին զավթողական նպատակներ: Թուրքիան ձգտում էր գրավել Կովկասը, Ղրիմը, Իրանական Ատրպատականը և Միջին Ասիան: Դրանով իրագործվելու էր երիտթուրքերի պանթուրքական ծրագիրը: Իր հերթին, ցարական Ռուսաստանը նպատակ ուներ գրավել Արևմտյան Հայաստանը, Կ. Պոլիսը, Բոսֆորի և Դարդանելի նեղուցները: 1914 թ. հոկտեմբերի 30-ին Թուրքիան գերմանական «Գեբեն» և «Բրեսլաու» ռազմանավերին թույլատրեց անցնելու Բոսֆորի նեղուցով և ռմբակոծելու ռուսական սևծովյան նավահանգիստները: Ի պատասխան՝ նոյեմբերի 3-ին Ռուսաստանը պատերազմ հայտարարեց Թուրքիային, որի դեմ ռազմական գործողություններն ընթացան Կովկասյան և Բալկանյան ռազմաճակատներում, նաև՝ Սև ծովում:

Ռուս-թուրքական Կովկասյան ռազմաճակատը ձգվում էր Սև ծովից մինչև Ուրմիա լիճը՝ 720 կմ երկարությամբ: Թուրքիան Ռուսաստանի դեմ դուրս բերեց 300 հազարանոց 3-րդ և 4-րդ Անատոլիական բանակները՝ ռազմական նախարար Էնվեր փաշայի հրամանատարությամբ: Ռազմաճակատում ռուսական զորքերի թիվը մոտ 200 հազար էր, որի հրամանատարը մեծ իշխան Նիկոլայ Նիկոլայևիչն էր, իսկ 1916 թ.՝ գեներալ Ն. Ն. Յուդենիչը:

Ի տարբերություն նախկին ռուս-թուրքական պատերազմների, այս անգամ թուրքական կառավարությունը հայերին բանակ զորակոչելու հրաման արձակեց: Ավելին, ներքին գործերի նախարար Թալեաթը Դաշնակցությանը պաշտոնապես առաջարկեց ռուսների դեմ կազմակերպել կամավորական շարժում: Այդ հարցի շուրջ դեռևս 1914 թ. ամռանը թուրքերն էրզրումում բանակցություններ սկսեցին Դաշնակցության հետ: Բայց ինչպես նա, այնպես էլ մյուս հայկական կուսակցությունները կտրականապես մերժեցին թուրքերի առաջարկը, հանգամանք, որ էլ ավելի սրեց հայ-թուրքական հարաբերությունները:

Մյուս կողմից՝ 1914 թ. սեպտեմբերին Նիկոլայ II-ը հատուկ մանիֆեստ ուղղեց հայ ժողովրդին, որով նրա զավակներին կոչ էր անում իբրև կամավորներ զինվորագրվել ռուսական բանակին՝ Արևմտյան Հայաստանը թուրքերի բռնակալությունից ազատագրելու համար: Մանիֆեստի վերջում ցարը խոստանում էր վարձահատույց լինել բազմաչարչար հայ ժողովրդին: Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովը Ամենայն Հայոց կաթողիկոս Գեորգ Ե-ին հավատացնում էր, թե հայերը իրենց նվիրվածության դիմաց, Արևմտյան Հայաստանը թուրքերից գրավելուց հետո, կստանան ինքնավարություն: Հատկանշական է, որ արևմտահայերին նման խոստումներ էր տալիս նաև Թալեաթը՝ Արևելյան (ռուսական) Հայաստանը գրավելու դեպքում: Այս ճակատագրական պահին շուրջ 300 հազար արևմտահայեր զորակոչվեցին թուրքական բանակ, իսկ 200 հազար արևելահայեր՝ ռուսական բանակ:

Արևելահայերի ոգևորությունը և Ի. Ի. Վորոնցով-Դաշկովի խոստումները հանգեցրին կամավորական շարժման կազմակերպման գաղափարին, որին զորավիգ եղան Ամենայն Հայոց կաթողիկոսը և Հայոց Ազգային բյուրոն: Ամենուր անցկացվում էր հանգանակություն, որն ընդգրկեց նաև արտասահմանյան հայությանը: Կամավորական ջոկատներ կազմավորվեցին Թիֆլիսում, Երևանում, Ֆրանսիայում, Կիպրոսում, Հունաստանում և այլուր:

Արդեն 1914 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին Թիֆլիսում ձևավորվեց 1200 հոգանոց առաջին կամավորական ջոկատը, որը գլխավորեց ազգային հերոս Անդրանիկը: Նոյեմբերին գեներալ Օգանովսկու կորպուսի հետ Անդրանիկի ջոկատը Հին Նախիջևանի վրայով ուղարկվեց Պարսկաստան: Նոյեմբեր-դեկտեմբերին Իգդիրում կազմավորվեց երկրորդ կամավորական ջոկատը՝ Դրաստամատ Կանայանի (Դրո) հրամանատարությամբ: Դեկտեմբերին կազմակերպվեց երրորդ ջոկատը, որի հրամանատարությունը ստանձնեց Համազասպ Սրվանձտյանը: Չորրորդ ջոկատը գլխավորեց Արշակ Գավաֆյանը (Քեռի):

1915 թ. գարնանը Անդրանիկի ջոկատը հերոսական մասնակցություն ունեցավ Հյուսիսային Պարսկաստանում ծավալված մարտերին: Ապրիլի 18-ին Դիլմանի մոտ տեղի ունեցած նշանավոր ճակատամարտում փայլեց ազգային հերոս Անդրանիկի ռազմական տաղանդը: Հետագայում ստեղծվեցին նաև հինգերորդ (հրամանատար՝ Վարդան Մեհրաբյան), վեցերորդ (հաջորդաբար հրամանատարներ՝ Արշակ Ջանփոլադյան, Գրիգոր Ավչարյան և Հայկ Բժշկյան (Գայ) և յոթերորդ (հրամանատար՝ Հովսեփ Արղության) ջոկատները: Հայ կամավորականների ընդհանուր թիվը հասավ 10 հազարի:

1915 թ. ապրիլին Հայոց ազգային բյուրոյի որոշմամբ բոլոր կամավորական ջոկատները հետ կանչվեցին՝ մեկ հայկական բանակ ստեղծելու նպատակով: Արդեն կազմավորված հինգերորդ ջոկատի հիմքի վրա միավորվեցին երկրորդ, երրորդ, չորրորդ ջոկատները, և ստեղծվեց Արարատյան գունդը՝ Վարդան Մեհրաբյանի հրամանատարությամբ: Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնությամբ Արարատյան գունդն ուղարկվեց Արևմտյան Հայաստան, որը պետք է Բայազետ-Ալաշկերտի վրայով հասներ Վան՝ տեղի հերոսական պաշտպաններին օգնելու նպատակով:

Հայ կամավորական շարժման ընդլայնումն ու օրեցօր նրա հեղինակության աճը խիստ անհանգստացրին ռուսական հրամանատարությանը: Հայ կամավորական ջոկատներում տեսնելով ապագա հայոց բանակի կորիզը և Արևմտյան Հայաստանում հայոց պետականություն ստեղծելու հեռանկարը՝ ցարական կառավարությունը դրանք ցրելու որոշում ընդունեց: Հայկական կամավորական ջոկատների հիման վրա ստեղծվեցին հրաձգային հինգ գումարտակներ, որոնք միացվեցին ռուսական զորա-

մասերին: Փաստորեն, Արևմտյան Հայաստանում հայերի մղած հերոսական պայքարն ըստ արժանվույն չգնահատվեց, այն դեպքում, երբ հայ կամավորներն արյուն էին թափել Սարիղամիշում, Ալաշկերտում, Պարսկաստանում, ամենագործուն մասնակցություն էին ունեցել Վանի, Բիթլիսի, Բաբերդի, Էրզրումի, Երզնկայի ազատագրմանը:

Չնայած դրան՝ կամավորական շարժումը պատմության մեջ մնաց որպես հայ ազգային-ազատագրական պայքարի ամենավառ էջերից մեկը:

1914 թ. նոյեմբերին թուրքական զորքերը ներխուժեցին Կարսի մարզի տարածք՝ զանգվածային կոտորածներ կազմակերպելով հայկական բնակավայրերում: Դեկտեմբերի 9-ից մինչև 1915 թ. հունվարի 5-ը Սարիղամիշում տեղի ունեցան արյունալի կռիվներ, որտեղ ռուսական զորքերի հետ կողք-կողքի մարտնչում էին Քեռու ջոկատի կամավորները: Այդ ճակատամարտում թուրքական բանակը ունեցել է միայն 78 հազար սպանված: Զարգացնելով հարձակումը՝ ռուսական ուժերը գրավում են Թավրիզը և Դիլմանը, ետ են մղում Պարսկաստան ներխուժած թուրքական զորքերին: 1915 թ. գարնանը Արևմտյան Հայաստանում ռուսական Կովկասյան բանակը, հայ կամավորական ուժերի հետ հաջող գործողություններ ծավալելով, գրավում է Մանազկերտը, Բաշկալեն, Շատախը, Արճեշը, Վանը: 1915 թ. հուլիսին, սակայն, ռուսներն անսպասելի նահանջում են Ալաշկերտի հովիտ: Քիչ անց, լրացուցիչ ուժեր ստանալով, ռուսական բանակը անցնում է հարձակման և վերագրավում կորցրած տարածքները:

1916 թ. հունվարին ռուսական բանակներն անցնում են լայնածավալ հարձակման: Կարճ ժամանակամիջոցում ջախջախվում է թուրքական երեք դիվիզիա: Իսկ փետրվարի 16-ին, հնգօրյա կատաղի մարտերից հետո, նրանք գրավում են ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող Էրզրումը: Միայն Էրզրումի համար մղված մարտերում թուրքերը կորցրին 60 հազար մարդ: Նույն թվականի ապրիլին ռուսական ցամաքային և ծովային ուժերի համատեղ ջանքերով գրավվում է Սև ծովի ափին գտնվող Տրապիզոն քաղաք-նավահանգիստը, իսկ հուլիսի 25-ին՝ Երզնկան: Կովկասյան ռազմաճակատի մյուս հատվածներում ռուսները հաջողություններ չունեցան:

Երկարատև պատերազմը և Արևմտյան ճակատում ռուսական զորքերի պարտությունները հնարավորություն չտվեցին շարունակել ռազմական գործողությունները Կովկասյան ուղղությամբ: 1917 թ. մայիսից ռուս-թուրքական մարտադաշտում դադար է հաստատվում: Իսկ 1917 թ. Հոկտեմբերյան հեղափոխությունը նոր իրադրություն է ստեղծում երկրում և ռազմաճակատում: Դեկտեմբերի 18-ին ռուսական և թուրքական կողմերի միջև Երզնկայում ստորագրվում է զինադադար:

բ. Հայոց Մեծ եղեռնը: Մոտավոր հաշվարկներով Առաջին համաշխարհային պատերազմում զոհվեց 10 միլիոն մարդ, վիրավորվեց և հաշմանդամ դարձավ 20 միլիոն: Սակայն բնակչության տեսակարար կշռի տեսակետից ոչ մի ժողովուրդ չկրեց այնպիսի խոշոր կորուստներ, ինչպես հայ ժողովուրդը: Նա աշխարհում առաջինը ազգովին ենթարկվեց կանխամտածված, հանգամանորեն ծրագրված ցեղասպանության (գենոցիդ):

Ցեղասպանությունը մարդկության դեմ ուղղված ամենամեծ հանցագործությունն է, որը նպատակ է հետապնդում ոչնչացնել ազգային, կրոնական կամ ռասայական մի խմբի կամ խմբերի: Հայոց ցեղասպանությունը առաջինը սկսեց սուլթան Աբդուլ Համիդ II-ը: Նրան փոխարինեցին երիտթուրքերը: 1911 թ. հունական Սալոնիկ քաղաքում կայացած գաղտնի ժողովում Թալեաթի, Էնվերի, Ջեմալի ղեկավարությամբ որոշում կայացվեց առաջիկա պատեհ առիթի դեպքում հայերին իսպառ ոչնչացնել՝ Հայաստանը ամբողջությամբ գրավելու, ռուսական վտանգը վերացնելու և «Մեծ Թուրան» ստեղծելու պանթուրքիստական ծրագիրը իրականություն դարձնելու համար:

Երիտթուրքական կոմիտեի անդամ Մեվլան Զաղե Ռիֆաթի հրապարակած գաղտնի փաստաթղթերից պարզվում է, որ հայերի ցեղասպանության հրեշավոր ծրագրի իրականացման հրամանը արձակվել է 1915 թ. ապրիլի 15-ին: Այդ օրը երիտթուրքական կոմիտեի նիստում ընդունված որոշումը մասնավորապես նախատեսում էր. 1. Զինաթափել օսմանյան բանակի հայ զինվորներին՝ նրանց մեղադրելով դավաճանության մեջ, 2. Կայսրության բոլոր հայաբնակ շրջաններում ձերբակալել և աքսորել հայ մտավորականությանը, 3. Տեղահանել

Հայ բնակչությանը և աքսորել Սիրիայի անապատները, 4. Հրամանի պատճենները ուղարկել բոլոր նահանգապետներին: Հրամանը չկատարողներին, անկախ ազգությունից, ենթարկել պատասխանատվության:

1915 թ. ապրիլի 24-ի և լույս 25-ի գիշերը Կ. Պոլսում և կայսրության հայաբնակ քաղաքներում, թուրքական պաշտոնական աղբյուրների համաձայն, ձերբակալվեցին 2345, իսկ միայն Կ. Պոլսում՝ չուրջ 700 հայ նշանավոր մտավորականներ՝ գրողներ, մշակույթի գործիչներ, ուսուցիչներ, բժիշկներ, ազգային և կուսակցական ղեկավար դեմքեր և այլ մասնագիտությունների տեր անձինք: Նրանց թվում էին օսմանյան պառլամենտի պատգամավորներ, գրողներ Գրիգոր Զոհրապը, Վարդգեսը, Դանիել Վարուժանը, Ռուբեն Սևակը, Սիամանթոն, Թլկատինցին, Երուխանը և ուրիշներ: Զեյթունում դավադրաբար սպանվեց Նազարեթ Չաուշը, Վանում՝ Վռամյանը, Իշխանը (Նիկողայոս Պողոսյան) և ուրիշներ: Հայ մտավորականությանն աքսորեցին երեք ուղղություններով՝ Զանկրի, Զորում, Այաշ: Զանկրիի մերձակայքում սպանեցին Դանիել Վարուժանին և Սևակին, իսկ Ուրֆայի մոտ՝ Գրիգոր Զոհրապին: Հայ մեծանուն երգահան Կոմիտասը հրաշքով փրկվեց աքսորից: Զտանելով թուրքերի ոճրագործությունները՝ նա զրկվեց հոգեկան հավասարակշռությունից: Մոտավոր հաշվարկներով բանակում զինաթափ արվեց և մասմաս գնդակահարվեց 200 հազար զինվոր:

Երիտթուրքերը ստեղծեցին տեղահանության հատուկ կոմիտե: Երիտթուրքական կոմիտեի անդամ Բեհաէդդին Շաքիրի գլխավորությամբ բանտերից ազատ արձակված հանցագործներից կազմվեցին հատուկ չեթեական գնդեր, որոնց միջոցով իրականացվեց հայ բնակչության տեղահանությունը: Զանգվածային տեղահանումները սկսվեցին 1915 թ. մայիսից: Մինչև հոկտեմբեր հայաթափ արվեցին Էրզրումի, Տրապիզոնի, Վանի, Բիթլիսի, Դիարբեքիրի, Սեբաստիայի, Ադանայի, Իկոնիայի, Հալեպի վիլայեթները:

Հունիսի 15-ին Կ. Պոլսի «Սուլթան Բայազետ» հրապարակում կախաղան բարձրացվեցին 20 հնչակյան գործիչներ, այդ թվում՝ Փարամազը (Մատթեոս Սարգիսյան): Կիլիկիո կաթողիկոս Սահակ Խապայանը ֆիզիկական բնաջնջումից խուսափելու համար ստիպված էր իր հոտին կոչ անել հնազանդվել տեղահանության հրամանին: Ամբողջ Կիլիկիան, բացառությամբ Մուսա լեռան, բռնեց տարագրության ուղին:

Արևմտահայ գաղթականների քարավանները հիմնականում ձգվում էին Էրզրում-Դերջան-Երզնկա-Խարբերդ-Մալաթիա-Հալեպ-Դեր Զոր ճանապարհով: Սովից ու տանջանքներից ուժասպառ հարյուր հազարավորները՝ տղամարդ, կին, ծեր, երեխա, մահերթի բոլոր հատվածներում ենթարկվում էին անխնա կոտորածների: Ամենասարսափելի կոտորածներ տեղի ունեցան Եփրատն անցնելու ժամանակ՝ Կամախ քաղաքի մոտ, Մշո դաշտի գյուղերում և հատկապես Սիրիայի Դեր Զոր անապատում: Հայերի զանգվածային բռնագաղթ տեղի չունեցավ միայն Կ. Պոլիս և Զմյուռնիա քաղաքներից, որովհետև դահիճները վախենում էին Եվրոպայի միջամտությունից:

Արաբական տարածքներ քշված հայերը կուտակվեցին Միջագետքի անապատի հյուսիսային և արևելյան շրջանների՝ Ռաս ուլ-Այնի, Դեր Զորի, Ռաքքայի, Մեսքենեի, Պապի, Մոսուլի և այլ վայրերի համակենտրոնացման ճամբարներում: 1916 թ. սկզբներին Դեր Զորում կուտակված 500 հազ. հայերից ողջ էր մնացել միայն 10-20 հազ. հոգի: Գերմանացի հումանիստ դոկտոր Լեպսիուսի և այլոց հաշվարկներով՝ 1915-1916 թթ. Օսմանյան կայսրությունում զոհված հայերի թիվը կազմել է 1,5 մլն մարդ, իսկ 500 հազ. հայեր, փախչելով իրենց հայրենիքից, ցաք ու ցրիվ լինելով, ապաստանել են աշխարհի տարբեր երկրներում: Ջարդերից փրկվածների մի մասը, հիմնականում կանայք ու երեխաներ, մնացին բուն երկրում և մահմեդականացվեցին: Ըստ անգլիական «Կապույտ գրքի» նրանց թիվը մոտավորապես 250 հազար էր, ըստ Յո. Լեփսիուսի՝ 200 հազար: Բացի մարդկային կորուստներից, հայերը կորցրեցին իրենց ամբողջ նյութական հարստությունները: Ավերվեց 66 քաղաք, 25 հազ. գյուղ, 2350 վանք ու եկեղեցի, 1500 դպրոց:

Երբ ԱՄՆ-ի դեսպան Հ. Մորգենթաուն այս վայրագությունների համար բողոքեց Թալեաթին՝ ասելով, թե դու պատասխան ես տալու պատմության առջև, նա ցինիկորեն պատասխանեց. «Ո՞ւմ առջև, չէ՞ որ այլևս հայ չկա: Ես երեք ամսում արեցի ավելին, քան երեք տասնամյակում արել էր սուլթան Համիդը»:

Հայոց ցեղասպանության սանձազերծման մեջ Թուրքիային ամեն կերպ խրախուսում էր դաշնակից Գերմանիան, իսկ եվրոպական ոչ մի երկրից հայերը գործնական որևէ օգնություն չստացան: Միայն անհատ հումանիստներն էին (Լեպսիուս, Անատոլ Ֆրանս, Վեսելովսկի, Նանսեն, Բրյուսով, Բլոկ և ուրիշներ) իրենց բողոքի ձայնը բարձրացնում ի պաշտպանություն հայերի:

Հայոց ցեղասպանության կազմակերպիչներից ոմանք պատերազմից հետո ստացան արժանի պատիժ: Դաշնակցության նախաձեռնությամբ 1921-1922 թթ. մի խումբ հայ վրիժառուներ (Սողոմոն Թեհլերյան, Արշավիր Շիրակյան, Արամ Երկանյան, Միսաք Թորլաքյան, Արտաշես Գևորգյան և ուրիշներ) գնդակահարեցին հայոց ցեղասպանության գլխավոր պատասխանատուներին (Թալեաթ, Ջեմալ, Բեհաէդդին Շաքիր, Սայիդ Հալիմ փաշա և այլոց): Այդ գործողությունը հայտնի է «Նեմեսիս» (հունական դիցաբանության վրեժխնդրության աստվածուհու) անունով:

Թուրքերի և քրդերի կողմից 1915-1916 թթ. Արևմտյան Հայաստանում իրականացված հայերի ցեղասպանությունը ոչ միայն հայ ժողովրդի, այլև մարդկության նորագույն պատմության ամենաարյունալի էջերից է:

Մեծ Եղեռնից հետո Հայկական հարցը ստացավ «Հայ դատ» անունը:

գ. Ինքնապաշտպանական կռիվները: 1915 թ. բազմաթիվ վայրերում հայերը դիմեցին ինքնապաշտպանության: Դեռ 1915 թ. մարտին մարդասպաններին դիմադրություն կազմակերպեցին Մոկսը և Շատախը: 1915 թ. մարտի վերջերին Վանի նահանգապետ Ջևդեթն իր զորքերը շարժեց Վասպուրականի վրա: Ապրիլի 7-ին ապստամբեց Վան քաղաքը: Նրա Այգեստան թաղամասում ապրում էր 20 հազ., Քաղաքամեջում՝ 2500 հայ: Մահմեդականները փախան Քաղաքամիջից: Ստեղծվեց զինվորական կոմիտե՝ Արմենակ Եկարյանի, Արամ Մանուկյանի և Հրանտ Գայիկյանի գլխավորությամբ: Վանում էին հայտնի ֆիդայիներ Կայծակ Առաքելը, Բուլղարացի Գրիգորը, նկարիչ Փանոս Թերլեմեզյանը և ուրիշներ:

Վանի հայ քաղաքական կազմակերպությունները համատեղ

ձեռնարկեցին քաղաքի պաշտպանական դիրքերի ամրապնդումը: Քաղաքը բաժանվեց պաշտպանական գոտիների (Քաղաքամեջ, Այգեստան և այլն): Ստեղծվեցին կանանց սանիտարական խմբեր: Բարիկադներ կառուցվեցին բոլոր փողոցներում: Սկսվեց զենքի արտադրություն, զինագործները օրական պատրաստում էին 2000 փամփուշտ: Բալկանյան առաջին պատերազմին մասնակցած հայկական գումարտակի հայտնի կամավորական Բուլղարացի Գրիգորը նույնիսկ հասցրեց թնդանոթ պատրաստել: Ապրիլի 10-ին Ջևդեթ փաշայի 12 հազարանոց զորքը գրոհեց քաղաքի վրա, բայց հաջողություն չունեցավ: Ապրիլի 17-ին էրզրումից ստանալով 7 հազար զինվորի համալրում՝ Ջևդեթը վերսկսեց հարձակումը: Թուրքերը սոսկալի հրետակոծության ենթարկեցին քաղաքը: Ապրիլի 28-ին սկսվեց կատաղի ճակատամարտ: Թուրքական զորքի ու նրան միացած քրդական հեծելազորայինների բոլոր գրոհներն ապարդյուն էին: Մայիսի 3-ին թուրքերը փախան Բիթլիսի ուղղությամբ: Մայիսի 5-ին Խեչոյի գլխավորած հեծելազորը, իսկ 6-ին՝ ռուսական զորախմբի կազմում գտնվող «Արարատյան գունդը» մտան Վան: Վանեցիների ինքնապաշտպանության ղեկավար Արամ Մանուկյանը քաղաքի բանալիները հանձնեց ռուս հրամանատարությանը: Ռուսներն Արամին նշանակեցին Վանի նահանգապետ, իսկ կամավորների դրոշները ծածանվում էին Վանի միջնաբերդի աշտարակին: Մայիսի 20-ին Վան հասավ Անդրանիկը՝ իր զորամասով: Սակայն 1915 թ. հուլիսի 2-ին ռուսական զորքերը հանկարծ հրաման ստացան շտապ թողնել Վանը: Քաղաքում և նահանգում սկսվեց խուճապ, և 200 հազար մարդ ստիպված բռնեց գաղթի ճանապարհը: Թուրքերը գրավեցին Վանը և սրի քաշեցին տեղում մնացած հայերին: Հուլիսի 23-ին ռուսները վերագրավեցին մոխրակույտի վերածված Վան քաղաքը:

Բացի Վանից, ուժեղ դիմադրություն կազմակերպվեց Մուշում: Թուրքական մի ողջ բանակ 7 ամիս չարունակ չէր կարողանում տեղահանել Մշո դաշտի գյուղերի բնակչությանը: Կոտրելով Մուշ քաղաքի ինքնապաշտպանական ուժերի (ղեկավար Հակոբ Կոտոյան) երեքօրյա հերոսական դիմադրությունը՝ թուրքական զորքը ներխուժեց Մուշ և հիմնովին ավերեց այն: Հունիսի 13-ին հայ զինյալների մի մեծ խումբ Մշո դաշտից նահանջեց

դեպի Սասուն, միացավ սասունցիներին և Թուրք ու քուրդ ջարդարարներին դիմադրեց մինչև վերջին մարդը: 1916 Թ. ապրիլի 18-ին ռուսական զորքերը (նրանց հետ նաև Անդրանիկի ջոկատը) գրավեցին Մուշն ու Սասունը, բայց այստեղ այլևս հայ չկար. բնակավայրերը հայաթափված էին, թալանված ու ավերված:

1915 Թ. հունիսի 2-ին սկսվեց Շապին-Գարահիսարի հերոսամարտը՝ Ղուկաս Տեովլեթյանի գլխավորությամբ: Մինչև հունիսի վերջը տևած այդ պաշտպանության ժամանակ քաղաքի միջնաբերդում արիաբար կռվող 5 հազ. հայերի մեծ մասը զոհվեց: Միայն 1000 հոգու հաջողվեց ճեղքել պաշարման օղակը և դուրս գալ չրջապատումից:

1915 Թ. սեպտեմբերի 29-ին սկսվեց Հայաստանի հարավում ընկած Ուրֆա (Եդեսիա) քաղաքի հերոսամարտը: Ինքնապաշտպանությունը գլխավորեց Մկրտիչ Յոթնեղբայրյանը: Ջեմալ փաշայի հրամանով Ուրֆայի վրա գրոհեց Թուրքական բանակը, բայց չկարողացավ գրավել քաղաքը: Գործին միջամտեցին գերմանացիները: Մի գեներալ ներկայացավ Յոթնեղբայրյանին և առաջարկեց հանձնվել՝ երաշխավորելով կենդանի մնացած բոլոր հայերի կյանքի անվտանգությունը: Վերքերից արյունաքամ Յոթնեղբայրյանը գերմանացուն պատասխանեց. «Եթե դուք, որպես Թուրքերի դաշնակից, մտածում եք հայերի մասին, բարի եղեք գոնե երաշխավորելու Դեր Զորում մեռնող հայերի կյանքը»:

Հոկտեմբերի 23-ին Թուրքերը սկսեցին ընդհանուր գրոհը: Քաղաքը, ի վերջո, գրավվեց: Ուրֆայի հերոսամարտը տևեց 25 օր:

Հայերի ինքնապաշտպանության նշանավոր կենտրոններից դարձավ Սուեսիա գավառակի Մուսա լեռը: Միջերկրական ծովի ափին գտնվող այս գավառակի 6 հայկական գյուղերի (Բիթիաս, Վագրֆ, Յողունօլուք, Խդրրբեկ, Քաբուսիե, Հաջի Հաբիբլի) բնակիչները աքսորից ու կոտորածից փրկվելու համար 1915 Թ. հուլիսի վերջին բարձրացան Մուսա լեռ և Տիգրան Անդրեասյանի, Եսայի Յաղուբյանի, Հաբեթ Իսկենդերյանի ու Պետրոս Տմլաքյանի ղեկավարությամբ նախապատրաստվեցին դիմադրության: Կառավարությունը նրանց դեմ զորք ուղարկեց:

Սկսվեցին արյունահեղ կռիվներ: Օգտվելով լեռան անառիկ ամրություններից՝ հայերը հերոսաբար պաշտպանվում էին գերակշիռ Թուրքական զորքերի գրոհներից: Երկարատև կռիվներից նրանց ուժերը սպառվում են: Բոլորն էլ կկոտորվեին, եթե տեղի չունենար մի երջանիկ անակնկալ: Սեպտեմբերի 5-ին ծովում երևում է ֆրանսիական «Գիշեն» ռազմանավը, որին հաջորդում են ուրիշ նավեր: Ավելի քան չորս հազար հայերի հաջողվում է սեպտեմբերի 14-ին ֆրանսիական 5 նավերով, այդ թվում՝ «Ժաննա դ'Արկ» չոգենավով, փոխադրվել Եգիպտոսի Պորտ Սաիդ քաղաքը: Այս դեպքերն իրենց գեղարվեստական արտացոլումն են ստացել ավստրիացի գրող Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը» վեպում:

Ինքնապաշտպանության էր դիմել նաև Պոնտոսի հայությունը: Առանձնապես նշանակալի էին Տրապիզոնի մոտակայքում գտնվող Շամպա և Թրե լեռներում ամրացված 700 տրապիզոնահայերի դիմադրական կռիվները, որոնք ղեկավարում էին Զիլ Հովհաննեսն ու Միքայել Զեյթունյանը: 1915 Թ. հուլիս-հոկտեմբեր ամիսներին Թուրքական կանոնավոր բանակի զորամասերը՝ զինված հրանոթներով և գնդացիրներով, փորձում են ընկճել հայ մարտիկներին, բայց պարտություն կրելով հետ են նահանջում: Որոշ ընդմիջումներով Պոնտոսի հայերը մարտնչել են մինչև 1923 Թ. նոյեմբերը, երբ նավակներով ճեղքելով Սև ծովի ալիքները՝ հասնում են ռուսական ափ: Վերջին 700 հայերն էին, որ զենքը ձեռքներին հեռացան հայրենի եզերքից: Ռուսական հողը ապաստան տվեց Թուրքական յաթաղանից փրկված ուրիշ տասնյակ հազարավոր հայերի:

Ինքնապաշտպանական մարտեր տեղի ունեցան նաև Արևմտյան Հայաստանի այլ վայրերում: Շնորհիվ հերոսական դիմադրության առանձին չրջաններում հաջողվեց փրկվել զանգվածային կոտորածներից ու տեղահանությունից:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐՈՐԴ

ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

(XIX դար - XX դարի սկիզբ)

ա. Մշակույթի զարգացման առանձնահատկությունները: *Նոր ժամանակներում հայոց քաղաքական, ազգային ու հասարակական կյանքում տեղի ունեցած էական տեղաշարժերն իրենց կնիքն են դնում հայկական մշակույթի առաջընթացի վրա, պայմանավորում հոգևոր-մտավոր աշխուժացումը ինչպես բուն Հայաստանում, այնպես էլ մերձավոր և հեռավոր հայաբնակ քաղաքներում ու վայրերում: Հայ մտավորականության կարող ուժերը, քաղաքական-հասարակական շրջանները բացառիկ նշանակություն էին տալիս ժողովրդի լուսավորությանը և գրագիտության տարածմանը՝ ձգտելով քաղաքական ինքնագիտակցություն ու ազատագրական մղումներ ներարկել աշխարհասփյուռ հայությանը: Դեռևս XVII դ. վերջերին սկիզբ առած մշակութային զարթոնքի նպատակն էր համազգային գաղափարների մշակումը, դրանց շուրջ ազգային կենսունակ ուժերի համախմբումը, տարբեր երկրներում բնակություն հաստատած ու միմյանցից անջրպետված հայության զանազան հատվածների միջև մերձեցման և համագործակցության հաստատումը:*

Հայկական մշակույթի բնութագրական հատկանիշներից է դպրոցների, տպարանների, պարբերականների բացումը և գործունեությունը, գիտության, գրականության, արվեստի վերելքն աշխարհի ամենատարբեր մասերում: Հետևաբար նոր ժամանակի հայկական մշակույթը սնվում էր այլևայլ ակունքներից, փոխազդեցության մեջ էր զանազան էթնիկ մշակույթների և մշակութային ավանդույթների հետ: Այսպես, Արևելյան Հայաստանում հայկական մշակույթն աստիճանաբար խզում է դարավոր կապերը իրանական ավանդույթների հետ և հետզհետե ուժեղացող առնչություններ հաստատում ռուսական գրա-

կանության, գիտական ու հասարակական մտքի հետ: Զգալի չափով ռուսական միջնորդավորմամբ են հայ իրականություն ներթափանցում արևմտաեվրոպական մշակութային արժեքները: Հնդկահայ գաղութներում անմիջական շփումներ են սկզբնավորվում անգլիական մշակութային միջավայրի հետ: Եվրոպական գիտական ու գրական ձեռքբերումները հայ իրականության մեջ տարածում էին ստանում Մխիթարյան միաբանության Վենետիկի և Վիեննայի ճյուղավորումների բեղմնավոր գործունեության շնորհիվ: Արևմտահայությունը և առաջին հերթին նրա երկու կարևորագույն մշակութային կենտրոնները՝ Կոստանդնուպոլիսն ու Զմյուռնիան, մշտապես մշակութային զարգացման ազդակներ էին ստանում ֆրանսիական իրականությունից: Նման պատմական պայմաններում պահանջվում էր անդուլ գործունեություն և մեծ ջանքեր հայկական մշակույթի առաջընթացը ճիշտ ուղիով տանելու համար:

XIX դ. երկրորդ կեսին հայոց եկեղեցին կորցնում է առաջատարի իր դերը ինչպես հասարակական, այնպես էլ մշակութային կյանքում: Նախաձեռնությունն անցնում է եվրոպական կրթություն ստացած երիտասարդ մտավորականությանը, որը բերում է նոր աշխարհընկալում, տարածում է առաջադիմական գաղափարներ և պայքար ծավալում կղերական հետադեմ մտայնության դեմ: Օտար տիրապետության և գաղութային ճնշման պայմաններում, սակայն, հայոց եկեղեցին մնում էր հայության շահերի արտահայտիչը ու որոշակի դիրք ուներ մշակութային, հատկապես կրթական կյանքում, բայց առաջընթացին, այնուամենայնիվ, ուղղություն էին տալիս հասարակական և մտավոր նոր ուժերը:

Չնայած գործունեության պայմանների բազմազանությանը՝ հայկական մշակույթը պահպանեց իր ինքնատիպությունն ու միասնությունը, կարևոր դեր խաղաց ազգային համախմբման, առաջադիմական գաղափարների և իդեալների մշակման գործում: Ամբողջությամբ վերցրած՝ հայկական մշակույթը մշտաբորբոք էր պահում ազգային գերխնդիրը՝ ազատագրվելու իղձը: XIX դ. կեսերից հայ մտավորականությունն ավելի մեծ չափով կապվեց հայրենի երկրի հետ, մշակույթն ու լուսավորությունը ձգտեց ծառայեցնել ազգային ազատագրության խնդիրներին:

Մշակութային կենտրոններ առաջացան Արևելյան և Արևմտյան Հայաստանի քաղաքներում, դպրոցներ, պարբերականներ ու տպարաններ հիմնադրվեցին Օսմանյան կայսրության հայաբնակ վայրերում:

Հայկական մշակույթը վերելքի ուղիով էր ընթանում նաև XX դ. սկզբին, թեև հանդիպում էր թուրքական իշխանությունների համառ դիմադրությանը: Ինչպես ողջ ազգային կյանքը, այնպես էլ մշակույթը ծանր վիճակում հայտնվեց արևմտահայության զանգվածային բնաջնջման ու տարագրության հետևանքով: Առաջին աշխարհամարտի, Ռուսաստանում ու Այսրկովկասում տեղի ունեցած ռազմա-քաղաքական ցնցումների արդյունքը եղավ մշակութային զարգացման կասեցումը նաև Արևելյան Հայաստանում: Նման օրհասական պայմաններում հայկական մշակույթը գոյատևեց բազմադարյան հարուստ ավանդույթների, հոգևոր արժեքները սերունդներին փոխանցելու ձգտման շնորհիվ:

բ. Դպրոցը: Պատմական պայմանների փոփոխությունը պահանջ առաջադրեց ստեղծել նոր, ժամանակի ոգուն համապատասխանող դպրոցներ: Կրթական համակարգում աստիճանաբար թուլացավ եկեղեցու ազդեցությունը, մտցվեցին ուսուցման առաջադիմական մեթոդներ, աշխարհականացվեցին դասավանդվող առարկաները:

1810 թ. վաճառական Նիկողայոս Աղաբաբյանը Աստրախանում հիմնադրում է Աղաբաբյան դպրոցը: Թեև դպրոցը պահվում էր հայերի միջոցներով, բայց 1822 թ. այն անցավ իշխանությունների տնօրինության ներքո: Սովորողները գլխավորապես հայ երեխաներ էին, բայց դասավանդումը կատարվում էր հիմնականում ռուսերեն: Դպրոցի բացման առաջին տարիներից, ավելի քան մեկ տասնամյակ, այստեղ արդյունավետ գործունեություն է ծավալել անվանի մանկավարժ Սերովբե Պատկանյանը:

Ռուսաստանում բարձր դիրքի հասած նշանավոր արդյունաբերողներ և կալվածատերեր Լազարյանների տրամադրած միջոցներով 1815 թ. Մոսկվայում բացվում է Լազարյան ճեմարանը, որը կոչված էր դաստիարակելու հայ մտավորականության մի նոր սերունդ, նաև պատրաստել արևելյան լեզուների հմուտ

մասնագետներ: Ճեմարանի հիմնադիրների նպատակն էր նպաստել արևելյան երկրների հետ հաղորդակցության սերտացմանը և Արևելքի ժողովուրդների քաղաքակրթության հետազոտությանը: Լազարյան ճեմարանը դեպի իրեն էր ձգում ուսումնատենչ հայ պատանիներին ինչպես Կովկասից ու Արևմտյան Հայաստանից, այնպես էլ հեռավոր երկրներից, անգամ՝ Հնդկաստանից: Որբ ու աղքատ երեխաների ուսուցման համար Լազարյանները և ճեմարանի հոգաբարձուները հրատարակում էին հայ իրականության մեջ առաջին անգամ ստեղծված դասագրքեր, թարգմանական ու ինքնուրույն աշխատություններ: Ճեմարանում դասավանդել են հայ մշակույթի նշանավոր դեմքեր Հարություն Ալամդարյանը, Ստեփանոս Նազարյանը, Միքայել Նալբանդյանը, Սմբատ Շահազիզը, Մկրտիչ Էմինը և ուրիշներ: Շրջանավարտները արգասավոր գործունեություն էին ծավալում հայկական դպրոցներում, թերթերի ու ամսագրերի խմբագրություններում: Լազարյան ճեմարանը միաժամանակ նաև արևելագիտական խոշոր կենտրոն էր, ուր իրենց կրթությունն են ստացել բազմաթիվ ռուս նշանավոր արևելագետներ:

Ռուսաստանի հայաշատ քաղաքներից կրթական կարևոր կենտրոն էր նաև Նոր Նախիջևանը: Այստեղ դպրոցական կյանքը կանոնավոր կերպարանք է ընդունում 1830-ական թթ., երբ քաղաքում գործունեություն են ծավալում Լազարյան ճեմարանի սաները, ինչպես նաև Սերովբե Պատկանյանի որդին՝ Գաբրիել Պատկանյանը: XIX դ. սկզբներին դպրոցներ բացվեցին նաև Ղրիմի հայաշատ բնակավայրերում: 1858-1871 թթ. Թեոդոսիայում գործում էր Խալիբյան արական ուսումնարանը, որը ժամանակի հայտնի կրթական կենտրոններից էր:

Արևելահայության կրթական կյանքում բացառիկ դեր է խաղում Թիֆլիսը: XIX դ. սկզբին այստեղ արդեն կային մի քանի փոքր դպրոցներ: 1814 թ. Թիֆլիսի թեմի առաջնորդ է նշանակվում Ներսես Աշտարակեցին: Նա համառ ջանքեր է գործադրում հիմնելու այնպիսի կրթական կենտրոն, որը մոտ գտնվեր Հայաստանին և սերտորեն կապված լիներ հայ իրականությանը: 1815 թ. նա քաղաքի հոգևոր կենտրոններից մեկում՝ Վանքում, բացում է դպրոց, որտեղ նախնական կրթություն են ստանում նաև Մեսրոպ Թաղիադյանը, Խաչատուր Աբովյանը և Ստե-

փանոս Նազարյանը: Այնուամենայնիվ, Այսրկովկասի հայկական գլխավոր կրթական կենտրոնի դերն ամբողջ XIX դարի ընթացքում պատկանում էր 1824 թ. Թիֆլիսում բացված դպրոցին, որն ի պատիվ Ներսես Աշտարակեցու 1861 թ. կոչվեց Ներսիսյան: Առանձնապես բեղմնավոր էր դպրոցի գործունեության առաջին հնգամյակը, երբ նրա տեսուչն էր ականավոր բանաստեղծ ու հասարակական գործիչ Հարություն Ալամդարյանը: Նրա հեռանալուց և առավել ևս 1837 թ. թեմական վարժարանի վերածվելուց հետո դպրոցի կյանքում անկում է տեղի ունենում: Դպրոցի նոր վերելքը սկսվեց XIX դ. կեսերին և կապված էր Հայտնի մանկավարժ Պետրոս Շանչյանի անվան հետ: 1851-1857 թթ. վարելով դպրոցի տեսչի պաշտոնը՝ նա հիմնովին բարելավեց կրթական գործի դրվածքը: Դպրոցական ծրագրում տեղ գտան մի շարք նոր առարկաներ (բնական գիտություններ, ընդհանուր պատմություն, ֆրանսերեն), արգելվեցին մարմնական պատիժները: 1861 թ. դպրոցը կառավարվում էր ժողովրդի կողմից ընտրված հոգաբարձուների միջոցով: Այդ առաջադիմական սկզբունքը հետզհետե տարածում գտավ արևելահայ բոլոր դպրոցներում: Դպրոցի սաներից շատերը, այդ թվում Խաչատուր Աբովյանը և Ստեփանոս Նազարյանը, իրենց կրթությունը շարունակում են ռուսական ու եվրոպական համալսարաններում: Ներսիսյան դպրոցի շրջանավարտները խոշոր նպաստ են բերել հայկական մշակույթի տարբեր բնագավառների զարգացման գործին:

Լազարյան ճեմարանը և Ներսիսյան դպրոցը այն կենտրոններն էին, որտեղ մշակվում էր հայ աշխարհիկ գրական լեզուն, թեև երկու ուսումնական հաստատություններում էլ սկզբնական շրջանում դասավանդման հիմնական լեզուն գրաբարն էր:

XIX դ. առաջին երեսնամյակից դպրոցական կյանքի աշխուժացում է դիտվում նաև Արևելյան Հայաստանի գավառներում: Պետական գավառային դպրոցներ են հիմնադրվում Շուշիում (1830), Ախալցխայում (1831), Երևանում (1832), Նախիջևանում (1837), Ալեքսանդրապոլում (1847): 1836 թ., ռուսական կառավարության հաստատած կանոնադրության («Պոլոժենիե») համաձայն հայոց եկեղեցուն իրավունք է տրվում արևելահայ թեմերում բացել թեմական դպրոցներ, որոնք պետք է ունենային

միջնակարգ դպրոցի մակարդակ: 1837 թ. հիմնադրվեցին Երևանի, հաջորդ տարում՝ Շուշիի և Աստրախանի թեմական դպրոցները: Նախատեսված էր, որ այդ դպրոցները պետք է հոգևորականներ պատրաստեին, ուստի սովորելու համար սկզբում ընդունում էին միայն հոգևորականների երեխաներին: Հետագայում այդ սահմանափակումը վերացվեց: Սկզբնական շրջանում առարկաների մի մասը դասավանդվում էր ռուսերեն: Այդ դպրոցներում տիրապետող էր եկեղեցական ոգին: Թեմական դպրոցների դերն ու հասարակական կշիռն աճեց 1870-1880-ական թվականներին, երբ ավելացան դասավանդվող առարկաները, իսկ ուսուցումը գերազանցապես դարձավ հայերեն: Երևանի թեմական դպրոցն իր երկարամյա գործունեությամբ խոշոր դեր կատարեց Արարատյան դաշտի բնակչության մտավոր ու հասարակական զարգացման ասպարեզում, իսկ Արցախի հայության համար նույն նշանակությունն ունեցավ Շուշիի թեմական դպրոցը: Թեմական դպրոցների թվին էր պատկանում նաև 1881 թ. Նոր Նախիջևանում բացված դպրոցը: Թեմական դպրոցները փաստորեն դարձել էին միջնակարգ աշխարհիկ կրթություն ստանալու կենտրոններ, որտեղ հիմնականում ուսուցիչներ էին պատրաստում:

1874 թ. էջմիածնում հիմնադրվեց Գևորգյան հոգևոր ճեմարանը, որն ուներ երկու բաժին: Դասարանական բաժինը թեմական դպրոցի ծավալ ուներ, իսկ լսարանական բաժնում սաները ստանում էին բազմակողմանի, այդ թվում՝ հիմնավոր հայագիտական կրթություն: Գևորգյան ճեմարանում դասավանդում էին բազմաթիվ նշանավոր գիտնականներ, հոգևորականներ, արվեստի գործիչներ: Հակառակ նպատակադրմանը՝ ճեմարանի սաները գործունեություն էին ծավալում ոչ միայն եկեղեցական ասպարեզում, այլ դառնում էին նաև աշխարհիկ գործիչներ:

1860-ական թթ. սկզբներից բացվում են նաև իգական դպրոցներ: Պերճ Պռոշյանը հիմնադրեց Շուշիի (1864) և Երևանի Գայանյան (1866) դպրոցները: Երևանի և Թիֆլիսի Գայանյան (բացվել է 1869 թ.) դպրոցները չուտով ձեռք բերեցին միջնակարգ դպրոցի աստիճան և աչքի ընկան մանկավարժներ պատրաստելու գործում:

Արևմտահայ իրականության մեջ առաջին միջնակարգ

դպրոցը 1838 թ. բացված Սկյութարի (Կոստանդնուպոլիս) ճեմարանն էր, որի ծրագիրը կազմված էր եվրոպական դպրոցների օրինակով: Խոշոր կրթական կենտրոն էր դեռևս 1799 թ. Զմյուռնիայում հիմնադրված Մեսրոպյան դպրոցը, որը գոյատևել է մինչև 1922 թ. և փակվել քաղաքի հայկական համայնքի վերացման հետ միաժամանակ: Այստեղ դասավանդել են ժամանակի հայտնի մանկավարժներ, իսկ սովորողների թվում եղել են հետագայում հայտնի դարձած մի շարք նշանավոր հասարակական ու մշակութային գործիչներ: Արևմտահայության կրթական կյանքում (Կոստանդնուպոլսում և այլուր) կարևոր դեր էին խաղում Մխիթարյան միաբանության ջանքերով գործող դպրոցները: Հնդկահայ մեծահարուստներ Սամվել Մուրադի և Էդուարդ Ռափայելի միջոցներով 1834 և 1836 թթ. բացվեցին Մուրադյան և Ռափայելյան դպրոցները: Առաջինը հիմնականում գործել է Փարիզում, երկրորդը՝ Վենետիկում: 1870 թ. Մուրադյան դպրոցը տեղափոխվեց Վենետիկ, և Մխիթարյան վանքի ենթակայությամբ ստեղծվեց Մուրադ-Ռափայելյան միացյալ վարժարանը: Հնդկահայերի միջավայրում առավել նշանավոր կրթական կենտրոնը 1821 թ. Կալկաթայում հիմնադրված Մարդասիրաց ճեմարանն էր, որն ուներ իր տպարանը: Երկսեռ աշակերտներով այդ դպրոցը արդյունավետ գործունեություն է ծավալել գերազանցապես հնդկահայերի և պարսկահայերի շրջանում:

Արևմտահայ դպրոցում որոշակի առաջընթաց է սկսվում 1863 թ. թուրքական իշխանությունների կողմից հայոց Ազգային սահմանադրության հաստատումից հետո: Կոստանդնուպոլսում գործող մի շարք դպրոցներից նշանավոր էր պատրիարք Ներսես Վարժապետյանի հիմնադրած Կեդրոնական վարժարանը: Բուն Արևմտյան Հայաստանում առավել հայտնի կրթական հաստատություններ էին 1881 թ. Կարինում բացված Սանասարյան վարժարանը և Վանում գործող Կեդրոնական, Երկրագործական, Երամյան վարժարանները: 1889 թ. Կոստանդնուպոլսի մոտ գտնվող Արմաշի վանքում բացվեց Արմաշի դպրեվանքը, որը բարձրագույն հոգևոր ուսումնական հաստատություն էր և արևմտահայերի համար ունեցավ նույն նշանակությունը, ինչ Գևորգյան ճեմարանը արևելահայերի կյանքում: XIX դ. երկրորդ

կեսին բազմաթիվ բարեկարգ դպրոցներ բացվեցին նաև Արևմտյան Հայաստանի այլ քաղաքներում (Խարբերդ, Կեսարիա, Մուշ, Սեբաստիա): Արևմտյան Հայաստանում գործում էին նաև կաթոլիկական ու բողոքական դպրոցներ: Արևմտահայերի կրթական գործը արդուլհամիդյան վարչակարգի ծանր պայմաններում բախվում էր անասելի դժվարությունների:

XIX դ. վերջերին և XX դ. սկզբին ցարական իշխանություններն անօրինակ հալածանքներ սկսեցին հայկական դպրոցների դեմ: 1880-ական և 1890-ական թթ. կեսերին ցարիզմը ժամանակավորապես փակեց հայկական եկեղեցու տնօրինությանը հանձնված դպրոցների մեծ մասը: Միայն հայության բուռն ելույթները ստիպեցին Նիկոլայ II-ին 1905 թ. օգոստոսի 1-ին հայոց եկեղեցուն վերադարձնել նրանից խլված ունեցվածքը և կրթական գործով զբաղվելու հնարավորությունը, որոնցից նա զրկվել էր 1903 թ. հունիսի 12-ի չարաբաստիկ օրենքով:

գ. Գիտությունը: XIX դ. - XX դ. սկզբին զգալի առաջընթաց է կատարում գիտությունը, ընդ որում առավել աչքի ընկնող հաջողություններն արձանագրվում են հայագիտության բնագավառում: Հայոց պատմության, լեզվի, մատենագրության, Հայաստանի աշխարհագրության հետազոտության ասպարեզում ամենակարևոր ձեռքբերումները երկար ժամանակ կապված էին մնում Մխիթարյան միաբանության արդյունավետ գործունեության հետ: XIX դ. սկզբին Հայաստանի պատմությանն ու աշխարհագրությանը նվիրված հանգամանալից հետազոտություններով հանդես է գալիս Ղուկաս Ինճիճյանը: Հովսեփ Գաթըրճյանն աշքի ընկավ դասական հայերենին նվիրված լեզվաբանական արժեքավոր հետազոտություններով: Նա նաև առաջինն էր, որ շարադրեց և 1849-1852 թթ. հրատարակեց համաշխարհային պատմության երկհատոր մի ձեռնարկ:

XIX դ. հայագիտությունն առավել խոշոր հաջողությունների է հասնում Ֆրանսիայում: Ասպարեզ են մտնում ականավոր գիտնականներ Էդուարդ Դյուլորիեն, Վիկտոր Լանգլուան և Մարի Բրոսսեն, ընդ որում վերջինս տեղափոխվում է Ռուսաստան և արդյունավետ գործունեություն ծավալում հայոց և վրաց պատմության հետազոտության ու բանասիրության բնագավառում:

XIX դ. վերջին փորձեր արվեցին Հայաստանի պատմության

ամբողջական պատկերը ներկայացնելու ուղղությամբ: Ստեփան Պալասանյանի «Պատմություն Հայոց. սկզբից մինչև մեր օրերը» աշխատությունը, որն առաջին անգամ լույս տեսավ 1890 թ. և երկար տարիներ հաջողությամբ ծառայեց որպես ուսումնական ձեռնարկ: Անտոն Գարագաշյանը իր քառահատոր «Քննական պատմություն Հայոց» աշխատությամբ վերլուծում էր հայոց պատմության ընթացքը՝ վաղնջական ժամանակներից մինչև V դարի վերջերը: Նա հայ քննական պատմագիտության հիմնադիրն է: Ականավոր հայագետներ Բարսեղ Սարգիսյանը և Կարապետ Տեր-Մկրտչյանը շարադրեցին միջնադարյան հայ ազանդավորական շարժումներին նվիրված արժեքավոր ուսումնասիրություններ:

XIX դ. երկրորդ կեսին հայագիտության ասպարեզում աչքի ընկնող աշխատանքներ են կատարվում Ռուսաստանում և Եվրոպայի համալսարանական կենտրոններում: Հայ միջնադարյան պատմիչների երկերի թարգմանության, հայ ազգագրության և հավատալիքների հետազոտության առումով նշանակալից էր Լազարյան ճեմարանի պրոֆեսոր Մկրտիչ Էմինի դերը: Նրա սաներից Քերովբե Պատկանյանը արդյունավետ գործունեություն ծավալեց Ս. Պետերբուրգի համալսարանում և հանդես եկավ հին շրջանի պատմությանը, լեզվին ու մատենագրությանը նվիրված մեծարժեք ուսումնասիրություններով: Լազարյան ճեմարանում Մկրտիչ Էմինի գործը շարունակեց նրա մյուս աշակերտը՝ Գրիգոր Խալաթյանցը: Իր ամբողջ կյանքում երբեք Հայաստանը չտեսած՝ նրա կերպարի կերտմանը նվիրվեց անվանի բանաստեղծ և խոշոր հայագետ-պատմաբան Ղևոնդ Ալիշանը: Առանձնապես նշանավոր են միջնադարյան Հայաստանի առանձին նահանգներին («Շիրակ», «Այրարատ», «Սիսական») վերաբերող նրա բազմահատոր աշխատությունները: Կյանքի վերջին տարիներին Ալիշանը հրատարակության պատրաստեց «Հայապատում» երկհատոր ծավալուն աշխատությունը, որը խոշոր ներդրում է հայ միջնադարյան պատմագրության հետազոտության բնագավառում:

XX դ. սկզբին հայ պատմագիտությունը հասավ նոր հաջողությունների. ստեղծվեցին տեսական բարձր մակարդակով ու վերլուծական ուղղվածությամբ աչքի ընկնող բազմաթիվ աշ-

խատություններ: Միջնադարյան Հայաստանի պատմությանն ու հայ բանասիրությանը նվիրված կոթողային աշխատություններ գրեց Ս. Պետերբուրգի համալսարանի պրոֆեսոր Նիկողայոս Ադոնցը՝ ականավոր կովկասագետ-հայագետ Նիկողայոս Մառի սանը: 1908 թ. նա ռուսերեն լույս ընծայեց հայագիտության գլուխգործոցներից մեկը՝ «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում» աշխատությունը: Այդ հիմնարար հետազոտության մեջ հեղինակն անդրադարձել է Հայաստանում ավատատիրության պատմության հիմնահարցերին, երկրի պատմական աշխարհագրությանը, հայ-բյուզանդական հարաբերություններին: 1920 թ. հետո Ադոնցն ապրում և ստեղծագործում էր Լոնդոնում, Փարիզում, ապա Բրյուսելում: Իր աշխատությունները տպագրել է միջազգային հեղինակավոր հանդեսներում:

Լեոն (Առաքել Բաբախանյան) թողել է պատմագիտական, գրականագիտական և հրապարակախոսական մեծածավալ ժառանգություն, գրել է նաև գեղարվեստական արժեքավոր գործեր: Պատմաբանը անդրադարձել է XIX դ. հայ հասարակական-քաղաքական պատմությանը, բազմիցս մեկնաբանել է (որոշ դեպքերում նաև սխալ դիրքերից) Հայկական հարցը, հեղինակել է հայ մշակույթի պատմությունը լուսաբանող մի շարք աշխատություններ: XX դ. սկզբին նա ծրագրել էր շարադրել Հայաստանի ամբողջական պատմությունը, սակայն չհասցրեց լիովին իրականացնել իր մտահղացումը: Կենդանության տարիներին Լեոն տպագրեց իր «Հայոց պատմություն» կոթողային աշխատության միայն առաջին հատորը, իսկ հաջորդ երկու հատորները լույս տեսան նրա մահից հետո:

1912-1927 թթ. հրատարակվում է Կ. Պոլսի նախկին պատրիարք Մաղաքիա Օրմանյանի «Ազգապատում» եռահատոր աշխատությունը, որը ներկայացնում է հայոց եկեղեցու պատմությունը սկզբից մինչև XX դ. սկզբները: Եկեղեցու պատմությունը դիտարկելով որպես հայոց պատմության առանցք՝ գիտնականը հանգամանորեն լուսաբանել է կաթողիկոսական աթոռների, աղանդավորական շարժումների, քաղաքական կարևոր անցուդարձերի պատմությունը:

Դարասկզբին իր գիտական գործունեությամբ աչքի ընկավ

նաև Գարեգին Հովսեփյանը, որը մի շարք աշխատություններ նվիրեց հայ միջնադարյան մշակույթի, հատկապես մանրանկարչության, գրչության արվեստի, հնագրության, ճարտարապետության և չինարարական արվեստի հետազոտությանը: Ավելի ուշ լույս տեսավ գիտնականի գլուխգործոցը՝ «Խաղբակյանք կամ Պռոշյանք հայոց պատմության մեջ» եռահատոր աշխատությունը:

Նկատելի առաջընթաց են ապրում հայ լեզվաբանությունը և բանասիրությունը: XIX դ. առաջին տասնամյակներին լեզվաբանական ու բառարանագրական աշխատություններով հանդես է գալիս Հարություն Ավգերյանը: Հայ բառարանագրության հպարտությունն է «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» երկհատոր բառարանը, որը լույս տեսավ Վենետիկում 1836-1837 թվականներին: Մխիթարյան երեք հայրեր՝ Գաբրիել Ավետիքյանը, Մկրտիչ Ավգերյանը և Խաչատուր Սյուրմելյանը, այդ բառարանում տվել են իրենց հայտնի բոլոր գրաբար բառերի բացատրությունը, ստուգաբանությունը և գործածության բնութագրական նմուշները: Նույն բառարանի համառոտ տարբերակը 1846 թ. հրատարակվում է մեկ հատորով՝ «Առձեռն բառարան հայկազեան լեզուի» խորագրով (հեղինակ՝ Մկրտիչ Ավգերյան): XIX դ. ընթացքում լույս են տեսնում անգլերեն, ֆրանսերեն, իտալերեն, հունարեն, ռուսերեն լեզուների ձեռնարկներ, երկլեզվյա բառարաններ:

XIX դ. վերջին - XX դ. սկզբին ընդհանուր լեզվաբանության ականավոր ներկայացուցիչներ և հմուտ հայերենագետներ Հայնրիխ Հյուբշմանը և Անտուան Մեյեն ուսումնասիրում են հայերենը, բացահայտում հայերենի և հնդեվրոպական լեզուների ընդհանրությունները, նշում հայերենի տեղը հնդեվրոպական լեզվաընտանիքում՝ որպես առանձին ճյուղ: Իրենց հերթին հայ լեզվաբանները հետազոտում են հայերենի քերականական համակարգը, նրա տարբեր վիճակները: Առանձնակի հետաքրքրություն է հարուցում աշխարհաբարը, որը յուրովի արձագանքն էր գրաբարի և աշխարհաբարի կողմնակիցների միջև ծավալված գրապայքարի: Այդ պայքարն իր ավարտին է հասնում, երբ թե՛ արևելահայ, թե՛ արևմտահայ իրականության մեջ հաղթանակում է աշխարհաբարը: Աշխարհաբար գրական հայերենի խոշոր

հետազոտողներ են Մխիթարյան միաբան Արսեն Այտընյանը և հայտնի հայերենագետ Ստեփան Պալասանյանը: XIX դ. վերջին-XX դ. առաջին տասնամյակներին հայ միջնադարյան մատենագրությանը և դասական հայերենին նվիրված ուսումնասիրություններով հանդես եկավ ականավոր հայագետ Հակոբոս Տաշյանը:

XX դ. սկզբին հայ գրականության, առասպելաբանության, աշխարհաբարի հետազոտության ասպարեզում արժեքավոր ներդրում կատարեց ականավոր լեզվաբան Մանուկ Աբեղյանը: Գրաբարի, հայ միջնադարյան մատենագրական հուշարձանների ուսումնասիրությամբ հանդես եկավ նշանավոր հայագետ Ստեփան Մալխասյանցը: Հայ խոշորագույն լեզվաբան Հրաչյա Աճառյանը դարասկզբին հիմնականում զբաղվում էր հայ բարբառագիտության խնդիրներով: Լեզվաբանության ասպարեզում իր առաջին քայլերը կատարեց նոր սերնդի ներկայացուցիչներից Գրիգոր Ղափանցյանը:

Դարաշրջանի հայ գիտնականների զգալի մասը, հատկապես բնական գիտություններով զբաղվողները, համապատասխան պայմանների բացակայության պատճառով ստիպված էին իրենց գործունեությունը ծավալել Ռուսաստանի և Եվրոպայի գիտական կենտրոններում:

Ականավոր երկրաբան, հանքաբան և բյուրեղաքիմիկոս Անդրեաս Արծրունին, որ նշանավոր հրապարակախոս Գրիգոր Արծրունու եղբայրն էր, սերտորեն կապված էր հայ իրականության հետ, երազում էր աշխատել հայրենիքում: Իր գիտական գործունեության ընթացքում նա զբաղվել է Կովկասի և Ուրալի օգտակար հանածոների հանքավայրերի ուսումնասիրությամբ, գիտական արշավախմբերի կազմում եղել է աշխարհի տարբեր երկրներում: Նրան հատկապես հետաքրքրել է Կովկասի բնական հարստությունների օգտագործման խնդիրը: Նա եղել է նաև Թիֆլիսի Կովկասյան թանգարանի երկրաբանական-հանքաբանական բաժնի հիմնադիրը: Անդրեաս Արծրունու գիտական գործունեությունը ծավալվել է հիմնականում Գերմանիայում՝ Բեռլինի, Ստրասբուրգի, Բրեսլաուի գիտական հիմնարկներում: Կյանքի վերջին մեկուկես տասնամյակում նա դասախոսում էր Աախենի պոլիտեխնիկական ինստիտուտում:

Ջակոմո (Հակոբ) Ջամչյանը հայտնի քիմիկոս էր, Պադուայի և Բոլոնիայի համալսարանների պրոֆեսոր: Նրա շուրջ 400 գիտական աշխատություններում արծարծված են ֆիզիկական, օրգանական և կենսաբանական քիմիայի հարցեր: Քիմիական գիտության մեջ հայտնի «Ջամչյանի ռեակցիան» և «Ջամչյանի վերախմբավորումը» իրենց անվանումը ստացել են ի պատիվ հայ գիտնականի: Ջամչյանը հանդես է եկել որպես Իտալիայի ներկայացուցիչ՝ բազմաթիվ գիտական համաժողովներում, եղել է իտալական սենատի անդամ: Նրա մահից հետո Բոլոնիայի քիմիական ինստիտուտը կոչվում է «Ջակոմո Ջամչյանի անվան քիմիական ինստիտուտ»:

Ականավոր հայ քիմիկոս էր Հարություն Աբելյանցը, որը Ներսիսյան դպրոցի շրջանավարտ էր, իսկ բարձրագույն կրթությունը ստացել էր գերմանական ու շվեյցարական համալսարաններում: Շուրջ քառասուն տարի նա պաշտոնավարել ու դասավանդել է Ցյուրիխի (Շվեյցարիա) կանտոնալ համալսարանում:

Ֆիզիկայի բնագավառում կարևորագույն հայտնագործության հեղինակ դարձավ Հովհաննես Ադամյանը, որի անվան հետ է կապված եռագույն հեռուստատեսության համակարգի ստեղծումը: Նրա հայտնագործությունը բարձր գնահատականի է արժանացել գիտական աշխարհում և այժմ էլ պահպանել է իր նշանակությունը:

XIX դ. կեսերից որոշակի առաջընթաց է դիտվում աստղագիտության բնագավառում: Այս առումով կարևոր դեր է կատարում մինչ այդ Վենետիկի Սուրբ Ղազար կղզում հիմնադրված աստղադիտարանը:

Նկատելի աշխուժություն են ապրում հարուստ ավանդույթներ ունեցող բժշկագիտությունը և կենսաբանությունը: XIX դ. ընթացքում կենսաբանությանը վերաբերող աշխատություններ հրատարակեցին Վիեննայի և Վենետիկի Մխիթարյանները, դարվինիզմի սկզբունքների մասին առանձին գրքով Կ. Պոլսում հանդես եկավ Նազարեթ Տաղավարյանը: XIX դ. վերջին-XX դ. սկզբին Ս. Պետերբուրգում մեծ հեղինակություն է վայելում կենսաբան Վարդան Վարդանովը, որը սերտորեն կապված էր հայկական շրջանների հետ: Ս. Պետերբուրգի ռազմաբժշկական

ակադեմիայում, ռուս նշանավոր գիտնական Իվան Պավլովի ղեկավարությամբ, նույն ժամանակահատվածում սկսվեց կենսաբանության բնագավառի ամենանշանավոր դեմքերից մեկի՝ Լևոն Օրբելու գործունեությունը: Արդեն մինչև Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին հայաբնակ վայրերում աշխատում էին համալսարանական կրթությամբ հայ բժիշկներ, որոնք իրենց ուսումը ստացել էին Ռուսաստանում: Հայ բժշկության աչքի ընկնող ներկայացուցիչներից Մարգար Առուստամյանը համառուսական ճանաչման արժանացավ 1892 թ.՝ անձնազոհ գործունեություն ծավալելով Աստրախան քաղաքում խոլերայի համաճարակի դեմ: Այնուհետև նա հակաժանտախտային պայքար կազմակերպեց Միջին Ասիայում, հանդես եկավ բժշկագիտական արժեքավոր հետազոտությամբ: XIX դ. - XX դ. սկզբին առաջընթաց քայլեր են կատարվում նաև արևմտահայ բժշկագիտության ասպարեզում:

դ. Գրականությունը: XIX դ. սկզբին հայ գրականության մեջ շարունակում էր գերիշխել կլասիցիզմը, որը, լինելով մտավոր և գրական շարժում, արծարծում էր ազգային ու հասարակական խնդիրներ: Կլասիցիզմը հայ գրականությունը հարստացրեց անտիկ և դասական գրականության ոգով գրված եվրոպական գեղարվեստական երկերի թարգմանություններով, ինչպես նաև թողեց ինքնուրույն ճոխ գրականություն: Հայ հեղինակներն իրենց բանաստեղծությունների, վիպերգերի և դրամաների նյութ էին ընտրում ազգային-քաղաքական պատմության աչքի ընկնող դրվագները: Նրանց երկերում ներբողվում էին հայրենասիրությունը, անձնվիրությունը, առաքինությունը, առաջադրվում էր հայրենիքի ազատության գաղափարը: Հոգեբանական ապրումները և կենցաղային հարցերը դուրս էին կլասիցիզմի նեկայացուցիչների տեսադաշտից: Հայ կլասիցիզմի գլուխգործոցը Արսեն Բագրատունու «Հայկ դյուցազն» (1858) վիպերգն է, որի նյութը քաղված է Մովսես Խորենացու «Հայոց պատմությունից»:

XIX դ. կեսերից գրականության մեջ շրջադարձ է կատարվում դեպի նոր ուղղություններ՝ ռոմանտիզմ և ապա՝ ռեալիզմ: Փոխվում է գրական երկերի նյութը և լեզուն: Գրականության մեջ գլխավոր տեղը տրվում է ժամանակակից կյանքից վերցված

թեմաներին, գրաբարին փոխարինելու է գալիս աշխարհաբարը: Աստիճանաբար ձևավորվում է հայ նոր գրականությունը:

Հայ նոր գրականության ստեղծման ասպարեզում առաջին քայլերը կատարելու պատիվը պատկանում է բանաստեղծ Հարություն Ալամդարյանին և գրող, մանկավարժ ու հրապարակախոս Մեսրոպ Թաղիադյանին: Նրանց ստեղծագործությամբ նշանավորվեց անցումը կլասիցիզմից ռոմանտիզմին, սակայն դեռևս անհրաժեշտ էր կատարել վերջին վճռական քայլը: Հայ նոր գրականության հիրավի հիմնադիրը դարձավ մեծ լուսավորիչ, գրող ու մանկավարժ Խաչատուր Աբովյանը (1809-1848): Էջմիածնի վանքում և Ներսիսյան դպրոցում կրթություն ձեռք բերելուց հետո նա չուրջ հինգ տարի սովորել է Դորպատի (այժմ՝ Տարտու) համալսարանում, ստացել բազմակողմանի կրթություն: Իրեն բնորոշ թափով ու կրքոտությամբ նա հեղաշրջում կատարեց գրականության մեջ և իր «Վերք Հայաստանի» վեպի նյութ դարձրեց ժամանակի կյանքը՝ խորապես գիտակցելով ազգային-քաղաքական խնդիրների նշանակությունը: Վեպի հերոսը այլևս հեռավոր ժամանակների դասական դեմք չէր, այլ նոր ժամանակների քաղաքացի ու անհատ՝ օժտված հայրենասիրական բարձր մղումներով, բնածին բարոյականությամբ ու առաքինություններով: «Վերք Հայաստանին» նոր էջ բացեց հայ գրականության պատմության մեջ, այն երևույթ էր նաև համաշխարհային արձակի ընագավառում: Վեպն իր համանմանությունը չունի ողջ եվրոպական գրականության մեջ ու ազգային գրական հանճարի և ինքնատիպության դասական դրսևորում է:

XIX դ. 50-60-ական թթ. հանդես եկավ հայ գրողների հաջորդ սերունդը, որը վերջնականապես հրաժարվեց գրաբարից և անցյալի գրականության կաչկանդիչ ազդեցությունից: Նրա շարքերում առանձնանում է բանաստեղծ, գրող և քննադատ Միքայել Նալբանդյանը (1829-1866), որի ողջ ստեղծագործությունը համակված է ջերմ հայրենասիրությամբ ու ազատասիրական ոգով: Մտահոգված սեփական ժողովրդի ճակատագրով՝ Նալբանդյանը ձգտում էր հայության ազգային և սոցիալական ազատագրության հարցը լուծել ռուսական հեղափոխական շարժման միջոցով:

Գրական նույն սերնդի աչքի ընկնող ներկայացուցիչներից են Սմբատ Շահազիզը և Մկրտիչ Պեշիկթաշլյանը: Նրանց ստեղծագործության մեջ կենտրոնական տեղ են գրավում ազատասիրության ու հայրենասիրության թեմաները, իսկ 1862 թ. Զեյթունի ապստամբությունը նոր լիցք հաղորդեց նրանց քնարին: Միևնույն մոտիվները իր դրամատիկական երկերում արծարծում էր հայ քնարերգության մեծատաղանդ դեմքերից մեկը՝ Պետրոս Դուրյանը:

XIX դ. երկրորդ կեսին վերելք են ապրում հայ գրականության բոլոր ժանրերը: Գրական ասպարեզ իջած բանաստեղծներից մեծ ժողովրդականություն է ձեռք բերում Ռափայել Պատկանյանը՝ արտահայտելով հայ ժողովրդի ազատագրական ձգտումները, պայքարի կոչելով նրան: Իր արձակ ու չափածո երկերում նա մշակեց ու քարոզեց ազատագրական պայքարի գաղափարախոսությունը՝ մերժելով կրավորական կեցվածքը և եվրոպական երկրների օգնության հետ կապված սին հույսերը: 1880-ական թթ. նա հայերին զինված պայքարի դիմելու և թուրքական լծից զինված ապստամբության միջոցով ազատագրվելու կոչ էր անում՝ մեկը մյուսի հետևից լույս ընծայելով իր մարտաշունչ բանաստեղծությունները:

Դարավերջին ասպարեզ իջավ բանաստեղծների մի նոր սերունդ՝ նշանավոր քնարերգու Հովհաննես Հովհաննիսյանը, հանճարեղ բանաստեղծներ Հովհաննես Թումանյանը և Ավետիք Իսահակյանը, որոնք հայ գրականությունը հարստացրեցին թարմ թեմաներով ու ժողովրդական մոտիվներով:

Հայ պոեզիայի վերելքը շարունակվեց XX դ. սկզբին, երբ դեռ ստեղծագործում էին նախորդ սերնդի ներկայացուցիչները. միևնույն ժամանակ լիովին դրսևորվում է նշանավոր բանաստեղծներ Վահան Տերյանի, Միսաք Մեծարենցի, Սիամանթոյի և Դանիել Վարուժանի մեծ տաղանդը:

Հայ գրականությունը աննախադեպ բարձունքների է հասնում նաև արձակի ասպարեզում: Պերճ Պռոշյանը հանդես է գալիս հայ գյուղին նվիրված մի շարք վեպերով՝ ցույց տալով գյուղական կյանքի իրական պատկերը: Նա անդրադարձել է նաև ազգային-ազատագրական պայքարի խնդիրներին: Ազգային ոգով է տոգորված նույն ժամանակ գրական ասպարեզ իջած

Ղազարոս Աղայանի բազմաժանր ստեղծագործությունը: Նա ևս պատկերել է հայ գյուղի վիճակը, առաջ քաշել հին պատկերացումների և մտածողության դեմ պայքարելու հիմնահարցը, զգալի դեր խաղացել գրական հայերենի մշակման ու հղկման ասպարեզում: Նշանակալի է եղել նրա ծավալած մանկավարժական ու հասարակական գործունեությունը:

Թուրքական բռնապետության դեմ մղած ազգային-ազատագրական պայքարը հատկապես մեծ ազդեցություն թողեց գրողների այն սերնդի վրա, որը գիտակցաբար ձգտում էր ժողովրդին դաստիարակել ու ոգեշնչել պատմությունից վերցված օրինակներով:

XIX դ. երկրորդ կեսի ամենախոշոր հայ գրողը՝ Րաֆֆին (Հակոբ Մելիք-Հակոբյան), իր ստեղծագործական ուղու սկզբում հանդես էր գալիս որպես լուսավորիչ-դեմոկրատ և առաջ էր քաշում լուսավորական խնդիրներ: 1870-ական թթ. նա սերտորեն կապվեց Թիֆլիսի հայ կյանքի հետ և հրապարակ հանեց առևտրավաշխառուական խավերի բարքերը խարազանող իր երկերը: 1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմը և հայ ազատագրական պայքարի ծավալումը նոր շունչ հաղորդեցին Րաֆֆու ստեղծագործությանը: Մեկը մյուսի ետևից լույս տեսան նրա «Ջալալեդդին», «Կայծեր», «Խաչագողի հիշատակարանը», «Խենթը» ծրագրային-քաղաքական վեպերը: Րաֆֆին այն կարծիքին էր, որ օտարների լուծը թոթափելու միակ ուղին զինված պայքարն է, որը համաժողովրդական բնույթ պետք է կրի: Նա առաջ էր քաշում նոր դպրոցի գաղափարը, որը պետք է դաստիարակեր գաղափարական հերոսների սերունդ, ավելի ուժգին բորբոքեր ազատագրական պայքարի դեռևս չմարած կայծերը: Րաֆֆին հանդես էր գալիս որպես հայ ազգային-ազատագրական շարժման տեսաբան ու գաղափարախոս, նրա վեպերը XIX դ. հայ ազատագրական շարժման յուրօրինակ տարեգրությունն են: Իր ստեղծագործության վերջին շրջանում Րաֆֆին անցում կատարեց պատմավիպասանությանը: Նա գրեց «Դավիթ Բեկը» և հայ պատմավիպասանության գլուխգործոցներից մեկը՝ «Սամվելը»: Խոր ու համակողմանիորեն ըմբռնելով հայոց պատմության ներքին տրամաբանությունը, հիանալի գիտակցելով ազգի առջև ծառացած

դժվարին խնդիրները՝ Րաֆֆին կերտեց հերոսների այնպիսի կերպարներ, որոնք ոգեշնչող օրինակ դարձան հայ երիտասարդության բազում սերունդների համար: Նրա ստեղծագործություններով էին դաստիարակվում Արևմտյան Հայաստան մեկնող հայրենասեր երիտասարդները: Րաֆֆին հայկական ռոմանտիզմի ամենանշանավոր դեմքն է, չափազանց մեծ է նրա գաղափարների ազդեցությունը հայ ազգային մտածողության վրա:

Հայ պատմավիպագրության նշանավոր դեմքերից է նաև Մերենցը (Հովսեփ Շիշմանյան), որի պատմական վեպերը («Թորոս Լևոնի», «Երկունք Թ դարու», «Թեոդորոս Ռշտունի») ևս հայ ազատագրական գաղափարների արձագանքն էին և Րաֆֆու ստեղծագործությունների հետ միասին ձևավորեցին պատմավիպասանության հայկական դպրոցը:

Հայկական ռոմանտիզմի վերջին ականավոր ներկայացուցիչը Մուրացանն էր (Գրիգոր Տեր-Հովհաննիսյան), որը ևս նախապես հանդես եկավ ժամանակի բուրժուական իրականության անողոք քննադատությամբ, հասարակության ուշադրությունը հրավիրեց հայ գյուղի ծանր վիճակի վրա, ապա իրեն հուզող հրատապ խնդիրների լուծումը փորձեց գտնել հայոց պատմության էջերում: Հայրենասիրական ներշնչանքով են ստեղծված նրա «Ռուզան» դրաման և հայ գրականության խոշոր ձեռքբերումներից մեկը՝ «Գևորգ Մարզպետունի» պատմավեպը:

XIX դ. վերջերին հայ գրականության մեջ ամրապնդվում են ռեալիստական արձակի դիրքերը: Ռոմանտիզմին փոխարինելու եկած այդ գրական ուղղության խոշորագույն դեմքը Շիրվանզադեն (Ալեքսանդր Մովսիսյան) է, որը համարձակորեն անդրադարձավ սոցիալական հուզող խնդիրներին և իր երկերում պատկերեց ժամանակի հայ հասարակության ճշմարտացի նկարագիրը: Քննադատական ռեալիզմի նվաճում է «Քաոս» վեպը: Նա զարգացման նոր աստիճանի բարձրացրեց հայ դրամատուրգիան, իր ավանդը ներդրեց գրական հայերենի մշակման գործում:

Արևելահայ գրականության խոշոր նորարարներից էր Նար-Դոսը (Միքայել Տեր-Հովհաննիսյան), որի ստեղծագործությունը

աչքի է ընկնում սոցիալ-հոգեբանական ուղղվածությամբ: Նրա գրական ժառանգության համար հատկանշականը բուրժուական իրականության քննադատությունն էր, սոցիալական բացասական երևույթների և տիպերի անխնա մերկացումը, կերպարների հոգեբանական նուրբ վերլուծությունը: Բազմաժանր գրող էր Վրթանես Փափազյանը, որը հայ գրականությունը հարստացրեց գեղարվեստական ակնարկի և զրույցի ժանրերով: Նա իր ճանապարհորդական նոթերում նկարագրել է արևմտահայերի և պարսկահայերի կյանքի տարբեր կողմերը, պատմվածքներում և «Ժայռը» դրամայում ռեալիստորեն պատկերել հայ գյուղի կյանքը՝ իր ներքին խոր շերտավորմամբ ու սուր հակասություններով: XIX դ. վերջերին գրական ասպարեզ իջավ Ավետիս Ահարոնյանը: Նրա գործերում նկատելի է սիմվոլիզմի ազդեցությունը, զգալի է ռոմանտիկ-սենտիմենտալ շունչը: Բազմաժանր գրական ժառանգության մեջ կարևոր տեղ են զբաղեցնում նաև ռեալիստական գործերը, արևմտահայության կյանքը պատկերող երկերը:

Արևմտահայ իրականության մեջ ռեալիստական արձակի առաջընթացը մեծապես կապված է Արփիար Արփիարյանի անվան հետ: Նա իրականության ճշմարիտ արտացոլման համոզված կողմնակիցներից էր, արևմտահայության ազատագրության ջատագովը: Ժամանակին մեծ ճանաչում էին գտել նրա պատմվածքները և «Կարմիր ժամուց» վիպակը: Գրողների նոր սերնդի մեջ առանձնահատուկ տեղ է զբաղեցնում Գրիգոր Զոհրապը: Նա նաև հայտնի հրապարակախոս էր, ճանաչված իրավաբան և հռչակված հռետոր: Իր եռանդուն մասնակցությունն է բերել հայ հասարակական-քաղաքական կյանքին: Զոհրապը հռչակվել է նովելների իր երեք («Խղճմտանքի ձայներ», «Կյանքն ինչպես որ է», «Լուռ ցավեր») ժողովածուներով: Գյուղական կյանքը պատկերող նովելի վարպետներ էին Թլկատինցին և Ռուբեն Զարդարյանը: Արևմտահայ արձակի նշանավոր դեմքերից էին նաև Տիգրան Կամսարականը, Լևոն Բաչալյանը, Երուխանը: Գրական այդ սերունդը բեղմնավոր ստեղծագործական կյանքով էր ապրում XX դ. սկզբին, մինչև 1915 թ. ողբերգությունը:

Հայ գրականությունը խոշոր դեմքեր ունեցավ նաև դրամա-

տուրգիայի և երգիծաբանության ասպարեզում: Գեղարվեստական պատկերների կերտման վարպետությամբ և ներգործության ուժով աչքի են ընկնում Գաբրիել Սունդուկյանի թատերական երկերը («Քանդած օջախ», «Էլի մեկ զոհ», «Խաթաբալա», «Պեպո»), որոնք ժամանակի իրականության ուրույն արտացոլումն են: Տալով հայ առևտրական բուրժուազիայի սպանիչ բնութագիրը՝ Սունդուկյանը տպավորիչ ընդհանրացումներ է կատարել, կերտել մի քանի սոցիալական տիպեր (Զիմզիմով, Զամբախով), որոնք հասարակ անվան արժեք են ձեռք բերել: Նա մեծ դեր է կատարել հայ դրամատուրգիայի և թատերական արվեստի զարգացման պատմության մեջ:

Լևոն Շանթի (Սեղբոսյան) ստեղծագործությունը հայ գրականության մեջ իր ուրույն և արժանի տեղն ունի: Նրա գրական ժառանգության մեջ առավել աչքի են ընկնում դրամաները («Հին աստվածներ», «Կայսրը», «Շղթայվածը», «Օչին Պայլ»): Հայ միջնադարյան պատմությունից ընտրված դրվագները, որոնք հիմնականում ընկած են Լևոն Շանթի դրամաների հիմքում, ենթախորք են ծառայել XIX դ. վերջին - XX դ. սկզբին հասարակությանը հուզող խնդիրներ արծարծելու համար: Գրողը սիմվոլիստական արտահայտչամիջոցներով արձագանքում էր արևմտահայության անտանելի դրությանը, բողոքի ձայն բարձրացնում թուրքական բռնապետության դեմ:

XIX դ. երկրորդ կեսի հայ երգիծաբանության ամենախոշոր դեմքը Հակոբ Պարոնյանն է, որը յուրովի էր արձագանքում ժամանակաշրջանի սուր և հրատապ խնդիրներին: Նրա դիպուկ գրիչն անխնա ծաղրի էր ենթարկում «ազգային ջոջերին», հայ ժողովրդի նկատմամբ եվրոպական տերությունների երկդիմի քաղաքականությունը, մերկացնում էր թուրքական բռնապետության հետապնդած նպատակները: Հայտնի են նրա «Մեծապատիվ մուրացկաններ», «Պաղտասար աղբար», «Ազգային ջոջեր» երկերը: Մեծ երգիծաբանի ավանդույթների արժանի շարունակողը եղավ Երվանդ Օտյանը, որի թողած վիթխարի գրական ժառանգության մեջ աչքի են ընկնում XX դ. սկզբներին ստեղծված քաղաքական երգիծանքի փայլուն նմուշները: Նրա կերտած Փանջունու կերպարը ունեցել է իր մեծաթիվ իրական նախատիպերը և դարձել է բախտախնդիր, անսկզբունք և չա-

համոլ կուսակցական գործչի խորհրդանիշ:

Ե. Արվեստը: Հայ հասարակության կյանքում նշանակալի դեր են ունեցել թատրոնը, երաժշտությունը և նկարչությունը: XIX դ. սկզբներին թատերական ներկայացումներ են կազմակերպվել Կոստանդնուպոլսի, Զմյուռնիայի, Թիֆլիսի հայկական դպրոցներում: XIX դ. երկրորդ կեսին առաջին անգամ հանդես են գալիս մշտապես գործող թատերախմբեր, հաճախակի են դառնում արևելահայ ու արևմտյան դերասանների փոխադարձ հյուրախաղերը: Թիֆլիսի Թամամշյան և Կ. Պոլսի Արևելյան թատրոնները դառնում են դերասանների մի մեծ խմբի ծննդյան ու վարպետության աճի կենտրոններ: 1863 թ. Թիֆլիսում հիմնադրվում է արևելահայ առաջին պրոֆեսիոնալ թատրոնը, որի երկարամյա ղեկավարը դերասան Գևորգ Զմշկյանն էր: 1868 թ. Կոստանդնուպոլսում թատերախումբ է կազմակերպում Հակոբ Վարդովյանը: Բեմադրվում են ազգային, հայրենասիրական թեմաներով գրված պիեսներ, Գաբրիել Սունդուկյանի, Հակոբ Պարոնյանի, Ալեքսանդր Շիրվանզադեի, Լևոն Շանթի դրամաներն ու կատակերգությունները, համաշխարհային դրամատուրգիայի աչքի ընկնող նմուշներ: Հայ թատերական արվեստի պարծանքը դարձավ չեքսպիրյան հերոսների հանճարեղ դերակատար Պետրոս Ադամյանը: XX դ. սկզբներին հաճախակի եղան թատերական շրջագայությունները, որոնք կազմակերպվում էին Բաքվի և Թիֆլիսի հայկական թատերախմբերի ուժերով Կովկասի և Միջին Ասիայի հայաշատ քաղաքներում: Հովհաննես Աբելյանի և Արմեն Արմենյանի կազմակերպած թատերախումբը այցելեց նաև Արևմտյան Հայաստան, Կոստանդնուպոլիս և Իրան: 1908 թ. երիտթուրքական հեղաշրջումից հետո որոշ աշխուժացում դիտվեց նաև արևմտահայ թատերական կյանքում: Հայ բեմի պատմության մեջ իրենց ուրույն հետքը թողեցին ճանաչված դերասաններ Միհրդատ Ամրիկյանը, Մարտիրոս Մնակյանը, Ազնիվ Հրաչյան, Սիրանույշը, Հովհաննես Զարիֆյանը և ուրիշներ: Աչքի ընկան նաև ռեժիսորներ Օվի Սևումյանը, Լևոն Քալանթարը, Ամո Խարազյանը:

XIX դ. առաջին կեսին, քանի դեռ տարածում չէր ստացել եվրոպական նոտագրությունը, հայ հոգևոր երաժշտությունը օտար ազդեցություններից զերծ պահելու նպատակով անհրաժեշտություն առաջացավ ստեղծել ազգային երաժշտության առանձնահատկություններին համապատասխանող ձայնագրության նոր համակարգ: Այդ խնդիրը հաջողությամբ լուծեց Համբարձում Լիմոնճյանը, որի աշակերտների ջանքերով հայկական նոտագրության համակարգը կատարելագործվեց և միայն դարավերջին իր տեղը զիջեց եվրոպական նոտագրությանը:

Դարի երկրորդ կեսի հայ երաժշտության ամենախոշոր դեմքը Տիգրան Չուխաջյանն է՝ հայկական առաջին օպերայի՝ «Արշակ Երկրորդի» (1868) հեղինակը: Երաժշտական կրթություն ստանալով Իտալիայում՝ նա հետագայում լայն գործունեություն ծավալեց Կոստանդնուպոլսում և նոր լիցք հաղորդեց հայ երաժշտության զարգացմանը: Չուխաջյանը առաջինն էր, որ հայ երաժշտական արվեստը դրեց պրոֆեսիոնալ հիմքերի վրա: Հայ ժողովրդական երաժշտության նմուշները հավաքելու, ձայնագրելու և երգեցիկ խմբեր կազմելու ասպարեզում մեծ վաստակ ունի Քրիստափոր Կարա-Մուրզան: Մակար Եկմալյանը մնայուն արժեքներ ստեղծեց հոգևոր երաժշտության բնագավառում: XX դ. սկզբին բուռն գործունեություն ծավալեց հանճարեղ Կոմիտասը, որը տարիներ շարունակ արդյունավետ կերպով զբաղվում էր հայ ժողովրդական և հոգևոր երգերի ձայնագրմամբ, հետազոտությամբ ու ժողովրդականացմամբ: XIX դ. վերջերին ասպարեզ մտան նոր երաժշտական գործիչներ և կոմպոզիտորներ Սպիրիդոն ու Ռոմանոս Մելիքյանները, Գրիգոր Սյունին, Անուշավան Տեր-Ղևոնդյանը և շատ ուրիշներ:

Հայ ազգային օպերայի առաջընթացի ճանապարհին նշանակալի քայլ էր Արմեն Տիգրանյանի «Անուշ» օպերան, որը 1912 թ. բեմադրվեց Ալեքսանդրապոլում և մեծ ժողովրդականություն ձեռք բերեց: Հայ օպերային երգիչներից մեծ ճանաչում ուներ Նադեժդա Պապայանը, որը կատարում էր նաև հայկական ժողովրդական երգեր: Գուսանական արվեստի առաջընթացը կապված է Ջիվանու և Շերամի անվան հետ:

XIX դ. առաջին կեսին հանդես են գալիս Ս. Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիայում կրթություն ստացած առաջին պրոֆեսիոնալ հայ նկարիչները: Նրանցից էր Աղաֆոն Հովնաթանյանը, որը տաղանդավոր նկարիչների գերդաստանի արժանավոր ներկայացուցիչն էր: Նրա եղբայրը՝ Հակոբ Հովնա-

Թանյանը, ժամանակի ամենանշանավոր հայ նկարիչն էր, դիմանկարչության աչքի ընկնող վարպետ: Ստեփանոս Ներսիսյանը հայ նկարչության պատմության մեջ է մտել ամենից առաջ Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի հանրահայտ դիմանկարներով:

XIX դ. հայ գեղանկարչության ականավոր դեմքերից է աշխարհահռչակ ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկին: Թեև նա ծնվել է Ղրիմում՝ Թեոդոսիա քաղաքում, և ամբողջ կյանքն անցկացրել է Ռուսաստանում, այնուամենայնիվ անխզելիորեն կապված է մնացել հայ իրականությանը: Պատկերել է նաև Հայաստանի բնաշխարհը, ստեղծել հայկական թեմաներով կտավներ, սերտ հարաբերություններ պահպանել մի շարք հայ գործիչների հետ: XIX դ. վերջերին - XX դ. սկզբներին աչքի ընկան նկարիչներ Վարդգես Սուրենյանցը, Գևորգ Բաշինջաղյանը, Էմանուել Մահտեսյանը, Ստեփան Աղաջանյանը, Փանոս Թերլեմեզյանը, Սեդրակ Առաքելյանը, Եղիշե Թադևոսյանը: Զգալի հաջողությունների է հասնում նաև հայկական արձանագործությունը: Դիմաքանդակի խոշոր վարպետներ էին Անդրեաս Տեր-Մարուքյանը և Հակոբ Գյուրջյանը:

Որոշակի հաջողությունների են հասնում քաղաքաշինությունն ու ճարտարապետությունը: Կանոնավոր հատակագծերի հիման վրա կառուցապատվում են Երևանն ու Ալեքսանդրապոլը: Շինարարական գործունեություն է ծավալվում նաև Կարսում, Գորիսում, Շուշիում: Արևմտահայության կառուցողական շնորհը հիմնականում դրսևորվում է Կոստանդնուպոլսում, Զմյուռնիայում, մասամբ նաև Վանում, Խարբերդում և Արևմտյան Հայաստանի մի շարք քաղաքներում: Կոստանդնուպոլսում շարունակում էին գործել Պալյանների գերդաստանից սերված ճարտարապետները: Արևելահայ ճարտարապետներից հայտնի դեմքեր էին Ալեքսանդր Թամանյանը, Հովհաննես Քաջազնունին, Գաբրիել Տեր-Միքելովը:

զ. Մամուլը: Շարունակելով հայ առաջին պարբերականի՝ «Ազդարարի» ավանդույթները՝ XIX դ. առաջին կեսին լույս են տեսնում տասնյակ թերթեր և ամսագրեր: Հայ մամուլի կենտրոններից էին Կոստանդնուպոլիսը և Զմյուռնիան, Կալկաթան և Վենետիկը, Մոսկվան և Թիֆլիսը: Այդ թերթերի ու ամսագրերի

մեծ մասը կարճ կյանք ունեցավ, փակվեց նյութական դժվարությունների և իշխանությունների ճնշումների հետևանքով: Համեմատաբար երկար (1840-1887) հրատարակվեց Զմյուռնիայում լույս տեսնող «Արշալույս Արարատյան» լրագիրը, որը հարուստ բովանդակություն ուներ և իր էջերում տեղ էր հատկացնում քաղաքական, տնտեսական ու մշակութային բնույթի բազմազան նյութերի: Հայ հանդեսների նահապետը 1843 թ. Վենետիկի Սուրբ Ղազար կղզում լույս տեսնող «Բազմավեպ» ամսագիրն է, որ գերազանցապես հայագիտական բնույթ ունի և լույս է տեսնում մինչև օրս: Դարի կեսերի ամենանշանավոր պարբերականը Մոսկվայում 1858-1864 թթ. հրատարակված «Հյուսիսափայլն» էր, որի խմբագիրն ականավոր հրապարակախոս, հայագետ և արևելագետ Ստեփանոս Նազարյանն էր: Այն հայ լուսավորական շարժման ջահակիրն էր և վիթխարի դեր խաղաց հասարակական մտքի ու մշակույթի վերընթացի գործում:

XIX դ. երկրորդ կեսին և XX դ. սկզբին մեծապես աճեց հրատարակվող պարբերականների թիվը, լույս տեսան նաև կուսակցական թերթեր ու ամսագրեր: Ժամանակի հասարակական կարծիքը ձևավորելու առումով հսկայական դեր ուներ 1872 թ. Թիֆլիսում լույս տեսնող «Մշակ» թերթը, որի հիմնադիրն ու երկարամյա ղեկավարն էր նշանավոր հրապարակախոս Գրիգոր Արծրունին: Թերթը սկզբունքորեն հանդես էր գալիս հետադիմության և պահպանողականության դրսևորումների դեմ, հետևողականորեն պաշտպանում էր Հայ դատը, կողմնակից էր սուլթանական տիրապետության դեմ ուղղված զինված ապստամբության ծրագրին: «Մշակը» հատկապես մեծ ազդեցություն էր ձեռք բերել հայրենասեր երիտասարդության շրջանում: Այստեղ են առաջին անգամ լույս տեսել Րաֆֆու մի շարք երկերը: Ժամանակաշրջանի նշանավոր պարբերականներից էին նաև «Մասիս», «Արևելք», «Արևելյան մամուլ», «Հայրենիք», «Մուրճ», «Հանդես ամսօրյա», «Փորձ» և այլ թերթեր ու հանդեսներ:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ

1917 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ՈՒ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

1. ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

1917 թ. փետրվարի 27-ին Ռուսաստանում տեղի ունեցավ բուրժուադեմոկրատական հեղափոխություն, որի հետևանքով տապալվեց միապետությունը: Ստեղծվեց Ժամանակավոր կառավարություն՝ իշխան Գ. Լվովի նախագահությամբ: Հեղափոխության ընթացքում, որպես իշխանության այլընտրանքային մարմին, կազմավորվեց նաև բանվորների և զինվորների պատգամավորների Պետրոգրադի խորհուրդը: Այդպիսով, երկրում հաստատվեց երկիշխանություն՝ ի դեմս բանվորների ու զինվորների պատգամավորների Պետրոգրադի խորհրդի և Ժամանակավոր կառավարության:

Պետրոգրադի խորհուրդը կազմված էր բազմակուսակցական սկզբունքով, ուստի աշխատանքի առաջին իսկ օրերից առաջացան բազմաթիվ հակասություններ: Խորհրդում մեծամասնություն էին կազմում մենշևիկները և սոցիալիստ-հեղափոխականները, որոնք հանդես էին գալիս հեղափոխության և արմատական վերափոխումների պաշտպանությամբ: Բոլշևիկյան կուսակցությունը գտնում էր, որ անհրաժեշտ է անցում կատարել բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունից սոցիալիստական հեղափոխության: Լուրջ տարաձայնությունների հետևանքով խորհրդի ազդեցությունը թուլացավ և, ի վերջո, իշխանությունն ամբողջովին անցավ Ժամանակավոր կառավարությանը:

Հեղափոխության հաղթանակի լուրը չուտով հասավ ազգային ծայրամասեր: Ժամանակավոր կառավարության ստեղծման մասին պաշտոնապես տեղեկացվեցին բոլոր նահանգները:

1917 թ. մարտի 2-ին այդ մասին իմացավ Թիֆլիսի քաղաքագլուխ Ալ. Խատիսյանը, որն, իր հերթին, այդ լուրը հեռագրելով հայտնեց երկրամասի բոլոր քաղաքների քաղաքագլուխներին՝ առաջարկելով «ապահովել լիակատար հանգստություն և ամեն կերպ նպաստել նոր կառավարությանը իր պատասխանատու գործի մեջ»:

1917 թ. մարտի 6-ին Թիֆլիսի քաղաքային դուման ձևավորեց տեղական իշխանության մարմիններ՝ գործադիր կոմիտե և բյուրո: Կոմիտեն իր հրապարակած կոչում պաշտպանեց Ժամանակավոր կառավարությանը, որը հանդես էր եկել պատերազմը շարունակելու հայտարարությամբ: Ժամանակավոր կառավարությունն իր որոշումներով լուծարեց տեղական կառավարման նախկին մարմինները: Լուծարվեց նաև Կովկասի փոխարքայությունը և մարտի 9-ին ստեղծվեց Անդրկովկասյան հատուկ կոմիտե, որի մեջ մտան Պետական դումայի հինգ անդամներ՝ Վ. Խաղամովը (նախագահ), Մ. Ջաֆարովը, Մ. Պապաջանյանը, Ա. Ջխենկելին և Կ. Աբաշիձեն: Քանի որ նրանք ներկայացնում էին տարբեր կուսակցություններ և ազգություններ, բնականաբար, իշխանության նորաստեղծ մարմինը կոալիցիոն էր և բազմազգ: Ստանձնելով կառավարության ֆունկցիաներ՝ Անդրկովկասյան հատուկ կոմիտեն իրեն իրավունք էր վերապահում հանդես գալու Ժամանակավոր կառավարության անունից, ինչպես նաև գործելու ռուսական զորքերի կողմից զբաղված Արևմտյան Հայաստանի տարածքում:

Ինչպես կենտրոնում, Անդրկովկասում նույնպես հաստատվել էր երկիշխանություն, քանզի բանվորների և զինվորների պատգամավորների խորհուրդներ ստեղծվել էին նաև այստեղ: Բայց ինչպես կենտրոնում, Անդրկովկասում էլ խորհուրդները զուրկ էին փաստական իշխանություն իրականացնելուց:

Ժամանակավոր կառավարությունը բազմաթիվ հարցերի՝ ազգային, ագրարային, սոցիալական և այլն, լուծումը հետաձգեց մինչև Համառուսաստանյան Սահմանադիր ժողովի հրավիրումը: Վերջինս ոչ միայն պետք է լուծեր հրատապ հարցեր, այլև սահմաններ պետության կառավարման նոր ձև և ընդուներ սահմանադրություն:

Ժամանակավոր կառավարությունը մի քանի անգամ հա-

վաստիացրեց դաշնակից պետություններին, որ Ռուսաստանը պատերազմը կշարունակի մինչև հաղթական ավարտ: Այդ հարցում Ժամանակավոր կառավարության և Անդրկովկասի հատուկ կոմիտեի պաշտոնական տեսակետները պաշտպանեց երկրամասի քաղաքային խորհուրդների գործադիր կոմիտեների ներկայացուցիչների 1917 թ. մարտի 18-20-ը Թիֆլիսում կայացած համագումարը՝ ընդունելով «Ընթացիկ պահի գործելակերպի մասին» մենշևիկների ներկայացրած բանաձևը: Համագումարն իր որոշմամբ համաձայնվեց այն տեսակետին, որ բանվորական, գյուղացիական, ազգային և կրոնական հարցերի լուծումը պետք է վերապահել Սահմանադիր ժողովին:

Պատերազմը շարունակելու խնդիրը խիստ կարևոր էր բովանդակ հայության համար: Արևմտահայության ստվար հատվածը պատերազմի ընթացքում թուրքական բարբարոսների կողմից ենթարկվել էր ֆիզիկական բնաջնջման, իսկ ցեղասպանությունից փրկվածները սփռվել էին աշխարհով մեկ: Պատերազմի ընթացքում ռուսական բանակը գրավել էր Արևմտյան Հայաստանի զգալի մասը: Հայ ժողովուրդը մեծ հույսեր էր կապում Ժամանակավոր կառավարության արտաքին քաղաքականության հետ՝ հուսալով, որ պատերազմը շարունակելու դեպքում Թուրքիան պարտություն կկրի, կազատագրվի ամբողջ Արևմտյան Հայաստանը, և հայ գաղթականությունը կվերադառնա բնակության իր նախկին վայրերը:

1917 թ. ապրիլի 26-ին Ռուսաստանի Ժամանակավոր կառավարությունը հատուկ որոշում ընդունեց Արևմտյան Հայաստանի վերաբերյալ, որը պետք է գործեր մինչև հաշտության պայմանագրի կնքումը: Այդ որոշման համաձայն Արևմտյան Հայաստանի զգալի մասը, որը գրավել էին ռուսական զորքերը, դուրս էր բերվում ինչպես զինվորականների, այնպես էլ Անդրկովկասի իշխանությունների կառավարման համակարգից, այսինքն՝ անդրկովկասյան ազգամիջյան հակասությունների ոլորտից և դրվում էր Ժամանակավոր կառավարության անմիջական ենթակայության ներքո: Արևմտյան Հայաստանի կոմիսար նշանակվեց գեներալ Պ. Ավերյանովը, իսկ քաղաքացիական հարցերի գծով նրա օգնական՝ հայտնի հասարակական գործիչ Հ. Զավրիյանը (Զավրիև):

Պ. Ավերյանովի կոմիսարության շրջանում Արևմտյան Հայաստանում իրականացվեցին մի շարք կարևորագույն վերափոխումներ: Նրա հրամանով կազմվեց երեք շրջան՝ Վանի (Բերկրի, Արճեշ, Սարայ, Բաշկալե, Խոշաբ, Վան), Էրզրումի (Էրզրում, Մամախաթուն, Աշկալա, Հասան կալա), Խնուսի (Ալաշկերտ, Ղարաքիլիսա, Դիադին, Խնուս, Մանազկերտ, Բայազետ): Վերոնշված տարածքներում կոմիսարիատին առընթեր ստեղծվեցին վարչաքաղաքական մարմիններ, որոնք զբաղվում էին տնտեսական, կրթական, մշակութային և այլ հարցերով: Այդ վերափոխումների հետևանքով մոտ 140 հազար տարագրված հայեր վերադարձան Արևմտյան Հայաստան:

1917 թ. ամռանը ռուսական բանակում սկսվեց ազգային գնդերի ստեղծման գործընթացը: Պետրոգրադի և Թիֆլիսի մի շարք հայկական կազմակերպություններ Ժամանակավոր կառավարությունից խնդրեցին ռուսական բանակում ծառայող հայ զինվորներից և սպաներից կազմավորել հայկական զորամասեր: Այդ ժամանակ տարբեր ռազմաճակատներում գործող ռուսական բանակներում ծառայում էին մոտ 120 հազար հայ զինվորներ: Գործի ճիշտ կազմակերպման դեպքում այդ զորամասերը կարող էին դառնալ ամբողջ Արևմտյան Հայաստանի ազատագրության և հայկական պետականության վերականգնման կարևորագույն գործոն: Արդեն 1917 թ. հուլիսին Կովկասյան ռազմաճակատում կազմակերպված էին վեց հայկական գնդեր:

Փետրվարյան հեղափոխությունը լայն հնարավորություն ստեղծեց քաղաքական կուսակցությունների գործունեության համար: Անդրկովկասում բուռն գործունեություն էին ծավալել Հայ հեղափոխական դաշնակցությունը, Սոցիալ-դեմոկրատական հնչակյան, Ռամկավար սահմանադրական, Հայ ժողովրդական կուսակցությունները: Անդրկովկասի քաղաքական կյանքում զգալի դեր էին կատարում վրացական սոցիալիստ-ֆեդերալիստները, ազգային-դեմոկրատները, կովկասյան թաթարների մուսավաթ և իթթիհատ կուսակցությունները: Երկրամասում մեծ կշիռ ունեին համառուսաստանյան մենշևիկյան և սոցիալիստ-հեղափոխականների կուսակցությունները: Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունները, որոնք նոր էին դուրս եկել ընդհատակից, դեռևս թույլ էին:

Ժամանակավոր կառավարության հռչակած ազգերի ազատ ինքնորոշման սկզբունքը Անդրկովկասի քաղաքական կուսակցություններին հնարավորություն էր տվել համագործակցել նոր իշխանությունների հետ և պաշտպանել նրա քաղաքականությունը:

Ազգային վերածննդի նշանաբանով անցան հայկական կուսակցությունների՝ մեկը մյուսի հետևից հրավիրված կոնֆերանսները, հոգևորականության, ուսուցիչների, գյուղացիության, ուսանողության և այլ համագումարները: Այդ կուսակցությունները մեծ հույսեր էին կապում Ժամանակավոր կառավարության հետ, որը հայտարարել էր, թե սատար է կանգնում հայ ժողովրդի ամենակնճռոտ հարցին՝ Արևմտյան Հայաստանի ազատագրմանը:

Անդրկովկասի ապագա պետական կառուցվածքի վերաբերյալ հայ քաղաքական կուսակցություններն ունեին տարբեր մոտեցումներ: Դաշնակցություն կուսակցության կովկասյան կազմակերպությունների կոնֆերանսն ընդունեց քաղաքական ծրագիր, որը, ելնելով ժողովուրդների ինքնորոշման իրավունքից, նախատեսում էր երկրամասում ստեղծել դեմոկրատական դաշնային հանրապետություն Ռուսաստանի կազմում՝ պաշտպանական, արտաքին քաղաքականության և դրամական միասնական համակարգով:

Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցությունը հանդես էր գալիս ապագա դեմոկրատական պետության կազմի մեջ մտնող բոլոր ազգերի քաղաքական իրավունքների պաշտպանությամբ՝ բացառելով մեկ ազգի իշխանության հաստատումը մյուսի նկատմամբ:

1917 թ. ապրիլին կայացած Հայ ժողովրդական կուսակցության հիմնադիր ժողովն ընդունեց որոշում, ըստ որի երկրամասի հայաբնակ վայրերում հայերը պետք է ստանային տարածքային և ազգային ինքնավարություն, ներքին հարցերը տեղական օրենսդրությամբ լուծելու իրավունք:

Անդրկովկասի քաղաքական կուսակցությունների միջև առկա էին բազմաթիվ հակասություններ հատկապես երկրամասի վարչական կառուցվածքի վերաբերյալ: 1917 թ. հոկտեմբերին Թիֆլիսում կայացած Դաշնակցության երկրամասային

ժողովն ընդունեց ծրագիր, որը նախատեսում էր Անդրկովկասը բաժանել երեք շրջանների՝ հայկական, վրացական և թաթարական: Դրանց սահմանները պետք է որոշվեին՝ ելնելով ազգագրական, ժողովրդագրական, տնտեսական գործոններից: Հայկական շրջանը պետք է ընդգրկեր Երևանի նահանգը, Ելիզավետպոլի նահանգի լեռնային մասը, Թիֆլիսի նահանգի Բորչալու գավառի հայկական մասը, Ախալքալաքի գավառը, իսկ Կարսի մարզից՝ Կարսի և Կաղզվանի գավառները:

Անդրկովկասի վարչատարածքային բաժանումների վերաբերյալ վրացական և մահմեդական քաղաքական ուժերն ունեին իրենց սեփական պատկերացումները: Վրացական սոցիալիստ-ֆեդերալիստների կուսակցության կարծիքով երկրամասի վարչական բաժանումն իրականացնելիս անհրաժեշտ էր առաջնորդվել ազգաբնակչության իրական տեղաբաշխմամբ: Բայց, հակառակ այդ սկզբունքի, կուսակցության ընդունած բանաձևում Վրաստանի մաս հայտարարվեցին նաև Ախալքալաքի, Ախալցխայի, Բորչալուի գավառները: Մեկ այլ՝ վրացական Ազգային-դեմոկրատական կուսակցության տեսակետով Վրաստանը պետք է միավորեր այն տարածքները, որոնք միմյանց հետ կապված էին տնտեսական, պետական, մշակութային դարավոր փոխհարաբերություններով: Բանն այնտեղ էր հասել, որ այդ կուսակցությունը վրացական էր համարում նույնիսկ Երևանի նահանգի և Կարսի մարզի առանձին գավառներ, այդ թվում՝ Արդվինը, Օլթին, Փամբակը: Վրաց ազգայնականների տարածքային հավակնությունները Հայաստանի պատմական շրջանների նկատմամբ խճճում և ավելի էին բարդացնում ազգամիջյան հարաբերությունները՝ առաջացնելով ազգամիջյան թշնամանք:

Ավելի սանձարձակ էին մուսավաթականները՝ տարածքային իրենց պահանջներով: 1917 թ. հոկտեմբերին կայացած համագումարում նրանք ընդունեցին մի ծրագիր, որը նախատեսում էր Ատրպատականի, Թուրքեստանի, Կովկասի, Բաշկիրիայի, Թաթարստանի, Ղրիմի միավորումը մի պետության մեջ: Ծրագրի հիմքում ընկած էր պանթուրքիզմի զավթողական-մարդատյաց գաղափարախոսությունը, որն այդ ժամանակ փորձում էր իրականացնել Օսմանյան կայսրությունը:

Վարչական բաժանումների վերաբերյալ Դաշնակցություն

կուսակցության ներկայացրած առաջարկները վրացիների և կովկասյան Թուրք-Թաթարների համատեղ դիմակայության հետևանքով տապալվեցին: Ի վնաս հայ ժողովրդի այդ համագործակցությունը չարունակվեց նաև հետագայում:

1917 Թ. ընթացքում Անդրկովկասում տեղի ունեցան Սահմանադիր ժողովի և տեղական ինքնակառավարման մարմինների պատգամավորների ընտրություններ: Երկրամասի ազգային կուսակցություններն ստացան տեղաբնիկ ժողովուրդների քվեների բացարձակ մեծամասնությունը: Բոլշևիկները, հանդես գալով ընդհանուր կարգախոսներով, չկարողացան ազդել երկրամասի հիմնական քաղաքական անցքերի վրա:

1917 Թ. Փետրվարյան հեղափոխությունը հայ ժողովրդին ընձեռեց լայն հնարավորություններ իր ներքին կյանքը կարգի բերելու ու զարգացնելու համար: Մայիսի 2-ից 11-ը Երևանում հրավիրվեց արևմտահայերի առաջին համագումարը, որին մասնակցում էին քաղաքական կուսակցությունները, զինվորականությունը, ազգային-ազատագրական շարժումը և հասարակական կյանքի տարբեր ոլորտները ներկայացնող 59 պատգամավորներ և 400-ից ավելի հյուրեր: Համագումարի պատվավոր նախագահ ընտրվեց ազգային հերոս, զորավար Անդրանիկը, որը հանդես եկավ միասնության և համերաշխության կոչով: Ընդունվեցին հայ ժողովրդի համար կենսական և առաջնահերթ նշանակություն ունեցող որոշումներ: Համագումարում առաջնայինը Արևմտյան Հայաստանի վերաշինության, ազգի գոյատևման ու պահպանման խնդիրներն էին: Կարևորվեց հայ գաղթականության՝ հայրենիք վերադարձնելու խնդիրը: Քննարկվեցին նաև տնտեսական հարցեր, որոնք պետք է ընձեռեին լայն հնարավորություններ ազգի բարգավաճման համար: Համագումարն ընտրեց Արևմտահայ ազգային խորհուրդ՝ Վահան Փափազյանի (Կոմս) գլխավորությամբ: Ռազմական բաժնի ղեկավարությունը դրվում էր Անդրանիկի վրա: Արևմտահայ ազգային խորհուրդը լիազորություններ չուներ ղեկավարելու բովանդակ հայության կյանքը: Հայ ժողովրդի երկու հատվածների ղեկավարության մեջ տարբեր հարցերի շուրջ գոյություն ունեին լուրջ տարաձայնություններ, որոնք չարունակվեցին նաև Հայաստանի առաջին Հանրապետության շրջանում:

Փետրվարյան հեղափոխությունից հետո իրենց ազգային կյանքը ղեկավարելու համար Անդրկովկասում ստեղծվեցին վրացական և մահմեդական ազգային խորհուրդներ: Հայոց քաղաքական և հասարակական կյանքի ղեկավարման, ժողովրդի միասնականության ապահովման համար նույնպես անհրաժեշտ էր ստեղծել այդպիսի մի ղեկավար մարմին: 1917 Թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին Թիֆլիսում գումարվեց հայկական ազգային համախորհրդակցություն (համագումար): Նրա աշխատանքներին մասնակցելու համար ընտրվել էր 228 պատգամավոր, որոնք ներկայացնում էին ՀՀ Դաշնակցություն, Հնչակյան, Հայ ժողովրդական, Սոցիալ-դեմոկրատական, Սոցիալիստ-հեղափոխականների կուսակցությունները, տարբեր հասարակական, դպրոցական, մշակութային կազմակերպություններ և հոսանքներ: Համագումարն իր վստահությունը հայտնեց ժամանակավոր կառավարությանը: Ռուսական զորքերի կողմից Արևմտյան Հայաստանի տարածքների գրավումը հայ հասարակության լայն շրջաններում դիտվում էր որպես հայրենիքի ազատագրության միակ ճանապարհ:

Համագումարն ընտրեց 15 անդամից կազմված Արևելահայ ազգային խորհուրդ, որի նախագահ դարձավ հայտնի գրող և Դաշնակցության աչքի ընկնող գործիչ Ավետիս Ահարոնյանը: Ազգային խորհուրդն ուներ զինվորական, գաղթականության, դպրոցական, բժշկական բաժիններ: Նրան իրավունք էր վերապահվում հանդես գալու որպես Անդրկովկասի հայության լիազոր ներկայացուցչություն՝ օժտված կառավարության իրավունքներով: Ազգային խորհուրդը գոյություն ունեցավ մինչև Հայաստանի Հանրապետության ստեղծումը: 1917 Թ. վերջերին Հայոց ազգային խորհրդի մասնաճյուղեր ստեղծվեցին Բաքվում (նախագահ՝ Աբրահամ Գյուլխանդանյան) և Երևանում: Վերջինիս դերն ու նշանակությունը կտրուկ բարձրացավ, երբ նախագահ ընտրվեց Արամ Մանուկյանը:

Այդպիսին էր Անդրկովկասի և Հայաստանի քաղաքական վիճակը Ռուսաստանում բոլշևիկյան հեղաշրջման նախօրյակին:

2. ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

ա. Հեղափոխությունը և Անդրկովկասը: *1917 թ. հոկտեմբերի 25-ին բոլշևիկյան կուսակցությունը Պետրոգրադում իրականացրեց պետական հեղաշրջում և գրավեց իշխանությունը: Բոլշևիկներից և ձախ սոցիալիստ-հեղափոխականներից կազմվեց կոալիցիոն կառավարություն՝ Ժողովրդական կոմիսարների խորհուրդ՝ Վ. Ի. Լենինի նախագահությամբ: Այդ հեղափոխությամբ ընդհատվեց բուրժուադեմոկրատական հեղափոխության ընթացքը: Եթե Փետրվարյան հեղափոխությունը և Ժամանակավոր կառավարության միջոցառումները հայերին հույս էին ներշնչել Արևմտյան Հայաստանը թուրքական բռնապետությունից ազատագրելու գործում, ապա Հոկտեմբերյան հեղափոխությունը վերջ դրեց այդ սպասումներին:*

Անդրկովկասում Հոկտեմբերյան հեղափոխությունն ընդունվեց ոչ միանշանակ: Բանվորների ու զինվորների պատգամավորների Թիֆլիսի խորհրդի և գործկոմի հոկտեմբերի 25-ի համատեղ նիստում ընդունեց: Նոյեմբերի 11-ին Հանրային ապահովության կոմիտեի և պատգամավորների խորհրդի երկրամասային կենտրոնի կողմից հրավիրված խորհրդակցությունն արտահայտվեց երկրամասի կառավարումը ժամանակավորապես Հանրային ապահովության կոմիտեին հանձնելու օգտին: Նրա կազմի մեջ ընդգրկվեցին մի շարք կուսակցությունների և ազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ՝ բացի բոլշևիկներից: Նոյեմբերի 15-ին Թիֆլիսում Հանրային ապահովության կոմիտեն կազմակերպեց իշխանության նոր մարմին՝ Անդրկովկասյան կոմիսարիատը՝ մենշևիկ Ե. Գեգեչկորու նախագահությամբ: Փաստորեն այդ մարմինը Անդրկովկասի նոր կառավարությունն էր, որի 12 անդամներից 3-ը հայեր էին: Անդրկովկասյան կոմիսարիատը չճանաչվեց բոլշևիկյան կառավարության կողմից, ուստի գործում էր կենտրոնից անկախ:

Այսպիսի պայմաններում 1917 թ. դեկտեմբերի 16-ին, Խորհրդային Ռուսաստանի ժողկոմխորհուրդը ականավոր բոլշևիկ Ստեփան Շահումյանին նշանակեց Կովկասի գործերի ժամանակավոր Արտակարգ կոմիսար՝ մինչև երկրամասում խորհրդային իշխանության հաստատումը:

1917 թ. դեկտեմբերի 5-ին Երզնկայում կնքվեց զինադադար, որով և դադարեցվեցին ռազմական գործողությունները Կովկասյան ռազմաճակատում:

Հաշտության մասին Խորհրդային Ռուսաստանի դեկրետը արագացրեց ռազմաճակատի քայքայումը: Տասնյակ հազարավոր զինվորներ ինքնակամ լքեցին զորամասերը՝ մերկացնելով ռազմաճակատի գիծը: Հեռացող ռուսական զորքերը հաճախ հարձակման էին ենթարկվում մահմեդականների կողմից, որոնք թալանում էին նրանց՝ խլելով զենքն ու զինամթերքը: Այդ գործում առավել աչքի էր ընկնում գեներալ Մաղալովի հրամանատարության ներքո գտնվող արխազական վայրի դիվիզիան, որը հափշտակած միջոցները դնում էր մահմեդական ազգային կենտրոնի տրամադրության տակ: Մահմեդական բանդաները հեռացող ռուսական զորքերի սպանդ կազմակերպեցին 1918 թ. հունվարին Շամխոր կայարանում՝ գնդակահարելով երկու հազար ռուս զինվորների և հրամանատարների, յուրացնելով մեծաքանակ զենք ու զինամթերք:

Այդպիսի ծանր պայմաններում սկսվեց հայկական բանակային կորպուսի կազմավորումը: Կովկասյան ռազմաճակատի հրամանատարի՝ 1917 թ. նոյեմբերի 19-ի հրամանով Հայկական կորպուսի հրամանատար նշանակվեց գեներալ Թովմաս Նազարբեկյանը, կորպուսի կոմիսար՝ Դրոն (Դրաստամատ Կանայան): Սկզբում կորպուսը բաղկացած էր երկու դիվիզիայից՝ չորսական գնդերով: Առաջին դիվիզիայի հրամանատարն էր գեներալ Մ. Սիլիկյանը, երկրորդինը՝ գեներալ Մ. Արեշյանը: Կորպուսից զատ կազմակերպվեց Հայաստանի երկրապահ դիվիզիան, որի հրամանատար նշանակվեց Անդրանիկը: Շուտով նրան չնորհվեց ռուսական բանակի գեներալի աստիճան: Ռազմաճակատում գործում էին նշանավոր հայդուկապետներ Սեպուհի, Սեբաստացի Մուրադի, Պանդուխտի, Թորգոմի կամավորական ջոկատները, որոնք քաջ գիտեին տեղանքը: Ռուսական զորքերի հեռանալուց հետո ռազմաճակատի մի քանի հարյուր

կիլոմետրանոց գիծը պաշտպանում էին հայերը:

բ. «Թուրքահայաստանի մասին» դեկրետը: Հայ քաղաքական տարբեր ուղղությունների ներկայացուցիչներ փորձեցին նորաստեղծ բոլշևիկյան կառավարության միջոցով լուծում տալ Արևմտյան Հայաստանի հիմնահարցին: 1917 թ. նոյեմբերին Խորհրդային Ռուսաստանի ժողկոմխորհը կազմեց հանձնաժողով (Ի. Ստալին, Պ. Պոռչյան, Ռոստոմ, Վ. Ավանեսով, Վ. Տերյան)՝ Արևմտյան Հայաստանի վերաբերյալ դեկրետի նախագիծ մշակելու համար: Հանձնաժողովը մշակեց ծրագիր, որի համաձայն Արևմտյան Հայաստանը պետք է ստանար անկախություն, իսկ Արևելյան Հայաստանը մնար Ռուսաստանի կազմում՝ ներքին ինքնավարության իրավունքով: Այդ ոգով կազմվեց Արևմտյան Հայաստանի վերաբերյալ զեկուցագիրը և նրա անկախության մասին դեկրետի նախագիծը: Զեկուցագրում մանրամասն նկարագրված էր արևմտահայության ողբերգական վիճակը:

Հանձնաժողովի կողմից ժողկոմխորհի քննարկմանը ներկայացվեց «Թուրքահայաստանի մասին» դեկրետի նախագիծը, որի հիմքում դրված էին հետևյալ դրույթները. Ռուսաստանի կառավարությունը պետք է պաշտպաներ հայերի լիակատար ազգային ինքնորոշման և Արևմտյան Հայաստանում անկախ հայկական պետություն ստեղծելու իրավունքը: Միաժամանակ Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը պետք է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկեր՝ նախնական երաշխիքներ ապահովելու հայ ժողովրդի ինքնորոշման համար:

Արևմտյան Հայաստանում հայկական պետության ստեղծման և պահպանման նախագծի հեղինակներն առաջարկում էին իրականացնել հետևյալ միջոցառումները. անմիջապես սկսել Ռուսաստանում հաստատված հայ փախստականների վերադարձը իրենց նախկին բնակության վայրերը, կազմակերպել Եվրոպա և Ամերիկա արտագաղթած հայերի վերադարձը: Դեկրետի նախագծում Արևմտահայաստանի գերագույն կոմիսարին առաջարկվում էր արևմտահայերից կազմել խորհուրդ և նրա հետ համատեղ միջոցառումներ ձեռնարկել փախստականներին իրենց նախկին բնակավայրերում վերաբնակեցնելու համար: Անհրաժեշտ էր համարվում կարճ ժամկետներում մշակել նախապատրաստական միջոցառումների նախագիծ և ներկայացնել ժողկոմխորհի հաստատմանը: Նշված նպատակների համար ռազմական ֆոնդերից տրվելու էին վարկեր, որոնց չափը միասնաբար որոշելու էին Արևմտյան Հայաստանի խորհուրդը և գլխավոր կոմիսարը:

Բոլոր այդ խնդիրները և միջոցառումները կարող էին իրականացվել այն դեպքում, եթե Արևմտյան Հայաստանում թողնվեր անհրաժեշտ քանակի զորք: Այդ մասին խոսվում էր դեկրետի նախագծում, ուր միաժամանակ նշվում էին Արևմտյան Հայաստանի կոնկրետ տարածքները (Էրզրում, Վան, Բիթլիս): Դեկրետի նախագիծը հայկական պետության ստեղծման և պահպանման իրական երաշխիքներ էր նախատեսում:

«Թուրքահայաստանի մասին» դեկրետի նախագիծը 1917 թ. դեկտեմբերի 20-ին, 23-ին և 29-ին դրվեց ժողկոմխորհի քննարկմանը: Առաջին երկու քննարկումների ժամանակ տարաձայնությունների հետևանքով որոշում չընդունվեց: Միայն 29-ին ժողկոմխորհն ընդունեց դեկրետը՝ կարևորագույն որոշ դրույթների փոփոխությամբ: Մասնավորապես որոշվեց զորքերը դուրս բերել Արևմտյան Հայաստանից և անհապաղ ստեղծել հայկական ժողովրդական միլիցիա: Նախագծից հանվել էր վարկեր տրամադրելու հարցը: Դեկրետի իրականացումը դրվում էր Կովկասի գործերի ժամանակավոր արտակարգ կոմիսար Ստեփան Շահումյանի վրա:

գ. Հայկական հարցը Բրեստի և Տրապիզոնի հաշտության բանակցություններում: Խորհրդային Ռուսաստանը հաշտության առաջարկ արեց պատերազմող կողմերին, որն ընդունվեց Քառյակ միության կողմից: Պատերազմում պարտվող Գերմանիայի համար դա դադար առնելու հնարավորություն էր, որը և հմտորեն օգտագործեց գերմանական զինվորական հրամանատարությունը:

Բանակցությունները սկսվեցին 1917 թ. դեկտեմբերին և ընթացան երեք փուլով: Բրեստ-Լիտովսկում բանակցող պետությունները՝ Գերմանիան, Ավստրո-Հունգարիան, Թուրքիան, Բուլղարիան և Խորհրդային Ռուսաստանը, առանց հայ ժողովրդի շահերը հաշվի առնելու որոշում էին նրա պատմական տարածքների ճակատագիրը:

Բրեստ-Լիտովսկի բանակցությունների երեք փուլերում էլ արծարծվեց հայկական տարածքների հարցը: Բանակցությունների առաջին փուլում Խորհրդային Ռուսաստանի պատվիրակության ղեկավարը ներկայացրեց իր կառավարության դիրքորոշումը և սկզբունքները: Ըստ այդ սկզբունքների արգելվում էր պատերազմի ժամանակ գրավված տարածքների բռնակցումը: Ռուսաստանը պարտավորվում էր իր զորքերը դուրս բերել գրավված տարածքներից՝ նույնն առաջարկելով բանակցող կողմերին: Մինչև պատերազմը քաղաքական ինքնուրույնությունից չօգտվող ազգային խմբերին տրվում էր այս կամ այն պետությանը պատկանելու կամ հանրաքվեի միջոցով իր պետական իշխանությունն ազատ որոշելու արտոնություն: Այդ առաջարկները մերժվեցին Քառյակ միության կողմից: Գերմանիայի ներկայացուցիչը պահանջեց Հայկական հարցը չդարձնել քննարկման առարկա: Իր հերթին, թուրքական կողմը բացառում էր Հայկական հարցի գոյությունն ընդհանրապես՝ Արևմտյան Հայաստանի տարածքը համարելով Օսմանյան կայսրության արևելյան նահանգներ:

Գերմանական նոր հարձակման և խորհրդային զորքերի պարտության հետևանքով Քառյակ միության պետությունները նոր, ավելի ծանր պայմաններ ներկայացրեցին բոլշևիկյան կառավարությանը: Նրանք մասնավորապես պահանջում էին, որ Ռուսաստանը Թուրքիային վերադարձնի նրա արևելյան մարզերը, այսինքն՝ Արևմտյան Հայաստանը: Շուտով Գերմանիան պահանջեց ռուսական զորքերը դուրս բերել նաև Կարսից և Արդահանից:

Քառյակ միության երկրները չատ լավ էին հասկանում, որ բոլշևիկյան հեղաշրջումը Ռուսաստանում բարոյալքել և վերջնականապես քայքայել է ռուսական բանակը: 1918 թ. մարտի 3-ին Խորհրդային Ռուսաստանի կառավարությունն ընդունեց Քառյակ միության ներկայացրած բոլոր պահանջները: Համաձայն պայմանագրի չորրորդ հոդվածի և ռուս-թուրքական լրացուցիչ պայմանագրի՝ Թուրքիային էին հանձնվում ամբողջ Արևմտյան Հայաստանը և Կարսի մարզը: Փաստորեն վերականգնվում էր մինչև 1877-1878 թթ. ռուս-թուրքական սահմանը: Ռուսաստանը պարտավորվում էր 6-8 չաբաթվա ընթացքում հանել իր բոլոր ուժերը պայմանագրում նշված տարածքներից, զորացրել թուրքահպատակներից ու ռուսահպատակներից կազմված հայկական բոլոր զինված խմբերը: Ռուսաստանը համաձայնվում էր Կովկասի ամբողջ տարածքում չկենտրոնացնել մեկ դիվիզիայից ավելի զորք:

Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը ցույց տվեց, որ իրենց իշխանությունը պահպանելու համար բոլշևիկները պատրաստ են զոհաբերել միլիոնավոր մարդկանց, նրանց պատմական իրավունքներն ու տարածքները:

1918 թ. փետրվարի 10-ին իր աշխատանքները սկսեց Անդրկովկասյան Սեյմը (խորհրդարանը), որտեղ ներկայացված էին երկրամասի ազգային քաղաքական կուսակցությունները: Սեյմի 125 անդամներից 32-ը մենշևիկյան, 30-ը՝ մուսավաթական, 27-ը՝ դաշնակցության, 19-ը՝ սոցիալիստ-հեղափոխական կուսակցությունների անդամներ էին: Սեյմի նախագահ ընտրվեց վրաց մենշևիկ Ն. Չխեիձեն:

Անդրկովկասյան Սեյմը չճանաչեց Բրեստ-Լիտովսկում կնքված պայմանագրի՝ երկրամասին վերաբերող հոդվածները և որոշեց առանձին բանակցություններ վարել Թուրքիայի հետ: Բանակցությունների վայր ընտրվեց Տրապիզոնը: Անդրկովկասի պատվիրակությունը գլխավորում էր արտգործնախարար Ա. Չխենկելին: Հայերից պատվիրակության կազմում ընդգրկվեցին Հ. Քաջազնունին և Ալ. Խատիսյանը: Փետրվարի 23-ին Սեյմի պատվիրակությունը ժամանեց Տրապիզոն: Բանակցությունները սկսվեցին 1918 թ. մարտի 14-ին:

Անդրկովկասյան պատվիրակությունից թուրքերը պահանջեցին ընդունել Բրեստի հաշտության պայմանները, որոնցով նախատեսվում էր դուրս բերել զորքերը Կարսի, Արդահանի, Բաթումի շրջաններից: Թուրքական պատվիրակությունը հետևողականորեն դնում էր Ռուսաստանից Անդրկովկասի անջատման և այն անկախ պետություն հռչակելու հարցը: Արևմտյան Հայաստանի ինքնավարության պահանջը օսմանյան պետության շրջանակներում թուրքերն անընդունելի էին համարում՝ այն դիտելով որպես Թուրքիայի ներքին գործ:

Վրաց մենշևիկները փորձում էին Թուրքիայի տարածքային պահանջները բավարարել ի հաշիվ Կարսի, Կաղզվանի, Օլթիի

շրջանների: Բանակցությունների ժամանակ Զլենկելին Սեյմից պահանջեց արտակարգ լիազորություններ, որը և շուտով ստացավ: Օգտվելով այդ լիազորություններից՝ նա պատրաստակամություն հայտնեց Թուրքերին հանձնել Օլթիի շրջանը, Արդահանի շրջանի հարավային և Կաղզվանի շրջանի արևմտյան մասերը:

Թուրքական պատվիրակությունը պահանջեց 48 ժամվա ընթացքում ճանաչել Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը և հայտարարել Անդրկովկասի անկախությունը: Անդրկովկասի կառավարությունը համաձայնվեց զիջել Կարսի մարզը և Արդվինի շրջանը: Թուրքերը նոր վերջնագիր ներկայացրին: Պատասխանը Թիֆլիսից ուշանում էր, և Զլենկելին պատվիրակության անդամների անունից ամրողջությամբ ճանաչեց Բրեստ-Լիտովսկի խաղաղության պայմանագիրը: Զբավարարվելով այդքանով՝ Թուրքերը նպատակ ունեին տարածքային նոր նվաճումներ կատարել Անդրկովկասում: 1918 Թ. ապրիլի 1-ին Տրապիզոնի բանակցություններն ընդհատվեցին: Նույն օրը, քննարկելով ստեղծված իրավիճակը, Անդրկովկասյան Սեյմը դիմեց բնակչությանը՝ Թուրքական պահանջների և նոր հարձակման դեմ համախմբվելու կոչով: Իրականում արտաքին և ներքին քաղաքականության մի շարք հարցերում Սեյմում միաբանություն չկար:

դ. 1918 Թվականի Թուրքական արշավանքը Անդրկովկաս և հայ ժողովրդի մայիսյան հերոսամարտերը: *Երզնկայի զինադադարից հետո Թուրքական հրամանատարությունը ժամանակ էր շահել և զորքեր կենտրոնացրել՝ նոր հարձակում սկսելու համար: Կովկասյան ռազմաճակատից ռուսական զորքերի հեռանալուց հետո Թուրքերը պատրվակ էին որոնում պատերազմը վերսկսելու համար: 1918 Թ. Հունվարի վերջերին Թուրքական հրամանատարությունը հայտարարեց, որ հայերն Անդրկովկասում մշտապես հարձակումներ են կատարում մահմեդականների վրա, ուստի նրանց կյանքն ապահովելու համար ստիպված է վերսկսել ռազմական գործողությունները: Օգտվելով նրանից, որ ռուսական զորքերը հեռացել էին ռազմաճակատից, Թուրքերը հայտարարեցին, թե իրենց առաջխաղացումը կչարունակվի մինչև ռուսական զորքերին հանդիպելը: Երզնկայի մոտ հայկական զորքերն ուժեղ դիմադրություն ցույց տվեցին, բայց մի*

քանի օր անց ստիպված էին ազգաբնակչության հետ նահանջել դեպի Էրզրում: Այստեղ քաղաքի և շրջանի պաշտպանության ղեկավար էր նշանակվել Անդրանիկը:

Անդրանիկի՝ Էրզրում գալու պես սկսեցին քաղաք ժամանել կամավորական խմբերը՝ իրենց խմբապետներով: Ցավոք, չհաջողվեց կազմակերպել Էրզրումի պաշտպանությունը, որը և անցավ թշնամու ձեռքը: Փետրվարի 27-ին զորքը և ժողովուրդը ձմռան ծանր պայմաններում նահանջեցին դեպի Հասանկալա: Այստեղ իր գործողություններով աչքի ընկավ Սեբաստացի Մուրադի ղեկավարության ներքո կռվող ջոկատը: Մարտի 2-ին նահանջողները հասան Սարիղամիշ: Դեռ գրավված չէին Ալաշկերտը, Խնուսը, Վանը, սակայն կանխորոշված էր նաև դրանց ճակատագիրը:

Թուրքական ներխուժումը Անդրկովկաս դարձել էր օրերի հարց: Երկրամասի պաշտպանությունը շատ կարևոր էր հատկապես հայերի համար. արևմտահայության Մեծ եղեռնից հետո ֆիզիկական բնաջնջման սպառնալիքը կախվել էր արդեն արևելահայության և Անդրկովկասում ապաստանած արևմտահայ գաղթականության վրա: Այդ օրհասական պահին վրաց և մահմեդական ազգային խորհուրդները, ընդառաջ գնալով Թուրքերի պահանջներին, ընդունեցին Անդրկովկասը Ռուսաստանից անկախ հայտարարելու մասին որոշում: 1918 Թ. ապրիլի 9-ին մենշևիկների և մահմեդականների ճնշման ներքո Սեյմը հայտարարեց Անդրկովկասը Ռուսաստանից անջատելու և անկախանալու մասին: Ստեղծվեց Անդրկովկասի դեմոկրատական ֆեդերատիվ հանրապետություն: Ընտրվեց նոր կառավարություն՝ մենշևիկ Ա. Զլենկելու նախագահությամբ:

Այդ ժամանակ հայկական զորքերը թողել էին նաև Սարիղամիշը և ամրապնդվել Կարսում: Ստանալով Անդրկովկասի անկախության հայտարարման լուրը՝ Թուրքական բանակի հրամանատարությունը պահանջեց անհապաղ հանձնել Կարսը: Անդրկովկասի կառավարության նախագահը կարգադրեց առանց դիմադրելու հանձնել Կարսի ամրոցը: Հայկական կորպուսի հրամանատար գեներալ Թ. Նազարբեկյանը փորձեց կապվել Հայոց ազգային խորհրդի հետ, բայց կապը Թիֆլիսի հետ ընդհատված էր: Նա հրամայեց Կարսի ամրոցի պարետ գե-

ներալ Դեևին դադարեցնել ռազմական գործողությունները և սկսել բանակցությունները տարանջատման գծի վերաբերյալ: Բայց Թուրքերը նոր հարձակում ձեռնարկեցին: Հայկական զորքերի դիմադրությունը ստիպեց, որ Թուրքերը համաձայնվեն բանակցություններ սկսելուն: Վերջիններս պահանջեցին հանձնել ամրոցը և հայտնեցին, որ երեք օրվա ընթացքում անցնելու են Ախուրյան գետի ձախ ափը: Անդրկովկասի կառավարության կարգադրությամբ զորքերը Թողեցին Կարսը և նահանջեցին Ալեքսանդրապոլ:

Անդրկովկասի կառավարությունը որոշել էր վերսկսել Տրապիզոնում ընդհատված բանակցությունները: Այն սկսվեց 1918 Թ. մայիսի 11-ին Բաթումում: Կոնֆերանսի աշխատանքների առաջին օրը Անդրկովկասյան պատվիրակության ղեկավարը հայտարարեց, որ բանակցություններում իրենք որպես հիմք ընդունում են Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը: Թուրքական պատվիրակության ղեկավար Խալիլը ընդդիմանալով՝ հայտարարեց, որ կողմերի միջև պատերազմ է եղել, ուստի Տրապիզոնում առաջ քաշված պայմանները չեն համապատասխանում ստեղծված նոր իրադրությանը, և իրենք իրենց իրավունք են վերապահում ներկայացնել նոր պահանջներ: Այդ հայտարարությունից անմիջապես հետո նա Զխենկելուն հանձնեց 12 կետից բաղկացած պայմանագրի նախագիծ: Թուրքական նոր պահանջներն է՛լ ավելի ծանր կացության մեջ դրեցին հայերին ու վրացիներին:

Օգտվելով Անդրկովկասի դաշնային պետության թուլությունից՝ երիտԹուրքերը ծրագրել էին հասնել Բաքու, ապա միավորվել Միջին Ասիայի մահմեդականների հետ: Կարծես թե իրականանում էին երիտԹուրքերի պանԹուրքական ծրագրերը:

Թուրքերի սանձարձակության մասին իր կառավարությանը հայտնում էր Բաթումի բանակցություններին մասնակցող Գերմանիայի ներկայացուցիչ գեներալ ֆոն Լոսովը: Նա մասնավորապես նշում էր, որ Թուրքերը կորցրել են չափի զգացումը և անցել են բանականության բոլոր սահմանները:

Չնայած Բաթումում բանակցություններ էին ընթանում, բայց Թուրքական զորքերը չարունակում էին իրենց առաջխաղացումը: Մայիսի 15-ի վաղ առավոտյան Թուրքական զորքերը

հանկարծակի հարձակվեցին Ալեքսանդրապոլի վրա: Քաղաքում գտնվող բոլոր զորամասերը մտան կռվի մեջ: Մի քանի ժամ անց Թուրքական զորքերը գրավեցին Ալեքսանդրապոլը: Թ. Նազարբեկյանն իր շտաբով տեղափոխվեց Դիլիջան: Շրջապատումից խուսափելու համար զորքերի մի մասը նահանջեց Ղարաքիլիսա, մյուս մասը՝ Սուրմալուից դեպի Սարդարապատ:

Ալեքսանդրապոլը գրավելուց հետո Թուրքական զորքերի հրամանատարությունը կատարեց զորամասերի վերադասավորում: Ստեղծվեց չորս զորախումբ, որոնց առջև դրվեցին հստակ խնդիրներ: Առաջին զորախումբը շարժվեց Վորոնցովկայի ուղղությամբ՝ ձգտելով դուրս գալ Բոլնիս-Խաչեն-Թիֆլիս գիծը: Երկրորդ զորախումբը գործում էր Համամլու-Ղարաքիլիսա-Դիլիջան-Ղազախ-Ելիզավետպոլ ուղղությամբ: Թուրքերի գլխավոր նպատակը դարձել էր Բաքվի գրավումը, որտեղ դեռ 1917 Թ. նոյեմբերի 2-ին հաստատվել էին խորհրդային կարգեր: Հաջորդ երկու խմբավորումները կարճ ժամկետում պետք է գրավեին Երևանը և ամբողջ Արարատյան դաշտը, ապա՝ Նախիջևանը, Զանգեզուրը, Ղարաբաղը և գնային Բաքվի վրա:

1918 Թ. մայիսի 21-ին Թուրքական զորքերը գրավեցին Սարդարապատ գյուղը և կայարանը: Արարատյան դաշտի հայ բնակչությունը կանգնեց ֆիզիկական բնաջնջման վտանգի առաջ: Երևանում խառնաշփոթ առաջացավ: Այդ ծանր պահին ժողովրդի և հայրենիքի ճակատագրի պատասխանատվությունն իր վրա վերցրեց Երևանի Ազգային խորհուրդը և նրա նախագահ Արամ Մանուկյանը, որին դեռևս երկու ամիս առաջ խորհուրդը օժտել էր դիկտատորի իրավունքներով: Նրա հմուտ ղեկավարության շնորհիվ Սարդարապատում գտնվող հայկական զորքերը ապահովվեցին զինամթերքով, սննդով, ջրով: Ա. Մանուկյանի կոչով բազմաթիվ կամավոր-աշխարհազորայիններ շտապեցին Սարդարապատ:

Ճակատամարտի պլանը մշակել էին Հայկական առանձին կորպուսի երկրորդ դիվիզիայի հրամանատար գեներալ Մովսես Սիլիկյանը և շտաբի պետ գնդապետ Ալեքսանդր Վեքիլյանը: Սարդարապատի խմբավորման հրամանատարն էր գնդապետ Դանիել բեկ Փիրումյանը: Այդ խմբավորման մեջ մտնում էին՝ 5-րդ հրաձգային գունդը և կամավորական աշխարհազորային

ջոկատները՝ գնդապետ Պողոս բեկ Փիրումյանի հրամանատարությամբ, գնդապետ Վ. Պերեկրեստովի ղեկավարած պարտիզանական հետևակային գունդը, Իգդիրյան հետևակային գունդը, Զեյթունյան հեծյալ գունդը՝ Սալիբեկյանի գլխավորությամբ:

1918 թ. մայիսի 22-ին հայկական զորքերն անցան հակահարձակման: Թեժ մարտերից հետո գնդապետ Դանիել բեկ Փիրումյանի հրամանատարությամբ գործող զորքը վերագրավեց Սարդարապատը: Թուրքերը խուճապահար և մեծ կորուստներ կրելով նահանջեցին 15-20 կմ, բայց օգտվելով այն հանգամանքից, որ հայկական զորքերն իրենց չեն հետապնդում, ամրացան Արաքս կայարանի հարավարևմտյան բարձունքների վրա: Թուրքական հրամանատարությունը որոշեց ուժեղացնել Սարդարապատի մոտ գտնվող խմբավորումը և օգնության ուղարկեց 5-րդ դիվիզիայի զորամասերին, բայց հայերին հաջողվեց դրանց ետ չպրտել: Մայիսի 22-26-ին Սարդարապատում թուրքերը կորցրին 3500 մարդ:

Սարդարապատը վերագրավելուց և համալրում ստանալուց հետո հայկական զորքերի հրամանատարությունը մշակեց թուրքերի շրջապատման և ջախջախման ծրագիր: Փոխգնդապետ Կարապետ Հասան-Փաշայանի հրամանատարությամբ ստեղծվեց հարվածային խումբ: Շրջանցելով թուրքական զորքերին՝ խմբավորումը դուրս եկավ նրանց թիկունքը և հիմնական ուժերի հետ անցավ հակահարձակման: Զդիմանալով հայկական ուժերի գրոհներին՝ թուրքական զորքերը պարտվեցին և հետ քաշվեցին Ալեքսանդրապոլի ուղղությամբ:

Այդ օրերին թուրքական հրամանատարությունն իր 9-րդ դիվիզիան շարժեց Բաշ Ապարանի ուղղությամբ, որպեսզի Սարդարապատում կռվող հայկական զորամասերին հարվածի թիկունքից: Հայկական ուժերի հրամանատարությունը ճիշտ որոշելով թուրքական հարվածի ուղղությունը՝ Բաշ Ապարան ուղարկեց վեց հազարանոց մի զորամաս՝ Դրոյի հրամանատարությամբ: Մայիսի 24-ին հայկական զորամասը ծանր մարտերից հետո կանգնեցրեց թուրքերի առաջխաղացումը: Կանոնավոր զորքերի հետ կողք-կողքի կռվում էին բազմաթիվ աշխարհազորայիններ: Այդ ճակատամարտում հայերի հետ միասին մարտնչում էր Ջհանգիր աղայի հրամանատարությամբ գործող

եզդիների 1500 հոգիանոց աշխարհազորային ջոկատը: Կռիվների ընթացքում թուրքական զորքերը ջախջախվեցին և հետ շպրտվեցին Բաշ Ապարանից:

Այս փայլուն հաղթանակներն այնքան էին ոգևորել հայկական հրամանատարությանը, որ գեներալ Սիլիկյանն առաջարկում էր սրընթաց հարձակումով ազատագրել Ալեքսանդրապոլը և Կարսը: Սարդարապատի և Բաշ Ապարանի հաջողությունները ոգեշնչեցին Ղարաքիլիսայում և Դիլիջանում գտնվող հայկական զորամասերին: Մայիսի 25-28-ը արյունալի մարտեր տեղի ունեցան Արջուտ և Ղշլաղ գյուղերի մոտ: Երկու կողմերն էլ ունեցան մեծ կորուստներ: Մայիսի 26-ին Ղարաքիլիսայի մոտ կենտրոնացած հայկական զորքերն անցան հակահարձակման և շրջանցելով թուրքական զորքերին աջ թևում՝ նրանց ստիպեցին նահանջել: Շուտով թուրքերը համալրում ստացան և ծանր արյունալի կռիվներից հետո մայիսի 30-ին գրավեցին Ղարաքիլիսան: Գնդապետներ Ա. Բեյ-Մամիկոնյանի և Ն. Ղորղանյանի հրամանատարության ներքո գտնվող զորքերը կարողացան ճեղքել պաշարումը և հեռանալ դեպի Դիլիջան:

Այն օրերին, երբ տեղի էին ունենում հայ ժողովրդի Մայիսյան հերոսամարտերը, վրաց մենշևիկների և կովկասյան մուսավաթական թաթարների գաղտնի և բացահայտ գործողությունների հետևանքով Անդրկովկասի դեմոկրատական դաշնակցային հանրապետությունը անկում էր ապրում: 1918 թ. մայիսի 15-ին, մինչև Սեյմի լուծարումը, Վրաց ազգային խորհրդի նախագահ Ն. Ժորդանիան և գեներալ Օ. Ֆոն Լոսովը կնքել էին գաղտնի համաձայնագիր՝ Վրաստանը անկախ հայտարարելու մասին: Նույնանման որոշում էր կայացվել թուրքերի և մուսավաթականների միջև: Գերմանիայի հովանավորությունը ստանալու հայերի բոլոր ջանքերը ձախողվել էին:

1918 թ. մայիսի 26-ին գումարվեց Անդրկովկասյան Սեյմի վերջին նիստը: Վրացիների պահանջով Սեյմն ընդունեց ինքնալուծարման որոշում: Երեկոյան Վրաց ազգային խորհուրդը հանդես եկավ Վրաստանի անկախության մասին հայտարարությամբ: Հաջորդ օրը նման հայտարարությամբ հանդես եկավ մահմեդական ազգային խորհուրդը՝ ազդարարելով ադրբեջանական պետության ստեղծումը:

Սեյմի հայ ներկայացուցիչները մնացին մենակ: Մայիսի 28-ին Հայոց ազգային խորհուրդը ստիպված էր իրեն հայտարարել հայկական գավառների միակ և գերագույն իշխանություն:

Այդ իրադարձություններից հետո, մայիսի 30-ին, վերսկսվեցին բանակցությունները Բաթումում: Հայաստանն այդ բանակցություններում ներկայացնում էին Հ. Քաջազնունին և Ալ. Խատիսյանը: 1918 թ. հունիսի 4-ին ստորագրվեց Բաթումի պայմանագիրը, որի համաձայն Թուրքիան զավթեց ոչ միայն Արդվինը, Կարսը, Արդահանը, Օլթին, Կաղզվանը, Ախալքալաքը, Ախալցխան, այլև ամբողջ Սուրմալուի գավառը, Ալեքսանդրապոլի և Էջմիածնի գավառների երեք քառորդը, Երևանի գավառի կեսը, Շարուր-Դարալագյազի մեկ հինգերորդ մասը: Նրան էր մնում Ալեքսանդրապոլը, երկաթուղին՝ մինչև Ջուլֆա:

Բաթումի պայմանագիրը կնքելուց հետո էլ թուրքական զորքերն այլ ճանապարհներով շարունակեցին իրենց արշավանքը դեպի Բաքու: Հայկական զինված ջոկատները համառ դիմադրություն էին ցույց տալիս նրանց: Ստեփան Շահումյանի գլխավորած Բաքվի կոմունան, որին միասնաբար պաշտպանում էին տեղի կարմիր բանակը և դաշնակցական ազգային զորամասերը, երկարատև հերոսական դիմադրությունից հետո, ստիպված էին քաղաքը հանձնել թուրք-մուսավաթական հրոսակախմբերին, որոնք արյունալի հաշվեհարդար տեսան տասնյակ հազարավոր հայ բնակիչների նկատմամբ:

Բաթումի պայմանագիրը գործեց մի քանի ամիս: Նույն թվականի հոկտեմբերին Թուրքիան պարտվեց պատերազմում և ստիպված էր զորքերը հետ քաշել Ալեքսանդրապոլից ու Շիրակի դաշտից, որի շնորհիվ Հայաստանին մնաց նաև նշված երկաթուղին:

ԲԱԺԻՆ ԵՐՐՈՐԴ

ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ (1918-1920 ԹԹ.)

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՈՒՄԸ

Ավելի քան 500-ամյա ընդմիջումից հետո 1918 թ. մայիսի 28-ին ի դեմս Հայաստանի առաջին Հանրապետության վերընձյուղվեց հայկական պետականությունը: Պատմական ի՞նչ գործոնների արդյունք էր դա. 1918 թ. առաջին ամիսներին Անդրկովկասում ստեղծված դաժան իրականության մեջ քաղաքական այլընտրանքի բացակայությա՞ն, թե՞ դարավոր թշնամու հետ մահացու գոտեմարտի բռնված Հայության վերջին բեկորների հերոսական մաքառման: Հայոց նորագույն պետականությունը իր ծնունդով պարտական էր 1918 թ. մայիսյան հերոսամարտերին: Անդրկովկասի ժողովուրդներից Հայությունը միակն էր, որ իր անկախությունը ստանում էր ոչ թե ի հաշիվ գերմանական հովանավորության կամ թուրքական նվիրատվության, ինչպես տեղի ունեցավ Վրաստանի և Ադրբեջանի պարագայում, այլ չնորհիվ ռազմի դաշտում թափած արյան: Ոչ թե Բաթումում ընթացող բանակցությունները, այլ Սարդարապատում, Բաշ Ապարանում և Ղարաքիլիսայում որոտացող թնդանոթներն ու զենքերի շաչյունն էին ծնունդ տալիս Հայաստանի առաջին Հանրապետությանը, իրենց հայրենիքի վերջին մասնիկը կռվի դաշտում պաշտպանող հայորդիների արյունով էին շաղախված նորաստեղծ պետության հիմնաքարերը, թեև ճակատագրի հեգնանքով միջազգային ասպարեզում հայկական պետության գոյության փաստն առաջինը ճանաչեց հենց դարավոր թշնամին՝ Օսմանյան կայսրությունը:

Չնայած հայրենի անկախ պետականություն ստեղծելու հայության դարավոր իղձերին, որի համար անցած տասնամյակ-

ներին իրենց կյանքը չէին խնայել ազատագրական պայքարի բազմաթիվ նվիրյալներ, հայկական պետականության վերականգնման լուրը ցնծությամբ և ոգևորությամբ չընդունվեց: Քչերն էին հավատում Հայաստանի նորահռչակ հանրապետության կենսունակությանը, քանզի խիստ նեղ էին նրա սահմանները, և անբաժան ուղեկիցներն էին սովը, հիվանդությունները, քաոսն ու անիշխանությունը: Հայկական պետականության ստեղծման համար պահանջվում էին գերմարդկային ճիգեր: Վիթխարի դժվարությունները հաղթահարելու ճանապարհին հայությունն ապրեց նոր մաքառումների ու քաղաքական վայրիվերումների, սպասումների և դառը հիասթափությունների բարդ ու հակասական մի շրջան:

2. ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՐՏՈՒՄԸ

Պետականության կառուցումը, բնականաբար, պետք է սկսվեր իշխանության օրենսդիր և գործադիր մարմինների ստեղծումից: Հայկական պետականության վերականգնումն ազդարարած Հայոց ազգային խորհուրդը, որ գտնվում էր Թիֆլիսում, իր վրա վերցրեց այդ մարմինների կազմավորման նախաձեռնությունը: Մինչև վերջինիս Երևան ժամանելը չուրջ երկու ամիս հանրապետության փաստական կառավարությունը գտնվում էր դեռևս 1918 թ. մարտին ստեղծված Վարիչների մարմնի ձեռքում: Հայկական պետականության վերականգնման ու ամրապնդման գործում անգնահատելի է այդ մարմնի և զինվորական գործերի ղեկավար Արամ Մանուկյանի դերը:

Թիֆլիսի և Երևանի Հայոց ազգային խորհուրդների բազմաթիվ խորհրդակցությունների և միջկուսակցական բանակցությունների շնորհիվ ի վերջո ձևավորվեց հանրապետության ժամանակավոր օրենսդիր բարձրագույն մարմինը՝ Հայաստանի խորհուրդը, որն ուներ 46 անդամ: Այն կազմավորվեց համամասնական սկզբունքով՝ Հայոց ազգային խորհրդի անդամների (բացի անկուսակցականներից) թիվը եռապատկելու և Հայաստանում բնակվող ազգային փոքրամասնությունների (մուսուլման, եզդի, ռուս) ներկայացուցիչների ներգրավման միջոցով:

Հայաստանի խորհրդի կազմն ընդհանուր առմամբ ճիշտ էր արտացոլում ազգային-քաղաքական ուժերի իրական հարաբերակցությունը և հանրապետության բնակչության ժողովրդագրական կազմը: Դրանով հանդերձ՝ հանրապետության բնակչության մի ստվար հատված կազմող արևմտահայ գաղթականությունը նրանում ներկայացված չէր:

Ձևավորվեց նաև նորանկախ հանրապետության կառավարության՝ Մինիստրների խորհրդի (հետագայում՝ Նախարարների խորհուրդ) առաջին կազմը: Հայոց ազգային խորհուրդը վարչապետի պաշտոնում առաջադրեց Հովհաննես Քաջազնունուն, որը պետական աշխատանքի փորձ ուներ և վայելում էր կուսակցությունների ու հայ հասարակության համակրանքը: Միջկուսակցական հիմունքներով կառավարություն ստեղծելու նրա փորձերը արդյունք չունեցան: 1918 թ. հուլիսի 24-ին Հայոց ազգային խորհուրդը հրապարակեց կառավարության կազմը. Հովհաննես Քաջազնունի (նախարար-նախագահ), Արամ Մանուկյան (ներքին գործեր), Ալեքսանդր Խատիսյան (արտաքին գործեր), Խաչատուր Կարճիկյան (ֆինանսներ), Հովհաննես Հախվերդյան (զինվորական), Գրիգոր Տեր-Պետրոսյան (արդարադատություն): Բացի վերջին երկուսից, որոնք անկուսակցականներ էին, մյուսները դաշնակցության ճանաչված գործիչներ էին:

Անթուլատելի հապաղումից հետո Հայաստանի խորհրդի և կառավարության անդամները, ի վերջո, Թիֆլիսից տեղափոխվեցին Երևան: Օգոստոսի 1-ին Երևանի քաղաքային ակումբի դահլիճում, հանդիսավոր պայմաններում, խորհրդի նախագահ Ավետիք Սահակյանի բացման ճառով իր գործունեությունը սկսեց Հայաստանի խորհուրդը: Նշանակովիության սկզբունքով ստեղծված օրենսդիր այս մարմնի գործունեությունը տևեց չուրջ ինն ամիս՝ մինչև 1919 թ. ապրիլի վերջը:

Խորհրդի երկրորդ նիստում, 1918 թ. օգոստոսի 3-ին, կառավարության առաջիկա գործունեության մասին ծրագրային ելույթով հանդես եկավ վարչապետ Հ. Քաջազնունին: Ելնելով երկրում ստեղծված իրավիճակից և հրաժարվելով անիրագործելի խոստումներ տալուց՝ կառավարությունը որդեգրում էր գործունեության նվազագույն ծրագիր՝ նպատակ դնելով կասեցնել տնտեսական կյանքի ու վարչական համակարգի քայ-

քայման գործընթացը, երկիրը դուրս բերել անիշխանության վիճակից և պայմաններ ստեղծել պետական շինարարության համար: Ներքին կյանքում անհետաձգելի, հրատապ լուծում պահանջող խնդիրներ էին համարվում կարգ ու կանոնի ստեղծումը, կյանքի ու գույքի ապահովության հաստատումը, հաղորդակցության ուղիների վերաբացումը, պարենային ճգնաժամի հաղթահարումը, որբերի ու գաղթականության խնդիրների լուծումը, դրամական համակարգի կարգավորումը, դատական նոր համակարգի արմատավորումը, ոչ մեծ, սակայն ուժեղ ու կարգապահ բանակի ստեղծումը, արտաքին ասպարեզում՝ հարևանների հետ բարիդրացիական հարաբերությունների հաստատումը և խաղաղ միջոցներով սահմանային հարցերի լուծումը:

Մուդրոսի զինադադարի (1918 թ. հոկտեմբերի 30) կնքումից հետո Անդրկովկասից թուրքական զորքերի դուրս բերման, հանրապետության սահմանների ընդլայնման և առաջիկա խաղաղության վեհաժողովում Հայկական հարցի բարեհաջող լուծման մոտալուտ հեռանկարը կազդուրիչ ազդեցություն ունեցավ հայության բոլոր հատվածների և հասարակական-քաղաքական շրջանակների վրա: Թիֆլիսահայ մտավորականության, սփյուռքաբնակ հայության ու Հայաստանում ծվարած արևմտահայ գաղթականության շրջանում նախկինում տիրող հուսալքությանն ու հոռետեսությանն աստիճանաբար փոխարինելու էին գալիս ապագայի նկատմամբ հավատն ու սպասելիքները: Հանրապետության սահմանների ընդլայնմանը զուգընթաց փոխվում էր նաև որոշակի քաղաքական ուժերի կրավորական կեցվածքը և մեծանում նրանց ձգտումը՝ իրենց մասնակցությունը բերելու պետականության կառուցման ու նրա անմիջական կառավարման գործին:

Քաղաքական նոր մտայնության գործնականացման առաջին քայլը հանրապետության կառավարության վերակազմավորումն էր կոալիցիոն սկզբունքով: Անդրկովկասի հայության շրջանում իր ազդեցությամբ երկրորդ քաղաքական ուժ հանդիսացող Հայ ժողովրդական կուսակցությունը, որը 1918 թ. հունիսին հրաժարվել էր մասնակցել Հ. Քաջազնունու կառավարությանը, նույն տարվա նոյեմբերի 4-ին նախարարական 4 աթոռ

ստացավ և ակտիվորեն գործի լծվեց:

Հայոց պետականության ամրապնդման ճանապարհին լուրջ և գործնական քայլ կարող էր հանդիսանալ անկախ և միացյալ Հայաստանի հռչակումը, որի նախաձեռնությունը պատկանում էր Հայաստանի Հանրապետության տարածքում ապաստանած արևմտահայ գաղթականությանը: Հանրապետության գոյության առաջին ամիսներին վերապահ ու կրավորական դիրք գրավելով և խուսափելով մասնակից դառնալ պետության կերտման ու ամրապնդման գործընթացին՝ արևմտահայ գաղթականությունը, սակայն, որոշակիորեն փոխեց իր կեցվածքը՝ փարվելով «Արարատյան Հանրապետության» հզորացման, իրական անկախացման ու ազգայնացման գործելակերպին: 1919 թ. փետրվարի 6-13-ը Երևանում կայացած արևմտահայերի 2-րդ համագումարը, ողջունելով հայության երկու հատվածների միավորման գաղափարը և ընդգծելով անկախ ու միացյալ Հայաստանի հռչակման անհրաժեշտությունը, հանրապետության կառավարությանը կոչ արեց օր առաջ գործնական քայլեր ձեռնարկել այդ ուղղությամբ:

Ընդառաջ գնալով արևմտահայ զանգվածների ձգտումներին՝ կառավարությունը Հայաստանի խորհրդի 1919 թ. մայիսի 28-ի հանդիսավոր նիստում հրապարակեց անկախ և միացյալ Հայաստանի հռչակման մասին հայտարարությունը: «Հայաստանի ամբողջությունը վերականգնելու և ժողովրդի լիակատար ազատությունն ու բարգավաճումը ապահովելու համար,- ասված է հայտարարության մեջ,- Հայաստանի կառավարությունը, համաձայն բովանդակ հայ ժողովրդի միահամուռ կամքի ու ցանկության, հայտարարում է, որ այսօրվանից Հայաստանի բաժան-բաժան մասերը մշտնջենապես միացած են իբրև անկախ պետական միություն»: Հրապարակված փաստաթղթով հանրապետության կառավարությունն իրեն հռչակեց Միացյալ Հայաստանի կառավարություն: Նույն օրն իսկ Հայաստանի խորհուրդը համալրվեց արևմտահայությունը ներկայացնող 12 պատգամավորով: Միացյալ և անկախ Հայաստանի հռչակումը հայության դարավոր իղձերի արտահայտությունն էր և միջազգային հանրության առաջ նրա քաղաքական կամքի ցուցադրումը:

Միացյալ և անկախ Հայաստանի գաղափարը թեև սկզբունքորեն ընդունելի էր հայ քաղաքական գրեթե բոլոր ուժերի համար, բայց նրա կենսագործման ուղիների, մասնավորապես օրենսդիր ու գործադիր իշխանության միացյալ մարմինների կազմավորման հարցում ի հայտ եկան լուրջ տարակարծություններ: Վերը նշված հարցերում համաձայն չլինելով կառավարության հետ և իրեն ապավեն ունենալով Փարիզում գտնվող Ազգային պատվիրակության ղեկավար Պողոս Նուբարին՝ Հայ ժողովրդական կուսակցությունը հրաժարվեց կոալիցիայից: Նրա անդամ չորս նախարարները 1919 թ. հունիսի 24-ին դուրս եկան կառավարությունից: Ցավոք, դրանով ավարտվեց այդ կուսակցության գործնական մասնակցությունը պետական շինարարությանը:

Հայաստանի խորհրդարանի ընտրություններն անցկացվեցին 1919 թ. հունիսի 21-23-ին՝ նախապես ընդունված «Հայաստանի խորհրդարանի ընտրությունների օրենքի» համաձայն: Հանրապետության 20 տարին լրացած քաղաքացիները, այդ թվում արևմտահայ գաղթականությունը, առանց սեռի, ազգության և կրոնական խտրության, իրավունք ստացան մասնակցելու ընտրություններին, որոնք անցկացվեցին ընդհանուր, գաղտնի, հավասար, ուղղակի քվեարկությամբ: Ընտրական հանձնաժողովների կողմից նախապես ցուցակագրված 366.000 ընտրողներից ընտրություններին մասնակցեց մոտ 260.000-ը (չուրջ 70%-ը): Խորհրդարանի 80 տեղերից 72-ը բաժին հասավ Դաշնակցությանը: Ընտրվեցին նաև 4 սոցիալիստ-հեղափոխական (էսէռ), 3 թուրք և 1 անկուսակցական: Հանրապետության գոյության ընթացքում դրանք միակ խորհրդարանական ընտրություններն էին:

Նորընտիր խորհրդարանի բացումը կատարվեց 1919 թ. օգոստոսի 1-ին: Այն հաստատեց Հանրապետության կառավարության կազմը՝ Ալեքսանդր Խատիսյանի գլխավորությամբ: Վերջինս հանդես եկավ ծրագրային հայտարարությամբ, որի դրույթներն ընկան հետագա ամիսներին կառավարության վարած ներքին ու արտաքին քաղաքականության հիմքում: Որոշ փոփոխություններով հանդերձ՝ կառավարության այդ կազմը գործեց մինչև բոլշևիկների 1920 թ. մայիսյան ապստամբությունը:

Հայաստանի Հանրապետությունը չունեցավ իր հիմնական օրենքը՝ սահմանադրությունը: Դրա ընդունումը վերապահված էր ապագա Սահմանադիր ժողովին, որը, սակայն, Հանրապետության կարճատև գոյության, ներքին ու արտաքին բարդ հանգամանքների պատճառով այդպես էլ չգումարվեց: Մինչև սեփական օրենսդրության ստեղծումը Հանրապետության տարածքում ժամանակավորապես գործում էին ռուսական կայսրության նախկին օրենքները՝ ժամանակավոր կառավարության, Անդրկովկասյան կոմիսարիատի ու Սեյմի և Հայաստանի խորհրդարանի կողմից կատարված փոփոխություններով ու լրացումներով:

Ռուսական նախկին կառույցների հիմքի վրա աստիճանաբար ձևավորվեց նաև արդարադատության և դատական իշխանության համակարգը: Գավառներում գործում էին հաշտարար դատարաններ: Երևանում, Ալեքսանդրապոլում և Կարսում ստեղծվեցին շրջանային դատարաններ: Դատական բարձրագույն մարմինները Երևանում հիմնված դատաստանական պալատն ու սենատն էին: Վերջինիս էր վերապահված ոչ միայն վճռաբեկ դատարանի դերը, այլև օրենքների բացատրությունն ու կարգավորումը: Դրանով հանդերձ՝ այս ասպարեզում գլխավոր խնդիրը ազգային ավանդույթներին ու ժողովրդավարության սկզբունքներին համապատասխան արդարադատության համակարգի ու դատարանի ստեղծումն էր: Այս առումով անգնահատելի էր 1918 թ. դեկտեմբերի 6-ին երդվյալ ատենակալների դատարանի ստեղծման մասին օրենքի ընդունումը: Երդվյալ ատենակալների մասնակցությամբ առաջին դատավարությունն անցկացվեց 1920 թ. մարտի 15-ին: Ընտրված 12 ատենակալները հասարակության տարբեր խավերի ներկայացուցիչներ էին: Գործնական քայլեր կատարվեցին նաև դատաստանական ոլորտի հայացման ուղղությամբ: Դատարաններում գործավարությունն ու դատավարությունը սկսեցին վարել հայերենով: Աշխատանքներ կատարվեցին օրենքների թարգմանության, դրանց հայացման և հայ ժողովրդի, այդ թվում արևմտահայության սովորույթներին համապատասխան նոր օրենքների ստեղծման ուղղությամբ: 1920 թ. օգոստոսին Հանրապետության դատական ողջ համակարգը՝ վերից վար, արդեն հայաց-

ված էր: Բայց այստեղ ամեն ինչ չէ, որ հարթ էր: Բոլշևիկների 1920 թ. մայիսյան ապստամբության հետևանքը հանդիսացան Երևանում, Ալեքսանդրապոլում, Կարսում, Նոր Բայազետում ու Դիլիջանում ստեղծված արտակարգ դատարանները, որոնց գոյությունը, անշուշտ, հակասում էր ժողովրդավարական սկզբունքներով ստեղծված ու գործող դատական համակարգին:

Ընդհանրապես հասարակական կյանքի հայացման և ազգայնացնելու խնդրով առավելապես չահագրգռված էին արևմտահայերը, քանի որ ռուսերեն չիմանալու պատճառով նրանք չէին կարող մասնակցել երկրի կառավարման գործին: Սկզբունքային նշանակություն ուներ հայերենը որպես պետական լեզու ճանաչելու մասին 1919 թ. դեկտեմբերի 26-ին ընդունված օրենքը, որի համաձայն հայերենը, որպես պետական լեզու, 6 ամսվա ընթացքում պաշտոնական գործածության մեջ պետք է դրվեր պետական ու հասարակական բոլոր հաստատություններում ու բանակում: Ավելի ուշ հայերենին չտիրապետող պաշտոնյաների համար կազմակերպվեցին հայեցի ուսուցման դասընթացներ:

Հայկական պետականության ամրողջացման և հայահավաքման գործին էր նպատակաուղղված Հայաստանի քաղաքացիության մասին օրենքը, որն ընդունվեց 1920 թ. հուլիսի 5-ին: Դրանով քաղաքացիություն էր շնորհվում Հայաստանի սահմաններում բնակվող ռուսահպատակներին և Թուրքահպատակներին, ինչպես նաև Արևմտյան Հայաստանում, Արևելյան Հայաստանում, Թուրքիայում և Ռուսաստանում ծնված, բայց հանգամանքների բերումով այդ սահմաններից դուրս բնակվող հայազգի բնակչությանը: Ընդառաջ գնալով այդ օրերին սփյուռքահայության շրջանում Հայաստան վերադառնալու ձգտումների որոշակի աճումին՝ 5 տարվա ընթացքում քաղաքացիություն ձեռք բերելու իրավունք էր վերապահվում նաև օտարահպատակ հայերին:

Հանրապետության տարածքի ընդլայնմանը զուգընթաց՝ աստիճանաբար ճշգրտվեցին նրա վարչատարածքային բաժանման սահմանները և ձևավորվեցին տեղական իշխանության մարմինները: 1919 թ. ամռանը Հայաստանը բաժանված էր 10 գավառների: 1920 թ. ամռանը ներքաղաքական լարված իրավիճակի հետ կապված, որը պահանջում էր իշխանության որոշակի կենտրոնացում, Հանրապետության տարածքը բաժանվեց չորս նահանգների՝ Արարատյան, Շիրակի, Վանանդի և Սյունիքի, որոնք, իրենց հերթին, բաժանվեցին գավառների:

Ձգտելով ապահովել առավելագույն քաղաքական ազատություններ՝ Հանրապետության խորհրդարանը հաստատեց ներքին գործերի նախարարության մշակած գավառային և քաղաքային ինքնավարությունների (զեմստվո) կանոնադրությունները: Դրանց հիման վրա 1919-1920 թթ. անցկացվեցին ընտրություններ գավառներում ու մի շարք քաղաքներում (բացառությամբ այն վայրերի, որտեղ քաղաքական վիճակն անկայուն էր), որի արդյունքում ստեղծվեցին համայնքային ինքնավարություններ: 1920 թ. առաջին ամիսներին գավառային ինքնավարությունների իրավասությանը հանձնվեցին տարրական դպրոցները, առողջապահական հիմնարկները, միլիցիան, գյուղատնտեսական պահեստները և այլն: Պետական համակարգում քաղաքային ինքնավարությունների խնդիրների ու դերի հստակեցման նպատակով 1920 թ. հունվարին հրավիրվեց համագումար, որտեղ ազդարարվեց Հայաստանի քաղաքների միության ստեղծումը:

Ռազմական բախումների բովում ծնված և արտաքին ու ներքին անընդմեջ կռիվների շրջան ապրած Հայաստանի Հանրապետության գոյության միակ երաշխիքն ու ապավենը կարող էին լինել ուժեղ ու մարտունակ զինված ուժերը: Անկախության առաջին ամիսներին խիստ նեղ վիճակում հայտնված և Բաթումի դաշնագրի ծանր պայմաններով կաչկանդված Հանրապետության համար հրատապ ու առաջնահերթ խնդիր էր դարձել եղած ռազմական ուժերը վերակազմավորելը և քայլ առ քայլ ոչ մեծաքանակ, բայց ամուր ու կարգապահ բանակ ստեղծելը:

Բանակի վերակազմավորման ճանապարհին առաջին քայլը 1918 թ. սեպտեմբերին գեներալ Թովմաս Նազարբեկյանի գլխավորած հայկական կորպուսի լուծարումն էր: Հայտարարված զորացրման հետ միաժամանակ Հայաստանի խորհրդի 1919 թ. հունվարի 7-ի որոշմամբ զենքի տակ պահվեցին միայն 20-25 տարեկան երիտասարդները, որոնց համար սահմանվեց պարտադիր զինվորական ծառայություն: 1919 թ. գարնանը լուծարվեցին նաև Անդրանիկի հրամանատարության ներքո գործող

զինված ուժերը, որոնք Հանրապետության ռազմական ուժերի համակարգից դուրս գտնվելով հանդերձ՝ մինչ այդ կարևոր ներդրում էին ունեցել Զանգեզուրի ինքնապաշտպանության գործում: Ինքը՝ Անդրանիկը, կառավարության հետ մի շարք հարցերում տարաձայնություններ ունենալով՝ իր զորամասի զենքերը հանձնեց Հայոց կաթողիկոսին և 1919 թ. ապրիլի վերջին հեռացավ Հայաստանից: Աստիճանաբար վերացվում էին հիմնականում արևմտահայերից կազմված ոչ կանոնավոր ռազմական խմբերը, որոնք խաղաղ պայմաններում երբեմն անկայունություն ու խառնաշփոթություն էին ստեղծում երկրում: Այդ ուժերի մի մասը, հատկապես դաշնակցության տրամադրության տակ գտնվող սասունցիների, վասպուրականցիների, գառնեցիների և այլ մարտական խմբերը Հանրապետության գոյության ողջ ընթացքում, այնուամենայնիվ, պահպանվեցին և օգտագործվեցին հատկապես թուրք-թաթարական խռովությունների և բոլշևիկյան ապստամբության դեմ:

Հին ուժերի զորացրմանը զուգընթաց կազմավորվում էր Հանրապետության բանակը: Սկզբում ստեղծվեց մեկ դիվիզիա՝ գեներալ Մովսես Սիլիկյանի հրամանատարությամբ: Միաժամանակ սահմանամերձ շրջաններում կազմավորվեցին միլիցիայի տիպի զորամասեր: Զինված ուժերի չինարարությունը ռազմական գիտության տառին համապատասխանեցնելու նպատակով դեռևս ռուսական բանակում անուն վաստակած Հայազգի զորահրամանատարներից 1919 թ. ապրիլի 25-ին ստեղծվեց զինվորական խորհուրդ՝ Թ. Նազարբեկյանի գլխավորությամբ: Վերջինիս հանձնվեց նաև բանակի սպարապետությունը: 1919 թ. Հայկական բանակին բնորոշ դարձավ զորքերի կառավարման տեսակետից ավելի ճկուն ու Հայաստանի պայմաններին ավելի հարմար բրիգադային և գնդային կառուցվածքը: 1919 թ. հուլիսին Հայաստանի զինված ուժերը բաղկացած էին երկուական գունդ ունեցող 3 հետևակային բրիգադներից, ձևավորման շրջանում գտնվող 2 հեծյալ գնդերից, որոնք մի փոքր ուշ միավորվեցին հեծելազորային բրիգադի մեջ, տեղական նշանակության և առանձին զորամասերից, հրետանային մարտկոցներից, 2 զրահագնացքներից և այլն: Պաշտոնական տվյալներով բանակի թվակազմն այդ ժամանակ հասնում էր 18 հազարի: Հետագայում նոր զորամասերի կազմավորման և արդեն գործողների պարբերաբար համալրման հաշվին բանակի թվակազմի մեծացումը շարունակվեց:

Առաջին քայլերը կատարվեցին նաև Հայաստանի համար միանգամայն նոր զորատեսակների կազմավորման ուղղությամբ: Կարսում ստեղծվեց ռազմական օդանավակայան, որտեղ տեղակայվեցին Ֆրանսիայից ստացված առաջին օդանավերը: 1920 թ. սեպտեմբերին Սևանա լճի վրա գործարկվեց «Աչոտ Երկաթ» ռազմանավը և այլն: Բայց ռազմա-քաղաքական աննպաստ պայմաններում այդ աշխատանքներն անավարտ մնացին: Հիմնականում անավարտ մնացին երկրի պաշտպանության համար կենսական նշանակություն ունեցող Կարսի և Ալեքսանդրապոլի պաշտպանական ամրոցները վերակառուցելու և այստեղ գտնվող մի քանի հարյուր թնդանոթները մարտական շարք վերադարձնելուն ուղղված ջանքերը:

Թուրք-Հայկական պատերազմի անհրաժեշտությամբ թելադրված արտակարգ միջոցառումների ու զանգվածային զորակոչի շնորհիվ Հայկական բանակը 1920 թ. աշնանը հասավ իր առավելագույն թվաքանակին: Նոյեմբերին այն բաղկացած էր 10 հետևակային գնդերից, հրետանային մարտկոցներից, հեծելազորային և այլ զորամասերից: Թեև որոշ տվյալներով բանակի թիվը հասնում էր 40 հազարի, բայց կանոնավոր մարտական ուժերի իրական թիվը չուրջ 25 հազար էր: Նման տարբերությունը բացատրվում էր նրանով, որ Հայաստանի բանակը կազմված էր նախկին ռուսական բանակի համակարգով և ռուսական ռազմական կանոնագրքերի հիման վրա: Ռուսական բանակին բնորոշ էր թիկունքային և օժանդակ ուժերի խիստ մեծաքանակությունը, մի երևույթ, որից զերծ չմնաց նաև Հայաստանի Հանրապետության բանակը: Նրանում թիկունքային ծառայողները, բեռնակիրները, կառապանները, սպասյակները, առողջապահության համակարգի աշխատողները և այլ օժանդակ ուժեր կազմում էին ընդհանուր թվի մոտ 30%-ը:

Ընդհանրապես բանակում մեծ էր ռուսական ազդեցությունը: Սպայակույտը և առանձին զորամասերի հրամանատարական կազմը համալրված էին ռուսական ռազմական կրթություն ստացած և ռուսական բանակում աչքի ընկած Հայազգի զորա-

վարներով: Հայկական բանակում ծառայում էին նաև ավելի քան 400 գլխավորապես ռուսախոս այլազգի սպաներ: Բարձր ու միջին հրամանատարական կազմի մեծ մասը չէր տիրապետում հայերենին, մի բան, որ առաջ էր բերում հատկապես արևմտահայ զինվորների բնական դժգոհությունը: Այդ խնդիրը, սակայն, զգուշություն էր պահանջում, քանի որ ծայրահեղություններն այդ գործում կարող էին վնասել բանակը: Ահա ինչու բանակի շահերից ելնելով՝ ռազմական նախարարը 1920 թ. հունիսի 26-ի հրամանով թույլատրեց ոչ հայախոս սպաների ծառայությունը շարունակել:

Հայկական բանակը հիմնականում լավ էր հանդերձավորված ու զինված և մարտունակ էր համարվում: Բայց թշնամական ուժերի հետ մշտական բախումների, տարածված հիվանդությունների և դասալքության պատճառով նրա համալրման հարցը մնում էր չլուծված: Բանակի մարտունակության համար հատկապես լուրջ վտանգ էր դասալքությունը: Վերջինիս դեմ պայքարելու համար 1919 թ. հուլիսի 24-ին, թուրք-թաթարական զանգվածային ապստամբությունների պայմաններում, որոշում ընդունվեց դասալքության համար մահապատիժ սահմանել: Չնայած 1920 թ. թուրք-հայկական պատերազմի ընթացքում դասալքության դեմ պայքարի միջոցներն ավելի խստացվեցին, բայց այդ երևույթը հաղթահարել չհաջողվեց:

Հանրապետությունն ուներ իր պետական խորհրդանիշները: 1918 թ. հուլիսին Ազգային խորհրդում տեղի ունեցած երկար խորհրդակցություններից հետո, լսելով նաև հայկական դրոշի մասին հայագետ Ստ. Մալխասյանի զեկուցումը, որոշվեց ժամանակավորապես, մինչև Սահմանադիր ժողովի գումարումը, Հայաստանի ազգային դրոշ հաստատել եռագույնը՝ կարմիր, կապույտ և նարնջագույն հորիզոնական շերտերով: Մի շարք քննարկումներից հետո Նախարարների խորհուրդը 1920 թ. հուլիսի 23-ին, դարձյալ ժամանակավորապես, հաստատեց Հայաստանի Հանրապետության զինանշանը, որի հեղինակներն էին ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանը և նկարիչ Հակոբ Կոջոյանը: Օրհներգ դարձավ Մ. Նալբանդյանի խոսքերով ստեղծված «Մեր հայրենիք» հայրենասիրական երգը (երաժշտությունը՝ Բարսեղ Կանաչյանի): 1919 թ. հունվարի 17-ին օրենք ընդունվեց Հանրապետության ազգային-պետական տոների մասին, որով սահմանվեցին նաև ազգային փոքրամասնությունների՝ ռուսների ու մահմեդականների տոները: Չնայած կարճատև գոյությանը՝ Հայաստանի Հանրապետությունն ունեցավ նաև իր բարձրագույն պետական պարգևները: 1919 թ. մայիսի 26-ին Հայաստանի կառավարության որոշմամբ հաստատվեց «Հայրենիքին մատուցած ծառայության համար» շքանշանը: 1920 թ. հունիսի 2-ին կառավարության կողմից հաստատվեցին նաև «Սուրբ Վարդան զորավար» և «Մեծն Տրդատ» շքանշանները: Դրանք պատրաստված էին նկարիչ Հակոբ Կոջոյանի նախագծերով: Ըստ որում՝ «Սուրբ Վարդան զորավար» շքանշանի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ աստիճանով պարգևատրվում էին զինվորներն ու սպաները, իսկ 5-րդ և 6-րդ աստիճանով՝ հրամանատարական բարձր կազմը: Այդ շքանշանը համապատասխանում էր ռուսական «Գեորգիևյան խաչին»:

Պետական համակարգի ներքին կառուցվածքների կազմավորմանը զուգընթաց՝ ձևավորվեցին Հանրապետության արտաքին կապերը: 1918 թ. հունիսի 4-ին Բաթումում կնքված պայմանագրի համաձայն Հայաստանի Հանրապետությունն առաջինը ճանաչեց Թուրքիան: Բաթումի պայմանագրով կաչկանդված Հայաստանի արտաքին կապերը սկզբնապես սահմանափակված էին Քառյակ միության երկրների և անմիջական հարևանների հետ հարաբերությունների նեղ շրջանակով: Միայն Առաջին աշխարհամարտի ավարտից հետո, երբ վերացվեցին կաչկանդող պայմանները և բացվեցին Եվրոպա ու Ռուսաստան տանող ճանապարհները, աշխուժացան Հայաստանի դիվանագիտական շփումները եվրոպական, հատկապես Անտանտի խմբավորման պետությունների հետ: Մեծացավ հետաքրքրությունը Հայաստանի նկատմամբ: Ռազմական ու առևտրատնտեսական նկատառումներով հաճախակի դարձան տարբեր երկրներ ներկայացնող պատվիրակությունների այցելությունները: Տարբեր ժամանակներում Հայաստանում եղան Անգլիայի, Ֆրանսիայի ու Իտալիայի զինվորական մի քանի պատվիրակություններ, զորավարներ ու կոմիսարներ, Պարսկաստանի, Հունաստանի և Պոնտոսի, Դոնի, Թերեքի ու Կուբանի պատվիրակությունները, Հռոմի պապի ներկայացուցիչը, իտալական

առևտրական առաքելությունը, Չեխ-Սլովակյան տնտեսական պատվիրակությունը, Ջ. Հարբորդի գլխավորած ամերիկյան առաքելությունը և այլն: Ընդ որում Անգլիան, Ֆրանսիան, Իտալիան և Հարավային Ռուսաստանի կառավարությունները իրենց մնայուն ներկայացուցիչներն ունեին Հայաստանում, իսկ անմիջական հարևաններ Պարսկաստանը, Ադրբեջանը և Վրաստանը՝ դիվանագիտական ներկայացուցչություններ: Հայաստանի դիվանագիտական ճանաչման հարցում նշանակալից քայլ էր 1920 թ. հունվարի 19-ին Անտանտի Գերագույն խորհրդի կողմից նրա գոյության փաստացի (դե ֆակտո) ճանաչումը:

Իր հերթին, Հայաստանը դեսպաններ ուներ հարևան Պարսկաստանում, Ադրբեջանում ու Վրաստանում: Ընդ որում Թիֆլիսում գործող դեսպանությունից բացի հյուպատոսություններ կային նաև Բաթումում և Սուխումում, ինչը բացատրվում էր Հայաստանի համար այդ երկու նավահանգիստների կենսական նշանակությամբ: Հայաստանն ի սկզբանե իր ներկայացուցիչներն ուներ նաև ռուսական նախկին կայսրության տարածքում գործող կառավարություններում (Դենիկինի՝ Հարավային Ռուսաստան, Կոլչակի՝ Սիբիր, Կուբանի, Դոնի, Ուկրաինայի և այլն): 1918 թ. դիվանագիտական շփումներ հաստատելու առաջին փորձերն արվեցին նաև Խորհրդային Ռուսաստանի հետ, բայց այս ուղղությամբ լուրջ քայլեր կատարվեցին միայն 1920 թվականին: Ինչ վերաբերում է Անտանտի երկրների հետ կապերին, ապա դրանք գլխավորապես իրականացվում էին Փարիզի խաղաղության վեհաժողովին մասնակից Ա. Ահարոնյանի գլխավորած պատվիրակության միջոցով: Վերջինս նաև խնդիր ուներ Հայաստանի ներկայացուցչություններ և հյուպատոսարաններ բացել եվրոպական երկրներում: Ժամանակի ընթացքում այդպիսիք կազմակերպվեցին Անգլիայում, Իտալիայում, Գերմանիայում, Շվեյցարիայում, ԱՄՆ-ում, Ճապոնիայում, Եգիպտոսում, Հաբեշստանում և այլուր:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետությունն աստիճանաբար դառնում էր ներքուստ կազմակերպված և միջազգայնորեն ճանաչված պետություն:

3. ՆԵՐՔԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

ա. Սոցիալ-տնտեսական վիճակը: Հայաստանի Հանրապետության գործունեությունը սկսվեց սոցիալ-տնտեսական անբարենպաստ պայմաններում: Նրան բաժին ընկավ տնտեսապես թույլ զարգացած մի տարածք, որը 4 տարի տևած պատերազմի, ռուսական հեղափոխությունների բերած ցնցումների, Անդրկովկասի տրոհման և ավանդական կապերի խախտման հետևանքով լիովին քայքայված վիճակում էր: Վառելիքի պակասի և միջէթնիկական ընդհարումների պատճառով գրեթե դադարել էր երկաթուղային հաղորդակցությունը: Չէին գործում սակավաթիվ ձեռնարկություններն ու հանքերը: Արդյունաբերության կանգ առնելու և ներմուծման բացակայության պայմաններում առաջացել էր առաջին անհրաժեշտության ապրանքների սով և դրա հետևանքով գների սոսկալի աճ ու ֆինանսական համակարգի կատարյալ քայքայում: Հատկապես աղետալի էր թուրքական 1918 թ. արշավանքը: Եթե 1918 թ. գարնանն ու ամռանը ռազմական գործողությունների ասպարեզ դարձած տարածքներում ձախողվեցին գյուղատնտեսական աշխատանքները, ապա նույն տարվա վերջին գրավված շրջաններից թուրքական զորքերի հեռացումն ուղեկցվեց հանրապետության պարենի եղած պաշարների ու նյութական արժեքների զանգվածային թալանով: Կարսում, որտեղ թուրքերը կենտրոնացրել էին թալանվածը, հավաքվել էր հարյուր հազարավոր փութ բամբակ, մեծ քանակությամբ հացահատիկ, մի քանի տասնյակ հազար գլուխ եղջերավոր անասուն, 65 հազար փութ չաքար, բուրդ, կաշի և այլն: Միայն մյուսների համեմատ քիչ վնասված Լոռի-Փամբակի նյութական կորուստները կազմում էին շուրջ 15 մլն դոլար:

Քայքայված, թալանված, բազմահազար գաղթականներով ու որբերով ծանրաբեռնված երկիրը կարող էր հաղթահարել սովի սպառնալիքը միայն դրսից արդյունավետ օժանդակություն ստանալու դեպքում: Մինչդեռ թշնամական էր հարևանների կեցվածքը և ամուր փակված էին Հայաստան բերող բոլոր փրկարար ուղիները: Դրությունը գնալով վատանում էր: 1918 թ. հոկտեմբերին սպառվեցին Հանրապետության հացի

վերջին պաշարները, և սկսվեց սովը, որին ուղեկից դարձան խոլերան, ապա՝ բծավոր տիֆը: Այդ ծանր վիճակը տևեց մինչև 1919 թ. գարունը: Վեց ամսվա ընթացքում սովից ու հիվանդություններից մահացավ չուրջ 180 հազար մարդ: Մահը խտրություն չէր դնում գաղթականի ու տեղաբնակի, հարուստի և աղքատի միջև: Բծավոր տիֆին զոհ գնաց նաև Հայաստանի Հանրապետության հիմնադիրներից մեկը՝ Արամ Մանուկյանը:

Նման պայմաններում ստեղծարար գործունեության մասին մտածելն իսկ անիմաստ էր: Ժողովրդին սովից ու համաճարակից փրկելու, բազմահազար գաղթականների ու որբերի առաջնահերթ կարիքները բավարարելու համար պահանջվում էին արտակարգ միջոցառումներ: 1918 թ. օգոստոսին Հայաստանը հայտարարվեց խոլերայով վտանգված երկիր: Ավելի ուշ ստեղծվեց արտակարգ հանձնախումբ՝ բծավոր տիֆի դեմ պայքարելու համար, որը գործեց մինչև 1919 թ. մարտ ամիսը և լուծարվեց, երբ համաճարակն արդեն հաղթահարված էր: 1918 թ. սեպտեմբերին սահմանվեց բամբակի առևտրի պետական մենաշնորհ, որն այդ օրերին պետության եկամտի միակ իրական աղբյուրն էր և տարադրամ ձեռք բերելու միակ միջոցը: Կառավարության հսկողության տակ դրվեց հացի բաշխումը, և մտցվեց հացաբաժնի նորմավորում: Համաճարակի ու սովի դեմն առնելու նպատակով ստեղծվեցին սննդատու կայաններ, որտեղ տաք կերակուր էր բաժանվում:

Սովի սպառնալիքը հաղթահարելու համար 1919 թ. հունվարին կառավարությունը և Հայաստանի խորհուրդը որոշեցին դիմել դաշնակից պետություններին և հատկապես ԱՄՆ-ին՝ մեծ քանակությամբ հաց Հայաստան ներմուծելու համար: Այդ նպատակով վարչապետ Հ. Քաջազնունին գործուղվեց Եվրոպա և Ամերիկա: Ի վերջո, 1919 թ. մայիսին տեղ հասավ երկար սպասված ամերիկյան օգնության առաջին խմբաքանակը: Գնալով օգնության ծավալները մեծացան, որը թույլ տվեց մեղմել սովը և փրկել հարյուր-հազարավոր մարդկանց կյանքը: Միայն 1919 թ. ԱՄՆ-ից ստացվեց մոտ 1,3 մլն փութ ալյուր, 260 հազար փութ ցորեն, 70 հազար փութ բրինձ, 6 մլն տուփ խտացված կաթ, 44 հազար փութ չաքար և այլն:

Արտակարգ միջոցառումներ ձեռնարկվեցին 40-50 հազար

որբերի և չուրջ 300 հազար գաղթականների անհետաձգելի կարիքները հոգալու համար: 1918 թ. սեպտեմբերին Հայաստանի խորհուրդը օրենք ընդունեց կարիքավոր գաղթականներին հողով կամ աշխատանքով ապահովելու կամ, հակառակ պարագայում, պետական նպաստ տրամադրելու մասին: Կարիքավոր գաղթականների համար բացվեցին պետական ջուլհականոցներ և այլ աշխատանոցներ: 1918 թ. հոկտեմբերի 11-ի օրենքով պետությունն իր վրա վերցրեց գաղթական որբերի խնամատարության ու դաստիարակության գործը: Գաղթականների համար աշխատատեղեր բացելու նպատակով ավելի ուշ խոշոր միջոցներ տրամադրվեցին և Հանրապետության տարբեր բնակավայրերում ստեղծվեցին որբանոցներ ու աշխատանոցներ: Այնուհանդերձ բնակարանների ու միջոցների բացակայության պատճառով պետությունն ի վիճակի չէր իրականացնել բոլոր որբերի խնամքը: Ուստի 1919 թ. մարտին ամերիկյան Նպաստամատույց կոմիտեին հանձնվեց 15 հազար որբերի խնամքը: Ընդհանուր առմամբ պետական և ամերիկյան որբանոցներում ընդգրկվել էին չուրջ 20 հազար որբեր:

Սովի ու համաճարակի մեղմացման ու հաղթահարման և գաղթականների ու որբերի կարիքները հոգալու գործում անուրանալի է ամերիկյան Նպաստամատույց կոմիտեի ներդրումը: Իր անժխտելի դերն ունեցավ և երախտիքի ու մեծ հարգանքի արժանացավ նաև Փարիզի Խաղաղության վեհաժողովի կողմից մատակարարման գծով Հայաստանի կոմիսար նշանակված ամերիկյան զնդապետ Հասկելը:

Հանրապետության տնտեսության հիմնական ճյուղը գյուղատնտեսությունն էր, որ տալիս էր երկրից արտահանվող ու տարադրամ ապահովող ապրանքների տեսականու հիմնական մասը և, բնականաբար, դրա վերականգնմանը պետք է ուղղվեին հիմնական ջանքերը: 1920 թ. սկզբից պետությունը 225 մլն ռուբլու վարկ տրամադրեց գյուղատնտեսությունը սերմացուով ապահովելու համար: Ստեղծվեց «Սերմագնման հատուկ կոմիտե», որը գործի անցնելով՝ ամբարեց և ցանքի չրջանում ժողովրդին բաժանեց չուրջ 375 հազար փութ հացահատիկի, բանջարանոցային մշակաբույսերի, բամբակի, ծխախոտի և այլ գյուղատնտեսական կուլտուրաների սերմեր: Զգալի միջոցներ տրա-

մադրվեցին բամբակագործությանը և այգեգործությանը: Գյուղատնտեսական գործիքներ գնելու համար խորհրդարանի որոշմամբ 1920 թ. մարտին 50 մլն ռուբլու վարկ տրամադրվեց, որով Բաթումում գնվեցին և գյուղացիությանը բաժանվեցին գութաններ, գերանդիներ, մանգաղներ, հնձելու և քամելու գործիքներ, այգիների համար մեծ քանակությամբ պղնձարջասպ և այլն:

Գյուղատնտեսության համար կենսական էր ոռոգման խնդրի լուծումը: Այդ բնագավառում հետազոտություններ կատարելու նպատակով 1919 թ. գարնանը հատկացվեց 4 մլն ռուբլի և ջրային գործի հեղինակավոր մասնագետ Ս. Զավալիշինի գլխավորությամբ 70 հոգանոց հանձնախումբը ավելի քան մեկ տարվա հետազոտություններից հետո ծրագրեր կազմեց Հայաստանի ջրային կարողությունների մասին՝ մասնավորապես որոշելով ապագա ջրանցքների ուղղությունները: Հանձնախմբի աշխատանքները հետագայում հիմք դարձան նաև Սևանի Հրազդան կասկադի էլեկտրակայանների կառուցման ծրագրի համար: Սկսվեց Էջմիածնի ջրանցքի կառուցումը, կազմվեց Շիրակի ջրանցքի շինարարության նախագիծը: Բայց Թուրք-հայկական պատերազմի պատճառով դրանք կիսատ մնացին:

Գյուղատնտեսության առաջընթացն անխզելիորեն կապված էր հողային հարցի արմատական լուծման հետ: Ա. Խատիսյանի կառավարությունը 1919 թ. օգոստոսին հողային հարցում գլխավոր խնդիր հռչակեց կալվածատիրական, եկեղեցապատկան ու վանքապատկան բոլոր հողերի ազգայնացումը և ըստ կարիքի դրանց բաշխումը սակավահող գյուղացիությանը: 1920 թ. հունիսի 4-ին օրինագիծ ընդունվեց «Հողային հատուկ մարմինների մասին»: Այդ մարմինները կարճ ժամանակում պետք է իրականացնեին բոլոր մասնատիրական, վանքապատկան-եկեղեցապատկան ու լքյալ հողերի պետականացումն ու բաշխումը գյուղացիությանը, բնակեցնեին լքյալ գյուղերը, հող բաժանեին գաղթականությանը: Հայաստանում մեծ չէր կալվածատերերի թիվը, և քիչ էին նրանց տնօրինության տակ գտնվող հողերը, որոնց պետականացումով հողային հարցը չէր լուծվում: Ուստի էական նշանակություն էին ստանում հողաշինարարության հարցերով զբաղվող նորաստեղծ հողային կոմիտեները, որոնք պետք է լուծեին գյուղերի ներսում ու գյուղերի միջև գոյություն ունեցող հողային վեճերը, արդարացի հողաբաժանում կատարեին: Շատ թե քիչ գործունեություն ծավալեցին Երևանի, Էջմիածնի և Նոր Բայազետի գավառների հողային կոմիտեները: Մյուս գավառներում դրանք կա՛մ գոյություն չունեին, կա՛մ էլ մասամբ էին ձևավորվել: Փաստորեն հողային ռեֆորմն իրականացվեց խիստ ուշացած և կիսատ-պռատ: Իսկ սկսված Թուրք-հայկական պատերազմի հետևանքով դրա հետագա իրագործումն ընդհանրապես ընդհատվեց:

Տևական չրջափակման մեջ գտնվող Հայաստանի համար առանձնահատուկ նշանակություն ուներ հաղորդակցության ուղիների, հատկապես երկաթուղու բարեկարգումը: Այդ նպատակով դեռևս 1919 թ. զգալի միջոցներ հատկացվեցին և փորձառու մասնագետներ հրավիրվեցին: Չնայած վառելիքի խիստ պակասին՝ 1920 թ. հաջողվեց ամենօրյա երկաթուղային կապ ապահովել Թիֆլիսի հետ: Կատարվեցին խճուղիների բարեկարգման և նոր ճանապարհների կառուցման որոշ աշխատանքներ (Շամշադինում, Քեշիշքենդում և այլն): Երևան-Ղարաքիլիսա խճուղին հարմարեցվեց ավտոմոբիլային երթևեկության համար:

Ձեռնարկվեցին արտադրության ոլորտի վերականգնմանն ուղղված քայլեր: Երևանում, Ալեքսանդրապոլում, Կարսում, Էջմիածնում, Դիլիջանում, Նոր Բայազետում, Սարիղամիշում, Ղամարլուում և այլ բնակավայրերում կազմակերպվեցին ջուլհականոցներ, կաշվի մշակման կետեր, կոշկակարանոցներ, կարուձևի ու փայտամշակման արհեստանոցներ, սղոցարաններ, բրուտանոցներ և այլն: Դրանք հնարավորություն տվեցին աշխատանքով ապահովել հազարավոր մարդկանց և տեղական արտադրանքի (մահուդ, կոշիկ, սպիտակեղեն, կտավ և այլն) հաշվին հոգալ բանակի, հիվանդանոցների ու որբանոցների կարիքների զգալի մասը: Տարադրամ ձեռք բերելու կամ դրսից անհրաժեշտ ապրանքների ներմուծումն ապահովելու նպատակով պետականացվեցին այն ձեռնարկությունները, որոնց արտադրանքը դրսում պահանջարկ ուներ (Շուստովի կոնյակի գործարան):

Երկրի ընդերքն ուսումնասիրելու համար սկսվեցին հետազոտություններ, որոնք պատերազմի պատճառով կիսատ մնա-

ցին: Այնուհանդերձ, 1920 թ. ամռանն ընդունվեց հանքերի մասին օրենք, որով հանրապետության հանքային հարստությունները համարվեցին պետական սեփականություն: Պետությունն իր ձեռքը վերցրեց Կողբի ու Կաղզվանի աղահանքերի և Օլթիի ածխահանքերի շահագործումը: Վերջիններս օրական տալիս էին 5-6 հազար փութ ածուխ, որը որոշ չափով մեղմում էր Ադրբեջանի շրջափակման հետևանքով առաջացած վառելիքի սովը և գործուն վիճակում պահում երկաթուղին:

Տնտեսության կազդուրման գործում պետությունը մեծ տեղ էր տալիս կոոպերացիային: 1919 թ. ստեղծված Հայկոոպը (Հայաստանի կոոպերատիվների միություն) 1920 թ. միավորում էր 350 կոոպերատիվ՝ 95 հազար անդամով: Պետությունից վարկ ու փոխառություն ստանալով՝ կոոպերատիվները ոչ միայն կարևոր դեր էին խաղում ներքին ու արտաքին առևտրի ոլորտում, այլև զբաղվում էին արդյունաբերական գործունեությամբ՝ բացելով օճառի գործարան, կաշվի արհեստանոցներ: Հայկոոպի աճող տնտեսական դերը նկատի ունենալով՝ կառավարությունը 1920 թ. ապրանքափոխանակության և արդյունաբերական ձեռնարկություն ստեղծելու համար, որպես փոխառություն նրան լրացուցիչ տրամադրեց 250 մլն ռուբլի:

Իրավիճակի որոշակի կայունացումը և միացյալ Հայաստանի ստեղծման մոտալուտ հեռանկարը մեծացրին հետաքրքրությունը Հայաստանի նկատմամբ: Հայ և օտարերկրյա կապիտալի որոշ ներկայացուցիչներ հանդես եկան Հանրապետության տնտեսության մեջ ներդրումներ կատարելու հեռանկարային առաջարկություններով: Շվեյցարական ու չվեդական մի քանի ընկերություններ կաթնատնտեսական ագարակներ և երկրագործական մեքենաների արհեստանոցներ ստեղծելու առաջարկ արեցին: Հայ և ճապոնացի մի քանի կապիտալիստներ հանդես եկան էլեկտրաերկաթուղագծի կառուցման մենաշնորհ ստանալու առաջարկով: Մայիլյանները որոշեցին ապակու գործարան կառուցել Ղարաքիլիսայում, Փիթոյանները՝ կաշվի գործարան Ջալալօղլիում: Ուրիշները ծրագրում էին հիմնել ցեմենտի, կրի ու չաքարի գործարաններ և այլն: Մասչտաբներով հատկապես վիթխարի, հրապուրիչ ու հեռանկարային էր մի խումբ հայ մեծահարուստների առաջարկած և 1920 թ. հունիսին կառավարության հաստատմանն արժանացած Բաթում-Կարս-Սարդարապատ երկաթուղու կառուցման պայմանագրի նախագիծը: Ցավոք, Հանրապետության անկման պատճառով նշված նախաձեռնությունները մնացին թղթի վրա:

Հայկական պետականության կայացմանը նպաստելու նպատակով մի շարք մեծահարուստ հայեր խոշոր միջոցներ կտակեցին Հայաստանին: Ընդունելով Հայաստանի քաղաքացիություն՝ եգիպտահայ Մելքոնյան եղբայրները Հանրապետությանը կտակեցին մոտ 6 մլն դոլար: Ա. Մելիք-Աղարյանը Հայաստանին նվիրեց Թիֆլիսի իր փառահեղ ապարանքը՝ 1 մլն դոլար արժողությամբ: Հայաստանի համալսարանին 25 մլն ռուբլի կտակեց ստավրոպոլցի հայ դրամատեր Պոպովը: Հայաստանում մեծածավալ շինարարական աշխատանքներ խոստացան իրականացնել Գ. Գյուլբենկյանը և Հ. Մելիքյանը: Հայաստանին նյութապես սատարելու գործին լծվեցին նաև Սփյուռքի ազգային կուսակցությունները: Եգիպտոսի ռամկավարները ձեռնամուխ եղան Հայաստանի օդային նավատորմի համար 40 օդանավ ձեռք բերել: ԱՄՆ-ի դաշնակցականները շուրջ 500.000 դոլար հանգանակեցին հայկական բանակի համար և այլն:

Տնտեսական ոլորտում արձանագրված դրական միտումները, այնուհանդերձ, չպետք է գերագնահատել: Երկրի վիճակը դեռևս մնում էր խիստ ծանր: Լուրջ խնդիրներ կային հատկապես ֆինանսական ասպարեզում: Գաղթականների, որբերի և բանակի կարիքները գլխավորապես բավարարվում էին ներմուծված պարենի և առաջին անհրաժեշտության ապրանքների հաշվին: Արտաքին շուկայում պահանջարկ ունեցող սակավաթիվ ապրանքների արտահանման ճանապարհով ձեռք բերված միջոցները բավարար չէին բյուջեի ծախսերը փակելու համար: Հանրապետության 1920 թ. բյուջեի ծախսային մասը, օրինակ, հասնում էր մոտ 1 մլրդ ռուբլու, մինչդեռ մուտքերը կազմում էին 200-300 մլն ռուբլի: Բյուջեի բացը լրացնելու ուղիներից մեկը կարող էր լինել հարկային քաղաքականությունը: Այդ առումով դրական քայլ էր 1920 թ. հունիսի 15-ին առաջադիմական եկամտային հարկի մասին օրենքի ընդունումը:

Շատ ավելի բարդ էր դրամական շուկան կարգավորելու խնդիրը: 1920 թ. Հայաստանում շրջանառության մեջ էին

անդրկովկասյան բոները, հայկական չեկերը, իսկ տարվա վերջից՝ նաև Լոնդոնում տպագրված հայկական դրամանիշները: Կառավարությունն անընդհատ մեծացնում էր շրջանառության մեջ գտնվող թղթադրամի ծավալը, որը տարադրամով ապահովված չլինելու, արտահանման ու հաղորդակցության դժվարությունների, ապրանքների պակասի պայմաններում հանգեցնում էր հայկական դրամի արժեզրկմանը և գների խելահեղ աճին:

Տնտեսության վերականգնման, երկիրն անհրաժեշտ ապրանքներով ապահովելու, դրամաշրջանառության կարգավորման և տարադրամ ձեռք բերելու գործին մեծապես կարող էր ծառայել 20 մլն դոլարի չափով «Անկախության փոխառության» իրացումը, որի մասին օրինագիծ ընդունվեց 1920 թ. հունիսին: Որպես փոխառության լիազոր՝ արտասահման մեկնեց նախկին վարչապետ Ալ. Խատիսյանը: Ե՛վ Հայաստանում, և՛ Սփյուռքի գաղթավայրերում փոխառության բաժանորդագրությունն անցավ մեծագույն խանդավառության պայմաններում: Հասարակության բոլոր խավերը, քաղաքական կուսակցություններն ու մամուլը ողջունեցին այդ նախաձեռնությունը և իրենց մասնակցությունը բերեցին: Միաժամանակ, Բաթումի «Հայ կանանց միության» նախաձեռնած ոսկու հանգանակությամբ սկիզբ դրվեց Հայաստանում «Ոսկու ֆոնդ» ստեղծելու շարժմանը, որն իր շարունակությունը գտավ Կ. Պոլսում, Իզմիրում, Կահիրեում, Ալեքսանդրիայում, Սոֆիայում, Բուխարեստում և այլ վայրերում: Սկսված Թուրք-հայկական պատերազմի հետևանքով, սակայն, փոխառության իրացումը դադարեցվեց, իսկ հավաքված միջոցները հանրապետության անկումից հետո վերադարձվեցին բաժանորդներին: Ինչ վերաբերում է «Ոսկու ֆոնդին», ապա հավաքված միջոցները հետագայում ծախսվեցին տարբեր երկրներում ապաստանած որբերի ու գաղթականների կարիքները հոգալու համար:

բ. Մշակութային կյանքը: Որոշակի քայլեր կատարվեցին նաև մշակութային կյանքի կազմակերպման ուղղությամբ: Առաջին հերթին ջանքեր գործադրվեցին վերականգնելու դպրոցական համակարգը: Դժվարությամբ, բայց աստիճանաբար ռազմական կազմակերպությունների, հիվանդանոցների ու որբանոցների տնօրինության տակ գտնվող դպրոցական շինությունները վերադարձվում էին կրթական համակարգին: Պետությունն իր վրա վերցրեց կրթության կազմակերպման գործը: Դպրոցները նորոգելու և անհրաժեշտ գրենական պիտույքներ ձեռք բերելու համար զգալի միջոցներ հատկացվեցին: 1920 թ. մարտին հաստատվեց եկեղեցական-ծխական դպրոցները պետականացնելու և կրթության նախարարությանը ենթարկելու մասին օրինագիծը: Տարրական կրթության մասին օրենքով պետական դպրոցներում սահմանվեց վեցամյա կրթություն: Դպրոցական համակարգի երկրորդ օղակը միջնակարգ դպրոցն էր: Չնայած ուսուցչական կադրերի, դասագրքերի ու գրենական պիտույքների մեծ պակասին՝ 1919 թ. վերջին հանրապետությունում գործում էր 431 տարրական դպրոց՝ 1000-ից ավելի ուսուցիչներով ու 38 հազար աշակերտներով, և 20 միջնակարգ դպրոց՝ շուրջ 300 ուսուցիչներով ու 5200 աշակերտով: Դրանով հանդերձ՝ դպրոցահասակ երեխաների մի զգալի մասը դեռևս դուրս էր մնում կրթական համակարգից: Նախատեսվում էր 1920-1921 ուս. տարում մտցնել պարտադիր տարրական կրթություն, բայց քաղաքական անբարենպաստ իրադարձությունները խանգարեցին այդ ծրագրի կենսագործմանը:

Հիմնվեցին նաև մասնագիտացված դպրոցներ: Նոր Բայազետում և Դիլիջանում բացվեցին գյուղատնտեսական դպրոցներ, իսկ Ալեքսանդրապոլում՝ տեխնիկական միջնակարգ դպրոց: Նախատեսվում էր տեխնիկական դպրոց և միջնակարգ բժշկական վարժարան բացել Երևանում:

Հայաստանի մշակութային կյանքում խոշոր իրադարձություն էր համալսարանի բացումը, որի մասին որոշումն ընդունվեց 1919 թ. մայիսի 16-ին: Համալսարանի հանդիսավոր բացումը կատարվեց 1920 թ. հունվարի 31-ին Ալեքսանդրապոլում, որտեղ էլ ընթացան առաջին կիսամյակի պարապմունքները: Սկզբում գործում էր միայն պատմա - լեզվագրական ֆակուլտետը՝ 290 ուսանողով: 1920 թ. հունիսին համալսարանը փոխադրվեց Երևան, որտեղ նրան հատկացվեց ուսուցչական սեմինարիայի շենքը:

Առաջին քայլերը կատարվեցին թանգարանային և գրադարանային համակարգի կազմակերպման ուղղությամբ: Հնագի-

տական հուշարձանների պահպանության և գիտական ուսումնասիրության նպատակով ճանաչված գիտնականների ու ճարտարապետների մասնակցությամբ ստեղծվեց հնությունների պաշտպանության կոմիտե: Նրա գործունեության առաջին օբյեկտը Անիի ավերակներն էին, որտեղ հետազոտություններ ծավալեց ճարտարապետ Թ. Թորամանյանը: 1920 թ. հուլիսին կազմակերպվեց գիտական մեծ արշավախումբ՝ Հայաստանի հնագիտական քարտեզ կազմելու նպատակով. կատարվեց մեծ թվով հուշարձանների չափագրություն, հայտնաբերվեցին մինչ այդ անհայտ հուշարձաններ և արձանագրություններ: Հավաքված հարուստ նյութը պետք է կենտրոնացվեր Երևանում հիմնված պետական թանգարանում: Դեռևս 1919 թ. որոշում էր ընդունվել Հայոց ազգագրական ընկերության Թիֆլիսում ունեցած գույքի հիման վրա Երևանում Ազգագրական-մարդաբանական թանգարան հիմնելու մասին: Ճանաչված նկարիչներ Գ. Բաշինջաղյանի, Մ. Սարյանի, Ե. Թադևոսյանի և այլոց մասնակցությամբ 1919 թ. մայիսին Երևանում բացվեց Հայ արվեստագետների միության անդրանիկ ցուցահանդեսը: Կառավարության կողմից պետական թանգարանի համար գնված ցուցահանդեսի կտավները հիմք հանդիսացան պետական պատկերասրահ ստեղծելու համար:

Քայլեր ձեռնարկվեցին թատերական և երաժշտական կյանքի կազմակերպման ուղղությամբ: 1919 թ. վերջին Երևանում գործում էին թատերական վարժարան և երաժշտական դասընթացներ: Պետական թատրոն կազմակերպելու նպատակով նախատեսվում էր Երևան հրավիրել դերուսույց Գ. Բուրջալյանին և հայ բեմի առաջատար ուժերին, որոնցից մի քանիսը 1920 թ. ամռանը Երևանում հանդես եկան ներկայացումներով: Երևանում երաժշտանոց ստեղծելու նպատակով հրավիրվեցին նշանավոր երաժշտագետներ Մ. Իպոլիտով-Իվանովը, Ալ. Սպենդիարյանը, Ռ. Մելիքյանը և ուրիշներ:

գ. Հասարակական-քաղաքական կյանքը: Դարավոր ընդմիջումից հետո վերականգնված հայկական պետականությունն ի սկզբանե որդեգրեց ժողովրդավարությունը՝ լայն ասպարեզ բացելով ազատ մամուլի, քաղաքական ազատությունների և բազմակարծության համար: Հայ իրականության մեջ գործող

գրեթե բոլոր հասարակական ուժերն իրենց տեղը գտան հանրապետության քաղաքական համակարգում: Հայաստանում գործում էին Հայ հեղափոխական դաշնակցություն, Հնչակյան, Հայ ժողովրդական կուսակցությունները, սոցիալ-դեմոկրատների (մենշևիկներ, սպեցիֆիկներ, բոլշևիկներ) և սոցիալիստ-հեղափոխականների (էսէռներ) կազմակերպությունները: Նրանցից շատերը վերանայելով և նոր ժամանակների ոգուն հարմարեցնելով իրենց ծրագրերը՝ փորձեցին հնարավորին չափով մասնակցել նորանկախ պետության կայացման գործին: Դրան նպաստում էր այն, որ ոչ մի կուսակցություն կամ կազմակերպություն՝ անկախ իր աշխարհայացքից կամ Հայաստանի Հանրապետության նկատմամբ ունեցած վերաբերմունքից, պետական համակարգից մեկուսացված չէր: Պետությունը բարձրորակ կադրերի ու մասնագետների սուր պահանջ էր զգում: Ուստի դաշնակցականը, հայ ժողովրդական կուսակցության անդամը, էսէռը, բոլշևիկն ու մենշևիկը պաշտոններ էին զբաղեցնում պետական ապարատի ու իշխանության համակարգի տարբեր օղակներում:

Դաշնակցությունը, լինելով հայության շրջանում ամենաազդեցիկ քաղաքական ուժը և ամենամեծ ներդրումն ունենալով պետականության վերականգնման գործում, սկզբից ևեթ ստանձնեց հանրապետությունը ղեկավարելու պարտականությունը՝ ժամանակ առ ժամանակ կոալիցիայի մեջ մտնելով այլ քաղաքական ուժերի հետ: Կուսակցության գործունեությունն ու ծրագիրը նոր պայմաններին համապատասխանեցնելու գործում կարևոր դեր խաղաց 1919 թ. սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին կայացած Դաշնակցության 9-րդ ընդհանուր ժողովը, որտեղ գլխավոր նպատակ հռչակվեց ազատ, անկախ և միացյալ Հայաստանի ստեղծումը:

Հայ ժողովրդական կուսակցությունը, համախմբելով բարձրորակ ու փորձված մտավորական տարրերին, քաղաքական ուժերի համակարգում իր ազդեցությամբ երկրորդն էր: Հանրապետության քաղաքական դաշտում նա զբաղեցնում էր աջ թևը և բնական ու ընդունելի էր համարում կապիտալիզմը: Նորաստեղծ Հայաստանի նկատմամբ նրա կեցվածքի ճշտումը տեղի ունեցավ 1919 թ. սեպտեմբերին կայացած կուսակցության 2-րդ

համագումարում, որտեղ գլխավոր նպատակ հռչակվեց հայկական պետականությանը և ազգային մշակույթի զարգացմանը ծառայելը: Կուսակցությունը պառլամենտական և ժողովրդավարական կարգերի կողմնակից էր և որոշ վերապահումով կողմ էր անկախ և միացյալ Հայաստանի ստեղծմանը: Թեև որոշ ժամանակ ժողովրդական կուսակցությունը Դաշնակցության հետ կոալիցիայի մեջ էր, բայց Հանրապետության գոյության հիմնական ժամանակահատվածում ընդդիմադիր ուժ էր ու Դաշնակցության հետևողական քննադատ: Դրանով հանդերձ, պետության և ազգի համար բախտորոշ պահերին (բոլշևիկյան մայիսյան ապստամբություն, Թուրք-հայկական պատերազմ և այլն) նա սատարում էր կառավարությանը:

Հանրապետությունում գործող քաղաքական մնացած ուժերն իրենց ծրագրերով սոցիալիստական էին և կազմում էին քաղաքական դաշտի ձախ թևը: Դրանցից միայն էսէռներին էր վիճակված քիչ թե շատ դեր խաղալ երկրի կյանքում, քանի որ Դաշնակցությունից բացի, ձախերից միայն նրանք էին ներկայացված Հայաստանի վերջին խորհրդարանում (միակ բացառությունը բոլշևիկ Ա. Մելքոնյանն էր): Լինելով Ռուսաստանի հետ սերտ կապերի կողմնակից և այդ առումով հակառակորդ եվրոպական կողմնորոշմանը՝ էսէռները սկզբնապես վերապահ վերաբերմունք ունեին Հայաստանի անկախության հարցում: Բայց պետության կայացմանը զուգընթաց, ձերբազատվելով նախկին դիրքորոշումից, 1920 թ. ամռանը նրանք հանդես եկան Հայաստանի անկախության ընդունման մասին պաշտոնական հայտարարությամբ, իսկ ավելի ուշ՝ 1920 թ. նոյեմբերին, հանրապետության համար ամենատագնապալի օրերին, անգամ մասնակցեցին նրա վերջին կառավարության աշխատանքներին: Անկախության դիրքերում էին և բախտորոշ պահին պետությանը սատարում էին նաև մյուս քաղաքական ուժերը՝ բացի բոլշևիկներից:

Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունները, որոնք 1920 թ. մայիսյան ապստամբությունից հետո վերակազմավորվեցին և վերածվեցին անվանապես ինքնուրույն՝ Հայաստանի կոմունիստական կուսակցության, մինչև 1920 թ. մայիսն ազատորեն գործում էին Հանրապետությունում: Ունենալով ծայրահեղ հեղափոխական հայացքներ և փարված լինելով համաշխարհային հեղափոխության ու պրոլետարիատի դիկտատուրայի գաղափարներին՝ նրանք Հայաստանի անկախության հակառակորդներ էին: Լինելով սակավաթիվ և Հանրապետությունում չունենալով սոցիալական հենարան՝ բոլշևիկները հարմար առիթի էին սպասում ներքին թշնամիների և արտաքին հզոր ուժերի օգնությամբ անկախ պետականությունը ոչնչացնելու և իշխանությունը իրենց ձեռքը վերցնելու համար:

Քաղաքական կուսակցություններից և կազմակերպություններից բացի Հանրապետությունում գործում էին նաև զանազան հասարակական կազմակերպություններ: Դրանցից ամենազանգվածայինը Դաշնակցության ազդեցության ներքո գտնվող և աշխատավորների շահերը պաշտպանող արհեստակցական միություններն էին: 1920 թ. հունվարի 26-ին Երևանում գումարված Համագումարում մինչ այդ առանձին գործող 13 արհեստակցական միությունները միավորվեցին մեկ ընդհանուր միության մեջ: 1920 թ. փետրվարին հիմնվեց Հայաստանի Կարմիր խաչը, որն իր մասնաճյուղերը ստեղծեց Հանրապետության մի շարք շրջաններում: Լայն ծավալ ստացավ սկաուտական ռազմապատանեկան շարժումը: Հանրապետությունում գործում էին նաև շուրջ 20 հայրենակցական միություններ, գյուղացիական, կանանց, մարմնամարզական, տեխնիկական, իրավաբանական, ուսուցչական, բժշկական, ուսանողական միություններ, հրատարակչական ընկերություններ և այլն: Դրանք գլխավորապես գտնվում էին Դաշնակցության ազդեցության ներքո և ծառայում էին պետության ամրապնդման գործին: Դրանց հակառակ, բոլշևիկների ազդեցության ներքո էր գործում «Սպարտակ» երիտասարդական կազմակերպությունը, որը մինչև 1920 թ. մայիսյան ապստամբությունը գործում էր ազատ, թեև 1919 թ. ամռանը՝ Թուրք-Թաթարական խռովությունների ամենաեռուն շրջանում, հանդես եկավ հակակառավարական թռուցիկներով և զինվորներին ուղղված դասալքության կոչերով: Բոլշևիկյան ուղղվածություն ուներ Երևանում լույս տեսնող, խորհրդային կարգերի ջատագով «Գյուղացու ձայն» շաբաթաթերթը:

Ազատ մամուլի առկայությունը Հայաստանի Հանրապետության համար ժողովրդավարական պետություն լինելու ցուցա-

նիչներից էր: Գլխավորապես Երևանում տարբեր պարբերականությամբ լույս էին տեսնում մեծմասամբ որոշակի կուսակցություններ կամ հասարակական կազմակերպություններ ներկայացնող մի շարք լրագրեր: Նման թերթերից էին՝ «Աշխատանք», «Հայաստանի աշխատավոր», «Հառաջ» (ՀՀԴ), «Հայաստանի կոոպերացիա», «Ժողովուրդ» (Հայ ժողովրդական կուսակցություն), «Հայաստանի ձայն» (ռամկավարներ), «Կայծ» (Հայ սոցիալ-դեմոկրատ մենշևիկներ), «Նոր կյանք» (Հայ սոցիալ-դեմոկրատ բոլշևիկներ) և այլն: Իշխանություններին ու կառավարությանը քննադատելով հանդերձ՝ դրանք կարևոր դեր էին խաղում անկախ պետության գաղափարի ամրապնդման, հայերենի՝ որպես պետական լեզվի արմատավորման գործում և դրանով նպաստում պետականության կայացմանը:

դ. **Թուրք-թաթարական խռովությունները:** Հայաստանի ներքին կյանքի ամենացավոտ երևույթներից մեկը Թուրքիայի և Ադրբեջանի կազմակերպած մահմեդական հակապետական շարժումներն էին, որոնք գրեթե անընդմեջ ուղեկցում էին հանրապետությանը նրա գոյության ողջ ընթացքում:

Դեռևս 1918 թ. թուրքական արշավանքի օրերին Երևանի նահանգի և Կարսի մարզի թուրք բնակչությունն աչքի ընկավ քայքայիչ և ապակայունացնող գործունեությամբ՝ փակելով ճանապարհները և թույլ չտալով հայկական զորամասերի արագ տեղաշարժը դեպի ռազմաճակատ: Հայկական պետականության վերականգնումից հետո, չհաշտվելով Հայաստանի անկախության մտքի հետ, Թուրքալեզու բնակչությունը հանդես բերեց անջատողական ձգտումներ՝ փորձելով միանալ ազգակից Թուրքիային կամ Ադրբեջանին: Ընդառաջ գնալով այդ ցանկություններին՝ վերջիններս ամեն կերպ օժանդակում էին նրան և հավակնություններ ներկայացնում Հայաստանի տարածքների նկատմամբ: Թեև Մուդրոսի զինադադարից հետո թուրքական զորքերը պարտավոր էին հետ քաշվել մինչև 1914 թ. սահմանները, բայց ամեն ինչ անում էին ազատվելիք տարածքներն իրենց ազդեցության ներքո պահելու և դրանց նկատմամբ Հայաստանի իրավունքները չեզոքացնելու համար: Իր հերթին, Ադրբեջանը սկզբից ևեթ հավակնություններ ներկայացրեց ոչ միայն նախկին Ելիզավետպոլի նահանգի մաս կազմող Զանգեզուրի ու Ղարաբաղի նկատմամբ, որտեղ անգլիացիների օժանդակությամբ գործում էր բացահայտ, այլև Հայաստանի Հանրապետության ներսում թուրք-թաթարական ստվար բնակչություն ունեցող Նախիջևանի, Շարուրի, Դարալագյազի, Բասարգեչարի, Սուրմալուի, Զանգիբասարի, Վեդիբասարի և այլ տարածքների նկատմամբ: Թուրքական զորքերի կողմից ազատվելիք տարածքներում կազմվում էին տեղական «անկախ հանրապետություններ»՝ իրենց կառավարություններով: Մասնավորապես Կարսի տարածքում ստեղծվել էր «Արևմտյան Կովկասի Հանրապետությունը», իսկ Նախիջևանի, Շարուրի, Սուրմալուի, Զանգիբասարի և Վեդիբասարի տարածքներում՝ Արևելյան Կովկասի կամ «Արաքսյան Հանրապետությունը», որոնք, իրենց հերթին, բաժանվում էին ավելի փոքր միավորների: Ընդհանուր առմամբ Հայաստանի ենթակայության ներքո գտնվող տարածքներում ստեղծվել էին գրեթե անկախ մեծ ու փոքր մահմեդական շուրջ 20 իշխանություններ, որոնք հրաժարվում էին ենթարկվել հանրապետության կառավարությանը: Հիմնականում գտնվելով երկրի տարբեր շրջաններն իրար կապող ճանապարհների վրա՝ մահմեդական «անկախ» կազմավորումները հաճախ կաթվածահար էին անում երկրի արտաքին ու ներքին հաղորդակցության ուղիները՝ ծանր վիճակի մեջ դնելով հանրապետությունը: Դրանցից յուրաքանչյուրն ուներ զինված ուժեր՝ թնդանոթներով ու գնդացիրներով: Այդ շրջաններում տեղավորված բազմաթիվ թուրք սպաներ ու զինվորներ զենքի էին վարժեցնում տեղական բնակչությանը՝ ստեղծելով մեծաքանակ կազմավորումներ: Օրինակ՝ 1919 թ. ամռանը Շարուր-Նախիջևանի թուրքերը խոստանում էին հարկ եղած դեպքում կռվի դուրս բերել 10 հազար զինված մարդ: Գրեթե նույն ժամանակ Զանգիբասարի թուրքերը կռվի էին հանում շուրջ 5000, իսկ Բեյուք Վեդին՝ հարևան թուրք գյուղերի հետ՝ 4000 հոգի: Այդ ուժերի գլուխ կանգնած էին փորձառու թուրք սպաներ: Եթե Թուրքիան խռովարարներին զենք ու զինամթերք և փորձված սպաներ էր մատակարարում, ապա Ադրբեջանն օժանդակում էր դրամով:

1919 թ. ապրիլ-մայիս ամիսներին անգլիացիների օժանդակությամբ Հայաստանի կառավարությանը հաջողվեց հսկողու-

թյան տակ վերցնել նախկին Ռուսահայաստանի գրեթե ամբողջ տարածքը: Ապրիլի 24-ին հայ-անգլիական ուժերը մտան Կարս: Տեղական իշխանությունների ներկայացուցիչները դիմադրության փորձ արեցին, բայց անգլիացիների կողմից ձերբակալվելով՝ աքսորվեցին Մալթա կղզի: Անգլիացիների առջև տեղի տվեցին և Հայաստանի իշխանությունը ճանաչեցին նաև Նախիջևանի թուրքերը: Մայիսի 20-ին հայկական զորքերը մտան Նախիջևան: Այնուհանդերձ Թուրքիան և Ադրբեջանը չհրաժարվեցին Հայաստանը ներսից քայքայելու իրենց ծրագրերից: Առերևույթ հնազանդ շրջաններում նախապատրաստական աշխատանքներն ընթանում էին ամբողջ թափով՝ սպասելով բարեպատեհ առիթի: Հակահայկական եռանդուն գործունեություն էր ծավալել հատկապես Ադրբեջանի լիազոր ներկայացուցչությունը Երևանում, որը 1919 թ. մարտից ղեկավարում էր խան Թեքինսկին, իսկ նրա վտարումից հետո (օգոստոսից)՝ Հախվերդովը: Հատկապես առաջինը, մի կողմից, իր կառավարությանը տեղեկություններ էր հաղորդում Հայաստանի ներքին իրավիճակի, տնտեսական դժվարությունների, զորքերի թվի ու տեղաշարժերի, մուսուլմանների զինվածության մասին, մյուս կողմից՝ Բաքվից ստանալով խոշոր գումարներ՝ իր գործակալների միջոցով դրանք բաշխում էր անհնազանդ շրջաններին, փոխհամաձայնեցնում և ուղղություն տալիս դրանց գործունեությանը, խոստումներ տալով՝ դրդում Հայաստանի դեմ: Հայաստանը տնտեսապես թուլացնելու միտումով Ադրբեջանի ներկայացուցիչն իր կառավարությանը կոչ էր անում չվերացնել նրա շրջափակումը, վառելիք չտրամադրել, առաջ բերել դրամական դժվարություններ և այլն: Նա առաջարկում էր նաև, բոլշևիկյան վտանգը պատրվակ բերելով, անգլիացիներին համոզել և Բաքու փոխադրել Կարսի թնդանոթները:

Օգտվելով Անդրկովկասից անգլիական զորքերի հեռանալուց՝ Ադրբեջանի ներկայացուցիչը 1919 թ. ամռանն ամբողջովին նվիրվում է Շարուր-Նախիջևանում և Թուրքաբնակ այլ վայրերում ապստամբության կազմակերպմանը: Ուշագրավ է, որ ժամանակի առումով բռնկվելիք խռովությունները համընկնում էին Ղարաբաղում ընթացող վճռական իրադարձությունների և Անդրկովկաս Դենիկինի զորքերի հնարավոր ներխուժման պահի

հետ: Դրանով Ադրբեջանը փաստորեն փորձում էր Ղարաբաղում կատարվող իրադարձություններից չեղել Հայաստանի ուշադրությունը, ինչպես նաև Անդրկովկաս դենիկինյան ներխուժման իրական սպառնալիքի դեպքում նրան մեկուսացնել և հնարավորություն չտալ աջակցելու Դենիկինին, որը Հայաստանը համարում էր իր դաշնակիցը: Հունիսի 22-ին խան Թեքինսկին իր կառավարությանը հղած հեռագրում պարզորոշ գրում էր. «Թվում է, որ այժմ Ադրբեջանը Հայաստանից բացի ուրիշ թշնամի չունի, ուստի անհրաժեշտ է Հայաստանի վրա առանձին ուշադրություն դարձնել...»: Հուլիսին, հաղորդելով սկսված մահմեդական շարժումների մասին, նա պահանջում էր զորքերը շարժել դեպի Հայաստանի սահմանները՝ մահմեդական ապստամբների ոգին բարձրացնելու համար: Որոշ ժամանակ անց խան Թեքինսկին իր կառավարությանը կոչ էր անում անհապաղ պատերազմ հայտարարել Հայաստանին, ապա առաջարկում էր երկու շաբաթվա ընթացքում գրավել Զանգեզուրը և ադրբեջանական զորքերը առաջ շարժել մինչև Ղամարլու (Արտաշատ), քանի դեռ չի ժամանել Հայաստանի գերագույն կոմիսար նշանակված Հասկելը: Թեև դրանից անմիջապես հետո Թեքինսկին հայկական կառավարության պահանջով հեռացվեց Հայաստանից, բայց նրա ջանքերն անհետևանք չանցան:

Անդրկովկասից անգլիական զորքերի հեռանալուց հետո բռնկվեց Թուրք-թաթարական ընդհանուր խռովություն՝ ընդգրկելով Օլթիից Օրդուբադ ընկած տարածքը: Այն նախապատրաստված և ֆինանսավորված էր գլխավորապես Ադրբեջանի կողմից: Ապստամբությունը սկսվեց 1919 թ. հուլիսին Բեյուք Վեդիի շրջանից, որին շուտով միացան Շարուրն ու Նախիջևանը, Սուրմալուն, Զանգիբասարը և, ի վերջո, նաև Կարսի մարզը: Եթե Կարսի մարզում արդեն սեպտեմբերին հաջողվեց կտրուկ գործողություններով վերջ տալ ապստամբական շարժումներին, որից հետո այդ շրջանը համեմատաբար խաղաղվեց, ապա մնացած շրջանները մինչև 1920 թ. կեսերը մնացին ապստամբ վիճակում:

1920 թ. մայիսյան ապստամբությունը ճնշելուց հետո Հայաստանի Հանրապետության կառավարությունը ձեռնամուխ եղավ ապստամբ Թուրքաբնակ շրջանների խաղաղեցմանը:

Խիստ կարևոր էր հատկապես Երևանին գրեթե կպած Զանգիբասարի խաղաղեցումը, որն անմիջական սպառնալիք էր մայրաքաղաքի համար: Մայիսյան ապստամբության օրերին Զանգիբասարում թրքությունը ակտիվացրել էր իր գործողությունները և արգելքներ էր ստեղծել բոլշևիկյան ելույթը ճնշելու նպատակով երկաթուղիով Ալեքսանդրապոլ մեկնող զորքերի համար: Բնական է, որ բոլշևիկյան ապստամբությունը ճնշելուց հետո կառավարությունը ուշադրություն դարձրեց Զանգիբասարի վրա: Հունիսի 18-ին վերջնագրով Զանգիբասարի թուրքերից պահանջվեց ճանաչել Հայաստանի իշխանությունը և զինաթափվել: Պատասխան չստանալով՝ հաջորդ օրը հայկական ուժերը հարձակման անցան, և 3 օրվա կռիվներում շրջանը լիովին խաղաղեցվեց: Նույն օրերին հաջողությամբ իրականացվեց նաև Օլթիի ածխահանքերի գրավման գործողությունը: Մինչև 1914 թ. այդ շրջանը մտնում էր Կարսի մարզի մեջ և Մուդրոսի զինադադարից հետո թուրքերն այն պետք է հանձնեին Հայաստանին: Մինչդեռ նրանք համառորեն հրաժարվում էին հեռանալ Օլթիի շրջանից: Մի փոքր ավելի ուշ Օլթիի գրավման գործողությունը քեմալական թուրքերն առիթ դարձրին Հայաստանի դեմ պատերազմ սանձազերծելու համար:

Հուլիսի 10-ին սկսվեց և երկու օրվա մարտերից հետո գրավվեց նաև Բեյուք Վեդին: Վերականգնվեց երկաթուղային հաղորդակցությունը Երևանի հետ, իսկ Ղամարլուի շրջանի հայությունն ազատվեց պաշարված վիճակից: Սկսվեց հայկական ուժերի սրընթաց առաջխաղացումը դեպի Շարուր-Նախիջևան: Հուլիսի 25-ին գրավվեց Շահթախթը: Թուրքերը փախուստի դիմեցին՝ թողնելով մինչև Նախիջևան ընկած տարածքը: Խաղաղեցվեցին նաև Սևանա լճից արևելք և հյուսիս ընկած խոռոված շրջանները:

Այսպիսով, թուրք-թաթարական խռովությունները հիմնականում ճնշված էին, և 1920 թ. ամռանը Հայաստանի Հանրապետության իշխանությունը տարածվում էր Ղարաբաղից մինչև Օլթի ընկած տարածքներում:

Չնայած Հայաստանի ներքին ու արտաքին դժվարին կացությանը, նրա տարածքային հարցերի լուծման անորոշությանը՝

Հանրապետության իշխանությունները չէին կորցրել հավատը, թե երեկվա «դաշնակիցների» աջակցությամբ հնարավոր կլինի վերջնականապես ի մի հավաքել հայրենիքի տարածքները:

4. ԱՐՏԱՔԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

ա. Հարաբերությունները Քառյակ միության պետությունների հետ: Երևանի և Սևանի միջև 12 հազար քառ. վերստ տարածքում պարփակված, ընդամենը 13 վերստ երկաթուղի ունեցող և արտաքին աշխարհից մեկուսացված Հայաստանի Հանրապետությունը՝ չուրջ մեկ միլիոն տեղաբնակ ու գաղթական բնակչությամբ, որի մայրաքաղաքից ընդամենը 7 կմ հեռավորության վրա էին գտնվում թուրքական թնդանոթները, չէր կարող կենսունակ լինել: Անհրաժեշտ էր վիճակը որոշ չափով շտկել՝ օգտագործելով անդրկովկասյան քաղաքականության հարցում Թուրքիայի և նրա դաշնակիցների, առաջին հերթին Թուրքիայի և Գերմանիայի միջև առկա տարաձայնությունները, որոնք դրսևորվել էին դեռևս Բաթումի բանակցությունների օրերին: Զցանկանալով Անդրկովկասում Թուրքիայի չափից ավելի ուժեղացումը և ձգտելով այստեղ հնարավորինս մեծացնել իր ազդեցությունը՝ Գերմանիան հանդես էր գալիս Բրեստ-Լիտովսկի պայմանները պահպանելու օգտին: Գերմանիայի կողմից Հայաստանի նկատմամբ ցուցաբերած որոշ բարյացակամ դիրքորոշումն ամրապնդելու նպատակով Բաթումի բանակցություններում Գերմանիայի ներկայացուցիչ Օ. Ֆոն Լոսովի հետ Գերմանիա մեկնեցին Հայոց ազգային խորհրդի ներկայացուցիչներ Հ. Օհանջանյանը և Ա. Զուրաբյանը: Մասամբ նրանց ջանքերի շնորհիվ էր, որ որոշվեց Հունիսի 25-ին Կ. Պոլսում հրավիրել Քառյակ միության պետությունների (Գերմանիա, Ավստրո-Հունգարիա, Թուրքիա, Բուլղարիա) խորհրդաժողով, որին հրավիրվեցին նաև Անդրկովկասի Հանրապետությունների ներկայացուցիչները: 1918 թ. Հունիսի կեսերին Կ. Պոլիս մեկնեց Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը՝ Ա. Ահարոնյանի գլխավորությամբ: Սակայն Քառյակ միության երկրների ռազմական անհաջողությունների պատճառով խորհրդաժողովն

անընդհատ հետաձգվում էր: Շուրջ 4 ամիս մնալով Գերմանիայում և Կ. Պոլսում՝ հայկական պատվիրակությունները հանդիպումներ ունեցան Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի և Թուրքիայի բարձրաստիճան գործիչների հետ: Հայաստանի նկատմամբ ավելի նպաստավոր վերաբերմունք ստեղծվեց: 1918 թ. ամռանը օրակարգում դրվեց Հայաստան ավստրիական զորքեր ուղարկելու հարցը, որը, սակայն, չիրագործվեց արևմտյան ճակատում Ավստրո-Հունգարիայի պարտության պատճառով: Ռազմաճակատներում կրած պարտություններին զուգընթաց՝ զգուշավոր ու զուսպ էր դառնում նաև Թուրքական կառավարությունը: Անգամ խոսակցություններ էին գնում թուրքական զորքերը մինչև 1914 թ. սահմանները հետ քաշելու մասին:

1918 թ. աշնանը Առաջին աշխարհամարտի ճակատներում տեղի ունեցան վճռական իրադարձություններ, որոնք արմատապես փոխեցին դեպքերի ընթացքը: Մեկը մյուսի հետևից պարտություն կրեցին և պատերազմից դուրս եկան Քառյակ միության երկրները: Հոկտեմբերի 30-ին Մուդրոսում կնքված զինադադարով իր պարտությունն ընդունեց նաև Օսմանյան կայսրությունը: Ձեղյալ հայտարարվեցին Բաթումի և Բրեստ-Լիտովսկի դաշնագրերը: Հայաստանի հետագա ճակատագիրը և նրա տարածքային հարցերի լուծումը այժմ արդեն կախված էին միանգամայն այլ քաղաքական ուժերից: Հայ ժողովրդի առջև բացվեցին նոր հեռանկարներ:

բ. Հայկական հարցը Փարիզի խաղաղության վեհաժողովում: Հայ ժողովուրդն իր անուրանալի ներդրումն ունեցավ Առաջին աշխարհամարտում Համաձայնության (Անտանտի) երկրների հաղթանակի գործում: Բնական էր, որ Մուդրոսի զինադադարից հետո հայությունը զինվեց լավատեսությամբ՝ հուսալով հասնել իր կորուստների հատուցմանը և ազգային իղձերի իրականացմանը:

Մուդրոսի զինադադարին հաջորդած ամիսներին միջազգային հանրության ուշադրությունը բևեռվել էր Փարիզի վրա: Հաղթող երկրների այստեղ հրավիրված Խաղաղության վեհաժողովին էր վերապահված հետպատերազմյան աշխարհի ճակատագիրը և քաղաքական քարտեզի վերաձևումը: Փլուզվում էին հարյուրամյակների պատմություն ունեցող կայսրություն-

ները, և առաջանում էին նոր, ազգային պետություններ: Կարծես հեռանկարներ էին բացվում նաև Հայկական հարցի արդարացի լուծման համար: Ստեղծված իրավիճակից ելնելով՝ անհրաժեշտ եղավ պատվիրակություն ուղարկել Փարիզ՝ Խաղաղության վեհաժողովին հայկական պահանջները ներկայացնելու համար:

1918 թ. դեկտեմբերին Հայաստանի խորհուրդը կազմեց պատվիրակություն Ա. Ահարոնյանի նախագահությամբ և Հ. Օհանջանյանի ու Մ. Պապաջանյանի մասնակցությամբ: 1919 թ. փետրվարի 4-ին այն ժամանեց Փարիզ: Այստեղ էր գտնվում նաև դեռևս 1912 թ. վերջին Պողոս Նուբար փաշայի գլխավորությամբ ստեղծված Ազգային պատվիրակությունը, որն արտահայտում էր արևմտահայերի և գաղութահայերի շահերը և զգալի աշխատանք էր տարել հայկական պահանջները միջազգային հանրությանը ներկայացնելու ուղղությամբ: Պողոս Նուբարը 1918 թ. նոյեմբերի 30-ին հռչակել էր անգամ ամբողջական Հայաստանի անկախությունը:

Երկու պատվիրակություններից հայության միասնական կամք արտահայտող միացյալ պատվիրակության ստեղծումը սկզբից ևեթ բացառվեց, քանի որ առանցքային մի շարք հարցերում լուրջ տարակարծություններ առաջացան նրանց միջև: Սկզբունքորեն կանգնած լինելով միացյալ Հայաստան ունենալու գաղափարի վրա՝ կողմերը, սակայն, միանման չէին պատկերացնում դրա կազմավորման ուղիներն ու միջոցները: Ազգային պատվիրակության համար Հայաստանի Հանրապետությունը սոսկ «Արարատյան Հանրապետություն» էր, մինչդեռ իսկական Հայաստանը Արևմտյան Հայաստանն էր, որի շահերի արտահայտիչը ինքն էր: Հայաստանի Հանրապետության գոյությունն անգամ վնասակար էր համարվում Հայ դատի համար: Գտնում էին, որ Հայաստանի ստեղծումից հետո «Արարատյան Հանրապետությունը» պետք է կցվեր նրան: Մինչդեռ Հանրապետության պատվիրակությունը ելնում էր առկա իրողություններից: Հայությունից զրկված Արևմտյան Հայաստանի համեմատ Հայաստանի Հանրապետությունն ուներ հայ բնակչություն, բանակ և աստիճանաբար կազմավորվող պետականություն: Ուստի հենց նա էր հայկական միացյալ պետության կորիզը, որի բարգավաճման համար պետք է կենտրոնացվեին բոլոր ջանքե-

ը: Հայկական հարցի լուծումն ընկալվում էր Հայաստանի երկու հատվածների միացմամբ:

Տարբեր էին մոտեցումները նաև ապագա Հայաստանի սահմանների հարցում: Արտահայտելով գաղութահայության մտայնությունը՝ դեռևս 1918 թ. վերջին արված հայտարարություններում Պողոս Նուբարի գլխավորած Ազգային պատվիրակությունը (Փարիզ) դրել էր Արևելյան Հայաստանը, Արևմտյան Հայաստանի 7 վիլայեթները և Կիլիկիան ընդգրկող Հայաստան ստեղծելու պահանջ: Մինչդեռ Հանրապետության պատվիրակությունը դնում էր ավելի չափավոր պահանջներ՝ միացյալ Հայաստանի սահմանների մեջ ներառելով Արևելյան Հայաստանը և Արևմտյան Հայաստանի 4 վիլայեթները՝ դեպի Սև ծով ելք ունենալու պայմանով: Ավելին, վարչապետ Հ. Քաջազնունին, որը տարածքային պահանջների մեջ ամենաչափավորն էր, անգամ դեպի ծով ելք ունենալը պարտադիր չէր համարում:

Բանակցությունների ընթացքում Հանրապետության պատվիրակությունը տարածքային պահանջների հարցում, ի վերջո, զիջեց և 1919 թ. փետրվարի 25-ին վեհաժողովին ներկայացվեցին հայկական միասնական պահանջներ՝ ա) ճանաչել հայկական պետությունը՝ Կովկասյան Հայաստանը, Արևմտյան Հայաստանի յոթ վիլայեթները և Կիլիկիայի չորս սանջակները, բ) Հայաստանը դնել դաշնակիցների հոգատարության ներքո և առնվազն քսան տարով պետություններից մեկին հանձնել նրա մանդատը: Հովանավորող երկիրը պետք է օգներ Հայաստանին և ստիպեր Թուրքերին ազատել հայկական հողերը:

Ըստ էության հայկական պահանջների մեջ արտառոց ոչինչ չկար, քանի որ դեռևս 1919 թ. հունվարի 30-ին ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնի նախաձեռնությամբ Փարիզի խաղաղության վեհաժողովը որոշում էր ընդունել Հայաստանը ազատագրելու և նրան հովանավոր (մանդատատեր) նշանակելու մասին: Նման պայմաններում Հայկական հարցի լուծումը սկզբունքորեն կասկածի ենթակա չէր: Խնդիրը սոսկ Հայաստանի սահմանների ճշտման և որևէ պետության կողմից նրա մանդատը ընդունելու մեջ էր: Այդ հարցերը կարող էին լուծվել միայն Թուրքիային պարտադրվելիք հաշտության պայմանագրի շրջանակներում: Մինչդեռ վեհաժողովն իր հիմնական ուշադրությունը բևեռել էր

Գերմանիայի հետ հաշտության խնդրի վրա, որի լուծումն ամիսներ էր պահանջում:

Հայկական պատվիրակություններին վիճակված էր վեհաժողովի շրջանակներում և դրանից դուրս հսկայական աշխատանք տանել Հայկական հարցի նկատմամբ հետաքրքրություն առաջացնելու և դրական վերաբերմունք ապահովելու համար: Անհրաժեշտ էր որևէ ազդեցիկ պետության կողմից Հայաստանի մանդատը ստանձնելու համաձայնությունը: Թեև հայկական շրջանակները սկզբունքորեն դեմ չէին Անգլիայի, Ֆրանսիայի կամ Իտալիայի թեկնածություններին, բայց առավել մեծ ջանքեր էին թափում շահագրգռելու ԱՄՆ-ին, որի նախագահ Վիլսոնը հայասերի համբավ էր վայելում: Վերջինիս առաջարկով 1919 թ. մարտի 20-ին վեհաժողովը որոշեց Մերձավոր Արևելք ուղարկել հանձնախումբ՝ Օսմանյան կայսրությունից անջատվելիք երկրամասերի վիճակը քննելու համար: Իրականում միայն ԱՄՆ-ի ներկայացուցիչներ Ջ. Քրեյնը և Հ. Քինգը եղան Կ. Պոլսում: Մեկ կես ամսվա աշխատանքից հետո նրանք հանդես եկան Օսմանյան կայսրության տարածքում ԱՄՆ-ի հոգատարության ներքո երեք պետություն՝ Հայաստան, Թուրքիա և Պոնտոս, ստեղծելու առաջարկով:

Հայաստանի մանդատի պայմանները քննելու նպատակով 1919 թ. ամռանը Առաջավոր Ասիա ուղարկվեց նոր հանձնախումբ՝ գեներալ Ջեյմս Հարբորդի գլխավորությամբ: Լինելով Կ. Պոլսում, Կիլիկիայում, Արևմտյան Հայաստանում՝ Հարբորդը 1919 թ. սեպտեմբերի 25-ին ժամանեց Երևան: Պատմական, ազգագրական, տնտեսական, քաղաքական, բնաշխարհագրական, մշակութային ու ռազմագիտական հարուստ նյութերի հիման վրա նա կազմեց տեղեկագիր: Ելնելով հաղորդակցության ճանապարհների բարդությունից և տնտեսական պայմաններից՝ Հարբորդը Հայաստանի մանդատի ստանձնումը իրականանալի էր համարում միայն ամբողջ Փոքր Ասիան և Անդրկովկասը մեկ մանդատատերի հանձնելու դեպքում: Մանդատն ընդունելով՝ առաջիկա հինգ տարվա ծախսերը պետք է կազմեին 757 մլն դոլար: Հայաստանի անվտանգությունն ապահովելու համար նախապես անհրաժեշտ էր համարվում 59 հազարանոց բանակի առկայությունը: Իր տեղեկագրում Հայաստանի մանդատն ըն-

դունելու օգտին Հարբորդը բերում էր 14 փաստարկ, դեմ՝ 13: Ուշագրավ է, որ իր ճանապարհին՝ Սեբաստիայում, Հարբորդը հանդիպել էր Թուրքական «Միլլի» շարժման առաջնորդ Մուստաֆա Քեմալին և ժամանելով Երևան՝ Հայաստանի ղեկավարությանն էր փոխանցել անմիջապես Թուրքերի հետ բանակցելու Քեմալի առաջարկը:

Հայաստանի մանդատի հնարավոր ընդունման հետ կապված՝ ԱՄՆ-ը 1920 թ. ապրիլի 24-ին փաստացի ճանաչեց նրա անկախությունը: Սակայն 1920 թ. հունիսի 1-ին, քննելով Հայաստանի մանդատի հարցը, ԱՄՆ-ի սենատը 52 ձայնով ընդդեմ 23-ի մերժեց այն:

5. ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՀԱՐՑԸ (1918-1920 ԹԹ.)

ա. Հայ-վրացական հակասությունները: Պետականության հռչակման պահից Հայաստանի Հանրապետությանը լուրջ փորձություններ էին սպասվում հարևանների հետ հարաբերություններում: Պարսկաստանը միակ հարևանն էր, որի հետ սահմանների հարցում տարաձայնություններ չկային: Ուստի ի սկզբանե նրա հետ հաստատվեցին բարիդրացիական և առևտրական հարաբերություններ, թեև Նախիջևանի Թուրք բնակչության ապստամբ կեցվածքի պատճառով բնականոն երկաթուղային կապ երկու երկրների միջև այդպես էլ չհաստատվեց:

Թուրքիայի, Ադրբեջանի և Նախիջևանի Թրքության կողմից Հայաստանի շրջափակման պայմաններում արտաքին աշխարհի, հատկապես Եվրոպայի ու Ռուսաստանի հետ կապ հաստատելու գործում Հայաստանի համար կենսական նշանակություն էր ստանում Վրաստանով անցնող ճանապարհը: Այս առումով Վրաստանի դեմոկրատական Հանրապետության հետ լավ հարաբերությունների հաստատումը անհրաժեշտություն էր: Սակայն անկախության առաջին ամիսներին երկու երկրների հարաբերությունները խիստ լարված էին: Առանցքային հակասությունը սահմանների խնդիրն էր: Առաջնորդվելով Վրաստանի համար «ռազմավարական սահմաններ» ստեղծելու անհրաժեշտությամբ՝ Վրաստանի ղեկավարները հավակնություններ էին ներկայացնում Ախալքալաքի և Լոռու գերազանցապես հայաբնակ գավառների նկատմամբ, որոնք համապատասխանաբար ունեին 80 հազար և 60 հազար հայ բնակչություն: Ըստ որում Մուդրոսի զինադադարից հետո վրացիներն իրենց դիրքորոշումը բացատրում էին նրանով, որ Թուրքիայի պարտությունից հետո Հայաստանը կստանա Արևմտյան Հայաստանի 6 վիլայեթները և տարածքի կարիք չի ունենա: Մինչդեռ սահմանագծման հարցում առաջնորդվելով ազգագրական սկզբունքով՝ Հայաստանի Հանրապետությունը նշված գավառները համարում էր իր տարածքի անբաժանելի մասը:

Երբ 1918 թ. հոկտեմբերին Թուրքերը թողեցին Լոռի-Փամբակի տարածքը, կառավարության հրահանգով հայկական ուժերը Դրոյի գլխավորությամբ անմիջապես զբաղեցրին այն: Դա մեծ խլրտում առաջ բերեց Թիֆլիսում: Իրենց հերթին, հակառակ Հայաստանի բողոքներին, վրացական զորքերը դեկտեմբերի 5-ին մտան Ախալքալաք՝ այն հայտարարելով Վրաստանի տարածք: Հնարավոր է, որ այլ պայմաններում կողմերը բանակցությունների սեղանի շուրջ նստեին և որոնեին ստեղծված վիճակից դուրս գալու խաղաղ ուղիներ, բայց նախորդ ամիսներին հայ-վրացական հարաբերություններում կուտակված լարվածությունը նրանց չէր թողել այդ հնարավորությունը:

Երկու երկրների միջև լարվածությունը հասել էր գագաթնակետին, որը պայմանավորված էր ոչ միայն տարածքային խնդիրներով, այլև տարբեր հանգամանքներով, այդ թվում առաջին հերթին՝ Թուրքական 1918 թ. արշավանքի և հատկապես Անդրկովկասյան Հանրապետության վերջին օրերի իրադարձություններով: Հայ քաղաքական շրջանները, ոչ առանց հիմքի, վրացական կողմին մեղադրում էին հայերի հաշվին սեփական շահերը պաշտպանելու, հայերի թիկունքում գործելու և հակառակորդի դեմ իրենց միայնակ թողնելու մեջ: Դրան գումարվում էին նաև հակասություններն անդրկովկասյան ընդհանուր գույքի բաժանման և մի քանի այլ հարցերում: Իրավիճակն ավելի բարդացավ այն բանի հետևանքով, որ թեև երկու կողմերն էլ բազմիցս հայտարարում էին վիճելի հարցերը խաղաղ ուղիներով լուծելու պատրաստակամության մասին, բայց

Վրաստանի ղեկավարությունը, ըստ էության, օգտագործում էր իր երկրի աշխարհագրական դիրքի առավելությունները և փորձում Հայաստանի հաղորդակցության ուղիների չրջափակման միջոցով նրան տարածքային զիջումներ պարտադրել: Ուժի դիրքից վարած նման քաղաքականությունը հատկապես բնորոշ էր 1918 թ. առաջին ամիսներին, երբ դեռ չէր ավարտվել Առաջին աշխարհամարտը, և Վրաստանը օգտվում էր գերմանական հովանավորությունից: Սովի և համաճարակի ճիրաններում գալարվող Հայաստանի համար, որը կտրված էր արտաքին աշխարհից, դա թիկունքից հասցված դաչույնի հարված էր: Նման պայմաններում երկու երկրների միջև վեճը, ի վերջո, վերածվեց ռազմական բախման, և 1918 թ. դեկտեմբերի 13-ին սկսվեց հայ-վրացական պատերազմը:

Գնալով Վրաստանի հետ բացահայտ ռազմական բախման՝ Հայաստանը լուծում էր իր համար կենսական երկու հարց. 1) Դեպի Բաթում ազատ ելքի բացում, որը սովահար ժողովրդի փրկության միակ ուղին էր, 2) Լոռու և Ախալքալաքի հայկական գավառների միավորում հայրենի երկրին:

Այս առումով ընդունելի չեն այն տեսակետները, որոնք հայ-վրացական պատերազմը փորձում են բացատրել հայկական բանակում ծառայող ռուս սպաների հակավրացական սադրանքներով կամ Դրոյի «ռազմատենչ խմբավորման» գործողություններով: Հայ-վրացական պատերազմը կարճատև էր: Հայկական բանակը Դրոյի հրամանատարությամբ դեկտեմբերի 15-ին սրընթաց գրոհով ազատագրեց Ալավերդին, 17-ին՝ Բոլնիս-Խաչենը, այնուհետև՝ Շուլավերը և Սադախլուն: Վրացական բանակը ծանր պարտություն կրեց, դեպի Թիֆլիս տանող ճանապարհը բաց էր: Սակայն Անգլիայի և Ֆրանսիայի միջնորդությամբ դեկտեմբերի 31-ին ռազմական գործողությունները դադարեցին, և կողմերի միջև կնքվեց զինադադար: Ստորագրված համաձայնությամբ Բորչալուի գավառի հյուսիսային մասը մնում էր Վրաստանին, հարավային մասը՝ մինչև Դսեղ-Ջալալօղլի գիծը՝ Հայաստանին: Դրանց միջև ընկած տարածքում ստեղծվում էր «Զեզոք գոտի»՝ անգլիական զորքերի հսկողությամբ և անգլիացի նահանգապետի ղեկավարությամբ: Վերջինս ուներ հայ և վրացի օգնականներ: Զնայած Հայաստանի բողոքներին՝

Ախալքալաքի վրա հաստատվում էր վրացական հսկողություն: Զեռքբերված համաձայնությունը ժամանակավոր էր: Հարցի վերջնական լուծումը թողնվում էր Համաձայնության (Անտանտ) պետություններին, երկու կողմն էլ իրենց ներկայացուցիչները պետք է ուղարկեին Եվրոպա:

Երկու երկրների փոխհարաբերությունների կարգավորման խնդիրներով զբաղվեց 1919 թ. հունվարի կեսին Թիֆլիսում բացված հայ-վրացական խորհրդաժողովը, որը տևեց մոտ 3 ամիս: Սահմանային հարցերում կողմերը դարձյալ համաձայնության չեկան, սակայն որոշում ընդունվեց փոխադարձ անկախության ճանաչման և դիվանագիտական հարաբերությունների վերականգնման մասին: Ստորագրվեց փոստ-հեռագրական համաձայնություն: Երկու երկրների միջև վերացվեց անցագրային ռեժիմը: Մարտին վերականգնվեց երկաթուղային հաղորդակցությունը և Հայաստանի համար Թիֆլիսի ու Բաթումի վրայով ճանապարհ բացվեց դեպի Եվրոպա ու Ռուսաստան: Դրանով հանդերձ՝ երկու երկրների միջև դեռևս կային չլուծված խնդիրներ: Հայ-վրացական նոր խորհրդաժողով բացվեց 1919 թ. սեպտեմբերին: Թեև սահմանային հարցում դարձյալ համաձայնություն չկայացվեց, այնուհանդերձ նոյեմբերի 3-ին ստորագրվեց երկու դաշնագիր: Կողմերը պարտավորվեցին գոյություն ունեցող կամ ապագայում ծագելիք վեճերը լուծել փոխադարձ համաձայնությամբ կամ իրավարարի վճռով: Նրանց միջև սահմանվեց առանց մաքսի ապրանքների փոխադրություն: Անգլիացիների հեռանալուց հետո որոշում էր ընդունվել Լոռու «Զեզոք գոտում» խաղաղ վարչություն պահելու մասին: 1920 թ. ամռանը կայացած նոր խորհրդաժողովում սահմանային հարցերի կողքին երկար բանակցությունների նյութ դարձավ Հպատակության հարցը, որը թելադրված էր վրացահայերի՝ Հայաստանի քաղաքացի դառնալու հարցում Վրաստանի ժխտական կեցվածքով: Բայց, այդ ամենով հանդերձ, ընդհանուր առմամբ երկու երկրների միջև հաստատվեցին տանելի հարաբերություններ և աստիճանաբար կարծես մոռացության էր տրվում դառն անցյալը:

բ. Զանգեզուրի հայերի հերոսամարտերն ադրբեջանական զավթիչների դեմ: Ադրբեջանի հետ հենց սկզբից Հայաստանի Հանրապետության հարաբերությունները եղան բարդ ու ոչ բարեկամական: Չնայած դրանք որոշվում էին աշխարհաքաղաքական, ազգային, կրոնական, սահմանային և այլ գործոններով՝ այնուհանդերձ առանցքայինը տարածքային հարցերն էին: Ադրբեջանը հավակնություններ ներկայացրեց գերազանցապես Հայաբնակ Ղարաբաղի, Զանգեզուրի, Ղազախի սահմանային գավառների, ինչպես նաև անվիճելիորեն Հայաստանին պատկանող Շարուրի, Նախիջևանի և մահմեդական բնակչություն ունեցող այլ տարածքների նկատմամբ: Իր հերթին Հայաստանի Հանրապետությունը չճանաչեց Ադրբեջանի այդ նկրտումները: Կողմ լինելով հարևանների հետ վիճելի հարցերը փոխհամաձայնությամբ և բանակցությունների միջոցով կարգավորելուն՝ Հայաստանը նման կարգավորման համար հիմք էր ընդունում ազգագրական սկզբունքը: Մինչդեռ Ադրբեջանը չեշտը դնում էր տնտեսական, աշխարհագրական և այլ գործոնների վրա: Հատկապես պայքարը սուր էր Զանգեզուրի և Ղարաբաղի համար: Այդ տարածքները ոչ միայն հայրենիքի մաս էին, այլև նրա կենսունակ գոյության երաշխիք: Երկու կողմն էլ հասկանում էին հիշյալ տարածքների իրական նշանակությունը, որը և անզիջում էր դարձնում պայքարը: Ղարաբաղում և Զանգեզուրում կատարվող իրադարձություններն անմիջականորեն ազդում էին երկու երկրների փոխհարաբերությունների վրա՝ ժամանակ առ ժամանակ սպառնալով վերածվել ուղղակի պատերազմի: Ըստ որում Ադրբեջանն օգտագործում էր տնտեսական, ռազմական ու դիվանագիտական ճնշման բոլոր լծակները: Հայաստանի համար փակ էին Ադրբեջանով անցնող բոլոր ճանապարհները: Ադրբեջանը հրաժարվում էր նավթ և հաց մատակարարել Հայաստանին՝ հուսալով նման ճնշմամբ զիջումներ կորզել Ղարաբաղի և Զանգեզուրի հարցում: Ադրբեջանի ռազմական ճնշումը դրսևորվում էր ոչ միայն սահմանային գավառներում ուժի բացահայտ ցուցադրմամբ և Ղարաբաղի ու Զանգեզուրի վրա պարբերական հարձակման փորձերով, այլև, ինչպես ասվեց, Հայաստանի մահմեդական բնակչության շրջանում քայքայիչ գործունեության ծավալմամբ և Թուրք-Թաթարական նորանոր

խռովությունների կազմակերպմամբ:

Զանգեզուրի հայ բնակչությանը վիճակված էր երկարատև արյունալի կռիվներ մղել իր ազատության համար:

Ելիզավետպոլի նահանգի Զանգեզուրի գավառում շերտ-ընդմեջ ապրող հայերը և Թուրքերը ունեին իրարից խիստ տարբեր քաղաքական ձգտումներ: 1917 թ. Փետրվարյան հեղափոխությունից հետո գավառը փաստորեն բաժանվել էր երկու մասի՝ հայկական և մուսուլմանական: Հայկական մասը ընդգրկում էր բուն Զանգեզուրի՝ Գորիսի, Սիսիանի, Կապանի և Արևիքի (Մեղրու) շրջանները, իսկ մուսուլմանական մասի մեջ էին մտնում Գորիս-Կապան-Մեղրի գծից արևելք ընկած Թուրք և քուրդ բնակչությամբ շրջանները: Հայկական մասի նկատմամբ մուսուլմանական մասն ուներ մի մեծ առավելություն. այստեղ բնակչությունը կրոնական տեսակետից միատարր էր՝ կազմված էթնիկ Թուրքերից ու քրդերից, իսկ հայկական մասում հայ բնակչության թիկունքում կային հայերի համար մեծ վտանգ ներկայացնող Թուրք և քուրդ հոծ բնակչությամբ տասնյակ գյուղեր, հատկապես Սիսիանի և Կապանի շրջաններում:

Բաժանված Զանգեզուրի երկու մասերում համապատասխանաբար ստեղծվեցին իշխանության տեղական մարմիններ, հայկական մասում՝ Զանգեզուրի ազգային խորհուրդը, որը փաստորեն տնօրինում էր գավառի ողջ գործերը: Առանց այն էլ մինչ այդ հայերի հետ մշտական հակասությունների մեջ գտնվող Թուրքերը 1918 թ. գարնանը, երբ օսմանյան զորքերը խուժել էին Անդրկովկասի սահմաններից ներս, հարձակումներ սկսեցին հայկական Զանգեզուրի վրա: Միաժամանակ գավառի Թուրք բնակչությունը, մուսավաթական ուժերի հետ համաձայնեցված, գործողություններ էր ձեռնարկում՝ հայերին հարվածելու Թիկունքից:

Հայրենի լեռնաշխարհի գլխին կախված ահեղ վտանգի ժամին ցայտուն դրսևորվեց հայ բնակչության գերազանց հատկություններից մեկը. մի կողմ դնել ներքին հակասությունները, կողք կողքի գալ, զորահավաքի ենթարկել բոլոր ուժերն ու հնարավորությունները և ամուր բռունցք դառնալ թշնամու դեմ:

Գավառի ինքնապաշտպանության կազմակերպման գործում մեծ աշխատանք էին տանում Զանգեզուրի ազգային խոր-

հուրդը, ՀՀԴ Սյունիքի կենտրոնական կոմիտեն, գործիչներ Արշակ Շիրինյանը, Միքայել (Միշա) Պարոնյանը, Զախար Տեր-Դավթյանը, Նիկոլայ Հովսեփյանը, Զախար Տեր-Ղազարյանը և ուրիշներ: Զանգեզուրի հայ պաշտպանների զինական ուժը մեծապես հզորացավ, երբ 1918 թ. հուլիսի վերջերին Անդրանիկն իր ավելի քան 3 հազարանոց «Հարվածող զորամասով» և Թուրքահայ ու նախիջևանահայ շուրջ 35 հազար գաղթականներով մտավ Զանգեզուր: Գաղթականությունը հիմնականում տեղավորվեց Սիսիանի շրջանում, իսկ զորամասի ստորաբաժանումները՝ զորավար Սմբատի, Սասունցի Մուշեղի, Հայկ Բոնապարտյանի, Բորտի, Կալմակովի և Վիչինի, Ջեբեջիի, Փիլոսի, Հասրաթի, Հարությունի և ուրիշ հայտնի զինվորական գործիչների հրամանատարությամբ տեղակայվեցին գավառի չորս շրջաններում: Անդրանիկի զորամասից քիչ առաջ Զանգեզուր էր մտել նաև 1918 թ. սկզբին արցախցի հայ զինվորականներից Թիֆլիսում կազմավորված Շուշիի գունդը՝ գնդապետ Միքայել Մելիք-Շահնազարյանի հրամանատարությամբ: Արցախ անցնելու մի քանի անհաջող փորձերից հետո գունդը մնացել էր Գորիս քաղաքում և դարձել գավառի ինքնապաշտպանության հուսալի ուժերից մեկը:

Դրսից գավառ մտած այդ երկու զորամասերը և տեղի զինյալները 1918 թ. արշավանք ձեռնարկեցին Սիսիանի Թուրքաբնակ ապստամբ գյուղերի դեմ, ուր տաճիկ և մուսավաթական հրահանգիչների միջոցով կազմավորվել էին զինված բանդաներ, որոնց առաջնորդները բացեիբաց հայտարարում էին, թե ոչ միայն Սիսիանի շրջանը, այլև ողջ գավառը թուրքական հող է, որը պետք է մտնի Ադրբեջանի կազմի մեջ: Հայկական ուժերը ջախջախիչ հարվածներ հասցրին մի շարք թուրքական գյուղերի, հատկապես Գորիս-Սիսիան խճուղին փակած Աղուդի և Վաղուդի, ինչպես նաև Նախիջևանի սահմանին հարող Արավուսի և Շխլյարի ձորերի Ջոմարթլու, Օրթաքյուզ, Արավուս գյուղերի մուսավաթական զինված խմբերին, որոնց մի մասը փախավ Նախիջևան, մյուս մասը՝ Որոտան գետի կիրճերով՝ Ադրբեջան: Սիսիանի Թուրք գյուղերը, գոնե խոսքով, ստիպված ընդունեցին Զանգեզուրի Ազգային խորհրդի իշխանությունը:

Սիսիանի շրջանի Թուրքական անհնազանդ գյուղերի դեմ

ձեռնարկված գործողությունները բարենպաստ իրադրություն ստեղծեցին շրջանի և ողջ Զանգեզուրի համար՝ թե՛ քաղաքական-ռազմական և թե՛ հաղորդակցական-տնտեսական տեսակետից:

Նույն ժամանակ թշնամու հարձակումներին հերոսաբար դիմակայում էին Կապանի և Մեղրիի հայ զինյալները, որոնց միացել էին Անդրանիկի զորամասի՝ Կապանում տեղակայված հետևակ ստորաբաժանումը Հայկ Բոնապարտյանի և ձիավորների հարյուրյակը՝ Ջեբեջիի հրամանատարությամբ:

Սեպտեմբերի վերջերից խիստ վտանգավոր կացություն ստեղծվեց բուն Զանգեզուրի (Գորիսի շրջանի) համար: Բաքուն գրավելուց և քաղաքի տասնյակ հազարավոր հայերին արյունալի հաշվեհարդարի ենթարկելուց հետո տաճկական զորքերը և մուսավաթական բանդաները ձեռնամուխ եղան Արցախի և Զանգեզուրի նվաճմանը և տեղի հայության բնաջնջմանը: Նրանք նպատակ ունեին այնուհետև անցնել արդեն գրավված Նախիջևանի գավառ, թիկունքից հարվածել Հայաստանի նորաստեղծ Հանրապետությանը, գավթել Երևանը և վերջ տալ Անդրկովկասի հայության գոյությանը:

Բայց դեպքերն այլ կերպ զարգացան: Հոկտեմբերին Արցախ ներխուժած օսմանյան զորամասը և մուսավաթական բանդաները հանդիպեցին արցախցիների հերոսական դիմադրությանը և ջախջախվեցին: Թշնամու՝ Զանգեզուր մտնելու ծրագիրը խափանվեց:

1918 թ. նոյեմբերին Քառյակ դաշինքի երկրների պարտությունից հետո Թուրքական զորքերը սկսեցին հեռանալ Անդրկովկասից և նրանց փոխարինելու եկան դաշնակիցների զորքերը: Ադրբեջանում հաստատվեցին անգլիացիները՝ իրենց պաշտպանության տակ առնելով մուսավաթական ռեժիմը: Պաշտոնական Լոնդոնը Արցախը և Զանգեզուրը համարեց Ադրբեջանի անբաժանելի տարածքներ: Բաքվի նավթն անգլիացիների համար ավելի կարևոր էր, քան «փոքր դաշնակից» հայ ժողովուրդը:

Արցախի և Զանգեզուրի հայությունը վճռականապես մերժեց անգլիացիների քաղաքականությունը և պատրաստվեց դիմադրության: Արցախցիների խնդրանքով Զանգեզուրում գտնվող Անդրանիկն իր զորամասով և գավառի զինվորական

ջոկատներով 1918 թ. նոյեմբերի 29-ին արշավանք ձեռնարկեց դեպի Շուշի: Զանգեզուրի և Արցախի միջև տարածքների թուրք և քուրդ զինված խմբերը, փակելով հայկական ուժերի ճանապարհը, ցույց տվեցին կատաղի դիմադրություն, բայց ի վերջո ջախջախվեցին և խուճապով ցրվեցին զանազան ուղղություններով: Ճանապարհը դեպի Շուշի մաքրված էր թշնամուց, բայց Ավդալարում (Լաչին) գտնվող Անդրանիկին ընդառաջ եկան անգլիացի և ֆրանսիացի երկու սպաներ, որոնք Ադրբեջանում անգլիական օկուպացիոն զորքերի հրամանատար գեներալ Թոմսոնից բերել էին առաջխաղացումն անհապաղ դադարեցնելու մասին հրաման՝ սպառնալով, թե հակառակ դեպքում Փարիզի Խաղաղության վեհաժողովում Արցախի և Զանգեզուրի պատկանելիության հարցը քննարկելիս հազիվ թե որոշում ընդունվի հայերի օգտին:

Անդրանիկը տեղի տվեց և դեկտեմբերի 4-ին հայկական զորքը Զաբուղի ձորից վերադարձավ Գորիս:

Ոգեշնչված անգլիացիների հովանավորությունից՝ Ադրբեջանը նոր թափով շարունակեց կռիվը Զանգեզուրը և Արցախը նվաճելու համար: 1919 թ. հունվարին Ադրբեջանի կառավարությունը Շուշիի, Զանգեզուրի, Ջիվանշիրի և Ջեբրայիլի գավառներից ստեղծեց գեներալ նահանգապետություն՝ մոլի մուսավաթական գործիչ Խոսրով բեկ Սուլթանովի ղեկավարությամբ՝ նպատակ ունենալով բռնի ուժով կոտրել հայերի դիմադրությունը և Արցախն ու Զանգեզուրը ենթարկել Ադրբեջանին: Հայաստանի կառավարությունը անօրինական համարելով Բաքվի այդ ձեռնարկը՝ իր հերթին, 1919 թ. մարտին շտաբս-կապիտան Արսեն Շահմազյանին նշանակեց Զանգեզուրի և Ղարաբաղի ընդհանուր պետական կոմիսար: Ա. Շահմազյանի՝ Գորիս ժամանելուց մի քանի օր անց, մարտի 25-ին, Անդրանիկն իր զորամասով Գորիսից մեկնեց Երևան՝ գաղթականությանը առժամանակ թողնելով Զանգեզուրում: Գաղթականության կարիքները հոգալու համար Անդրանիկը Գորիսի գավառի ազգային խորհրդի տրամադրության տակ դրեց իր զորամասի ունեցած գումարի ու դեղորայքի մեծ մասը:

Թուրքերը կարծում էին, թե Անդրանիկի հեռանալուց հետո Զանգեզուրն այլևս անկարող կլինի դիմանալ իրենց զանգվածային ճնշմանը: Բայց Զանգեզուրը մնաց ամուր և արթուն՝ պատրաստ թշնամուն դիմակայելու աջից ու ձախից՝ Նախիջևանի և Ադրբեջանի կողմերից եկող թշնամական բոլոր հարձակումներին: Թեև 1919 թ. գարնան և ամռան ամիսներին այդ բոլոր հարձակումները հետ էին մղվում նրանց համար մեծ կորուստներով, բայց Ադրբեջանի կառավարությունը կրած պարտություններից դասեր չէր առնում և պատրաստվում էր վճռական հարձակման: Բազմակողմանի նախապատրաստությունից հետո Ադրբեջանի կառավարությունը 1919 թ. նոյեմբերին Զանգեզուրի վրա նետեց իր բանակի ամենարնտիր զորամասերը: Կռիվը եղավ դաժան ու արյունալի: Զանգեզուրը այս անգամ էլ թշնամու առջև կանգնեց որպես անհաղթահարելի պատնեշ: Հայկական ուժերը՝ Արսեն Շահմազյանի հրամանատարությամբ, մեկը մյուսի հետևից կործանիչ հարվածներ հասցրին թշնամու զորքերին, որոնք խուճապահար փախան Ադրբեջանի խորքերը:

1919 թ. օգոստոսին Զանգեզուր է գալիս հայ ժողովրդի մեծ զավակ Գարեգին Նժդեհը, որը չուտով դառնում է լեռնաշխարհի հայության լեգենդար ղեկավարը: Նրա գլխավորությամբ հայկական վաշտերը ինքնապաշտպանական գործողություններից անցնում են նախահարձակ հաղթական կռիվների:

1919 թ. վերջերին Նժդեհի հրամանատարությամբ Կապարգողթի (Կապան - Արևիք - Գողթան) վաշտերը տեղահանում են Կապանի շրջանի Օխչի և Գեղի ձորերի թուրքական գյուղերը, որոնք մշտական սպառնալիք էին հայերի թիկունքում: 1920 թ. սկզբներին իրականացվում են Բարգուշատի, Հաքյառուի և Շուռնուխի շրջանների թուրքական գյուղերի նկատմամբ պատժիչ գործողություններ՝ ի պատասխան Զանգեզուրի վրա նրանց չդադարող հարձակումների: Մարտին Նժդեհի գլխավորած վաշտերը ձեռնարկում են անօրինակ մի սխրանք՝ Գողթանի արշավանքը: Բարձրանալով Կապանի և Նախիջևանի արանքում վեր խոյացող Կապուտջուղ հսկա լեռան ձյունապատ բարձունքները՝ Նժդեհն իր մարտիկներով հարձակվում ու ջախջախում է Գողթանը ռազմակալած մուսավաթական զինված բանդաներին, գրավում բազմաթիվ թուրք գյուղեր և հասնում Օրդուբադի նախադռանը: Ապրիլի սկզբին Նժդեհը ձեռնարկում

է մի նոր խոշոր գործողություն՝ իր վաշտերով մտնում է Զանգեզուրի և Արցախի միջև ընկած թուրք-քրդական բնակչություն ունեցող տարածքները, գրավում Շուշի տանող խճուղու երկու կողմերը ու կենդանի կապ ստեղծում հայկական երկու երկրամասերի միջև: Հայ խիզախ վաշտապետները և զինվորները գործում էին զանգվածային հերոսություններ: Նժդեհի շուրջն էին համախմբված նվիրյալ ու քաջարի զինակիցներ՝ Աշոտ Մելիք-Մուսյանը, Պողոս Տեր-Դավթյանը, Գերասիմ Աթաջանյանը, Գեղեոն Տեր-Մինասյանը, Սմբատ Մելիք-Ստեփանյանը, Զախար Տեր-Դավթյանը, Ռուբեն Նարինյանը և ուրիշներ, որոնք անսահման հավատում էին իրենց հրամանատարին, ով ապավինում էր միայն զենքին՝ գտնելով, որ հայ ժողովուրդը պետք է հավատա և հենվի սեփական ուժերին, գիտակցի, որ ինքը թեև փոքրաթիվ, բայց հզոր է մտավոր, ֆիզիկական, ռազմագիտական ունակություններով:

Զանգեզուրցիների փայլուն հաղթանակները հնարավորություն ստեղծեցին օգնության գնալ Արցախին: Հայաստանի կառավարությունը Արցախ ուղարկեց մի զորամաս՝ Դրոյի հրամանատարությամբ: Կապարգողթի ուժերի գլուխն անցած՝ այնտեղ գնաց նաև Նժդեհը: Սակայն 1920 թ. ապրիլին բոլշևիկյան Ռուսաստանի զորքերը մտան Անդրկովկաս, և Ադրբեջանն առաջինը դարձավ խորհրդային: Ն. Նարիմանովի ղեկավարությամբ ստեղծված ադրբեջանական խորհրդային կառավարությունը հայ ժողովրդի նկատմամբ շարունակեց մուսավաթականների քաղաքականությունը և լիակատար աջակցություն ստանալով ռուսական բոլշևիկյան կառավարությունից՝ ձեռնարկեց զենքի ուժով Արցախի և Զանգեզուրի նվաճումը:

1920 թ. մայիսի վերջին Արցախ մտած խորհրդային զինուժի ճնշման տակ Դրոն ու Նժդեհը իրենց զորամասերը այնտեղից հետ քաշեցին:

1920 թ. հուլիսի 4-ին 11-րդ կարմիր բանակի զորամասերը մտան Զանգեզուրի սահմաններից ներս և հաջորդ օրը գրավեցին գավառի կենտրոն Գորիսը: Լեռնավայրում ազդարարվեցին խորհրդային կարգեր: Կարմիր բանակի առջև խնդիր էր դրված գավառը նվաճելուց հետո չարժվել Նախիջևան և այնտեղից ուղիղ կապ հաստատել իրենց խորհրդային իշխանության բարե-

կամ հայտարարած Թուրքիայի քեմալական ուժերի հետ: Առաջին իսկ օրից Զանգեզուր մտած բոլշևիկյան ուժերը դաժան բռնարարքների դիմեցին գավառի հայրենասիրական ուժերի դեմ՝ հաստատելով մղձավանջային ռեժիմ: Դա ավելի բորբոքեց տեղացիների ատելությունն ադրբեջանական զավթիչների և նրանց աջակից կարմիր զորքերի նկատմամբ: Զանգեզուրը չհանձնվեց ու Նժդեհի գլխավորությամբ արյունալի կռիվներ սկսեց Թուրք-բոլշևիկյան միացյալ ուժերի դեմ: Սիսիանում և հատկապես Կապարգողթում ծայր առած թեժ կռիվներում ռուս-ադրբեջանական զորքերը ծանր պարտություն կրեցին և օգոստոսին նահանջեցին: Բայց շատ չանցած՝ 11-րդ կարմիր բանակն անցավ վճռական հարձակման և արյունալի կռիվներով մինչև 1920 թ. սեպտեմբերի կեսերը կարողացավ գրավել Զանգեզուրի երեք կարևոր շրջանները՝ բուն Զանգեզուրը (Գորիսի շրջան), Սիսիանը և Կապանը: Բայց նույնիսկ այս պայմաններում գավառի ինքնապաշտպանական ուժերը չհանձնվեցին, այլ կենտրոնանալով Զանգեզուրի վերջին ազատ տարածքի՝ Գենվազի (Մեղրու շրջան) վրա՝ շարունակեցին գերմարդկային մաքառումը: Որքան էլ կարմիր բանակի զորամասերը և ադրբեջանական զինուժը ջանքեր գործադրեցին գրավելու Գենվազը, բայց այն մնաց անառիկ: Զանգեզուրյան մարտիկների խիզախությունն ու անձնազոհությունը զարմանք էր պատճառել բազմաքանակ հակառակորդին, որի ուժերը գնալով նոսրանում էին: Հայերի՝ մեկը մյուսին հաջորդած և մեկը մյուսից հաջող գրոհների ճնշման տակ կարմիր բանակի ստորաբաժանումների մի մասը ստիպված հետ քաշվեց Նախիջևան, իսկ մնացած մասը բռնեց դեպի Կապան անկարգ նահանջի ճանապարհը:

Մինչ հակառակորդը նահանջում էր, Նժդեհի՝ Կապանի ընդհատակում գտնվող ուժերը հոկտեմբերի 9-ին ապստամբություն բարձրացրին և մեկ շաբաթում շրջանը ազատագրեցին կարմիր զորքերից: Կապանցիների օրինակով ապստամբեցին նաև Սիսիանի ընդհատակյա ուժերը և մինչև հոկտեմբերի 14-ը իրենց ձեռքը վերցրին ամբողջ շրջանը: Հերթը հասավ Գորիսի շրջանին, ուր կատաղի կռիվներ տեղի ունեցան զանգեզուրյան վաշտերի և կարմիր բանակի զորամիավորումների միջև: Վերջիններիս հետ կռվի դաշտ էր դուրս եկել նաև տաճկական մի գունդ:

Արյունահեղ մարտերում զանգեզուրյան վաչտերը փայլուն հաղթանակով վերագրավեցին Գորիսի շրջանը: Նոյեմբերի 21-ին ամբողջ Զանգեզուրը ազատագրված էր: Գավառում վերականգնվեց ազգային իշխանությունը:

Ստեղծված հարաբերական դադարի պայմաններում Զանգեզուրում ձեռնարկվեցին լուրջ միջոցառումներ գավառի ներքին կյանքի կանոնավորման և պաշտպանության ամրապնդման ուղղությամբ: 1920 թ. դեկտեմբերի 25-ին Տաթևի վանքում իր աշխատանքները սկսած Համազանգեզուրյան առաջին համագումարը գավառը հռչակեց Ինքնավար Սյունիք և որոշեց նրա կառավարման ձևը: Պատգամավորները դատապարտեցին Հայաստանում կատարված բոլշևիկյան հեղաշրջումը և գավառի հայ բնակչությանը կոչ արեցին կազմ ու պատրաստ դիմակայել սպասվելիք վտանգներին: Համագումարը զանգեզուրցիների ազատ և ինքնիշխան ապրելու բուռն ձգտման և զարմանալի համառության ցայտուն դրսևորումներից մեկն էր:

գ. Ադրբեջանի թշնամական գործողությունները Լեռնային Ղարաբաղի դեմ: 1813 թ. Գյուլիստանի պայմանագրով Ղարաբաղը (Արցախը) միացվեց Ռուսաստանին: Ցարական Ռուսաստանի XIX դարի վարչական ռեֆորմների հետևանքով երկրամասը մտցվեց Ելիզավետպոլի նահանգի կազմի մեջ և այդ վիճակը պահպանվեց մինչև 1917 թ. ռուսաստանյան երկու հեղափոխությունները:

Ղարաբաղը երբեք չի եղել Ադրբեջանի մաս, քանզի մինչև 1918 թ. Անդրկովկասի տարածքում այդպիսի պետություն գոյություն չի ունեցել:

1918 թ. Անդրկովկասի երեք հանրապետությունների ստեղծումից և հունիսի 4-ի Բաթումի պայմանագրից հետո Ադրբեջանի մուսավաթական կառավարությունը հավակնություններ ներկայացրեց պատմական Հայաստանի մի շարք տարածքների, այդ թվում և Ղարաբաղի նկատմամբ: Քաղաքական այդ բարդ պայմաններում Հայաստանի Հանրապետության կառավարությունը ի վիճակի չեղավ պաշտպանության տակ վերցնել բոլոր հայկական գավառները, ուստի գործի կազմակերպումը ստանձնեցին տեղերում գործող հայ քաղաքական ուժերը: Ղարաբաղում գործող քաղաքական կազմակերպությունների նախաձեռ-

նությամբ 1918 թ. հուլիսի 22-26-ը Շուշիում անցկացվեց երկրամասի հայության առաջին համագումարը, որի աշխատանքներին յուրաքանչյուր գյուղից մասնակցում էր մեկական պատգամավոր: Համագումարում քննարկվեցին Ադրբեջանին դիմակայելու, տեղական իշխանության մարմիններ ընտրելու և երկրամասի ճակատագրի հետ կապված մի շարք այլ հարցեր:

Համագումարը Լեռնային Ղարաբաղը հայտարարեց անկախ վարչաքաղաքական միավոր, ընտրեց երկրամասի Հայոց ազգային խորհուրդ և յոթ հոգուց բաղկացած ժողովրդական կառավարություն:

1918 թ. սեպտեմբերի 15-ին թուրքական զորքերը գրավեցին Բաքուն: Դա ավելի ոգևորեց Ադրբեջանի մուսավաթական կառավարությանը, որը փորձեց սեփական նվաճողական ծրագրերը իրականացնել թուրքերի միջոցով: Դեռևս 1918 թ. օգոստոսի 18-ին թուրքական զորքերի հրամանատար Նուրի փաշան արցախցիներից պահանջել էր ճանաչել Ադրբեջանի իշխանությունը: Դրանից հետո նա հայերից և թուրքերից կազմված պատվիրակություն է ուղարկում Շուշի, որպեսզի բնակչությանը նախապատրաստեն առանց դիմադրության ընդունելու թուրքական հրամանատարության և Ադրբեջանի կառավարության կարգադրությունները: Նուրի փաշայի վերջնագիրն անակնկալի չբերեց Լեռնային Ղարաբաղի հայությանը: Թշնամուն դիմակայելու համար այդ օրերին երկրամասում կազմակերպվեցին զորակայաններ և նշանակվեցին զորահրամանատարներ: Վարանդայի զորահրամանատարն էր Սոկրատ բեկ Մելիք-Շահնազարյանը, Դիզակինը՝ Արտեմ Լալայանը, Խաչենինը՝ Ալեքսան Դային, Ջրաբերդինը՝ Բագրատ Նազարյանը: Ինքնապաշտպանությանը մասնակցողների թվաքանակը կազմում էր շուրջ 3 հազար մարդ, բայց հնարավոր էր այն հասցնել մինչև 10 հազարի: Սույն խնդիրը լուծելու համար պակասում էին միջոցներ, հատկապես՝ զինամթերք:

Թուրքական վերջնագրին պատասխան տալու համար 1918 թ. սեպտեմբերի 17-ին գումարվեց երկրամասի հայության երրորդ համագումարը: Եռօրյա քննարկումներից հետո որոշվեց մերժել զինաթափման և Ադրբեջանի իշխանություններին ենթարկվելու պահանջը, նրանց զորքերի մուտքը Լեռնային Ղա-

բաբաղի տարածք: Բայց թուրքական ուժերն ուղղություն վերցրին դեպի Շուշի: Թշնամու զորքերի հետևից թալանի նպատակով դեպի երկրամաս շարժվեցին ադրբեջանական հրոսակախմբեր, որի հետևանքով ավերվեցին և թալանվեցին Ասկերանի բազմաթիվ բնակավայրեր: Արցախի ինքնապաշտպանության ուժերն ստիպված դիմեցին զենքի: Թուրք-մուսավաթական հրոսակներին վիճակված էր ամեն մի բնակատեղի գրավել մարտերով: Միայն սեպտեմբերի 24-ին թուրքական առաջատար զորամասերին հաջողվեց մտնել Շուշի: Թուրքական հրամանատարությունը ցրեց Ղարաբաղի ժողովրդական կառավարությունը, ձերբակալեց ավելի քան 60 մտավորականի, որոնց թվում էր երկրամասի Հայոց ազգային խորհրդի նախագահ Եղիշե Իշխանյանը:

Թեև Շուշին ընկավ թշնամու ձեռքը, բայց երկրամասի ինքնապաշտպանության ուժերը շարունակեցին պայքարը: Արցախահայության պայքարի հերոսական էջերից է Վարանդայի հայության հերոսամարտը Ասլանիկի (Ասլան Մուրադխանյան) գլխավորությամբ:

Գրավված տարածքներում թուրքական տիրապետությունը երկար չտևեց: Ինչպես արդեն նշվել է վերը՝ Առաջին աշխարհամարտում պարտություն կրած Թուրքիան իր զորքերը հետ քաշեց մինչև 1914 թ. ռուս-թուրքական սահմանը: Անդրկովկասից դուրս բերվեցին նաև գերմանական զորքերը, որոնց փոխարինեցին Անտանտի պետությունների զորամասերը: Անգլիական զինվորական հրամանատարությունը սերտ հարաբերություններ հաստատեց Ադրբեջանի կառավարության հետ: Մեծապես շահագրգռված լինելով Բաքվի նավթով՝ անգլիացիներն ամեն կերպ սիրաշահում էին մուսավաթականներին:

Ստեղծված ծանր վիճակը արցախահայությանը ստիպեց օգնություն խնդրել Հայաստանի Հանրապետության կառավարությունից: 1919 թ. հունվարի 26-ին Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարը բողոք-հեռագիր հղեց Ադրբեջանի կառավարությանը՝ հայտարարելով, որ Լեռնային Ղարաբաղը Հայաստանի անբաժան մասն է: Բայց բրիտանական հրամանատարությունը մուսավաթական կառավարության հետ համատեղ ահաբեկման ու ճնշումների միջոցով արցախահայությանը ստիպում էր ճանաչել Ադրբեջանի իշխանությունը:

Արցախահայության հաջորդ՝ հինգերորդ համագումարից նորից մերժում ստանալով՝ Սուլթանովը որոշեց Լեռնային Ղարաբաղի խնդիրը լուծել զենքի միջոցով: Մուսավաթական Ադրբեջանի գրեթե ամբողջ բանակը՝ շուրջ 10 հազար զինվոր, կենտրոնացավ երկրամասի սահմաններին: 1919 թ. հունիսի 12-ին բրիտանական զորքերը դուրս բերվեցին Ղարաբաղի տարածքից՝ ադրբեջանական զորքերին ընձեռելով ազատ գործելու հնարավորություն: Այդ օրհասական օրերին գումարվեցին արցախահայության վեցերորդ և յոթերորդ համագումարները:

1919 թ. օգոստոսին Շոշ գյուղում կայացած յոթերորդ համագումարը ընթացավ մտքերի սուր բախման մթնոլորտում: Ժամանակ շահելու և եղած ուժերը կենտրոնացնելու նպատակով նույն ամսի 22-ին համագումարը (մինչև Լեռնային Ղարաբաղի հարցի վերջնական լուծումը Փարիզի խաղաղության վեհաժողովում) ժամանակավորապես ճանաչեց Ադրբեջանի իշխանությունը:

Մի քանի ամիս անց Սուլթանովը հաջորդ Ազգային խորհրդից պահանջեց անմիջապես լուծել երկրամասը Ադրբեջանին վերջնական միավորելու հարցը, սակայն ութերորդ համագումարը կտրականապես մերժեց այդ պահանջը:

1920 թ. մարտի 22-ին Լեռնային Ղարաբաղում սկսվեցին կռիվներ: Մուսավաթականներն արցախահայության դեմ կենտրոնացրել էին զգալի ուժեր: Հրդեհվեց Շուշիի հայկական թաղամասը (7 հազար տուն), կոտորվեց քաղաքի հայ բնակչության մեծամասնությունը: Ամենաթեժ մարտեր տեղի ունեցան Ասկերանի ճակատում, որտեղ նահատակվեց շրջանի ինքնապաշտպանական ուժերի հրամանատար Դալի Ղազարը: Հայկական ջոկատները կենաց ու մահու կռիվներ էին մղում բազմաթիվ մարտերում կռիվված հրամանատարների ղեկավարությամբ (Զ. Մեսյան, Հով. Ստեփանյան, Ալեքսան Դայի, Սասունցի Մանուկ և ուրիշներ):

Հայաստանի կառավարությունը որոշեց օգնություն ուղարկել Արցախին: 1920 թ. ապրիլի 17-ին Ղարաբաղ մտան Դրոյի, ապա Գ. Նժդեհի հրամանատարության տակ գտնվող զորքերը: Տեղի հայկական ուժերի հետ միասին նրանք պարտության

մատնեցին Թշնամուն և ստիպեցին նահանջել:

1920 թ. ապրիլի 25-ին Վարանդայի Թաղավարդ գյուղում տեղի ունեցած արցախահայության իններորդ համագումարը որոշեց չեղյալ հայտարարել յոթերորդ համագումարի կողմից ընդունված Ադրբեջանի կառավարության հետ ժամանակավոր համաձայնագիրը և երկրամասը հռչակեց Հայաստանի Հանրապետության անբաժան մաս:

Երեք օր անց Ադրբեջանը խորհրդայնացվեց: Թվում էր, թե նոր իշխանությունը վերջ կդնի Լեռնային Ղարաբաղի նկատմամբ մուսավաթական Ադրբեջանի նվաճողական քաղաքականությանը, սակայն հաջորդ իսկ օրն այդ Հանրապետության նոր ղեկավարությունը պահանջներ ներկայացրեց Ղարաբաղի և Զանգեզուրի վերաբերյալ:

Մայիսի 1-ին նման պահանջով Հայաստանի կառավարությանը վերջնագիր ներկայացրեց Ադրբեջանը խորհրդայնացրած 11-րդ կարմիր բանակի հրամանատարությունը: Խորհրդային Ռուսաստանի ղեկավարությունը համաշխարհային հեղափոխության սլաքը ուղղել էր Արևելք և տվյալ պահին Հայաստանը, որը սեպի պես խրված լինելով, այդպես կոչված, «Հեղափոխական Արևելքի» մարմնի մեջ, խոչընդոտ էր «Հեղափոխական ուժերի» միավորման ճանապարհին:

1920 թ. մայիսի սկզբներին 11-րդ կարմիր բանակի զորամասերը շարժվեցին Արցախ: Կարմիր բանակի պատվիրակությունը Սահակ Տեր-Գաբրիելյանի գլխավորությամբ հանդիպում ունեցավ Դրոյի հետ և պահանջեց հայկական զորամասերը դուրս բերել երկրամասից: Բախումը խորհրդային Ռուսաստանի զորքերի հետ կարող էր հանգեցնել պատերազմի, ուստի մայիսի 25-ին Դրոն ստիպված եղավ իր զորքերը դուրս բերել Ղարաբաղից: Մեկ օր անց Թաղավարդում գումարված արցախահայության տասներորդ համագումարը երկրամասը հայտարարեց խորհրդային, կազմեց հեղկոմ՝ Սաքո Համբարձումյանի նախագահությամբ: Միաժամանակ կազմվեց Դաշտային Ղարաբաղի հեղկոմ՝ Բ. Վելիբեկովի նախագահությամբ: Դաշտային Ղարաբաղի մաս հայտարարվեցին Լեռնային Ղարաբաղի որոշ շրջաններ: Հունիսի 16-ին երկու հեղկոմները միավորվեցին և միացյալ

հեղկոմի նախագահ նշանակվեց Վելիբեկովը, իսկ նստավայր ընտրվեց Շուշին:

Այդպես ողջ հայկական Արցախն անցավ խորհրդայնացված Ադրբեջանի ձեռքը:

դ. Հայկական Նախիջևանի օրհասական մաքառումը: 1828 թ. Թուրքմենչայի հաշտության պայմանագրով Արևելյան Հայաստանի մի շարք շրջանների հետ Ռուսաստանին միացվեցին Նախիջևանը և Շարուրը, որոնք Հայկական մարզի, ապա Երևանի նահանգի անբաժան մասերն էին: Տարածաշրջանի վարչական այդ կացությունը պահպանվեց մինչև 1918 թվականը: Նույն թվականի գարնանը թուրքական զորքերի արշավանքը Անդրկովկաս և հունիսի 4-ի Բաթումի պայմանագիրը Հայաստանի Հանրապետությանը դրեցին չատ ծանր կացության մեջ: Թուրքերի հսկողության տակ անցան ընդարձակ հայկական տարածքներ, այդ թվում նաև Նախիջևանն ու Շարուրը: Նրանց հանձնվեց Ալեքսանդրապոլ-Ջուլֆա երկաթուղին: Ստեղծված իրավիճակից անմիջապես օգտվեցին թե՛ տեղացի մահմեդականները, թե՛ տարածքը ռազմակալած թուրքական զորքերը, որոնք սկսեցին հարձակումներ գործել հայ ազգաբնակչության վրա: Թուրք-թաթարական հրոսակների հիմնական նպատակը հայերի բնաջնջումն ու վտարումն էր տարածաշրջանից:

Նախիջևանի գավառում թուրք-թաթարական նվաճողական ծրագրերի դեմ պայքարի փորձեր ձեռնարկեց զորավար Անդրանիկը: Նա ցանկանում էր իր զորաջոկատով Նախիջևանի վրայով անցնել Պարսկաստան և միավորվելով անգլիական զորքերի հետ՝ շարունակել պայքարը, ազատագրել Վան-Վասպուրականը և այնտեղ տեղավորել իր հետ գնացող գաղթականության հոծ զանգվածները: Խոյի մոտակայքում թուրքական մեծաքանակ ուժերի ճնշման տակ Անդրանիկը նահանջում է և, անցնելով Արաքսը, բանակ է դնում Նախիջևանի գավառում:

1918 թ. հուլիսի 14-ին Կովկասի գործերի արտակարգ կոմիսար Ստ. Շահումյանին հղած հեռագրում Անդրանիկը շեշտում էր. «Անառարկելիորեն ենթարկվելով Բրեստ-Լիտովսկի պայմանագրին, Նախիջևանի գավառը, որտեղ այժմ գտնվում եմ իմ ջոկատով, հայտարարել եմ ռուսական Հանրապետության անբաժան մաս...»: Նա նաև քայլեր է ձեռնարկում գավառի պաշտ-

պանության համար: Տեղի հայկական իշխանությունները խոստացել էին զորահավաքի ենթարկել 4000 հոգու և նրանց դնել Զորավարի տրամադրության տակ: Այդ ուժը Անդրանիկի հարվածող զորամասի հետ պետք է կռվի մեջ մտներ առաջացող թշնամու դեմ: Մրագրված կարևորագույն միջոցառումներից էր մահմեդաբնակ բնակավայրերի զինաթափումը: Բայց նշված ծրագրերը չհաջողվեց իրականացնել թուրքական զորքի տարածաշրջան մտնելու հետևանքով: Սկսվեցին ծանր ու արյունալի կռիվներ: Թուրքական զորքերը, որոնց միացել էին տեղի ավազակախմբերը, գերազանցում էին հայերին թե՛ թվաքանակով և թե՛ զինվածությամբ: Համառ պաշտպանական կռիվներից հետո հազարավոր հայ գաղթականների նահանջն ապահովելով՝ Անդրանիկն իր զորամասերով անցավ Զանգեզուր:

Հաջորդ մի քանի ամիսների ընթացքում Գողթանի, Նախիջևանի, Շարուրի շրջանների հայությունը կենաց ու մահու կռիվներ էր մղում մահմեդական ավազակախմբերի ու թուրք ասկյարների դեմ:

1918 թ. Մուդրոսի զինադադարից հետո, երբ թուրքական զորքերը պարտադրված լքեցին Անդրկովկասի և մասնավորապես Հայաստանի գրավյալ տարածքները, գաղթական դարձած Նախիջևանի և Շարուրի հայ ազգաբնակչությունը նույնպես սկսեց վերադառնալ իր նախկին բնակավայրերը: Դա կատարվում էր այնքան հապճեպ ու արագ, որ հաճախ գաղթականներն առաջ էին անցնում հայկական զորքերից: Սկսվեցին նոր բախումներ, քանզի թուրք ազգաբնակչությունը, որն արդեն տիրացել էր հայերի հողերին և ունեցվածքին, ամեն կերպ ջանում էր խոչընդոտել նրանց վերադարձը:

Նոյեմբերին դեպի Շարուր շարժվեցին առանձին հայկական զորամասեր՝ ցանկանալով բացել Շարուր-Նախիջևան-Ջուլֆա երկաթգիծը: Հայկական զորքերի առաջխաղացումն այնպիսի սարսափ առաջացրեց տեղի մահմեդականների շրջանում, որ նրանց մի մասը չտապ անցավ Արաքսը և բռնեց Մակուի ու Թավրիզի ճանապարհը:

Պարսկաստան անցածները և Նախիջևանի խաները Թավրիզից օգնություն խնդրեցին: Պարսիկ պաշտոնյաներից կազմվեց պատվիրակություն, որը դեկտեմբերի սկզբներին հասավ

Նախիջևան, բայց հայկական զորքերի չհանդիպեց: Հայկական զորքերի մի մասը հայ-վրացական պատերազմի պատճառով դուրս էր բերվել Շարուրից: Պարսից պատվիրակությունը ժամանեց Երևան, սակայն Հայաստանի կառավարությունը զբաղված լինելով պատերազմով, սահմանափակվեց հայտարարությամբ, որ թեև Նախիջևանը Հայաստանի Հանրապետության անբաժան մասն է կազմում, բայցևայնպես բանակցություններ վարելու չուրջ պարսից կառավարության խնդրանքը կդրվի Նախարարների խորհրդի քննարկմանը: Մինչ Նախիջևանի հարցի չուրջ պաշտոնական բանակցությունները, պարսկական կողմը առաջարկում էր հայկական զորքեր չմտցնել երկրամաս: Ինչպես պարզվեց քիչ ավելի ուշ, Պարսկաստանի կառավարությունը ցանկանում էր օգտագործել Փարիզի վեհաժողովի տարբեր ատյանները Սեֆյան պետության սահմանները վերականգնելու համար: Այդտեղից էլ բխում էր նրա չահագրգռվածությունը նախկին Նախիջևանի խանության տարածքների նկատմամբ: Անհաջողություն կրելով Փարիզում՝ պարսիկները հարկադրված եղան այլևս հանդես չգալ ընդարձակ պահանջներով:

Անգլիացիների ներկայությունը Նախիջևանի երկրամասում չէր կաշկանդում մահմեդական ջարդարարներին, որոնք հարձակումներ էին կատարում հայկական բնակավայրերի վրա: Շատ հաճախ անգլիացի պաշտոնյաները խոչընդոտներ էին ստեղծում Հայաստանի Հանրապետության տեղական իշխանությունների և հայ զինվորականության համար: Հայաստանի կառավարությանը պարտադրվեց զորքերը հետ քաշել Գայլեդրունքից մինչև Ղամարլու (Արտաշատ): Այդպիսով ստեղծվեց ընդարձակ ապառազմականացված գոտի, որն ընդգրկում էր Վեդիբասարի և Դավալուի շրջանները: Նահանգապետ գնդապետ Լաութոնի զինված ուժը խիստ սահմանափակ էր, և նրա իշխանությունը կրում էր ձևական բնույթ: Տեղի բեկերը, աղալարները և առանձին ավազակապետներ, օգտվելով փաստական անիշխանությունից, նոր հարձակումներ էին կատարում հայկական բնակավայրերի վրա, դիմում ամեն տեսակի բռնություններ: Գնալով անգլիական իշխանությունը հեղինակազրկվում էր: Երկրամասի կառավարման անկարողությունը, ինչպես նաև Անդրկովկասից բրիտանական զորքերը դուրս բերելու վերա-

բերյալ Փարիզի վեհաժողովում ընդունված որոշումը ստիպեցին անգլիական զինվորական հրամանատարությանը վերանայել Շարուր-Նախիջևանի կառավարման նախկին քաղաքականությունը և երկրամասը հանձնել Հայաստանի Հանրապետությանը: Հայկական կառավարության կողմից Նախիջևանի նահանգապետ նշանակվեց Գ. Վարչամյանը: 1919 թ. մայիսի 29-ին նա զեկուցագիր ներկայացրեց ներքին գործերի նախարարին հայ փախստականներին երկրամաս վերադարձնելու միջոցառումների մասին: Իրականում անգլիական հրամանատարությունը խոչընդոտում էր անհրաժեշտ քանակի հայկական զորքեր մտցնելու երկրամաս:

Հայաստանում օրենք էր ընդունվել քաղաքացիական ազգաբնակչության զինաթափման մասին: Խախտելով այդ օրենքը՝ անգլիացիներն արգելել էին զինաթափել մահմեդական բնակչությանը, ուստի վերջիններիս զինված կազմավորումները շարունակում էին գործել և՛ ծպտյալ, և՛ բացահայտ:

1919 թ. հուլիսին Հայաստանի իշխանության դեմ Շարուր-Նախիջևանում բռնկված ապստամբությունն ազդանշան հանդիսացավ Հանրապետության մյուս տարածքներում բնակվող մահմեդականների համար: Տարբեր կողմերից օղակված լինելով մահմեդական ուժերով՝ Հայաստանի Հանրապետությունը ստիպված էր ողջ օգոստոս ամսին դիմակայել դրանց միացյալ հարձակմանը:

Հանրապետությանը սպառնացող վտանգը հարկադրեց վարչապետ Ալ. Խատիսյանին օգնության խնդրանքով դիմել Փարիզի վեհաժողովին: Վերջինիս կողմից Հայաստանի գերագույն կոմիսար նշանակված ամերիկյան գնդապետ Ու. Հասկելը թեև խոսքով ճանաչեց Շարուրի և Նախիջևանի պատկանելիությունը Հայաստանի Հանրապետությանը, բայց Բաքու այցելելով՝ օգոստոսի 29-ին Ադրբեջանի վարչապետի հետ ստորագրեց մի համաձայնագիր, որով Շարուր-Դարալագյազի և Նախիջևանի գավառներն առանձնացվում էին որպես չեզոք գոտի, և ստեղծվում էր ամերիկյան գեներալ-նահանգապետություն: Մի քանի օր անց նա հեռագրով փորձում էր հայոց կառավարությանը պարտադրել ճանաչելու Բաքվում կնքված համաձայնագիրը: 1919 թ. սեպտեմբերից Հասկելը Թիֆլիսում Հայաստանի և

Ադրբեջանի ղեկավարների հետ վարում էր բանակցություններ, որոնք ընթանում էին դժվար ու դանդաղ: Հոկտեմբերին նշված տարածաշրջանի գեներալ-նահանգապետ նշանակվեց Է. Դեյլին: Մահմեդական բնակչությունը թշնամաբար ընդունեց տարածաշրջան ժամանած ամերիկացիներին և դիմեց բողոքի ցույցերի: Փաստորեն Նախիջևանի մահմեդական վերնախավը չճանաչեց ամերիկյան նահանգապետի իշխանությունը. նահանգապետության ստեղծման փորձը ձախողվեց:

Հայաստանի իշխանությունների կառավարման շրջանում հազարավոր հայեր վերադարձան իրենց բնակատեղիները, սակայն 1919 թ. ամռանը և աշնանը, հայտնի դեպքերի հետևանքով, տարածաշրջանը գրեթե ամբողջովին հայաթափվեց:

Քեմալական Թուրքիան Շարուր-Նախիջևանի շրջանին տիրելը նույնպես համարում էր իր կենսական շահերից մեկը: Շուտով երկրամասում հայտնվեցին քեմալական բանակի հրահանգիչ-սպաներ:

1920 թ. Ադրբեջանի խորհրդայնացումից հետո այդ հանրապետության բոլշևիկ ղեկավարները, Թիկունքում ունենալով 11-րդ կարմիր բանակը, Հայաստանի Հանրապետության կառավարության հետ սկսեցին խոսել բացահայտ ուժի դիրքերից: Վիճակն ավելի ծանրացավ, երբ Հայաստանում մայիսյան ապըստամբության հետևանքով հակակառավարական ելույթներ սկսեցին մահմեդականները: Բոլշևիկների և մահմեդականների ելույթները ճնշելու համար նրանց դեմ ուղարկվեցին զորքեր: 1920 թ. հուլիսի 14-ին Ղամարլուի զորախումբը ծանր կռիվներից հետո գրավում է Գայլեղրունքը և մտնում Շարուր:

Այդ խառնակ շրջանում Նախիջևանի մահմեդականները ստեղծում են, այսպես կոչված, Նախիջևանի հեղկոմ, որը ոչնչով չէր տարբերվում նախորդ շրջանի տեղական մահմեդական իշխանություններից: Այդ կեղծ հեղկոմն էր, որ մերժեց Հայաստանի կողմից ներկայացված վերջնագիրը: Նույն ժամանակ Խորհրդային Ռուսաստանի և «կարմիր» Թուրքիայի միացյալ զորքերը Թարխանովի հրամանատարությամբ գրավում են Նախիջևան քաղաքը և նրա շրջակայքը: Մի քանի օր անց, 1920 թ. օգոստոսի 10-ին, Հայաստանի Հանրապետության և Խորհրդային Ռուսաստանի միջև Թիֆլիսում կնքված համաձայնագրով

Նախիջևանը, որպես վիճելի տարածք, ժամանակավորապես զբաղեցնում են Խորհրդային Ռուսաստանի զորքերը: Շահ-Թախթ-Ջուլֆա երկաթգծի շահագործումը հանձնվում է Հայաստանին: Քեմալականները դժգոհում են որոշման այդ կետից և պատրաստվում գրավել Շահթախթը:

1920 թ. Թուրք-հայկական պատերազմի ընթացքում քեմալականներին հաջողվում է գրավել Հայաստանի Հանրապետության տարածքների զգալի մասը և ամրապնդել իրենց դիրքերը Նախիջևանում: Ալեքսանդրապոլի պայմանագրով որոշվում է Նախիջևանը, Շարուրը, Շահթախթի շրջանը ժամանակավորապես թողնել Թուրքիայի պաշպանության տակ: Այդ նույն ժամանակ, Հայաստանի խորհրդայնացման կապակցությամբ, Ադրբեջանի հեղկոմի հռչակագրով Նախիջևանը հայտարարվեց ՀԽՍՀ տարածք: Խորհրդային Հայաստանի նոր իշխանությունները Վելիբեկովին նշանակեցին Նախիջևանի շրջանի արտակարգ կոմիսար, սակայն երկրամասում գտնվող Թուրքական զորքերի հրամանատարությունը բոլոր միջոցներով ձգտում էր կասեցնել շրջանի միացումը Հայաստանին: Մահմեդականների կրքերն ավելի բորբոքվեցին, երբ երկրամաս ժամանած Խորհրդային Ադրբեջանի արդարադատության ժողկոմ Բ. Շախ-Թախթինսկին հանրահավաքում հայտարարեց, որ Ադրբեջանը ձեզ դավաճանել է: Թուրքական զորքերի հրամանատարը դիմեց բացահայտ թշնամական քայլերի՝ ուղղված Նախիջևանի երկրամասի խորհրդային իշխանության դեմ:

Ե. Ջավախքը ծանր փորձությունների առջև: Դեռևս Առաջին աշխարհամարտի նախօրյակին Անդրկովկասի ազգային-քաղաքական շրջանակներում քննարկման խնդիր դարձած երկրամասի նոր վարչատարածքային բաժանման հարցի լուծումները վերսկսվեցին 1917 թ. Փետրվարյան հեղափոխությունից հետո:

Ինչպես արդեն նշվել է, 1917 թ. ամռանը վրաց մենշևիկները գտնում էին, որ Անդրկովկասի տարածքային բաժանման հարցում պետք է առաջնորդվել ազգագրական սկզբունքով, այսինքն որտեղ գերակշռում է տվյալ էթնոսը, այդ տարածքը պետք է միացվեր տվյալ վարչամիավորմանը, ընդ որում վիճելի տարածքների խնդրում անհրաժեշտ էր նկատվում հանրաքվեն: Այս ժողովրդավարական սկզբունքն ընդունելի էր նաև վրացա-

կան այլ կուսակցությունների համար: Նման արդարացի մոտեցումը կիսում էին հայ քաղաքական բոլոր շրջանակները: Այդ դիրքորոշումը պաշտպանեց 1917 թ. գարնանից Պետրոգրադում իրավաբան Ջուրաբ Ավալովի գլխավորությամբ գործող հատուկ պետական հանձնաժողովը, որը որոշում ընդունեց Բորչալուի՝ Լոռու տարածքի 4/5-ը և Ախալքալաքի գավառը, որ 1829 թ. Ադրիանապոլսի պայմանագրով անցել էր Ռուսական կայսրությանը, Թիֆլիսի նահանգից հանելու և նոր ստեղծվելիք Ալեքսանդրապոլի նահանգին միացնելու մասին:

Բայց 1917 թ. սեպտեմբեր-հոկտեմբերին վրաց քաղաքական ուժերը, հատկապես ազգային դեմոկրատները, հանդես եկան Թիֆլիսի նահանգից Բորչալուի և Ախալքալաքի գավառներն անջատելու դեմ: Ընդ որում «Թիֆլիսի նահանգ» բառերը նրանք նույնացնում էին վրացական ազգային պետականության հետ: 1917 թ. հետհոկտեմբերյան փուլում վրաց քաղաքական շրջանակներում Ռուսաստանից անջատվելու ձգտման ուժեղացման հետ մեկտեղ ազգագրական սկզբունքը հետզհետե մոռացության տրվեց: Լոռու ու Ախալքալաքի հարցում գերակշռեց վրացիների անզիջում ու կարծր դիրքորոշումը:

Ախալքալաքի հայությունը 1918 թ. սկզբին փորձեց յուրովի լուծել այդ հարցը: Հունվարի 21-ին Ախալքալաքի գավառային գործադիր կոմիտեն որոշում կայացրեց վարչականորեն Ալեքսանդրապոլի գավառին միանալու մասին: Այդ քայլը Հայաստանին միանալու ձգտման յուրօրինակ դրսևորում էր:

Այդ շրջանում ձևավորվեց Ախալքալաքի ազգային խորհուրդը, որի ղեկավարությունը ստանձնեց քաղաքագլուխ Մկրտիչ Մարգարյանը: Խորհուրդը ստեղծեց գավառի պաշտպանության ժամանակավոր կոմիտե, որը որոշ աշխատանք կատարեց ակտիվացած մեսխեթցի Թուրքերի սանձարձակությունները զսպելու ուղղությամբ: Ի դեպ, այդ գործում ինչպես Ախալքալաքի, այնպես էլ Ախալցխայի գավառներում հայերն ու վրացիները գործում էին միասնաբար՝ տալով զինական համագործակցության օրինակ: Սակայն 1918 թ. մարտ ապրիլին Վեհիբ փաշայի զորքերի հարձակումից և հատկապես Կարսի մարզի գրավումից հետո Ախալքալաքի վիճակը խիստ ծանրացավ: Ախալքալաքցիները կարողացան փրկել Արդահանի և Օլթիի

գավառների 1500 հայ բնակիչների, հիմնականում կանանց ու երեխաների՝ նրանց փոխանակելով Կոկիա, Թոք և թուրքական այլ գյուղերի բնակիչների հետ:

1918 թ. մայիսի 20-ին թուրքական զորքերը Զլդերի կողմից ներխուժեցին Ախալքալաքի գավառ: Տեղի բնակչությունից կազմավորված փոքրաթիվ ու վատ զինված ջոկատները Կարծախի մոտ՝ Գյոք Դաղ լեռան շրջանում կարողացան կազմակերպել կարճատև դիմադրություն: Գնդապետ Առաքելովը փոխանակ մեկնելու ճակատ, շարունակում էր ինքնապաշտպանական ուժերի գործողությունները «ղեկավարել» Ախալքալաքից՝ 25-30 կմ հեռավորությունից: Շնորհիվ ռուսական բանակից զորացրված զինվորականներ Լյուդվիգ Դեմիրճյանի, Խորեն Մնոյանի, Զարմայր Խանոյանի, Թիֆլիսից ժամանած Պողոս Աբելյանի, ռուս սպա Ռեզնիկովի գլխավորած խմբերի մղած պաշտպանական ծանր մարտերի հնարավոր եղավ ապահովել գավառի բնակչության գաղթը: Վրաց ազգային խորհրդի ենթակայության տակ գտնվող վրացական զորաջոկատը առանց մարտի մեջ մտնելու թողեց ռազմաճակատի գիծը և հեռացավ:

Գավառի հյուսիսային գյուղերի բնակչությունը գաղթեց դեպի Բակուրիան, իսկ հարավայինը՝ հիմնականում Ծալկա՝ տեղում թողնելով իր ամբողջ անշարժ գույքը: Չգաղթեցին միայն Թրքախոս հայ կաթոլիկներն ու ռուս դուխոբորները: Մինչև մայիսի վերջը գաղթեց ամբողջ Ախալքալաք քաղաքի և 61 հայկական գյուղերի բնակչությունը:

Գավառ ներխուժած թուրք ասկյարներն ու տեղի մեսխեթցիները թալանեցին գյուղերն ու սրի քաշեցին տեղում մնացած բնակչության մի մասին: Գերի վերցված բնակչության մյուս մասից էլ առանձնացվեցին աշխատունակ հարյուրավոր տղամարդիկ և աքսորվեցին Թուրքիա, իսկ ավելի քան հազար ծեր տղամարդկանց ու կանանց աքսորեցին Բակուրիանի՝ գաղթականների ճամբար: Ահավոր աղետի ենթարկվեցին Խորենիա և Թախչա գյուղերի բնակիչները, որոնց զգալի մասը չէր կարողացել գաղթել: Նրանց մեծ մասը արգելափակվեց մարագներում և վայրագորեն ոչնչացվեց:

Թուրքական հրոսակները սպանդ կազմակերպեցին նաև Մեծ Արագյալ, Գումբուրդո, Աբուլ, Բեժանո գյուղերում, Ախալքալաք քաղաքում և այլուր: Կոտորածն ավելի մեծ մասշտաբներ կընդուներ, եթե բնակչությունը տեղ-տեղ չդիմեր ինքնապաշտպանության: Թշնամին հատկապես համառ դիմադրության հանդիպեց Սաթխա գյուղի մատույցներում: Բորժոմի շրջանում տեղակայված վրացական զորքերի հրամանատար գեներալ Արջևանիձեն ոչ միայն ռազմական ու նյութական օգնություն ցույց չտվեց հայ գաղթականներին, այլև զինաթափեց հայ կամավորներին և Վրաց ազգային խորհրդի կարգադրությամբ արգելեց ախալքալաքցի փախստականներին տեղավորվելու Բակուրիանում և Վրաստանի այլ շրջաններում: Վրաստանի խորքերը տեղափոխվելու արտոնություն ստացան միայն վրացի գաղթականները:

Կարևորելով նորաստեղծ հանրապետությունների միջև սահմանների ճշգրտման հարցը՝ արդեն 1918 թ. հունիսի սկզբից Վրաց և Հայոց ազգային խորհուրդները, ապա նորաստեղծ հանրապետությունների ներկայացուցիչները սկսեցին բանակցություններ այդ խնդրի շուրջ: Բայց վրացական կողմի կարծր դիրքի պատճառով հայ-վրացական խորհրդակցությունները մտան փակուղի ու վերսկսվեցին միայն աշնանը, երբ թուրքերը սկսեցին հեռանալ գրավված տարածքներից:

Այդ ընթացքում ախալքալաքցի գաղթականների վիճակը շարունակում էր վատթարանալ: Նրանք փաստորեն հայտնվել էին յուրահատուկ արգելափակոցում: Դեպի հյուսիս՝ Բակուրիանի ու Բորժոմի բնակավայրերի ճանապարհը փակել էր վրացական զորքը, իսկ ետդարձի ուղին դեպի գավառ՝ թուրքերը:

1918 թ. հուլիսի սկզբին վրաց կառավարությունը մերժեց Հայոց ազգային խորհրդի միջնորդությունը՝ գաղթականներին Վրաստանի խորքերը տեղափոխելու, ինչպես և Բորչալուից հեռացած մահմեդականների բնակավայրերում տեղավորելու մասին՝ այդ տմարդի քայլը «բացատրելով» համաճարակների տարածումը Վրաստանում կանխելու պատճառաբանությամբ: Մինչդեռ հայտնի է, որ հունիս-օգոստոս ամիսներին գաղթականների մեջ դեռ համաճարակային հիվանդություններ չկային: Դրանք հայտնվեցին ավելի ուշ՝ աշնանը: Եթե նույնիսկ այդ պատճառաբանությունը հիմնավորված լիներ, չէր կարող վրաց իշխանություններին ազատել իրենց քաղաքացի հանդիսացող

ախալքալաքցի փախստականների ճակատագրով մտահոգվելու պարտականությունից: Նշենք, որ այդ «պարտականության» փոխարեն գեներալ Արջևանիձեի վերջին ջոկատները հեռացան Ախալքալաքի գավառի հյուսիսային սահմանագծից՝ թուրքական հրոսակներին հնարավորություն ընձեռելով ավազակային հարձակումներով նորանոր վնասներ հասցնել գաղթականներին:

Հայոց ազգային խորհրդի աջակցությամբ Թիֆլիսաբնակ ջավախքցիներից կազմակերպվեց «Ախալքալաքի հայրենյաց (հայրենակցական) միությունը», որի վարչության մեջ մտան 10 հոգի, այդ թվում ճանաչված հասարակական գործիչներ Բ. Օհանջանյանը (նախագահ), Գր. Պապոյանը (տեղակալ), Պողոս Աբելյանը (քարտուղար), Հովհաննես Մալխասյանը, Ջալալ Տեր-Գրիգորյանը, Կարապետ Շահպարոնյանը: Վարչությունը կոչով դիմեց Թիֆլիսի հայությանը և կարողացավ որոշակի միջոցներ հանգանակել գաղթականների համար: Ախալցխայի թուրքական հրամանատարության մոտ ժամանած ախալքալաքցի գաղթականների պատվիրակության խնդրանքը՝ իրենց հայրենի գավառ վերադառնալու թույլտվություն ստանալու վերաբերյալ, կտրականապես մերժվեց: Թուրքերը, չթաքցնելով Ախալքալաքի գավառը Օսմանյան կայսրությանը վերադարձնելու իրենց պլանները, հայտնեցին, որ հայկական գյուղերն արդեն բնակեցված են Թուրքիայից բերված մահմեդական վերաբնակիչներով: Ուշագրավ է, որ Ախալքալաքը հայաթափելու և այն Թուրքիային բռնակցելու իրենց հայակուլ ծրագրերում երիտթուրքերն այնքան հետևողական էին, որ ախալքալաքցի գաղթականներին հայրենի գավառ վերադառնալու խնդրում անդրդվելի մնացին ոչ միայն հայկական տարբեր կազմակերպությունների, օտարերկրյա բարեգործական հաստատությունների, այլև դաշնակից Գերմանիայի ներկայացուցիչ գեներալ Ֆոն Կրեսի միջնորդությունների նկատմամբ:

Այսպիսով, և՛ վրաց կառավարության, և՛ թուրքական հրամանատարության կողմից որևէ ուղղությամբ տեղաշարժվելու իրավունքից զրկված ջավախքցի գաղթականները դատապարտվում էին բնաջնջման: Արհեստականորեն հրահրվում էր սովահարություն: Գաղթականության վիճակը դառնում էր

օրհասական. սկսվել էին սովն ու ցրտերը, սպառվում էր անասնագլխաքանակը: Վրացական իշխանությունները թույլատրեցին Քութայիսից, Գորիից, Բորժոմից եկած հարյուրավոր ավազակների ու սպեկուլյանտների չնչին գներով գաղթականներից գնելու, առանձին դեպքերում էլ վրացական միլիցիայի օգնությամբ խլելու հազարավոր գլուխ անասուններ:

Իրենց հերթին, 1918 թ. ամռան վերջերից մինչև 1918 թ. դեկտեմբեր տևած բծավոր տիֆն ու խոլերան սկսեցին հնձել գաղթականությանը: Այդ օրերին «Մշակում» տպագրված մի թղթակցությունում Պողոս Աբելյանը գրում էր. «Ախալքալաքցիների բնաջնջումն այնքան արագ է կատարվում, որ եթե գաղթականներին փրկելու համար ձեռք չառնվեն ժամանակի պահանջած միջոցներ, ախալքալաքցիների այս սերունդը կլինի վերջինը»: 1918 թ. հունիսից մինչև նոյեմբեր Բակուրիանի անտառներում զոհվեց ավելի քան 18 հազար մարդ: Գրեթե նույնքան զոհեր տվեցին Ծալկայի և Մանգլիսի շրջաններում ապաստանած հայ գաղթականները: Մինչև հաջորդ գարուն ախալքալաքցի գաղթականների կորուստները հասան 40 հազարի:

1918 թ. նոյեմբերից, երբ համաշխարհային պատերազմում պարտված Թուրքիան իր զորքերը հետ էր քաշում Ջավախքից, գաղթականության բեկորները հաղթահարելով վրաց զինվորական իշխանությունների հարուցած զանազան արգելքները՝ հաճախ շրջանցիկ ճանապարհներով սկսեցին վերադառնալ իրենց ավերված ու թալանված բնակավայրերը: Բակուրիանիից Ախալքալաք անցնելու թույլտվության դիմաց վրաց զինվորականները գաղթականներից պահանջում էին ստորագրություններ՝ վրացահպատակություն ընդունելու, գավառը Վրաստանի մաս ճանաչելու մասին:

Վերադարձող գաղթականներից կազմված փոքրաթիվ զինված խմբերը, Թուրքերի դուրս գալուց հետո, փորձեցին կարգ ու կանոն հաստատել Ախալքալաքում: Ալեքսանդրապոլի գավառին հարող լճերի (Մադաթափա, Փարվանա, Սաղամո) շրջանը վերցվեց զինվորական հսկողության տակ:

Նոյեմբերի 29-ին Երևանում Վրաստանի ներկայացուցիչ Ս. Մդիվանին հայտարարեց, որ հայ-վրացական սահմանագիծը իր կառավարության կարծիքով պետք է անցնի նախկին Թիֆ-

լիսի նահանգի հարավային սահմանով, այսինքն Լոռին և Ախալքալաքը մտնելու են Վրաստանի կազմի մեջ: Այս հայտարարությունից մեկ շաբաթ չանցած՝ դեկտեմբերի 5-ին վրացական կառավարությունը, որ մինչ այդ՝ հոկտեմբեր-նոյեմբերին, բռնազավթել էր Լոռին, զորավար Մակաևի (Մաղաշվիլի) գլխավորությամբ զորք մտցրեց նաև Ախալքալաք: Տեղի հայկական ուժերը զինաթափվեցին, իսկ Հայաստանից ժամանած փոքրաթիվ հայկական զորամասը հայ-վրացական բախումից խուսափելու համար ստիպված դուրս եկավ Եֆրեմովկա-Տրոյիցկոյե գյուղերի շրջանից, ուր վերադարձել էին հայ գաղթականները Թուրքերի հեռանալուց հետո:

Հովհ. Քաջազնունու կառավարությունը, որ այդ խնդրում խորհրդարանի կողմից ստացել էր ազատ գործելու իրավունք, քանիցս բողոքեց Լոռու և Ախալքալաքի զավթման կապակցությամբ: Բայց վրացիները մնացին անդրդվելի: 1918 թ. դեկտեմբերի կեսերին ծագեց հայ-վրացական պատերազմը, որի սանձազերծման գործում չափազանց մեծ էր Թուրքերի դերը: Այդ տարածքներից հեռանալուց առաջ նրանք միաժամանակ՝ և՛ Հայաստանի, և՛ Վրաստանի կառավարություններին հայտարարել էին, թե գավառները նրանցն է:

Ինչպես արդեն նշվել է, հայկական ուժերը Դրոյի գլխավորությամբ ազատագրեցին Լոռու մեծ մասը: Դեկտեմբերի 11-12-ին հայկական դիվիզիայի 4-րդ հետևակային գնդի մեկ գումարտակ Ալեքսանդրապոլից շարժվեց դեպի Ախալքալաք և այնտեղ մտած վրացական զորքերի հետ ընդհարումից հետո հսկողության տակ վերցրեց գավառի մեծ մասը: Վրացական ուժերը քաշվեցին Հյուսիս:

Պատերազմի ընթացքում վրացիները Թիֆլիսում իսկական մարդաորս սկսեցին հայերի նկատմամբ: Հազարավոր հայեր հայտարարվեցին ռազմագերիներ և աքսորվեցին Քութայիս:

Անտանտի երկրների, հատկապես Անգլիայի ներկայացուցիչների միջնորդությամբ 1918 թ. դեկտեմբերի 31-ին պատերազմական գործողությունները դադարեցին: 1919 թ. հունվարի 9-17-ը Թիֆլիսում կայացած հաշտության կոնֆերանսը Լոռին հայտարարեց չեզոք գոտի, իսկ Ախալքալաքի հարցը մնաց առկախ: Մարտին երկու հանրապետությունները ճանաչեցին միմյանց անկախությունը, վերականգնվեց երկաթուղային երթևեկությունը: Հայ-վրացական հարաբերությունների լարվածությունը հետզհետե գնալով թուլացավ:

Մինչև 1919 թ. մարտ ամիսը Հայրենի գավառ վերադարձան նաև ախալքալաքցի գաղթականների մնացած բեկորները: Գավառը լիովին թալանված էր, հացահատիկը տարվել էր Թուրքիա: Տանելի վիճակում էին միայն Թրքախոս հայ կաթոլիկների և ռուս դուխոբորների գյուղերը: Ի դեպ, նրանք զգալի օգնություն ցույց տվեցին գաղթականներին ցանքս կազմակերպելու, բնակավայրերը վերականգնելու գործում: Արդեն հունիսին Հայաստանի կառավարությունը ստացած հացահատիկից բաժին հանեց ախալքալաքցի սովյալներին: Թիֆլիսի Հայաստանի ներկայացուցչությունում ստեղծվեց հատուկ խնամատարության մարմին, որի ղեկավարությունը ստանձնեց Դ. Դավիթխանյանը: Միայն մայիսի սկզբին Հայաստանը Ախալքալաքի սովյալներին հատկացրեց 3 մլն. ռուբլու նպաստ և 74 մլն. ռուբլի՝ սերմացու գնելու համար:

Այդուհանդերձ, Ջավախքի տնտեսական վիճակը նկատելիորեն չբարելավվեց: Վրացական իշխանությունները հայերի նկատմամբ շարունակում էին վարել խտրական քաղաքականություն: Ախալքալաքում գեներալ-նահանգապետ նշանակված Մակաևը (Մաղաշվիլի) զինաթափեց հայ բնակչությանը, Իմերեթիայից և Թիֆլիսից բերված վրացական միլիցիայի միջոցով հաստատեց խստագույն ռեժիմ: Ընդ որում վրացի ու մեսխեթցի Թուրք բնակիչները շարունակում էին օգտվել զենք կրելու իրավունքից: Հայերից զենք կարող էին ստանալ միայն նրանք, ովքեր «կամովին», բայց իրականում բռնությամբ զորակոչվում էին վրացական բանակ՝ անհնազանդ Աբխազիայի և Աջարիայի դեմ կռվելու համար: Սկսվեց իրագործվել Ջավախքը վրացիներով բնակեցնելու քաղաքականությունը: Մինչև 1920 թ. վերջերը վրացական պետության հովանավորությամբ Ախալքալաքի գավառ փոխադրվեց մի քանի հարյուր իմերեթցի ընտանիք: Տեղի վրաց վարչությունը գավառի հյուսիսում և արևելքում ընկած արոտատեղիների մի զգալի մասը խլեց հայերից և հանձնեց Թուրքերին: Տարբեր մեքենայություններով մի շարք գյուղեր զրկվեցին իրենց վարելահողերից: Ոտնձգություններ եղան

Ախալցխայի Ս. Փրկիչ եկեղեցուն պատկանող Կարծախ, Դաղեչ, Սուլդա և այլ գյուղերի հողատարածքների նկատմամբ: Վրաց կառավարությունը կանգ չառավ նաև այնպիսի միջոցի առջև, ինչպիսին ազգաձուլումն է: Սկսվեց մի արշավ կաթոլիկ հայերին վրացացնելու ուղղությամբ:

Անշուշտ, Ջավախքի նկատմամբ մենշևիկների վարած չովինիստական քաղաքականությունն աննկատ չէր մնում Հայաստանում: Բայց հայկական կառավարությունն ինչ-ինչ նկատառումներով հարկ էր համարում 1919 թ. բավարարվել միայն իր հացահատիկից Ախալքալաքին մասնաբաժին հանելով և Վրաստանի հետ վարվող բանակցություններում սահմանների հարցի լուծումը ձգձգելով՝ մինչև Փարիզի վեհաժողովում ցանկալի արդյունքի հասնելը: Ռ. Տեր-Մինասյանն այդ մասին գրել է. «Անարդար էին Վրաստանի դիտումները Հայաստանի վերաբերմամբ, անարդար էր, որ նա Ախալքալաք զուտ հայաբնակ գավառը խլած էր մեզնից, թեև թե՛ աշխարհագրական, թե՛ ազգագրական տեսակետով այդ գավառը Հայաստանին կպատկաներ: Անարդար էր նաև Լոռիի վերաբերմամբ նրա ձգտումը... Չնայած այդ վրդովեցուցիչ դրության, Բյուրոն (Դաշնակցության- **խմբ.**) այն կարծիքն ուներ, որ պիտի համբերել և զիջել վրացիներին, ինչքան որ կարելի է»: Բայց Ռուբենն ու Հանրապետության մյուս ղեկավարները պարտավոր էին նկատել, որ որքան հայկական կողմը զիջող էր դառնում, այնքան Ախալքալաքի ու Լոռու հարցում վրացիներն ավելի պահանջատեր էին ներկայանում:

Չկարողանալով լուծում տալ 1919-1920 թթ. ընթացքում սահմանային վեճերին՝ հայկական և վրացական պատվիրակությունները դիմեցին Անտանտի երկրների օգնությանը: 1920 թ. օգոստոսի 10-ի Սևրի դաշնագրում մտցվեց հատուկ հոդված, ըստ որի անդրկովկասյան հանրապետությունների միջև սահմանազատման խնդիրը պետք է լուծվեր կողմերի ներկայացուցիչներից բաղկացած չահագրգիռ հանձնաժողովի ջանքերով, իսկ չլուծվելու դեպքում, մնալու էր դաշնակից երկրների հայեցողությանը:

1920 թ. աշնանը՝ Թուրք-հայկական պատերազմի օրերին, Հայաստանի կառավարությունը, տեղյակ լինելով Թուրք-վրացական գաղտնի կապերին, ստիպված եղավ սահմանների հարցում զիջումներ անել Վրաստանին: Նոյեմբերի 13-ին վրացիները զորք մտցրին Լոռու չեզոք գոտի և Արդահան:

1921 թ. փետրվարի վերջին և մարտի սկզբին Ախալքալաքի գավառը ենթարկվեց նոր արհավիրքի՝ քեմալական Թուրքերի հարձակմանը: Ներխուժելով Ջավախք՝ Թուրքերը փաստորեն խախտում էին Թուրք-վրացական գաղտնի համաձայնագիրը Վրաստանի տարածք (որպիսին այդ ժամանակ համարվում էր Ախալքալաքը) չմտնելու վերաբերյալ: Հիմքեր կան ենթադրելու, որ անկախ Վրաստանի կառավարությունն իր անկման նախօրյակին քաղաքական նկատառումներով Թուրքերին Ախալքալաքի գավառ մտնելու արտոնություն էր տվել՝ նախապես նորից զինաթափելով հայ բնակչությանը: Ղումանտար փաչայի զորքն ու Թուրքական խուժանը չարժվեցին գավառի հարավային գյուղերի՝ Կարծախի, Սուլդայի, Դաղեչի և Գումբուրդոյի վրա: Բազմաթիվ գումբուրդոցիներ, այդ թվում՝ կանայք, ընկան անհավասար մարտում: Թուրքերը Գումբուրդոյում գերի վերցրին հարյուրավոր տղամարդկանց, որոնց մի մասին սպանեցին Կուրի ձորում, մյուսներին լցնելով ջրհորները՝ խեղդամահ արեցին: Կոտորածներ եղան նաև գավառի ուրիշ գյուղերում: Այս անգամ գավառի բնակչությունը չգաղթեց: Ալաստան, Մոլիտ, Տաբաղուրի և այլ գյուղերի մատույցներում Թուրքերը հանդիպեցին համառ դիմադրության:

1918 և 1921 թթ. Թուրքական արշավանքների, սովի ու համաճարակների հետևանքով Ախալքալաքի գավառը կորցրեց իր հայ բնակչության չուրջ 45 %-ը: Այսպես, եթե Ախալքալաք քաղաքը 1917 թ. ուներ 5070 բնակիչ, ապա 1920 թ. կեսերին՝ չուրջ երեք անգամ պակաս:

Ներքին ու արտաքին դժվարագույն խնդիրների առջև կանգնած Հայաստանի Հանրապետությունը 1920 թ. ապրիլ-մայիսին ստիպված էր լարել բոլոր ուժերը՝ դժվարին երկունքով կյանքի կոչված պետականությունը կորստից փրկելու համար:

6. ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԻ 1920 Թ. ՄԱՅԻՍՅԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ

Արտաքին թշնամիներով շրջապատված և երկրի ներսում թուրք-թաթարական հոծ զանգվածով կաչկանդված Հայաստանը ներքին կայունության և ազգային խնդիրների չուրջ բոլոր ուժերի համախմբվածության խիստ կարիք ուներ: Դրանք հայկական պետականության կենսունակության և հետագա գոյատևման երաշխիքներ էին: Քաղաքական ուժերի միջև առկա տարաձայնություններով հանդերձ՝ սկզբնական շրջանում հանրապետության ներքին կյանքը բնորոշվում էր քաղաքական կտրուկ ցնցումների բացառմամբ: Քաղաքական հիմնական ուժերը պարզորոշ գիտակցում էին, որ բախտորոշ այդ օրերին կայունությունն ու ազգային համաձայնությունը այլընտրանք չունեն:

Հարցին սկզբունքորեն այլ դիրքերից մոտեցան հայ բոլշևիկները: Անդրկովկասյան հանրապետությունների կազմավորումից հետո Վրաստանում և Ադրբեջանում հալածական ու օրենքից դուրս հայտարարված բոլշևիկները Հայաստանում ոչ միայն քաղաքական ապաստան ստացան, այլև պետական ու հասարակական հիմնարկություններում իրենց մասնագիտությանը համապատասխան աշխատանք գտան: Նրանք սկզբնապես, գոնե առերևույթ, չեզոք կեցվածք որդեգրեցին հայկական պետականության հանդեպ: Բայց Ռուսաստանի քաղաքացիական կռիվների ճակատներում բոլշևիկների տարած հաղթանակները և Անդրկովկասում մոտալուտ հայտնվելու հեռանկարը ոգեշնչեց նրանց հայ գաղափարակիցներին՝ դրդելով հակապետական գործունեության: Սովի ու տնտեսական ճգնաժամի պատճառով բնակչության մի մասի մեջ առկա դժգոհությունները և այլազգի բնակչության անջատողական տրամադրությունները օգտագործելով՝ նրանք որդեգրում էին խորհրդային ռազմական ուժի օգնությամբ Հայաստանի Հանրապետությունը կործանելու գործելակերպը:

Հանրապետության բոլշևիկյան կազմակերպությունները համախմբելու և ղեկավարելու նպատակով 1919 Թ. սեպտեմբերին գումարված խորհրդակցությունում ստեղծվում է Հայաստանի կոմիտե (Արմենկոմ): Հետագա ամիսներին դրսից դրամական աջակցություն ստանալով՝ բոլշևիկների գործունեությունն ակտիվանում է: 1920 Թ. հունվարին Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների գաղտնի կոնֆերանսը որոշեց օգտագործել նպաստավոր պայմանները, որ կարող էին առաջանալ կարմիր բանակի Անդրկովկաս մտնելու և հարևան երկրներից մեկի խորհրդայնացման դեպքում, ապստամբել և խորհրդայնացնել Հայաստանը: Այսպիսով, երկրում հենարան չունեցող հայ բոլշևիկներն իրենց քաղաքական իդեաների իրականացումը գերազանցապես կապում էին արտաքին քաղաքական ուժերի հետ:

Հայ բոլշևիկների հակապետական գործունեության ակտիվացման ազդանշան հանդիսացավ Ադրբեջանի խորհրդայնացումը (1920 Թ. ապրիլի 28): Նրանք որոշեցին Հայաստանում պետական մակարդակով կազմակերպվելիք մայիսմեկյան տոնակատարությանը հակակառավարական բնույթ տալ: Երևանում հայ բոլշևիկյան ելույթներն արձագանք չգտան, բայց Ալեքսանդրապոլում, որտեղ նրանք անհամեմատ ուժեղ էին, ցույցերը հիմնականում ընթացան բոլշևիկյան կարգախոսներով: Տեղական իշխանությունների պասիվության պայմաններում բոլշևիկները Ալեքսանդրապոլում իրադրության տերը դարձան: Դրան հատկապես նպաստեց այն հանգամանքը, որ այստեղ գտնվող «Վարդան զորավար» զրահագնացքը՝ բոլշևիկ Սարգիս Մուսայելյանի գլխավորությամբ, անցավ հակակառավարական ուժերի կողմը՝ հսկողության տակ վերցնելով Ալեքսանդրապոլի կայարանը: Բոլշևիկների կողմն անցավ կամ տատանողական դիրք գրավեց նաև այստեղ գտնվող զորամասերի մի մասը: Մայիսի 3-ին իրենց ղեկավար կենտրոնին՝ Արմենկոմին ուղղված նամակով Ալեքսանդրապոլի բոլշևիկները, որոնց մեջ իր ծայրահեղ հեղափոխական և արկածախնդրական խառնվածքով աչքի էր ընկնում Ավիս Նուրիջանյանը, ապստամբությունը սկսելու և իշխանությունը գրավելու թույլտվություն պահանջեցին: Նրանք հույս էին փայփայում, թե ապստամբության հաղթանակի դեպքում օժանդակություն կստանան Խորհրդային Ռուսաստանից ու Ադրբեջանից, վերջիններիս օգնությամբ երկիրը դուրս կբերեն տնտեսական ծանր վիճակից, կապահովեն նրա անվտանգությունը:

Թեև ապստամբության հարցում հայ բոլշևիկների մեջ սկզբունքային տարաձայնություն չկար, այնուհանդերձ, մարտավարության հետ կապված՝ Արմենկոմի և Ալեքսանդրապոլի բոլշևիկների միջև տարակարծություններ դրսևորվեցին: Արմենկոմն ապստամբությունը մոտ ապագայի գործ էր համարում և գտնում էր, որ այն պետք է սկսել Ադրբեջանին սահմանակից Ղազախի շրջանից՝ Ադրբեջանում գտնվող կարմիր բանակի ռազմական աջակցությունը ստանալու նկատառումով: Մինչդեռ Ալեքսանդրապոլի բոլշևիկների ղեկավարները անհապաղ գործելու կողմնակիցներ էին: Ջսպասելով Արմենկոմի պատասխանին՝ նրանք ամեն ինչ արեցին դեպքերն արագացնելու համար: Մայիսի 4-ին Ս. Մուսայելյանը մերժում է Երևան մեկնելու վարչապետ Ալ. Խատիսյանի հրահանգը, հայտարարելով, որ ինքն այսուհետ ենթարկվում է միայն Ալեքսանդրապոլի բոլշևիկյան կոմիտեի հրամաններին:

Ապստամբությունը կանխելն արդեն անհնար էր: Մայիսի 6-ին Ալեքսանդրապոլ են ուղարկվում Արմենկոմի ներկայացուցիչներ Դրաստամատ Տեր-Սիմոնյանը և Արտաշես Մելքոնյանը: Մայիսի 7-ին «Վարդան զորավար» զրահագնացքում կայացած բոլշևիկյան կազմակերպությունների ներկայացուցիչների խորհրդակցությունում որոշվում է մայիսի 10-ին միաժամանակ ապստամբություն սկսել Ալեքսանդրապոլում ու Ղազախում և շարժվել Երևան: Ստեղծվում է ռազմահեղափոխական կոմիտե: Կարմիր զորքերի հրամանատար է նշանակվում Ս. Մուսայելյանը: Վերադառնալով իրենց շրջանները՝ խորհրդակցության մասնակիցները տեղական ռազմահեղափոխական կոմիտեներ են ստեղծում Կարսում, Սարիղամիշում, Նոր Բայազետում, Սուրմալուում, Ղազախ-Դիլիջանում և այլուր:

Մայիսի 10-ին ռազմահեղափոխական կոմիտեն, առանց գնդակ արձակելու, խորհրդային իշխանություն հռչակեց Ալեքսանդրապոլում, ապա Կարս, Սարիղամիշ, Ղարաքիլիսա ու այլ վայրեր ուղարկած հեռագրերով հայտարարեց Հայաստանի խորհրդայնացումը: Հենց սկզբից պարզ դարձավ, որ ապստամբությունն անկազմակերպ է, իսկ ղեկավարությունը՝ թույլ, անգամ Ալեքսանդրապոլում: Ապստամբությունը գործնականում դուրս չեկավ զրահագնացքի շրջանակից: Հետագա օրերին,

մեկը մյուսին հաջորդելով, բոլշևիկյան զինված ելույթներ տեղի ունեցան Կարսում, Սարիղամիշում, Կաղզվանում, Նոր Բայազետում, ավելի ուշ, երբ ապստամբությունը գրեթե մարել էր՝ Ղազախ-Դիլիջանում և Զանգեզուրում: Որպես կանոն, դրանք հիմնականում արձագանք գտան զինվորականության շրջանում՝ իրենց կողմը գրավելով նաև ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին: Այդ օրերին իր գործողություններն ակտիվացրեց նաև Զանգիբասարի (Մասիս), Բեյուք Վեդիի և այլ վայրերի մուսուլման բնակչությունը:

Այսպիսով, օգտվելով բարենպաստ արտաքին քաղաքական իրավիճակից՝ Հայաստանի բոլշևիկները քաղաքացիական պատերազմ պարտադրեցին հանրապետությանը: Ելնելով ստեղծված իրավիճակից՝ հանրապետության կառավարությունը դիմեց արտակարգ միջոցների և ամենից առաջ ձեռնամուխ եղավ իշխանության կենտրոնացմանը: Մայիսի 5-ին խորհրդարանի արտակարգ նիստում Ալ. Խատիսյանի կառավարությունը հրաժարական տվեց, և Դաշնակցության բյուրոյի անդամներից կազմվեց նոր կառավարություն (բյուրո-կառավարություն)՝ Համո Օհանջանյանի գլխավորությամբ: Խորհրդարանը մեկ ամսով դադարեցրեց գործունեությունը՝ իր լիազորությունները հանձնելով կառավարությանը: Երկիրը հայտարարվեց վտանգի մեջ, հիմնվեցին արտակարգ դատարաններ: Խորհրդարանի անդամները, որոնց տրվել էին լայն լիազորություններ, ուղարկվեցին տարբեր շրջաններ: Ալեքսանդրապոլն արագ գրավելու համար կազմվեց զորամաս՝ Սեպուհի գլխավորությամբ: Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ն և քաղաքական ու հասարակական կազմակերպությունները հանդես եկան ապստամբությունը դատապարտող և կառավարությանը սատարող հայտարարություններով:

Արյունահեղությունից խուսափելու փորձերը հաջողություն չունեցան, և մայիսի 13-ին Սեպուհի ուժերը մոտեցան Ալեքսանդրապոլին: Ապստամբներին վերջնագիր ներկայացվեց: Ապստամբության ղեկավարները, երկար քննարկումից հետո, որոշեցին չդիմադրել և նույն գիշերը թողնելով զրահագնացքը՝ փորձեցին հեռանալ քաղաքից: Մայիսի 14-ին կառավարական զորքերն առանց կռվի մտան քաղաք: Ապստամբության ղեկա-

վարներից ոմանք (Ս. Մուսայելյան, Ա. Մելքոնյան և ուրիշներ) ձերբակալվեցին, մյուսները (Ա. Նուրիջանյան և ուրիշներ) կարողացան թաքնվել:

Ընդամենը երկու օր տևեց Կարսում Ղ. Ղուկասյանի գլխավորությամբ բոլշևիկների կազմակերպած ապստամբությունը, որին հարել էին տեղի կայազորի զինվորների, ինչպես նաև մալական ու հույն բնակչության մի մասը: Այն ճնշվեց նախքան կառավարական ուժերի կողմից Ալեքսանդրապոլի գրավումը: Կարճատև եղան նաև Սարիղամիշի և Նոր Բայազետի զուտ զինվորական բնույթ կրող ելույթները, որոնց ղեկավարները հանձնվեցին արտակարգ դատարանին: Բոլշևիկյան ելույթները մի փոքր տևական եղան Ղազախ-Շամշադինում. դրանք սկսվեցին այն ժամանակ, երբ մյուս վայրերում ելույթներն արդեն ճնշվել էին: Այստեղ Ադրբեջանի տարածքից նրանց օգնության եկան կարմիրբանակայինները: Տեղական զորքը չդիմադրեց: Շուտով տեղ հասած կառավարական ուժերը և արևմտահայ կամավորները ճնշեցին բոլշևիկների ելույթները:

Զինված ելույթները ճնշելուց հետո դրանց ակտիվ մասնակիցներն ու ղեկավարները կանգնեցին արտակարգ դատարանների առջև: Կազմակերպիչներից Ս. Մուսայելյանը, Ստ. Ալավերդյանը, Բ. Ղարիբջանյանը, Ա. Մելքոնյանը և ուրիշներ մահապատժի ենթարկվեցին: Արգելվեց Հայաստանի կոմունիստական կուսակցության գործունեությունը: Զինված ելույթների մասնակիցների մի մասը հեռացավ Ադրբեջան:

Մայիսյան ելույթները թեև ճնշվեցին արագ, բայց Հայաստանի համար ունեցան խիստ բացասական հետևանքներ: Դրանցից ճակատագրականը հայկական բանակի բարոյալքումն էր: Բոլշևիկյան ելույթները հիմնականում զինվորական խռովությունների բնույթ ունեին: Բանակում որոշակի պառակտում առաջացավ, թուլացավ պետականության գաղափարը, ինչը հանգեցրեց բանակի մարտունակության անկմանը: Վերջինս ամբողջ սրությամբ դրսևորվեց Թուրք-հայկական պատերազմի ընթացքում: Խիստ տուժեց նաև հանրապետության միջազգային վարկը, հատկապես բարդացան Խորհրդային Ռուսաստանի հետ հարաբերությունները: Դեպքերից հետո հայ բոլշևիկների կողմից բարձրացված աղմուկի պատճառով այդ օրերին վարվող

բանակցություններում Խորհրդային Ռուսաստանի դիրքորոշումը Հայաստանի նկատմամբ զգալիորեն կարծրացավ: Երկիրը կորցրեց նաև ներքին կայունությունը, որի արձագանքը եղավ Թուրք-Թաթարական խռովությունների նոր աշխուժացումը:

Խորհրդահայ պատմագրության մեջ իշխում էր այն տեսակետը, թե մայիսյան ապստամբության հաղթանակի և երկրի խորհրդայնացման համար առկա էին օբյեկտիվ նախադրյալներ: Պարտությունը բացատրվում էր միասնական կենտրոնի բացակայությամբ, Արմենկոմի անվճռականությամբ, ելույթների անջատ լինելով, նրանով, որ կարմիր բանակն օգնության չհասավ և այլն: Իհարկե, այդ գործոններից յուրաքանչյուրն այս կամ այն կերպ ազդել է դեպքերի ընթացքի վրա, բայց բոլշևիկների արագ պարտությունն առաջին հերթին բացատրվում է զանգվածների վրա նրանց ունեցած թույլ ազդեցությամբ: Բոլշևիկները ժողովրդի մեջ հենարան չունեին և նրա աջակցությունը չստացան: Նրանց հաղթանակի միակ գրավականը կարող էր լինել կարմիր բանակի ռազմական օժանդակությունը: Բացի այդ, Խորհրդային Ռուսաստանի ղեկավարությունն այդ ժամանակ դեռևս չէր դնում զենքի ուժով Հայաստանի խորհրդայնացման հարցը:

Հայ պատմագիտության մեջ տեղ գտած տեսակետներից մեկը 1920 թ. մայիսին քաղաքական այլընտրանքի առկայության վերաբերյալ հարցադրումն է, ըստ որի ճիշտ կլիներ, եթե դեռևս 1920 թ. մայիսին հանրապետության կառավարող շրջանները, վեր կանգնելով կուսակցական շահերից, իշխանությունը կամովին հանձնեին բոլշևիկներին և դրանով իսկ ստանային Խորհրդային Ռուսաստանի օգնությամբ երկիրը հետագա տարածքային կորուստներից փրկելու գրավական: Նման պայմաններում, ըստ այդ տեսակետի, Հայաստանն այսօր կունենար ավելի ընդարձակ տարածք, այդ թվում ոչ միայն Ղարաբաղն ու Նախիջևանը, այլև Կարսի մարզն ու Սուրմալուի գավառը: Հիշյալ տեսակետը, սակայն, վիճելի է: Ի վերջո, վերը նշված տարածքների, ինչպես նաև Ախալքալաքի պատկանելիության հարցը վերջնական լուծում ստացավ միայն 1921 թ., երբ Հայաստանն արդեն խորհրդայնացված էր և այդ առումով ոչինչ չէր խանգարում գործնականում ցուցադրել բոլշևիկյան ինտերնացիոնալիզմը՝ եղբայրական Խորհրդային Հայաստանին թողնելով իր օրի-

նական ու պատմական տարածքները: Բայց բանն այն է, որ Անդրկովկասում սահմանային հարցերը լուծվեցին ոչ թե բոլշևիկների կողմից իսկ ընդունվող ինքնորոշման իրավունքի միանգամայն տրամաբանական սկզբունքով, այլ ելնելով զուտ քաղաքական նկատառումներից: Առաջնորդվելով համաշխարհային սոցիալիստական հեղափոխության սին գաղափարներով՝ Ռուսաստանի բոլշևիկյան ղեկավարությունը Արևելքում հեղափոխության ջահակրի և իմպերիալիզմի դեմ պատվարի դերը վերապահել էր քեմալական Թուրքիային՝ ամեն կերպ աջակցելով, զիջումներ անելով նրան և աշխատելով ապահովել նրա հետ դաշինքը: Բոլշևիկյան Ռուսաստանի կառավարությունն ի սկզբանե փաստորեն ճանաչում էր քեմալականների առաջ քաշած «Ազգային ուխտը»՝ դրանով իսկ պատճառաբանելով տարածքային այն լուրջ զիջումները, որոնք հետագայում արվեցին Թուրքիային: Ավելին, Խորհրդային Ռուսաստանի բոլշևիկ ղեկավար ու առավել ազդեցիկ գործիչների մի մասը չէր թաքցնում, որ հայ ժողովրդի շահերն ու գոյատևման իրավունքը իրենց համար երկրորդական նշանակություն ունեն և որ դրանք կարող են զոհաբերվել ավելի մեծ քաղաքական խնդիրներ լուծելուն, տվյալ դեպքում այսպես կոչված համաշխարհային հեղափոխության շահերին: Հետևաբար, խորհրդային առանձին գործիչների կողմից Հայկական հարցում Թուրքիային որոշ զիջումներ պարտադրելը առժամանակ կատարված վեհերոտ փորձեր էին, որոնք սոսկ տակտիկական նպատակներ էին հետապնդում: Այլ կերպ ասած՝ հայ ժողովրդի ազգային ու պետական շահերը չէին համընկնում բոլշևիկյան աշխարհաքաղաքական ծրագրերին և պետք է զոհաբերվեին «համաշխարհային հեղափոխության» շահերին: Ուստի 1920 թ. մայիսին Հայաստանի խորհրդայնացումն իսկ նրան չէր փրկելու բիրտ ուժի պարտադրած տարածքային անխուսափելի կորուստներից:

7. ՍԵՎՐԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

1920 թ. ապրիլին Թուրքիայի հետ կնքվելիք հաշտության պայմանագրի նախագիծը մշակելու նպատակով Իտալիայի Սան Ռեմո քաղաքում գումարվեց կոնֆերանս Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Իտալիայի կառավարությունների ղեկավարների մասնակցությամբ: Ինչպես այստեղ, այնպես էլ Համաձայնության երկրների Գերագույն խորհրդի հաջորդ նիստերում գլխավոր հարցերից մեկը Հայկական հարցն էր: Ակնհայտ էր, որ գործնականում դյուրին չէր թղթի վրա Հայաստանին տրված տարածքներն ազատագրելու և նրան հանձնելու գործընթացը: Մուդրոսի զինադադարից հետո Թուրքական բանակը զինաթափելու գործնական քայլեր չէին արվել: Թեև նախատեսվող պայմանագրով Թուրքիայի ռազմական ուժերը ենթակա էին խիստ կրճատման, այնուհանդերձ անորոշ էր դրա իրականացման մեխանիզմը: Առավել ևս, որ ազատագրման ենթակա տարածքներում արդեն լայն ծավալ էր ստացել Մուստաֆա Քեմալի գլխավորած «Միլլի» շարժումը, որը զսպելու ազդեցիկ լծակներ տերությունները չունեին:

Ի վերջո, 1920 թ. օգոստոսի 10-ին Փարիզի Սևր արվարձանում ստորագրվեց Թուրքիայի հետ հաշտության պայմանագիրը: Այն մի կողմից ստորագրեցին Անգլիան, Ֆրանսիան, Իտալիան, Ճապոնիան և նրանց, այսպես կոչված, «փոքր» դաշնակիցները, մյուս կողմից՝ Թուրքիայի սուլթանական կառավարության ներկայացուցիչները: Պայմանագրի տակ «փոքր» դաշնակիցների շարքում դրված էր նաև Հայաստանի Հանրապետության պատվիրակության նախագահ Ա. Ահարոնյանի ստորագրությունը: Սևրի պայմանագրով Թուրքիան դադարում էր խոշոր պետություն լինելուց և միջազգային հարաբերությունների համակարգում նրան սահմանափակ դեր էր վերապահվում: Նրանից անջատվում էին արաբական երկրները: Կայսրության նախկին տարածքներում պետք է ստեղծվեին հայկական և քրդական պետություններ: Պայմանագրի VI բաժինը՝ 88-93-րդ հոդվածներով, ամբողջովին վերաբերում էր Հայաստանին: Թուրքիան ճանաչում էր Հայաստանը որպես ազատ և անկախ պետություն: ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնի իրավարարությանն էր հանձնը-

վում էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի նահանգներում Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանների որոշումը: Հայաստանը Տրապիզոնի վրայով ելք էր ստանում դեպի Սև ծով: Նրան սահմանակից Օսմանյան կայսրության տարածքները ենթակա էին ապառազմականացման: Թուրքիան պարտավորվում էր սահմանաորոշման մասին Վիլսոնի վճռից անմիջապես հետո հրաժարվել Հայաստանին անցած տարածքների նկատմամբ որևէ հավակնությունից: Ադրբեջանի և Վրաստանի հետ Հայաստանի սահմանները պետք է որոշվեին փոխադարձ համաձայնությամբ: Հակառակ պարագայում դաշնակից պետություններին էր վերապահվում ինչպես նրանց միջև սահմանների որոշումը, այնպես էլ սահմանագծումը տեղում: Ավելի ուշ՝ 1920 թ. նոյեմբերի 22-ին, երբ Հայաստանի Հանրապետությունն ապրում էր իր վերջին օրերը, Վիլսոնը հրապարակեց իրավարարի իր վճիռը, որով վերը նշված նահանգներում Հայաստանը ստանում էր 90 հազար քառ. կմ տարածք: Ռուսահայաստանի հետ միասին նրա տարածքը հասնում էր շուրջ 161.330 քառ. կիլոմետրի:

Սևրի պայմանագրով թեև չէին բավարարվում հայության առավելագույն պահանջները, սակայն, ըստ էության, սկզբունքային լուծում էր տրվում Հայկական հարցին: Կարծես իրականանում էր միացյալ Հայաստան ունենալու հայության դարավոր իղձը, և հայ ժողովուրդը հնարավորություն էր ստանում կերտել անկախ պետականություն եթե ոչ պատմական հայրենիքի ամբողջ տարածքում, ապա գոնե նրա մեծագույն մասում: Բայց պատմությունն այլ ճակատագիր էր կանխորոշել հայության համար, քանզի Սևրի պայմանագիրը ոչ միայն բարձրակետն էր նրա քաղաքական իղձերի իրականացման ճանապարհին, այլև սկիզբն այն գործընթացի, որն, ի վերջո, ավարտվեց Հայաստանի առաջին Հանրապետության անկմամբ: Տերությունները ճանաչում էին միացյալ Հայաստան ունենալու հայության իրավունքները, սակայն ի զորու չէին գործնական լուծում տալու դրան: Հարկ էր զենքի ուժով գրավել և Հայաստանին հանձնել նրան տրված տարածքները, քանզի արդեն անցել էր խաղաղ ճանապարհով դա իրականացնելու բարենպաստ պահը: Այն հնարավոր էր Փարիզի վեհաժողովի աշխատանքների առաջին շրջանում, երբ Թուրքիայում դեռևս չէր ծավալվել քեմալական շարժումը, և պարտված երկիրը հակված էր ընդունել իրեն պարտադրված պայմանները: Մինչդեռ վեհաժողովը հարկ համարեց անդրադառնալ Թուրքիայի հետ պայմանագրի խնդրին: Նախ՝ վեհաժողովն ինքն էլ կորցրել էր իր երբեմնի հեղինակությունն ու հմայքը, և նրա որոշումներն արդեն նախկին ակնածանքով չէին ընդունվում: Կտրուկ փոխվել էր իրավիճակը Թուրքիայում, որտեղ ծավալված քեմալական շարժումը դարձել էր լուրջ գործոն՝ երկրորդ պլան մղելով Սևրի պայմանագիրը ստորագրած սուլթանական կառավարությանը: Եվ, վերջապես, կարճատև բացակայությունից հետո, թեև գաղափարական այլ երանգներով, տարածաշրջան էր վերադարձել Ռուսաստանը, որը կատարվող իրադարձությունների վերաբերյալ ուներ իր վերաբերմունքը՝ սկզբունքորեն հակառակ Սևրի ոգուն: Նման պայմաններում պարզ էր, որ հակապատերազմական շարժումներով բռնկված Եվրոպան ու ԱՄՆ-ը չէին ցանկանում և նաև չէին կարող գործուն մասնակցություն բերել միացյալ Հայաստանի ստեղծմանը, առավել ևս խիստ ռազմատենչ անմիջական հարևաններից նրա սահմանների պաշտպանությանը:

Ստեղծված պայմաններում Սևրի պայմանագրին վիճակված չէր իրականանալ: Այն ոչ մի պետության կողմից չվավերացվեց: Մեծ տերությունները նախ հետաձգեցին դրա իրականացումը, իսկ հետագայում Թուրքիայի հետ կնքեցին Լոզանի դաշնագիրը՝ Հայկական հարցում կտրուկ շրջադարձ կատարելով Սևրի ոգուց: Այնուհանդերձ, Սևրի պայմանագիրը միջազգային միակ փաստաթուղթն է, որով ճանաչվում էր իր պատմական հայրենիքի մեծագույն մասի վրա պետականություն կերտելու հայ ժողովրդի անժամկետանց իրավունքը:

8. ՀԱՅԱՍՏԱՆԸ ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՌԱԶՄԱ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ

ա. Հայ-ռուսական հարաբերությունները: Անդրկովկասյան հանրապետությունների անկախության հռչակումից հետո Հայաստանի Հանրապետությունը զերծ մնաց իր հարևաններին համակած հակառուսական տրամադրություններից: Ավելին, հայությունը միակն էր Անդրկովկասում, որ մինչև վերջ դիմադրավեց հակառուսական դաշինք ստեղծելու առաջարկներին ու փորձերին: Հայկական հարցի լուծումը կապելով Անտանտի հետ և կողմնորոշվելով դեպի Եվրոպա՝ Հայաստանի Հանրապետությունը, դրանով հանդերձ, շարունակում էր կապեր պահպանել Ռուսաստանի տարածքում ստեղծված զանազան կառավարությունների և գրեթե բոլոր քաղաքական ուժերի հետ: 1918-1919 թթ., երբ դեռ անորոշ էր քաղաքացիական կռիվների ելքը Ռուսաստանում, հատկապես լավ հարաբերություններ էին ստեղծվել Ա. Դենիկինի գլխավորած Հարավային Ռուսաստանի կառավարության հետ, որի հնարավորություններն ավելի նախընտրելի էին համարվում: 1920 թ. սկզբներին, սակայն, ակնհայտ դարձավ Խորհրդային Ռուսաստանի առավելությունը: Կարմիր բանակը հայտնվեց Անդրկովկասի մատույցներում՝ ազդարարելով ռուսական գործոնի վերադարձը տարածաշրջան: Ադրբեջանի խորհրդայնացումը և Ռուսաստանի կողմից Վրաստանի անկախության ճանաչումը օրակարգում դրեցին Խորհրդային Ռուսաստանի հետ լավ հարաբերություններ հաստատելու խնդիրը: Այդ նպատակով դեռևս ապրիլի վերջին Լևոն Շանթի գլխավորությամբ կազմվեց պատվիրակություն, որը մայիսի 20-ին ժամանեց Մոսկվա:

Հայ-ռուսական բանակցությունները սկսվեցին 1920 թ. մայիսի 28-ին: Ռուսական կողմը ներկայացնում էին արտաքին գործերի ժողկոմ Գ. Չիչերինը և նրա տեղակալ Լ. Կարախանը: Հայկական կողմի համար կնքվելիք դաշնագրի առանցքային սկզբունքներ էին Ռուսաստանի կողմից Հայաստանի անկախության ու ինքնիշխանության ճանաչումը, նրա ներքին գործերին չմիջամտելու հանձնառությունը, գոնե սկզբունքով Արևմտյան Հայաստանի նկատմամբ Հայաստանի Հանրապետության իրավունքի ընդունումը և այլն: Շանթի վկայությամբ առաջին օրերին բանակցություններն ընթանում էին հաջող: Ռուսական կողմը պատրաստակամություն էր հայտնում ճանաչել Հայաստանի անկախությունը և չմիջամտել նրա ներքին գործերին: Ընդունվում էր նաև հայկական պահանջների արդարացի լինելը Զանգեզուրի և Ղարաբաղի հարցում: Ցանկություն էր հայտնվում իրավարարի դեր խաղալ հայ-թուրքական վեճում և Արևմտյան Հայաստանի խնդրում հանդես գալ Հայաստանի ու Մուստաֆա Քեմալի միջև իբրև միջնորդ: Այնուհանդերձ, ռուս-հայկական դաշնագրի ստորագրումը ձգձգվում էր: Չիչերինի առաջարկով հուլիսի 1-ին բանակցություններն ընդհատվեցին՝ Երևանում շարունակվելու պայմանով: Հետագա բանակցություններում ռուսական կողմը պետք է ներկայացներ Հայաստանում ՌԽՖՍՀ լիազոր ներկայացուցիչ նշանակված Բ. Լեգրանը:

Ռուս-հայկական դաշնագրի ստորագրման ձախողումը պատահական չէր և թելադրված էր մի շարք գործոններով: Ամենևին էլ Հայաստանի Հանրապետության «արևմտամետ» դիրքորոշումը չէ, որ որոշիչ դեր խաղաց այդ խնդրում, ինչպես կարծում են ոմանք: Նախ առկա էր ադրբեջանական գործոնը: Խորհրդայնացումից հետո Ադրբեջանը չհրաժարվեց նվաճողական նկրտումներից և այժմ դրանք փորձում էր իրականացնել բոլշևիկյան կարգախոսներով՝ ապավինելով ռուսական ռազմական ուժին: Ինչպես արդեն նշվել է, ռուսական 11-րդ բանակի հրամանատարության ճնշմամբ 1920 թ. մայիսի 25-ին Դրոն հարկադրված հեռացավ Ղարաբաղից, որն անմիջապես հայտնվեց Ադրբեջանի հսկողության ներքո: Առաջ քաշելով մուսուլման ազգաբնակչության շրջանում խորհրդային իշխանության հեղինակությունն ամրապնդելու թեզը՝ Ադրբեջանի ղեկավարությունը ամեն կերպ աշխատում էր խափանել «դաշնակցական» Հայաստանի և Խորհրդային Ռուսաստանի միջև պայմանագրի ստորագրումը և հասնել մնացած վիճելի տարածքների ռազմական նվաճման: Ադրբեջանի այդ քայլերը նկատի ուներ Շանթը, երբ Մոսկվայից կառավարությանն ուղղված հեռագրում հայտնում էր, որ Բաքվից ամեն կերպ աշխատում են խանգարել դաշնագրի կնքմանը:

Մոսկվայի բանակցությունները տեղի ունեցան մայիսյան ապստամբության ճնշումից հետո, Անդրկովկասի կոմունիստների շրջանում սկսված հակահայաստանյան հիստերիայի պայմաններում: Ըստ որում դեպքերին տրված գնահատականներում հայ բոլշևիկները հետ չէին մնում իրենց ադրբեջանցի գաղափարակիցներից: Ադրբեջանի կոմունիստների հետ ձեռք ձեռքի տված՝ հայ բոլշևիկները պահանջում էին դաշինք չկնքել Հայաստանում «բանվորների ու գյուղացիների կոմունիստական հեղափոխությունը» խեղդող և «կոմունիստներին անխնա կոտորող» կառավարության հետ: Մոսկվայում, որտեղ մինչ այդ Թուրք-թաթարական գործակալների հակահայկական քարոզչության հետևանքով ստեղծվել էր «իմպերիալիզմի գործակալ» Հայաստանի կերպարը, անշուշտ, նման գնահատականներն իրենց արձագանքը պետք է ունենային: Թեև ռուս-հայկական հարաբերությունների վերջնական արդյունքը կախված էր այլ, ավելի ազդեցիկ գործոններից (ռուս-Թուրքական մերձեցում, կայսրության նախկին սահմանների վերականգնման ձգտում), բայց վերը նշված հանգամանքներն, այնուամենայնիվ, իրենց կնիքն էին դնում իրադարձությունների ընթացքի վրա: Դրանք, բնականաբար, սառեցնում էին հայ-ռուսական հարաբերությունները և ստեղծում լարվածություն:

Լ. Շանթի պատվիրակության ուղևորությունը Մոսկվա ժամանակի առումով համընկավ բոլշևիկյան - քեմալական հարաբերությունների աշխուժացման և ընդհանուր շահերի հիմքի վրա Անտանտի դեմ դաշինքի ձևավորման առաջին քայլերի հետ: Արևելքում հեղափոխության ջահակրի դերը վերապահվում էր քեմալական Թուրքիային: Վերջինս իր հերթին հույս ուներ ստանալ Խորհրդային Ռուսաստանի ռազմատեխնիկական, ֆինանսական ու դիվանագիտական աջակցությունը: Իր ծրագրերի իրականացման ճանապարհին Ռուսաստանը պատրաստ էր ոչ միայն բավարարել քեմալականների այդ ակնկալիքները, այլև ընդառաջել նրանց տարածքային նկրտումներին: Նման պայմաններում Ադրբեջանում հաստատված բոլշևիկների և Արևմտյան Հայաստանը զավթած քեմալականների միավորման ճանապարհին միակ արգելքը Հայաստանի Հանրապետությունն էր, որ, բնականաբար, հայտնվում էր սեփական տարածքներն ու

անկախությունը կորցնելու սպառնալիքի առջև: Դեռևս 1920 թ. ապրիլի 26-ին Վ. Լենինին հղած նամակում չարադրելով Թուրքիայի արտաքին քաղաքականության դրույթները՝ Մուստաֆա Քեմալը չոչափել էր «իմպերիալիստական» Հայաստանի դեմ ռազմական գործողություններ սկսելու հարցը: Թեև հունիսի 3-ի պատասխան հուշագրում Ռուսաստանը պաշտպանում էր բանակցությունների միջոցով և ինքնորոշման ու արդարության սկզբունքներով հայ-Թուրքական սահմանային վեճը լուծելու գաղափարը, բայց, ինչպես հետագա դեպքերը ցույց տվեցին, հակված էր այդ հարցում հօգուտ Թուրքիայի զիջումներ կատարել: Դա հատկապես երևաց Հուլիսին Բեքիր Սամի բեյի գլխավորած քեմալական պատվիրակության Մոսկվա ժամանելուց հետո, երբ օգոստոսի 24-ին համաձայնեցվեց ռուս-Թուրքական «սրտագին ու անկեղծ բարեկամության» պայմանագրի նախագիծը: Դրանով Ռուսաստանը ճանաչում էր 1920 թ. հունվարին ընդունված «Ազգային ուխտը», որով Թուրքիա ասելով հասկանում էին այն բոլոր տարածքները, որոնք այդ «ուխտով» հայտարարվել էին Թուրքական: Այդ փաստաթղթով, ըստ էության, կանխորոշվում էր Արևմտյան Հայաստանի և Կարսի մարզի ճակատագիրը:

Ռուս-Թուրքական մերձեցման գործընթացն, անշուշտ, բացասաբար էր ազդում ռուս-հայկական բանակցությունների վրա՝ հետզհետե ավելի կարծրացնելով Խորհրդային Ռուսաստանի դիրքորոշումը Հայաստանի նկատմամբ: Լ. Շանթի առաքելության ձախողման գլխավոր գործոնը, այնուհանդերձ, Ռուսաստանի ազգային քաղաքականության ոլորտում կատարվող սկզբունքային փոփոխություններն էին: Նախորդ տարիներին հռչակած ազգերի ինքնորոշման սկզբունքից վերադարձ էր կատարվում դեպի կայսերապետական քաղաքականություն: Գաղափարախոսական այլ կարգախոսներով էր ընթանում կայսրության վերականգնման և քաղաքացիական պատերազմի տարիներին նրանից անջատված երկրամասերի միավորման գործընթացը: Անդրկովկասում այդ ուղղությամբ առաջին քայլը խորհրդայնացման ճանապարհով Ադրբեջանի գրավումն էր: Ինչ վերաբերում էր Հայաստանին և Վրաստանին, ապա նրանց անկախության վերացումը պարզապես ժամանակի հարց էր:

Ռուսաստանի կողմից Վրաստանի անկախության ճանաչումը և նույն նպատակով Հայաստանի հետ ընթացող բանակցությունները սոսկ մարտավարական խնդիրներ էին հետապնդում: Մասնավորապես, ձգձգելով Հայաստանի հետ վարվող բանակցությունները, Ռուսաստանը ձգտում էր հնարավորինս ծանր պայմաններ թելադրել նրան և ի վերջո կանգնեցնել խորհրդայնացման անհրաժեշտության առջև:

Մոսկվայում ընդհատված ռուս-հայկական բանակցությունները շարունակվեցին Երևանում: Բայց մինչ այդ ժամանակն աշխատում էր ամենևին էլ ոչ Հայաստանի Հանրապետության օգտին: Զբավարարվելով Ղարաբաղով՝ ռուսական զորքերը հուլիսին ներխուժեցին Զանգեզուր, ապա՝ Նախիջևան: Դրանով իրականացվեց ռուսական, ադրբեջանական և քեմալական ուժերի միավորումը: Սկսվեց խորհրդային բանակի առաջխաղացումը նաև Ղազախի ուղղությամբ: Հայաստանի սահմանների ամբողջ երկայնքով ընթացող ռուս-հայկական բախումների պայմաններում Թիֆլիսում օգոստոսի 10-ին Լեգրանի և Հայաստանի ներկայացուցիչների միջև ստորագրվեց հաշտության համաձայնագիր: Դրանով դադարեցվում էին ռազմական գործողությունները Ռուսաստանի և Հայաստանի միջև: Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը գրավում էին ռուսական զորքերը: Այդ «վիճելի տարածքների» պատկանելության հարցը վերջնականապես պետք է որոշվեր Հայ-ռուսական կնքվելիք դաշնագրով:

բ. Թուրք-հայկական պատերազմը: Քեմալա-բոլշևիկյան մերձեցումը 1920 թ. աշնանը սկսեց տալ իր դառը պտուղները: Քեմալական Թուրքիայի և Խորհրդային Ռուսաստանի ճիրաններում սեղմված Հայաստանը հայտնվեց քաղաքական աղետի առաջ: Մուստաֆա Քեմալի գլխավորած «Միլլի» շարժումը չէր հաշտվում Սևրի դաշնագրով Թուրքիային պարտադրված տարածքային կորուստների հետ: Դա բարդացնում էր մինչ այդ էլ Թուրքական վտանգին ենթակա Հայաստանի վիճակը: Սևրի դաշնագրի ստորագրումից հետո այդ վտանգը պարզապես սպառնալից դարձավ: Քեմալականները Հայաստանի հետ սահմանային հարցերում ղեկավարվում էին ուժը կորցրած Բրեստ-Լիտովսկի և Բաթումի դաշնագրերով: Օղակելով Հայաստանը՝

նրանք պատրաստվում էին վերացնել «հայկական սեպը»: Առերևույթ հանդես գալով հակաիմպերիալիստական կարգախոսներով և Արևելքի «ճնշված ու շահագործվող ժողովուրդների» անունից՝ քեմալական շարժումն իրականում ուղղված էր Օսմանյան կայսրության ճնշված ժողովուրդների ազատագրական ձգտումների դեմ: Զինվելով կեղծ հեղափոխականությամբ՝ այդ շարժումը կարողանում էր չահարկել Անտանտի հետ Ռուսաստանի հակասությունները:

Դեռևս 1920 թ. հունիսին քեմալական բանակները պատրաստ էին Հայաստանի վրա հարձակվելու: Միայն Ռուսաստանի համաձայնության բացակայությունը և հունական ճակատում տեղի ունեցող իրադարձություններն էին, որ զսպում էին Թուրքերի եռանդը: Դրանով հանդերձ, ամբողջ թափով ընթացքի մեջ էր Հայաստանի դեմ քարոզչական պատերազմը:

Հակահայկական քարոզչության գործիք դարձավ հատկապես սեպտեմբերին Բաքվում Կոմինտերնի նախաձեռնությամբ գումարված Արևելքի ժողովուրդների առաջին համագումարը: Վերջինիս մասնակիցների թվում էին երիտթուրք պարագլուխներ Խալիլ փաշան, Բեհաէդդին Շաքիրը և հայ ժողովրդի ուրիշ ջարդարարներ: Նույն օրերին Բաքվում էր գտնվում հայ ժողովրդի երդվյալ թշնամի Էնվեր փաշան: Այս համաժողովում է, որ բացահայտ հակահայկական որոշումների կողքին գործնական ձև ստացավ Հայաստանի դեմ պատերազմը խորհրդայնացմամբ ավարտելու հստակ նպատակադրումը: Համագումարի քարոզչության և գործողության խորհուրդը մշակեց մի փաստաթուղթ, որում Հայաստանը, իբրև «անգլիական իմպերիալիզմի գործակալ», մեղադրվում էր Անգլիայի և Պարսկաստանի հետ Խորհրդային Ադրբեջանի վրա հարձակվելու մտադրության մեջ: Առաջարկվում էր Արևելքում հեղափոխությունը փրկելու նպատակով նախահարձակ լինել Հայաստանի վրա: Վճռական հարվածը վերապահվում էր քեմալական բանակին: Հայաստանի ակնհայտ պարտության պայմաններում հայ ժողովրդին ֆիզիկական բնաջնջումից «փրկելու» պատրվակով այստեղ պետք է մտնեին ռուսական զորքերը, որոնք, իբրև «ազատարարներ», պետք է խորհրդայնացնեին Հայաստանի՝ Թուրքական բռնազավթումից զերծ մնացած մասը: Կայացված համաձայնությամբ

Թուրքական ուժերը պետք է գրավեին Սարիղամիշ-Շահթախթ գիծը, որը նրանց հնարավորություն կտար Հայաստանի երկաթուղին օգտագործել ռուսական ռազմական օգնությունը Թուրքիա փոխադրելու համար: Այսպիսով, ավարտված էին Հայաստանի դեմ պատերազմի ռազմական ու դիվանագիտական պատրաստությունները, և Բաքվից վառած կանաչ լույսն ազդանշան հանդիսացավ քեմալական ուժերի առաջխաղացման համար:

1920 թ. սեպտեմբերի 28-ին Թուրքական բանակն անցավ ընդհանուր հարձակման: Սկսվեց Թուրք-Հայկական պատերազմը: Այս ամենից հետո բացարձակ կեղծիք և ցինիզմ էր հոկտեմբերի 23-ին Անատոլիական գործակալության տարածած պաշտոնական հաղորդագրությունը, որում Հայաստանի Հանրապետությունը մեղադրվում էր իր տարածքում թուրքական բնակավայրերի ավերման, թուրք բնակչության զանգվածային ջարդեր կազմակերպելու, նախահարձակ լինելու և այլ հանցանքների մեջ:

Պատերազմը Հայաստանի համար անհաջող սկսվեց: Հակառակորդի գերակշիռ ուժերին դիմակայելով հանդերձ՝ հայկական ուժերը սեպտեմբերի 29-ին թշնամուն հանձնեցին Սարիղամիշն ու Կաղզվանը: Դրանից հետո էլ թուրքական բանակը կանգ չառավ: Ստեղծված ծանր պայմաններում Հայաստանի կառավարությունը փորձեց համախմբել ուժերը՝ թշնամուն հակահարված տալու համար: Սեպտեմբերի 30-ին երկրում ռազմական դրություն հայտարարվեց: 20-37 տարեկան տղամարդիկ բանակ զորակոչվեցին: Դասալքության դեմ խիստ օրենքներ սահմանվեցին: Զինվորական նախարարության ենթակայության ներքո դրվեցին երկաթուղիները, ռադիոկայանները և փոխադրամիջոցները: Հեղինակավոր պետական ու քաղաքական գործիչներ գործուղվեցին ռազմաճակատ և գավառներ: Կառավարությունը հանդես եկավ ժողովրդին ուղղված կոչով, որը լայն արձագանք գտավ բնակչության շրջանում: Քաղաքական հիմնական ուժերը և հասարակական բոլոր խավերը զորակցություն հայտնեցին կառավարությանը: Բացառություն կազմեցին միայն հայ բոլշևիկները:

Հայաստանը փորձում էր Թուրքիայի դեմ պայքարում Վրաստանի հետ սերտ դաշինք ստեղծել: Այդ ձգտումը հատկապես դրսևորվեց Թուրք-Հայկական պատերազմի օրերին: 1920 թ. հոկտեմբերին Հայաստանի ռազմական նախարար Ռ. Տեր-Մինասյանը Թիֆլիսում բանակցություններ էր վարում Վրաստանի կառավարության հետ՝ Թուրք-բոլշևիկյան վտանգի դեմ ընդհանուր ճակատ ստեղծելու համար, որում Վրաստանին էր վերապահվում բոլշևիկների դեմ պայքարի ճակատը: Բայց Վրաստանը գերադասեց չեզոքություն պահպանել, որը, ինչպես և սպասվում էր, բավարար չէր հետագայում նրա անկախությունը ապահովելու համար: Դրանով հանդերձ, նախապես ստանալով Հայաստանի կառավարության համաձայնությունը, Վրաստանը 1920 թ. նոյեմբերին իր տարածք հրավիրեց Լոռու «Չեզոք գոտին» և այնտեղ զորք մտցրեց՝ բացառելու համար դրա նվաճումը քեմալական զորքերի կողմից: Թեև Հայաստանի խորհրդայնացումից հետո այդ տարածքն, ի վերջո, մնաց Հայաստանին, բայց հակառակը՝ Ախալքալաքը միացվեց Վրաստանին:

Հայաստանի համար բախտորոշ այդ օրերին նյութական ու դիվանագիտական աջակցություն ստանալու ակնկալիքով դիմումներ հղվեցին Թիֆլիսում գտնվող անգլիական, ֆրանսիական և իտալական դիվանագիտական ներկայացուցիչներին: Իսկ հոկտեմբերի 8-ին հայ ժողովրդի անունից կառավարությունը դիմեց ամբողջ քաղաքակիրթ մարդկությանը: Ստացվեցին համակրական պատասխաններ, բայց ոչ գործնական աջակցություն: Հայասիրական ճառերով բավարարվեց նաև Ազգերի լիգան: Ավելին, այդ օրհասական օրերին քննարկելով Հայաստանն ու Վրաստանը իր կազմի մեջ ընդունելու հարցը, Ազգերի լիգան մերժողական պատասխան տվեց, որպեսզի ստիպված չլինի, իր կանոնակարգի համաձայն, օգնել նրանց: Գործնական աջակցություն չստացվեց նաև դաշնակից երկրներից: Հայտնելով, որ Անգլիան ոչնչով չի կարող օգնել հայերին, անգլիական ներկայացուցիչ Կ. Ստոքսը իր կառավարության անունից հայկական կառավարությանը խորհուրդ էր տալիս հաշտություն կնքել թուրքերի հետ: Գործնական արդյունք չունեցավ նաև ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնի՝ հայ-թուրքական վեճում իրավարարի դեր ստանձնելու հայտարարությունը: Այսպիսով, լքվելով բոլորից, Հայաստանը միայնակ մնաց ոխերիմ թշնամու դեմ: Վստահ

լինելով, որ Հայաստանը որևէ տեղից աջակցություն չի ստանա, Թուրքերը շարունակեցին հարձակումը:

Թուրքական բանակի գլխավոր ուժը Քյազիմ Կարաբեքիրի հրամանատարության ներքո գտնվող 15-րդ կորպուսն էր, որի 4 դիվիզիաներում ընդգրկված էր շուրջ 30 հազար զինվոր, ինչպես նաև Թուրքական ու քրդական բազմաքանակ անկանոն ուժեր: Թեև պաշտոնական տվյալներով հայկական բանակը հաշվվում էր շուրջ 40 հազար, բայց ռազմաճակատում կռվող ուժերի թիվը շատ ավելի սահմանափակ էր: Թուրք-հայկական պատերազմն ընթանում էր երկու ռազմաճակատներում: Գլխավոր ռազմաբեմը Կարս-Ալեքսանդրապոլն էր, որի հրամանատարը Մովսես Սիլիկյանն էր: Պատերազմի սկզբում հայկական ուժերն այստեղ հաշվվում էին 3500 հոգի, սակայն գնալով նրանց թիվն աճեց՝ հասնելով ավելի քան 8000-ի: Սուրմալուի ռազմաճակատը գլխավորում էր Դրոն: Սկզբում նա ուներ շուրջ 2500 զինվոր, ավելի ուշ այդ թիվն անցավ 4500-ից: Թուրքական ռազմաճակատում հայկական ուժերի համեմատաբար սակավաթիվ լինելը բացատրվում էր նրանով, որ այդ ծանր օրերին, բոլշևիկյան ներխուժման սպառնալիքը նկատի ունենալով, Հայաստանը ստիպված էր զգալի ուժեր պահել նաև Նախիջևանի և Դիլիջան-Ղազախի սահմանամերձ շրջաններում:

Պատերազմի հետագա ընթացքը նույնպես անհաջող էր Հայաստանի համար: Սակայն վերապահումով պետք է ընդունել այն տեսակետը, թե հայկական բանակը Թուրքերին դիմադրություն ցույց չի տվել: Հատկապես կատաղի մարտեր եղան Սուրմալուի ճակատում: Սուրմալուն գրավելու նպատակով հոկտեմբերի 20-ին Թուրքերի ձեռնարկած հարձակումը հետ մղելով՝ հայկական ուժերն այստեղ հոկտեմբերի 26-ին հակահարձակման անցան: Թշնամին այս ուղղությամբ այլևս ակտիվություն չցուցաբերեց: Ցավոք, դեպքերն այլ կերպ ընթացան Կարսի ճակատում: Զորքերի մարտական ոգին բարձրացնելու նպատակով հոկտեմբերի 14-ին հայկական ուժերի հարձակման փորձը հաջողություն չունեցավ: Նախաձեռնությունն անցավ հակառակորդին, որը, համալրելով ու վերադասավորելով ուժերը, հոկտեմբերի 28-ին դիմեց ընդհանուր հարձակման և ընդհուպ մոտեցավ Կարսին: Ջնայած նախորդ օրերին բարձրագույն հրամա-

նատարության հավաստիացումներին՝ Կարսը ցույց չտվեց սպասվող դիմադրությունը: Հայկական ուժերի հակահարձակման նոր փորձը դարձյալ ձախողվեց: Հայ բոլշևիկների հակապատերազմական քարոզչության ազդեցության տակ առաջին գունդը մերժեց կատարել հարձակման հրամանը: Նրա հրամանատար գնդապետ Մազմանյանի հուսահատ ինքնասպանությունը չփոխեց վիճակը: Հետևեց Թուրքական ուժեղ գրոհը, և հոկտեմբերի 30-ի առավոտյան հակառակորդը մտավ Կարս: Շուրջ 2000 զինվոր և զինվորական ու քաղաքացիական բարձրաստիճան գործիչներ գերի ընկան: Երեք օր տևած կոտորածին զոհ գնացին հազարավոր մարդիկ:

Այդ նույն ժամանակ Երևանի հայ-ռուսական բանակցությունները Լեզրանի պատվիրակության ուշ ժամանման պատճառով վերսկսվեցին միայն հոկտեմբերի 12-ին՝ Հայաստանի համար խիստ անբարենպաստ պայմաններում. Թուրքիայի հետ անհաջող պատերազմը իր կնիքն էր դնում բանակցությունների ընթացքի վրա: Ռուսական կողմը Հայաստանից պահանջում էր հրաժարվել Սևրի դաշնագրից, խորհրդային զորքերին թույլ տալ իր հաղորդակցության ուղիներն օգտագործել Մուստաֆա Քեմալի զորքերին միանալու համար և հարևանների հետ սահմանավեճը լուծել Ռուսաստանի միջնորդությամբ: Ռուսական պահանջների առաջին կետը մերժվեց, մյուսների շուրջ բանակցությունները շարունակվեցին մինչև հոկտեմբերի 21-ը և մշակվեց դաշնագրի նախագիծ: Հոկտեմբերի 28-ին ստորագրվեց հայ-ռուսական բանակցությունների ավարտի և արդյունքների մասին արձանագրություն: Պայմանագրի նախագծով Հայաստանի անբաժան մաս էին համարվում Երևանի և Կարսի նահանգներն ամբողջությամբ, Զանգեզուրը, Ղազախն ու Լոռին: Հայաստանը փաստորեն հրաժարվում էր Ղարաբաղի նկատմամբ պահանջներից: Թուրքական զորքերը պետք է հետ քաշվեին մինչև 1914 թ. սահմանները: Թուրքիան պետք է ճանաչեր Հայաստանը հայ-ռուսական պայմանագրով նախատեսված սահմաններով: Ռուսաստանը պետք է Հայաստանին տրամադրեր 2,5 մլն ռուբլի (ոսկով): Հայաստանը, իր հերթին, թույլ էր տալու Ռուսաստանին իր երկաթուղիներով զորք և զինամթերք փոխադրել Թուրքիա:

39-54

Հայ-ռուսական պայմանագիրը ենթադրվում էր ստորագրել Բաքվի և Մոսկվայի հետ նրա տեքստը վերջնականորեն համաձայնեցնելուց հետո: Լեգրանն այդ նպատակով մեկնեց Բաքու: Պայմանագրի նախագիծը և հոկտեմբերի 28-ի արձանագրությունը նոյեմբերի 4-ին քննարկվում են ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյի և Ադրբեջանի կոմկուսի քաղբյուրոյի համատեղ նիստում, ուր բացասական որոշում է կայացվում Զանգեզուրն ու Նախիջևանը Հայաստանին միացնելու խնդրի վերաբերյալ: Նման որոշման ընդունման գործում վճռական դեր են խաղացել այդ ժամանակ Բաքվում գտնվող Ի. Ստալինը և Գ. Օրջոնիկիձեն: Քննարկման հաջորդ օրը Չիչերինին հղած հեռագրում նրանք առաջարկում էին մանրամասն ուսումնասիրել և էականորեն փոխել Հայաստանի հետ կնքվելիք պայմանագրի տեքստը: Օգտվելով այդ օրերին Հայաստանի օրհասական վիճակից և մի կողմ նետելով դիվանագիտական կեղծ խաղերը՝ Անդրկովկասում ռուսական քաղաքականությունը վարող վերը նշված գործիչները որոշեցին նրան խորհրդայնացում պարտադրել:

Կարսի աղետն, ըստ էության, կանխորոշել էր պատերազմի ելքը: Կողմերը պարզորոշ ըմբռնում էին դա և համարյա միաժամանակ միմյանց հաշտության առաջարկ արեցին: Նոյեմբերի 6-ին Քյազիմ Կարաբեքիրը ներկայացրեց զինադադարի պայմանները: Հայկական ուժերը պարտավոր էին թողնել Ալեքսանդրապոլը և նահանջել Ախուրյան գետից առնվազն 15 կմ արևելք: Հայկական կողմը նոյեմբերի 7-ին իր ուժերը հետ քաշեց Ջաջուռի ու Աղին կայարանի ուղղությամբ: Նոյեմբերի 8-ին, սակայն, Քյազիմ Կարաբեքիրը ներկայացրեց յոթ կետից բաղկացած նոր՝ շատ ավելի ծանր պայմաններ. Հայաստանից պահանջվում էր հայկական ուժերի նահանջ դեպի երկրի խորքերը և 24 ժամվա ընթացքում մեծաքանակ զենքի ու ռազմամթերքի հանձնում: Նոյեմբերի 10-ին Երևանում ստացվեց Անկարայի կառավարության մի հաղորդագրություն, որում ներկայացվում էին Թուրք-հայկական դաշնագրի հիմնական կետերը, որոնց ընդունումը հավասարազոր էր Հայաստանի անկախության ոչնչացման: Նոր պայմանները համարելով զինադադարի խախտում՝ հայկական կողմը վճռականորեն մերժեց դրանք: Նոյեմբերի 11-ին ռազմական գործողությունները վերսկսվեցին, և Թուրքերը հարձակման անցան Ջաջուռի ուղղությամբ: Մի չաբաթ տևած կռիվները կրկին աննպաստ էին Հայաստանի համար: Որոշվեց ընդունել թուրքական պայմանները: Նոյեմբերի 18-ին ստորագրվեց զինադադար: Հաշտության պայմանագիր կնքելու համար Ալ. Խատիսյանի գլխավորությամբ հաշտարար պատվիրակություն մեկնեց Ալեքսանդրապոլ:

Թուրք-հայկական պատերազմում Հայաստանի պարտությունը բացատրվում էր արտաքին և ներքին հանգամանքներով: Նախ, միջազգային իրավիճակը խիստ անբարենպաստ էր Հայաստանի համար: Դաշնակիցների կողմից լքված՝ նա մնաց մենակ բիրտ ուժերի հանդեպ: Բոլշևիկ-քեմալական համագործակցության պայմաններում ուժերի անհավասարությունն այնքան ակնհայտ էր, որ գործնականում բացառվում էր Հայաստանի հաղթանակը:

Դրանով հանդերձ, Հայաստանը ցույց չտվեց պատշաճ դիմադրություն, որ ռազմական առկա ներուժի պայմաններում միանգամայն հնարավոր էր: Այդ դեպքում նա պատերազմից դուրս կգար նվազագույն կորուստներով: Հայկական բանակը չարդարացրեց իր վրա դրված հույսերը: Հատկապես պատերազմի վերջին շրջանում տիրապետող դարձան չփոթությունն ու հուսալքությունը, որոնք ուղեկցվեցին զանգվածային դասալքությամբ, հատկապես Կարսի գլխավոր ճակատում: Պատմագիտության մեջ հայկական բանակի ցածր մարտունակության պատճառները բացատրելու փորձեր են կատարվել: Նշվել են բոլշևիկների մայիսյան ապստամբությունից հետո բանակի մարտունակության անկումը, թուրք-թաթարական խռովությունների ճնշման գործընթացում ռազմական ուժերի թուլացումն ու հոգնածությունը, բոլշևիկյան ներխուժման վտանգի պատճառով բանակի ջլատումը, պատերազմի առաջին շրջանում զինվորների մի մասի հողագործական աշխատանքներով զբաղված լինելը, նորակոչիկների ռազմական վատ պատրաստությունը, Անգլիայից նոր ստացված զենքին վարժված չլինելը, զորքի ու ժողովրդի շրջանում բոլշևիկների քայքայիչ աշխատանքը, հատկապես Կարսի ճակատում բարձր հրամանատարական կազմի վատ փոխհարաբերությունները, օբյեկտիվ ու սուբյեկտիվ բնույթի այլ հանգամանքներ:

Զհակադրվելով վերը նշվածին՝ հարկ է, սակայն, որպես հավելում անդրադառնալ ևս մեկ հանգամանքի: Չնայած ձեռնարկված ջանքերին, ցավոք, պատերազմը չստացավ համաժողովրդական հնչեղություն: Հայությունը չդրսևորեց բացարձակ միասնականություն ու համերաշխություն, ինչպիսին ի հայտ էր բերել 1918 թ. մայիսյան հերոսամարտերի օրերին: Հատկապես բարձրության վրա չգտնվեց ճակատամերձ շրջանի բնակչությունը: Նա ենթարկվեց խուճապի, որը բացասաբար ազդեց զորքի տրամադրության վրա: Այդ հանգամանքը բացատրվում է նրանով, որ հանրապետությունում անընդհատ տեղի ունեցող ներքին և արտաքին բախումները խիստ հոգնեցրել էին ժողովրդին՝ նրան մղելով խաղաղ օրերի երազանքին: Ստեղծված պայմաններում Անդրկովկաս մտած ռուսական խորհրդային ուժերը, ավանդույթի ուժով, ընկալվում էին որպես կայունության երաշխավորներ: Բնական է, որ նման մտայնությունը դրսևորվում էր նաև բանակում: Ժողովրդի ու զորքի այդ պարտվողական հոգեբանությունը օգտագործեցին հայ բոլշևիկները: Ռուսաստանի դաշնակից քեմալական բանակը նրանք ներկայացնում էին որպես «կարմիր Տաճկաստանի հեղափոխական բանակ, որը գալիս է ազատագրելու հայ ժողովրդին իմպերիալիզմի գործակալ դաշնակների լծից»: Ալեքսանդրապոլի բոլշևիկները դիմեցին ամենածայրահեղ քայլի. Թուրքերի կողմից օկուպացված Ալեքսանդրապոլում նրանք հռչակեցին խորհրդային իշխանություն և համագործակցեցին Թշնամու հետ: Մասամբ բոլշևիկյան քարոզչության հետևանքով առաջացած պարտվողական տրամադրությունները, մասամբ էլ զորքի մի մասի մեջ տիրող այն մտայնությունը, թե իրենք կռվում են ռուս-թուրքական միացյալ ուժերի դեմ, հետևապես ավելորդ է հետագա դիմադրությունը, կանխորոշեցին հայկական բանակի մարտունակության լիակատար անկումը և նրա ծանր պարտությունը Թուրք-հայկական պատերազմում:

9. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ

Թուրք-հայկական պատերազմում Հայաստանի բանակի կրած պարտությունը խիստ սրեց Հանրապետության ներքին իրավիճակը: Տարածքային հսկայական կորուստները, Հանրապետության համար կենսական նշանակություն ունեցող երկաթուղու վրա թուրքական հսկողության հաստատումը, բազմահազար գաղթականության ու բարոյալքված զորամասերի կենտրոնացումը Հայաստանի ձեռքում մնացած չնչին տարածքի վրա, պատերազմի անբաժան ուղեկիցներ հանդիսացող տնտեսական ու ֆինանսական քայքայումը երկիրը կանգնեցրին քաղաքական աղետի առաջ:

Քեմալական Թուրքիան և Խորհրդային Ռուսաստանը ձգտում էին տրամաբանական ավարտին հասցնել Հայաստանի վերաբերյալ իրենց ծրագրերը: Նրանց աքցաններում սեղմված հայկական պետականությունն ապրում էր վերջին օրերը: Երկրի անկախ գոյությունը երկարաձգելու համար Հանրապետության կառավարությունը մի կողմից Ալեքսանդրապոլում Թուրքերի հետ բանակցություններ էր վարում հայրենիքի վերջին փչրանքները փրկելու համար, մյուս կողմից՝ տուրք տալով ժողովրդական ձգտումներին՝ փորձում էր ստանալ ռուսական օժանդակությունը: Երկու դեպքում էլ իրավիճակը հրամայաբար թելադրում էր պատերազմում պարտված և ժողովրդի աչքում հեղինակազրկված կառավարության հրաժարականը և քաղաքական նոր ուժերի կողմից երկրի ապագայի համար պատասխանատվության ստանձնումը: Նոյեմբերի 23-ին խորհրդարանն ընդունեց Հ. Օհանջանյանի կառավարության հրաժարականը: Մեկ օր անց՝ իր վերջին նիստում, խորհրդարանը հաստատեց Ս. Վրացյանի կառավարության կազմը, որը գործելով ծայրահեղ բարդ պայմաններում՝ գոյատևեց ընդամենը մեկ տասնօրյակ:

Ալ. Խատիսյանի պատվիրակության միջոցով նոյեմբերի 25-ին Ալեքսանդրապոլում ուղղակի բանակցություններ սկսելով Թուրքերի հետ՝ կառավարությունը, սակայն, գործունեության առանցք դարձրեց Ռուսաստանի հետ հարաբերությունների կարգավորումը: Իր կազմում ունենալով ռուսամետ դաշնակ-

ցականներ ու էսէռ գործիչներ՝ նա ակնհայտորեն աշխատում էր ընդհանուր լեզու գտնել և սերտ հարաբերություններ հաստատել Ռուսաստանի հետ՝ ապահովելով վերջինիս աջակցությունը: Բայց, մի կողմ նետելով նախկին ձևականությունները, Ռուսաստանը հստակորեն վարեց Հայաստանը խորհրդայնացնելու գիծ: Ռուսական քաղաքականության մեջ այդ գիծը պարզորոշ դրսևորվեց Բ. Լեգրանի և Թուրքերի հետ բանակցությունների միջնորդ նշանակված Բ. Մդիվանու Երևան ժամանելուց հետո: Ալ. Խատիսյանի պատվիրակության Ալեքսանդրապոլ մեկնելուց առաջ՝ նոյեմբերի 22-ին, կայացած կառավարության նիստում, որին հրավիրվել էին նաև վերը նշված գործիչները, նրանց առջև դրվեց Հայաստանին աջակցություն ցույց տալու հարցը: Դրական պատասխանելով հանդերձ՝ Լեգրանն անմիջապես դրեց Ադրբեջանից Հայաստան կարմիր բանակի երկու գունդ մտցնելու հարցը: Դա փաստորեն խորհրդայնացման անուղղակի առաջարկ էր, որին բացասական պատասխան տրվեց: Հետագա դեպքերը բացահայտեցին նաև ռուսական միջնորդության ոչ անկեղծ կամ անիրատես լինելը: Թուրքերը վճռաբար մերժեցին Մդիվանու միջնորդական մասնակցությունը և կտրականորեն հայտարարեցին, որ բանակցություններ կարող են լինել միայն հայերի և իրենց միջև: Հայկական կողմը ստիպված էր համակերպվել: Ալեքսանդրապոլի բանակցությունները սկզբից ևեթ ընթացան որպես հաղթողի ու պարտվողի բանակցություններ՝ դրանից բխող ծանր հետևանքներով: Ինչ վերաբերում է Մդիվանուն, ապա, Ալ. Խատիսյանի վկայությամբ, հետագա օրերին նա ավելի շատ զբաղված էր Ալեքսանդրապոլում հանրահավաքներ կազմակերպելով և Հայաստանի խորհրդայնացումը նախապատրաստելով:

Ալեքսանդրապոլի բանակցություններին զուգահեռ՝ Երևանում շարունակվում էին բանակցությունները Ս. Վրացյանի և Բ. Լեգրանի միջև: Դրանք անպտուղ էին և ակնհայտ դարձավ, որ անգամ ռուսամետ կառավարությունը չի կարող ապահովել Ռուսաստանի հետ բարեկամական կապերի հաստատումը և հանրապետության անկախության պահպանումը: Լեգրանը պահանջում էր մեկընդմիշտ հրաժարվել Եվրոպայից, խաչ քաշել Սևրի պայմանագրի վրա և հույսերը կապել միայն Խորհրդային

Ռուսաստանի հետ: Առերևույթ ցուցադրելով բարյացակամ կեցվածք և Հայաստանին օգնելու պատրաստակամություն՝ նա առաջարկում էր մերժել Թուրքերի պահանջները, Ալեքսանդրապոլից հետ կանչել Խատիսյանի պատվիրակությունը և ռուսական զորք մտցնել Հայաստան: Դրանով հանդերձ՝ նա որևէ երաշխիք չէր տալիս, որ նման քայլի դեպքում Թուրքերը հաշվի կնստեն ռուսների հետ և չեն գրավի երկրի մնացած մասը: Դա կառավարությանը հարկադրում էր շարունակել բանակցությունները Թուրքերի հետ: Իսկ վերջիններս խիստ անզիջող էին և խոսում էին վերջնագրերի լեզվով:

Հայ-ռուսական բանակցություններն ի վերջո ավարտվեցին անարդյունք: Ռուսաստանն անցավ բացահայտ դիվանագիտական ճնշման: Նոյեմբերի 29-ին Լեգրանը վերջնագրի ձևով Հայաստանի կառավարությանը հայտարարեց, որ «Ռուսաստանի կոմունիստական կուսակցության կենտրոնական Կոմիտեն որոշել է Հայաստանում հաստատել խորհրդային կարգեր...»: Իսկ հաջորդ օրը նա Հայաստանի խորհրդայնացման գրավոր պահանջ ներկայացրեց: Այդ դեպքերին նախորդել էր նախապատրաստական աշխատանք: Դեռևս նոյեմբերի կեսերին Ադրբեջանում գտնվող հայ բոլշևիկների ներկայացուցիչներից Բաքվում ստեղծվել էր Հայաստանի հեղկոմ՝ Սարգիս Կասյանի գլխավորությամբ: Տեղափոխվելով Ղազախի շրջան՝ հեղկոմը նոյեմբերի 29-ին մի զորամասի ուղեկցությամբ մտավ Ադրբեջանին սահմանակից Իջևան գյուղը, որտեղ նույն օրը հրապարակած հռչակագրով տեղի չունեցած բանվորագյուղացիական ապստամբության անունից տապալված հայտարարեց «դաշնակցականների կառավարությունը» և Հայաստանը հռչակեց Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն: Հաջորդ օրը, Վ. Լենինին ողջույնի հեռագիր ուղարկելով՝ հեղկոմը Ռուսաստանից ռազմական օգնություն խնդրեց: Նույն օրը դեպքերի ընթացքի վրա ազդելու նպատակով Ադրբեջանի հեղկոմը հանդես եկավ մի հայտարարությամբ, որով հօգուտ Խորհրդային Հայաստանի Ադրբեջանը հրաժարվում էր Զանգեզուրի, Լեռնային Ղարաբաղի և Նախիջևանի նկատմամբ ունեցած հավակնություններից: Հետագա դեպքերը, սակայն, ցույց տվեցին այդ հայտարարության կեղծ լինելը:

Հայտնվելով, մի կողմից, Թուրքական բացահայտ ռազմական ճնշման, մյուս կողմից՝ խորհրդայնացման անխուսափելիության առաջ՝ Հայաստանի կառավարությունը տեղի տվեց: Կառավարության, Դաշնակցության բյուրոյի և խորհրդարանի դաշնակցական ֆրակցիայի համատեղ խորհրդակցությունում որոշվեց ընդունել ռուսական առաջարկը: Մյուս կողմից, վտանգավոր զարգացումներից խուսափելու համար Խատիսյանի պատվիրակությանը լիազորվեց ընդունել Թուրքական պայմանները և ստորագրել հաշտության պայմանագիրը:

Նոյեմբերի 30-ին Լեգրանի և Հայաստանի կառավարության ներկայացուցիչներ Դրոյի ու Հ. Տերտերյանի միջև Երևանում սկսված բանակցությունները դեկտեմբերի 2-ին ավարտվեցին համաձայնագրի ստորագրմամբ: Հայաստանը հռչակվում էր անկախ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն: Խորհրդային Ռուսաստանը Խորհրդային Հայաստանի անվիճելի տարածքներ էր ճանաչում Երևանի նահանգն ամբողջությամբ, Կարսի նահանգի մի մասը, Զանգեզուրը, Ղազախի գավառի մի մասը և Թիֆլիսի նահանգի այն տարածքները, որոնք մինչև 1920 թ. սեպտեմբերի 28-ը գտնվում էին Հայաստանի կազմում: Ռուսաստանը պարտավորվում էր ռազմական ուժեր կենտրոնացնել ՀՍԽՀ-ի պաշտպանության համար: Խորհրդային կողմը պարտավորվում էր նախկին գործունեության համար պատասխանատվության չենթարկել հայկական բանակի հրամանատարական կազմին, ինչպես նաև չհալածել Դաշնակցության և սոցիալիստական մյուս կուսակցությունների անդամներին: Հեղկոմի կազմի մեջ պետք է մտնեին 5 բոլշևիկ և 2 ձախ դաշնակցական: Մինչև հեղկոմի ժամանումը իշխանությունն անցնում էր կարմիր բանակի հրամանատարությանը՝ Դրոյի գլխավորությամբ: Նրան կից ՌԽՖՍՀ կոմիսար էր նշանակվում Օ. Սիլինը:

Այսպիսով, Հայաստանի խորհրդայնացումն արդյունք էր ոչ թե բանվորագյուղացիական ապստամբության, այլ միանգամայն խաղաղ բանակցությունների, որոնց արդյունքում Հայաստանի կառավարությունը ստիպված զիջեց իշխանությունը:

Երևանում տեղի ունեցող իրադարձություններին ուշադիր հետևում էին Թուրքերը, որոնք չտապեցին կանխել դեպքերի իրենց համար անցանկալի ընթացքը: Նոյեմբերի 30-ին նրանք

ներկայացրին հաշտության Թուրքական պայմանները, իսկ Հաջորդ օրը Քյազիմ Կարաբեքիրը վերջնագրի ձևով պահանջեց ընդունել դրանք՝ սպառնալով վերսկսել պատերազմական գործողությունները: Ստեղծվեց անելանելի վիճակ: Ալ. Խատիսյանի պատվիրակությունը դեկտեմբերի 2-ի լույս 3-ի գիշերը Ալեքսանդրապոլում ստորագրեց Հայ-Թուրքական հաշտության դաշնագիրը: Այն ստորացուցիչ էր Հայաստանի համար: Այդ դաշնագրով երկու երկրների միջև սահմանազիծ հաստատվեցին Ախուրյան և Արաքս գետերը՝ Թուրքիային թողնելով Կարսի նահանգն ու Սուրմալուի գավառը: Հայաստանը հրաժարվում էր Սևրի պայմանագրից և Թուրքիայի դեմ ուղղված իր բոլոր պայմանագրերից: Շարուրն ու Նախիջևանը, մինչև նրանց ճակատագրի վերջնական որոշումը, Թուրքիայի հովանավորության ներքո ստանում էին ինքնավարություն: Խիստ կրճատվում էին Հայաստանի զինված ուժերը, որոնք այլևս ի վիճակի չէին ապահովել նրա ինքնիշխանությունը:

Ալեքսանդրապոլի պայմանագիրը հետագայում չվավերացվեց և չեղյալ հայտարարվեց Խորհրդային Հայաստանի կառավարության կողմից: Զգիմանալով արտաքին հզոր ուժերի և ռազմատենչ հարևանների ճնշմանը՝ երկու և կես տարվա մաքառումից հետո Հայաստանի Հանրապետությունը կործանվեց:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ (1920-1991 ԹԹ.)

I. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ 1920-1945 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

1. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐԸ

ա. Պետական մարմինների ձևավորումը: *1920 թ. դեկտեմբերի 2-ի Երևանի համաձայնագրի հիման վրա Հայաստանի Հանրապետության կառավարությունը վար դրեց իր լիազորությունները և իշխանությունը հանձնեց Հայաստանի Հեղկոմին:*

Անցնելով իշխանության գլուխ՝ Հայաստանի Հեղկոմը ձեռնամուխ եղավ խորհրդային պետականության կազմակերպման ու ամրապնդման գործին, սոցիալիստական շինարարության արմատական հարցերի լուծմանը և այլ նպատակների իրականացմանը, որոնք չարադրված էին Հայհեղկոմի 1920 թ. նոյեմբերի 29-ի հրովարտակում: Դա բավականին բարդ և դժվարին խնդիր էր. տնտեսական ծանր պայմաններին գումարվել էր Հայաստանի տարածքի մասնատումը: Ալեքսանդրապոլի գավառը դեռևս մնում էր Թուրքերի ձեռքին, Լոռու մեծ մասը՝ այսպես կոչված «Զեզոք գոտին», գրավել էին վրացական զորքերը, Զանգեզուրը կտրված էր Խորհրդային Հայաստանից: Հեղկոմը, երկրի կյանքը բնականոն հունի մեջ դնելուց բացի, կոչված էր լուծելու նաև Հայաստան աշխարհի ազգային տարածքների բեկորները Հանրապետությանը միավորելու խնդիրը:

Հեղկոմներն իշխանության նշանակովի, ժամանակավոր օրենսդիր և գործադիր մարմիններ էին, որոնք գործելու էին մինչև խորհուրդների ընտրությունները: 1920 թ. դեկտեմբերի 6-ին Երևան ժամանեց Հայաստանի Հեղկոմը՝ նրա առաջին նախագահ Ս. Կասյանի գլխավորությամբ: Շուտով Հեղկոմներ ստեղծվեցին ամբողջ երկրով մեկ: Հայհեղկոմի հրովարտակով

կազմավորվեցին 9 գավառային, 30 շրջանային և մի քանի հարյուր գյուղական Հեղկոմներ: Վերացվեց կառավարման նախկին համակարգը: Տեղական կոմունիստական (բոլշևիկյան) կազմակերպություններն ի սկզբանե ղեկավար դեր ստանձնեցին Հեղկոմներում: Իշխանության այդ մարմինները կազմակերպչական և քարոզչական լայն աշխատանք էին ծավալում խորհրդային իշխանության ամրապնդման համար: Հրովարտակ ընդունվեց դասային տարբերությունների, բոլոր տեսակի տիտղոսների ու կոչումների վերացման, նախկին դատարանների արձակման մասին: Տնտեսության տարբեր բնագավառների պետական կառավարումը ղեկավարելու համար, Ռուսաստանի օրինակով, 1920 թ. դեկտեմբերին կազմակերպվեց Ժողովրդական տնտեսության խորհուրդ (ԺողտնտխորՀ), ստեղծվեցին ժողովրդական կոմիսարիատներ, նշանակվեցին ժողկոմներ՝ ներքին գործերի (Ի. Դովլաթյան), արտաքին գործերի (Ա. Բեկզադյան), հողագործության (Ս. Կասյան), լուսավորության (Ա. Հովհաննիսյան) և այլն: Մի շարք հրովարտակներով ազգայնացվեցին հողը, ընդերքը, ջրերը, անտառները, արդյունաբերական ձեռնարկությունները:

Հայաստանի Հեղկոմը հատուկ ուշադրություն էր դարձնում մշակութային կյանքին: 1920 թ. դեկտեմբերին ընդունվեց հրովարտակ պետական լեզվի մասին, որով Հանրապետության սահմաններում հայերենը ճանաչվեց պետական լեզու: Ազգայնացվեցին բոլոր կուլտուր-լուսավորական հիմնարկները: Շուտով իր աշխատանքները վերսկսեց համալսարանը, էջմիածնում բացվեց Հայաստանի Գիտական ինստիտուտը, հիմնվեց Հնությունների ու գեղարվեստի պահպանման հանձնախումբ:

1920 թ. դեկտեմբերին Հեղկոմը նամակով դիմեց արտերկրում բնակվող Հայազգի մտավորականներին՝ Հայաստան տեղափոխվելու և Հայրենիքի վերածննդին մասնակցելու կոչով: Այն լայն արձագանք ունեցավ և բազմաթիվ, այդ թվում ականավոր մասնագետներ վերադարձան Հայաստան:

Հայաստանի Հեղկոմի առաջին դեկրետներից մեկը վերաբերում էր Արտակարգ հանձնաժողովի (Չեկա) ստեղծմանը, որը պետք է պայքարեր հակահեղափոխության դեմ, բայց շուտով այն դուրս եկավ իր նախնական իրավասությունների սահմաններից և ձեռնարկեց նաև անօրինական գործողություններ:

Հետևելով Ռուսաստանում կենսագործվող տնտեսական քաղաքականությանը՝ Հայաստանի հեղկոմը երկրում մտցրեց այսպես կոչված «ռազմական կոմունիզմ», որի էությունը պարենմասնատրման կենսագործումն էր, այսինքն՝ գյուղացիությունից հացի և այլ մթերքների ավելցուկների անհատույց օտարումը: Հեղկոմի հրովարտակով զինված ջոկատները սկսեցին համատարած խուզարկումներն ու բռնագրավումները (հաճախ բռնագրավում էին ոչ միայն պարենի ավելցուկը, այլև ամբողջ պարենը): Ռազմական կոմունիզմի քաղաքականության միջոցով ենթադրվում էր վերացնել ապրանքադրամային հարաբերությունները, արգելել առևտուրը և պարզ ապրանքափոխանակության միջոցով իրականացնել կոմունիստական հավասարություն: Ռազմական դրության մեջ էին հայտարարված երկաթուղին, փոստ-հեռագրատունը, գլխավոր մայրուղիները, ավտոտրանսպորտը: Բոլոր քաղաքացիները պարտավոր էին աշխատել, որի դիմաց փողի փոխարեն բնամթերք էին ստանում:

Ավերված, քայքայված Հայաստանում ռազմական կոմունիզմի քաղաքականությունն ու բռնագրավումները ցանկալի արդյունք չտվեցին: Բռնագրավումները հաճախ տեղերում վերածվում էին թալանի ու հափշտակության: Պատահական չէ, որ գյուղացիության մեծ զանգվածներ դուրս եկան խորհրդային իշխանության կողմից կենսագործվող պարենմասնատրման քաղաքականության դեմ:

բ. Քաղաքացիական կռիվները Հայաստանում: *Հանրապետության տնտեսության ծանր վիճակը, ներքին քաղաքականության մեջ կատարվող անօրինականությունները մեծապես սրեցին երկրի ներքաղաքական հակասությունները: Դեռևս 1920 թ. դեկտեմբերին ձևավորված գաղտնի կազմակերպությունների միջոցով Դաշնակցությունը հետևում էր իրադարձությունների զարգացմանը և ոչ առանց դրսի օժանդակության պատրաստվում նորից վերցնելու իշխանությունը: 1921 թ. փետրվարի կեսերին, ճգնաժամային ծանր պայմաններում, Հայաստանում Դաշնակցության ղեկավարությամբ ապստամբություն բռնկվեց խորհրդային իշխանության դեմ: Այն սկսվեց Գառնիի, Ապարանի, Դարալագյազի շրջաններում, որտեղ կային անտանելի ծանր վիճակում գտնվող մեծ թվով արևմտահայ գաղթականներ:*

Շարժվելով դեպի Երևան՝ ապստամբները փետրվարի 18-ին գրավեցին քաղաքը: Խորհրդային իշխանությունը հայտարարվեց տապալված, ստեղծվեց «Հայրենիքի փրկության կոմիտե»՝ Ս. Վրացյանի նախագահությամբ: Հայաստանի հեղկոմը չկարողացավ կազմակերպել անհրաժեշտ դիմադրություն, քանի որ 11-րդ կարմիր բանակի զորամասերը հանրապետությունից դուրս էին հանվել՝ Վրաստանի խորհրդայնացմանը մասնակցելու համար: Խորհրդային Հայաստանի կառավարության կազմը և պետական ղեկավար մարմինները երկու զրահագնացքների ուղեկցությամբ Երևանից հեռացան Արտաշատի և Արարատի շրջաններ:

Ապստամբները հույս ունեին Հայաստանում խորհրդային իշխանությունը տապալելուց հետո օգնություն ստանալ Անտանտի պետություններից, մենշևիկյան Վրաստանից և անգամ Թուրքիայից: Բայց ոչ մի տեղից օգնություն չեկավ: Ապստամբությունը չտարածվեց Հայաստանով մեկ, այլ ընդգրկեց միայն մի քանի շրջան: Կռիվները փոփոխակի հաջողություններով շարունակվեցին չուրջ մեկուկես ամիս: Հայաստան վերադարձած 11-րդ կարմիր բանակի զորամասերը հարձակման անցան Երևանի ուղղությամբ: Ծավալվեցին թեժ մարտեր: Բոլշևիկները գրավեցին Ապարանը, Կոտայքը և 1921 թ. ապրիլի 2-ին մտան Երևան: Հայաստանում նորից վերահաստատվեց խորհրդային իշխանությունը:

2. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԴՐԱԾ ՋԱՆՔԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԸ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

ա. 1921 թ. մարտի 16-ի Մոսկվայի և հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագրերը: *Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո առաջնահերթ նշանակություն ստացան տարածքային հարցերը, որոնց լուծումը առնչվում էր Ռուսաստանի, Ադրբեջանի, Թուրքիայի և Վրաստանի շահերի հետ: Հայաստանի հեղկոմը լարված ջանքեր էր գործադրում վերացնելու Ալեքսանդրապոլի խայտառակ պայմանագիրը և Թուրքերի կողմից*

Շիրակի գավառի ռազմակալումը, որտեղ չարունակվում էին կոտորածներն ու կողոպուտները:

1921 թ. փետրվարի 26-ից մարտի 16-ը Մոսկվայում տեղի ունեցավ ռուս-թուրքական կոնֆերանս: Թուրքական պատվիրակությունը Մոսկվա ժամանեց փետրվարի 18-ին, երբ Հայաստանում իշխանությունն անցել էր «Հայրենիքի փրկության կոմիտեի» ձեռքը: Մոսկվայում գտնվող Խորհրդային Հայաստանի պատվիրակությունը չմասնակցեց բանակցություններին, որովհետև դրան դեմ էր քեմալական պատվիրակությունը:

Հայ-թուրքական սահմանները որոշելիս Ռուսաստանի պատվիրակությունը առանց լուրջ դիմադրության Թուրքիային հանձնեց նրա նվաճած հայկական տարածքները: Երկար բանակցություններից հետո Թուրքիան համաձայնվեց Բաթումը թողնել Վրաստանի կազմում՝ իբրև փոխհատուցում: 1921 թ. մարտի 16-ին Խորհրդային Ռուսաստանի և քեմալական Թուրքիայի միջև Մոսկվայում կնքվեց «Բարեկամության և եղբայրության պայմանագիր», որով, առանց Հայաստանի կամքը հաշվի առնելու Թուրքիային էին անցնում Կարսի, Արդահանի, Արդվինի և Սուրմալուի շրջանները: Հայաստանին վերադարձվում էր Ալեքսանդրապոլի գավառը: Այդ պայմանագրով Նախիջևանի մարզը, ներառյալ նաև հայկական Գողթան և Շարուր գավառները, դառնում էր ինքնավար տարածք՝ Խորհրդային Ադրբեջանի խնամակալության ներքո: Որպեսզի այն երբևէ Հայաստանին չանցնի, պայմանագրում կետ մտցվեց, որ Ադրբեջանն այն չի զիջի որևէ երրորդ կողմի, այսինքն՝ Հայաստանին: Մարտի 16-ի պայմանագրում չէր նշվել, որ Նախիջևանը մտցվում է Ադրբեջանի կազմի մեջ՝ որպես նրա բաղկացուցիչ մաս: Միայն 1924 թ. փետրվարին խախտելով մարտի 16-ի համաձայնագիրը, Ադրբեջանը Մոսկվայի թույլտվությամբ, Նախիջևանը հայտարարեց ինքնավար հանրապետություն և մտցրեց իր կազմի մեջ: Թուրքիային հանձնելով հայկական տարածքները՝ Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը ոտնահարեց հայ ժողովրդի ազգային շահերը: Բայց նույնիսկ այդքանից հետո Թուրքիան չէր շտապում իր զորքերը դուրս բերել Շիրակի գավառից: Ռուսական կողմը մի քանի անգամ Թուրքերից պահանջեց ազատել տարածքը՝ զգուշացնելով, որ եթե նոր պատերազմ ծագի Թուրքիայի և

Խորհրդային Հայաստանի միջև, ապա այդ պատերազմը «կնշանակի պատերազմ Թուրքիայի և Խորհրդային Ռուսաստանի միջև»: Միայն 1921 թ. ապրիլի 22-ին Ռուսաստանի ճնշման ներքո թուրքական զորքերը հեռացան Շիրակի գավառից՝ նախօրոք կազմակերպելով հայերի նոր կոտորածներ, ավերելով ամբողջ շրջանը:

Այդ օրերին Հայաստան էր ժամանել կոմունիստական կուսակցության և խորհրդային պետության ականավոր գործիչ Ալեքսանդր Մյասնիկյանը: Մինչ այդ Հայաստանի ռազմհեղկոմը վերակառուցվել էր ժողկոմխորհի, որի նախագահությունը ստանձնել էր Ալ. Մյասնիկյանը:

Մոսկվայի բանակցությունների ժամանակ պայմանավորվածություն էր ձեռք բերվել, որ 1921 թ. մարտի 16-ի պայմանագրի հիման վրա Թուրքիան պայմանագրեր պետք է կնքի անդրկովկասյան խորհրդային հանրապետությունների հետ: Չնայած 1921 թ. մարտի 16-ի պայմանագրով չեղյալ էր հայտարարվել Ալեքսանդրապոլի 1920 թ. դեկտեմբերի 2-ի պայմանագիրը, բայց Թուրքիան ձգտում էր Հայաստանի վրա ճնշում գործադրելով այն պահել ուժի մեջ:

1921 թ. սեպտեմբերի 26-ից հոկտեմբերի 13-ը Կարսում, մի կողմից՝ անդրկովկասյան հանրապետությունների ներկայացուցիչների և, մյուս կողմից՝ Թուրքերի միջև տեղի ունեցավ խորհրդաժողով, որտեղ Թուրքիան պահանջեց առանձին-առանձին պայմանագրեր կնքել անդրկովկասյան հանրապետությունների հետ: Հասկանալի է, որ այդ պահանջը հիմնականում ուղղված էր Հայաստանի դեմ: Բայց Անդրկովկասի հանրապետությունները Մոսկվայի հրահանգով մերժեցին Թուրքերի առաջարկը: 1921 թ, հոկտեմբերի 13-ին մի կողմից՝ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի, մյուս կողմից՝ Թուրքիայի միջև Կարսում կնքվեց «Բարեկամության պայմանագիր», որտեղ կրկնվում էին ռուս-թուրքական պայմանագրի հիմնական դրույթները: Փաստորեն Կարսի պայմանագրով վավերացվեց մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագրով Հայաստանի տարածքները Թուրքիային հանձնելու ակտը: Թուրքիայի դեկավար Մուստաֆա Քեմալը այդ առիթով հայտարարեց, որ «այսպես կոչված Հայկական հարցը Կարսի պայմանագրում գտավ իր ամենաճիշտ լուծումը»:

բ. Լոռու գավառի և Ջավախքի հարցերը: Հայաստանից անջատված տարածքներից էր Լոռու «Զեզոք գոտին», որը գրավել էին մենշևիկյան Վրաստանի զորքերը: Բացի դրանից Վրաստանի մենշևիկյան իշխանությունները տնտեսական շրջափակման էին ենթարկել Խորհրդային Հայաստանը և արգելել հաղորդակցությունը Լոռու գավառով: Ուստի այդ տարածքների ազատագրումը Հայաստանի համար կենսական նշանակություն ունեցող խնդիր էր:

Իր շահերն ուներ նաև Խորհրդային Ռուսաստանը, որը ծրագրել էր Վրաստանում ապստամբություն կազմակերպել և «Զեզոք գոտու» վրայով 11-րդ կարմիր բանակի զորամասերի հարձակման միջոցով տապալել վրաց մենշևիկների իշխանությունը: Ապստամբությունը գլխավորելու համար Ղարաքիլիսայում (Վանաձոր) ստեղծվեց ապստամբական շտաբ՝ Հ. Լազյանի ղեկավարությամբ:

1921 թ. փետրվարի 17-ին Վրաստանում սկսվեց ապստամբություն: Օգտվելով դրանից, Հայաստանում տեղակայված 11-րդ կարմիր բանակի զորամասերը Լոռվա կողմից մտան Վրաստան և համարյա առանց դիմադրության գրավեցին Թիֆլիսը: Այդ երթուղով կարմիր բանակի Վրաստան մտնելը հետագայում որոշ դեր խաղաց Լոռին Հայաստանի հետ միավորելու համար: Փետրվարի 25-ին Վրաստանը հայտարարվեց խորհրդային:

1921 թ. մարտի երկրորդ կեսին կարմիր բանակի ուրիշ զորամասեր Ախալքալաք մտան Վրաստանից՝ Բորժոմ-Ախալցխա երթուղով, հանգամանք, որը քիչ դեր չխաղաց հետագայում հօգուտ Վրաստանի նրա պատկանելիության հարցը վճռելու տեսակետից:

Թուրքական զորքի հեռանալուց հետո ավելի հաճախակի էին դարձել ջավախքցիների դիմում-խնդրագրերը՝ ուղղված Խորհրդային Հայաստանի և Վրաստանի հեղկոմներին, կարմիր բանակի ղեկավարությանը, ինչպես և զանազան այլ ատյաններին՝ գավառը Խորհրդային Հայաստանին կամ Ռուսաստանին միացնելու վերաբերյալ: Նրանցից մեկում, գրված 1921 թ. ապրիլի 23-ին, Սուլղա, Մրագո-վալ, Դաղեչ, Վաչիան, Կարզախ գյուղերի ներկայացուցիչները Վրաստանում Հայաստանի ներկայացուցչին հայտնում էին. «Մենք խնդրում ենք, որ մեր գավառը, որի 80.000 բնակչությունից 60.000-ից ավելին հայեր են, ...միացնեք Հայաստանի Հանրապետության: ...Եթե մեր երկիրը չմիանա Հայաստանի հետ, որով ապահովվում ենք կոտորածից..., ճնշումից կամ, եթե մեր երկիրը չդառնա Խորհրդային Ռուսաստանի մարզ և մեր գլխից չվերանա թուրքական յաթաղանը, մենք այլևս անկարող ենք մնալ մեր հայրենիքում, որ այս էլ քանի տարի է վերածվել է դժոխքի, և մենք ստիպված ենք գաղթելու Ռուսաստանի խորքերը...»:

1921 թ. գարնանից Անդրկովկասի նորաստեղծ խորհրդային հանրապետությունների միջև բազմաթիվ վիճելի տարածքների թվում դրվեց նաև Ախալքալաքի ու նրան հարակից Խրամի (Մալկայի) շրջանների պատկանելիության հարցը: 1921 թ. մայիսի 2-ին Ռուսաստանի կոմունիստական (բոլշևիկների) կուսակցության կենտկոմի Կովկասյան բյուրոյի ստեղծած հատուկ հանձնաժողովը հունիսի 25-27-ին Թիֆլիսում հրավիրեց իր անդրանիկ նիստը՝ Ս. Կիրովի նախագահությամբ: Վրաստանը ներկայացնում էին հանձնաժողովի 2, Ադրբեջանը՝ 3, Հայաստանը՝ 1 անդամ (Ալեքսանդր Բեկզադյան): Առաջին իսկ նիստում Բեկզադյանը, նշելով ցարիզմի կողմից անցկացված վարչական բաժանման անարդարացիությունը և Խորհրդային Հայաստանի ծանր վիճակը, առաջարկեց հանձնաժողովի անդամներին հայկական հոծ բնակչություն ունեցող Ախալքալաքի գավառը (72 %ը՝ հայեր), Լոռին և Լեռնային Ղարաբաղը (94 %ը՝ հայեր) զիջել Հայաստանին: Բայց նա միայնակ մնաց հանձնաժողովի վրացի և ադրբեջանցի մեծամասնության հանդեպ (վերջիններիս միացավ Կիրովը), որոնք, Վրաստանում և Ադրբեջանում հակահեղափոխական տարրերի աչխուժացման համար հող չստեղծելու պատրվակով, մերժեցին տարածքային փոփոխությունների մասին Բեկզադյանի առաջարկը: Վերջինս պահանջեց հարցի վերջնական լուծումը տեղափոխել Ռ(բ)Կ կենտկոմի Կովկասյան բյուրո:

Հայաստանի ղեկավարությունը մասնագետների և գիտակ մարդկանց հանձնարարեց վիճելի տարածքների վերաբերյալ կազմել տեղեկանքներ: Խորհրդային Հայաստանի արտգործժողկոմ Ա. Մռավյանի հանձնարարությամբ Պ. Աբելյանը 1921 թ. հուլիսին Ախալքալաքի մասին ներկայացրեց մի ընդարձակ

փաստաթուղթ, որտեղ պատմական, աշխարհագրական, ժողովրդագրական և տնտեսական հայեցակետերից հանգամանորեն հիմնավորում էր Ախալքալաքը Հայաստանին միավորելու հայ ժողովրդի արդարացի ձգտումը: «Ջավախքի հայությունը,- զեկուցագրում գրում էր Աբելյանը, մենշևիկյան կառավարությանը տաճկականից վատ էր համարում: Նրա աչքը այնպես է վախեցել, որ չի ուզում ոչ մի վրացական կառավարություն...: Այս է ճշմարտությունը: Ախալքալաքցին ուզում է, որ Ախալքալաքը լինի Ռուսաստանի կազմում, Թուրքի հարձակման համար հավիտյան անմատչելի: Եթե այդ էլ չեղավ, նա ուզում է իր բախտը կապել Հայաստանի հետ, միանալ նրան»: Աբելյանն անընդունելի էր համարում որևէ ինքնավարություն Վրաստանի կազմում: Պ. Աբելյանի կազմած փաստաթղթի և այլ նյութերի հիման վրա Հայաստանի ժողկոմխորհը մշակեց Ջավախքը Հայաստանի Խորհրդային Հանրապետությանը միացնելու նպատակահարմարության մասին մի նախագիծ՝ ՌԿ(բ)Կ կենտկոմի Կովկասյան բյուրոյի առաջիկա քննարկմանը ներկայացնելու համար:

1921 թ. հուլիսի 7-ին ՌԿ(բ)Կ կենտկոմի Կովկասյան բյուրոյի պլենումը Ի. Ստալինի մասնակցությամբ քննարկեց Հայկական և Վրացական ԽՍՀ-ների միջև վիճելի համարվող Լոռվա և Ախալքալաքի գավառների հարցերը: Ձայների 6 կողմ, 1 ձեռնպահ հարաբերակցությամբ որոշվեց Լոռու «Ձեզոք գոտին» միացնել Հայաստանին, իսկ Ախալքալաքի ու Խրամի (Ծալկայի) շրջանները Հայկական ԽՍՀ-ին միացնելու հարցը տեղափոխել Վրաստանի կոմկուսի կենտկոմ և վերջինիս եզրակացությունը ներկայացնել կենտկոմի Կովկասյան բյուրոյի քննարկմանը: Դժվար չէր կռահել, որ վրաց բոլշևիկների հայեցողությանը թողնված հայկական կողմի պահանջը կմերժվեր: Եվ, իրոք, 1921 թ. հուլիսի 16-ին Վրաստանի կոմկուսի կենտկոմի քաղբյուրոն անընդունելի համարեց Խորհրդային Հայաստանի առաջարկը՝ իր որոշումը հիմնավորելով Թիֆլիսի հետ այդ գավառների տնտեսական կապվածության չինծու պատճառաբանությամբ և ինչ-ինչ անհամոզիչ «քաղաքական նկատառումներով»: Վրաստանը պատմական հայկական Ջավախքը կցեց իրեն:

1918-1921 թթ. Հայրենիքի հետ Ջավախքի միավորման

խնդիրը մնաց չլուծված հետևյալ պատճառներով. Հայաստանի Հանրապետությունը, առաջնային համարելով Արևմտյան Հայաստանի միացման խնդիրը, հանդես չէր բերել անհրաժեշտ ջանադրություն Անդրկովկասում Վրաստանի ու Ադրբեջանի կողմից բռնազավթված հայկական տարածքների հարցում: 1918 և 1921 թթ. Թուրքական ներխուժումների հետևանքով զոհվել էր Ջավախքի հայ բնակչության մոտ կեսը՝ ավելի քան 40 հազ. մարդ: Գավառը հասել էր տնտեսական լիակատար անկման, հանգամանքներ, որոնք խոչընդոտեցին հայրենիքի հետ միավորվելու ուղղությամբ հայ բնակչության մղած պայքարի ծավալումը: Անշուշտ, իրենց բացասական ազդեցությունն ունեցան նաև վրաց կառավարության կոշտ դիրքորոշումը, Անգլիայի երկդիմի քաղաքականությունը, 1920 թ. Թուրք-հայկական պատերազմը, 1921 թ. փետրվարի վերջին Վրաստանի խորհրդայնացման շրջանում քեմալականների կողմից ինչպես Ջավախքի, այնպես էլ նրա հարևան Ալեքսանդրապոլի գավառի բռնազավթումը և այլն:

1921 թ. հուլիսի կեսերին Ջավախքահայությունը, իրազեկ դառնալով Կովկասյան բյուրոյի և Վրաստանի կոմկուսի վերոհիշյալ որոշումներին, բազմաթիվ նամակ-բողոքներ հղեց Մոսկվա, Թիֆլիս, Երևան: Վրացական կառավարությունը, կարծես հատուկ միտումով, ավելի չիկացրեց մթնոլորտը: Ախալքալաքի հեղկոմի նախագահի պաշտոնից ազատվեց հայտնի բոլշևիկ և կարմիրբանակային, ախալքալաքցիների շրջանում մեծ հեղինակություն վայելող Առուստամովը: Նրան պաշտոնում վերականգնելու ախալքալաքցիների բողոքները մնացին անհետևանք: «Ընկ. Առուստամովը,- այդ օրերին Վրաստանում հայկական դիվանագիտական ներկայացուցչությանը գրում էին ջավախքցիները,- ստիպված հեռացավ Ախալքալաքից՝ ժողովրդյան ամենաանկեղծ ցույցերի տարափի տակ»: Շուտով գավառի միլիցիայի պետ նշանակվեց ժողովրդին ատելի Ս. Նադիրաձեն՝ մենշևիկյան տիրապետության շրջանում հատուկ պատժիչ ջոկատի ղեկավարներից մեկը: Երբ ժողովրդի ճնշման տակ տեղի հեղկոմը նրան ազատեց պաշտոնից, Թիֆլիսի վրաց բոլշևիկները Նադիրաձեին օժտելով ավելի լայն լիազորություններով՝ վերադարձրին Ախալքալաք: Ժողովրդի նոր բողոքներին

հետևեց հատուկ հանձնաժողովի ժամանումը: Հանձնաժողովի որոշմամբ ձերբակալվեցին մի խումբ մարդիկ, այդ թվում հին բոլշևիկ, գավառի հեղկոմի անդամ Մնոյանը և ուղարկվեցին Թիֆլիս՝ Վրաստանի Ջեկայի (Արտակարգ հանձնաժողով) տրամադրության տակ: Մեկ ամիս անց Ախալքալաք ժամանած մի ուրիշ արտակարգ հանձնաժողով «ազգայնամոլ» գործունեության մեղադրանքով ձերբակալեց ու Թիֆլիս տարավ գավառում խորհրդային իշխանության հաստատման համար մղած պայքարի ակտիվ գործիչ, Ախալքալաքի հեղկոմի հիմնադիր անդամներից Կարապետ Ղազանչյանին, որը 1921 թ. փետրվարին, լինելով 11-րդ կարմիր բանակի վաշտերից մեկի հրամանատար, աչքի էր ընկել վրաց մենշևիկներից Լոռին ազատագրելու ժամանակ:

Հայ կոմունիստների կաղրային ջարդին զուգընթաց՝ 1921 թ. ապրիլ-հուլիսին իրականացվեցին հայ գյուղացիությանը ունեզրկելու միջոցառումներ: Ամեն կերպ սիրաշահվում էր տեղի թուրք բնակչությունը, որն ակտիվորեն մասնակցել էր հայերի կոտորածներին և խիստ հարստացել թուրքական երկու արշավանքների ժամանակ հայերից թալանված ունեցվածքի հաշվին: Եվ այսպես, թուրքական երկու արշավանքների շրջանում տասնյակ հազարավոր զոհեր տված, վրաց մենշևիկյան տիրապետության ժամանակ հալածանքների ենթարկված ախալքալաքցի հայերը 1921 թ. գարնանն ու ամռանը այս անգամ հայտնվեցին վրաց բոլշևիկների սանձազերծած ազգայնամոլ նոր ձեռնարկումների ոլորտում: Պատահական չէ, որ որոշ հայկական (հատկապես կաթոլիկական) գյուղերի բնակիչներ այդ օրերին սկսեցին գաղթել Ռուսաստան:

Խորհրդային Հայաստանի իշխանություններին ուղղված ախալքալաքցիների գրած բազմաթիվ նամակ-խնդրագրերը հնարավոր չէ ընթերցել առանց հուզմունքի ու վրդովմունքի: Ախալքալաքում ստեղծված մղձավանջային իրավիճակից դուրս գալու միակ ելքը նրանք շարունակում էին համարել գավառի միացումը Հայաստանին: Դրանցից մեկում կարդում ենք. «...որպեսզի վերացվի Ջավախեթիայի բլոկադան,... որպեսզի վերջ տրվի ամենայն տեսակ աղայական կամայականությանը և սրբագործված ալանթալանին, միայն մի միջոց կա, որը և ամբողջ գավառի բնակչության 75% կազմող հայ ազգաբնակչության տենչն ու փափագն է. այն է՝ միացնել Ախալքալաքի գավառը իրեն հարազատ Հայաստանի խորհրդային հանրապետությանը»:

1921 թ. հուլիսի 7-ի ՌԿ (բ)Կ Կովկասյան բյուրոյի և Վրաստանի կոմկուսի կենտկոմի բյուրոյի հուլիսի 16-ի որոշումներից հետո էլ հայ մի շարք բոլշևիկներ որոշ փորձեր կատարեցին Ջավախքի ենթակայության հարցը վիճարկելու ուղղությամբ: Ախալքալաքից հայ բնակչության զանգվածային արտագաղթը կանխելու, նրա վրդովմունքը մեղմելու, խնդրի լուծման ուղիներ գտնելու նպատակով գավառ այցելեց Հայաստանի կառավարության նախագահ Ալ. Մյասնիկյանը: Նրա նախաձեռնությամբ մի խումբ հայ գործիչներ 1922 թ. ներկայացրին նախագիծ Ախալքալաքի գավառից և Բորչալուի հայաբնակ գյուղերից Վրացական ԽՍՀ կազմում մեկ հայկական ինքնավար վարչամիավոր ստեղծելու համար: Բայց վրաց պետական շրջանակները, մտավորականության ներկայացուցիչները (հատկապես պատմաբան Իվ. Ջավախաշվիլին) սվիններով ընդունեցին այդ նախագիծը՝ այն դիտելով իբրև Վրաստանն անդամահատելու նախաքայլ, և 1923 թ. հասան դրա մերժման:

Ինչևէ, սահմանային հարցերում միայնակ մնալով խորհրդային Ադրբեջանի և Վրաստանի ավելի ազդեցիկ բոլշևիկների ու նրանց աջակցող կենտրոնի առջև՝ Հայաստանի ղեկավարությունն ի վերջո տեղի տվեց: Զանգվածային բռնամիջոցներով խորհրդային իշխանությանը հաջողվեց լռեցնել ջավախքահայությանը՝ նրա մեջ խեղդելով Հայաստանին միանալու ձգտումը: Ջավախքը մնաց Վրաստանի կազմում:

գ. Լեռնային Ղարաբաղի հարցը: Վրաստանի խորհրդայնացումից հետո պարզ դարձավ, որ անդրկովկասյան բոլոր երեք հանրապետությունները միմյանց հետ ունեն տարածքային վեճեր: Այդ կնճիռը վերացնելու նպատակով ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի պլենումը 1921 թ. մայիսի 2-ին որոշեց անդրկովկասյան խորհրդային հանրապետությունների ներկայացուցիչներից, Ս. Կիրովի նախագահությամբ, կազմել հանձնաժողով՝ վերջնականապես որոշելու այդ հանրապետությունների սահմանները:

1921 թ. հունվարի 25-27-ը Թիֆլիսում Ս. Կիրովի ղեկավարած հանձնաժողովը մի քանի նիստեր գումարեց: Հայաստանի ներկայացուցիչ Ալ. Բեկզադյանը առաջարկեց Լեռնային Ղարաբաղը հանձնել Հայաստանին, քանզի երկրամասի ազգաբնակչության մեծամասնությունը՝ 94%-ը, հայեր են: Հանձնաժողովի վրացի և ադրբեջանցի անդամները ստանալով Կիրովի հավանությունը՝ հանդես եկան Բեկզադյանի առաջարկի դեմ: Քանի որ հանձնաժողովում հարցը իր լուծումը չստացավ և միևնույն ժամանակ Ադրբեջանի կառավարության ու կոմկուսի քաղբյուրոյի նիստերը մերժել էին երկրամասը ճանաչել Հայաստանի տարածք, Բեկզադյանը առաջարկեց հարցի քննարկումը և լուծումը տեղափոխել ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյի պլենում: Այն կայացավ մի քանի օր անց:

ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյի 1921 թ. հուլիսի 4-ի նիստում այդ հարցի քննարկումը հանգեցրեց երկու տեսակետի.

1. *Ղարաբաղը թողնել Ադրբեջանի կազմում և հանրաքվե անցկացնել ամբողջ Ղարաբաղում: Քվեարկության ընթացքում այդ առաջարկը մերժվեց:*
2. *Ղարաբաղի լեռնային մասը միացնել Հայաստանին և հանրաքվե անցկացնել միայն այդ տարածքում: Ձայների մեծամասնությամբ ընդունվեց երկրորդ հայեցակետը:*

Պլենումի այդ որոշման դեմ իր բողոքը հայտնեց Ադրբեջանի ղեկավար Ն. Նարիմանովը, որը պահանջեց հարցի վերջնական լուծումը տեղափոխել ՌԿ(բ)Կ կենտկոմ՝ այսինքն Մոսկվա: Եվ հաջորդ օրը պլենումի անդամներ Օրջոնիկիձեն ու Նազարբեկյանը հարց բարձրացրեցին վերանայելու որոշումը: Ամենայն հավանականությամբ հարցի վերանայմանը աջակցել էր պլենումի աշխատանքներին մասնակցած Ստալինը: Հաջորդ օրը՝ հուլիսի 5-ին ՌԿ(Բ)Կ Կովկասյան բյուրոն, Ստալինի ներկայությամբ, հաշվի չառնելով Ղարաբաղի բնակչության ցանկությունը, նոր որոշում ընդունեց, որում նշվում էր, որ ելնելով մահմեդականների և հայերի միջև ազգային խաղաղության անհրաժեշտությունից, Վերին և Ստորին Ղարաբաղի տնտեսական սերտ կապից, Ադրբեջանի հետ նրա մշտական առնչությունից՝ Լեռնային Ղարաբաղը թողնել Ադրբեջանի կազմում և նրան տրամադրել լայն ինքնավարություն՝ Շուշի կենտրոնով: Ինքնավար մարզի սահմանների որոշումը հանձնարարվում էր Ադրբեջանի կոմկուսի կենտկոմին: Պլենումի աշխատանքներին մասնակցած Հայաստանի կառավարության նախագահ Ալ. Մյասնիկյանը իր համաձայնությունը ընդունված որոշմանը բացատրում էր նրանով, որ Ադրբեջանը սպառնում էր դադարեցնել նավթի առաքումը հանրապետություն:

Խորհրդային Ադրբեջանի ղեկավարությունը չուրջ երկու տարի ձգձգելով ինքնավար մարզի կազմակերպումը, միայն Անդրերկոմի պահանջով՝ 1923 թ. ամռանը, ստիպված կազմավորեց մարզը Խանքենդի (Ստեփանակերտ) կենտրոնով: Լեռնային Ղարաբաղը Հայաստանից կտրելու համար նրանց միջև ստեղծվեց «սանիտարական» գոտի, այդպես կոչված՝ «Կարմիր Քրդստան»: Արցախի հայության հազարամյակների հայրենի ոստանի բռնակցումը Ադրբեջանին՝ հայ ժողովրդի իրավունքների հերթական կոպիտ ոտնահարում էր: Արցախահայությունը չընդունեց այդ կամայական որոշումը: Տասնամյակներ շարունակ նա ստիպված էր ապրել ազգային հալածանքների, տնտեսական ու սոցիալական բիրտ ճնշման պայմաններում, բայց երբեք չհամակերպվեց օտարի լծի հետ՝ մշտական պայքար մղելով մայր հայրենիքին միանալու համար:

դ. Զանգեզուրի հարցը: *Նախիջևանի, Ջավախքի, Արցախի և Զանգեզուրի հայկական երկրամասերից Հայաստանի կոմունիստական իշխանություններին հաջողվեց միայն վերջինս ընդգրկել հանրապետության կազմում:*

Խորհրդային Հայաստանից անջատ Զանգեզուրը Գարեգին Նժդեհի գլխավորությամբ շարունակում էր ինքնապաշտպանական մարտերը թուրք-բոլշևիկյան ուժերի դեմ: Նախորդ էջերում նշվել է, որ Հայաստանում խորհրդային կարգեր հաստատելուց հետո, 1920 թ. դեկտեմբերի 25-ին, Տաթևի վանքում հրավիրվել էր Համազանգեզուրյան առաջին համագումարը, որը Զանգեզուրը ժամանակավորապես հայտարարել էր Ինքնավար Սյունիք՝ մինչև մայր երկրի՝ Հայաստանի սահմանների վերջնական կարգավորումը:

Հայաստանի խորհրդային իշխանությունը մի քանի անգամ բանակցություններ վարեց Զանգեզուրում խաղաղություն հաստատելու և այն հանրապետությանը միավորելու համար: Այդ

գործում ընդգրկվեց նաև 1920 թ. դեկտեմբեր - 1921 թ. հունվար կարճատև շրջանում Խորհրդային Հայաստանի կարմիր բանակի հրամանատար եղած Դրոն, որը դիմում հղեց Նժդեհին՝ առաջարկելով անմիջապես Զանգեզուրը հայտարարել խորհրդային և միանալ Հայաստանին:

1921 թ. փետրվարյան ապստամբության պարտությունից հետո Զանգեզուրը ստիպված էր ընդունել և ամիսներ շարունակ իր հացի սուղ պաշարներից բաժին հանել Արարատյան դաշտից դեպի Պարսկաստան գաղթող հազարավոր փախստականների և զինվորականությանը: Երևանում վերահաստատված բոլշևիկյան կառավարությունը ապրիլ ամսին Զանգեզուրը խաղաղ ճանապարհով Խորհրդային Հայաստանի հետ միավորելու մի շարք փորձեր ձեռնարկեց, որոնք վերջացան անհաջողությամբ:

1921 թ. ապրիլին Տաթևի վանքում կայացավ ինքնավար Սյունիքի հայ ազգաբնակչության երկրորդ (արտակարգ) համագումարը, որտեղ Նժդեհը հաշվետվություն տվեց նախորդ համագումարից հետո կատարված աշխատանքների մասին: Համագումարը «ինքնավար լեռնաշխարհ Ազատ Սյունիքը» հայտարարեց անկախ պետություն և այն վերանվանեց Լեռնահայաստան: Ստեղծվեց 7 հոգուց բաղկացած նախարարների խորհուրդ, որի վարչապետ ընտրվեց Նժդեհը: Համագումարի միաձայն որոշմամբ գնդապետ Նժդեհին շնորհվեց զորավարի աստիճան:

Ալ. Մյասնիկյանի գլխավորությամբ կազմավորված խորհրդային կառավարությունը Է՛լ ավելի համառ ջանքեր գործադրեց Հայաստանի հետ Զանգեզուրի միավորումը գլուխ բերելու համար: Հավատ չտածելով բոլշևիկների այն խոստումներին, թե Զանգեզուրը մտնելու է Խորհրդային Հայաստանի, այլ ոչ թե Ադրբեջանի կազմի մեջ, Նժդեհը շարունակաբար մերժում էր Երևանից եկած առաջարկները: Ավելին, հունիսի 15-ին Լեռնահայաստանի ուժերը հարձակում գործեցին Վայոց ձորում տեղակայված Խորհրդային Հայաստանի կարմիր բանակի զորամասերի վրա՝ նպատակ ունենալով այնտեղից շարժվել առաջ, գրավել Արարատյան դաշտը և Երևանը, վերականգնել Հայաստանի անկախությունը: Անակնկալի գալով և մեծ կորուստներ կրելով՝ կարմիր զորամասերը նահանջեցին: Գավառը համարյա

ամբողջովին անցավ զանգեզուրցիների ձեռքը:

Վերախմբավորելով ուժերը՝ կարմիր բանակի զորամասերը հունիսի 22-ին վճռական հարձակման անցան երեք ուղղություններով՝ Նախիջևանի, Ադրբեջանի և Վայոց ձորի: Հարձակման առաջին իսկ պահից Լեռնահայաստանի ուժերը սկսեցին նահանջել դեպի Զանգեզուր: Գաղթականության և զինվորականության՝ դեպի Պարսկաստան փախչելը հոգեբանորեն քայքայիչ ազդեցություն էր գործում Լեռնահայաստանի ուժերի վրա, խաթարում նրանց մարտունակությունը:

Վայոց ձորը վերագրավելուց հետո հուլիսի 1-ին կարմիր զորքերը գրավում են Սիսիանի շրջանը և առաջանում դեպի Գորիս, որն ընկնում է հաջորդ օրը: Շարունակելով հարձակումը՝ բոլշևիկները հուլիսի 6-ին ռազմակալում են Կապանի շրջանը: Զանգեզուրյան մարտիկներն անցնում են Գենվազի (Մեղրու) շրջանը, որտեղ նրանց հաջողվում է մեկ շաբաթ համառ դիմադրություն ցույց տալ երեք կողմերից հարձակվող կարմիր զորամասերին, բայց ի վերջո ստիպված են լինում ցրվել և անցնել իրենց գյուղերը, իսկ շատերն էլ հատելով Արաքս գետը՝ անցնում են Պարսկաստան: 1921 թ. հուլիսի 15-ին ամբողջ Զանգեզուրը գրավված էր և այն միացավ Խորհրդային Հայաստանին:

1918-1921 թթ. զանգեզուրյան ազատամարտը հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի պատմության ամենափայլուն էջերից մեկն է: Ազատամարտի գլխավոր արդյունքն եղավ այն, որ չնայած բոլոր ջանքերին, թուրք զավթիչներին չհաջողվեց տեր դառնալ գավառին: Զանգեզուրն իր քաջ զավակների անձնուրաց պայքարի շնորհիվ մնաց որպես մայր հայրենիքի՝ Հայաստանի անբաժան մասը:

3. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՈՒՂԻՆԵՐՈՒՄ

ա. Անդրֆեդերացիայի և ԽՍՀՄ-ի կազմավորումը: Հեղկոմներն իրենց գոյության կարճատև ժամանակաշրջանում որոշակի դեր խաղացին պետականության ձևավորման ու ամրապնդման, նոր հասարակարգի կառուցման ուղղությամբ՝ թույլ տալով նաև կոպիտ սխալներ: Հեղկոմների առջև դրված

հիմնական խնդիրներից մեկը խորհուրդների ընտրություն կազմակերպելն էր: 1921 թ. դեկտեմբեր - 1922 թ. հունվար ժամանակաշրջանում Հայաստանում տեղի ունեցան խորհուրդների ընտրություններ, որոնց բնակչությունը գործուն մասնակցություն ունեցավ: Ընտրվեցին 9 գավառային, 39 շրջանային և մոտ 900 գյուղական խորհուրդներ:

Խորհուրդների ընտրություններից հետո, 1922 թ. հունվարի 30-ին, Երևանում բացվեց Հայաստանի խորհուրդների առաջին համագումարը: Ուրիշ հարցերի թվում համագումարը նաև քննարկեց և հաստատեց Հայաստանի սահմանադրությունը, որը հիմնականում Խորհրդային Ռուսաստանի սահմանադրության նմանակումն էր և պարունակում էր ձևական բնույթի մի շարք հոդվածներ: Չնայած դրան՝ այն պատմական խոշոր իրողություն էր, որ կարևոր նշանակություն ունեցավ Հայաստանի երկրորդ հանրապետության պետականության կերտման գործում:

Հայաստանի խորհուրդների առաջին համագումարը քննարկեց նաև Ալ. Մյասնիկյանի զեկուցումը՝ Անդրկովկասի Խորհրդային Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետության (ԱԽՖՍՀ) ստեղծման մասին: Համագումարը հավանություն տվեց անդրկովկասյան երեք հանրապետությունների՝ Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի պետական միավորման դաշնային ձևին, որտեղ ընդգրկված պետությունները պետք է պահպանեին իրենց ինքնիշխանությունը: 1922 թ. մարտին անդրկովկասյան հանրապետությունների ներկայացուցիչների կոնֆերանսը հաստատեց դաշնային պայմանագիրը: Նույն թվականի դեկտեմբերի սկզբներին Բաքվում տեղի ունեցավ Անդրկովկասյան խորհուրդների առաջին համագումարը, որը քննարկեց և հաստատեց Անդրֆեդերացիայի սահմանադրությունը:

Անդրկովկասյան խորհուրդների առաջին համագումարը ընդհանրացնելով նոր դաշնության շուրջ մեկամյա փորձը՝ որոշեց հավանություն տալ ԽՍՀՄ կազմակերպելու գաղափարին: Նույնպիսի որոշումներ ընդունեցին Ուկրաինայի և Ռուսաստանի ֆեդերացիայի խորհուրդների համագումարները: ԽՍՀՄ-ը պիտի դառնար նոր տիպի պետություն, որի մեջ խորհրդային հանրապետությունները պահպանելու էին իրենց անկախությունը և միությունից դուրս գալու իրավունքը:

1922 թ. դեկտեմբերի 30-ին Մոսկվայում հրավիրվեց ԽՍՀՄ խորհուրդների առաջին համագումարը, որին մասնակցում էին ՌԽՖՍՀ-ի, Ուկրաինայի, Բելոռուսիայի և ԱԽՖՍՀ-ի պատվիրակները: Համագումարը հաստատեց ԽՍՀՄ կազմակերպման մասին հռչակագիրը և պայմանագիրը: Հայաստանը ԽՍՀՄ-ի մեջ մտավ ԱԽՖՍՀ-ի միջոցով: Ստեղծվեց մի նոր բազմազգ պետություն:

բ. Սոցիալ-տնտեսական կացությունը վերականգնման տարիներին: Քաղաքացիական կռիվների ավարտից հետո Հայաստանը թևակոխեց խաղաղ շինարարության շրջան: Դրան մեծապես նպաստեց 1921 թ. գարնանը նոր տնտեսական քաղաքականության (ՆԷՊ) անցնելը: ՆԷՊ-ի էությունը պարենհարկ մտցնելն էր, որի հանձնումից հետո գյուղացին կարող էր ազատ տնօրինել իր ունեցվածքը: Դա նշանակում էր, որ փաստորեն անցում էր կատարվում ապրանքադրամային հարաբերություններին, որոնք նպաստում էին բնակչության նյութական շահագրգռության բարձրացմանը: Պետականացված մանր ձեռնարկությունները վերադարձվեցին տերերին, կատարելագործվեց նաև հարկային համակարգը: Զքավոր գյուղացիներն ազատվում էին հարկից, միջակը որոշ չափով էր հարկ վճարում: Հիմնական ծանրությունը դրվում էր ունևոր տնտեսությունների վրա: Շերտավորված մոտեցում էր ցուցաբերվում նաև արհեստավորների ու մանր ձեռնարկատերերի նկատմամբ:

1921 թ. հունվարին տեղի ունեցավ ՀԿ(բ)Կ առաջին համագումարը, որտեղ խորհրդային և տնտեսական շինարարության հիմնահարցերի մասին զեկուցեց Ալ. Մյասնիկյանը: Համագումարից հետո ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար ընտրվեց Աշոտ Հովհաննիսյանը:

1921 թ. աշնանից սկսվեցին հանրապետության ավերված տնտեսության վերականգնման աշխատանքները: Առաջին միջոցառումները վերաբերում էին գյուղատնտեսությանը: Սկսվեց ոռոգման ցանցի վերականգնումը: 1925 թ. ավարտվեց Շիրակի ջրանցքի կառուցումը, որով ոռոգելի դարձան մոտ 10 հազար հեկտար հողատարածքներ: Անհատ գյուղացիների կարիքները բավարարելու նպատակով պետությունը կատարում էր ֆինանսական խոշոր հատկացումներ: Արդեն 1925-1926 թթ. տնտեսական տարում հանրապետության ցանքատարածությունները հասան 1913 թ. մակարդակին:

Անհրաժեշտ քայլեր արվեցին նաև արդյունաբերական փոքրաթիվ ձեռնարկությունների վերականգնման ուղղությամբ: Գյուղատնտեսության բնագավառում ձեռք բերված հաջողությունները նպաստեցին սննդարդյունաբերության և հատկապես հումքի վերամշակման ձեռնարկությունների վերագործարկմանը: Որոշ աշխատանքներ կատարվեցին Ալավերդու և Կապանի պղնձահանքերը շահագործելու ուղղությամբ: Մեծ կարևորություն էր տրվում նոր ձեռնարկությունների կառուցմանը: Հիմնվեցին տեքստիլ, պոլիգրաֆ, բամբակազտիչ, սննդի ձեռնարկություններ, սկսվեց մի շարք էլեկտրակայանների և երկաթուղիների շինարարությունը, որոնց սարքավորումներն ու մեքենաները հիմնականում ստացվում էին Ռուսաստանից: Աշխատավորության հայրենանվեր աշխատանքի շնորհիվ 1927 թ. Հանրապետության ժողովրդական տնտեսությունը բոլոր ցուցանիշներով գերազանցեց նախապատերազմյան՝ 1913 թվականի մակարդակը: Խաղաղ, ստեղծագործ աշխատանքը, որին այնքան կարոտ էր հայ ժողովուրդը, դարձել էր նրա կյանքի իմաստը:

գ. Ինդուստրացման քաղաքականությունը: 1920-ական թվականների կեսերին մշակվեց կապիտալիստական շրջափակման մեջ գտնվող մեկ առանձին վերցրած երկրում սոցիալիստական հասարակարգ կառուցելու տեսությունը: Սոցիալիզմ կառուցելու համար անհրաժեշտ էր ինդուստրացնել երկիրը, կոլեկտիվացնել գյուղատնտեսությունը և կենսագործել կուլտուրական շինարարություն: Ելնելով այդ նպատակադրումից՝ Կոմունիստական կուսակցության XIV համագումարը (1925 թ.) առաջ քաշեց երկիրն ինդուստրացնելու ծրագիրը, որի կենսագործումը հնարավորություն պիտի տար դուրս գալու դարավոր հետամնացությունից և ստեղծելու սոցիալիզմի նյութատեխնիկական բազա: Նախատեսվում էր կառուցել գործարաններ ու ֆաբրիկաներ, ծավալել խճուղային և երկաթուղային շինարարություն, վերազինել բանակը, հասնել տնտեսության հաշվեկշռում արդյունաբերական արտադրանքի առաջնայնությանը: Արդյունաբերական ձեռնարկությունների կառուցումը պլանավորելու և դրանց ֆինանսական ու նյութական մատակարարումն ապահովելու նպատակով մշակվեց տնտեսության զարգացման հնգամյա պլան, որով Է'լ ավելի ամրապնդվեց ղեկավարման վարչա-

հրամայական համակարգը: Ինդուստրացման քաղաքականությունը հաջող իրականացնելու նպատակով ծանր հարկեր դրվեցին բնակչության և, առաջին հերթին, գյուղացիության վրա:

Ինդուստրացման քաղաքականությամբ ծրագրվում էր սեղմ ժամկետում նոր տեխնիկայի հիման վրա վերակառուցել ամբողջ ժողովրդական տնտեսությունը, ապահովել երկրի ինքնուրույնությունն ու անկախությունը: Նրա հիմնական առանձնահատկությունն այն էր, որ անհրաժեշտ էր սկսել ծանր արդյունաբերության զարգացումից, որը խոշոր կապիտալ ներդրումներ էր ենթադրում: Բայց չկային անհրաժեշտ կադրեր, փորձառու բարձրորակ մասնագետներ: Այսպիսի ծանր պայմաններում սկսվեց ԽՍՀՄ ինդուստրացումը:

Ինդուստրացման ծրագրով նախատեսվում էր խոշոր արդյունաբերական բազաներ կառուցել ԽՍՀՄ բոլոր հանրապետություններում. դա տնտեսականից բացի կուսենար կարևոր սոցիալական նշանակություն: 1926 թ. Հայաստանի բնակչությունը 881 հազար էր, որից միայն 19% էր բնակվում քաղաքներում: Ընդ որում քաղաքային բնակչության զգալի մասը նույնպես զբաղվում էր գյուղատնտեսությամբ: Ինդուստրացման կենսագործմամբ նախատեսվում էր նախադրյալներ ստեղծել հանրապետության բնակչության սոցիալական կառուցվածքի փոփոխության, բանվոր դասակարգի առաջնակարգ դերի բարձրացման համար:

1920-ական թվականներին Հայաստանում վերականգնվեցին և վերակառուցվեցին մի շարք արդյունաբերական ձեռնարկություններ: Պղնձարդյունաբերության վերականգնման հետ մեկտեղ Ալավերդիում կառուցվեց պղնձաձուլական նոր գործարան, Կապանում՝ հանքահարստացուցիչ ֆաբրիկա: Երևանի կարբիտի, Ալավերդու ծծմբաթթվի և պղնձարջասպի, Վանաձորի կալցիումի գործարանների կառուցումով նախապատերազմյան տարիներին ստեղծվեց արագ զարգացող քիմիական արդյունաբերություն: Հատուկ ուշադրություն դարձվեց տեղական հումքային հարստությունների արդյունահանման և վերամշակման վրա: Սկիզբ դրվեց չինանյութերի արդյունաբերությանը: Հայտնաբերվեցին և սեղմ ժամկետում շահագործման հանձնվեցին տուֆի, մարմարի, պեմզայի հանքավայրեր: Շինանյութերը

սկսեցին արտահանվել ԽՍՀՄ մյուս հանրապետություններ: Արարատում կառուցվեց ցեմենտի հզոր գործարան, Լենինականում ընդլայնվեց տեքստիլ արդյունաբերությունը: 1920-1930-ական թվականներին Հայաստանում կառուցվեց մոտ 50 արդյունաբերական ձեռնարկություն, որի շնորհիվ հանրապետության արդյունաբերության համախառն արտադրանքի ծավալը զգալիորեն գերազանցեց գյուղատնտեսական արտադրանքին: Առաջացան բանվորական ավաններ, վերացավ գործազրկությունը:

Երկրի ինդուստրացման ծրագրում մեծ տեղ էր հատկացվում էլեկտրիֆիկացմանը: 1926 թ. շահագործման հանձնվեց Երևանի հիդրոէլեկտրակայանը, որը ինդուստրացման առաջնեկներից էր: 1927 թ. հիմնադրվեց Զորագէսի հիդրոկայանը, որն իր տեխնիկական բարդ կառուցվածքով և բարձր ճնշումային հզորությամբ ԽՍՀՄ-ում եզակի կառույց էր: Ծավալվեց Սևան-Հրազդան կասկադի առաջին հերթի՝ Քանաքեռ ՀԷԿ-ի շինարարությունը: Տեղական նշանակություն ունեցող հիդրոէլեկտրակայաններ կառուցվեցին Վանաձորում, Կամոյում, Իջևանում, Մեղրիում և այլ վայրերում: 1932 թ., նախապատերազմյան շրջանի համեմատությամբ, էլեկտրաէներգիայի արտադրանքն ավելացավ 10 անգամ, որը մեծապես նպաստեց արդյունաբերության աննախընթաց զարգացմանը:

Բայց ինդուստրացման քաղաքականության կենսագործման ժամանակ եղան նաև բացթողումներ: Հարկ եղած ուշադրություն չէր դարձվում տեղական հումքի վերամշակմանը, սխալներ էին թույլ տրվում արդյունաբերության տեղաբաշխման գործում, որոշակի անհամամասնություններ կային բանվորական կադրերի և բարձրորակ մասնագետների պատրաստման բնագավառում և այլն:

Չնայած դրան, նախապատերազմյան հնգամյակների տարիներին ինչպես ամբողջ ԽՍՀՄ-ում, այնպես էլ Հայաստանում արդյունաբերությունը սկսեց առաջատար դեր խաղալ տնտեսության մեջ, որի շնորհիվ մեծապես աճեց բանվոր դասակարգի և ինժեներատեխնիկական անձնակազմի թվաքանակը, բարձրացավ որակյալ մասնագետների տեսակարար կշիռն արդյունաբերության տարբեր ճյուղերում:

Այդ աշխատանքները գլխավորում էին Հայաստանի կոմունիստական կազմակերպությունները: Հանապետության Կոմկուսի առաջին քարտուղարը 1930 թ. մայիսից Աղասի Խանջյանն էր:

1932 թ. լուծարվեց Ժողտնտխորհը, որի դերը մեծ էր հանրապետության արդյունաբերության զարգացման գործում, և կազմավորվեցին համապատասխան ժողովրդական կոմիսարիատներ:

դ. Գյուղատնտեսության կոլեկտիվացումը: Գյուղում մանր սեփականատերերի դասակարգը վերացնելու համար և ելնելով մեկ առանձին երկրում սոցիալիզմի կառուցման տեսությունից՝ Կոմունիստական կուսակցության XV համագումարը (1927 թ.) որոշում ընդունեց գյուղատնտեսության կոլեկտիվացման մասին:

Թեև սկզբնական շրջանում նախատեսվում էր գյուղի կոլեկտիվացումը կատարել աստիճանաբար ու կամավոր, բայց 1928 թ. հացամթերումների դժվարությունները հաշվի առնելով՝ որոշվեց անցնել համատարած կոլեկտիվացման, օտարել ունևորների հացի պաշարները և վերացնել կուլակությունը որպես գյուղական բուրժուազիա: Ամենուր սկսվեց կուլակային տնտեսությունների ունեցվածքի բռնագրավում, շատ տեղերում կուլակներին բանտարկում կամ աքսորում էին, որի հետևանքով գյուղերը զրկվում էին բանիմաց աշխատավոր ձեռքերից: Զուգահեռաբար կազմակերպվում էին կոլեկտիվ տնտեսություններ և գյուղացիներին հարկադրում մտնել դրանց մեջ: Մի կողմ դրվեցին համոզման և կամավորության մեթոդները: Մանր սեփականատեր գյուղացին, որը ՆԷՊ-ի տարիներին հազիվ էր ամրապնդել իր տնտեսությունը, չէր կամենում հրաժարվել ունեցվածքից և մտնել կոլեկտիվ տնտեսություն:

Ձևավորվող մենատիրության պայմաններում, երբ այլակարծությունը դատապարտվում էր որպես թշնամական երևույթ, կուսակցությունը մշակեց կոլեկտիվացումն արագ ավարտելու միջոցառումներ, որոնք պարտադրաբար իրագործվեցին ամենուր, այդ թվում և Հայաստանում: Հարկադրական կոլեկտիվացման քաղաքականության դեմ տեղի ունեցան դժգոհություններ և նույնիսկ ելույթներ: Հայաստանում դա հատկապես սուր դրսևորվեց Դարալագյազում (Եղեգնաձոր-Վայք), Տավուշի,

Թալինի, Վեղու (Արարատի) շրջաններում: Խուսափելով մտնել կոլտնտեսություն՝ գյուղացիներից շատերը ոչնչացնում էին իրենց ունեցվածքը, հատկապես՝ անասունները:

Գյուղում ստեղծվել էր ծանր կացություն, ուստի 1930 թ. սկզբներին կոմունիստական կուսակցությունը հրաժարվեց հարկադիր կոլեկտիվացման քաղաքականությունից: Ինչպես ամբողջ երկրում, Հայաստանում ևս բռնությամբ կազմակերպված շատ կոլտնտեսություններ ցրվեցին: Դրանից հետո փոխվեց հարկադրանքի մարտավարությունը: Իշխանություններն անհատական գյուղացիական տնտեսությունների վրա բարձր հարկեր դնելով՝ նրանց ստիպում էին մտնել կոլտնտեսություն: Այլ ելք չունենալով՝ գյուղացին դժկամությամբ համակերպվում էր իշխանությունների պահանջներին: 1932 թ. Հանրապետության գյուղացիության շուրջ 40 տոկոսը դարձել էր կոլտնտեսական: Բռնաճնշումների և տնտեսական հարկադրանքի միջոցով 30-ական թվականների վերջերին Հայաստանում ավարտվեց գյուղացիության կոլեկտիվացումը: Բայց նյութատեխնիկական թույլ բազայի պատճառով նորաստեղծ կոլտնտեսությունները չկարողացան արտադրողական բարձր ցուցանիշների հասնել: Գյուղում ըստ էության գերակշռում էր բնամթերային տնտեսությունը, քանի որ կոլտնտեսությունները իրենց արտադրանքի հիմնական մասը չնչին գներով հանձնում էին պետությանը: Գյուղացին կոլտնտեսությունից հաճախ ոչինչ չէր ստանում և հայտնվում էր ծանր դրության մեջ: Այդ տարիներին բավականին մեծ էր գյուղերի բնակչության արտահոսքը, որը հիմնականում կլանվում էր զարգացող արդյունաբերության կողմից:

ե. Կրթությունը և մշակույթը: Խորհրդային իշխանությունը հենց սկզբից մեծ հոգատարություն ցուցաբերեց ազգային մշակույթի նկատմամբ, որը կարճ ժամանակամիջոցում խոշոր նվաճումների հասավ:

Մշակույթի զարգացման հիմնական նախադրյալը բնակչության անգրագիտության վերացումն էր: Այդ ուղղությամբ իշխանությունների ձեռնարկած միջոցառումները ստանում էին բնակչության լայն աջակցությունը: 1921 թ. Հայաստանի կառավարությունը հատուկ որոշում ընդունեց չափահաս բնակչության անգրագիտությունը վերացնելու մասին: Կազմվեց հատուկ հանձնաժողով, որի ղեկավարությամբ ամբողջ Հանրապետությունում ստեղծվեցին անգրագիտության վերացման կենտրոններ (լիկկյաններ), կազմակերպվեցին տարբեր կարգի դասընթացներ: Այդ ուղղությամբ անգնահատելի աշխատանքներ ծավալեցին ուսուցիչներն ու հասարակական կազմակերպությունները:

Համազգային ջանքերով 1920-1940 թթ. Հանրապետության բնակչության անգրագիտության վերացման խնդիրը հիմնականում լուծվեց: Գրագետ էր դարձել նրա մոտ 84%-ը: Դա մեծ նվաճում էր:

Խորհրդային իշխանությունը առանձին ուշադրություն էր դարձնում ժողովրդական կրթության զարգացմանը: Հատուկ հրովարտակով դպրոցն անջատվեց եկեղեցուց, փակվեցին մասնավոր դպրոցները: Սահմանվեց դպրոցների երկաստիճան համակարգ՝ տարրական և յոթնամյա: Մեծ ուշադրություն դարձվեց դպրոցական շենքերի շինարարությանը: Հիմնականում պետական միջոցներով և տեղական համայնքների օժանդակությամբ բոլոր բնակավայրերում սկսվեց դպրոցական շենքերի կառուցում: Միայն 1926-1932 թթ. կառուցվեց ավելի քան 480 դպրոցական շենք, մեծ չափով աճեց սովորողների թիվը: Արդեն 1940-1941 ուս. տարում Հանրապետությունում աշակերտների թիվը հասավ 353 հազարի: Միաժամանակ իշխանությունները եռանդուն ջանքեր էին գործադրում մանկավարժական կադրեր պատրաստելու ուղղությամբ: Ձեռնարկված միջոցառումների հետևողական կենսագործման շնորհիվ 1932 թ. Հայկական ԽՍՀ-ում լիովին իրագործվեց տարրական ուսուցումը և անցում կատարվեց յոթնամյա կրթության: Դպրոցական ցանցի ընդլայնման հետ մեկտեղ բարելավվում և կատարելագործվում էին ուսուցման մեթոդները: Նախապատերազմյան տարիներին դպրոցական շինարարության և ուսուցման բնագավառում ձեռքբերված հաջողություններն անգնահատելի էին:

Հայաստանում մեծ աշխատանքներ կատարվեցին նաև բարձրագույն կրթության բնագավառում: Հաջողությամբ գործում էր Երևանի պետական համալսարանը՝ իր բնագիտական և հասարակագիտական ֆակուլտետներով: 1923 թ. բացվեց Երևանի պետական կոնսերվատորիան, իսկ 1928 թ.՝ անասնա-

բուժական-անասնաբուծական ինստիտուտը, որը կոչված էր կադրեր պատրաստելու Անդրկովկասի Հանրապետությունների համար: Ժողովրդական տնտեսության վերականգնման ու վերակառուցման պահանջներին համապատասխան՝ մեծապես աճեց բարձրորակ կադրերի պահանջը: 1930 թ. Երևանի պետական համալսարանի ֆակուլտետներից մի քանիսը վերածվեցին առանձին ինստիտուտների: Կազմակերպվեցին պոլիտեխնիկական, գյուղատնտեսական, բժշկական, մանկավարժական ինստիտուտները: Արդեն 1940 թ. Հանրապետությունում գործում էր 9 բարձրագույն ուսումնական հաստատություն, որոնցում սովորում էր ավելի քան 11 հազար ուսանող: Հանրապետությունը լիովին բավարարված էր բարձրագույն որակավորում ունեցող մասնագետներով:

Խորհրդային իշխանության առաջին տասնամյակներին գիտական մտքի զարգացման հիմնական կենտրոնը Երևանի պետական համալսարանն էր, ուր հավաքված էր Հանրապետության գիտական հիմնական ներուժը: Դեռևս 1921 թ. էջմիածնում հիմնվել էր Հայաստանի Գիտական ինստիտուտը, որը 1925 թ. վերափոխվել էր Գիտության և արվեստի ինստիտուտի: Այդտեղ ընդգրկված էին բնական և հասարակական գիտությունների ներկայացուցիչներ, որոնք կատարում էին հետազոտական լուրջ աշխատանքներ: Այդ ինստիտուտում էին աշխատում պատմաբաններ Լեոն, Հ. Մանանդյանը և Ա. Հովհաննիսյանը, լեզվաբաններ Հ. Աճառյանը և Գր.Ղափանցյանը, գրականագետ Մ. Աբեղյանը, նկարիչ Մ. Սարյանը, ճարտարապետ Ա. Թամանյանը և ուրիշներ: Բնական գիտությունների զարգացման գործում անգնահատելի աշխատանքներ կատարեցին էներգետիկ Հ. Տեր-Աստվածատրյանը, երկրաբան Հ. Կարապետյանը, քիմիկոս Լ. Ռոտինյանը և ուրիշներ: Գիտության բոլոր ճյուղերի զարգացումը խրախուսվում էր իշխանությունների կողմից: 1935 թ. Հանրապետության գիտական մտքի զարգացման գործում չրջադարձ հանդիսացավ ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղի (ԱրմՖԱՆ) ստեղծումը, որի նախագահ ընտրվեց ականավոր արևելագետ Հ. Օրբելին: Այստեղ միավորվեցին Հանրապետությունում գործող գիտահետազոտական ինստիտուտներն ու հիմարկները, որոնք աստիճանաբար ընդլայնելով իրենց հետազոտությունների չրջանակները՝ ձեռնամուխ եղան նոր ուղղությունների հիմնադրմանը:

Մեծ վերելք էր ապրում գրական կյանքը: Գրական հին սերնդի (Հ. Թումանյան, Ա. Իսահակյան, Ա. Շիրվանզադե և ուրիշներ) կողքին հանդես եկան նորերը (Ե. Չարենց, Ա. Բակունց, Գ. Մահարի, Ն. Զարյան, Դ. Դեմիրճյան, Վ. Թոթովենց, Զ. Եսայան, Ա. Վշտունի և ուրիշներ): Հանրապետությունում գործում էին գրական տարբեր խմբակներ ու միություններ, որոնք պարբերաբար բանավեճեր էին կազմակերպում գրականության և գրական ժառանգության հարցերի չուրջը, մշակում նոր տեսակետներ: Հայաստանի Կոմկուսի կենտկոմի 1932 թ. որոշմամբ այդ խմբակները միավորվեցին Հայաստանի գրողների միության մեջ: Թեև պարտադրված «սոցիալիստական ռեալիզմի» սկզբունքը դժվարություններ էր ստեղծում որոչ գրողների համար, բայց այդ տարիներին լույս տեսան մեծարժեք բազմաթիվ ստեղծագործություններ:

Բարդ ու հակասական ուղիով էր ընթանում կերպարվեստը: Այդ ժամանակ ստեղծագործում էին Մ. Սարյանը, Ս. Առաքելյանը, Ե. Թադևոսյանը, Հ. Կոջոյանը և ուրիշներ: Նրանց գործերը մեծ ազդեցություն էին ունենում երիտասարդ նկարիչների վրա: 1932 թ. Երևանում ստեղծվեց Հայաստանի խորհրդային կերպարվեստագետների միությունը, որի մեջ ընդգրկվեցին գոյություն ունեցող խմբերն ու ընկերությունները, համախմբվեցին նկարիչներն ու քանդակագործները:

Խոչոր նվաճումներ ձեռք բերվեցին երաժշտության բնագավառում: Կազմակերպվեց Պետական ֆիլհարմոնիան, բացվեց Օպերայի և բալետի պետական թատրոնը՝ իր հոյակապ չենքով, մեծարժեք ստեղծագործություններ էին հեղինակում կոմպոզիտորներ Ալ. Սպենդիարյանը, Ա. Տիգրանյանը, Ա. Խաչատրյանը և ուրիշներ: Հայ երաժշտական արվեստը նրա անխոնջ մշակների ջանքերով նոր աստիճանի բարձրացավ:

Մեծ նվաճումներ ձեռք բերվեցին թատրոնի (Հ. Աբելյան, Վ. Փափազյան, Հ. Ներսիսյան), ճարտարապետության (Ալ. Թամանյան, Կ. Հալաբյան), քանդակագործության (Ա. Սարգսյան, Ե. Քոչար) բնագավառներում:

1920-ական թվականին խորհրդահայ մշակույթի ձեռքբե-

րումների որոշ մասը, անչուշտ, նախորդ շրջանի ժառանգություն պետք է համարել:

1920-1930-ական թվականներին հայկական մշակույթը, հաղթահարելով գաղափարական պաշտոնական լուրջ սահմանափակումները և ներքին հակասությունները, իր լավագույն ձեռքբերումներով շարունակում էր հայոց դարավոր ավանդույթները:

զ. Հասարակական-քաղաքական կյանքը: *Խորհրդային իշխանության ամրապնդման հետ մեկտեղ երկրում տարեցտարի հաստատվում էին հասարակական նոր հարաբերություններ: Գնալով ամրապնդվում էր Կոմունիստական կուսակցության մենատիրությունը, որը թափանցում էր հասարակական-քաղաքական կյանքի բոլոր ոլորտները: Երկրի տնտեսական կյանքում ձեռքբերված հաջողությունները կուսակցությանը դարձրին «անսխալական»:*

Հայաստանի կոմկուսը չնայած ինքնուրույն քաղաքականություն չէր վարում, բայց իր ձեռքում էր կենտրոնացրել հանրապետության ղեկավարման ողջ համակարգը: Հայկոմկուսը նույնպես աստիճանաբար դառնում էր ինքնիշխան ու անքննադատելի, անընդհատ ավելանում էր նրա անդամների թիվը: Երկրի տնտեսական ու քաղաքական կյանքի բոլոր ոլորտներում հարցերը լուծվում էին կոմկուսի գիտությամբ ու հրահանգներով: Բոլոր ղեկավար պաշտոնները վստահված էին կուսակցության անդամներին: Այդ պայմաններում երկրի քաղաքական հիմք հանդիսացող խորհուրդները գնալով դառնում էին ձևական: Նույն բախտին արժանացան սահմանադրության մեջ արձանագրված բազում դրույթներ: Պարբերաբար հրավիրվող խորհուրդների հանրապետական համագումարները որևէ դեր չէին խաղում երկրի տնտեսական և քաղաքական կյանքում: 1920-ական թվականներից Հայաստանը բաժանված էր գավառների և գավառակների, իսկ 1929 թ. կազմակերպվեցին շրջաններ, որոնցում հաստատվեցին շրջանային-տարածքային կուսակցական և խորհրդային կազմակերպություններ՝ իրենց ղեկավար մարմիններով: Կուսակցության անմիջական ղեկավարությամբ էին գործում արհմիությունները և երիտասարդական կոմունիստական կազմակերպությունները: Կոմերիտմիությունը կոչված էր կադրերով համալրելու կուսակցության շարքերը,

պատրաստելու ղեկավար աշխատողներ:

Երկրի *սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքում տեղի ունեցած փոփոխություններն ընդհանրացնելու և դրանց իրավական հիմք տալու համար 1936 թ. դեկտեմբերի 5-ին ԽՍՀՄ Խորհուրդների VIII համագումարն ընդունեց նոր սահմանադրություն, որով հայտարարվեց, որ երկրում կառուցվել է նոր հասարակարգ: ԽՍՀՄ նոր սահմանադրության համաձայն Անդրֆեդերացիան վերացվեց և Հայաստանը, Վրաստանը, Ադրբեջանը նրա կազմի մեջ մտան որպես ինքնուրույն հանրապետություններ: ԽՍՀՄ-ն ընդգրկում էր 11 հանրապետություն:*

ԽՍՀՄ սահմանադրության հիման վրա հանրապետությունները մշակեցին իրենց սահմանադրությունները: Հայաստանի նոր սահմանադրությունը ՀԽՍՀ Գերագույն խորհրդի կողմից ընդունվեց 1937 թ. մարտին: Սահմանադրությունը հաստատեց Հայաստանում սոցիալիստական հասարակարգի կառուցման փաստը, արձանագրեց, որ խորհրդային իշխանության տարիներին հանրապետությունում ձևավորվել է բանվոր դասակարգ, կոլտնտեսային գյուղացիություն և նոր մտավորականություն: Սահմանադրությամբ բազում իրավունքներ էին տրվում բնակչությանը, որոնց մի մասը, սակայն, ձևական էր:

է. Քաղաքական բռնաճնշումները: *Խորհրդային իշխանության հաստատումից հետո տնտեսական-քաղաքական կյանքը աստիճանաբար կենտրոնացնելով իր ձեռքում՝ Կոմունիստական կուսակցության ղեկավարությունը վերցրեց երկրում ամբողջատիրական վարչակարգ հաստատելու ուղի: Մարդ կարող էր պատիժ կրել ոչ միայն տվյալ պահին իր կոնկրետ գործողությունների, այլև անցյալում թույլ տված սխալների համար: Քաղաքական բռնությունները դարձան մարդկանց սարսափի մեջ պահելու, նրանց հնազանդեցնելու և իշխանություններին ենթարկելու միջոց: Ժամանակ առ ժամանակ բռնությունները զանգվածային բնույթ էին կրում:*

Հայաստանի Հանրապետությունում խորհրդային իշխանության բռնաճնշումների առաջին զոհը դարձավ ՀՀ ազգային բանակի սպայակազմը: 1921 թ. հունվարին Հայաստանից Ռյազանի և Ռուսաստանի այլ համակենտրոնացման ճամբարներ աքսորվեցին չուրջ 1400 սպաներ: 1920-ական թվականներին մեկու-

սացվեցին հարյուրավոր նախկին ղեկավար գործիչներ, բանտերը նետվեցին աջ և ձախ թեքումների մեջ մեղադրվող մարդիկ, որոնք Հայաստանում հիմնականում մեղադրվում էին ազգայնականության մեջ:

Ամենուրեք անհանդուրժողականություն էր հանդես բերվում այլախոհ անձանց և հոսանքների նկատմամբ: Հայաստանում քաղաքական հալածանքներն առաջին հերթին ուղղվեցին Դաշնակցության դեմ: Դաշնակցական տեղական կազմակերպություններին հարկադրեցին մամուլում հանդես գալ կուսակցական գործունեությունը դադարեցնելու մասին: Դատապարտելով իրենց կուսակցության անցյալն ու ներկան՝ 1923 թ. Երևանում կայացած դաշնակցականների համագումարը որոշեց Հայաստանում դադարեցնել նրա գործունեությունը: Դաշնակցությունը, որպես ընդդիմադիր ուժ, վերացավ: Շուտով իրենց գործունեությունը դադարեցրին նաև մյուս ոչ կոմունիստական կուսակցություններն ու կազմակերպությունները՝ մենշևիկները, էսէռները, հնչակյանները: Կոմունիստական կուսակցությունն ինչպես ամբողջ ԽՍՀՄ-ում, այնպես էլ Հայաստանում դարձավ միակ կառավարող կուսակցությունը:

Կոմկուսը չէր ընդունում որևէ այլակարծություն, բարձրագույն ղեկավարության հասցեին որևէ քննադատություն: Հաշվեհարդարների ենթարկվեցին մենիշխանության դեմ հանդես եկող քաղաքական ու պետական գործիչները: 1930-ական թվականների սկզբներից թափ էր առնում անձի պաշտամունքն իր բոլոր ավերիչ հետևանքներով: Տարբեր պատճառաբանություններով աշխատանքից ազատվեցին պետական մարմիններում ծառայող «անբարեհույս» տարրերը, օտարահպատակները, բոլոր նրանք, ովքեր փոքր-ինչ կասկածի էին ենթարկվում: Քաղաքական երանգ էին ստանում անհատական հաշվեհարդարները: Բռնաճնշումների ալիքն ուժեղացավ համատարած կոլեկտիվացման շրջանում: Գյուղացիության դիմադրությունը ճնշելու և հարկադրաբար կոլեկտիվացնելու նպատակով միայն 1930 թ. կուլակության դեմ պայքարի պատրվակով ունեզրկվեցին և Հայաստանից աքսորվեցին հազարավոր գյուղացիական քիչ թե շատ բարեկեցիկ ընտանիքներ: Միաժամանակ կատարվում էին համատարած խուզարկումներ և թանկարժեք առարկաների բռնագրավումներ:

Բռնություններից զերծ չմնաց նաև Հայ Առաքելական եկեղեցին: Պետականացվեցին եկեղեցիների ու վանքերի հարստությունները, փակվեց եկեղեցիների մեծ մասը, բռնությունների ենթարկվեցին բազմաթիվ հոգևորականներ: Միայն 1930-1938 թթ. ձերբակալվեց 164 հոգևորական, որոնցից ավելի քան 90-ը գնդակահարվեց:

1930-ական թվականների կեսերից, երբ արդեն վերջնականապես ձևավորվել էր Ստալինի անձի պաշտամունքը և հաստատվել էր նրա միահեծան իշխանությունը, բռնություններն ու հալածանքները զանգվածային բնույթ ընդունեցին: Բռնությունների նոր ալիքի ծավալման առիթ ծառայեց Լենինգրադի կոմունիստների ղեկավար Ս. Կիրովի սպանությունը: Սկսվեց կատարյալ մարդադրոս: Ամենուր «ժողովրդի թշնամիներ» և «գաղտնի կազմակեպություններ» էին հայտնաբերվում ու ոչնչացվում: Նույն քաղաքականությունը կիրառվում էր նաև ազգային հանրապետություններում: Հայաստանում զանգվածային բռնաճնշումները սկսվեցին այն բանից հետո, երբ Թիֆլիսում 1936 թ. կուսակցության Անդրկովկասյան երկրային կոմիտեի քարտուղար, Ստալինի դրածո Լ. Բերիան կազմակերպեց ՀԿ(բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար Աղասի Խանջյանի սպանությունը: Շուտով համատարած ձերբակալությունների պղտոր ալիքը տարածվեց Հանրապետությունով մեկ՝ կլանելով Հայ ժողովրդի լավագույն զավակներից շատերին: Անհիմն մեղադրանքների զոհ դարձան Հայաստանի կառավարության նախկին նախագահ Սահակ Տեր-Գաբրիելյանը, ՀայՀեղկոմի առաջին նախագահ Սարգիս Կասյանը, մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի տնօրեն Ներսիկ Ստեփանյանը և բոլոր այն ղեկավար աշխատողները, որոնք երբևէ առնչվել էին «ժողովրդի թշնամի» Խանջյանի կամ նրա մերձավորների հետ: Բռնաճնշումների ենթարկվեցին գիտության, լուսավորության, արվեստի գործիչներ, գրողներ. գլխատվեց հանրապետության մտավորականության սերուցքը: Նրանց թվում էին Եղիշե Չարենցը, Գուրգեն Մահարին, Ակսել Բակունցը, Վահան Թոթովենցը, Զապել Եսայանը և շատ ուրիշներ: Ձերբակալվեցին, բանտեր նետվեցին կամ գնդակահարվեցին բազմաթիվ շարքային աշխատողներ՝ բանվորներ ու գյուղացիներ, որոնցից շատերն անգամ տարրական պատկերացում

չունեին քաղաքականության մասին: 1930-ական թվականներին Հայաստանում քաղաքական բռնաճնշումների է ենթարկվել մոտ 25 հազար մարդ, որոնց մոտ կեսը գնդակահարվել է: Միայն 1937-1938 թթ. գնդակահարվել է 6250 մարդ:

ՀԿ(բ)Կ Կենտկոմի 1937 թ. սեպտեմբերյան պլենումը աշխատանքից ազատեց կուսակցական և պետական բարձրաստիճան ղեկավարների, այդ թվում ՀԿ(բ)Կ կենտկոմի առաջին քարտուղար Ամատունուն: ՀԿ(բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար ընտրվեց Գրիգոր Հարությունյանը:

4. ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԸ

Հայկական սփյուռքը ձևավորվել է Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին՝ հիմնականում Արևմտյան Հայաստանից հայերի տեղահանման հետևանքով: Թուրքական յաթաղանից մազապուրծ հարյուր հազարավոր հայեր սփռվել են աշխարհով մեկ: Հայերի առավել խոշոր կուտակումներ կային Մերձավոր Արևելքում (Լիբանան, Սիրիա, Եգիպտոս), Բալկանյան թերակղզում (Հունաստան, Բուլղարիա, Ռումինիա), Ֆրանսիայում, ԱՄՆ-ում: Արևմտահայերի խոշոր զանգվածներ հանգրվանեցին Ռուսաստանում և Վրաստանում:

Գաղթավայրերում հայ բնակչության պայմանները սկզբնական շրջանում շատ ծանր էին: Նրանց մեծ մասը, որ մասնագիտական որակավորում չուներ և չգիտեր տեղական լեզուները, հիմնականում կատարում էր ցածր վարձատրվող աշխատանք, որը հազիվ էր բավարարում առօրյա կարիքները: Արտերկրում հայերի զգալի մասը բնակվում էր քաղաքներում, դառնում մշակներ, բանվորներ, զբաղվում արհեստներով և առևտրով:

Սփյուռքահայությունը ձուլումից փրկելու և նրա ազգային դիմանկարը պահպանելու համար արտասահմանի հայկական համայնքներում ստեղծվում էին կրթամշակութային հաստատություններ: Մեծ էր գրեթե բոլոր հայաշատ համայնքներում գործող հայ եկեղեցու դերը, որը սփյուռքահայությանը միավորող և համախմբող մեծ ուժ էր: Հայապահպանման գործում խիստ կարևոր դեր էին խաղում սփյուռքահայ կուսակցություն-

ները: Բայց ինչպես եկեղեցու ներսում, այնպես էլ կուսակցությունների միջև տեղի էր ունենում անզիջում պայքար, որի հետևանքով պառակտվում էին հայ համայնքները: ՀՀ Դաշնակցությունը շարունակում էր հետևողականորեն քննադատել Հայաստանի խորհրդային իշխանությանը, Ռամկավար-ազատական կուսակցությունը թեև չէր ընդունում կոմունիստական գաղափարախոսությունը, բայց Խորհրդային Հայաստանը դիտում էր որպես աշխարհի բոլոր հայերի միակ պետությունը, Խորհրդային Հայաստանի պաշտպանության դիրքերում էր նաև Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցությունը:

Կուսակցություններից բացի սփյուռքահայ համայնքներում գործում էին հասարակական կազմակերպություններ: Իր հանրօգուտ և ազգանվեր գործունեությամբ սփյուռքում մեծ հեղինակություն էր վայելում Հայկական բարեգործական ընդհանուր միությունը (ՀԲԸՄ), որը մասնաճյուղեր ուներ աշխարհի շատ համայնքներում: Բարեգործականը տարբեր գաղութներում հիմնում էր արհեստանոցներ ու ձեռնարկություններ, բացում դպրոցներ, որբանոցներ և հիվանդանոցներ, օգնում հայրենադարձության կազմակերպմանը:

Սփյուռքում հայապահպանման հիմնական գործոններից մեկը մայր հայրենիքի հետ կապերի ամրապնդումն էր: Այդ տեսակետից 1920-1930-ական թվականներին եռանդուն ջանքեր էին գործադրում Սփյուռքի և Հայաստանի մշակույթի գործիչները (Հ. Թումանյան, Ե. Չարենց, Ա. Իսահակյան, Ա. Զոպանյան և ուրիշներ): Այդ կապերի ամրապնդման գործում մեծ դեր խաղաց 1921 թ. ստեղծված Հայաստանի օգնության կոմիտեն (ՀՕԿ), որի առաջին նախագահն էր Հ. Թումանյանը: ՀՕԿ-ը, որ մասնաճյուղեր ուներ տարբեր գաղութներում, գործեց մինչև 1937 թվականը:

Խորհրդային Հայաստանի, որպես համայն հայության հայրենիքի ձգողական ուժը գնալով ուժեղանում էր: Ուստի պատահական չէ, որ 1920-ական թվականներից սկսած՝ հազարավոր հայեր վերադարձան հայրենիք: 1921 թ. Հայաստան եկան Միջագետքի հայ գաղթականների առաջին քարավանները: 1925-1929 թթ. Իրանից, Թուրքիայից, Սիրիայից, Հունաստանից և այլ երկրներից Հայաստան վերադարձավ շուրջ 26 հազար մարդ: Հայրենադարձությունը շարունակվեց նաև հետագայում: 1921-

1936 թթ. հայրենիք էր ներգաղթել ավելի քան 42 հազար մարդ: Եվ դա այն դեպքում, երբ Հայաստանում ծանր էր բնակարանային խնդիրը: Հանրապետության իշխանությունները չէին կարող միայնակ լուծել հայրենադարձված հայերին բնակարաններով ապահովելու հարցը: Ուստի 1920-ական թվականներից Սփյուռքի հայրենակցական միությունների նախաձեռնությամբ Հայաստանում հիմնվեցին նոր բնակավայրեր և դրանք, որպես կանոն, կոչվեցին Արևմտյան Հայաստանի քաղաքների անուններով՝ Նոր Արաբկիր, Նոր Բութանիա, Նոր Խարբերդ, Նոր Մալաթիա և այլն, որոնք հետագայում ընդգրկվեցին մայրաքաղաք Երևանի տարածքի մեջ:

Հայաստանի իշխանությունները տարբեր ուղիներով ամրապնդում էին Հայրենիք-Սփյուռք կապերը, նպաստում արտերկրի հայ բնակչության ֆիզիկական գոյության և հոգևոր ինքնության պահպանմանը:

5. ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1941–1945 թթ.)

ա. Պատերազմի սկիզբը: 1941 թ. հունիսի 22-ի վաղ առավոտյան ֆաշիստական Գերմանիան խախտելով ԽՍՀՄ-ի հետ 1939 թ. օգոստոսի 23-ին 10 տարի ժամկետով կնքած պայմանագիրը՝ առանց պատերազմ հայտարարելու, ուխտադրժորեն հարձակվեց Խորհրդային Միության վրա: Նա իր առջև խնդիր էր դրել «կայծակնային» պատերազմի միջոցով մի քանի շաբաթվա ընթացքում ոչնչացնել կարմիր բանակը, զավթել Մոսկվան, Լենինգրադը, Կիևը և երկրի զգալի մասը, ստրկացնել ԽՍՀՄ ժողովուրդներին և ստեղծել մեծ կայսրություն: Խորհրդային երկրի վրա կախվեց մահացու վտանգ:

Դեռևս 1939 թ. օգոստոսի 22-ին, Լեհաստանի վրա հարձակվելուց մի քանի օր առաջ Օբերզալցբուրգում Երրորդ ռայխի բարձրագույն հրամանատարության հետ հանդիպման ժամանակ Հիտլերը հատուկ ցուցում էր տվել իր զորավարներին՝ առաջիկա պատերազմում անխնա բնաջնջել սլավոնական ժողովուրդներին՝ տղամարդկանց, կանանց, երեխաներին՝ ուշադրություն չդարձնելով համաշխարհային հասարակական կարծիքի վրա: Ապա, իբրև այդ հրեշավոր միտքը հաստատող վկայություն, ավելացրել էր. «Իսկ այժմ, մեր ժամանակներում, ո՞վ է հիշում 1915 թ. Թուրքիայում հայերի բնաջնջման մասին»:

Պատերազմն սկսվելու հենց առաջին իսկ օրվանից հայ ժողովուրդը, Խորհրդային Միության բոլոր ժողովուրդների հետ, մեկ մարդու պես ոտքի կանգնեց պաշտպանելու իր հայրենիքը: Պատերազմի սկզբին Թուրքիան Խորհրդային Հայաստանի սահմանների երկայնքով կուտակել էր մեծ թվով զինված ուժեր և հարմար պահի էր սպասում ներխուժելու Անդրկովկաս:

1941 թ. օգոստոսի 25-ին "Правда" թերթը՝ «Հայ ժողովուրդը Խորհրդային Միության ազատագրական պատերազմի մարտական մասնակիցն է» առաջնորդող հոդվածում նշել է. «Հայ ժողովուրդը իր բազմադարյան պատմության մեջ քանիցս ենթարկվել է օտար բռնակալների հարձակումներին, նա գիտե, թե ինչ բան են կոտորածը, ավերը, սովը, բռնությունները: Հայ ժողովուրդը չի մոռացել հայերի ֆիզիկական ոչնչացումը, որ կազմակերպել էր արյունռուչտ Հիտլերի նախորդ Վիլհելմ կայսրը՝ Առաջին իմպերիալիստական պատերազմի տարիներին: Այդ նպատակով էլ, երբ արյունալի հրդեհի պես բռնկվեց պատերազմը, որն սկսել է մարդակեր Հիտլերը Խորհրդային Միության դեմ, ամբողջ հայ ժողովուրդը մեկ մարդու պես ոտքի կանգնեց պաշտպանելու հայրենիքը»:

Պատերազմը սկսվելու պահին կարմիր բանակի շարքերում ծառայում էր շուրջ 60.000 հայ: 1941 թ. հունիսի 23-ից հանրապետությունում սկսված զանգվածային զորահավաքի, ապա ամենամյա զորակոչների հետևանքով Խորհրդային Հայաստանից բանակ մեկնեցին ավելի քան 300.000, իսկ ԽՍՀՄ մյուս հանրապետություններից՝ ևս ավելի քան 200.000 հայեր: Իսկ շուրջ 100.000 հայեր պատերազմին մասնակցեցին ԽՍՀՄ դաշնակից երկրների բանակների և ֆաշիստական Գերմանիայի կողմից զավթված երկրների դիմադրական ու պարտիզանական շարժման շարքերում: Պատերազմի ընթացքում ռազմաճակատներում զոհվեց ավելի քան 200.000 հայ զինվոր:

Խորհրդային Հայաստանում իրագործված ռազմամոբիլիզա-

ցիոն աշխատանքների մեջ հատուկ տեղ էր գրավում ազգային դիվիզիաների կազմավորումը: 1941-1942 թթ. Խորհրդային Հայաստանի տարածքում կազմավորվեցին Հայկական 89-րդ, 408-րդ, 409-րդ և 261-րդ հրաձգային դիվիզիաները: Ավելի վաղ՝ 1920-1922 թթ., Հայաստանում կազմավորված Հայկական 76-րդ լեռնահրաձգային դիվիզիան, 1941 թ. հունիսի 22-ից հուլիսի 22-ը համալրվելով հանրապետության մարդկային և նյութական միջոցներով՝ սեպտեմբերին մեկնեց ռազմաճակատ: Դիվիզիայի 16.000-անոց անձնակազմից ավելի քան 14.000-ը հայեր էին: 261-րդ դիվիզիան պատերազմի տարիներին ռազմաճակատ չմեկնեց, քանի որ պաշտպանում էր խորհրդաթուրքական սահմանը: Թվով վեցերորդ հայկական զորամիավորումը 390-րդ հրաձգային դիվիզիան էր, որը 1942 թ. փետրվար-մարտ ամիսներին Կերչ թերակղզում ծավալված արյունալի կռիվների ժամանակ վերակազմավորվեց հայկական դիվիզիայի:

բ. Սխրագործություններ առաջին մարտերում: Ռազմաճակատներում հայ ժողովրդի զավակները ցուցաբերում էին անօրինակ անձնազոհություն, տալիս հերոսականության անթիվ առասպելական օրինակներ:

Պատերազմի առաջին օրերին գերմարդկային սխրանք կատարեցին Բրեստի ամրոցի կայազորի պաշտպանները: Նրանց թվում կար ավելի քան 200 հայ, որոնց կեսից ավելին զորակոչվել էր Կապանի շրջանից: 1941 թ. հունիսի 22-ից մինչև հուլիսի 20-ը ամրոցի պաշտպանները արիաբար դիմագրավեցին հակառակորդի թվապես մի քանի անգամ գերակշռող ուժերին՝ կաշկանդելով նրանց առաջխաղացումը: Ամրոցի խիզախ պաշտպաններից էին Սամվել Մաթևոսյանը, Սոս Նուրիջանյանը, Վահան Գրիգորյանը և ուրիշներ:

Մարտերում կատարած սխրանքների համար հայերից առաջինը կառավարական բարձր պարգևի արժանացավ ավագ լեյտենանտ, օդաչու Պատրիկ Գազազյանը. ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1941 թ. հուլիսի 8-ի հրամանագրով նա պարգևատրվեց մարտական Կարմիր դրոշի շքանշանով: 1941 թ. հունիսի 24-ին Սարգիս Հայրապետյանն իր այրվող ինքնաթիռը գիտակցաբար մխրճեց հակառակորդի տանկային

շարասյան մեջ՝ կյանքի գնով կատարելով մարտական առաջադրանքը:

Պատերազմի առաջին տարում կատարած սխրանքների համար 4 հայորդիների շնորհվեց Խորհրդային Միության հերոսի կոչում: Հայերից առաջինն այդ բարձր կոչմանն արժանացավ օդաչու Լազար Զափչախովը, երկրորդը՝ Բալթյան նավատորմի ռազմաօդային ուժերի օդաչու Նելսոն Ստեփանյանը, երրորդը՝ գումարտակի հրամանատար լեյտենանտ Խաչատուր Մելիքյանը, չորրորդը՝ հրետանային մարտկոցի հրամանատար լեյտենանտ Սերգեյ Օգանովը: Դոնի Ռոստովի Մյասնիկյանի շրջանի Մեծ Սալա հայկական գյուղի Բերբեր Օբա կոչվող բարձունքում տեղակայված Ս. Օգանովի մարտկոցը, որն ուներ 24 հոգուց բաղկացած անձնակազմ, 1941 թ. նոյեմբերի 17-18-ը անհավասար մարտ մղեց հակառակորդի 50 տանկերի դեմ և ոչնչացրեց դրանցից 30-ը: Խիզախ հրետանավորները զոհվեցին, բայց իրենց կյանքի գնով կատարեցին մարտական առաջադրանքը՝ թույլ չտալով թշնամուն մտնել Դոնի Ռոստով:

1941 թ. հուլիսի 10-ից մինչև սեպտեմբերի 10-ը տեղի ունեցած Սմոլենսկի ճակատամարտում մարտիկների ցուցաբերած զանգվածային հերոսության և ռազմական բարձր վարպետության արդյունքում ծնվեց խորհրդային գվարդիան: Առաջին գվարդիականների թվում էր 395-րդ հրաձգային գնդի հրամանատար մայոր Համազասպ Բաբաջանյանը, որը գվարդիականի պատվավոր կոչման արժանանալու հետ մեկտեղ պարգևատրվեց Կարմիր դրոշի շքանշանով: Դա ապագա ԽՍՀՄ զրահատանկային զորքերի գլխավոր մարշալի առաջին մարտական պարգևն էր:

Հայրենական մեծ պատերազմի առաջին օրերին իր ռազմավարական ունակություններով ու խիզախությամբ աչքի ընկավ ԽՍՀՄ ռազմածովային ժողկոմի առաջին տեղակալ, Գլխավոր ծովային շտաբի պետ ծովակալ Հովհաննես Իսակովը (Տեր-Իսահակյան): Իսակովը զբաղվում էր Լենինգրադի հրետանային պաշտպանության ամրապնդման գործերով: Հետագայում նրան շնորհվեց Խորհրդային Միության նավատորմի ծովակալի և Խորհրդային Միության հերոսի կոչում:

Արևմտյան ռազմաճակատի ռազմաօդային ուժերի շտաբի

պետն էր գնդապետ Սերգեյ Խուդյակովը (Արմենակ Խամփերյանց): Արտակարգ դժվարին պայմաններում նա ղեկավարեց շտաբի աշխատանքը, կապ հաստատեց բոլոր զորամասերի հետ: Շնորհիվ դրա միայն պատերազմի առաջին օրը Արևմտյան ռազմաճակատի օդաչուները ոչնչացրին հակառակորդի 100 ինքնաթիռ: Հետագայում Խուդյակովին շնորհվեց ավիացիայի մարշալի (առաջին հայ մարշալը) կոչում, առաջ քաշվեց օդային բանակի, ապա ամբողջ կարմիր բանակի ռազմաօդային ուժերի շտաբի պետի պաշտոնում:

Հայրենական մեծ պատերազմի առաջին մարտերում իրենց խիզախությամբ և մարտավարական հմտությամբ աչքի ընկան Հարավարևմտյան ռազմաճակատի շտաբի օպերատիվ բաժնի պետ գնդապետ Իվան (Հովհաննես) Բաղրամյանը (հետագայում Խորհրդային Միության մարշալ, Խորհրդային Միության կրկնակի հերոս), նույն ռազմաճակատի հրետանու պետ, Խորհրդային Միության հերոս, հրետանու գեներալ-լեյտենանտ Միքայել Պարսեղովը (հետագայում հրետանու գեներալ-գնդապետ), Հարավային ռազմաճակատի հրետանու պետ գնդապետ Իվան Վեքիլովը, 12-րդ բանակի շտաբի պետ գեներալ-մայոր Բագրատ Առուչանյանը և շատ ուրիշներ:

գ. Պատերազմի գլխավոր ճակատամարտերում: 1941 թ. սեպտեմբերի 30-ից մինչև 1942 թ. ապրիլի 20-ը տեղի ունեցավ Հայրենական մեծ պատերազմի առաջին շրջանի ամենանշանավոր ճակատամարտերից մեկը՝ **Մոսկվայի ճակատամարտը:** Պաշտպանական և հարձակողական գործողությունների ընթացքում կարմիր բանակը ոչ միայն կասեցրեց ֆաշիստական «Կենտրոն» բանակային զորախմբի առաջխաղացումը Մոսկվայի մատույցներում, այլև հզոր հակահարվածով նրան 100-250 կմ հետ շպրտեց դեպի արևմուտք: Այդ հաղթանակը ցրեց գերմանաֆաշիստական բանակների անպարտելիության մասին առասպելները, նպաստեց հակահիտլերյան դաշինքի ամրապնդմանը:

Մոսկվայի ճակատամարտին ռուսների, ուկրաինացիների, բելոռուսների, ԽՍՀՄ մյուս ժողովուրդների ներկայացուցիչների հետ մասնակցեցին մի քանի հազար հայորդիներ: Նրանց թվում էր գեներալ-մայոր Հովհաննես Բաղրամյանը: Այդ ճակատամարտում տարած հաղթանակի գործում իրենց արժանի ավանդը ներդրեցին նաև դիվիզիայի հրամանատար փոխգնդապետ Սարգիս Մարտիրոսյանը (հետագայում գեներալ-լեյտենանտ, Խորհրդային Միության հերոս) և 239-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար գնդապետ Հայկ Մարտիրոսյանը (հետագայում գեներալ-մայոր) և ուրիշ հրամանատարներ:

Հայ ռազմիկներն իրենց արժանի ավանդը ներդրեցին նաև **Ստալինգրադի ճակատամարտում** (17 հուլիսի 1942 — 2 փետրվարի 1943): Հայրենական պատերազմի ամենախոշոր և վճռական նշանակություն ունեցող այդ ճակատամարտում կարմիր բանակը տարավ պատմական խոշորագույն նշանակություն ունեցող հաղթանակ, որն ավարտվեց գերմանական մի մեծ զորախմբի շրջապատումով և լրիվ ջախջախումով: Հակառակորդն այստեղ կորցրեց ավելի քան 1,5 միլիոն մարդ՝ սպանված, վիրավոր և անհայտ կորած, որը կազմում էր խորհրդագերմանական ճակատում մարտնչող ֆաշիստական զորքերի 1/4 մասը: Ստալինգրադի ճակատամարտը վճռական բեկում մտցրեց ինչպես Հայրենական մեծ պատերազմի, այնպես էլ Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքի մեջ: Ստալինգրադի տակ ֆաշիստական զորքերի պարտությունը ցնցեց Երրորդ ռայխի հիմքերը, խարխլեց նրա նկատմամբ իր դաշնակից երկրների վստահությունը, նպաստեց Գերմանիայի կողմից զավթված եվրոպական մի շարք երկրներում դիմադրական շարժման ուժեղացմանը: Ճապոնիան ստիպված էր ժամանակավորապես հրաժարվել ԽՍՀՄ նկատմամբ ակտիվ գործողությունների դիմելու ծրագրից, իսկ Թուրքիան, որը պատրաստվում էր 1942 թ. նոյեմբերի 24-ին հարձակվել Խորհրդային Միության վրա, հարկադրված եղավ իր 26 դիվիզիաները հետ քաշել Խորհրդային Հայաստանի սահմաններից: Ստալինգրադի ճակատամարտում կատարած սխրանքների համար Խորհրդային Միության հերոսի կոչում շնորհվեց ավիաէսկադրիլիայի հրամանատար ավագ լեյտենանտ Սերգեյ Բուռնազյանին, որը օդային մարտերում ցած գցեց հակառակորդի 22 ինքնաթիռ: Իր խիզախությամբ աչքի ընկավ գվարդիայի մայոր Մաթևոս Մաղաթյանը, որը պարգևատրվեց Լենինի շքանշանով: Նման պարգևի արժանացան նաև տանկային բրիգադի կոմիսար Գրիգոր Գալուստովը, որի բրի-

գաղը Ստալինգրադի մատույցներում ոչնչացրեց հակառակորդի 218 տանկ:

Ստալինգրադյան ճակատամարտին սկզբից մինչև վերջ ակտիվորեն մասնակցեց նախկին Հայկական 76-րդ հրաձգային դիվիզիան, որը մարտերում աչքի ընկնելու համար վերակազմավորվեց 51-րդ գվարդիական հրաձգային դիվիզիայի:

Դոնի ճակատի մարտերում աչքի ընկան քաղվարչության պետ գեներալ-մայոր Սերգեյ Գալաջևը, հրետանու գեներալ-մայոր Իվան Վեքիլովը, 5-րդ տանկային բանակի ռազմական խորհրդի անդամ գեներալ-մայոր Հայկ Թումանյանը, 60-րդ մոտոհրաձգային բրիգադի հրամանատար փոխգնդապետ Ասքանազ Կարապետյանը (հետագայում գեներալ-մայոր, Խորհրդային Միության հերոս), Ստեփան և Վլադիմիր Միկոյան եղբայրները, հետախույզ Սուրեն Միրզոյանը, սակրավոր Սուրեն Ավետիսյանը և շատ ուրիշներ:

Հայ ռազմիկներն ակտիվ մասնակցություն ունեցան նաև Հայրենական մեծ պատերազմի մյուս նշանավոր՝ **Կուրսկի ճակատամարտին**, որը տեղի ունեցավ 1943 թ. հուլիսի 5-ից մինչև օգոստոսի 23-ը: Կուրսկի ճակատամարտում կարմիր բանակը ոչ միայն ամբողջովին ջախջախեց հակառակորդի 30 ընտիր դիվիզիաներից բաղկացած զորախմբավորումը, այլև ընդմիշտ թաղեց գերելյան ստահոդ քարոզչության սին առասպելը, թե խորհրդային զորքերն ընդունակ են միայն հաղթելու ամեռային պայմաններում: Կուրսկի աղեղում կրած պարտության հետևանքով լիովին կործանվեց գերմանաֆաշիստական բանակի հարձակողական ռազմավարությունը. գերմանական բանակը ստիպված էր ամբողջ ճակատով մեկ անցնել պաշտպանության: Այդ ճակատամարտում տարած հաղթանակի գործում ցուցաբերած հերոսությունների համար հայ ժողովրդի զավակներից շատերը արժանացան կառավարական բազմապիսի պարգևների: Մարտերում իրենց խիզախությամբ առավել աչքի ընկած գնդապետ Գրիգոր Գալուստովին և լեյտենանտ Վլադիմիր Իոնիսյանին հետմահու շնորհվեց Խորհրդային Միության հերոսի կոչում: Սուվորովի 1-ին աստիճանի զորավարական բարձրագույն շքանշանով պարգևատրվեց 11-րդ գվարդիական բանակի հրամանատար գեներալ-լեյտենանտ Հովհաննես Բաղրամյանը,

որին շնորհվեց նաև գեներալ-գնդապետի կոչում: Նման պարգևի և ավիացիայի գեներալ-գնդապետի կոչման արժանացավ Կարմիր բանակի ռազմաօդային ուժերի շտաբի պետ Սերգեյ Խուդյակովը (Արմենակ Խամփերյանցը):

Հիշատակության է արժանի օդաչու, ավագ լեյտենանտ Էդուարդ Բունիաթյանի անձնազոհ սխրանքը: 1943 թ. օգոստոսի 3-ին Բելգորոդի շրջանում մարտական հերթական առաջադրանքը կատարելիս թշնամու զենիթային – հրետանային կրակից սկսվեց այրվել խիզախ օդաչուի ինքնաթիռը: Անվեհեր հայորդին չօգտվեց պարաշյուտից և այրվող ինքնաթիռը մխրճեց հակառակորդի կենդանի ուժի ու տեխնիկայի կուտակումների վրա՝ իր կյանքի գնով ոչնչացնելով դրանք: Այդ սխրանքի համար Էդվարդ Բունիաթյանը հետմահու արժանացավ Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի շքանշանի: Մինչ այդ նա պարգևատրվել էր Կարմիր դրոշի ու Կարմիր աստղի շքանշաններով:

Ավելի քան 100.000 հայորդիներ մասնակցեցին **Կովկասի** համար մղվող մարտերին, որոնք սկսվեցին 1942 թ. հուլիսի 27-ին և ավարտվեցին 1943 թ. հոկտեմբերի 9-ին: Նրանց զգալի մասը մարտնչեց Հայկական 89-րդ, 408-րդ, 409-րդ հրաձգային դիվիզիաների շարքերում:

Կովկասի պաշտպանության մարտում ցուցաբերած խիզախության համար Խորհրդային Միության հերոսի կոչում շնորհվեց նաև ավիաէսկադրիլիայի հրամանատար կապիտան Սամսոն Մկրտումյանին և հրաձգային բրիգադի գումարտակի հրամանատար ավագ-լեյտենանտ Ղուկաս Մադոյանին:

1942 թ. ապրիլից մինչև հոկտեմբեր Սևծովյան նավատորմի և Կովկասյան ռազմաճակատի զորքերի գործողությունները փոխհամաձայնեցնում էր ռազմաճակատի հրամանատարի տեղակալ և ռազմական խորհրդի անդամ նավատորմի ծովակալ Հովհաննես Իսակովը: Հոկտեմբերի 4-ին Տուապսեի շրջանում նա ծանր վիրավորվում է և գրկվում ձախ ոտքից, բայց կազդուրվելուց հետո շարունակում է ծառայությունը գործող բանակում: ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1942 թ. դեկտեմբերի 13-ի հրամանագրով ծովակալ Իսակովը պարգևատրվում է Լենինի շքանշանով:

Կովկասի հերոսամարտի շրջանում հայ ժողովուրդը 1943 թ.

փետրվարին հայրենասիրական նամակ-կոչով դիմեց ռազմաճակատում գտնվող իր զավակներին: Նամակի տակ ստորագրել էին 335.316 մարդ: Այն վառ կերպով արտահայտում էր հայ ժողովրդի ջերմ հայրենասիրությունը, հիշեցնում նրա մարտական հարուստ ավանդույթները: Ժողովուրդն իր որդիներին ու դուստրերին կոչ էր անում տուն վերադառնալ հաղթանակով: Նամակը, որ բազմահազար օրինակներով հրատարակվեց հայերեն և ռուսերեն, տարածվեց ոչ միայն Կովկասյան, այլև մյուս բոլոր ռազմաճակատներում, լայն արձագանք գտավ թշնամու դեմ մարտնչող բոլոր հայ ռազմիկների սրտերում: Պատասխան նամակում նրանք երդվեցին սուրը պատյան չդնել մինչև լիակատար հաղթանակ:

1943 թ. հոկտեմբեր — 1944 մայիս ամիսներին ազատագրվեցին նաև Կերչ և Ղրիմ թերակղզիները: Թամանյան թերակղզին գերմանաֆաշիստական զորքերից մաքրելու մարտական գործողությանը հերոսական մասնակցություն ցուցաբերեց Հայկական 89-րդ դիվիզիան՝ գեներալ Նվեր Սաֆարյանի հրամանատարությամբ: Գերագույն գլխավոր հրամանատարի 1943 թ. հոկտեմբերի 9-ի հրամանագրով դիվիզիային շնորհվեց Թամանյան պատվավոր անվանումը: Դիվիզիայի երեք մարտիկների՝ ավագ սերժանտներ Հունան Ավետիսյանին, Սուրեն Առաքելյանին և զինվոր Ջահան Կարախանյանին հետմահու շնորհվեց Խորհրդային Միության հերոսի կոչում: Առաջին երկուսը մարտի ժամանակ իրենց մարմիններով փակել էին թշնամու հրակնակետերը և կյանքի գնով կատարել մարտական առաջադրանքը: Այդ մարտերում ցուցաբերած խիզախության համար 10 հայորդու և Հայաստանում ծնված մեկ հույնի շնորհվեց Խորհրդային Միության հերոսի կոչում:

1943 թ. օգոստոսի վերջերից մինչև 1944 թ. վերջերը 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ Ուկրաինական ռազմաճակատների զորքերը գերմանաֆաշիստական զավթիչներից **ազատագրեցին Ուկրաինան:** Այդ ռազմաճակատների զորքերի կազմում մարտնչել են շուրջ 80.000 հայ ռազմիկներ: Եթե դրան ավելացնենք նաև 1941-1942 թթ. Ուկրաինայի պաշտպանական ծանր մարտերին մասնակցած հայերի թիվը, որը կազմել է ավելի քան 20.000, ապա Ուկրաինայի համար մարտնչած հայերի թիվը անցնում է

100.000-ից: Նրանցից ավելի քան 30.000-ը զոհվել են մարտերում: Այդ մարտերում իրենց սխրանքներով առավել աչքի ընկած 21 հայ խիզախների շնորհվել է Խորհրդային Միության հերոսի կոչում: 1943 թ. նոյեմբերի 6-ին առաջինների թվում Կիև մտան 50-րդ հրաձգային կորպուսի զորամասերը. կորպուսի հրամանատարն էր գեներալ-մայոր Սարգիս Մարտիրոսյանը, որն արժանացավ Լենինի շքանշանի: Ուկրաինայի ազատագրման մարտերում աչքի ընկավ նաև Հայկական 409-րդ հրաձգային դիվիզիան, որն արժանացավ Կիրովոգրադյան պատվավոր անվան:

50 հազար հայ ռազմիկներ մասնակցեցին **Բելոռուսիայի ազատագրմանը,** որոնցից 15.000-ը զոհվեց մարտերում: Նրանցից չատերը սխրանքների համար պարգևատրվեցին շքանշաններով ու մեդալներով, իսկ 11 հայորդիներ արժանացան Խորհրդային Միության հերոսի կոչման: Նրանց թվում էր Առաջին Մերձբալթյան ռազմաճակատի հրամանատար բանակի գեներալ Հովհաննես Բաղրամյանը: Բելոռուսիայի ազատագրման մարտերում աչքի ընկնելու համար «Վիտեբսկյան» անվանում շնորհվեց 51-րդ գվարդիական (նախկին Հայկական 76-րդ) հրաձգային դիվիզիային. նրա երեք հրաձգային գնդերին շնորհվեց «Պոլոցկյան» անվանում:

Բազմաթիվ հայորդիներ ակտիվորեն մասնակցել են նաև Լենինգրադի, Մերձբալթյան հանրապետությունների, Կարելիայի, Խորհրդային Անդրբևեռի համար մղված մարտերին: Լենինգրադի և Մերձբալթիկայի համար մղված կռիվներում հերոսաբար զոհվեց Խորհրդային Միության հերոս, գրոհային ավիագնդի հրամանատար փոխգնդապետ Նելսոն Ստեփանյանը, որին հետմահու շնորհվեց Խորհրդային Միության կրկնակի հերոսի կոչում:

Հազարավոր հայորդիներ մասնակցեցին ֆաշիզմի լծից Լեհաստանի, Ռումինիայի, Բուլղարիայի, Հարավսլավիայի, Հունգարիայի, Չեխոսլովակիայի, Ավստրիայի և Գերմանիայի ազատագրման մարտերին: Միայն Լեհաստանի համար մղված մարտերում Խորհրդային Միության հերոսի կոչման արժանացավ 18 հայորդի, իսկ 8 շարքային զինվոր դարձավ Փառքի շքանշանի լրիվ ասպետ: 10 հայեր հերոսացան ֆաշիստական Գերմանիայի

ջախջախման և Բեռլինի գրավման մարտերում, իսկ նույնքան հայ ռազմիկներ էլ դարձան Փառքի չքանչանի լրիվ ասպետ: **Բեռլինի** գրավման մարտերին ակտիվորեն մասնակցեց Հայկական 89-րդ Թամանյան հրաձգային դիվիզիան՝ գեներալ-մայոր Նվեր Սաֆարյանի հրամանատարությամբ: Դա մեծ պատիվ էր հայկական դիվիզիայի համար, քանի որ կարմիր բանակի ազգային զորամիավորումներից միայն նրան էր պատմական այդպիսի կարևոր առաջադրանք տրվել:

Ռազմաճակատի զորքերի առաջապահ խմբի կազմում 89-րդ Թամանյան դիվիզիան ապրիլի 16-ի առավոտյան անցնելով հարձակման, համառ մարտերում կոտրելով հակառակորդի դիմադրությունը՝ շարժվում է դեպի ֆաշիստական Գերմանիայի մայրաքաղաք՝ ճանապարհին գրավելով Օդերի Ֆրանկֆուրտ քաղաքը և բազմաթիվ բնակավայրեր: Ապրիլի 29-ին հայկական դիվիզիան արդեն փողոցային մարտեր էր մղում Բեռլինում: Գործելով գրոհային ջոկատներով, դիվիզիան համառ մարտերով առաջ էր շարժվում դեպի Բեռլինի կենտրոնը՝ Ռայխստագի շրջան, որտեղ Հումբոլդ-Հայն այգում հանդիպում է հակառակորդի պաշտպանական երկաթբետոնե հզոր ամրություններ ունեցող բերդի կայազորի կատաղի դիմադրությանը: Դիվիզիայի հզոր հարվածների տակ մայիսի 2-ին, ժամը 14-ին, ամրոցի կայազորը անձնատուր է լինում: Դիվիզիայի զորամասերը գերի են վերցնում հակառակորդի 5112 զինվոր ու սպա, գրավում հարուստ ռազմավար:

Բեռլինի գրավումը մեծ ցնծություն է առաջ բերում հաղթող զորքերի մեջ: Օդ են թռչում հազարավոր հրթիռներ, թնդում են հաղթական կրակոցներ և ուռաներ, որոնց ձայնը խլացվում է Ռայխստագի պատերի տակ հայկական քոչարի պարողների խրոխտ դոփյունի և զուռնադհոլի զիլ նվագի ներքո: Բեռլինի ճակատամարտում ցուցաբերած սխրանքների համար դիվիզիան պարգևատրվում է Կուտուզովի 2-րդ աստիճանի չքանչանով և դառնում եռակի չքանչանակիր: Բեռլինյան մարտական գործողության ընթացքում դիվիզիայի գործողությունները հմտորեն ղեկավարելու համար գեներալ-մայոր Նվեր Սաֆարյանը նույնպես պարգևատրվում է Կուտուզովի 2-րդ աստիճանի զորավարական չքանչանով:

Չեխոսլովակիայի ազատագրման տարեգրության մեջ ոսկե տառերով է գրված 73-րդ հրաձգային կորպուսի հրամանատար գեներալ-լեյտենանտ Սարգիս Մարտիրոսյանի անունը, որի զորքերը առաջինների թվում 1945 թ. մայիսի 9-ին մտան Պրահա: Կորպուսի գործողությունները հմտորեն ղեկավարելու և այդ ընթացքում ցուցաբերած խիզախության համար Սարգիս Մարտիրոսյանին շնորհվեց Խորհրդային Միության հերոսի կոչում:

Մայիսի 9-ին ավարտվեց Հայրենական մեծ պատերազմը:

Ընդհանուր առմամբ հայերից Խորհրդային Միության հերոսի կոչման է արժանացել 106 մարդ, որոնցից 4-ը՝ Խորհրդա-ֆիննական պատերազմում (1939-1940), 99-ը՝ Հայրենական մեծ պատերազմում (1941-1945), 3-ը՝ հետպատերազմյան տարիներին: 26 հայ չարքային զինվորներ դարձել են Փառքի չքանչանի լրիվ ասպետ: Բացի այդ Հայաստանում ծնված 10 այլազգի քաջերի նույնպես շնորհվել է հերոսի կոչում: Հայրենական մեծ պատերազմի մասնակից հայերից 4-ին (Արմենակ Խամփերյանց, Հովհաննես Բաղրամյան, Համազասպ Բաբաջանյան, Սերգեյ Ագանով) շնորհվել է մարշալի, մեկին՝ Հովհաննես Իսակովին, Խորհրդային Միության նավատորմի ծովակալի կոչում: Պատերազմին մասնակցել է 68 հայ գեներալ: Հետագայում՝ 1946-1997 թթ., գեներալի կոչման են արժանացել ևս 94, ծովակալի կոչման՝ 8 հայեր:

դ. **Հայ ռազմիկների մասնակցությունը Ճապոնիայի ջախջախման մարտերին (9 օգոստոսի – 2 սեպտեմբերի 1945 թ.):** Հայ ռազմիկներն իրենց արժանի ավանդը ներդրեցին նաև Հեռավոր Արևելքում ֆաշիստական Գերմանիայի դաշնակից միլիտարիստական Ճապոնիայի ջախջախման գործում: Չնայած 1941 թ. ապրիլի 5-ին չեզոքության պայմանագիր էր ստորագրվել ԽՍՀՄ-ի և Ճապոնիայի միջև, բայց վերջինս ֆաշիստական Գերմանիայի կողմից ԽՍՀՄ-ի վրա հարձակվելուց հետո մշտապես օգնում էր նրան և Խաղաղօվկիանոսյան ռազմական թատերաբեմում ծանր կորուստներ պատճառում հակաֆաշիստական խմբավորման երկրների զինված ուժերին: Ճապոնական ռազմամոլները ԽՍՀՄ հեռավորարևելյան սահմանների մոտ կենտրոնացրել էին միլիոնանոց Կվանտունյան բանակը՝ դրանով իսկ կաչկանդելով կարմիր բանակի զգալի ուժեր, որոնք խիստ ան-

հրաժեշտ էին խորհրդա-գերմանական ճակատում: 1945 թ. փետրվարի 4-11-ը Յալթայում (Ղրիմ) տեղի ունեցած երեք դաշնակից պետությունների (ԽՍՀՄ, ԱՄՆ, Մեծ Բրիտանիա) ղեկավարների կոնֆերանսում ԽՍՀՄ-ը համաձայնվել էր ֆաշիստական Գերմանիայի ջախջախումից 2-3 ամիս անց պատերազմի մեջ մտնել Ճապոնիայի դեմ և կատարել իր դաշնակցային պարտավորությունը: Իր դաշնակցային պարտավորություններին հավատարիմ ԽՍՀՄ-ը օգոստոսի 9-ին պատերազմ հայտարարեց Ճապոնիային: Նույն օրը կարմիր բանակի Անդրբայկալյան, 1-ին և 2-րդ հեռավորարևելյան ռազմաճակատների զորքերը Խաղաղօվկիանոսյան նավատորմի և Ամուրյան գետային նավատորմիղի աջակցությամբ մարտական գործողություններ սկսեցին ԽՍՀՄ հեռավորարևելյան սահմանների մոտ կենտրոնացված ճապոնական խոշոր զորախմբի դեմ: Սրընթաց հարձակման հետևանքով կարճ ժամանակամիջոցում գլխովին ջախջախվեց Կվանտունյան բանակը: Խորհրդային զորքերը մինչև օգոստոսի վերջը ճապոնական զավթիչներից ազատագրեցին Հյուսիսարևելյան և Կենտրոնական Չինաստանի և Հյուսիսային Կորեայի տարածքները, Հարավային Սախալինը ու Կուրիլյան կղզիները: 1945 թ. սեպտեմբերի 2-ին մարտնչող կողմերը ամերիկյան «Միսսուրի» գծանավի տախտակամածի վրա ստորագրեցին Ճապոնիայի անվերապահ կապիտուլյացիայի ակտը, որով և ավարտվեց Երկրորդ համաշխարհային պատերազմը:

Երկրորդ համաշխարհային պատերազմի այդ եզրափակիչ մարտական գործողությանը խորհրդային բանակի շարքերում ակտիվ մասնակցություն ունեցան հայ ժողովրդի մի քանի հազար զավակներ, որոնց զգալի մասը մինչ այդ մարտնչել էր խորհրդագերմանական ռազմական գործողությունների թատերաբեմում:

Նրանց թվում էր Անդրբայկալյան ռազմաճակատի 12-րդ օդային բանակի հրամանատար, ավիացիայի մարշալ Սերգեյ Խուդյակովը՝ Արմենակ Խամփերյանցը: 12-րդ օդային բանակի գործողությունները հմտորեն ղեկավարելու համար նա պարգևատրվեց Կուտուզովի առաջին աստիճանի զորավարական շքանշանով:

Կվանտունյան բանակի ջախջախման և Հարավային Սախալինի ազատագրման գործում մեծ դեր կատարեց Հեռավորարևելյան 2-րդ ռազմաճակատի հրետանին, որի հրամանատարը Խորհրդային Միության հերոս, հրետանու գեներալ-լեյտենանտ Միքայել Պարսեղովն էր: Ռազմաճակատի հրետանու գործողությունները հմտորեն ղեկավարելու համար նա պարգևատրվեց Սուվորովի 2-րդ աստիճանի զորավարական շքանշանով: Նույն ռազմաճակատի հակաօդային պաշտպանության պետ, հրետանու գեներալ-մայոր Գևորգ Զայլախյանը պարգևատրվեց Կուտուզովի 2-րդ աստիճանի շքանշանով, նման պարգևի արժանացավ նաև 2-րդ հեռավորարևելյան ռազմաճակատի բժշկասանիտարական վարչության պետ, բժշկական ծառայության գեներալ-լեյտենանտ Ավետիք Բուռնազյանը:

Ցուցաբերած խիզախության համար Սուվորովի 2-րդ աստիճանի շքանշանով պարգևատրվեց 215-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար, Խորհրդային Միության հերոս գեներալ-մայոր Անդրանիկ Ղազարյանը: Լայնահուն Ամուր գետը առաջինների թվում հաջողությամբ հաղթահարելու և չինական քաղաքները ազատագրելու մարտերում ցուցաբերած սխրանքների համար Սուվորովի 3-րդ աստիճանի շքանշանով պարգևատրվեց 361-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար գնդապետ Առաքել Հովհաննիսյանը: Զանչուն և Մուկդեն քաղաքների ազատագրման գործում կարևոր դեր կատարեց 278-րդ հրաձգային դիվիզիան, որի հրամանատարը գնդապետ Կոնստանտին Լազարյանն էր: Դիվիզիան արժանացավ Խինգանյան պատվավոր անվան, իսկ նրա հրամանատարը պարգևատրվեց մարտական Կարմիր դրոշի շքանշանով: Կարմիր դրոշի շքանշանով պարգևատրվածների թվում էին 10-րդ օդային բանակի հրամանատարի տեղակալ, ավիացիայի գեներալ-մայոր Գրիգոր Տոլմաջյանը, 6-րդ գվարդիական տանկային բանակի ռազմական խորհրդի անդամ տանկային զորքերի գեներալ-լեյտենանտ Հայկ Թումանյանը, ծովային օդաչու Վազգեն Վարդանյանը, տանկիստ Սերգեյ Մկրտչյանը, Սախալինյան ռազմական նավատորմիղի շտաբի պետ, 1-ին կարգի կապիտան (հետագայում փոխծովակալ) Վալերիան Սուրաբեկյանը և շատ ուրիշներ:

ե. Պարտիզանական շարժման շարքերում: Հայրենական մեծ պատերազմում ֆաշիզմի դեմ տարած հաղթանակի գործում

իրենց արժանի ավանդը ներդրեցին նաև թշնամու թիկունքում մարտնչող տասնյակ հազարավոր պարտիզաններ, որոնց թվում քիչ չէին հայ ժողովրդի զավակները: Այսպես, միայն Ուկրաինայում և Բելոռուսիայում մարտնչել են ավելի քան 2000, Ղրիմում և Հյուսիսային Կովկասում՝ 500, Մերձբալթիկայում, Լենինգրադի և Կալինինի մարզերում՝ 200, Ֆրանսիայում՝ 1200, Հունաստանում ավելի քան 1000, Հոլանդիայում շուրջ 800 հայ պարտիզաններ: Գոյություն ունեին պարտիզանական մի քանի ջոկատներ, նույնիսկ գունդ, որոնք կազմավորված էին առավելապես հայերից: Այսպես, օրինակ՝ Ուկրաինայում գերմանական զավթիչների դեմ մարտնչել է 100 հոգուց բաղկացած «Հաղթանակ» ջոկատը՝ Սերգեյ Հարությունյանի հրամանատարությամբ, և 250 հայերից բաղկացած «Անաստաս Միկոյանի անվան ջոկատը»՝ Արամայիս Հովսեփյանի հրամանատարությամբ: 80 հայերից էր բաղկացած Լենինգրադի և Կալինինի մարզերում գործող պարտիզանական 41-րդ ջոկատը՝ Արտեմ Սաղումյանի գլխավորությամբ: Ղրիմում է մարտնչել 10-րդ պարտիզանական ջոկատը՝ Արամ Տերյանի, Կրասնոդարի երկրամասի Արմյանսկի շրջանի «Ստեփան Շահումյանի անվան ջոկատը»՝ Անդրանիկ Մալխասյանի հրամանատարությամբ: Ֆրանսիայում է գործել Խորհրդային Ի-ին պարտիզանական ջոկատը՝ Ալեքսանդր Ղազարյանի հրամանատարությամբ. գնդի անձնակազմը բաղկացած էր 2000 հոգուց, որից հայեր էին 1200-ը: Հունաստանում գործում էր 1000 հայից բաղկացած «Ազատություն» պարտիզանական ջոկատը՝ Բաբկեն Ներսիսյանի հրամանատարությամբ, Հոլանդիայում 800 հայերից բաղկացած խումբը, ինչպես նաև Հոլանդական դիմադրական շարժմանն աջակցող խմբերը և այլն: Իրենց խիզախությամբ առավել աչքի ընկած հայ պարտիզաններից էին՝ Հենրիկ Զաքարյանը, Վահան Գրիգորյանը (Բելոռուսիա), քույր ու եղբայր Հայկ և Թամարա Մարտիրոսյանները, Աշոտ Հայրապետյանը (Ղրիմ), Կրասնոդոնի «Երիտասարդ գվարդիա» կազմակերպության անդամներ Գեորգի (Ժորա) Հարությունյանցը և Մայա Փեհլիվանյանը (Ուկրաինա), Արտյոմ Պետրոսյանը (Չեխոսլովակիա), Գեորգ Քոլոզյանը, Մկրտիչ Դաշտոյանը (Իտալիա), Բարթուղ Պետրոսյանը, Լևոն Տիտանյանը (Ֆրանսիա), Անդրանիկ Միրզոյանը (Հոլանդիա), Արարատ Նավոյանը (Լեհաստան) և ուրիշներ:

Երկրորդ համաշխարհային պատերազմում ֆաշիզմի դեմ տարած հաղթանակում իրենց ծանրակշիռ ավանդը ներդրեցին նաև անտեսանելի ճակատի գաղտնակյաց (անլեգալ) հայ հետախույզներ գեներալ-լեյտենանտ Հայկ Հովակիմյանը, գեներալ-մայորներ Գուրգեն Աղայանը, Իվան Աղայանցը, Միքայել Ալավերդյանը, Վյաչեսլավ Գևորգյանը, գնդապետներ Աշոտ Հակոբյանը, Գերասիմ Բալասանյանը, Վյաչեսլավ Գուրգենյանը, Խորհրդային Միության հերոս Գևորգ Վարդանյանը, նրա անբաժան գործընկերուհին ու կինը՝ Գոհար Վարդանյանը, և շատ ուրիշներ: Գևորգ Վարդանյանի անունն իրավամբ տեղ է գտել աշխարհի բոլոր ժամանակների ականավոր 100 հետախույզների շարքում:

Նա խորհրդային գաղտնակյաց հետախույզներից միակն է, որ արժանացել է Խորհրդային Միության հերոսի կոչման: Աշխարհի բազմաթիվ երկրներում նրա կատարած սխրանքների մասին հայտնի պատճառներով դեռևս չի կարելի գրել, սակայն Հայրենական մեծ պատերազմի տարիներին Գևորգ Վարդանյանի և նրա կնոջ լեգենդար սխրանքը դարձել է հանրահայտ: Շնորհիվ Գևորգ Վարդանյանի հետախուզական խմբի («Թեթև հեծելազոր») գործունեության 1943 թ. նոյեմբերի 28 - դեկտեմբերի 1-ը Թեհրանում տեղի ունեցած ԽՍՀՄ-ի, ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի ղեկավարների խորհրդակցության նախօրյակին վնասազերծվեց ֆաշիստական հետախուզության գործակալների ցանցը, որոնք մահափորձ էին ծրագրել Իոսիֆ Ստալինի, Ֆրանկլին-Դելանոր Ռուզվելտի և Ուինստոն Չերչիլի դեմ:

զ. Սփյուռքահայերի ավանդը պատերազմում տարած հաղթանակներում: Երկրորդ համաշխարհային պատերազմում տարած հաղթանակի մեջ իր ավանդն ունի նաև սփյուռքահայությունը: Պատերազմի տարիներին նրա ճնշող մեծամասնությունը կողմնորոշվեց դեպի մայր հայրենիքը, համախմբվեց ազգային ճակատի մեջ ու ստեղծեց մի շարք առաջադիմական կազմակերպություններ և ընկերություններ: Այսպես, օրինակ՝ ԱՄՆ-ում ստեղծվեցին Հայկական առաջադիմական լիգա և Ամերիկահայերի ազգային խորհուրդ, Ֆրանսիայում՝ Ֆրանսահայերի ազ-

գային ճակատ, Սիրիայում, Լիբանանում, Իրանում, Եգիպտոսում, Եթովպիայում և այլ երկրներում՝ Խորհրդային Միության բարեկամների ընկերություններ և հակաֆաշիստական առաջադիմական կազմակերպություններ, որոնք ամբողջ պատերազմի ընթացքում հետևողականորեն վարում էին հօգուտ ԽՍՀՄ-ի գործունեություն: Սփյուռքահայերը ոչ միայն բարոյապես պաշտպանեցին մայր հայրենիքը, այլև նյութական զգալի օգնություն ցուցաբերեցին կարմիր բանակին: Այսպես, օրինակ՝ սփյուռքահայերի հանգանակության շնորհիվ, որը կազմակերպել էր Հայ Առաքելական եկեղեցին՝ Ամենայն Հայոց կաթողիկոսի տեղապահ Գևորգ արքեպ. Չորեքչյանի նախաձեռնությամբ, պատերազմի տարիներին կառուցվեցին «Սասունցի Դավիթ» տանկային երկու շարասյուններ (առաջին շարասյան մեջ կային 21, իսկ երկրորդում՝ 22 «Տ-34» մակնիշի տանկեր): Բացի այդ, իրանահայերի հանգանակած գումարների միջոցներով կառուցվեց նաև «Գեներալ Բաղրամյան» տանկային շարասյունը:

Բազմաթիվ ափյուռքահայեր ֆաշիզմի դեմ պայքարել են զենքը ձեռքներին: Միայն ԱՄՆ-ի բանակում մարտնչել են շուրջ 20.000 հայեր: Նրանցից լեյտենանտ Երվանդ Դերվիշյանը պարգևատրվեց ԱՄՆ-ի կոնգրեսի «Պատվո մեդալով», որը հանդիսանում է այդ երկրի բարձրագույն պարգևը: Պատերազմի տարիներին այդ պարգևին արժանացել է ընդամենը 87 մարդ: Ամերիկյան ռազմաօդային ուժերի խիզախ օդաչուներից էին Չարլզ Տերտերյանը, Սեմ Պարսամյանը, Քըրք Քըրքորյանը (այժմ Հայաստանի ազգային հերոս): Ամերիկյան բանակի գեներալներ դարձան Ջորջ Մարտիկյանը, Հայկ Շեքերջյանը, Ջոն Աբաջյանը, Սարգիս Զարգարյանը, սիրիական բանակի՝ Արամ Կարամանուկյանը, Բուլղարիայի՝ Գաբրիել Գաբրիելյանը և այլոք: Շուրջ 30.000 հայեր կային Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի բանակներում, որոնց մի մասը զորակոչված էր Եգիպտոսից, Սիրիայից, Լիբանանից և այլ երկրներից: Անգլիայի և Ֆրանսիայի երկնքում են հերոսացել ռազմական օդաչուներ Նոյել, Ջեկ և Լևոն Աղազարյան եղբայրները, որոնցից առաջինը զոհվել է Անգլիայում, իսկ երկրորդը՝ Ֆրանսիայում կատարած մարտական թռիչքների ժամանակ: Նրանց քույրը՝ Մոնիկ Աղազարյանը, պատերազմի

ժամանակ ռազմական օդանավակայանի պատասխանատու ծառայող էր:

Հազարավոր սփյուռքահայեր ընդգրկված էին ֆաշիստական Գերմանիայի կողմից զավթված երկրների դիմադրական-պարտիզանական շարժման շարքերում: Իր անմար սխրանքով Ֆրանսիայում հռչակվեց Միսաք Մանուշյանը, որը հետմահու արժանացավ Ֆրանսիայի հերոսի կոչման: Մանուշյանը 1943 թ. մարտից հանդիսանում էր Փարիզի շրջանում գործող «Ստալինգրադ» ջոկատի հրամանատար, իսկ նույն թվականի մայիսից՝ Փարիզի ու Փարիզի շրջանի պարտիզանական ինտերնացիոնալ ջոկատների հրամանատար: 1943 թ. նոյեմբերի 16-ին նա մատնությամբ ձերբակալվեց ֆաշիստների կողմից և 1944 թ. փետրվարի 21-ին իր 23 զինակիցների հետ գնդակահարվեց: Հայ ռազմագերիներին ֆաշիստական գերությունից ազատելուն մեծապես օգնեցին այժմ աշխարհահռչակ երգիչ և Հայաստանի ազգային հերոս Շառլ Ազնավուրի ծնողները՝ Միքայել և Քնար Ազնավուրյանները, քույրը՝ Ավդան և անձամբ 20-ամյա Շառլը: Հանուն Ֆրանսիայի իրենց կյանքը զոհեցին հայ ժողովրդի անվեհեր զավակներ Լուիզա (Լաս) և Արփիար Ասլանյանները:

Ավելի քան 300 հայորդիներ ընկան Հունաստանի պարտիզանական կռիվներում և դիմադրական պայքարում: Ամբողջ Բուլղարիայով մեկ թնդաց հերոսուհի պարտիզան Սաշկայի (Հերմինե Ռազգրադյան) անունը, որին ֆաշիստները դաժան խոշտանգումներից հետո կախաղան հանեցին:

Սփյուռքահայության միայն չնչին մասը չմիացավ հայ ազգային ճակատի ուժերին: Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցության ղեկավարներից ոմանք Բեռլինում ստեղծեցին «Հայ ազգային խորհուրդ»՝ Արտաշես Աբեղյանի նախագահությամբ: Խորհրդի անդամներից էին՝ Աբրահամ Գյուլխանդանյանը (փոխնախագահ), Հարություն Բաղդասարյանը (քարտուղար), Գարեգին Նժդեհը, Դրաստամատ Կանայանը (Դրո), Վահան Փափազյանը (Կոմս) և ուրիշներ: Խորհուրդը գործում էր ֆաշիստական Գերմանիայի կողմից զավթված ԽՍՀՄ արևելյան շրջանների նախարարության հովանավորության ներքո, որի հիմնական նպատակը Կովկասում գերմանական իշխանության հաստատումն էր և այն իրականացնելու համար գերմանական

բանակի կազմում հայկական լեգեոնի ստեղծումը: Նժդեհն ու Դրոն այդ գործին լծվեցին նաև սովից հայ ռազմագերիներին փրկելու մղումներով: Նրանք շրջում էին ռազմագերիների ճամբարներում և հավաքագրում հայ զինվորներին ու սպաներին: Ընդհանուր առմամբ հաջողվեց հավաքագրել չուրջ 8-9 հազար մարդու և ստեղծել Հայկական լեգեոնի 10 գումարտակ: Հատկանշական է, որ ռայխսկանցլեր Հերման Գյորինգն իր «Կանաչ թղթապանակում» ֆաշիստական զորապետներին հրահանգել էր. «Կովկասում բնիկների (վրացիների, հայերի, թաթարների և այլն) և ռուսների միջև եղած հակասությունները պետք է օգտագործել հօգուտ մեր շահերի՝ հաշվի առնելով հայերի անբարյացակամությունը մեր նկատմամբ...»: Գերմանացիների նկատմամբ հայերի անբարյացակամության մասին նշել է նաև Ադոլֆ Հիտլերը: 1942 թ. դեկտեմբերին անդրադառնալով ազգային լեգեոնների կազմավորման հարցին՝ նա հայտարարել է. «Զգիտեմ թե ինչպես իրենց կպահեն վրացիները: Նրանք թուրքական ժողովուրդների թվին չեն պատկանում: Ես միայն մուսուլմաններին եմ վստահելի համարում: Այդ զուտ կովկասյան գումարտակների կազմակերպումը համարում եմ չափազանց վտանգավոր գործ, բայց միայն մուսուլմանական զորամասեր ստեղծելու մեջ ոչ մի վտանգ չեմ տեսնում... Չնայած Ռոզենբերգի և զինվորականների հավաստիացումներին, ես հայերին չեմ վստահում»: Հիտլերի այս մտավախությունը անհիմն չէր: Նա լավ էր հասկանում, որ հայ ժողովրդի մեջ դեռ թարմ էին 1915 թ. ողբերգական իրադարձությունները, երբ թուրքական կառավարությունը Գերմանիայի անմիջական հովանավորությամբ ծրագրավորված իրագործեց հայերի ցեղասպանությունը: Չնայած Հիտլերի մտավախությանը՝ գերմանական բանակի կազմում խորհրդային ռազմագերիներից ստեղծվեցին ազգային լեգեոններ: Անմիջապես նշենք, որ հայ լեգեոնականների մեծամասնությունը թշնամաբար էր տրամադրված գերմանացիների նկատմամբ և մտադիր չէր մարտնչել նրանց համար: Նրանց զգալի մասը գերմանական զինվորի համազգեստ էր հագել՝ չատ թե քիչ մեղմելու ռազմագերու թշվառ վիճակը, իսկ հարկ եղած պահին անցնելու ռազմաճակատի գիծը՝ միանալու կարմիր բանակին կամ պարտիզաններին: Ինչպես վկայում են փաստերը, ռազմաճակատ

փոխադրված գումարտակների անձնակազմների մեծ մասը կա՛մ միացավ պարտիզաններին (այսպես կազմակերպվեց Ուկրաինայում Անաստաս Միկոյանի անվան հայկական պարտիզանական ջոկատը), կա՛մ անցավ ռազմաճակատի գիծը և չարունակեց մարտնչել կարմիր բանակի շարքերում: Իսկ լեգեոնականների այն գումարտակները, որոնք տեղափոխվեցին Ֆրանսիա, հիմք դարձան խորհրդային պարտիզանական 1-ին գնդի կազմավորմանը: Նման կերպ վարվեցին նաև Հոլանդիա և Հունաստան տեղափոխված հայկական գումարտակները: Այսպիսով, հիտլերականների կողմից ստեղծված Հայկական լեգեոնի ստորաբաժանումները ոչ միայն չծառայեցին ֆաշիստական վերմախտին, այլև դարձան խորհրդային պարտիզանական ջոկատների, ֆրանսիական, հոլանդական, հունական դիմադրական շարժումների համալրման աղբյուրներ:

Է. Խորհրդային Հայաստանի թիկունքի աշխատավորների ավանդը պատերազմում տարած հաղթանակում: Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակում իր արժանի ավանդն ունեցավ Խորհրդային Հայաստանի թիկունքի աշխատավորությունը: Չնայած պատերազմական տարիների ծանր պայմաններին ու զրկանքներին, ռազմաճակատից անընդհատ ստացվող հարազատների բոթը գուժող «սև թղթերին»՝ Հայաստանի աշխատավորների հերոսական աշխատանքի շնորհիվ պատերազմի տարիներին հանրապետությունում ոչ միայն չարունակեցին իրենց գործունեությունը բոլոր արդյունաբերական ձեռնարկությունները, այլև չահագործման հանձնվեցին 30 նորերը, այդ թվում՝ ավիացիոն, ժամացույցների, չարժիչավերանորոգման, ավտոդողերի և այլն: Արդյունաբերությունը յուրացրեց 300 նոր արտադրատեսակներ՝ 10 տեսակի զինամթերքի, ականանետների, ականների, նռնակների, ավիառումբերի կորպուսների, ինքնաթիռների, ռետինատեխնիկական իրերի, կաուստիկ սոդայի, ծծմբական թթվի, հեղուկ քլորի արտադրությունները և այլն:

1942 թ. հոկտեմբերից Երևանի № 447 գործարանը (հետագայում՝ Հայէլեկտրամեքենաչինական) սկսեց վերանորոգել վնասված ինքնաթիռներ: Այնուհետև գործարանում արտադրվեց «Յակ-3» կործանիչ ինքնաթիռի թևեր ու չասսի, որոնք

ուղարկվում էին Թբիլիսիի ինքնաթիռաշինական գործարան, որտեղ և հավաքվում էր վերջնական արտադրանքը: Պատերազմի վերջին տարում № 447 գործարանը սկսեց «ՈՒՏ-2Մ» ինքնաթիռների սերիական արտադրությունը, որոնք տեղում փորձարկվելուց հետո ուղարկվում էին ռազմաճակատ:

Գյուղատնտեսության աշխատողների հերոսական ջանքերով պատերազմի տարիներին ոչ միայն չկրճատվեցին գյուղատնտեսական մթերքների արտադրությունն ու ցանքատարածությունների մակերեսը, այլև զգալի չափով ավելացան դրանք: Հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածությունների ավելացումը հնարավորություն տվեց հացի ներմուծումը հասցնել նվազագույն չափերի: Շնորհիվ ձեռնարկված միջոցառումների անասունների գլխաքանակը չնվազեց, անգամ ավելացավ կարմիր բանակի համար նախատեսված մսի ֆոնդը: Գյուղի աշխատավորության խնայողությունների հաշվին կառուցվեցին «Հայաստանի կոլտնտեսական» տանկային շարասյունը և «Սովետական Հայաստան» զրահագնացքը: Ընդհանրապես պատերազմի տարիներին Խորհրդային Հայաստանի թիկունքի աշխատավորների խնայողությունների հաշվին, բացի վերոհիշյալից, ստեղծվեցին «Զանգեզուրի լեռնագործ», «Հայաստանի ֆիզկուլտուրնիկ», «Հայաստանի կոմերիտական», «Հայաստանի պիոներիա», «Սովետական Հայաստան» տանկային շարասյունները, «Սովետական Հայաստան», «Հաղթանակ», «Երիտասարդ գվարդիա», «Սովետական արտիստ» ավիաէսկադրիլիաները և այլն:

Պատերազմում տարած հաղթանակի գործում իրենց արժանի ավանդը ներդրեցին հանրապետության գիտության, կրթության, արվեստի, գրականության, մշակույթի բնագավառների աշխատողները: Չնայած պատերազմական դաժան պայմաններին՝ ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի Հայաստանի մասնաճյուղի՝ «Արմֆանի» հիման վրա 1943 թ. նոյեմբերի 29-ին Երևանում հիմնադրվեց Հայկական ԽՍՀ Գիտությունների ակադեմիան, որի առաջին պրեզիդենտ ընտրվեց ակադեմիկոս Հովսեփ Օրբելին, իսկ փոխպրեզիդենտներ՝ ակադեմիկոսներ Վիկտոր Համբարձումյանն ու Վարդան Գուլքանյանը: Հայաստանի գիտությունների ակադեմիայի հիմնադրումը պատմական խոշոր

երևույթ էր հայ իրականության մեջ: Դա մեծ չափով նպաստեց հանրապետության գիտահետազոտական հիմնարկների ղեկավարությանը մեկ միասնական կենտրոնում միավորելու և գիտական աշխատանքի նպատակասլաց զարգացումն ապահովելու գործին: Հայ գիտնականների գիտահետազոտական աշխատանքներն ավելի խոր ու բեղմնավոր ընթացք ստացան: Նրանց հայտնագործությունները մեծ չափով օգնեցին երկրի պաշտպանության ամրապնդման ու ռազմաճակատի կարիքները հոգալու գործին:

Պղտոր միջավայրում լույսի ցրման տեսությունը, որ մշակեց Վիկտոր Համբարձումյանը, արագորեն ներդրվեց ռազմական արդյունաբերության մեջ և ստեղծվեցին գիշերային պայմաններում օգտագործվող նշանացույցներ: Աբրահամ և Արտեմ Ալիխանյան եղբայրների կողմից 1942 թ. օգոստոսին Արագածի վրա տիեզերական ճառագայթների հետազոտման կայանում կատարված փորձերը ճանապարհ հարթեցին միջուկային էներգիան ռազմական և խաղաղ պայմաններում օգտագործելու համար: Իրենց հայտնագործություններով աչքի ընկան նշանավոր գիտնականներ ֆիզիկոս Նորայր Քոչարյանը, մաթեմատիկոս Արտաշես Շահինյանը, քիմիկոսներ Լևոն Ռոտինյանը, Արաքսյա Բաբայանը, Արմենակ Մնջոյանը, երկրաբան Կոստանտին Պաֆենհոլցը, կենսաբաններ Արմեն Թախտաջյանը, Լևոն Հովհաննիսյանը, պատմաբան Հակոբ Մանանդյանը, լեզվաբաններ Հրաչյա Աճառյանը, Գրիգոր Ղափանցյանը, արևելագետ Հովսեփ Օրբելին և ուրիշներ:

Ֆաշիզմի դեմ տարած հաղթանակի գործում զգալի ավանդ ունեցան ԽՍՀՄ պետական բարձրագույն մարմիններում, ռազմական արդյունաբերության և տնտեսության տարբեր բնագավառներում աշխատող հայ պետական գործիչները, գիտնականները, կոնստրուկտորները: Ահա նրանցից մի քանիսի թվարկումը. Անաստաս Միկոյան՝ եղել է Համկ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոյի և Պաշտպանության պետական կոմիտեի անդամ, ԽՍՀՄ կառավարության նախագահի տեղակալ, ղեկավարել է կարմիր բանակի մատակարարման կազմակերպման գործը, Իվան Թևոսյան՝ ԽՍՀՄ սև մետալուրգիայի ժողկոմ, Արտեմ Միկոյան՝ «ՄԻԳ» կործանիչ ինքնաթիռների ստեղծման կոնստրուկտորա-

յին բյուրոյի գլխավոր կոնստրուկտոր, Համո Յոլյան՝ № 92 հրետանային գործարանի տնօրեն, Ստեփան Ակոպով՝ ԽՍՀՄ միջին մեքենաշինության ժողկոմ, Սուրեն Աղաջանով՝ № 21 ավիագործարանի տնօրեն, Պարույր Մաթևոսյան՝ Ստալինգրադի «Կրասնի օկտյաբր» մետաղամշակման գործարանի տնօրեն, Բագրատ Հարությունով՝ ԽՍՀՄ հաղորդակցության ճանապարհների ժողկոմի առաջին տեղակալ, Լևոն Օրբելի՝ բժշկական ծառայության գեներալ-գնդապետ, ԽՍՀՄ ԳԱ փոխպրեզիդենտ, Լենինգրադի Ռազմաբժշկական ակադեմիայի պետ, Հովսեփ Օրբելի՝ Լենինգրադի պետական էրմիտաժի տնօրեն, ՀԽՍՀ ԳԱ հիմնադիր պրեզիդենտ և ուրիշներ: Ակադեմիկոս Հովսեփ Օրբելին 1946 թ. մասնակցել է Նյուրնբերգի դատավարությանը որպես մեղադրող կողմի վկա և մերկացրել ֆաշիստական բարբարոսների հանցագործությունները:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին գիտության, արդյունաբերության և ժողովրդական տնտեսության տարբեր բնագավառներում կատարած ակնառու ծառայությունների համար 8 հայորդու շնորհվել է Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչում:

Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչումը կրկնակի անգամ շնորհվել է երեք հայ ականավոր գիտնականների. «ՄԻԳ» կործանիչ ինքնաթիռների գլխավոր կոնստրուկտոր, ինժեներատեխնիկական զորքերի գեներալ-գնդապետ Արտեմ Միկոյանին, հրթիռամիջուկային վահանակի ստեղծման գլխավոր կոնստրուկտոր, տեխնիկական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Սամվել Քոչարյանցին, Հայաստանի Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանին: 1994 թ. հոկտեմբերի 11-ին Վ. Հ. Համբարձումյանին շնորհվել է նաև Հայաստանի ազգային հերոսի կոչում: Հայրենական մեծ պատերազմի տարիներին բազում հայրենանվեր աշխատանքներ կատարած, հետագայում Խորհրդային Միության միջուկային և ջրածնային զենքի հիմնադիր Կիրիլ Իվանովիչ Շչոլկինին, նույն ինքը Կիրակոս Հովհաննեսի Մետաքսյանին, եռակի անգամ շնորհվել է Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչում:

Այսպիսով, Հայրենական մեծ պատերազմի առաջին իսկ օրից

մինչև նրա հաղթական ավարտը Խորհրդային Հայաստանի աշխատավորների հերոսական աշխատանքի շնորհիվ հանրապետությունը վերածվեց իսկական ռազմական ճամբարի, կարմիր բանակի մարտական զինանոցի, որտեղից «Ամեն ինչ ռազմաճակատի համար, ամեն ինչ հաղթանակի համար» նշանաբանով ամեն օր տասնյակ գնացքակազմերով ռազմաճակատ էին ուղարկվում մարդկային համալրումներ, զենք, զինամթերք, սնունդ, հանդերձանք և այլն: Ռազմաճակատում մարտնչող հայ ռազմիկները մարտերի ամենածանր պահերին և ամենուրեք մշտապես զգում էին թիկունքի աշխատավորության աջակցությունը, ստանում նրանց նյութական ու բարոյական օգնությունը:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

II. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ
(1945-1985 ԹԹ.)

ա. Արդյունաբերությունը: *Հայրենական պատերազմի հաղթական ավարտից հետո խորհրդային ժողովուրդը նոր ուժով վերսկսեց իր ընդհատված խաղաղ, ստեղծագործ աշխատանքը: Թեպետ պատերազմի տարիներին Հայաստանի տնտեսությունը ռազմական ավերածությունների չէր ենթարկվել, բայց խախտվել էր նրա տնտեսության բնականոն զարգացումը, արտադրության տարբեր ճյուղերի համամասնությունը:*

Պատերազմի տարիներին Հայաստանում հիմնականում զարգացել էին արդյունաբերության այն ճյուղերը, որոնք կատարում էին ռազմական պատվերներ: Արդյունաբերությունը բավարարում էր ոչ միայն հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման պահանջները, այլև լրջորեն մասնակցում էր ռազմաճակատի կարիքները հոգալու գործին:

Պատերազմից հետո պահանջվում էր սեղմ ժամկետում՝ խաղաղ ժամանակաշրջանի պահանջներին համապատասխան, վերակառուցել հանրապետության ժողովրդական տնտեսությունը, բարելավել բնակչության սոցիալական պայմանները: Նախատեսվում էր եղած արդյունաբերական ձեռնարկությունների վերակառուցման և ընդլայնման հետ մեկտեղ լայն թափով կառուցել նորերը, մեծապես ավելացնել արդյունաբերական արտադրանքի ծավալները: Ծրագրեր մշակվեցին և հատկացվեցին անհրաժեշտ միջոցներ՝ Հայաստանը արդյունաբերական զարգացած երկիր դարձնելու: Հանրապետության աշխատավորության հերոսական ջանքերով ամենասեղմ ժամկետում՝ 1947 թ., ավարտվեցին տնտեսության վերակառուցման աշխա-

տանքները, իսկ մեկ տարի անց՝ 1948 թ., Հանրապետության արդյունաբերության համախառն արտադրանքը 3%-ով գերազանցեց 1940 թ. մակարդակը:

Հետպատերազմյան առաջին տարիներին Հանրապետությունում կառուցվեցին տասնյակ նոր ֆաբրիկաներ ու գործարաններ: Դրանց թվում էին Երևանի էլեկտրամեքենաշինական, կաբելի, ժամացույցի, ալյումինի, ավտոդողերի գործարանները, տարբեր շրջաններում չարք մտան սննդի ու թեթև արդյունաբերության բազմաթիվ ձեռնարկություններ:

1949 թ. ԽՍՀՄ կառավարությունը որոշում ընդունեց Հայաստանում գունավոր մետալուրգիայի զարգացման մասին: Այդ նպատակով հատկացվեցին անհրաժեշտ սարքավորումներ ու ֆինանսական հսկայական միջոցներ: Մեծ աշխատանքներ ծավալվեցին Քաջարանի (Կապան) պղնձամոլիբդենային, Սիսիանի (Դաստակերտ), Մեղրու (Ագարակ) կոմբինատների, Ալավերդու պղնձաձուլական գործարանի կառուցման ուղղությամբ: 1950 թ. շահագործման հանձնվեց Երևանի ալյումինի գործարանը, 1953 թ.՝ Քաջարանի կոմբինատը: Միայն 1945-1950 ԹԹ. չարք մտան 40-ից ավելի արդյունաբերական նոր ձեռնարկություններ:

Հանրապետության էներգետիկ պահանջները բավարարելու նպատակով զգալիորեն ընդլայնվեցին դրա հզորությունները: 1949 թ. գործարկվեց Սևանի ստորգետնյա հիդրոէլեկտրակայանը, որն իր տեսակի մեջ միակն էր ԽՍՀՄ-ում: Ավարտվեց Զորագետի հիդրոկայանի վերակառուցումը, և գործարկվեց դրա երկրորդ ագրեգատը, սկսվեց Սևան-Հրազդան կասկադի խոշոր ՀԷԿ-ի՝ Գյումուշի հիդրոկայանի շինարարությունը: Կառուցվեցին նաև տեղական նշանակության մի քանի տասնյակ հիդրոկայաններ:

1953 թ. ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար ընտրվեց Սուրեն Թովմասյանը, որը Հայրենական պատերազմի սկզբից մինչև նրա ավարտը գտնվել էր ռազմաճակատներում:

1950-ական թվականներին Հանրապետությունում ձևավորվեցին և զարգացան արդյունաբերական նոր ճյուղեր՝ էլեկտրամեքենաշինությունը, հաստոցաշինությունը և այլն: Վերելք ապրեց շինանյութերի արտադրությունը: Հայաստանում արտադրված արդյունաբերական տասնյակ ապրանքատեսակներ՝ գե-

ներատորներ, տրանսֆորմատորներ, հիդրոտուրբիններ, ավտոդողեր, էլեկտրասարքավորումներ, արտահանվում էին ինչպես Խորհրդային Միության հանրապետություններ, այնպես էլ արտասահմանյան երկրներ:

Արդյունաբերության և շինարարության կառավարումը կատարելագործելու, իշխանության պետական մարմինների ինքնուրույնությունը ապահովելու ու պատասխանատվությունը բարձրացնելու նպատակով 1956 թ. ԽՍՀՄ-ում կազմակերպվեցին ժողովրդական տնտեսության խորհուրդներ (ԺողտնտխորՀ): Դրանք կոչված էին, տեղական պայմաններն ու առանձնահատկությունները հաշվի առնելով, ճիշտ տեղաբաշխել արդյունաբերական ձեռնարկությունները, արդյունավետ օգտագործել աշխատուժն ու հումքը: Դրանով որոշ չափով թուլացվում էր կենտրոնի բյուրոկրատական միջամտությունը: Հայաստանի ԺողտնտխորՀը իր ստեղծման առաջին տարում միավորում էր շուրջ 250 արդյունաբերական ձեռնարկություն:

Հանրապետությունում այդ տարիներին հատուկ ուշադրություն դարձվեց արդյունաբերական ձեռնարկություններում գիտատեխնիկական նվաճումներն արմատավորելու վրա: ԺողտնտխորՀի համակարգում ստեղծվեցին բազում գիտահետազոտական և նախագծային ինստիտուտներ, մասնագիտական լաբորատորիաներ, որոնք նպաստեցին աշխատանքների արդյունավետ կազմակերպմանը: 1960 թ. Հայաստանի ԺողտնտխորՀն արդեն միավորում էր շուրջ 500 արդյունաբերական ձեռնարկություն, որոնց սպասարկում էին 20-ից ավելի գիտահետազոտական և նախագծային ինստիտուտներ:

Հետագա 15 տարիները Հանրապետության նոր հզոր վերելքի ժամանակաշրջան էր, երբ Հայաստանի կոմկուսը ղեկավարում էին նշանավոր քաղաքական գործիչներ Յակով Զարուբյանը (1960-1966) և Անտոն Քոչինյանը (1966-1974): Վերջինս 1952 թվականից եղել էր Հայաստանի Մինիստրների խորհրդի նախագահ:

1958 թ. ԽՍՀՄ կառավարությունը որոշում էր ընդունել երկրում քիմիական արդյունաբերության զարգացման մասին: Հետպատերազմյան տարիներին գործարկվեցին Երևանի «Պոլիվինիլացետատ», Ալավերդու սուպերֆոսֆատի, Վանաձորի ազոտային պարարտանյութերի գործարանները և քիմիական արդյունաբերության այլ ձեռնարկություններ: Փաստորեն դրվեցին Հայաստանը մեծ քիմիայի հանրապետություն դարձնելու հիմքերը: 1980-ական թվականներին քիմիական ձեռնարկությունների թիվը հասավ 46-ի: Անշուշտ, այդ ձեռնարկությունները զգալիորեն նպաստեցին Հանրապետության տնտեսական զարգացմանը՝ հումք մատակարարելով նորանոր արտադրատեսակների համար: Բայց հախուռն կառուցումների ընթացքում անտեսվեցին առանձին արտադրատեսակների էներգատարողությունը, ջրատարողությունը, որոնց պաչարները բավականին սուղ էին, և, վերջապես, բնապահպանական գործոնները: Այդ բոլորի հետևանքով Հանրապետությունում տարեցտարի սրվեցին բնապահպանության հարցերը:

Նշված տարիներին խիստ կարևոր փոփոխություններ տեղի ունեցան էներգաարտադրության համակարգում: Մինչ այդ էներգիայի հիմնական արտադրողը Սևան-Հրազդան կասկադն էր, որ տալիս էր Հանրապետության էլեկտրաէներգիայի 95%-ը: Դրա հետևանքով կտրուկ իջել էր Սևանի ջրի մակարդակը: Հայաստանի կառավարությունը միջոցներ ձեռնարկեց Սևանը փրկելու, նրա ջրերը խնայողաբար օգտագործելու համար:

Հանրապետության արդյունաբերությունն է՛լ ավելի բուռն զարգացման շնորհիվ որակական լուրջ փոփոխություններ տեղի ունեցան տնտեսական կյանքում: Այդ տարիներին կառուցվեցին 393-ից ավելի խոշոր արդյունաբերական ձեռնարկություններ, ձևավորվեցին արդյունաբերական նոր համալիրներ: Մնունդ առան արդյունաբերական կենտրոններ Աբովյանն ու Արթիկը, Արարատն ու Ագարակը, Քաջարանն ու Բյուրեղավանը, Զարենցավանն ու Նոր Հաճընը, այլ քաղաքներ ու բանվորական ավաններ:

1974 թ. Հայաստանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար ընտրվեց Կարեն Դեմիրճյանը (1974-1988):

1960-ական թվականներին կառուցվել էին Երևանի, Հրազդանի, Վանաձորի ջերմաէլեկտրակայանները, որոնք աշխատում էին ներմուծվող հումքով: Արդեն 1970-ական թվականներից

ՋԷԿ-երը ավելի շատ էլեկտրաէներգիա էին արտադրում, քան Հանրապետության բոլոր հիդրոէլեկտրակայանները միասին վերցրած: Դա մեծապես թեթևացրեց Սևանի հոգսը: Լճի մակարդակի հետագա իջեցումը կանխելու նպատակով Հայաստանի կառավարության միջնորդությամբ ԽՍՀՄ կառավարությունը որոշում ընդունեց կառուցել Արփա-Սևան ջրատար թունելը՝ 42 կմ երկարությամբ՝ Արփա գետի ջրերը Սևանա լիճ տեղափոխելու համար: Այդ եզակի կառույցի շինարարությունը տևեց մոտ 20 տարի: Շահագործման հանձնվեց 1981 թ., որով ոչ միայն կասեցվեց լճի հետագա անկումը, այլև որոշ չափով բարձրացավ ջրի մակարդակը:

Հանրապետության բուռն զարգացող տնտեսության և բնակչության էներգետիկ կարիքները բավարարելու նպատակով սկսվեց նաև Հայկական ատոմակայանի շինարարությունը, որի առաջին էներգաբլոկը շահագործման հանձնվեց 1976 թ., երկրորդը՝ 1979 թվականին: Հայաստանը սկսեց ավելի շատ էլեկտրաէներգիա արտադրել, քան կարող էր սպառել, ուստի ատոմակայանի արտադրած էներգիայի մոտ 40%-ը արտահանվում էր Ադրբեջան, 35%-ը՝ Վրաստան:

Բարելավվեց Հանրապետության ճանապարհատրանսպորտային համակարգը: Կառուցվեցին Սևան-Շորժա-Զոդ, Մասիս-Նուռնուս, Իջևան-Հրազդան երկաթուղիները, ինչպես նաև մի շարք ավտոմայրուղիներ, որոնց միջոցով Հանրապետության տարբեր շրջաններ կապվեցին իրար և միացան մայրաքաղաքին: Ավարտին հասցվեց Երևանի մետրոպոլիտենի շինարարությունը, կառուցվեցին «Զվարթնոց», «Էրեբունի» և Գյումրիի օդանավակայանները:

Այդ ամենի շնորհիվ մեծապես փոխվեց Հանրապետության ազգաբնակչության տեղաբաշխման և սոցիալական խմբերի կազմը: Նախկին 3-4 քաղաքների փոխարեն 1980-ական թվականների կեսերին Հայաստանում արդեն կար 27 քաղաք, 31 քաղաքատիպ ավան: 1985 թ. Հանրապետության բնակչության 2/3-ն ապրում էր քաղաքներում: 1965-1985 թվականներին բանվոր դասակարգի թիվը 303 հազարից հասավ 950 հազարի: Նրա բարձր որակավորման մասին է վկայում այն փաստը, որ 1960-ական թվականներին արտադրության կատարելագործման ու նորարարության շնորհիվ Հանրապետության արդյունաբերությունը յուրացրեց 550 նոր արտադրատեսակ: ԽՍՀՄ տնտեսական համակարգում, 1970-ական թվականների կեսերից սկսած, Հանրապետությունն արդեն կարևոր տեղ էր գրավում լեռնային արդյունաբերության, գունավոր մետալուրգիայի, էլեկտրատեխնիկական արդյունաբերության, մետաղահատ հաստոցաշինության և այլ բնագավառներում: 1985 թ. 180 արտադրատեսակներ արտահանվում էին շուրջ 85 երկրներ: ԽՍՀՄ-ում արտադրված չարժական էլեկտրակայանների 25-27%-ը, կոմպրեսորների 29-30%-ը, էլեկտրապոմպերի 16-18%-ը, զարթուցիչ ժամացույցների 60-65%-ը, կոնյակի 40-45%-ը ունեին հայկական մակնիշներ: Դա խոշոր նվաճում էր:

Արդյունաբերության չեչտակի զարգացման գործընթացում թույլ տրվեցին նաև սխալներ: Երևանում և Արարատյան դաշտի մյուս քաղաքներում գործարանային համալիրներ և բնակելի զանգվածներ կառուցելու հետևանքով մեծ տարածությունների վրա վերացան խաղողի և պտղատու այգիները: Հիմնական ուշադրությունը պլանային առաջադրանքների կատարման վրա բևեռելու հետևանքով հաճախ անտեսվում էին արտադրանքի որակի հարցերը:

Այսպիսով, 1946-1985 թվականներին Հայաստանը ԽՍՀՄ տնտեսական համակարգում իր արդյունաբերական զարգացման մակարդակով ու տեսակարար կշռով գրավեց առաջնակարգ տեղերից մեկը:

բ. Գյուղատնտեսությունը: Հետպատերազմյան տարիներին ինչպես ամբողջ Խորհրդային Միության մեջ, այնպես էլ Հայաստանում գյուղատնտեսությունը տևականորեն հետ էր մնում:

Պատերազմի տարիներին Հանրապետության գյուղացիությունը մեծ ջանքեր գործադրեց ռազմաճակատի պատվերները ժամանակին կատարելու համար: Բայց պատերազմից հետո հնարավոր չեղավ գյուղը դուրս բերել զարգացման լայն ուղի: Կենտրոնացված պլանավորման պայմաններում և մթերումների գները որոշելիս թույլ տրված կամայականությունների պատճառով անտեսվում էին գյուղացիության իրական հնարավորությունները: Պետությունը չնչին գներով գյուղից գնում էր այնքան մթերք, որքան անհրաժեշտ էր իրեն: Դրա պատճառով տա-

բեցտարի նվազում էին կոլտնտեսությունների եկամուտները, իջնում էր գյուղացիության նյութական շահագրգռվածությունը: Գյուղատնտեսությունը ճգնաժամային վիճակից դուրս բերելու մասին կառավարության բազմաթիվ որոշումներ մնում էին թղթի վրա:

Հետպատերազմյան տարիներին աշխատանքներ կատարվեցին գյուղի էլեկտրաֆիկացման ուղղությամբ: 1948 թ. Հանրապետության գյուղական բնակչության միայն մոտ 31%-ն էր էլեկտրաէներգիա ստանում: Ուստի կառավարությունը անհրաժեշտ միջոցներ հատկացրեց տեղական նշանակություն ունեցող փոքր հիդրոկայաններ կառուցելու համար: Արդեն 1950 թ. Հանրապետությունում գործում էին 52 գյուղական հիդրոկայաններ: Այդ նույն տարում Հայաստանի գյուղերի չուրջ 70%-ը էլեկտրաֆիկացված էր:

Հանրապետության գյուղատնտեսության արդյունավետ զարգացումն անհնար էր առանց ոռոգման ցանցի ընդլայնման: Հետպատերազմյան առաջին չրջանում ավարտվեց Ստորին Հրազդանի ջրանցքի առաջին հերթի չինարարությունը: Շահագործման հանձնվեցին Կոտայքի, Թալինի, Սպիտակի, Գառնիի ջրանցքները: Վերակառուցվեց ոռոգման ողջ համալիրը: Արարատյան դաշտում փորվեցին բազմաթիվ արտեզյան հորեր, կառուցվեցին ջրհան կայաններ: Բացի դրանից, յուրացվեցին և գյուղատնտեսական արտադրության համար պիտանի դարձան 16 հազար հեկտար ճահճուտներ: Այդ բոլորի հետևանքով 1945-1965 թթ. Հանրապետության ոռոգելի հողատարածքներն ավելացան 48 հազար հեկտարով:

Չնայած տեխնիկական սպասարկման աշխատանքների բարելավմանը՝ սակայն գյուղատնտեսությունը դանդաղ էր առաջադիմում, քանի որ գյուղացիությունն առաջվա պես չահագրգռված չէր արտադրության բարձրացմամբ: Գյուղատնտեսական արտադրանքի պետական պլանները կատարելու համար հիմնական միջոցները հատկացվում էին ցանքատարածությունների ընդարձակմանը, և անհրաժեշտ ուշադրություն չէր դարձվում բերքատվության բարձրացմանը: Դանդաղ էր աճում հացահատիկի, այգեգործության և հատկապես տեխնիկական կուլտուրաների բերքատվությունը, չատ տեղերում կրճատվում էր

անասնագլխաքանակը, նվազում մթերատվությունը:

Հետպատերազմյան տարիներին Հայաստանի գյուղատնտեսությանը մեծ վնաս հասցրեց Հանրապետությունը սեփական հացով ապահովելու մասին ԽՍՀՄ կառավարության որոշումը: Առանց հաչվի առնելու Հանրապետության հողատարածքային պայմանները՝ նախատեսվում էր արոտավայրերի, խոտհարքների և այգեգործության կրճատման հաչվին 1951-1953 թթ. հացահատիկի ցանքատարածություններն ավելացնել 180 հազար հեկտարով, իսկ բերքատվությունը 6 ցենտների դիմաց 1950 թ. հասցնել 25 ցենտների, և դրանով իսկ ապահովել Հանրապետությանն անհրաժեշտ հացահատիկի պահանջները: Այդ որոշման կենսագործման հետևանքով 1950-ական թվականներին գյուղատնտեսական չրջանառությունից դուրս գրվեցին մոտ 100 հազար հեկտար մեծ թեքություն ունեցող արոտավայրերի և խոտհարքների քայքայված հողատարածությունները:

Գյուղատնտեսության տևական հետ մնալու պատճառներն առաջին անգամ հիմնավորապես քննարկվեցին ԽՄԿԿ Կենտկոմի 1953 թ. սեպտեմբերյան պլենումում, որտեղ որոշվեց մի քանի անգամ բարձրացնել գյուղատնտեսական մթերքների մթերման գները, կրճատել օժանդակ և հանրային տնտեսություններից գանձվող հարկերը, ավելացնել կապիտալ ներդրումները և այլն: Այդ ամենի հետևանքով 1950-ական թվականներին որոչ չափով ավելացավ գյուղատնտեսական մթերքների արտադրությունը, բարելավվեց գյուղացիության վիճակը: Հայաստանի կոլտնտեսությունների դրամական եկամուտները 1953 թ. 5,5 միլիոնից 1962 թ. հասան 116,5 միլիոն ռուբլու: Գյուղում սկսվեց բնակարանային լայն չինարարություն: Կառավարության որոշմամբ արդյունաբերական ձեռնարկությունները չեֆական օգնություն էին ցույց տալիս հետ մնացող կոլտնտեսություններին:

Փոխվեց նաև գյուղատնտեսության տեխնիկական սպասարկման համակարգը: 1958 թ. վերացվեցին Հանրապետությունում եղած 28 պետական մեքենատրակտորային կայանները (ՄՏԿ), որոնք սպասարկում էին կոլտնտեսություններին: ՄՏԿ-ներում կենտրոնացված գյուղատնտեսական մեքենաներն ու ամբողջ տեխնիկան վաճառվեց կոլտնտեսություններին: Անչուչտ, տրամաբանական էր, որ հողն ու տեխնիկան գտնվեին

միևնույն տիրոջ ձեռքում, բայց այդ որոշման համատարած կենսագործումը ծանր վիճակի մեջ դրեց թույլ և մանր տնտեսություններին, որոնց թիվը հարյուրների էր հասնում:

Հանրապետության գյուղատնտեսության առավել հետ մնացող ճյուղը անասնապահությունն էր: Չնայած տարեցտարի պլանավորվում էր անասունների մթերատվության և գլխաքանակի աճ, բայց ծրագրվածը չէր կատարվում: Նախ՝ անասնակերի մեծ պակաս կար, մյուս կողմից՝ անասնապահական մթերքների պետական գնման գները այնքան ցածր էին, որ նույնիսկ չէին փոխհատուցում արտադրական ծախսերը:

Առաջընթաց չկար այգեգործության բնագավառում, որի շահութաբերությունը չէր բարձրանում:

Գյուղատնտեսության մեջ անբավարար էին ներդրվում գիտության և առաջավոր փորձի նվաճումները, դանդաղ էր կատարելագործվում արտադրությունը: 1950-1960-ական թվականներին հանրապետությունում ոռոգման ցանցի ընդլայնման շնորհիվ նոր յուրացված հողատարածությունների հիմնական մասը հատկացվեց տեխնիկական կուլտուրաների մշակմանը: Սևանի ավազանում և Զանգեզուրում ընդլայնվեց ծխախոտի, Արթիկի, Ախուրյանի, Սպիտակի շրջաններում՝ շաքարի ճակնդեղի արտադրությունը: Չնայած տեխնիկական կուլտուրաների մթերման բարձր գներին, դրանք հիմնականում արտադրվում էին ձեռքի ծանր աշխատանքով: 1960-ական թվականների կեսերից ԽՍՀՄ գյուղատնտեսությունը նորից հայտնվեց ճգնաժամային վիճակում: Պետությունը հարկադրված՝ գյուղատնտեսական մթերքներ սկսեց գնել արտասահմանից: 1965 թ. ԽՄԿԿ Կենտկոմը նորից քննեց գյուղատնտեսությունը ծանր վիճակից դուրս բերելու հարցեր: Բայց ընդունված որոշումները չիրագործվեցին, որովհետև գյուղատնտեսությունն անհրաժեշտ նյութական միջոցներ չուներ, իսկ արտադրության բարձրացման գործում գյուղացիության շահագրգռվածությունը նվազել էր հատկապես 1970-ական թվականներին՝ կոլտնտեսությունների մեծ մասը սովխոզների վերածելու հետևանքով:

1970-ական թվականներին երկրում ստեղծվեցին ագրոարդյունաբերական համալիրներ, որտեղ մեկ միասնական համակարգի մեջ ընդգրկվեցին գյուղատնտեսական մթերքների արտադրության, վերամշակման և իրացման ձեռնարկությունները: Հայաստանում հատկապես արդյունավետ էին թռչնաբուծական համալիրները. զգալիորեն ավելացավ հավի մսի և ձվի արտադրությունը՝ հիմնականում բավարարելով հանրապետության պահանջները: Բայց մյուս բնագավառներում ագրոարդյունաբերական համալիրների արդյունավետությունը ցածր էր: Դրանք սովորաբար կազմակերպվում էին սովխոզների ու կոլտնտեսությունների բազայի վրա, որոնց մեքենայական սպասարկման անբավարար մակարդակը չէր նպաստում արտադրության հետագա վերելքին:

Չնայած կառուցվում էին նորանոր ջրանցքներ, ընդլայնվում ոռոգելի հողատարածքները, յուրացվում էին նախկինում դուրս գրված տարածքները, բայց գյուղատնտեսության վիճակը այդպես էլ չէր բարելավվում. ամենուրեք գյուղատնտեսական մթերքների պակաս էր: Գյուղացիները դիմում էին արտագնացության, տեղափոխվում քաղաքներ կամ Խորհրդային Միության ուրիշ հանրապետություններ: 1970-ական թվականներին Հայաստանի տասնյակ գյուղեր, հատկապես լեռնային շրջաններում, դատարկվել էին:

Վարչահրամայական համակարգի պայմաններում երկիրը ագրարային ճգնաժամից դուրս բերելու համարյա բոլոր փորձերը ձախողվում էին:

Չնայած այդ ամենին՝ 1980-ական թվականների կեսերին Խորհրդային Հայաստանը տարածաշրջանում հանդիսանում էր տնտեսապես ամենազարգացած, գիտական և մտավոր հզոր ներուժ ունեցող քաղաքակիրթ հանրապետություն:

գ. Հասարակական-քաղաքական կյանքը: Հայրենական մեծ պատերազմում ԽՍՀՄ ժողովուրդների ծանր զոհողությունների գնով ձեռք բերված հաղթանակն այն կարծիքը ստեղծեց, թե գոյություն ունեցող պետական համակարգն ամենակենսունակն է: Դա հիմք ծառայեց իշխանական լծակների հետագա կենտրոնացման համար: Եթե պատերազմի տարիներին որոշ չափով մեղմացել էին նախորդ շրջանի բռնությունները, ապա հետպատերազմյան շրջանում, հակառակ խորհրդային մարդկանց սպասումների, դրանք վերսկսվեցին: Տարած հաղթանակը վերագրելով կոմկուսին և նրա առաջնորդ Ի. Ստալինին՝ կուսակցական-

կառավարական բյուրոկրատիան դարձել էր ավելի կամայական ու անկառավարելի: Կուսակցական վերնախավը պատժիչ մարմինների միջոցով (ՊԱԿ, ՆԳՆ) վախի ու լարված վիճակի մեջ էր պահում ժողովրդին: Հասարակական-քաղաքական կյանքի բոլոր ոլորտները խիստ հսկողության տակ էին: Գաղափարական հարկադրանքի մթնոլորտում գիտությունը և մշակույթը դիտվում էին զերազանցապես որպես կուսակցության քաղաքականությանը ծառայող լծակներ, իսկ թույլ տրված ամեն մի վրիպում կամ սխալ ստանում էր քաղաքական գնահատական:

Մտավորականության աչքի ընկնող ներկայացուցիչների ինքնուրույնությունը կոտրելու և վարչական ապարատի կամակատար դարձնելու նպատակով 1946-1948 թթ. ԽՄԿԿ կենտկոմը մի շարք որոշումներ ընդունեց գրականության և արվեստի մասին, իսկ 1947-1951 թթ. գիտական բանավեճեր պարտադրվեցին փիլիսոփայության, կենսաբանության, լեզվաբանության, քաղաքատնտեսության հարցերի շուրջ, որոնց ծրագրված արդյունքներով կոմունիստական կուսակցության կենտկոմը նախօրոք պատրաստված դատավճիռներ էր կայացնում գիտության ու մշակույթի նշանավոր գործիչների նկատմամբ:

ԽՍՀՄ-ում ծավալված գաղափարական հալածանքները դրսևորվեցին նաև Հայաստանում: Միութենական օրինակով Հայաստանի գիտությունների ակադեմիայում և Երևանի պետական համալսարանում կազմակերպվեցին բանավեճեր, որոնց ժամանակ անհարկի մեղադրանքներ ներկայացվեցին մի շարք նշանավոր գիտնականների (Հ. Աճառյան, Գ. Ղափանցյան, Մ. Ներսիսյան, Ա. Հովհաննիսյան, Վ. Ռշտունի, Ա. Թախտաջյան, Ա. Տեր-Պողոսյան և ուրիշներ): Համակարգի կողմից պարտադրված սկզբունքներից չեղված, ինքնուրույն մտածող անհատները հալածանքի էին ենթարկվում:

1949 թ. հունիսի 11-ին ՀԿԿ Կենտկոմում հրավիրվեց զոնփակ խորհրդակցություն, որտեղ կուսակցության և պետանվտանգության պատասխանատու աշխատողներին հաղորդվեց ԽՍՀՄ կառավարության որոշումը՝ Հանրապետության «անբարեհույս տարրերին» Ալթայի երկրամաս աքսորելու մասին: Նախօրոք, ըստ շրջանների, կազմվել էին բռնադատվողների

ցուցակները, որոշվել էին տեղափոխման ժամանակը և երթուղիները: Ցուցակներում հիմնականում ընդգրկվել էին նախկինում բռնադատվածների հարազատներն ու բարեկամները, ֆաշիստական գերությունից հրաշքով փրկվածները և հայրենադարձների որոշ մասը: Հանրապետության քաղաքներում և շրջաններում ստեղծվել էին համապատասխան հանձնաժողովներ, որոնք պետք է աքսորը իրականացնեին մեկօրյա ժամկետում:

Անմեղ մարդկանց իրենց հայրենիքից արտաքսելու գործողությունները սկսվեցին հունիսի 14-ի վաղ առավոտյան և ավարտվեցին նույն օրվա ընթացքում: Հայաստանից այդ օրը աքսորվեց 2935 ընտանիք, որոնց անդամների թիվն անցնում էր 13 հազարից: Իսկ թե որքան հայ է աքսորվել խորհրդային մյուս հանրապետություններից, հայտնի չէ: Դա աղետ էր, ստալինյան վերջին չարագործություններից մեկը:

Ստալինի մահից հետո բոլոր աքսորականները արդարացվեցին, իսկ կենդանի մնացածները վերադարձան իրենց տները: Նրա մահով ավարտվեց մարդկային ու ազգային արժանապատվության ոտնահարումների, զանգվածային բռնությունների, հասարակական այլասերման մի ամբողջ ժամանակաշրջան: Սակայն ստալինյան վարչահրամայական համակարգը թափանցել էր հասարակական կյանքի բոլոր ոլորտները և դրան փոխարինելու եկած ղեկավարները նպատակամղված ու հետևողական պայքար չծավալեցին հասարակության արմատական վերափոխման համար:

Ստալինյան չարագործությունները բացահայտելու և հրապարակայնորեն քննադատելու հարցում շրջադարձային նշանակություն ունեցավ ԽՄԿԿ XX համագումարը (1956 թ.): Այն դատապարտեց անհատի պաշտամունքը և բացահայտեց դրա բացասական հետևանքները: Այդ գործում մեծ դեր կատարեց ԽՄԿԿ կենտկոմի առաջին քարտուղար Ն. Խրուշչովը, որի ջանքերով 1956 թ. հունիսին ընդունվեց «Անհատի պաշտամունքը և նրա վնասակար հետևանքները հաղթահարելու մասին» որոշումը, ուր զգույշ գնահատականներ էին տրվում Ստալինի և նրա զինակիցների գործունեությանը: Որոշման թերի լինելու

հիմնական պատճառն այն էր, որ դրա ընդունողների մեծ մասը այս կամ այն չափով մեղսակից էին կատարված հանցագործություններին:

ԽՄԿԿ XX համագումարից հետո ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ Հայաստանում ստեղծվեցին նախկին բռնաղատվածների գործերը ստուգող և վերանայող հանձնաժողովներ: Հանրապետությունում բացահայտվեցին մարդու իրավունքների ոտնահարման և բռնությունների կիրառման բազմաթիվ աղաղակող փաստեր: Շուտով արդարացվեցին տասնյակ հազարավոր անմեղ մարդիկ, որոնցից շատերը կենդանի չէին արդեն: Վերականգնվեց բազմաթիվ ազնիվ մարդկանց բարի անունը: Անշուշտ, այս միջոցառումները դրական ազդեցություն ունեցան Հանրապետության հասարակական-քաղաքական կյանքի վրա:

Բայց երկրի տնտեսական և հասարակական կյանքում տեղի ունեցող դրական տեղաշարժերը արմատական փոփոխություններ չմտցրին միակուսակցական-ամբողջատիրական համակարգում: 1960-ական թվականներին նորից ակտիվացան առանձին ղեկավարների կամայական գործողությունները, նորից շատ կարևոր հարցեր լուծվում էին առանց տեղերի կարծիքները հաշվի առնելու: Հալածանքներ սկսվեցին կենտրոնական իշխանություններին քննադատողների նկատմամբ. «այլախոհները» մեկուսացվում կամ արտաքսվում էին երկրից: Նորից գործի դրվեց ազգայնամոլության մեջ հանրապետությունների մտավորականներին մեղադրելու փորձված միջոցը: Նման պայմաններում նախորդ տարիներին ձեռնարկված որոշ դեմոկրատական վերափոխումները մտան փակուղի: Ավելին, հետադիմական, պահպանողական ուժերը 1964 թ. հերթական հեղաշրջման միջոցով երկրի ղեկավարությունը հանձնեցին «բրեժնևյան» խմբակցությանը, ասպարեզից հեռացրին տնտեսական ու քաղաքական բարեփոխումները կենսագործող խրուշչովյան կադրերին: Երկիրը թևակոխեց տեղեկատվության և լճացման տևական ժամանակաշրջան:

Ստեղծվեցին ղեկավարման նորանոր օղակներ, որոնք բարեխղճորեն ծառայում էին անգործունյա ղեկավարությանը: Հայաստանում, օրինակ, 1980-ական թվականներին գոյություն ունեին ավելի մեծ թվով նախարարություններ և գերատեսչություններ, քան ՌԽՖՍՀ-ում: Ուռճացած բյուրոկրատական ապարատը ձգտում էր ամրապնդել իր դիրքերը: Սոցիալ-տնտեսական ճգնաժամի խորացմանը զուգընթաց ընդլայնվում էին կուսակցական, պետական, տնտեսական ղեկավարների արտոնությունները, նրանց համար ստեղծվում էին առանձնահատուկ պայմաններ: Շարունակվում էր կոմունիստական կուսակցության մենատիրության ամրապնդումը: Նրա վերնախավի ձեռքում էր կենտրոնացված հանրապետության ողջ իշխանությունը: Բազմակուսակցականության բացակայության պայմաններում շատերը կոմկուսի շարքերն էին ընդունվում իրենց համար արտոնյալ պայմաններ ստեղծելու նպատակով: Հաճախ պաշտոնները բաշխվում էին վերադասին նվիրվածության, համերկրացիության սկզբունքներից ելնելով կամ կաշառքի միջոցով, որը, բնականաբար, տանում էր դեպի հետագա այլասերում և կազմալուծում:

դ. Ազգային զարթոնքի տարիներ: 1960-ական թվականների հարաբերական ազատություններ ժամանակաշրջանը նաև ազգային զարթոնքի տարիներ էին:

Հայոց ցեղասպանության 50-ամյակը նշելու պահանջով 1965 թ. ապրիլի 24-ին Երևանում ցույց կազմակերպվեց, որը ԽՍՀՄ պատմության մեջ առաջին զանգվածային ելույթն էր: Չնայած խաղաղ ցույցը ուժով ցրվեց, բայց այն չրջադարձային նշանակություն ունեցավ ազգային խնդիրների բարձրացման տեսակետից:

1970-ական թվականներին բազմիցս բարձրացվել է ցեղասպանության, Ղարաբաղը Հայաստանի հետ վերամիավորելու, Նախիջևանի և այլ հարցեր: Այդ տարիներին հանրապետությունում ստեղծվել էին մի շարք ազգայնական ընդհատակյա կազմակերպություններ: Իշխանությունները հսկողության տակ էին վերցնում այդ կազմակերպությունները, ձերբակալում դրանց ղեկավարներին: 1960-1980-ական թվականներին հակախորհրդային գործունեության համար Հայաստանում դատապարտվել և ուղղիչ աշխատանքային գաղութներ է ուղարկվել ավելի քան 70 մարդ:

Համազգային պայքարի կարևոր նվաճումը եղավ 1967 թ.

Երևանում՝ Ծիծեռնակաբերդում, 1915 թ. Մեծ եղեռնի զոհերի հուշարձանի բացումը, որն ուխտավայր դարձավ ողջ հայության համար:

Ազգային զարթոնքին մեծապես նպաստեց 1968 թ. Սարդարապատի ճակատամարտի հերոսներին նվիրված հուշարձան-համալիրի կառուցումը:

1980-ական թվականների համատարած ճգնաժամը, տնտեսական-քաղաքական հարաբերությունների լճացումը ինչպես ամբողջ ԽՍՀՄ-ում, այնպես էլ Հայաստանում ստեղծեցին ծայրահեղ լարված վիճակ, որից դուրս գալու ուղիներ իշխանություններն ի վիճակի չեղան գտնելու:

Ե. Այլախոհական շարժումը Խորհրդային Հայաստանում: Ազատ խոսքի գնալով ուժեղացող սահմանափակումները, չդադարող հետապնդումներն ու բռնաճնշումները առաջ բերեցին հակազդեցություն, որն արտահայտվում էր այլախոհական դրսևորումներով:

Այլախոհական շարժումը Հայաստանում սկզբնավորվեց 1962-1963 թթ. «Հայ երիտասարդական միություն» խմբի ստեղծումով, որի անդամներն էին Խաչիկ Սաֆարյանը, Խաչիկ Ամիրջանյանը, Մերուժան Հովհաննիսյանը, Վիգեն Բաբայանը, Էդվարդ Կակոյանը, Կարապետ Քիրամիջյանը և Գրիգոր Եղյանը: 1964 թ. խմբի բոլոր անդամները ձերբակալվեցին:

1966 թ. մայիսին Հայկազ Խաչատրյանը Երևանի իր բնակարանում Ստեփան Զատիկյանի և Շահեն Հարությունյանի հետ հիմնում է գաղտնի նոր կազմակերպություն՝ «Ազգային միացյալ կուսակցություն» (ԱՄԿ) անվամբ: Կազմակերպության նպատակն էր Հայաստանի անկախ պետականության վերականգնումը: 1967 թ. կազմակերպության առաջին ծրագիրը և կանոնագիրը 3000 տպաքանակով լույս են տեսնում ԱՄԿ «Փարոս» ընդհատակյա թերթում: ԱՄԿ-ին են միանում նաև բանտերից ազատված վերը նշված «յոթ հայրենասերներից» մի քանիսը, ապա 1965 թ. ուսանող Պարույր Հայրիկյանի հիմնած «Հայկական երիտասարդական միություն» (ՀԵՄ) ընդհատակյա կազմակերպությունը: Հայրիկյանին հանձնարարվում է ստեղծել «Շանթ» անունով ավելի ընդգրկուն երիտասարդական կազմակերպություն:

1968 թ. հուլիսին կայանավորվում են ԱՄԿ-ի հիմնադիրներ Հ. Խաչատրյանը, Ստ. Զատիկյանը և Շ. Հարությունյանը, որից հետո ԱՄԿ երիտասարդական կառույցների ղեկավար Պ. Հայրիկյանը դառնում է ԱՄԿ-ի փաստացի ղեկավար: Ձևավորվում են ԱՄԿ-ի «Երկունք», «Ցասում» և «Այգ» մասնաճյուղերն իրենց ճյուղավորումներով: Առանձին գործում է աղջիկների մասնաճյուղը: 1968 թ. խորհրդային զորքերի՝ Չեխոսլովակիա ներխուժման դեմ տարածվում են թռուցիկներ: Լույս է տեսնում «Մահ կամ Ազատ Հայաստան» նշանաբանը կրող «Երկունք» թերթիկը՝ 5000 տպաքանակով:

1969 թ. փետրվարին Ծիծեռնակաբերդի Մեծ եղեռնի համալիրում ԱՄԿ անդամներ են դառնում ևս 12 հոգի, որոնց թվում էին ապագա նշանավոր քաղաքական գործիչներ Աշոտ Նավասարդյանը և Անդրանիկ Մարգարյանը: Մի քանի ամիս անց կայանավորվում են Պ. Հայրիկյանը և նրա զինակիցներից մի քանիսը, այդ թվում՝ Ա. Նավասարդյանը:

1970 թ. կայանավայրում Պ. Հայրիկյանը հանդիպում է ԱՄԿ-ի հիմնադիր և ղեկավար Հայկազ Խաչատրյանին և նրանից թույլտվություն ստանում ԱՄԿ-ի հետագա գործունեությունը իրականացնել իր ներկայացրած ծրագրերին համապատասխան: 1973 թ. կալանքից ազատվում են Հ. Խաչատրյանը և Պ. Հայրիկյանը: Նախկինում չբացահայտված ընկերների հետ նրանք վերսկսում են բուռն գործունեություն: Հայկազ Խաչատրյանը կրկին գլխավորում է ԱՄԿ-ն: Հիմնվում է ԱՄԿ ղեկավար մարմին՝ կուսակցության խորհուրդ, որը Հայրիկյանի առաջարկով 1973 թ. օգոստոսին ԱՄԿ ծրագրից հանում է բոլոր այն կետերը, որոնք հակադրվում էին Խորհրդային Միության սահմանադրությանը: Անկախ պետականությունը վերականգնելու ճանապարհ է ազդարարվում ազգերի ինքնորոշման սկզբունքի վրա խարսխված հանրաքվեն (Խորհրդային Հայաստանի անկախություն՝ հանրաքվեի միջոցով): ԱՄԿ խորհուրդը (Պ. Հայրիկյան, Ա. Արշակյան, Ա. Մարգարյան, Ա. Նավասարդյան, Հ. Թադևոսյան) Հայրիկյանին ընտրում է ԱՄԿ խորհրդի նախագահ:

Որպես ԽՍՀՄ իշխանությունների պատժիչ գործողություններով հաստատված ընդդիմադիր կազմակերպություն, ԱՄԿ-ն միակն էր ԽՍՀՄ ողջ տարածքում: Հենց դրանով է բացատրվում

այն իրողությունը, որ ԽՍՀՄ բազմաթիվ այլազգի քաղկալանավորներ՝ ռուսներ, ուկրաինացիներ, հրեաներ, լատիշներ, լիտվացիներ, մոլդովացիներ և այլոք, Ուկրաինայի ազգային հերոս Վասիլ Ստրուսի նախաձեռնությամբ իրենց ազդարարում են ԱՄԿ համակիր անդամներ և հայերից ոչ պակաս վճռականությամբ բողոքի դիմումներով ու հացադուլներով պահանջում են հայ ժողովրդին թույլատրել անկախության հանրաքվեի միջոցով օգտվել ինքնորոշման իրավունքից: 1976 թ. Հայրիկյանին հաջողվում է բանտից ընկերներին ուղարկել «անկախական մարդու» մի ծրագրային հոդվածաշար, որից հատվածներ տպագրելու համար Ա. Նավասարդյանին և Ա. Արշակյանին 1981 թ. դատապարտում են 11-ական տարվա ազատազրկման ու աքսորի, իսկ աքսորավայրում գտնվող Պարույր Հայրիկյանի ժամկետը կեղծ մեղադրանքով ավելացվում է ևս երեք տարով: Հ. Խաչատրյանը 1978 թ. նորից է կալանավորվում՝ բանտում մնալով մինչև 1980 թվականը:

Այսպիսով, Խորհրդային Հայաստանի համարյա բոլոր նշանավոր այլախոհները 1964-1980 թթ. տարբեր հատվածներում ձերբակալվելով՝ նետվեցին բանտեր կամ ուղարկվեցին սիբիրյան աքսորավայրեր, իսկ Ստ. Զատիկյանը, Մոսկվայի մետրոյի կայարաններից մեկում ահաբեկչություն կատարելու կեղծ ու սադրիչ մեղադրանքով, 1979 թ. գնդակահարվեց՝ չնայած Ռուսաստանյան առաջադեմ մտավորականության բազմաթիվ ներկայացուցիչների, հատկապես ակադեմիկոս Սերգեյ Սախարովի՝ Կրեմլի իշխանություններին ուղղված բազմաթիվ բողոքներին ու կոչերին:

Վերադառնալով աքսորավայրից Պ. Հայրիկյանը մի խումբ գաղափարակիցների հետ 1987 սկզբին ընդհատակից հանում է «Ազգային միացյալ կուսակցությունը»՝ այն վերանվանելով Ազգային Ինքնորոշման միավորում (ԱԻՄ): Դա անկախականների միավորում էր, որի առաջնահերթ խնդիրը Հայաստանի անկախությունն էր հանրաքվեի միջոցով: Հենց ամիսների անմիջական նախաձեռնությամբ 1987 թ. հոկտեմբերին հրատարակվում է «Անկախություն» թերթի առաջին համարը (խմբագիրը սկզբում Պ. Հայրիկյանն էր, իսկ 1988 թվականից՝ Ռ. Համբարձումյանը): Լինելով քաղաքական այլընտրանքային

առաջին թերթը ամբողջ ԽՍՀՄ-ում՝ «Անկախությունը» կարողացավ ուժերի համախմբող դեր կատարել: Կանգնած լինելով մեր երկրի ինքնորոշման պայքարի ակունքներում՝ թերթն իր խիզախ ու համարձակ քարոզչությամբ հաղթահարում էր մարդկանց վախը, նրանց նախապատրաստում համաժողովրդական պայքարի:

զ. Հայրենիք-Սփյուռք առնչությունները 1945-1980-ական թվականներին: Հայրենական մեծ պատերազմում Խորհրդային Միության տարած հաղթանակը խիստ բարձրացրեց նրա հեղինակությունը աշխարհում: Մեծապես աճեց նաև Խորհրդային Հայաստանի ձգողական ուժը: Սփյուռքի հայ ազգային կուսակցությունները, բացառությամբ Դաշնակցության, և հայկական այլ կազմակերպություններ բազմաթիվ դիմումներ ներկայացրին մեծ տերություններին ու ՄԱԿ-ին՝ պահանջելով ստեղծել անհրաժեշտ պայմաններ սփյուռքահայերի հայրենիք վերադառնալու համար: Հազարավոր դիմումներ ստացվեցին նաև անհատ սփյուռքահայերից: Հայաստանի իշխանությունների միջնորդությամբ 1945 թ. նոյեմբերին ԽՍՀՄ կառավարությունը որոշում ընդունեց հայերի ներգաղթ կազմակերպելու մասին: Հայաստանի կառավարությանն առընթեր ստեղծվեց արտասահմանից ներգաղթող հայերի ընդունման և տեղավորման կոմիտե, որը լայն աշխատանքներ ծավալեց: Սփյուռքի համայնքներում ևս կազմակերպվեցին հայրենադարձությանը նպաստող հանձնաժողովներ: 1946 թ. հունիսին Բեյրութից «Տրանսիլվանիա» շոգենավով հայրենադարձների առաջին քարավանը ժամանեց Բաթում, այնտեղից՝ Երևան: Մինչև տարեվերջ Հայաստան եկավ մոտ 51 հազար տարագիր: Զանգվածային հայրենադարձությունը շարունակվեց նաև հաջորդ տարիներին: 1946-1948 թթ. աշխարհի 12 երկրներից Հայաստան վերադարձան շուրջ 90 հազար հայեր: Նրանցից քչերն ապահովվեցին բնակարանով ու աշխատանքով, բայց երեխաներն ընդգրկվեցին դպրոցներում, երիտասարդությունը հնարավորություն ստացավ սովորելու բուհերում և տեխնիկումներում: Առաջին շրջանում հայրենադարձները հսկայական դժվարություններ կրեցին, որի հիմնական պատճառը պատերազմից նոր դուրս եկած երկրի տնտեսական ծանր վիճակն էր և հայրենադարձության կազմակերպման գործում

տեղ գտած լուրջ թերությունները: Հետագա տարիներին գնալով ներգաղթողների թիվը նվազեց: Դրա պատճառները տարբեր էին, որոնցից առանձնանում էին 1949 թ. քաղաքական բռնաճնշումները, երբ ներգաղթողների մի մասը աքսորվեց: Դրան նպաստեց նաև արտաքին հարաբերությունների լարվածության ուժեղացումը «սառը պատերազմի» շրջանում և այլն: Չնայած օբյեկտիվ և սուբյեկտիվ դժվարություններին՝ հայրենադարձությունը շարունակվեց: Այսպես, 1950-ական թվականներին Հայաստան է ներգաղթել մոտ 4000, 1960-1970-ական թվականներին՝ ավելի քան 32 հազար մարդ: Հետագա տարիներին հայրենադարձությունը ոչ միայն դադարեց, այլև տեղի ունեցավ հակառակ գործընթաց. տարբեր պատճառներով նախկին հայրենադարձներից շատերը հեռացան արտասահման:

Հետպատերազմյան ժամանակաշրջանում նոր որակ ստացան հայրենիք-սփյուռք կապերը: Աստիճանաբար ճիշտ վերաբերմունք ձևավորվեց Սփյուռքում գործող հասարակական-քաղաքական կազմակերպությունների նկատմամբ: Ստեղծվեց Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտե: 1962 թ. սկսած՝ դասագրքեր էին հրատարակվում Սփյուռքի հայկական դպրոցների համար: Այդ դպրոցները Հայաստանից կանոնավոր ստանում էին ոչ միայն դասագրքեր, այլև ուսումնական զանազան պիտույքներ:

Սյուռքահայ համայնքների համար զգալի օգնություն էր Հայաստանի բուհերում որակյալ մասնագետների պատրաստումը: Սփյուռքահայ երիտասարդները 1958 թ. առաջին անգամ հանրապետության բուհեր ընդունվեցին: 1960-1980-ական թվականներին Հայաստանի բուհերն ու տեխնիկումներն ավարտեցին մոտ 1000 սփյուռքահայ ուսանողներ: 1990-ական թվականներին ավելի քան 1200 սփյուռքահայ երիտասարդներ իրենց ուսումը շարունակում էին Հայաստանի բուհերում: Զգալիորեն ընդարձակվեցին գիտական և գրական կապերը սփյուռքի և հայրենիքի միջև: Հանրապետության առաջատար ստեղծագործական կոլեկտիվներն ավելի հաճախ էին հանդես գալիս գաղթավայրերում, մյուս կողմից՝ Սփյուռքի ստեղծագործական կոլեկտիվներն ու անհատ կատարողներն իրենց արվեստը ներկայացնում էին հայրենաբնակ ժողովրդին: Փոխադարձ այցելու-

թյունները մեծապես նպաստում էին հայ ժողովրդի տարբեր հատվածների հոգևոր մերձեցմանը:

1960-1980-ական թվականները սփյուռքահայ համայնքների ամրապնդման և զարգացման ժամանակաշրջան էր: Մեծ վերելք ապրեց սփյուռքահայության ազգային դարթոնքը: Սփյուռք-հայրենիք հարաբերությունները խարսխված էին համազգային շահերի գիտակցման վրա և մեծապես նպաստում էին համահայկական հոգեբանության ձևավորմանը:

Է. Մշակույթը 1945-1980-ական թվականներին: Հետպատերազմյան շրջանում, հատկապես անհատի պաշտամունքի քննադատությունից հետո, նոր հորիզոններ բացվեցին ազգային մշակույթի զարգացման համար: Դեռևս պատերազմի ծանր օրերին ստեղծված Հայաստանի Գիտությունների ակադեմիան, միավորելով հանրապետության գիտահետազոտական ինստիտուտները, նոր թափ էր հաղորդում դրանց զարգացմանը: 1947 թ. Գիտությունների ակադեմիայի նախագահ ընտրվեց ականավոր գիտնական, աստղաֆիզիկոս, ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանը: Տեսական և կիրառական մաթեմատիկայի բնագավառում ձեռք բերված հաջողություններով վերջնականապես ձևավորվեց հայ մաթեմատիկական դպրոցը: Նրա հաջողությունների գործնական կիրառմամբ սկսեցին զարգանալ կիբեռնետիկան և էլեկտրոնային հաշվիչ մեքենաների արտադրությունը: Այդ ասպարեզում ձեռք բերված առաջին հաջողությունները կապված են ակադեմիկոսներ Արտաշես Շահինյանի, Մխիթար Ջրբաշյանի և Սերգեյ Մերգելյանի անունների հետ:

1950-ական թթ. վերջերից և 60-ական թթ. հետազոտական աշխատանքներ ծավալվեցին հաշվողական մաթեմատիկայի և կիբեռնետիկայի բնագավառներում: Գիտնականներն ու ճարտարագետները նախագծեցին «Հրազդան», «Նաիրի» և այլ տիպի էլեկտրոնային հաշվիչ բարդ մեքենաներ:

Ֆիզիկայի բնագավառում ձեռք բերված նվաճումների շնորհիվ զարգացան ռադիոտեխնիկան և էլեկտրոնիկան: Հատուկ ուշադրություն էր դարձվում տեխնիկական գիտությունների զարգացմանը: Այդ բնագավառի գիտական նվաճումներն արտադրության մեջ ներդնելու շնորհիվ ստեղծվեցին գիտաարտադրական միավորումներ, որոնք մարմնավորում էին գիտության

և արտադրության ամուր կապը:

1958 թ. ֆիզիկայի ինստիտուտում սկսվեցին ԽՍՀՄ խոշորագույն՝ 6 միլիարդ էլեկտրոն-վոլտ էներգիայով էլեկտրոնային արագացուցչի նախագծումը և կառուցումը: Աշխատանքները կատարվում էին ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Արտեմ Ալիխանյանի ղեկավարությամբ: 1967 թ. էլեկտրոնային արագացուցչի կառուցումն ավարտվեց: Դրա շահագործմամբ Հայաստանի և Խորհրդային Միության շատ ֆիզիկոսներ հնարավորություն ստացան միջուկային ֆիզիկայի բնագավառում բարդ փորձեր կատարելու:

Արագածի և Նոր Ամբերդի կայաններում շարունակվեցին հետազոտությունները տիեզերական ճառագայթների ուսումնասիրման ասպարեզում: Ռադիոֆիզիկայի ե էլեկտրոնիկայի բնագավառում Բյուրականի աստղադիտարանում սկսված ուսումնասիրությունները հետագա զարգացում ստացան ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտում, որը հիմնադրվեց 1960 թ.:

1956 թ. ստեղծվեց Գիտությունների ակադեմիայի նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտը, որն ակադեմիկոս Արմենակ Մնջոյանի գլխավորությամբ մեծ հաջողությունների հասավ դեղանյութերի ստեղծման, կենսաբանական ակտիվ միացությունների սինթեզման ասպարեզում: 1990 թ. Հանրապետությունում կար գիտահետազոտական շուրջ 150 միավորում:

Խոշոր հաջողություններ ձեռք բերվեցին հայագիտության զարգացման բնագավառում: Հայագետները նորովի սկսեցին ուսումնասիրել ազգային-ազատագրական շարժումների պատմությունը, Հայկական հարցը, վերագնահատել անցյալի շատ խնդիրներ: Ստեղծվեցին գիտական բարձրարժեք բազմաթիվ մենագրություններ, հրատարակվեց «Հայ ժողովրդի պատմության» ութհատորյակը: Պատմագիտության զարգացման գործում մեծ դեր խաղացին ակադեմիկոսներ Աշոտ Հովհաննիսյանը, Աբգար Հովհաննիսյանը, Սուրեն Երեմյանը, Մկրտիչ Ներսիսյանը:

1950-1980-ական թթ. զգալի հաջողությունների հասավ հնագիտությունը: Արդյունավետ էին համաշխարհային ճանաչում ստացած ուրարտական (Թեյշեբաինի, Էրեբունի) և հելլենիստական շրջանի հուշարձանների (Գառնի) պեղումները: Խորհրդային Հայաստանում հնագիտության զարգացման գործում մեծ ներդրում ունեցան Բորիս Պիոտրովսկին, Բարկեն Առաքելյանը, Կարո Ղաֆադարյանը և ուրիշներ:

1950-1980-ական թթ. բարենպաստ էին հայ գրականագիտության զարգացման համար: Հաղթահարվեցին գրական ժառանգության գնահատման հարցում թույլ տրված սխալները:

1950-1980-ական թթ. լուրջ ձեռքբերումներ եղան լեզվաբանության բնագավառում, որի զարգացման գործում գիտական մեծ վաստակ ունեն ակադեմիկոսներ Արարատ Ղարիբյանը, Գուրգեն Սևակը, Էդուարդ Աղայանը, Գևորգ Ջահուկյանը և ուրիշներ: Նկատելի նվաճումներ եղան նաև արվեստագիտության, փիլիսոփայության և հումանիտար մյուս գիտությունների բնագավառներում:

Մեծ աշխատանք տարվեց հայ գրականության դասական գրողների երկերի ժողովածուների և հատորաշարերի հրատարակման ուղղությամբ: Հրատարակվեցին միջնադարյան հեղինակների գրական երկերը, արևմտահայ և արևելահայ գրողների լավագույն ստեղծագործությունները: Լայն ասպարեզ բացվեց գրական նոր սերնդի ստեղծագործական զարգացման համար: Լույս տեսավ «Հայ նոր գրականության պատմություն» հինգհատորյակը: Ուշագրավ հետազոտություններ կատարվեցին գրականագիտության բնագավառում: Հանրապետության հոգևոր կյանքում կարևոր իրադարձություն էր «Հայկական խորհրդային հանրագիտարանի» 12 հատորների հրատարակությունը:

Հետպատերազմյան տարիներին գրական ասպարեզ եկավ գրողների նոր սերունդ, որը թարմ շունչ բերեց: Համաժողովրդական սիրո արժանացան Հովհաննես Շիրազը, Գևորգ Էմինը, Համո Սահյանը, Պարույր Սևակը, Սերո Խանզադյանը, Սիլվա Կապուտիկյանը, Վահագն Դավթյանը և ուրիշներ: Իրենց ստեղծագործական հարուստ ուղին էին շարունակում Ավետիք Իսահակյանը, Դերենիկ Դեմիրճյանը, Ստեփան Զորյանը, Նաիրի Զարյանը, Հրաչյա Քոչարը և ուրիշներ: Հեռավոր Սիբիրի կալանավայրերում տևական տառապանք կրելուց հետո Հայաստան

վերադարձան Գուրգեն Մահարին, Մկրտիչ Արմենը, Վահրամ Ալազանը, Վաղարշակ Նորենցը, Լեռ Կամսարը:

Ստալինի մահից և ԽՄԿԿ XX համագումարից հետո խորհրդահայ գրականության զարգացումն ընթացավ նոր հունով: Սկսեցին վերականգնվել պատմականության և ժողովրդայնության սկզբունքները, ուշադրության կենտրոնում հայտնվեց մարդ-անհատն իր անձնական կյանքով, խոհերով ու ապրումներով:

Ստեղծագործական բուռն կյանք ապրեց Պարույր Սևակը, որի այդ տարիների վաստակն ամփոփված է հատկապես «Անլռելի զանգակատուն», «Մարդը ափի մեջ», «Եղիցի լույս» գրքերում: Նրա ստեղծագործության մեջ հառնեց իրական մարդը իր դրամատիկ, հարուստ ներաշխարհով, պատմական հիշողությամբ, ժամանակի հանդեպ ունեցած պատասխանատվությամբ, բազմապիսի խոհերով ու ապրումներով:

Հովհաննես Շիրազի ստեղծագործություններում ծանրակշիռ տեղ էին գրավում Հայոց մեծ եղեռնի, բռնազավթված Հայրենիքի խորհրդանիշ Արարատ լեռան, մայրության և այլ թեմաներ:

1960-1970-ական թթ. ծնվեց «գյուղական արձակը»: Հրանտ Մաթևոսյանը, Վարդգես Պետրոսյանը, Մուշեղ Գալշոյանը և մյուսները ոչ միայն արձանագրում էին գյուղի մարդու գիտակցության և բարոյականության խոր փոփոխությունները, այլև ցույց էին տալիս այդ փոփոխությունների դրամատիկ կողմերը, որոնցից էին սերունդների կապի խզումը, մարդու և բնության փոխհարաբերությունների խաթարումը և այլն:

1980-ական թթ. երկրորդ կեսին խորհրդային հասարակությունում և մշակույթում հակասությունների սրումն արձագանք գտավ նաև գրական ստեղծագործություններում: Վերակառուցման քաղաքականության և հրապարակայնության գաղափարների զարգացման ընթացքում գրողների մի մասը հանդես եկավ ստեղծագործական գործընթացներին կուսակցության և պետության միջամտության դեմ:

Երաժշտության բնագավառում 1950-1980-ական թվականները նշանավորվեցին սիմֆոնիկ, կամերային և օպերային ժանրերի ակնառու ստեղծագործություններով: Ա. Խաչատրյանի

«Սպարտակ» բալետը մեծ հաջողությամբ ներկայացվեց աշխարհի շատ թատրոններում: Տարբեր ժանրերի նոր ստեղծագործություններով հանդես եկան բազմաթիվ կոմպոզիտորներ, հայ շատ երգիչներ, երաժիշտ կատարողներ, դերասաններ, նկարիչներ ու ճարտարապետներ ճանաչում ստացան հանրապետության սահմաններից դուրս:

Հայ երաժշտական արվեստում խոշոր ավանդ էին Գրիգոր Եղիազարյանի «Սևան», «Արա Գեղեցիկ և Շամիրամ» բալետները, Ալեքսանդր Հարությունյանի «Սայաթ-Նովա» օպերան, Առնո Բաբաջանյանի «Հերոսական բալլադը», Էդվարդ Միրզոյանի «Թավջութակի և դաշնամուրի սոնատը», Էդգար Հովհաննիսյանի, Ավետ Տերտերյանի, Տիգրան Մանսուրյանի ստեղծագործությունները:

Հայ թատրոնի հետպատերազմյան առաջին տասնամյակի աչքի ընկնող երևույթը Նաիրի Զարյանի «Արա Գեղեցիկ» ողբերգության բեմադրությունն էր: Հայրենական պատերազմին նվիրված պիեսներից էր Գուրգեն Բորյանի «Բարձունքներում» դրաման, որը բեմադրվել է հայկական գրեթե բոլոր թատրոններում, այդ թվում՝ Սունդուկյանի անվան թատրոնում (բեմադրող՝ Արմեն Գուլակյան): 1960-1980-ական թթ. հայ հեղինակների (Զ. Դարյան, Պ. Զեյթունցյան, Վ. Պետրոսյան, Հ. Մաթևոսյան և ուրիշներ) պիեսների հիման վրա թատրոններում բեմադրվեցին հանդիսատեսի կողմից ջերմ ընդունելության արժանացած շատ ներկայացումներ:

Սկսվեց հայ բեմարվեստի սերնդափոխության բարդ ընթացքը: Մեծ վարպետներ Օլգա Գուլազյանի, Վաղարշ Վաղարշյանի, Ավետ Ավետիսյանի կողքին բեմում իրենց խոսքն էին ասում Վարդան Աճեմյանը, Գուրգեն Ջանիբեկյանը, Դավիթ Մալյանը, Բաբկեն Ներսիսյանը, Թաթիկ Սարյանը, Արուս Ասրյանը: Բեմում հաստատուն տեղ էին գրավում Մետաքսյա Սիմոնյանը, Խորեն Աբրահամյանը Մհեր Մկրտչյանը, Սոս Սարգսյանը, Վարդուհի Վարդերեսյանը: Այս անունների հետ են կապվում թատրոնում և՛ ժամանակակիցների կերպարների անկրկնելի մեկնաբանությունները, և՛ դասական կերպարների նորովի անձնավորումները:

Ժամանակակից բեմարվեստի զարգացմանը նպաստեց

դրամատիկական թատրոնի հիմնադրումը ռեժիսոր Հրաչյա Ղափլանյանի ղեկավարությամբ:

Հայրենական մեծ պատերազմն ընդհատեց խորհրդային հանրապետությունների կինոարվեստի զարգացումը: Պատերազմի սկզբում Հայաստանում նկարահանվել էր ընդամենը երկու գեղարվեստական կինոնկար՝ «Դավիթ Բեկ» և «Մի անգամ գիշերը»: Կինոստուդիայի գործունեությունը սահմանափակվել էր փաստագրական-վավերագրական ֆիլմերի նկարահանմամբ և կրկնօրինակմամբ:

1945-1954 թթ. Հայֆիլմ կինոստուդիայում նկարահանվեց 2 գեղարվեստական ֆիլմ՝ «Անահիտ» և «Արարատյան դաշտի աղջիկը» (ռեժիսոր՝ Համո Բեկնազարյան):

Հայկական կինոարվեստի զարգացման նոր, ժամանակակից փուլը սկսվեց 1950-ական թթ. կեսից: Նկարահանվեց «Նվագախմբի տղաները» (ռեժիսորներ՝ Հենրիկ Մալյան, Հենրիկ Մարգարյան) ֆիլմը, որը մեծ հաջողություն ունեցավ: Ռեժիսորներ Մ. Հակոբյանի «Ոսկե ցլիկ», Ա. Մարտիրոսյանի «01-99», Ա. Մանարյանի «Տժվժիկ» կարճամետրաժ ֆիլմերն անմիջապես սիրվեցին իրենց հումորով ու արտահայտիչ կերպարներով:

1960-1970-ական թթ. խորհրդահայ կինոարվեստի վերելքի ժամանակաշրջանն էր: Ստեղծվեցին կինոնկարներ, որոնք այսօր էլ համաժողովրդական սեր են վայելում, և ժամանակի ընթացքում չի խամրում դրանց գեղարվեստական արժեքը: Այդ ֆիլմերից են «Բարև, ես եմ», «Եռանկյունի», «Մենք ենք, մեր սարերը», «Սարոյան եղբայրներ», «Նռան գույնը» և այլն, որոնք ներկայացնում են հայկական կինոյի «նոր ալիքը»:

Նկատելի տեղաշարժ եղավ ժամանակակից կատակերգության ժանրում: Սիրված կինոկատակերգություններից են Հենրիկ Մալյանի «Հայրիկ», Ներսես Հովհաննիսյանի «Հարսնացուն հյուսիսից», Էդմոնդ Քեոսայանի «Տղամարդիկ» կինոնկարները:

Հաջորդ տասնամյակը (1976-1985 թթ.) առանձնանում է կինոարտադրանքի ընդհանուր որակական մակարդակի վերելքով: Այդ շրջանի առավել նշանավոր գործերից են Ֆրունզե Դովլաթյանի «Երկունք», Հենրիկ Մալյանի «Նահապետը» կինոնկարները: Առաջինը պատմական ֆիլմի ժանրը հարստացնում է լայն

էպիկական շնչով, երկրորդը բանաստեղծականությամբ և զգացմունքային մեծ ուժով հաստատում է մարդասիրության և պատմական արդարության գաղափարները:

1950-1980-ական թվականներին հայկական մշակույթի բոլոր ճյուղերը որակական նոր փուլ էին թևակոխել: Խորհրդային Հայաստանի մշակույթը արժանի ներդրում էր կատարում համաշխարհային մշակույթի գանձարանում:

Հայրենական մեծ պատերազմի սկզբից ՀԽՍՀ նկարիչների միությունն իր գործունեությունն ուղղորդեց պատերազմական թեմաներով գործերի ստեղծմանը: Պատերազմից հետո նկարիչները տարվեցին բնանկարի և նատյուրմորտի ժանրերով:

1950-ական թթ. հայկական արվեստի վերելքը պայմանավորվեց նաև 1945 թ. Երևանի գեղարվեստական ինստիտուտի հիմնադրմամբ: Ասպարեզ մտավ նոր սերունդ, որը ձգտում էր նորովի արտահայտելու հասարակությանը հուզող խնդիրները:

Հետպատերազմյան տարիներն արվեստին վերադարձրին տեսակների բազմազանությունն ու ստեղծագործողների անհատական դրսևորումները: Մարտիրոս Սարյանի ստեղծագործության մեջ նոր ուժով ներկայացան բնության ընդհանրացված պատկերները, աշխատանքի դրվագները, լիառատ նատյուրմորտները: 1950-ական թթ. ստեղծված էպիկական բնապատկերների շարքը («Արարատը՝ Դվինից» և այլն) 1961 թ. արժանացավ ԽՍՀՄ բարձրագույն՝ Լենինյան մրցանակի: Մ. Սարյանը դարձավ ազգային կերպարվեստի դպրոցի նահապետը:

Թեմատիկ պատկերարվեստի զարգացման գործում մեծ էր Հովհաննես Զարդարյանի ներդրումը. Հայ լուսավորիչ Խաչատուր Աբովյանին նվիրված «Նախաշավիղ» խորհրդանշական բնույթի կտավում նա գեղանկարչական արվեստին հաղորդել է պատմական թեմայի նորաչունչ մեկնություն:

1940-ական թթ. վերջին արվեստի վարպետների շարքը համալրեցին հայրենադարձ նկարիչները: Մանրակչիռ էր Հակոբ Կալենցի և Հակոբ Հակոբյանի դերը նուրբ գույների ներդաշնակությամբ գեղանկարչական նոր դպրոցի կազմավորման գործում:

1950-1970-ական թթ. հայկական գեղանկարչության բնորոշ գծերն էին ավանդական ժանրերի միաձուլումը և մարդկանց ու

բնապատկերի համադրումը: 1950-ական թթ. կեսին Սարգիս Մուրադյանի և Գրիգոր Խանջյանի ստեղծագործական պաթոսի հիմքում XX դարի սկզբի հայկական ողբերգական իրադարձություններն էին: Ուշագրավ են Սարգիս Մուրադյանի «Կոմիտասի վերջին գիշերը», Գրիգոր Խանջյանի «Իմ ժողովրդի պատմության տարեթվերից» նկարաշարերը:

Քանդակագործության ոլորտում հետաքրքիր իրադարձություն էր 1959 թ. Հակոբ Գյուրջյանի՝ Փարիզից Հայաստանին նվիրաբերած ստեղծագործությունների ցուցահանդեսը:

1950-ական թվականներից քանդակի դասական ոճը զարգացում ապրեց Երվանդ Քոչարի «Սասունցի Դավիթ», Արտաշես Հովսեփյանի «Ալեքսանդր Թամանյան», Նիկողայոս Նիկողոսյանի «Միքայել Նալբանդյան» մոնումենտալ ստեղծագործություններում, որոնք նոր տեսք տվեցին Երևանի կենտրոնական փողոցներին:

Գեղանկարչության մեջ ուրույն տեղ զբաղեցրեց Մինաս Ավետիսյանը: Նա նորովի մեկնաբանեց սարյանական մեթոդի հնարավորությունները: Մ. Ավետիսյանի կտավները («Ջաջուռ», «Մնողներս», «Սպասում», «Ընկերուհիները»), որմնանկարները կյանքը բացահայտում են հավերժական արժեքներով, խոսում անհատի ճակատագրի դրամատիզմի, տոկունության և գեղեցկության մասին: Նկարչի վրձնին են պատկանում 20-ից ավելի որմնանկարներ:

1980-ական թթ. սկզբին պատմական թեմաներին յուրովի անդրադարձավ Գ. Խանջյանն իր «Հայոց այբուբեն» և «Վարդանանք» որմնագորգերում (գոբելեն):

Հետպատերազմյան շրջանում կառուցվել են հասարակական շենքերի համալիրներ, որոնք արժեքավոր ներդրում են խորհրդահայ ճարտարապետության մեջ: Լավագույնը Ալեքսանդր Թամանյանի նախագծած՝ Երևանի Լենինի հրապարակի (Հանրապետության հրապարակի) ճարտարապետական համալիրն է: Կառավարական տունը, «Արմենիա» հյուրանոցը, արհեստակցական միությունների ու կապի նախարարության, պատմության պետական թանգարանի շենքերը վկայում են հայ ավանդական ճարտարապետության ժառանգության վրա

հիմնված նոր քաղաքաշինական արվեստի աննախադեպ վերելքի մասին:

Հետպատերազմյան շրջանի ճարտարապետության նվաճումները մարմնավորվել են նաև այլ հասարակական շենքերում. Երևանում՝ ներկայիս ՀՀ Ազգային ժողովի շենքը (Մարկ Գրիգորյան), Կենտրոնական ծածկած շուկան (Գրիգոր Աղաբաբյան), Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության շենքը (Սամվել Սաֆարյան), Երկաթուղային կայարանի շենքը (Էդմոնդ Տիգրանյան), Մատենադարանը (Մարկ Գրիգորյան): Այս ստեղծագործությունները բնորոշ են խորհրդահայ ճարտարապետության 1940-1960-ական թթ. ոճական ուղղությանը:

Երկաթբետոնի արտահայտչական հնարավորությունների օգտագործման, նոր խնդիրների լուծման և «սոցիալիստական ճարտարապետության» ազգային ու ինքնատիպ ընկալման օրինակներ են 1960-ական թթ. նախագծված մի շարք կառույցներ Երևանում՝ Սունդուկյանի անվան թատրոնի, «Ռոսիա» կինոթատրոնի, Կամերային երաժշտության տան շենքերը և այլն:

1960-1980-ական թթ. կառուցվել են պատմության նշանավոր դեպքերն ու դեմքերը հավերժացնող հուշարձաններ, որոնցից են Հայրենական մեծ պատերազմի զոհերին նվիրված հուշարձանները Հանրապետության գրեթե բոլոր բնակավայրերում, Մեծ եղեռնի զոհերի հուշահամալիրը Ծիծեռնակաբերդում, Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիրը, «Մայր Հայաստան» հուշարձանը Լենինականում և այլն:

ը. Ֆիզիկական կուլտուրան և սպորտը : Հետպատերազմյան տարիները ֆիզկուլտուրային աշխատանքների աննախընթաց զարգացման, մարզական արդյունքների բարելավման, բազմաթիվ համաշխարհային ռեկորդների սահմանման, օլիմպիական շարժման կատարելագործման ժամանակներ էին:

Այդ շրջանում միութենական և համաշխարհային հռչակ ձեռք բերեցին շախմատիստներ Տիգրան Պետրոսյանը, Ռաֆայել Վահանյանը, շախմատային կոմպոզիցիաների մեծ գիտակ Հենրիկ Գասպարյանը, մարմնամարզիկներ Հրանտ Շահինյանը և Ալբերտ Ազարյանը, ատլետուհի Ֆաինա Մելնիկը, հեռացատկող Ռոբերտ Էմիյանը, ֆուտբոլիստներ Արկադի Անդրեասյանը, Սար-

գիս Հովիվյանը, Էդուարդ Մարգարյանը, Հովհաննես Զանազանյանը, սամբիստ Գագիկ Ղազարյանը, թենիսիստ Բագրատ Բուռնազյանը, ծանրորդներ Ռաֆայել Զմչկյանը, Իվան Ազդարովը, Յուրի Վարդանյանը, Հոգսեն Միրզոյանը, Յուրի Սարգսյանը բոնցքամարտիկներ Էդուարդ Արիստակեսյանը, Վլադիմիր Ենգիբարյանը, Իսրայել Հակոբկոխյանը, Սամսոն Խաչատրյանը, Նշան Մունչյանը, ջրացատկորդ Դավիթ Համբարձումյանը, ըմբիշներ Նորայր Մուշեղյանը, Լևոն Ջուլֆալակյանը, Բենուր Փաշայանը և ուրիշներ: Հայ մարզիկներից շատերը մեծ հաջողությամբ հանդես եկան Հելսինկիի (1952 թ.), Մելբուրնի (1956 թ.), Հռոմի (1960 թ.), Տոկիոյի (1964 թ.), Մյունխենի (1972 թ.), Մոսկվայի (1980 թ.) համաշխարհային օլիմպիադաներում:

1973 թվականին փայլուն հաջողության հասավ Երևանի «Արարատ» ֆուտբոլային թիմը, որը մարզիչ Նիկիտա Սիմոնյանի գլխավորությամբ նվաճեց Խորհրդային Միության չեմպիոնի կոչումը և դարձավ ԽՍՀՄ գավաթակիր:

1985 թվականի տվյալներով հանրապետության մարզիկները զբաղվում էին 50 մարզաձևերով: Հանրապետության մարզական կազմակերպություններում և ֆիկուլտուրային կոլեկտիվներում աշխատում էին 6518 մասնագետներ, որոնցից 4869-ը՝ ֆիզկուլտուրային բարձրագույն, իսկ 995-ը՝ միջնակարգ մասնագիտական կրթությամբ:

Օլիմպիական խաղերում, ԽՍՀՄ ժողովուրդների սպարտակիադաներում և միջազգային մրցասպարեզներում հանրապետության սպորտային կազմակերպությունների հաջողությունները պայմանավորված էին նրանով, որ ստեղծվել էր մարզադպրոցների և մարզական կառույցների լայն ցանց, պատրաստվել էին մարզչական-մանկավարժական բարձրակարգ մասնագետներ: 1988 թվականին հանրապետությունում գործում էր 24 մարզադաշտ, 45 լողավազան, 1176 մարզադահլիճ, շուրջ 3000 մարզահրապարակ, այդ թվում այնպիսի համալիրներ, ինչպիսիք են՝ Մաղկաձորի օլիմպիական բազան, «Հրազդան» և «Դինամո» մարզադաշտերը, Ջորաղբյուրի հանրապետական մարզաբազան, Երևանի հեծանվահրապարակը, Երքաղսպորտկոմիտեի լողավազանը, «Արաքս» մարզապալատը, Տիգրան Պետրոսյանի անվան չախմատի տունը և այլն:

Այս ամենի հետ մեկտեղ աշխարհի տարբեր երկրների հայկական գաղթօջախներում բնակվող հայազգի բազմաթիվ մարզիկներ շարունակում էին հաջողություններ ձեռք բերել ոչ միայն օլիմպիական խաղերում, աշխարհի չեմպիոնատներում և այլ կարևորագույն մրցաշարերում, այլև իրենց պետությունների մարզական ակումբների առաջնություններում: Տարբեր մարզաձևերում միջազգային մեծ ճանաչում ձեռք բերեցին Անդրե Աղասին (ԱՄՆ), Լևոն Իշխանյանը (Եգիպտոս), Վարդան Ազատյանը, (Լիբանան), Արմենակ Ալաջաջյանը (Ռուսաստան), Հայկ Վարդանյանը (Ֆրանսիա), Շահան Մինասյանը (Թուրքիա), Մարատ Կիզիրյանը (Բրազիլիա), Արտաշես Սահինյանը (Իրան), Ժորժ Վարդանյանը (Գերմանիա), Նելսոն Դավթյանը (Ուկրաինա), Նորայր Նուրիկյանը (Բուլղարիա), Արմանդ Փափազյանը (Գերմանիա), Աշոտ Ավետիսյանը (Իրան), Արմեն Քաջայանը (Սիրիա), հեռացատկորդ Իգոր Տեր-Հովհաննիսյանը (Ռուսաստան) և շատ ուրիշներ:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

III. ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՎԱՂՈՐԴԱՅՆԻՆ (1985-1991 ԹԹ.)

ա. Գորբաչովյան «Վերակառուցումը» և Արցախյան հարցի բարձրացումը: *1985 թ. մարտին ԽՄԿԿ ԿԿ գլխավոր քարտուղար ընտրվեց Մ. Գորբաչովը: Երկիրը ճգնաժամային վիճակից դուրս բերելու նպատակով նա փորձեց կատարել տնտեսական-քաղաքական բարեփոխումներ:*

Կոմունիստական կուսակցության 27-րդ համագումարը (1986 թ.) որոշեց արմատապես վերակառուցել երկրի տնտեսությունը, վերանայել նախկինում թույլ տրված սխալները, հասարակության մեջ մտցնել դեմոկրատիայի տարրեր: Բայց ընդունված որոշումները չէին կարող իրականանալ և արմատական փոփոխություններ առաջ բերել հասարակության մեջ: Հիմնական պատճառն այն էր, որ «բարեփոխումները» մշակվել էին վերևում, և դա մի ծրագիր էր, որի իրականացնողը նույն կոմունիստական կուսակցությունն էր: Այդ բարեփոխումները փաստորեն եղած քաղաքական համակարգը կործանումից փրկելու միջոց էին: «Վերակառուցման» անվան ներքո իրականացվող մասնակի, ոչ արմատական փոփոխությունները հանգեցրին ճգնաժամը խորացնող բարդ ու հակասական նոր գործընթացների: Ժողովրդական զանգվածների կողմից բարձրացված, բայց լուծում չստացած խնդիրներն ավելի ծանրացրին ԽՍՀՄ-ի սոցիալ-տնտեսական կացությունը: Սրվեցին հակասություններ կենտրոնի և ազգային հանրապետությունների միջև: Զանգվածային ընույթ ընդունեցին ազգամիջյան առճակատումները: Սոցիալ-տնտեսական ճգնաժամի խորացումը փաստորեն արագացրեց ԽՍՀՄ փլուզման գործընթացը:

Հայաստանում վիճակն ավելի աղետալի դարձավ 1980-

ական թվականների երկրորդ կեսին, երբ գոյություն ունեցող ընդհանուր ճգնաժամային ծանր պայմաններին ավելացավ Լեռնային Արցախի (Ղարաբաղի) հարցը: Հայաստանի կոմունիստական ղեկավարությունը չկարողացավ ճիշտ գնահատել կոնկրետ իրադրությունը և մոսկովյան անարժան ղեկավարների հլու կամակատարը մնալով՝ հակադրվեց մարդկային և ազգային արժանապատվության համար զանգվածային պայքարի ելած հարյուր հազարավոր ցուցարարներին ու հանրահավաքների մասնակիցներին:

«Վերակառուցման» շրջանում ԽՍՀՄ բոլոր հանրապետություններում լայն պայքար սկսվեց ազգային ինքնուրույնության համար: Դրա հիմնական պատճառն այն էր, որ չէին ձեռնարկվում միջոցառումներ՝ ազգամիջյան հարաբերությունները կարգավորելու, տեղական պահանջներն ու առանձնահատկությունները հաշվի առնելու միջոցով բարձրացված ցավոտ հարցերին ինչ-որ չափով լուծում տալու համար: Ուստի հանրապետություններում անխուսափելիորեն ձևավորվեցին ազգային ժողովրդական ճակատներ, որոնք սկզբնական շրջանում պայքարում էին ԽՍՀՄ կազմում ավելի շատ արտոնություններ ձեռք բերելու համար: Պայքարի բովում իր ուրույն ուղին անցավ Հայաստանը և նրա հետ՝ նենգությամբ իրենից բաժանված Հայության հազարամյակների ոստան Արցախը:

Արցախը միշտ իր ուրույն տեղն է ունեցել հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարում: Դարեր շարունակ Արցախն ու Սյունիքը Արևելյան Հայաստանում ծավալված ազատագրական շարժումների հիմնական կենտրոններ են եղել: Մեր ժողովրդի պատմության բախտորոշ պահերին արցախցիները թշնամու դեմ պայքարի առաջին շարքերում՝ իրենց հայրենասիրությամբ ու արիությամբ նորանոր սխրանքների են կոչել սերունդներին:

Ինչպես նշվել է, դարի 20-ական թթ. սկզբներին, Արցախի լեռնային մասը, առանց նրա հիմնական բնակչության կամքը հաշվի առնելու, կոմունիստական կուսակցության Անդրերկրկոմի 1921 թ. անօրինական որոշմամբ, բռնակցվել էր նորահռչակ Ադրբեջանին: Դրանից հետո Ադրբեջանի խորհրդային իշխանությունները ծրագրված գործունեություն էին ծավալել Արցա-

խը հայաթափելու համար: Այդ քաղաքականությունը նրանք կարողացան իրականացնել հայկական Նախիջևանում, որը նույնպես բոլշևիկյան ղեկավարության որոշմամբ մտցվել էր Խորհրդային Արդբեջանի կազմի մեջ: Նախիջևանի այդ ինքնավար հանրապետությունը ընդամենը մի քանի տասնամյակի ընթացքում լիովին հայաթափվեց և բնակեցվեց «ադրբեջանցի» անունը ստացած թուրքերով:

Լեռնային Արցախի բնակչությունը շուրջ 70 տարի անընդմեջ պայքարել էր ադրբեջանական իշխանությունների հայավեր քաղաքականության դեմ: Արցախն այդ երկարատև ու դաժան գոյամարտի տարիներին շատ անմեղ զոհեր է տվել, բայց կնճիռը մնացել է չլուծված:

Խորհրդային կենտրոնական իշխանությունների անտարբերության և թողտվության պայմաններում Ադրբեջանի ղեկավարները սանձարձակորեն բռնադատում էին մարզի հայության մարդկային տարրական իրավունքները, բիրտ ճնշումներ գործադրում հայ դպրոցի ու մշակույթի նկատմամբ: Միաժամանակ, փորձված և խորամանկ միջոցներով, դիվանագիտորեն վարում էին մարզը հայաթափելու, այն թուրքացնելու հետևողական քաղաքականություն, որի պատճառով բնակչության ընդհանուր թվաքանակում արագորեն իջնում էր հայության բաժինը: Այդ ամենը չէր կարող առաջ չբերել ժողովրդի, մտավորականության, նույնիսկ կուսակցական աշխատողների և պետական ծառայողների մեծ մասի բացահայտ դժգոհությունը: Ինչ խոսք, կային նաև Բաքվի հլու կամակատարներ, որոնք ոչ միայն չէին միանում ընդհանուր դժգոհությանը, այլև դատապարտում էին իրենց հայրենակցիների ազնիվ պոռթկումները: Եթե 1920-1950-ական թվականներին Արցախյան ընդվզումներն առանձին անհատների դժգոհության արտահայտություն էին, ապա 1960-1970-ական թվականների պայքարն արդեն թևակոխեց նոր հանգրվան՝ զանգվածային ընդվզումների շրջանը:

Ադրբեջանական բռնադատումների դեմ արցախահայության ձևավորվող ազատագրական շարժման գլուխ կանգնեցին նվիրյալ հայորդիներ: Պայքարի ղեկավար ճանաչվեց նշանավոր գրող, պատմաբան ու հրապարակախոս, Արցախի գրողների միության ղեկավար Բագրատ Ուլուբաբյանը: Նա իր համախոհներ հետ կազմակերպում էր գաղտնի ժողովներ, համախմբում մարզի մտավորականությանը, Մոսկվա՝ բարձրագույն ատյաններին էր ուղարկում բողոքագրեր:

Բ. Ուլուբաբյանի կազմած և մեծ աղմուկ հանած մի նամակի տակ հեղինակի անվան կողքին իրենց ստորագրություններն էին դրել նաև մարզի ուրիշ 12 գործիչներ՝ Ստեփանակերտի Քաղխորհրդի գործկոմի նախագահ Սերգեյ Շաքարյանը, «Խորհրդային Ղարաբաղ» մարզային թերթի խմբագիր Լազր Գասպարյանը, մարզային ռադիոհաղորդումների խմբագիր Գրիգոր Ստեփանյանը, Ստեփանակերտի № 2 պետտնտեսության տնօրեն Արամ Բաբայանը, Սոսի Ս. Շահումյանի անվան կոլտնտեսության նախագահ Արսեն Մուքանյանը, մշակույթի մարզային վարչության պետ Գուրգեն Գաբրիելյանը, բանաստեղծ Բոգդան Ջանյանը, Հանրապետության ժողովրդական դերասան Միքայել Կորգանյանը, Ստեփանակերտի № 59 շինվարչության պետ Արկադի Մանուչարյանը, Ստեփանակերտի էլեկտրատեխնիկական գործարանի տնօրեն Ալբերտ Սեյրանյանը, Ստեփանակերտի ռադիոհաղորդումների ավագ խմբագիր Մաքսիմ Ավանեսյանը և № 59 շինվարչության գլխավոր ինժեներ Սերգեյ Գրիգորյանը:

Նամակի հեղինակները չեչտել էին, որ ԼՂ բնակչության 85%-ը հայեր են, որոնք այդտեղ ապրում են անհիշելի ժամանակներից և հույս էին հայտնել, որ ԽՄԿԿ Կենտկոմն ու Խորհրդային կառավարությունը կաջակցեն մարզի միավորմանը Հայկական ԽՍՀ-ի հետ:

1965 թ. հունիսին «13-ի նամակը» ուղարկվեց Մոսկվա՝ կուսակցական և պետական ղեկավար մարմիններին: Այն երկրի ղեկավարությանն անձամբ հանձնեց Բ. Ուլուբաբյանը: Նրան ընդունել և զրույցներ էին ունեցել ԽՄԿԿ Կենտկոմում:

Ադրբեջանում կատաղի թշնամանքով ընդունեցին Արցախից Մոսկվա ուղարկված դիմումներն ու բողոքները, դրանց հեղինակները մեղադրվեցին ահաբեկչական գործունեություն ծավալելու մեջ: Բաքվից հետևեցին աննախադեպ սպառնալիքներ, բայց հայրենասերները չընկրկեցին: Բ. Ուլուբաբյանը կազմում և ԽՄԿԿ Կենտկոմ է ուղարկում մի նոր բողոքագիր, որի տակ նրանից բացի, ստորագրել էին ևս երեք մարդ:

1966 թ. Երևանում հայտնվեց 150 էջանոց անստորագիր մի մեքենագիր տեքստ, որի հեղինակը դարձյալ Բ. Ուլուբաբյանն էր: Այն բազմացվեց և տարածվեց: Տեքստում խոսք էր գնում Ադրբեջանի տիրապետության տակ հեծող հայության դժվարին կյանքի մասին: Շուտով դրան հաջորդեցին դաժան հալածանքներ Արցախում: Տասնյակ մարդիկ նետվեցին բանտեր, որտեղ մի քանիսը մեռան՝ չդիմանալով կտտանքներին, ծեծ ու ջարդին: Մարզի մի խումբ մտավորականներ ենթարկվեցին անողոք հետապնդումների և արտաքսվեցին հայրենի երկրամասից: Մյուս կողմից Արցախի մի քանի ստրկամիտ պաշտոնյաներ (Կևորկով, Մելքումով և նրանց աջակիցները) ամեն կերպ հաճոյանում և հլու-հնազանդ ծառայում էին Բաքվի իշխանություններին՝ հավատարմությամբ կատարելով նրանց հակահայ հրահանգները և կարգադրությունները:

Ադրբեջանի պետական մակարդակով Արցախում սկսված դաժան տեռորը զայրույթի ուժգին ալիք առաջ բերեց Հայաստանում: Պատահական չէ, որ 1966 թ. օգոստոսին ՀԿԿ կենտկոմի քարտուղար Ա. Քոչինյանի ստորագրությամբ բողոքի նամակ ուղարկվեց ԽՄԿԿ կենտկոմ, որով պաշտպանվում էր Արցախը Հայաստանին միավորելու պահանջը:

Հետագա տարիներին Հայաստանից ու Արցախից շարունակվում էր նամակ-բողոքների հոսքը Մոսկվա: Երևանից հայ գրողների ու գիտնականների մի խումբ երկրի ղեկավարությունից պահանջեց՝ վերջապես ուշադրություն դարձնել արցախահայության վիճակի վրա և անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել: Հայաստանում, Արցախում և Սփյուռքում մեծ արձագանք գտավ խորհրդային ղեկավարությանն ուղղված մեծանուն գրող, սոցիալիստական աշխատանքի հերոս Սերո Խանզադյանի նամակ-բողոքը, որով նա իր զայրույթն էր արտահայտել այն անտարբերության հանդեպ, որ կենտրոնը ցուցաբերում էր ամբողջ հայ ժողովրդին հուզող խնդրի, նրա արդարացի պահանջի նկատմամբ:

Գիտական ոլորտում հայրենապաշտության ոգով մի ամբողջ սերունդ էր դաստիարակում արցախցի մեծանուն պատմաբան, ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը:

Գիտական և ուսումնական շրջանակներում իր ելույթներով

ու զրույցներով երիտասարդությանը ճշմարիտ դասեր էր տալիս խոշորագույն մաթեմատիկոս Արտաշես Շահինյանը:

Հայաստանում և Սփյուռքում լայն արձագանք գտավ պատմաբան Նիկոլայ Կարապետյանի՝ Լեհաստանում լույս ընծայած հոդվածը, որը ազնիվ բողոք էր բոլշևիկյան իշխանության առաջին տարիներին Հայաստանի տարածքների մասնատման և օտարման դեմ:

Հիշատակության են արժանի պատմաբաններ՝ մոսկվաբնակ արցախցի նշանավոր գիտնական Հրանտ Եպիսկոպոսյանի, Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի դասախոս Սուրեն Բաղդասարյանի և այլոց բողոքներն ու կազմած տեղեկագրերը, որ նրանք ուղարկում էին կուսակցական և խորհրդային վերադաս մարմիններին՝ չստանալով որևէ հիմնավորված պատասխան:

Արցախյան ազատագրական ոգորումները նոր թափ ստացան 70-ական թվականների վերջերին և 80-ական թվականների սկզբին: Այդ շրջանում աչքի ընկան պայքարի մի ամբողջ շարք նոր գործիչներ: Նրանց թվում էր գրող ու հրապարակախոս Զորի Բալայանը, որն իր գրքերով ու հոդվածներով, հրապարակախոսական ելույթներով, ստորագրահավաքներ կազմակերպելով, Մոսկվայի մամուլի օրգաններում տպագրած ակնարկներով մեծապես նպաստում էր արցախահայության պայքարի վերելքին: Ռուս մտավորականության մի շարք լավագույն ներկայացուցիչների հետ նա հաստատել էր սերտ հարաբերություններ և նրանց ներգրավել արցախյան շարժման պաշտպանության գործին:

1986 թ. փետրվարին տեղի ունեցած ԽՄԿԿ 27-րդ համագումարի նախօրյակին Մ. Գորբաչովին և ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Ա. Գրոմիկոյին Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ ներկայացվել էր նամակ՝ հայ հինգ ակադեմիկոսների, երեք գեներալների և ԽՍՀՄ երեք ժողովրդական արտիստների ստորագրությամբ: Նրանց թվում էր Աբել Աղանբեգյանը, որն այդ ժամանակ Մ. Գորբաչովի խորհրդականն էր: Բայց Մոսկվան շարունակում էր լուռ մնալ, իսկ շարժումը գնալով արմատական բնույթ էր ստանում:

1986 թ. հուլիսին Արկադի Կարապետյանի ղեկավարու-

թյամբ Ստեփանակերտում հիմնվեց ընդհատակյա մի կազմակերպություն: Այն, որ միավորում էր 12 նվիրյալների, հաջորդ տարի ստացավ «Արցախյան միություն» անունը: 1987 թ. ամռանն ու աշնանը «Միությունը» կատարեց իր ծրագրի նվազագույն մասը՝ անցկացրեց ԼՂԻՄ-ը Հայաստանի հետ միավորելու ոչ պաշտոնական հանրաքվե, որի արդյունքում հավաքվեց ավելի քան 80 հազար ստորագրություն: Նույն թվականի նոյեմբերի վերջին Մոսկվա մեկնեց մի պատվիրակություն, որը ԽՄԿԿ Կենտկոմ ներկայացրեց հավաքված ստորագրությունների փաթեթը: Դարձյալ ոչ մի արձագանք:

Բայց արցախահայության պայքարի թափը չէր պակասում: Որոշվեց ԼՂԻՄ-ից նոր պատվիրակություն ուղարկել երկրի մայրաքաղաք: Պատվիրակությունը Երևանից մեկնեց 1988 թ. հունվարի 5-ին՝ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավոր Վազգեն Բալայանի գլխավորությամբ: Պատվիրակները Մոսկվա տարան Լեռնային Ղարաբաղի բոլոր մակարդակների պատգամավորների և ղեկավար աշխատողների 260 ստորագրությամբ հանրագիր և մարզի ստեղծման ու Ադրբեջանի կազմում նրա բացարձակ մեծամասնությունը կազմող հայ բնակչության անտանելի վիճակի վերաբերյալ 80-ից ավելի փաստաթուղթ: Մոսկվայում պատվիրակության գործունեությանը աջակցում էին Զորի Բալայանը և Իգոր Մուրադյանը: Հունվարի 8-ին պատվիրակությանն ընդունում է ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նախագահի առաջին տեղակալ, ԽՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոյի անդամ Պ. Դեմիչևը, որին էլ հանձնվում են տարած փաստաթղթերն ու հանրագիրը: Նա հուսադրում է պատվիրակության անդամներին՝ ասելով, որ անպայման կստեղծվի ԽՍՀՄ Գերագույն խորհրդի հատուկ հանձնախումբ՝ հարցը հանգամանորեն ուսումնասիրելու համար: Նաև հավաստիացումներ եղան, որ պատվիրակության անդամները չեն ենթարկվի հետապնդումների ու հալածանքների: Ամբողջ Արցախը անհամբեր բաղձալի լուրի էր սպասում Մոսկվայից, բայց Կրեմլը չարունակում էր լռել: Արցախցիները ստիպված Մոսկվա ուղարկեցին նոր պատվիրակություն՝ Վաչե Սարուխանյանի ուղեկցությամբ և մի քանի այլ գործիչների մասնակցությամբ: Պատվիրակությունն ընդունվեց ԽՄԿԿ Կենտկոմի ազգային հարաբերությունների սեկտորի վարիչ Վ. Միխալկովի կողմից, որը նույնպես դատարկ խոստումներ տվեց:

Ոգևորված Գորբաչովյան վերակառուցման քաղաքականությամբ և հավատալով Մոսկվայի խոստումներին՝ արցախցիները 1988 թ. սկզբներից «Լենին-կուսակցություն-Գորբաչով» լոզունգներով դուրս եկան բացահայտ պայքարի: Սկզբում շարժումը, ըստ էության, չէր ղեկավարվում որևէ կազմակերպության կամ ընտրված որևէ պատասխանատու անձի կողմից: Այն ընթանում էր տարերային հուժկու պոռթկումներով: Արցախահայությունը վերջնականապես համոզվել էր, որ ազատությունը կարող է ձեռք բերվել ոչ թե վերադասին ուղղված խնդրանք-պաղատանքներով, այլ միայն ու միայն հետագա անձնուրաց պայքարով ընդդեմ ադրբեջանական դաժան գաղութատիրության: Ստեղծված ծայրահեղ լարված իրավիճակում արցախահայությունը կա՛մ պետք է հեռանար հայրենի երկրամասից, կա՛մ պայքարեր իր հողն ու պատիվը պաշտպանելու համար: Արցախցին ընտրեց երկրորդ ուղին:

Ոտքի ելած մարզի բովանդակ հայության ազատագրական շարժումն աստիճանաբար առաջ քաշեց մի ոչ պաշտոնական կոլեկտիվ ղեկավարություն, որի մեջ էին Արկադի Մանուչարյանը, Համլետ Գրիգորյանը, Վարդան Հակոբյանը, Ռոբերտ Քոչարյանը, Գուրգեն Գաբրիելյանը, Հրաչյա Բեգլարյանը, Մաքսիմ Միրզոյանը, Վասիլի Աթաջանյանը, Մուրադ Պետրոսյանը, Ռոլես Աղաջանյանը, Արկադի Կարապետյանը, Բորիս Առուչանյանը և ուրիշներ: Նրանց կոչերով մարզի բոլոր ձեռնարկություններում, կոլտնտեսություններում, ուսումնական հաստատություններում և մշակույթի օջախներում տեղի էին ունենում ժողովներ, կոմերիտական և կուսակցական կազմակերպությունների նիստեր, գյուղական, ավանային, քաղաքային և շրջանային խորհուրդների նստաշրջաններ, որտեղ քննարկվում էին Լեռնային Ղարաբաղը Հայաստանի հետ վերամիավորելու հարցը: Ընդունված որոշումներն ու առաջարկություններն արժանացան Ստեփանակերտի կուսքաղկոմի և Մարտակերտի, Ասկերանի, Մարտունու ու Հադրութի կուսշրջկոմների հավանությանը: Մոսկվան ու Բաքուն օր-օրի ուժեղացնում էին շարժման դեմ ճնշումը: Փետրվարի 15-ին ԼՂԻՄ Կուսմարզկոմի

առաջին քարտուղար Բորիս Կևորկովը, հանդիպելով շարժման ակտիվիստներին, ընթերցում է Մոսկվայից ստացված փաստաթուղթ, որտեղ ղարաբաղյան շարժման ղեկավարները որակված էին որպես էքստրեմիստներ՝ արժանի խստագույն պատիժների: Շարժումը գլխատելու համար կազմվում է «էքստրեմիստների» ցուցակ, որի մեջ մտցվում է 27 հոգու անուն: 1988 թ. փետրվարի 16-ից սկսած ցուցարարներից շատերը օր ու գիշեր Ստեփանակերտի քաղաքային հրապարակում էին՝ մնալով վրանների տակ և վառելով խարույկներ: Գյուղերից ցուցարարների համար բերում էին փայտ, հաց, սննդամթերք: Քանի որ շարժումը ընթանում էր տարերայնորեն, և չկար ընդհանուր պաշտոնական ղեկավարություն, ուստի հրամայական պահանջ դարձավ ունենալ ղեկավար մարմին: Ստեղծվեց նախաձեռնող խումբ՝ Արկադի Մանուչարյանի ղեկավարությամբ: Նախաձեռնող խմբի շտաբը դարձավ «Խորհրդային Ղարաբաղ» թերթի խմբագրությունը: Շուտով նախաձեռնողներին փոխարինեց մարտի 2-ին ստեղծված 11 հոգուց բաղկացած խորհուրդը կամ կոմիտեն՝ «Կոռունկ» անունով: Խորհրդի նախագահ ընտրվեց Արկադի Մանուչարյանը, տեղակալ՝ Վարդան Հակոբյանը: Հենց առաջին նիստում ստեղծվեց 10 հանձնաժողով, որոնցում ընդգրկվեցին մոտ 50 հոգի: Կոմիտեի քաղաքական գծով հանձնաժողովի կազմի մեջ ընդգրկվեցին Ռոբերտ Քոչարյանը (նախագահ), Սերժ Սարգսյանը և ուրիշներ: «Կոռունկ» կոմիտեն մեծ աշխատանք կատարեց շարժումը կազմակերպված հունով տանելու և բնակչության անվտանգությունն ապահովելու ուղղությամբ:

Որոշեց իրավական բոլոր նորմերը պահպանելով՝ պաշտոնապես բարձրացնել Արցախի ժողովրդի համար բախտորոշ հարցը և այդ նպատակով գումարել մարզխորհրդի արտահերթ նստաշրջան: Հրավեր ստացան բոլոր, այդ թվում ադրբեջանցի, պատգամավորները: Բաքվի իշխանություններն ամեն ջանք գործադրեցին, բայց չկարողացան ձախողել նստաշրջանի հրավիրումը:

Ադրբեջանական իշխանությունների կողմից հարուցված մեծ դժվարությունները հաղթահարելով՝ 1988 թ. փետրվարի 20-ին հրավիրվեց ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների մարզ-

խորհրդի արտահերթ նստաշրջան: Հենվելով իր սահմանադրական իրավունքի վրա՝ Մարզային խորհուրդն ընդունեց պատմական որոշում, որի արձանագրային մասում ասված էր. «Եկել է վերակառուցման ու ժողովրդավարության ժամանակը: Մեր երկիրը լծվել է ստալինյան դաժան պատմաշրջանում կատարված հակաժողովրդական ամեն տեսակ սխալների ու զանցառությունների վերացմանը: Վաղուց ժամանակն է, որ մարզի հայության ճակատագրի վրա դրված խարանը ևս ջնջվի, և մենք՝ Լեռնային Ղարաբաղի հայերս, ձեռք բերենք մեր երկրամասը տնտեսապես զարգացնելու, մեր ազգային-մշակութային նվաճումներին լիիրավ տեր դառնալու հնարավորություններ»: Նստաշրջանի բոլոր մասնակիցները, Լեռնային Արցախի ամբողջ հայ բնակչությունը խորապես համոզված էին, որ այլևս բացառվում է Ադրբեջանի կազմում մնալը և որ հարցի միակ ու սահմանադրական լուծումը Խորհրդային Հայաստանի հետ վերամիավորումն է: Ուստի Մարզխորհրդի նստաշրջանը որոշեց. «Ընդառաջելով ԼՂԻՄ-ի աշխատավորների ցանկություններին, խնդրել Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդին և Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդին՝ խորին ըմբռնման զգացում դրսևորել Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության իղձերի նկատմամբ և լուծել ԼՂԻՄ-ը Ադրբեջանական ԽՍՀ կազմից ՀԽՍՀ կազմ հանձնելու հարցը, միաժամանակ միջնորդել ԽՍՀՄ Գերագույն խորհրդի առջև՝ հարցի դրական լուծման համար»: Հաջորդ օրն այս որոշումը տպագրվեց «Սովետական Ղարաբաղ» թերթում:

Ադրբեջանի իշխանությունները սվիններով դիմավորեցին այդ որոշումը և բռնեցին արցախահայության մարտահրավերը բռնի ուժով խեղդելու ուղին:

Արցախահայության ազատագրական պայքարին զորավիգ լինելու վճռականությամբ հաջորդ օրը Հայաստանում սկսվեցին հանրահավաքներ: Փետրվարի 21-ին Երևանի Թատերական հրապարակում տեղի ունեցավ առաջին զանգվածային հանրահավաքը: Շուտով միտինգների ու ցույցերի ալիքը տարածվեց հանրապետության բոլոր քաղաքներում ու գյուղերում: Բազմամարդ ժողովներում աշխատավորներն իրենց համերաշխությունն էին հայտնում Արցախի ազատագրական շարժմանը, երդվում էին աջակից լինել իրենց եղբայրներին ու քույրերին,

միաժամանակ կենտրոնական իշխանություններից պահանջում էին արդարացի լուծել Լեռնային Ղարաբաղի հարցը: Աննախադեպ աճում էր հանրահավաքների մասնակիցների թիվը: Փաստորեն ԽՍՀՄ պատմության մեջ առաջին անգամ Լեռնային Ղարաբաղում և Հայաստանում տեղի ունեցան հարյուր հազարանոց հանրահավաքներ ու ցույցեր: Երևանի Թատերական հրապարակում, Մատենադարանի առջև, գլխավոր պողոտաներում տեղի ունեցող հանրահավաքներում ու ցույցերում ելույթներ էին ունենում գիտության ու արվեստի նշանավոր գործիչներ, բանվորներ, ծառայողներ, պատերազմի ու աշխատանքի վետերաններ: Հայաստանում բնակվող ռուսները, եզդիները, ասորիները, ուկրաինացիները, քրդերը և տարբեր ազգերի մարդիկ սատար կանգնեցին արցախցիների արդար պահանջին, իրենց համայնքների, միությունների անունից պաշտպանում էին արցախահայության օրինական պահանջը, հրապարակում դիմումներ ու կոչեր:

ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունները, չնայած իրենց կողմից վերակառուցման ու հրապարակայնության հռչակմանը, արցախյան արդարացի շարժման հանդեպ դրսևորեցին կատաղի անհանդուրժողականություն: Երկրի բարձրագույն ղեկավարությունն աներկբա կանգնեց ադրբեջանական գաղութարարների կողքին: Ազգերի ինքնորոշման սահմանադրական իրավունքի իրագործումը կարող էր լուրջ վտանգ սպառնալ կոմունիստական համապարփակ տիրապետությանը: Պատահական չէր, որ Ադրբեջանի ղեկավարության առաջարկությամբ փետրվարի 21-ին ԽՄԿԿ ԿԿ քաղբյուրոն հապշտապ ընդունեց «Լեռնային Ղարաբաղի իրադարձությունների մասին» որոշումը, որով արցախահայության ազատագրական շարժումը որակվեց որպես «ծայրահեղական», մի խումբ անջատողականների գործողությունների արդյունք: Հարցն ըստ էության լուծելու փոխարեն կենտրոնական իշխանությունները փորձում էին պայքարը դաղարեցնել հայ անվանի մտավորականների միջոցով:

Փետրվարի 25-ին ԽՄԿԿ կենտկոմի գլխավոր քարտուղար Մ. Գորբաչովը հանդիպեց Զ. Բալայանի և Ս. Կապուտիկյանի հետ: Նա կեղծ խոստումներով փորձեց հանգստացնել ալեկոծ հայ ժողովրդին, հետո սպառնաց, որ եթե շարժումը շարունակվի, ապա դա կործանարար կլինի Ադրբեջանում ապրող չուրջ կես միլիոն հայերի համար: Դրանով նա փաստորեն հուշեց ադրբեջանցի վանդալներին անել այն, ինչ արեցին հետագայում: Գորբաչովը նաև ադրբեջանցիներին հասկացնել տվեց, որ կարող են փակել Հայաստան տանող ճանապարհները, հանրապետությունը կտրել արտաքին աշխարհի հետ հաղորդակցվելուց և տնտեսական բոյկոտի միջոցով բնակչությանը սովի մատնել: ԽՍՀՄ կենտրոնական մարմինները շարժման առջև պատնեշ կանգնեցրին նրա սկսման առաջին օրերից, և մինչև վերջ հավատարիմ մնացին արցախյան հարցի նկատմամբ որդեգրած անհանդուրժողական կարճատես քաղաքականությանը:

Արցախյան շարժման առաջին իսկ օրերից լիովին բացահայտվեց Խորհրդային Հայաստանի իշխանությունների կտրվածությունը ժողովրդական զանգվածներից: Հանրապետության ղեկավարության ոչ մի օղակ չկարողացավ ազդեցություն գործել ծավալվող իրադարձությունների վրա: Հայաստանի կոմկուսի ղեկավարությունը ոչ միայն ի վիճակի չեղավ ուղղորդելու զանգվածային շարժումը, այլև արգելափակեց ծավալվող իրադարձությունների ճիշտ լուսաբանումը: Տարիներ շարունակ իրեն հեռու պահելով արցախյան հիմնահարցերից և անտեսելով այդ մասին ստացված ահազանգերը՝ հանրապետության կուսակցական, պետական բյուրոկրատիան արցախյան շարժման նկատմամբ դրսևորեց ծայրահեղ զգուշավորություն և վախկոտություն: Դա թելադրված էր Արցախի մասին վերաղաս մարմինների պաշտոնական դիրքորոշումն ամեն գնով պահպանելու ձգտմամբ: Այդ ամենը Հայաստանի իշխանություններին, ի վերջո, հասցրեց ինքնամեկուսացման:

Արցախյան հարցի հետ մեկտեղ հանրահավաքներում բացահայտվում և քննարկվում էին հանրապետության սոցիալ-տնտեսական ոլորտներում տեղ գտած թերություններն ու սխալները, որոնց մասին իշխանությունները լռում էին: Փաստորեն ժողովուրդն իր ձեռքն էր վերցրել շարժումը և ինքն էր տոն տալիս հանրապետության հասարակական-քաղաքական կյանքին:

Իսկ շարժումը գնալով ծավալվում էր: 1988 թ. փետրվարին ստեղծվեց շարժման կազմկոմիտե, իսկ մարտի սկզբներին Իգոր Մուրադյանի նախաձեռնությամբ՝ «Ղարաբաղ» անվանումով կոմիտե, որը ղեկավարում էր բազմահազարանոց ցույցերն ու միտինգները: Բոլոր քաղաքներում և հիմնարկ-ձեռնարկություններում ստեղծվեցին «Ղարաբաղ» կոմիտեներ, որոնք քննարկում էին պայքարի հետագա զարգացման, շարժմանն օժանդակելու խնդիրներ:

բ. Սումգայիթյան ողբերգությունը: ԽՍՀՄ կենտրոնական մարմինները և ադրբեջանական իշխանությունները համոզվելով, որ քաղաքական միջոցներով հնարավոր չէ կասեցնել հայերի օրըստօրե ծավալվող ազատագրական շարժումը, որոշեցին կոպտորեն ոտնահարել համամարդկային իրավունքի բոլոր չափանիշները, ժողովրդական շարժմանը հակադրել բիրտ ուժն ու բռնությունը:

1988 թ. փետրվարի 26-ին ԽՄԿԿ ԿԿ գլխավոր քարտուղար Մ. Գորբաչովը հատուկ կոչով դիմեց Ադրբեջանի և Հայաստանի աշխատավորներին՝ հորդորելով դադարեցնել ցույցերն ու հանրահավաքները՝ խոստանալով առաջիկայում լուծել բարձրացված հարցերը: Հայ ժողովուրդը մեկ անգամ ևս հավատաց կենտրոնական իշխանություններին և դադարեցրեց գործադուլներն ու հանրահավաքները: Իսկ ադրբեջանցիներն ընդհակառակը, ոչ միայն չդադարեցրին, այլև նոր թափ հաղորդեցին հակահայկական ելույթներին և դիմեցին վայրագ գործողությունների:

Բաքվից 35 կմ հեռավորության վրա գտնվող Սումգայիթ քաղաքում 1988 թ. փետրվարի 26-ից սկսած բորբոքվեցին հակահայկական հանրահավաքներ, որոնց գլխավորում էին քաղաքի կուսշրջկոմների քարտուղարները: Հետագայում Սումգայիթի պաշտոնակ արված քաղկոմի քարտուղարը հայտարարեց, որ այդ բոլորը կազմակերպվել է Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի և նրա առաջին քարտուղարի ցուցումով: Հավանաբար տեղյակ էին նաև Մ. Գորբաչովն ու նրա շրջապատը:

Փետրվարի 27-ին ադրբեջանական խուժանը «Մա՜հ հայերին» կոչով՝ տեղական իշխանությունների աչքի առաջ կատարեց հայ ազգաբնակչության կոտորած: Գազազած խուժանը

հայերին սպանում էր բնակարաններում, տանջամահ անում փողոցներում ու հրապարակներում, այրում կենդանի: Պաշտոնական տվյալներով տանջամահ էին արվել 32 մարդ, խոշտանգվել ու ծանր վիրավորվել ավելի քան 200 հոգի: Ո՛չ Սումգայիթի հանրահավաքները, ո՛չ կոտորածները պատահական չեն եղել, ինչպես հետագայում փորձում էին ներկայացնել ադրբեջանական իշխանությունները: Նախօրոք կազմել էին հայերի բնակարանների ցուցակները, անջատել հեռախոսները, պահեստավորել ինքնաչեն զենքեր: Փետրվարի 26-29-ին Սումգայիթի միլիցիան չի գործել: Քաղաքը խուլ շրջափակված էր, ճանապարհներն ու երկաթուղին գտնվում էին զինված բանդաների հսկողության տակ: Հանցագործության նպատակն էր փակել Արցախի հիմնահարցի քննարկման հեռանկարները, նոր ջարդերի կազմակերպման սպառնալիքով ահաբեկել հայերին և նրանց հարկադրել հրաժարվել ազատագրական պայքարից: Երեք օր տևած ջարդերից հետո միայն, փետրվարի 29-ի գիշերը խորհրդային զորքը մտավ Սումգայիթ, որին մեծ դժվարությամբ հաջողվեց դադարեցնել վայրագությունները և քաղաքից դուրս հանել կենդանի մնացած հայերին: Ավելի քան երեք հազար սումգայիթաբնակ հայեր, կորցնելով իրենց բնակարանները և ունեցվածքը, հրաշքով փրկվելով սպանդից, պատսպարվեցին Հայաստանում, իսկ մնացածները Ադրբեջանից փախան տարբեր ուղղություններով: Ըստ որում նրանց թույլ չէր տրվում փոխադրվել Ղարաբաղ:

Կենտրոնական իշխանությունները ձգտում էին հասարակությունից թաքցնել սումգայիթյան ողբերգությունը՝ այն ներկայացնելով որպես խուլիգանական տարրերի գործողություն: Ավելին, կենտրոնական մամուլն ու հեռուստատեսությունը դատապարտում էին «ԽՍՀՄ միասնությունը խաթարող հայ անջատականներին», հակահայկական թույն սփռում ամբողջ երկրով մեկ: Մոսկվայի ադրբեջանամետ քաղաքականության պատճառով սումգայիթյան ոճրագործները մնացին անպատիժ: Դա ադրբեջանաբնակ հայերի նկատմամբ լայնածավալ հալածանքների և բռնի տեղահանումների ազդակ հանդիսացավ: Ամբողջ Ադրբեջանում ծայր առավ վայրենի խրախճանք: Ամենուր ջարդարարների գործողություններն ուղեկցվում էին հայե-

րի սպանություններով, բնակավայրերի ավերումով ու թալանով:

գ. Համազգային պայքարի վերելքը: *Սումգայիթյան ոճրագործությունը ոչ միայն չընկճեց հայ ժողովրդին, այլ, ընդհակառակը, նրան ավելի համախմբեց համազգային նպատակների իրագործման գաղափարի շուրջ:*

1988 թ. մարտին Արցախ-Հայաստանում ավելի մեծ թափով վերսկսվեցին բողոքի բազմահազարանոց ցույցերն ու հանրահավաքները: Հիմնական պահանջներն էին. արդարացի լուծել ղարաբաղյան հիմնահարցը, քաղաքական գնահատական տալ սումգայիթյան եղեռնագործությանը և պատժել հանցագործներին: Բայց կենտրոնական իշխանությունները բացահայտորեն շարունակում էին վարել հայության արդարացի պայքարը բռնի ուժով խեղդելու քաղաքականություն: Նրանք ճգնում էին նույնացնել Հայաստանում և Ադրբեջանում տեղի ունեցող իրադարձությունները: Մամուլի կենտրոնական օրգանները անհամար կեղծ նյութեր հրապարակելով՝ փորձում էին ցույց տալ, որ, իբր, Հայաստանում բռնություններ են գործադրվում ադրբեջանցիների նկատմամբ:

Շուտով Երևանի փողոցներում հայտնվեցին խորհրդային զորքեր ու զրահատեխնիկա, որոնք իրենց հսկողության տակ առան կառավարական շենքերը, ռադիոտունը, հեռուստակենտրոնը, փոստատունն ու հիմնական ճանապարհները: Ցույցերն ու հանրահավաքները արգելվեցին: Բայց ժողովուրդը վճռական էր և անկոտրում:

Այս պայմաններում կենտրոնը փորձեց արցախյան պայքարի իմաստը հանգեցնել զուտ տնտեսական պայքարի և ապակողմնորոշել լայն հասարակայնությանը: Պատահական չէր, որ 1988 թ. մարտին ԽՄԿԿ Կենտկոմի և ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի որոշմամբ ԼՂԻՄ-ին հատկացվեց 400 միլիոն ռուբլի՝ մարզի սոցիալ-տնտեսական հրատապ հարցերը լուծելու համար: Ադրբեջանի ղեկավարությունն այդ գումարի մի մասը յուրացրեց, իսկ մյուս մասը տրամադրեց Արցախի ադրբեջանաբնակ գյուղերի բարեկարգմանը: Այդ բոլորին քաջատեղյակ Մոսկվան բավարարվում էր ժողովուրդների բարեկամության քարոզներով:

Չնայած բռնաճնշումներին՝ շարունակվում էին հանրահավաքները, որոնց մասնակիցներն այժմ պահանջում էին հրավիրել Հայաստանի Գերագույն խորհրդի արտահերթ նստաշրջան և ընդունել Արցախը մայր հայրենիքին միավորելու մասին որոշում: Բայց նստաշրջանն անընդհատ հետաձգվում էր: Սկսվեցին նստացույցեր, հացադուլներ, նույնիսկ կազմակերպվեցին անցանկալի գործադուլներ: Վերջապես, 1988 թ. հունիսի 15-ին Հայաստանի իշխանությունները հարկադրված հրավիրեցին ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջան, որը որոշեց համաձայնություն տալ մարզը Հայաստանի կազմի մեջ ներառելու մասին ԼՂԻՄ-ի Մարզխորհրդի խնդրանքին: Միաժամանակ նստաշրջանը դիմեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդին՝ հարցը քննարկելու և դրական լուծելու խնդրանքով: Սա ԽՍՀՄ պատմության մեջ եզակի դեպք էր, երբ տեղական մարմինները տարածքային փոփոխություններ կատարելու մասին որոշում էին ընդունում առանց կենտրոնի նախնական հրահանգավորման: Ուստի զարմանալի չէ, որ մոսկովյան իշխանությունները հայ ժողովրդի ազատագրական շարժումը որակեցին վերակառուցման դեմ ուղղված ինքնագլուխ ներսահմանային վերաձևումներ կատարող քայլ և մերժեցին հարցի քննարկումը:

1988 թ. հուլիսի 18-ին Արցախի իշխանությունների խնդրանքով ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը Հայաստանի, Ադրբեջանի և ԼՂԻՄ-ի ներկայացուցիչների մասնակցությամբ քննարկեց Լեռնային Ղարաբաղի հարցը: Հայաստանի ներկայացուցիչներ Վ. Համբարձումյանը, Ս. Համբարձումյանը, Վ. Պետրոսյանը, ԼՂԻՄ-ի ներկայացուցիչ Հ. Պողոսյանը և ուրիշներ իրենց ելույթներում դատապարտեցին սումգայիթյան ոճրագործությունը, ցույց տվեցին արցախյան շարժման օրինականությունն ու Լեռնային Ղարաբաղը՝ մայր հայրենիքին միանալու անհրաժեշտությունը: Բայց ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունը մերժեց ԼՂԻՄ-ի և Հայաստանի վերամիավորման մասին որոշումները: Ավելին, Մ. Գորբաչովի գլխավորած կուսակցական վերնախավը փորձեց հավասարության նշան դնել հակամարտող կողմերի միջև: Մերժելով արցախահայության օրինական պահանջը, նա ամեն կերպ պաշտպանում էր Ադրբեջանի շահերը և դատապարտում շարժումը:

Հոկտեմբերյան հեղափոխության հերթական տարելիցի

(1988 թ. նոյեմբերի 7) նշումը Երևանի Հանրապետության հրապարակում վերածվեց բազմահազարանոց բողոքի ցույցի, որի մասնակիցները շարունակում էին համառորեն պահանջել Արցախի միացումը մայր հայրենիքին:

1988 թ. ԽՍՀՄ Գերագույն խորհրդի մասնակի ընտրությունների ժամանակ առաջին անգամ այլընտրանքային կարգով պատգամավորներ դարձան ղարաբաղյան շարժման մի քանի ղեկավարներ Հայաստանից, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչներ:

1988 թ. նոյեմբերին, հակառակ իշխանությունների համառ դիմադրությանը, ժողովրդի պահանջով գումարվեց ՀԽՍՀ Գերագույն խորհրդի արտահերթ նստաշրջան, որը որոշում ընդունեց այն մասին, որ Հայաստանում կարող են կենսագործվել կենտրոնական իշխանությունների միայն այն որոշումները, որոնք Հանրապետության Գերագույն խորհուրդը կհամարի նպատակահարմար: Մոսկովյան իշխանությունները հակասահմանադրական և ապօրինի համարեցին ինչպես այդ նստաշրջանի գումարումը, այնպես էլ նրա ընդունած որոշումը: Ինքնուրույնության ամենաթույլ արտահայտությունն անգամ զայրացնում էր կենտրոնին, ուստի 1988 թ. նոյեմբերի վերջերին Երևանում մտցվեց հատուկ դրություն և պարետային ժամ: Արգելվեցին ցույցերն ու հանրահավաքները, իշխանությունը փաստորեն հանձնվեց զինվորականներին:

դ. Բռնագաղթը: Հայաստանի վիճակն ավելի ծանրացավ 1988 թ. կեսերին Ադրբեջանից հայերին զանգվածաբար արտաքսելու հետևանքով: Օգտվելով գորբաչովյան կենտրոնական իշխանության թուլությունից ու խրախուսանքից, վայրենի ձևեր ընդունած հակահայկական քարոզչության պայմաններում ադրբեջանական իշխանությունների կազմակերպած զինված ավազակային բանդաները հարձակումներ սկսեցին Ադրբեջանի հայկական բնակավայրերի վրա՝ կատարելով թալան, հրկիզումներ, սպանություններ: Կիրովաբադից ու Բաքվից, Շամխորի, Խանլարի շրջաններից և այլ հայաշատ վայրերից սկսվեց հայ բնակչության արտաքսումը, որն ուղեկցվում էր բռնություններով ու խոշտանգումներով: Բռնագաղթվածները ադրբեջանական հրոսակներին էին թողնում ամեն ինչ՝ տները, կայքը, անասունները: Դա ավելի էր ոգևորում անպատժելիության մթնոլորտում գործող խուժանին: Իրենց հանցագործությունները քողարկելու նպատակով Ադրբեջանի իշխանությունները հայերին հարկադրում էին ստորագրել կեղծ պայմանագրեր, որ, իբր, նրանք կամավոր են մեկնում Հայաստան: Միաժամանակ, համաշխարհային հասարակությանը թյուրիմացության մեջ գցելով՝ Ադրբեջանի իշխանությունները 1988 թ. դեկտեմբերին, կենտրոնի հավանությամբ ու Հայաստանի ղեկավարների համաձայնությամբ, կազմակերպեցին հայաստանաբնակ 150 հազար ադրբեջանցիների արտագաղթ: Մոսկվան չտապեց «հավասարակշռել» արտագաղթերը: Մ. Գորբաչովի մերձավորները հաշվի չէին առել մի «մանրուք». Ադրբեջանի հայերը թալանվել, խոշտանգվել և իրենց ունեցվածքը թողել փախել էին, իսկ հայաստանաբնակ ադրբեջանցիներին ոչ միայն հնարավորություն տրվեց վաճառելու կամ փոխանակելու իրենց բնակարանները, այլև նրանց ունեցվածքը փոխադրելու համար տրամադրվեցին մեքենաներ և նույնիսկ ինքնաթիռներ: Հայաստանից արտագաղթած ադրբեջանցիներն առանց դժվարությունների տեղավորվեցին Ադրբեջանից հեռացված հայերի բնակարաններում: 1988 թ. սումգայիթյան եղեռնագործությունից հետո մինչև տարեվերջ շուրջ 200 հազար բռնագաղթված հայեր ապաստանեցին Հայաստանում և ԽՍՀՄ տարբեր վայրերում: Բռնագաղթվածներին տեղավորելը, նրանց կարիքները հոգալը շատ ծանր էր ճգնաժամային պայմաններում գտնվող Հայաստանի համար, հատկապես այն պատճառով, որ Ադրբեջանից Հայաստան ներգաղթածները հիմնականում քաղաքաբնակներ էին: Այդ վիճակը ավելի ծանրացավ աղետալի երկրաշարժի պատճառով, որը նոր զոհեր ու ավերումներ բերեց հայ ժողովրդին:

ե. 1988 թվականի երկրաշարժը: 1988 թ. դեկտեմբերի 7-ին Հայաստանում տեղի ունեցավ ավելի քան 9 բալ հզորությամբ ավերիչ երկրաշարժ: Այն ընդգրկեց Հանրապետության տարածքի 1/3 մասը՝ մեկ միլիոն 130 հազար բնակչությամբ: Րոպեների ընթացքում լրիվ կամ մասնակի ավերվեցին Լենինականը, Սպիտակը, Կիրովականը, Ստեփանավանը, հարյուրից ավելի ավաններ ու գյուղեր: Ավերվեց Հանրապետության ամբողջ բնակֆոնդի մոտ 17%-ը: Երկրաշարժի գոտում չարքից դուրս

եկան ջերմամատակարարման, էներգամատակարարման բոլոր համակարգերը, կապի, տրանսպորտի և կենցաղսպասարկման ծառայությունները: Ավերվեց ավելի քան 170 արդյունաբերական ձեռնարկություն: Մանր վնաս կրեց գյուղատնտեսությունը, քանդվեցին անասնապահական շինությունները, ոչնչացավ անասունների մեծ մասը: Շարքից դուրս եկավ գյուղատնտեսական մթերքներ վերամշակող 80 ձեռնարկություն: Տարերային աղետը Հանրապետության ժողովրդական տնտեսությանը հասցրեց ավելի քան 13 մլրդ ռուբլու վնաս: Պաշտոնական նվազեցված տվյալներով զոհվեց ավելի քան 25 հազար մարդ, բայց իրականում այն անցնում էր 35 հազարից: Անօթևան դարձավ 530 հազարը:

Աղետի լուրը Հայաստանի վրա բևեռեց համայն մարդկության ուշադրությունը: Դեկտեմբերի 8-ին Երևան ժամանեց ԽՍՀՄ Նախարարների խորհրդի նախագահ Նիկոլայ Ռիժկովը, իսկ երկու օր անց աղետի գոտի եկավ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահ Մ. Գորբաչովը:

Զխնայելով իրենց ուժերը՝ տևական ժամանակ աղետի գոտում էին գտնվում ԽՍՀՄ նախարարների խորհրդի նախագահի տեղակալներ Բորիս Շչերբինը, Յուրի Բատալինը, Լև Վորոնինը, Իվան Սիլաևը և ուրիշներ: Նրանք գիշեր ու զօր դադար չունենալով, մեկնում էին տեղեր, խորամուխ լինում բոլոր գործերի ու խնդիրների մեջ: Նրանցից յուրաքանչյուրն արժանի է հայ ժողովրդի երախտագիտությանը: Երկրաշարժի առաջին ժամերից Հայաստանում գտնվող Բորիս Շչերբինը գլխավորում էր Լենինական (Գյումրի) քաղաքի հատուկ շտաբը: Ավերված քաղաքում չէին գործում ջեռուցման, ջրամատակարարման, էլեկտրամատակարարման համակարգերը: Իր ողջ եռանդով Շչերբինը ձեռնամուխ եղավ այդ առաջնահերթ խնդիրների լուծմանը: Զնայած 15 աստիճան սառնամանիքին, նա կարողացավ կազմակերպել չենքերի փլատակների տակ մնացած մարդկանց փրկությունը: Շչերբինը չուտով ցրտից ծանր հիվանդացավ: Բժիշկները նրան առաջարկեցին շտապ մեկնել Մոսկվա՝ բուժվելու, բայց նա կտրականապես մերժեց՝ շարունակելով աջակից լինել կործանված քաղաքի աղետյալներին: Միայն մահամերձ վիճակում նա տեղափոխվեց Մոսկվա, որտեղ էլ կնքեց իր մահկանացուն:

Երախտապարտ լենինականցիները իրենց քաղաքում փողոցներից մեկը կոչեցին Բորիս Շչերբինի անունով, ինչպես նաև կանգնեցրին նրա կիսանդրին:

Երկրաշարժից անմիջապես հետո տարբեր երկրներից հումանիտար օգնության բեռներով Հայաստան էին գալիս օդանավեր, գնացքներ, ավտոմեքենաների շարասյուններ: Համակողմանի օգնությանը մասնակցում էին աշխարհի 113 երկրներ, բազմաթիվ միջազգային կազմակերպություններ: Վրաստանից, Ռուսաստանից, Ուկրաինայից, Ղազախստանից և ԽՍՀՄ մյուս հանրապետություններից Հայաստան ժամանեցին հազարավոր փրկարարներ, բժիշկներ, շինարարներ և այլ մասնագետներ: Նրանք աղետյալներին օգնելու համար բերում էին սննդամթերք, բժշկական սարքավորումներ, դեղորայք, վրաններ, շինարարական տեխնիկա և այլն: 1989 թ. սկզբում աղետի գոտում աշխատում էին այլ հանրապետություններից ժամանած ավելի քան 40 հազար մասնագետներ, զինծառայողներ, որոնք ԽՍՀՄ կառավարության ընդունած որոշման համաձայն մեծ աշխատանք ծավալեցին: Որոշվել էր ավերվածը վերականգնել երկու տարում: Աղետի գոտուց չուրջ 170 հազար մարդ տեղավորվեց Կովկասի առողջարաններում ու հանգստյան տներում: Հազարավոր խեղված երեխաներ բուժման նպատակով տեղափոխվեցին Խորհրդային Միության և արտասահմանի բուժարաններ:

Ողջ աշխարհն անչահախնդիր օգնություն էր ցույց տալիս ծանր կացության մեջ հայտնված հայ ժողովրդին: 1990 թ. հունվարի 1-ի դրությամբ Հայաստանի օգնության հիմնադրամ էր փոխանցվել արտասահմանյան երկրներում հանգանակված չուրջ 35 մլն դոլար: Շատ պետություններ ու կազմակերպություններ աղետի գոտում ձեռնարկեցին կառուցելու բնակելի թաղամասեր, հիվանդանոցներ, դպրոցներ: 1989 թ. իտալացիները Սպիտակում կառուցեցին բնակելի թաղամաս՝ «Իտալական գյուղը», Գյումրիում թաղամաս կառուցեցին ավստրիացիները: Նորվեգացիների կողմից Սպիտակում կառուցված ժամանակակից հիվանդանոցը կրում է մեծ մարդասեր, հայ ժողովրդի բարեկամ Ֆրիտյոֆ Նանսենի անունը: Գյումրիում անգլիացիների հիմնադրած դպրոցի հանդիսավոր բացմանը ներկա էր Անգլիայի վարչապետ Մարգարետ Թեթչերը:

Հայ ժողովուրդը երբեք չի մոռանա աղետի գոտի օգնության չտապող հարավսլավացի 7 օդաչուներին, որոնք Երևանի մատույցներում զոհվեցին օդային աղետից, ինչպես նաև Գյումրիի մոտակայքում ավիավթարից զոհված խորհրդային զինծառայողներին: Հայ ժողովուրդը երախտագիտությամբ ընդունեց աշխարհի մարդասիրական օգնությունը:

Մայր հայրենիքին լայն աջակցության ձեռք մեկնեց սփյուռքահայությունը: Այդ ծանր օրերին նա համախմբվեց և ստեղծեց «ՍՕՍ Արմենիա», «Ազնավուրը Հայաստանին» և տասնյակ այլ կազմակերպություններ, որոնք նյութական ու բարոյական մեծ օգնություն էին ցույց տալիս հայրենաբնակ իրենց եղբայրներին ու քույրերին: Բազմաթիվ սփյուռքահայեր չտապեցին իրենց հետ մայր հայրենիք բերել դեղորայք, հագուստ, վրաններ, սննդամթերք և այլն: Նրանցից շատերը մնացին Հայաստանում և անմիջական մասնակցություն ունեցան փրկարարական ու վերականգնողական աշխատանքներին: Նրանց թվում էր նաև Շարլ Ազնավուրը, որը հետագայում նույնպես մեծ եռանդով շարունակեց իր ազգանվեր գործունեությունը:

Աղետի գոտում ծավալված շինարարական աշխատանքներին մեծապես արգելակում էր Ադրբեջանի կողմից իրականացվող տնտեսական շրջափակումը, որի հետևանքով անհրաժեշտ շատ շինանյութեր ու ապրանքներ տեղ չէին հասնում: Աղետի գոտու վերականգնման գործում բացասական դեր խաղացին «Ղարաբաղ» կոմիտեի ղեկավարները, որոնք օգնության եկածներից պահանջում էին հեռանալ Հայաստանից: Այդ պայմաններում ԽՍՀՄ այլ հանրապետությունների շատ կազմակերպություններ դադարեցրին իրենց աշխատանքները և հեռացան:

Չնայած դրսից եկած անչափելի մեծ օգնությանը՝ աղետի գոտու բնակչության մեծ մասը շարունակում էր մնալ անօթևան և առանց աշխատանքի: Դա ավելի էր սրում հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը:

զ. Ժողովրդական հուզումների նոր ալիք Հայաստանում: Արցախահայության զոյամարտը (1989 թ. հունվար – 1991 թ. օգոստոս): Թեպետ օրավուր ծանրացող վիճակին՝ հանրապետության բնակչությունը շարունակում էր իր արդարացի

ազատագրական պայքարը: Աղետի գոտի ժամանած Մ. Գորբաչովից նա վճռականորեն պահանջեց լուծում տալ հարցին: Բայց ԽՍՀՄ ղեկավարը ոչ միայն չընդառաջեց, այլև կարգադրեց հաչվեհարդար տեսնել շարժման կազմակերպիչների ու ղեկավարների հետ: 1988 թ. դեկտեմբեր – 1989 թ. հունվար ամիսներին կալանավորվեցին և մոսկովյան բանտերում արգելափակվեցին «Ղարաբաղ» կոմիտեի անդամները և մի քանի տասնյակ երիտասարդներ՝ Հայաստանից ու Արցախից: Մոսկվայի ադրբեջանամետ իշխանությունները փորձում էին օգտագործել երկրաշարժի ծանր հետևանքները, գլխատել հայերի ազատագրական պայքարը և դաժան միջոցներով վերջնականապես ճնշել այն: Բայց դա հակառակ արդյունք տվեց: Չնայած գործող հատուկ դրությանն ու պարետային ժամին, երկրաշարժի ավերումներին ու շրջափակումներին՝ Հայաստանում ու Արցախում նոր թափով բորբոքվեցին բազմահազարանոց ցույցերն ու հանրահավաքները: Ղարաբաղյան հարցի արդարացի լուծման պահանջին ավելացավ նաև շարժման ղեկավարներին ազատ արձակելու պահանջը: Այդ ճակատագրական օրերին հայ ժողովրդի արդարացի ընդվզմանը պաչտպան կանգնեցին ռուս առաջավոր մտավորականության փայլուն մի կոհորտա՝ Անդրեյ Սախարովը, Գալինա Ստարովոյտովան, Միխայել Դուդինը, Անդրեյ Նույկինը, Վիկտոր Շեյնիսը, Լեոնիդ Բարկինը, Անդրեյ Զուբովը, Յուրի Աֆանասևը, Անատոլի Պրիստակինը, Բուլատ Օկուջավան, Տանյա Լիխանովան և ուրիշներ: Նրանք պարբերաբար դիմումներ էին հղում ԽՍՀՄ ժողովրդավարական ուժերին և համաչխարհային հասարակայնությանը՝ հայ ժողովրդի արդարացի պայքարին պաչտպան կանգնելու կոչերով:

Սանկտ Պետերբուրգից ընտրված պատգամավորներ Ա. Սոբչակը և Ա. Դենիսովը ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների առաջին համագումարում (1989 թ. մայիս) անգամ հայտարարեցին, որ իրենք հրաժարվում են ԽՍՀՄ գերագույն խորհրդում իրենց մանդատներից՝ հօգուտ Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչների:

Արցախյան ազատագրական պայքարի օրերից մեր ժողովրդի կողքին էր, նրա արդարացի պահանջի մչտական աջակիցն ու ջերմ պաչտպանը՝ Մեծ Բրիտանիայի Լորդերի պալատի

փոխոսնակ, իրավապաշտպան Քերոլայն Քոքսը: Նա 1991 թ. մայիսից սկսած Արցախ է այցելել ավելի քան 50 անգամ: Լինելով ակադեմիկոս Ա. Սախարովի համախոհը՝ Քոքսը մշտապես հետևել է նրա մարդասիրական սկզբունքներին՝ հայտարարելով. «Ես այնտեղ եմ, որտեղ ցավ կա»: Նրա անմիջական նախաձեռնությամբ ու ղեկավարությամբ ԱՄՆ-ի, Ճապոնիայի, Անգլիայի, Նորվեգիայի, Իտալիայի և այլ երկրների գիտնականներից, գրողներից, հասարակական գործիչներից կազմավորվեց 13 հոգանոց խումբ, որը 1991 թ. մայիսին ուղևորվեց Հայաստանի Հանրապետություն: Գորիսի շրջանի Տեղ գյուղում խումբը հանդիպելով հայ փախստականներին՝ արձանագրեց նրանց նկատմամբ ադրբեջանցիների կողմից գործադրված աննկարագրելի բռնությունների փաստերն ու ներկայացրեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդին ու Պաշտպանության նախարարությանը: Նա բազմիցս անգամ ռազմական ուղղաթիռով շրջել ու նկարահանել է ԼՂՀ հրդեհվող ու ավերված գյուղերը և դրանք ցուցադրել Եվրոպայի ու Ամերիկայի տարբեր հեռուստաալիքներով: Քոքսը Մեծ Բրիտանիայի Լորդերի պալատում ներկայացրել է Ղարաբաղյան հիմնախնդրի էությունը: Արցախյան պատերազմի ընթացքում նա նյութական ու բարոյական անգնահատելի օգնություն է ցույց տվել շրջափակման մեջ գտնվող արցախահայությանը: Ջինաղաղարից հետո նրա ակտիվ աջակցությամբ և գերմանացի մասնագետների համագործակցությամբ Ստեփանակերտում ստեղծվեց պրոթեզավորման մասնագիտացված կլինիկա, իր իսկ միջոցներով նույն քաղաքում ողնաշարի վնասվածքներով հիվանդների համար հիմնադրվեց վերականգնողական կլինիկա: Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ն գնահատելով Քոքսի ծառայությունները հայ ժողովրդի հանդեպ՝ նրան անվանել է «հրեշտակ իջած մեր ազգի համար»:

Հայ ժողովրդի հիշողության մեջ ընդմիշտ կմնա բուլղար ժողովրդի ազնիվ զավակ, կինովավերագրող Ցվետանա Պասկալևայի պայծառ անունը: Նա առաջին արտասահմանցի լրագրողն էր, որը 1991-94 թթ. լինելով Լեռնային Ղարաբաղում, լայնորեն լուսաբանել է Ղարաբաղի հիմնախնդիրը և այն ներկայացրել միջազգային հանրությանը: «Օղակ» գործողության ժամանակ լինելով Գետաշենի ենթաշրջանում և Շահումյանի շրջանում՝ նա

հայ բնակչության դեմ կատարվող բռնարարքներն ու տեղահանությունը ռեպորտաժներով ներկայացնում էր միջազգային հանրությանը: Ռազմական թեժ կետերից նա բազմիցս հեռուստահաղորդումներ է պատրաստել CNN, NBC, բուլղարական ազգային, ռուսական, գերմանական, ֆրանսիական, հեռուստաընկերությունների, Ռոյթեր գործակալության համար: Լինելով ռազմական կետերում՝ «Ղարաբաղի վերքերը» ընդհանուր խորագրով Ց. Պասկալևան նկարահանել է պատերազմական իրադարձություններին և Արցախյան ազատագրական պատերազմին նվիրված 6 վավերագրական ֆիլմ (հայերեն, ռուսերեն ու անգլերեն): 1993-99 թթ. ԱՄՆ-ի կոնգրեսում, Կանադայի խորհրդարանում, ՄԱԿ-ում, «Միջազգային համաներում» և այլ կազմակերպություններում նա ցուցադրել է իր ֆիլմերը, կլոյթներ է ունեցել ի պաշտպանություն արցախահայության ազատագրական պայքարի: Պատերազմից հետո երկար տարիներ ՀՀ ազգային հեռուստատեսությամբ վարել է «Իմ թանկագին ողջեր ու մահացածներ» և Արցախի անցյալին և ներկային վերաբերող հեղինակային հրապարակախոսական ու վերլուծական հաղորդումներ՝ նվիրված Շուշիի ազատագրմանը, ԼՂՀ խնդիրներին:

1989 թ. հունվարի 12-ին ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը որոշում ընդունեց Լեռնային Ղարաբաղում կառավարման նոր ձև մտցնելու մասին: Նախատեսվում էր ստեղծել 8 հոգուց (մեծ մասը Մոսկվայից) կազմված **Հատուկ կառավարման կոմիտե՝** ԽՄԿԿ Կենտկոմի բաժնի վարիչ Ա. Վոլսկու գլխավորությամբ: Կոմիտեն անմիջականորեն ենթարկվելու էր կենտրոնին: Նույն որոշմամբ դադարեցվեց Արցախի աշխատավորների կողմից ընտրված ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների 20-րդ գումարման Մարզխորհրդի գործունեությունը: Վերացվեց մարզի կուսակցական մարմինը՝ Մարզկոմը: Այս վերջինն արվում էր նաև մարզկոմի առաջին քարտուղար, ազատագրական շարժման նշանավոր ղեկավարներից մեկից՝ Հ. Պողոսյանից ազատվելու համար: Շուտով Ա. Վոլսկու գլխավորած կոմիտեն սկսեց աշխատանքները:

Հայ ժողովուրդն ի սկզբանե մեծ հույսեր չկապեց այդ որոշման հետ, որտեղ հատուկ ընդգծված էր, որ Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի մի մասն է: Այդ կոմիտեի գոյության մի քանի ա-

միսները ցույց տվեցին, որ մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով և, առաջին հերթին, Ադրբեջանի սադրանքների հետևանքով այն ի վիճակի չէր կատարելու իր առաքելությունը: Հայաստանի ու Արցախի միջև տնտեսական կապեր ստեղծելու նրա ջանքերն ապարդյուն անցան: Փոխարենը Հատուկ կոմիտեի լուռ համաձայնությամբ Ադրբեջանի իշխանությունները ուժեղացրին Լեռնային Ղարաբաղի շրջափակումը և խորացրին բռնությունները հայերի նկատմամբ: Գնալով Արցախի և Հայաստանի հայության մեջ խորացավ անվստահությունը Հատուկ կոմիտեի և ընդհանրապես կենտրոնական իշխանությունների նկատմամբ:

Հայ բնակչության հետևողական պայքարի շնորհիվ և ԽՍՀՄ առաջադեմ մտավորականության օժանդակությամբ 1989 թ. մայիսին ազատ արձակվեցին ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեի անդամները, որոնք նոր թափով շարունակեցին ղեկավարել ազատագրական շարժումը: Այժմ հանրահավաքներում առաջ էին քաշվում դեմոկրատական ազատությունների, հանրապետության ինքնուրույնության ընդլայնման, կենսաոլորտի բարելավման, պատմական անցյալի վերագնահատման այլ հարցեր:

1989 թ. ամռանը Ադրբեջանում հակահայկական հիստերիան հասավ իր գագաթնակետին: Դրա համար առիթ ծառայեցին ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների առաջին համագումարում հայ պատգամավորների ելույթները, որոնք ապացուցելով ղարաբաղյան պայքարի արդարացի լինելը՝ կրկին պահանջեցին մարզը միավորել Հայաստանին: Ադրբեջանական մամուլը վայնասուն բարձրացրեց, իսկ հանրապետության իշխանությունները դիմեցին նոր զինված վայրագությունների: Ամենուր սկսվեցին լայնածավալ բռնություններ: Հայաշատ վայրերում նոր ուժով բորբոքվեցին հալածանքները, խոշտանգումներն ու սպանությունները: Տասնյակ հայկական բնակավայրեր թալանվեցին ու հրկիզվեցին: Սկսվեց նոր, է՛լ ավելի ծավալուն բռնագաղթ, որի հետևանքով լիովին հայաթափվեցին Կիրովաբադը, Մինգեչաուրը, Խանլարը, Շահումյանը և այլ շրջաններ: Հուլիսին Ադրբեջանի կողմից փակվեցին Հայաստան և Արցախ տանող երկաթուղիներն ու ավտոճանապարհները:

1989 թ. հուլիսին Բաքվում կազմակերպվեց Ադրբեջանի ժողովրդական ճակատը: Շուտով ճակատը զինված ջոկատներ ստեղծեց և առանձին շրջաններում զավթեց իշխանությունը: Դեկտեմբերին Թուրքերն ավերեցին Իրանի և Թուրքիայի հետ ունեցած պետական սահմանային կառույցները՝ դրսից Նախիջևան առատորեն զենք և զինամթերք ներկրելու համար:

Դաժան շրջափակումը սոցիալական ծանր հետևանքներ ունեցավ:1989 թ. ամառվանից Հայաստանում դադարեց գործելուց արդյունաբերական ձեռնարկությունների մեծ մասը, ձախողվեցին աղետի գոտու վերականգնման և գյուղատնտեսական կուլտուրաների բերքահավաքի աշխատանքները: Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի շրջափակումով Ադրբեջանը փաստորեն չհայտարարված պատերազմի սկիզբը դրեց: Հայաստանի Գերագույն խորհրդի նստաշրջանը դատապարտեց Ադրբեջանի կողմից Հայաստանի և ԼՂԻՄ-ի շրջափակումը և կենտրոնական իշխանություններից պահանջեց ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների արտահերթ համագումար հրավիրել՝ հարցը քննարկելու համար, բայց դա տեղի չունեցավ: Իսկ ավելի ուշ ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների երկրորդ համագումարն անդրադառնալով հարցին՝ նույնիսկ խուսափեց շրջափակում բառը արձանագրության մեջ մտցնելուց և հավասարապես մեղադրեց երկու հանրապետությունների ղեկավարությանը: Դա, անշուշտ, ոգևորեց ադրբեջանցիներին, և շրջափակումը կազմակերպված ու մշտական բնույթ ընդունեց: Շուտով Ադրբեջանի իշխանությունները փակեցին նաև ՌՍՖՍՀ-ից Հայաստան եկող գազատարը: Դա մեծ վնաս հացրեց Հայաստանին և չուրջ երկու տարի շրջափակման մեջ գտնվող Արցախի տնտեսությանը: Ձմռան դաժան պայմաններում նվազեցին էներգիա արտադրելու հնարավորությունները, խաթարվեցին կենսագործունեություն ապահովող օբյեկտների աշխատանքները, փակվեցին դպրոցները և բուհերը: Սկսվեցին էներգիայի մատակարարման հովհարային անջատումները:

Շրջափակումը ծանր անդրադարձավ Արցախի վրա, որը լիովին կղզիացել, կտրվել էր արտաքին աշխարհից, ուր զգացվում էր սննդամթերքի, դեղորայքի և առաջին անհրաժեշտության այլ ապրանքների խիստ կարիքը: Մարզի տնտեսական ու

բարոյահոգեբանական վիճակը կարգավորելու նպատակով 1989 թ. օգոստոսին Ստեփանակերտում հրավիրվեց ԼՂԻՄ լիազոր ներկայացուցիչների համագումար: Այն գտավ, որ մարզի կառավարման հատուկ ձևը ոչնչով չի օգնում հրատապ հարցերի լուծմանը, որ Հատուկ կոմիտեի գոյության ամիսներին ոտնահարվել են մարզի ինքնավարության չնչին մնացորդները, ուստի նպատակահարմար է ընտրությունների միջոցով վերականգնել խորհրդային ու կուսակցական մարմինները: Միաժամանակ որոշվեց մինչև իշխանության սահմանադրական գործառույթների վերականգնումը մարզը կառավարելու համար ընտրել Ազգային խորհուրդ: Նորընտիր Ազգային խորհուրդը կոչով դիմեց ժողովրդին՝ դադարեցնելու մի քանի ամիս տևած գործադուլը:

Ադրբեջանի և Մոսկվայի իշխանությունների կողմից Ազգային խորհուրդը անօրինական համարվեց, որի բնական հետևանքը հանդիսացավ Արցախի դեմ ահաբեկչական քաղաքականության ուժեղացումը: Զենք որոնելու նպատակով Արցախի հայկական բնակավայրերում զինվորականներն ամենուրեք խուզարկություններ էին կատարում: ԽՍՀՄ Ներքին գործերի նախարարության զինվորները 1989 թ. սեպտեմբերին Ստեփանակերտում զենք գործադրեցին խաղաղ բնակչության նկատմամբ: Եղան զոհեր և վիրավորներ: Բացի զորքից, հայկական գյուղերի վրա հարձակումներ էին գործում ադրբեջանական զինված հրոսակախմբերը:

1989 թ. նոյեմբերի 28-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի որոշմամբ Ա. Վոլսկու գլխավորած Հատուկ կառավարման կոմիտեն վերացվեց:

Ազատագրական պայքարին նվիրված բոլոր ուժերը համախմբելու համար ձևավորվեց Հայոց համազգային շարժում (ՀՀՇ) կազմակերպությունը, որի հիմնադիր համագումարը տեղի ունեցավ 1989 թ. նոյեմբերին: Սակայն ՀՀՇ-ն չկարողացավ ամբողջությամբ իր շուրջը համախմբել ազգային շարժման բոլոր ուժերը և երբեք համազգային չդարձավ: ՀՀՇ-ի՝ մեկը մյուսին հետևող վնասակար ձեռնարկումները ծանր հետևանքներ ունեցան ժողովրդական տնտեսության և լայն առումով ժողովրդի համար: Այսպես, ՀՀՇ-ի համառ ջանքերով չրջակա միջավայրի մաքրությունը հոգալու պատճառաբանությամբ 1989 թ. դեկտեմբերին փակվեց «Նաիրիտ» գիտաարտադրական միավորումը: «Նաիրիտը» ոչ միայն թանկարժեք կաուչուկ էր արտադրում, որի պահանջարկը մեծ էր միջազգային չուկայում, այլև հումք էր մատակարարում Հայաստանի չուրջ 350 ձեռնարկությունների: Փակվելուց հետո նրա հետ սերտորեն կապված բոլոր գործարանները դադարեցին աշխատելուց, իսկ տասնյակ հազարավոր մարդիկ մնացին առանց աշխատանքի: Հանրապետության տնտեսությունը ծանր հարված ստացավ: Իշխանությունը վերցնելուց հետո նույն ՀՀՇ-ի դեկավարությունը 1991 թ. վերագործարկեց «Նաիրիտը»՝ մոռանալով նրա «վնասակար հետևանքները»: Նույն ճակատագրին արժանացան Ալավերդու լեռնաքիմիական կոմբինատը, Վանաձորի քիմիական գործարանը, Հայկական ատոմակայանը, որոնց փակումն աղետաբեր եղավ Հանրապետության տնտեսության համար և ծանր անդրադարձավ բնակչության սոցիալական պայմանների վրա:

Արցախահայության ազատագրական պայքարին նոր ուժով սատար կանգնելու նպատակով 1989 թ. դեկտեմբերի 1-ին ՀԽՍՀ Գերագույն խորհրդի և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի համատեղ նիստում հռչակվեց Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի Հանրապետության վերամիավորումը: Մեկ ամիս անց ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը չեղյալ հայտարարեց այդ որոշումը՝ այն որակելով հակասահմանադրական: Մոսկվան մեկ անգամ ևս հաստատեց իր նպատակը՝ բոլոր միջոցներով հայ ժողովրդին հետ պահել ազատագրական պայքարից: Որքան կենտրոնը ուժեղացնում էր ճնշումը արցախյան շարժման դեմ, այնքան համարձակ էին դառնում ադրբեջանական հրոսակները:

Օգտվելով իր համար կենտրոնի խիստ նպաստավոր քաղաքականությունից՝ Ադրբեջանի ժողովրդական ճակատը 1990 թ. հունվարին Բաքվում սանձազերծեց հայերի զանգվածային ջարդեր: Հունվարի 13-ի բազմահազարանոց հանրահավաքից հետո «հայությունը ոչնչացնելու» կոչ արվեց: Մոտ 5 հազար մարդուց բաղկացած զինված ամբոխը, նախօրոք մշակված ծրագրով և

նախապես կազմված հասցեներով, հարձակվեց հայերի բնակարանների վրա՝ նրանց սպանելու և ունեցվածքը թալանելու նպատակով: Հայերը ենթարկվեցին անմարդկային խոշտանգումների: Այդ օրը վայրագություններին զոհ գնաց մոտ 400 մարդ: Թաղից թաղ անցնելով՝ յոթ օր անընդհատ խուժանը հայերի նոր ջարդեր էր կատարում: Կազմակերպված համատարած կոտորածների պատճառով մեկ շաբաթվա ընթացքում Բաքուն, որի կառուցման ու զարգացման համար հայերը հսկայական ներդրում էին ունեցել, լիովին հայաթափվեց: Գազազած ամբոխը բռնություններ էր գործադրում նաև ռուսների և մյուս ազգերի ներկայացուցիչների վրա: Ի վերջո, հայերի արյամբ արբեցած Ադրբեջանի ժողովրդական ճակատը բացահայտորեն անցավ խորհրդային կարգերի տապալմանը: Միայն այդ ժամանակ ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը Բաքվում արտակարգ դրություն հայտարարեց և մեծ ուշացումով զորք մտցրեց քաղաք: Զինվորականներին դժվարությամբ հաջողվեց դադարեցնել վայրենի սպանդը:

Հունվարյան վանդալիզմի հետևանքով հարյուր հազարավոր հայեր, հազիվ փրկվելով ադրբեջանական յաթաղանից, հեռացան Բաքվից և Ադրբեջանի մյուս հայաբնակ բնակավայրերից: Ադրբեջանից փախած և միայն Հայաստանում ապաստանած հայերի թիվը հասավ 300 հազարի:

Երբ Բաքվում մոլեգնում էին հակահայկական բռնությունները, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը 1990 թ. հունվարի 15-ին որոշում ընդունեց Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի տարածքում արտակարգ դրություն հայտարարելու մասին: Դրանից երեք օր առաջ՝ հունվարի 12-ին, Ադրբեջանի Գերագույն խորհրդի նախագահությունը, ելնելով 1989 թ. ԽՍՀՄ ԳԽ նոյեմբերի 28-ի որոշումից, ստեղծեց Հանրապետական կազմկոմիտե՝ օժտված լայն լիազորություններով: Այն գլխավորում էր Ադրբեջանի Կոմկուսի կենտկոմի երկրորդ քարտուղար Հայատյաց Վ. Պոլյանիչկոն: Կազմկոմիտեի գործունեությամբ Լեռնային Արցախում սկսվեց հակահայկական հիստերիայի նոր փուլ: Այն իր գործողություններով հսկայական չարիքներ պատճառեց Արցախի ժողովրդին: Պոլյանիչկոյի գլխավորած կազմկոմիտեի խնդիրը մարզի ժողովրդագրական

իրավիճակը հօգուտ ադրբեջանցիների փոխելն էր:

Հայկական բնակավայրերը մեկուսացնելու նպատակով Կազմկոմիտեի ցուցումով քանդվում էին միջշրջանային և գյուղամիջյան առանց այն էլ անմխիթար վիճակում գտնվող ճանապարհները. նոր ջարդերի սպառնալիքով կատարվում էին անհերևակայելի բռնաճնշումներ, գործադրվում էին հարկադրանքի այնպիսի տմարդի ձևեր, որոնց հետևանքով աշխարհից կտրված գյուղերի հայ բնակիչներին ոչինչ չէր մնում անելու, քան թողնել իրենց բնակավայրերը և հեռանալ անվտանգ վայրեր: 1990 թ. փետրվարի վերջին լիովին հայաթափվեցին Շահումյանի շրջանի Ազատ և Կամո գյուղերը: Նույն թվականին Ադրբեջանի Գերագույն խորհրդի որոշմամբ լուծարվեցին Արցախի բոլոր չորս հայկական վարչական շրջանները: Իր հանցավոր գործունեությամբ Հանրապետական կազմկոմիտեի ստեղծումը մեծ նահանջ էր Վոլսկու գլխավորած Հատուկ կոմիտեի համեմատությամբ:

Հունվար-փետրվար ամիսներին ադրբեջանական զինված բանդաները հարձակումներ սկսեցին նաև Հայաստանի սահմանների ամբողջ երկայնքով: Ինքնապաշտպանական աշխարհազորային ջոկատներն արժանի հակահարված տվեցին թշնամուն և նրան հարկադրեցին դադարեցնել ոտնձգությունները: Բայց, դրա փոխարեն, Ադրբեջանն ուժեղացրեց մեկուսացման մեջ հայտնված Հայաստանի շրջափակումը, որի պատճառով ավելի խորացավ տնտեսական ճգնաժամը: Հայ ժողովրդի բազում բողոքներն այս անգամ էլ Մոսկվայի կողմից մնացին անպատասխան:

Ադրբեջանի կազմկոմիտեի և ԼՂԻՄ-ի ու Ադրբեջանական ԽՍՀ հարակից շրջանների արտակարգ դրության շրջանի պարետ, դահիճ-գեներալ Վ. Սաֆոնովի անօրեն գործողությունների դեմ պայքարը հետզհետե լայն բնույթ էր ստանում: Չնայած 1990 թ. մայիսի 15-ից հետո գեներալ Վ. Սաֆոնովը նոր զորամասեր էր մտցրել մարզի տարածք և ամեն կերպ փորձում էր ձախողել Լեռնային Ղարաբաղից ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավորների ընտրությունը, բայց դա նրան չհաջողվեց: Արցախի 100 հազար ընտրողների 94%-ը մասնակցեցին ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավորների ընտրություններին: Մարզից ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավորներ ընտրվե-

ցին Սերժ Սարգսյանը, Գեորգի Պետրոսյանը, Համլետ Գրիգորյանը և ուրիշներ: ՀԽՍՀ Զարենցավան քաղաքի 143-րդ ընտրատարածքից պատգամավոր ընտրվեց դեռևս ադրբեջանական բանտում գտնվող Արկադի Մանուչարյանը, իսկ Կիրովականի 199-րդ ընտրատարածքից՝ Ռոբերտ Քոչարյանը: Բաքուն որոշեց ավելի խիստ պատիժների ենթարկել արցախահայությանը: Մայիսի վերջերին ադրբեջանցի հրոսակները մի շարք նոր վայրագ գործողություններ կատարեցին Մաճկալաշեն, Քարինտակ և տասնյակ այլ գյուղերում: Ռեժիմի ստուգման և զենք առգրավելու պատրվակով 1990 թ. գարնանն ու ամռանը նրանք ավերեցին բազմաթիվ բնակարաններ, պետական ու հասարակական շինություններ, շատ կոլտնտեսություններ զրկվեցին հազարավոր հեկտար տարածություններ մշակելու, տասնյակ հազարավոր գլուխ անասուններ խնամելու հնարավորություններից:

Հայաստանի և Արցախի վրա ճնշումն ուժեղացնելու նպատակով գեներալ Սաֆոնովի հրամանով հրկիզվեց Մարտակերտի օդանավակայանը՝ խափանելով Հայաստանի հետ օդային կապը:

Այդ ծանր օրերին, 1990 թ. մայիսի 20-ին, կայացան ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավորների ընտրություններ, որոնց ընթացքում մրցապայքարը հիմնականում տեղի ունեցավ Հայաստանի կոմկուսի և ՀՀՇ-ի միջև: Երկար վիճաբանությունների, պատգամավորների զգալի մասի անհամաձայնության և հոգեբանական ճնշումների պայմաններում Գերագույն խորհրդի նոր նախագահ ընտրվեց ՀՀՇ վարչության նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը: 1990 թ. օգոստոսի 23-ին Հայաստանի Գերագույն խորհրդի առաջին նստաշրջանն ընդունեց «Հռչակագիր Հայաստանի անկախության մասին» փաստաթուղթ, որով դրվեց Հանրապետության անկախության գործընթացի սկիզբը:

Իսկ արցախահայության վրա ճնշումները գնալով ուժեղանում էին: 1990 թ. սեպտեմբերի 4-ին Ստեփանակերտի օդանավակայանում ԽՍՀՄ ներքին զորքերը բռնագրավեցին Հայաստանի քաղաքացիական ավիացիային պատկանող հինգ «Յակ-40» տիպի ինքնաթիռ, իսկ հաջորդ օրը՝ ևս վեցը:

Ելնելով Լեռնային Ղարաբաղում տիրող լարված իրադրությունից՝ սեպտեմբերի 5-ին Հայաստանի Հանրապետության

նորընտիր խորհրդարանը հանդես եկավ հայտարարությամբ, որով իրադրությունը կայունացնելու նպատակով կենտրոնին առաջարկվում էր ԽՍՀՄ ՆԳՆ զորքերի և խորհրդային բանակի ստորաբաժանումները տեղակայել ԼՂԻՄ-ի, Շահումյանի շրջանի և Գետաշենի ենթաշրջանի վարչական սահմանների երկայնքով, վերացնել Ադրբեջանի հանրապետության կազմկոմիտեն և վերականգնել Լեռնային Ղարաբաղի մարզային և տեղական խորհուրդները, վճռական միջոցներ ձեռնարկել ԼՂԻՄ-ի, Շահումյանի շրջանի և Գետաշենի ենթաշրջանի շրջափակումը վերացնելու համար: Բայց, ի պատասխան այդ առաջարկի, միութենական իշխանությունները ոչ միայն դրական չարձագանքեցին, այլև լիովին սատարեցին Ղարաբաղի ու նրա վարչական սահմաններից դուրս գտնվող, բայց Ադրբեջանին ենթակա հայաբնակ տարածքները հայաթափելու՝ Բաքվի կողմից տենդորեն շարունակվող քաղաքականությունը:

Կենտրոնի նման վերաբերմունքը հայ ժողովրդի մի շարք նվիրյալների հարկադրեց դիմել բողոքի ծայրահեղ միջոցի: 1990 թ. սեպտեմբերին Մոսկվայի «Մոսկվա» հյուրանոցում քաղաքական հացադուլ հայտարարեցին Հայաստանի Գիտությունների ակադեմիայի նախագահ, ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանը, հրապարակախոս Զորի Բալայանը, ժողովրդական դերասան Սոս Սարգսյանը, Լեռնային Արցախի Ազգային խորհրդի նախագահ Վաչագան Գրիգորյանը, ԼՂԻՄ լուծարված մարզխորհրդի նախագահ Սեմյոն Բարայանը: Ինչպես նաև տաջիկ և ուզբեկ գիտնականներ Ռոստոմ Շուքուրովն ու Սուրաբ Շարաֆուտդինովը: Հացադուլավորներին համերաշխություն ու աջակցություն հայտնեցին երկրի գիտության, մշակույթի և գրականության շատ գործիչներ, միջազգային գիտական, հասարակական կազմակերպություններ: 1990 թ. սեպտեմբերի 17-ին ՀՀ Գերագույն խորհուրդը դիմում հղեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նստաշրջանին, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համաժողովին, աշխարհի երկրների և միութենական հանրապետությունների խորհրդարաններին, որում ներկայացվում էր Լեռնային Արցախում կենտրոնի կողմից իրականացվող հակահայկական քաղաքականությունը և հացադուլավորների պահանջը:

Սեպտեմբերի 21-ին Ռուսաստանի խորհրդարանում հրապարակվեց նրա 30 անդամների դիմումը՝ հասցեագրված ԽՍՀՄ նախագահ Մ. Գորբաչովին, որով ՌԽՖՍՀ ժողովրդական պատգամավորներն անհանգստություն հայտնելով հացադուլավորների առողջական վիճակի համար, պահանջում էին ապահովել ԼՂԻՄ-ի հայ ազգաբնակչության անվտանգությունը, վերականգնել մարդի իրավունքներն ու ազատությունները: Բայց երկրի բարձրագույն ղեկավարությունը, ցուցաբերելով քար անտարբերություն, հետևողականորեն շարունակում էր որդեգրած հանցագործ քաղաքականությունը:

Համաշխարհային հասարակայնության ներկայացուցիչների և հատկապես Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի հորդորներից հետո միայն երեք շաբաթ անց՝ սեպտեմբերի 29-ին, հացադուլավորները դադարեցրին բողոքի ցնցող ակտը: Թեև այն ազդեցություն չունեցավ կենտրոնի դիրքորոշման վրա, բայց երկրի և աշխարհի հասարակայնության ուշադրությունը բևեռեց Արցախի հիմնախնդրի վրա, նպաստեց նրա միջազգայնացմանը:

Շրջափակման մեջ գտնվող Լեռնային Ղարաբաղում իրադրությունը գնալով ավելի էր սրվում: Ադրբեջանի ղեկավարությունը միութենական իշխանությունների աջակցությամբ հետևողականորեն շարունակում էր փոխել տարածաշրջանի ժողովրդագրական պատկերը: 1991 թ. հունվարին Ադրբեջանի Գերագույն խորհրդի նախագահությունը որոշում ընդունեց ԼՂԻՄ-ին հարակից ավելի քան 80%-ով հայաբնակ Շահումյանի անվան շրջանը ադրբեջանաբնակ Կասում-Իսմայիլի շրջանին միավորելու մասին: Նպատակը մեկն էր՝ վերացնելով Շահումյանի շրջանը, այն լիովին հայաթափել: Արցախում գտնվող ԽՍՀՄ ներքին զորքերի անձնակազմը, ենթարկվելով Ադրբեջանի հանրապետական կազմկոմիտեին, փաստորեն կատարում էր պատժիչ դեր՝ բռնի տեղահանելով հայ ազգաբնակչությանն իր պատմական հայրենիքից: Զանգվածային բռնությունների ալիքն իր գագաթնակետին հասավ 1991 թ. ապրիլին, երբ խորհրդային և ադրբեջանական զինված ուժերը սկսեցին Լեռնային Ղարաբաղի հյուսիսային մասի հայաբնակ գյուղերի էթնիկ զտումները, որով հակամարտությունը, ըստ էության, մտավ պատերազմական փուլ:

Օգտվելով Մոսկվայի բացարձակ աջակցությունից՝ ադրբեջանական իշխանությունները շարունակում էին գավթել հայկական նորանոր գյուղեր և բնակիչներին արտաքսել իրենց հազարամյա բնակավայրերից: 1991 թ. ապրիլ-մայիս ամիսներին ադրբեջանական օմոնը (միլիցիայի հատուկ նշանակության ջոկատներ) խորհրդային բանակի աջակցությամբ բացահայտ պատերազմ սկսեց Լեռնային Ղարաբաղի վարչական կազմից դուրս գտնվող, Ադրբեջանին ենթակա զուտ հայաբնակ Շահումյանի շրջանի և Գետաշենի ենթաշրջանի հայ բնակչության դեմ՝ իրականացնելով նախօրոք մշակված «Կոլցո» («Օղակ») օպերացիան: Այդ գործողությունը սկսվեց ապրիլի 30-ին, որին մասնակցում էին խորհրդային «Վիրաժ» և «Օբրիվ» ռազմական միավորումները, ադրբեջանական օմոնի «Դոզոր» ստորաբաժանումը, ինչպես նաև տասնյակ ավարառու հրոսակախմբեր: Նրանք նախապես գրավել էին Գետաշենի շրջակա բարձունքները, շրջափակել գյուղը: Հրաման ստանալուն պես այդ բազմաքանակ զորախումբը զրահամեքենաներով, հրասայլերով և զենքերի տարբեր տեսակներով հարձակում սկսեց հայկական գյուղերի վրա: Կատաղի մարտեր տեղի ունեցան Գետաշեն և Մարտունաշեն գյուղերում, որտեղ քաջաբար զոհվեցին հայ ժողովրդի ազատագրական պայքարի նորագույն շրջանի հերոսներ Թաթուլ Կրպեյանը, Սիմոն Աչիկգյոզյանը, Արթուր Կարապետյանը, Վալերի Նազարյանը, Զարզանդ Դանիելյանը և ուրիշ խիզախներ: Ուժերը խիստ անհավասար էին, և զավթիչները գրավեցին ու հիմնովին ավերեցին նշված երկու գյուղերը: Ոգևորված այդ «հաղթանակով»՝ ադրբեջանցիները համատարած հարձակումներ սկսեցին Հադրութի և Շահումյանի հայկական գյուղերի վրա: Մայիսի կեսերին բռնազավթվեցին այդ երկու շրջանների 24 հայկական գյուղերը: Փաստորեն 1991 թ. մայիս-հունիս ամիսներից Ադրբեջանը սկսեց ազգամիջյան պատերազմ:

1991 թ. հունիսին ԼՂՀ ժողովրդական պատգամավորների խորհրդի նիստում մշակվեց արցախահայության գոյապահպանման ծրագիր: Մոսկվայի կողմից մարզային և տեղական իշխանությունների կազմալուծման պատճառով բնակչությունը չէր կարողանում ինչպես հարկն է դիմադրություն ցույց տալ ադրբեջանական հրոսակախմբերին, որոնք սպառնում էին մեկ ամ-

սում բռնի տեղահանել Արցախի ողջ հայությանը: Նստաշրջանը պահանջեց վերականգնել մարզային և տեղական իշխանությունները, գլխավորել բնակչության ազատագրական պայքարը: Հուլիսի վերջերին ստեղծվեցին ինքնապաշտպանության ընդհատակյա կոմիտե և ինքնապաշտպանական ուժերի շտաբ: Դրանք մարզի բոլոր շրջաններում կազմակերպեցին զինված ջոկատներ:

Նույն ժամանակաշրջանում՝ 1991 թ. հուլիս-օգոստոս ամիսներին, խորհրդային զինված ուժերի հետ սերտ համագործակցությամբ Արցախում շարունակվում էր ադրբեջանական գրոհայինների կողմից հայկական խաղաղ գյուղերի տեղահանությունը, բնակչության կողոպուտն ու գերեվարումը: Օգոստոսի 13-ին անօրինակ սխրագործությամբ աչքի ընկավ Մարտակերտի շրջանի Հաթերք գյուղի կանանց «Փարանձեմ» ջոկատը՝ գերի վերցնելով այնտեղ թալանով զբաղվող ԽՍՀՄ ՆԳՆ ներքին զորքերի 30 հոգանոց մի դասակ: Կենտրոնի (անձամբ ԽՍՀՄ ՆԳ նախարար Բ. Պուգոյի) հետ տեղի ունեցած երկարատև բանակցությունների արդյունքում դասակը փոխանակվեց հայ պատանդների հետ:

Այս օրհասական պայմաններում է՛լ ավելի հուժկու էր հնչում երկրի մարդասեր հասարակայնության բողոքի ձայնն ի պաշտպանություն ծանրագույն վիճակում հայտնված Արցախի հայության ազատագրական պայքարի: Դարձյալ հայության կողքին էին նրա ջերմ բարեկամները՝ ակադեմիկոս Անդրեյ Սախարովի գլխավորությամբ:

Բայց հայ ժողովրդի ազնիվ բարեկամների տագնապները հանդիպում էին ոչ միայն բարձրագույն իշխանությունների, այլև մեծապետական գաղափարներով սնուցված բաղմաթիվ գործիչների արհամարհանքին, որոնք շարունակում էին բացահայտ թշնամանք տածել հայության ազատագրական պայքարի հանդեպ: Դրանց թվում էին ադրբեջանական մարդասպան ոհմակների ջերմ պաշտպան, հայության ազատագրական գործի նպատակամետ հակառակորդ Վիկտոր Իլյուխինը, մեծ ու փոքր ուրիշ պաշտոնյաներ՝ Անատոլի Լուկյանովը, Սերգեյ Բաբուրինը, Ամանգելդի Իմանովը, Եվգենի Պրիմակովը, գեներալ Ռոխլինը և այլոք:

ԲԱԺԻՆ ՁՈՐՐՈՐԴ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ: ԱՐՑԱԽԻ ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ (1991-2011 ԹԹ.)

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՈՒՄԸ

ա. Հայաստանի անկախության հռչակագիրը: *1990 թ. օգոստոսի 23-ին Հայաստանի Գերագույն խորհրդի առաջին նստաշրջանն ընդունեց «Հռչակագիր Հայաստանի անկախության մասին», որով դրվեց Հայաստանի անկախության գործընթացի սկիզբը:*

Հռչակագիրը, որ կարևոր իրավական փաստաթուղթ էր դեպի անկախություն տանող ճանապարհին և նախանշում էր Հայաստանի քաղաքական, տնտեսական, մշակութային զարգացման ուղիները, բաղկացած էր 12 կետից:

Հռչակագրի քաղաքական բաժնում նշվում էր, որ ՀԽՍՀ-ն վերանվանվում է Հայաստանի Հանրապետություն (կրճատ՝ Հայաստան, այսինքն այնպես, ինչպես հանրապետությունը կոչվել էր 1918 թվականին): Այսպիսով, Հայաստանի պատմության մեջ սկսվում էր երրորդ հանրապետության շրջանը (առաջինը՝ 1918-1920, երկրորդը՝ 1920-1991): Կարևոր է նշել, որ թեև Խորհրդային Հայաստանը դեռևս ԽՍՀՄ կազմում էր և չէր օգտվում իրական պետական անկախությունից, բայց այդ շրջանում ձեռք բերված հաջողությունների հիմքի վրա էր, որ հնարավոր եղավ կյանքի կոչել երրորդ հանրապետությունը:

Հռչակագրի հատուկ հոդվածով ընդունվում էր հանրապետության օրենքների գերակայությունը ԽՍՀՄ օրենքների նկատմամբ: Եթե ԽՍՀՄ տվյալ օրենքը չէր հաստատված Հայաստանի Գերագույն խորհրդի կողմից, ապա այն չէր կարող գործել հանրապետությունում: Պետական խորհրդանիշներ հաստատվեցին Հայաստանի առաջին Հանրապետության դրոշն ու զինանշանը: Հայաստանը պետք է վարեր ակտիվ արտաքին քաղաքականություն, ունենար իր դիվանագիտական ներկայացուցչությունները տարբեր երկրներում:

Փաստաթղթի տնտեսական բաժնում նշվում էր, որ Հայաստանի տարածքում հողը, նրա ընդերքը, ձեռնարկությունները համարվում են հայ ժողովրդի սեփականությունը: Երկրի տնտեսության հիմքում պետք է ընկած լինեն մասնավոր սեփականատիրական և ազատ շուկայական հարաբերությունները: Հողը, իբրև մասնավոր սեփականություն, պետք է տրվեր գյուղացուն: Ձեռնարկությունների մի մասը ենթակա էր սեփականաշնորհման:

Հատուկ կետով արձանագրվում էր, որ Հայաստանը պետք է ունենա իր մասնաբաժինը ԽՍՀՄ զինված ուժերի միջոցներից: ՀՀ-ն պետք է ունենար սեփական դրամական համակարգ:

Մշակութային բաժնում հատուկ ուշադրություն էր հատկացվում հայերենի, իբրև պետական լեզվի կիրառման հարցին: Հանրապետությունում ներքին ամբողջ գործավարությունը պետք է կատարվեր միայն հայերենով:

Հռչակագիրն արտոնում էր մարդու իրավունքների հարգում, խղճի, կուսակցությունների, ժողովների, մամուլի ազատություն: Վերականգնվում էին Հայ Առաքելական եկեղեցու իրավունքները: Հատուկ հոդված մտցվեց 1915 թ. Հայոց ցեղասպանության և հայկական տարածքների մասին: Հռչակագիրը հաստատում էր Հայաստանի վճռականությունը՝ Արցախն իր տարածքի անբաժանելի մասը ճանաչելու վերաբերյալ: Մինչև նոր սահմանադրության (հիմնական օրենքի) ընդունումը հռչակագիրը ծառայելու էր իբրև ծրագրային փաստաթուղթ:

բ. Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան պետություն: ԽՍՀՄ փլուզումը: 1989-91 թվականներին Խորհրդային Միության ծայրամասերում առաջացան ազգամիջյան հակասությունների, լարվածության մի շարք օջախներ, որոնք գնալով վերածվեցին անկախության համար պայքարի կենտրոնների: Դրանցից առաջիններից մեկը Հայաստանի և Ադրբեջանի միջև առաջացած հակասություններն էին՝ կապված Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի հետ: Մյուսները Մերձբալթյան հանրապետություններն էին՝ Լատվիան, Լիտվան և Էստոնիան, ինչպես նաև կովկասյան տարածաշրջանը՝ գլխավորապես մի կողմից Վրաստանի, մյուս կողմից՝ Աբխազիայի ու Հարավային Օսեթիայի միջև եղած հակասություններով: Այս ամենի հետևանքով

և մի շարք ուրիշ պատճառներով արդեն 1991 թ. գարնանը ԽՍՀՄ-ը գտնվում էր փլուզման եզրին: Երկրի ղեկավարությունը ջանքեր էր գործադրում Միությունը փրկելու համար: Այդ նպատակով Մ. Գորբաչովը որոշեց 1991 թ. մարտի 17-ին Խորհրդային Միությունում անցկացնել հանրաքվե, որի մասնակիցների մեծ մասը կողմ արտահայտվեց նորացված Խորհրդային Միության պահպանման օգտին՝ դիտելով այն որպես ինքնավար հանրապետությունների միություն (ֆեդերացիա): Հանրաքվեին չմասնակցեցին և այն մերժեցին Մերձբալթյան երեք հանրապետությունները, Վրաստանը, Հայաստանը և Մոլդովան: Գորբաչովը 1991 թ. ապրիլին բանակցային գործընթաց սկսեց խորհրդային ինքնիշխան հանրապետությունների Միություն ստեղծելու համար: Պայմանագրի ստորագրումը նշանակվեց օգոստոսի 20-ին:

1991 թ. օգոստոսին ԽՍՀՄ-ի հետադիմական ուժերը կազմակերպեցին խռովություն՝ երկիրը կանգնեցնելով ռազմական բռնապետություն հաստատելու սպառնալիքի առջև: Օգոստոսի 19-ի առավոտյան օգտվելով այն հանգամանքից, որ երկրի նախագահը արձակուրդը անցկացնում էր Ղրիմում, հայտարարվեց, թե նա վատառողջության պատճառով չի կարող կատարել երկրի նախագահի պարտականությունները, և դրանք անցնում են փոխնախագահ Գ. Յանաևին: Երկրի կառավարման համար ստեղծվեց Արտակարգ դրության պետական կոմիտե (ԱԴՊԿ): Օգոստոսի 19-ին զորքը մտավ Մոսկվա: Ռուսաստանի Դաշնության նախագահ Բորիս Ելցինը երկրի քաղաքացիներին ուղղված դիմումի մեջ կատարվածը համարեց «հակասահմանադրական հեղաշրջում»: Օգոստոսի 21-ին խռովարարները ձերբակալվեցին: Մ. Գորբաչովը Ղրիմից վերադարձավ Մոսկվա:

Փաստորեն ժողովրդավարների վճռականության շնորհիվ պահպանողական ուժերի հեղաշրջման փորձը ձախողվեց: Մոսկվայում ժողովրդավարական ուժերի հաղթանակը արագացրեց կոմունիստական կուսակցության միանձնյա իշխանության և խորհրդային կայսրության փլուզումը: Օգոստոսյան դեպքերից հետո ՌԽՍՖՀ նախագահ Բ. Ելցինի հրամանագրով արգելվեց ԽՄԿԿ-ի գործունեությունը Ռուսաստանի տարած-

քում: Իր գործունեությունը դադարեցրեց նաև ՀԿԿ-ն: Ելնելով Հայաստանի անկախության մասին Հռչակագրի դրույթներից ու նպատակներից, ինչպես նաև բացահայտ հակահայկական քաղաքականություն վարող կենտրոնից ձերբազատվելու և ազգի շահերից բխող քաղաքականություն վարելու անհրաժեշտությունից՝ Հայոց խորհրդարանը որոշեց 1991 թ. սեպտեմբերի 21-ին Հանրապետության տարածքում անցկացնել հանրաքվե՝ ԽՍՀՄ-ի կազմից դուրս գալու և անկախանալու հարցով: Հանրապետության բնակչության ճնշող մեծամասնությունը, այսինքն 2 մլն 43 հազար մարդ (կամ քվեարկության իրավունք ունեցողների 94,39 տոկոսը) «այո» ասաց անկախությանը: Հանրաքվեի արդյունքների հիման վրա 1991 թ. սեպտեմբերի 23-ին Հանրապետության Գերագույն խորհուրդը Հայաստանը հռչակեց անկախ պետություն: Այսպիսով, 70-ամյա ընդմիջումից հետո վերականգնվեց Հայաստանի անկախությունը:

Նախկին խորհրդային հանրապետությունների օրինակով Հայաստանում ևս մտցվեց նախագահական կառավարման համակարգ: 1991 թ. հոկտեմբերի 16-ին այստեղ առաջին անգամ անցկացվեցին նախագահական այլընտրանքային ընտրություններ՝ վեց թեկնածուների մասնակցությամբ: Արդյունքում ձայների ճնշող մեծամասնությամբ (83 տոկոս) Հանրապետության նախագահ ընտրվեց Գերագույն խորհրդի նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը:

Անկախության ուղին բռնած Հանրապետությանը ծանր փորձություններ էին սպասվում: Այն փաստորեն կտրվել էր նախկին միութենական տնտեսական համակարգի բոլոր օղակներից: 1991 թ. նոյեմբերին հերթական անգամ փակվեց Ադրբեջանից եկող գազամուղը: Հայաստանի էներգետիկ շրջափակումը գնալով ավելի մեծ չափեր ընդունեց: Կանգ առան Հանրապետության գրեթե բոլոր ձեռնարկությունները, ուսումնական հաստատություններում դադարեցին պարապմունքները, բնակչությունը զրկվեց ջեռուցումից: Գազամուղի փակումից բացի ընդհատվեց նաև երկաթուղային կապը: Հայաստանի տնտեսությունը կանգնեց կազմալուծման լուրջ վտանգի առաջ: Օրըստ-օրե ծանրանում էր ազգաբնակչության սոցիալական վիճակը:

Իսկ տարածաշրջանում լարվածությունը գնալով ավելի էր սրվում:

Հանրապետության համար այսպիսի ծանր պայմաններում, 1991 թ. դեկտեմբերի 8-ին, Մինսկի մոտակայքի Բելովեժսկ բնակավայրում երեք սլավոնական հանրապետությունների՝ Ռուսաստանի, Ուկրաինայի և Բելառուսի ղեկավարները ստորագրեցին համաձայնագիր՝ ԽՍՀՄ-ի գոյությունը դադարեցնելու մասին: Դրանով իրականացավ ԽՍՀՄ-ի փլուզումը: Միաժամանակ հայտարարվեց միջազգային համագործակցության նոր սուբյեկտի՝ Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) կազմավորման մասին: Միութենական նախկին հանրապետություններից Մինսկի համաձայնագրին առաջինն արձագանքեց Հայաստանի Հանրապետությունը, որը ողջունեց ԱՊՀ-ի ստեղծումը՝ հայտնելով նրան միանալու իր պատրաստակամությունը:

1991 թ. դեկտեմբերի 21-ին Ղազախստանի մայրաքաղաք Ալմա-Աթայում 11 ինքնիշխան պետություններ՝ Ռուսաստանը, Ուկրաինան, Բելառուսը, Ղազախստանը, Ուզբեկստանը, Տաջիկստանը, Ղրղզստանը, Թուրքմենստանը, Ադրբեջանը, Մոլդովան և Հայաստանը ստորագրեցին համաձայնագիր ԱՊՀ ստեղծման մասին: Այլևս գոյություն չունեցող երկրի նախագահ Մ. Գորբաչովին մնում էր հրաժարական տալ:

գ. Պետականության կայացման գործընթացի սկիզբը: *Անկախության հռչակումից կարճ ժամանակ անց ՀՀ-ն ստացավ համընդհանուր միջազգային ճանաչում: Սկսվեց Հայոց անկախ հանրապետության պետական շինարարությունը: «Անկախ պետության հիմնադրույթների մասին» ՀՀ սահմանադրական նոր օրենքով սահմանվում էր իշխանության պետական կարգը, ապահովվում էր օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների տարանջատումը: Դեռևս 1991 թ. օգոստոսի 1-ին ընդունվել էր «ՀՀ նախագահի մասին» օրենքը, իսկ նույն թվականի նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին «ՀՀ Գերագույն խորհրդի» և «Կառավարության կառուցվածքի մասին» օրենքներով սահմանվեցին իշխանության պետական բարձրագույն մարմինների գործունեության շրջանակները:*

դ. ՀՀ Սահմանադրության ընդունումը: *Հանրապետության*

պետական-քաղաքական կյանքի կարևոր իրադարձություններից էր պետության հիմնական օրենքի՝ ՀՀ Սահմանադրության ընդունումը: Քանի որ գործող սահմանադրությունը հակասում էր Անկախության մասին հռչակագրի սկզբունքներին, ուստի ՀՀ խորհրդարանը ստիպված էր այդ հիմնական իրավական փաստաթղթում անընդհատ կատարել փոփոխություններ ու շտկումներ: Օրենսդրական փակուղուց դուրս գալու նպատակով խորհրդարանը դեռևս 1990 թ. դեկտեմբերին ընդունել էր «Հայաստանի անկախության մասին» առաջին սահմանադրական օրենքը, որի համաձայն մինչև նոր սահմանադրության ընդունումը դադարեցվում էր սահմանադրական այն դրույթների գործողությունը, որոնք հակասում էին հռչակագրի հիման վրա ընդունված օրենքներին:

Ակնհայտ էր, որ միայն փոփոխություններով հնարավոր չէր լիովին բարեփոխել նախորդ սահմանադրությունը: Ուստի անհրաժեշտ էր ունենալ նորը: Այդ նպատակով 1990 թ. նոյեմբերի 15-ին ստեղծվել էր սահմանադրական հանձնախումբ՝ նոր սահմանադրության նախագծի մշակման համար: Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի հավանությանն արժանանալուց հետո Սահմանադրության մշակված տարբերակը 1995 թ. հուլիսի 5-ին դրվեց համաժողովրդական հանրաքվեի:

Նոր սահմանադրությունն, իր թերություններով հանդերձ, կարևոր երևույթ էր: Այն դրեց ամբողջատիրական համակարգից դեպի ժողովրդավար պետություն անցնելու իրավական հիմքը:

Սկսեցին ձևավորվել պետաիրավական նոր կառույցներ: ՀՀ Սահմանադրությունը նախատեսում էր նախագահական հանրապետության մոդելը՝ գործադիր, օրենսդիր և դատական իշխանությունների տարանջատումով: Բարձրագույն օրենսդիր մարմինը՝ Գերագույն խորհուրդը, վերանվանվեց Ազգային ժողով:

Սահմանադրությունն իրավական ձևակերպում տվեց քաղաքական նոր համակարգին, հռչակեց սեփականության բոլոր ձևերի հավասարություն, սահմանեց Հայաստանի քաղաքացիների իրավունքներն ու պարտականությունները: Նա հռչակում էր, որ Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական և իրավական պետություն է:

ՀՀ Սահմանադրությամբ հաստատվեցին Հայաստանի երրորդ Հանրապետության խորհրդանիշները՝ դրոշը, զինանշանը և օրհներգը: Պետական դրոշ ճանաչվեց եռագույնը՝ կարմիր, կապույտ, նարնջագույն՝ հորիզոնական հավասար չերտերով, որն առաջին հանրապետության դրոշն էր: Այնուհետև ընդունվեց ՀՀ զինանշանը, որի կենտրոնում վահանը պահող արծիվն ու առյուծն են. պատկերված է Արարատ լեռը՝ Նոյյան տապանով և պատմական Հայաստանի չորս թագավորությունների զինանշաններով, սուր, ճյուղ, հասկերի խուրձ, չղթա և ժապավեն: Որպես օրհներգ ընդունվեց առաջին հանրապետության պետական հիմնը՝ «Մեր հայրենիքը»:

Հետագայում հանրապետության քաղաքական և սոցիալ-տնտեսական կյանքի զարգացումներն առաջացրին սահմանադրության մեջ բարեփոխումներ կատարելու անհրաժեշտություն:

ՀՀ-ի տարածքային կառավարման կառուցվածքի բարելավման և տեղերում ինքնակառավարման խորացման նպատակին էին ծառայում 1995 թ. դեկտեմբերին կատարված վարչատարածքային փոփոխությունները և տարածքային նոր միավորումների՝ մարզերի ու համայնքների հիմնումը: Հանրապետության չուրջ չորս տասնյակի հասնող շրջանների միավորման միջոցով ստեղծվեցին 10 մարզեր՝ Արագածոտնի, Շիրակի, Սյունիքի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, Արարատի, Արմավիրի, Վայոց Ձորի, Տավուշի: Քաղաքամայր Երևանը նույնպես ստացավ մարզի կարգավիճակ:

Սկսվեց նոր դատական համակարգի կազմավորումը, որի առաջին փուլն ավարտվեց 1999 թվականին: Այդ ուղղությամբ կարևոր քայլեր էին առաջին ատյանի, վերաքննիչ, վճռաբեկ դատարանների, ինչպես նաև սահմանադրական, տնտեսական, վարչական դատարանների հիմնումը, դատախազության համակարգի վերափոխմանն ուղղված միջոցառումները: Դատական բարեփոխումների առաջին փուլի շրջանակներում ընդունվեցին Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության, ՀՀ քրեակատարողական օրենսգրքերը, դատարանակազմության, դատավորի կարգավիճակի, արդարադատության խորհրդի, դատախազության, փաստաբանական ծառայության և այլ օրենքներ: Այս իրավական ակտերը ուժի մեջ մտնելուց հետո 1999 թ. հունիսի 12-ին ներդրվեց եռաստիճան

դատական համակարգը, սկսեց գործել վերաքննության ինստիտուտը, որպիսին չէր եղել խորհրդային ժամանակաշրջանում:

ե. Հայոց ազգային բանակի կազմավորումը: Առաջնահերթ նշանակություն ստացավ ազգային պետության անվտանգության և անկախության պահպանման հարցը, որի երաշխիքը կարող էր լինել մարտունակ բանակը: Հայոց բանակի ակունքներում կանգնած էին դեռևս 1990 թվականի սեպտեմբերին կազմավորված Երևանի հատուկ գունդը և Արարատի, Գորիսի, Վարդենիսի, Իջևանի ու Մեղրու ինքնապաշտպանական վաշտերը: 1992-1993 թթ. երկրապահ կամավորական ջոկատների և բանակ զորակոչված զինակոչիկների միավորումով ստեղծվեց շարժունակ և կարգապահ բանակ: 1992 թվականի հունվարի 28-ին կառավարությունն ընդունեց «ՀՀ պաշտպանության նախարարության մասին» պատմական որոշումը, ազդարարեց ազգային բանակի ստեղծման սկիզբը: Նորաստեղծ նախարարության ենթակայությանը հանձնվեցին ընդամենը զինվորական չորս միավորներ՝ ՆԳՆ պարեկապահակային գունդը, հատուկ նշանակության օպերատիվ գունդը, քաղաքացիական պաշտպանության գունդը և հանրապետական զինկոմիսարիատը: Պաշտպանության նախարարության կենտրոնական ապարատը՝ գլխավոր շտաբը, վարչություններն ու առանձին բաժինները ստեղծվեցին ավելի ուշ: Դեռևս 1991 թ. դեկտեմբերի 5-ին ՀՀ Հանրապետության պաշտպանության առաջին նախարար էր նշանակվել Վազգեն Սարգսյանը: 1992 թ. մայիսին պաշտպանության նախարարությունը «Զինապարտության մասին» օրենքով հիմք դրեց բանակը ժամկետային զինծառայողներով համալրելու կարգին: Նոր կազմավորված զորամասերի անձնակազմը 1992 թ. մայիսի 28-ին Հանրապետության հրապարակում հանդիսավոր պայմաններում տվեց առաջին զինվորական երդումը:

Անկախ Հայաստանի զինված ուժերի կանոնավոր զորամիավորումներն ու զորատեսակները, ինչպես նաև սպայական կազմը ձևավորվեցին գերազանցապես խորհրդային բանակի կազմակերպական հիմքի վրա: Նորաստեղծ հայկական բանակի սպառազինությունը և ռազմական տեխնիկան ժառանգություն էր մնացել նույն խորհրդային բանակից: Աստիճանաբար աճեց զինվորականների թիվը: Հաշվի առնելով Հայաստանի տարածքում ձևավորված ռազմաարդյունաբերական համալիրի գիտատեխնիկական և տեխնոլոգիական բարձր մակարդակը՝ աշխատանքներ ծավալվեցին դրա պահպանման ու զարգացման ուղղությամբ: Առանձնահատուկ ուշադրություն էր դարձվում բանակի մարտական պատրաստականության կատարելագործմանը: Հայաստան վերադարձան հարյուրավոր հայազգի սպաներ, որոնք մինչ այդ ծառայում էին խորհրդային բանակի տարբեր զորամիավորումներում: Նրանք լծվեցին բանակաշինության, հայրենիքի անվտանգության ապահովման գործին: Նրանց թվում էին գեներալներ Գ. Դալիբալթայանը, Մ. Հարությունյանը, Ն. Տեր-Գրիգորյանցը, Ք. Իվանյանը, Յու. Խաչատուրովը, Ա. Տեր-Թադևոսյանը (Կոմանդոս) և շատ ուրիշներ: Հետագայում կազմակերպվեց նաև սպայական կադրերի պատրաստման բարձրագույն դպրոցը, ամրապնդվեց նյութատեխնիկական բազան: Հայոց ազգային բանակի ստեղծման գործում մեծ եղավ պաշտպանության նախարարներ Վ. Սարգսյանի, Վ. Մանուկյանի և Ս. Սարգսյանի դերը: Բանակը աստիճանաբար զինվեց ժամանակակից ռազմական տեխնիկայով և ամուր պատվար դարձավ անկախության պաշտպանության գործում: Հայոց բանակը կազմավորվեց անկախ պետականության վերականգնման գործընթացում և հանդիսացավ նրա ամենամեծ ձեռքբերումը: Լավ կազմակերպված հայոց բանակում ծառայելը դարձավ յուրաքանչյուր հայ երիտասարդի պատվի գործը:

1994 թ. զինադադարից հետո ադրբեջանական իշխանությունների անդադար հնչեցրած ռազմատենչ հայտարարությունները, ԼՂՀ-ի և ՀՀ-ի դեմ ռազմական գործողություններ վերսկսելու սպառնալիքներին ու ագրեսիվ նկրտումներին ՀՀ զինված ուժերը հակադրում էին մարտական բարձր պատրաստվածությունը, մարտունակությունն ու զգոնությունը:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԱՐՑԱԽԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՆՎԱՃՈՒՄԸ

ա. ԼՂՀ-ի անկախության հռչակումը և պետականության ձևավորումը: *Սոցիալ-տնտեսական ծանր կացության մեջ հայտնված Հայաստանի Հանրապետությունն իր ունեցած բոլոր հնարավոր միջոցներով օգնում էր Արցախին՝ Ադրբեջանի դեմ մղվող ազատագրական պայքարում:*

Օգտվելով ԽՍՀՄ ղեկավարության բացարձակ աջակցությունից՝ ադրբեջանական իշխանությունները շարունակում էին զավթել հայկական գյուղերը և բնակիչներին արտաքսել իրենց բուն հայրենիքից:

1991 թ. ապրիլ-մայիս ամիսներին ադրբեջանական միլիցիայի հատուկ նշանակության ջոկատները (ռուս.՝ ՕՄՕՆ) խորհրդային բանակի աջակցությամբ բացահայտ պատերազմ սկսեցին Շահումյանի շրջանի և Գետաշենի ենթաշրջանի հայ բնակչության դեմ:

Փաստորեն 1991 թ. մայիսին Ադրբեջանի կողմից հրահրվեց ղարաբաղա-ադրբեջանական պատերազմ:

1991 թ. հուլիսին ստեղծվեցին ինքնապաշտպանության ընդհատակյա կոմիտե և ինքնապաշտպանական ուժերի շտաբ: Մարզի բոլոր շրջաններում կազմակերպվեցին զինված ջոկատներ, որոնք հետագայում համախմբվեցին մեկ միասնական հրամանատարության ներքո:

1991 թ. օգոստոսի 30-ին Բաքվում հրավիրված՝ Ադրբեջանի Գերագույն խորհրդի արտահերթ նստաշրջանն ընդունեց անկախության վերականգնման մասին հռչակագիր, որով 1918-1920 թթ. մուսավաթական Ադրբեջանի սահմաններում ազդարարվում էր անկախություն: Փաստորեն Բաքուն հրաժարվում էր Խորհրդային Ադրբեջանի իրավահաջորդը լինելուց: Դա նշանակում էր, որ նրա կազմում չէին կարող լինել ո՛չ Նախիջևանը,

ո՛չ Լեռնային Ղարաբաղը, որովհետև այդ ժամանակ դրանք Ադրբեջանի սահմաններում չէին եղել: Ուստի անհրաժեշտ էր շտապել և ձեռքից բաց չթողնել հարմար պատմական պահը:

1991 թ. սեպտեմբերի 2-ին Ստեփանակերտում տեղի ունեցավ Լեռնային Ղարաբաղի պատգամավորների մարզային և Շահումյանի շրջանային խորհուրդների համատեղ նստաշրջանը: Ընդունվեց «Հռչակագիր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման մասին» որոշում: Նախկին ԼՂԻՄ-ի և Շահումյանի շրջանի տարածքում հռչակվեց անկախ հայկական պետություն՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը (ԼՂՀ):

Նույն թվականի դեկտեմբերի 10-ին տեղի ունեցավ անկախության հանրաքվե, որին մասնակցեց բնակչության ձայնի իրավունք ունեցողների 80 %-ը, իսկ քվեարկողների 99 %-ից ավելին ձայն տվեց անկախության օգտին:

1991 թ. դեկտեմբերի 28-ին տեղի ունեցան Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն խորհրդի (հետագայում՝ Ազգային ժողով) պատգամավորների ընտրություններ: 1992 թ. հունվարի 6-ին կայացավ Հանրապետության առաջին գումարման Գերագույն խորհրդի առաջին նստաշրջանը, որն ընդունեց ԼՂՀ անկախության հռչակագիրը:

Հունվարի 8-ին ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահ ընտրվեց 33-ամյա պատմաբան Արթուր Մկրտչյանը: Ստեղծվեց ԼՂՀ նախարարների խորհուրդ՝ Օլեգ Եսայանի վարչապետությամբ:

1992 թ. հունիսի 2-ին ԼՂՀ Գերագույն խորհուրդը հաստատեց պետական դրոշը, իսկ նոյեմբերի 17-ին՝ երկրի զինանշանն ու օրհներգը: ԼՂՀ դրոշը եռագույն է՝ կարմիր, կապույտ, նարնջագույն՝ սպիտակ գույնի հնգատամ սանդղանման զարդանախշով: Հայաստանի Հանրապետության օրինակով աստիճանաբար կազմավորվեց դատական համակարգը: Հանրապետության անվտանգության երաշխավորը ԼՂՀ զինված ուժերն էին, որոնք ազատագրական պայքարում իրենց պսակել էին հաղթանակների փառքով:

Առաջնային համարվեց ղարաբաղյան հակամարտության գոտում խաղաղ բանակցությունների գործընթացը: Վերջինս դարձավ Եվրոպայի անվտանգության և համագործակցության

կոմիտեի (ԵԱՀԿ) քննարկման առարկա: Բայց Ադրբեջանի իշխանությունները մերժում էին Լեռնային Ղարաբաղի խնդրի քաղաքական մեթոդներով կարգավորմանն ուղղված ամեն մի առաջարկ՝ առաջ քաշելով Արցախը կրկին իրենց ենթարկելու անիրական պահանջներ: Ավելին, Թուրքիայի հովանավորությամբ ու աջակցությամբ ադրբեջանցիներն իրենց ռազմական բազաներից սկսեցին անընդհատ ռմբակոծել Արցախի բնակավայրերը: Խոջալուից, Շուշիից և Աղդամից ամեն օր ռմբակոծվում էր Ստեփանակերտը՝ պատճառելով ավերածություններ և բազում մարդկային զոհեր: Համապարփակ շրջափակումն ու շուրջօրյա հրետակոծություններն ավերում ու կաթվածահար էին անում Արցախի տնտեսությունը: Ուստի առանց հակառակորդի ռազմական հենակետերի ու կրակակետերի վերացման հնարավոր չէր ապահովել բնակչության անվտանգությունը:

բ. Արցախի ազատագրական մարտերը: Հայաստանի Հանրապետության ռազմա-քաղաքական և դիվանագիտական աջակցությունը մարտնչող Արցախին: Կազմակերպական լուրջ աշխատանքներ տանելուց հետո ԼՂՀ-ի ինքնապաշտպանական ուժերը 1992 թ. հունվարից ձեռնամուխ եղան Ստեփանակերտի քաղաքամերձ ադրբեջանական կրակակետերի ոչնչացմանը: Փետրվարին ԼՂՀ Գերագույն խորհուրդը հատուկ որոշում ընդունեց ինքնապաշտպանության ուժերի մասին և հանձնարարեց զինված ջոկատները դիտել որպես ԼՂՀ ինքնապաշտպանական ուժեր և դրանք համախմբել մեկ միասնական հրամանատարության ներքո: Զինված ուժերի ընդհանուր հրամանատար նշանակվեց գնդապետ Արկադի Տեր-Թադևոսյանը (Կոմանդոս): Կազմակերպվեց նաև ԼՂՀ պաշտպանության խորհուրդ՝ Արթուր Մկրտչյանի նախագահությամբ: Այդ կարևոր ձեռնարկումը անմիջապես ունեցավ դրական մեծ արդյունքներ:

Սկսեց գրվել ազգային բանակի մարտական փայլուն կենսագրությունը, որի առաջին էջը եղավ Ստեփանակերտը շրջապատող կրակակետերի վերացման ուղղությամբ ծավալված ռազմական գործողությունների հաջող իրականացումը:

1992 թ. հունվարի 11-ին հայոց մարտական ուժերը լուրջ հարված հասցրին Մալիբեյլուին և Ղուշչուլարին, որտեղի կրակակետերից ռմբակոծվում էին ոչ միայն Ստեփանակերտը, այլև

Ասկերանի շրջանի մի շարք գյուղեր: Ստեփանակերտը ռմբակոծվում էր հատկապես նրա Կրկժան թաղամասից: Թշնամու կրակակետը լռեցնելու համար կենտրոնացվեցին կամավորական ջոկատներ: Հայ մարտիկները փոքրաթիվ ուժերով 1992 թ. հունվարի 19-20-ը լիովին ազատագրեցին Կրկժանը: Այդ հաղթանակը քաղաքական և հոգեբանական կարևոր նշանակություն ունեցավ:

Նշանակալից էր նաև Քարինտակի հերոսամարտը: 1992 թ. հունվարին թեժ մարտեր տեղի ունեցան Քարինտակի մատույցներում: Շուշիի բարձունքից ադրբեջանցիները գրոհում էին, բայց ներքևում գտնվող հերոսական գյուղը մնում էր անառիկ: Կարծես կրկնվում էր 1905-1906 թթ. ինքնապաշտպանական կռիվների պատմությունը, երբ ադրբեջանցիները, չնայած մեծ ջանքեր գործադրելուն, չկարողացան գրավել գյուղը: Քարինտակի ինքնապաշտպանական ջոկատի հրամանատարն էր ԼՂՀ Գերագույն խորհրդի պատգամավոր Վ. Առուշանյանը: Թշնամին լայնածավալ հարձակում սկսեց 1992 թ. հունվարի 25-ի լույս 26-ի գիշերը: Երբ մինչև ատամները զինված 250 ադրբեջանցիներ զրահամեքենաներով մոտեցան բնակավայրի մատույցներին, գյուղի պաշտպանները ստիպված նահանջեցին առաջավոր դիրքերից: Քարինտակին օգնության հասավ Շուշի ինքնապաշտպանական ջոկատը՝ Ս. Հայրյանի հրամանատարությամբ: Ի վերջո, ադրբեջանցիները 12-ժամյա արյունահեղ մարտում պարտություն կրեցին և մարտադաշտում թողնելով 74 սպանված ու 70 վիրավոր նահանջեցին:

Քարինտակում հայերի հաղթանակը ահ ու սարսափ առաջ բերեց ադրբեջանցիների շրջանում: Գյուղը հետագայում կարևոր հենակետ դարձավ Շուշի քաղաքի կրակակետերը լռեցնելու գործում:

ԼՂՀ պաշտպանական ուժերը փետրվարի 11-ին և 12-ին անցնելով հարձակման՝ վնասազերծեցին Ստեփանակերտի մոտակա ադրբեջանական հենակետերը: Կրակակետերի ոչնչացմանը ակտիվորեն մասնակցում էին նաև Երևանի, Պռոշյան գյուղի և Աբովյանի ազատամարտիկները:

Թշնամին շարունակում էր Ստեփանակերտը ռմբակոծել հրթիռային կայանքներից: Միայն 1992 թ. փետրվարի 19-ին ԼՂՀ

մայրաքաղաքի վրա արձակվեց 300 հրթիռ:

Ստեփանակերտի համար ամենավտանգավոր հենակետը Խոջալուն էր, որը փակում էր Ստեփանակերտ-Ասկերան մայրուղին: ԼՂՀ ինքնապաշտպանական ջոկատները 1992 թ. փետրվարի 15-ին դիրքավորվելով Խոջալուի արևմտյան մասի երկայնքով՝ ադրբեջանական կողմին պահանջեցին թողնել և հեռանալ: Ի պատասխան ադրբեջանցիները սկսեցին ռմբակոծել Ստեփանակերտը:

Ադրբեջանում ներքին քաղաքական անկայունություն էր տիրում: Ժողովրդական ճակատը, ձգտելով տապալել Ա. Մութալիբովի իշխանությունը, գործում էր հաշվենկատ ու նպատակասլաց: Նա մտածում էր Խոջալուն հանձնել և դրա համար մեղադրել Ա. Մութալիբովին ու նրան զրկել իշխանությունից:

Խոջալուի կրակակետերը լռեցնելու համար ԼՂՀ ռազմական ուժերը որոշեցին առաջին հերթին հսկողության տակ վերցնել օդանավակայանը, որտեղ վաղուց իշխում էին ադրբեջանական հատուկ ջոկատայինները: 1992 թ. փետրվարի 25-ի լույս 26-ի գիշերը հայկական ջոկատները Աշոտ Ղուլյանի (Բեկոր) գլխավորությամբ հասան առաջավոր դիրքերին: Անակնկալի եկած հակառակորդը նահանջեց:

Առանց զոհերի հայ ազատամարտիկներն առաջացան դեպի օդանավակայան: Նրանք գլխավոր ճանապարհի կողմից միջանցք էին թողել, որպեսզի Խոջալուի բնակիչները հեռանային Աղդամ: Փետրվարի 26-ին մի քանի ժամվա ընթացքում հայ ինքնապաշտպանական ուժերը լիովին ջախջախեցին Խոջալուում տեղակայված ադրբեջանական ուժերը: Իշխանությունը գրավելու նպատակով Ադրբեջանի Ազգային ճակատը կազմակերպեց և իրականացրեց Խոջալուի խաղաղ բնակչության կոտորածը: Իրենց իսկ ձեռքով իրականացրած այդ գործողության մեղքը ադրբեջանական իշխանությունները փորձեցին բարդել հայկական կողմի վրա: Խոջալուն ադրբեջանցիների առաջին խոշոր պարտությունն էր: Խոշոր համալրում ստանալով՝ 1992 թ. ապրիլի 29-ին հակառակորդը զրահատեխնիկայով գրոհեց Ստեփանակերտի հարավարևմտյան դիրքերը, բայց հակահարված ստանալով՝ նահանջեց:

Այդ ճակատագրական օրերին՝ 1992 թ. ապրիլի 14-ին, չբացահայտված հանգամանքներում ողբերգական մահով կյանքից հեռացավ Արցախի Գերագույն խորհրդի նախագահ Արթուր Մկրտչյանը:

Արցախի ազատագրական մարտերի ամենանշանակալից դրվագը Շուշիի ազատագրումն էր: 1992 թ. մայիսի սկզբին ԼՂՀ մայրաքաղաքում և ուրիշ բնակավայրերում օրհասական դրություն էր: Մայրաքաղաքը սովի եզրին էր: Բնակիչներից յուրաքանչյուրը միջին հաշվով օրական ստանում էր 11 գրամ ալյուր և 2,5 գրամ չաքարավազ: Քաղաքում չկար հեղուկ վառելիք, իսկ մայիսի 1-ից լրիվ անջատվել էր էլեկտրաէներգիան: Ստեփանակերտի և հարակից բնակավայրերի անվտանգության ապահովման համար Շուշին պետք է ազատագրվեր:

Մեծ դեր ուներ ոգու ուժը: Լեգենդար քաղաքի ազատագրման գործողությունների ծրագիրը մշակվել էր խիստ գաղտնի: Դրա կազմման և իրագործման պատասխանատվությունը դրվել էր ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերի հրամանատար, գնդապետ Արկադի Տեր-Թադևոսյանի (Կոմանդոս) վրա: Գերխնդիր էր՝ Շուշիի ազատագրմամբ ճանապարհային ուղիղ կապ հաստատել Հայաստանի Հանրապետության հետ:

1992 թ. մայիսի 4-ին որոշվեց իրագործել Շուշիի գրավման «Հարսանիք լեռներում» գործողությունը: Ռազմական գործողությունը ղեկավարում էր գնդապետ Ա. Տեր-Թադևոսյանը, նրա կողքին էին գեներալ Գ. Դալիբալթայանը, շտաբի պետ Ֆ. Գզողյանը և ուրիշներ:

Թշնամին Շուշիում ուներ 2300 զինյալ, իսկ գրոհող հայկական ուժերի թիվը հասնում էր 1700-ի: Քաղաքի ազատագրման գործողություններին մասնակցում էր մոտ 60 ջոկատ: Մանրամասն հաշվի էին առնվել յուրաքանչյուր ջոկատի հնարավորությունները: Գլխավոր ուղղությունների պատասխանատուներ էին նշանակվել քաջարի հրամանատարներ Սեյրան Օհանյանը, Վիտալի Զիթչյանը, Արկադի Կարապետյանը, Աշոտ Ղուլյանը, Դուշմանը (Վարդան), Սամվել Բաբայանը, Յուրա Հովհաննիսյանը, Վալերի Բալայանը, Նվեր Զախոյանը և ուրիշներ: Հարձակումը կազմակերպվեց չորս ուղղություններով:

Մայիսի 8-ի գիշերը՝ 2-ն անց 30-ին, հրետանային կրակի ներքո սկսվեց ընդհանուր գրոհը: Հակառակորդը դիրք էր գրա-

վել Շուշի կամրջից ոչ հեռու: Աչոտ Ղուլյանը վիրավոր էր, բայց մնում էր առաջին գծում: Առավոտյան ժամը 6-ն անց 30-ին նա Ա. Տեր-Թադևոսյանին հաղորդեց, որ մոտեցել է Շուշիի բերդի պատին և շուտով կմտնի քաղաք:

Մայիսի 8-ի կեսօրին Շուշիի պաշտպանությունը ճեղքված էր հյուսիսից և արևելքից: Քաղաք մտած ջոկատները կռվում էին շուկայի շրջակայքում և կենտրոնական թաղամասերում: Ժամը 18-ին հայ ազատամարտիկներն ազատագրեցին քաղաքի կենտրոնը և ադրբեջանցիների հսկողության տակ թողեցին միայն հարավային հատվածը: Նրանք փողոցային մարտերով մոտենում էին Ս. Ամենափրկիչ (Ղազանչեցոց) եկեղեցուն, որը թշնամու կողմից վերածվել էր զինապահեստի: Մայիսի 9-ի կեսօրին թշնամին դիմեց խուճապահար փախուստի: Շուշիում կռիվների ժամանակ հակառակորդը տվեց 300 զոհ, շուրջ 700 գերի: Թշնամուց առգրավվեց կամ ոչնչացվեց մեծ թվով զրահատեխնիկա, հարյուրավոր հրթիռներ ու արկեր: Հայկական կողմն ունեցավ 70 զոհ և 120 վիրավոր:

Շուշիի ազատագրումով և հակառակորդի մյուս կրակակետերի լռեցումով Ստեփանակերտը և հարևան բնակավայրերը չունչ առան: Երկու օրում թշնամու դիմադրությունը կոտրվեց:

Շուշիի ազատագրումից հետո ռազմական գործողություններն ընդունեցին ԼՂՀ-ի և Ադրբեջանի միջև սահմանային պատերազմի բնույթ, իսկ ԼՂՀ անկախությունը դարձավ անշրջելի: Շուշիի ռազմական գործողությունը մարտական լուրջ մկրտություն էր ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերի համար: Այն իր արժանի տեղը գտավ հայ ռազմական արվեստի պատմության մեջ:

Արցախի հինավուրց մայրաքաղաքի ազատագրումն ամրապնդեց հայ ժողովրդի հավատը հաղթանակի հանդեպ, բարոյա-հոգեբանական հարված հասցրեց թշնամուն, որն այդպես էլ չկարողացավ ազատվել պարտվողի հոգեբանությունից: Շուշիի փայլուն հաղթանակը հնարավոր եղավ հայ մարտիկների անձնազոհ սխրանքների ու ոգու արիության շնորհիվ:

Պատերազմի հաղթական ավարտը արդեն մոտ էր: ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերի առջև խնդիր դրվեց՝ մի քանի օրվա ընթացքում բացել կենսական հույժ կարևորություն ունեցող Շուշի-Լաչին-Գորիս ճանապարհը: Հայ ազատամարտիկները մայիսի 15-ին ազատագրեցին Լիսագորը, իսկ մայիսի 17-ին՝ Բերդաձորի ենթաշրջանը: Հետապնդելով խուճապահար հակառակորդին՝ արցախյան ուժերը մայիսի 18-ին մտան Լաչին: Դրանով իսկ ճեղքվեց շրջափակման օղակը, և Արցախը ցամաքային ճանապարհով միացավ Հայաստանի Հանրապետությանը: Լաչինի հումանիտար միջանցքով սկսվեց Արցախին սննդամթերքի, վառելանյութի, դեղորայքի և այլ անհրաժեշտ ապրանքների առաքումը: Բացվեց «կյանքի ճանապարհը», և Արցախը հավերժ կապվեց մայր հայրենիքին: Այս հաղթանակները խթանեցին ԼՂՀ պաշտպանության բանակի կազմավորման գործընթացը:

1992 թ. հունիսի 12-ից ադրբեջանական բանակը օտարերկրյա վարձկանների աջակցությամբ և թալանչիական ջոկատների ուղեկցությամբ լայնածավալ հարձակում սկսեց ԼՂՀ հյուսիսային մասում, գրավեց Շահումյանի շրջանն ու Մարտակերտի շրջանի մեծ մասը, Ասկերանի շրջանի մի քանի գյուղեր: Մարտունու շրջանի Մարաղա գյուղում թուրք բարբարոսները գազանաբար կատարեցին բնակչության կոտորած: Ռազմակալված տարածքներում սկսվեցին հայ բնակչության կողոպուտը, խոշտանգումները, սպանությունները, բնակավայրերի ավերումները:

Այս շրջաններից մաղապուրծ փախստականների նոր հոսք ուղղվեց դեպի Հայաստանի Հանրապետություն: Ադրբեջանցիների գրաված տարածքներում սկսվեց պարտիզանական շարժում: 1992 թ. օգոստոսի 13-ից ռազմական դրություն և զորահավաք հայտարարվեց ԼՂՀ ողջ տարածքում: Օգոստոսի 15-ին ստեղծվեց Պաշտպանության պետական կոմիտե՝ Ռոբերտ Քոչարյանի գլխավորությամբ, որին վերապահվեց ոչ միայն ռազմա-քաղաքական, այլ նաև տնտեսական իշխանությունը: Սկսեց կարգավորվել տնտեսական վիճակը: Ձևնարկված միջոցառումները շուտով տվեցին դրական արդյունքներ: Վերամիավորելով ուժերը՝ ԼՂՀ ինքնապաշտպանական բանակը կարողացավ կանգնեցնել թշնամու բազմահազարանոց ուժերը Կիչան գյուղի ռազմական բնագծում և անցնել կտրուկ հակահարձակման: 1992 թ. սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին ազատագրվե-

ցին Ասկերանի և Մարտունու շրջանների մի շարք գյուղեր: 1993 թ. ապրիլին հայկական զորքերն ազատագրեցին ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող Քելբաջարի (Քարվաճառ) շրջանը, իսկ մայիս-հունիս ամիսներին՝ Մարտակերտի շրջանի՝ Թշնամու կողմից գրավված տարածքները:

1993 թ. առաջին կիսամյակի մարտական գործողությունների եզրափակիչ փուլը Մարտակերտ քաղաքի ազատագրումն էր: Հուլիսի 23-ին հայկական ուժերին հաջողվեց Թշնամուն պարտության մատնել Աղդամի մոտ: Այստեղի խմբավորման ջախջախումից հետո Թշնամին ուժ ու միջոցներ կուտակեց Ֆիզուլիի (Դիզակ) և Ջեբրայիլի շրջաններում: Հակահարձակման անցնելով՝ ԼՂՀ ռազմական ստորաբաժանումները ջախջախեցին ադրբեջանական ուժերը և ազատագրեցին Ֆիզուլիի, Ջեբրայիլի, Կուբաթլիի և Զանգելանի (Կովսական) շրջանները: Իսկ նույն թվականի հոկտեմբերի 24-ին մի քանի ուղղություններով սկսված հարձակման արդյունքում ոչնչացվեցին Հորադիզի երկաթուղային հանգույցի կրակակետերը, ազատագրվեց Հորադիզի շրջանը: Ադրբեջանական ստորաբաժանումները խուճապահար փախչում էին ռազմական գործողությունների շրջաններից՝ մեծ թվով զոհեր տալով և ռազմադաշտում թողնելով բազմաքանակ տեխնիկա: Ազատագրական այդ հաղթական երթի ժամանակ հերոսաբար զոհվեցին Լեոնիդ Ազգալդյանը, Սամվել Շահմուրադյանը, Յուրա Հովհաննիսյանը, Աշոտ Ղույյանը (Բեկոր), Վարդան Բախչյանը, Մոնթե Մելքոնյանը (Ավո), Շահեն Մեղրյանը և ուրիշ հայ քաջորդիներ:

ԼՂՀ ռազմական հաջողությունները Ադրբեջանում հանգեցրին հերթական իշխանափոխության: Ադրբեջանի նախագահ դարձավ Հ. Ալիևը: Նա սաստկացրեց հակահայկական քարոզչությունը և արտասահմանից նոր վարձկաններ հավաքագրեց, բանակը համալրեց օտարերկրյա ժամանակակից տեխնիկայով: Հակառակորդի բանակի շարքերում կռվում էին աֆղան, թուրք, ուկրաինացի, չեչեն և հյուսիսկովկասցի այլ հրոսակներ: 1993 թ. դեկտեմբերի կեսերին Ադրբեջանը լայնածավալ հարձակում սկսեց ռազմաճակատի ամբողջ երկայնքով՝ փորձելով վերադարձնել կորցրած տարածքները և բեկում մտցնել պատերազմում:

1993 թ. ամռանը Ադրբեջանի ներքին գործերի փոխնախարար Ռ. Ջավադովը բանակցել էր Աֆղանստանի վարչապետ Գ. Հեքմաթիարի հետ և վարձկաններ հավաքագրելու համար ստացել նրա համաձայնությունը: Հավաստի տվյալներով՝ Արցախում տեղաբաշխվել էին շուրջ 1500 աֆղան վարձկաններ՝ հիմնականում Գ. Հեքմաթիարի ենթակայության «Հեղը ի Էսլամի» խմբավորումից: Վարձկանները գործում էին Ֆիզուլիի, Ջեբրայիլի և Ալի Բայրամլիի շրջաններում: Նրանց շարքերում մեծ թիվ էին կազմում «արաբ աֆղանները», որոնց մեջ էր նաև հետագայում Ջեչնիայում կռված հայտնի ահաբեկիչ Խաթաբը: Վարձկանները Արցախի տարբեր շրջաններում ղեկավարում էին խառը կազմ ունեցող զորամիավորումներ, ստեղծել էին նաև արգելափակիչ ջոկատներ: Բազմամարդ է եղել չեչենական գումարտակը (հրամանատար՝ Շամիլ Բասաև), որը գտնվում էր ադրբեջանական «Դ խումբ» կոչվող դիվերսիոն զորամիավորման մեջ:

Վերսկսվեց Ռուսաստանից, Ուկրաինայից, Բելառուսից և ԱՊՀ այլ պետություններից ադրբեջանցի (ոչ միայն) կադրային սպաների Ադրբեջան տեղափոխման գործընթացը: Մեծ թվով սպաներ ու ռազմական հրահանգիչներ եկան Թուրքիայից: Միայն 1993-ի հոկտեմբերից մինչև 1994-ի մայիսը Ադրբեջանում անցկացվել էր չորս զինակոչ: Ընդլայնվել էր ազգային զինվորական կադրերի պատրաստումը Թուրքիայի ռազմաուսումնական հաստատություններում:

Ազատատենչ արցախցիները կարողացան կասեցնել հակառակորդի բոլոր հարձակումները և առանձին վայրերում հակահարձակման անցնելով՝ հսկողության տակ վերցրին նոր տարածքներ: Ավելի քան մեկամսյա համառ մարտերի ընթացքում հակառակորդը չկարողացավ ոչ մի հաջողության հասնել:

Հետագա խայտառակությունից խուսափելու համար ադրբեջանական իշխանությունները հարկադրված էին Ռուսաստանի միջնորդությամբ և Մինսկի խմբի օգնությամբ 1994 թ. մայիսին զինադադար խնդրել: 1994 թ. մայիսի 12-ի համաձայնագրով հրադադար հաստատվեց: Դադարեցին ռազմական գործողությունները և սկսվեց ԼՂՀ հակամարտության կարգավորման բանակցային փուլը:

ԼՂՀ նախագահի հրամանագրով 1996 թ. սահմանվեց պետական բարձրագույն պարգև՝ Արցախի հերոսի կոչում: Այդ կոչմանն են արժանացել՝ Սամվել Բաբայանը, Քրիստափոր Իվանյանը, Զորի Բալայանը, Վիտալի Բալասանյանը, Սամվել Կարապետյանը, Ժորա Գասպարյանը, Մանվել Գրիգորյանը, Մովսես Հակոբյանը, Արշավիր Ղարամյանը, Աշոտ Ղուլյանը (հետմահու), Պետրոս Ղևոնդյանը (հետմահու), Մոնթե Մելքոնյանը (հետմահու), Յուրի Պողոսյանը (հետմահու), Սերժ Սարգսյանը, Վազգեն Սարգսյանը, Վահագն Վարդանյանը, Արկադի Տեր-Թադևոսյանը (Կոմանդոս), Ռոբերտ Քոչարյանը, Սեյրան Օհանյանը:

ԼՂՀ կառավարության որոշմամբ ինքնապաշտպանական ուժերի 197 մարտիկներ ու սպաներ Հայրենիքի պաշտպանության գործում ցուցաբերած խիզախության և արիության համար պարգևատրվեցին «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանով, 705 մարտիկներ՝ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով: Շուրջ 4500 ազատամարտիկներ պարգևատրվել են մեդալներով:

Իր հերթին 1996 թ. սեպտեմբերի 20-ին ՀՀ նախագահի հրամանագրով հետմահու Հայաստանի ազգային հերոսի կոչում շնորհվեց 7 ազատամարտիկների՝ Ջիվան Աբրահամյանին, Գեղազնիկ Միքայելյանին, Վիտյա Այվազյանին, Մովսես Գորգիսյանին, Թաթուլ Կրպեյանին, Մոնթե Մելքոնյանին և Յուրի Պողոսյանին:

գ. Սփյուռքահայության մասնակցությունը Արցախյան պատերազմին: Արցախյան ազատագրական պատերազմին մասնակցեցին նաև սփյուռքահայերը. քաջարի հայորդիներ Վիգեն Զաքարյանը, Մհեր Ջուլհաճյանը, Մոնթե Մելքոնյանը, Կարո (Կարապետ) Քահքեջյանը և այլոք իրենց կյանքը զոհեցին արցախյան կռիվներում:

Ջոկատի քաջարի հրամանատար Կարապետ Քահքեջյանը 1991-1993 թվականներին եղել էր ՀՀ Արարատի (Երասխ), Տավուշի և ԼՂՀ Ասկերանի, Մարտակերտի ու Քելբաջարի պաշտպանական մարտերի գործուն մասնակիցը: Հայ ազատամարտի նվիրյալ, ՀՀ Ազգային հերոս Մոնթե Մելքոնյանը (Ավո) մասնակցել էր ՀՀ Իջևանի, Ճամբարակի, ԼՂՀ Շահումյանի, Մարտակերտի շրջանների ինքնապաշտպանությանը և Քարվաճառի ազատագրական մարտերին: 1992 թ. սեպտեմբերից ղեկավարել էր Մարտունու ուղղությամբ մարտնչող հայկական զորամասերը: Մուսալեռցի Լևոն Թաշճյանը 1993 թ. սեպտեմբերից մինչև 1994 թ. հունվարը մասնակցել է Ֆիզուլիի, Զանգելանի, Ջաբրայիլի, Մարտակերտի, Կուբաթլիի և այլ շրջանների ազատագրական մարտերին: Շուշիի առանձնակի գումարտակի հրամանատարն էր Ժիրայր Սեֆիլյանը, որի հրամանի տակ անձնազոհ կռվում էին նաև սփյուռքահայ երիտասարդներ:

Հայ ժողովուրդն իր միասնության և աննկուն ոգու շնորհիվ իրեն պարտադրված պատերազմից դուրս եկավ հաղթականորեն և Հայաստանի ազատագրված հատվածում ստեղծեց իր ազգային երկրորդ պետությունը:

Զինադադարի կնքումից հետո շարունակվեցին բանակցությունները, որոնց մեջ ընդգրկվեց նաև Եվրոպայի անվտանգության և համագործակցության կոմիտեն (ԵԱՀԿ):

ԵԱՀԿ Մինսկի խմբի բանակցություններում Հայաստանը որդեգրել էր հետևյալ սկզբունքը. «Հայաստանի Հանրապետությունը կվավերացնի յուրաքանչյուր փաստաթուղթ, որն ընդունելի կլինի Ղարաբաղի ժողովրդի համար և ստորագրված ԼՂՀ ղեկավարության կողմից»: Իսկ Լեռնային Ղարաբաղի ղեկավարությունը բացառում էր որևէ ուղղակի ենթակայություն Ադրբեջանին և կախվածություն նրանից: ԼՂՀ-ն հանդես էր գալիս միմյանց նախապայմաններ չթելադրելու դիրքերից՝ առաջարկելով բանակցություններ սկսել կարգավիճակի սկզբունքային հիմքերի ճշտումից: Միայն Ադրբեջան-Ղարաբաղ ուղղակի բանակցությունների միջոցով կարելի էր սահմանել հակամարտող կողմերի փոխզիջումների շրջանակը և քննել խնդրի քաղաքական կարգավորման երկուստեք ընդունելի տարբերակը: Հակառակ սրան՝ Ադրբեջանը համառորեն չէր ճանաչում ԼՂՀ-ն որպես հակամարտող կողմ:

Փաստորեն 1995-1996 թթ. որոշակի ձեռքբերումներ չեղան: 1996 թ. վերջին Լիսաբոնի ԵԱՀԿ-ի գագաթնաժողովում փորձ արվեց Արցախյան խնդրի լուծումը կապել Ադրբեջանի տարածքային ամբողջականության հետ, որը չընդունվեց և բանակցությունները մտան փակուղի: 1997 թ. մի քանի անգամ գումար-

ված ԵԱՀԿ-ի համաժողովներում քննարկումներն արդյունք չտվեցին:

ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներին ներկայացվեցին հայկական կողմի հայեցակարգային նոր սկզբունքները, որոնցով նախապատվությունը տրվում էր հակամարտության կարգավորման փաթեթային տարբերակին՝ վերջինիս հիմքում դնելով Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման իրավունքը, նրա ոչ անկլավային վիճակը, անվտանգության միջազգային երաշխիքները: 1998 թ. սկսվեց ղարաբաղյան բանակցությունների նոր փուլը: Այս փուլում ԵԱՀԿ Մինսկի խումբն ակտիվացրեց գործունեությունը՝ նոր առաջարկներ ներկայացնելով կողմերին: Փաստորեն միջնորդները եկան, այսպես կոչված, «ընդհանուր պետության» գաղափարին: Նույն թվականի նոյեմբերին ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները կողմերի քննարկմանը ներկայացրեցին «Լեռնային Ղարաբաղի զինված հակամարտության համապարփակ կարգավորման սկզբունքները» փաստաթուղթը, որի հիմքում ընկած էր ընդհանուր պետության գաղափարը:

Նոր «ընդհանուր պետությունը», ըստ համանախագահների պետք է ստեղծվեր նախկին Ադրբեջանական ԽՍՀ սահմաններում, ինչը թույլ էր տալու համատեղել սահմանների անձեռնմխելիությունը և ազգերի ինքնորոշման սկզբունքը:

Հայաստանն ու Ղարաբաղը սկզբունքորեն համաձայնվեցին «ընդհանուր պետության» գաղափարն ընդունել որպես բանակցությունների հիմք, իսկ Ադրբեջանը մերժեց այն: Բանակցությունների գործընթացը դարձյալ հայտնվեց փակուղում: Բայց ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների ջանքերով 1999 թ. սկսվեցին Հայաստանի և Ադրբեջանի նախագահների ուղղակի շփումները, որոնք սակայն չոչափելի արդյունք չտվեցին: Հայաստանի Հանրապետության և Արցախի ղեկավարները բոլոր միջոցներն օգտագործում էին նորանոր ուղիներ փնտրելով տարածաշրջանում կայուն վիճակ ստեղծելու, հակամարտությունը կարգավորելու համար:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՈՒՄԸ. ՆԵՐՔԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Արցախահայությունը դժվարագույն իրավիճակում պետք է ձեռնամուխ լիներ Հանրապետության տնտեսության վերականգնման ու զարգացման, սոցիալական և հասարակաքաղաքական կյանքի բազմաթիվ խնդիրների լուծման գործին:

ա. ԼՂՀ տնտեսության վերականգնումն ու զարգացումը: *Խորհրդային տարիներին Ադրբեջանի կազմում Լեռնային Ղարաբաղի մարզի տնտեսությունը զրկված էր համաչափ զարգացման հնարավորությունից և լիովին կախված էր Բաքվի քմահաճույքից: Մարզի տնտեսության զարգացման արգելակումը խիստ բացասաբար էր անդրադարձել նրա բնակչության սոցիալ-կենցաղային կացության վրա և եղել էր հայ բնակչության արտագաղթը խթանող հիմնական գործոններից մեկը: Իսկ պատերազմի տարիներին լիովին քայքայվել էր տնտեսությունը:*

Շրջափակումը, բռնագաղթերը, հացահատիկային դաշտերի հրդեհումները, էլեկտրաէներգիայի անջատումները, ջրատար խողովակների պայթեցումներն ու թունավորումները, անասունների հափշտակությունները սովորական բան էին դարձել:

Պատերազմի տարիներին ավելի քան 80 տոկոսով ավերվել էր Հանրապետության տնտեսությունը:

Մարտական գործողությունների ընթացքում հակառակորդի կողմից Արցախ-Ղարաբաղին հասցվել էր 2.5 մլրդ դոլարի վնաս, պայթեցվել և ոչնչացվել էր 167 եկեղեցի, 8 վանքային համալիր, 123 պատմական գերեզմանատեղի, 47 բնակավայր, ջարդվել և չինանյութի էին վերածվել գեղարվեստական բարձր արժեք ունեցող 2500 խաչքար և վիմագիր, ավելի քան 10 հազար տապանաքար: Հանրապետության 18 հազար հեկտար խաղողի այգիներից 16,7 հազարը լիովին ոչնչացվել էր: Ավերվել էին գրե-

թե 8000 արդյունաբերական, գյուղատնտեսական, սոցիալական օբյեկտներ, շուրջ 7000 բնակելի շինություն, 172 կրթօջախ, 47 բուժհիմնարկ:

Զինադադարի կնքումը հնարավորություն տվեց զբաղվելու տնտեսության վերականգնման ու զարգացման հարցերով:

1994 թ. վերջին մշակվեցին Հանրապետության տնտեսական բարեփոխումների հիմնադրույթները: Առաջ քաշվեց Հայաստանի և Արցախի տնտեսությունների միասնականացման հարցը:

Շուտով կառուցվեց էլեկտրահաղորդման նոր գիծ, որով Սարսանգի ջրէկ-ը ուղիղ գծով կապվեց էներգասպառողների հետ: ԼՂՀ-ն էլեկտրահաղորդման բարձր լարման գծով միացավ Հայաստանի էներգահամակարգին: Ավելացավ էլեկտրաէներգիայի թողարկումը: Վերագործարկվեցին արդյունաբերական մի շարք ձեռնարկություններ:

ԼՂՀ ղեկավարությունը չհրապուրվեց սեփականաշնորհման արագ կենսագործմամբ, որի ժամանակ սխալներն անխուսափելի են լինում: Ավելի ուշ իրականացված հողի սեփականաշնորհումը կատարվեց դրա հնարավոր բացասական հետևանքների բազմակողմանի քննությունից հետո:

Տնտեսական ոլորտում առաջնահերթությունը տրվում էր ԼՂՀ փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացմանը: Հաշվի էր առնվում նման ձեռնարկությունների նշանակալի դերը նոր աշխատատեղերի ստեղծման, բնակչության միջին խավի ձևավորման և երկրում կայունության ապահովման գործում:

Ի տարբերություն Հայաստանի՝ Արցախում նպատակահարմար համարվեց կոլեկտիվ տնտեսությունները չքայքայել, չսեփականաշնորհել գյուղատնտեսական տեխնիկան և անասնապահական ֆերմաները: Դրանք նպաստեցին Արցախի տնտեսական կյանքի և պաշտպանունակության բարելավմանը: ԼՂՀ-ում իրականացվող ագրարային վերափոխումների շնորհիվ գյուղատնտեսությունը բռնեց աստիճանական վերելքի ուղի:

Բնակչության օրեցօր աճող պահանջարկը նոր շունչ հաղորդեց շինարարության ոլորտին՝ ընդլայնելով նրա ծավալները, ինչը հնարավորություն ստեղծեց շինարարական նյութերի արտադրության, մասնավորապես տեղական քարերի արդյունահանման և վերամշակման համար, ինչպես նաև առևտրային

նպատակով հասարակական շինությունների կառուցապատման, հատկապես բնակարանաշինարարության զարգացման համար:

Հայաստանի օրինակով 1995 թ. փետրվարի 14-ին ԼՂՀ ԳԽ ընդունեց «Պետական ձեռնարկությունների և անավարտ շինարարության օբյեկտների սեփականաշնորհման և ապապետականացման մասին» օրենքը, որի հիման վրա էլ սկսվեց առանձին ձեռնարկությունների մասնավորացումը:

բ. Սոցիալական ոլորտը: Տնտեսության զարգացումը հնարավորություն տվեց ուշադրություն դարձնել սոցիալական խնդիրների լուծմանը: Ընդունվեցին մի շարք օրենքներ սոցիալական ապահովագրության ու աջակցության, կենսաթոշակային, բնակչության զբաղվածության ապահովման, աշխատանքի և աշխատավարձերի համակարգերի կատարելագործման վերաբերյալ: Կառավարությունը որոշակի միջոցառումներ էր իրականացնում նաև առողջապահության ոլորտի խնդիրները կարգավորելու ուղղությամբ: Մասնավոր բուժօգնության հետ պետության աջակցությամբ իրականացվում էր անվճար բուժօգնություն:

Սոցիալական հիմնախնդիրների լուծման գործում ԼՂՀ-ին էական աջակցություն էին ցուցաբերում «Հայաստան» համահայկական հիմնադրամը: Լիբանանի «Արցախի օգնության մարմինը», Համաշխարհային քրիստոնեական կազմակերպությունը և այլ մարդասիրական կազմակերպություններ:

գ. Հասարակական-քաղաքական կյանքը: Ազատագրական պատերազմից հետո աշխուժացավ ԼՂՀ հասարակական-քաղաքական կյանքը: Անցում կատարվեց բազմակուսակցական համակարգին: Սկսեցին գործել Հայ Հեղափոխական դաշնակցություն և Արցախի արմենական կուսակցությունները: Առաջացան նոր կուսակցություններ ու քաղաքական միավորումներ՝ Ազատ Հայրենիք, Սոցիալական արդարություն, Մեր տունը Հայաստանն է, ՀՀԴ-Շարժում-88 դաշինք, Արցախի ժողովրդավարական կուսակցություն:

Հասարակական-քաղաքական կյանքը Հանրապետությունում աշխուժացավ ԼՂՀ Ազգային ժողովի պատգամավորների երկրորդ ընտրությունների ժամանակ, որը տեղի ունեցավ 1995 թ. հունիսի 23-ին: 1996 թ. նոյեմբերին կայացան ԼՂՀ առաջին նախագահական ընտրությունները: Հանրապետության նախագահ

ընտրվեց Ռոբերտ Քոչարյանը: Հաջորդ տարի նա նշանակվեց ՀՀ վարչապետ, ուստի 1997 թ. սեպտեմբերին ԼՂՀ-ում տեղի ունեցան արտահերթ նախագահական ընտրություններ: Նախագահ ընտրվեց Արկադի Ղուկասյանը, որը նույն պաշտոնում վերընտրվեց: Աննախադեպ ակտիվությամբ ընթացան ԼՂՀ երրորդ գումարման Ազգային ժողովի պատգամավորների ընտրությունները, որոնք տեղի ունեցան 2000 թ. հունիսի 18-ին՝ 33 ընտրատարածքներում: Այս ընտրություններում հաղթանակ տարավ «Ժողովրդավարական Արցախ միությունը», որը ստացավ 20 պատգամավորական մանդատ, իսկ «Հայ հեղափոխական դաշնակցությունը», մյուս կուսակցությունները՝ մեկական պատգամավորական մանդատներ:

ԼՂՀ չորրորդ գումարման Ազգային ժողովի պատգամավորական ընտրությունները տեղի ունեցան 2005 թ. հունիսի 19-ին ԼՂՀ ընտրատարածքներում մեծամասնական և համամասնական ընտրակարգով: Համամասնական ընտրակարգով ամենաշատ ձայներ ստացավ «Արցախի ժողովրդավարական կուսակցությունը», որին հաջորդում էին «Ազատ հայրենիքը»՝ և «ԼՂՀ - Շարժում - 88 դաշինք» կուսակցությունը: Մեծամասնական ընտրակարգով ընտրվողներից 10-ը անկուսակցականներ էին: 2007 թ. հուլիսի 20-ին տեղի ունեցան ԼՂՀ նախագահական հերթական ընտրությունները, որի արդյունքում նախագահ ընտրվեց Բակո Սահակյանը:

2010 թ. մայիսի 23-ին տեղի ունեցան ԼՂՀ հինգերորդ գումարման Ազգային ժողովի ընտրությունները 33 ընտրատարածքներում: Մեծամասնական և համամասնական ընտրակարգերում հաղթեց վարչապետ Արա Հարությունյանի ղեկավարած «Ազատ հայրենիք» կուսակցությունը, որին հաջորդեցին «Արցախի ժողովրդավարական կուսակցությունը» և «Հայ հեղափոխական դաշնությունը»: 2012 թ. հուլիսի 19-ին տեղի ունեցած ԼՂՀ նախագահական հերթական ընտրություններում, նախագահ վերընտրվեց Բակո Սահակյանը: Նախագահական և խորհրդարանական բոլոր ընտրություններն էլ համարվել են միջազգային չափանիշներին համապատասխան:

դ. ԼՂՀ Սահմանադրությունը: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հասարակական-քաղաքական կյանքի կարևոր իրադարձություններից էր Սահմանադրության ընդունումը, որը

հաստատվեց 2006 թ. դեկտեմբերի 10-ին համաժողովրդական հանրաքվեի միջոցով: Դեռևս միջազգային ճանաչում չստացած, բայց փաստացի անկախ հանրապետության հիմնական օրենքը իրավական ձևակերպում տվեց հասարակական կյանքի բոլոր բնագավառներում կատարված փոփոխություններին, սահմանեց ԼՂՀ քաղաքացիների իրավունքները, ազատություններն ու պարտականությունները: Սահմանադրության առաջին հոդվածը ազդարարում է, որ ԼՂՀ-ն ինքնիշխան, ժողովրդավարական, իրավական, սոցիալական պետություն է, որ ԼՂՀ և Արցախի Հանրապետություն անվանումները նույնական են: ԼՂՀ Սահմանադրությունն ամրագրեց հայկական երկրորդ պետության իրավական հիմքերը:

ե. Կրթամշակութային կյանքը: Լեռնային Ղարաբաղում ստեղծվեց կրթական ու մշակութային նոր համակարգ:

Սկսվեցին հանրակրթության ոլորտի բարեփոխումները: Մշակվեցին ազգային դպրոցի ստեղծման սկզբունքները, կազմվեցին ուսումնական նոր ծրագրեր ու դասագրքեր: Գիտելիքների հետ նաև կարևոր նշանակություն էր տրվում սովորողների ազգային դաստիարակությանը և հասարակական ակտիվությանը:

Վերակազմավորվեց Լեռնային Ղարաբաղի պետական համալսարանը (1995 թ.՝ Արցախի պետական համալսարան):

Զարգանում էին գրահրատարակչությունը և մամուլը: Հրատարակչական գործի զարգացման հետ ընդլայնվում էր գրադարանների ցանցը: Իր ակտիվ գործունեությունն էր շարունակում Ստեփանակերտի դրամատիկական թատրոնը: Վերելք էին ապրում արվեստի մյուս ճյուղերը: ԼՂՀ-ում գործում են 18 թատերահամերգային կազմակերպություններ: Արցախի արվեստի վարպետները ելույթներով հանդես են գալիս ԱՊՀ և արտասահմանյան բազմաթիվ այլ երկրներում՝ Հոլանդիայում, Ֆրանսիայում, ԱՄՆ-ում, Հունաստանում և այլուր: Ստեփանակերտին առանձին վեհություն էր հաղորդում հայտնի քանդակագործ Սարգիս Բաղդասարյանի «Մենք ենք, մեր սարերը» կոթողը, որը դարձել է Արցախ աշխարհի խորհրդանիշը:

Հանրապետության տարածքում հաշվվում են բազմահազար հուշարձաններ: Հայ հնագետների պեղումների արդյունքում բացվեց Տիգրան Մեծի հիմնադրած Արցախի Տիգրանակերտ քաղաքը:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ ՈՒ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ԴԺՎԱՐԻՆ ՈՒՂԻՆ (1991–2000 թթ.)

1. ՆԵՐՔԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

ա. Տնտեսության ճգնաժամային երևույթները. անցում չուկայական հարաբերություններին: *Խորհրդային պետության փլուզումից հետո նախկին հանրապետությունները ներքաշվեցին հակամարտությունների մեջ, և Հայաստանը, բացի առանձին երկրներից չարունակվող ոչ մեծ օգնությանը, մնաց միայնակ իր ծանրագույն հոգսերի հետ: Եթե սրան ավելացնենք հանրապետության լիակատար չրջափակումը, որին 1990-ական թվականների սկզբներից փաստորեն մասնակցում էր նաև Թուրքիան, ինչպես նաև պատերազմը Լեռնային Ղարաբաղում և 1990 թվականից Հայաստան բռնագաղթված փախստականների օրհասական դրությունն ու էներգետիկ ճգնաժամը, ապա հանրապետությունում ստեղծված սոցիալ-տնտեսական անմխիթար վիճակի պատկերը կամբողջանա:*

Նման իրավիճակում Հայաստանի ղեկավարության առջև ծառացած հիմնական հարցը մնում էր չրջափակման վերացման միջոցով տնտեսական դրության բարելավումը:

1990-1991 թթ. Հայաստանի Գերագույն խորհուրդը մի չարք որոչումներ ընդունեց, որոնք ուղղված էին տնտեսական հարաբերությունները կարգավորելուն: Այս առումով կարևոր նչանակություն ուներ խորհրդարանի 1990 թ. սեպտեմբերի 10-ին ընդունած «Հայաստանի Հանրապետության պետական սեփականության մասին» օրենքը, ըստ որի հանրապետության տարածքում գտնվող բոլոր պետական ձեռնարկությունների, միավորումների, հիմնարկների և կազմակերպությունների ունեցվածքը հայտարարվեց Հայաստանի Հանրապետության սեփականություն: Հոկտեմբերի 31-ին ընդունվեց «Հայաստանի Հանրապետությունում սեփականության մասին» օրենքը: Սրանք պետական մենատիրության վերացմանը և չուկայական հարաբերությունների ձևավորմանն ուղղված առաջին քայլերն էին:

Տնտեսական բարեփոխումների ամենասկզբից պետությունը ձգտում էր կտրուկ կրճատել արտադրության մեջ իր դերը և մասնավոր բաժինը դարձնել տնտեսական զարգացման հիմնական աղբյուր: Այս բնագավառում իրականացվող հետևողական քաղաքականությունը հանգեցրեց նրան, որ արդեն 1995 թ. համախառն ներքին արտադրանքի կեսից ավելին անցավ մասնավոր անձանց ձեռքը: Դա կատարվեց ի հաչիվ ձեռնարկությունների զանգվածային սեփականաչնորհման և մասնավոր գործարարության չուկա թափանցելով:

Հանրապետությունում վարվող սոցիալ-տնտեսական քաղաքականության մչակման ժամանակ թույլ տրվեցին կոպիտ սխալներ: Չուկայական տնտեսությանն անցնելու հիմնական բաղադրիչը հանրապետության ղեկավարությունը համարեց գների ազատականացումը: Բայց այդ գործընթացը հանգեցրեց ապրանքների գների կտրուկ աճին, հետևապես՝ բնակչության սոցիալական դրության խիստ վատթարացմանը:

Խորհրդային կարգերի պայմաններում Հայաստանը հնարավորություն ուներ ձեռք բերելու վառելիքաէներգետիկ և հումքային էժան պաչարներ և փոխարենը ավելի թանկ գներով արտահանելու պատրաստի արտադրանք:

բ. Արդյունաբերությունը: *Խորհրդային Հայաստանի արդյունաբերությունը հանդիսանում էր ԽՍՀՄ արդյունաբերական համալիրի մի մասը և հիմնականում մասնագիտացված էր էլեկտրամեքենաչինության, քիմիայի, էլեկտրոնիկայի, թեթև ու սննդի արդյունաբերության բնագավառներում: Հանրապետության արդյունաբերությունն աչքի էր ընկնում համակենտրոնացման բարձր աստիճանով: Այն ներկայացված էր միութենական ու հանրապետական ենթակայության 109 արտադրական ու գիտաարտադրական հզոր միավորումներով, ինքնուրույն հաչվեկչռով աչխատող չուրջ 5800 ձեռնարկություններով: Արդյունաբերության ճյուղի ապրանքային արտադրության ծավալի*

62%-ը և արդյունաբերական-արտադրական անձնակազմի 70%-ը բաժին էր ընկնում արտադրական ու գիտարտադրական միավորումներին, որոնք հիմնականում բաղկացած էին խոշոր և գերխոշոր ձեռնարկություններից: Փոքր և միջին արդյունաբերական ձեռնարկությունները համեմատաբար փոքր թիվ էին կազմում և համեստ բաժին ունեին արտադրության ծավալում:

Նոր պայմաններում խզվեցին միջհանրապետական տնտեսական ավանդական կապերը, դադարեց հումքի ստացումը: Հայաստանի արդյունաբերությունը հայտնվեց ճգնաժամային վիճակում: Անկում ապրեցին հատկապես մետալուրգիան, չինանյութերի արտադրությունն ու մեքենաշինությունը: Հանրապետությունը դարձավ սեփական վառելիքաէներգետիկ պաշարներից զուրկ, հանքահումքային սուղ պաշարներ ու ոչ մեծ տարածք ունեցող անկախ երկիր: Անկախ պետությունը այժմ արդեն ինքնուրույն պետք է լուծեր ծառացած սոցիալ-տնտեսական խնդիրները:

Արդյունաբերության և ամբողջ ժողովրդական տնտեսության անկման հիմնական պատճառներից մեկը էներգետիկ ճգնաժամն էր, որը հայկական ատոմակայանի փակման, չրջափակման հետևանքով մազութի ու բնական գազի մատակարարման ընդհատումների արդյունք էր: Խափանվեց բնակչության ջերմամատակարարումը, հատկապես՝ բնակարանային ջեռուցումը: Որպես հետևանք անտառների և զբոսայգիների ամբողջ զանգվածներ անհսկելիորեն հատվեցին և օգտագործվեցին իբրև վառելափայտ: Տրանսպորտը փաստորեն դադարեց գործելուց: 1992-1993 թթ. կենցաղային կարիքների համար միայն 2-3 ժամ էր էներգիա տրվում: Անհրաժեշտ ֆինանսական միջոցներ չլինելու պատճառով բազմաթիվ ենթակայաններ և բաշխիչ ցանցեր ենթարկվեցին քայքայման: Էլեկտրաէներգիայի դեֆիցիտի պայմաններում էներգիայի գողությունը դարձավ համատարած երևույթ:

Անկախ պետականության հաստատումը տեսականորեն պետք է նախադրյալներ ստեղծեր Հայաստանի տնտեսության վերականգնման, հասարակական հարաբերությունների դեմոկրատացման ու զարգացման համար; Բայց հակառակը կատարվեց: Գնալով դանդաղեցին ժողովրդավարական գործընթացները, քանի որ հանրապետության կառավարող քաղաքական ուժը՝ ՀՀՇ-ն, հետևապես նաև երկրի ղեկավար մարմինները աստիճանաբար հեռացան ժողովրդական չարժման իդեալներից: Կարճ ժամանակում կառավարման տարբեր օղակներում ընդգրկվեցին կրթական և մասնագիտական պատրաստություն և աշխատանքային փորձ չունեցող պաշտոնատենչներ, մարդիկ, որոնք հայրենիքին, ժողովրդական չահերին ազնվորեն ծառայելու փոխարեն տոգորված էին ժողովրդական ունեցվածքը կողոպտելու միջոցով հարստանալու կրքով: Կառավարման համակարգում տիրապետող դարձան չահամոլությունը, ընչաքաղցությունը, գլուխ բարձրացրին նաև այլ բացասական երևույթներ: Սկսվեց հասարակության մի փոքր մասի մոտ երկրի հարստությունների կենտրոնացման և ժողովրդի վիթխարի զանգվածների սեփականազրկման, աղքատացման ու թշվառացման գործընթացը:

1992 թ. օգոստոսին ընդունվեց «Պետական ձեռնարկությունների և անավարտ չինարարության օբեկտների սեփականաչնորհման և ապապետականացման մասին» օրենքը, որով սկիզբ դրվեց հանրապետությունում հասարակական ունեցվածքի փոչիացման աղետալի գործընթացին: Համաձայն այդ օրենքի ՀՀ քաղաքացիներին տրվեցին այսպես կոչված սեփականաչնորհման սերտիֆիկատներ (վաուչերներ): Եկամուտների կտրուկ անկման պայմաններում բնակչության ճնչող մեծամասնությունն իր սերտիֆիկատները վաճառեց չատ ցածր գներով՝ ընթացիկ կենցաղային հոգսերը հոգալու համար: Գործընթացին մասնակցեց ազգաբնակչության միայն 7%-ը: Պետությունը փաստորեն ինքնակամ հեռացավ սեփականաչնորհման գործընթացի խելացի, ծրագրավորված կառավարումից: Բնակչության չրջանում չիրականացվեց բացատրական աշխատանք, չստեղծվեցին ներդրումային հիմնադրամներ, բացակայում էր սերտիֆիկատների՝ որպես արժեթղթերի չուկան, ձեռնարկությունների նոր տնօրինողներից չէր պահանջվում ո՛չ երաշխիքներ, ո՛չ էլ գործառույթի ծրագրեր, ինչը տեղի տվեց նոր խախտումների: Զարդարացան նաև սեփականաչնորհումից բյուջեի մուտքերն ապահովելու հույսերը, պետության իրական դրամական եկամուտները սպասվածից առնվազն 10 անգամ ցածր էին: Այս բո-

լորի հետևանքով խիստ սահմանափակվեցին ՀՀ արդյունաբերությունը կարգի բերելու հնարավորությունները:

Արդյունաբերական ձեռնարկությունների ապապետականացումը, որը շարունակվեց նաև հետագա մի քանի տարիներին, ուղեկցվեց օբյեկտիվ դժվարություններով, սուբյեկտիվ բնույթի կոպիտ սխալներով ու չարաշահումներով: Առաջացած քաոսի և ձեռնարկությունների փաստացի սնանկացման պայմաններում սկսված արդյունաբերական օբյեկտների զանգվածային «սեփականաշնորհումը» գործնականում մարդկանց մի փոքր խմբի օգտին պետական սեփականության վերաբաշխում հանդիսացավ: Սեփականաշնորհման անվան տակ իրականացվեց համաժողովրդական ունեցվածքի կողոպուտ:

Արդյունաբերական ձեռնարկությունները, ինչպես և առողջապահական, կրթական ու այլ հաստատություններ հապճեպ սեփականաշնորհվեցին, աներևակայելի ցածր գներով «վաճառվեցին» երկրի նորաթուխ կառավարողների կողմից հովանավորվողներից չատերին:

Սեփականաշնորհված ձեռնարկությունների մեծագույն մասը դադարեց աշխատելուց: Հազարավոր բանվորներ և մասնագետներ դարձան գործազուրկ: Ապապետականացման գործընթացում ամեն ինչ թողնվեց մասնավորի ձեռներեցությանը, իսկ պետությունը շատ դեպքերում մնաց դիտողի դերում:

Ձեռնարկությունների արտադրական հիմնական ու շրջանառու միջոցների յուրացումը հասցրեց արդյունաբերության քայքայմանը, գործազրկության աճին ու արտագաղթին: Գործարանների մեծագույն մասը դադարեց աշխատելուց: Փոխվեց արդյունաբերության նախկին ծրագրավորված կառուցվածքը: Այդպիսով, երբեմնի հզոր համապետական, համաժողովրդական ունեցվածքը բաժան-բաժան արվելով՝ յուրացվեց:

Եվ դա այն դեպքում, երբ արցախյան ռազմաճակատներում իրենց արյան գնով ու թափած ջանքերով ազգի պատիվն ու հպարտությունը վերականգնած տասնյակ հազարավոր իսկական հերոս-հայորդիների գլխավոր հոգսը շարունակում էր մնալ հայրենիքի պաշտպանությունը:

Արդյունաբերական ձեռնարկությունները սեփականաշնորհելուց հետո դրանց ունեցվածքի պահպանման ուղղությամբ

գոնե բավարար չափով հոգ չտարվեց, չսահմանվեց անհրաժեշտ վերահսկողություն, որի հետևանքով մետաղյա թանկարժեք, այդ թվում նորագույն, սարքավորումները ջարդոնի անվան տակ վաճառվեցին արտասահմանյան երկրներում, հատկապես Իրանում և Թուրքիայում: Դրանով մի նոր ծանր հարված հասցվեց արդյունաբերությանն ու ամբողջ տնտեսությանը:

գ. Գյուղատնտեսությունը: Հայաստանը նախկին ԽՍՀՄ հանրապետություններից առաջինն էր, որ 1991 թ., կարճ ժամանակամիջոցում, սեփականաշնորհեց հողը: Հողը մշակողին վերադարձնելու և նրա մասնավոր սեփականատիրությունը խրախուսելու նպատակով հանրապետության խորհրդարանը 1991 թ. հունվարի 29-ին ընդունեց «Գյուղացիական և գյուղական կոլեկտիվ տնտեսությունների մասին» օրենքը, որով 1991-1992 թթ. լուծարվեցին հանրապետությունում եղած 865 կոլտնտեսություններն ու պետական տնտեսությունները, որոնք թողարկում էին ճյուղի արտադրանքի ավելի քան 90%-ը: Դրանց փոխարեն ձևավորվեցին 320 հազարից ավելի անհատական տնտեսություններ: Իբրև սեփականություն դրանց փոխանցվեց հողերի 66%-ը, անասունների 80%-ը, ինչպես նաև մնացած հիմնական միջոցները՝ գրեթե ամբողջությամբ: Հողի սեփականատեր դարձան բոլոր գյուղաբնակները և այլ վայրերում ապրող նախկին գյուղացիները, որոնք նման ցանկություն էին հայտնել: Հողի սեփականաշնորհման մասին օրենքը, որն ընդունվեց տնտեսական ճգնաժամի ծանր պայմաններում, գյուղական բնակչությանն ինչ-որ չափով ապահովեց աշխատանքով և նպաստեց նրա գոյության պահպանմանը, մեղմեց սովի վտանգը: Նորաստեղծ գյուղացիական տնտեսությունները փոփոխությունների ենթարկեցին ցանքերի կառուցվածքը, սկսեցին տվյալ պայմաններին համապատասխան բույսեր մշակել և անասուններ պահել: Հողով բավարարվեց նաև փախստականների մի մասը: Այդ ամենի հետևանքով գյուղատնտեսական արտադրությունը սկզբնական շրջանում թեև զգալիորեն նվազեց, բայց այնպիսի խոր ճգնաժամ չապրեց, ինչպես արդյունաբերությունը կամ շինարարությունը:

Առաջին, հողի մասնավորացումը կատարվեց մի շարք սխալներով: Ագրարային արմատական վերակառուցում-

ների գործընթացը սկսվել էր ոչ թե գյուղացիների պահանջով, այլ իշխանության բարձրագույն մարմինների որոշումներով: Դա ըստ էության գյուղատնտեսության նոմենկլատուրային «բարեփոխում» էր: Կոլտնտեսությունների և պետական տնտեսությունների համատարած լուծարումն իրականացվեց հապշտապ, անկազմակերպ ու վարչահրամայական եղանակով: Գյուղատնտեսական բոլոր գոտիներում տնտեսությունների լուծարումը և հողի սեփականաշնորհումը իրականացվեցին միևնույն ձևով, առանց որևէ տարբերակման, հաշվի չառնվեցին երկրի տարբեր գոտիների առանձնահատկությունները:

Երկրորդ, սեփականաշնորհման ընթացքում թույլ տրվեցին աղաղակող անարդարություններ: Համաժողովրդական և կոլտնտեսային ունեցվածքը չնչին գներով հաճախ անցնում էր մարդկանց ձեռքը, որոնք քիչ կամ ընդհանրապես մասնակցություն չէին ունեցել դրա ստեղծմանը: Մեծ չարաշահումներ եղան հատկապես կոլտնտեսությունների և պետական տնտեսությունների անասնագլխաքանակը «բաշխելիս»: Ստեղծված իրադրության մեջ հնարավոր դարձավ նաև հանրային ունեցվածքի մի մասի յուրացումը ֆերմաներում, պահեստներում և այլն: Շատ տեղերում օրենքի լուրջ խախտումներով և պաշտոնական դիրքի չարաշահումներով էր տեղի ունենում անասնապահական շենքերի, գյուղմեքենաների սեփականաշնորհումը, որն «օրինականացվում» էր համապատասխան ակտերով: Ինչ խոսք, նման սեփականաշնորհումը, որը շատ դեպքերում ծառայում էր առանձին մարդկանց, այդ թվում նախկին կուսակցական և խորհրդային ղեկավար գործիչների հարստացմանը, ամենևին ձեռներեցության խթանում չէր:

Երրորդ, կոլտնտեսությունների և պետական տնտեսությունների լուծարման հետևանքով հանրապետությունում մշակվող առանց այն էլ փոքր մակերես ունեցող հողակտորներն է՛լ ավելի մանրատվեցին: Յուրաքանչյուր անհատական տնտեսությանը միջին հաշվով հատկացվեց 1,3–1,5 հեկտար հողաբաժին, ըստ որում առավել բնակեցված և պտղաբեր շրջաններում (Արարատյան դաշտ) տնտեսության միջին հողատարածքը կազմում էր մինչև 0,75 հեկտար, երկրի հյուսիս-արևելքում և հարավ-արևելքում՝ 2,5 հեկտարից մի քիչ ավելի: Հող ստանալով՝ գյուղացիությունը սկզբում ոգևորվեց, բայց հետագայում հանդիպելով մեծ դժվարությունների, հրաժարվեց մշակել հողային չատ տարածքներ: Դրան նպաստում էր գյուղացիական տնտեսություններին հատկացված առանձին հողակտորների միջև հեռավորությունը, որ հաճախ հասնում էր 15–20 կիլոմետրի: Այդ պայմաններում մեծապես ընկավ հողային, ջրային և նյութական մյուս միջոցների օգտագործման, ինչպես նաև գյուղատնտեսական վնասատուների և հիվանդությունների դեմ պայքարի արդյունավետությունը, նվազեցին հողերի բերրիության վերականգնման ու բազմապատկման, աճեցրած բերքի փոխադրման, պահպանման և իրացման տնտեսական հնարավորությունները: Տնտեսությունների մասնատման պատճառով խափանվեց գյուղատնտեսության մեջ գիտության և տեխնիկայի նորագույն նվաճումները ներդնելու գործընթացը: Զկարգավորված չուկայական հարաբերություններին անցնելիս, խիստ բարձր գների պայմաններում գյուղացիական տնտեսությունների զգալի մասը վերածվեց ձեռքի աշխատանքի վրա հիմնված բնատնտեսության և սկսեց առաջնորդվել սեփական սպառման համար մթերքներ արտադրելու սկզբունքով: Գյուղացիության մեծ մասը զրկվեց գյուղտեխնիկա օգտագործելու հնարավորությունից՝ դրա բազայի փոշիացման պատճառով: Գյուղում տեխնիկան կենտրոնացվեց առանձին մարդկանց ձեռքում, որոնք այնպիսի գներ էին առաջարկում, որ գյուղացին հնարավորություն չէր ունենում մշակելու իր հողը: Հանրապետությունում չկար նույնիսկ պարզունակ գյուղգործիքների արտադրություն:

Չորրորդ, հողը գյուղացուն բաժանելուց հետո պետությունն իր գործը համարեց ավարտված ու մի կողմ քաշվեց՝ թողնելով նրան մեն-մենակ իր հոգսերի հետ: Պետության սուղ միջոցները, արտաքին աշխարհի նյութական ու ֆինանսական օգնությունը հիմնականում օգտագործվում էր ոչ թե գյուղատնտեսության զարգացման, մասնավոր տնտեսությունների արտադրական հնարավորությունների խթանման, այլ պարենի ներմուծման վրա: Ագրարային ճգնաժամի հաղթահարումը պահանջում էր պետության գործուն աջակցությունը (ֆինանսների ու վարկերի տրամադրում, պարարտանյութերի ու վնասատուների դեմ պայքարելու միջոցների հատկացում և այլն), որը չկար: Իսկ

առանց դրա գյուղացիական տնտեսությունների մեծ մասը չէր կարողանում կազմակերպել ապրանքային արտադրություն:

Հինգերորդ, հողի սեփականաշնորհումը կենսագործվեց համատարած, այլ ոչ թե մաս առ մաս: Շրջափակման ու պատերազմի պայմաններում ժամանակավորապես կարելի էր պահպանել այն կոլեկտիվ տնտեսությունները, որոնք չահութաբեր էին ու դեռևս կարող էին ապահովել բարձր արտադրողականություն:

Հանրապետության ղեկավարությունն այն կարծիքին էր, որ հողը գյուղացուն վերադարձնելով՝ կլուծվեն բոլոր հարցերը և սեղմ ժամկետում ֆերմերային տնտեսություններ կստեղծվեն: Այդ կանխատեսումը չիրականացավ: Գյուղատնտեսությունն ընկավ դժվարին դրության մեջ: Անասնագլխաքանակի խիստ անկման, գյուղատնտեսական մեքենայական բազայի փոշիացման հետ չարքից դուրս եկավ ոռոգման համակարգը, որը հայտնվեց կատարյալ փլուզման եզրին: Կտրուկ նվազեց պարարտանյութերի օգտագործումը: Այդ ամենի հետևանքով 1990-ական թվականների երկրորդ կեսին գյուղացիներից շատերը սկսեցին հրաժարվել իրենց տրված հողերից: Հայաստանի սակավահողության պայմաններում չէր մշակվում 50-60 հազար հեկտար հողատարածություն:

Այդ ամենով հանդերձ, այնուամենայնիվ գյուղատնտեսության ոլորտում կատարվեցին որոշ չինարարական աշխատանքներ: 1995 թ. վերակառուցվեցին Հերհերի և Երևանի ջրանցքները, իսկ 1999-2000 թթ.՝ Արզնի-Շամիրամի, Կոտայքի, Արտաշատի, Հրազդանի մայր և Արմավիրի ու Նալբանդյանի երկրորդ կարգի ջրանցքները, ինչպես նաև ներտնտեսային ոռոգման ցանցեր մի շարք բնակավայրերում:

Այսպիսի պայմաններում անխուսափելի էին Հայկական ատոմային էլեկտրակայանի (ԱԷԿ) վերագործարկումը 1996 թ. և Հրազդանի ՋԷԿ-ի 5-րդ բլոկի շահագործումը: ԱԷԿ-ի վերագործարկումը տեղի ունեցավ Ռուսաստանի Դաշնության տնտեսատեխնիկական օգնությամբ: Բարելավվեց էլեկտրամատակարարումը, բայց բնակչության աղքատացման պատճառով նրա մի մասը ի վիճակի չէր վճարել էլեկտրավարձը:

դ. Ֆինանսավարկային քաղաքականությունը: Արդյունաբերության և գյուղատնտեսության ակնման հետևանքով ծանր

կացության մեջ էր հայտնվել նաև Հայաստանի ֆինանսավարկային համակարգը: 1993 թ. նոյեմբերին կառավարությունը շրջանառության մեջ դրեց հայկական ազգային դրամը: Ազգային արժույթի կիրարկումից հետո Հայաստանը հնարավորություն ձեռք բերեց ինքնուրույն տնօրինելու տնտեսական բոլոր լծակները: Ազգային դրամի գործածումը անկախ պետականության դրսևորման ձևերից մեկն է: Բայց համապատասխան երաշխիքների բացակայության պայմաններում դրամն արագ արժեզրկվեց: Սղաճի մակարդակն արագորեն աճեց, տեղի ունեցավ ժողովրդի խնայողությունների և ավանդների յուրացում: Ժողովրդի ներդրած գումարները խնայդրամարկղներում փոշիացան: Միլիոնավոր ռուբլիներ կազմող գումարների փոխարեն ազգաբնակչությունը ստացավ դրանց նախկին արժեքից շատ ավելի չնչին արժեզրկված դրամներ, որոնցով գների աճի պայմաններում հնարավոր չէր հոգալ անգամ ամենատարրական կարիքները:

Սեփական դրամը շրջանառության մեջ դնելը կառուցվածքային լուրջ տեղաշարժեր առաջ բերեց Հանրապետության ֆինանսական համակարգում: Ստեղծվեց Հայաստանի կենտրոնական բանկ, ձևավորվեցին շուրջ 60 առևտրային դրամատներ ու մասնավոր բանկեր: Բանկային վերափոխումները Հայաստանում սկսվեցին 1993 թ. «Կենտրոնական բանկի մասին», «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքների ընդունմամբ և ազգային դրամը շրջանառության մեջ մտցնելով:

Բայց գնալով մեծացավ բնակչության անվստահությունը բանկերի հանդեպ: Տասնյակ հազարավոր ավանդատուներին խաբելը և ֆինանսական չուկայում տեղի ունեցող տատանումները բանկերին զրկեցին ազգաբնակչության միջոցները առավելագույնս ներգրավելու հնարավորությունից:

Հանրապետությունում ֆինանսավարկային քաղաքականությունն իրականացվում էր միջազգային ֆինանսական կազմակերպությունների օժանդակությամբ: 1993-1994 թթ. Հանրապետությանը տրամադրված արտասահմանյան վարկերի պայմանագրային գումարը կազմեց 1250 մլն դոլար, որի հիմնական մասը հատկացվեց բյուջեի դեֆիցիտի փակմանը, իսկ մի մասը՝ ազգային արժույթի ամրապնդմանը և ուրիշ ոչ արտադրական

նպատակների: Փոխանակ վարկերը օգտագործվեին արտադրական ենթակառուցվածքների, արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացման համար, տեղի ունեցավ, սակայն, դրանց ոչ նպատակային օգտագործում ու փոչիացում: Արդյունքում զարգացան ստվերային տնտեսությունը և կլանային համակարգը:

Հայաստանի վարկավորումը հիմնականում կատարվում էր Համաշխարհային բանկից և Արժույթի միջազգային հիմնադրամից: Այս կազմակերպությունները չատ հաճախ հանդես էին գալիս թելադրողի դերում և իրենք էին որոշում Հանրապետության այս կամ այն ճյուղի զարգացումը: Այսպես, Արժույթի միջազգային հիմնադրամի ղեկավարությունը հայտարարում էր, որ Հայաստանին ծանր արդյունաբերություն պետք չէ, որ նրան ձեռնտու է ոչ թե մեքենաշինության զարգացումը, որն ավելի մեծ կապիտալ ներդրում է պահանջում, այլ՝ թեթև և սննդի արդյունաբերության զարգացումը, որը կարող էր կարճ ժամանակում մեծ շահույթ ապահովել:

Հայաստանի արտաքին պարտքը 1991 թ. զրոյական մակարդակից 1995 թ. կազմեց 850 մլն ԱՄՆ դոլար: Արտասահմանյան վարկերից հարյուր միլիոնավոր դոլարներ հանգրվանեցին կոռումպացված պաչտոնյաների գրպաններում: Հանրապետության արտաքին հիմնական պարտատերերն էին միջազգային ֆինանսական կազմակերպությունները, իսկ երկկողմանի վարկային պայմանագրերով՝ նաև Ռուսաստանի Դաշնությունը, Եվրոպական միությունը, Թուրքմենստանը: Գնալով Հանրապետության արտաքին պարտքը ձեռք բերեց ինքնաճման միտում. երբ պետությունը ստիպված վերցնում էր նոր վարկեր՝ հները մարելու համար:

Պետությունն իր ֆինանսական-տնտեսական վիճակի կայունացումը իրականացնում էր ունեզրկվածներին ևս մեկ անգամ ունեզրկելու, մանր ու միջին առևտուրը խեղդելու հաշվին: Նման քաղաքականության արդյունքում բնակչության հսկայական մեծամասնության համար ստեղծվել էր ծանրագույն կացություն:

Ե. Բնակչության սոցիալական վիճակը: Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական ծանր վիճակը կտրուկ փոխեց հասարակության ճնչող մեծամասնության կենսապայմանները:

Հանրապետությունում վարվող սոցիալ-տնտեսական քաղաքականության արդյունքում խոսք լինել չէր կարող հասարակության ամենալայն շրջանների կենսապայմանների բարելավման մասին: Չնայած տարեցտարի պաչտոնապես արձանագրվող 5-6%-անոց տնտեսական աճին՝ այնուամենայնիվ չուկայական «բարեփոխումների» պտուղներից օգտվում էր բնակչության չնչին փոքրամասնությունը կազմող ունևորների խավը:

Տասնյակ տարիների ընթացքում երաչխավորված աչխատատեղին և աչխատավարձին սովոր, աչխատասերի համբավ ունեցող հայ ժողովրդի ակտիվ մասը հանկարծակի հայտնվեց գործազուրկի կարգավիճակում: Հանրապետությունում երկարատև գործազրկության դատապարտվածների թիվը 2000 թ. կազմեց ամբողջ գործազուրկների թվի 75%-ը, որոնց մեծ մասը (մոտ 80 %) մինչև 50 տարեկան էր և չէր աչխատում 1992 թվից ի վեր: Նոր աչխատատեղերի ստեղծման ծրագիրը մնացել էր թղթի վրա, չէին մչակվել սեփականաչնորհված ձեռնարկություններում զանգվածային ազատումները զսպող աչխատակարգեր, չէին սահմանվել նվազագույն աչխատատեղերի թիվը նման ձեռնարկություններում:

Աչխատանքային չուկայում առաջացած վիճակը հանգեցրեց նրան, որ աչխատավարձի միջին մակարդակն այլևս չէր ապահովում բնակչության հսկայական զանգվածների նույնիսկ ամենանվազագույն կենսապայմանները: Պետականորեն երաչխավորված նվազագույն աչխատավարձը 2000 թ. հասել էր 5.000 դրամի: Բնակչության 60 %-ը չէր կարողանում հայթայթել սննդի համար անհրաժեչտ չնչին միջոցներն անգամ: Նրա 23,9 %-ը ապրում էր ծայրահեղ աղքատության մեջ, 58,5 %-ը՝ վատ, 13,2 %-ը՝ բավարար, իսկ 4,4 %-ը՝ լիության մեջ:

Այս ամենի հետևանքով Հանրապետությունից սկսվեց մեծ ծավալների հասնող արտագաղթ: Հայաստանի մոտավորապես 3 մլն 400 հազար բնակիչներից 1991-2000 թթ. ընթացքում երկիրը լքեց 1 մլն 200 հազարը, վերադարձածների թիվը կազմեց 380 հազար մարդ: Արտագաղթողների մեծ մասն իր բախտը

փնտրում էր Ռուսաստանում, 25-30 %-ը՝ հեռավոր արտասահմանում:

զ. Առողջապահություն: *Հայաստանի առողջապահության համակարգը ժառանգել էր բավական հարուստ նյութատեխնիկական բազա՝ հիվանդանոցների, պոլիկլինիկաների և այլ բուժհիմնարկների համապարփակ ցանց: Բնակչության մեկ շնչի հաշվով Հայաստանը բժիշկների թվաքանակով դասվում էր աշխարհի զարգացած երկրների շարքը: Բուժսարքավորումները, որ ստացվել էին երկրաշարժից տուժածներին մարդասիրական օգնություն ցույց տալու համար, հնարավորություն տվեցին Երևանում և երկրաշարժի գոտում մի շարք նոր հիվանդանոցներ բացել: Եվրոպայի և ԱՄՆ-ի առաջավոր բժշկական հիմնարկներում վերապատրաստված հայ բժիշկները Հայաստանում իրականացնում էին ամենաբարդ հիվանդությունների ախտորոշում և բուժում: Սակայն, դրա հետ միասին համակարգը դարձավ վճարովի, իսկ պետության կողմից երաշխավորված անվճար բուժօգնության և ծառայությունների սպասարկումը բավական խրթին, որի պատճառով բնակչության մեծ մասը չէր պատկերացնում, թե ինչ չափանիշներով էր ստանալու բուժօգնություն: Ունենալով փաստորեն լուրջ համակարգված կառուցվածք՝ առողջապահությունը միևնույն ժամանակ դառնում էր անհասանելի, սակագները բնակչության մեծ մասի համար մատչելի չէին, գրեթե բոլոր բուժհիմնարկներում բացի պաշտոնական վճարներից, գոյություն ուներ ստվերային վճարումների համակարգ: Այս ամենը բնակչության անապահով խավերի մեջ ստեղծել էր խոր դժգոհություն և անվստահություն:*

Հիվանդները բուժվելու համար անհրաժեշտ միջոցներ չունեին, ուստի ավելացան հիվանդություններն ու մահացությունները, խիստ նվազեց պոլիկլինիկաներ հաճախողների թիվը, հիվանդանոցում բուժվում էին միայն ծայրահեղ անհրաժեշտությունից դրդված: Այստեղ հիվանդները չէին ապահովվում անհրաժեշտ դեղամիջոցներով, վիրակապերով, սննդով, սպիտակեղենով և առաջին անհրաժեշտության մյուս պարագաներով: Բուժօգնության անմատչելիությունից հատկապես տուժում էին բնակչության սոցիալապես առավել խոցելի խավերը:

Առողջապահության պետական վերափոխումների շրջանակում 1998 թ. գարնանից սկսեց իրագործվել Համաշխարհային բանկի հետ համատեղ մշակված ծրագիր՝ 10 մլն ԱՄՆ դոլարի անտոկոս վարկի հաշվին: Նախատեսվում էր անցնել պարտադիր բժշկական ապահովագրության՝ սկզբնական փուլում հիվանդությունների մի շարք տեսակների համար պահպանելով անվճար առողջապահություն: Բայց պարտադիր առողջապահական ապահովագրությունը ոչ մի խնդիր չէր կարող լուծել բնակչության մեծամասնության ցածր աշխատավարձի և լայնածավալ ստվերային տնտեսության պատճառով:

2. ՀՈԳԵՎՈՐ ՈԼՈՐՏԸ

ա. Գիտությունը: *ԽՍՀՄ-ի գոյության պայմաններում Հայաստանի գիտությունը հանդիսանում էր Խորհրդային Միության երբեմնի հզոր ու միասնական գիտական համալիրի օրգանական բաղադրիչը: Այստեղ, ըստ էության, գոյություն չունեին ֆինանսավորման կամ նյութատեխնիկական ապահովման խնդիրներ:*

Մինչև ԽՍՀՄ-ի փլուզումը Հայաստանը գիտության զարգացման ցուցանիշներով առաջնակարգ դիրքեր էր զբաղեցնում նախկին միութենական հանրապետությունների գիտական հանրությունների շրջանակում: Բայց Հայաստանի անկախացումից հետո ստեղծված տնտեսական ծանր վիճակը, նյութական և ֆինանսական միջոցների անբավարարությունը, գիտական կապերի խզումը, գիտական տեղեկատվության սղությունը հանգեցրին հանրապետությունում գիտական գործունեության լճացման: Քանդվեցին հիմնարար ու կիրառական գիտությունների և արտադրության միջև գոյություն ունեցող փոխադարձ կապերը, փլուզվեցին ժամանակին մեծ համբավ ձեռք բերած գիտական դպրոցները, խաթարվեց գիտական և գիտամանկավարժական կադրերի վերարտադրության՝ տասնամյակների ընթացքում ձևավորված համակարգը, կազմալուծվեց գիտական արդյունավետ հետազոտությունների նյութատեխնիկական հիմքը: Հանրապետությունում վարվող արմատական-ազատական բարեփոխումների քաղաքականության ընդհանուր հայեցակետում գիտությունը դիտարկվում էր որպես չափազանց

ծախսարար և անթույլատրելի ճոխություն և, որպես կանոն, պետական միջոցներից ֆինանսավորվում էր մնացորդային սկզբունքով:

Պետության կողմից ոչ հոգատար վերաբերմունքի հետևանքով Հայաստանի ճյուղային գիտահետազոտական ինստիտուտների մեծ մասը՝ մոտ 80%-ը, որ նախկինում կուտակել էր նյութատեխնիկական զգալի պաշարներ, գիտական և ինժեներատեխնիկական կադրեր, քայքայվեց, իսկ դրանցում մնացողները, նախկին միութենական գործընկերների հետ համատեղ կատարվող մշակումների ֆինանսավորման չնորհիվ, հազիվ կարողացան գոյատևել:

Հանրապետության գիտական համալիրի քայքայումը հանգեցրեց գիտական կադրերի («ուղեղների») արտահոսքի: Միայն ՀՀ ԳԱԱ-ի համակարգից 1991-1995 թթ. հեռացել էր 800 գիտաշխատող, որոնցից 200-ը մշտական բնակության էր մեկնել արտասահմանյան երկրներ: Երկրից մեկնածների թվում գերակշռում էին ազգային գիտության առավել օժտված և կարողունակ ներկայացուցիչները, հատկապես երիտասարդ և միջին տարիքի գիտնականները, որոնք ակնառու հաջողությունների էին հասել իրենց ընտրած ասպարեզում:

Հայաստանի գիտության ոլորտին բնորոշ կադրային տեղաշարժ էր կատարվում նաև ներքին արտահոսքի միջոցով: Գիտնականներից չատերը, որոնք միջոցներ չունեին արտասահման մեկնելու, թողնում էին գիտական աշխատանքը և տեղափոխվում գործունեության այլ ասպարեզներ, որտեղ հնարավոր էր քիչ թե չատ վաստակ ունենալ և մի կերպ ապահովել իրենց ընտանիքների գոյությունը:

Անկախության պայմաններում հնարավորություն էր ստեղծվել օգտակար կապ հաստատել աշխարհի առաջատար գիտական կենտրոնների հետ, ուսումնասիրել և կիրառել գիտության կազմակերպման համաշխարհային փորձը: Հատկանշական է, որ Հայաստանի գիտական ներուժի հսկայական հնարավորությունների օգտագործման մեջ մեծ հետաքրքրություններ էին դրսևորում ոչ միայն Արևմուտքի համալսարաններն ու գիտահետազոտական կենտրոնները, այլև ռազմական բնույթի, մասնավորապես Հյուսիսատլանտյան դաշինքի (ՆԱՏՕ) կառույցները: Հայաստանի գիտնականների արտասահմանյան երկարաժամկետ գործուղումների մեծ մասը ֆինանսավորում էին «Հումբոլդտի» (ԳՖՀ), «Բենջամին Ֆրանկլինի» (ԱՄՆ), «Սորոսի» (ԱՄՆ) հիմնադրամները, INTAS-ը (ԱՄՆ), TACIS-ը (Եվրամիություն) և այլն:

Հայաստանի գիտության համար լուրջ ձեռքբերում եղավ ակադեմիական համակարգչային տեղեկատվական ցանցի ստեղծումը: 1994 թ. ՀՀ ԳԱ Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտում կատարված աշխատանքները թույլ տվեցին ստեղծել Հայաստանում առաջին ռադիոմոդելային ցանցը և «Հայաստան» հիմնադրամի աջակցությամբ պատրաստված վերգետնյա արբանյակային հանգույցի միջոցով ապահովել ելք դեպի ինտերնետ: Առաջին ինտերնետային կապի միջոցով կառավարության, արտասահմանյան հայկական բարեգործական կազմակերպությունների և միջազգային դրամաշնորհների օժանդակությամբ հաջողվեց մի քանի տարվա ընթացքում ստեղծել ՀՀ ԳԱ տեղեկատվական ցանց: Հայ գիտնականները սկսեցին ավելի չատ դրամաշնորհներ չահել միջազգային գիտական ծրագրերի, տեղեկատվական աջակցության, գիտական աշխատությունների հրապարակման, նոր գիտական սարքավորումների ձեռքբերման և այլ ասպարեզներում:

Անկախության պայմաններում գիտական համակարգի վերափոխմանը նպաստեցին մի չարք օրենքներ ու որոշումներ, որոնցից իր կարևորությամբ առանձնանում էր. 2000 թ. Ազգային ժողովի կողմից ընդունված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» օրենքը:

Զգալի աշխատանքներ էին տարվում հայագիտության զարգացման ուղղությամբ: Անհրաժեշտ էր հաղթահարել խորհրդային դարաշրջանի գաղափարական կապանքները: Հայոց պատմության մի չարք թեմաներ ենթարկվեցին համակողմանի ուսումնասիրության, հայ պատմաբանները հնարավորություն ստացան անաչառ լուսաբանել պատմական իրողությունները: Կարևոր էր հայոց պետականության վերականգնման, անկախության համար հայ ժողովրդի մղած պայքարի պատմության ուսումնասիրությունը, որն իր մեջ ներառում էր հայ ազգային-ազատագրական չարժումը, հայկական հարցը, հայ դատը:

Հրատարակվեցին ֆիդայական չարժման նշանավոր գործիչներին, ազատագրական պայքարի ազատամարտիկներին նվիրված աշխատություններ: Լայն ծավալ ստացավ Հայաստանի նոր և նորագույն շրջանի պատմության, Ղարաբաղյան ազատագրական պայքարի, Հայոց ցեղասպանության և մի շարք այլ թեմաների ուսումնասիրությունը: Միաժամանակ զարգանում էին հնագիտությունը, ազգագրությունը, գրականագիտությունը և հումանիտար այլ ուղղություններ:

բ. Կրթությունը: Սկսվեցին կրթամշակութային ոլորտի կատարելագործման ուղիների որոնումները: Խորհրդային իշխանության օրոք հայ ժողովուրդը ձեռք էր բերել բարձր կրթական մակարդակ: Բայց ակնախությունից հետո այն էապես վտանգվել էր: 1991-1995 թթ. այս ոլորտը դիտարկվում էր որպես կառավարական ու տնտեսական գերակայությունից դուրս գտնվող բնագավառ, ուստի նրա հոգսերը դրվեցին տեղական իշխանության մարմինների և հասարակության վրա:

Հետագա տարիներին փոփոխություններ կատարվեցին կրթական համակարգում, որոնք ամրագրվեցին 1999 թ. «Կրթության մասին» Ազգային ժողովի կողմից ընդունած օրենքում:

Պետությունը չէր խոչընդոտում տարբեր տիպի դպրոցների, այդ թվում մասնավոր դպրոցների ստեղծմանը: 2000 թ. նման դպրոցների թիվը հասավ 40-ի:

Ընդունված որոշումների համաձայն՝ Հայաստանում հայ երեխաները պետք է սովորեին միայն հայկական դպրոցներում: Հրատարակվեցին ուսումնական նոր ծրագրերով դասագրքեր, որոնց մեծ մասն անորակ լինելու պատճառով չէր համապատասխանում հայ ազգային դպրոցի առջև դրված խնդիրներին:

Ուսուցիչների արտահոսքը (բարձրագույն կրթությամբ շատ ուսուցիչներ, հիմնականում տղամարդիկ, սոցիալական ծանր վիճակից ելնելով՝ հեռանում էին դպրոցից), դասագրքերի, մեթոդական և օժանդակ գրականության պակասը, գրենական պիտույքների թանկությունը և այլն խոչընդոտում էին ժողովրդական կրթության զարգացմանը: Ծանր վիճակում էր գտնվում նյութատեխնիկական բազան, դպրոցական շինությունները չէին վերանորոգվում և դրանց հետագա շահագործումը դառնում էր

վտանգավոր: Այս երևույթներն առկա էին նաև նախադպրոցական հիմնարկներում:

Փոփոխություններ կատարվեցին հանրապետության բարձրագույն կրթության ոլորտում: Բուհերի ուսումնական ծրագրերից հանվեցին անցյալում բոլոր բուհերի համար պարտադիր առարկաները՝ Կոմունիստական կուսակցության պատմությունը, մարքս-լենինյան փիլիսոփայությունը, գիտական կոմունիզմը, գիտական աթեիզմը:

Համաշխարհային հանրության մեջ ինտեգրվելուն էր միտված ՀՀ կառավարության 1995 թ. հունիսի 12-ի որոշումը բուհերում ուսուցման նոր՝ եռաստիճան համակարգին անցնելու մասին: Այդ համակարգը բաղկացած է բակալավրիատից՝ 4 տարի (որը տալիս է թերի բարձրագույն կրթություն), մագիստրատուրայից՝ 2 տարի (բարձր որակավորման մասնագետների պատրաստում) և ասպիրանտուրայից (կադրերի պատրաստում բուհերի և գիտահետազոտական հիմնարկների համար):

Փորձեր ձեռնարկվեցին բուհերի ինքնուրույնությունն ընդլայնելու ուղղությամբ, ընդարձակվեց դրանց համագործակցությունն արտասահմանյան ուսումնական և գիտական հաստատությունների հետ:

Որոշ ինստիտուտներ (բժշկական, պոլիտեխնիկական և այլն) ոչ համոզիչ պատճառաբանություններով վերանվանվեցին համալսարաններ կամ ակադեմիաներ:

1991 թ. հիմնադրվեց Հայաստանի Ամերիկյան համալսարանը (ՀԱՀ)՝ որպես Կալիֆորնիայի (ԱՄՆ) համալսարանի մասնաճյուղ: Ավելի ուշ բացվեցին Ֆրանսիական և Եվրոպական համալսարանները, իսկ 1998 թ.՝ Սլավոնական (Ռուսական) համալսարանը:

Եթե 1990-ական թվականների շեմին Հայաստանում գործում էր պետական 14 բուհ՝ 48.9 հազար ուսանողով, որտեղ կադրեր էին պատրաստվում 103 մասնագիտությունների գծով, ապա 2000 թ.՝ 19 պետական բուհ՝ ավելի քան 158 մասնագիտությունների գծով և 43.6 հազար ուսանողներով:

1990 թվականից Հայաստանի մասնագիտական կրթության ոլորտում ներդրվեց վճարովի ուսուցման համակարգը: Բացվեցին բազմաթիվ մասնավոր համալսարաններ ու քոլեջներ, որոնց մեծ

մասի մակարդակը շատ հեռու էր բուհերին ներկայացվող պահանջներից:

գ. Գրականությունը և արվեստը: Հասարակական հարաբերությունների արմատական փոփոխությունները իրենց դրական և բացասական հետևանքներն էին ունենում երկրների մշակութային կյանքի վրա: Բացառություն չկազմեց Հայաստանը:

Առկա սոցիալ-տնտեսական ծանր իրադրությունը բացասական ազդեցություն ունեցավ հոգևոր կյանքի վրա: Պետական անհրաժեշտ օգնության ու հոգածության բացակայության պատճառով հայոց մշակույթը մեծ անկում ապրեց: Խոր ճգնաժամի մեջ հայտնվեցին հայ թատրոնը և կինոն, կրճատվեց գրքերի տպագրությունը, խաթարվեցին մշակութային կապերը: Ունենալով զգալի ազատություն՝ ազատ մամուլի զարգացման հնարավորությունները հանրապետությունում, այնուամենայնիվ, սահմանափակ էին. թերթերի մեծամասնությունն ուներ ընդամենը 2-3 հազար տպաքանակ և տարածվում էր հիմնականում մայրաքաղաքում:

Արվեստի բազմաթիվ կոթողներ, ճարտարապետական հուշարձաններ, թատրոնի և կինոյի շենքեր հայտնվեցին անմխիթար վիճակում: Մշակութային շատ հիմնարկների սեփականաշնորհման հետևանքով ստեղծագործական բազմաթիվ կոլեկտիվներ անգործության մատնվեցին:

Բայց դրությունն աստիճանաբար սկսեց փոխվել:

Հայաստանի երրորդ հանրապետության հռչակումից հետո ստեղծագործական գործունեությունը շարունակեցին հայ գրողները: Զափածո երկերի նոր ժողովածուներով ու շարքերով հանդես եկան բանաստեղծներ Համո Սահյանը, Վահագն Դավթյանը, Սիլվա Կապուտիկյանը, Ռազմիկ Դավոյանը, արձակագիրներ Սերո Խանզադյանը, Հրանտ Մաթևոսյանը, Զորայր Խալափյանը, Գուրգեն Խանջյանը, Լևոն Խեչոյանը և ուրիշներ:

Հետխորհրդային առաջին տարիներին դժվարին վիճակում հայտնվեցին նաև ազգային կերպարվեստն ու ճարտարապետությունը: Հայ արվեստագետներից ոմանք հեռացան Հայաստանից:

Չնայած շարունակվող սոցիալ-տնտեսական ծանր ճգնաժամին և շատ ցածր վարձատրությանը՝ արվեստի աշխատողները,

սակայն, ձգտում էին համընթաց քայլել ժամանակի հետ: Հաջողություններ էին արձանագրում առանձին թատրոններ, երգի և պարի համույթներ, ստեղծագործող կոլեկտիվներ:

1990-ական թթ. ևս, ինչպես խորհրդային շրջանում, հայ կերպարվեստի առաջատար ճյուղը գեղանկարչությունն էր: Այդ ասպարեզում աչքի ընկան Սարգիս Մուրադյանը, Փարավոն Միրզոյանը, Ռուդոլֆ Խաչատրյանը, Սոնյա Պալասանյանը և ուրիշներ:

Դավիթ Բեջանյանի «Առնո Բաբաջանյան», Արա Շիրազի «Զորավար Անդրանիկ», Նորայր Կարգանյանի «Հովհաննես Բագրամյան», Յուրի Պետրոսյանի «Հովհաննես Այվազովսկի» գործերը, ՀՀ անկախության շրջանի լավագույն ճարտարապետական հուշարձաններից են:

ՀՀ անկախության տարիներին շարունակում էր ստեղծագործել հրաշագործ էդուարդ Ղազարյանը (1923-2012): Նրա համաշխարհային զարմանահրաշ նվաճումը միկրոքանդակագործության նոր ուղղության՝ չարժական միկրոաշխատանքների ստեղծումն էր: Է. Ղազարյանը հեղինակ էր անզեն աչքով անտեսանելի և մինչև օրս չգերազանցված չուրջ հազար յուրօրինակ չարժական միկրոքանդակների, որոնց ստեղծման գաղտնիքը դեռ չի բացահայտված: Պատահական չէ, որ Քեմբրիջի կենսագրական կենտրոնը 2006 թ. Է. Ղազարյանին հայտարարեց բոլոր ժամանակների ամենահանճարեղ մարդկանցից մեկը և նրան պարգևատրեց «Կենդանի լեգենդ» ոսկե մեդալով:

Անկախության առաջին տարիներին երաժշտական շատ խմբեր, չհարմարվելով նոր պայմաններին, լուծարվեցին: Բայց ժամանակի ընթացքում իրավիճակը սկսեց կարգավորվել: Բարձրարժեք ստեղծագործություններով հանդես եկան կոմպոզիտորներ Էդգար Հովհաննիսյանը, Տիգրան Մանսուրյանը և ուրիշներ:

Միաժամանակ սփյուռքահայ շատ արվեստագետներ եկան Հայաստան և մասնակցեցին հայրենիքի մշակութային վերածննդի գործին: Առաջիններից էր դիրիժոր և կոմպոզիտոր Լորիս Ճգնավորյանը, որը ստանձնեց Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի ղեկավարությունը: Հայաստանում վերսկսեց իր գործունեությունը աշխարհահռչակ դիրիժոր Օհան Դուրյանը:

Սփյուռքահայ մեծատաղանդ երաժիշտ Արամ Ղարաբեկյանը ստանձնեց Պետական կամերային նվագախմբի ղեկավարությունը՝ բարձրացնելով այն նոր աստիճանի: Մեծ հռչակ ձեռք բերեց Գյումրիի «Գոհար» համույթը՝ տաղանդավոր դիրիժոր Սեպուհ Աբգարյանի ղեկավարությամբ:

Անկախությունը ապահովեց հոգևոր մշակույթի զարթոնքը: Բեմերից հնչեցին միջնադարյան հոգևոր երաժշտության գոհարները՝ «Շարական» (գեղարվեստական ղեկավար՝ Դանիել Երաժիշտ), «Տաղարան» (գեղարվեստական ղեկավար՝ Ս. Երկանյան) համույթների կատարմամբ:

Նոր բեմադրություններով հանդես եկան Ս. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի, Սունդուկյանի անվան դրամատիկական, Համազգային, Գյումրիի, Վանաձորի թատրոնները:

Անկախության առաջին տասնամյակի բարդ պայմաններում Հայաստանում նկարահանվել են երեք տասնյակից ավելի գեղարվեստական խաղարկային ֆիլմեր և բազմաթիվ վավերագրական կինոնկարներ: Հաջորդ տասնամյակում նկարահանվեցին 60 լիամետրաժ ու կարճամետրաժ գեղարվեստական ֆիլմեր: Հայկական կինոյում մեծ դեր էին կատարում համաշխարհային ճանաչում ստացած Արտավազդ Փելեշյանը, ինչպես նաև Վիգեն Չալդրանյանը, Տիգրան Խզմալյանը, Հարություն Խաչատրյանը, Ռուբեն Գևորգյանցը և ուրիշներ:

Հայ ռեժիսորների ֆիլմերը ներկայացվում էին միջազգային կինոփառատոներում: Հայաստանում նույնպես կազմակերպվում էին կինոփառատոներ, որոնց մեջ առաջնությունը, իբրև մշակութային խոշոր իրադարձություն, պատկանում էր «Ոսկե ծիրան» ամենամյա միջազգային կինոփառատոնին:

3. ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆ ԵՎ ՍՊՈՐՏԸ

Հայաստանի անկախության առաջին տասնամյակում չկար ֆիզիկական կուլտուրայի և սպորտի լիարժեք ֆինանսավորում, որի հետևանքով վերանորոգման խիստ կարիք ունեին բոլոր մարզադահլիճները և սպորտային կառույցները: Մարզասրահները չէին տաքացվում, չէին գործում վերականգնման կենտրոնները: Դրա հետևանքով նվազել էր ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվողների թիվը:

Բայց վիճակն աստիճանաբար լավացավ: Հիմնադրվեց Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեն (ՀԱՕԿ), որի աջակցությամբ կարճ ժամանակամիջոցում միջազգային ֆեդերացիաների անդամներ հաստատվեցին հանրապետության բռնցքամարտի, հունահռոմեական և ազատ ոճի ըմբշամարտի, ծանրամարտի, մարմնամարզության, թենիսի, սեղանի թենիսի, բասկետբոլի, ֆուտբոլի, վոլեյբոլի և այլ մարզաձևերի ազգային ֆեդերացիաները:

Սկսվեց աշխուժանալ մարզական կյանքը: Աստիճանաբար վերականգնվում էր հայ մարզիկների երբեմնի համաշխարհային համբավը: Այդ տարիներին օլիմպիական խաղերում և միջազգային այլ միջոցառումներում չեմպիոններ հռչակվեցին հրաձիգներ Հրաչյա Պետիկյանը, Երջանիկ Ավետիսյանը, ըմբիշներ Մնացական Իսկանդարյանը, Արմեն Նազարյանը, Ալֆրեդ Տեր-Մկրտչյանը, Արմեն Մկրտչյանը, Անուշավան Սահակյանը, Արայիկ Գևորգյանը, Վաղինակ Գալստյանը, Ռոման Ամոյանը, Արա Աբրահամյանը, Վահան Ջուղարյանը, Մովսես Կարապետյանը, Արսեն Ջուլֆալակյանը, բռնցքամարտիկներից Հովհաննես Դանիելյանը, Էդիկ Համբարձումյանը, Հրաչիկ Ջավախյանը, պրոֆեսիոնալ բռնցքամարտիկներ Վիկ Դարչինյանը, Արթուր Աբրահամը, ծանրամարտիկ Իսրայել Միլիտոսյանը, Խաչատուր Քյափանակցյանը, Գևորգ Դավթյանը, Առաքել Միրզոյանը, Տիգրան Մարտիրոսյանը և ուրիշներ:

Ծանրամարտի գծով առաջին հայ կինը, որ Եվրոպայի չեմպիոն դարձավ Հռիփսիմե Խուրշուդյանն էր (2007 թ.), որին հաջորդեց Մելինե Դալուզյանը (2008 թ.), իսկ աշխարհի չեմպիոն՝ հռչակվեց Նազիկ Ավդալյանը (2009 թ.):

1999 թվականից աշխատանքներ տարվեցին Համահայկական խաղեր կազմակերպելու ուղղությամբ: Հայաստանում կայացած առաջին այդ խաղերը, որոնք տեղի ունեցան 1999 թ. օգոստոս-սեպտեմբերին, վերածվեցին մարզամշակութային խոշոր տոնի: Դրան հաջորդեցին 2001, 2003, 2007 և 2011 թթ. համահայկական խաղերը:

Հանրապետությունում ֆիզկուլտուրայի և սպորտի զար-

գացմանը մեծապես նպաստեց ՀՀ Ազգային ժողովի կողմից 2001 թ. հունիսին ընդունած «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» ՀՀ օրենքը:

Լուրջ հաջողությունների հասավ և համաշխարհային մեծ հռչակ ձեռք բերեց Հայաստանի չախմատի ընտրանին: 1999 թ. Եվրոպայի չեմպիոնի կոչումը նվաճեցին Լևոն Արոնյանը, Սմբատ Լպուտյանը, Արտաշես Մինասյանն ու Աշոտ Անաստասյանը: Հանրապետության չախմատի տղամարդկանց հավաքական թիմը՝ գրոսմայստերներ Լ. Արոնյան, Վ. Հակոբյան, Կ. Ասրյան, Գ. Սարգսյան, Ս. Լպուտյան, Ա. Մինասյան կազմով 2006 թ. համաշխարհային չախմատային օլիմպիադայում, նվաճեց չեմպիոնի տիտղոսը: Այդ աննախադեպ հաջողությունը չախմատի հրաշալի հնգյակը՝ Լ. Արոնյան, Վ. Հակոբյան, Գ. Սարգսյան, Ա. Մինասյան և Տ. Պետրոսյան կազմով, կրկնեց 2008 թվականին: Հայաստանը դարձնելով չախմատային օլիմպիադայի կրկնակի չեմպիոն: Հայ չախմատիստները (Լևոն Արոնյան, Սերգեյ Մովսիսյան, Վլադիմիր Հակոբյան, Գաբրիել Սարգսյան, Ռոբերտ Հովհաննիսյան, մարզիչ Արչակ Պետրոսյան կազմով) նոր հաջողության հասան 2011 թ. հուլիսին՝ չախմատի աշխարհի 8-րդ թիմային առաջնությունում՝ նվաճելով չեմպիոնի տիտղոսը: Շախմատի կանանց հավաքական թիմը՝ Է. Դանիելյան, Լ. Մկրտչյան, Ն. Աղինյան կազմով 2003 թ. դարձավ Եվրոպայի չեմպիոն: Շախմատի համաշխարհային միջազգային անհատական մրցաշրջաններում առաջին տեղերը գրավեցին սփյուռքահայ չախմատիստներ Յուրի Դուխոյանը (Ռուսաստան), Սերգեյ Մովսիսյանը (Չեխիա), Գեորգի Բագատուրը (Վրաստան), Նաիրա և Էլմիրա Աղաբաբյանները (Մոլդովա):

Անկախության տարիներին տարբեր մարզաձևերում Եվրոպայի և աշխարհի չեմպիոններ դարձան տարբեր պետությունների հայ գաղթօջախների բազմաթիվ մարզիկներ: Նրանցից էին սուսերամարտիկներ Գեորգի Պողոսյանը (Ուկրաինա), Կարինե Ազնավուրյանը (Ուզբեկստան), բոնցքամարտիկ Արթուր Գրիգորյանը (Գերմանիա), հնգամարտիկ Միսակ Կոստիկյանը (ԱՄՆ), լողորդ Քրիստոֆ Կալֆայանը (Ֆրանսիա), մարմնամարզիկ Ջինա Գոգյանը (Ռումինիա), ըմբշամարտիկ Նուրիան Լելիկյանը (Բուլղարիա), Սամվել Դանիելյանը (Ռուսաստան), Մխիթար Մանուկյանը (Ղազախստան), թենիսիստ Անդրե Աղասին (ԱՄՆ): Առաջին հայազգի կին բոնցքամարտիկ Սյուզի Կենտիկյանը (Գերմանիա) աշխարհի չեմպիոնի կոչում վաստակեց 2007 թվին: 1998 թ. Ֆրանսիայի ֆուտբոլի ազգային հավաքականի կազմում աշխարհի չեմպիոնի տիտղոս նվաճեցին ֆրանսահայ ֆուտբոլիստներ Յուրի Ջորկաևը և Ալեն Պողոսյանը:

4. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ

Հայաստանի անկախության գործընթացում քայլեր ձեռնարկվեցին հասարակական կյանքի դեմոկրատացման և նոր հարաբերությունների հաստատման ուղղությամբ: 1990 թ. նոյեմբերի 5-ին Գերագույն խորհուրդը որոշում ընդունեց Հանրապետության պետական մարմինները, ձեռնարկությունները, հիմնարկները, կազմակերպությունները, ուսումնական հաստատությունները և զինվորական ստորաբաժանումները ապաքաղաքականացնելու վերաբերյալ: 1991 թ. փետրվարի 26-ին Գերագույն խորհրդի կողմից ընդունվեց «Հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին» օրենքը, որով Հանրապետությունում ստեղծվում էր բազմակուսակցական համակարգ: Երկարամյա ընդմիջումից հետո Հայրենիքում վերստին ազատորեն գործելու իրավունք ստացան ազգային ավանդական Հայ Հեղափոխական դաշնակցություն, Ռամկավար-ազատական և Հնչակյան կուսակցությունները:

Աստիճանաբար Հանրապետությունում առաջացան նոր կուսակցություններ, հասարակական-քաղաքական կազմակերպություններ ու միություններ. Ազգային ինքնորոշում միավորումը (ԱԻՄ), Հայաստանի Հանրապետական կուսակցությունը (ՀՀԿ), Ազգային ժողովրդավարական միությունը (ԱԺՄ), Քրիստոնեաժողովրդավարական միությունը (ՔԺՄ), Սահմանադրական իրավունք միությունը (ՍԻՄ), Հայաստանի դեմոկրատական կուսակցությունը (ՀԴԿ) և այլն: Շարունակում էր գործել իշխանությունից զրկված Հայաստանի կոմունիստական կուսակցությունը, որը, սակայն, չուներ նախկին միասնությունը և խոր ճգնաժամ էր ապրում ներքին երկպառակություններից: Ավելի

ուշ հիմնվեցին Հայաստանի սոցիալիստական կուսակցությունը (ՀՍԿ), Հայաստանի սոցիալիստական ուժերի միությունը (ՀՍՈՒՄ), Հայաստանի ժողովրդական կուսակցությունը (ՀԺԿ), «Օրինաց երկիր» (ՕԵԿ), «Բարգավաճ Հայաստան» (ԲՀԿ) «Ժառանգություն» կուսակցությունները և այլ քաղաքական կազմակերպություններ:

Դրանք բոլորը հավասար իրավունք ստացան օրենքի սահմաններում ազատորեն արտահայտելու իրենց կարծիքը: 1991 թ. ապրիլի 17-ին ՀՀ Գերագույն խորհուրդը որոշում ընդունեց Հայաստանի կոմունիստական կուսակցության և Հայաստանի լենինյան երիտասարդական միության ունեցվածքը ազգայնացնելու մասին: Միաժամանակ գործող մյուս կուսակցություններն ու հասարակական-քաղաքական կազմակերպությունները ձեռք բերեցին գույք ու տարածքներ:

Հայաստանի նորաստեղծ կուսակցությունները դեռևս ամուր կազմակերպական կառույցներ չէին, նաև բազմանդամ չէին, ուստի և դրանցից շատերը որևէ էական դեր չունեցան: Կային նաև գրանցված, բայց չգործող կուսակցություններ, որոնք գոյություն ունեին թղթի վրա:

2000 թ. Հայաստանում գրանցված էին նաև 100-ից ավելի հասարակական կազմակերպություններ, որոնց մեծ մասը, սակայն, ակտիվ գործունեություն չէր ծավալում:

Կուսակցությունների վերաբերյալ օրենքը խախտելու կեղծ ամբաստանությամբ 1994 թ. դեկտեմբերի 28-ից կասեցվել էր Դաշնակցության գործունեությունը, որի հետևանքով նա չկարողացավ մասնակցել ՀՀ խորհրդարանական ընտրություններին: Հասարակական կյանքից այդ ուժի մեկուսացումը բացասաբար անդրադարձավ դեմոկրատական վերափոխումների ընթացքի վրա և երկրում ստեղծեց քաղաքական լարված իրավիճակ:

Հասարակական-քաղաքական կյանքը Հանրապետությունում աշխուժացավ 1995 թ. հուլիսի 5-ի խորհրդարանական ընտրությունների ժամանակ: Ընդդիմության հիմնական կուսակցությունները առաջադրեցին իրենց թեկնածուներին, իսկ ՀՀՇ-ն, իր շուրջը համախմբելով մի շարք կուսակցություններ և հասարակական կազմակերպություններ, ձևավորեց «Հանրապետություն» միավորումը: Նախընտրական պայքարն ընթանում էր «Հանրապետական» միավորման և ընդդիմության միջև: Վերջինիս ներկայացնող հիմնական կուսակցությունները միավորվեցին Ազգային ժողովրդավարական միության (ԱԺՄ) հետ: Ընտրություններում «Հանրապետություն» միավորումը խորհրդարանի 191 պատգամավորական տեղերից նվաճեց 114-ը՝ կազմելով բացարձակ մեծամասնություն: ԱԺՄ-ն ընդդիմադիր մյուս կազմակերպությունների հետ ստացավ ընդամենը 15 տեղ, որով խորհրդարանում նա չէր կարող կարևոր դերակատարություն ունենալ:

Խորհրդարանական այդ ընտրություններն անցան աննախադեպ խախտումների, անարդարության մթնոլորտում: Խորհրդարանում անհրաժեշտ թվով տեղեր նվաճելու նպատակով իշխող ՀՀՇ կուսակցությունը դիմեց քվեաթերթիկների բացահայտ կեղծման, մամուլի և ընտրողների ահաբեկման, կատարեց ժողովրդավարության գաղափարները վարկաբեկող ամենատարբեր գործողություններ, ինչպես, օրինակ, «զուգահեռ» կազմակերպությունների ստեղծումը, կուսակցությունները մեկը մյուսին հակադրելը: Այսպես՝ ՀՅ դաշնակցությանը հակառակ, ստեղծվեց Հայաստանի Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցությունը, ՌԱԿ-ի դեմ՝ Ռամկավար-ազատական (լիբերալ-ժողովրդավարական) կուսակցությունը, կանանց բազմաթիվ կազմակերպությունների կողքին՝ «Շամիրամը» և այլն: Խորհրդարանական այդ «ընտրություններով» Հայաստանում հիմք դրվեց զանգվածային ընտրակեղծիքների ավանդույթին: Հետագայում բոլոր մակարդակներով Հանրապետությունում անցկացվող ընտրությունները վերածվում էին ձևական միջոցառումների՝ նախապես հայտնի արդյունքներով:

Այսպիսով, խորհրդարանում առավել շատ տեղեր ստանալու ձգտումով իշխող կուսակցությունները, որպես կանոն (ՀՀՇ-ն սկզբում, իսկ ապա մյուսները՝ հետագայում), խախտում էին օրինականությունը, կատարում անարդար ու անթույլատրելի գործողություններ, որով ժողովրդի աչքում կորցնում էին վստահությունն ու հեղինակությունը: Ավելին, լայն ծավալներ ընդունեցին քաղաքական հակառակորդների դեմ բռնաճնշումները: Հաճախակի տեղի էին ունենում սպանություններ: Ելուզակային

խմբերի կողմից պատվերով կատարված արյունալի հաշվեհարդարների զոհ էին դառնում օրվա իշխանավորների համար անհաճո պաշտոնյաները, քաղաքական հակառակորդները, նույնիսկ չարքային անմեղ մարդիկ:

1996 թ. սեպտեմբերի 22-ին տեղի ունեցան նախագահական ընտրություններ: «Հանրապետություն» միավորումը առաջադրել էր Հանրապետության նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի, իսկ քաղաքական հինգ կուսակցություններ միավորող ընդդիմությունը՝ ԱԺՄ նախագահ Վազգեն Մանուկյանի թեկնածությունը:

Երկրորդ անգամ Հանրապետության նախագահ ընտրվեց Լ. Տեր-Պետրոսյանը: Այդ ընտրություններից հետո Է՛լ ավելի խորացան իշխանությունների ու հասարակության միջև հակասությունները:

Դժգոհելով նախագահական ընտրությունների արդյունքների բացահայտ կեղծումից՝ ժողովուրդը դուրս եկավ հանրահավաքների ու ցույցերի՝ պահանջելով անցկացնել կրկնակի ընտրություններ: 1996 թ. սեպտեմբերի 25-ի հանրահավաքը վերածվեց Հանրապետության Ազգային ժողովի շենքի վրա գրոհի: Այս առիթն օգտագործելով՝ իշխանություններն ընդդիմության դեմ անցան վճռական գործողությունների: Սկսվեցին նրա առաջնորդների ու ակտիվիստների ձերբակալություններ, բռնություններ և պատվիրված քաղաքական դատավարություններ:

Հանրապետությունում արգելվեցին հանրահավաքներն ու ցույցերը:

1997 թ. նոյեմբերին Լ. Տեր-Պետրոսյանի նախաձեռնությամբ Երևան տեղափոխվեց Արցախի Հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանը և նշանակվեց Հայաստանի Հանրապետության վարչապետ:

Ի վերջո տևական առճակատումը հանգեցրեց գործող նախագահի հրաժարականին:

1998 թ. մարտին արտահերթ նախագահական ընտրությունների ժամանակ հիմնական պայքարը ընթանում էր Հայաստանի Հանրապետության վարչապետ Ռոբերտ Քոչարյանի և քաղաքական ասպարեզ վերադարձած ՀԿԿ Կոմկուսի նախկին առաջին քարտուղար Կարեն Դեմիրճյանի միջև: Հանրապետության նախագահ ընտրվեց Ռ. Քոչարյանը:

1998 թ. փետրվարին վերականգնվեց ՀՅ դաշնակցության պաշտոնական կարգավիճակը, քաղբանտարկյալներն ազատ արձակվեցին, վերսկսեց գործել արգելված մամուլը:

Ընտրություններից հետո հիմնական քաղաքական ուժերը Դաշնակցությունն ու երկրապահներն էին: Ընդդիմադիր պայքարի հարուստ փորձից հրաժարվելով՝ ՀՅԴ-ն դաշնակցեց նախագահի հետ: Երկրապահներն իրենց շուրջը համախմբելով խորհրդարանի այլ պատգամավորների՝ կազմեցին մեծամասնություն:

Ակտիվ քաղաքական պայքարի մթնոլորտում անցան 1999 թ. մայիսի 30-ի խորհրդարանական ընտրությունները: Նախընտրական շրջանում ձևավորվեց «Միասնություն» դաշինքը, որի մեջ մտան Հայաստանի հանրապետական կուսակցությունը (ՀՀԿ), Հայաստանի ժողովրդական կուսակցությունը (ՀԺԿ) և Երկրապահների միությունը: Ընդդիմադիր կուսակցությունները չկարողացան միավորվել և լուրջ ուժ ստեղծել: Ընտրություններում հաղթեց «Միասնություն» դաշինքը: Ազգային ժողովի նախագահ ընտրվեց Կարեն Դեմիրճյանը, վարչապետ նշանակվեց Վազգեն Սարգսյանը:

Մայիսի 30-ից մինչև հոկտեմբերի 27-ն ընկած հինգ ամիսների ընթացքում Հայաստանն ապրում էր ներքաղաքական կյանքի բարդ ու հակասական շրջան:

Իր ձեռքում հսկայական իշխանություն կենտրոնացրած Վ. Սարգսյանի հետևողականությունն ու պահանջկոտությունը հույս էին ներշնչում, որ կարվեն անհրաժեշտ քայլեր երկիրը սոցիալ-տնտեսական և բարոյաքաղաքական ծանր վիճակից դուրս բերելու համար: Կտրուկ ակտիվացավ Հանրապետության արտաքին քաղաքականությունը, աժխուժացան Ղարաբաղյան հիմնահարցի շուրջ ընթացող բանակցությունները: Բայց զարգացումները հետ շրջվեցին 1999 թ. հոկտեմբերի 27-ի նախադեպը չունեցող ահաբեկչությամբ: Այդ օրը ահաբեկիչների խումբը մուտք գործեց խորհրդարան և հրազենով «գլխատեց» օրենսդիր ու գործադիր իշխանությունների ղեկավարությանը: Սպանվեցին Ազգային ժողովի նախագահ Կարեն Դեմիրճյանը, նրա տեղակալներ Յուրի Բախչյանը և Ռուբեն Միրոյանը, պատգամավորներ Արմենակ Արմենակյանը, Հենրիկ Աբրահամյանը, Միքայել Քոթանյանը, նախարար Լեոնարդ Պետրոսյանը: Ոճրա-

գործների գնդակների զոհ դարձավ գործադիր իշխանության ղեկավար, վարչապետ Վազգեն Սարգսյանը:

Ահաբեկչությունը հանգեցրեց հանրապետության ներքաղաքական իրավիճակի կտրուկ սրման: Անմիջապես բացվեց իշխանության թևերի միջև նախորդ շրջանում առկա հակասությունների ողջ թնջուկը: ՀՀՇ-ական և նրան հարող ընդդիմադիր ուժերը սկսեցին հետևողականորեն օգտվել դրանից: Նրանք իրենց առջև խնդիր էին դրել՝ օգտագործելով խառը կացությունը՝ հետ բերել իշխանությունը: Հիմնական դիմակայությունն ընթանում էր ոչ թե քաղաքական տարբեր ուժերի, այլ իշխանության թևերը ներկայացնող պաշտոնյաների միջև:

Հոկտեմբերի 27-ի ողբերգությամբ Հայաստանում սկիզբ առած քաղաքական գործընթացները տևական ժամանակ լարվածության մեջ պահեցին ամբողջ հանրապետությունը: Դիմակայության մեջ էին ընդգրկված մի կողմից՝ հանրապետության նախագահը և նրա շրջապատը, մյուս կողմից՝ կառավարության անդամների ու բարձրաստիճան զինվորականության մի մասը, «Երկրապահ» կամավորների միությունը: Երկրապահները պահանջում էին հանրապետության նախագահի հրաժարականը՝ առաջ քաշելով տարբեր մեղադրանքներ, այդ թվում՝ հոկտեմբերի 27-ի դատավարությանը խոչընդոտելու մեղադրանքը: Նախագահին ընդդիմադիր ուժերի հետ էր նոր նշանակված վարչապետ Վազգեն Սարգսյանի եղբայր Արամ Սարգսյանը: Այնուամենայնիվ, հանրապետության ղեկավարությունը մեծ ջանքերի գնով կարողացավ աստիճանաբար կայունացնել իրավիճակը: ՀՀ նախագահի հրամանագրով 2000 թ. մայիսին Արամ Սարգսյանն ազատվեց զբաղեցրած պաշտոնից, վարչապետ նշանակվեց Հանրապետական կուսակցության նախագահ Անդրանիկ Մարգարյանը (2000-2007):

Այսպիսով, բարեբախտաբար, հաջողվեց ներքաղաքական առճակատումը չեղել կոչտ բախում տանող ուղուց դեպի համերաշխության ճանապարհ: Հասարակությունը խուսափեց անկանխատեսելի հետևանքներով վտանգավոր դիմակայությունից:

5. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի արտաքին քաղաքականության հիմնական խնդիրը բոլոր պետությունների և, առաջին հերթին, հարևանների հետ բարիդրացիական ու փոխշահավետ հարաբերությունների հաստատումն էր:

Հայաստանի Հանրապետության անկախության վերականգնումը բոլոր հատկանիշներով նրան դարձրեց միջազգային հարաբերությունների լիիրավ անդամ՝ հնարավորություն տալով իր կամքով ու հայեցողությամբ մշակել պետության արտաքին քաղաքականությունը: Բայց գտնվելով ԽՍՀՄ-ի կազմում՝ Հայաստանը հասկանալի պատճառներով չուներ միջազգային չափումների փորձ, միջազգային քաղաքականության հայեցակարգ և գործելակերպի չափանիշներ: Նրան սպասում էր քաղաքական դաշնակիցների դժվարին ընտրություն, որոնց հետ նպատակահարմար կլիներ մոտ ապագայում կառուցել միջպետական հարաբերությունների ստվարածավալ համակարգը:

Նորանկախ Հայաստանը միջազգայնորեն ճանաչվեց 1991 թ. վերջերից: Այդ տարվա դեկտեմբերին Հայաստանի Հանրապետությունը ճանաչեցին ԱՄՆ-ը, Ռուսաստանը, Կանադան, Ռումինիան և այլ պետություններ: 1992 թ. մարտի 2-ին Հայաստանը դարձավ Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) լիիրավ անդամ, այնուհետև անդամագրվեց միջազգային մի շարք կազմակերպությունների, այդ թվում՝ Սևծովյան տնտեսական համագործակցությանը (ՍԾՏՀ):

Չնայած նորագույն ժամանակներում հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման դեմ կրեմլյան-գորբաչովյան ղեկավարության վարած կարճատես կողմնակալ քաղաքականությանը՝ հայ ժողովուրդը, սակայն, բնավ չփոխեց իր վերաբերմունքը դեպի Ռուսաստանը, եղբայրական ռուս ժողովուրդը, նրա մեծ մշակույթը: Պատմության մի կարճ ժամանակահատվածում ստեղծված դժվարություններն ի վիճակի չեղան սասանելու հայ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամությունը:

ԽՍՀՄ-ի փլուզումից հետո Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունը չչեղվեց ԱՊՀ անդամ Ռուսաս-

տանի հետ փոխհարաբերություններում պատմականորեն ձևավորված մոտեցումներից: Երկու երկրների միջև թե՛ երկկողմ, թե՛ բազմակողմ հարաբերություններում գրեթե չեղան խնդիրներ, որոնց շուրջը փոխհամաձայնություն չկայացվեր: Ռուսաստանի հետ Հայաստանի Հանրապետությունը վարում էր համագործակցության հարաբերություններ ռազմապաշտպանական, տնտեսական և այլ բնագավառներում:

1992 թ. սկսած՝ Ռուսաստանի և Հայաստանի միջև կնքվեցին միջպետական, միջկառավարական և միջգերատեսչական պայմանագրեր ու համաձայնագրեր, որոնք կարգավորում էին գործակցության ամենատարբեր բնագավառները: Ռուսաստանը Հայաստանին տրամադրում էր մեծաքանակ վարկեր, որոնց շնորհիվ վերականգնվեցին ու գործարկվեցին մի շարք կարևոր արտադրական հզորություններ:

1995 թ. մարտի 16-ին Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև կնքվեց «Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսաստանյան ռազմակայանի մասին» պայմանագիր, որով իրավական հիմքի վրա էր դրվում ռուսական ռազմական ներկայությունը Հայաստանում: Ըստ պայմանագրի՝ ՀՀ տարածքում գտնվող ՌԴ զինված ուժերի կազմավորումները վերածվում էին ՀՀ տարածքում գտնվող ռուսաստանյան ռազմակայանի: Նշվում էր նաև, որ «Ռուսաստանյան ռազմակայանը ՌԴ շահերը պաշտպանելու պարտականությունից բացի, Հայաստանի զինված ուժերի հետ համատեղ ապահովում է ՀՀ անվտանգությունը նախկին ԽՍՀՄ արտաքին սահմանում»: Երկու երկրների հարաբերությունները որակական նոր փուլ թևակոխեցին «Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև բարեկամության, համագործակցության և փոխադարձ օգնության մասին» 1997 թ. օգոստոսի 29-ին Մոսկվայում կնքված մեծ պայմանագրով և «Հայ-ռուսական համատեղ հռչակագրով»:

Հայաստանը կարևոր նշանակություն էր տալիս Թուրքիայի հետ բարիդրացիական հարաբերությունների հաստատմանը: Թեև 1991 թ. դեկտեմբերին Թուրքիան ճանաչեց Հայաստանի անկախությունը, բայց նրա հետ դիվանագիտական հարաբերություններ չհաստատվեցին: Անկարան հայկական իշխանություններին նախապայմաններ ներկայացրեց՝ չհիշատակել 1915 թ. Հայոց ցեղասպանությունը, պաշտոնապես հրաժարվել պահանջատիրությունից, ճնշում գործադրել Լեռնային Ղարաբաղի վրա՝ դադարեցնելու պայքարը և ընդունելու Ադրբեջանի գերակայությունն ու տարածքային ամբողջականությունը: Միաժամանակ պահանջեց, որ Հայաստանը զերծ մնա Թուրքիայի շահերին հակասող գործողություններից, ամեն կերպ չեզոքացնի սփյուռքահայության հակաթուրքական գործունեությունը: Հայաստանի Հանրապետությունը մերժեց միջազգային պրակտիկային անհարիր այս նախապայմաններն ու պահանջները: Ավելի ուշ Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի միջև տնտեսական հարաբերությունների ոլորտում որոշ աշխուժացում նկատվեց:

Բայց Թուրքական կողմը այդպես էլ չբացեց ՀՀ-ի հետ պետական սահմանը, որը փակել էր ադրբեջանա-ղարաբաղյան պատերազմի օրերին՝ 1993 թվականին:

Հայաստանը բարիդրացիական հարաբերություններ հաստատեց Ուկրաինայի հետ: Երկու երկրների միջև գնալով ամրապնդվում էին քաղաքական, տնտեսական և մշակութային կապերը: Սերտանում էին հարաբերությունները Բելառուսի և Մոլդովայի հետ: Միջին Ասիայում Հայաստանի արտաքին քաղաքականության գլխավոր գործընկերը Թուրքմենստանն էր:

Հայաստանը առևտրատնտեսական և մշակութային բազմաթիվ համաձայնագրեր կնքեց Ղազախստանի, Ուզբեկստանի և Տաջիկստանի հետ: Հատկապես կարևոր էր Վրաստանի հետ հարաբերությունների ամրապնդումը, որի տարածքով չրջափակման տարիներին շարունակվեց Հայաստանի կապը արտաքին աշխարհի հետ: Վրաստանը Հայաստանի համար կարևորվում է նաև այդ երկրում բնակվող մեծաքանակ վիրահայության, այդ թվում Ջավախքի հայ համայնքի առկայության հանգամանքով: Հայ-վրացական տարբեր ոլորտներում փոխշահավետ համագործակցության զարգացումն ու խորացումը բխում են երկու երկրների շահերից:

Բարիդրացիական սերտ հարաբերություններ հաստատվեցին հարևան Իրանի հետ: Հայաստանը կարևորում էր Իրանի ներգրավվածությունը Հարավային Կովկասում ընթացող տա-

բաբնույթ գործընթացներում՝ այն դիտելով տարածաշրջանում կայունության և հավասարակշռության պահպանման գործոններից մեկը: Իրանը մեծապես նպաստում էր Հայաստանի շրջափակման մեղմացմանը: Իրանի Իսլամական Հանրապետության հետ մի շարք համաձայնագրեր կնքվեցին էներգետիկայի, տրանսպորտի, առողջապահության, գյուղատնտեսության, առևտրի բնագավառներում: Ստեղծվեցին հայ-իրանական համատեղ ձեռնարկություններ: Իրանը Հայաստանի ամենամեծ առևտրային գործընկերներից էր, նավթամթերքների ու գազի զգալի մասի մատակարարը: Իրանի հետ Հայաստանի կապերի զարգացմանը իր նպաստն է բերում տեղի հայ համայնքը:

Կարևոր աշխատանքներ կատարվեցին արաբական աշխարհի հետ Հայաստանի կապերի հաստատման և ամրապնդման ուղղությամբ:

Անկախություն ձեռք բերելուց հետո Հայաստանը գործնական դիվանագիտական հարաբերություններ հաստատեց Արևմտյան Եվրոպայի երկրների՝ Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Ավստրիայի, Բելգիայի, Իսլանդիայի, Շվեյցարիայի, Իսպանիայի, Իտալիայի հետ: Գնալով ամրապնդվեցին Հայաստանի տնտեսական և մշակութային կապերը Հունաստանի, Բուլղարիայի, Ռումինիայի, նախկին Հարավսլավիայի երկրների և Հարավարևելյան Եվրոպայի մյուս երկրների հետ: Անկախության առաջին օրերից Հայաստանը ձգտում է ինտեգրվել եվրոպական կառույցներում, որոնց փորձը և օգնությունը կարող էին նպաստել Հայաստանում սկսված ժողովրդավարական գործընթացների խորացմանը:

Գործնական բնույթ ստացան հայ-ամերիկյան հարաբերությունները, որոնք պայմանավորված էին նաև ԱՄՆ-ի ազդեցիկ հայկական համայնքի ակտիվ գործունեությամբ: Երկու պետությունների միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատվեցին 1992 թ. հունվարի 7-ին: 1992 թ. փետրվարին Երևանում բացվեց ԱՄՆ-ի դեսպանությունը՝ հանդիսանալով Հայաստանում բացված առաջին օտարերկրյա դեսպանությունը: Հարաբերությունները ԱՄՆ-ի և Հայաստանի միջև զարգանում էին բնականոն ճանապարհով՝ ընդգրկելով քաղաքական, տնտեսական ու մշակութային ոլորտները: Դժվարին տարիներին

ԱՄՆ-ը Հայաստանին հատկացրեց հարյուր միլիոնավոր դոլարների մարդասիրական օգնություն:

Հայաստանը հարաբերություններ հաստատեց նաև Կանադայի, Արգենտինայի, Ուրուգվայի, Չինաստանի, Ճապոնիայի, Հնդկաստանի և այլ երկրների հետ, որոնք վավերացվեցին մի շարք պայմանագրերով և համաձայնագրերով:

Հանրապետության արտաքին քաղաքականությունը ելնում էր երկրի անվտանգության շահերից և թելադրված էր նրա աշխարհաքաղաքական վիճակով: Եթե Ռուսաստանի հետ հարաբերությունները ուղղված էին գլխավորապես ռազմական ու տնտեսական համագործակցության ամրապնդմանը, ապա ԱՄՆ-ի հետ՝ տնտեսական և միջազգային համագործակցության ընդլայնմանը: Հայաստանի արտաքին քաղաքականությունը միտված էր Կովկասում անվտանգության տարածաշրջանային համակարգի ստեղծմանը, որը հնարավոր էր միայն բանակցությունների միջոցով կատարվող փոխզիջումների և ժողովրդավարության սկզբունքների ամրապնդման պարագայում:

6. ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ

Հայոց անկախության վերականգնումը ինչպես ամբողջ հայ ժողովրդի, այնպես էլ Հայ Առաքելական եկեղեցու նվիրական երազանքի իրականացումն էր: Հայոց եկեղեցին իր ժողովրդի հետ ակտիվորեն մասնակցեց նվաճված հաղթանակներին և հանրապետության կայացմանը: Արցախյան ազատամարտի ընթացքում իրենց անունը փառքով պսակեցին Արցախի թեմի առաջնորդ Պարգև արքեպ. Մարտիրոսյանը, Հովհաննես քահանա Հովհաննիսյանը, Ռաֆիկ դպիր Խաչատրյանը, Գրիգոր քահանա Մարկոսյանը, Վահան աբեղա Դավթյանը, Արմեն դպիր Մովսիսյանը և ուրիշներ:

Հայ Առաքելական եկեղեցու համար կարևոր նշանակություն ունեցավ ՀՀ Գերագույն խորհրդի ընդունած «ՀՀ-ում խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» օրենքը: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեջ ամրագրվեց, որ Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցու՝ որպես

ազգային եկեղեցու բացառիկ առաքելությանը հայ ժողովրդի հոգևոր կյանքում, ազգային մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման գործում նրա կատարած վիթխարի դերը: Հայոց եկեղեցու համար նպաստավոր պայմաններ ստեղծվեցին գոյության կոչելու իր թեմերն ու համայնքները, կառուցելու նոր եկեղեցիներ, նպաստելու հոգևոր կրթությանը: Հաստատվեց ներքին թեմերի եկեղեցական կանոնադրությունը: Վազգեն Ա կաթողիկոսի նախաձեռնությամբ Սևանի թերակղզում հիմնադրվեց հոգևոր դպրոց: Ամրապնդվեցին Մայր աթոռի կապերը ինչպես Կիլիկիո կաթողիկոսության, այնպես էլ քրիստոնեական քույր եկեղեցիների հետ:

1994 թ. օգոստոսին վախճանվեց Ամենայն Հայոց Մեծագործ կաթողիկոս Վազգեն Ա-ն: 1995 թ. ապրիլին Էջմիածնի Ազգային-եկեղեցական պատգամավորական ժողովը Ամենայն Հայոց կաթողիկոս ընտրեց Մեծի Տան Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Ա-ին, որի կարճատև գործունեության տարիներին (1995-1999) կարևոր ձեռնարկումներ եղան հատկապես միջեկեղեցական կապերի սերտացման ուղղությամբ. ընդլայնվեցին կապերը Վատիկանի և Եկեղեցիների համաշխարհային խորհրդի հետ: Երևանի պետական համալսարանում հիմնվեց Աստվածաբանության ֆակուլտետ:

1999 թ. հոկտեմբերին տեղի ունեցած Ազգային-եկեղեցական ժողովում Ամենայն Հայոց կաթողիկոս ընտրվեց Գարեգին արքեպ. Ներսիսյանը՝ վերանվանելով Գարեգին Բ: Բանիմաց ու եռանդուն նորընտիր կաթողիկոսը կազմակերպչական ու շինարարական լայն աշխատանքներ ձեռնարկեց Մայր Աթոռում և եկեղեցական բոլոր թեմերում:

Ժողովրդի և եկեղեցու կյանքում կարևորագույն իրադարձություն էր 2001 թ. սեպտեմբերին քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակելու 1700-ամյակի առթիվ կազմակերպված տոնակատարությունը, որին իրենց մասնակցությունը ցուցաբերեցին Հռոմի պապը, հունաց, ռուսաց, վրաց, դպտի, հաբեշ, ասորի, ռումին, բուլղար, անգլիկան և այլ եկեղեցիների պետերն ու ներկայացուցիչները: Նույն օրերին օծվեց Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին՝ աշխարհում ամենամեծ հայկական եկեղեցին:

Ընտրությունից ի վեր Գարեգին Բ-ն մեծ ջանադրությամբ ձեռնամուխ եղավ եկեղեցական ներքին կյանքի կարգավորմանն ու կազմակերպմանը: Նրա ջանքերով ՀՀ կառավարության կողմից Գևորգյան հոգևոր ճեմարանը ճանաչվեց բարձրագույն ուսումնական հաստատություն՝ Աստվածաբանական համալսարան: 2002 թ. օգոստոսին հանրապետության վարչապետ Ա. Մարգարյանի և Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի կողմից ստորագրվեց համաձայնագիր, որով հանրակրթական դպրոցների 4-10-րդ դասարաններում 2003 թ. հունվարից մտցվում էր «Հայոց եկեղեցու պատմություն» առարկան:

7. ՀԱՅՐԵՆԻՔ-ՍՓՅՈՒՌՔ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Հայաստանի անկախացումը նոր փուլ նշանավորեց Հայրենիք-Սփյուռք փոխհարաբերություններում: Ամենատարբեր մակարդակներով երկխոսություններ սկսվեցին անհատների ու կազմակերպությունների, պետական գործիչների միջև: Բայց հեշտ չէր վերականգնել տարիներով խզված կապը, մանավանդ որ հայության երկու հատվածներն իրենց աշխարհայացքով, ապրելակերպով, կենցաղով շատ էին հեռացել միմյանցից: Իրենց հերթին Հայաստանի նորահաստատ իշխանությունները հաճախ թույլ էին տալիս ոչ ճիշտ մոտեցումներ, որը չէր նպաստում հարաբերությունների կարգավորմանը: Այսպես, անկախությունից հետո Հայրենիքում գործելու լայն ասպարեզ ստացան Սփյուռքի ավանդական կուսակցությունները, որոնց դերն անգնահատելի էր արտերկրում հայապահպանության տեսակետից: Հայրենիք գալով՝ նրանք (ՀՅԴ, ՀՌԱԿ, Հնչակ) փորձեցին մասնակից դառնալ երկրի կառավարմանը: Ցավոք, ՀՀՇ-ն հալածական բիրտ քաղաքականություն որդեգրեց ավանդական կուսակցությունների հանդեպ (ՀՅԴ-ն արգելվեց, ՀՌԱԿ-ը պառակտվեց): Հայաստանի իշխանությունները փորձեցին վարկաբեկել այդ կուսակցությունների գործունեությունը նաև արտասահմանում, որի հետևանքով Սփյուռքում վտանգվեցին ազգապահպանման գործին նվիրված շատ կազմակերպություններ, որոնք

հիմնականում գործում էին կուսակցությունների հովանու ներքո: Դա մեծ հարված էր Հայրենիք-Սփյուռք հարաբերություններին: Սփյուռքի հետ հարաբերությունները ստացան տարերային բնույթ և հաճախ կախված էին հանրապետության այս կամ այն ղեկավար գործչի նախասիրություններից ու կարողությունից:

Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների սերտացման համար հզոր խթան հանդիսացավ Արցախի ազատագրական պայքարը, որը լայն արձագանք գտավ բոլոր գաղթավայրերում: Մարտնչող Արցախին սատար կանգնեց ողջ հայությունը՝ թե՛ Հայաստանում և թե՛ արտերկրում: Արցախի ազատագրական շարժումն ու երկրաշարժը, ցնցելով ողջ հայությանը՝ միաժամանակ ամրապնդեցին ազգային միասնությունը: Հայաստանը պետք է նպաստեր Սփյուռքի հայապահպանման գործին, իսկ Սփյուռքն օգնելու էր Հայաստանի անկախության ամրապնդմանն ու տնտեսական զարգացմանը: Հայ ժողովուրդը համոզվեց, որ Հայրենիքն ու Սփյուռքը այլևս առանձին-առանձին գոյություն ունենալ չեն կարող, և որ նրանց փոխհարաբերությունները պետք է խարսխվեին «Մեկ հայրենիք, մեկ ազգ» կարգախոսին:

Հայաստան-Սփյուռք փոխհարաբերություններում առաջնային էր հոգևոր կապերի ամրապնդումը, միասնական ծրագրերի մշակումն ու կենսագործումը:

ա. Կրթամշակութային կապերը: Հայ ժողովրդի ինքնագիտակցության զարգացման և հայապահպանման առաջնահերթ գործոններից մեկը մայրենի լեզվով մատաղ սերնդի կրթությունն է: Ինչպես նախկինում, նոր պայմաններում նույնպես սփյուռքահայ ուսուցիչներին օգնելու, նրանց վերապատրաստման նպատակով Երևանում կազմակերպվում էին դասընթացներ: ԱՄՆ-ից, Կանադայից, Ֆրանսիայից, Անգլիայից, Սիրիայից, Իրանից և այլ երկրներից եկած ուսուցիչները մասնագիտական օգնություն ստանալուց բացի, շրջագայում էին Հայաստանում, ծանոթանում Հայրենիքի հոգևոր-մշակութային արժեքներին: Պահպանվեց նախկին ավանդույթը. տարբեր գաղթավայրերից Հայաստանի բուհերում սովորելու էին գալիս մեծ թվով սփյուռքահայ երիտասարդներ, որոնք բուհերն ավարտելուց հետո վերադառնում էին իրենց բնակավայրերը: 1997 թ. Հայաստանի պետական բուհերում սովորում էր արտերկրի ավելի քան 800 ուսանող: Նույն տարում իրենց ուսումը ասպիրանտուրայում շարունակում էին չուրջ 100: Նրանց հիմնական մասը մասնագիտանում էր հայագիտության և բժշկության գծով:

Սփյուռքում շարունակում էին գործել բազմաթիվ կրթարաններ, որոնց ավանդը հայապահպանման գործում դժվար է գերագնահատել: 1998 թ. Սփյուռքում կային 160-ից ավելի ամենօրյա վարժարաններ և նույնքան կիրակնօրյա դպրոցներ: Միայն Ֆրանսիայում կար գործող 6 հայկական վարժարան (Պարսամյան, Համազգային, Փափազյան և այլն):

Բայց Սփյուռքի հայկական դպրոցները բազում դժվարություններ ունեին հատկապես ուսումնական գործընթացի կարգավորման գործում: 1996 թ. Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարանում հիմնվեց «Սփյուռք» գիտաուսումնական կենտրոնը, որը Սփյուռքի ուսումնական հաստատությունների համար սկսեց մշակել ուսումնակրթական ծրագրեր, որոնց հիման վրա ստեղծված դասագրքերը առաքվում էին տարբեր երկրներ: Ջավախքի դպրոցները նույնպես ստանում էին դասագրքեր, ծրագրեր, գեղարվեստական գրականություն: Կենտրոնը զբաղվում էր նաև սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման, հայագիտական առարկաների գծով ուսուցիչների պատրաստման հարցերով:

Սփյուռքահայ մատաղ սերնդի հայեցի դաստիարակության գործում անգնահատելի էր Սփյուռքի այնպիսի ուսումնական և դաստիարակչական կենտրոնների դերը, ինչպիսիք էին Թեքեյան մշակութային միությունը, Մխիթարյան միաբանությունը, Մուրադ-Ռաֆայելյան վարժարանը, Մելգոնյան կրթական հաստատությունը և այլք, որտեղ սովորում էին հարյուրավոր երիտասարդներ: Նրանցից շատերն ուսումը շարունակում էին Եվրոպայի և Հայաստանի բուհերում:

Դպրոցաշինությունը Սփյուռքում լայն ծավալ ստացավ 1990-ական թվականներին: Դպրոցների շենքերը կառուցվում էին հատուկ ֆոնդերի և բարեգործների միջոցներով: Մանրակչիռ էին Ալեք Մանուկյանի, Գաբրիել Ինջեջիկյանի, Մաթևոս Ֆերահյանի և ուրիշների նվիրաբերումները դպրոցաշինությանը:

Այդ գործում անգնահատելի էր Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) կատարած աշխատանքը:

Սփյուռքահայ դպրոցները գրականության մեծ կարիք էին զգում: 1991 թ. հուլիսին «Հայրենիքի ձայն» թերթի միջոցով հայրենակիցներին կոչով դիմեց Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն: Կոչում նշված էր, որ արտերկրի հայությունն ապրում է ինքնաճանաչման, ազգային զարթոնքի շրջան, որ հատկապես նոր սերնդի մեջ աճել է հետաքրքրությունը հայ հոգևոր արժեքների նկատմամբ և նա տոգորված է վճռականությամբ տեր կանգնելու սեփական մշակույթին: Միաժամանակ շեշտվում էր, որ հայ գաղթավայրերի մշակութային կենտրոնների և դպրոցների գրադարանները աղքատ են, հայ պատանիներն ու երիտասարդները հնարավորություն չունեն հաղորդակցվելու հայրենի գրականությանն ու մշակութային նվաճումներին: Կոչը լայն արձագանք գտավ. Հայաստանում հավաքվեց մեծ քանակությամբ գրականություն և ուղարկվեց տարբեր գաղթավայրեր:

Չնայած Հայաստանի տնտեսական ծանր պայմաններին՝ Հայրենիք-Սփյուռք կապերն ամրապնդելու նպատակով 1991 թ. բացվեցին Երևանի քոլեջ-համալսարանը, մենեջմենթի բարձրագույն դպրոցը, որտեղ հիմնականում սովորում էին արտասահմանից եկած ուսանողներ: Նույն տարում կառավարության որոշմամբ Երևանում հիմնվեց Հայաստանի Ամերիկյան համալսարանը (ՀԱՀ), որը նախատեսում էր բարձրագույն կրթություն տալ ՀՀ-ի և այլ երկրների ուսանողների՝ ամերիկյան կրթական համակարգին ու մակարդակին համապատասխան: Համալսարանը սկսեց գործել Հայաստանի ամերիկյան համալսարան ընկերակցության (ՀԱՀԸ) և Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) գործուն օժանդակությամբ: ՀԱՀ-ը սերտորեն համագործակցում էր Հայաստանի պետական բուհերի հետ, մշակում համատեղ ծրագրեր:

Տարբեր ճակատագրեր ու զարգացման տարբեր հնարավորություններ ունեին հարավարևելյան Եվրոպայի նախկին սոցիալիստական երկրների հայկական գաղթօջախները:

Բուլղարահայ գաղութն իր մեծությամբ Եվրոպայում երկրորդն էր Ֆրանսիայից հետո: Այստեղ ազգային խնդիրները հետին պլան էին մղված: Միայն 1990-ական թվականներին վերականգնվեց գաղթօջախի ազգային կյանքը, որը սերտ կապեր հաստատեց Հայրենիքի հետ: Երկրորդ աշխարհամարտից հետո իր գոյությունը դադարեցրել էր Ռումինիայի «Հայոց միությունը», որը վերակենդանացավ 1990-ականների սկզբներին: Այստեղ ևս, ինչպես Բուլղարիայում, առաջնահերթ նշանակություն տրվեց հայոց դպրոցական գործին: Հայաստանի հանրապետության օգնությամբ ստեղծվեցին նախ կիրակնօրյա, ապա և հանրակրթական հայկական դպրոցներ:

1960-1970-ական թվականներին Գերմանիայում ստեղծված հայկական գաղութավայրի զարթոնքը սկզբնավորվեց 90-ական թվականներին՝ կապված Արցախի ազատագրական պայքարի և երկրաշարժի հետ: Երկրի տարբեր քաղաքների հայկական եկեղեցիներին առընթեր ստեղծվեցին կիրակնօրյա դպրոցներ, որոնց նպատակը հայ նոր սերնդին ձուլումից փրկելն էր:

Կրթա-մշակութային երկարատև նիրհից արթնանում էր ներքին սփյուռքի հայությունը՝ ձեռնամուխ լինելով ազգապահպանման գործին: Այդ տեսակետից կարևոր աշխատանք էր ծավալում Սանկտ Պետերբուրգի «Հայկական տուն» ընկերությունը, որի հիմնական նպատակն էր քաղաքի զանազան հայկական կազմակերպությունների, ինչպես նաև անհատ գործիչների միջև հոգևոր մշակութային և գործարար կապերի ամրապնդումը: 1993 թ. Պետերբուրգի իշխանությունները տեղի հայկական համայնքին վերադարձրին հայոց եկեղեցին, սկսեց լույս տեսնել «Հավատամք» ամսաթերթը: Քաղաքի հայկական դպրոցները Հայաստանից ստանում էին անհրաժեշտ դասագրքեր ու դպրոցական պիտույքներ: Եռանդուն ազգապահպան գործունեություն էր ծավալել Աստրախանի հայկական համայնքը, որը սերտորեն համագործակցում էր Հայաստանի հետ, կազմակերպում փոխադարձ այցելություններ: Առաջին քայլերն էին արվում քաղաքի հայությանը վերադարձնելու ազգային լեզուն: Ազգանվեր գործունեություն էր սկսվել Դնեպրոպետրովսկի հայկական համայնքում, որի ակտիվ միջնորդությամբ քաղաքի որոշ դպրոցներում, ուր մեծ էր հայ աշակերտների թիվը, մտցվել էր հայոց լեզու և գրականություն առարկան:

Բ. Փոխներթափանցումներ արվեստի ոլորտում: *Հայաստանի անկախացումից հետո արվեստի ոլորտում Հայրենիք-Սփյուռք առնչությունները դրսևորվեցին տարբեր մակարդակներով ու բնույթով. պաշտոնական, պետական, անհատական, ինքնագործ և սիրողական խմբերի ու անհատների կողմից:*

Կարևոր էր 1991 թ. մայիսին Երևանում հրավիրված Սփյուռքի թատրոնների անդրանիկ փառատոնը, որի հիմնական նպատակն էր կապ հաստատել սփյուռքահայ մշակութային տարբեր կենտրոնների միջև և ամրապնդել այդ կապը Հայրենիքի հետ: Փառատոնը բացեց Նյու Յորքի «Համազգային» թատերախումբը: Գլխավոր մրցանակը, որը կրում էր Վահրամ Փափազյանի անունը, չնորհվեց Լոս Անջելեսի «Վարդան Աճեմյան» թատերախմբին: Սփյուռքից Հայրենիք ժամանած թատերախմբերը հանդես էին գալիս ոչ միայն Երևանում, այլև Գյումրիում, Վանաձորում և Հանրապետության այլ քաղաքներում ու շրջաններում:

Հայրենիքում պարբերաբար կազմակերպվում էին փոխադարձ նկարչական ցուցահանդեսներ: Լոս Անջելեսի Թեքեյան միության կենտրոնում կազմակերպվեց սփյուռքահայ տաղանդավոր գեղանկարիչ Բյուզանդ Կոճամանյանի ցուցահանդեսը: Բացման առիթով հայրենասեր նկարիչն ասել էր. «Նկարներս կուզենայի Հայաստան ղրկել, կուզեի, որ Երևանը դառնա արվեստի թանգարանների երկիր, ինչպես Իտալիան»: Ամերիկահայ նկարիչ Մարկոս Գրիգորյանն իր թանկարժեք հավաքածուն նվիրաբերեց Հայրենիքին: Ամերիկահայ հայտնի քանդակագործ Խորեն Տեր-Հարությունյանը իր կերտած բազմաթիվ արձաններ նվիրեց Հայաստանին: 1997 թ. Բոստոնում բացվեց մեծ ցուցահանդես, որը Բոստոնի հայ համայնքին և այլազգիներին հնարավորություն տվեց մոտիկից առնչվելու Հայաստանի արվեստագետների տարբեր սերունդների ներկայացուցիչների ստեղծագործություններին: Տեղի ամերիկյան մամուլը բարձր գնահատեց ցուցահանդեսը՝ ընդգծելով, որ հայ ժողովուրդը շարունակում է նորանոր արժեքներ ներկայացնել աշխարհին:

Արգենտինահայ համայնքում հայրենասիրական լայն աշխատանքներ ծավալած լուսանկարիչ Մարտին Բուքիսկյանի՝ Հայաստանը պատկերող գունավոր լուսանկարների ցուցահանդեսը ազգասիրական խոր զգացումներ էր առաջ բերել տեղի հայության մեջ: Նա լուսանկարչական ցուցահանդեսներ կազմակերպեց նաև Իրանում: Նկարիչ Արամ Ստեփանյանի ջանքերով իրանահայերի հնօրյա լուսանկարների հավաքածուի ցուցահանդես բացվեց Թեհրանի Արդի արվեստի պետական թանգարանում:

Հայրենիք-Սփյուռք մշակութային մերձեցմանը մեծապես նպաստում էին սփյուռքահայ մշակութային գործիչների այցերը Հայաստան: Հայրենիք էին գալիս Համազգային մշակութային միության Լիբանանի և Սիրիայի մասնաճյուղերի պատվիրակությունները՝ իրենց կապերը գործնական հունի մեջ դնելու նպատակով: Կարևոր դեր էր հատկացվում երաժշտական և պարային խմբերի փոխայցելություններին:

Բեյրութի Համազգային մշակութային միության վարչության և Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի միջև պայմանագիր կնքվեց, որով վերջինս իր հովանավորության տակ վերցրեց «Բարսեղ Կանաչյան» երաժշտական ուսումնարանը՝ պարտավորվելով բարձրորակ մասնագետներ գործուղել այնտեղ:

Հայրենիք-Սփյուռք մշակութային հարաբերություններում կարևոր երևույթ էր 1993 թ. հունվարին հայկական մշակույթին նվիրված փառատոնը Իտալիայում, որի ընթացքում հայ արվեստագետները ցույց տվեցին իրենց կատարողական բարձր վարպետությունը, նաև դասախոսություններով լայնորեն պրոպագանդեցին հայկական արվեստը: Իտալիայի հասարակությունը և իշխանությունները հետաքրքրություն հանդես բերեցին Հայաստանի արվեստի նկատմամբ, որը իտալահայերի մեջ արթնացրեց ազգասիրական-հայրենասիրական զգացումներ: 1997 թ. ապրիլին Ստամբուլում համերգներով հանդես եկան Գյումրիի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնի սաները, որը կարևոր իրադարձություն էր թուրքահայ համայնքի կյանքում: Ամերիկահայ գաղթօջախներում, հատկապես Կալիֆոռնիայի հայկական շրջանակներում մեծ աշխատանքներ էր կատարում «Կոմիտաս» գեղարվեստական կազմակերպությունը:

Հայ արվեստի հետազոտողները Հայաստանում ավելի ու ավելի հաճախ էին դիմում սփյուռքահայ արվեստագետների՝

երգահանների, երաժիշտ կատարողների, գեղանկարիչների, թատերական գործիչների ստեղծագործությունների ուսումնասիրմանն ու տարածմանը: Ցիցիլիա Բրուտյանն իր «Հայ երաժշտական մշակույթի աշխարհասփռուռ ընտրյալները» աշխատության մեջ ամփոփել էր 32 գաղթավայրերի շուրջ 350 երաժիշտների գործեր: Գիրքը սփյուռքահայ երաժիշտներին հայրենիքում պրոպագանդելու լուրջ փորձ էր, որը նաև նպաստեց նրանց ստեղծագործությունների ընդգրկմանը Հայաստանի երաժշտական ուսումնարանների ու դպրոցների ծրագրերում:

Հայաստանի անկախացումից հետո, երբ հանրապետությունից կատարվող լայնածավալ արտագաղթի պատճառով բազմամարդ դարձան հատկապես Ռուսաստանի հայկական գաղթավայրերը և ստեղծվեցին նորերը, կարևորագույն նշանակություն ունեցավ նրանցում հայ մշակույթի օրերի կազմակերպումը: Օրինակ, 1993 թ. հունիսին Աստրախանում կազմակերպվեցին հայկական մշակույթի օրեր, որին մասնակցեցին Ռուսաստանի հայկական տարբեր համայնքների ներկայացուցիչներ, քաղաքական ու տնտեսական ղեկավարներ, գիտության և արվեստի գործիչներ:

Հայ արվեստի գործիչները պարբերաբար այցելում էին Ռուսաստանի զանազան նահանգներ, շրջաններ ու քաղաքներ: Հայկական մշակույթի օրերին, որպես կանոն, տեղի հեռուստատեսությամբ տրվում էին հաղորդումներ հայ արվեստի, նրա գործիչների ստեղծագործությունների, տվյալ հայկական համայնքի մասին: Հայ երաժշտության մասնագետները հաղորդումներով հանդես էին գալիս ռուս լսարանի առջև: Նման միջոցառումները մեծապես նպաստում էին հայ համայնքների համախմբմանը, հայրենիքի հետ նրանց կապերի ամրապնդմանը:

գ. Գիտական կապերի ամրապնդումը: ԽՍՀՄ-ի փլուզումից հետո մեծաթիվ մտավորականների արտահոսքի հետևանքով խիստ պակասել էր ՀՀ-ի գիտական ներուժը, որի գլխավոր պատճառը գիտության բնագավառում կառավարության սխալ քաղաքականությունն էր: Չնայած դրան՝ մեծ թվով հայրենանվեր գիտնականներ, հատկապես ավագ սերնդի ներկայացուցիչներից, շարունակեցին իրենց գիտական գործունեությունը հայրենիքում:

Ստեղծված նոր իրավիճակում կարևոր նշանակություն ստացավ Հայաստանի և Սփյուռքի գիտական ուժերի համախմբումը՝ որոշակի ծրագրեր իրականացնելու համար: Երևանում և Սփյուռքում հաճախակի գիտական նստաշրջաններ էին հրավիրվում, որտեղ քննարկվում էին համատեղ հետաքրքրություն ներկայացնող հարցեր, ընդունվում էին համապատասխան որոշումներ:

1992 թ. հունիսին Երևանում կազմակերպված համահայկական գիտական նստաշրջանը նվիրված էր հայության տարբեր հատվածների համագործակցության ամրապնդման, ազգային համախմբման և հայապահպանության կարևոր հարցերի: Գիտաժողովն առաջարկեց լուրջ աշխատանքներ տանել տարբեր կուսակցությունների և մշակութային կազմակերպությունների միջև հակասությունների վերացման ուղղությամբ՝ դրանով իսկ նպաստելով ամբողջ հայությանը մեկ առանցքի շուրջ համախմբելու գործին:

Նշանակալի միջոցառում էր 1992 թ. հոկտեմբերին Երևանում տեղի ունեցած ԳԱ ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի, Երևանի պետական և Կալիֆորնիայի նահանգային համալսարանների համատեղ գիտաժողովը, որին մասնակցում էին ԱՄՆ-ից, Ֆրանսիայից և այլ երկրներից եկած մասնագետներ: 1997 թ. Բուլղարիայի «Երևան» կազմակերպության նախաձեռնությամբ Սոֆիայում կազմակերպված «Հայկական ոգու կենսունակությունը» գիտական կոնֆերանսում հետաքրքիր զեկուցումներ լսվեցին հայոց պատմության ու մշակույթի, հայ-բուլղարական կապերի մասին:

Համահայկական գիտաժողովներում բազմիցս լուրջ անհանգստություն էր հայտնվել ներքին սփյուռքի ծանր վիճակի համար: Նախկին ԽՍՀՄ-ում տարվող այլազգիների ուծացման քաղաքականության հետևանքով Ռուսաստանում վերացվել էին ազգային բոլոր կազմակերպությունները: Բացի Վրաստանից, Ռուսաստանում և նախկին խորհրդային բոլոր մյուս հանրապետություններում հայերի խոսակցական լեզուն հիմնականում ռուսերենն էր: Գիտաժողովներում Հայաստանի կառավարությունից պահանջում էին միջոցներ ձեռնարկել ներքին Սփյուռքում եղած հայկական գաղթավայրերն ամրապնդելու,

հայերի ձուլումն արգելակելու համար:

դ. Մշակութային այլևայլ միջոցառումներ: Սփյուռքի աճող սերնդի հայրենասիրական դաստիարակության կարևոր միջոց է հայ գրքի պրոպագանդան: Այդ տեսակետից օրինակելի աշխատանք էր կատարում Բուենոս-Այրեսի «Խրիմյան կրթական հիմնարկությունը», որի ջանքերով հայ գիրքը դուրս էր բերվում միջազգային ամենամյա ցուցահանդեսներ: Սփյուռքահայ գաղթավայրերում լայն տարածում գտավ 1999 թ. Շվեյցարիայում հրատարակված «Ղարաբաղի պատմական հուշարձանները» գունավոր քարտեզը, որի վրա պատկերված և ծանոթագրված վանքերի, եկեղեցիների, ամրոցների նկարները ցույց են տալիս արցախահայության ստեղծագործական արարումները բազում դարերի ընթացքում: Հետագա տարիներին գաղթավայրերում լայն տարածում գտան Շահեն Մկրտչյանի՝ Արցախին նվիրված մեծարժեք գրքերը և ալբոմները:

Հայաստանի անկախությունից հետո Սփյուռքից Հայաստան վերադարձվեցին բազում մշակութային արժեքներ, այդ թվում՝ հայ մտավորականների արխիվներ ու գրադարաններ: Երևանի Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանը գաղթավայրերից ստացավ մի քանի հազար ձեռագրեր, գրքեր, ձայնագրություններ, այդ թվում՝ Ավ. Ահարոնյանի, Ն. Աղբալյանի, Ա. Զոպանյանի և այլոց անտիպ ստեղծագործությունները, նամակները, նյութերը: Այդ ձեռքբերումները չարունակվեցին նաև հետագայում:

ե. Սոցիալ-տնտեսական աջակցություն Մայր Հայրենիքին: Անկախության տարիներին Հայրենիք-Սփյուռք հարաբերություններում կարևոր նշանակություն ստացավ տնտեսական աշխույժ համագործակցությունը: Հայաստանի իշխանությունները անկախության առաջին տարիներին, տնտեսական ծանր պայմաններից ելնելով, Սփյուռքին հատկացրին Հայաստանին «տնտեսական օժանդակողի» սահմանափակ դեր: Դա չէր կարող նպաստել Հայրենիք-Սփյուռք փոխհարաբերությունների կայունացման փոխշահավետ ռազմավարության մշակմանը: Հայաստանը պետք է Սփյուռքի տարբեր գաղթավայրերի հետ համագործակցության համապարփակ ծրագրեր մշակեր՝ հաշվի առնելով ոչ միայն Հայրենիքի, այլև արտերկրի համայնքների

շահերը: Հայրենիքի անկախ գոյությունն ու հզորությունը սփյուռքահայության հարատևման երաշխիքն է, իսկ վերջինիս կենսունակությունն ու բարեկեցությունը՝ Հայրենիքի ամրապանդման կարևոր գործոնը: Իհարկե, բնական կլիներ, եթե Հայրենիքն, իր հերթին, հայ գաղթօջախներին ցույց տար նկատելի տնտեսական աջակցություն, բայց Հայաստանում ստեղծված ծանր վիճակը դրա հնարավորությունը չէր տալիս: Ուստի, մանավանդ երկրաշարժից հետո, չափազանց մեծ էր Սփյուռքից ստացված օգնության դերը, որն ի վերջո ուղղված էր ազգապահպանման գործին: Այդ օգնությունը դրսևորվեց ամենատարբեր ձևերով:

Հայաստան-Սփյուռք հարաբերություններում անգնահատելի էր առանձին բարեգործների և հասարակական կազմակերպությունների ազգանվեր գործունեությունը:

Սփյուռքի ամենախոշոր մարդասիրական կազմակերպությունը չարունակում էր մնալ Հայ բարեգործական ընդհանուր միությունը (ՀԲԸՄ), որի աջակցությունը Հայրենիքին անգնահատելի է:

Երկար տարիներ բարեգործականի նախագահն էր մեծ բարերար Ալեք Մանուկյանը: Նրա կողմից ստեղծած իր և իր տիկին Մարի Մանուկյանի անվան հիմնադրամը կարևոր դեր խաղաց Սփյուռքում դպրոցաշինության, մշակութային նոր կենտրոնների բացման, հայ ուսուցիչների կենցաղային պայմանների բարելավման գործում: Հիմնադրամի միջոցներով դպրոցներ և մշակույթի տներ, հիվանդանոցներ, ծերանոցներ հիմնվեցին ԱՄՆ-ում, Կանադայում, Արգենտինայում, Ավստրալիայում և այլ երկրներում: Հայրենիքից հրավիրվեցին բարձրորակ մասնագետներ, որոնք նպաստեցին գաղթօջախների հայկական դպրոցների կայացմանը: Հիմնադրամը մասնակից եղավ նաև Հայրենիքի վերաշինությանը: «Սփյուռքի հայությունը կապրի Հայաստանի սիրով, ու կապրի անոր ապագայի համար: Այլապես ինչ իմաստ պիտի ունենար մեր ազգապահպանումի ամբողջ պայքարը, եթե մենք չունենայինք վախճանական նպատակ մը: Մենք համոզված ենք, թե առանց Հայրենիքի չի կարող գոյատևել Սփյուռքը»,- ասել էր Ա. Մանուկյանը: Մեծ Հայրենասերի գործունեությունը, նրա կատարած ազգանվեր աշխատանքը

բարձր են գնահատվել Հայրենիքում և Սփյուռքում: Նա արժանացել է Հայաստանի ազգային հերոսի կոչման, պարգևատրվել չքանշաններով: Նրա գործը 1996 թվականից շարունակեց դուստրը՝ Լուիզ Սիմոն-Մանուկյանը:

Սփյուռքի կողմից հայրենիքին աջակցելու վառ օրինակ է Լիսաբոնի Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության գործունեությունը: Նրա հայկական բաժանմունքը խոշոր միջոցներ է տրամադրում Հայաստանի գիտության, բժշկության կարիքներին, նաև գրահրատարակչությանը, ընդհանրապես՝ հանրապետության տնտեսությանը: Այն մեծ աշխատանքներ է կատարում հատկապես Սփյուռքում:

Հայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդման գործում վիթխարի է ֆրանսահայ երգիչ, մեծ հայրենասեր Շառլ Ազնավուրի դերը, որը բազմիցս մարդասիրական օգնություն է բերել Հայաստան: Հայրենիքին մատուցած մեծ ծառայությունների համար աշխարհահռչակ երգչին շնորհվել է Հայաստանի Ազգային հերոսի կոչում:

Անգնահատելի է «Լինսի» բարեգործական հաստատության ծավալած գործունեությունը, որը գլխավորում էր հայրենիքին հսկայական ծառայություններ մատուցած Քրրք Քրրքորյանը: «Լինսի» հիմնադրամի անդամ դարձան ամերիկահայ ամենահայտնի բարեգործական կազմակերպություններ, եկեղեցական թեմեր: Հիմնադրամը և անձամբ Քրրք Քրրքորյանը պարբերաբար խոշոր հատկացումներ կատարեցին Հայաստանը տնտեսական ծանր վիճակից դուրս բերելու համար: Ամբողջ 1990-ական թվականներին այդ հիմնադրամի օժանդակությամբ կառուցվեցին կուլտուր-տնտեսական հիմնարկներ, ճանապարհներ, բնակարաններ և այլն: Քրրք Քրրքորյանը նույնպես արժանացել է Հայաստանի Ազգային հերոսի կոչման:

Հանրահայտ է «Ջինիչյան» հիշատակի հիմնադրամի գործունեությունը Գյումրիում բնակելի շենքերի կառուցման, ջրագծերի վերականգնման ուղղությամբ: Հիմնադրամը օրինակելի հոգատարություն էր ցուցաբերում անօթևան երեխաների, սոցիալապես ծանր վիճակում գտնվող ընտանիքների նկատմամբ: Սփյուռքահայ բարեգործներ Գալուստ Սողոմոնյանը և Հարություն Սիմոնյանը բազում նվիրատվություններ են կատարել

Թալինի և Վայքի շրջաններում դպրոցներ ու եկեղեցիներ կառուցելու համար: Հայաստանում հոգևոր-եկեղեցական և գիտական բեղուն գործունեություն էր ծավալել ԱՄՆ-ից տեղափոխված Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճյանը:

Շվեյցարացի բարերար և հասարակական գործիչ Սարգիս Իզմիրլյանը նշանակալի միջոցներ նվիրաբերեց Երևանի պետական համալսարանի գրադարանի վերակառուցման, նրա գրքային ֆոնդի հարստացման համար: Ի նշան երախտագիտության՝ 1997 թ. համալսարանի գրադարանն անվանակոչվեց Սարգիս Իզմիրլյանի և նրա կնոջ՝ Մարի Իզմիրլյանի անունով: Ազգային բարերար Վաչե Մանուկյանը մեկ մլն դոլար դրամագլխով հիմնեց համալսարանական կրթաթոշակների հիմնադրամ, որից օգտվում էին նաև Հայաստանի համալսարաններում սովորող սփյուռքահայ ուսանողները: Շատ սփյուռքահայեր նյութական օգնություն ցուցաբերեցին աղետի գոտու բնակիչներին ու ազատամարտիկների ընտանիքներին:

Մեծ ակտիվությամբ էր գործում Հայ օգնության միությունը (ՀՕՄ), որը երկրաշարժի աղետյալներին առաջին ձեռք մեկնողներից էր: Միության Հյուսիսային Ամերիկայի մասնաճյուղերի բարերարների օգնությամբ 1997 թ. մայիսին Ախուրյանում բացվեց «Մոր և մանկան առողջության կենտրոնը», որն այնքան անհրաժեշտ էր աղետի գոտու համար: ՀՕՄ-ը զգալի նյութական օժանդակություն է ցույց տվել գիշերօթիկ դպրոցներին, անապահով ընտանիքների երեխաներին: Մարդասիրական օգնություն ստացան հանրապետության, հատկապես Երևան քաղաքի հազարավոր մտավորականներ, պատերազմի վետերաններ:

Հայաստանին օգնության հասնելու գործում բեղուն աշխատանք է կատարել Հայ օգնության ֆոնդը (ՀՕՖ), որը մեծ քանակի սննդամթերք ու դեղամիջոցներ բերելով հայրենիք՝ անվճար բաժանում էր կարիքավորներին: ՀՕՖ-ի հովանավորությամբ Հայաստանից մեծ թվով բժիշկներ են վերաորակավորվել ԱՄՆ-ում, հանրապետության շատ հիվանդանոցներ ապահովվել՝ բուժսարքավորումներով:

Անգնահատելի է «Ազնավուրը Հայաստանին», «SOS Արմենի» բարեգործական և «Արմենիա» մշակութային կազմա-

կերպության գործունեությունը:

Բացի առանձին բարեգործներից և բարեգործական կազմակերպություններից, Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների ամրապնդման գործին մասնակից էին արտաքին Սփյուռքի ամբողջ համայնքներ: Հայաստան օգնություն էր գալիս Ֆրանսիայի, Շվեդիայի, Կանադայի, Արգենտինայի, Բուլղարիայի, Հունաստանի, Կիպրոսի, Սիրիայի, Լիբանանի, Քուվեյթի և այլ երկրների Հայ համայնքներից:

Հայրենիքին աջակցելն իրենց կարևոր հայրենասիրական պարտքն էին համարում ***ներքին սփյուռքի*** *Հայ համայնքները: Այստեղ իր ուրույն տեղն ունի Ռուսաստանը: Դա այն երկիրն է, որն անարգել ապաստան տվեց ինչպես ազգամիջյան կռիվներից, այնպես էլ երկրաշարժից հետո անօթևան մնացած հարյուր հազարավոր մարդկանց:*

Հայաստան-Սփյուռք կապերի ամրապնդման և հայապահպանման համար կարևոր նշանակություն ունեցան համատեղ համաժողովները, համահայկական մարզական խաղերը, «Մեկ ազգ, մեկ մշակույթ» փառատոնները, համահայկական երիտասարդական համաժողովները և զանգվածային այլ միջոցառումներ, որոնք մեծապես նպաստում էին ազգային միասնության ամրապնդմանը: Հայաստան-Սփյուռք կապերը տարեցտարի դառնում են առավել համակարգված, դինամիկ ու հեռանկարային:

Դժվարին կացության մեջ հայտնված Հայաստանի ժողովրդին սփյուռքահայության կողմից բացառիկ ջերմությամբ ձեռք մեկնելը հայոց պատմության ամենապատվաբեր էջերից մեկն է: Ազգային զարթոնքը, մեկ միասնական ազգի գաղափարը համակել էր ողջ հայությանը: Բոլոր հայերը քաջ գիտակցում էին, որ միայն հզոր Հայաստանի գոյությամբ կամրապնդվի Սփյուռքը, և որ մյուս կողմից՝ Սփյուռքին վերապահված է հսկայական դեր խաղալու Հայաստանի առաջադիմության գործում:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՐՐՈՐԴ ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ ՍԿԶԲԻՆ (2001-2011 թթ.)

1. ՀՀ ՆԵՐՔԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

ա. Տնտեսական վիճակը: *Հայաստանի Հանրապետությունը, քայլ առ քայլ հաղթահարելով անցումային շրջանի առաջին տասնամյակի դժվարությունները տնտեսության մեջ՝ 21-րդ դարասկզբին շարունակում էր ապահովել կայուն տնտեսական աճ: 2002 թվականից գրանցվեցին տնտեսության զարգացման միայն երկնիշ ցուցանիշներ:*

Արդեն նոր դարասկզբին լուրջ փոփոխությունների էր ենթարկվել արդյունաբերական ճյուղերի հարաբերակցությունը: Եթե նախկինում գերակշռում էր ծանր արդյունաբերությունը, ապա այժմ առաջին պլան էր մղված թեթև արդյունաբերությունը:

Անկախության երկրորդ տասնամյակում հիմնվեցին ավելի քան 2500 միջին և փոքր արդյունաբերական ձեռնարկություններ: Ոչ մեծ հզորությամբ վերագործարկվեցին մի շարք մեքենաշինական գործարաններ՝ «Հրազդանմաշ» ՓԲԸ, «Հայէլեկտրամեքենա», Ավտոդողերի, Երևանի հաստոցաշինական և այլն: Վերազինվեցին հանքարդյունաբերության, մետաղագործական և չինանյութերի արդյունաբերության մի շարք ձեռնարկություններ, Ալավերդու լեռնամետաղագործական գործարանը, «Ռուբին», «Տրանզիստոր» և այլ գործարաններ:

2001 թվականից տեղեկատվական տեխնոլոգիաները հռչակվեցին որպես ՀՀ-ի տնտեսության զարգացման գերակա ճյուղ: Արդեն 2008 թ. այդ ոլորտում գործում էր ավելի քան 230 ձեռ-

նարկություն, իսկ 2011 թ.՝ 350: Միջազգային որակի հազարավոր հայ մասնագետներով համալրված տեղեկատվական և թվային տեխնոլոգիաների բնագավառը դարձավ ՀՀ արդյունաբերության ամենաեկամտաբեր և ամենաարագ զարգացող ճյուղերից մեկը:

Սակայն խորհրդային տարիներին մեծ ճանաչում ունեցած չատ ձեռնարկություններ չարունակում էին մատնվել անգործության: Անկախության առաջին տարիներին ամբողջովին թալանված լինելով՝ դրանք այլևս պիտանի չէին վերականգնման: Արդյունաբերության մեջ կատարված ավերների հետևանքները ավելի ցայտուն էր դրսևորվում վրա հասած համաշխարհային ճգնաժամի պայմաններում:

Արդյունաբերության նկատելի առաջընթացը թելադրում էր մեծացնել էներգետիկ ռեսուրսները, ուստի վերակառուցվեցին Հրազդանի և Երևանի ջեկերը: Կառուցվեց Իրան-Հայաստան հզոր գազամուղը, որի չնորհիվ հանրապետությունն ունեցավ կայուն էլեկտրամատակարարում: 2011 թ. վերջին գործարկվեց Հրազդան ջեկ-ի 5-րդ էներգաբլոկը՝ 460 մվտ հզորությամբ:

Որոշ առաջընթաց էր նկատվում գյուղատնտեսության բնագավառում: Հանրապետությունում գործում էին 340 հազարից ավելի գյուղացիական տնտեսություններ: Որոշ չափով աճել էին գյուղատնտեսության արտադրության ծավալները: Չնայած դրան, ագրարային ոլորտը դուրս չէր գալիս ճգնաժամից: Գյուղը կարիք ուներ պետական լուրջ աջակցության: Դեռևս չէին լուծված ոռոգման համակարգերի զարգացման, սննդի անվտանգության ապահովման, գյուղական համայնքների վարկավորման, գյուղմթերքների իրացման և այլ կենսական խնդիրներ:

Գյուղատնտեսության ոլորտի հիմնական թերությունը չարունակում է մնալ գյուղացիական տնտեսությունների փոքր չափերը և մասնատված հողաբաժինները, որոնք ձևավորվել էին հողի սեփականաչնորհման ընթացքում: Դրանք սահմանափակում են ոլորտի կայուն զարգացումը և խոչընդոտում գյուղատնտեսության վարման արդյունավետ տեխնոլոգիաների ներդրմանը:

Ագրարային բարեփոխումների քաղաքականության գործադրմամբ գյուղատնտեսությունն աստիճանաբար սկսեց դանդաղ առաջընթաց արձանագրել: Ավելացավ հացահատիկային մշակաբույսերի, կարտոֆիլի, բանջարեղենի, բոստանային կուլտուրաների արտադրանքը:

Հատկապես դրական տեղաչարժեր եղան այգեգործության բնագավառում: Ընդլայնվեցին պտղատու և խաղողի այգիների տարածքները, բարձրացավ բերքատվությունը: Անասնաբուծության ոլորտում կայունացման դրսևորումներ երևան եկան 2000-2002 թթ., երբ դադարեց անասնագլխաքանակի նվազման միտումը, և անասնաբուծական մթերքների արտադրության տարեկան ծավալները աճեցին: Կաթի արտադրության ծավալների աճի հետևանքով ընդարձակվեց դրա վերամշակման ձեռնարկությունների ցանցը:

Սակայն գյուղատնտեսության զարգացմանը մեծապես խոչընդոտում էր ժամանակակից գյուղատնտեսական տեխնիկայի պակասը կամ բացակայությունը:

Կառավարությունը ջանքեր էր գործադրում վիճակը բարելավելու համար: Մշակվեցին ու գործադրվեցին մի քանի խոչոր ծրագրեր: Դրանք էին՝ գյուղացիական տնտեսությունների վարկավորումը, ցորենի և գարու բարձրորակ սերմերի ներմուծումն ու տրամադրումը, գյուղմթերքների իրացման ապահովումը, տեղական պարարտանյութերի արտադրության զարգացումը և այլն:

Լուրջ առաջընթաց ունեցավ չինարարությունը: Շահագործման հանձնվեցին բազմաթիվ ու բազմաբնույթ կառույցներ՝ բնակելի չենքեր, դպրոցներ, հիվանդանոցներ, պոլիկլինիկաներ, մշակութային, սոցիալական նշանակություն ունեցող օբյեկտներ, ճանապարհներ և այլն:

2000 թվականից հետո երկրում իրականացված չինարարության ծավալներում առանձնանում են աղետի գոտում կատարված աշխատանքները: Միայն 2000-2008 թթ. ավելի քան 20 հազար ընտանիք բարելավել է իր բնակարանային պայմանները, իսկ ավելի քան 4000 ընտանիք ստացել նոր բնակարան: Բնակարանաչինությունը հիմնականում կատարվում էր «Լինսի» հիմնադրամի հաշվին:

Չնայած 2009 թ. սկսած համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամին՝ մեծ թափ ստացան աղետի գոտու վերականգնման աշխատանքները, որոնց չնորհիվ հազարավոր ան-

օթևան ընտանիքներ ստացան բնակարաններ:

Զեռքբերումների հետ միասին այս ոլորտի թերություններից էին տեղական չինանյութերի արտադրության կրճատումը, նորակառույց բազմաբնակարան շենքերի բնակարանների գների անընդմեջ աճը և այլն:

Արտաքին տնտեսական գործունեության հետևողական իրագործման շնորհիվ 2003 թ. փետրվարի 5-ին ՀՀ-ն դարձավ Առևտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) լիիրավ անդամ: Դա հնարավորություն ընձեռեց այդ կազմակերպության անդամ երկրների հետ ամրապնդել երկկողմ առևտրատնտեսական հարաբերությունները, մեծացնել հայկական ապրանքների մուտքը ԱՀԿ անդամ երկրների շուկաներ, միաժամանակ հեշտացնել այդ երկրների ապրանքների և ծառայությունների մուտքը հայկական շուկա, որն ուղղակիորեն նպաստեց ՀՀ արտահանման և ներմուծման ծավալների աճին:

2001 թ. հունվարի 25-ին տեղի ունեցավ Եվրախորհրդին Հայաստանի Հանրապետության լիիրավ անդամակցությունը, որի շնորհիվ ընդլայնվեցին եվրոպական երկրների հետ համագործակցության շրջանակները: ԵՄ-ի հետ տնտեսական ինտեգրման գործընթացը նպաստում էր Հանրապետության տնտեսության զարգացմանն ու նրա տարբեր ոլորտների բարեփոխումներին:

Բայց Ռուսաստանի Դաշնությունը և ԱՊՀ երկրները Հայաստանի համար մնում էին որպես հիմնական գործընկերներ, որոնց ընկնում էր Հանրապետության առևտրաշրջանառության շուրջ 50 %-ը: Ռուսաստանի հետ հարաբերությունները, լինելով ռազմավարական, ընդգրկում էին տնտեսության բոլոր ոլորտներն ու ճյուղերը:

2001-2010 թթ. ՀՀ-ից ապրանքների արտահանումը աճել էր ավելի քան 7 անգամ: Հայրենական արտադրողները այս ժամանակահատվածում կարողացել էին ոչ միայն իրենց թողարկած ապրանքների որակը հասցնել միջազգային չափորոշիչների, այլև տիրապետել զարգացած շուկաներում գործելու հմտությունների:

2004 թ. Եվրամիության խորհուրդը Հայաստանի Հանրապետությունն ընդգրկեց Եվրոպական հարևանության քաղաքա-

կանության (ԵՀՔ) մեջ՝ հարաբերությունները տեղափոխելով որակական նոր մակարդակ: Գործընկերոջ և համագործակցողի կարգավիճակ ունեցող երկրից ՀՀ-ն դարձավ Եվրամիությանը հարևան երկիր: ԵՀՔ շրջանակներում Եվրամիությունը հարևան երկրներին առաջարկում էր արտոնյալ համագործակցություն, որի նպատակն էր ժողովրդավարության հաստատումը, մարդու իրավունքների պաշտպանությունը, օրենքի իշխանությունը, շուկայական տնտեսության սկզբունքների ներդրումը, կայուն զարգացումը:

ԵՀՔ շրջանակներում 2006 թ. ստորագրվեց և հաստատվեց Հայաստան-Եվրամիություն համատեղ գործողությունների ծրագիր, որի իրականացումը նպաստելու էր ՀՀ օրենսդրության ներդաշնակեցմանը Եվրամիության չափանիշներին:

Հաջողված համագործակցություն էր ծավալվել Եվրոպական տնտեսական հանձնաժողովի, Արժույթի միջազգային հիմնադրամի, Համաշխարհային բանկի, Եվրասիական տնտեսական ընկերության, Սևծովյան տնտեսական համագործակցության հետ:

Մեծապես կարևորելով եվրոպական հարևանության քաղաքականության «Ավելի շատ աջակցություն՝ ավելի շատ բարեփոխումների դիմաց» սկզբունքը՝ Հայաստանը ընդլայնեց ԵՄ-ի հետ բազմակողմ համագործակցությունը:

2011 թ. հարկային քաղաքականության մեջ կատարվեցին զգալի փոփոխություններ՝ նպատակ ունենալով հնարավորին չափ բարելավել գործող միջավայրը փոքր և միջին բիզնեսի համար:

Այս ընթացքում կատարվեց գործունեության այնպիսի տեսակների ընդլայնում, ինչպիսիք են հանրային սնունդը, հյուրանոցային տնտեսությունը, թեթև մարդատար մեքենաներով ուղևորափոխադրումների իրականացումը և այլն:

2001 թ. ուժի մեջ մտավ ՀՀ մաքսային օրենսգիրքը, որով մաքսային քաղաքականությունն ուղղվեց ազատ առևտրի զարգացմանը: Սահմանվեցին մաքսատուրքերի բավականին ցածր դրույքաչափեր: Աշխատանքներ տարվեցին ազատ առևտրի ոչ սակագնային խոչընդոտների կրճատման ուղղությամբ: ՀՀ տարածքում գործող ստանդարտները և տեխնիկական կանոնակարգերը համապատասխանեցվեցին միջազգային չափանիշներին:

Ջանքեր գործադրվեցին զարգացման հեռանկար չունեցող բանկերից ձերբազատվելու ուղղությամբ: Ֆինանսական համակարգն անցավ զարգացման որակապես նոր փուլ, ձևավորվեցին կայուն ֆինանսական ինստիտուտներ, որոնք լինելով ճկուն, ամուր դիրքեր գրավեցին ֆինանսական շուկայում: 2008 թ. Հանրապետության բանկային համակարգում գործում էր չուրջ երկու տասնյակ բանկ: Մեծապես աճել էր նրանց վարկավորման հնարավորությունները, որին նպաստել էր բանկային ավանդների արագ աճը:

բ. Բնակչության սոցիալական վիճակը: 2000-ականներին Հանրապետությունում սկսել էր չնչին թվերով բարձրանալ աշխատավարձը: Զուգահեռաբար աճում էին ապրանքների և ծառայությունների գները:

Դեռևս բարձր էր մնում աղքատության մակարդակը, որն արտահայտվում էր տարբեր ձևերով և չոչափում էր կյանքի տարբեր կողմեր՝ ապրանքների սպառում, առողջություն, կրթություն, անվտանգություն:

Հանրապետության բնակչության զգալի մասը գոյատևում էր արտասահմանից ստացած մասնավոր տրանսֆերտներով: Հանրապետությունում աղքատների թիվը Համաշխարհային տնտեսական ճգնաժամի պայմաններում շարունակում էր աճել: Եկամուտների անարդարացի բաշխման հետևանքով թշվառ վիճակում էր հայտնվել գյուղացիությունը: Նույնիսկ հազարավոր ազատամարտիկներ հազիվ էին պահպանում իրենց գոյությունը: Շարունակում էին սոցիալական ծանր պայմաններում գտնվել զիտության բնագավառի աշխատողները, ընդհանրապես՝ մտավորական դասը: Շարունակվում էին չլուծված մնալ զբաղվածության ու կենսաթոշակավորման հարցերը:

Այդ ամենի հետևանքով ծայր էր առել բնակչության անապահով խավերի զանգվածային արտագաղթ երկրից, որը համաշխարհային տնտեսական ճգնաժամի պայմաններում գնալով ավելի մեծ ծավալներ ընդունեց: Մարդիկ հանրապետությունից հեռանում էին ոչ միայն իրենց տնտեսական անմխիթար վիճակի պատճառով, այլև սոցիալական և այլ կարգի անարդարություններից դրդված:

գ. Համաշխարհային տնտեսական ճգնաժամի ազդեցությունը ՀՀ տնտեսության վրա և ձեռնարկված միջոցառումները: 2008 թ. սեպտեմբերին ԱՄՆ-ում սկիզբ առած և այնուհետև ամբողջ աշխարհում տարածված ֆինանսատնտեսական ճգնաժամը բացասական լուրջ հետևանքներ ունեցավ նաև ՀՀ տնտեսության վրա:

Զգալիորեն նվազեցին արտասահմանում աշխատող կամ բնակվող հարազատների կողմից Հայաստան փոխանցվող կանխիկ դրամական միջոցները, ինչը խիստ բացասաբար անդրադարձավ ներքին պահանջարկի, բնակչության բարեկեցության վրա: Ճգնաժամի հետևանքով տեղի ունեցավ արտահանման նկատմամբ պահանջարկի նվազում, ապրանքատեսակների գների անկում, պակասեցին ներդրումները: Ֆինանսական հատվածում ծագող խնդիրներն ու պետական աջակցության ծավալների կրճատումը նպաստեցին ՀՀ տնտեսության անկմանը:

2009 թ. երկրորդ կեսին ՀՀ կառավարությունը լուրջ քայլեր ձեռնարկեց համաշխարհային ճգնաժամի հետևանքները հաղթահարելու համար՝ ներառյալ հարկերի նվազեցումը փոքր և միջին ձեռնարկությունների համար, պետական երաշխիքների ներդրումը շինարարության և արդյունաբերության ոլորտում գործող ընկերությունների համար և այլն:

Ձեռնարկված միջոցառումների շնորհիվ վիճակն աստիճանաբար բարելավվեց: Երկիրը աստիճանաբար սկսեց դուրս գալ խոր ճգնաժամից: Բայց շատ բան դեռ կախված է համաշխարհային տնտեսական ճգնաժամի լիակատար հաղթահարումից, միջազգային ֆինանսական շուկայում կայունության հաստատումից:

դ. Առողջապահությունը: Այս բնագավառում գլխավոր նպատակը մնում է՝ համակարգի կայուն զարգացումը, սոցիալական արդարության ու համերաշխության սկզբունքներով բնորոշվող առողջապահության ձևավորումը, բժշկական որակի ու մատչելիության բարձրացումը, բնակչության առողջության պահպանումը և բարելավումը:

2000-ական թթ. կեսերի առողջության պահպանման առաջնային ծառայությունները հանրապետության բնակչության համար դարձան անվճար: Ամբուլատոր-պոլիկլինիկական համակարգի հզորությունը ՀՀ կառավարության կողմից իրակա-

նացվող առողջապահական բարեփոխումների առանցքային ուղղություններից էր: Վերջինս արտացոլվել է նաև ՀՀ կառավարության կողմից ընդունված «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրում»: 2000-ական թթ. շարունակվում ու ընդլայնվում էր ընտանեկան բժշկության համակարգի ներդրումը որպես ՀՀ բնակչության ու հատկապես անապահով խավի համար առողջության առաջնային պահպանման և ախտորոշիչ ծառայությունների մատչելիության գրավական: Առաջին անգամ մասնագիտացված ստոմատոլոգիական ծառայության մատուցումը 65 տարեկանից բարձր բնակչության տարիքային խմբի համար իրականացվեց պետական պատվերի շրջանակներում:

2001-2011 թթ. բացվեցին ժամանակակից բուժսարքավորումներով ու տեխնոլոգիաներով հագեցված բաժանմունքներ ու կենտրոններ: Այդ ընթացքում ակնհայտ հաջողություններ արձանագրվեցին կառավարելի վարակիչ հիվանդությունների համաճարակաբանական վերահսկման ուղղությամբ:

Առողջապահության ոլորտում կառավարությունն իրականացնում էր բուժծառայությունների որակի և մատչելիության բարձրացման, ինչպես նաև ոլորտի ստվերայնության կրճատման աշխատանքներ:

Այսպես, 2008 թվականի հուլիսի 1-ից մեկնարկել է ծննդօգնության՝ պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնությունն ու սպասարկումը ըստ հավաստագրերի: 2011 թվականի հունվարի 1-ից ներդրվեցին մինչև 7 տարեկան երեխաների հիվանդանոցային անվճար բուժօգնության հավաստագրի ծրագիրը և երեխայի առողջության անձնագիրը:

Բյուջետային հատկացումների ավելացման, ֆինանսավորման համավճարային նոր մեխանիզմների ներդրման, վճարովի ծառայությունների գների մասնակի կարգավորման, ինչպես նաև հիվանդանոցային ծառայություններ մատուցող բուժհաստատություններում աշխատակիցների աշխատավարձերի վճարման մասնակի կանոնակարգման պայմաններում բժիշկների միջին աշխատավարձը 2010 թ. 97.0 հազար դրամից 2011 թ. կազմեց շուրջ 170 հազար դրամ, բուժքույրերինը՝ համապատասխանաբար 52 և 70 հազար դրամ:

Բուժծառայության մատչելիության բարձրացման նպատակով կառավարությունը խթանում էր կամավոր բժշկական ապահովագրության համակարգի զարգացումը:

Չնայած ձեռնարկված միջոցառումներին՝ այնուամենայնիվ առողջապահության ոլորտում դեռևս առկա էին մի շարք թերություններ, բացթողումներ, չլուծված հրատապ խնդիրներ: Այս ոլորտում պետական ծախսերը շարունակում են մնալ փոքրածավալ: Բժշկական ծառայություններից օգտվողների թիվը դեռևս ցածր է: Բնակչության ընդամենը 25%-ն է օգտվում այդ ծառայությունից, քանի որ այն մնում է շատ թանկ:

դ. Կրթությունը: Երրորդ հազարամյակի սկզբին հիմք դրվեցին ու նախանշվեցին կրթական բարեփոխումների առաջին ուղղությունները ուսուցման բոլոր աստիճաններում՝ նախադպրոցականից մինչև մասնագիտական:

2001 թվականից ուսումը դարձավ 11-ամյա, իսկ 2004-ից՝ 12-ամյա (տարրական՝ 4 տարի, հիմնական՝ 5 տարի և ավագ դպրոց՝ 3 տարի): Այդ ամենը ամրագրվեց 2009 թ. Ազգային ժողովի կողմից ընդունված «Հանրակրթության մասին» օրենքում: Եթե Հանրապետությունում 1991 թ. պետական հանրակրթական դպրոցների թիվը 1316 էր՝ 92,2 հազար աշակերտներով, ապա 2011 թ. համապատասխանաբար՝ 1457 և 393 հազար:

Կրթության ոլորտում 2011 թ. աշխատում էր շուրջ 50 հազար մանկավարժ: Կրթության որակի ապահովման տեսանկյունից հատուկ կարևորելով ուսուցիչների դերը՝ պետությունը հետևողականորեն իրականացնում է աշխատավարձերի բարձրացման քաղաքականություն: Հաջողվեց արմատապես լուծել աշակերտներին դասագրքերով ապահովելու կարևորագույն խնդիրը:

Իրականացվում էր դպրոցների հիմնանորոգում և աշակերտական գույքով կահավորում, դպրոցներ էր մուտք գործում համակարգչային տեխնիկան:

Մեծ ուշադրություն էր դարձվում բարձրագույն մասնագիտական կրթության զարգացմանը: Այդ տեսակետից կարևոր նշանակություն ունեցավ ՀՀ Ազգային ժողովի կողմից 2004 թ. ընդունված «Բուհական և հետբուհական կրթության մասին»

օրենքը: Մասնագիտական որակավորման բարձրացման, առաջավոր փորձի փոխանակման, կրթության բովանդակության ու մեթոդների արդիականացման շատ հարցեր սկսեցին լուծվել Բոլոնիայի համաձայնագրին Հայաստանի Հանրապետության միացման, եվրոպական կրթական համակարգին ինտեգրվելու շնորհիվ: Բարձրագույն կրթության բարեփոխումները իրականացվում էին նշված համաձայնագրի սկզբունքներին համապատասխան. հաստատվեց բարձրագույն կրթության որակավորման ազգային շրջանակը, մշակվեց և ընդունվեց բուհերի ֆինանսավորման ռազմավարությունը, վերանայվեցին մասնագիտական կրթական ծրագրերի արտոնագրման պայմաններն ու պահանջները, կարգավորվեց ուսանողների շարժունության հիմնահարցը, ներդրվեց հետբուհական՝ հետազոտողի կրթական ծրագրի կրեդիտային համակարգը: Կատարված քայլերի շնորհիվ հաջողվեց ձերբազատվել չուկայում անորակ կրթական ծառայություն մատուցող 30-ից ավելի բարձրագույն ուսումնական հաստատություններից՝ արտոնագրից զրկելու, մասնակիորեն կասեցնելու կամ այլ բուհերի հետ դրանք միավորելու ճանապարհով:

2005 թ. Նորվեգիայի Բերգեն քաղաքում Հայաստանի Հանրապետությունը ստորագրեց նաև Բերգենի հռչակագիրը: Նպատակը ՀՀ մասնագիտական կրթական համակարգի ինտեգրումն էր բարձրագույն կրթության եվրոպական միասնական տարածքին: 2005 թ. հուլիսին կառավարությունը հաստատեց «Ուսանողներին մեկ բարձրագույն ուսումնական հաստատությունից մեկ ուրիշը փոխադրելու կարգը», 2006 թ.՝ «ՀՀ պետական բուհերում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տալու կարգը», 2006 թ. սեպտեմբերից, առաջին անգամ, ՀՀ պետական բուհերում սկսվեց կիրառվել մրցակցային կրթության գաղափարը՝ ըստ առաջադիմության ուսանողների փոխատեղումը վճարովի ուսուցման համակարգից՝ անվճար և հակառակը: Ստեղծվեց բարձրագույն կրթության որակի ապահովման հայեցակարգ, ուրվագծվեցին դրա իրականացման հիմնական սկզբունքներն ու ուղենիշները:

Տարեցտարի ավելի շատ սփյուռքահայ երիտասարդներ էին դիմում Հայաստանում բարձրագույն կրթություն ստանալու համար: 2007-2008 ուս. տարվա տվյալներով Հայաստանյան պետական և ոչ պետական բուհերում սովորում էր մոտ 2300 ուսանող: Այս ծրագիրը հնարավորություն էր տալիս ոչ միայն կադրեր պատրաստել Սփյուռքի հայկական համայնքների համար: Միաժամանակ դա Սփյուռքի բազմաթիվ հայ ընտանիքների համար ազդեցիկ գործոն էր Հայաստան վերադառնալու կամ Հայաստանում մշտական բնակություն հաստատելու համար:

Ե. Գիտությունը: *21-րդ դարասկզբին ՀՀ գիտության ոլորտում առաջնային խնդիր էր օրենսդրական և նորմատիվ իրավական դաշտի կարգավորումը: 2001 թ. ապրիլին ՀՀ կառավարության կողմից հավանության արժանացավ «Հայաստանի Հանրապետության գիտության զարգացման հայեցակարգը», որը նախանշում էր ոլորտի զարգացման ուղիները:*

Նույն թվականին ՀՀ կառավարությունը հաստատեց գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային (պայմանագրային), թեմատիկ և նպատակային ծրագրային ֆինանսավորման կարգերը:

ՀՀ կառավարության կողմից 2002 թ. ընդունվեց «ՀՀ Գիտության և տեխնիկայի զարգացման գերակայությունները հաստատելու մասին» որոշումը և 2006 թ.՝ «Գիտության ոլորտի բարեփոխումների հայեցակարգերի դրույթները»: Դրանցում ոչ միայն նշված էին գիտական ու գիտատեխնիկական գործունեության ֆինանսավորման աղբյուրները, այլև Հայրենի գիտության գերակա ուղղությունները: Դրանցում հատկապես կարևորվում էին հայագիտությունը, կիրառական արժեքավոր հետազոտությունների զարգացումը խթանող հիմնարար հետազոտությունները, տեղեկատվական ու առաջատար տեխնոլոգիաները (կենսատեխնոլոգիա, նանոտեխնոլոգիա), էներգիայի նոր աղբյուրների ուսումնասիրումը և այլն:

2006-2007 թթ. ընթացքում մշակվեց և ՀՀ կառավարության հավանությանը արժանացավ ՀՀ գիտության ոլորտի բարեփոխումների հայեցակարգը, որի հիմնական նպատակն էր գիտելիքի վրա հիմնված տնտեսության և հասարակության ստեղծումը: Հայեցակարգը նախանշում էր համակարգի զարգացումը 2008-

2011 թթ. և ամրագրում հետևյալ հիմնական խնդիրները. առաջին՝ համակարգի կառավարման արդյունավետության բարձրացմամբ գիտության ոլորտի կառավարման պետական միասնական մարմնի ստեղծում՝ հանձինս Գիտության պետական կոմիտեի, երկրորդ՝ անկախ փորձաքննության համակարգի ստեղծում, երրորդ՝ գիտական աստիճանաշնորհման համակարգի վերափոխում և գիտության պետական հիմնադրամի ստեղծում:

Հատկապես որոշակի զարգացում նկատվեց հայագիտության ոլորտում: 2003 թ. սեպտեմբերին ՀՀ ԳԱԱ-ն և Երևանի պետական համալսարանը կազմակերպեցին հայագիտության արդի վիճակին և զարգացման հեռանկարներին նվիրված միջազգային համաժողով արտերկրի հայագետների մասնակցությամբ: Գիտությունների ակադեմիայի, Երևանի պետական համալսարանի, Մատենադարանի և հայագիտական մյուս օջախների ակտիվ համագործակցության շնորհիվ ձեռք բերվեցին զգալի նվաճումներ: Հայագիտության կարևորագույն նվաճումներից էր «Հայոց պատմության» քառահատորյակի հրատարակումը: Ստեղծվեցին գիտական ուրիշ լուրջ աշխատություններ:

Լույս տեսան հայագիտության տարբեր բնագավառները ներկայացնող մենագրություններ ու հոդվածների ժողովածուներ՝ նվիրված հայ պատմագիտության, աղբյուրագիտության, լեզվաբանության, գրականագիտության հիմնախնդիրներին: 2008 թվականից ակտիվ աշխատանքներ էին իրականացվում ԵՊՀ-ում ստեղծված Հայագիտական հետազոտությունների ինստիտուտում: Կարևոր նվաճում էր մատենագրության ու դասական գրականության թվանշանային գրադարանի և www.digi-lib.am կայքի ստեղծումը, որոնք լայն հեռանկարներ են բացում ազգային գիտամշակութային արժեքների պահպանման, միջազգայնացման և հայագիտական ուսումնասիրությունների դյուրացման ու զարգացման առջև: Որոշակի նվաճումներ էին ձեռք բերվել հնագիտական հետազոտությունների ասպարեզում: Հայ հնագետները արտասահմանյան հնագիտական արշավախմբերի հետ համատեղ ՀՀ-ում կատարեցին բազմաթիվ պեղումներ, որոնց արդյունքները անակնկալ էին գիտական աշխարհում: Հայաստանի «Արենի 1» քարանձավային համալիրում 2010 թ. կատարված պեղումներով հայտնաբերվեց եղինջի մանրաթելից պատրաստված կանացի հագուստ, որը մոտ 5900 տարեկան է: Նույն քարանձավներում հայտնաբերվեցին նաև 5000-ամյա ոտնաման և աշխարհի ամենահին գինեգործարանը: Լայն արձագանք գտան ՀՀ ԳԱԱ և ԵՊՀ կողմից հրավիրված Մովսես Խորենացու ծննդյան 1500-ամյակին, Գլաձորի համալսարանի 700-ամյակին, քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակին (2001), հայ գրերի ստեղծման 1600-ամյակին (2005) նվիրված միջազգային գիտաժողովները:

Հայագիտության, իբրև գերակա ուղղության, զարգացումը խթանելու նպատակով ՀՀ կառավարությունը 2012 թ. ընդունեց «Հայագիտության զարգացման հայեցակարգը, ոլորտի զարգացման 2012-2025 թթ. ռազմավարությունը և դրա իրականացման միջոցառումների ժամանակացույցը»: Հիմնական նպատակն էր պետության և մտավորականության ջանքերով հայագիտությունը վերածել հայության ազգային ու մշակութային անվտանգության ապահովման հզոր գործոնի: Նախատեսվում էր, որ հայագիտությունը խթանելու է անկախ պետականության ամրապնդումը, նպաստելու ազգային ինքնագիտակցության ուժեղացմանը:

Է. Մշակույթի առաջընթացը: Առանձնահատուկ ուշադրություն դարձվեց բնակչության մշակութային կյանքի աշխուժացմանը, մշակութային ենթակառուցվածքների զարգացմանը: Կազմակերպվում էին բազմաթիվ երաժշտական, թատերական, կինոարվեստի փառատոններ, ցուցահանդեսներ, աշխարհահռչակ մշակութային գործիչների հյուրախաղեր և այլն:

Երաժշտարվեստի ոլորտում գերակա ուղղությունը օպերային և բալետային արվեստի զարգացումն էր: Իրականացվեց «Սպարտակ» (բեմադրիչ՝ Յուրի Գրիգորովիչ), «Ռոմեո և Ջուլիետ» (բեմադրիչ՝ Ռուդոլֆ Խառատյան) բալետների, «Աիդա» (բեմադրիչ՝ Մարիո Կորադի), «Սայաթ-Նովա» (բեմադրիչ՝ Արամ Սուքիասյան), «Ալմաստ» (բեմադրիչ՝ Ա. Իսահակյան) օպերաների բեմադրությունը: Կազմակերպվեցին տասնյակ համերգներ աշխարհի օպերային լավագույն երգիչների, անվանի դիրիժորների ու նրանց ղեկավարած նվագախմբերի, միջազգային մրցույթների դափնեկիրների ելույթներ:

Կինոարվեստի ոլորտում նոր թափ հաղորդվեց «Ոսկե ծիրան» կինոփառատոնին: Հայ կերպարվեստը արտերկրում պարբերաբար ներկայացվում էր ցուցահանդեսներով:

Մեծ զարգացում ապրեց գրահրատարակչությունը:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի հետ համագործակցության շրջանակում մրցույթում հաղթելու շնորհիվ ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից Երևանը հայտարարվեց 2012 թ. Գրքի համաշխարհային մայրաքաղաք:

Հուշարձանների պահպանության բնագավառում կանոնակարգվեցին նոր ծրագրային ուղղություններ: Մշակույթի ոլորտում սկսվեց տեղեկատվական-հաղորդակցական նոր տեխնոլոգիաների ներդրումը:

Կարևոր նշանակություն էր տրվում ազգային փոքրամասնությունների մշակույթի պահպանմանը և զարգացմանը:

2. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ

ա. Սահմանադրական և դատական նոր բարեփոխումներ: 1995-2005 թվականներին Հանրապետության տնտեսական, քաղաքական ու հասարակական կյանքում կատարված տեղաշարժերը առաջացրին ՀՀ Սահմանադրության մեջ բարեփոխումներ կատարելու անհրաժեշտություն: Այդ բարեփոխումներն առաջին հերթին վերաբերում էին ՀՀ Նախագահին ընձեռված բացառիկ լիազորությունները սահմանափակելուն, գործադիր իշխանության նկատմամբ ՀՀ Ազգային ժողովի վերահսկողությունը ուժեղացնելուն, իշխանության երեք թևերի միջև փոխադարձ հակակշիռների մեխանիզմներ ստեղծելուն և այլն: Սահմանադրական բարեփոխումների նախապատրաստական աշխատանքները կատարվեցին 1998-2005 թթ.: Այդ փոփոխությունների վերջնական տարբերակը, արժանանալով Ազգային ժողովի հավանությանը, համաժողովրդական հանրաքվեի արդյունքով հաստատվեց 2005 թ. նոյեմբերի 27-ին:

Երկարացվեց Ազգային ժողովի լիազորությունների ժամկետը՝ 4 տարուց դառնալով 5 տարի: Ավելացավ նրա մշտական հանձնաժողովների թիվը:

Փոխվեց Երևանի կարգավիճակը՝ մարզից դառնալով համայնք՝ ունենալով սեփական բյուջե և համայնքային խնդիրներն ինքնուրույն լուծելու իրավունք:

2000 թվականից սկսվեց դատաիրավական բարեփոխումների երկրորդ փուլը: 2001 թ. հիմնվեց ՀՀ տնտեսական դատարանը, իսկ 2003 թ. ընդունվեց ՀՀ քրեական նոր օրենսգիրքը: Այս փուլի կարևոր բարեփոխումներից էր քրեակատարողական համակարգում մարդասիրական գործընթացի կարգավորումը, որի շնորհիվ համակարգը ներքին գործերի նախարարությունից տեղափոխվեց արդարադատության նախարարության համակարգ:

ՀՀ-ի անդամակցությունը միջազգային ամենատարբեր կառույցներին և հատկապես Եվրախորհրդին պահանջում է անկախ ու հուսալի դատական համակարգի ստեղծում: Բացի դրանից սահմանադրական բարեփոխումները նույնպես խթան հանդիսացան դատաիրավական բարեփոխումների երկրորդ փուլի համար: Երկրորդ փուլի շրջանակներում ընդունվեցին դատախազության մասին օրենքներ, ինչպես նաև մյուս օրենքներում կատարվեցին համապատասխան փոփոխություններ և լրացումներ: Այդ փուլում ստեղծվեցին նոր դատավարական օրենսգրքեր, մասնավորապես քրեական, քաղաքացիական և վարչական դատավարության օրենսգրքերը: Դատական համակարգի անկախության ապահովմանն ուղղված կարևոր քայլերից էր ՀՀ Ազգային ժողովի կողմից 2007 թ. վերջերին ընդունված «ՀՀ դատական օրենսգիրքը», որը կարգավորում է դատական իշխանության կազմակերպման և գործունեության հետ կապված հարաբերությունների ողջ շրջանակը: Միջոցներ ձեռնարկվեցին դատարանների նյութատեխնիկական խնդիրները և դատավորների սոցիալական պաշտպանվածության մակարդակը բարելավելու ուղղությամբ: 2007 թ. փետրվարին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվեց նաև «Դատախազության մասին» ՀՀ օրենքը, որով սկսվեց դատախազական համակարգի բարեփոխման գործընթացը, և հստակեցվեցին քրեական հետապնդում հարուցելու, հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելու, դատարանում մեղադրանքը պաշտպանելու, դատարանների վճիռները և որոշումները բողոքարկելու, պետական շահերի պաշտպա-

նության, պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելու դատախազության գործառույթները: ՀՀ դատական օրենսգրքի ընդունմամբ 2008 թ. հունվարի 1-ից դատական համակարգում բարեփոխումները չարունակվեցին, դրվեց դատական նոր համակարգի հիմքը:

Նշված օրենսգրքի ընդունմամբ ստեղծվել է նաև դատական դպրոցը, որը կարևորագույն դերակատարում կունենա հանրապետության արդարադատության իրականացման ու ամրապնդման գործում:

ՀՀ-ում գործում են ընդհանուր իրավասության առաջին ատյանի, վերաքննիչ և վճռաբեկ դատարաններ, ինչպես նաև մասնագիտացված վարչական և վարչական վերաքննիչ դատարաններ:

Բարեփոխումներ իրականացվեցին անվտանգության և ոստիկանական մարմիններում: Դրան մեծապես նպաստեցին ՀՀ Ազգային ժողովի կողմից 2001-2002 թթ. ընդունած «Ազգային անվտանգության մարմինների մասին» և «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքները:

բ. Ներքաղաքական զարգացումները 2001-2011 թթ.: 2000 թվականների սկզբին հանրապետության ղեկավարությունը կարողացավ խուսափել ներքաղաքական ցնցումներից և աստիճանաբար կայունացնել քաղաքական իրավիճակը: Դարասկզբին իրականացվեցին սահմանադրության և ժողովրդավարության ոգուն համապատասխան այլ բարեփոխումներ ևս: 2001 թ. դեկտեմբերին ընդունվեց «Հասարակական կազմակերպությունների մասին», իսկ 2002 թ. օգոստոսին՝ «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքները: Այս նոր օրենքներով ոչ բոլոր կուսակցությունները կարողացան քննություն բռնել ու վերագրանցվել: Եթե 2002 թ. հանրապետությունում կուսակցությունների թիվը հասել էր 116-ի, որոնց մեծ մասը իրականում ստեղծված էին թղթի վրա, ապա օրենքի կիրառումից հետո՝ 2004 թ. հունվարին հանրապետությունում կուսակցությունների թիվը հասնում է 52, իսկ 2005 թ.՝ 71-ի, 2011 թ.՝ 77-ի: Կուսակցությունների ակտիվությունը դրսևորվեց հատկապես նախագահական և խորհրդարանական ընտրությունների ժամանակ:

ՀՀ նախագահական չորրորդ ընտրություններն անցկացվեցին 2003 թ. փետրվարի 19-ին, երկրորդ փուլ դուրս եկան գործող նախագահ Ռոբերտ Քոչարյանը և միացյալ ընդդիմության թեկնածու Ստեփան Դեմիրճյանը: Նախագահ վերընտրվեց Ռոբերտ Քոչարյանը: 2003 թ. մայիսի 25-ին տեղի ունեցան Ազգային ժողովի հերթական ընտրություններ. փաստորեն կուսակցություններից և ոչ մեկին չհաջողվեց բացարձակ մեծամասնություն ստանալ խորհրդարանում և միայնակ ձևավորել կառավարությունը: Ուստի առաջին անգամ ընտրություններում առավել շատ ձայներ ստացած երեք կուսակցությունները՝ Հայաստանի Հանրապետական կուսակցությունը (ՀՀԿ)-ն, Օրինաց երկիրը (ՕԵԿ) և Հայ հեղափոխական դաշնակցությունը (ՀՅԴ) կազմեցին քաղաքական կոալիցիա և համատեղ ձևավորեցին կառավարությունը:

Հասարակության ակտիվության պայմաններում ընթացան Ազգային ժողովի չորրորդ գումարման խորհրդարանական ընտրությունները 2007 թ. մայիսի 12-ին, ուր համամասնական ընտրակարգով մեծամասնություն ստացավ Հայաստանի Հանրապետական կուսակցությունը (ՀՀԿ), որին հաջորդեցին Բարգավաճ Հայաստան (ԲՀԿ) և Հայ հեղափոխական դաշնակցություն (ՀՅԴ) կուսակցությունները: Ընտրությունների արդյունքից ելնելով՝ ստորագրվեց համաձայնագիր Հայաստանի Հանրապետական և Բարգավաճ Հայաստան կուսակցությունների միջև քաղաքական կոալիցիա ստեղծելու վերաբերյալ: Այդ կոալիցիան իր հերթին, Հայ հեղափոխական դաշնակցության հետ ստորագրեց համագործակցության համաձայնագիր: Այս երեք կուսակցություններն էլ ձևավորեցին նոր կառավարություն: Հունիսի 7-ին վարչապետ նշանակվեց դեռևս 2007 թ. ապրիլի 4-ից այդ պաշտոնը վարող Սերժ Սարգսյանը: Ընդդիմությունը ներկայացնող նախկին քաղաքական ուժերին այնպես էլ չհաջողվեց միավորվել և անհրաժեշտ թվով ձայներ գրավել նոր խորհրդարանում:

Նախագահական հինգերորդ ընտրություններն անցկացվեցին 2008 թ. փետրվարի 19-ին: Թեկնածուների մեջ էին հանրապետության առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը և վարչապետ Սերժ Սարգսյանը: ՀՀ նախագահ ընտրվեց Սերժ

Սարգսյանը (52, 82 %) ձայնով, իսկ Լևոն Տեր-Պետրոսյանը ստացավ (21, 51%) ձայն:

Ընտրությունները դիտարկող մի շարք երկրների ներկայացուցիչներ արձանագրել էին առանձին, ոչ էական խախտումներ ու թերություններ: ԵՄՄՎ 1609 բանաձևում արձանագրվել էր, որ չնայած դրան, ընտրությունները հիմնականում անցկացվել են «Եվրոպայի խորհրդի չափանիշների համաձայն»:

Կոպտորեն մերժելով ընտրությունների արդյունքները, ընդդիմության արմատական թևը, իշխանությունների ամենաթողության պայմաններում արհամարհանքով խախտելով օրենքով սահմանված կարգը, փետրվարի 20-ից Երևանում սկսեց հանրահավաքների շարք: Հետընտրական այդ օրերին ավելի լարվեց ու չիկացավ նախընտրական քարոզչության փուլում ձևավորված մթնոլորտը, որի պայմաններում մեծապես խորացել էր անհանդուրժողականությունն ու անվստահությունը տարբեր խավերի ու խմբերի միջև, հասարակությունը երկփեղկվել և բևեռացել էր վախի, ատելության ու թշնամանքի ազդակների ներքո: Ընտրություններում հաղթած Սերժ Սարգսյանը փետրվարի 26-ին նախագահի մյուս թեկնածուներին համագործակցության կոչ արեց, իսկ փետրվարի 29-ին քաղաքական համագործակցության համաձայնագիր ստորագրեց նախագահական ընտրություններում երրորդ տեղ գրաված թեկնածուի հետ:

Օրինապես նախագահ ընտրված, բայց դեռ երդում չտված, դեռ պաշտոնի չանցած Ս. Սարգսյանի շուրջ նախագահի մի քանի թեկնածուների և նրանց կողմնակիցների համախմբումն ու համագործակցությունը Լ. Տեր-Պետրոսյանի թիմում ընդունվեց զայրույթով ու թշնամանքով: Առավել սրվեցին արմատական տրամադրությունները: Բոլոր քաղաքական ուժերին Ս. Սարգսյանի ուղղած համագործակցության կոչը Լ. Տեր-Պետրոսյանի կողմից մերժվեց: Հետընտրական լարվածության այս պայմաններում վերջինիս կողմնակիցների գործողությունները դեռևս գործող նախագահ Ռ. Քոչարյանը որակեց «իշխանությունը զավթելու ոչ լեգիտիմ փորձ» և հայտարարեց, որ պատասխանը կլինի «վճռական և կտրուկ»: Իսկ արմատական ընդդիմության բողոքի զանգվածային գործողությունները չարունակվում էին: 10 օրերի ընթացքում ընդդիմության կազմակերպած չարտոնված հանրահավաքները վերջնականապես ապակայունացրին իրավիճակը ողջ երկրում:

Առաջացած անվստահության մթնոլորտում արմատական գործելաոճ որդեգրած Լ. Տեր-Պետրոսյանի կողմնակիցների արհամարհանքին էին հանդիպում տարբեր հասարակական կազմակերպությունների, արվեստի ու գիտության գործիչների, հայոց կաթողիկոսի հանդուրժողականության կոչերն ու հայտարարությունները: Հայաստանյաց Առաքելական եկեղեցու թեմական առաջնորդների և եպիսկոպոսների փետրվարի 29-ի ժողովը ուղերձ հղեց ժողովրդին՝ հորդորելով պահպանել ողջամտության ու խոհեմության ոգին, լինել օրինապահ, չհետևել ատելություն և թշնամանք հրահրողներին, յուրաքանչյուր քայլ կատարել երկրի հեղինակության, նրա ժողովրդի ներկայի և ապագայի հանդեպ լուրջ մտահոգությամբ:

Բայց ընդդիմադիրները, արհամարհելով բոլոր խորհուրդները, «հմտորեն» օգտագործեցին ստեղծված իրավիճակը: Նախընտրական և հետընտրական ժամանակահատվածների քարոզչության համադրումը ցույց էր տալիս, որ նախընտրական քարոզչությունն ու քվեարկության օրը նրանց հնչեցվող հայտարարություններն ու գործողությունները միտված էին հետընտրական ամենավատթար զարգացումների: Փետրվարի 20-29-ին Ազատության հրապարակում հնչող քարոզչության մեջ հստակ առանձնանում էին իշխանությունների կողմից «ժողովրդի վրա բռնության», ընտրակեղծիքների, «ժողովրդի թեկնածուի» տարած հաղթանակին տեր կանգնելու, գործող իշխանության նկատմամբ մինչև վերջ անհանդուրժող լինելու կարգախոսներ:

Զանգվածների հուզական տրամադրությունն ավելի սրելու համար Լևոն-Տեր Պետրոսյանն ու նրա կողմնակիցները անում էին «իշխանավորներին պատժելու» զանազան հայտարարություններ. «Եթե մեր ներկայացված պահանջները չկատարվեն ժամանակին, մենք կանենք այն, ինչ պետք է անենք», «Որևէ մեկը չի կարող մեզ կանգնեցնել», «Ժողովուրդն ինքը պետք է կամք ունենա պատժելու հանցագործներին»:

Հակադիր մղումների այս պայմաններում հասարակությունը լարվածության նորանոր վտանգավոր դրսևորումներ էր ունենում: Հետընտրական այդ շրջանը շատ քաղաքագետներ որա-

կեցին որպես «իշխանության և ընդդիմության միջև նյարդերի պայքար»: Այս իրավիճակում ԶԼՄ-ները շարունակում էին տալ բևեռացված մեկնաբանություններ:

Ակնհայտ էր, որ գերլարված այս վիճակը պետք է հաղթահարվեր խաղաղ ճանապարհով՝ իշխանության ու ընդդիմության միջև հանդուրժողականության ու փոխհամաձայնության միջոցներ գտնելով, բայց իշխանության և ընդդիմության փոխադարձ անհանդուրժողականությունը և փոխզիջման որոնման անհնարինությունը հանգեցրին մարտի 1-2-ին ծավալված դեպքերին:

Մարտի 1-ի առավոտյան ՀՀ ոստիկանության կողմից տեղանքի զննման և հասարակական կարգի պահպանման նպատակով Ազատության հրապարակում ձեռնարկված միջոցառմանը զանգվածային անկարգությունների կազմակերպիչներն ու մասնակիցները պատասխանեցին դիմադրությամբ՝ երկաթե ձողերով, քարերով ու փայտերով: Շուտով բողոքող զանգվածը տեղափոխվեց քաղաքապետարանի մոտ, ուր գործողությունները զարգանալով՝ կեսօրից հետո վերածվեցին ջարդարարության ու թալանի:

Անկարգությունների ղեկավարի և կազմակերպիչների կոչերով ամբոխը սկսեց ավերներ գործել: Ջարդուփշուր արվեցին անձնական օգտագործման չուրջ 100 ավտոմեքենա, ավտոբուսներ, տրոլեյբուսներ, ավերվեց մերձակայքում գտնվող «Մոսկվայի տունը» «Վիվասել» ընկերության վարչական շենքը, կողոպտվեցին խանութներ և գրասենյակներ: Ավելին, ցուցարարները սկսեցին հարձակումներ գործել ոստիկանների վրա: Բախումների ընթացքում երկուստեք օգտագործվեց հրազեն, որի արդյունքում զոհվեց 10 հոգի՝ ոստիկանության երկու աշխատող և ութ քաղաքացիական անձ: Ծավալված իրադարձությունների ընթացքում վիրավորվեց ոստիկանության 220 աշխատակից, 200-ից ավելի քաղաքացիական անձինք: Զանգվածային անկարգությունները շարունակվեցին նաև մարտի 2-ին:

Մարտի 1-ի երեկոյան ՀՀ դեռևս գործող նախագահ Ռ. Քոչարյանի հրամանագրով Երևան քաղաքում 20 օրով հայտարարվեց արտակարգ դրություն՝ սահմանադրական կարգին սպառնացող վտանգները կանխելու, բնակչության իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու նպատակով: Ակնհայտ է, որ դա պարտադրված քայլ էր, միակ ելքը՝ իրավիճակից դուրս գալու: Հրամանագրում նշվում էր. «ՀՀ նախագահի թեկնածու Լ. Տեր-Պետրոսյանի կողմնակիցները շարունակում են վիճարկել ընտրությունների ելքն ապօրինի միջոցներով: Ընդդիմության ներկայացուցիչների մի խումբ մարտի 1-ին անկարգություններ են իրականացրել Երևանի Կենտրոնում՝ պատճառելով վնաս քաղաքացիների և պետության գույքին, ինչպես նաև ստեղծելով ուղղակի սպառնալիք քաղաքացիների անվտանգությանը, ինչը վիճակը դարձնում է անվերահսկելի: Այդ գործողությունների թիրախը ՀՀ ձեռք բերած կայունությունն է, իսկ հետևանքը՝ միջազգային հեղինակության խաթարումը»: Իհարկե, եթե հրամանագիրն ավելի վաղ հայտարարվեր, երբ տեղի էին ունեցել առաջին կրակոցներն ու մահվան դեպքերը, գուցե հնարավոր լիներ խուսափել ծանր հետևանքներից:

Սպանված անձանց գործի քննության համար հարուցվեց քրեական գործ: Անկարգությունների կազմակերպիչներին, հրահրիչներին պատասխանատվության ենթարկելու համար կատարվեցին ձերբակալություններ և բանտարկություններ:

Դեռևս ՀՀ նախագահի պաշտոնը չստանձնած հանրապետության վարչապետ Ս. Սարգսյանը, անդրադառնալով ողբերգական իրադարձություններին, ասել է, որ ընդդիմադիրների անօրինական գործողությունների հետևանքով այսպես կոչված «չարժման» պարագլուխները հասարակական կարգը պահպանողներին ու սեփական աջակիցներին դարձրին իրենց անհագուրդ նկրտումների պարպման թիրախ: Այդ ամենի համար անկարգությունների կազմակերպիչներն ու հրահրողները դեռ պատասխան պիտի տան օրենքի, պատմության և սերունդների առաջ: Ցավով եմ նշում, որ մեր հայրենակիցները դարձան որոշ մարդկանց կույր ատելության զոհը: Այսօր ես կիսում եմ յուրաքանչյուրի վիշտն ու բոլորիդ մաղթում եմ կամք, ուժ ու հոգեկան կորով այս արհավիրքը հաղթահարելու համար»:

Մեղադրանք առաջարկվեց 152 անձի, որոնցից 122-ի նկատ-

մամբ սկզբնական փուլում խափանման միջոց կիրառվեց կալանքը: Դատարանում քննվող գործերով 112 անձի վերաբերյալ կայացվեցին դատավճիռներ: Նրանցից 62-ը դատապարտվեց ազատազրկման, մյուսները տարբեր պատճառներով ազատվեցին պատիժներ կրելուց:

Կատարվածի հիմնական մեղքն ընկավ ընդդիմության ղեկավարության վրա, որը բողոքող զանգվածին տարավ անօրինական գործողությունների: Մեղքի իրենց բաժինն ունեին նաև իշխանությունները, որոնք ճգնաժամի լուծման խաղաղ միջոցները դեռ չսպառած, դիմեցին ոստիկանական ուժի գործադրման:

2008 թ. մարտի 1-2-ը Երևան քաղաքում տեղի ունեցած ողբերգական իրադարձությունները բացասական բարոյահոգեբանական ազդեցություն թողեցին հայ ժողովրդի տարբեր շերտերի վրա՝ ինչ-որ տեղ նաև խորացնելով ատելության ու անհանդուրժողականության մթնոլորտը: Մանր հարված հասցվեց Հայաստանի Հանրապետության՝ որպես ժողովրդավար պետության միջազգային վարկանիշին:

գ. Կուսակցությունները: Անժխտելի է մնում քաղաքական կուսակցությունների դերը, որոնք կոչված են նպաստելու երկրում ժողովրդավարության հաստատմանը, ժողովրդի քաղաքական մշակույթի, ազգային ինքնագիտակցության բարձրացմանը, պետական մտածողության ձևավորմանը: Դրանք այն կարևոր արժեքներն են, առանց որոնց XXI դարի հայ հասարակությունը չի կարող առաջընթաց ապրել:

Հանրապետության հասարակական-քաղաքական կյանքում իրենց ակտիվությամբ աչքի ընկան մի շարք կուսակցություններ:

Այդ կուսակցություններից կարելի է առանձնացնել 21-րդ դարասկզբին ստեղծված և հասարակական-քաղաքական կյանքում իրենց դերակատարությունն ունեցած երկու կուսակցություն: Դրանցից է 2002 թ. ստեղծված «Ժառանգություն» կուսակցությունը, որն իր շարքերում ուներ 6 հազարից ավելի անդամ, տարածքային 43 ստորաբաժանումներով:

Այն Հանրապետության բազմակուսակցական համակարգի ձևավորման գործում ունեցավ այնպիսի դերակատարություն, որ Ազգային ժողովի 4-րդ գումարման ընտրություններում հաղթահարելով անհրաժեշտ 5%-անոց շեմը՝ խորհրդարանում ապահովեց 7 պատգամավորական տեղ:

Հանրապետության ընդդիմադիր դաշտի շուրջ 2 տասնյակ կուսակցություններ ու հասարակական կազմակերպություններ միավորվելով՝ կազմեցին Հայ ազգային կոնգրես (ՀԱԿ) կուսակցությունների դաշինքը, որը ձևավորվեց 2008 թ. օգոստոսին ՀՀ առաջին նախագահի ղեկավարությամբ: Կուսակցությունների այս դաշինքը իր մեջ միավորում է «ՀՀՇ», «Ազատություն», «ՀԺԿ», «Հանրապետություն», «Հայոց հայրենիք», «Պահպանողական» և այլ կուսակցական խմբեր: Ըստ կուսակցություններում ընդգրկվածների նրա անդամների թիվը հասնում է մի քանի տասնյակ հազարի:

2008 թ. մարտի 21-ին նորընտիր նախագահի նախաձեռնությամբ ու աջակցությամբ Հանրապետությունում բարեփոխումներ իրականացնելու, հասարակական համերաշխության մթնոլորտ ապահովելու նպատակով ՀՀ Ազգային ժողովում մեծամասնություն կազմող չորս կուսակցությունները՝ ՀՀԿ-ն, ԲՀԿ-ն, ՕԵԿ-ն ու ՀՅԴ-ն, ստորագրեցին քաղաքական կոալիցիայի համաձայնագիր՝ ստանձնելով երկրի կառավարման պատասխանատվությունը: Վարչապետ նշանակվեց Տիգրան Սարգսյանը:

Պատճառաբանելով, թե իշխանությունների հայ-թուրքական հարաբերությունների կարգավորմանն ուղղված քաղաքականությունը չի բխում Հայաստանի շահերից՝ կապված հայ-թուրքական ճանապարհային քարտեզի համաձայնագրի ստորագրման հետ, ՀՅԴ-ն 2009 թ. ապրիլի 22-ին դուրս եկավ կոալիցիայից և հռչակեց, որ ծավալում է կառուցողական ընդդիմադիր գործունեություն:

Մյուս կուսակցություններից շատ գծերով առանձնանում և տարբերվում է «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը, որը ձևավորվելով ավելի ուշ (2004 թ.), շատ կարճ ժամանակամիջոցում մեծ ճանաչում ստացավ: Բավական է նշել, որ 2007 թ. Ազգային ժողովի ընտրությունների նախօրյակին կուսակցությունն իր շարքերում ուներ 300.000-ից ավելի անդամ, տա-

բածքային 41 ստորաբաժանում և այլն: Եվ միայն այն փաստը, որ Ազգային ժողովի 4-րդ գումարման (2007 թ.) ընտրություններին կուսակցությունը համամասնական ընտրակարգով առաջադրել էր 112 թեկնածու, իսկ մեծամասնականով՝ 13 թեկնածու, և, ի վերջո, Ազգային ժողովում ունեցավ 25 պատգամավոր, իսկ իշխող ՀՀԿ կուսակցության և «Օրինաց երկիր» ու «ՀՅԴ»-ի հետ կազմեց կոալիցիա, փաստում է լայն զանգվածների վստահության մասին: Սակայն ճշմարտությունը նաև այն է, որ մարդկանց մի զգալի մասը ոչ այնքան գնում էր կուսակցության ծրագրային դրույթների ետևից, այլ ավելի շատ հավատում և վստահում էր կուսակցության առաջնորդին:

ՀՀ նորընտիր նախագահի նախաձեռնությամբ ՀՀ քաղաքական կյանքում սկսեց ձևավորվել նոր, փոխադարձաբար ավելի հանդուժող մթնոլորտ: Հասարակության հուզող հարցերը վերհանելու, քննարկումներ կազմակերպելու, դրանց լուծման ուղիները մատնանշելու և իրականացնելու նպատակով ՀՀ նախագահի առաջարկով 2008 թ. աշնանը ստեղծվեց Հանրային խորհուրդ, որի կազմում ընդգրկվեցին հասարակական կյանքի բոլոր ոլորտները ընդգրկող մասնագետներ, մտավորականության ներկայացուցիչներ: Հանրային խորհրդի նախագահ ընտրվեց ՀՀ նախկին վարչապետ, փորձառու քաղաքական գործիչ Վազգեն Մանուկյանը:

ՀԱԿ-ը մարտիմեկյան ողբերգական դեպքերից որոշ ժամանակ անց նորից կազմակերպեց հանրահավաքներ, որտեղ հիմնական պահանջը նախագահական և խորհրդարանական արտահերթ ընտրություններն էին, նաև ձերբակալված ակտիվիստներին՝ որպես քաղաքական բանտարկյալների, ազատելը:

ՀԱԿ-ը 5 կուսակցությունների հետ մասնակցեց 2009 թ. մայիսի 31-ի Երևանի քաղաքապետի, ավագանու ընտրություններին, սակայն հրաժարվեց ավագանու իր 13 մանդատներից, քանի որ ընտրություններում մեծամասնություն կազմողը ՀՀԿ-ն էր իր 35 մանդատներով և ԲՀԿ-ն՝ 17 մանդատներով: Շուտով ՀՀ նախագահի նախաձեռնությունը, որը նա դեռևս 2008 թ. մարտի դեպքերից առաջ և հետո առաջարկել էր՝ «քանդել անհանդուրժողության պատը և երկխոսություն սկսել քաղաքական ուժերի միջև», իրականություն դարձավ: 2009 թ. ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի անմիջական նախաձեռնությամբ առաջին անգամ ձևավորվեց ՀՀ կուսակցությունների համատեղ խորհրդակցությունների ավանդույթ: 2011 թ. մայիս-սեպտեմբեր ընկած շրջանում մի քանի անգամ տեղի ունեցան ՀԱԿ-ի և քաղաքային կոալիցիայի ներկայացուցիչների երկխոսություններ, որոնք քաղաքային մշակույթի ձևավորման առումով շատ կարևոր էին, քանզի ցանկացած դեպքում դրական ազդեցություն կարող էին ունենալ երկրի ներքին կայունության վրա:

Դեռևս երկխոսությունը սկսելուց առաջ 2011 թ. մայիսին ՀՀ նախագահի կողմից համաներման իրավունքով բանտից ազատ արձակվեցին ՀԱԿ-ի մի շարք ակտիվիստներ ու հավաքների կազմակերպիչներ: Ինչպես նաև նրանց հանրահավաքները թույլատրվեց անցկացնել Ազատության հրապարակում: Այդ ամենը անշուշտ նպաստեց երկխոսության կայացմանը: Ուստի պատահական չէ, որ երկու փուլով իրականացվեց երկխոսությունը մի կողմից ՀԱԿ-ի, մյուս կողմից՝ իշխող կոալիցիայի ներկայացուցիչների միջև՝ սկսած հունիս-հուլիսից մինչև օգոստոս-հոկտեմբեր ամիսները: Սակայն երկրի ներքին կայունության համար բանտարկյալների մի մասի ազատումից հետո էլ ՀԱԿ-ի ներկայացուցիչները նորից պահանջում էին արտահերթ ընտրություններ և ՀՀ նախագահի հրաժարականը, որը անհնարին էր դարձնում երկխոսության վերջնական փուլը: Սակայն կարևոր ձեռքբերում էր փոխադարձ հանդուրժողական մթնոլորտի ձևավորումը:

2012 թ. փետրվարին «Հայաստանի Հանրապետական», «Օրինաց երկիր» և «Ժառանգություն» կուսակցությունները դարձան եվրոպական ժողովրդական կուսակցության անդամ՝ դիտորդ-անդամի կարգավիճակով: Սա նշանակում է, որ նրանք ամբողջությամբ մասնակցելու են ԵԺԿ-ի քաղաքական կյանքին, որը մեծ կարևորություն ունի Հայաստանի Հանրապետության համար:

Կուսակցությունները ակտիվ աշխատանքներ տարան 2012 թ. մայիսին կայանալիք խորհրդարանական ընտրու-

թյուններին մասնակցելու համար:

Հասարակության ակտիվության պայմաններում ընթացան Ազգային ժողովի հինգերորդ գումարման 2012 թ. մայիսի 6-ի խորհրդարանական ընտրությունները համամասնական 90, մեծամասնական 41 պատգամավորների տեղերի համար: Ընտրություններին մասնակցեցին 8 կուսակցություններ և մեկ դաշինք: Դրանք են՝ «Ժառանգություն», «Հայ Հեղափոխական դաշնակցություն» (ՀՅԴ), «Հայաստանի դեմոկրատական» (ՀԴԿ), «Հայաստանի կոմունիստական» (ՀԿԿ), «Հայաստանի հանրապետական» (ՀՀԿ), «Օրինաց երկիր» (ՕԵԿ), «Միավորված հայեր» կուսակցությունները և մեկ կուսակցությունների դաշինք՝ «Հայ ազգային կոնգրես» (ՀԱԿ): Մեծամասնական և համամասնական ընտրապայքարում ընդգրկվեցին 1026 պատգամավորության թեկնածուներ, որոնցից 230-ը կանայք էին: Խորհրդարանական այս ընտրություններին հանրապետությունում պաշտոնապես գրանցված 77 կուսակցություններից վերը նշված կուսակցությունների և դաշինքի կազմում մասնակցեցին 31-ը՝ իրենց ներկայացուցիչներով: Այսինքն հայաստանյան քաղաքական կուսակցությունների կեսից ավելին ինչ-ինչ պատճառներով ի վիճակի չէր մասնակցելու ընտրություններին, մինչդեռ խորհրդարանական ընտրությունները յուրաքանչյուր կուսակցության համար սեփական վարկանիշը, հնարավորությունները ստուգելու, ծրագրերն ու նպատակները տեսանելի դարձնելու, համախոհներ ձեռք բերելու լավագույն միջոց է:

2012 թ. մայիսի 6-ին խորհրդարանական ընտրությունները ազատ, արդար, թափանցիկ, եվրոպական չափանիշներին հարիր անցկացնելու, այդ գործընթացում հանրության և քաղաքական կուսակցությունների ջանքերը միավորելու նպատակով ապրիլի 4-ին ԱԺ ընտրություններին մասնակից քաղաքական չորս ուժեր՝ ԲՀԿ-ն, ՀՅԴ-ն, ՀԱԿ-ն ու Ժառանգությունը իրենց ներկայացուցիչների միջոցով ստորագրեցին համատեղ հռչակագիր՝ ընտրությունների հանրային վերահսկողության միջկուսակցական միասնական շտաբ ձևավորելու վերաբերյալ:

Մայիսի 6-ին կայացած խորհրդարանական ընտրություններում բացարձակ հաղթանակ տարավ ՀՀԿ-ն՝ ՀՀ նախագահի գլխավորությամբ (69 պատգամավորական մանդատ): ԲՀԿ-ն

երկրորդն էր (37 մանդատ): Մյուս կուսակցություններից 5%-ից 7%-ի չեմը հաղթահարեցին և Խորհրդարան մտան ՕԵԿ-ը (6 մանդատ), ՀՅԴ-ն (5 մանդատ), Ժառանգությունը՝ 5 մանդատ և ՀԱԿ-ը՝ որպես կուսակցությունների դաշինք՝ 7 մանդատ: ԲՀԿ-ն հրաժարվեց կոալիցիայի մեջ մտնելուց: ՀՀԿ-ն ՕԵԿ-ի հետ ձևավորեց նոր կառավարություն: Կրկին վարչապետ նշանակվեց Տիգրան Սարգսյանը:

ե. Պատերազմի սպառնալիքը և բարեփոխումները հայկական բանակում: Հայաստանի և հայ ժողովրդի անվտանգության համար հիմնական սպառնալիքը շարունակում է մնալ ղարաբաղյան հակամարտության կարգավորման հարցը: Զէին դադարում Ադրբեջանի ղեկավարության կողմից հնչեցվող ռազմատենչ հայտարարությունները ԼՂՀ-ի և ՀՀ-ի դեմ ռազմական գործողություններ վերսկսելու սպառնալիքները: Անթաքույց ռազմական պատրաստությունները դարձել էին Բաքվի իշխանավորների հիմնական զբաղմունքը: Հանրապետության տնտեսական ու տրանսպորտային շրջափակումը Ադրբեջանի և Թուրքիայի կողմից՝ վկայում են Ադրբեջանի ագրեսիվ պահվածքի մասին: Ադրբեջանին ծավալուն ռազմական ու դիվանագիտական օգնություն էր ցուցաբերում Թուրքիան, նրանք երկուսով շրջափակման մեջ էին պահում հայկական երկու հանրապետությունները: Այդ ամենը ՀՀ զինված ուժերից պահանջում էր բարձր մարտական պատրաստականություն, մարտունակություն ու զգոնություն: Հայաստանի Հանրապետության անվտանգության ապահովման համար մշակվեց համակարգված պաշտպանական քաղաքականություն:

Ի սկզբանե պաշտպանական բարեփոխումների իրականացման համար որդեգրվեցին հետևյալ հիմնական նպատակները. ա) զինված ուժերի արդիականացում և մարտունակության ամրապնդում, ժամանակակից չափանիշների ներդրմամբ, բ)ՀՀ ռազմական անվտանգության ապահովում՝ իրական և հնարավոր ռազմական սպառնալիքների ճշգրիտ գնահատմամբ, գ) զինված ուժերի կողմից միջազգային անվտանգության ապահովման մասնաբաժնի ստանձնում՝ միջազգային անվտանգության տարբեր կառույցների հետ փոխգործակցելիության հնա-

բավորությունների ընդլայնմամբ, դ) զինված ուժերի կայուն ու համակողմանի զարգացման ապահովում՝ ճկուն, թափանցիկ և արդյունավետ համակարգերի ներդրմամբ:

Զուգահեռաբար ՀՀ պաշտպանական գերատեսչությունը և ռազմա-քաղաքական ղեկավարությունը սկսեցին բանակցություններ վարել ՀՀ ռազմական գործընկերների հետ՝ պաշտպանական բարեփոխումների համար անհրաժեշտ խորհրդատվություն և օժանդակություն ստանալու համար: Այս ամենի արդյունքում հստակեցվեցին պաշտպանական բարեփոխումների իրականացման ձևերն ու ընթացակարգերը, պլանավորվեցին անհրաժեշտ ռեսուրսներ, ստեղծվեցին համապատասխան օղակներ:

Հայոց բանակի հետագա հզորացման հիմքում ընկան «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը» փաստաթուղթը (2007 թ.), «Պաշտպանության մասին» օրենքը (2008 թ.):

2009 թվից սկսվեց և ավարտին հասցվեց ՊՆ-ում քաղաքացիական հատուկ ծառայության ստեղծումը: Պաշտպանության ռազմավարական վերանայման ընթացքում մշակվեցին նաև մի շարք հայեցակարգային ու ծրագրային փաստաթղթեր, իրականացվեց օպերատիվ և վարչական ընթացակարգերի, անձնակազմի կառավարման մեխանիզմի գնահատման կարգը:

Ռազմա-քաղաքական ակտիվ գործունեությունը նպաստեց ՀՀ միջազգային ռազմական համագործակցության ակտիվացմանը ինչպես միջազգային և տարածաշրջանային կազմակերպություններին Հայաստանի անդամակցության, այնպես էլ երկկողմ հարաբերությունների ձևաչափով: ՀՀ ռազմական քաղաքականության արտաքին բաղադրիչում տեղի ունեցավ սկզբունքային փոփոխություն՝ պայմանավորված արտաքին քաղաքականության մեջ փոխլրացման սկզբունքի որդեգրմամբ, ԱՊՀ-ի և ՌԴ-ի հետ ռազմա-քաղաքական համագործակցության ամրապնդմամբ: Այս տեսանկյունից մեծ նշանակություն ունեցավ 2002 թ հոկտեմբերին Հայաստանի ակտիվ ռազմական համագործակցության ծավալումը Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության (ՀԱՊԿ) շրջանակներում: Այն դարձավ ոչ միայն երկրի անվտանգության կարևոր բաղադրա-

տարրը, այլև արտոնյալ պայմաններ ընձեռեց ռազմատեխնիկական մատակարարումների և ամենամյա համատեղ զորավարժությունների միջոցով բանակի մարտունակության բարձրացման գործում: 2009 թ. հունիսին Մոսկվայում ստորագրվեց «ՀԱՊԿ օպերատիվ արձագանքման հավաքական ուժերի» մասին համաձայնագիր, որն ամբողջացրեց օպերատիվ արձագանքման հավաքական ուժերի ստեղծումը, մշակեց Հայաստանի համար հավաքական անվտանգության ապահովման գործուն մեթոդներ:

Կարևոր քայլ էր Հայաստանի անդամակցությունը Եվրաատլանտյան գործընկերության խորհրդին, որի շրջանակներում ՀՀ ռազմա-քաղաքական ղեկավարությունը պարբերաբար մասնակցում էր անվտանգության հարցերի շուրջ Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպության (ՆԱՏՕ) ռազմա-քաղաքական ղեկավարության հետ խորհրդակցություններին: Ստեղծվեց ՀՀ զինված ուժերի խաղաղապահ գումարտակը: ՆԱՏՕ-ի հետ համագործակցությունը նպաստում է միջազգային փորձի հաշվառմամբ արագացնել հայկական բանակի համապարփակ արդիականացման ընթացքին: ՀՀ-ն ակտիվորեն համագործակցում է ՀԱՊԿ-ի և ՆԱՏՕ-ի հետ նաև միջազգային ահաբեկչության դեմ պայքարում: ՀՀ-ի համագործակցությունը ՆԱՏՕ-ի հետ իր դրսևորումը ստացավ Կոսովոյում, Աֆղանստանում և Իրաքում իրականացված խաղաղապահ գործողություններում: Հայաստանը դարձավ միջազգային անվտանգության ակտիվ մասնակից: Շարունակվեց համագործակցությունը ռազմավարական գործընկերոջ՝ Ռուսաստանի Դաշնության հետ: Զարգացավ համագործակցությունը Բելառուսի, Ղազախստանի, Ուկրաինայի, ԱՄՆ-ի, Հունաստանի, Միացյալ Թագավորության, Լեհաստանի, Բուլղարիայի, Ռումինիայի հետ: 2010 թվականից հետո ՀՀ-ի հետ երկկողմ ռազմական համագործակցության ծրագրեր իրականացնող պետությունների շարքում ավելացան Հունգարիան, Սլովակիան, Ֆրանսիան և Չեխիան:

Սկսվեց ռազմարդյունաբերական ոլորտի բարեփոխումների գործընթացը, մշակվեցին ՀՀ ռազմական արդյունաբերության Հայեցակարգի և ռազմարդյունաբերական զարգացման 2011-2015 թթ. պետական ծրագրեր: Զգալի գործ է կատարվել

պաշտպանական շրջանների, զորամասերի և ստորաբաժանումների դիրքերի ինժեներական ամրացման աշխատանքներում:

Զորային կառույցի բարեփոխման նպատակով տեղի ունեցան որոշակի կառուցվածքային փոփոխություններ, վերակազմավորվեցին մի շարք զորամասեր ու ստորաբաժանումներ, ինչի արդյունքում բարձրացավ դրանց մարտունակության աստիճանը, մեծացան կրակային խոցման հնարավորությունները: Լուրջ ուշադրություն դարձվեց մարտական պատրաստության խնդիրներին, մարտավարաշարային պարապմունքներին, տարբեր զորավարժություններին ու զորախաղերին: Բանակը կատարելագործվում էր, դառնում ավելի մարտունակ, ավելի կազմակերպված ու կարգապահ: Հատուկ ուշադրություն էր դարձվում հակաօդային պաշտպանությանը, ավիացիայի, հրետանու, հետախուզության, կապի, ռադիոէլեկտրոնային զորամասերի և ստորաբաժանումների կատարելագործմանը:

Հմուտ զինվորական, հատկապես սպայական կադրեր էին պատրաստվում Վ. Սարգսյանի անվան ռազմական և Ա. Խամփերյանցի անվան ռազմաավիացիոն ինստիտուտներում: Հայ զինվորականները նաև ուսանում էին Ռուսաստանի և այլ երկրների ռազմական հաստատություններում:

Պաշտպանական բարեփոխումների շրջանակում չափազանց կարևորվում էր հայկական բանակի սպառազինության մակարդակը: Տեխնիկական ապահովման ջանքերն ուղղվեցին սպառազինության և ռազմական տեխնիկայի հուսալի ու անխափան շահագործման ապահովմանը, հրթիռների, զենքի, զինամթերքի, պահեստամասերի և ռազմատեխնիկական ունեցվածքի պաշարների կուտակմանը: Հանրապետության ռազմարդյունաբերական համալիրի ձեռնարկությունները զինված ուժերին մատակարարում էին սեփական արտադրության բազմապիսի զինատեսակներ:

3. ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ա. ՀՀ հարաբերությունները Ռուսաստանի Դաշնության և հարևան երկրների հետ: Տնտեսության զարգացմանը և պաշտպանական հզորության ամրապնդմանը զուգահեռ Հայաստանի Հանրապետությունը միջազգային հարաբերություններում ձեռք էր բերում կայուն, հուսալի ու կանխատեսելի գործընկերոջ համարում:

ՀՀ արտաքին քաղաքականության մեջ առանձնահատուկ կարևորություն ունեին հայ-ռուսական հարաբերությունները: ՀՀ և ՌԴ ռազմավարական համագործակցությունն ընդլայնվում էր օր օրի:

ՌԴ նախագահ Դմիտրի Մեդվեդևի ՀՀ պաշտոնական առաջին այցի շրջանակներում 2008 թ. հոկտեմբերի 21-ին երկու երկրների միջև ստորագրվեցին առևտրատնտեսական, գիտատեխնիկական ու մշակութային համագործակցության մի շարք նոր համաձայնագրեր: Այդ այցին հետևեցին Դ. Մեդվեդևի և ՀՀ նախագահ Ս. Սարգսյանի նոր փոխայցելությունները, որոնց շնորհիվ գնալով ավելի ամրապնդվեց երկու երկրների տնտեսական, քաղաքական և ռազմական համագործակցությունը:

180-ից ավելի միջպետական, միջկառավարական և միջգերատեսչական պայմանագրերն ու համաձայնագրերը դրա վկայությունն էին:

2011 թ. ՀՀ-ում գործում էր ռուսական կապիտալով 1500 ընկերություն: ՀՀ տնտեսության մեջ ՌԴ-ի ներդրումները 2000-2010 թթ. հասել էր 2,5 մլրդ դոլարի, որը կազմում էր նույն ժամանակ կատարած բոլոր ներդրումների 57%-ը:

Դինամիկ զարգանում էին հայ-ամերիկյան հարաբերությունները: Դժվար էր գերագնահատել ԱՄՆ-ի՝ Հայաստանի Հանրապետությանը տրամադրած պետական օգնությունը, որի ծավալներն առանձին տարիներին հասել են մինչև 100 մլն դոլարի, ինչպես նաև այն աջակցությունը, որն ամերիկյան կողմը ցուցաբերել է Հայաստանում իրականացվող տնտեսական և ժողովրդավարական բարեփոխումների գործընթացին: ԱՄՆ-ը Հայաստանին ցույց է տվել նաև ռազմական օգնություն, ինչ-

պես նաև նպաստել է զինվորական կադրերի վերապատրաստմանը:

Կարևոր աջակցություն են ամեն տարի ԱՄՆ-ի կոնգրեսի որոշմամբ Հայաստանին հատկացվող ֆինանսական միջոցները:

Հայաստանի Հանրապետության և Վրաստանի միջև երկկողմ հարաբերությունները հանդիսանում են տարածաշրջանային կայունության կարևոր բաղադրիչներից: Այդ հարաբերությունները 21-րդ դարասկզբի տասնամյա ժամանակահատվածում չարունակել են զարգանալ, խորացել է քաղաքական երկխոսությունը, բարելավվել են առևտրատնտեսական կապերը: Երկու երկրների միջև ձևավորվել է իրավապայմանագրային դաշտ, որն ընդգրկում է համագործակցության գրեթե բոլոր ոլորտները: Գործում են հայ-վրացական 100-ից ավելի համաձայնագրեր ու պայմանագրեր, որոնցից առանձնանում է 2001 թ. կնքված «Բարեկամության, համագործակցության և փոխադարձ անվտանգության մասին» պայմանագիրը:

Թուրքիայի և Ադրբեջանի կողմից տրանսպորտային շրջափակման պայմաններում Վրաստանի տարանցիկ դերը Հայաստանի համար բացառիկ է:

Կարևոր նշանակություն ուներ Վրաստանի ցամաքային և օդային տարածքով իրականացվող ռազմական նշանակության բեռնափոխադրումների անխափան իրականացումը: Երկու երկրների բարձրաստիճան շփումների օրակարգում քննարկվում էին Վրաստանի հայ համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավման հարցերը:

Երկու երկրների միջև զգալիորեն աշխուժացել էին տարբեր մակարդակների փոխայցելություններն ու քաղաքական երկխոսությունները:

Շարունակում էին զարգանալ հայ-իրանական հարաբերությունները՝ լիակատար փոխվստահության և փոխըմբռնման մթնոլորտում: Երկու երկրների բարձրաստիճան ղեկավարությունների պարբերական շփումների և տարբեր մակարդակների փոխայցելությունների շնորհիվ Հայաստան-Իրան բազմաբնույթ համագործակցությունը որակապես նոր փուլ թևակոխեց:

Վերջին տասնամյակում Իրանն ու Հայաստանը կնքել են

բազմաթիվ համաձայնագրեր: 2007 թ. մարտին բացվեց Իրան-Հայաստան գազամուղը, քննարկվեց Արաքս գետի վրա համատեղ հիդրոկայաններ կառուցելու հարցը: Ուսումնասիրություններ սկսվեցին պարզելու համար Մեղրիում նավթավերամշակման գործարան կառուցելու հնարավորությունը: Փոխադարձ հետաքրքրություն էր ներկայացնում Հայաստան-Իրան երկաթգծի կառուցման գաղափարը:

Երկու երկրների միջև ապրանքաշրջանառության ծավալները 2000 թ. 100 մլն դոլարից 2011 թ. հասավ 300 մլն դոլարի:

Հայ-իրանական քաղաքական հարաբերությունների բարձր մակարդակը ապահովեց Իրանի հավասարակշռված դիրքորոշումը Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի նկատմամբ: Միջուկային ծրագրերի պատճառով Իրանի շուրջ առաջացած լարվածության կապակցությամբ Հայաստանը հստակ դիրքորոշում ունի, ըստ որի նա ճանաչում է խաղաղ նպատակներով միջուկային էներգիայի օգտագործման Իրանի իրավունքը և վստահ է, որ բոլոր վիճելի հարցերը հնարավոր է լուծել խաղաղ դիվանագիտական եղանակով:

բ. Ղարաբաղյան բանակցությունների նոր փուլը: Ընդհատված բանակցությունները չարունակվեցին 2001 թվականի սկզբին, որի արդյունքում 2001 թ. ապրիլին ստեղծվեց Քի Վեստի փաստաթուղթը, որը որոշակի առաջընթաց արձանագրեց: Այն հստակորեն ամրագրում էր Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման փաստը, քննարկում էր առաջնային կարևորություն ունեցող հարցերի շրջանակ: Նրանում բարձրացվում էին Հայաստան-ԼՂՀ և Ադրբեջան-Նախիջևան կայուն հաղորդակցություն ունենալու հարցեր: Կարճ ժամանակ անց Ադրբեջանը հրաժարվեց բանակցություններից և առաջադրեց նորանոր պահանջներ: Ադրբեջանի նոր ղեկավարությունը իշխանության գալով՝ սկզբում մտադիր էր սպառնալիքի լեզվով խոսել: Հայաստանի հետ, իսկ միջազգային հանրության տեսակետն այն էր, որ ղարաբաղյան հարցը պետք է լուծվի միայն բանակցությունների միջոցով՝ բացառելով ռազմական միջամտությունը: Բայց Բաքուն հարցի լուծումը համառորեն չարունակում էր տեսնել ռազմական ուժի կիրառման մեջ: Շուտով 2004 թ. սկսվեցին «Պրահայան բանակցությունները»՝ ուղղված կողմերի երկխո-

սության աչխուժացմանը: Նախագահները չարունակում էին հանդիպել, թեև ոչ նախկին հաճախականությամբ, զուգահեռաբար ընթանում էին արտգործնախարարների հանդիպումները, որոնց ժամանակ օրակարգային խնդիր էր ԼՂՀ-ի կարգավիճակը: 2007 թ. առաջ եկան Մադրիդյան հիմնական սկզբունքները, որոնք ներառում էին երեք կարևորագույն միջազգային նորմեր՝ տարածքային ամբողջականություն, ազգերի ինքնորոշման իրավունք և ուժի կիրառման բացառում: Համաձայն այդ սկզբունքների նախատեսվում էր, որ Ղարաբաղը պետք է ունենա միջանկյալ կարգավիճակ, որը թույլ կտա արցախցիներին անվտանգ ապրել: Փախստականները պետք է վերադառնային իրենց նախկին բնակության վայրերը, պետք է տեղակայվեին միջազգային խաղաղապահ ուժեր և անցկացվեր Արցախի կարգավիճակի վերաբերյալ հանրաքվե: Այստեղ առաջ են քաչվում նաև ազատագրված տարածքների վերադարձի և այլ հարցեր, որոնք բնականաբար ընդունելի չէին ՀՀ-ի և ԼՂՀ-ի համար: Մադրիդյան սկզբունքները, որպես ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում վարվող բանակցությունների հիմք, ընդունվեցին 2008 թ. նոյեմբերի 2-ի Մոսկովյան հռչակագրով: Հռչակագիրը հաստատում էր, որ հակամարտությունը պետք է լուծվի միայն քաղաքական բանակցությունների ճանապարհով: 2009 և 2010 թթ. չարունակվեցին ՀՀ և ԱՀ նախագահների միջև ուղղակի չփումները, նաև ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների այցելությունները տարածաշրջան: 2010 թվականից բանակցությունների քննարկման փուլում է ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում մչակված Մադրիդյան սկզբունքների նորացված տարբերակը: Հարկ է նչել, որ Ղարաբաղյան խնդրով ցանկացած բանակցությունների, այդ թվում նախագահների երկխոսության ժամանակ Հայաստանի Հանրապետությունը չարունակում է պաչտպանել այն սկզբունքը, որ ցանկացած վերջնական համաձայնություն կամ փաստաթուղթ անվիճելիորեն պետք է ստանա նաև Ղարաբաղյան հակամարտության կարգավորման առանցքային կողմի՝ ԼՂՀ-ի հավանությունը: Միայն այդ դեպքում է հնարավոր սկսել խնդրի կարգավորումը: ՀՀ-ի համար խնդրի կարգավորման հիմքը չարունակում է մնալ ԼՂՀ ժողովրդի ինքնորոշման իրավունքի ամրագրումն ու դրա միջազգային

ճանաչումը, ԼՂՀ բնակչության անվտանգության միջազգային երաչխիքների ապահովումը, ՀՀ-ի հետ կապը ցամաքային սահմանի առկայությամբ՝ բացառելով անկլավը: Միայն նման փաստերի ընդունումն ու դրանց ամրագրումը հնարավոր կդարձնի խնդրի կարգավորումը:

2008-2011 թթ. ընթացքում Հայաստանի և Ադրբեջանի նախագահների իրար հաջորդած մի չարք հանդիպումները (Սանկտ-Պետերբուրգ, Մոսկվա, Սոչի, Աստրախան, Կազան) վերջացան անհաջողությամբ:

Իսկ այն փաստը, որ Ակվիլայի, Մուսկոկայի և Դովիլում Դ. Մեդվեդևի, Բ. Օբամայի և Ն. Սարկոզիի հանդիպումներն ու հայտարարությունները նպատակ ունեն ամեն ինչ անել խաղաղ ճանապարհով կարգավորելու դարաբաղյան հակամարտությունը և վերջին հաչվով խնդրի լուծման ուղղությամբ հասնել որոչակի արդյունքների ու բեկման, խոսում է այն մասին, որ դարաբաղյան հակամարտությունը գտնվում է մեծ տերությունների ուչադրության կենտրոնում: Խնդրի լուծման ուղղությամբ հատկապես որոչակի հույսեր էին կապված 2011 թ. հունիսի 24-ին Թաթարստանի մայրաքաղաք Կազանում եռակողմ՝ Ռուսաստանի նախագահ Դ. Մեդվեդևի, Հայաստանի նախագահ Ս. Սարգսյանի և Ադրբեջանի նախագահ Ի. Ալիևի հանդիպման հետ, որը, սակայն, չարդարացրեց այդ հույսերը՝ բավարարվելով միայն հայտարարությամբ այն մասին, որ հանդիպելով Կազանում՝ երեք պետությունների նախագահները արձանագրեցին մի չարք հարցերի չուրջ փոխըմբռնման ձեռքբերում, որոնց լուծումը կնպաստի հիմնական սկզբունքներին հավանություն տալու համար պայմանների ստեղծմանը:

Սակայն այդ բոլորով հանդերձ, որևէ համաձայնություն հիմնարար սկզբունքների չուրջ Կազանում ձեռք չբերվեց, որն էլ ի չիք դարձրեց այն ակնկալիքները, որ Կազանյան հանդիպումը կարող էր դառնալ բեկումնային:

Ի զարգացումն 2011 թ. մարտի 5-ին Սոչիում արված համատեղ հայտարարության, ՀՀ, ՌԴ և Ադրբեջանական Հանրապետության նախագահներն ի գիտություն ընդունեցին համանախագահների և ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցչի՝ չփման գծերի երկայնքով դիպուկահարների հեռացման, միջադեպերի հետաքննության անցկացման մեխանիզ-

մի վերաբերյալ համատեղ զեկույցը, փաստաթուղթ, որը սակայն ադրբեջանական կողմը միշտ անտեսում էր: Հայտարարության մեջ ընդգծվեց ՀՀ և ԱՀ նախագահների պատրաստակամությունը՝ նպաստել մտավորականության, գիտական ու հասարակական շրջանների ներկայացուցիչների միջև հետագա երկխոսության հաստատմանը: Հանդիպումը մեկ անգամ ևս փաստեց Մինսկի խմբի համանախագահների ջանքերով վարվող բանակցությունների և հարցը խաղաղ ձևով լուծելու կարևորությունը:

Սակայն Ադրբեջանը, չնայած Սոչիի պայմանավորվածությանը, նորից շարունակում է խախտումները:

Այսպիսով, Հայաստանը միշտ էլ հավատարիմ է մնացել իր սկզբունքներին և պատրաստ է հարցի արդարացի լուծմանը:

Ինչ վերաբերում է Թուրքիայի հետ Հայաստանի հարաբերություններին, ապա դիվանագիտական հարաբերությունների բացակայության պայմաններում, այնուամենայնիվ նրանց պաշտոնական ներկայացուցիչների միջև ժամանակ առ ժամանակ տեղի էին ունենում հանդիպումներ հատկապես միջազգային կառույցների շրջանակներում, բայց դրանք որևէ դրական արդյունքի չէին հասցնում: Հայաստանի հետ իր հարաբերությունները Թուրքիան շարունակում էր պայմանավորել Ադրբեջանի «տարածքային ամբողջականության» վերականգնման, հայոց ցեղասպանության իրողությունից հրաժարվելու, սփյուռքահայության հակաթուրքական գործունեությունը դադարեցնելու անիրական պահանջներով: Հայաստանը կտրականապես մերժում էր այդ անհիմն նախապայմանները:

Հայ-թուրքական միջպետական հարաբերություններում կարևոր նշանակություն ունեցավ Օսկանյան-Ջեմ-Գուլիև առաջին եռակողմ հանդիպումը 2002 թ. մայիսի 14-15-ին Ռեյկյավիկում՝ արտգործնախարար Իսմայիլ Ջեմի նախաձեռնությամբ: Վերադարձից հետո Ջեմը հրապարակեց Հայաստանի հետ հարաբերություններ հաստատելու հիմնական նախապայմանները, որոնք ըստ էության վերը թվարկվածներն էին, ավելացված այն, որ Հայաստանը պետք է միջանցք տրամադրի Ադրբեջանի և Նախիջևանի կապն ապահովելու համար:

Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման

ուղղությամբ քայլեր ձեռնարկեց ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը՝ Թուրքիայի նախագահ Աբդուլահ Գյուլին 2008 թ. սեպտեմբերին հրավիրելով Հայաստանի և Թուրքիայի ֆուտբոլային հավաքականների հանդիպմանը, իսկ հաջորդ տարի 2009 թ. հոկտեմբերին նա հրավիրվեց Թուրքիա՝ պատասխան խաղը դիտելու: ՀՀ նախագահի նախաձեռնությունը միջազգային հանրության կողմից անվանվեց «ֆուտբոլային դիվանագիտություն»: Աշխարհի շատ երկրներում հետաքրքրությամբ հետևում էին, թե դա ինչ արդյունք է տալու:

2009 թ. հոկտեմբերի 10-ին Ցյուրիխում Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի միջև ստորագրվեցին «Երկկողմ դիվանագիտական հարաբերությունների հաստատման և զարգացման մասին» արձանագրություններ: Դրանցով նախատեսվում էր բացել երկու երկրների սահմանը և կարգավորել միջպետական հարաբերությունները: Արձանագրություններն ուժի մեջ պետք է մտնեին միայն երկու երկրների խորհրդարանների կողմից վավերացվելուց հետո: Թուրքիայի խորհրդարանն անհարկի ձգձգումներով չէր վավերացնում արձանագրությունները, իսկ երկրի ղեկավարները հանդես էին գալիս նախապայման-հայտարարություններով՝ կապելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն-Ադրբեջան հակամարտության և Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի հետ: Ելնելով իրավիճակից՝ ՀՀ նախագահը 2010 թ. ապրիլի 22-ի հրամանագրով կասեցրեց արձանագրությունների վավերացման գործընթացը:

գ. Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ուղղությամբ գործադրվող ջանքերը: Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության գլխավոր ուղղություններից մեկը մնում էր Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը: Այդ գործընթացը XX դարի վերջին և XXI դարի սկզբին ծավալվեց նոր ուժով: 1998 թ. ՀՀ արտաքին քաղաքականության օրակարգում հաստատուն տեղ զբաղեցրեց Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հասնելու խնդիրը: Այս հարցում ՀՀ-ի մոտեցումը հստակ է. ոճիրը ոչ միայն ժողովրդի ողբերգություն է, այլև մարդկության դեմ կատարված ծանրագույն հանցանք: Դրա անպատժելիությունը խրախուսել

է հետագա նման ողբերգություններ: ՀՀ-ի այս դիրքորոշումը լայն աջակցություն է ստացել միջազգային հանրության կողմից:

Ուրուգվայը, Ռուսաստանը, Կանադան, Կիպրոսը, Հունաստանը, Բելգիան, Լիբանանը, Արգենտինան ընդունել են և դատապարտել Հայոց ցեղասպանությունը, իսկ 2000-ական թթ. նման որոշումներ կայացրել են Ֆրանսիան, Շվեյցարիան, Իտալիան, Սլովակիան, Նիդերլանդները, Լեհաստանը, Գերմանիան, Լիտվան, Վենեսուելան, Չիլին, Շվեդիան և այլ երկրներ: Ցեղասպանությունը ճանաչած և դատապարտած պետությունների թիվը չուրջ երկուսուկես տասնյակ է: Այն ճանաչել են նաև ԱՄՆ-ի 4 տասնյակից ավելի նահանգները և տարբեր քաղաքների քաղաքապետարանները: Բելգիան, օրենք է ընդունել նաև Հայոց ցեղասպանությունը մերժող անձանց դատապարտելու մասին, որին 2007 թ. միացավ նաև Արգենտինան: Չնայած Ֆրանսիայի Սենատը 2012 թ. հունվարին ընդունեց Հայոց ցեղասպանության ժխտման քրեականացնող օրենքը, բայց Սահմանադրական խորհուրդը այն մերժեց:

Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը որոշակի ազդեցություն ունեցավ նաև Թուրքիայում հասարակական կարծիքի փոփոխման վրա: Այդ հարցը դադարեց այդ երկրում արգելված թեմա լինելուց և դարձավ քննարկման առարկա՝ սերտորեն կապվելով երկրի ժողովրդավարացման խնդրի հետ: Դրա ջատագովներից էր 2007 թ. հունվարի 19-ին Ստամբուլում ահաբեկչության զոհ դարձած «Ակոս» թերթի խմբագիր Հրանտ Դինքը: Կատարվեց անսպասելին. Դինքի թաղման արարողությունը վերածվեց բազմահազարանոց բողոքի ցույցի՝ Թուրք հանրության «Մենք հայ ենք», «Մենք Հրանտ Դինքն ենք» կարգախոսներով: Երևույթը ուժգին ազդեցություն գործեց համաշխարհային հանրության վրա:

Բայց պաշտոնական Թուրքիան շարունակում է Հայոց ցեղասպանության ժխտման ջանքերը:

*
* *

20-րդ դարավերջին Հայաստանի ազգային անկախության վերականգնումը, հայկական զույգ հանրապետությունների ստեղծումը չրջադարձային իրողություն եղան հայ ժողովրդի բազմադարյան պատմության մեջ: Հայաստանի երրորդ հանրապետությունը կյանք առավ նրա առաջին (1918-1920) և երկրորդ (1920-1991) հանրապետությունների հիմքի վրա, դարձավ նրանց ժառանգորդն ու իրավահաջորդը:

Հայաստանի անկախ հանրապետության հռչակման չեմին հայ քաղաքական միտքը ինքնիշխան պետությունը պատկերացնում էր որպես ազգային ժողովրդավարական գաղափարների և ներմուծված չուկայական ազատականության մեխանիկական համադրում: Բայց շուտով պարզ դարձավ, որ ազգային գաղափարը գործնականում մշակված չէ:

Տնտեսության փլուզման հետևանքով անկախության առաջին տարիներին փակվեցին բազմաթիվ մեծ ու փոքր արտադրական ձեռնարկություններ, հարյուր-հազարավոր մարդիկ մնային առանց աշխատանքի ու ապրուստի միջոցների: Մեծ կորուստներ ունեցավ գյուղատնտեսությունը: Այդ ամենի հետևանքով ծայր առավ զանգվածային արտագաղթը:

Հետագա տարիներին դրությունն աստիճանաբար չտկվեց: Աստիճանաբար վերելքի ուղին բռնեցին արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը, աշխուժացավ հոգևոր-մշակութային կյանքը: Հաջողություններ արձանագրվեցին ժողովրդավարության արմատավորման, քաղաքացիական հասարակության ստեղծման, ներքին կյանքի կայունության ապահովման ուղղությամբ: Կայացավ կառավարման համակարգը՝ ժամանակակից պետության բոլոր հատկանիշներով: Պետությունը վարում էր հավասարակշռված արտաքին քաղաքականություն, ջանքեր էր կիրառում հանրապետությունը միջազգային գործընթացներին ինտեգրելու համար:

Հայ ժողովրդի հպարտությունը հերոսական Արցախն է,

համաժողովրդական սխրանքով կերտած նրա անկախությունը և կայացած պետականությունը:

Անկախության շրջանի ամենամեծ նվաճումներից մեկը Հայկական բանակն է՝ քաջարի պաշտպանը Հայաստան հայրենիքի, երաշխավորը նրա ժողովրդի անվտանգ կյանքի:

2011 թ. սեպտեմբերի 21-ին Հայաստանի անկախության 20-ամյակին նվիրված զորահանդեսի ժամանակ Երևանի Հանրապետության հրապարակով անցան խրոխտ շարքերով Հայրենիքի պաշտպանները՝ աշխարհին ցուցադրելով իրենց մարտական պատրաստվածությունը, անկոտրում կամքն ու ոգին:

Այդ օրերին հայ ժողովուրդն ապրեց հպարտության հուզիչ պահեր՝ գալիքին նայելով վստահությամբ և նորանոր հաղթանակներ կերտելու վճռականությամբ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ 3
ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԸ 5

ԲԱԺԻՆ ԱՌԱՋԻՆ
ՀԻՆ ԵՎ ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԾԱԳՈՒՄՆ ՈՒ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

ա. Հայկական ավանդությունը 17
բ. Հունական ավանդությունը 19
գ. Վրացական ավանդությունը 20
դ. Արաբական ավանդությունը 20
ե. Հին եբրայական ավանդությունը 21
զ. Հայ ժողովրդի ծագման հարցը պատմագիտության մեջ . . . 21

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՓՈՒԼԵՐԸ
(Ք.ա. 3-րդ հազարամյակ -1375 թվական)

1. ՀԱՅԱՍՏԱՆԸ Ք.Ա. 3-ՐԴ ՀԱԶԱՐԱՄՅԱԿՈՒՄ
ա. Առաջին պետական կազմավորումը. Արատտա 25
բ. «Արմենիա» անվան հնագույն հիշատակությունները. Արմի, Արման(ում), Արամ 26
2. ՀԱՅԱՍՏԱՆԸ Ք. Ա. 2-ՐԴ ՀԱԶԱՐԱՄՅԱԿՈՒՄ
ա. Հայկական լեռնաշխարհը Ք.ա. XX-XVIII դարերում 28

բ. Միտանիի թագավորությունը 28
գ. Հայասա թագավորությունը 28
դ. Նաիրյան «երկրները» 29
3. ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՌԱՋԻՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ՝ ԱՐԱՐԱՏՅԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ (Ք.ա. IX-VI դարեր)
ա. Արարատյան թագավորության քաղաքական կացությունը 31
բ. Ներքին կյանքը 35
գ. Պետական կարգը և բանակը 38
4. ԵՐՎԱՆԴՈՒՆԻՆԵՐԻ (ՀԱՅԿԱԶՅԱՆ) ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ (Ք.ա. VI-III դարեր) 41
5. ԱՐՏԱՇԵՍՅԱՆՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ (Ք.ա. II-I դարեր)
ա. Հայաստանը Արտաշես I-ի օրոք 45
բ. Տիգրան II-ի գահակալությունը: Հայաստանը աշխարհակալ տերություն 48
գ. Հայ-հռոմեական պատերազմը 51
դ. Հայաստանի պայքարն ընդդեմ Հռոմի: Արտաշեսյան թագավորության անկումը 56
6. ՄԵԾ ՀԱՅՔԻ ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ (I-V դարեր)
ա. Արշակունիների գահակալությունը Մեծ Հայքում 60
բ. Արշակունիների պայքարը պետական անկախության պահպանման համար 65
գ. Հայաստանի պարսկա-հռոմեական առաջին բաժանումը: Արշակունյաց թագավորության անկումը 69
դ. Պետական կարգը 71
7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ V-IX ԴԱՐԵՐՈՒՄ
ա. Վարդանանց պատերազմը 74
բ. 481-484 թթ. և 571-572 թթ. հակապարսկական ապստամբությունները 83
գ. Կացությունը Արևմտյան Հայաստանում VI դարում 85
դ. Արաբական արշավանքները Հայաստան 88

ե. VIII դարի հակաարաբական ապստամբությունները: Բագրատունիների վերելքը 89
զ. 850-855 թթ. հակաարաբական ապստամբությունը 92
8. ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ (IX-XI դարեր) 94
9. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ XI-XIV ԴԱՐԵՐՈՒՄ
ա. Հայկական թագավորություններն ու իշխանապետությունները սելջուկյան թուրքերի տիրապետության ժամանակաշրջանում 103
բ. Զաքարյանների իշխանապետությունը 106
10. ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ (1080-1375 թթ.)
ա. Կիլիկիայի բնաշխարհը 111
բ. Հայերը Կիլիկիայում մինչև հայկական իշխանապետության կազմավորումը 112
գ. Կիլիկյան Հայաստանը իշխանապետության ժամանակաշրջանում (1080-1198 թթ.) 113
դ. Կիլիկյան Հայաստանը թագավորության ժամանակաշրջանում (1198-1375 թթ.) 120
ե. Պետական կարգը 126

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ
(XV դարի կես-XVI դար)

1. ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՆԱԽԱՔԱՅԼԵՐԸ
ա. Հայ ազատագրական լեգենդը 131
բ. Հայկական թագավորության վերականգնման փորձ XV դարի կեսերին 136
2. Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԵՎ ՍԵԲԱՍՏԻԱՅԻ ԳԱՂՏՆԻ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎՆԵՐԸ 140

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ
ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ
(Հնագույն ժամանակներից մինչև XVII դարի կեսերը)

1. ՀԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ
   ա. Հայկական մշակույթի զարգացման առանձնահատկությունները 144
   բ. Նախնադարյան Հայաստանի մշակույթը 146
   գ. Արարատյան թագավորության մշակույթը 147
   դ. Հայկական մշակույթը Ք.ա. VI-IV դարերում 152
   ե. Հելլենիստական մշակույթը 156
2. ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐՈՒՄ (IV-XIV դարեր)
   ա. Վաղ միջնադարյան մշակույթը 165
   բ. Մշակույթը զարգացած ավատատիրության շրջանում . . . 176
3. ՄՇԱԿՈՒՅԹԸ ՈՒՇ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ (XV-XVII դարեր)
   ա. Դպրոցը 188
   բ. Գիտությունը 189
   գ. Գրականությունը 191
   դ. Արվեստը 192
   ե. Տպագրությունը 193

ԲԱԺԻՆ ԵՐԿՐՈՐԴ
ՆՈՐ ԴԱՐԵՐ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ XVII ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

1. ԿՐԵՏԵԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ 197
2. Ս. ԷՋՄԻԱԾՆԻ 1677 ԹՎԱԿԱՆԻ ԳԱՂՏՆԻ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԸ 201

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ XVIII ԴԱՐՈՒՄ

1. ԻՍՐԱՅԵԼ ՕՐԻՆ ԵՎ ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ
   ա. Իսրայել Օրին Եվրոպայում 204
   բ. Անգեղակոթի գաղտնի ժողովը 207
   գ. Հայաստանի ազատագրության Պֆալցյան ծրագիրը 209
   դ. Հայաստանի ազատագրության Մոսկովյան ծրագիրը 213
2. ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐՆ ԱՐՑԱԽՈՒՄ ԵՎ ԱՅՈՒՆԻՔՈՒՄ XVIII ԴԱՐԻ 20-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ: ՀԱՅԿԱԿԱՆ ԱՆԿԱԽ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ
   ա. Պետրոս I-ի պարսկական արշավանքը 221
   բ. Ազատագրական կռիվներն Արցախում: Հայկական անկախ իշխանության ստեղծումը 227
   գ. Թուրքական արշավանքը Արևելյան Հայաստան: Երևանի և Արցախի հերոսամարտերը 229
   դ. Ազատագրական կռիվները Սյունիքում: Հայկական անկախ իշխանության ստեղծումը 235
   ե. Թուրքական արշավանքը Սյունիք: Հայկական իշխանության գոյամարտը 240
3. ԱՐՑԱԽԻ ԿԻՍԱՆԿԱԽ ՀԱՅԿԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ XVIII ԴԱՐԻ 30-40-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ
   ա. Նադիր շահը և հայերը: Խամսայի մելիքությունների ստեղծումը 246
   բ. Խամսայի մելիքությունների իրավունքներն ու պարտականությունները 250
4. ՀՈՎՍԵՓ ԷՄԻՆԸ ԵՎ ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ
   ա. Հովսեփ Էմինը Անգլիայում 254
   բ. Հովսեփ Էմինի ազատագրական գործունեությունը 258
5. ՄԱԴՐԱՍԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ԽՄԲԱԿԸ
   ա. Խմբակի ստեղծումը 268
   բ. Խմբակի քաղաքական հրապարակախոսությունը 270
6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ XVIII ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ
   ա. Մովսես Սարաֆյանի ծրագիրը 279
   բ. «Հյուսիսային» ու «Հարավային» նախագծերը 282

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ
(XVII դարի կես-XVIII դար)

ա. Դպրոցը 288
բ. Գիտությունը 289
գ. Գրականությունը 295
դ. Արվեստը 296
ե. Տպագրությունը 296

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ
ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ XIX ԴԱՐԻ ՍԿԶԲՆԵՐԻՆ
ա. Վարչական բաժանումները և բնակչությունը 299
բ. Հայ ժողովրդի դրությունը 302
2. ԱՆԴՐԿՈՎԿԱՍԸ ՌՈՒՍԱԿԱՆ ՑԱՐԻԶՄԻ ՌԱԶՄԱ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ: ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՅՈՒՍԻՍԱՐԵՎԵԼՅԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ՄԻԱՑՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ 308
3. 1826-1828 ԹԹ. ՌՈՒՍ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ԵՎ 1828-1829 ԹԹ. ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ: ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻԱՑՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ
ա. 1826-1828 ԹԹ. ռուս-պարսկական պատերազմի սկիզբը . . 313
բ. Երևանի գրավումը 315
գ. Կամավորական զորաջոկատների կազմակերպումը. հայերի մասնակցությունը ռազմական գործողություններին 319
դ. Հայաստանի ինքնավարության նախագիծը 323
ե. Թուրքմենչայի հաշտության պայմանագիրը. պարսկահայերի գաղթը 328
զ. 1828-1829 ԹԹ. ռուս-թուրքական պատերազմը 332
է. Ադրիանապոլսի հաշտության պայմանագիրը. արևմտահայերի գաղթը 334

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ
1877-1878 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

1. 1877-1878 ԹԹ. ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԿՈՎԿԱՍՅԱՆ ՃԱԿԱՏԸ
ա. Ռազմական գործողությունների ընթացքը 338
բ. Հայերի մասնակցությունը ռազմական գործողություններին 342
գ. Կարսի մարզի կազմավորումը. 345
2. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ
ա. Ծագումը, բովանդակությունը, փուլերը. 346
բ. Հայկական հարցը Սան - Ստեֆանոյի պայմանագրում . . . 347
գ. Հայկական հարցը Բեռլինի վեհաժողովում 350

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ
ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ԽՄԲԱԿՆԵՐԻ ՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆԴԵՍ ԳԱԼԸ: ԱԶԳԱՅԻՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԿԻԶԲԸ

1. ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ԽՄԲԱԿՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՈՒՄՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ
ա. Ազատագրական խմբակներն Արևմտյան Հայաստանում 354
բ. Ազատագրական խմբակներն արևելահայ միջավայրում 362
2. ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՓՈՒԼԸ 369
ԱՐՄԵՆԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ա. Ձևավորումը 370
բ. Ծրագիրը և կառուցվածքը 370
գ. Գործունեությունը 372

ՀՆՉԱԿՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ա. Ձևավորումը 376
բ. Ծրագիրը և կառուցվածքը 377
գ. Գործունեությունը 381
ՀԱՅ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ա. Ձևավորումը 384
բ. Ծրագիրը և կառուցվածքը 389
գ. Գործունեությունը 392

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ
ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ XIX ԴԱՐԻ ՎԵՐՋԵՐԻՆ-XX ԴԱՐԻ ՍԿԶԲՆԵՐԻՆ

1. ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ XIX ԴԱՐԻ 90-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ
ա. Ազգային-ազատագրական պայքարի նախադրյալները . . 394
բ. Ազատագրական պայքարի առաջին քայլերը 397
գ. Սասունի 1894 թվականի ապստամբությունը 401
դ. Բարենորոգումների Մայիսյան ծրագիրը: Բաբ Ալիի ցույցը. . 403
ե. Զեյթունի 1895-1896 թվականների ապստամբությունը. . . 406
զ. Վանի 1896 թվականի ինքնապաշտպանությունը 412
է. Օսմանյան դրամատան գրավումը: Կռիվները Սամաթիայում: Խանասորի արշավանքը. 417
2. ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ XX ԴԱՐԻ ԱԿԶԲՆԵՐԻՆ
ա. Զինյալ պայքարի դասերը և մարտավարության փոփոխությունը. 421
բ. Ս. Առաքելոց վանքի կռիվը 425
գ. Սասունի 1904 թվականի ապստամբությունը 426
դ. Ելդրզի մահափորձը և Իզմիրի ձեռնարկները 431
ե. Մարտավարության նոր փոփոխություն 433

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ
ՀԱՅԱՍՏԱՆԸ XX ԴԱՐԱՍԿԶԲԻՆ

1. ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ XX ԴԱՐԱՍԿԶԲԻՆ
ա. Արևմտահայերի սոցիալ-տնտեսական դրությունը 435
բ. Երիտթուրքական հեղաշրջումը. 439
գ. Կիլիկիահայության կոտորածը 442
դ. Պանթուրքիզմ 443
ե. Հայկական հարցի վերաբացումը: Ռուս-թուրքական համաձայնագիրը 445
2. ՍՈՑԻԱԼ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՐՄԱՏԱԿԱՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
ա. Արևելյան Հայաստանի սոցիալ-տնտեսական կացությունը 449
բ. 1903 թ. Հունիսի 12-ի ցարական հրամանագիրը և դրա հետևանքները 453
գ. Արևելյան Հայաստանը Ռուսաստանյան առաջին հեղափոխության տարիներին (1905-1907 թթ.) 456
դ. Հայ-թաթարական ընդհարումները 457
ե. Դաշնակցության դատավարությունը 460

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ
ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ

ա. Ռազմական գործողությունները Կովկասյան ճակատում 463
բ. Հայոց Մեծ եղեռնը 467
գ. Ինքնապաշտպանական կռիվները 470

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐՈՐԴ
ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ
(XIX դար - XX դարի սկիզբ)

ա. Մշակույթի զարգացման առանձնահատկությունները . . . 474
բ. Դպրոցը 476
գ. Գիտությունը 481
դ. Գրականությունը 487
ե. Արվեստը 494
զ. Մամուլը 496

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ
1917 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ՈՒ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

1. ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ 498
2. ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ
ա. Հեղափոխությունը և Անդրկովկասը 506
բ. «Թուրքահայաստանի մասին» դեկրետը 508
գ. Հայկական հարցը Բրեստի և Տրապիզոնի հաշտության բանակցություններում 509
դ. 1918 թվականի թուրքական արշավանքը Անդրկովկաս և հայ ժողովրդի մայիսյան հերոսամարտերը 512

ԲԱԺԻՆ ԵՐՐՈՐԴ
ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ
(1918-1920 թթ.)

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՈՒՄԸ 521
2. ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՐՏՈՒՄԸ 522
3. ՆԵՐՔԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ
ա. Սոցիալ-տնտեսական վիճակը 535
բ. Մշակութային կյանքը 542
գ. Հասարակական-քաղաքական կյանքը 544
դ. Թուրք-թաթարական խռովությունները 548
4. ԱՐՏԱՔԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ
ա. Հարաբերությունները Քառյակ միության պետությունների հետ 553
բ. Հայկական հարցը Փարիզի խաղաղության վեհաժողովում . 554
5. ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՀԱՐՑԸ *(1918-1920 թթ.)*
ա. Հայ-վրացական հակասությունները 558
բ. Զանգեզուրի հայերի հերոսամարտերն ադրբեջանական զավթիչների դեմ 562
գ. Ադրբեջանի թշնամական գործողությունները Լեռնային Ղարաբաղի դեմ 570
դ. Հայկական Նախիջևանի օրհասական մաքառումը 575
ե. Ջավախքը ծանր փորձությունների առջև 580
6. ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԻ 1920 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍՅԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ 590
7. ՍԵՎՐԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ 597
8. ՀԱՅԱՍՏԱՆԸ ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՌԱԶՄԱ - ՔԱՂԱՔԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ
ա. Հայ-ռուսական հարաբերությունները 600
բ. Թուրք-հայկական պատերազմը 604
9. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ 613

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ
(1920-1991 թթ.)

I. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ 1920-1945 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

1. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐԸ
   ա. Պետական մարմինների ձևավորումը 618
   բ. Քաղաքացիական կռիվները Հայաստանում 620
2. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԴՐԱԾ ՋԱՆՔԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԸ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ՄԻԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ
   ա. 1921 թ. մարտի 16-ի Մոսկվայի և Հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագրերը 621
   բ. Լոռու գավառի և Ջավախքի հարցերը. 624
   գ. Լեռնային Ղարաբաղի հարցը 629
   դ. Զանգեզուրի հարցը 631
3. ԱՌՅԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՈՒՂԻՆԵՐՈՒՄ
   ա. Անդրֆեդերացիայի և ԽԱՀՄ կազմավորումը 633
   բ. Սոցիալ-տնտեսական կացությունը վերականգնման տարիներին 635
   գ. Ինդուստրացման քաղաքականությունը. 636
   դ. Գյուղատնտեսության կոլեկտիվացումը 639
   ե. Կրթությունը և մշակույթը 640
   զ. Հասարակական -քաղաքական կյանքը. 644
   է. Քաղաքական բռնաճնշումները. 645
4. ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԸ 648
5. ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1941-1945 թթ.)
   ա. Պատերազմի սկիզբը 650
   բ. Սխրագործություններ առաջին մարտերում 652
   գ. Պատերազմի գլխավոր ճակատամարտերում 654

   դ. Հայ ռազմիկների մասնակցությունը Ճապոնիայի ջախջախման մարտերին (9 օգոստոսի - 2 սեպտեմբերի 1945 թ.) 661
   ե. Պարտիզանական շարժման շարքերում. 663
   զ. Սփյուռքահայերի ավանդը պատերազմում տարած հաղթանակներում 665
   է. Խորհրդային Հայաստանի թիկունքի աշխատավորների ավանդը պատերազմում տարած հաղթանակում 669

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
II. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ
(1945 - 1985 թթ.)

ա. Արդյունաբերությունը 674
բ. Գյուղատնտեսությունը. 679
գ. Հասարակական -քաղաքական կյանքը. 683
դ. Ազգային զարթոնքի տարիներ 687
ե. Այլախոհական շարժումը Խորհրդային Հայաստանում. . . . 688
զ. Հայրենիք - Սփյուռք առնչությունները 1945-1980-ական թվականներին 691
է. Մշակույթը 1945-1980-ական թվականներին 693
ը. Ֆիզիկական կուլտուրան և սպորտը 701

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ
III. ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՎԱՂԱՓԴԱՅՆԻՆ
(1985 - 1991 թթ.)

ա. Գորբաչովյան «Վերակառուցումը» և Արցախյան հարցի բարձրացումը 704
բ. Սումգայիթյան ողբերգությունը 716
գ. Համազգային պայքարի վերելքը. 718
դ. Բռնագաղթը. 720

Ե. 1988 թվականի երկրաշարժը 721
Զ. Ժողովրդական հուզումների նոր ալիք Հայաստանում: Արցախահայության գոյամարտը (1989 թ. հունվար - 1991 թ. օգոստոս) 724

ԲԱԺԻՆ ՉՈՐՐՈՐԴ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ: ԱՐՑԱԽԻ ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱԱՏԱՏՈՒՄԸ (1991 -2011 թթ.)

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՈՒՄԸ

Ա. Հայաստանի անկախության հռչակագիրը 741
Բ. Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան պետություն: ԽՍՀՄ փլուզումը 742
Գ. Պետականության կայացման գործընթացի սկիզբը 745
Դ. ՀՀ Սահմանադրության ընդունումը 745
Ե. Հայոց ազգային բանակի կազմավորումը 748

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ԱՐՑԱԽԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՆՎԱՃՈՒՄԸ

Ա. ԼՂՀ-ի անկախության հռչակումը և պետականության ձևավորումը 750
Բ. Արցախի ազատագրական մարտերը: Հայաստանի Հանրապետության ռազմա-քաղաքական և դիվանագիտական աջակցությունը մարտնչող Արցախին 752
Գ. Սփյուռքահայության մասնակցությունը Արցախյան պատերազմին 760

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՈՒՄԸ. ՆԵՐՔԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Ա. ԼՂՀ տնտեսության վերականգնումն ու զարգացումը . . . 763
Բ. Սոցիալական ոլորտը 765
Գ. Հասարակական-քաղաքական կյանքը 765
Դ. ԼՂՀ Սահմանադրությունը 766
Ե. Կրթամշակութային կյանքը 767

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ ՈՒ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ԴԺՎԱՐԻՆ ՈՒՂԻՆ
(1991 - 2000 թթ.)

1. ՆԵՐՔԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ
Ա. Տնտեսության ճգնաժամային երևույթները. անցում շուկայական հարաբերություններին 768
Բ. Արդյունաբերությունը 769
Գ. Գյուղատնտեսությունը 773
Դ. Ֆինանսավարկային քաղաքականությունը 776
Ե. Բնակչության սոցիալական վիճակը 778
Զ. Առողջապահություն 780
2. ՀՈԳԵՎՈՐ ՈԼՈՐՏԸ
Ա. Գիտությունը 781
Բ. Կրթությունը 784
Գ. Գրականությունը և արվեստը 786
3. ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆ ԵՎ ՍՊՈՐՏԸ 788
4. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ 791
5. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 797
6. ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ 801
7. ՀԱՅՐԵՆԻՔ-ՍՓՅՈՒՌՔ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ 803

ա. Կրթամշակութային կապերը 804
բ. Փոխներթափանցումներ արվեստի ոլորտում 808
գ. Գիտական կապերի ամրապնդումը 810
դ. Մշակութային այլևայլ միջոցառումներ 812
ե. Սոցիալ-տնտեսական աջակցություն Մայր Հայրենիքին . . 812

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՐՐՈՐԴ ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ ՍԿԶԲԻՆ
(2001-2011 թթ.)

1. ՀՀ ՆԵՐՔԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ
ա. Տնտեսական վիճակը 817
բ. Բնակչության սոցիալական վիճակը 822
գ. Համաշխարհային տնտեսական ճգնաժամի ազդեցությունը ՀՀ տնտեսության վրա և ձեռնարկված միջոցառումները 822
դ. Առողջապահությունը 823
ե. Կրթությունը 825
զ. Գիտությունը 827
է. Մշակույթի առաջընթացը 829
2. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ
ա. Սահմանադրական և դատական նոր բարեփոխումներ. . . 830
բ. Ներքաղաքական զարգացումները 2001-2011 թթ. 832
գ. Կուսակցությունները 838
դ. Պատերազմի սպառնալիքը և բարեփոխումները հայկական բանակում 843
3. ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ա. ՀՀ հարաբերությունները Ռուսաստանի Դաշնության և հարևան երկրների հետ 847
բ. Ղարաբաղյան բանակցությունների նոր փուլը 849
գ. Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ուղղությամբ գործադրվող ջանքերը 853

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Դասագիրք բարձրագույն ուսումնական հաստատությունների համար

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ
ՊՐՈՖ. ՀՐ. Ռ. ՍԻՄՈՆՅԱՆԻ

Մասն. խմբագիրներ՝ Պետրոս Հովհաննիսյան, Էդիկ Մինասյան
Խմբագիր՝ Հակոբ Պետրոսյան
Սրբագրիչ՝ Վահանդուխտ Դերձյան
Համ. շարվածք՝ Հասմիկ Աբովյանի, Գայանե Այվազյանի
Համ. ձևավորումը՝ Աննա Աղուզումցյանի

Տպաքանակ՝ 3000: Պատվեր՝ 54:

ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1

ԵՊՀ տպագրատուն, Երևան, Աբովյան 52